ամ 'ի ծառայութե կայեալ էին քո֊
դողագոմորայ ։ եւ յերեքտասաներոր֊
դում ամին ապստամբեցան ։ * Եւ 5
յամին չորեքտասաներորդի եկն քո֊
դողագոմոր եւ թագաւորքն որ ընդ
նմա ։ եւ կոտորեցին զսկայսն որ յաս
տարովթ կառնայիմ էին ։ եւ զազգս
հզօրս որ ընդ նոսա ։ եւ զոմմացիսն
'ի շաւէ քաղաքին նոցա ։ * Եւ զքո֊ 6
ռացիսն որ 'ի լերինս սէիրայ ։ մին֊
չեւ ցբեւեկնի ձորոյն որ է յանապատի
անդ ։ * Եւ դարձան եկին յաղբիւրն 7
դատաստանի ։ այնինքն է կադէս ։ եւ
կոտորեցին զա՟մ իշխանս ամաղեկայ ։
եւ զամորհացին ։ եւ զբնակեալսն յա֊
սասոնթամար ։ * Եւ ել արքայ սո֊ 8
դոմացւոց եւ արքայ գոմորացւոց , եւ
արքայ ադամայացւոց , եւ արքայ սե֊
բոյիմացւոց , եւ արքայ բաղակայ որ
է սեգոր , եւ ճակատեցան ընդ նոսա
'ի պատերազմ 'ի ձորն աղտից ։ * Ընդ 9
քոդողագոմորայ արքայի եղամայ ։ եւ
ընդ թարգաղայ արքայի ազգաց ։ եւ
ամարփաղայ արքայի սենարայ ։ եւ ա֊
րիոքայ արքայի սելլասարայ ։ չորք
թագաւորք ընդ հնգից ։ * Եւ 'ի ձորն 10
աղտից ջրհորք ։ ջրհորք նաւթի ։ եւ
փախեաւ արքայ սոդոմացւոց եւ ար֊
քայ գոմորացւոց ։ եւ անկան անդր ։
եւ մնացեալքն փախեան 'ի լեռնա֊

11 կողմն ։ * Եւ առին զա՟մ աւար սո֊
դոմացւոց եւ գոմորացւոց ։ եւ զա՟մ
12 համբարս նոցա ։ եւ գնացին ։ * Առին
եւ զղովտ զեղբօրորդին աբրամու , եւ
զինչս նորա ։ եւ զհօտ ։ քանզի բնա֊
13 կեալ էր 'ի սոդոմ ։ * Եւ եհաս ոմն 'ի
զերծելոց անտի , եւ պատմեաց աբրա֊
մու յայնկոյս կացելոյ ։ եւ նա էր
բնակեալ առ կաղնեաւն մամբրէի
ամուրհացւոյ , եղբօրն եսքողայ եւ
եղբօրն ոնանայ ։ որք էին դաշնաւորք
14 աբրամու ։ * Եւ իբրեւ լուաւ աբրամ
թէ գերի վարեցաւ եղբայր իւր ղովտ ։
համարեցաւ զընտանիս իւր ։ երեք֊ Հուն. բեղ.
15 հարիւր եւ ութ եւ տասն ։ * Եւ պըն֊
տեցաւ զկնի նոցա գիշերի ։ ինքն եւ
ծառայք իւր ։ եւ եհար զնոսա մինչեւ
ցքոբայ ։ որ է 'ի ձախմէ դամասկո֊
16 սի ։ * Եւ դարձոյց զա՟մ աւարն սո֊
դոմացւոց ։ եւ զղովտ զեղբայր իւր ։
եւ զա՟մ ստացուածս նորա դարձոյց ։
17 եւ զկանայս եւ զժողովուրդն ։ * Եւ
ել արքայ սոդոմացւոց ընդ առաջ
նորա յետ դառնալոյ նորա 'ի կոտո֊
րածէ քոդողագոմորայ , եւ թագաւո֊
րացն որք ընդ նմա էին 'ի ձորն շաւէ ։
այնինքն էր դաշտ թագաւորաց ։
18 * Եւ մելքիսեդեկ ‖ արքայ շաղեմայ՝ ‖ Եբր.
եհան հաց եւ գինի ։ քանզի քահանայ 7. 1.
19 էր Ա՟յ բարձրելոյ ։ * Եւ օրհնեաց
20 զաբրամ եւ ասէ ։ * Օրհնեալ է աբրամ
յԱ՟յ բարձրելոյ ։ որ արար զերկինս
եւ զերկիր ։ օրհնեալ Ա՟ծ բարձրեալ
որ մատնեաց 'ի ձեռս քո զթշնամիս
քո ։ եւ ետ նմա տասանորդս յա՟մէ ։
21 * Եւ ասէ արքայ սոդոմացւոց ցաբ֊
րամ ։ տուր ցիս զմարդիկդ ։ եւ զաւարդ
22 քեզ առ ։ * Եւ ասէ աբրամ ցար֊
քայն սոդոմացւոց ։ ձգեմ զձեռն իմ
առ Ա՟ծ բարձրեալ , որ արար զեր֊
23 կինս եւ զերկիր ։ * Եթէ 'ի շաղամա֊
թէ մինչեւ 'ի խրացս մի կօշկաց՝
առից ես յա՟մէ որ ինչ քո իցէ ։ զի
մի ասիցես թէ ես մեծացուցի զաբ֊
24 րամ ։ * Բայց որչափ ինչ կերին
մանկտիդ ։ եւ մասն արանցդ որք եկին
ընդ իս ։ ենան ։ եսքող ։ եւ մամբրէ ։
նոքա առցեն զբաժին իւրեանց ։

ԳԼ ։ ԺԵ ։

1 Յետ բանիցս այսոցիկ եղեւ բան
Տ՟ն առ աբրամ 'ի տեսլեան եւ
ասէ ։ մի երկնչիր աբրամ ։ ես վերա֊
կացու եղէց քեզ ։ եւ վարձք քո բա֊
2 զում եղիցին յոյժ ։ * Եւ ասէ աբ֊
րամ ։ Տ՟ր Տ՟ր , զինչ տացես ինձ , զի ես
կորնչիմ անորդի ։ եւ որդի մասնեկայ
ընտանւոյ իմոյ ։ այն է եղիազար դա֊
մաս֊

մասկացի ։ *Եւ ասէ աբրամ . որով_ 3
հետեւ ինձ ոչ ետուր զաւակ , ընտա_
նին իմ ժառանգեսցէ զիս ։ * Եւ 4
վաղվաղակի ձայն Ա.Յ եղեւ առ նա
եւ ասէ . ո՛չ ժառանգեսցէ զքեզ դա .
այլ որ ելանէ 'ի քէն՝ նա ժառանգես
ցէ զքեզ ։ *Եւ եհան զնա արտաքս՝ 5
‖Հռոմ. եւ ասէ ցնա . ‖ հայեաց ընդ երկին, եւ
4.18. թուեա՛ զաստեղս . եթէ կարասցես
թուել զնոսա ։ եւ ասէ ցնա . այնպէս
‖Հռոմ. եղիցի զաւակ քո ։ ‖ *Եւ հաւատաց 6
4.3. աբրամ Ա.Յ . եւ համարեցաւ նմա
Գաղա. յարդարութիւն ։ *Եւ ասէ ցնա . ես 7
3.6. եմ Տր Ա.Ծ քո , որ հանի զքեզ յաշ_
Յակոբ. խարհէն քաղդեացւոց . տալ քեզ
2.23. զերկիրդ զայդ 'ի ժառանգել դդա ։
*Եւ ասէ աբրամ . Տր Տր՝ իւ գիտա_ 8
ցից թէ ժառանգեցից զսա ։ * Եւ 9
ասէ ցնա ։ ա՛ռ դու ինձ երինջ երե_
մեան . եւ քօշ երեմեան . եւ խոյ երե_
մեան . եւ տատրակ . եւ աղաւնի ։ *Եւ 10
‖Երեմ. եառ զամ զայն . եւ ‖ յօշեաց զնոսա
34.18. ընդ մէջ ։ եւ եդ զնոսա դէմ՝ ընդդէմ
միմեանց . եւ զթռչունսն ոչ յօշեաց ։
* Եւ իջանէին թռչունքն 'ի վերայ 11
յօշելոյ անդամաթուէին նոցա ։ եւ
նստէր առ նոքօք աբրամ ։ *Եւ մօտ 12
ընդ մուտս արեւուն , թմբրութիւն ան_
կանէր 'ի վերայ աբրամու . եւ ահ
խաւարին հասանէր 'ի վերայ նորա ։
*Եւ ասացաւ առ աբրամ . գիտելով 13
‖Գործ. գիտասջի՛ր . զի ‖ պանդուխտ եղիցի
7. 6. զաւակ քո յերկիր՝ որ ոչ իւր իցէ . եւ
ծառայեցուսցեն զնոսա եւ չարչարես
ցեն . եւ տառապեցուսցեն զնո ամս
չորեքհարիւր ։ *Բայց զազգն որում 14
ծառայեսցեն դատեցից ես ։ եւ յետ այ
նորիկ ելցեն այսր բազում ստացուա
ծովք ։ *Եւ դու երթիցես առ հարս 15
քո խաղաղութբ , սնեալ 'ի բարւոք
ծերութե ։ *Եւ 'ի չորրորդում ազգի 16
դարձցին այսրէն . քանզի չեւեւս լցեալ
է մեղք ամուրհացւոցն մինչեւ ցայժմ ։
* Եւ իբրեւ արեւն 'ի մուտս լինէր , 17
բոցք հատանէինեւ ահա հնոց ծխեալ
եւ ջահապայթք հրոյ . եւ անցանէին
‖ Ա եր. ընդ մէջ անդամոյն յօշելոց ։ *‖ Յաւ_ 18
12.7. եւ ուր յայնմիկ եդ Տր ուխտ ընդ աբ_
13.15. րամու . եւ ասէ . զաւակի քում տաց
Ա ւր. զերկիրդ զայդ . 'ի գետոյն եգիպտաց_
26.4. ւոց մինչեւ 'ի գետն մեծ եւփրատ ։
2.Օր. * Զկենեցիս . եւ զկենեզացիս . եւ զկ 19
34. 4. եդմոնացիս ։ *Եւ զքետացիս . եւ 20
2.Մն. զփերեզացիս . եւ զռափայիմացիս ։ *Եւ 21
9.26. զամօրհացիս . եւ զքանանացիս . եւ
3.Թագ. զգերգեսացիս . եւ զյեբուսացիս ։
4.21.

Գլ. ԺԶ.

1 Եւ սարա կին աբրամու ո՛չ ծնա_
նէր նմա ։ եւ էր նորա աղախին
մի եգիպտացի . որոյ անուն էր ագար ։
2 * Եւ ասէ սարա ցաբրամ յերկրին
քանանացւոց ։ որովհետեւ արգել զիս
Տր 'ի ծնանելոյ , արդ՝ մուտ առ աղ_
ջիկդ իմ . զի արարից ինձ որդի 'ի
դմանէ ։ եւ ունկնդիր եղեւ աբրամ
3 ձայնի սարայի ։ *Եւ էառ սարա կին
աբրամու զագար զեգիպտացի զա_
ղախին իւր , յետ տասն ամի բնակե_
լոյ աբրամու յերկրին քանանացւոց ,
եւ ետ զնա աբրամու առն իւրում
4 կնութե ։ *Եւ եմուտ առ ագար .
եւ յղացաւ ։ իբրեւ ետես եթէ յղի է ,
արհամարհեցաւ տիկինն իւր՝ յաչս
5 նորա ։ * Եւ ասէ սարա ցաբրամ ,
բռնանաս ինձ 'ի քէն ։ ես ետու զաղա_
խին իմ 'ի գիրկս քո . եւ արդ՝ իբրեւ
ետես թէ յղացաւ , արհամարհեցայ
ես յաչս նորա ։ դատ արասցէ Ա.Ծ ընդ
6 իս եւ ընդ քեզ ։ * Եւ ասէ աբրամ
ցսարա . ահաւանիկ աղախին քո 'ի
ձեռս քո . արա՛ նմա զինչ հաճոյ է ա_
ռաջի աչաց քոց ։ եւ չարչարեաց զնա
սարա ։ եւ փախեաւ յերեսաց նորա ։
7 *Եգիտ զնա հրեշտակ Տն յաղբեր
ջուրց յանապատի անդ . յաղբերն որ
8 'ի ճանապարհին սուրայ է ։ *Եւ ասէ
ցնա հրեշտակ Տն ։ ագա՛ր աղախին
սարայի . ուստի՞ գաս . եւ կամ յո՛ եր_
թաս ։ եւ ասէ՝ յերեսաց սարայի տիկ_
9 նոջ իմոյ փախուցեալ եմ ես ։ *Ասէ
ցնա հրեշտակ Տն ։ դարձի՛ր առ տի_
կին քո եւ հնազանդ լեր ընդ ձեռամբ
10 նորա ։ * Եւ ասէ ցնա հրեշտակ Տն՝
բազմացուցանելով բազմացուցից
զզաւակ քո . եւ անթիւ լիցի 'ի բազ_
մութենէ ։ եւ ասէ ցնա հրեշտակն Տն ։
11 * Ահաւադիկ դու յղի իսկ ես . եւ
ծնցիս որդի . եւ կոչեսցես զանուն նր
իսմայէլ . զի լուաւ Տր տառապա_
12 նաց քոց ։ * Եւ նա եղիցի այր վայ_
րագ . ձեռք նորա յամենեսին . եւ ձեռք
ամենեցուն 'ի նա . եւ յանդիման ամե_
13 նայն եղբարց իւրոց բնակեսցէ ։ *Եւ
կարդաց ագար զանուն Տն որ խօ_
սեցաւ ընդ նմա ։ եւ ասէ ։ դու ես Ա.Ծ
որ հայեցար յիս ։ քանզի ասաց՝ եթէ
յանդիման իսկ տեսի զայն . որ երեւե
14 ցաւ ինձ ։ *Վասն այնորիկ ‖ կոչեաց ‖ Ա ւր.
զջրհորն՝ ջրհոր այնորիկ զոր յանդի_ 24.62.
ման տեսի . եւ ահա է այն ընդ կա_
15 դէս եւ ընդ բարադ ։ * ‖ Եւ ծնաւ ‖Գաղա.
ագար աբրամու որդի ։ եւ կոչեաց զա_ 4.24.
նուն որդւոյն իւրոյ , զոր ծնաւ նմա
ագար՝

ագար՝ խմնել ։ * Եւ աբրամ էր 16
ամաց ութսուն եւ վեցից , յորժամ
ծնաւ նմա զիսմայել ։

ԺԷ։ ԺԱ։

Եւ եղեւ աբրամ ամաց հիւնսուն եւ 1
հիւնուց ։ Եւ երեւեցաւ Տէր Ա.Ճ
աբրամու . եւ ասէ ցնա . ես եմ Ա.Ճ.քո.
հաճոյ լեր առաջի իմ . եւ լեր անա-
րատ ։ * Եւ եդից զուխտ իմ ընդիս 2
եւ ընդ քեզ . եւ բազմացուցից զքեզ
յոյժ յոյժ ։ * Եւ անկաւ աբրամ՝ի 3
վերայ երեսաց իւրոյն եւ խօսեցաւ ընդ
նմա Ա.Ճ ։ * Եւ ասէ . եւ իմ ահաւա- 4
|| Այբակ. դիկ ուխտ ընդ քեզ ։ || Եւ եղիցիս հայր
44.20. բազմութեան ազգաց ։ * Եւ ոչ կոչես- 5
Նոամ. ցի անուն քո այսուհետեւ աբրամ .
4.17. այլ եղիցի անուն քո աբրահամ . զի
հայր ազգաց բազմաց եդից զքեզ ։
* Եւ աճեցուցից զքեզ յոյժ . եւ եդից 6
զքեզ յազգս . եւ թագաւորք ՚ի քէն
ելցեն։ * Եւ հաստատեցից զուխտ իմ 7
ընդիս եւ ընդ քեզ . եւ ՚ի մէջ զաճակի
քոյ յետ քո յազգս իւրեանց . յուխտ
յաւիտենական՝ լինիլ քեզ Ա.Ճ . եւ
զաճակի քում յետ քոյ ։ * Եւ տայ 8
քեզ եւ զաճակի քում զերկիրս զայս .
յորում բնակիս պանդխտութիւն .
զամ՝ երկիրդ քանանացւոց ՚ի ժառանգ
գումիս յաւիտենական . եւ եղիցի նոցա
|| Վոլգ. Ա.Ճ ։ * || Եւ այլ դու զուխտ իմ պա- 9
7. 8. հեսցես . եւ զաճակի քո յետ քո յազգս
իւրեանց ։ * Եւ այս է ուխտ իմ, զոր 10
պահիցես ընդիս եւ ընդ քեզ . եւ ՚ի մէջ
զաճակի քոյ յետ քո յազգս իւրեանց ։
* Թլփատեսցի ձեր ամ՝արու . եւ թլփա 11
տեսջիք զմնարմին անթլփատութեան ձե
րոյ . եւ եղիցի նշանակ ուխտին ընդիս
|| Ա հաւո. եւ ընդ ձեզ ։ * || Եւ մանուկ ութօր- 12
12.3. եայ թլփատեսցի ձեր . ամ՝ արու
Ղ ուխ. յազգս ձեր . ընտօճինն . եւ արծաթա-
2.21. գինն . եւ յամ՝օտարածնէ որ ոչ իցէ ՚ի
Նոամ. զաճակէ քումմէ , թլփատելով թլփա
4.11. տեսցի ընտօճին տանդ քոյ . եւ արծա-
թագինն քո ։ * Եւ եղիցի ուխտ իմ ՚ի 13
վերայ մարմնոյ ձերոյ . յուխտ յաւի-
տենական ։ * Եւ որ անթլփատ որ ոչ 14
թլփատեսցի զմնարմին անթլփատու-
թեան իւրոյ , յաւերուր ուխտերիցի , սա-
տակեսցի անձն այն յազգէ իւրմէ . զի
զերեաց զուխտ իմ։ * Եւ ասէ Ա.Ճ ցաբ- 15
րահամ . եւ սարայի կնոջ քոյ ոչ կոչես-
ցի անուն նորա սարա . այլ սարրա եղիս-
ցի անուն նորա ։ * Եւ օրհնեցից զնա . 16
եւ տացց քեզ ՚ի նմանէ որդի . եւ օրհնե-
ցից զնա . եւ եղիցի յազգս . եւ թագաւո-
րք ազգաց ՚ի նմանէ եղիցին ։ * Եւ ն- 17
հաճ աբրահամ ՚ի վէր երեսաց իւրոց

եւ ծիծաղեցաւ . եւ խօսեցաւ ՚ի սրտի
իւրում՝ եւ ասէ ։ Եթէ հարիւր ամանց
որդի լինիցի՞ ։ եւ սարրա հիւանասնաց
ծնանիցի՞ ։ * Եւ ասէ աբրահամ ցԱ.Ճ ։ 18
Իսմայելս այս կեցցէ առաջի քո։ * Եւ 19
ասէ Ա.Ճ ցաբրահամ. այո՛ . || ահա սար || Ա պար.
բա կինն քո ծնցի քեզ որդի . եւ կոչես- 18.10.
ցես զանուն նորի իսահակ . եւ հաստա- եւ 21. 3.
տեցից զուխտ իմ ընդ նմին յուխտ յաւի-
տենական . եւ ընդ զաւակի նորին յետ
նորին ։ * Եւ վասն իսմայելի ահա լուայ 20
քեզ ։ եւ օրհնեցի զնա . եւ աճեցուցից
զնա . եւ բազմացուցից զնա յոյժ . եւ եր-
կոտասան ազգ ծնցի . եւ տացց զնա յազգ
մեծ ։ * Եւ զուխտ իմ հաստատեցից 21
ընդ իսահակայ , զոր ծնցի քեզ
սարրա ՚ի ժամանակի յայսմիկ՝ի միւ-
սում տարւոջ ։ * Եւ վախճանեաց 22
զխօսիլն ընդ նմա ։ եւ վերացաւ Ա.Ճ
յաբրահամէ ։ * Եւ եառ աբրահամ 23
զիսմայել զորդի իւր . եւ զամ՝ զընտօ-
ճինան իւր . եւ զամ՝ զարծաթագինս
իւր . եւ զամ՝ արու արանց տղք էին
՚ի տան աբրահամու . եւ թլփատեաց
զմնարմին անթլփատութեանն ՚ի ժա-
մանակի աւուրն այնորիկ . որպ խօսե- 24
ցաւ ընդ նմա Ա.Ճ ։ * Եւ աբրահամ
էր ամաց հիւնսուն եւ հինգ , ՚ի ժամա-
նակի յորում թլփատեաց զմնարմին
անթլփատութեան իւրոյ ։ * Եւ իս- 25
մայել որդի նորին երեքտասանեմեայ էր ,
յորժամ թլփատեաց զմնարմին ան-
թլփատութեան իւրոյ ։ * Ի ժամանա- 26
կի աւուրն այնորիկ թլփատեցաւ աբ
րահամ եւ իսմայել որդի նորա ։ * Եւ 27
ամ՝ արք տան նորա . եւ ընտօճինք եւ ար-
ծաթագինք . որք էին յազգաց օտա-
րաց , թլփատեաց զնոսա ։

ԺԸ։ ԺԲ։

Եւ երեւեցաւ նմա Ա.Ճ առ կաղ- 1
նեաւն մամբրէի . մինչ դեռ
նստեր առ դրունս խորանին իւրոյ ՚ի
միջօրէի ։ * || Ա.մբարձեալ զաչս իւր || Եբր.
եւ եռես . եւ ահա արք երիք կային ՚ի 13.2.
վերոյ քան զնա . եւ իբրեւ եռես . ընդ- 1. Պետ.
ԹԱագաւճ ընդ առաջ նոցա ՚ի դրանէ խո- 4.9.
րանին իւրոյ . եւ երկիր եպագ ՚իվերոյ || Ա պար.
երկրի ։ եւ ասէ ։ * Տէր եթէ գտի շնորհս 19.1.
առաջի քո . մի զանցաներ ՚ի ծառայէ Նոամ.
քումմէ ։ * Ա.յլ առիլ սակաւ մի ջուր . 12.10.
եւ լուասցեն զոտս ձեր . եւ զովասջիք
ընդ ծառալս ։ * Եւ առիլ հաց՝ եւ 5
կերիջիք . եւ ապա երթ իջիք զձանա-
պարհ ձեր ։ վասնզի զի դարձայք
առ ծառայ ձեր ։ եւ ասեն՝ այդպէս
արա . որպ ասացեր ։ * Եւ սպառեցաւ 6
աբրահամ՝ի խորանն առ սարրա . եւ
ասէ

ասէ ցնա . փութա՛ և թրեա՛ գրիւս երիս սղեր նահչոյ . և արա՛ նկանակս :
7 *Եւ յանդեաց ընթացաւ աբրահամ՝ և եհաւ որթ մի մատաղ և բարի : և ետ ցպատանին . և փութացոյց վաղ վաղակի հասուցանել : 8 * Եւ եհաւ կոդի և կաթն . և զորթն զոր հասոյց . և եդ առաջի նոցա և կերին : և նա կայր առաջի նոցա ընդ ծառոյն :

9 *Եւ ասեն ցնա . ուր է սարրա կին քո : Նա պատասխանի ետ՝ և ասէ . ահա՛ 10 հանիկ ՚ի խորանն անդ է : *Եւ ասէ . դարձեալ եկից առ քեզ ՚ի ժամանակ
Ալէլ. կեաց յայսմիկ ՚ի սոյն աւուրս . Եւ ունէր 17.19. ցի որդի սարրա կին քո : և սարրա Ալայլ. ունկնդրեր առդրան խորանին՝ քանզի 21.1. յետոյ նմի կայր : 11 * Եւ աբրահամ և Հոմ. սարրա ծերացեալք էին . և անցեալք 9.9. զաւուրբք : և պակասեալէր ՚ի սար- 12 1.Պետ. բայէ լինիլ ՚ի կանանց օրինի : *Եւ 3.6. ծաղեաց սարրա ընդ միտս . և ասէ . որ ինչ ցայժմ ոչ եղև ինձ , արդ լի- նելոյ . և Տէր իմ ծերացեալ է : 13 * Եւ ասէ Տէր ցաբրահամ՝ զի՞ն զի ծիծաղե ցաւ սարրա ընդ միտս իւր՝ և ասէ . թէ արդարև ծնանիցիմ . զի ահա ես պա ռաւեալեմ : 14 * Ա՞ր թէ տկարանայցէ առ Ա՛Ի՛ բան : ՚ի ժամանակի կայս- միկ դարձայց առ քեզ ՚ի սոյն աւուրս . և եղիցի սարրայի որդի : 15 * Վախեաց սարրա . և ասէ թէ ոչ ծիծաղեցայ . քանզի երկեաւ . և ասէ . ոչ այդպէս է .

16 այլ ծիծաղեցար : * Եւ յարուցեալ անտի արանցն հայեցան ընդ երեսս սո դոմայեցւոցն և գոմորացւոցն . և աբրա համ երթայր ընդ նոս . յուղարկել զնոս : 17 *Եւ ասէ Տէր . մի թէ թաքուսցս ինչ իցէ յաբրահամ ծառայէ իմմէ . զոր 18 ինչ գործելոց եմ : * Ա՛յլ աբրահամ լինելով եղիցի յազգ մեծ և՛ ի բազում: ‖ և օրհնեսցին ՚ի նա ամ ազգք երկրի : ‖ Ալէլ. 12.3. 19 *Գիտեմ զի տեսցէ զորդիսն իւր և զտունն իւր յետ իւր . պահել զճանապարհս Տեառն և առ- նել զարդարութիւն և զիրաւունս : և Ալայլ. 22.17. ածցէ Տէր Ա՛Ա՛ ՚ի վերայ աբրահամու զամ զոր խոսեցաւ ընդ նմա : 20 * Եւ ասէ Տէր . աղաղակ սոդոմացւոց և գոմո- րացւոց յաձախեաց . և մեղք նոցա մե- 21 ծացան յոյժ : *Եւ արդ իջեալ տեսից . եթէ ըստ աղաղակին նոցա որ յիս հա- սանէ վճարիցեն . ապաթէ ոչ գիտ- 22 ացից : *Եւ դարձեալ արանցն ան- տի եկին ՚ի սոդոմ : և աբրահամ կայր առաջի Տեառն : 23 *Եւ մատուցեալ աբրա- համ ասէր . միթէ կորուսանիցես զար դարն ընդ ամպարշտին . և լինիցի ար- 24 դարն իբրև զամպարիշտն : * Եթէ իցեն յիսուն արդար ՚ի քաղաքի կորու սանիցես զնոսա . և ոչ ներիցես ամ տեղեացն վասն յիսուն արդարոցն եթէ իցեն ՚ինմա : *Հաւ լիցի քեզ առնել 25 զայն բան . սպանանել զարդարն ընդ ամպարշտի . և լինիցի արդարն իբրև զամպարիշտն : քաւ լիցի քեզ՝ որ դա տես զամ երկիր . մի՛ արասցես զայն դատաստան : 26 * Եւ ասէ Տէր . եթէ գտցի ՚ի սոդոմ յիսուն արդար ՚ի քա- ղաքի անդ , թողացուցից ամ տեղեացն 27 վասն նոցա : *Պատասխանի ետ աբրա- համ . և ասէ : այժմ սկսայ խոսիլ ընդ Տէն . քայց ես հող եմ՝ և մխիթ : 28 *Եթէ պակասիցին քան զյիսուն ար դար՝ հնդհւ չափ , կորուսանիցես մի հնդհցն զամ քաղաքն : և ասէ՝ ոչ կորուսից՝ եթէ գտցի անդ քառա- 29 սուն և հինգ : *Եւ յաւելեալ խոսիլ ընդ նմա՝ և ասէ . իսկ եթէ գտցի անդ քառասուն : և ասէ՝ ոչ կորուսից վի- 30 քառասնիցն : *Եւ ասէ՝ մի թէ իցէ ինչ Տէր եթէ խոսիցիմ . իսկ եթէ գտ- ցին անդ երեսուն : և ասէ . ոչ կո- րուսից՝ եթէ գտցի անդ երեսուն : 31 *Եւ ասէ . որովհետև կալայ խոսիլ ընդ Տէն : եթէ գտցի անդ քսան : և ասէ՝ ոչ կորուսից վասն քսանիցն : 32 *Եւ ասէ . միթէ իցէ ինչ Տէր . եթէ խոսեցայց և սիւս անգամ : եթէ գտանիցին անդ տասն : և ասէ . ոչ կո- րուսից վասն տասանցն : 33 *Եւ գնաց Տէր .

Տր . իբրեւ լռեաց 'ի խօսելոյ անտի
ընդ Աբրահամու : եւ Աբրահամ դար_
ձաւ 'ի տեղի իւր :

Գլ. ԺԹ.

Եւ եկին երկու հրեշտակքն 'ի սո_ 1
դոմ ընդ երեկս : եւ Ղովտ նստէր
|| Եբր. առ դրան Սոդոմացւոցն : || իբրեւ ետես
13.2. Ղովտ՝ յարեաւ ընդ առաջ նց . եւ երկիր
եպագ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր՝
եւ ասէ : * Ահաւասիկ եմ տեարք : ե_ 2
կայք 'ի տուն ծառայի ձերոյ՝ հանգե
րուք . եւ լուացից զոտս ձեր . եւ կան_
խեալ ընդ առաւօտս երթիջիք զճա_
նապարհ ձեր : եւ ասեն ոչ . այլ 'ի հրա_
պարակի աստ ագցուք : * Եւ բռնա 3
դատեաց զնոսա յոյժ . եւ խոտորեցան
առ նա . եւ մտին 'ի տուն նր : եւ արար
նց ընթրիս . եւ բաղարջ եփեաց նոցա՝
եւ կերին : * Մինչեւ 'ի քուն մտեալ էր 4
նոցա . եւ արք քաղաքին Սոդոմացւոց
պատեցին զտունն յերիտասարդաց
մինչեւ ցծերս . ամենայն ժողովուրդն
'ի միասին : * Եւ կոչէին արտաքս զՂովտ . 5
եւ ասէին ցնա . ուր են արքն որք մտին
առ քեզ գիշերի . ած զնս առ մեզ զի
գիտասցուք զնս : * Եւ ել առ նոսա 6
Ղովտ արտաքոյ դրանն . եւ զդուռն
ձգեաց զկնի իւր : * Եւ ասէ ցնոսա : 7
քաւ լիցի ձեզ եղբարք : մի գործէք
զայդ չարիս : * Են իմ երկու դստերք . 8
որք զայր ոչ գիտեն . հանից զնս առ
ձեզ . եւ արարէք ընդ նոսա , որպէս հա_
ճոյ իցէ ձեզ . բայց միայն արանցդ
այդոցիկ մի ինչ մեղս առնիցէք . որով_
հետեւ մտին ընդ յարկաւ գերանաց
իմոց : * Եւ ասեն . 'ի բաց կաց : մտեր 9
բնակել պանդխտութբ . միթէ եւ
դատաւորն եւս դատել այժմ եւ զքեզ
եւս չարչարեսցուք առաւել քան զնս :
|| 2.Պետ. եւ || բռնադատէին զայրն զՂովտ յոյժ .
2. 8. եւ մերձ էին զդուռն խորտակել :
* Եւ ձգեալ արանցն զձեռս իւրեանց 10
կորզեցին յինքեանս զՂովտ 'ի տուն
անդր . եւ զդուրս տանն փակեցին :
* Եւ զարսն որք առ դուրս տանն 11
|| Իմաս. կային || հարին կուրութբ . 'ի փոքուէ
19.16. մինչեւ ցմեծն . եւ լքան խնդրել զդ_
ուրսն : * Եւ ասեն արքն ցՂովտ : է որ 12
քո աստ փեսայ կամ որդիք կամ դըս_
տերք , կամ այլոք՝ որ քո իցէ 'ի քաղաքի
աստ . հան զնոսա 'ի տեղւոջէ յայսմա_
նէ : * Զի կործանելոց եմք մեք զքա_ 13
ղաքս զայս : զի բարձրացաւ աղաղակ
սոցա առաջի Տն . եւ առաքեաց զմեզ
Տր սատակել զսա : * Ել Ղովտ , եւ խօ_ 14
սեցաւ ընդ փեսայս իւր . որք առնլոց
էին զդստերս նր . եւ ասէ . արիք՝ եւ

ելէք 'ի տեղւոջէ աստի յայսմանէ . զի
սատակէ Տէր զքաղաքս : եւ թուէր
ծաղր առնել յաչս փեսայից իւրոց :
15 * Եւ իբրեւ եղեւ առաւօտ . փութա_
ցուցանէին հրեշտակքն զՂովտ՝ եւ ա_
սէին . արի առ զկին քո եւ զերկուս
դստերս քո . զոր ունիս . եւ ել աստի
զի մի եւ դու կորնչիցիս ընդ անօրէ_
16 նութիս քաղաքիդ : * Եւ նոքա խռո_
վեցան եւ կալան հրեշտակքն զձեռա_
նէ նր . եւ զձեռանէ կնոջ նորա . եւ զձե
ռանէ երկուց դստերաց նորա . զի
խնայեաց Տր 'ի նա : || եւ հանին զնա . եւ || Իմաս.
17 եդին արտաքոյ քաղաքին : * Եւ եղեւ 10.6.
իբրեւ հանին զնոսա արտաքս , ասեն՝
ապրեցո՛ զանձն քո . մի դառնայցես
յետս . եւ մի կայցես յամ՝ կողմանս աշ_
խարհիդ . զերծիր 'ի լեառն . գուցէ
18 ընդ նմ ըմբռնիցիս : * Եւ ասէ Ղովտ
19 ցնս . աղաչեմ տեարք իմ : * Քանզի ե_
տե եգիտ ծառայ քո ողորմութի ա_
ռաջի քո . եւ մեծ արարեր զարդարու_
թի քո . զոր առնես յիս ապրել անձին
իմոյ . եւ արդ ես ոչ կարեմ զերծանել
'ի լեառն . գուցէ հասանիցեն ինձ չա_
20 րիք՝ եւ մեռանիցիմ : * Ահա քաղաքս
այս մերձ է անկանել 'ի նա . որ է փոք_
րիկ . անդ ապրեցայց . եւ չէ՞ փոքր . եւ
21 կեցցէ անձն իմ վն քո : * Եւ ասէ ցնա՝
ահաւասիկ արարի մեծարանս երե_
սաց քոց . եւ 'ի բանիդ յայդմիկ չկործա_
նել զքաղաքն . վն որոյ խօսեցար :
22 * || Եւ արդ փութա՛ զերծանել 'ի նա . || Իմաս.
զի ոչ կարեմ առնել իրս ինչ մինչեւ 10.6.
անկանիցիս անդր : վն այնորիկ կո_
չեաց զանունն քաղաքին այնորիկ սե_
23 գոր : * Արեգակն ծագեաց յերկիր .
24 եւ Ղովտ եմուտ 'ի Սեգոր : * || Եւ Տէր || 2.Օրէ.
տեղաց 'ի Սոդոմ եւ 'ի Գոմոր ծծումբ 29.23.
25 եւ հուր 'ի Տէ յերկնից : * Եւ կործա_ Եսայ.
նեաց զքաղաքսն զայնոսիկ . եւ զամ 13.19.
կողմանսն . եւ զամ բնակիչս քաղա_ Երեմ.
26 քացն . եւ զամ բոյս երկրին : * || Եւ 50.40.
դարձաւ կինն զկնի յետս . եւ եղեւ Եզեկ.
27 արձան աղի : * || Եւ կանխեաց Աբրա_ 16.49.
համ ընդ առաւօտն 'ի տեղին ուր Ովսէ.
28 կայր առաջի Տն : * Եւ հայեցաւ յե_ 11.8.
րեսս Սոդոմացւոց եւ Գոմորացւոց . եւ Ամով.
յամ երեսս երկրի գաւառին . եւ ետես՝ 4.11.
եւ ահա ելանէր բոց երկրին իբրեւ Ղուկ.
29 մրրիկ հնոցի : * Եւ եղեւ 'ի սատակել 17.28.
Տն զամ զքաղաքս շուրջ զբնակութբն . Յուդայ
յիշեաց Ած զԱբրահամ . եւ հան ար 1. 7.
ձակեաց զՂովտ 'ի միջոյ կործանմանն . || Ղուկ.
'ի կործանել Տն զքաղաքսն յորս բնա 17.32.
30 կեալ էր 'ի նոսա Ղովտ : * Եւ ել Ղովտ 'ի || Սէր.
Սեգովրայ . եւ նստէր 'ի լերին . եւ եր_ 18.1.
կոքին դստերք նր ընդ նմա . քանզի
երկեաւ

եր կեաւ բնակիլ ՚ի սեգօր ։ և բնա-
ցան կեաց յայրն անդ ինքն և երկոքեան դստերք նորա ընդ նմա ։ * Եւ ասէ 31
երէց ն ցկրտսերն ։ Հայր մեր ծեր ա-
ցեալ է ։ և չիք ոք յերկրի , որ մտա-
նիցէ առ մեզ ։ ոյզ օրէնս ամենայն երկրի ։
* Եկ՝ և արբուցո՛ւք հօր մերում գի 32
նի ։ և ննջեսցո՛ւք ընդ նմա ։ և յարու-
ցուք ՚ի հօրէ մերմէ զաւակ ։ * Եւ 33
արբուցին հօրն իւրեանց գինի ՚ի գի-
շերին յայնմիկ և եմուտ երէցն ննջեաց
ընդ հօրն իւրում ։ զի չէր զայնմ ոչ
գիտեր ՚ի ննջելն նորա և ՚ի յառնել ։
* Եւ եղև ՚ի վաղիւ անդր ։ ասէ երէցն 34
ցկրտսերն ։ ահա ննջեցի ես երեկ ընդ
հօր իմում ։ արբուցո՛ւք նմա գինի և
՚ի գիշերիս յայսմիկ ։ և մո՛ւտ ննջեա՛
ընդ նմա ։ և յարուսցո՛ւք զաւակ ՚ի
հօրէ մերմէ ։ * Եւ արբուցին և յայնմ 35
գիշերի գինի հօրն իւրեանց ։ և եմուտ
կրտսերն ննջեաց ընդ հօրն իւրում ։
և ոչ գիտեր ՚ի ննջելն նո՛ր և ՚ի յառնել ։
* Եւ յղացան երկոքին դստերքն ղոտ 36
տայ ՚ի հօրէ իւրեանց ։ * Եւ ծնաւ 37
երէցն որդի ։ և կոչեաց զանուն նորա
Մոաբ ։ ասէ , ՚ի հօրէ իմմէ ։ նա է հայր
Մոաբացւոց մինչև յայսօր ժամա-
նակի ։ * Ընտա և կրտսերն որդի և 38
կոչեաց զանուն նո՛ր Ամմոն ։ ասէ , որդի
ազգի իմոյ ։ նա է հայր Ամմոնացւոց
մինչև յայսօր ժամանակի ։

ԳԼ ։ Ի ։

Եւ Աբրահամ չուեաց անտի աբրահամ յեր- 1
կիրն հարաւոյ և բնակեցաւ ընդ
կադէս և ընդ սուր ։ և պանդխտեցաւ
՚ի գերարայ ։ * Եւ ասաց աբրահամ 2
վա՛ սարրայի կնոջն իւրոյ , թէ քոյր
իմ է ։ և առաքեաց աբիմելէք արքայ
գերերացւոց , և էառ զսարրա ։ * Եւ 3
եկն Ա՛Ծ առ աբիմելէք ՚ի տեսլեան
գիշերոյ ։ և ասէ՝ ահա մեռանիս վա՛
կնոջդ՝ զոր առեր զի կին առնակին է ։
* Եւայց աբիմելէք ո՛չ մերձեցաւ ՚ի 4
նա ։ և ասէ ։ Տէր , զազգ մի զանդէտ և
զարդար կորուսանիցես ։ * Ո՛չ ապա- 5
քէն նա ասաց ցիս քոյր իմ է ։ և սա ա-
ռաց ցիս եղբայր իմ է ։ և ես սրբութիւ
սրտի և արդարութիւ ձեռաց արարի
զայս ։ * Եւ ասէ ցնա Ա՛Ծ ՚ի տեսլեանն 6
ես գիտացի զի սրբութիւ սրտի արա-
րեր դու զայդ և խնայեցի ես ՚ի քէզ ,
չմեղանչել քեզ ՚ի յիս ։ վա՛ ոյնպէս ոչ
եթող թոյլ քեզ մերձենալ ՚ի գա ։
* Եւայց արձակեա զկինդ քոյր իւր՝ 7
զի պէր մարգարէ է ։ և աղօթս
վա՛ քո ։ և կեսցես ։ ապաթէ ոչ առցես ,
գիտեա զի մեռանիս դու և ամենայն ինչ

8 քոյ ։ * Եւ կանխեաց աբիմելէք ընդ-
առաւօտն և կոչեաց զամենայն ծա-
ռայս իւր ։ և խօսեցաւ զամենայն զայս-
սիկ յականջս նոցա ։ և զահի հարան
9 ամենայն մարդիկն յոտ ։ * Եւ կոչեաց ա-
բիմելէք զաբրահամ ։ և ասէ ցնա ։
զինչ գործեցեր դու զայդ ընդ մեզ ։
միթէ մեղաք ինչ քեզ՝ զի ածեր ՚ի վե՛ր
իմ և ՚ի վերայ թագաւորութե՛ն իմոյ
մեղս մեծամեծս ։ գործ՝ զոր ոչ ա-
10 գործէ , գործեցեր ընդիս ։ * Եւ ասէ
աբիմելէք ցաբրահամ ։ զինչ տեսեալ
11 արարեր զամենայդ զայդ ։ * Եւ ասէ աբ-
րահամ ։ զի ասացի ես թէ գուցէ ո՛չ
գուցէ Ա՛Ծպաշտութի՛ւն ՚ի տեղւոջս
յայսմիկ ։ և զիս սպանանիցեն վասն
12 կնոջդ իմոյ ։ * Եւայց ‖ արդարև՝ քոյր ‖ Վ եր-
իմ է ՚ի հօրէ և ո՛չ ՚ի մօրէ ։ և եղև ինձ 12.13.
13 կին ։ * Եւ եղև յորժամ եհան զիս
Ա՛Ծ ՚ի տանէ հօր իմոյ ։ և ես ասացի
ցդա ։ զայս արդարութի՛ւն արասցես
ընդիս ։ յամէ տեղիս ուր և երթիցուք ,
ասասջիր զինէն եթէ եղբայր իմ է ։
14 * Եւ ‖ եառ աբիմելէք հազար ա- ‖ Վ այր-
ոխս և արջառս և ոչխար , ծառայս և 21.23.
աղախնայս , և եառ աբրահամու ։ և եառ
15 ցնա զսարա զկին իւր ։ * Եւ ասէ ա-
բիմելէք ցաբրահամ ։ ահաւադիկ
երկիրդ իմ առաջի քո ։ ուր հաճոյ իցէ
16 քեզ բնակեաց ։ * Եւ ցսարրայ ասէ ։
ահա եառ հազար սատեր եղբօր քումմ ։
այն եղիցի քեզ ՚ի պատիւ երեսաց քոց ։
և առ կանանց որք ընդ քեզ են ։ և
17 զամ արդար խօսեցաւ ։ * Եւ եկաց յա-
ղօթս աբրահամ առ Ա՛Ծ ։ և բժշկեաց
զաբիմելէք և զկին նո՛ր և զաղախնայս
18 նորա , և ծնանէին ։ * Ո՛չ փակելով
փակեաց Տէր արտաքուստ զամ ար-
դանտ ՚ի տան աբիմելէքայ ։ վա՛ սար-
բայի կնոջ աբրահամու ։

ԳԼ ։ Ի՛ ։

1 Եւ Տէր յայց եղ սարրայի ‖ որպէս և ‖ Վ եր-
ասաց ։ և արար Տէր սարրայի՝ ոյն 17. 19։
2 և խօսեցաւ ։ * Եւ յղացաւ ‖ և ծնաւ և 18.10
սարրա աբրահամու որդի ծերութե՛ն ։ ‖ Գաղա-
ըստ ժամանակին որպէս և խօսեցաւ 4.23.
3 ընդ նմա Ա՛Ծ ։ * Եւ կոչեաց աբրա- Լեր.
համ զանուն որդւոյ իւրոյ , զոր ծնաւ 11.11.
4 նմա սարրա իսահակ ։ * Եւ թլփա- Գործ.
տեաց աբրահամ զիսահակ զորդի իւր 7. 8.
յաւուր ութերորդի , որպէս և պատ- ‖ Վ եր-
5 ուիրեաց նմա Տէր Ա՛Ծ ։ * Եւ ‖ աբրա- 17.10.
համ հարիւրամեան էր յորժամ եղև Գործ.
6 նմա իսահակ որդի իւր ։ * Եւ ասէ 7. 8.
սառա ։ ծաղր արար զիս Ա՛Ծ ։ զի որ ‖ Ա՛սա.
7 և լսիցէ ուրախ լինի ընդիս ։ * Եւ 1. 2.
ասէ ։ ով պատմեսցէ աբրահամու և-

թէ մտացանէ զմանուկ սառա . զի
ծնայ որդի ի ծերութեան իմում : * Եւ 8
աճեաց մանուկն . և հատուցաւ ի
սեղան . և արար աբրահամ ուրախու
թիւն մեծ . յաւուր յորում հատուցաւ
ի սեղան իսահակ որդի նր : * Եւ տե- 9
սեալ սառայն զորդին ագարայ եգիպ
տացւոյ , որ եղև աբրահամու , զի
խաղայր ընդ իսահակայ որդւոյ իւր-
||Գաղատ. ումն : և ասէ ցաբրահամ : * || Ի բամ 10
4.30. հան զաղախինդ և զորդի դորա . զի մի
Ընդառաջ. ժառանգեսցէ որդի աղախնոյդ ընդ
30.23. որդւոյ իմում իսահակայ : * Եւ խիստ 11
թոուէեցաւ բանն առաջի աբրահամու
վասն որդւոյ նորա : * Եւ ասէ Ա՛ծ 12
ցաբրահամ . մի՛ լինի խիստ թոուէեցի
առաջի քո վասն մանկանն և վասն
աղախնոյն . զամ՛ որ զինչ ասիցէ քեզ
|| Հոմ. սարրայ՝ լո՛ւր ձայնի նորա . զի || իսա-
9. 7. հակաւ կոչեսցի քեզ զաւակ : * Եւդայց 13
Ընդառ. զորդի աղախնոյն արարից յազգ մեծ .
11.18. զի սերմն քո է : * Յարեաւ աբրահամ 14
ընդ առաւօտն . և էառ հաց և ափիկ
ջրոյ . և ետ յագադար . և եդ յուս նորա
զմանուկն . և արձակեաց զնա : և եր-
թեալ մոլորեալ շրջէր յանապատի
անդ առ ջրհորովն երզման : * Եւ 15
Եղծա. նստաւեալ ջուր ի ափկէ անտի . և ըմ-
պէից զմանուկն ի ներքոյ միոյ եղևին
ծառոյ : * Եւ երթեալ նստաւ յան- 16
դիման նորա ի բացէ երբև վաստա-
նաւ : զի ասէր՝ թէ ոչ տեսից զմահ
որդւոյն իմոյ . և նստեալ յանդիման
նորա : ձայն բարձեալ մանկանն լայր :
* Եւ լուաւ Ա՛ծ ձայնի մանկանն , ի 17
տեղւոջէն ուր էր : և կոչեաց հրեշտակ
Ա՛ծ զագար յերկնից՝ և ասէ ցնա .
զի՞նչ է այդագար . մի՛ երկնչիր . զի
լուաւ Ա՛ծ ձայնի որդւոյդ՝ ի տեղւոջ
ջէ անտի ուր է : * Երի՛ առ զմանուկն 18
քո . և զօրացո՛ զնա ձեռամբ . զի յազգ
մեծ արարից զնա : * Եւ եբաց Ա՛ծ 19
զաչս նորա . և ետես ջրհոր ջրոյ կեն-
դանւոյ . և չոգաւ եվից զտիկն ջրոյն
և արբոյց մանկանն . և էր Ա՛ծ ընդ
Ցաւա. մանկանն : * Եւ աճեաց և եղև աղեղ 20
նետող : * Եւ բնակեր յանապատին 21
փառանաւ . և էառ նմա մայրն նորա
կին յերկրէն եգիպտացւոյ : * Եւ 22
եղև ի ժամանակի յայմմիկ . խօսե-
ցաւ աբիմելէք և ոբզոզաթ առաձար-
պետ նորա . և փիքօղ սպարապետ զօ-
րաց նորա . և ասէ ցաբրահամ : Ա՛ծ
ընդ քեզ է յամենայնի զինչ և գոր-
ծես : * Եւդդ երդումն ինձ յԱ՛ծ եմե- 23
զանելոյ ինձ և մի զաւակիւ իմում . և
Եբր. անուանի իմոյ : այլ ըստ արդարու-
20.13. թեանն || զոր արարի ընդ քեզ՝ արա-

ցես ընդիս . և երկրիս յորում բնա-
24 կեալ ես ի նմա : * Եւ ասէ աբրա-
25 համ . ես երդնում : * Եւ յանդիմա-
նեաց աբրահամ զաբիմելէք , վասն
ջրհորոյն ջուց զոր հանին ծառայքն
26 աբիմելէքայ : * Եւ ասէ ցնա աբի-
մելէք . ոչ դիտացի ո՛ արար զայն իր
և դու ոչ պատմեցեր ինձ . և ի՛ս՛չ էր
27 լուեալ՝ բայց այսօր : * Եւ էառ աբ-
րահամ արջառս և ոչխարս՝ և ետ ա-
բիմելէքայ . և եդին երկոքեան ուխտ
28 ընդ միմեանս : * Եւ կացոյց աբրա-
համ եօթն որոջ ոչխարաց միայն :
29 * Եւ ասէ աբիմելէք ցաբրահամ .
զինչ են այս եօթն որոջք ոչխարացդ,
30 զորս կայուցեր միայն : * Եւ ասէ՝
զայդ եօթն որոջս առցես յինէն , զի
եղիցին ինձ՝ ի վկայութիւն, թէ ես փո-
31 րեցի զ ջրհորդ զայդ : * Վ՚ ա՛յնորիկ
անուանեաց զանուն տեղւոյն այնո-
32 րիկ ջրհոր երդմանն : * Օ՛ի անդ երդ
ուան երկոքեան միմեանց : և անդ ե-
ղեն ուխտ . առ ջրհորովն երդմանն :
յարեաւ աբիմելէք . և ոբզոզաթ առա-
Ձարապետ նորին . և փիքօղ սպարապետ
զօրաց նր . և դարձան անդրէն յեր-
33 կիրն փղշտացւոց : * Եւ տնկեաց աբ-
րահամ առուկ առ ջրհորովն երզմանն.
և կարդաց անդ զանուն Տ՚ն Ա՛ծ յաւի-
34 տենական : * Եւ պանդխտեցաւ աբ-
րահամ յերկրին փղշտացւոց աւուրս
բազումս :

ԳԼ : ԻՌ :

1 Եւ եղև յետ բանիցս այսոցիկ :
|| փորձեաց Ա՛ծ զաբրահամ՝ և || Յոար
ասէ ցնա . աբրահամ : աբրահամ : և 8.22.
2 նա ասէ ահաւասիկ եմ : * Եւ ասէ ցնա . Ընդա
առ դու զորդիդ քո զսիրելի . զոր սի- 11.17.
րեցեր զիսահակ . և գնա դու յերկիրն
բարձր . և հանցես զդա անդ յորդա-
կեզ՝ ի վերայ միոյ լերանցն՝ յորոյ ա-
3 ցցից քեզ : * Եւ յարեաւ աբրահամ
ընդ առաւօտն , հասեուեաց զէշ իւր :
և էառ ընդ իւր երկուս ծառայս : և
զիսահակ զորդի իւր : և պատառեաց
փայտս յողջակէզ՝ յարեաւ և գնաց : և
եկին ի տեղին . զոր ասացն Ա՛ծ :
4 * Եւ յաւուրն երրորդի հասեալ աբ
րահամ զաչս իւր . և ետես զտեղին՝ ի
5 հեռաստանէ : * Եւ ասէ աբրահամ
ցսպասաւսն իւրոնատարսն դուք այդր
հանդերձ էշովդ . և ես և պատանեակս
երթիցուք մինչև ցանդր , և երկիր
պագցուք . և դարձցուք առ ձեզ :
6 * Եւ էառ աբրահամ զփայտս ողջա
կիզին . և եդ՝ ի վերայ իսահակայ որդ
ւոյ իւրոյ . և էառ՝ ի ձեռն զհուրն և
զսուր .

զտուր . և գնացին երկոքեան ՚ի միա-
սին : * Եւ ասէ իսահակ յաբրահամ 7
ցհայր իւր . հայր : և նա ասէ . ահա ե՛ս
որդեակ : և նա ասէ՝ ահա հուր՝ և
ահա փայտ . ո՞ւր է ոչխար յողջակէզ :
* Եւ նա ասէ . Ա՛ստ տեսցէ իւր ոչ- 8
խար յողջակէզ որդեակ : գնացին եր-
կոքեան ՚ի միասին : * Եւ եկին ՚ի տե- 9
ղին. զոր ասաց նմա Ա՛ստ. անդ շինեաց
սեղան աբրահամ. և եդ՚ իվ՚ի զփայտսն
և կապեաց զիսահակ զորդի իւր . և
եդ զնա ՚ի սեղանն ՚ի վերայ փայտին :

Յակոբ. 2.21. * Եւ ձգեաց աբրահամ զձեռն առ- 10
նուլ զտուրն և զնուլ զորդի իւր :
* Եւ կոչեաց զնա հրեշտակ Տ՚ն յերկ- 11
նից՝ և ասէ . աբրահամ՝ աբրահամ. և
նա ասէ ցնա. ահաւասիկ եմ : * Եւ ասէ . 12
մի՛ միաւ ձեռն քո ՚ի պատանեակդ . և
մի՛ ինչ առներ դմա. զի այժմ գիտացի
թէ երկիւղած ես դու Ա՛ստ . և ոչ
խնայեցեր յորդի քո սիրելի վասն իմ :
* Համբարձ աբրահամ զաչս իւր և 13
եռես . և ահա խոյ մի կախեալ կայր
զծառոյն սաբեկայ զեղջերայեւ գնաց
աբրահամ և եառ զնոյն. և եհան զնա
յողջակէզ փոխանակ իսահակայ որդ-
ւոյ իւրոյ : * Եւ կոչեաց աբրահամ 14
զանուն տեղւոյն այնորիկ Տ՚ն եռես .
զի ասիցեն ցայսօր ՚ի լերինն յայնմիկ
Տ՚ն երևեցաւ : * Եւ կոչեաց հրեշտակ 15
Տ՚ն զաբրահամ երկիցս անգամ յերկ
նից՝ և ասէ : * Յանձն իմ երդուայ՝ 16

ասէ Տ՚ն . փոխանակ զի արարեր դու զբանդ զայդ . և ոչ խնայեցեր յոր- 17
դիդ քո սիրելի վասն իմ . այո՛ :
* Օրհնելով օրհնեցից զքեզ. և բազ- 17
մացուցանելով բազմացուցից զսեր-
մակ քո իբրև զաստեղս երկնից և բազ-
մութիւն . և իբրև զաւազ առափն ծո-
վու . և ժառանգեսցէ զսերմակ քո
զբաղաքս հակառակորդաց իւրոց :
* Եւ 18 օրհնեսցին ՚ի զաւակի քում
ամենայն ազգք երկրի . փոխանակ զի
լուար ձայնի իմում : * Դարձաւ աբ- 19
րահամ առ պատանեսն իւր . և յարու-
ցեալ գնացին ՚ի միասին ՚ի ջրհորն
երդմանն . և բնակեաց աբրահամ առ
ջրհորին երդմանն : * Եւ եղև յետ բա- 20
նից այսոցիկ . պատմեցաւ աբրահա-
մու , թէ ահա ծնաւ մելքայ որդիս
նաքովրայ եղբօր քումի : * Օսիլքս 21
զանդրանիկն նորա . և զբաւ զեղբայր
նորա . և զհամունէլ հայր ասորւոց :
* Եւ զքաշադ . և զասաւ . և զփաղ- 22
դաս . և զյեդլաֆ . և զթաւէլ :
* Եւ բաթուէլ ծնաւ զրեբեկայ . 23
ութ սոքա՝ զորս ծնաւ մելքա նաքով
րայ եղբօրն աբրահամու : * Եւ հարճն 24
նորին որոյ էր անուն ռեումայ , ծնաւ
և նա զտաբեկ . և զգաամ . և զտոքաս .
և զմոկքայ :

ԳԼՒԽ ԻԳ.

1 Եւ եղեն կեանք սարրայի հարիւր
2 և քսան և եօթն ամ : * Եւ մե-
ռաւ սարրայ ՚ի քաղաքի արբոկայ ՚ի
ձորն . այսինքն է քեբրոնն յերկրին
քանանացւոց : և եկն աբրահամ կո-
3 ծել զսարրայ՝ և սուգ առնուլ : * Եւ
յարեաւ աբրահամ ՚ի մեռելոյ անտի
իւրմէ, և խօսեցաւ ընդ որդիս քեթայ՝
4 և ասէ : * Պանդուխտ և նժդեհ եմ
ես ՚ի միջի ձերում : արդ՝ տուք ինձ
տապարձած գերեզմանի ընդ ձեզ . և
5 թաղեցից զմեռելդ իմ : * Պատաս-
խանի եառնուն որդիքն քեթայ աբրահա
6 մու՝ և ասեն . * Լսեմք դիր մեզ Տ՚ն .
թագաւոր Ա՛ստ ես ՚ի միջի մերում .
յընտիր շիրմանց մերոց թաղեա զմե-
ռելդ քո . զի ոչք ՚ի մէնջ արգելուս
7 ՚ի քէն զշիրիմն : * Յարեաւ աբրա-
համ և երկիր եղապ ժողովրդեանն
8 երկրին որդւոցն քեթայ : * Եւ խօսե-
ցաւ ընդ նոսա աբրահամ՝ և ասէ .
եթէ յօժարիցիք ՚ի մտի ձերում թա-
ղել զմեռելդ յերեսաց իմոց, լուիք
դիք ինձ . և խօսեցարուք վասն իմ
9 ընդ եփրոնայ որդւոյ սահառայ : * Եւ
տացէ ինձ զայրն կրկին . որ է ՚ի վե-
ճակի տապարակին իւրոյ՝ արծաթով ,

Աղէ. 104.9. Սերտ. 44.21. 1.Պետ. 2.52. Ա ոտն. 1.73. Ա Եբրայ. 6.13. Ա եբ. 12.3: Եւ 18.18. Ա այր. 26.4. Սերտ. 44.25. Ա Տրթ. 3.25.

որչափ և արժան իցէ. տացէ զնա ինձ
'ի միջի ձերում 'ի ստացուած բնա_
կաց։ *Եւ եփրոն նստէր 'ի մէջ որդ_ 10
ւոցն քետայ։ Պատասխանի ետ եփրոն
քետացի աբրահամու՝ և ասէ լուիլու
որդւոցն քետայ. և ամենեցուն որք
մտանէին ընդ դուռն քաղաքին նր։
*Եւ ասէ. լե՛ր դարձ տէր. և ունկն 11
դիր ինձ։ զագարակն ետու քեզ։ և
զայրն որ 'ի նմա տաց քեզ։ առաջի ամ
քաղաքակցաց իմոց ետու քեզ. թա_
ղեա՛ զմեռեալն քո։ *Եւ երկիրեպագ 12
աբրահամ առաջի ժողովրդեան երկ
րին։ *Եւ խօսեցաւ ընդ եփրոնի յա_ 13
կանջս ժողովրդեան երկրին. և ասէ։
որովհետև անսացեր ինձ, ունկն դիր
ինձ։ տաց քեզ արծաթ ընդ ագարա_
կին. առ յինէն. և թաղեցից անդր
զմեռեալն։ *Պատասխանի ետ եփրոն 14
աբրահամու՝ և ասէ ցնա։ *Ոչ տէր 15
իմ. լուա՛յ թէ գետինն չորեքհարիւր
սատերի արծաթոյ է. ընդ իս և ընդ
քեզ զինչ է այն։ բայց դու թաղեա՛
զմեռեալն քո։ *Եւ իբրև լուաւ աբ_ 16
‖ Ա. այր. 25.10. րահամ յեփրոնէ. ‖ կշռեաց աբրա_
համ զարծաթն եփրոնի, զոր խօսե_
ցաւ յականջս որդւոցն քետայ, չորեք
հարիւր սատեր արծաթոյ ընտրոյ վա
ճառականաց։ *Եւ հաստատեցաւ 17
ագարակն եփրոնի, որ է առ կրկնով
այրիւն յանդիման մամբրէի. ագա_
րակն և այրն, որ է 'ի նմա. և ամենայն
ծառատունկ, որ էր յագարակի անդ,
շուրջ յամենայն սահմանս նորա։
*Ի ստացուածս աբրահամու առաջի 18
որդւոցն քետայ. և որք մտանէին ընդ
դուռն քաղաքին նորա։ *Եւ յետ այ_ 19
նորիկ թաղեաց աբրահամ զսառայ
զկին իւր 'ի կրկնում այրի ագարակին.
որ է յանդիման մամբրէի. այն է քեփ
րոն, յերկրին քանանացւոց։ *Եւ 20
հաստատեցաւ ագարակն և այրն, որ
է 'ի նմա՝ աբրահամու. 'ի ստացուածս
շիրմաց յորդւոյն քետայ։

ԳԼ: ԻԴ։

Եւ աբրահամ էր ծերացեալ և 1
անցեալ զաւուրբք։ և Տր օրհ_
նեաց զաբրահամ ամենայնիւ։ *Եւ 2
ասէ աբրահամ՝ ցծառայն իւր ցերէց
տան իւրոյ, ցիշխան ամենայն ընչից
‖ Ա. այր. 47.29. նորա. ‖ դիր զձեռն քո ընդ երանօք
իմօք։ *Եւ երդմնեցուցից զքեզ 'ի 3
Տր, յԱ.Ծ երկնից. և յԱ.Ծ երկրի. զի
մի առցես կին որդւոյ իմում իսահա_
կայ 'ի դստերաց քանանացւոց. յորոց
միջի ես բնակեալս եմ։ *Այլ յեր_ 4
կիրն իմ ուստի ելեալեմ երթիցես.
և 'ի տուն իմ. և առցես դու անտի կին
5 որդւոյ իմում իսահակայ։ *Ասէ ցնա
ծառայն։ գուցէ կինն ոչ կամիցի գալ
ընդ իս յերկիրս յայս. դարձուցանե_
լով դարձուցից զորդի քո յերկիրն
6 ուստի ելեր։ *Եւ ասէ աբրահամ.
զգո՛յշ լեր. մի՛ դարձուցանիցես զորդի
7 իմ անդր։ *Տր Ա.Ծ երկնից, և Ա.Ծ
երկրի, որ էառ զիս 'ի տանէ հօր իմոյ,
և յերկրէն ուստի ծնեալէի, որ խօսե_
ցաւ ընդ իս՝ և երդուաւ ինձ, և ասէ.
‖ զաւակի քում տաց զերկիրդ զայդ, ‖ Ա. էր 12.7. և
նա առաքեսցէ զհրեշտակ իւր առաջի 13. 15. և 15.18
քո. և առցես անտի կին որդւոյ իմում
8 իսահակայ։ *Ապա թէ ոչ կամիցի
կինն գալ ընդ քեզ յերկիրս այս, քաւ ‖ Ա. այր. 26.3.
եալ լիջիր դու յերդմնէդ յայդմա_
նէ։ բայց միայն զորդեակ իմ մի՛ դար_
9 ձուցանիցես անդր։ *Եւ եդ ծառայն
աբրահամու զձեռն իւր ընդ երանօք
տեառն իւրոյ՝ և երդուաւ նմա վասն
10 բանիս այսորիկ։ *Եւ էառ ծառայն
տասն ուղտ յուղտուց տեառն իւրոյ՝
և գնաց։ և յամ բարութենց Տն իւրոյ
ընդ իւր։ և յարեաւ և գնաց 'ի միջա_
11 գետս 'ի քաղաք նաքովրայ։ *Եւ նստոյց
զուղտսն արտաքոյ քաղաքին. առ ջր_
հորոյ ջրոյն ընդ երեկս յորժամ ջրուորն
12 ելանէր. և ասէ։ *Տէր Ա.Ծ Տեառն
իմոյ աբրահամու, յաջողեա՛ առաջի
իմ այսօր։ և արա՛ ողորմութիւն ընդ Տն
13 իմում աբրահամու։ *Ահաւասիկ ես
կամ 'ի վերայ աղբեր ջրոյս. և դստերք
բնակչաց քաղաքիս ելանեն հանել
14 ջուր։ *Եւ եղիցի կոյս մի որում ես
ասացից, թէ խոնարհեցո՛ զսափորդ
քո զի արբից, և ասասցէ ցիս՝ արբ. և
ուղտուցդ քոց ես արբուցից, մինչև
դադարեսցեն յըմպելոյ, զայն պատ_
րաստեցեր ծառայի քում իսահակայ.
և այնու գիտացից եթէ արարեր ողոր
մութի՛ւն տեառն իմում աբրահամու։
15 *Եւ եղև մինչչև կատարեալ էր նր
զխօսսն 'ի մտի իւրում։ և ահա ռեբե
կա եկն ել. որ ծնեալն էր բաթուէլի
որդւոյ մելքայ. կնոջ նաքովրայ եղբօր
աբրահամու։ և ունէր սափոր յուս
16 իւր։ *Եւ էր կոյսն գեղեցիկ երեսօք
յոյժ։ կոյս՝ զոր այր ոչ գիտէր։ էջ
յաղբիւրն. և ելից զսափորն իւր՝ և
17 ել։ *Ընթացաւ ծառայն ընդ առաջ
նորա՝ և ասէ։ արբո՛ ինձ սակաւ մի
18 ջուր 'ի սափորոյ այտի։ *Եւ նա ասէ.
արբ Տր։ և փութացաւ իջոյց զսա_
փորն 'ի վերայ բազկաց իւրոց. և ար_
19 բոյց նմա։ *Մինչև դադարեաց յըմ
պելոյ։ և ասէ՝ և ուղտուցդ քոց հա_
նից ջուր մինչև ամենեքեան արբցեն։
*Եւ

*Եւ փութացաւ թափեաց զսափորն 20
յաւազանն. և ընթացաւ դարձեալ
՚ի ջրհորն հանել. և եհան ջուր ամե_
նայն ուղտուցն նորա: *Եւ այրն միտ 21
դնէր նմա. և լուռ կայր ՚ի միտ առ_
նուլ. եթէ յաջողեաց Տէր զճանա_
պարհն նր՝ և թէ ոչ: *Եւ եղև իբրև 22
դադարեցին ամենայն ուղտքն յըմպե_
լոյ, և էառ այրն գինդս ոսկիս մի մի
ըստ դահեկանի ծուլոյ. և երկուս ա_
պարանջանս ՚ի ձեռս նորա. ՚ի տասն
դահեկանէ ծոյլ նոցա: *Եւ եհարց 23
զնա՝ և ասէ. ո՞յր դուստր ես դու.
պատմեա՛ ինձ՝ թէ իցէ ՚ի տան քում
մեզ տեղի իջավանաց: *Եւ ասէ 24
ցնա. դուստր բաթուէլի եմ ես որդ_
ւո՛յ մելքեայ. զոր ծնաւ նաքովրայ:
*Եւ ասէ ցնա. յարդ և խոտ շատ է 25
մեր. և տեղի իջավանաց: *Խնդաց 26
այրն. և երկիր եպագ Ա.ծ: *Եւ ասէ. 27
օրհնեալ Տր Ա.ծ տն իմոյ աբրահա_
մու. որ ոչ վրիպեցոյց զարդարութի
իւր և զճշմարտութի ՚ի տեառնէ իմ_
մէ. և ինձ յաջողեաց Տր ՚ի տան եղ_
բօր Տն իմոյ: *Եւ ընթացաւ աղ_ 28
ջիկն պատմեաց ՚ի տան հօր իւրոյ ըստ
բանիցն այնոցիկ: *Եւ ռեբեկայ էր 29
եղբայր՝ որում անուն էր լաբան: և
ընթացաւ լաբան առ այրն արտաքս
յաղբիւրն:*Իբրև ետես զգինդսն և 30
զապարանջանսն ՚ի ձեռսն քեռ իւրոյ.
և զի լուաւ զբանսն ռեբեկայ քեռ է
իւրմէ՝ որ ասէր. թէ այսպէս ինչ խօ_
սեցաւ ընդ իս այրն: և եկն առ այրն,
մինչ կայր ՚ի վերայ ուղտուց իւրոց
առ աղբերն:*Եւ ասէ ցնա. եկ՝ մուտ 31
՚ի տուն օրհնեալ Տն. զի՞ կաս արտա_
քոյ. զի ես պատրաստեցի տուն և տե_
ղի ուղտուցդ: *Եմուտ այրն ՚ի տուն 32
անդր և իջոյց յուղտուցն: և ետուն
յարդ և խոտ ուղտուցն. և ջուր լուա_
նալոյ ոտից նր. և ոտից նոցա որք ընդ
նմայն էին: *Եւ եդին հաց առաջի 33
նր ուտել: և նա ասէ. ո՛չ կերայց մինչև
խօսեցայց զբանս իմ և ասեն խօսեաց:
*Եւ՛ ասէ. ծառայ աբրահամու եմ 34
ես: *Եւ Տէր օրհնեաց զտէր իմ 35
յոյժ: և բարձրացաւ. և ետ նմա ար_
ջառ և ոչխար. և արծաթ և ոսկի.
ծառայս. և աղախնայս. ուղտս և
էշս: *Եւ ծնաւ սառայ կին տեառն 36
իմոյ որդի մի Տն իմում. յետ ծերու_
թե իւրոյ. և նմա ետ զամ ինչ՝ որ էր
նր: *Եւ երդմնեցոյց զիս Տր իմ՝ և 37
ասէ. ո՛չ առցես կին որդւոյ իմում
իսահակայ ՚ի դստերաց աստի քանա_
նացւոց. յորոց միջի ես պանդխտեալս
եմ յերկրի սոցա: *Այլ ՚ի տուն հօր 38
իմոյ երթիցես և ՚ի տոհմ իմ. և առ_
39 ցես անտի կին որդւոյ իմում: *Եւ
ես ասացի ցտէրն իմ: գուցէ ոչ գայ_
40 ցէ կինն ընդ իս: *Եւ ասէ ցիս. Տէր
Ա.ծ իմ որում հաճոյ եղէ առաջի նո_
րա. նա առաքեսցէ զհրեշտակ իւր
ընդ քեզ. և յաջողեսցէ զճանապարհ
քո. և առցես կին որդւոյ իմում յազ
գէ իմմէ. և ՚ի տանէ հօր իմոյ:
41 *Եւ՛ յայնժամ քաւեալ լիցիս ՚ի նզո_
վից աստի իմոց, յորժամ երթիցես
՚ի տոհմն իմ՝ և ոչ տացեն, քաւեալ
42 լիցիս յերդմանէ աստի իմմէ: *Եւ
իբրև եկի այսօր յաղբիւրն՝ ասեմ: Տր
Ա.ծ Տն իմոյ աբրահամու, եթէ յաջո_
ղեցեր ինձ զճանապարհս իմ, զոր ես
43 այժմիկ եկեալ եմ: *Ահաւասիկ ես
հասեալ կամ ՚ի վերայ աղբեր ջրոյս.
և դստերք մարդկան քաղաքիս ելա_
նեն տանել ջուր. և եղիցի կոյս, ցոր
ես ասացից թէ արբո ինձ սակաւ մի
44 ջուր ՚ի սափորոյդ քումմէ: *Եւ ա_
սասցէ ցիս՝ թէ արբ. և ուղտուցդ
ես քոյ հանից ջուր. այն է կին՝ զոր
պատրաստեաց Տր ծառայի իւրում
իսահակայ. և այնու գիտացից՝ թէ
արարեր ողորմութի ընդ Տն իմում
45 աբրահամու: *Եւ եղև մինչչև իմ
կատարեալ էր զխօսս ՚ի մտի իմում,
անդէն վաղվաղակի ելանէր ռեբե_
կայ. և ունէր սափոր յուս իւր: էջ
յաղբիւրն՝ և էհան ջուրև ասեմ՝ ցնա
46 արբո ինձ: *Եւ փութացեալ իջոյց
զսափորն յինքենէ. և ասէ՝ արբ դու.
և ուղտուցդ ես քոյ արբուցից և ար_
47 բի. և ուղտուցն իմոց արբոյց: *Եւ
հարցի ցնա՝ և ասեմ. ո՞յր դուստր ես
դու՝ պատմեա ինձ. և նա ասէ, դուստր
բաթուէլի եմ ես՝ որդւոյ նաքովրայ.
զոր ծնաւ նմա մելքա. և եդի զգինդս
յականջս նր. և ապարանջանս ՚ի ձեռս
48 նորա. և խնդացի: *Եւ երկիր պագի
Տն. և օրհնեցի զՏր Ա.ծ տեառն իմոյ
աբրահամու. որ յաջողեաց ինձ ՚ի ճա_
նապարհի աստ ճշմարտութե. առ_
նուլ զդուստր եղբօր Տն իմոյ որդւոյ
49 նորա: *Արդ՝ եթէ առնէք դուք
շնորհս և արդարութի առ տէրն իմ:
պատմեցէք ինձ: ապա թէ ոչ՝ ցուցէք
ինձ զի դարձայց յաջ կամ յահեակ:
50 *Պատասխանի ետուն լաբան և բա_
թուէլ՝ և ասեն. ՚ի Տե ել իրդ այդ.
և մեք ո՛չ կարեմք հակառակ ինչ չար
51 ասել բարւոյ: *Ահաւադիկ ռեբե_
կայ առաջի քո. ա՛ռ և գնա. և եղիցի
կին որդւոյ Տն քոյ՝ որպէս և խօսեցաւ Տր:
52 *Եւ եղև իբրև լուաւ ծառայն աբ_
րահամու զբանս նց, երկիր եպագ Տն
*Եւ

* Եւ եհան ծառայն անօթս ոսկւոյ · 53
եւ անօթս արծաթոյ · եւ զհանդերձ ·
եւ ետ ռեբեկայ · եւ ետ ընծայս եղ-
բարցն նորա՝ եւ մերձ։ * Կերին՝ եւ ար- 54
բին նա, եւ արքն որք ընդ նմա էին ·
եւ նոքօթեցին ։ եւ յարուցեալ՝ ի վաղը-
ւեայն անդր՝ ասէ ։ արձակեցէք զիս
զի երթայց առ տէր իմ՝ ։ * Եւ ասեն 55
եղբարքն նր եւ մայրն · կացցէ կոյս
առ մեզ իբրեւ աճուրս տասն. եւ ապա
երթիցէ ։ * Եւ նա ասէ ցնս · մի խա- 56
փանէք զիս · զի Տէր յաջողեաց զճա-
նապարհ իմ։ արձակեցէք զիս զի եր-
թայց առ տէրն իմ։ * Եւ ասեն եղ 57
բարք նորա · կոչեսցուք զաղջիկն, և
հարցցուք՝ ի բերանոյ նր ։ * Կոչեցին 58
զռեբեկայ՝ և ասեն ցնա. երթա՞ ընդ
առնս ընդ այսմիկ. և նա ասէ. երթամ։
* Եւ յուղարկեցին զռեբեկայ զքոյրն 59
իւրեանց · և զինչս նորա · և զծառայն
աբրահամու · և որք ընդ նմայն էին ։
* Եւ օրհնեցին զռեբեկայ՝ և ասեն 60
ցնա · քոյր մեր՝ եղիցիս ՚ի հազարս և
՚ի բիւրս · և ժառանգեսցէ զաճակ-ք
զքաղաքս թշնամեաց քոց ։ * Յարու- 61
ցեալ ռեբեկայ և նաժիշտք իւր եւ էլին
յուղտս · և գնային ընդ առնն · և
առեալ ծառայն զռեբեկայ՝ գնաց ։
|| Ա Էր. * Եւ || իսահակ յանապատի անդ առ 62
16.14. ջրհորսն տեսլեանն բնակէր յերկրին
՚ի կողմն հարաւոյ ։ * Եւ էլ իսահակ 63
զբօսնուլ ՚ի դաշտին ընդ երեկս · ամ-
բարձ զաչս իւր՝ և եւտես, զի գային
ուղտք տան ։ * Ամբարձեալ զաչս 64
իւր ռեբեկայ եւտես զիսահակ ։ ել
վայրվարուկն յուղտոյ անտի ։ * Եւ 65
ասէ ցծառայն · ո՞վ է այրն, որ գայ՚ի
դաշտին ընդ առաջ մեր ։ և ասէ ծա-
ռայն · նա՛ տէրն իմ։ և նո՛ր առեալ
զձորձս արկաւ զնրբև ։ * Եւ պատ- 66
մեաց ծառայն իսահակայ զամ՛զնօսան
զոր սարաք ։ * Եւ եմուտ իսահակ ՚ի 67
տունն սառայի մօր իւրոյ և էառ զռե-
բեկայ · և եղև նորա կին · և սիրեաց
զնա · և միխթարեցաւ իսահակ վասն
սաղրայի մօր իւրոյ։

ԻԵ։ ԻԶ։

Եւ էյաւել աբրահամ առնուլ կին 1
որում անուն էր քետուրա ։
|| Ա.Գիրք * || Եւ ծնաւ նմա զեմրան · և զյեկ- 2
1. 32. սան · և զմադան · և զմադիան · և
զյեսբոկ · և զսուհէ ։ * Եւ յեսկան 3
ծնաւ զսաբա · և զդեդիան · և զդա-
դան ։ և եղեն որդիք դադանայ · ռա-
գուէլ · և նաբդեէլ · և աասբրիիմ. և
լատուսիիմ. և լումմիիմ ։ * Եւ որ- 4
դիք միոզիանաւ · գեփար · և ամիդը ·
և ենոք · և աբիդա · և եղբաղաամ ·
նեբեւան սոքա էին որդիք քետուրայ ։
5 * Եւ ետ աբրահամ զամ՛ ինչս իւր
6 իսահակայ որդւոյ իւրում։ * Եւ որդ-
ւոց հարճիցն իւրոց, որք էին աբրա-
համու, ետ աբրահամ պարգեւս · և
արձակեաց զնս յիսահակայ որդւոյ
իւրոյ · մինչ դեռ ինքն կենդանի էր
ընդ արեւելս · յերկիրն արեւելից ։
7 * Եւ սոյս են ամք աճուրց կենացն աբ-
րահամու · զորս եկեաց՝ հարիւր և
8 եօթանասուն և հինգ ամ։ * Եւ պա-
կասեալ աբրահամու մեռաւ՚ի բարւոք
ծերութենէ · ալեւորեալ և լի աճուրք ·
9 և յաւելաւ առ ժողովուրդ իւր ։ * Եւ
թաղեցին զնա իսահակ և իսմայէլ
որդիք նորա յայրն անդ՚ի կրկնուտ ·
յագարացւոյն եփրոնի որդւոյ սահա-
ռայ քեւտացւոյ · որ է յանդիման մամբռ
10 բէի ։ * || Զդաշտն և զայրն զոր առա || Ա Էր.
ւին աբրահամ յորդւոցն քետուրայ անդ 23.16.
թաղեցին զաբրահամ և զառաւել զկին
11 նր ։ * Եւ եղև յետ մահուանն աբրա-
համու, օրհնեաց Ա.Ծ զիսահակ զոր-
դի նր ։ || Եւ բնակեցաւ իսահակ առ || Ա Էր.
12 ջրհորն տեսլեան ։ * Եւ սոյս են 16.14.
ծնունդք իսմայէլի որդւոյ աբրահա-
մու · զոր ծնաւ ագար եգիպտացի աբ-
13 րահամու՝ աղախինն սարրայի ։ * Եւ
սոյս են անուանք որդւոցն իսմայէլի ·
ըստ անուանց ազգացն նր ։ || անդրա- || Ա.Գիրք
նիկ իսմայէլի նաբեւօթ · և կեդար. և 1.29.
14 աբդեէլ · և մաբսամ ։ * Եւ մասմա ·
15 և իդումա · և մասէ ։ * Եւ քոդդադ · հադադ ·
և թեմա · և յեսուբ · և նաւափէս · և
16 կեդմա ։ * Սոքա են որդիք իսմայէլի ·
և սոյս անուանք են նր՚ի հանդրճանս
իւրեանց · և՚ի խորանս իւրեանց · եր-
կոտասան իշխանքն նոցա ըստ ազգաց
17 իւրեանց ։ * Եւ սոյս են ամք կենաց
իսմայէլի · հարիւր երեսուն և եօթն
ամ. և պակասեալ մեռաւ · և յաւելաւ
18 յազգ իւր ։ * Եւ բնակեցաւ յեւիլայ
մինչև ցսուր · որ է յանդիման եգիպ-
տոսի մինչև՚ի գալ յասորեստանեայս ·
յանդիման ամ՝ եղբարց իւրոց բնա-
19 կեցաւ ։ * Եւ սոյս են ծնունդք իսա-
հակայ որդւոյ աբրահամու ։ աբրա-
20 համ ծնաւ զիսահակ ։ * Եւ էր իսա-
հակ ամաց քառասնից յորժամ՝ եառ
զռեբեկա զդուստր բաթուելի ասոր-
ւոյ · որ էր՚ի միջագետաց ասորւոց ·
քոյր լաբանայ ասորւոյ՝ իւր՚ի կնու-
21 թիւն ։ * Եւ աղաչէր իսահակ զՏէր վա-
ռեբեկայ կնոջ իւրոյ՝ զի ամուլ էր ։
և լսեաւ նմա Ա.Ծ ։ և յղացաւ ռեբե-
22 կա կին նորա ։ * Եւ խռովեցին մանկունքն ՚ի նմա ։ և ասէ՝ եթէ այսպէս

լինիցի ինձ, ընդէ՞ր իցէ ինձ այս. և
գնաց հարցանել 'ի Տ̄է ։ * Եւ ասէ 23
Հռով. ցնա Տր̄. ‖ Երկու ազգք են յարգան_
9.10. ակի քում. և երկու ժողովուրդք յո_
րովայնէ քումմէ զատցին. և ժողո_
վուրդ զժողովրդեամբ ելեւել առնի_
ցէ. և երէցն կրտսերոյն ծառայեսցէ։
* Եւ իբրև լցան նորա աւուրք ծնա_ 24
նելոյ. և էին երկու որդիք յորովայնի
Օսէէ. նորա։ * ‖ Եւ ելին եւ որդին անդրա_ 25
12.3. նիկ շառագոյն ամենևին իբրև զմորթ
թաւ. և անուանեաց զանուն նր̄ եսաւ.
Մատ. ‖ Եւ ապա ել եղբայր նր̄. և ձեռն նորա
1. 2. ունէր զգարշապարէ եսաւայ։ և կո_
չեաց զանուն նր̄ յակոբ։ * Եւ իսահակ 26
էր ամաց վաթսնից՝ յորժամ ծնաւ
զնո̄ ռեբեկա ։ և աճեցին մանկունքն։
* Եւ էր եսաւ այր հմուտ որսոյ՝ վայ_ 27
րագ։ և յակոբ այր առանց պաճուճա_
նաց ընդաստուն ։ * Եւ սիրէր իսահակ 28
զեսաւ. զի որս նորա կերակուր էր
նմա. և ռեբեկա սիրէր զյակոբ։
* Եւ էր եփեալ յակոբայ թան. և եկն 29
եսաւ 'ի դաշտէ նքթեալ ։ * Եւ ասէ 30
եսաւ ցյակոբ. տո՛ւր ինձ ճաշակել
'ի շիկաթանէդ յայդմանէ զի նքթեալ
եմ։ վասն այնորիկ կոչեցաւ անուն
Աբդ. նր̄ ‖ եդովմ։ * Եւ ասէ յակոբ ցեսաւ. 31
1. 10. վաճառեա՛ ինձ այսօր զանդրանկու_
թի՞ւ քո ։ * Եւ ասէ եսաւ. ահա՛ւա_ 32
սիկ ես երթամ՝ 'ի վախճանիլ. և առ_
իմ՞ իցեն այս անդրանկութիւնք ։
* Եւ՛ ասէ ցնա յակոբ. երդուի՛ր ինձ 33
Եբր. այսօր ։ և երդուաւ նմա ։ ‖ և վաճա_
12.16. ռեաց եսաւ զանդրանկութիւնս իւր
յակոբայ ։ * Եւ յակոբ ետ եսաւայ 34
զհաց. և թան ոսպնեայ. եկեր. և
էարբ. և յարեաւ գնաց. և անարգեաց
եսաւ զանդրանկութիւնն։

ԳԼ: ԻԶ.

Եւ եղև սով յերկրին. թող զա_ 1
ռաջին սովն. որ եղև 'ի ժամա_
նակին աբրահամու։ և չոգաւ իսահակ
առ աբիմելէք արքայ փղշտացւոց 'ի
գերերայ ։ * Եւ երևեցաւ նմա Տր̄ և 2
ասէ. մի՛ իջաներ յեգիպտոս. այլ բնա
կեա՛ց դու յերկրիդ՝ յորում ասացից
քեզ ։ * Եւ պանդխտեա՛ց յերկրիս 3
յայսմիկ. և եղէց ընդ քեզ. և օրհ_
Ծն. նեցից զքեզ. ‖ զի քեզ և զաւակի քում
12.7. և տաց զա̄մ երկիրս զայս. և հաստատե_
15. 18. ցից զերդումն իմ. զոր երդուայ աբ_
րահամու հօր քում։ * Եւ բազմացու_ 4
ցից զզաւակ քո իբրև զաստեղս երկ_
Ծն. նից. և տաց զաւակի քում զա̄մ զեր_
12.3. և կիրս զայս ‖ և օրհնեսցին 'ի զաւակի
18. 18. քում ա̄մ ազգք երկրի։ * փոխանակ 5
և 22.18

զի լուաւ աբրահամ հայր քո ձայնի Ծն.
իմում. և պահեաց զհրամանս իմ. և 28. 14.
զպատուիրանս իմ. և զիրաւունս իմ.
6 և զօրէնս իմ։ * Եւ բնակեցաւ իսա_
7 հակ 'ի մէջ գերերացւոց ։ * Եւ հար_
ցին արք տեղւոյն զռեբեկայ կնոջէ
նր̄. և ասէ՝ քոյր իմ է ։ քանզի երկեաւ
ասել թէ կին իմ է. թէ գուցէ սպա_
նանիցեն զնա արք տեղւոյն վա̄ ռե_
բեկայ. զի գեղեցիկ էր երեսօք։
8 Եւ՛ եղև անդ բազում՝ ժամանակի ։
և կարկառաւ աբիմելէք արքայ փղշ
տացւոց ընդ պատուհանն. և ետես
զիսահակ զի խաղայր ընդ ռեբեկայ
9 կնոջ իւրում ։ * Կոչեաց աբիմելէք
զիսահակ՝ և ասէ ցնա. ուրեմն կին քո
էր. ընդէ՞ր ասացեր՝ թէ քոյր իմ է ։
ասէ ցնա իսահակ, քանզի ասացի՝ թէ
10 գուցէ մեռանիցիմ վա̄ նր̄ ։ * Ասէ
ցնա աբիմելէք. ընդէ՞ր արարեր զայդ
ընդ մեզ. սակաւիկ մի և ննջեալ էր
ուրումն յազգէ իմմէ առ կին քո. և
ածէիր 'ի վերայ մեր անգիտութիւն. և
պատուիրեաց աբիմելէք ա̄մ ժողովր
11 դեանն իւրում, և ասէ ։ * Ամենայն
որ հարկանիցի ընդ այրդ ընդ այդ.
կամ ընդ կին դորա, մահու պարտա_
12 կան լիցի ։ * Եւ սերմանեաց սերմն
իսահակ յերկրին յայնմիկ. և եգիտ
'ի տարւոջն յայնմիկ հարիւրաւոր զգա
13 րին. և օրհնեաց զնա Տր̄։ * Եւ բարձ_
րացաւ այրն. և երթայր յառաջա_
դէմ. և մեծանայր. մինչև եղև մեծ
14 յոյժ ։ * Եւ եղև նր̄ անասուն ոչխարի.
և արջառոյ. և արմտիք բազումք ։ և
նախանձեցան ընդ նմա փղշտացիքն։
15 * Եւ զա̄մ ջրհորս, զորս փորեցին
ծառայք նր̄ 'ի ժամանակին աբրա_
համու հօր նր̄, խցին փղշտացիքն՝ և
16 լցին զնո̄ հողով ։ * Եւ ասէ աբիմե_
լէք ցիսահակ. երթ դնա 'ի մէնջ. զի
17 կարի զօրագոյն քան զմեզ եղեր։ * Եւ
գնաց անտի իսահակ. և բնակեցաւ
'ի ձորն գերերացւոց. և անդ բնակե_
18 ցաւ ։ * Եւ դարձեալ իսահակ փո_
րեաց զջրհորսն ջրոց. զորս փորեցին
ծառայքն աբրահամու հօր նորա. և
խցին զայն փղշտացիքն յետ մահուանն
աբրահամու հօր նորա. և եդ նց̄ ա_
նուանս ըստ անուանցն՝ զոր անուա_
19 նեաց նց̄ աբրահամ հայր իւր ։ * Եւ
փորեցին ծառայքն իսահակայ 'ի ձորն
գերերացւոց. և գտին անդ ջրհոր ջրոյ
20 կենդանւոյ։ * Եւ մարտնչէին հովիւքն
գերերացւոց ընդ հովուին իսահա_
կայ. և ասէին՝ թէ իւրեանց իցէ ջր_
հորն. և կոչեաց զանուն ջրհորոյն
21 զրկութիւն քանզի զրկէին զնա։ * Փորեաց
անտի՝

անուն՝ և փորեաց միւս ևս ջրհոր ջրոյ·
հակառակէին վն̃ այնորիկ ևս ։ և կո_
չեաց զանուն նորա Թշնամութիւն ։
*Չուեաց անտի՝ փորեաց այլ ջրհոր՝ 22
և ոչ մարտնչէին վն̃ այնր՝ և կոչեաց
զանուն նր̃ Անդորրութիւն · ասէ՝ զի
այժմ ընդարձակեաց մեզ Տր̃ · և աճե
ցոյց զմեզ յերկրի ։ *Եւ անտի ՚ի ջրհո_ 23
հորն երդմանն ։ *Եւ երևեցաւ նմա 24
Տր̃ ՚ի գիշերին յայնմիկ՝ և ասէ ։ Ես եմ
Ա̃ծ հօր քոյ · մի երկնչիր՝ զի ընդ քեզ
եմ · և օրհնեցից զքեզ · և բազմա_
ցուցից զզաւակ քո վն̃ Աբրահամու
հօր քոյ ։ *Եւ շինեաց անդ սեղան · և 25
կարդաց զանուն Տն̃ ։ և եհար անդ
զխորան իւր ։ փորեցին ծառայքն Իսա
հակայ անդ ջրհոր ։ *Եւ Աբիմելէք 26
չոգաւ առ նա ՚ի Գերարայ · և Ոքոզաթ
սաձարապետ նորա · և Փիքող սպա_
րապետ զօրաց նր̃ ։ *Եւ ասէ ցնոսա 27
Իսահակ · զի՞ եկիք առ իս · զի դուք
ատեցիք զիս՝ և հալածեցիք ՚ի ձէնջ ։
*Եւ ասեն · տեսանելով տեսաք՝ զի 28
էր Տէր ընդ քեզ · և ասեմք՝ եղիցի
դաշն ընդ միմեանս, ընդ մեզ և ընդ
քեզ · և դիցուք ընդ քեզ ուխտ ։
*Չառնել ինչ մեզ չար · ո̃պ և մեք 29
ոչինչ մեղաք քեզ · և զոր օրինակ արա
րաք քեզ բարի՝ և արձակեցաք զքեզ
խաղաղութբ̃ · և արդ դու օրհնեալ
՚ի Տն̃ ես ։ *Եւ արար նց̃ խրախու_ 30
թիւն կերին և արբին ։ *Եւ յարուցեալ 31
՚ի վաղիւն անդր երդուան այր ընկե_
րի իւրում · և արձակեաց զնոսա Իսա
հակ · և գնացին ՚ի նմանէ ողջութբ̃ ։
*Եւ եղև յաւուր յայնմիկ · եկին ծա_ 32
ռայքն Իսահակայ՝ և պատմեցին նմա
վն̃ ջրհորոյն, զոր փորեցին՝ թէ գտաք
ջուր ։ *Եւ կոչեաց զնա Երդումն ։ 33
վասն այնորիկ է անուն քաղաքին այն
միկ Ջրհոր երդման · մինչև ցայսօր
ժամանակի · *Եւ էր Եսաւ ամաց 34
քառասնից · և էառ իւր կին զՅու_
դիթ դուստր Բէերայ Քետացւոյ · և
զՄասեմա դուստր Ելոմայ Խևացւոյ ։
‖ Վ. աշր. 27. 46. *‖ Եւ դառնացուցանէին զԻսահակ 35
և զՌեբեկա ։

ԳԼ ։ ԻԷ ։

Եւ եղև իբրև ծերացաւ Իսահակ · 1
և վատեցան աչք նորա ՚ի տե_
սանելոյ · կոչեաց զԵսաւ զորդի իւր
զերէց՝ և ասէ ցնա · որդեակ իմ ։ և նա
ասէ ցնա · ահաւասիկ ես ։ *Եւ նա 2
ասէ ցնա · ահաւասիկ ես ծերացեալ
եմ · և ոչ գիտեմ զօր վախճանի իմոյ ։
*Արդ առ դու զգործիս քո զաղեղն և 3
զկապարճս · և ել ՚ի դաշտին · և որսա
ինձ
4 որս ։ *Եւ արա ինձ խորտիկս որպէս
և ես սիրեմ · և բեր՝ մատո ինձ՝ զի
կերից · և օրհնեսցէ զքեզ անձն իմ ,
5 մինչև մեռեալ իցեմ ։ *Եւ լուաւ
Ռեբեկա զի խօսէր ընդ որդւոյ իւր_
ում · գնաց Եսաւ ՚ի դաշտ որսալ որս
6 հօր իւրում ։ *Եւ խօսեցաւ Ռեբե_
կա ընդ Յակոբայ որդւոյ իւրում՝ և
ասէ ։ ահա լուայ ես ՚ի հօրէ քումմէ ·
զի խօսէր ընդ եղբօր քում՝ և ասէր ։
7 *Բեր ինձ որս · և արա ինձ խորտիկս ·
զի կերից՝ և օրհնեցից զքեզ առաջի
8 Տն̃ մինչև մեռեալ իցեմ ։ *Եւ արդ
որդեակ իմ լուր ինձ՝ ո̃պ ես պատուէ
9 րեմ քեզ ։ *Գնա դու ՚ի դաշտն · և
առ ինձ անտի երկուս ուլս փափուկս
և ընտիրս · և արարից զնո̃ խորտիկս
10 հօր քում ո̃պ և սիրէ ։ *Եւ մատուս_
ցես հօր քում՝ և կերիցէ · զի օրհնես_
ցէ զքեզ հայրն քո՝ մինչև մեռեալ իցէ ։
11 *Եւ ասէ Յակոբ ցՌեբեկա մայր իւր ·
եղբայր իմ Եսաւ այր թաւ է · և ես
12 լերկ ։ *Գուցէ շօշափիցէ զիս հայր
իմ · և լինիցիմ առաջի նորա իբրև
արհամարհօտ · և ածիցեմ ՚ի վերայ
13 իմ անէծս և ոչ օրհնութի̃ ։ *Եւ ասէ
ցնա մայրն իւր · յիմ վերայ անէծքն
այն որդեակ · բայց միայն լուր ձայնի
14 իմում՝ և երթ՝ և ած ինձ ։ *Գնաց՝
և էառ՝ և եած մօր իւրում ։ և արար
խորտիկս՝ ո̃պ և սիրէր հայր նորա ։
15 *Եւ առեալ Ռեբեկայ զպատմուճանն
զազնիւ որդւոյ իւրոյ երիցու · որ կայր
առ նմա ՚ի տան · զգեցոյց Յակոբայ
16 որդւոյ իւրում կրսերոյ ։ *Եւ զու_
լենիսն այծոյ ՚ի բազուկս նր̃ · և ՚ի վ̃ր
17 մերկոյ պարանոցի նորա ։ *Եւ ետ
զխորտիկն և զհացն, զոր արար՝ ՚ի ձեռս
18 Յակոբայ որդւոյ իւրոյ ։ *Եւ տարաւ
հօր իւրում ։ և ասէ՝ հայր իմ ։ և նա
ասէ՝ ահաւասիկ եմ ։ և ասէ · ո՞վ ես դու
19 որդեակ ։ *Եւ ասէ Յակոբ ցհայրն ·
ես եմ Եսաւ անդրանիկն քո · արարի՝
որպէս և խօսեցար ընդ իս · արի՛ նիստ՝
և կեր յորսոյ իմմէ · զի օրհնեսցէ զիս
20 անձն քո ։ *Եւ ասէ Իսահակ ցորդին
իւր · զի՞ է զի վաղվաղակի գտեր որ_
դեակ ։ և նա ասէ՝ որպէս պատրաս_
21 տեաց Տր̃ Ա̃ծ առաջի իմ ։ *Եւ ասէ
Իսահակ ցՅակոբ · մօտ եկ՝ և շօշափե_
ցից զքեզ որդեակ · եթէ դու իցես
22 որդի իմ Եսաւ՝ թէ ոչ ։ *Մատեաւ
Յակոբ առ Իսահակ հայր իւր · և շօ_
շափեաց զնա և ասէ · ձայնդ ձայն Յա_
կոբայ · և ձեռքդ ձեռք Եսաւայ ։
23 *Եւ ոչ ծանեաւ զնա · զի էին ձեռք
նորա իբրև զձեռս Եսաւայ եղբօր
24 իւրոյ թաւ ։ և օրհնեաց զնա ։ *Եւ
ասէ

ասէ՝ դու ես որդի իմ Եսաւ ։ Եւ նա
ասէ՝ ես եմ։ *Եւ ասէ մատո՛ ինձ՝ և 25
կերից յորսոյ քումմէ որդեակ․ զի օրհ
նեսցէ զքեզ անձն իմ ։ Եւ մատոյց
նմա և եկեր ․ և եբեր նմա գինի և
էարբ։*Եւ ասէ ցնա Իսահակ հայր իւր․ 26
մօտ եկ․ և համբուրեա զիս որդեակ ։

*Եւ մատեաւ, համբուրեաց զնա ․ 27
և էառ զհոտ հանդերձից նորա ․ և
օրհնեաց զնա՛ և ասէ ։ Ահա հոտ որդ
ւոյ իմոյ իբրև զհոտ անդոյ լիոյ ․ զոր
‖Եբր․ օրհնեաց Տր։ *Եւ ‖ տացէ քեզ Ած 28
11․ 20․ 'ի ցօղոյ երկնից՝ և 'ի պարարտութե
երկրի․ և բազմութի ցորենոյ և գի
նւոյ ։ *Եւ ծառայեսցեն քեզ ազգք․ 29
և երկիր պագցեն քեզ իշխանք ․ և
եղիցիս տէր եղբօր քում ․ և երկիր
պագցեն քեզ՝ որդիք հօր քոյ․ որ անի
ծանիցէ զքեզ՝ անիծեալ լիցի ․ և որ
օրհնիցէ զքեզ՝ օրհնեալ ։ *Եւ եղև 30
յետ դադարելոյն Իսահակայ յօրհ
նելոյ անտի զՅակոբ զորդի իւր․ իբրև
ել Յակոբ յերեսաց Իսահակայ հօր
իւրոյ․ և եկն Եսաւ եղբայր նր յորսոյ։
* Արար և նա խորտիկս՝ և մատոյց 31
հօր իւրում․ և ասէ ցհայր իւր ․ յարի
ցէ հայր իմ․ և կերիցէ յորսոյ որդւոյ
իւրոյ ․ զի օրհնեսցէ զիս անձն քո ։
*Եւ ասէ ցնա Իսահակ հայր իւր․ ո՞վ 32
ես դու ։ Եւ նա ասէ ․ ես եմ որդի քո
անդրանիկ Եսաւ ։ * Եւ զարմացաւ 33
Իսահակ զարմացումն մեծ յոյժ․ և ասէ

իսկ այն ո՞վ է՝ որ որսացաւ ինձ որս՝ և
եբեր մատոյց ․ և կերի յամենայնէ
մինչև քո եկեալ էր․ և օրհնեցի զնա․
34 և եղիցի օրհնեալ ։ * Եւ եղև իբրև
լուաւ Եսաւ զբանս Իսահակայ հօր
իւրոյ․ աղաղակեաց 'ի ձայն մեծ դառ
նացեալ յոյժ ․ և ասէ ցհայրն իւր ․
35 օրհնեա՛ արդ և զիս հայր ։ * Եւ ասէ
ցնա․ եկն եղբայր քո նենգութբ․ և
36 էառ զօրհնութիւնս քո։ *Եւ նա ասէ ։
յիրաւի կոչեցաւ անուն նր Յակոբ ․
զի այս երկիցս խաբեաց զիս․ ‖ էառ ‖ Ծն․
զանդրանկութիւնն իմ․ և արդ էառ 25․34․
զօրհնութիւնս իմ։ Եւ ասէ Եսաւ ցհայր
իւր ․ և ո՛չ մի ինչ օրհնութի թողեր
37 ինձ հա՛յր։ * Պատասխանի ետ Իսա
հակ՝ և ասէ ցԵսաւ ․ որովհետև տէր
արարի զնա քեզ․ և զամ՛ եղբարս նր
արարի նմա ծառայս․ ցորենով և գի
նւով հաստատեցի զնա ․ քեզ զի՞նչ
38 արարից որդեակ։ *Ասէ Եսաւ ցհայրն
իւր՝ միթէ մի՞ օրհնութիւն իցէ քո
հա՛յր․ օրհնեա՛ և զիս հա՛յր։ Եւ իբրև
ստրջացաւ Իսահակ ․ ամբարձ զձայն
39 իւր Եսաւ՝ և լալ ։ * Պատասխանի
ետ Իսահակ հայրն նր՝ և ասէ ցնա․ ահա
‖ 'ի պարարտութե երկրի եղիցի բնա ‖Եբրայ․
կութիւն քո ․ և 'ի ցօղոյ երկնից 'ի վե 11․20․
40 րուստ եղիցի օրհնութի քո ։ * Եւ սրով
քով կեցցես․ և եղբօր քում ծառայես
ցես ․ և եղիցի յորժամ քակեսցես՝ և
լուծցես զլուծ նորա 'ի պարանոցէ
41 քումմէ ։ * Եւ պահէր Եսաւ ոխս յա
կոբայ վն օրհնութեն՝ զոր օրհնեաց
զնա հայր իւր ․ և ասէր Եսաւ 'ի միտս
իւրում․ ‖ մերձեսցին աւուրք կարեաց ‖Աբդ․
հօր իմոյ ․ զի սպանից զՅակոբ զեղ 1․10․
42 բայր իմ ․ * Ազդ եղեն Ռեբեկայ
բանքն Եսաւայ որդւոյ իւրոյ երիցու ։
Եւ յղեաց կոչեաց զորդի իւր զկրտսեր
զՅակոբ՝ և ասէ ցնա ․ ահա Եսաւ եղ
բայր քո սպառնայ սպանանել զքեզ ։
43 *Արդ լո՛ւր որդեակ ձայնի իմում ․
և արի՛ գնա 'ի Միջագետս առ Ղաբան
44 եղբայր իմ 'ի Խառան ։ *Եւ բնակեսցես
ցիս ընդ նմա աւուրս բազում․ մինչև
անցցէ սրտմտութի բարկութե եղ
45 բօր քոյ 'ի քէն ։ * Եւ մոռասցի՝ զոր
ինչ արարեր նմա․ և ապա առաքեցից
և կոչեցից զքեզ անտի․ գուցէ ան
զաւակիցիմ յերկուցունց 'ի ձէնջ 'ի մի
46 ում աւուր ։ * Եւ ասէ Ռեբեկա
ցԻսահակ․ ‖ ձանձրացեալ է անձն իմ ‖ Ծն․
'ի դստերաց որդւոց քետայեթեայ ա 26․35․
նուցու Յակոբ կին 'ի դստերաց անտի
քետայ․ 'ի դստերաց երկրիս այսորիկ․
և ընդէ՞ր իցէ ինձ կեալ։

ԳԼ ։

Գլ. ԻԸ.

Կոչեաց առ ինքն իսահակ զյակոբ՝ 1
օրհնեաց զնա. և պատուիրեաց
նմա՝ և ասէ. մի՛ առնուցուս կին ՚ի
դստերաց ատրի քանանացւոց։ *Ե՛լ 2
արի՛ և գնա ՚ի միջագետս ասորւոց.
՚ի տուն բաթուէլի հօր մօր քոյ. և ա՛ռ
անտի քեզ կին ՚ի դստերաց ղաբանու
եղբօր մօր քոյ։ *Եւ Ա՟ծ իմ օրհնես- 3
ցէ զքեզ. և աճեցուսցէ զքեզ. և
բազմացուսցէ զքեզ. և եղիցիս ՚ի ժո-
ղովս ազգաց։ *Եւ տացէ քեզ զօրհ- 4
նութիւն աբրահամու հօր իմոյ. քեզ
և զաւակի քում յետ քո. ժառանգել
քեզ զերկիր պանդխտութե՛ քո՝ զոր
‖ Ովս. ետ Ա՟ծ աբրահամու։ ‖ *Եւ արձա- 5
12. 12։ կեաց իսահակ զյակոբ՝ և գնաց ՚ի
միջագետս ասորւոց. առ ղաբան որ-
դի բաթուէլի ասորւոյ եղբօր ռեբե-
կայ. մօր յակոբայ և եսաւայ։ *Եւ 6
իբրև ետես եսաւ եթէ օրհնեաց իսա
հակ զյակոբ՝ և գնաց ՚ի միջագետս
ասորւոց առնուլ իւր անտի կին. և
յօրհնելն զնա պատուիրեաց՝ և ասէ.
մի՛ առնուցուս կին ՚ի դստերաց ատրի
քանանացւոց։ *Եւ ունկն դիր եղև 7
յակոբ հօր իւրում. և գնաց ՚ի միջա-
գետս ասորւոց։ *Եւ ետես եսաւ 8
եթէ չար թուին դստերք քանանաց
ւոցն առաջի իսահակայ հօր իւրոյ։
*Գնաց եսաւ առ իսմայէլ. և էառ 9
զմայելէթ դուստր իսմայելի որդւոյ
աբրահամու՝ զքոյր նաբէութայ, ՚ի
վ՟ր այլոց կանանց իւրոց՝ իւր կնութե՟։
*Եւ ել յակոբ ՚ի ջրհորոյ անտի երդ- 10
մանն. և գնաց ՚ի խառան։ *Եւ էհաս 11
՚ի տեղի մի և ննջեաց անդ. զի արեւն ՚ի
մուտս էր. և էառ ՚ի քարանց տեղւոյն.
և եդ ընդ սնարս իւր։ և ննջեաց ՚ի
տեղւոջն յայնմ։ *Եւ ետես տեսիլ։ 12
և ահա սանդուղք հաստատեալ յերկ
րի. որոյ գլուխն հասանէր յերկինս։
և հրեշտակք Ա՟յ ելանէին և իջա-
նէին ընդ նա։ *Եւ Տ՟ր հաստատեալ 13
‖ Ներք. կայր ՚ի նմա։ և ասէ. ‖ Ես եմ Տ՟ր Ա՟ծ
35. 1. և աբրահամու հօր քո, և Ա՟ծ իսահա-
48. 3. կայ. մի՛ երկնչիր. զի զերկիրդ յորում
դուդ ննջեցեր, քեզ տաց զդա. և
զաւակի քում։ *Եւ եղիցի զաւակ քո 14
‖ Բ. Օրէ. իբրև զաւազ երկրի. ‖ և ընդարձա-
12. 20. կեսցի ՚ի ծովակողմն. և ընդ արևելս.
և 19. 8. և ընդ հիւսիս. և ընդ հարաւ ‖ և օրհ
և 14. նեսցին ՚ի քեզ ա՟մ ազգք երկրի՝ և
‖ Վեր. ՚ի զաւակի քում։ *Եւ ես աւասիկ 15
26. 4. ընդ քեզ եմ պահել զքեզ յա՟մ ճա-
նապարհս քո՝ յոր գնասցես. և դար-
ձուցից զքեզ յերկիրս յայս. զի ոչ թո-

ղից զքեզ մինչև արարից զա՟մ ինչ. զոր
16 խօսեցայ ընդ քեզ։ *Եւ զարթեաւ
յակոբ ՚ի քնոյ անտի իւրմէ՝ և ասէ.
Տ՟ր է ՚ի տեղւոջս յայսմիկ. և ես ոչ
17 գիտէի։ *Զահի հարաւ՝ և ասէ.
ահեղ իմն է տեղիս այս. և ո՛չ է սա
եթէ ոչ տուն Ա՟յ. և այս է դուռն
18 երկնից։ *Եւ յարեաւ յակոբ ընդ
առաւօտն. և էառ զվէմն զոր եդ ընդ
սնարս իւր. և կանգնեաց զնա արձան.
19 ‖ և եհարկ իւղ ՚ի գլուխ նր՟։ *Եւ կո- ‖ Ներք.
չեաց յակոբ զանուն տեղւոյն այնո- 31. 13.
րիկ տուն Ա՟յ. և յառաջ անուն էր
20 քաղաքին այնորիկ լոմաւուս։ *Եւ [illegible]
ուխտեաց յակոբ ուխտ՝ և ասէ. եթէ
եղիցի Տ՟ր Ա՟ծ ընդ իս. և ապրեցուսցէ
զիս ՚ի ճանապարհիս յայսմիկ. զոր ես
երթամ. և տացէ ինձ հաց ուտելոյ և
21 հանդերձ զգենլոյ։ *Եւ դարձուսցէ
զիս ողջութե՟ ՚ի տուն հօր իմոյ. և
22 եղիցի ինձ Տ՟ր յԱ՟ծ։ *Եւ վէմս, զոր
կանգնեցի արձան, եղիցի ինձ տուն
Ա՟յ. և յամենայնէ զոր տացես ինձ,
տաց քեզ տասանորդս։

Գլ. ԻԹ.

1 Եւ զոտս իւր ամբարձեալ յակո-
բայ գնաց յերկիրն արևելից, առ
լաբան՝ որդի բաթուէլի ասորւոյ.
եղբայր ռեբեկայ՝ մօր յակոբայ և
2 եսաւայ։ *Եւ հայեցաւ՝ և ահա ջրհոր
մի ՚ի դաշտի անդ. և էին անդ երեք
հօտք

հօտք խաշանց՝ մակաղեալք 'ի նմա.
և 'ի ջրհորոյն յայնմանէ արբուցա_
նէին զխաշինսն: և վէմ մի մեծ կայր
'ի վերայ բերանոյ ջրհորոյն: *Եւ 3
անդր ժողովէին ամ՛ հօտք. և թաւա
լէին զվէմն 'ի բերանոյ ջրհորոյն՝ և
տային զջուր խաշանցն. և կափուցա
նէին զվէմն 'ի բերան ջրհորոյն՝ անդ
րէն 'ի տեղի իւր: *Եւ ասէ ցնոսա 4
յակոբ. եղբարք ուստի՞ էք դուք: և
նոքա ասեն. 'ի խառանէ եմք: *Ասէ 5
ցնոսա. գիտէ՞ք դուք զլաբան զորդի
նաքովրայ: և նոքա ասեն՝ գիտեմք:
*Ասէ ցնոսա. ո՞ղջ իցէ: և նոքա ասեն 6
ողջ է. և ահա ռաքէլ դուստր նորա
գայ ընդ խաշինսն: *Եւ ասէ յակոբ. 7
դեռ օր շատ կայ. չև ևս է ժամ խա_
շանցդ ժողովելոյ. արբուցէք խա_
շանցդ, և երթայք արածեցէք:
*Եւ նոքա ասեն. չէ՛ հնար՝ մինչ 8
ոչ ժողովիցին ամենայն հովիւք. և
թաւալիցեն զվէմդ 'ի բերանոյ ջրհո
րոյն. և արբուցանիցեմք խաշանցս:
*Մինչ դեռ նա ընդ նոսա խօսէր. 9
ահա ռաքէլ դուստր լաբանու գայր
ընդ խաշինս հօր իւրոյ. քանզի նա
արածէր զխաշինս հօր իւրոյ: *Եւ 10
եղև իբրև ետես յակոբ զռաքէլ
դուստր լաբանայ եղբօր մօր իւրոյ. և
զխաշինս լաբանու եղբօր մօր իւրոյ:
և մատուցեալ յակոբ թաւալեցոյց
զվէմն 'ի բերանոյ ջրհորոյն. և արբոյց
խաշանցն լաբանու եղբօր մօր իւրոյ:
*Եւ համբուրեաց յակոբ զռաքէլ. 11
և ձայն եբարձ՝ և ելաց: *Եւ պատ 12
մեաց յակոբ ռաքելայ. եթէ եղբայր
հօր նորա է. և որդի ռեբեկայ է. ըն_
թացաւ պատմեաց հօր իւրում ըստ
բանիցս այսոցիկ: *Եւ եղև իբրև 13
լուաւ լաբան զանուն յակոբայ որդ
ւոյ քեռ իւրոյ. ընթացաւ ընդ առաջ
նր. գիրկս էարկ և համբուրեաց զնա.
և տարաւ զնա 'ի տուն իւր: և պատ_
մեաց լաբանու զամենայն զբանս զայ
սոսիկ: *Եւ ասէ ցնա լաբան. յոս 14
կերացս իմոց, և 'ի մարմնոյս իմոյ ես
դու. և էր ընդ նմա ամսօրեայ մի
ժամանակ: *Եւ ասէ լաբան ցյա_ 15
կոբ. զի եղբայր իմ ես դու. ոչ ծա
ռայեսցես ինձ ձրի. յայտ արա ինձ.
զինչ իցեն վարձք քո: *Եւ լաբանայ 16
էին երկու դստերք. անուն երիցուն
լիա. և անուն կրտսերոյն ռաքէլ:
*Եւ աչք լիայի դիձագոյնք. բայց 17
ռաքէլ բարի էր տեսլեամբ և գեղե
ցիկ երեսօք: *Եւ սիրեաց յակոբ 18
զռաքէլ: և ասէ՝ ծառայեցից քեզ
եօթն ամ վասն ռաքելայ դստեր քոյ
19 կրտսերոյ: *Եւ ասէ ցնա լաբան. լաւ
իցէ քեզ տալ զնա՝ քան տալ առն
20 օտարի. բնակեաց դու ընդ իս: *Եւ
ծառայեաց յակոբ վն ռաքելայ ամս
եօթն. և էին յաչս նր իբրև աւուրք
21 սակաւք. քանզի սիրէր զնա: *Եւ
ասէ յակոբ ցլաբան՝ տուր ինձ զկին
իմ. լցեալ են աւուրք. զի մտից առ
22 նա: *Եւ ժողովեաց լաբան զամ արս
23 տեղւոյն. և արար հարսանիս: *Եւ
եղև երեկոյ: առեալ լաբանու զլիա
դուստր իւր տարաւ առ յակոբ. և
24 եմուտ առ նա յակոբ: *Եւ ետ լա_
բան զզեղփայ զաղախին իւր նաժիշտ
դստեր իւրում լիայ: և իբրև այգ
25 եղև. և ահա լիա էր: *Եւ ասէ յա_
կոբ ցլաբան. զի՞նչ գործեցեր զայս.
ոչ վն ռաքելի ծառայեցի քեզ. ընդէ՞ր
26 խաբեցեր զիս: *Ասէ լաբան. չեն
օրէնք յաշխարհի մերում տալ նախ
27 զկրտսերն քան զերէցն: *Արդ կա_
տարեա եօթն ևս ամ ընդ նորա. տաց
քեզ և զնա՝ փոխանակ վաստակոցն.
զոր վաստակեսցես ինձ զեօթն ամ
28 ևս այլ: *Արար այնպէս յակոբ. և
կատարեաց եօթն ևս ամ ընդ նորա.
և ետ նմա լաբան զռաքէլ դուստր
29 իւր 'ի կնութիւն: *Եւ ետ լաբան ռա
քէլի դստեր իւրում զբալլայ զաղա
30 խին իւր նաժիշտ: *Եւ եմուտ առ
ռաքէլ. և սիրեաց զռաքէլ քան զլիա.
և ծառայեաց նմա այլ ևս եօթն ամ:
31 *Իբրև ետես Տր եթէ ատեցեալ է լիա.
եբաց զարգանդ նորա. բայց ռաքէլ
32 ամուլ էր: *Եւ յղացաւ լիա. և ծնաւ
որդի յակոբայ. և կոչեաց զանուն
նր ռուբէն. ասէ՝ զի ետես Տր զտա
ռապանս իմ. արդ սիրեսցէ զիս այր
33 իմ: *Յղացաւ դարձեալ լիա և ծնաւ
երկրորդ որդի յակոբայ: և ասէ՝ զի
լուաւ Տէր եթէ ատեցեալ եմ. և
յաւել ինձ զսա. և կոչեաց զանուն
34 նորա շմաւօն: *Եւ յղացաւ՝ և ծնաւ
որդի. և ասէ. արդ առ իս եղիցի այր
իմ, զի ծնայ նմա երիս որդիս. վասն
այնորիկ կոչեաց զանուն նորա ղևի:
35 *Եւ յղացաւ դարձեալ՝ և ծնաւ որ_
դի. և ասէ. զայս միւսանգամ գոհա
ցայց զՏէ: ‖ և կոչեաց զանուն նորա ‖ Մատ.
յուդայ: և եկաց 'ի ծննդոց: 1. 2.

ԳԼ: Լ:

1 Իբրև ետես ռաքէլ՝ եթէ ոչ ծնաւ
որդի յակոբայ. նախանձեցաւ
ռաքէլ ընդ քեռն իւրում. և ասէ
ցյակոբ. տուր ինձ որդիս. ապա թէ
2 ոչ՝ մեռանիմ: *Բարկացաւ յակոբ
ռաքելայ՝ և ասէ ցնա. միթէ փոխան

Ա՟յ իցեմ ես. որ արգել զպտուղ
որովայնի քո։ * Եւ ասէ ռաքէլ 3
ցյակոբ. ահանիկ աղախին իմ բալ՟
հա. մուտ առ նա՝ և ծնցի 'ի վերայ
ծնգաց իմոց. և արարից ես որդիս
'ի նմանէ։ * Եւ ետ նմա զբալ՟հա 4
զաղախին իւր կնութե։ Եմուտ առ
նա յակոբ։ * Եւ յղացաւ բալ՟հա նա_ 5
ժիշտ ռաքելայ. և ծնաւ որդի յակո_
բայ։ * Եւ ասէ ռաքէլ. իրաւ արար 6
ինձ Ա՟Ծ. և լուաւ ձայնի իմում. և ետ
ինձ որդի. վ՟ն այնորիկ կոչեաց զանուն
նորա դան։ * Եւ յղացաւ դարձեալ 7
բալ՟հա նաժիշտն ռաքելի. և ծնաւ
որդի երկրորդ յակոբայ։ * Եւ ասէ 8
ռաքէլ. օգնեաց ինձ Ա՟Ծ. զի գումա
րեցայ ընդ քեռ իմում։ և յաղթեցի.
և կոչեաց զանուն նր՟ նեփթաղիմ։
* Իբրև ետես լիա եթէ եկաց 'ի ծնն 9
դենէ, էառ զզելփայ զնաժիշտ իւր.
և ետ յակոբայ կնութե։ * Յղացաւ 10
զելփայ նաժիշտն լիայ. և ծնաւ զոր
դի յակոբայ։ * Եւ ասէ լիա, առ իս 11
բախտ իմ. և անուանեաց զանուն նր՟
գադ։ * Յղացաւ զելփա նաժիշտն 12
լիայ. և ծնաւ որդի երկրորդ յակո_
բայ։ * Եւ ասէ լիա. երանելի եմ ես. 13
զի երանեսցեն զիս կանայք. և կոչեաց
զանուն նորա ասեր. որ է մեծութի։
* Գնաց ռուբէն յաւուրս հնձոց ցո_ 14
րենոյ. և եգիտ խնծոր մանրագորաց
յանդի. և եբեր զայն առ լիա մայր
իւր. ասէ ռաքէլ ցլիա. քոյր իմ. տուր
ինձ 'ի մանրագորաց որդւոյ քո։
* Եւ ասէ լիա. ո՞չ իցէ քեզ շատ. զի 15
առեր զայրն իմ. միթէ և զմանրա_
գորս որդւոյ իմոյ առնուցուս։ և ասէ
ռաքէլ՝ ոչ այդպէս է. ննջեսցէ ընդ
քեզ զայս գիշեր. փոխանակ մանրա
գորաց որդւոյ քո։ * Եւ իբրև եմուտ 16
յակոբ յանդէ ընդ երեկս. ել լիա
ընդ առաջ նր՟. և ասէ՝ առ իս մտցես
այսօր. քանզի 'ի վարձու կալայ զքեզ.
փոխանակ մանրագորաց որդւոյ իմոյ։
և ննջեաց ընդ նմա զայն գիշեր։
* Եւ լուաւ Ա՟Ծ լիայ։ յղացաւ՝ և 17
ծնաւ յակոբայ որդի հինգերորդ։
* Եւ ասէ լիա. ետ ինձ Ա՟Ծ զվարձս 18
իմ. փոխանակ զի ետու զաղախինն
իմ առն իմում. և կոչեաց զանուն
նորա իսաքար, որ է վարձ։ * Եւ յղա 19
ցաւ միւսանգամ լիա. և ծնաւ որդի
վեցերորդ յակոբայ։ * Եւ ասէ լիա։ 20
պարգևեաց ինձ Ա՟Ծ պարգև բարի.
յայսմհետէ սիրեսցէ զիս այր իմ. զի
ծնայ նմա որդիս վեց. և կոչեաց զա_
նուն նր՟ զաբուղոն։ * Եւ յետ այնո_ 21
րիկ ծնաւ դուստր. և կոչեաց զանուն

22 նորա դինա։ * Եւ յիշեաց Ա՟Ծ զռաքէլ.
և լուաւ նմա Ա՟Ծ. և եբաց զարգանդ
23 նորա։ * Եւ յղացաւ՝ և ծնաւ որդի
յակոբայ. և ասէ ռաքէլ. էհան յի_
24 նէն Ա՟Ծ զնախատինս իմ։ * Եւ կո_
չեաց զանուն նր՟ յովսէփ. ասէ՝ յաւելցէ
25 ինձ Ա՟Ծ որդի միւս ևս։ * Եւ եղև իբրև
ծնաւ ռաքէլ զյովսէփ, ասէ յակոբ
ցլաբան. արձակեա՛ զիս զի երթայց
26 'ի տեղի իմ. և յերկիր իմ։ * Եւ տուր
զկանայս և զմանկունս իմ. վ՟ն որոց
ծառայեցի քեզ՝ զի գնացից. զի դու
ինքնին իսկ գիտես զծառայութին.
27 զոր ծառայեցի քեզ։ * Ասէ ցնա լա_
բան. եթէ գտի շնորհս առաջի քո.
հմայեցի զի օրհնեաց զիս Ա՟Ծ յոտին
28 քում։ * Եւ ասէ. յայտ արա զվարձս
29 քո յինէն՝ և տաց։ * Ասէ ցնա յակոբ.
դու գիտես որչափ ինչ ծառայեցի
քեզ. և որչափ խաշն էր քո առ իս.
սակաւիկ ինչ էր յառաջ քան զիս։
30 * Եւ աճեաց 'ի բազմութի. և օրհ_
նեաց զքեզ Տր՟ Ա՟Ծ յոտին իմում. և
արդ՝ ես երբ առնիցեմ ինձ տուն։
31 * Եւ ասէ ցնա լաբան. զի՞նչ տաց քեզ։
և ասէ ցնա յակոբ՝ մի՛ ինչ տար ինձ։
բայց զայս և եթ բան արասցես ինձ։
դարձեալ արածեցից զխաշինս քո՝
32 և պահեցից։ * Անցցեն այսօր ա՟մ
խաշինքդ առաջի քո. և զատո՛ 'ի մի_
մեանց զամենայն ոչխար զխայտախա
րիւ և զգորշ. և զամենայն զօտարա_
կան զհամակ յօդեաց. և ա՟մ խայտա
խարիւն և պիսակն յայծեաց եղիցին
33 վարձք իմ։ * Եւ երևեսցի արդարու
թի իմ 'ի վաղիւ անդր՝ թէ գոն իմ
վարձք առաջի քո. ա՟մ որ ոչ իցէ խայտ
և պիսակ յայծեաց. և գորշախայտ
յօդեաց, 'ի գողունս համարեսցի
34 ինձ։ * Եւ ասէ ցնա լաբան՝ եղիցի
35 ըստ բանի քում։ * Եւ զատոյց յաւուր
յայնմիկ զքաղս կապոյտս. և զպիսակս.
և զա՟մ այծս կապոյտս. և զամենայն
սպիտակս 'ի նոցանէ. զպիսակս և զա՟մ
զհամակս յօդեաց ետ 'ի ձեռս որդ_
36 ւոյն իւրոյ։ * Եւ մեկնեցոյց ճանա
պարհ երից աւուրց՝ ընդ մէջ նոցա և
ընդ մէջ յակոբայ. և յակոբ արածէր
37 զխաշինսն լաբանու զմնացեալս։ * Եւ
էառ յակոբ գաւազան շերտ դալար
ընկուզի և սօսւոյ. և կեղևեաց զնո՟
յակոբ. և եղև սպիտակ. և էքերծ
զդալարն 'ի գաւազանաց անտի։ և
երևէր 'ի գաւազանսն սպիտակն. զոր
38 քերծոյրն՝ նկարէն։ * Եւ եդ ընդ
գաւազանսն՝ զոր քերծոյր՝ յաւազանս
ջրարբից ջրոյն. զի իբրև գայցեն
խաշինքն ըմպել ջուր, հանդէպ գաւա
զա_

զանացն, զկծիցին յորժամ գայցեն
ըմպել ջուր: *Եւ զկծէին խաշինքն 39
'ի գաւազանսն. և ծնանէին խաշինքն
գորշախայտս. և պիսակս. և խայտա
խարիւս: *Եւ զորոջսն ուրոյն զատա 40
նէր յակոբ. և կացուցանէր յանդի_
ման մաքեացն. և զխոյ կապոյտ. և
զամենայն գորշախայտն օդեաց. և զա
տանէր իւր հօտս առանձինն: և ոչ
խառնէր զնոսա 'ի խաշինս լաբանու:
*Եւ լինէր յորժամ զկծէին խաշինքն 41
'ի խառնսն և յղանային, դնէր յակոբ
զգաւազանսն յանդիման խաշանցն
յաւազանսն. առ 'ի զկծելոյ նոցա
ըստ գաւազանացն: *Եւ յորժամ 42
ծնանէին խաշինքն՝ ոչ դնէր: և լինէր
աննշանն լաբանու. և նշանաւորն յա
կոբայ: *Եւ մեծացաւ այրն յոյժ 43
յոյժ. և եղև նորա ոչխար և արջառ
յոյժ. և ծառայք՝ և աղախնայք.
ուղտք՝ և էշք:

Գլ. ԼԱ.

Լուաւ յակոբ զբանս որդւոյն 1
լաբանու՝ զի ասէին. եթէ էառ
յակոբ զամ ինչս հօր մերոյ. և 'ի հօր
մերոյ ընչից արար իւր զայն ամենայն
փառս: *Եւ ետես յակոբ զերեսս 2
լաբանու. և ահա ոչ էին ընդ նմա
իբրև յերեկն և յեռանդն: *Եւ ասէ 3
Տ̃ր Ա̃ծ ցյակոբ. դարձիր յերկիր հօր
քոյ՝ և յազգ քո. և եղէց ընդ քեզ:
*Եւ յղեաց յակոբ. և կոչեաց զռա_ 4
քէլ և զլիա 'ի դաշտ անդր ուր խա_
շինքն էին: *Եւ ասէ ցնոսա. տեսա 5
նեմ ես զերեսս հօր ձերոյ, զի ոչ են
ընդ իս որպէս յերեկն և յեռանդ: և
Ա̃ծ հօր իմոյ էր ընդ իս: *Եւ դուք 6
ինքնին գիտէք. զի յամենայն զօրու
թենէ իմմէ ծառայեցի հօր ձերում:
*Եւ հայր ձեր ընդհարաւ ընդ իս. և 7
փոխեաց զվարձս իմ զտասն բծացդ.
և ոչ ետ նմա Ա̃ծ առնել ինձ չար:
*Եթէ ասիցէ եթէ նկարէնքդ եղի 8
ցին քո վարձք. ամ խաշինքս նկա_
րէնս ծնանին: և եթէ ասիցէ եթէ
սպիտակքդ եղիցին քո վարձք. ամ
խաշինքս սպիտակս ծնանին: *Եւ է_ 9
հան Ա̃ծ զամենայն խաշինս հօր ձերոյ՝
և ետ ինձ: *Եւ լինէր յորժամ զկծէին 10
խաշինքն. տեսանէի աչօք իմօք յերա
զի. և ահա քաղք և խոյք ելանէին
'ի վերայ մաքեաց և այծից. պիսակք
և խայտախարիք. և գորշախայտք:
*Եւ ասէ ցիս հրեշտակ Ա̃յ 'ի տես 11
լեան. յակոբ: և ես ասեմ. զի է: *Եւ 12
ասէ հայեաց աչօքքովք և տես զքաղսն
և զխոյսն որք ելանեն 'ի մաքեան և յայծս.

զխարդ պիսակք. և գորշախայտք. և
խայտախարիք են. քանզի տեսի որչափ
13 ինչ առնէ ընդ քեզ լաբան: *Ես եմ
Ա̃ծ. որ երևեցայ քեզ 'ի տեղւոջն Ա̃յ.
‖ ուր օծեր ինձ զարձանն. և եդեր ‖ Ծն. 28.18.
ուխտս: և արդ՝ արի և ել յերկրէս
յայսմանէ. և երթ յերկիր ծննդեան
14 քոյ. և եղէց ընդ քեզ: *Պատասխանի
ետուն ռաքէլ և լիա և ասեն ցնա. մի
թէ գոյ ևս մեր այսուհետև բաժին՝
և ժառանգութիւն 'ի տան հօր մերոյ:
15 *Ոչ ապաքէն իբրև զօտարոտիս հա_
մարեալ եմք նմա. զի վաճառեաց զմեզ՝
16 և եկեր ուտելով զարծաթ մեր: *Ամ
մեծութիւն և փառք, զոր էհան Ա̃ծ 'ի
հօրէ մերմէ՝ մեզ եղիցի՝ և որդւոց մե_
րոց. արդ՝ զոր ինչ ասաց քեզ Ա̃ծ՝ արա:
17 *Յարեաւ յակոբ՝ էառ զկանայս իւր
և զմանկունս իւր. և էհան զնոսա
18 յուղտս: *Եւ խաղացոյց զամ զինչս
իւր և զամ ստացուածս իւր՝ զոր արար
'ի միջագետս ասորւոց. երթալ առ
իսահակ հայր իւր յերկիրն քանանա_
19 ցւոց: *Եւ լաբան երթեալ էր 'ի
կտուրս խաշանց իւրոց: և գողացաւ
20 ռաքէլ զկուռս հօր իւրոյ: *Եւ գողա_
ցաւ յակոբ զսիրտն լաբանայ ասորւոյ
իւրոյ՝ 'ի չպատմել նմա թէ գնայցէ:
21 *Եւ գնաց ինքն. և ամ ինչ որ իւր էր:
և յարուցեալ էանց ընդ գետ՝ և դի_
22 մեաց 'ի լեառն գաղաադու: *Ազդ
եղև լաբանու ասորւոյ յաւուրն եր_
23 րորդի եթէ գնաց յակոբ: *Եւ առեալ
զեղբարս իւր ընդ իւր, պնդեցաւ զկնի
նր ճանապարհ զեօթն աւուրս և հաս
24 նմա 'ի լերինն գաղաադու: *Եւ եկն
Ա̃ծ առ լաբան ասորի 'ի տեսլեան գի_
շերոյ՝ և ասէ ցնա. զգո՛յշ լեր անձին
քում. գուցէ խօսիցիս ընդ յակոբայ
անզգամութեամբ: և եհաս լաբան
25 յակոբայ: *Եւ յակոբ եհար զխորան
իւր 'ի լերինն: և լաբան կացոյց զեղ_
26 բարս իւր 'ի լերինն գաղաադու: *Եւ
ասէ լաբան ցյակոբ. ընդէ՞ր արարեր
զայդ՝ ընդէ՞ր գաղտագնաց եղեր յի_
նէն. և գողացար զիս. և վարեցեր
զդստերս իմ իբրև զգերեալս սրոյ:
27 *Եթէ ազդարարեալ էր ինձ. առաքէի
զքեզ ուրախութեամբ. և արուեստա
28 կանօք թմբկաց և քնարաց: *Եւ չէի՞
արդեօք արժանի համբուրել զոր_
դեակս իմ՝ և զդստերս իմ. և արդ ան
29 մտութիւն արարեր: *Եւ այժմ ձեռն
հաս էի առնել քեզ չար՝ բայց Ա̃ծ
հօր քոյ երեկ ասաց ցիս. ասէ՝ զգո՛յշ
լեր. գուցէ խօսիցիս ընդ յակոբայ
30 անզգամութիւն: *Եւ արդ գնայցեալ
երթաս՝ զի ցանկանալով ցանկացեալ
ես

ես երթալ 'ի տուն հօր քոյ։ և ընդէ՞ր
գողացար զաստուածս իմ։ * Պատաս 31
խանի ետ յակոբ՝ և ասէ ցլաբան՝ քան
զի երկեայ։ ասացի, թէ գուցէ հանի_
ցես և զդստերս քո յինէն. և զամե_
նայն ինչս իմ։ * Եւ ասէ յակոբ. առ 32
ում գտանել աստուածսն քո. մի կեց_
ցէ առաջի եղբարցս մերոց։ և արդ
ծանիր ինչ 'ի քո ընչից առիս՝ և առ
ցես. և ծանեաւ առ նմա և ոչինչ.
և ոչ գիտէր յակոբ՝ թէ ռաքելայ
կինն իւրոյ գողացեալ էր զնս։ * Եւ 33
մտեալ լաբան յուզէր 'ի տան յակոբայ.
և 'ի տան լիայ. և 'ի տան երկոցունց
հարճիցն. և ոչ գտանէր. և ելեալ 'ի
տանէ անտի լիայ՝ եմուտ 'ի տուն ռա
քէլի։ * Իսկ ռաքէլի առեալ զկուռսն 34
եդ ընդ ուղտու պատաւ. և նստաւ
'ի վերայ նց։ և յուզեաց լաբան զամ
տաղաւարն և ոչ եգիտ։ * Եւ նա ասէ 35
ցհայր իւր. մի ինչ ծանր թուեսցի քեզ
տէր. ոչ կարեմ յոտն յառնել առաջի
քո. քանզի 'ի կանանց օրէնս եմ. և յու_
զեաց լաբան զամ զտունն՝ և ոչ եգիտ
զկուռսն։ * Բարկացաւ յակոբ՝ և կա_ 36
գէր ընդ լաբանու։ պատասխանի ետ
յակոբ՝ և ասէ ցլաբան. զի՞նչ վնաս է
իմ. կամ զի՞նչ յանցանք են իմ՝ զի պն_
տեցար զհետ իմ։ * Եւ յուզեցեր զամ 37
զինչս իմ. զի՞նչ գտեր յամ ընչից քոց 'ի
տան իմում. դի՛ր առաջի եղբարցս
իմոց՝ և եղբարց քոց. և յանդիմանես
ցեն 'ի մէջ մեր երկոցունց։ * Այս քսան 38
ամ է՝ զի էի ընդ քեզ. ոչխարք քո և
այծք՝ ոչ ստերջեցան. և զխոյս մաքեաց
քոց ոչ կերի։ * Զգազանաբեկն ոչ բե 39
րէի առ քեզ. այլ ես յանձնէ տուժէի.
զգողօնի տունջեան. և զգողայինս գի
շերոյ։ * Զցերեկ այրեալ լինէի 'ի 40
տօթոյ. և զցայգ 'ի ցրտոյ։ հատեալ
էր քուն յաչաց իմոց։ * Այս քսան ամ 41
է 'ի տան քում էի. զչորեքտասան ամ
փոխանակ դստերաց քոց վաստակե_
ցի. և զվեց ամ 'ի խաշինս քո. և խաբէ
ցեր զիս 'ի վարձս տասն բծիցս։ * Եւ 42
թէ ոչ Ած հօր իմոյ Ած աբրահամու.
և երկիւղն իսահակայ էր ընդ իս. այժմ
թերևս ունայն իսկ արձակէիր զիս.
այլ զտառապանս իմ. և զվաստակս
ձեռաց իմոց ետես Ած. և յանդիմա_
նեաց զքեզ երէկ։ * Պատասխանի ետ 43
լաբան՝ և ասէ ցյակոբ։ դստերքդ
դստերք իմ են. և ուստերքդ ուստերք
իմ են. և խաշինքդ խաշինք իմ են. և
ամենայն ինչ զոր դու տեսանես՝ իմ է,
և դստերացդ իմոց։ և արդ զինչ արա
րից դոցա այսօր՝ կամ որդւոց դոցա.
զոր ես ծնայ։ * Բայց արդ եկ՝ ուխտ 44
դիցուք ես և դու. և եղիցի 'ի վկայութի
ընդ իս և ընդ քեզ։ և ասէ ցնա. ահա
ոչոք է 'ի միջի մերում. բայց Ած վկայ
45 ընդ իս և ընդ քեզ։ * Եւ առեալ յա_
46 կոբայ վէմ կանգնեաց արձան։ * Եւ
ասէ ցեղբարսն իւր. կուտեցէք քա_
րինս։ և կուտեցին քարինս. և արարին
բլուր. և կերին, և արբին անդ 'ի վե_
47 րայ բլրոյն։ * Եւ կոչեաց զնա լաբան
կարկառ վկայութե. և յակոբ կոչեաց
զնա կարկառ վկայ։ իւրաքանչիւր
48 ըստ յատկութե լեզուի իւրոյ։ * Եւ
ասէ ցնա լաբան. բլուրս այս վկայ է
ընդ իս և ընդ քեզ այսօր։ և կոչեաց
զնա լաբան բլուր վկայութե. և յակոբ
կոչեաց զնա բլուր վկայ. և ասէ լա_
բան ցյակոբ. բլուրս այս և արձանս
այս՝ զոր կանգնեցի ընդ իս և ընդ քեզ.
վկայ է բլուրս այս. վկայ է արձանս
այս. վասն այնորիկ կոչեցաւ անուն
49 բլրոյն վկայութի։ * Եւ տեսիլն զոր
մէ ասաց՝ թէ տեսցէ Ած ընդ իս և ընդ
քեզ. զի մեկնիմք ընկեր յընկերէ։
50 * Եթէ վշտացուցանես զդստերս իմ.
եթէ առցես զկանայս առ դստերօք
իմօք։ զգո՛յշ լեր՝ զի ոչոք է ընդ մեզ
որ տեսանէ. Ած լիցի վկայ ընդ իս և
51 ընդ քեզ։ * Եւ ասէ լաբան ցյակոբ.
ահա կարկառս այս՝ և ահա արձան.
զոր հաստատեցաք ընդ իս և ընդ քեզ։
52 * Եղիցի վկայ կարկառս. և վկայ ար_
ձանս. զի ոչ ես անցից ըստ կարկառս.
և մի դու անցանիցես ըստ բլուրս՝ և
ըստ արձանս ըստ այս՝ չարութեամբ.
53 * Ած աբրահամու և Ած նաքովրայ ե_
ղիցի դատաւոր 'ի միջի մերում. Ած
հարցն նոցա։ և երդուաւ յակոբ յեր_
54 կիւղ հօր իւրոյ իսահակայ։ * Եւ եզեն
յակոբ զենլիս 'ի լերինն. և կոչեաց
զեղբարս իւր ուտել զհաց. կերին՝ և
55 արբին՝ և ագան 'ի լերինն անդ։ * Եւ
յարուցեալ լաբան 'ի վաղիւ անդր
համբուրեաց զորդիս իւր և զդստերս
իւր. և օրհնեաց զնոսա. և դնաց՝ դարձ
աւարեալ լաբանայ 'ի տեղի իւր։

ԳԼ: ԼԲ։

1 Եւ յակոբ գնաց զճանապարհ իւր։ ‖ Ամ. 48.16.
և հայեցեալ ետես զբանակ Ած
բանակեալ։ և ընդ առաջ եղեն նմա
2 հրեշտակք Ած։ * Եւ ասէ յակոբ,
իբրև ետես զնոսա. բանակ Ած է։ և
կոչեաց զանուն տեղւոյն այնորիկ բա_
3 նակս։ * Եւ առաքեաց յակոբ հրեշ_
տակս յառաջ քան զինքն՝ առ եսաւ եղ_
բայր իւր, յերկիրն 'ի սէիր. յաշխարհն
4 եդովմ։ * Պատուէր ետ նց՝ և ասէ.
այսպէս ասասջիք Տն իմում եսաւայ.

թէ

Թէ այսպէս ասէ ծառայ քո յակոբ․ ընդ
ղաբանու կեցի՝ և յամեցայ մինչև
ցայժմ։* Եւ եղեն իմ արջառ՝ և ոչխար․ 5
և էշք, ծառայք և աղախնայք․ և առա
քեցի պատմել տեառն իմում եսաւայ՝
զի գտցէ ծառայ քո շնորհս առաջի
քո։ * Եւ դարձեալ հրեշտակացն առ 6
յակոբ ասեն․ գնացաք առ եսաւ եղբայր
քո․ և գայ ընդ առաջ քո․ և չորեքհա_
րիւր այր ընդ նմա ։ * Զահի հարաւ 7
յակոբ․ և տարակուսեալ էր․ և զատոյց
զժողովուրդն․ որ ընդ նմա էր․ և զար_
ջառ․ և զոչխար՝ և զուղտս՝ յերկուս
բանակս։* Եւ ասէ յակոբ․ եթէ եկես 8
ցէ եսաւ յառաջին բանակն՝ և հարցէ
զնա․ ապրեսցի երկրորդ բանակն։* Եւ 9
ասէ յակոբ․ Ած հօր իմոյ աբրահամու․
և Ած հօր իմոյ իսահակայ․ Տր որ ասա
ցեր ցիս թէ երթ յերկիր ծննդեան
քոյ և բարի արարից քեզ։* Չեմ բաւա 10
կան ամ արդարութեն՝ և ճշմարտու_
թեն․ զոր արարեր ընդ ծառայի քում․
զի ցուպ 'ի ձեռին անցի ընդ այս յոր_
դանան․ և արդ աւասիկ եղէ յերկուս
բանակս։ * Եւ ապրեցո զիս 'ի ձեռաց 11
եղբօր իմոյ եսաւայ․ զի զահի հարեալ
եմ ես 'ի նմանէ․ գուցէ եկեալ հարկա_
նիցէ զիս՝ մայր առ մանկամբ։* Եւ դու 12
ասացեր՝ եթէ բարի արարից քեզ․ և
եդից զզաւակ քո իբրև զաւազ ծովու՝
որ ոչ թուիցի 'ի բազմութէ ։* Եւ 13
ննջեաց անդ զայն գիշեր․ և էառ՝ յորոց
ածէրն ձեռամբ իւրով պատարագս․
և առաքեաց եսաւայ եղբօր իւրում։
* Այծս երկերիւր․ քաղս քսան։ մա 14
քիս երկերիւր․ խոյս քսան։ * Ուղտս 15
ծնեալս կողոամբք հանդերձ՝ երե_
սուն․ կովս քառասուն։ և ցուլս տասն․
էշս քսան․ և մտրուկս տասն։* Եւ ետ 16
'ի ձեռս ծառայից իւրոց․ հօտս՝ հօտս՝
առանձինն։ և ասէ ցծառայսն իւր ։
երթա՛յք դուք յառաջ քան զիս․ և բա_
ցադրոյս 'ի միմեանց տանիցիք հօտս 'ի
հօտից։* Պատուիրեաց առաջնոյն՝ և 17
ասէ․ եթէ պատահիցէ քեզ եսաւ եղ_
բայր իմ․ և հարցանիցէ՝ թէ ո՞յր ես՝ և
յո՞ երթաս․ և ո՞յր է այդ՝ որ առաջիդ
քո երթայ։ * Եւ ասասցես․ թէ ծա_ 18
ռայի քոյ յակոբայ պատարագք են․ զոր
առաքեաց տեառն իւրում եսաւայ․
և ինքն զկնի մեր գայ։* Պատուիրեաց 19
առաջնոյն․ և երկրորդին․ և երրորդին․
և ամենեցուն որք երթային յառաջ
զհետ խաշանցն, ասէր՝ ըստ բանիս այս
միկ խօսեսջիք ընդ եսաւայ․ յորժամ
գտանիցէք զնա։ * Եւ ասասջիք՝ ահա 20
ծառայ քո յակոբ գայ զհետ մեր․ քան
զի ասաց՝ եթէ ցածուցից զերեսս նր

պատարագօքդ՝ որք երթան առաջի․
և ապա տեսից զերեսս նորա․ թերևս
արասցէ մեծարանս երեսաց իմոց։
21 * Եւ երթային յառաջագոյն ընծայքն
քան զնա․ և ինքն ննջեաց զայն գիշեր
22 անդէն 'ի բանակին։* Եւ յարուցեալ
'ի նմին գիշերի․ էառ զերկուս կանայսն․
և զերկուս աղախնայսն․ և զմետասան
որդիսն իւր․ և էանց ընդ հունն յաբո_
23 կայ։* Եւ էառ անցոյց զնս ընդ ձորն․
24 և զամ ինչ որ իւր էր։ * Եւ մնաց յա_
կոբ միայն․ և մարտեաւ այր մի ընդ
25 նմա մինչև ցառաւօտ ։ * Եւ իբրև
ետես թէ ոչ յաղթեաց նմա , բուռն
էհար զամոլաջլէ զստին նր․ և ընդար_
մացոյց զամոլաջիլ զստին յակոբայ․ 'ի
26 կռուելն իւրում ընդ նմա։* Եւ ասէ
ցնա․ արձակեա՛ զիս քանզի այգ եղև ։
և նա ասէ․ ո՛չ արձակեցից զքեզ՝ թէ
27 ոչ օրհնեսցես զիս։ * Եւ նա ասէ ցնա՝
զինչ անուն է քո․ և սա ասէ ցնա՝ յա_
28 կոբ։ * Եւ ասէ ցնա․ յայսմ հետէ ոչ
կոչեսցեն զանուն քո յակոբ․ այլ իս_
րայէլ եղիցի անուն քո․ զի ժուժկալե
ցեր ընդ Այ․ և ընդ մարդկան զօրա_
29 ւոր լիջիր։ * Եհարց յակոբ՝ և ասէ․
պատմեա՛ ինձ զանուն քո․ և ասէ՝ զի՞
հարցանես զանուանէ իմմէ ։ և օրհ_
30 նեաց զնա անդ ։ * Եւ կոչեաց յակոբ
զանուն տեղւոյն այնորիկ՝ տեսիլ Այ․
զի տեսի զԱծ դէմ յանդիման․ և ապ_
31 րեցաւ անձն իմ ։ * Եւ ծագեցաւ
նմա արև իբրև էանց տեսիլն Այ։ և
նա կաղայր երթայր՝ 'ի զստէ անտի ։
32 * Վասն այնորիկ ոչ ուտեն որդիքն
իսրայէլի զամոլաջիլն՝ զոր ընդարմա
ցոյց․ որ է 'ի վերայ տախտակի զստին,
մինչև ցայսօր ։ զի բուռն էհար զտախ
տակէ զստին յակոբայ․ և ընդարմա_
ցոյց զամոլաջիլ նորա։

ԳԼ։ ԼԳ։

1 Զաչս իւր 'ի վեր եբարձ յակոբ և
ետես․ և ահա եսաւ եղբայր
իւր գայր․ և ընդ նմա արք չորեքհա_
րիւր։ և բաշխեաց յակոբ զմանկունսն
'ի լիայ՝ և յռաքէլ․ և յերկուս աղախ_
2 նայսն։ * Եւ արար զերկուս աղախ_
նայսն և զորդիս նց առաջի, և զլիայ
և զորդիս նր զկնի․ և զռաքէլ և զյո_
3 սէփ հուսկ յետոյ ։ * Եւ ինքն էանց
յառաջ քան զնոսա՝ և երկիր եպագ
եօթն անգամ 'ի վր երկրի․ մինչև մեր
4 ձենալ առ եղբայրն իւր։* Եւ ընթա
ցաւ եսաւ ընդ առաջ նորա․ գիրկս
էարկ նմա և համբուրեաց․ և անկաւ
'ի վր պարանոցի նր՝ և համբուրեաց
5 զնա․ և լացին երկոքեան ։* Եւ հայե_
ցեալ

ցեալ 'ի վեր եսաւ զկանայսն և զման
կունս. և ասէ. դոքա զի՞նչ են քո ։ և
նա ասէ. մանկունք իմ են. որովք ողոր
մեցաւ Ա՟Ծ ծառայի քում ։ *Եւ մա_ 6
տեան աղախնայքն և որդիք նոցա, և
երկիր պագին նմա ։ *Եւ մատեաւ 7
լիա և որդիք իւր՝ և երկիր պագին
նմա. յետոյ մատեաւ յովսէփ և ռաքէլ՝
և երկիր պագին նմա ։ *Եւ ասէ զի՞նչ 8
էր այն ա՟մ չու. որ ինձ դիպեցաւ ։ և
նա ասէ. զի գտցէ շնորհս ծառայ քո
առաջի քո ։ *Եւ ասէ եսաւ. կայ և 9
իմ շատ՝ եղբայր՝ քեզ լիցին քոյդ ։ *Եւ 10
ասէ յակոբ. մի այդպէս. եթէ գտի
շնորհս առաջի քո՝ ընկալ զընծայսն
'ի ձեռաց իմոց. քանզի այնպէս տեսի
զերեսս քո. որպէս ոք տեսանիցէ զե_
րեսս Ա՟Յ. և զուարթասցիս ընդ իս ։
*Առ զօրհնութիւնդ իմ, զոր մատուցի 11
քեզ. զի ողորմեցաւ ինձ Ա՟Ծ. և է իմ
ամենայն ինչ ։ և բռնադատեաց զնա
և էառ ։ *Եւ ասէ՝ չուեսցուք՝ գնաս_ 12
ցուք՝ և երթիցուք զուգզորդն ։ *Եւ 13
ասէ ցնա. Տ՟Ր իմ ինքնին գիտէ՝ զի ման
կունքս մատաղ են. և ոչխարք, և ար_
ջառք ծնունդ արձակեալ է ։ և եթէ
մի օր տարապեմ զդոսա, մեռանին ա՟մ
խաշինքդ ։ *Այլ յառաջեսցէ տէր 14
իմ քան զծառայ իւր. և ես բաց կարի
բաց պարապոյ ճանապարհիդ առաջի
իմ. և բաց կազդուրել մանկանց իմոց
խաղացից, մինչև եկից առ տէր իմ՝
'ի սէիր ։ *Եւ ասէ եսաւ. խիկ թողից 15
առ քեզ 'ի ժողովրդենէ աստի՝ որք
ընդ իս են. և նա ասէ. ընդէ՞ր է ինձ այդ.
շատ է զի գտի շնորհս առաջի քո տէր ։
*Եւ դարձաւ յաւուր յայնմիկ եսաւ 16
ընդ ճանապարհ իւր 'ի սէիր ։ *Եւ 17
յակոբ չուեաց՝ և արար իւր անդ
տունս. և խաշանց իւրոց արար դա_
ղարս. վասն այնորիկ կոչեաց զանուն
տեղւոյն այնորիկ խորանս ։ *Եւ եկն 18
յակոբ 'ի սաղէմ քաղաք սիկիմացւոց.
որ է յերկրին քանանացւոց. իբրև եկն
'ի միջագետաց ասորւոց. և բնակեաց
յանդիման քաղաքին ։ *Եւ ստացաւ 19
զվիճակ անդին, ուր էհար զխորան
իւր, յեմովրայ հօրէ սիւքեմայ հա_
րիւր ոչխարի ։ *Եւ շինեաց անդ 20
սեղան. և կարդաց զԱ՟Ծ իսրայէլի ։

ԳԼ ։ ԼԴ ։

Եւ ել դինա դուստր լիայ՝ զոր 1
ծնաւ յակոբայ, 'ի զննել զդստերաց
աշխարհին ։ *Եւ ետես զնա սիւքեմ 2
որդի եմովրայ քոռեցւոյ. որ իշխանն էր
երկրին. և էառ զնա. և ննջեաց ընդ
նմա. և տառապեցոյց զնա ։ *Եւ ուշ_ 3
եղեալ դինայի դստերն յակոբայ՝ սի_
րեաց զկոյսն. և խօսեցաւ ըստ մտաց
4 կուսին ։ *Եւ խօսեցաւ սիւքեմ ընդ
եմովրայ հօր իւրոյ՝ և ասէ. առ դու ինձ
5 զաղջիկս զայս կնութեան ։ *Եւ լուաւ
յակոբ, եթէ պղծեաց որդի եմովրայ
զդինա զդուստր նորա. և որդիք նր
էին 'ի խաշինս 'ի դաշտին. լուռ եղև յա_
6 կոբ մինչև եկին նոքա ։ *Եւ ել եմօր
հայր սիւքեմայ առ յակոբ խօսել ընդ
7 նմա ։ *Եկին և որդիքն յակոբայ 'ի դաշ_
տէ ։ իբրև լուան ստրջացան արքն. և
տրտմութիւն էր նոցա յոյժ. զի խայտա
ռակութիւն արար յիսրայէլի. մտանե_
լով առ դուստրն յակոբայ. և ոչ այն_
8 պէս մարթէր ։ *Եւ խօսեցաւ ընդ
նոսա եմօր՝ և ասէ ։ սիւքեմ որդի իմ
սիրեաց ոգւով չափ զդուստր ձեր.
9 արդ տուք զնա նմա կնութեան ։ *Եւ
արարէք ընդ մեզ խնամութիւն. զդս_
տերս ձեր տուք մեզ. և զդստերս մեր
10 առէք որդւոց ձերոց ։ *Եւ բնակե_
ցարուք 'ի միջի մերում. և երկիրդ ա_
հա ընդ արձակ է առաջի ձեր. և բնա_
կեցարուք՝ և վաճառեցարուք 'ի դմա. և
11 ստացարուք ստացուածս 'ի դմա ։ *Եւ
ասէ սիւքեմ ցհայր նր և ցեղբարս նր.
գտից շնորհս առաջի ձեր՝ և զոր ինչ
12 ասիցէք՝ տացուք ։ *Յաճախեցէք
յոյժ զվարձանս և զօժիտս. և տաց՝ որ
չափ և ասիցէք. և տուք ինձ զաղջիկն
13 զայն կնութեան ։ *Պատասխանի ետուն
որդիքն յակոբայ՝ սիւքեմայ և եմօրայ
հօր նր նենգութեամբ՝ և ասեն ցնոսա.
զի պղծեցին զդինա քոյր նց ։ և ասեն
շմաւոն և ղևի եղբարքն դինայ՝ որ_
14 դիքն լիայ ։ *Ոչ կարեմք առնել զայդ
բան. տալ զքոյր մեր առն անթլփա
15 տի. քանզի նախատինք են մեզ ։ *Բայց
այսու նմանիցուք ձեզ. և բնակիցուք
'ի միջի ձերում. եթէ լինիցիք իբրև
զմեզ՝ և դուք. 'ի թլփատել ձեզ զա՟մ
16 արու ։ *Եւ տացուք զդստերս մեր
ձեզ. և 'ի դստերաց ձերոց առցուք
մեզ կանայս. և բնակիցուք առ ձեզ.
17 և եղիցուք իբրև ազգ մի ։ *Ապա թէ
ոչ լուիջիք մեզ թլփատել. առեալ
18 զդստերս մեր՝ 'ի բաց գնասցուք ։ *Եւ
հաճոյ թուեցան բանքն առաջի եմօ_
րայ. և առաջի սիւքեմայ որդւոյ եմօ
19 րայ ։ *Եւ ոչ յամեաց պատանին առ_
նել զբանն. զի յոյժ հարեալ էր 'ի սէր
դստերն յակոբայ. և նա էր պատուա_
կանագոյն քան զամենեսեան՝ որք 'ի
20 տան հօր նր էին ։ *Եւ եկին եմօր և
սիւքեմ որդի նր 'ի դուռն քաղաքին
իւրեանց. և խօսեցան ընդ արս քաղա_
21 քին իւրեանց՝ ասեն ։ *Արքն այնոքիկ
խա_

խաղաղութիւն են ընդ մեզ. արդ բնա-
կեսցին յերկրիս. և շահեսցին ՚ի սմա.
զի երկիրս ընդ արձակ է առաջի նոցա.
զդստերս նոցա առցուք մեզ կանայս.
և զդստերս մեր տացուք նոցա։ *Այլ 22
միայն այսու նմանեսցին մեզ արքն
բնակիլ ընդ մեզ. լինիլ ազգ մի ՚ի թլ-
փատել մեզ զամ արու որպէս նոքայն
թլփատեալք են։ *Եւ ինչք նոցա և անա 23
սունք նոցա և ջրբռատանի նոցա ոչ ապաքէն
մեր լինիցի. բայց այսու և եթ նմանիմք
ցնոսա նոցա. և բնակեսցին ՚ի միջի մերում։
*Եւ լուան եմորայ և սիւքեմայ որդի- 24
ք նորա ամենեքին՝ որք ելանէին ընդ
դուռն քաղաքին իւրեանց և թլփատե
ցին զմարմին անթլփատուքն իւրեանց
համարս. ամենեքին որք ելանէին ընդ
դուռն քաղաքի նոցա։ *Եւ եղև յաջ 25
որն երրորդի միում դեռ էին նոքա ՚ի
ցաւսն. առին երկու որդիքն յակոբայ,
շմաւոնի և ղևի եղբարքն դինայ, իւրա-
քանչիւր զսուր իւր՝ և մտին ՚ի քաղաքն
հաղմուքեամբ. և կոտորեցին զամ արու։
*Եւ զեմմոր և զսիւքեմ զորդի նորա 26
սպանին ՚ի սուր սուսերի. և առին զդի
նա ՚ի տանէ սիւքեմայ՝ և ելին։ *Եւ 27
որդիքն յակոբայ մտին ՚ի վէրս վիրաւո
ցացն. և առին աւար զքաղաքն. յո-
րում պղծեցին զդինա զքոյրն նոցա։
*Զ ոչխարս և զեզս և զէշս նոցա, 28
որք էին ՚ի քաղաքին. և որ ինչ ՚ի բացի
էր՝ առին։ *Եւ զամենայն մարդա- 29
գերսն նոցա. և զամենայն զկանայս և զա
բանսն նոցա՝ և զկանայսն նոցա գերեցին։
և յափշտակեցին որչինչ էր ՚ի քաղա-
քին՝ և որչինչ ՚ի տունս։ *Եւ ասէ յա- 30
կոբ ցսիմաւն և ցղևի. առեալ արարիք
զիս. երեվիլ անգամ ամենայն բնակ
չայ երկրիս. ՚ի մէջ քանանացւոց. և
փերեզացւոց. և ես սակաւաւոր եմ
թուով. արդ եթէ ժողովեսցին ՚ի վէր
իմ և հարկանիցեն զիս. սատակեալ
սատակիցիմ՝ ես, և տունս իմ։ *Եւ 31
ասեն. իսկ զիարդ. զի երբեւ զբազ
քարշեցին զքոյրն մեր։

ԳԼՒ. Լ.

*Եւ ասէ Ա՚ծ ցյակոբ։ արի՝ անց ՚ի 1
տեղին ՚ի բեթէլ. և անդ բնա-
կեացիս. և արասցես անդ սեղան Ա՚ծ
|| ԱԵ. || որ երեւեցաւն քեզ. ՚ի փախչիլն քոյ- 28.13.
բեայց եսաւայ եղբօր քոյ։ *Եւ ասէ 2
յակոբ ցընտանիսն իւր. և ցամենեսին
որք էր նմա էին։ ՚ի բաց առէք զնձոտ
օտարոտիս. որք ընդ ձեզ էն, ՚ի միջոյ
ձերմէ. և սրբեցարո՛ւք և փոխեցէ՛ք
զպատմուճանս ձեր։ *Եւ յարուցեալ 3
եկցուք ՚ի բեթէլ. և արասցուք անդ

սեղան Ա՚ծ. որ լուաւ ինձ յաւուր նե-
ղութեան իմոյ. որ ընդ իս. և ապրեցոյց
4 զիս ՚ի ճանապարհին՝ զոր գնայի։ *Եւ
եառն ցյակոբ զնձոտն օտարոտիս.
որք էին ՚ի ձեռս նոցա. և զդինսան՝ որք
յականջս իւրեանց։ և ծածկեաց զնո
յակոբ ՚ի ներքոյ բեւեհնոյն ՚ի սիկիմ։
5 և կորոյս զնա մինչև ցայսօր ժամանա-
կն։ *Եւ չուեցաք խորայել ՚ի սիկիմայ.
և եղև ահ Ա՚ծ ՚ի վերս քաղաքացն. որք
շուրջ զնոսա էին. և ոչ ելին զհետ որդ-
6 ւոցն իսրայելի։ *Եւ եկն յակոբ ՚ի
լուզ որ ի յերկրին քանանացւոց. այն
ինքն է բեթէլ. ինքն և ամենայն ժո-
7 ղովուրդն, որ ընդ նմա։ *Եւ շինեաց
անդ սեղան. և կոչեաց զանունն տեղ
ւոյն բեթէլ. զի անդ || երեւեցաւ նմա || ԱԵ.
Ա՚ծ ՚ի փախչիլ նմ յերեսաց եսաւայ 28.18.
8 եղբօր նորա։ *Եւ մեռաւ դեբօրա
դայեակն ռեբեկայ. և թաղեցաւ ՚ի
ներքոյ բեթէլայ ընդ կաղնեաւն. և
կոչեաց զանունն նորա կաղնի սգոյ։
9 *Եւ երեւեցաւ Ա՚ծ յակոբայ՝ մինչդեռ
անդ էր ՚ի լուզ. յորժամ եկն ՚ի միջա-
գետայ ասորւոցն. օրհնեաց զնա Ա՚ծ։
10 *Եւ ասէ ցնա Ա՚ծ. || անունդ քո յա- || ԱԵ.
կոբ. ոչ ևս կոչեսցի յակոբ. այլ իսկ 32.29.
եղիցի անունն քո. և կոչեաց զանունն նո
11 ր իսկ։ *Եւ ասէ ցնա Ա՚ծ՝ ես եմ Ա՚ծ
քո բազմացո՛ւ և աճեցո՛ւք և բազմաց-
ի՛ր. ազգք և ժողովք ազգաց եղիցին
ի քէն. և թագաւորք յերանաց քոց
12 ելցեն։ *Եւ զերկիրդ, զոր եառ աբ-
րահամու և իսահակայ՝ քեզ տացու զդա-
նա քեզ եղիցի. և զաւակի քում յետ քո տաց
13 զերկիրդ զայդ։ *Եւ վերացաւ ՚ինմա
նէ Ա՚ծ ՚ի տեղւոջէն՝ ուր խօսեցաւ ընդ
14 նմա։ *Եւ կանգնեաց յակոբ զարձան
՚ի տեղւոջն ուր խօսեցաւ ընդ նմա Ա՚ծ՝
արձան քարեղէն. և նուիրեաց ՚ինմա
15 նուէրս և եարկ ՚ի վրն նր իւղ։ *Եւ
կոչեաց զանուն տեղւոյն ուր խօսեցաւ
ընդ նմա Ա՚ծ բեթէլ։ *Ճանեաց ՚ի 16
բեթէլայ. և եղև իբրև մերձեցաւ ՚ի
քաբրաթայ երկիրն, մնանել յեփրա-
թայ, ծնաւ ռաքէլ։ *Եւ դժուարա- 17
ծին եղև ՚ի ծննդեանն. և եղև ՚ի վշտա
նալն նորա ՚ի ծննդեանն, և ասէ ցնա
ծնուցիչն՝ քաջալերեաց զի այդ և այս
18 ուսարէ։ *Եւ եղև ընդ հանել ոգւոյն.
քանզի մեռաւ. կոչեաց զանունն նորա
որդի վշտաց իմոց. և հայրն կոչեաց
19 զնա բենիամին։ *|| Մեռաւ ռաքէլ՝ և || ԱԼ այլ.
թաղեցաւ ՚ի ճանապարհին եփրա- 48. 7.
20 թայ. այն իսկ է բեթղեհեմ։ *Եւ կանգ
նեաց յակոբ արձան ՚ի վէր շիմինորա.
այն է արձան շիմի ռաքէլայ մինչև
21 ցայսօր ժամանակի։ *Եւ չուեաց
իսրայէլ՝

իսրայէլ՝ եւ հար զխորան իւր յայնկոյս
Ծնն. 49.4. աշտարակին գադերայ: * Եւ եղեւ 22
իբրեւ բնակեցաւ իսրայէլ յերկրին
յայնմիկ. գնաց ռուբէն՝ եւ ննջեաց ը՛նդ
բաղղայ հարճի հօր իւրոյ. լուաւ իս_
րայէլ՝ եւ չար թուեցաւ առաջի նո՛ր. եւ
էին որդիքն յակոբայ երկոտասանք:
* Որդիք լիայ՝ անդրանիկ յակոբայ՝ 23
ռուբէն: շմաւոն: ղեւի. յուդայ. իսա
քար. զաբուղոն: * Եւ որդիք ռաքելի՝ 24
յովսէփ. եւ բենիամին: * Եւ որդիք բաղ_ 25
ղայ նաժշտին ռաքելայ՝ դան, եւ նեփ_
թաղիմ. այս են որդիք յակոբայ. որք
եղեն նմա ՚ի միջագետս ասորւոց: * Եւ 26
որդիք զեղփայ նաժշտին լիայ. գադ, եւ
ասեր: * Եւ եկն յակոբ առ իսահակ 27
հայր իւր ՚ի մամբրէ՝ ՚ի քաղաք դաշ_
տին. այն է քեբրոն. յերկրին քանանաց
ւոց. ուր պանդխտեցան աբրահամ եւ
իսահակ: * Եւ եղեն ա՛մ աւուրք իսա 28
հակայ՝ զոր եկեաց. ամք հարիւր եւ
ութսուն: * Եւ պակասեալ իսահա_ 29
կայ մեռաւ. եւ յաւելաւ յազգ իւր. ծե_
րացեալ եւ լի աւուրբք. եւ թաղեցին
զնա եսաւ եւ յակոբ որդիք իւր:

ԳԼ: ԼԶ:

Եւ այս են ծնունդք եսաւայ. նա է 1
եդոմ: * Եւ էառ իւր եսաւ կա_ 2
նայս ՚ի դստերաց քանանացւոց. զադ_
դա զդուստր ելոնայ քետացւոյ. եւ զո_
ղիբամա դուստր անայի որդւոյ սեբե
գոնի խեւացւոյ: * Եւ զբասեմաթ 3
զդուստր իսմայէլի զքոյր նաբէո_
Ա. Մն. թայ: * Եւ ծնաւ ադդա եսաւայ 4
1.35. զեղիփազ. եւ բասեմաթ ծնաւ զռա_
գուէլ: * Եւ ողիբամա ծնաւ զյեուս 5
եւ զեգղոմ. եւ զկորխ. սոքա են որդիք
եսաւայ. որք եղեն նմա յերկրին քա_
նանացւոց: * Եւ էառ եսաւ զկանայս 6
իւր. եւ զուստերս եւ զդստերս իւր. եւ
զա՛մ մարդիկ տան իւրոյ. եւ զամենայն
ինչս՝ եւ զանասունս, եւ զամենայն
ինչ զոր ստացաւ՝ եւ զոր արար յերկրին
քանանացւոց. եւ գնաց յերկրէն քա_
նանացւոց յերեսաց յակոբայ եղբօր
Ծնն. իւրոյ: * Զի էին բազում ինչք նոցա 7
13.6. ՚ի միասին բնակելոյ. եւ ոչ կարէր եր_
կիրն պանդխտութե՛ հանդարտել նո՛ց
՚ի բազմութենէն ընչից իւրեանց:
Յեսու. * Եւ բնակեցաւ եսաւ ՚ի լերինն 8
24. 4. սէիր. եսաւ. որ նա ինքն է եդոմ: * Եւ 9
այս են ծնունդք եսաւայ հօրն եդո_
մայեցւոց ՚ի լերինն սէիր: * Եւ այս են 10
Ա. Մն. անուանք որդւոցն եսաւայ. եղիփազ
1. 35. որդի ադդայ, կնոջ եսաւայ. եւ ռա_
գուէլ՝ որդի բասեմաթայ, կնոջ եսա
ւայ: * Եւ եղեն որդիք եղիփազայ. 11
թեման. ոմար. սովփար. գոթամ. եւ

12 կենեզ: * Եւ թամար էր հարճ եղի_
փազու որդւոյ եսաւայ. եւ ծնաւ եղի_
փազու զամաղէկ: սոքա են որդիք ադ_
13 դայի կնոջ եսաւայ: * Եւ այսեն որդիք
ռագուէլի. նաքոթ. զարեհ. սամմա.
եւ մեզա. սոքա են որդիք բասեմա_
14 թայ կնոջ եսաւայ: * Եւ այս են որ_
դիք ողիբամայ դստեր անայի որդւոյ
սեբեգոնի կնոջ եսաւայ: եւ ծնաւ
եսաւայ զյեուս. եւ զեգղոմ. եւ զկորխ:
15 * Սոքա են իշխանք՝ որդիք եսաւայ:
որդիք եղիփազու անդրանկանն եսա
ւայ. իշխան թեման. իշխան ոմար.
16 իշխան սոփար. իշխան կենեզ: * Իշխան
կորխ. իշխան գոթոմ. իշխան ամաղէկ.
սոքա են իշխանք եղիփազու յերկրին
եդոմայեցւոց. սո՛ք են որդիք ադդայի:
17 * Եւ այսեն որդիք ռագուէլի որդւոյ
եսաւայ: իշխան նաքոթ. իշխան զարե՛
իշխան սամմայ՝ իշխան մոզէ: այս են
իշխանք ռագուէլի յերկրին եդոմայ:
սոքա են որդիք բասեմաթայ կնոջ
18 եսաւայ: * Եւ այս են որդիք ողիբա_
մայ կնոջ եսաւայ իշխան յեուս. իշխան
յեգղոմ. իշխան կորխ. այս են իշ_
խանք ողիբամայ դստեր անայի կնոջ
եսաւայ. սոքա են որդիք եսաւայ:
19 * Եւ այս են իշխանք նոցա. եւ այս են
20 որդիք եդոմայ: * Եւ այս են որդիք Ա. Մն.
սէիրայ քոռացւոյ. որ բնակեալ էր ՚ի 1.38.
սէիր: ղոտան. սեբաղ. սեբեգոն. եւ
21 անայ: * Դեսոն. եւ ասեր՝ եւ ռիսոն. սո՛ք
են իշխանք քոռեցւոյն. որդւոյ սէիրայ.
22 յերկրէն եդոմայ: * Եւ եղեն որդիք
ղոտանայ. քոռի. եւ եմման. եւ քոյր
23 ղոտանայ՝ թամնայ: * Եւ սոքա են
որդիք սոբաղայ. գաղոմ. եւ մանա_
քաթ. եւ գեբաղ. եւ սոփար. եւ օնան:
24 * Եւ այսեն որդիք սեբեգոնայ. այիէ.
եւ օնան. այս օնան է. որ եգիտ զյա_
բիւրն յանապատի. մինչ արածէր
25 զէշսն սեբեգոնի հօր իւրոյ: * Եւ այս
են որդիք անայի՝ դեմոն. ողիբամայ
26 դուստր անայ: * Եւ այս են որդիք
դեմոնայ. ամադան. եւ եսբան. եւ յեթ_
27 րան. եւ քառան: * Եւ այս են որդիք
ասերայ. բաղղան. եւ զուկան. ոնի
28 կան. եւ ուկամ: * Եւ այս են որդիք
29 ռիսոնի. ոս. եւ առան: * Եւ այս են.
իշխանք քոռեայ. իշխան ղոտան. իշ_
խան առաստաղ. իշխան սեբեգոն. իշ_
30 խան անայ: * Իշխան դեմոն. իշխան
ասեր. իշխան դիսոն. այս են իշխանք
քոռեայ. ՚ի պետութիւն իւրեանց. յեր_
31 կրին յեդոմայ: * Եւ այս թագաւորք
են. որք թագաւորեցին յերկրին եդո_
մայեցւոց. մինչեւ թագաւորեալ էր
32 թագաւոր յիսրայէլի: * Եւ թագաւո
րեաց

րեաց յեդոմ՝ բաղակ որդի սեփորայ.
և անուն քաղաքին նորա դեննաբա ։
*Եւ մեռաւ բաղակ. և թագաւորեաց 33
ընդ նորա յոբաբ որդի զարեհի ՚ի բոս
սորայ ։ *Եւ մեռաւ յոբաբ. և թա_ 34
գաւորեաց ընդ նորա ասոմ՝ յերկրէ
թամանացւոց ։ *Եւ մեռաւ ասոմ. 35
և թագաւորեաց ընդ նորա ադադ որ
դի բարադայ. որ կոտորեաց զմադիամ
՚ի դաշտին մովաբացւոց. և անուն քա
աւիթ. ղաքի նորա գեթեմ ։ *Եւ մեռաւ 36
ադադ. և թագաւորեաց ընդ նորա
սամաղա ՚ի մասեկայ ։ *Եւ մեռաւ 37
սամաղա. և թագաւորեաց ընդ նորա
սաւուղ յռոբովթայ՝ որ առ գետեզերբն։
*Եւ մեռաւ սաւուղ. և թագաւորեաց 38
ընդ նորա բաղդայենոն. որդի ոքոբուրայ։
*Եւ մեռաւ բաղդենոն որդի ոքոբո 39
րայ. և թագաւորեաց ընդ նորա ադադ
որդի բարադայ. և անուն քաղաքի նորա
փոգովլ. և անուն կնոջ նորա մետաբեէլ.
դուստր մատրեթեայ. որդւոյ մաղռո
բայ ։ *Այս են անուանք որդւոյն 40
եսաւայ. և իշխանացն եսաւայ յազգս
իւրեանց. ըստ տեղիս իւրեանց. յաշ_
խարհս իւրեանց. և ՚ի տոհմս իւրեանց.
ըստ անուանց նոցա ։ իշխան թամա_
նայ. իշխան ղոտան. իշխան յեթաթ ։
*Իշխան ողիբամայ. իշխան հեղա։ իշ_ 41
խան փենոն ։ *Իշխան կենեզ. իշխան 42
թեման. իշխան մազար ։ *Իշխան մա 43
գեդիէլ. իշխան զաբոյին։ սոքա են իշ_
խանք եդովմայեցւոց. ըստ բնակութե
յերկրի ստացուածոց իւրեանց. և
այս է եսաւ հայր եդովմայեցւոց ։

ԳԼ. ԼԷ ։

Եւ բնակէր յակոբ յերկրի՝ ուր 1
պանդխտեցաւ հայր նորա՝ յերկ
րին քանանացւոց։*Եւ այս են ծնունդք 2
յակոբայ։ յովսէփ եօթնևտասնամեայ
էր, մինչ արածէր եղբարբքն հան_
դերձ խաշինս։ և էր կրսեր ընդ որ_
դիսն բաղղայ. և ընդ որդիսն զելփայ
կանանց հօր իւրոյ. և բերէին համբաւ
չար զյովսեփայ առ իսրայէլ հայր իւր
եանց։*Բայց իսրայէլ սիրէր զյովսէփ 3
առաւել քան զամենայն որդիսն իւր.
քանզի որդի ծերութե էր նորա ։ և
արար նմա պատմուճան ծաղկեայ ։
*Իբրև տեսին եղբարք նր թէ սիրէ 4
զնա հայրն քան զամ որդիս իւր, ատե_
ցին զնա. և ոչ կարէին խօսել ինչ ընդ
նմա խաղաղութ։*Եւ տես երազ յովսէփ՝ 5
և պատմեաց եղբարց իւրոց. և յաւելին
ևս ատել զնա ։ *Եւ ասէ ցնս. լուա_ 6
րուք զերազն. զոր տեսի ։ *Թուէր 7
եթէ զորայ կապէաք ՚ի դաշտի միում։

կանգնեցաւ որայն իմ. եկայ ուղ
ղորդ. և դարձան որայքն ձեր և պա_
8 գին երկիր իմոյ որայոյս ։ *Եւ ասեն
ցնա եղբարքն իւր. մի թէ թագաւորե
լով թագաւորեսցես ՚ի վերայ մեր.
կամ տիրելով տիրեսցես մեզ. և յաւե
լին ևս ատել զնա վն երազոյն նորա.
9 և վասն բանիցն նորա ։ *Եւ ետես
միւս ևս երազ. և պատմեաց հօր իւր
ում և եղբարց իւրոց ։ և ասէ. ահա
տեսանէի միւս ևս այլ երազ. որպէս
թէ արեգակն՝ և լուսին՝ և մետասան
աստեղք երկիր պագանէին ինձ ։
10 *Սաստեաց նմա հայրն իւր՝ և ասէ.
զինչ է երազդ՝ զոր տեսեր ։ արդ գա_
լով գայցեմք ես և մայր քո՝ և եղ
բարք քո. և երկիրպագանիցեմք քեզ ։
11 *Եւ նախանձեցան ընդ նմա եղբարքն
իւր. բայց հայրն պահէր զբանն։
12 *Եւ գնացին եղբարք նորա արածել
զխաշինս հօրն իւրեանց ՚ի սիւքեմ։
13 *Եւ ասէ իսրայէլ ցյովսէփ. ոչ աւա_
նիկ եղբարք քո արածեն զխաշինսն
՚ի սիւքեմ. եկ առաքեցից զքեզ առ
14 նոսա։*Եւ ասէ ցնա. ահաւասիկ ես ։
ասէ ցնա իսրայէլ. երթ՝ և տես եթէ
ողջ իցեն եղբարքն քո՝ և խաշինք. և
բեր ինձ զրոյց. Եւ առաքեաց զնա ՚ի
ծործորոյն քեբրոնի. եկն ՚ի սիւքեմ։
15 *Եւ եգիտ զնա այր մի մոլորեալ ՚ի
դաշտին ։ եհարց ցնա այրն՝ և ասէ.
16 զինչ խնդրես։*Եւ նա ասէ. զեղբարս
իմ խնդրեմ. պատմեա ինձ, ուր արա_
17 ծիցեն ։*Եւ ասէ ցնա այրն. բարձին
աստի. և լուայ՝ զի ասէին. երթիցուք
՚ի դովթայիմ։ և գնաց յովսէփ զհետ եղ
բարցն իւրոց. և եգիտ զնոսա ՚ի դո_
18 թայիմ։*Տեսին զնա եղբարքն յառա
ջագոյն ՚ի հեռաստանէ. մինչև մօտ
եկեալ էր առ նոսա՝ զխորհուրդ վատ
19 ՚ի մէջ առին սպանանել զնա։*Եւ ա_
սեն իւրաքանչիւր ցեղբայր իւր. ահա
20 երազատեսն գայ ։ *Եկայք սպան_
ցուք զնա. և ընկեսցուք ՚ի մի ՚ի գբոց
աստի. և ասասցուք, եթէ գազան չար
եկեր զնա. և տեսցուք՝ զինչ լինիցին
21 երազքն նորա ։ *‖ Իբրև լուաւ ռու_ ‖ Ար.
բէն. կորզեաց զնա ՚ի ձեռաց նոցա։ 42.22.
22 *Եւ ասէ. մի հարցուք զդա յոգի ։ և
ասէ ցնոսա ռուբէն. մի հեղցուք զա_
րիւն. այլ արկէք զնա ՚ի գուբ մի յանա
պատի աստ. և ձեռն մի արկանէք ՚ի նա։
զայս ասէր, զի թափիցէ զնա ՚ի ձեռաց
նոցա. և հասուսցանիցէ զնա առ հայր
23 իւր ։ *Եւ եղև իբրև եկն յովսէփ առ
եղբարսն իւր. մերկացին զպատմու
24 ճանն նորա ծաղկեայ ՚ի նմանէ ։ *Եւ
առին ընկեցին զնա ՚ի գուբն. գուբն

ունայն էր. և ջուր ոչ գոյր ՚ի նմա։
*Եւ՛ նստան ուտել զհաց ։ զաչս ՚ի 25
վեր բարձեալ տեսին . և ահա ճանա_
պարհորդք իսմայելացիք գային ՚ի գա
ղաադէ. և ուղտք նոցա լի էին խնկօք.
ստաշխամբք. և ռետինիւ. և երթային
իջուցանել յեգիպտոս։ *Եւ ասէ յու 26
դա ցեղբարսն իւր . զի՞նչ օգուտ է
եթէ սպանանիցեմք զեղբայրն մեր. և
թաքուցանիցեմք զարիւն նորա ։

*Եկայք վաճառեսցուք զնա իսմայե 27
լացւոցն. և ձեռք մեր մի՛ շաղախեսցին
՚ի նմա . զի եղբայր և մարմին մեր է։ և
|| Իմաստ. լուա՛ն նմա եղբարքն իւր։ *||Եւ՛ ան_ 28
10.13. ցանէին արք մադիանացիք՝ վաճառա
Սաղմ. կանք . և ձգեցին հանին զյովսէփ ՚ի
104.17. գբոյ անտի. և վաճառեցին զյովսէփ
իսմայելացւոցն քսան դահեկանի։
*Եւ իջուցին զյովսէփ յեգիպտոս . 29
դարձաւ ռուբէն ՚ի գուբն. և ոչ եգիտ
զյովսէփ ՚ի գբի անդ ։ *Պատառեաց 30
զհանդերձս իւր . և դարձաւ առ եղ_
բարսն իւր՝ և ասէ. պատանեակն չէ՛
անդ . և ես արդ յո՞ երթայց ։ *Եւ՛ 31
առեալ զպատմուճանն յովսէփայ՝ զե_
նին զուլ այծեաց . և թաթաւեցին
զպատմուճանն յարեանն։ *Եւ՛ առա 32
քեցին զպատմուճանն ծաղկեայ տա
նել առ հայրն իւրեանց՝ և ասեն. զայդ
գտաք. ծանի՛ր եթէ որդւոյ քո իցէ
պատմուճանդ . և եթէ ոչ ։ *Եւ 33
ծանեաւ զնա՝ և ասէ . պատմուճան
որդւոյ իմոյ է . գազան չար եկեր զնա.
գազան յափշտակեաց զյովսէփ ։
34 *Եւ՛ պատառեաց զհանդերձս իւր. և
քուրձ զգեցաւ ՚ի վերայ միջոյ իւրոյ. և
սուգ ունէր ՚ի վերայ որդւոյն իւրոյ
35 աւուրս բազումս ։ *Եւ ժողովեցան
ամ ուստերք նորա՝ և ամ դստերք .
և եկին մխիթարել զնա . և ոչ կա_
մէր մխիթարել. ասէ, զի իջից ես սո_
վին սգով առ որդի իմ ՚ի դժոխս . և
36 ելաց զնա հայրն իւր ։ *Իսկ մադիա_
նացիքն վաճառեցին զյովսէփ յեգիպ_
տոս պետափրեայ ներքինւոյ . դահճա
պետի փարաւոնի ։

ԳԼ։ ԼԸ։

1 Եւ՛ եղև ՚ի ժամանակի յայնմիկ,
էջ յուդա յեղբարց իւրոց . և
չոգաւ առ ոմն ոդողոմացի, որում ա_
2 նուն էր իրաս։*Եւ ||ետես անդ յուդա ||1. Մնաց.
զդուստր առն քանանացւոյ, որում 2. 3.
անուն էր շաւայ. և էառ զնա իւր կին.
3 և եմուտ առ նա։ *Որ յղացաւ, և ծնաւ
որդի . և կոչեաց զանուն նորա՛ էր։
4 *Եւ ||յղացաւ դարձեալ . ծնաւ որ_ ||Թուոց
դի. և կոչեաց զանուն նորա օնան։ 26.19.
5 *Եւ՛ յաւել՝ դարձեալ ծնաւ որդի. և
կոչեաց զանուն նորա սելով . և նա էր
6 ՚ի քասբի՝ յորժամ ծնաւ զնոսա։ *Եւ
էառ յուդա կին էրայ անդրանկի
իւրում. որում անուն էր թամար։
7 *Եւ՛ ||եղև էր անդրանիկն յուդայ ||Թուոց
չար առաջի Տն . և սպան զնա Ած։ 26.19.
8 *Եւ ասէ յուդա ցօնան. մուտ առ կին
եղբօր քո . և ամուսնացիր ընդ նմա.
և յարուցես զաւակ եղբօր քում։
9 *Եւ՛ իբրև գիտաց օնան եթէ ոչ լինի
նմա զաւակն. լինէր յորժամ՝ մտանէր իւր.
առ կին եղբօր իւրոյ, հեղոյր զսերմն
յերկիր. չտալ զաւակ եղբօր իւրում։
10 *Եւ չար թուեցաւ առաջի Այ գոր_
ծըն՝ զոր արար. սպան և զնա ևս։
11 *Եւ՛ ասէ յուդա ցթամար ցնու իւր .
նիստ այրի ՚ի տան հօր քո՝ մինչև եղի
ցի մեծ սելով որդի իմ. զի ասէր՝ թէ
գուցէ և նա ևս մեռանիցի. որպէս և
եղբարքն նր. գնաց թամար՝ և նստաւ
12 ՚ի տան հօր իւրոյ ։ *Բազմացան աւ_
ուրքն . և մեռաւ դուստր շաւայ կին
յուդայ. մխիթարեցաւ յուդա՛ և գնաց
՚ի կտուրս խաշանց իւրոց՝ ինքն և իրաս
հովիւ՛ իւր ոդողոմացի ՚ի թամնայ։
13 *Ազդ եղև թամարայ նուոյ նորա՝ և
ասեն . ահա սկեսրայր քո ելանէ ՚ի
14 թամնայ՝ կտրել զխաշինս իւր։ *Եւ՛
եհան զհանդերձս այրութեան իւրոյ
յինքենէ ։ արկաւ տեռ՝ և զարդարե_
ցաւ. և նստաւ առ դրան էնանու յանցս
թամնայ.

Թաշեայ. զի ետես եղեալ մեծ եղև սե-
լօմ. և նա ոչ տայր զնա նմա կին։
*Իբրև ետես զնա յուդա՝ համարեցաւ 15
թէ բազ իցէ. քանզի ծածկեալեր զե-
րեսս իւր՝ և ոչ ծանեաւ զնա։ *Եւ 16
տոքեցաւ առ նա՝ ի ճանապարհէ ան-
տի՝ և ասէ. Թո՛յլ տուր ինձ մտանել
առ քեզ. զի ոչ ծանեաւ թէ նու նորա
իցէ։ և նա ասէ. զի՞նչ տացես ինձ է-
թէ մտանիցես առ իս։ *Եւ ասէ՝ ես 17
տաց ածել քեզ ուլ այծեաց ՚ի խա-
շանց իմոցն։ և նա ասէ. Թէ տաս գրա-
ւական, մինչև տացես ածել։ *Եւ ասէ՝ 18
զի՞նչ գրաւական տաց քեզ. և
ասէ՝ զմատանիդ, և զգեստդ. և զգա
ճաղանդ, որ ՚ի ձեռին քումն. և եմուտ
առ նա. և յղացաւ ՚ի նմանէ։ *Եւ 19
յարեաւ գնաց՝ և էհան ՚ի բաց զձորձն
իւր յինքենէ. և զգեցաւ զհանդերձն
այրուէթ իւրոյ։ *Եւ առաքեաց յու- 20
դա ուլ այծեաց ՚ի ձեռն հովիւին
իւրոյ ոդողմացւոյ առնուլ զգրաւա
կանն ՚ի կնոջէ անտի, և ոչ եգիտ զնա։
*Եւ հարց զարս տեղւոյն՝ և ասէ ցնո- 21
սա. ո՞ւր է բազն. որ էր լինեան ՚ի վե-
րոյ ճանապարհիս։ *Եւ ասեն. չէր 22
աստ ուրեք բազ։ և դարձաւ առ յու-
դա. և ասէ՝ ո՛չ գտի. և արք տեղւոյն
ասեն՝ թէ չէր աստ բազ։ *Եւ ասէ յու- 23
դա. նմա լիցի այն. այլ զի մի ծաղր
կացցուք. ես ետուս տանիլ զուլդ. և
դու ոչ գտեր։ *Եւ եղև յետ երից 24
ամանոց. ազդ եղև յուդայ՝ և ասեն.
պոռնկեցաւ նու քո Թամար. և ահա
յղի է ՚ի պոռնկութենէ։ և ասէ յու-
դա. Հանէք զնա արտաքս, և այրեսցի։
*Եւ մինչդեռ տանէին զնա. առա- 25
քեաց առ սկեսրայրն իւր, և ասէ. յառ-
նէ, որոյ այդ գրաւականք են՝ յղի եմ
ես։ և ասէ՝ ծանիր, որոյ իցէ մատա-
նիդ՝ և գգեստդ՝ և գաւազանդ։ *Եւ 26
նեաւ յուդա՝ և ասէ. արդարացեալ է
նա քան զիս. զի ոչ ետու զնա որդւոյ
իմում սելովնի։ և ոչևս յատեալ գիտեաւ
զնա։ * Եւ ‖ եղև իբրև ծնանէր. և 27
ելին երկու որդիք յորովայնի նորա։ և
եղև ՚ի ժամանակի ծննդեան նորա.
մին յառաջագոյն եհան զձեռն իւր. և
էառ ծնուցիչն՝ կապեաց կարմիր ՚ի
ձեռինն նորա։ *Եւ նա սակ, նախ սա ելիս 28
զե։ *Իբրև ամփոփեաց զձեռն անդ- 29
րէն. ելին ել վաղվազակի եղբայրն
նորա։ և նա ասէ. զի՞ է զի խրամատ
քաւ վասն քո ցանգ. և կոչեաց զանուն
նորա փարես։ * ‖ Եւ յետոյ ելին ել 30
եղբայրն նորա. յորոյ ձեռին կապեալ
էր զկարմիրն։ և կոչեաց զանուն նո-
րա զարա։

ԳԼ։ ԼՕ։

Եւ զՅոսէփ իջուցին յեգիպտոս. 1
և գնեաց զնա պետափրէս նե-
քինի փարաւոնի դահճապետի, այր
եգիպտացի, ՚ի ձեռաց իսմայելացւոյն.
որք իջուցին զնա անդր։ *Եւ էր Տ՚ր 2
ընդ յոսէփայ. և էր յաջողակ։ և եղև
՚ի տան տեառն իւրոյ եգիպտոս։
*Իբրև գիտաց տէրն նորա՝ թէ Տ՚ր 3
ընդ նմա է. և զամ զինչ և առնէր՝
Տ՚ր յաջողէր ՚ի ձեռս նորա։ *Եւ է- 4
գիտ յոսէփ ընդհակառակ առաջի տեառն
իւրոյ. զի հաճոյ էր նմա։ և կացոյց
զնա ՚ի վերայ տան իւրոյ. և զամենայն
զինչ՝ որ իւր էր, ետ ՚ի ձեռս յոսէփայ։
և եղև յետ կացուցանելոյ զնա ՚ի վե-
րոյ տան իւրոյ՝ և ՚ի վերայ ամենայն
իւրոց. որ ինչ էր նորա։ *Եւ օրհնեաց 5
Տ՚ր զտունն եգիպտացւոյն վասն յոսէ-
փայ. և եղև օրհնութիւն Տ՚ն ՚ի վերայ
ամ ընչից նր՚ ՚ի տան և յանդի։ և
եթող զամ՝ որ ինչ իւր էր, ՚ի ձեռս
յոսէփայ։ *Եւ ոչ գիտէր զամ, որ 6
ինչ կայր ՚ի տան իւրում. բայց միայն
զհացն, զոր ուտէր. և էր յոսէփ ազնիւ
երեսօք. և գեղեցիկ տեսլեամբ յոյժ։
*Եւ եղև յետ բանից այսոցիկ, դարձ 7
կին տեառն իւրոյ զաչս իւր ՚ի վերայ
յոսէփայ. և ասէ ցնա՝ քունեա ընդիս։
*Եւ նա ոչ կամեցաւ։ և ասէ ցկին 8
տեառն իւրոյ. զի եթէ տէր իմ ոչ
ձանաչէ ինչ ՚ի տան իւրում վա՛ իմ։
*Եւ զամ ինչ էտ ՚ի ձեռս իմ. և չիք 9
ինչ՝ որ մեծ է քան զիս. և չիք ինչ զա-
տեալ յինէն բայ ՚ի քէն՝ զի կին նորա
ես. և զի՞արդ առնիցեմ զբանդ զայդ
զչար և զմեծ. և մեղանչիցեմ առաջի
Ե՛Ա։ *Եւ եղև իբրև խօսէր ընդ 10
յոսէփայ օրըստօրէ; և ոչ անսայր
քունել ընդ նմա. և ոչ հնազանդել լինել։
*Եղև օր ինչ այնպիսի. մտեալ յո- 11
սէփ ՚ի տունն գործել զգործ ինչ իւր.
և ոչոք էր անդ յընտանեաց անտի ՚ի
ներքս։ *Եւ նա եհար զձորձոյն նր՚, և 12
ասէ. ննջեա ընդիս. և նորա թողեալ
զձորձս իւր ՚ի ձեռս նր՚, և փախեաւ՝
եւ արտաքս։ *Եւ եղև՝ իբրև ետես, 13
եթէ եթող զձորձս իւր ՚ի ձեռս նորա,
և փախեաւ՝ եւ արտաքս։ *Կոչեաց 14
զընտանիս տանն՝ և ասէ. տեսէք. զի
էած մեզ Ծառայ Եբրայեցի, խաղ
առնել զմեզ. եմուտ առիս՝ և ասէ.
ննջեա ընդիս. և ես աղաղակեցի ՚ի
ձայն բարձր։ *Եւ իբրև լուաւ թէ 15
մեծաբարբառ աղաղակեցի. եթող
զձորձս իւր առիս, և փախեաւ՝ եւ ար-
տաքս։ *Եւ եդ զձորձն առ իւր՝ 16
մինչև

մինչև եկին տերն ՚ի տուն իւր։ և խօսե-
ցաւ ընդ նմա ըստ բանիցս այսոցիկ։
* Նէ ասէ՝ եհուտ առնս ծառայն եր- 17
բեցի՝ զոր ածեր մեզ՝ խաղ առնել
զնս։ և ասէ ցնս՝ ննջեա՛ ընդհուպ։ * Իսկ 18
իբրև լուաւ թէ բարձրացուցի զբար-
բառ իմ՝ և աղաղակեցի՝ եթող զձորձս
իւր յնս, և փախեաւ՝ եկ արտաքս։
* Նէ եղև՝ իբրև լուաւ տէրն նորա 19
զբանս հնոջն իւրոյ, զոր խօսեցաւ ընդ
նմա՝ և ասէ, թէ այսպէս արար ընդ-
դէմ ծառային քո։ բարկացաւ սրտմ-
տութեամբ։ * Նէ եհան տէրն յօսեփայ՝ 20
‖ Ասղ. ‖ Եարկ զնա ՚ի բանտ՝ ՚ի տեղին ուր
104.18. կալանաւորքն արքունի կապեալք
կային ՚ի բանտին։ * Նէ եր Տ՛ ընդ 21
յօսեփայ. և երարկ զնովաւ ողորմելի.
և եառ նմա չնորհս առաջի քանտապե-
տին։ * Նէ եհ բանտապետն զբանտն 22
՚ի ձեռս յօսեփայ. և զամ կապանաւ-
որս որք էին ՚ի բանտի անդ. և զամ
զոր ինչ գործեին անդ, նա եր, որ զոր
ծէր։ * Նէ ոչ ինչ գիտեր բանտա- 23
պետն զբանտին վասն նորա. զի ամե-
նայն ՚ի ձեռս յօսեփայ էր. քանզի Տ՛
եր ընդ նմա. և զոր ինչ գործեր նա,
Տ՛ յաջողեր ՚ի ձեռս նորա։

Գլ։ Խ։

Նէ եղև յետ բանիցս այսոցիկ յան 1
ցեաւ տակառապետ արքային
եգիպտացւոց, և մատակարար, ՚ն
նոցա արքային եգիպտացւոց։ * Նէ 2
բարկացաւ փարաւոն ՚ի վերայ երկու
ցունց նեղբենեացն իւրոց. և ՚ի վերայ
տակառապետին. և ՚ի վերայ մատակա-
րարին։ * Նէ եդ զնոսա ՚ի բանտի առ 3
դահձապետին. յայնմ բանտի՝ ՚ի տեղ
ւոջ ուր յօսեփն կայր։ * Նէ յանձն 4
արար զնոսա դահձապետն յօսեփայ։
և կայր նո՛ ՚ի սպասու. և էին աւուրս
ինչ ՚ի բանտի անդ։ * Նէ տեսին երազ 5
երկոքեան. զնեբաքանչիւր երազ ՚ի
միում գիշերի։ տեսիլ երազոյ տակա
ռապետին և մատակարարին. որք էին ար
քային եգիպտացւոց, մինչ էին ՚ի բան
տի անդ։ * Նէմուտ առ նոսա յօսեփ 6
ընդ առաւօտն. և տեսս զնոսա՝ և էին
խռովեալք։ * Նհարց զնեբքինեան 7
փարաւոնի. որք էին ընդ նմա ՚ի բան
տի անդ առ տեառն նորա և ասէ. ընդ
դէմ որոտում՛ են երեսք ձեր այսօր։
* Նէ նոքա ասեն ցնա. երազ տեսաք, 8
և ոչք է որ մեկնեսցէ զնա մեզ և ասէ
ցնոսա յօսեփ. ո՛չ սպասին ՚ի ձեռն
Ա՛՟ իցէ մեկնութիւն նոցա. պատմե-
ցէ՛ք ինձ։ * Նէ պատմեաց տակառա 9
պետն զերազ իւր յօսեփայ՝ և ասէ։

Թումեր ինձ ՚ի տեսլեան իմում, որ թ
10 մի առաջի իմ։ * Նէ յորմէն երեք ուռք
կանաչք յոյժ. և ունէր երիս ողկոյզս,
11 հասեալ ողկոյզս խաղողոյ։ * Նէ բա-
ժակն փարաւոնի ՚ի ձեռն իմում։
առնուի զնաղողն. և ճմլեի ՚ի բա-
ժակն փարաւոնի՝ և տայի զբաժակն
12 ՚ի ձեռս փարաւոնի։ * Նէ ասէ ցնա
յօսեփ. այս է մեկնութիւն նորա. երեք
13 ուռքն երեք աւուրք են։ * Ա՛յլ և
երեք աւուրք. և յիշեսցէ փարաւոն
զիշխանութիւնն քո. և անդրէն ՚ինձին
տակառապետութիւնն քում կացու-
ցէ և տայցես զբաժակն փարաւոնի ՚ի
ձեռս նորա. ըստ առաջնոյ իշխանու-
թեանն քոյ. որպէս և էիր նմա տակառա-
14 պետ։ * Ա՛յլ զնս յիշեսջիր յորժամ
բարւոք լինիցի քեզ. և արասցես լինիմ
ողորմութիւն. և յիշեսցես զնս առաջի
փարաւոնի. և հանցես զնս ՚ի բանտէ
15 սատի յայսմանէ։ * Օ՛ի գողանալով
գողացան զնս յերկրէն Եբրայեցւոց.
և սատ ոչինչ արարի. և արկին զնս
16 ՚ի տուն գերոյս այսորիկ։ * Իբրև եահս
մատակարարն թէ ուղիղ մեկնեաց
ասէ ցյօսեփ. և ես տեսանէի յերազի
թումեր լինիմ, թէ երիս խանձ նաշխոյ
17 ունէի ՚ի գլուխ իմ։ * Նէ ՚ի վերնում
խանձին յամենայնի զոր ուտէր արքայ
փարաւոն՝ գործ մատակարարաց. և
թռչունք ուտէին զնա ՚ի խանձ անտի.
18 որ եր ՚ի վէր գլխոյ իմոյ։ * Պատասխա
նի եառ յօսեփ՝ և ասէ ցնա. այս է մեկ-
նութիւն նո՛ւ. երեք խանձն, երեք աւ-
19 ուրք են։ * Յետ երից աւուրց բարձցէ
փարաւոն զգլուխ քո ՚ի քէն, և կախեա
ցէ զքեզ ՚ի փայտ. և կերիցեն թռչունք
20 երկնից զմարմինս քո ՚ի քէն։ * Նէ ե-
ղև յաւուրն երրորդի, օր ծննդոց եր
փարաւոնի. և առնէր ուրախութիւն
ամ՛ ծառայից իւրոց. և յիշեաց զիշխա
նութիւն տակառապետին. և զիշխա-
նութիւն մատակարարին ՚ի մէջ ծա-
21 ռայից իւրոց։ * Նէ կացոյց զտակա
ռապետն անդրէն յիշխանութիւն իւր-
ում. և եառ զբաժակն ՚ի ձեռն փա-
22 րաւոնի։ * Նէ զմատակարարն կախեաց
զփայտէ, որպէս և մեկնեաց յօսեփ
23 * Նէ ոչ յիշեաց տակառապետն զյո-
սեփ. այլ մոռացաւ զնա։

Գլ։ ԽԱ։

1 Նէ եղև յետ երկուց ամանց՝ եահս
փարաւոն երազ։ Թումեր թէ
2 կայցի առեզր գետոյ։ * Նէ ահա ութ
թէ ՚ի գետոյ անտի ելանէին եօթն
երինջք գեղեցիկք տեսլեամբ. և ըն-
տիրք մնրմնոջ. և արածէին ՚ի խալէ
անդ։

անդ։ *Եւ այլ ևս եօթն երինջք ելա 3
նեն յետ նոցա՝ ի գետոյ անտի. զազիրք
տեսլեամբք. և վոխրք մարմնովք՝ և
արածեին առ այլ երինջովքն առեղերք
գետոյն։ *Եւ ուտեին եօթն երինջքն 4
զազիրք տեսլեամբ և վոխրք մարմնով՝
զեօթն երինջսն զգեղեցիկս տես-
լեամբ և զընտիրս. զարթեաւ փարաւ-
օն։ *Եւ անդրէն՝ ի քուն եմուտ. և 5
եռես երազ երկրորդ։ և ահա եօթն
հասկք ելանէին՝ ի միում փնջի՝ ըն-
տիրք և գեղեցիկք։ *Եւ ահա եօթն 6
այլ հասկք ոսկինք և խորշակահարք
ելանէին յետ նոցա։ *Եւ կլանէին 7
ոսկինքն զեօթն հասկն՝ զընտիրս և
զատոքս։ զարթեաւ փարաւօն. և էր
երազ։ *Եւ եղև առաւօտ, և խռո- 8
վեցաւ անձն նորա. և առաքեաց կո-
չեաց զամենայն երազահանս եգիպ
տոսի. և զամ իմաստունս նորա։ և
պատմեաց փարաւօն զերազն իւր։ և
ոչոք էր՝ որ մեկներ զերազն փարաւօ
նի։ *Եւ խօսեցաւ տակառապետն 9
առաջի փարաւօնի՝ և ասէ. զյանցանս
իմ յիշեցուցանեմ այսօր։ *Յարկա- 10
յաւ փարաւօն ծառայից իւրոց. և եդ
զմեզ՝ ի բանտի՝ ի տան գահճապե-
տին. զիս՝ և զմխատակարարն։ *Եւ 11
տեսաք երկոքինս երազ՝ ի միում գի
շերի՝ ես և նա. իւրաքանչիւր ըստ ե-
րազոյ իւրում՝ տեսանէաք։ *Եւ էր 12
անդ ընդ մեզ պատանի մի մանուկ
եբրայեցի. ծառայ դահճապետին. և
պատմեցաք նմա։ *Եւ մեկնեաց մեզ 13
Եւ այս օրէն է խոյին՝ որ վն յան_ 1
ցանացն իցէ: զի սրբութի սրբու
թեանց է: * Ի տեղւոջ ուր սպանանի_ 2
ցեն զողջակէզսն. սպանցեն զխոյն
յանցանաց առաջի Տն: Եւ զարիւնն
հեղցէ առ յատակաւ սեղանոյն շուր_
ջանակի:* Եւ զամ զճարպ նր ածցէ, 3
և զմկանն. և զամ զճարպ թաղանթ
քաղրթին. և զամ զճարպ փորոտւոյն:
* Եւ զերիկամունսն զերկոսին. և 4
զճարպն որ 'ի վերայ նոցա առ մա_
նամբքն. և զլերդաբոյթն երիկա_
մամբքն հանդերձ կորզեսցէ: * Եւ 5
հանցէ զայն քահանայն 'ի սեղանն
պտուղ Տեառն՝ զի վասն յանցանացն է:
* Ամենայն արուք քահանայից կերի 6
ցեն զայն. 'ի սուրբ տեղւոջ կերիցեն
զայն. քանզի սրբութի սրբութեանց է:
* Որպ զվասն մեղացն, նոյնպէս և զվն 7
յանցանացն: օրէն մի և նոյն կայցէ
նց. և քահանայն՝ որ քաւիցէ նովաւ՝
նմա լիցի: * Եւ քահանայն՝ որ մա_ 8
տուցանիցէ զողջակէզս ինչ մարդոյ,
մորթ ողջակիզին՝ զոր մատուցանիցէ
նմա եղիցի: * Եւ ամ զոհ՝ որ գործի 9
ցի 'ի թոնրի: և ամ որ գործիցի 'ի
կասկարայս՝ կամ 'ի տապակի, քահա_
նային՝ որ մատուցանիցէ զայն՝ եղիցի:
* Եւ ամ զոհ զանգեալ իւղով՝ և որ 10
չիցէ զանգեալ. ամենեցուն որդւոցն
Իսրայէլի իւրաքանչիւրումեք եղիցի
հաւասարակ: * Այս օրէն է զոհիցն փր 11
կութեան՝ զոր մատուցանիցեն Տեառն:
* Իսկ թէ վասն գոհութեան մատուցա 12
նիցէ զայն: մատուսցէ վն զոհի գոհու
թեանն. պանս բաղարջս 'ի նաշհոյ զան
գեալ իւղով: և քաքարս բաղարջս
օծեալ իւղով. և նաշիհ զանգեալ իւ_
ղով. շօթիւք բաղարջ: * Հացիւ մա_ 13
տուսցէ զպատարագն իւր. 'ի վերայ
զոհին գոհութեան փրկութեան. և մատուս
ցէ մի ինչ յամ պատարագաց իւրոց
նուէր Տն: * Եւ այն՝ քահանային որ 14
հեղուցու զարիւնն փրկութեան լինիցի.
և միս զոհին գոհութեան փրկութեան՝ նո_
րին լինիցի: * Յորում աւուր պատա 15
րագիցի կերիցի. և մի թողուցուն 'ի
նմանէ յայգ: * Եւ եթէ կամաւ՝ ոք 16
ուխտս մատուցանիցէ զպատարագն
իւր. յաւուր յորում մատուցանիցէ
զզոհն՝ կերիցի. և 'ի վաղիւ անդր մնա
ցեալն ուտիցի 'ի մսոյ զոհին: * Մինչև 17
ցօրն երրորդ՝ հրով այրեսցի: * Ապա 18
թէ որ ուտելով ուտիցէ 'ի մսոյ զոհին
փրկութեան իւրոյ յաւուրն երրորդի.
մի լինիցի ընդունելի մատուցանե_
լեայն. և մի համարեսցի նմա այն.
քանզի աղտեղ և պղծութի է. և
անձն՝ որ կերիցէ 'ի նմանէ՝ մեղս առ_
19 ցէ: * Եւ միս որ մերձեսցի յամ պղ_
ծութի, մի կերիցի, այլ հրով այրես_
20 ցի. ամ սուրբ կերիցէ զմիսն: * Եւ
անձն որ կերիցէ 'ի զոհէ փրկութեան՝
որ իցէ Տն. և պղծութի նորա 'ի նմա
իցէ, կորիցէ անձն այն 'ի ժողովրդե
21 նէ իւրմէ: * Եւ անձն որ մերձեսցի
յամ իրս պղծութեան. 'ի պղծութենէ
մարդոյ. կամ յանասնոց պղծոյ. կամ
յամ գարշելիս պղծս. և կերիցէ 'ի
մսոյ զոհին փրկութեան. որ իցէ Տեառն,
կորիցէ անձն այն 'ի ժողովրդենէ իւր
22 մէ: * Խօսեցաւ Տր ընդ Մովսէսի՝ և
23 ասէ:* Խօսեաց ընդ որդիսդ Իէլի և
ասասցես: զամ զճարպ զարջառոյ և
զոչխարի և զայծեաց մի ուտիցէք:
24 * Եւ ճարպ մեռելոտւոյ և գազանա_
բեկաց՝ լինիցի յամ գործ: բայց 'ի կե_
25 րակուր մի ուտիցի: * Եւ ամենայն
որ ուտիցէ 'ի ճարպոյ անասնոց՝ զոր
մատուցանէք պտուղ Տն, կորիցէ անձն
26 այն 'ի ժողովրդենէ իւրմէ: * Զամ
արիւն մի ուտիցէք յամ բնակութիւնս
ձեր. 'ի թռչնոց և յամ անասնոց:
27 * Ամ անձն որ կերիցէ արիւն՝ կորիցէ
28 'ի ժողովրդենէ իւրմէ:* Խօսեցաւ Տր
29 ընդ Մովսէսի և ասէ: * Խօսեաց ընդ
որդիսդ Իէլի՝ և ասասցես: որ մատու
ցանիցէ զզոհ փրկութեան Տն. ածցէ
զպատարագ իւր Տն 'ի զոհէ փրկութեան
30 իւրոյ:* Ձեռք նր մատուսցեն պտուղ.
զճարպ երբծոյն՝ և զլերդաբոյթն մա
31 տուսցէ դնել առաջի Տն: * Եւ հան
ցէ զայն քահանայն 'ի սեղանն. և եղի
ցի երբուծն Ահարոնի և որդւոց նր:
32 * Եւ զերին զաջոյ տայցէք հաս քահա
33 նային 'ի զոհից փրկութեան ձերոյ: * Որ
մատուցանիցէ զարիւնն փրկութեան և
զճարպն առ 'ի յորդւոցն Ահարոնի, նր
34 լիցի երին աջոյ 'ի մասն: * Զի զեր_
բուծն վերադրայ՝ և զերի նուիրացն
առի ես յորդւոցն Իէլի 'ի զոհից փր_
կութեան ձերոյ. և ետու զայն Ահարոնի նոցա
քահանայի, և որդւոց նր. օրէն յաւի
35 տենական յորդւոցն Իսրայէլի: * Այս
օծումն է Ահարոնի և որդւոց նորա.
'ի պտղոց անուի Տն: յաւուր յորում
մատուցանէր զնոսա՝ ոճ և պատուէի_
36 րեաց Տր՝ տալ նց: * Յաւուր յորում
էօծ զնս յորդւոցն Իսրայէլի. օրէն
37 յաւիտենական յազգս նոցա: * Այս է
օրէն ողջակիզացն և զոհից. և վասն
մեղացն և վն յանցանաց. և վն կա_
38 տարմանն՝ և զոհին փրկութեան: * Որպ
պատուիրեաց Տէր Մովսէսի 'ի լերինն
Սինայ.

սինայ. յաւուր յորում պատուիրեաց
Տր որդւոցն իսրայէլի. մատուցանել
զպատարագս իւրեանց առաջի Տն.
յանապատին սինայ:

Գլ: Ը.

Խօսեցաւ Տր ընդ մովսէսի՝ եւ ասէ: 1
*Առ զահարոն եւ զորդիս նր. եւ 2
զպատմուճանս նց. զիւղն օծութե. եւ
զզուարակն զվասն մեղաց. եւ զխոյսն
զերկոսին. եւ զխանն բաղարջաց:
*Եւ զամ զժողովուրդն եկեղեցացուս 3
ցես 'ի դուռն խորանին վկայութե:
*Եւ արար մովսէս՝ որպ հրամայեաց նմա 4
Տր: եւ եկեղեցացոյց զժողովուրդն 'ի
խորանն վկայութե:*Եւ ասէ մովսէս 5
ցժողովուրդն: այս բան է՝ զոր պատ
ուիրեաց Տէր առնել: *Եւ մատոյց 6
մովսէս զահարոն եւ զորդիս նր. եւ լուաց
զնս ջրով: *Եւ զգեցոյց ահարոնի 7
զպատմուճանն. եւ էած ընդ մէջ նր
զկամարն. եւ էարկ զնովաւ զվտա_
կան. եւ եդ 'ի վերայ նորա զվակասն:
*Եւ խառնեաց 'ի նմա բստգործուա 8
ծոյ վակասին: եւ սնտեաց զնա 'ի նմա.
եւ եդ 'ի վերայ նր զտախտակն. եւ եդ 'ի
վր տախտակին զյայտնութիւն
եւ զճշմարտութի: *Եւ եդ 'ի վերայ 9
գլխոյ նր զխոյրն՝ եւ եդ 'ի վր խոյրին
յերեսաց կողմանէ զթիթեղն ոսկի
զնուիրեալն եւ զսուրբ. որպ պատուի_
րեաց Տր մովսէսի:*Եւ առեալ մովսէսի 10
յիւղոյ օծութեն. եւ ցանեաց 'ի վերայ
սեղանոյն եօթն անգամ: *Եւ էօծ 11
զսեղանն. եւ սրբեաց զնա եւ զամ սպաս
նր: եւ զաւազանն եւ զխարիսխն նորա.
եւ սրբեաց զնս. եւ էօծ զխորանն եւ զամ
ինչ որ 'ի նմա՝ եւ սրբեաց զնա: *Եւ 12
էարկ մովսէս յիւղոյ օծութեն 'ի գլուխն
ահարոնի. եւ էօծ զնա եւ սրբեաց զնա:
*Եւ մատոյց մովսէս զորդիսն ահարո_ 13
նի: եւ զգեցոյց նց զպատմուճանսն. եւ
էած ընդ մէջ նց զկամարսն՝ եւ եդ նց
զխոյրսն. որպ եւ հրամայեաց Տր մովսէսի:
*Եւ մատոյց մովսէս զզուարակն զվն 14
մեղացն. եւ եդին ահարոն եւ որդիք նր
զձեռս իւրեանց 'ի վերայ գլխոյ զուա_
րակին մեղաց:*Եւ էառ մովսէս յարե 15
նէ անտի՝ եւ եդ 'ի վերայ եղջերաց սե
ղանոյն շուրջանակի մատամբ իւրով.
եւ սրբեաց զսեղանն: եւ զարիւնն եհեղ
առ յատակաւ սեղանոյն: *Եւ սրբեաց 16
զնա առնել քաւութի 'ի վերայ նր: եւ
էառ զամ ճարպ փորոտւոյն. եւ զլեր_
դաբոյթն եւ զերկոսին զերիկամունսն.
եւ զամ ճարպն որ 'ի վերայ նց. եւ եհան
մովսէս 'ի սեղանն: *Եւ զզուարակն 17
եւ զկաշի նորա. եւ զմիսն՝ եւ զապաճառն
ծը

այրեաց հրով արտաքոյ բանակին. որպ
18 հրամայեաց Տր մովսէսի:*Եւ մատոյց
մովսէս զխոյն որ յողջակէզ. եւ եդին ա_
հարոն եւ որդիք նր զձեռս իւրեանց 'ի
19 վերայ գլխոյ խոյին: *Եւ սպան մո_
վսէս զխոյն. եւ եհեղ զարիւնն շուրջ
20 զսեղանովն: *Եւ զխոյն յօշեաց ան_
դամ անդամ: եւ էառ մովսէս զգլուխն
եւ զանդամաթիւսն եւ զճարպն եւ զքա_
21 ղիրթն եւ զոտսն: *Եւ լուաց ջրով. եւ
եհան մովսէս զխոյն զողջոյն 'ի սեղանն
յողջակէզ. որ 'ի հոտ անուշից. քանզի
պտուղ Տն է՝ որպ հրամայեաց Տր մովսէ
22 սի: *Եւ մատոյց մովսէս զխոյն երկ_
րորդ՝ զխոյն կատարմանն. եւ եդին ահա
րոն եւ որդիք նորա զձեռս իւրեանց 'ի
23 վր գլխոյ խոյին: *Եւ սպանին զնա:
եւ էառ մովսէս յարենէ նր. եւ եդ 'ի վր
բլթակի աջոյ ունկանն ահարոնի՝ եւ
'ի վերայ ծայրի աջոյ ձեռին նր. եւ 'ի
24 վր ծայրի աջոյ ոտին նր: *Եւ մատոյց
մովսէս զորդիսն ահարոնի. եւ եդ մովսէս
յարենէ անտի 'ի վր բլթակաց աջուց
ականջաց նց. եւ 'ի վերայ ծայրից աջուց
ձեռաց նց. եւ 'ի վերայ ծայրից աջուց
ոտից նոցա: եւ եհեղ մովսէս զարիւնն
25 շուրջ զսեղանովն: *Եւ էառ զճարպն
եւ զմկանն. եւ զճարպն որ 'ի վերայ քաղր
թին եւ զլերդաբոյթն. եւ զերիկա_
մունսն զերկոսին. եւ զճարպն որ 'ի վր
26 նոցա. եւ զերին զաջոյ: *Եւ 'ի խանէն
կատարմանն որ կայր առաջի Տն, էառ
նկան մի բաղարջ՝ եւ նկան մի յիւղոյ ան
տի. եւ եդ 'ի վերայ ճարպոյն. եւ 'ի վերայ
27 երւոյն աջոյ: *Եւ եդ զամ 'ի վր ձե_
ռացն ահարոնի. եւ 'ի վերայ ձեռաց
որդւոց նր. եւ մատոյց զայն նուէր ա_
28 ռաջի Տն: *Եւ էառ զայն մովսէս 'ի
ձեռաց նց. եւ եհան 'ի սեղանն յողջա_
կէզ կատարման. որ է 'ի հոտ անուշից
պտուղ Տն՝ որպ պատուիրեաց Տէր:
29 *Եւ առեալ մովսէսի զերբուծն եւ ե_
հան նուէր առաջի Տն 'ի խոյէ անտի
կատարմանն. եւ եղեւ մովսէսի 'ի մասն, որպ
30 պատուիրեաց Տր մովսէսի: *Եւ առ
մովսէս յիւղոյ օծութեն. եւ յարենէն որ
'ի վերայ սեղանոյն. եւ ցանեաց զահա_
րոնիւ եւ զպատմուճանօք նր: եւ զորդ_
ւովք նորա եւ զպատմուճանօք նոցա:
31 *Եւ սրբեաց զահարոն եւ զպատմու_
ճանս նր. եւ զորդիս նորա եւ զպատմու.
ճանս որդւոց նր ը նմա: եւ ասէ մովսէս
ցահարոն եւ ցորդիս նր. եփեցէք զմիս
'ի սրահի խորանին վկայութե 'ի սբ տե
ղւոջ. եւ անդ ուտիցէք զայն. եւ զհացն ‖ Ելից. 29.32.
որք 'ի խանի կատարմանն իցեն. զոր
օրինակ հրամայեաց ինձ Տէր՝ եւ ասէ. ‖ Ղեւտ. 24.9.
‖ ահարոն եւ որդիք նր կերիցեն զայն:

N *Եւ

*Եւ զնշխարս հացի եւ մսոյ հրով այրես 32
ջիք : * Եւ 'ի դրանէ խորանին վկայ_ 33
ութեան մի ելանիցէք զեօթն օր . մինչեւ
յօր լրման աւուրց կատարմանն ձերոյ.
զի զեօթն օր լցցէ զձեռս ձեր : * Որ՟պ 34
եւ արարն յաւուր յայնմիկ . որ՟պ պատուէ
րեաց Տէր առնել առ 'ի քաւելոյ վ՟ն
ձեր : * Եւ առ դրան խորանին վկայ 35
ութեան նստիջիք զեօթն օր . զցայգ եւ
զցերեկ . եւ պահեսջի՛ք զպահպանութիս
Տ՟ն . զի մի մեռանիջիք . զի այնպէս
պատուէրեաց ինձ Տէր : * Եւ արար 36
ահարոն եւ որդիք նորա զա՟մ զբանս
զոր պատուէրեաց Տէր մովսէսի :

ԳԼ : Թ .

Եւ եղեւ յաւուրն եօթներորդի . 1
կոչեաց մովսէս զահարոն եւ զոր_
դիս նո՟ր եւ զծերակոյտն ի՟լի . եւ ասէ մո
‖Ելից. վսէս ցահարոն * ‖Առ դու քեզ զուա_ 2
29.1. րակ մի յանդոյ վ՟ն մեղաց . եւ խոյ յող
ջակէզ անարատս . եւ մատո՛ զն՟ս առա
ջի Տ՟ն : * Եւ ընդ ծերակոյտն իսրայէ 3
լի խօսեսցիս՝ եւ ասասցես . առէք դուք
ձեզ զնոխազ մի յայծեաց վ՟ն մեղաց .
եւ զուարակ՝ եւ գառն տարեւոր յող
ջակէզ անարատս : * Եւ զուարակ եւ 4
խոյ յողջակէզ փրկութեան առաջի Տ՟ն .
եւ զոհ նաշիհ զանգեալ իւղով . զի այ_
սօր երեւեսցի Տէր 'ի միջի ձերում :
* Եւ առին՝ որ՟պ եւ հրամայեաց մովսէս 5
առաջի խորանին վկայութեան . եւ մա_
տեան ա՟մ ժողովուրդն . եւ կացին ա_
ռաջի Տ՟ն : * Եւ ասէ մովսէս . այս բան 6
է՝ զոր ասաց Տ՟ր առնել . եւ երեւեսցին
'ի ձեզ փառք Տ՟ն : * Եւ ասէ մովսէս ցա 7
հարոն . մատի՛ր առ սեղանն . եւ արա՛
զվասն մեղացն քո . եւ զողջակէզն քո .
քաւեա՛ վ՟ն քո եւ տան քոյ՝ եւ արա՛ զպա
տարագս ժողովրդեան քոյ . եւ քաւեա՛
վասն նոցա՝ որ՟պ պատուէրեաց Տէր :
* Եւ մատեաւ ահարոն առ սեղանն . 8
եւ սպան զզուարակն զվ՟ն մեղացն իւր
ոյ : * Եւ մատուցին որդիքն ահարո_ 9
նի զարիւնն առ նա : եւ եթաց զմատն
յարեանն . եւ եդ 'ի վերայ եղջերաց սե
ղանոյն . եւ զարիւնն եհեղ առ յատա_
կաւ սեղանոյն : * Եւ զճարպն եւ զե_ 10
րիկամունսն եւ զլերդաբոյթն զվասն
մեղաց եհան 'ի սեղանն . որպէս պատ_
ուէրեաց Տէր մովսէսի : * Եւ զմիսն 11
եւ զկաշին այրեցին հրով արտաքոյ բա
նակին : * Եւ սպան զողջակէզն . եւ մա 12
տուցին որդիքն ահարոնի զարիւնն
առ նա . եւ եհեղ շուրջ զսեղանովն :
* Եւ զողջակէզն մատուցին առ նա 13
անդամ անդամ եւ զգլուխն՝ եդ 'ի վ՟ր
սեղանոյն : * Եւ լուաց զքաղիրթն եւ 14
զոտս ջրով . եւ եդ 'ի վերայ ողջակիզին
15 'ի սեղանն : * Եւ մատուցին զպատա_
րագ ժողովրդեանն . եւ էառ զնոխազն
զվասն մեղաց ժողովրդեանն . եւ սպան
16 զնա իբրեւ զառաջինն : * Եւ մատոյց
17 զողջակէզն : * Եւ արար զնա՝ որպէս
եւ օրէն էր . եւ մատոյց զզոհն , եւ ելից
զձեռս 'ի նմանէ . եւ եդ 'ի վերայ սեղա
նոյն՝ ուրոյն յառաւօտուն յողջակիզէ :
18 * Եւ սպան զզուարակն եւ զխոյն զոհ
փրկութեան ժողովրդեանն . եւ մատու_
ցին որդիքն ահարոնի զարիւնն առ նա .
19 եւ եհեղ զայն շուրջ զսեղանովն : * Եւ
զճարպն որ 'ի զուարակէն . եւ 'ի խոյէն
զմկանն . եւ զճարպ թաղանթ քաղր_
թին . եւ զերկոսին երիկամունսն ճար
20 պովին . եւ զլերդաբոյթն : * Եւ եդին
զճարպն 'ի վերայ երբծոցն . եւ հանին
զճարպն հանդերձ երբծօքն . եւ եդին
21 զճարպն 'ի վերայ սեղանոյն : * Եւ զեր
բուծսն եւ զերին զաջու , նուիրեաց
նուէր առաջի Տ՟ն որ՟պ պատուէրեաց
22 Տէր մովսէսի : * Եւ ամբարձեալ ահա
րոնի ձեռս իւր 'ի վ՟ր ժողովրդեանն՝
օրհնեաց զն՟ս . եւ էջ՝ արար զվասն մե_
ղացն . եւ զողջակէզսն եւ զփրկութեանն
23 * Եւ մտին մովսէս եւ ահարոն 'ի խո_
րանն վկայութեան՝ եւ ելեալ անտի օրհ
նեցին զա՟մ ժողովուրդն : ‖ Եւ երեւեցաւ ‖2.Մակ.
փառք Տ՟ն ամենայն ժողովրդեանն : 2.10.
24 * Եւ ել հուր 'ի Տ՟է եւ եկեր որինչ
կայր 'ի վերայ սեղանոյն . զողջակէզսն .
եւ զճարպսն . եւ ետես ամենայն ժողո_
վուրդն՝ եւ զարհուրեցաւ . եւ անկան
'ի վերայ երեսաց իւրեանց :

ԳԼ : Ժ .

1 Եւ առեալ երկուց որդւոցն ահա
րոնի . նադաբայ եւ աբիուդայ
զիւրաքանչիւր բուրվառ ‖ եդին 'ի ն՟ս ‖Թւոց
հուր՝ եւ արկին խունկս . եւ մատուցին 3. 4. եւ
առաջի Տ՟ն հուր օտար . զոր ոչ հրա_ 26.61.
2 մայեաց նոցա Տ՟ր : * Եւ ել հուր 'ի Տ՟է 1.Մնաց
եւ եկեր զնոսա . եւ մեռան առաջի Տ՟ն : 24.2.
3 * Եւ ասէ մովսէս ցահարոն . այս է՝ զոր
ասաց Տ՟ր . ասէ՝ 'ի մերձաւորս իմ սրբե
ցայց . եւ առաջի ա՟մ ժողովրդեանն
փառաւորեցայց . սորջացաւ ահարոն :
4 * Եւ կոչեաց մովսէս զմիսադայի եւ զե
ղիսափան որդիս ոզիելի՝ զորդիս հօր_
եղբօր ահարոնի . եւ ասէ ցնոսա . մա_
տի՛ք , եւ բարձէք զեղբարս ձեր հան_
դերձ պատմուճանօքն իւրեանց , յերե
սաց սրբութեանցդ արտաքոյ քան զբա_
5 նակն : * Մատեան եւ բարձին զնոսա
հանդերձ պատմուճանօքն իւրեանց
արտաքոյ բանակին . զորօրինակ ասաց
6 մովսէս : * Եւ ասէ մովսէս ցահարոն , եւ
ցեղիա_

ցեղիազար, և ցիթամար, ցորդիսն նր
մնացեալս. զգլուխս ձեր մի ապախու_
րէք. և զհանդերձս ձեր մի պատառէք.
զի մի մեռանիցիք՝ և ՚ի վերայ ժողո_
վրդեանն լինիցի բարկութիւն. բայց
եղբարք ձեր և ամ տունն իսրայէլի
լայցեն զհրայրեացսն՝ որք այրեցան ՚ի
Տէ: *Եւ ՚ի դրանէ խորանին վկայ_ 7
ութեան մի ելանիցէք՝ զի մի մեռանի_
ցիք. զի իւղն օծութեան որ ՚ի Տէ է՝ ՚ի
վերայ ձեր է. և արարին ըստ բանին
մովսէսի: *Խօսեցաւ Տէր ընդ ահարո 8
նի՝ և ասէ: *Գինի և ցքի մի ըմպի_ 9
ջէք դու և որդիք քո ընդ քեզ՝ յորժամ
մտանիցէք ՚ի խորանն վկայութեան.
կամ յորժամ մերձենայցէք ՚ի սեղանն.
զի մի մեռանիցիք. օրէն յաւիտենա
կան յազգս ձեր: *Զատանել ՚ի մէջ 10
սրբոց և պղծոց. և ՚ի մէջ պարկեշտից
և անպարկեշտաց: *Եւ իմացուցա_ 11
նել իսրայէլի զամ զօրէնս՝ զորս խօ_
սեցաւ Տր ընդ նոսա ՚ի ձեռն մովսէսի:
*Եւ ասէ մովսէս ցահարոն՝ և ցեղիա 12
զար՝ և ցիթամար՝ ցորդիսն նր ցմնա_
ցեալս. առէք զզոհն մնացեալ ՚ի պտղոց
անտի Տն. և կերիջք բաղարջ առաջի
սեղանոյն. զի սրբութիւն սրբութեանց է:
*Եւ կերիջիք զայն ՚ի սուրբ տեղւոջ. 13
զի օրէն քեզ լինիցի այն. և օրէն որդ_
ւոց քոց ՚ի պտղոց անտի. զի որպէս
հրամայեալ է ինձ Տն: *Զերբուծ 14
նուիրին, և զերի հասին կերիջիք ՚ի
սբ տեղւոջ դու և որդիք քո, և տուն
քո ընդ քեզ. զի օրէն քեզ է այն. և
օրէն որդւոց քոց տուաւ ՚ի զոհից փր_
կութեանց որդւոցն իսրայէլի: *Զերին 15
հասի. և զերբուծն նուիրի ՚ի վերայ
ընծայիցն ճարպոց մատուցեն, նուի_
րել նուիրել առաջի Տն, և եղիցի
քեզ՝ և որդւոց քոց. և դստերաց քոց
ընդ քեզ՝ օրէն յաւիտենական՝ զոր_
օրինակ հրամայեաց Տէր մովսէսի:
‖2.Մակ. 2.11. *‖Եւ զնոխազն զվն մեղացն խնդրե 16
լով խնդրեաց մովսէս. և այն էր այրե
ցեալ. և բարկացաւ մովսէս եղիազա
րու և իթամարայ, որդւոցն ահարոնի
մնացելոց: *Եւ ասէ՝ ընդէ՞ր ոչ կե_ 17
րայք զվն մեղացն ՚ի սուրբ տեղւոջն.
զի սրբութիւն սրբութեանց է՝ և զայն ե_
տու ձեզ ուտել՝ զի բառնայցէք զմեղս
ժողովրդեանն. և առնիցէք զքաւու_
թիւ վասն նց առաջի Տն: *Քանզի 18
ոչ եմուտ յարենէ նորա ՚ի սրբութիւն
յանդիման երեսացն ՚ի ներքս. արդ
կերիջիք զնա ՚ի սբ տեղւոջ՝ զորօրինակ
հրամայեցաւ ինձ: *Խօսեցաւ ահա_ 19
րոն ընդ մովսէսի՝ և ասէ. զի եթէ այս_
օր մատուցին զվասն մեղացն իւրեանց.

և զողջակէզս իւրեանց առաջի Տն՝ և
այսպիսի անցք անցին ընդ իս՝ ուտի_
ցեմ այսօր զվասն մեղացն, դուցէ
20 չլինիցի հաճոյ առաջի Տն: *Եւ լուաւ
մովսէս՝ և հաճոյ թուեցաւ նմա:

Գլ: ԺԱ:

1 Խօսեցաւ Տր ընդ մովսէսի՝ և ընդ
2 ահարոնի՝ և ասէ: *Խօսեցարուք
ը որդւոց իսրայէլի՝ և ասացէք. ‖այս ‖2.Օրէ.
անասունք են՝ զորս ուտիցէք՝ յամ 14.3.
անասնոց որք են ՚ի վերայ երկրի:
3 * Զամ անասուն թաթահերձ և
կճղակաւոր. որոյ յերկուս բաժանեալ
իցեն թաթքն՝ և որոճիցէ (յանասնոց
4 զայն) կերիջիք: *Բայց յայնցանէ մի
ուտիցէք՝ որք որոճիցեն և կճղակա_
հերձք ոչ իցեն: ուղտ, զի որոճայ՝ և
կճղակն ոչ բաժանի. պիղծ իցէ նա
5 ձեզ: *Եւ նապաստակ, զի որոճայ՝ և
թաթն ոչ բաժանի՝ պիղծ իցէ նա
6 ձեզ: *Եւ ճագար, զի որոճայ՝ և
թաթն ոչ բաժանի՝ պիղծ իցէ նա ձեզ:
7 *‖Եւ խոզ՝ զի թաթահերձ է՝ և ‖2.Մակ.
կճղակս ունի՝ և որոճայ ոչ, պիղծ իցէ 6.18.
8 նա ձեզ: *՚Ի մսոյ նց մի ուտիցէք. և
՚ի դէշ նոցա մի մերձենայցէք՝ քանզի
9 պիղծ իցէ ձեզ այն: *Եւ այս է՝ զոր
ուտիցէք՝ յամէ որք ՚ի ջուրս իցեն՝ ա_
մենայնի որոյ իցեն թեւք և թեփ ՚ի
ջուրս և ՚ի ծովս և ՚ի վտակս՝ զայնս
10 ուտիցէք: *Եւ ամի որոյ ոչ իցեն թեւք
և թեփ ՚ի ջուրս և ՚ի ծովս և ՚ի վտակս՝
մի ուտիցէք. յամէ զոր ջուրքն բղխի_
ցեն, և յամէ շնչոյ կենդանւոյ՝ որ ՚ի
ջուրս. քանզի պիղծ է այն՝ պիղծ լի_
11 նիցի ձեզ: *՚Ի մսոց նոցա մի ուտիցէք.
12 և ՚ի մեռելոյ նց գարշիջիք: *Զի ամի
որոյ ոչ իցեն թեւք և թեփ որ ՚ի ջուրս
13 իցեն՝ պիղծ իցէ ձեզ այն: *Եւ այսք
իցեն ՚ի թռչնոց՝ յորոց գարշիջիք՝ և
ոչ ուտիցին՝ այլ պիղծ իցէ ձեզ. ար_
14 ծուի, պասկուճ. և գետարծուի: *Եւ
անգղ. և ցին. և որինչ նման իցէ նոցա:
15 *Եւ ագռաւ՝ և որինչ նման իցէ նմա:
16 *Եւ ջայլամն՝ և բու. և որոր. և որինչ
17 նման իցէ նոցա: *Եւ բազէ. և որինչ
նման իցէ նմա. և հաւապատիր. և հողա
18 մաղ: *Եւ քաջահաւ. և սոխակ. և
19 հաւալուսն. և կարապ: *Եւ արա_
գիլ. և քարարդ. և որինչ նման իցէ նց.
20 և յոպոպ. և չղջիկ: *Եւ ամ զեռուն
թռչնոց՝ որ գնայցէ ՚ի չորս՝ պիղծ ե_
21 ղիցի ձեզ: *Բայց զայն ուտիցէք ՚ի
զեռնոց թռչնոց, որք գնայցեն ՚ի չորս.
որոց իցեն կարթք ՚ի վերայ քան զոտս.
22 ոստոստել նոքօք յերկրէ: *Եւ այս իցէ
զոր ուտիցէք ՚ի նոցանէ. զջորեակն.

և որ ինչ նմանն է նմա. և զխարագուլն
և որ ինչ նմանն է նմա. և զմարախն և
որ ինչ նմանն է նմա. (և զօձամարտն և
որ ինչ նման իցէ նմա։) *Եւ ամե- 23
նայն զեռնոյ, թռչնոյ, որոյ իցեն չորք
ոտք՝ պիղծ իցէ ձեզ։ մի՛ նոքօք պղծի
ջիք։ *Ամենայն որ մերձենայցէ ՚ի մե- 24
ռեալ նց՝ պիղծ լիցի մինչև ցերեկոյ։
*Եւ ամ որ բառնայցէ զմեռեալ նո 25
ցա՝ լուասցէ զձորձս իւր՝ և պիղծ լիցի
մինչև ցերեկոյ։ *Յամենայն անասնոց 26
որ կճղակաճեղք իցէ, և որոճ իցէ ոչ՝
պիղծ լիցի ձեզ այն ամենայն. որ մեր-
ձեսցի ՚ի մեռեալ նց՝ պիղծ լիցի մինչև
ցերեկոյ։ *Եւ ամենայն որ գնայցէ 27
՚ի ձեռս իւր. յամենայն գազանաց որ
գնայցէ ՚ի չորս, պիղծ լիցի ձեզ այն.
ամ որ մերձեսցի ՚ի մեռեալ նոցա՝
պիղծ լիցի մինչև ցերեկոյ։ *Եւ որ 28
բառնայցէ ՚ի մեռելոյ նոցա՝ լուասցէ
զձորձս իւր. և պիղծ լիցի մինչև ցե-
րեկոյ՝ զի ամենայն պիղծ իցէ ձեզ։
*Եւ այս իցէ ձեզ պիղծ յամ սողնոց՝ 29
որք սողիցին ՚ի վերայ երկրի. աքիս և
մուկն. և տխտեռն՝ յաստին։ *Եւ մկնա 30
քիս՝ և գետնառիւծ. և կոլառխայ. և
մողէս. և խլուրդ։ *Այն ամ պիղծ 31
իցէ ձեզ, յամ սողնոց որք սողիցին ՚ի
վերայ երկրի. ամ որ մերձեսցի ՚ի մե-
ռեալ նց՝ պիղծ լիցի մինչև ցերեկոյ։
*Եւ յամի յորոյ վերայ անկանիցի ՚ի 32
մեռելոյ նոցա՝ պիղծ լիցի՝ յամենայն
փայտեղէն անօթոյ, կամ ՚ի հանդեր-
ձոյ՝ կամ ՚ի մաշկէ՝ կամ ՚ի քրձէ, ամ
անօթ յորում գործ ինչ գործիցի ՚ի
նմա ՚ի ջուր թացցի՝ և պիղծ լիցի մին
չև ցերեկոյ. և ապա սուրբ լինիցի։
*Եւ ամ անօթ խեցեղէն յոր անկա- 33
նիցի ինչ ՚ի նոցանէ. և որ ինչ ՚ի ներքսն
կայցէ, պիղծ լիցի. և զայն բեկանիցէք։
*Եւ ամենայն կերակուր որ ուտիցի՝ 34
և անկանիցի ՚ի վերայ նր ՚ի ջրոյ ան-
տի՝ պիղծ լիցի. և ամենայն ըմպելի
որ ըմպիցի յամ ամանի՝ պիղծ լիցի։
*Եւ յամ յոր ինչ անկանիցի ՚ի մեռե 35
լոյ նոցա՝ պիղծ լիցի. և թոնիրք՝ և
կասկարայք քակեսցին. քանզի պղղ-
ծեալք են. և պիղծք իցեն ձեզ։ *Բայց 36
յաղբերաց ջրոց. և ՚ի ջրհորոց. և ՚ի
ջրակուտաց. որք սուրբք լինիցին ձեզ.
և ամ որ մերձենայցէ ՚ի պղծութիւ
նչոյ մեռելոյ նց, պիղծ լիցի։ *Իսկ 37
եթէ անկանիցի ինչ ՚ի մեռելոյ նոցա
՚ի վերայ ամենայն սերման սերմանե-
լոյ՝ որ սերմանիցի. սուրբ լիցի։
*Ապա թէ հեղանիցի ջուր ՚ի վերայ 38
ամ սերման. և անկանիցի ինչ անդր
՚ի մեռելոյ նոցա, անսուրբ լիցի ձեզ։

39 *Եւ եթէ մեռանիցի ինչ յանասնոց
որ ձեր ուտելի է, որ մերձենայցէ ՚ի
մեռեալ նոցա՝ պիղծ լիցի մինչև ցե-
40 րեկոյ։ *Եւ որ ուտիցէ ՚ի նմանէ՝ և
որ բառնայցէ ՚ի մեռելոյ նց՝ լուասցէ
զձորձս իւր. և պղծեալ լիցի մինչև
41 ցերեկոյ։ *Եւ ամ սողուն որ սողի ՚ի
վերայ երկրի՝ պիղծ լիցի ձեզ. և մի՛
կերիցի ամ՝ որ սողի ՚ի վերայ որո-
42 վայնի իւրոյ։ *Եւ ամ որ գնայցէ
՚ի չորս մինչև ցամենայն բազմոտանիս
յամ զեռնոց՝ որք զեռայցեն ՚ի վերայ
երկրի, մի՛ ուտիցէք. զի պիղծ է այն
43 ձեզ։ *Եւ մի՛ գարշեցուցանիցէք զան
ձինս ձեր ամ սողնօք, որք սողիցին ՚ի
վերայ երկրի. և մի՛ պղծիցիք նոքօք.
44 և մի՛ լինիցիք անսուրբք նոքօք։ *Զի
եմ Տր Ա.Ծ ձեր. և սրբեսջիք՝ ‖ և սուրբք ‖1.Պետ.
լինիջիք. զի սուրբ եմ ես Տր Ա.Ծ ձեր՝ 1.16.
և մի՛ պղծիցէք զանձինս ձեր ամ զեռ-
նօք՝ որք շարժիցին ՚ի վերայ երկրի։
45 *Զի ես եմ Տր Ա.Ծ, որ հանի զձեզ
յերկրէն Եգիպտացւոց լինել ձեր ԱԾ՝
և եղիջիք սուրբք՝ զի ես սբ եմ։
46 *Այս օրէն լինիցի վասն անասնոց և
ամ շնչոյ՝ որ շրջիցի ՚ի ջուրս. և ամ
շնչոյ՝ որ շրջիցի ՚ի վերայ երկրի։
47 *Որոշել ՚ի մէջ սրբոյն և ՚ի մէջ անսր
բոց. խելամուտ առնել զորդիսդ Իղի.
՚ի մէջ ուտելեացն կենդանածնաց.
և ՚ի մէջ չուտելեաց անասնոց։

ԳԼ. ԺԲ.

1 Խօսեցաւ Տր ընդ Մովսէսի՝ և ասէ.
2 *Խօսեա՛ց ընդ որդիսն Իսրայէ-
լի՝ և ասասցես ցնոսա ‖ կին որ եթէ ‖Ղուկ.
սերմն առցէ և ծնանիցի արու. պիղծ 2.22.
լիցի զեօթն օր, ըստ աւուրս զատանե
3 լոյ դաշտանին իւրոյ պիղծ լիցի։* ‖Եւ ‖Յովհ.
յաւուրն ութերորդի թլփատեսցէ 7.22.
4 զմարմին անթլփատութեան նր։ *Եւ Ղուկ.
զերեսուն և զերիս աւուրս նստցի ՚ի 2.21.
վր սրբոյ արեան իւրոյ. յամ ինչ սբ
նա մի՛ մերձենայցէ. և ՚ի սրբութիւնն
մի՛ մտցէ՝ մինչև լցցին աւուրք սրբու
5 թեան նորա։ *Ապա թէ էգ ծնանիցի՝
պիղծ լիցի զեօթն օր ըստ դաշտանին.
զվաթսուն և զվեց օր նստցի ՚ի սուրբ
6 արեանն իւրում։ *Եւ յորժամ լնա-
նիցին աւուրք սրբութեան նորա ՚ի վր
ուստերն՝ կամ ՚ի դստեր, ածցէ զգառն
տարևոր յողջակէզ. և զձագ աղաւ-
նոյ կամ տատրակի վասն մեղացն ՚ի
դուռն խորանին վկայութեան առ քա-
7 հանայն։ *Եւ մատուսցէ առաջի Տն.
և քաւեսցէ վն նորա քահանայն. և սր
բեսցէ զնա յաղբերէ արեան նր. այս
օրէն իցէ այնորիկ՝ որ ծնանիցի զարու
կամ

կամ էգ ։ * Ապա թէ ոչ գտանիցէ 8
ձեռն նր բաւական լինել գառամբ ․
Եբ․ առցէ երկուս տատրակս կամ երկուս
5․ 7․ ձագս աղաւնեաց ․ զմին յողջակէզ ․ եւ
11․ զմիւսն վասն մեղաց ․ քաւեսցէ վասն
Ղուկ․ նորա քահանայն , եւ սրբեսցի ։
2․ 24․

ԳԼ․ ԺԳ․

Խօսեցաւ Տր ընդ Մովսէսի եւ ընդ 1
Ահարոնի ․ եւ ասէ ։ * Մարդոյ 2
ուրուք եթէ լինիցի 'ի մորթ մարմնոյ
իւրոյ նշան սպւոյ ․ կամ պալար՝ կամ
պաղպաջ՝ եւ լինի 'ի մորթ մարմնոյ նր
արած բորոտութե ․ եկեսցէ առ Ահա
րոն քահանայ ․ կամ առ միոջ որդւոց նր
քահանայից ։ * Եւ տեսցէ քահանայն 3
զարածն 'ի մորթ մարմնոյ նորա ․ եւ
կամ թէ մազ արածին 'ի սպիտակ
դարձեալ իցէ ․ եւ տեսիլ արածին գնա
տագոյն իցէ քան զմորթ մարմնոյն ․
արած բորոտութե է ․ եւ տեսցէ քա_
հանայն՝ եւ պղծեսցէ զնա ։ * Ապա 4
թէ պաղպաջն սպիտակ իցէ 'ի մորթ
մարմնոյ նորա ․ եւ գնատագոյն չիցէ տե
սիլն նորա քան զմորթն, եւ մազն սպի
տակ չիցէ դարձեալ, եւ ինքն շլագոյն
իցէ , զատուսցէ քահանայն զարածն
զեօթն օր ։ * Եւ տեսցէ քահանայն 5
յաւուրն եօթներորդի , եթէ կայցէ
նոյնպէս արածն առաջի նր ․ եւ չիցէ
փոխեալ արածն 'ի մորթն՝ զատուսցէ
զնա քահանայն այլեւս աւուրս եօթն
* Եւ տեսցէ քահանայն յաւուրն եօթն 6
երորդի միւսանգամ ․ եւ ահա շլագոյն
իցէ արածն՝ եւ յայլագոյն չիցէ փոխեալ
'ի մորթն , սրբեսցէ զնա քահանայն ․
զի նշան ինչ է այն ․ եւ լուացեալ զձորձս
իւր եղիցի սուրբ ։ * Ապա թէ շրջելով 7
շրջիցի նշանն 'ի մորթն , յետ տեսանե
լոյ զնա քահանային՝ եւ սրբելոյ ․ եւ երեւ
եսցի միւսանգամ քահանայից ․ եւ տես
ցէ քահանայն եւ ահա այլագունեալ
իցէ նշանն 'ի մորթն ։ * Պղծեսցէ զնա 8
քահանայն՝ զի բորոտութի է ։ * Եւ 9
արած բորոտութե եթէ լինիցի մար
դոյ՝ եկեսցէ առ Ահարոն քահանայ ։
* Եւ տեսցէ քահանայն ․ եւ ահա պա_ 10
լար սպիտակ իցէ 'ի մորթն ․ մազ նր
'ի սպիտակ դարձեալ իցէ ․ եւ յառողջ
է կենդանի մարմնոյ 'ի պալար ։ * Բո_ 11
րոտութի հնացեալ է 'ի մորթ մարմնոյ
նր ․ պղծեսցէ զնա քահանայն ․ եւ զա_
տուսցէ զնա՝ զի պիղծ է ։ * Ապա թէ 12
սփռելով սփռեսցի բորոտութին ընդ
մորթն ․ եւ ծածկեսցէ բորոտութին
զամենայն մորթ խրանացն , 'ի գլխոյ
մինչեւ ցոտս ըստ ամենայն տեսոյ քա_
հանային ։ * Եւ տեսանիցէ քահանայն՝ 13
եւ ահա ծածկեաց բորոտութին զամ
մորթ մարմնոյն , սրբեսցէ քահանայն
զարածն ․ քանզի ամենայն 'ի սպիտակ
14 դարձաւ , սուրբ է ։ * Եւ յորում աւուր ե_
րեւեսցի 'ի նմա մարմին կենդանի ,
15 պղծեսցի ։ * Եւ տեսցէ քահանայն
զմարմինն կենդանի ․ եւ պղծեսցէ զողջ
մարմինն ․ եւ պիղծ լիցի՝ քանզի բորո_
16 տութի է ։ * Ապա թէ անդրէն հաս
տատեսցի մարմինն ողջ, եւ դարձցի 'ի
17 սպիտակ ։ * Եկեսցէ առ քահանայն ․
եւ տեսանիցէ զնա քահանայն ․ եւ ահա
դարձեալ իցէ արածն նորա 'ի սպի_
տակ , սրբեսցէ քահանայն զարածն՝
18 քանզի սուրբ է ։ * Եւ մարդոյ եթէ լի_
նիցի 'ի մորթ նորա կեղ՝ եւ ողջասցի ։
19 * Եւ եղիցի 'ի տեղի կեղոյն սպիտակ
փայլուն լնացեալ կամ կարմրացեալ ․
20 եւ երեւեսցի քահանայից ։ * Եւ տեսա
նիցէ քահանայն ․ եւ ահա տեսիլն խո_
րագոյն քան զմարմինն իցէ, եւ մազն 'ի
սպիտակ դարձեալ իցէ , պղծեսցէ
զնա քահանայն՝ զի բորոտութի է ընդ
21 կեղոյն բորբոքեալ ։ * Իսկ եթէ տե_
սանիցէ քահանայն՝ եւ չիցէ 'ի նմա մազ
սպիտակ ․ եւ ոչ խորագոյն իցէ քան
զմարմինն՝ եւ ինքն շլագոյն իցէ , զա_
տուսցէ զնա քահանայն զեօթն օր ։
22 * Եթէ սփռեսցի ընդ մորթն՝ պղ_
ծեսցէ զնա քահանայն՝ քանզի արած
բորոտութե ընդ կեղոյն բորբոքեցաւ ։
23 * Ապա թէ անդէն 'ի տեղւոջ կայցէ
փայլունն՝ եւ ոչ տարածեսցի ․ սպի կե
ղոյն է ․ սրբեսցէ զնա քահանայն ։
24 * Եւ մարմնոյ եթէ լինիցի 'ի մորթ
նր այրեցած հրոյ ․ եւ լինիցի ողջացեալ
մորթ նորա յայրեցածէ անտի ․ եւ լինի
ցի փայլուն՝ կամ պաղպաջ սպիտակ ․
կամ կարմրացեալ՝ կամ լնացեալ ։
25 * Եւ տեսանիցէ զնա քահանայն ․ եւ
ահա փոխեալ իցէ մազն 'ի սպիտակ 'ի
փայլունն ․ եւ տեսիլ նր զիջագոյն իցէ
քան զմորթն՝ բորոտութի է ընդ այ
րեցածին բորբոքեալ ․ եւ պղծեսցէ զնա
քահանայն՝ զի արած բորոտութե է ։
26 * Եւ եթէ տեսանիցէ քահանայն՝ եւ
ահա չիցէ 'ի նմա փայլունն ինչ՝ կամ
մազ սպիտակ ․ եւ ոչ գնատագոյն քան
զմորթն ։ բայց շլագոյն իցէ ․ զատու
27 ցէ զնա քահանայն զեօթն օր ։ * Եւ
տեսցէ քահանայն յաւուրն եօթնե_
րորդի ․ եթէ սփռելով սփռեալ իցէ
ընդ մորթն՝ պղծեսցէ զնա քահանայն՝
զի արած բորոտութե է ընդ կեղոյն
28 բորբոքեալ ։ * Եւ եթէ 'ի նմին տեղւոջ
կայցէ փայլունն ․ եւ ոչ սփռիցի ընդ
մորթն ․ եւ ինքն շլագոյն իցէ ․ սպի այ
րեցածոյն է ․ սրբեսցէ զնա քահանայն՝
զի

29 ղի պղծին այրեցածոյն է։ * Եւ առն
կամ կնոջ, եթէ լինիցի արած բոր-
ոտութե՛ն ի գլուխ՝ կամ ի մօրուս. և
30 տեսանիցէ քահանայն զարածն։ * Եւ
ահա տեսիլ նո՛ր զննատագոյն իցէ քան
զմորթն. և ի՛նչնա մազ աղտամազ
խարտեշացեալ, պղծեսցէ զնա քահա-
նայն. քանզի հարած է բորոտութի՛ն
գլխոյ է կամ բորոտութի՛ն մօրուա՛ց։
31 * Եւ եթէ տեսանիցէ քահանայն զա-
րած հարածոյն. և ահա չիցէ զննատա-
գոյն տեսիլն քան զմորթն. և ոչ մազ
խարտեշացեալ ի՛նչնա. զատուսցէ՛ քա-
հանայն զարած հարածին զեօթն օր։
32 * Եւ տեսանիցէ քահանայն զարածն
յաւուրն եօթներորդի՛ և ահա չիցէ
տարածեալ հարածն. և մազ խար-
տեշացեալ չիցէ ի՛նչնա. և ոչ տեսիլ
հարածոյն զննատագոյն իցէ քան ըզ-
մորթն։ * Գերծցի՛ զնա. բայց զնա
33 րածն մի՛ գերծցէ. և զատուսցէ՛ քահա-
նայն զարածն զեօթն օր կրկին ան-
գամ։ * Եւ տեսանիցէ քահանայն
34 զարածն յաւուրն եօթներորդի. և ա-
հա չիցէ սփռեալ հարածն ընդ մորթն՝
յետ գերծանելոյն զնա. և տեսիլ հա-
րածոյն չիցէ զննատագոյն քան զմորթն,
սրբեսցէ զնա քահանայն. և լուացեալ
զձորձս իւր եղիցի սո՛ւրբ։ * Եւ պա թէ 35
սփռելով սփռիցի հարածն ընդ մորթն
յետ գերծելոյն զնա, և տեսանիցէ
զնա քահանայն. և ահա սփռեալ իցէ
հարածն ընդ մորթն։ * Ո՛չ դարման 36
նեսցէ քահանայն վ՛ր խարտեշ մա-
զոյն՝ զի պի՛ղծ է։ * Իսկ եթէ կայցէ 37
՛ի տեղւոջ հարածն. և մազ թուխ ե-
կեսցէ ՛ինմա, ողջացաւ հարածն.
սո՛ւրբ է. և սրբեսցէ զնա քահանայն։
* Եւ առն՝ կամ կնոջ եթէ լինիցի ՛ի 38
մորթ մարմնոյ իւրոյ փայլուն ինչ՝ փայ
լածիւն լսնացեալ։ * Եւ տեսանիցէ 39
քահանայն. և ահա ՛ի մորթ մարմնոյ
նո՛ր փայլուն փայլածիւն լսնացեալ եթէ
փո՛ւք է տարածեալ ՛ի մորթ մարմնոյ
իւրոյ. սո՛ւրբ է։ * Եւ եթէ մաշտեսցի 40
գլուխ ուրուք. կո՛ւստ՝ սո՛ւրբ է։ * Եւ 41
եթէ յերեսաց կողմանն մաշտիցի
գլուխ նո՛ր, ճա՛կ է՝ սո՛ւրբ է։ * Պա թէ լի 42
նիցի ՛ի կնտուրեա՛ն նո՛ր կամ ՛ի ճեղուրեա՛ն
արած սպիտակ կամ կարմիրացեալ,
բորոտութի՛ն թաքուցեալ է ՛ի կնտու-
րեա՛ն նո՛ր. կամ ՛ի ճեղուրեա՛ն։ * Եւ տե- 43
սանիցէ զայն քահանայն. և ահա տե-
սիլ արածին սպիտակ իցէ. կամ կար
միրագոյն ՛ի կնտուրեա՛ն նո՛ր. կամ ի ճե
ղուրեա՛ն երբեւ զտեսիլ բորոտութե՛ն ՛ի
մորթ մարմնոյ նո՛ր. այր բորոտեալ է՝
պիղծ է. պղծելով պղծեսցէ զնա քա-
հանայն. զի ՛ի գլուխ իւրումէ արածն
44 իւր։ * Եւ բորոտ յորում իցէ արած։
45 * Հանդերձն նորա քակեալ լինի. և
գլուխ նո՛ր մերկ. և զբերան իւր պա-
46 տեսցէ. և պիղծ կոչեսցի։ * Օ՜ամ
աւուրս որչափ իցէ ՛ինմա արածն՝
պիղծ եղիցի. և պիղծ է. մեկնեալ
նստցի. և արտաքոյ բանակին եղիցի
47 բնակութե՛ն նո՛ր։ * Եւ ձորձ յորում լի
նիցի արած բորոտութե՛ն եթէ ՛ի ձորձ
48 ասո՛ւխ. և եթէ ՛ի ձորձ կտաւի։ * Եթէ
յատէչ՝ եթէ ՛ի թեզան. եթէ ՛ի կտա
ւիս՝ և եթէ յասո՛ւխ. եթէ ՛ի մորթ.
49 և եթէ յիմ մաշկ գործոյ։ * Եւ լինի
յն արածն կանաչացեալ կամ կարմ
րացեալ ՛ի մորթ կամ ՛ի հանդերձ.
կամ յատէչ կամ ՛ի թեզան. կամ յիմ
մորթ գործոյ՝ կամ յամաւթ լինչ՝ արած
բորոտութեան իցէ. և յուցցէ քահա-
50 նայնւն։ * Եւ տեսցէ քահանայն զա-
րածն. և զատուսցէ՛ քահանայն զա-
51 րածն զեօթն օր։ * Եւ տեսցէ քահա-
նայն զարածն յաւուրն եօթներորդի.
եթէ սփռեալ իցէ արածն ընդ ձորձն՝
(կամ ընդ առէչ՝ կամ ընդ թեզան. կամ
ընդ կտաւիս՝ կամ ընդ ասո՛ւխ. կամ
ընդ մորթ. ըստ ումի որպէս և գործի
յն մորթն ՛ի գործ) բնակ բորոտութե՛ն
52 է արածն. պի՛ղծ է։ * Եւ այրեսցէ
զձորձն (եթէ առէչ իցէ՝ և եթէ թե
զան յասո՛ւխեաց կամ ՛ի կտաւեաց. կամ
յիմ՝ մաշկեղէն նիւթոյ. յորում իցէ
արածն. քանզի բնակ բորոտութե՛ն է
53 հրո՛վ այրեսցի)։ * Եւ պա թէ տեսանիկ
յ քահանայն՝ և չիցէ սփռեալ արածն
ընդ հանդերձն կամ ընդ առէչն՝ կամ
ընդ թեզանն. կամ ընդ ասրն՝ և ընդ
կտաւ. կամ ընդ ամ՛ անօթ մաշկեղէն
54 * Հրամայեսցէ քահանայն. և լուա
ցեն՝ յորում իցէ արածն. և զատուսցէ
քահանայն զարածն զեօթն օր երկիցս
55 անգամ։ * Եւ տեսցէ քահանայն յետ
լուանալոյ զարածն. եթէ չիցէ փո-
խեալ տեսիլ արածին. և ոչ սփռեալ
իցէ արածն, հրո՛վ այրեսցի. զի հաս
տատեալ է ՛ի հանդերձին. կամ յա
56 ռէչն կամ ՛ի թեզան։ * Եւ եթէ տե
սանիցէ քահանայն՝ և շլագոյն իցէ ա
րածն յետ լուանալոյն զնա, պատա
ռեսցէ զայն ՛ի հանդերձէ անտի. կամ
՛ի մորթէն. կամ յառէչէ՝ կամ ՛ի թե
57 զանոյ։ * Եւ պա թէ դարձեալ երեւե
յի ՛ի հանդերձին. կամ յառէչն, կամ
՛ի թեզան՝ կամ յիմ անօթ մաշկե
ղէն, բորոտութի՛ն բորբոքեալ է. հրով
այրեսցի՝ յորում իցէ արածն. եթէ
հանդերձ իցէ՝ և եթէ առէչ՝ և եթէ
58 թեզան։ * Եւ եթէ ամ՛ անօթ մաշկե
ղէն

ղէն որ լուանայցի. և ելանիցէ 'ի նմա_
նէ արածն, կրկին լուասցի՝ և սուրբ լիցի։
*Այս օրէն իցէ արածի բորոտութեան 59
առուեայ հանդերձի. կամ կտաւոյ՝
կամ առեջոյ. կամ թեզանոյ՝ կամ
ամենայն մաշկեղէն անօթոյ 'ի սրբել
կամ 'ի պղծել զնա։

ԳԼ. ԺԴ.

Խօսեցաւ Տէր ընդ Մովսէսի՝ և ասէ. 1
*Այս օրէն եղիցի բորոտին յաւ 2
‖ Մատ. ուր յորում սրբիցի. ‖ածցի առ քահա
8. 4. նայն։* Եւ ելցէ քահանայն արտաքոյ 3
բանակին. և տեսանիցէ քահանայն՝
և ահա բժշկեալ իցէ արած բորոտու_
‖ Մարկ. թեան 'ի բորոտէ անտի։ *‖ Հրամանս 4
1.44. տայցէ քահանայն՝ և առցեն 'ի սրբե_
Ղուկ. ցելոյն երկուս հաւս կենդանիս սուրբս՝
5.14. և փայտ եղևնեայ՝ և կարմիր մանեալ՝
և զոպայ։ *Եւ հրաման տացէ քահա 5
նայն՝ և սպանցեն զմի հաւն յանօթ_
խեցեղէն. 'ի վերայ ջրոյ կենդանւոյ։ *Եւ 6
զհաւն կենդանի առցէ՝ և զփայտն
եղևնեայ, և զկարմիրն մանեալ և զզո
պայն՝ և թացցէ զնոսա, և զհաւն կենդա
նի յարեան հաւուն սպանելոյ 'ի վերայ
ջրոյն կենդանւոյ։ * Եւ ցանեսցէ 'ի 7
վերայ սրբեցելոյն 'ի բորոտութենէ եօթն
անգամ. և սրբեսցէ զնա։ և արձակես
ցէ զհաւն կենդանի 'ի դաշտ։ *Եւ 8
լուասցէ սրբեալն զձորձս իւր. և գերծ
ցէ զամ զմազ իւր. և լուասցի ջրով. և
սուրբ լիցի։ և ապա մտցէ 'ի բանակն.
և լիցի արտաքոյ տան իւրոյ զեօթն օր։
*Եւ յաւուրն եօթներորդի գերծցէ 9
զամ զմազ իւր. և զգլուխ և զմօրուս
և զյօնս. և զամ զմազ իւր գերծցէ. և
ողողեսցէ զհանդերձս իւր. և լուասցէ
զմարմին իւր ջրով՝ և սուրբ լիցի։ * Եւ 10
յաւուրն ութերորդի առցէ երկուս
գառինս անարատս տարևորս. և որոջ
մի անարատ տարևոր. և երիս տասա
նորդս նաշհոյ 'ի զոհ՝ իւղով զանգեալ.
և ձաշակ մի իւղոյ։ *Եւ կացուսցէ քա 11
հանայն՝ որ սրբիցէ զայրն որ սրբիցի.
և զայն առաջի խորանին վկայութեան։
*Եւ առցէ քահանայն զմի գառն. և 12
մատուսցէ զնա վասն յանցանաց. և զձա
շակն իւղոյ. և նուիրեսցէ զայն նուէր
առաջի Տեառն։ *Եւ սպանցէ զգառն միւս 13
'ի տեղւոջն ուր սպանանիցեն զողջա_
կէզն՝ և զվասն մեղացն 'ի սուրբ տեղւոջ.
զի որպէս որ վասն մեղացն իցէ. նոյն
պէս և որ վասն յանցանացն իցէ. և եղիցի
քահանային. զի սրբութիւն սրբութեանց է։
*Եւ առցէ քահանայն յարենէ այնր՝ 14
որ վասն յանցանացն իցէ. և դիցէ քահա
նայն յարենէ անտի 'ի վերայ բլթակի

աջոյ ունկան այնորիկ՝ որ սրբեսցի. և
'ի վերայ ծայրի ձեռին նորա աջոյ. և 'ի վերայ
15 ծայրի ոտին նորա աջոյ ։ * Եւ առեալ
քահանային 'ի ձաշակէ անտի իւղոյն.
արկցէ 'ի ձախոյ ձեռն քահանային ։
16 *Եւ թացցէ քահանայն զմատն իւր
աջոյ յիւղոյ անտի՝ որ իցէ 'ի ձեռին
իւրում ձախոյ. և ցանեսցէ մատամբ
17 իւրով եօթնանգամ առաջի Տեառն։*Եւ
զմնացեալ իւղն 'ի ձեռին իւրում դի
ցէ քահանայն 'ի վերայ բլթակի աջոյ
ունկան այնորիկ՝ որ սրբելոցն իցէ. և
'ի ծայրի աջոյ ձեռին նորա. և 'ի ծայրի
աջոյ ոտին նորա 'ի տեղւոջ արեանն յան
18 ցանաց։*Եւ զմնացեալ իւղն 'ի ձեռին
քահանային դիցէ քահանայն 'ի վերայ
19 սրբեցելոյն ։ * Եւ քաւեսցէ վասն նորա
քահանայն առաջի Տեառն. և արասցէ քա
հանայն զվասն մեղացն. և քաւեսցէ
քահանայն վասն այնորիկ՝ որ սրբելոցն
իցէ 'ի մեղաց իւրոց. և ապա սպանցէ
20 քահանայն զողջակէզն ։ *Եւ հանցէ
քահանայն զողջակէզն և զզոհն առա
ջի Տեառն 'ի սեղանն. և քաւեսցէ վասն նորա
21 քահանայն՝ և սրբեսցի ։ * Եւ եթէ
աղքատ իցէ. և չգտանիցէ ձեռն իւր.
առցէ զգառն մի վասն յանցանաց՝ զոր
յանցեաւ 'ի նուէր առ 'ի քաւելոյ վասն
նորա. և զտասանորդ նաշհոյ իւղով
զանգեալ 'ի զոհ. և ձաշակ մի իւղոյ։
22 *‖ Եւ երկուս տատրակս կամ երկուս ‖ Ղեւ.
ձագս աղաւնւոյ. որ չափ լինչ եգիտ 5. 7. և
ձեռն իւր. և եղիցի մին վասն մեղաց. 17։ և
23 և մին յողջակէզ ։ * Եւ տարցի զայն 12.8.
յաւուրն ութերորդի առ քահանայն. Ղուկ.
առ 'ի սրբելոյ զնա առ դրան խորա_ 2.24.
24 նին վկայութեան առաջի Տեառն։*Եւ առ_
եալ քահանայն զգառն զվասն յանցա
նաց՝ և զձաշակն իւղոյ. և դիցէ նուէր
25 առաջի Տեառն ։ * Եւ սպանցէ զգառն
զվասն յանցանաց. և առցէ քահանայն
յարենէ անտի՝ որ վասն յանցանացն
իցէ. և դիցէ 'ի վերայ բլթակի աջոյ
ունկան սրբեցելոյն. և 'ի ծայրի աջոյ
ձեռին նորա. և 'ի ծայրի աջոյ ոտին նորա ։
26 *Եւ յիւղոյ անտի արկցէ քահանայն
27 'ի ձախոյ ձեռն քահանային։ *Եւ ցա
նեսցէ քահանայն մատամբն աջոյ յիւ
ղոյ անտի՝ որ իցէ 'ի ձախու ձեռին
իւրում եօթն անգամ առաջի Տեառն։
28 *Եւ դիցէ քահանայն յիւղոյն անտի՝
որ իցէ 'ի ձեռին իւրում. 'ի վերայ բլթա
կի աջոյ ունկան սրբեցելոյն. և 'ի վերայ
ծայրի աջոյ ձեռին նորա. և 'ի վերայ ծայրի
աջոյ ոտին նորա 'ի տեղւոջ արեանն՝ որ
29 վասն յանցանացն իցէ ։ *Եւ զմնացեալ
իւղն որ իցէ 'ի ձեռին քահանային.
արկցէ 'ի գլուխ սրբեցելոյն. և քաւես
ցէ

ցէ վասն նորա քահանայն առաջի Տն։
* Եւ արասցէ զմի ’ի տատրակաց ան_ 30
տի կամ ’ի ձագուց աղաւնեաց՝ ըստ
ընչին զոր եգիտ ’ի ձեռն իւրում։
* Զմին վն մեղաց. և զմին յողջակէզ 31
հանդերձ զոհիւն. և քաւեսցէ քահա
նայն վասն սրբեցելոյն առաջի Տն։
* Այս օրէն իցէ յորում իցէ արած 32
բորոտութե. և որ ոչ գտանիցի ’ի ձե
ռին բաւական լինելոյ ’ի սրբութի իւր։
* Խօսեցաւ Տէր ընդ մովսէսի՝ և ընդ 33
ահարոնի. և ասէ։ * Յորժամ մտա_ 34
նիցէք յերկիրն քանանացւոց՝ զոր ես
տաց ձեզ ’ի ստացուած. և տայցեմ
արած բորոտութե ’ի տունս երկրին
ստացուածոց ձերոց։* Եւ գայցէ՝ որոյ 35
տունն իցէ՝ և պատմիցէ քահանային՝
և ասիցէ, եթէ արած իմն երևեցաւ
’ի տան իմում։ * Հրաման տացէ քա_ 36
հանայն թափել զտունն՝ մինչև մտեալ
իցէ քահանային տեսանել զտունն՝ և
պղծեսցէ քահանայն զամ ինչ՝ որ ’ի
տանն կայցէ. և ապա մտցէ քահա_
նայն սրբել զտունն։ * Եւ տեսանի 37
ցէ քահանայն զարածն յորմս տանն.
գնստագոյնս, կանաչս՝ կարմրացեալս.
և տեսիլն նոցա զնստագոյն իցէ քան
զորմոյն։ * Եւ ելեալ քահանայն ’ի 38
տանէ անտի ’ի դուռն տանն. զատուս
ցէ քահանայն զտունն զեօթն օր։
* Եւ եկեսցէ դարձեալ քահանայն 39
յաւուրն եօթներորդի. և տեսանիցէ
զտունն. եթէ սփռեալ իցէ արած
տանն ընդ որմս տանն։* Հրաման տա 40
ցէ քահանայն՝ և քակեսցեն զքարինսն
յորս արածն իցէ. և հանցեն զնոսա
արտաքոյ քաղաքին ’ի տեղի անսուրբ։
* Եւ քերեսցեն զնա ’ի ներքոյ շուրջա 41
նակի. և հեղցեն զքերուածն արտա
քոյ քաղաքին ’ի տեղի անսուրբ։
* Եւ առցեն այլ քարինս քերածոյս՝ 42
և դիցեն փոխանակ այնոց քարանց. և
այլ հող առցեն՝ և ծեփեսցեն զտունն։
* Եւ եթէ անդրէն կրկնեսցի արածն. 43
և երևեսցի ’ի տան՝ յետ զքարինսն
քակելոյ. և զտունն քերելոյ և միւս
անգամ ծեփելոյ։ * Մտցէ քահա_ 44
նայն՝ և տեսցէ թէ սփռեալ իցէ ա_
րածն ընդ տունն. բնակ բորոտութի
է ’ի տանն՝ պիղծ է։ * Քակեսցեն 45
զտունն՝ և զփայտ նր՝ և զքարինս նր.
և զամ հող տանն. և հանցեն արտա
քոյ քաղաքին ’ի տեղի անսր։* Եւ որ 46
մտանիցէ ’ի տունն զամ աւուրս զա_
տանելոյն նր, պիղծ լիցի մինչև ցերե_
կոյ։* Եւ որ ննջիցէ ’ի տան անդ՝ լուա 47
ցէ զձորձս իւր. և պիղծ լիցի մինչև
ցերեկոյ. և որ կերիցէ ’ի տանն՝ լուա
ցէ զձորձս իւր. և պիղծ լիցի մինչև
48 ցերեկոյ։* Եւ եթէ եկեալ մտանիցէ
քահանայն և տեսանիցէ. և ահա չիցէ
սփռեալ արածն ընդ տունն. և սրբեսցէ
քահանայն զտունն. զի բժշկեցաւ ա_
49 րածն։ * Եւ առցէ առ ’ի սրբելոյ
զտունն երկուս հաւս կենդանիս սբս.
և զփայտ եղևնեայ. և զկարմիր մանեալ
50 և զզոպայ։ * Եւ սպանցէ զմի հաւն
յաման խեցեղէն ’ի վր ջրոյ կենդան
51 ւոյ։ * Եւ առցէ զփայտն եղևնեայ.
և զկարմիրն մանեալ և զզոպայն. և
զհաւն կենդանի. և թացցէ զնոսա
յարեան հաւուն սպանելոյ ’ի վերայ
ջրոյ կենդանւոյ. և ցանեսցէ նովաւ
52 զտամբն եօթնանգամ։* Եւ սրբեսցէ
զտունն արեամբ հաւուն՝ և ջրովն կեն
դանեաւ. և հաւովն կենդանեաւ. և
փայտիւն եղևնով և զոպայիւն. և
53 կարմրովն մանելով։ * Եւ արձակես
ցէ զհաւն կենդանի արտաքոյ քաղա_
քին ’ի դաշտ. և քաւեսցէ վն տանն՝ և
54 սբ եղիցի։ * Այս օրէն լիցի ըստ ամ
արածոյ բորոտութե. և հարածի։
55 * Եւ բորոտութե հանդերձի. և տան։
56 * Եւ սպւոյ. և պալարի. և պաղպաջա
57 * Նշանակելոյ. թէ յորում աւուր
պղծիցի. և յորում աւուր սրբիցի.
այս օրէն լիցի բորոտութե։

Գլ: ԺԵ:

1 Խօսեցաւ Տր ընդ մովսէսի՝ և ընդ
2 ահարոնի՝ և ասէ։ * Խօսեաց ընդ
որդիսդ իղի՝ և ասասցես ցդոսա։ առն
ուրուք առն որոյ լինիցի ծորումն ’ի
մարմնոյ իւրոյ. ծորումն իւր պիղծ իցէ։
3 * Եւ այս օրէն լիցի սրբութե նորա.
որոյ ծորիցի սերմն ’ի մարմնոյ իւրմէ.
կամ թէ հալիցի մարմին նր ’ի ծորե_
լոյն. պղծութի իւր ’ի նմ է զամենայն
աւուրս ծորելոյ մարմնոյ իւրոյ. կամ
թէ հալիցի մարմին նր ’ի ծորելոյ ան
4 տի. պղծութի մարմնոյ է այն. * Ամ
անկողին յորում ննջիցէ սերմնա_
կաթն՝ պիղծ եղիցի. և ամ յորոյ վր
5 նստիցի՝ պիղծ լիցի։ * Եւ մարդ որ
մերձեսցի յանկողին նորա՝ ողողեսցէ
զձեռս իւր. և լուասցի ջրով՝ և պիղծ
6 լիցի մինչև ցերեկոյ։ * Եւ որ նստիցի
’ի վերայ անօթոյ՝ յորում նստեալ իցէ
սերմնակաթին՝ ողողեսցէ զհանդերձ
իւր և լուասցի ջրով. և պիղծ լիցի
7 մինչև ցերեկոյ։ * Եւ որ մերձեսցի
’ի մարմին սերմնակաթին. ողողեսցէ
զձորձս իւր՝ և լուասցի ջրով. և պիղծ
8 լիցի մինչև ցերեկոյ։* Եւ եթէ թուք
սերմնակաթին հասանիցէ ’ի սուրբն.
ողողեսցէ զձորձս իւր, և լուասցի
ջրով.

ջրով . և պիղծ լիցի մինչև ցերեկոյ ։
*Եւ ամ համետ իշոյ՝ յորոյ վր նստցի 9
սերմնականն՝ պիղծ լիցի մինչև ցե֊
րեկոյ ։ * Եւ ամ որ մերձեսցի՝ յամ 10
որինչ ներքոյ նր իցէ, պիղծ լիցի մինչև
ցերեկոյ ։* Եւ յորինչ մերձեսցի սերմ 11
նականն՝ և զձեռս իւր ոչ լուանայցէ
ջրով՝ ողողեսցէ զհանդերձս իւր . և
լուասցէ զմարմին իւր ջրով . և պիղծ
լիցի մինչև ցերեկոյ ։ *Եւ անօթ խե 12
ցեղէն՝ յոր մերձեսցի սերմնականն՝
փշրեսցի . և ամ անօթ փայտեղէն լուա
ասցի ջրով՝ և եղիցի սբ ։ *Եւ եթէ 13
սրբեսցի սերմնականն 'ի բղխմանէ
իւրմէ . համարեսցի իւր եօթն օր 'ի
սրբութի իւր . և ողողեսցէ զհանդերձս
իւր . և լուասցէ զմարմին իւր ջրով
կենդանեաւ . և եղիցի սբ ։ *Եւ յաւ֊ 14
ուրն ութերորդի առցէ երկուս տատ
րակս , կամ երկուս ձագս աղաւնեաց .
և տարցի զայն առաջի Տն 'ի դուռն
խորանին վկայութե . և տացէ ցքահա
նայն ։ * Եւ արասցէ քահանայն զմին 15
վն մեղաց . և զմին յողջակէզ . քաւես֊
ցէ վն նորա քահանայն առաջի Տն 'ի
բղխմանէ անտի նորա ։ *Եւ այր ուք՝ 16
յորմէ ելանիցէ արուն սերման, լուաս
ցէ զամ մարմին իւր ջրով . և պիղծ լի
ցի մինչև ցերեկոյ ։* Եւ ամ հանդերձ 17
և մաշկ՝ յորոյ վերայ հասանիցի արու
թի սերման, լուասցին ջրով՝ և պիղծք
լիցին մինչև ցերեկոյ ։ * Եւ կին ընդ 18
որում հարկանիցի այր արութբ սեր
ման . լուասցին ջրով՝ և պիղծք լիցին
մինչև ցերեկոյ ։* Եւ կին որոյ բղխի֊ 19
ցի արիւն . և լինիցի բղխումն արեան
նր 'ի մարմնի իւրում, եօթն օր որոշես
ցի ։ * Ամենայն որ հարկանիցի ընդ 20
նա, պիղծ լիցի մինչև ցերեկոյ ։ * Եւ 21
ամ յորոյ վերայ ննջիցէ 'ի դաշտանին
իւրում . և ամ յորոյ վր նստիցի՝ պիղծ
լիցի ։ * Եւ ամ որ մերձենայ յանկողին 22
նորա , ողողեսցէ զհանդերձս իւր՝ և
լուասցէ զմարմին իւր ջրով . և պիղծ
լիցի մինչև ցերեկոյ ։ *Եւ ամ որ մեր 23
ձենայցէ յամ անօթ՝ յորոյ վր նստիցի
նա . ողողեսցէ զհանդերձս իւր՝ և լուա
ասցի ջրով . և պիղծ լիցի մինչև ցե֊
րեկոյ ։ *Եւ եթէ տակաւին յանկող֊ 24
նին իւրում իցէ . և կամ 'ի վերայ անօ
թոյ իրիք յորոյ վր նստեալ իցէ . 'ի մեր
ձենալ ուրուք առ նա , պիղծ լիցի մին
չև ցերեկոյ ։ և եթէ ննջելով ոք ննջես
ցէ ընդ նմա՝ և պղծութի նր 'ի նմա
իցէ . պիղծ լիցի զեօթն օր . ամ անկո
ղին յորոյ վերայ ննջիցէ, պիղծ լիցի
մինչև ցերեկոյ ։ * Եւ կին, որ բղխիցէ 25
զբղխումն արեան զաւուրս բազումս .

ոչ 'ի ժամանակի դաշտանի իւրոյ . և
եթէ բղխիցէ յետ դաշտանին իւրոյ .
ամէն աւուրք բղխմանն պղծութեան
իւրոյ, այնպէս իցեն՝ իբրև զաւուրս
դաշտանին իւրոյ . և եղիցի պիղծ ։
26 *Եւ ամ անկողին՝ յորոյ վերայ ննջի֊
ցէ զամ աւուրս բղխմանն իւրոյ . ըստ
անկողնի դաշտանին իւրոյ լինիցի նմա
սուրբ ։ և ամ անօթ յորոյ վր նստի֊
ցի՝ պիղծ լիցի . ըստ պղծութե աւուրց
27 դաշտանին իւրոյ ։ *Ամենայն որ մեր
ձեսցի 'ի նա՝ պիղծ լիցի . և ողողեսցէ
զձորձս իւր՝ և լուասցէ զմարմին իւր
ջրով . և պիղծ լիցի մինչև ցերեկոյ ։
28 *Ապա թէ սրբեսցի 'ի բղխմանէ ան
տի, համարեսցի իւր աւուրս եօթն՝ և
29 ապա սրբեսցի ։ *Եւ յաւուրն ութ֊
երորդի առցէ իւր երկուս տատրակս .
կամ երկուս ձագս աղաւնեաց . և տար
ցի զայն առ քահանայն 'ի դուռն խո֊
30 րանին վկայութե ։* Եւ արասցէ քա֊
հանայն զմին վասն մեղաց . և զմին յող֊
ջակէզ . և քաւեսցէ վն նր քահանայն
առաջի Տն . 'ի բղխմանէ պղծութե
31 նորա ։ * Եւ զգուշացոյց առնիցէք
զորդիսն իէլի 'ի պղծութեց իւրեանց .
և ոչ մեռանիցին վն անսրբութե իւր
եանց . առ 'ի պղծելոյ նոցա զխորանն
32 իմ, որ է 'ի նոսա ։ * Այս օրէն իցէ
սերմնականին ։ և եթէ ելանիցէ յու֊
մեքէ արութի սերման առ 'ի պղծե֊
33 լոյ նովաւ ։ * Եւ տեռատեսի 'ի դաշ֊
տանի իւրում ։ և սերմնականին 'ի
բղխման իւրում . արուին և իգի . և
առն որ ննջիցէ ընդ դաշտանի ։

ԳԼ։ ԺԶ։

1 Խօսեցաւ Տր ընդ մովսէսի՝ և ասէ .
յետ վախճանելոյ որդւոցն ահա
րոնի . ‖ 'ի մատուցանել նց զհուրն ‖ Ղեւ.
2 օտար Տն և սատակելը ։ *Եւ ասէ Տր 10.1.
ցմովսէս . խօսեաց ընդ ահարոնի ընդ
եղբօր քում . ‖ և մի մտցէն յամենայն ‖ Ելից.
ժամ 'ի սրբութիւն՝ 'ի ներքս քան զվա 30.11.
րագոյրն յանդիման քաւութեն՝ որ է Եբրայ.
'ի վր տապանակի վկայութեն . և ոչ 9. 7.
մեռանիցիք ։ զի ամպով երևեցայց 'ի
3 վերայ քաւութեն ։* Եւ ապա մտա֊
նիցէ ահարոն 'ի սրբութիւն . զուարա֊
կաւ յանդոյ վն մեղաց . և խոյիւ յող֊
4 ջակէզ ։ * Եւ պատմուճան կտաւի
սրբեալ զգեցցի . և անդրավարտիս
կտաւիս ունիցի յանդամս իւր . և գօ֊
տի կտաւի ածեալ ընդ մէջ իւր . և
խոյր կտաւի եդեալ 'ի գլուխ . զի հան
դերձ սրբութե է . և լուասցէ ջրով
զամ մարմին իւր՝ և զգեցցի զնոսա ։
5 * Եւ 'ի ժողովրդենէ որդւոցն իէլի

առցէ երկուս նոխազս յայծեաց վն
մեղաց. և խոյ մի յողջակէզ: * Եւ մա 6
տուսցէ ահարոն զզուարակն վն մե_
ղացն իւրոց. և քաւեսցէ վն իւր, և
վն տան իւրոյ : * Եւ առցէ երկուս 7
նոխազս. և կացուսցէ զնոսա առաջի
Տն առ դրան խորանին վկայութե:
* Եւ արկցէ ահարոն 'ի վերայ երկուց 8
նոխազացն վիճակս՝ մի Տն. և վիճակ
մի արձակելոյ: * Եւ մատուսցէ ահա 9
րոն զնոխազն՝ յորոյ վերայ իցէ վիճակ
Տն: * Եւ յորոյ վերայ վիճակն ար_ 10
ձակելոյ, և կացուսցէ զնա առաջի Տն
կենդանի քաւել նովաւ՝ առ արձակե
լոյ զնա յարձակումն՝ և թողլոյ զնա
յանապատ : և առցէ նոխազն յինքն
զանօրէնութիւս նոցա յանկոխն: * Եւ 11
մատուսցէ ահարոն զզուարակն զվն
մեղաց իւր. և քաւեսցէ վն իւր՝ և
վասն տան իւրոյ: և սպանցէ զզուա_
րակն զվասն մեղացն իւր: * Եւ առ_ 12
ցէ լի բուրվառաւ կայծակունս հրոյ
'ի սեղանոյ անտի. որ է առաջի Տն.
և լցցէ զձեռս իւր խնկով համեր_
ձանացն մանր աղացելով. և տարցի 'ի
ներքս քան զվարագոյրն: * Եւ դիցէ 13
զխունկն 'ի վերայ հրոյն առաջի Տն.
և ծածկեսցէ ծուխ խնկոյն զքաւու_
թիւն՝ որ իցէ 'ի վր վկայութեցն. և ոչ
մեռանիցի: * Եւ առցէ յարենէ զուա 14
րակին. և ցանեսցէ մատամբ իւրով 'ի
վերայ քաւութեն ընդ կողմն արևե_
լից ընդդէմ քաւութեն : Եւ ցանես
ցէ եօթնանգամ յարենէ անտի մա_
տամբ իւրով: * Եւ սպանցէ զնոխազն 15
զվն մեղաց. որ վասն ժողովրդեանն
իցէ առաջի Տն: և տարցի յարենէ ան
տի 'ի ներքս քան զվարագոյրն. և ա_
րասցէ զարիւն նորա. զոր օրինակ ա_
րար զարիւնն զուարակին. և ցանեսցէ
զարիւն նր 'ի վերայ սեղանոյն յանդի
ման քաւութեն: * Եւ քաւեսցէ զսր 16
բութիւն 'ի պղծութեց որդւոցն իղի.
և յանիրաւութեց նոցա. և վն ամ
մեղաց նց: և այսպէս արասցէ 'ի խո_
րանին վկայութե. ստացելոյ 'ի նոսա
Ղուկ 1.10. 'ի մէջ պղծութե նց: * || Եւ ամենևին 17
մարդ ոչ լինիցի 'ի խորանին վկայու_
թե 'ի մտանել նր և քաւել 'ի սրբու_
թեն մինչև ելանիցէ : և քաւեսցէ վն
իւր և վն տան իւրոյ. և վասն ամ ժո_
ղովրդեան որդւոց իղի: * Եւ յորժամ 18
ելցէ 'ի սեղանոյն՝ որ առաջի Տն. և
քաւեսցէ 'ի վերայ նր: և առցէ յարե
նէ զուարակին. և դիցէ 'ի վր եղջե_
րաց սեղանոյն շուրջանակի: * Եւ ցա 19
նեսցէ յարենէ անտի 'ի վերայ նորա
մատամբ իւրով եօթն անգամ. և մաք
րեսցէ զնա. և սրբեսցէ զնա 'ի պղ_
20 ծութեց որդւոյն իղի: * Եւ վախճա
նեսցէ առ 'ի քաւելոյ զսրբութիւն. և
զխորանն վկայութե և զսեղանն: և
վն քահանայիցն սրբեսցէ: և մատուս
21 ցէ զնոխազն կենդանի : * Եւ դիցէ
ահարոն զձեռս իւր 'ի վր գլխոյ նո_
խազին կենդանւոյ. և խոստովան լի_
ցի 'ի վերայ նր զամ անօրէնութիւնս
որդւոցն իսրայէլի. և զամ անիրաւու
թիւս նոցա. և զամ զմեղս նց: և դիցէ
զնս 'ի վր գլխոյ նոխազին կենդանւոյ.
և արձակեսցէ 'ի ձեռն առն պատրաս
22 տելոյ՝ յանապատ: * Եւ առցէ նոխազն
յանձն իւր զանօրէնութիւս նց յերկիր
անկոխ. և արձակեսցէ զնոխազն յա_
23 նապատ: * Եւ մտցէ ահարոն 'ի խո_
րանն վկայութե. և մերկասցի զպատ
մուճանն կտաւի. զոր զգեցեալ 'ի մտա
նելն իւրում 'ի սրբութիւն. և դիցէ
24 զայն անդ: * Եւ լուասցէ զմարմին իւր
ջրով 'ի տեղւոջն սրբութե. և զգեցցի
զպատմուճան իւր. և ելեալ արասցէ
զողջակէզն իւր և զողջակէզ ժողովր
դեան: և քաւեսցէ վն իւր. և վն տան
իւրոյ. և վն ժողովրդեանն՝ որպէս վասն
25 քահանայիցն: * Եւ զճարպն՝ որ վասն
26 մեղացն իցէ՝ հանցէ 'ի սեղանն: * Եւ
որ արձակիցէ զնոխազն ուխտեալ
յարձակումն՝ ողողեսցէ զձորձս իւր.
և լուասցէ զմարմին իւր ջրով. և ապա
27 մտցէ 'ի բանակն: * Եւ զզուարակն որ
վն մեղաց, և զնոխազ վասն մեղացն,
որոց արիւնն մուծաւ քաւել 'ի սրբու
թեն, հանցեն || արտաքոյ բանակին՝ և || Եբր
այրեսցեն զնս հրով. և զմորթս նց. և 13.11.
28 զմիս նց՝ և զապաճառ նոցա: * Եւ որ
այրիցէ զնոսա՝ ողողեսցէ զհանդերձս
իւր. և լուասցէ զմարմին իւր ջրով. և
29 ապա մտցէ 'ի բանակն : * Եւ եղիցի
ձեզ այն օրէն յաւիտենական: || յամ_ || Ղև
սեանն եօթներորդի 'ի տասն ամսոյն՝ 23.27.
լլկեսջիք զանձինս ձեր. և զամ գործ և 28.
մի գործիցէք: բնակն և պանդուխտն՝
30 որ յեցեալ իցէ 'ի ձեզ: * Յաւուրն
յայնմիկ լինիցի քաւութի վասն ձեր.
առ 'ի սրբելոյ զձեզ յամ մեղաց ձերոց
31 առաջի Տն: և սրբիջիք: * Շաբաթ
շաբաթուց է. եղիցի ձեզ այն 'ի հան_
գիստ. և լլկեսջիք զանձինս ձեր. զի
32 օրէն յաւիտենական է: * Եւ քաւես_
ցէ քահանայն՝ զոր օծանիցեն. և զորոյ
կատարիցեն զձեռս նորա քահանայա
նալ յետ հօր իւրոյ. և զգեցցի զպատ_
մուճանն կտաւի. պատմուճան սրբ:
33 * Եւ քաւեսցէ զսրբութիւն սրբութեց.
և զխորանն վկայութե. և զսեղանն.
և քաւեսցէ վասն քահանայիցն. և վն
ամ

իմ ժողովրդեանն քաւեսցէ։ * Եւ 35
եղիցի ձեզ այն օրէն յաւիտենական
քաւել վն որդւոցն իսրայէլի յամ մե-
ղացն նց։ միանգամ 'ի տարւոջ առնի
ցի. ոպ հրամայեաց Տր մովսէսի։

ԳԼ. ԺԷ։

Խօսեցաւ Տր ընդ մովսէսի՝ և ասէ։ 1
*Խօսեաց դու ընդ ահարոնի՝ և 2
ընդ որդիս նր՝ և ընդ ամ որդիսն իղի.
և ասասցես ցնս։ այս բան է. զոր պատ
ուիրեաց Տր՝ և ասէ։ *Այր ոք՝ այր 3
յորդւոցն իսրայէլի. որ սպանանիցէ
արջառ կամ ոչխար կամ այծ 'ի բանա
կի. և որոք սպանանիցէ արտաքոյ բա
նակին։ (և 'ի դուռն խորանին վկայու
թե ոչ ածիցէ զայն. առ առնելոյ զնա
յողջակէզ վն փրկութե Տն ընդու-
նելի 'ի հոտ անուշից։ և որ սպանանի
ցէ արտաքոյ։) *Եւ 'ի դուռն խորա- 4
նին վկայութե ոչ ածիցէ. առ 'ի մա-
տուցանելոյ պատարագ Տն յանդի-
ման խորանին վկայութե Տն. յարիւն
համարեսցի մարդոյն այնմիկ. որպէս
թէ զարիւն եհեղ, սատակեսցի անձն
այն 'ի ժողովրդենէ իւրմէ։ *Որպէս 5
զի ածիցեն որդիքն իսրայէլի զզոհ իւր
եանց՝ զոր ինքեանք մատուսցեն առա
ջի Տն 'ի դուռն խորանին վկայութե
առ քահանայն. և զենուցուն զնս զե-
նումն փրկութե Տն։ *Եւ հեղցէ քա 6
հանայն զարիւնն առ սեղանովն յան-
դիման Տն. առ դրան խորանին վկայ
ութե. և հանցէն զճարպն 'ի հոտ ա-
նուշից Տն։ *Եւ ոչ ևս զոհիցեն զզոհս 7
իւրեանց սնոտեաց. զորոց զհետ ին-
քեանք պոռնկեցին։ օրէն յաւիտենա-
կան եղիցի ձեզ յազգս ձեր։ *Եւ ա- 8
սասցես ցնս. մարդ ոք՝ մարդ յորդւոց
իսրայէլի. և յորդւոց եկաց յեկելոց 'ի
ձեզ. որ առնիցէ զողջակէզ կամ զոհ։
*Եւ 'ի դուռն խորանին վկայութե 9
ոչ ածիցէ առնել զնա Տն, սատակես
ցի մարդն այն 'ի ժողովրդենէ իւրմէ։
*Եւ մարդ՝ յորդւոց իսրայէլի. կամ 10
յեկաց յեկելոց 'ի ձեզ. որ ուտիցէ զա
մենայն արիւն. հաստատեցից զերեսս
իմ 'ի վր անձինն՝ որ ուտիցէ զարիւնն.
և կորուսից զնա 'ի ժողովրդենէ իւր-
մէ։ *Զի շունչ ամ մարմնոյ արիւն 11
իւր է. և ես ետու զայն ձեզ 'ի սե-
ղանն, քաւել վն անձանց ձերոց։ զի
արիւն նր փոխանակ անձին նր քաւ-
եսցէ։ *Վն այնորիկ ասացի ցորդիսն 12
իսրայէլի. ամ անձն 'ի ձէնջ զարիւն մի
կերիցէ։ և եկն, որ եկեալ յեցեալ իցէ
'ի ձեզ՝ արիւն մի կերիցէ։ *Եւ մարդ 13
ոք՝ մարդ յորդւոց իղի. կամ յեկաց

յեցելոց 'ի ձեզ. որ որսայցէ որս երէ
ինչ՝ կամ թռչուն որ ուտիցի, հեղցէ
զարիւն նորա. և ծածկեսցէ հողով։
14 *Զի շունչ ամ մարմնոյ արիւն իւր է։ Ծննդ.
և ասացի ցորդիսն իսրայէլի՝ զարիւն 9. 4.
ամ մարմնոյ մի ուտիցէք. զի շունչ ամ Վերև.
մարմնոյ արիւն իւր է. ամ որ ուտիցէ 7. 26.
15 զայն՝ սատակեսցի։ *Եւ ամ անձն որ
ուտիցէ զմեռելոտի՝ կամ զգազանա
բեկ՝ յամ եկաց կամ 'ի պանդխտաց,
ողողեսցէ զհանդերձս իւր. և լուաս-
ցէ զմարմին իւր. և պիղծ լիցի մինչև
16 ցերեկոյ. և ապա սր լիցի։ *Եւ եթէ
ոչ ողողեսցէ զհանդերձս իւր. և ոչ
լուասցէ զմարմին իւր ջրով, ընկալցի
զանօրէնութիս յանձն իւր։

ԳԼ. ԺԸ։

1 Խօսեցաւ Տր ընդ մովսէսի՝ և ասէ։
2 *Խօսեաց ընդ որդիսն իսրայէլի՝
և ասասցես ցնս։ ես եմ Տր Ած ձեր։
3 *Ըստ ամ գնացից երկրին եգիպտաց
ւոց՝ յորում պանդխտեցայք՝ մի առ-
նիցէք։ և ըստ գնացից երկրին քանա
նացւոց՝ յոր ես տարայց զձեզ՝ մի առ-
նիցէք։ և ըստ օրինաց նց մի գնայցէք։
4 *Զիրաւունս իմ արասջիք. և զհրա-
մանս իմ պահեսջիք. գնալ 'ի նոսա։
5 ես եմ Տր Ած ձեր։ *Եւ պահեսջիք Եզեկ.
զամ հրամանս իմ. և զամ զիրաւունս 20. 11.
իմ, արասջիք զնս։ զոր արարեալ մար Հռով.
դոյ՝ կեցցէ նոքօք։ ես եմ Տր Ած ձեր։ 10. 5.
6 *Մարդ ոք՝ մարդ առ ամ ընտանուի Գաղ.
մարմնոյ իւրոյ մի մերձեսցի. յայտ 3. 12.
նել զառականս նորա. զի ես եմ
7 Տր։ *Զառականս հօր քոյ՝ և զառա
կանս մօր քոյ մի յայտնեսցես՝ զի մայր
քո է. և մի յայտնեսցես զառականս
8 նր։ *Զառականս կնոջ հօր քոյ մի
յայտնեսցես. զի առականք հօր քոյ են։
9 *Զառականս քեռ քոյ՝ թէ առ 'ի հօ
րէ իցէ կամ առ 'ի մօրէ՝ 'ի տան ծնեալ
կամ արտաքոյ, մի յայտնեսցես զառա
10 կանս նր։ *Զառականս դստեր ուս
տեր քոյ՝ կամ զդստեր դստեր քոյ՝ մի
յայտնեսցես զառականս նր. զի առա
11 կանք քո են։ *Զառականս դստեր
կնոջ հօր քոյ մի յայտնեսցես. զի համ
հօրեայ քոյր քո է. մի յայտնեսցես զա
12 ռականս նորա։ *Զառականս հօրա
քեռ քոյ մի յայտնեսցես. զի ընտանի
13 հօր քոյ է։ *Զառականս մօրաքեռ քոյ
մի յայտնեսցես. զի ընտանի մօր քոյ է։
14 *Զառականս հօրեղբօր քոյ մի յայտ
նեսցես. և առ կին նր մի մտանիցես.
15 զի ազգական քո է։ *Զառականս
նուոյ քոյ մի յայտնիցես. զի կին որդ-
ւոյ քոյ է. մի յայտնեսցես զառականս

նորա։ (և զդուստր ուստեր նորա կամ
զդուստր դստեր նորա մի առնուցուս
յայտնել զառականներ նոցա. զի ընտանիք
են քո. ամենապարշտութի՛ է) ։ * Օ առա 16
կանս կինոջ եղբօր քոյ մի՛ յայտնեսցես.
զի առակաւք եղբօր քոյ են ։ * Օ ա 17
ռակաս կնոջ և զդուստր իւրոյ մի՛
յայտնեսցես. զդուստր ուստեր նորա՝
և զդուստր դստերն նոր մի՛ առնուցուս
յայտնել զառականներ նոցա. զի ընտանիք
քո են՝ ամենապարշտութի՛ է ։ * Կին առ 18
քեռաք իւրով մի՛ առնուցուս նախանձ
ընդդէմ՝ յայտնել զառականներ նորա
առնովաւ, կենդանւոյն ։ * Եւ առ կին 19
՚ի դաշտանի պղծութեան իւրոյ մի՛ մերձ
նիցես՝ յայտնել զառականներ նո՛ ։ * Եւ 20
՚ի կին ընկերի քոյ մի՛ տայցես զարու
թի՛ սերման քոյ առ՚ի պղծելոյ ընդ
նմա ։ ‖ * Եւ՚ի սերմանէ քումմէ մի՛ 21
տայցես ծառայել իշխանի. և մի՛ պղ
ծեսցես զանուն իմ՝ սո՛ւրբ. զի ես եմ Տէր ։
* Եւ ընդ արուի մի՛ մտանիցես զմտա 22
կանացի՝ զի պղծութի՛ է այն ։ * Եւ յամէ 23
անասուն ոչ տայցես զարուի սերման
քոյ առ՚ի պղծելոյ ընդ նմա ‖ և կին մի՛
կացցէ առաջի՛ անասնոյ մտաբե
րել՝ ՚ինա, զի գարշելի՛ է այն ։ * Եւ մի՛ 24
պղծիցիք այնու ամենի՛ ։ զի այնու ամենի՛
պղծեցան ազգքն՝ զորս ես մերժեցից
յերեսաց ձերոց ։ * Եւ եղև գարշելի 25
երկիրն. և հանդէս արարի անիրաւու
թե՛ն նո՛ր ՚ի նմանէ. և տապակացաւ եր
կիրն ՚ի բնակչաց իւրոց ։ * Եւ պահե 26
ցէ՛ք զօրէնս իմ. և զամ հրամանս իմ.
և մի՛ առնիցէք յամէ պղծութեանցն այնո
ցիկ ։ բնակն և եկն. և պանդուխտն՝
որ ՚ի ձեզ իցէ ։ * Օ զայն ամ պղծու 27
թի՛ն արարին մարդիկ երկրին. որք
էին անդ յառաջ քան զձեզ. և պղծե
ցաւ երկիրն ։ * Լդ զգուշացարո՛ւք՝ 28
զի մի՛ տապականայցէ և ձեզ երկիրն՝
՚ի պղծել ձեր զնա. որ՝ տապակացաւ
ազգքն՝ որք էին յառաջ քան զձեզ ։
* Օ ով ամ մարդ՝ որ արասցէ յամէ պղ 29
ծութե՛ն այնոցիկ. սատակեսցին ան
ձինքն՝ որք առնիցեն զայն՝ ՚ի միջոյ ժո
ղովրդեան իւրեանց ։ * Եւ պահեսջիք 30
զպահպանութի՛ն իմ՝ զի մի՛ առնիցէք
յամէ պղծութեանց օրինացն՝ որք գործե
ցան յառաջ քան զձեզ. և մի՛ պղծիցիք
նոքօք. զի ես եմ Տէր Ա՛Ծ ձեր ։

ԻԹ։ ԺՈՂ։

Խօսեցաւ Տէր ընդ Մովսէս՝ և ասէ ։ 1
* Խօսեաց ընդ ժողով ըդեան 2
որդւոց իսրայէլի՝ և ասասցես ցնոսա
‖ սո՛ւրբք եղերուք. զի ես սո՛ւրբ եմ Տէր
Ա՛Ծ ձեր ։ * Երկեարո՛ւք՝ ՚ի հօրէ և ՚ի 3
մօրէ իւրմէ երկնչի՛ջիք ։ և զշաբաթս
իմ պահեսջի՛ք. զի ես եմ Տէր Ա՛Ծ ձեր ։
* Մի՛ երթայցէք զհետ կռոց. և աս 4
տուածս ձուլածոյս մի՛ առնիցէք ձեզ.
ես եմ Տէր Ա՛Ծ ձեր ։ * Եւ եթէ զոհի 5
ցէք զզոհ փրկութե՛ն Տ՛ն, զընդունե
լինն ձեր զոհեսջի՛ք ։ * Յաւուր յորում 6
մատուցանիցէք՝ կերիցի՛ք. և՚ի վաղիւ
անդր. և եթէ ՚ի մնասցէ մինչև յօրն
երրորդ, հրո՛վ այրեսցի ։ * Ա՛պա եթէ 7
ուտելով ուտիցի յաւուրն երրորդի.
անպո՛ւղ է, մի՛ ընկալցի ։ * Այլ որ ու 8
տիցէ զայն՝ մեղս առցէ. զի զսրբուի
Տ՛ն պղծեաց. և սատակեսցին անձինք՝
որք ուտիցենն՝ ՚ի ժողովրդենէ իւր
եանց ։ ‖ * Եւ՚ի հնձել հնձողաց ձե 9 ‖ Ղեւտ.
րոց զհունձս երկրին ձերոյ, մի՛ սպա 23.22.
ռիցէք զհունձս անդոյ ձերոյ մնա հն
ձելով. և զանկեալն՚ի հնձոյ քոյ մի՛
ժողովեսցես ։ * Եւ յայգիս քո ձեա 10
քաղ մի՛ առնիցես և պտղաքաղ այ
գւոյ քոյ մի՛ լինիցիս ։ տնանկի և պան
դխտի թողցես զայն. ես եմ Տէր Ա՛Ծ
ձեր ։ * Մի՛ գողանայցէք. և մի՛ սու 11
ցէք. և մի՛ զրպարտիցէք իրաքանչիւր
զընկեր իւր ։ * Եւ ‖ մի՛ երդնուցուք ‖ Ելից
սուտ յանուն իմ. և մի՛ պղծիցէք զա 20.7.
նուն Տ՛ն Ա՛Ծ ձերոյ. ես եմ Տէր Ա՛Ծ 2.Օր.
ձեր ։ * ‖ Մի՛ զրկեսցես զընկեր քո. և 5.11.
մի՛ յափշտակեսցես. ‖ և մի՛ ագահն ‖ Ելից
վարձք վարձկանին առ քեզ մինչև 10.6.
յառաւօտ ։ * Օ հատրն մի՛ զրկեսցես. ‖2.Օր.
և առաջի կուրին զգայթագո՛ղն մի՛ 24.14.
դնիցես և երկնչիցես ՚ի Տէ՛ Ա՛Ծ քումմ Տոբ.
մէ ։ ես եմ Տէր Ա՛Ծ քո * Ներքա՛ւթի 4.15.
՚ի դատաստանի մի՛ առնիցես. ‖ և ակն ‖2.Օր.
աղքատի մի՛ առնուցուս. և մի՛ երեսաց 1.17. և
18 *‖ Եւ՛ քննեսցեն դատաւորքն ճշմար ‖ Առակ.
տութբ. և ահա վկայ անիրաւ վկայեաց 19.5.
զանիրաւութիւն. և եկաց հակառակ Դանի.
19 եղբօր իւրում: *‖ Արասջիք նմա՝ որպ 13.62.
խորհեցաւ չար առնել ընկերի իւր-
ում. և բարձէք զչարն ՚ի միջոյ ձերմէ:
20 * Եւ՛ այլոցն լուեալ՝ զահի հարկանի-
ցին. և մի ևս յաւելցին առնել ըստ
բանին այնմիկ չարի ՚ի միջի ձերում: ‖ Ելից.
21 * Մի՛ խնայեսցէ ակն քո ՚ի նա. ‖ անձն 21. 23.
ընդ անձին՝ ակն ընդ ական. ատամն Ղևտ.
ընդ ատաման. ձեռն ընդ ձեռին.
ոտն ընդ ոտին: 24. 20.

ԳԼ. Ի.

Մատ. 5.38.

1 Եւ՛ եթէ ելանիցես ՚ի պատերազմ
՚ի վերայ թշնամեաց քոց. և տե-
սանիցես երիվարս և հեծեալս և զազգ
բազում քան զքեզ. մի երկնչիցես ՚ի
նոցանէ, զի Տր Ած քո ընդ քեզ է՝ որ
եհան զքեզ յերկրէն եգիպտացւոց:
2 * Եւ՛ եղիցի յորժամ մերձենայցես ՚ի
պատերազմ. մատուցեալ քահանայն
3 խօսեսցի ընդ ազգին: *‖ Եւ՛ ասասցէ ‖ Դատ.
ցնոսա. լուր Իէլ. դուք դիմեալ եր- 7. 3.
թայք այսօր ՚ի պատերազմ աւադիկ
՚ի վերայ թշնամեաց ձերոց. մի լքանի
ցին սիրտք ձեր. և մի երկնչիցիք. և
մի զարհուրիցիք. և մի խուսիցէք յե-
4 րեսաց նոցա: * Զի Տր Ած մեր եր-
թայ առաջի ձեր ընդ ձեզ. տալ պատե
րազմ վասն ձեր ընդ թշնամիս ձեր.
5 ապրեցուցանել զձեզ: * Եւ՛ խօսեսցին
դպիրքն ընդ ժողովրդեանն՝ և ասաս
ցեն. ‖ այր ոք՝ որոյ շինեալ իցէ տուն ‖ 1. Մակ.
նորաշէն. և ոչ իցէ արարեալ նմա 3.56.
նաւակատիս, գնասցէ, և դարձցի ՚ի
տուն իւր. գուցէ մեռանիցի ՚ի պատե
րազմի. և այլ այր առնիցէ նմա նաւա
6 կատիս: * Եւ այր ոք՝ որոյ տնկեալ
իցէ այգի. և չիցէ ուրախ լեալ ՚ի նմա-
նէ, գնասցէ, և դարձցի անդրէն ՚ի
տուն

տուն իւր. գուցէ մեռանիցի՛ ի պատերազմի. և այլ այր ուրախ լիցի՛ ի նմա նե։ * Եւ այր ոք՝ որոյ խօսեալ լիցէ 7
կին, և չիցէ առեալ զնա, գնասցէ, և դարձցի՛ ի տուն իւր. գուցէ մեռանիցի՛ ի պատերազմի. և այլ այր առնուցու զնա։ * Եւ յաւելցեն դպիրքն խո 8
սել ընդ ժողովրդեանն՝ և ասասցեն.
Գլուխ ‖ այր ոք որ երկնչիցի՝ և վատասիրտ
7. 3. արասցի՛ իցէ. գնասցէ՝ և դարձցի՛ ի տուն իւր. զի մի զանգիտեցուսցէ զսիրտ եղբօր իւրոյ իբրև զիւրն։ * Եւ 9
եղիցի յորժամ դադարեսցեն դպիրքն ի խօսելոյ ընդ ժողովրդեանն. կա
ցուսցեն իշխանս զօրուն առաջնորդս ժողովրդեանն։ * Եւ եթէ մերձենայ 10
ցես ի քաղաք տալ պատերազմ ընդ նմա, կոչեսցես զնոսա ի խաղաղուն։
* Եւ եղիցի եթէ տայցեն խաղաղու 11
թեն պատասխանի. և բացցեն քեզ. եղիցի ամենայն ժողովուրդն՝ որք գտանիցեն ի նմա հարկատուք՝ և հնա
զանդեալք քեզ։ * Եւ պա թէ ոչ հնա 12
զանդեսցեն քեզ. և արասցեն ընդ քեզ պատերազմ, պաշարեսցես զնա։
* Եւ մատնեսցէ զնա Տէր Ա.Ծ քո ի 13
ձեռս քո. և հարցես զամենայն արու նորա կոտորմամբ սրոյ։ * Եւ ի կա 14
նանց՝ և ի կահուն՝ և յամենայն անասունսդ. և զամ ինչ զինչ և գտանիցի՛ ի քաղաքին, և զամ աղխ առցես քեզ յաւարի. և կերիցես զամ զաւար թշնա
մեաց քոց՝ զոր Տէր Ա.Ծ քո տացէ քեզ։
* Նոյնպէս արասցես ընդ ամենայն 15
քաղաքս ընդ յոյժ հեռաւորս. որք ոչ ի քաղաքաց ազգացն այնոցիկ իցեն։
* Եւ յայց ի քաղաքաց ազգացն այնո 16
ցիկ՝ զորս Տէր Ա.Ծ քո տացէ քեզ ի ժառանգութիւն, մի ապրեցուսցէք ի նոցանէ զամ հնչաւոր։
* Այլ նզովելով նզովեսջիք զնոսա. 17
զքեթացին. և զամորհացին. և զքանանացին. և զփերեզացին և զհեւացի. և զյերբուսացի. և զգերգեսացի. զոր օրինակ պատուիրեաց Տէր Ա.Ծ քո։
* Օր մի ուսուցանիցեն ձեզ առնել 18
զամենայն գարշելութիւնս իւրեանց. զոր արարին դիցն իւրեանց. և մեղանչիցէք առաջի Տեառն Ա.յ ձերոյ։ * Եւ 19
եթէ նստեալ պաշարեսցես զքաղաք աւուրս բազումս՝ մնարանել ընդ նմա յառնուլ զնա, մի հարկանիցես զծառատունկ նր արկանելով՝ ի նմա երկաթ. այլ կերիցես ի նմանէ. և զնա մի հարկանիցես՝ միթէ մարդ իցէ ձեռատունկն՝ որ յանդի անդ իցէ՝ մտա նել յերեսաց քոց՝ ի պատնէշ։ * Այլ 20
ծիւղս՝ զոր գիտիցես թէ չիցէ պաղա

ի գ

բեր, զայն հարցես՝ և կոտորեսցես. և շինեսցես պատնէշ շուրջ զքաղաքն որ տայցէ ընդ քեզ պատերազմ մինչև մատնեսցի։

ԳԼ։ ԻԸ։

1 Եւ եթէ գտանիցի վիրաւոր յերկրի քում, զոր Տէր Ա.Ծ քո տացէ քեզ ժառանգել. և անկեալ դնիցի ի դաշտի. և ոչ գիտիցեն զայն՝ որ խո
2 յեացն զնա։ * Եւլցեն ծերակոյտն քո՝ և դատաւորն քո. և չափեսցեն շուրջ զվիրաւորսն զվայրս քաղաքացն. և եղիցի քաղաք՝ որ հնուղ իցէ ի վիրաւորն։
3 * Առցեն ծերակոյտ քաղաքին այնորիկ զերինջ մի յարջառոց՝ որ ընդդործ չիցէ մտեալ. և լուծ չիցէ ձգեալ։
4 * Եւ իջուսցեն ծերակոյտ ժողովրդեանն զերինջն՝ ի ձոր մի ապառաժ. ուր չիցէ գործեալ՝ և ոչ սերմանեալ. և կարթակոտոր արասցեն զերինջն՝ ի
5 ձոր անդր։ * Եւ մատիցեն քահանայքն ղեւտացիք՝ զի զնոսա ընտրեաց Տէր Ա.Ծ քո կալ առաջի իւր՝ և օրհնել յանունն նորա. և ըստ բերանոյ նոցա վճարեսցի ամենայն հակառակութիւն
6 և ամենայն դրդռութիւն։ * Եւ ամ ծերակոյտ քաղաքին այնորիկ՝ որ հնուղ իցէ՝ ի վիրաւորն, լուասցեն զձեռս իւրեանց՝ իվերոյ գլխոյ երինջն կար
7 թահարելոյ՝ ի ձորն։ * Եւ պատասխանի տուեալ ասասցեն՝ ձեռք մեր ոչ հեղին զարիւնս զայս. և աչք մեր ոչ
8 տեսին։ * Քաւեա՛ ժողովրդիդ քո զինչ զոր փրկեցեր Տէր՝ զի մի եկեսցէ արիւնս անպարտ՝ ի վերայ ժողովրդեան քոյ իսրայէլի. և քաւեսցի՝ ի նոցանէ
9 արիւնն։ * Եւ բարձցես դու զարիւնն անպարտ՝ ի ձենջ. և եթէ արասցես զբարին՝ և զհաճոյն առաջի Տեառն Ա.յ քոյ։
10 * Եւ եթէ ելանիցես՝ ի պատերազմ՝ ի վերայ թշնամեաց քոց. և մատնեսցէ զնոսա Տէր Ա.Ծ քո՝ ի ձեռս քո. և առաբերեսցես զաճար նոցա։ * Եւ տեսանիցես կին գեղեցիկ տես
12 լեամբ. և յանկասցիս նմա. և առցես զնա քեզ կնութիւն։ * Եւ տարցիս զնա՝ ի տուն քո. և գերծցես զգլուխ նորա։
13 * Եւ սրբեսցես զեղնգունս նր՝ և հանցես զհանդերձ գերութեան նր. և նստցի՛ ի տան քում. և լացցէ զհայր և զմայր իւր՝ զաւուրս ամսոյ միոյ. և ապա մտցես առնս. և բնակեսցիս ընդ նմա.
14 և եղիցի քո կին։ * Եւ եղիցի եթէ ոչ հաճեսցիս ընդ նմա՝ արձակեսցես զնա ազատ. և վաճառելով մի վաճառեսցես զնա արծաթոյ. և մի անարգեսցես
15 զնա՝ քանզի լկեցեր զնա։ * Եւ եթէ

Ձ լինի՝

լինիցին առն միում երկու կանայք՝ և լինիցի՝ ինոցանէ միոյն սիրելի և միւսն ատելի. և ծնանիցին նմա որդիս, սիրելին և ատելին, և լինիցի որդի անդրանիկ ատելւոյն ։ * ԵՒ եղիցի յաւուր 16
յորում ժառանգեցուցանիցէ որդւոց իւրոց զինչս իւր, մի իշխեսցէ անդրան կացուցանել զորդի սիրելւոյն առանց արարեալ զորդի ատելւոյն զանդրա-
նիկ ։ * ‖ Այլ զանդրանիկ ատելւոյն 17 ‖ Ա.Ցար
Ծանիցի՝ տալ նմա կրկին չափ որ ինչ 5. 1.
գտանիցի նորա. զի նա է սկիզբն որդ-
ւոց նորա և նմա անկ է անդրանկու-
թիւն ։ * Եթէ իցէ ուրուք որդի 18
խեռ՝ և անզգամ. և ոչ լսիցէ ձայնի
հօր և մօր իւրոյ. և խրատիցեն զնա
և ոչ անսայցէ նոցա ։ * Կալցեն զնա 19
հայր և մայր նր. և տարցին զնա առ
ծերակոյտ քաղաքին իւրեանց. և՝ի
դուռն տեղւոյն իւրեանց ։ * Եւ ա- 20
սասցեն ցարս քաղաքին իւրեանց. որ
դիս մեր այս՝ խեռ է և անզգամ և ոչ
լսէ ձայնի մերում. հանգանակող է և
արբշիռ ։ * Եւ քարկոծեսցեն զնա 21
արք քաղաքին նորա քարամբք՝ և մեռ-
ցի. և բարձջիք զչարն՝ի միջոյ ձերմէ.
և լուիցեալ այլոցն զահի հարկանիցին։
* Եւ եթէ հասանիցին ումեք մեղք 22
մահապարտութեանէ և մեռանիցի. կա-
խեսջիք զնա զփայտէ ։ * Եւ մի ագա 23
նիցի մարմին նորա՝ի փայտին. այլ
թաղելով թաղեսջիք զնա՝ի նմին աւ-
ուր ։ ‖ զի անիծեալ Ա.Ի է ամենայն՝ ‖ Դաղատ.
որ կախիցի զփայտէ. և մի պղծիցէք 3. 13.
զերկիրն՝ զոր Տ՚ր Ա.Ծ քո տացէ քեզ
՚ի ժառանգութիւն։

ԳԼ. ԻՒ.

Գ ուցէ ‖ տեսեալ զարջառ և զոչ 1 ‖ Ա.Ելից.
խար եղբօր քոյ մոլորեալս՝ի ճա 23.4.
նապարհի, անտես առնիցես զնոսա,
այլ դարձուցանելով դարձուսցես զնո-
և ածցես առ եղբայր քո ։ * Եպա թէ 2
չիցէ մօտ եղբայրն քո առ քեզ. և ոչ
ճանաչիցես զնա՝ ժողովեսցես զնոսա
՚ի տունս քո. և եղիցին առ քեզ, մինչև
խնդրեսցէ զնո եղբայր քո՝ և տացես
ցնա ։ * Նոյնպէս արասցես զէշ նորա՝ 3
նոյնպէս արասցես զՀանդերձ նորա.
նոյնպէս արասցես և զամենայն կո-
րուստ եղբօր քոյ. որինչ կորնչիցի՚ի
նմանէ, և գտանիցես. մի իշխեսցես
անտես առնել զայն ։ * Գուցէ տեսա 4
նիցես զէշ եղբօր քոյ՝ կամ զեզն նորա
անկեալ՚ի ճանապարհի, և զանց առ
նիցես զնոքօք. այլ յարուցանելով յա
րուսցես ընդ նմա ։ * Մի եղիցի Հան- 5
դերձ առնացի զկանամբք. և մի զգես
ցի այր զզգեստ կանացի. զի պիղծ է
Տ՚ն Ա.Ի քում ամէն, որ առնէ զայն ։
* Եթէ դիպեսցիս բունոյ հաւուց 6
առաջի քո՚ի ճանապարհի. եթէ՚ի
ծառոյ և եթէ՚ի գետին. ձագուց
կամ ձուոց՝ և մայրն ջերեալ նստիցի
՚ի վերայ ձագուցն կամ՝ ձուոց. մի առնուր
ցուս զմայրն հանդերձ որդւովքն ։
* Արձակելով արձակեսցես զմայրն. 7
և զորդիսն առցես քեզ. զի բարւոք լինիցի
քեզ և բազմօրեայ լինիցիս՚ի վերայ
երկրի ։ * Եթէ շինեսցես տուն 8
նորաշէն. արասցես զպատակ շուրջ զտա
նեաքն ։ և մի սպանանիցի գործեսցես՚ի
տան քում, զի մի անկանիցի՝ որ ան-
կանելոյն իցէ՚ինձմէ ։ * Մի վարեսջ- 9
ցես զայգի քո այլ և այլ՝ զի մի սրբեսս
ցին արմտիքն և սերմն՝ զոր սերմանիս
ցես ընդ բերից այգւոյն քոյ ։ * Մի 10
վարեսցես զեզ և զէշն՚ի միասին ։
* Մի զգենուցուս այլայլախառն՝ 11
զասր և զկտաւ՚ի միասին ։ * ‖ Ոտպս ‖ Ա.Ծննդ.
մանուճածոյս արասցես՚ի վերայ չորե 15.38.
ցունց տրտնոց Հանդերձիդ քոց, զոր
զգենուցուս ։ * Եթէ առնուցուս 13
ոք կին՝ և ամուսնասցի ընդ նա. և
ատեսցէ զնա ։ * Եւ դիցէ՚ի վէր պատ 14
ճառս բամբասական բանիցս. և անուն
չար հանիցէ զնմանէ՝ և ասիցէ. զկինս
զայս առի. և մերձեցեալ՚ի սա ոչ գտի
զկուսութիւն սորա ։ * Եւ առեալ հայր 15
և մայր աղջկանն հանցեն զկուսուն
աղջկանն առ ծերակոյտն՚ի դուռն ։
* Եւ ասասցէ հայր աղջկանն ցծերա 16
կոյտն. զդուստրս իմ զայս ետու առնուլ
այդմիկ կնութեան ։ * Եւ ատեցեալ զսա 17
դնէ՚ի վէր պատճառս բամբասուր
բանից՝ և ասէ. ոչ գտի զկուսութիւն
դստեր քոյ. և ահաւասիկ կուսութիւն
դստեր իմոյ. և բացցեն զՀանդերձն
առաջի ծերոց քաղաքին այնորիկ։
* Եւ առցէ ծերակոյտ քաղաքին այ 18
նորիկ զայրն զայն, և խրատեսցեն
զնա ։ * Եւ տուժեսցեն՚ինձանէ հա- 19
րիւր սիկղ. և տացեն հօր աղջկանն
փոխանակ զի եհան անուն չար զկու-
սեն իսրայէլ. և նորին լինիցի կին. և մի
իշխեսցէ արձակել զնա զամենայն ժա
մանակս ։ * Եպա թէ ճշմարիտ իցէ 20
բանն. և ոչ գտցի կուսութիւն աղջ
կանն ։ * Հանցեն զաղջիկն առ դուրս 21
հօր իւրոյ. և քարկոծ արասցեն զնա
արք քաղաքին իւրոյ՝ և մեռցի. զի ա-
րար անզգամութիւն՚ի մէջ որդւոցն
իսրայէլ՝ պոռնկիլ՚ի տան հօր իւրոյ. և
բարձջիք զչարն՚ի ձէնջ ։ * ‖ Եւ եթէ ‖ Ղ. Նար
գտցի այր ննջեալ ընդ առնակնոջ, 20.10.
սպանջիք զերկոսեան. զայրն ննջեալ
ընդ

ընդ հնոջն՝ և զկինն. և բարձցէ զարն
իսրայէլէ։ * Եւ եթէ եղիցի աղջիկ 23
կոյս՝ խոստեցեալ առնուլ գտանիցէ զնա
այր ոք ի քաղաքի՝ և ննջեսցէ ընդ նմա։
* Հանջիք զերկոսին ի դուռն քաղա- 24
քին իւրեանց. և քարկոծեսցեն զնոսա
քարամբք՝ և մեռցին. զաղջկունն՝ զի ոչ
գոչեաց ի քաղաքին. և զայրն՝ որ
լուեաց զկին ընկերի իւրոյ. և բարձ
ջիք զչարն ի միջոց ձերմէ։ * Եթէ 25
ի դաշտի գտցէ այր զաղջիկ ոք՝ խո-
սեցեալ առն. և բռնաբար ննջեսցէ
ընդ նմա. սպանջիք զայրն՝ որ ննջեաց
ընդ նմա։ * Եւ աղջկանն մի ինչ առ 26
նիցէք՝ զի ոչ է աղջկանն մեղք մա-
հու. զի որպէս յառնիցէ մարդ ի վէր
ընկերի իւրոյ՝ և սպանանիցէ զնա՝
այնպէս է կրն։ * Օր ի բացի եգիտ 27
զնա. և գոչեաց աղջկին խոստեցեալ.
և ոչոք էր՝ որ օգներ նմա։ * Եւ եթէ 28
գտանիցէ ոք զաղջիկ կոյս՝ որ չիցէ
խոստեցեալ առն՝ և բռնաբար ննջես-
ցէ ընդ նմա՝ հօր աղջկանն յիսուն երկ- 29
դրամեան արծաթոյ. և նոր լիցի կին.
և մի իշխեսցէ արձակել զնա զամե-
նայն ժամանակս իւր։ * Մի՛ առցէ 30
այր զկին հօր իւրոյ՝ և մի յայտնեսցէ
զծածուկս հօր իւրոյ։

Գլ. ԻԳ.

Մի մտցէ մանչեան՝ և կրճատեալն 1
յեկեղեցի Տ̃ն։ * Մի մտցէ 2
պոռնկորդի յեկեղեցի Տ̃ն. մինչև ի
տասն աղգն։ * Մի մտցէ ամմնացի՝ 3
և մաբացի յեկեղեցի Տ̃ն՝ մինչև
ցտասն աղգ՝ մի մտցեն յեկեղեցի Տ̃ն՝
և մինչև ց յաւիտեան։ * Վասն զի 4
ոչ ելին ընդ առաջ ձեր հացիւ և ջրով
ի ճանապարհի՝ երանելոյն ձերոյ յե-
ղիպտոսէ. և զի ի վարձու կալան
վասն քո զբաղաամ որդի բէօրայ ի
միջագետաց՝ անիծանել զքեզ։ * Եւ 5
ոչ կամեցաւ Տ̃ր Ա̃ծ քո՝ լսել բաղաա
մու, և դարձոյց Տ̃ր Ա̃ծ քո զանէծսն
յօրհնութիւն՝ զի սիրեաց զքեզ Տ̃ր
Ա̃ծ քո։ * Մի խոստեցիս ընդ նոսա 6
խաղաղութիւն զամ աւուրս քո մինչև
ց յաւիտեան։ * Մի գարշեցուցանիր 7
ցես զեդոմայեցին, զի եղբայր քո է. մի
գարշեցուցանիցես զեգիպտացին, զի
պանդուխտ էիր յերկրի նորա։ * Եւ 8
եթէ լինիցին նորա որդիք՝ յերրորդ
ազգի մտցեն յեկեղեցի Տ̃ն։ * Եթէ 9
ելանիցես ի պատերազմ ի քանակիլ
ի վերայ թշնամեաց քոց, զգոյշ լինիր
ջիր յամենայնէ բանէ չարէ։ * Եթէ 10
իցէ ի քեզ այր՝ որ չիցէ սուրբ ի ցայ

գուքէ բղխմանէ, ելցէ արտաքոյ բա
նակին՝ և մի մտցէ ի բանակն։ * Եւ 11
ընդ երեկոյն լուասցէ զմարմին իւր
ջրով. և ընդ մտանել արեւուն մտցէ
ի բանակն։ * Եւ տեղի լիցի քեզ 12
քեզ արտաքոյ բանակին. և ելցես դուս
արտաքս։ * Եւ սիւն լինիցի զգօտւոյ 13
քումմէ. և եղիցի յորժամ նստիցիս
արտաքս, փորեսցես նովաւ, և ածեալ
ծածկեսցես զպղտեղութիւնս քո։ * Օր 14
Տ̃ր Ա̃ծ քո շրջի ընդ բանակն քո փր-
կել զքեզ. և մատնել զթշնամիս քո
առաջի երեսաց քոց. և եղիցի բանակն
քո սուրբ՝ և ոչ երևեսցի ի միջի քումմ
պղտեղութիւն իրացն. և դառնայցէ ի
քէն։ * Մի՛ մատնեսցես զծառայ Տ̃ն 15
իւրում, որ յաւելցի ի քեզ ի տեառնէ
իւրմէ։ * Ընդ քեզ բնակեսցի՝ և ընդ 16
քեզ զեառնէսցի՝ յամենայն տեղւոջ
ուր և հաճոյ իցէ նմա՝ և մի նեղիցէք
զնա։ * Մի լինիցի բազ ի դստերաց 17
Իսր. և մի պոռնիկ յուստերայ Իսր.
մի լինիցի ձօնի ի դստերաց Իսր. և
մի նոմիրեալ ոք յուստերայ Իսր։
* Մի տարցես զկապիկն պոռնկի. և 18
մի զշանսխուրս ի տան Ա̃յ քոյ յամ
ուխտս. զի պիղծք են առաջի Տ̃ն ա-
երկոքեան։ * Մի տացես եղբօր քումմ 19
զարծաթ վաշխիճ. և մի զկերակուր
շարիատիճ, և մի տոկոսեաք։ * Օտար 20
ինչ փոխ տայցես օտարին՝ և եղբօր
քումմ. զի օրհնեսցէ զքեզ Տ̃ր Ա̃ծ քո
յամի գործս քո՝ ի վերայ երկրին՝ յոր
մտանելոց ես ժառանգել զնա։ * Եթէ 21 ‖ Ղևտ.
ուխտիցես ուխտ Տ̃ն Ա̃յ քումմ, մի՛ 5. 3.
յամեսցես հատուցանել զայն՝ զի պա
հանջելով պահանջեսցէ Տ̃ր Ա̃ծ քո
ի քէն. և լինիցի քեզ ի մեղս։
* Ա̃պա եթէ ոչ կամիցիս ուխտել՝ չէ 22
նիցին քեզ մեղք։ * Որ ինչ ելանէ ընդ 23
շրթունս քո, զգոյշ լինիջիր՝ և արաս
ցես որպէս ուխտեցեր Ա̃յ քումմ, ըզ
տուրն զոր խոստացար բերանով քով։
* Եւ եթէ մտանիցես ի հունձս ըն- 24 ‖ Մատ.
կերի քոյ, քաղեսցես ձեռօք քովք 12. 1.
զհասկն. և մանգաղ մի արկանիցես
ցհասկն. և մտանիցես ի արկանիցես
յամ ընկերի քոյ։ * Եւ եթէ մտանի 25
ցես յայգի ընկերի քոյ, կերիցես խա
ղող մինչև ց յագիլ անձին քոյ. բայց
յամանն մի ամմանեսցես։

Գլ. ԻԴ.

Եւ ‖ եթէ առնուցու ոք կին, և ‖ Մատ.
մտանիցէ առնս. և եղիցի եթէ 5. 31. և
ոչ գտանիցէ շնորհս առաջի նորա. զի 19. 7.
եգիտ՝ ինամս իրս անսրդութեան, գրես Մարկ.
ցէ նմա գիր ապահարզանի՝ և տացէ 10. 4.
ի ձեռս նր. և արձակեսցէ զնա ի տա

նէ իւրմէ: * Եւ թէ գնացեալ՝ լինի 2
ցի առն այլումի* Եւ առիցէ զնա այրն 3
վերջին. գրեսցէ նմա գիր մերկնելոյ.
և տացէ ի ձեռս նորա. և արձակեսցէ
զնա ի տանէ իւրմէ. ապա թէ մեռա
նիցէ այրն նորա վերջին՝ որ էառ զնա
կնութեան: * Ո՛ի կարասցէ այրն առա 4
ջին՝ որ արձակեաց զնա՝ դառնալ առ
նուլ զնա իւր կնութեան. յետ պղծելոյն
նորա. զի պիղծ է այն առաջի Տ՛ն Ա՛Ծ
քոյ. և մի՛ պղծիցէք զերկիրն՝ զոր Տ՛ր
Ա՛Ծ տայ ձեզ ի ժառանգութիւն:
* Եթէ առնուցու ոք կին նորոգ՝ 5
մի՛ մատչէ ի պատերազմ. և մի՛ անկցին
ի վերայ նորա և մի՛ ի ինչ իր. այլ ան
պարտ լիցի ի տան իւրում. և ուրախ
արասցէ զկին իւր՝ զոր էառ: * Ո՛ի 6
գրաւեսցես զվերին՝ և զներքինն եր
կան. զի զոգիս գրաւէ այնպիսին:
* Եթէ ըմբռնեսցի այր ոք մարդա 7
գող յեղբարց իւրոց յորդւոցն Իսրայ
ել, և բռնաբարեալ վաճառեսցէ զնա. մեռ
ցի գողն. և բարձջիք զչարն ի միջոյ
ձերմէ: * Ջգոյշ լեր անձին քում յա 8
բածէ բորոտութեան. զգոյշ լինիջիր
առնել ըստ ամ՛ օրինին՝ զոր պատուի
ցեն ձեզ քահանայքն ղեւտացիք. զոր
օրինակ պատուիրեցի ձեզ զգուշանալ
առնելոյ: * Յիշեցէք՝ զոր արար Տ՛ր 9
Ա՛Ծ քո ընդ Մարիամ՝ ի ճանապարհի
ելանելոյն ձերոյ յեգիպտոսէ: * Եւ 10
եթէ պարտեալ պարտիցի ընկեր քո
զինչ և իցէ, մի՛ մտանիցես ի տունն նո
գրաւել ինչ գրաւ: * Այլ արտաքոյ 11
կայցես. և այրն՝ առ որում պարտքն
քո իցեն՝ հանցէ զգրաւն արտաքս:
* Եթէ աղքատ իցէ այրն՝ մի՛ ագցի 12
ընդ գրաւսն իւրով: * Դարձուցա 13
նելով դարձուսցես զգրաւ նորա ընդ
մտանել արեւու. և ննջեսցէ հանդերձ
ձիւն իւրով. և օրհնեսցէ զքեզ. և
եղիցի քեզ յողորմածուն առաջի Տ՛ն
Ա՛Ծ քոյ: * Ո՛ի զլասցես վարձն 14
տնանկին՝ և զկարօտեալ յեղբարց
քոց. կամ՝ յեկաց քաղաքաց քոց.
* Այսր օրին հատուսցես զվարձս նո 15
և մի՛ մտանիցէ արեգակն ի վերայ այ
նորիկ. զի տնանկ է. և այնմ է յոյս նո
և մի՛ բողոք հարկանիցէ զքէն առ
Տ՛ր. և մի՛ լինիցի այն քեզ ի մեղս:
* Ո՛ի մեռցին հարք ընդ որդւոց. և 16
մի՛ որդիք մեռանիցին ընդ հարց.
իւրաքանչիւր ոք ի մեղս իւրում՝ մե
ռանիցի: * Ո՛ի խոտորիցես զկրաւունս 17
եկեղ. և որբոյ. և այրւոյ. և մի՛ գրաւես
ցես զձորձս այրւոյն: * Զանգի ծա 18
ռայ եիր դու յերկրին եգիպտացւոց.
և փրկեաց զքեզ Տ՛ր Ա՛Ծ քո անտի.
վասն այնորիկ ես պատուիրեմ քեզ
առնել զբանս զայս:
Եւ եթէ լինիցի հակառակութիւն 19
ի մէջ մարդկան. մատիցեն յա
տեան և դատեսցին. և արդարացուս
ցեն զարդարն. և պարտաւորեսցեն
զամպարիշտն: * Եւ եղիցի թէ ար 2
ժան իցէ զանն ամպարիշտն, տատուս
ցեն զնա առաջի դատաւորացն. և
հարցեն զնա առաջի նոյ ըստ ամպարշ
տութեանն քո: * Քառասուն 3
և այլ մի՛ յաւելցուն. ապա թէ յաւե
լուցուն հարկանել զնա աւելի քան
զայն, անարգութեամբ լիցի եղբօրն քում
առաջի քո: * Մի՛ կապեսցես զցուլ 4
եղին կալոտոյ: * Եթէ բնակեսցին 5
ցին եղբարք ի միասին, և մեռանիցի
միոք ի նոցանէ. և զաւակ ոչ իցէ նմ
մի՛ լինիցի կին մեռելոյն արտաքոյ
առն ումեք՝ որ մերձաւոր չիցէ նոր
այլ եղբայր առն իւրոյ մտցէ առ նա
և առցէ զնա իւր կնութեան. և բնակես
ցի ընդ նմա: * Եւ եղիցի մեռանելն՝ 6
որ ծնանիցի՝ հատուսցէ յանուն
վախճանելոյն՝ և մի՛ ջնջեսցի անուն
նորա յիսրայէլէ: * Եթէ ոչ կա 7
միցի այրն առնուլ զկին եղբօր իւրոյ
ելցէ կինն ի դուռն անդր առ ծերա
կոյսն՝ և ասասցէ. Ոչ կամի եղբայր
առն իմոյ կանգնել զանուն եղբօր
իւրոյ ի մէջ իւրոյ: * Եւ կոչեսցեն զնա 8
ծերակոյս քաղաքին իւրոյ, և խօսես
ցին ընդ նմա. և նա կացցէ՝ և ասիցէ.
ոչ կամիմ առնուլ զայս: * Եւ մատու 9
ցեալ կին եղբօր նմ առաջի ծերոցն,
հանցէ զկօշիկ մի յոտանէ նմ. և թքցէ
ընդ երեսս նորա. և պատասխանի տուե
եալ ասասցէ. այսպէս արասցեն առն,
որ

որ ոչ շինիցէ զտուն եղբօր իւրոյ։
*Եւ կոչեսցի անուն նորա 'ի մէջ Իսրայէ 10
լի տուն բոկացելոյ։ *Եւ եթէ կռուիցի 11
ցին արք ընդ միմեանս՝ այր ընդ եղբօր
իւրում. և մատուցեալ կին միոյ 'ի նո
ցանէ թափել զայր իւր 'ի ձեռաց այ_
նորիկ՝ որ հարկանիցէն զնա, և ձգեալ
զձեռն բուռն հարկանիցէ զերկուո_
րեաց նորա։ *Հատանիցես զձեռն. 12
և մի խնայեսցէ 'ի նա ակն քո։ *Մի 13
լինիցի յամանի քում կշիռ, և կշիռ.
մեծ կամ փոքր։ *Եւ մի լինիցի 'ի 14
տան քում չափ, և չափ. մեծ կամ
փոքր։ *Կշիռ ստոյգ և արդար եղիցի 15
քեզ. և չափ ստոյգ և արդար եղիցի
քեզ. զի բազմօրեայ եղիցիս 'ի վերայ
երկրին՝ զոր Տր Ա.Ծ քո տացէ քեզ 'ի
ժառանգութիւն։ * Զի պիղծ է Տն 16
Ա.Ծ քում ամ, որ առնէ զայն՝ և ամ
‖ Ելից. 17.8. որ առնէ զանիրաւութիւն։ *‖Յուշ լի 17
ցի քեզ՝ զոր արարն ամաղէկ. 'ի ճանա
պարհի ելանելոյն քոյ յեգիպտոսէ։
* Զիարդ ընդդէմ եկաց քեզ 'ի ճա 18
նապարհին՝ և կոտորեաց զվերջինս քո.
և զաշխատեալսն զկնի քո. և դու քաղ
ցեալ և աշխատեալ էիր. և ոչ երկեաւ
յԱ.Ծ։ *Եւ եղիցի յորժամ հանգու 19
ցանիցէ զքեզ Տր Ա.Ծ քո յամ թշնա
մեաց քոց՝ որք շուրջ զքև իցեն՝ յերկ
րին զոր Տէր Ա.Ծ քո տացէ քեզ վիճա
կաւ 'ի ժառանգութիւն, ջնջեսցես զա
նուն ամաղէկայ 'ի ներքոյ երկնից. և
մի մոռասցիս։

ԳԼ. ԻԶ.

Եւ եղիցի եթէ մտանիցես յեր_ 1
կիրն զոր Տր Ա.Ծ քո տացէ քեզ
'ի ժառանգութիւն, և ժառանգեսցես
զնա. և բնակեսցիս 'ի նմա։ *Առցես 2
զառաջինս պտղոց երկրին քոյ՝ զոր Տր
Ա.Ծ քո տացէ քեզ. և արկցես 'ի կողով.
և գնասցես 'ի տեղին՝ զոր ընտրեսցէ
Տր Ա.Ծ անուանել զանուն իւր անդ։
* Եւ երթիցես առ քահանայն. որ 3
կայցէ յաւուրսն յայնոսիկ. և ասաս_
ցես ցնա։ գոհանամ այսօր զՏէ Ա.Ծ
իմմէ. զի մտի յերկիրն զոր երդուաւ
Տր հարցն մերոց տալ մեզ։ *Եւ առ 4
ցէ քահանայն զկողովն 'ի ձեռաց քոց.
և դիցէ զնա առաջի սեղանոյ Տն Ա.Ծ
քոյ։ *Եւ պատասխանի տուեալ ա_ 5
սասցես առաջի Տն Ա.Ծ քոյ։ զասորիս
եթող հայր իմ, և էջ յեգիպտոս. և
պանդխտեցաւ անդ սակաւ ինչ թուո
ով. և եղև անդ յազգ մեծ. և բազ
մացաւ անդ յոյժ յոյժ։ *Եւ չարչա 6
րեցին զմեզ եգիպտացիք. չքնեցին
զմեզ՝ և եդին 'ի վե մեր գործ խստու
7 թեան։ *Եւ աղաղակեցաք առ Ա.Ծ
հարցն մերոց. և լուաւ Տր ձայնի մե
րում, և ետես զտառապանս մեր՝ և
զաշխատութիւն մեր և զնեղութիւնս։
8 *Եւ եհան զմեզ Տէր յեգիպտոսէ
ինքնին զօրութը մեծաւ. և հզօր ձե_
ռամբ՝ և բարձր բազկաւ. և մեծամեծ
տեսլեամբք. և նշանօք և արուեստիւք։
9 *Եւ եած զմեզ 'ի տեղիս յայս. և ետ
մեզ զերկիրս զայս. երկիր՝ որ բղխէ
10 զկաթն և զմեղր։ *Եւ արդ ածաք
բերի զպտուղ արդեանց երկրին՝ զոր
ետ ինձ Տր. երկիր՝ որ բղխէ զկաթն
և զմեղր։ և երկիր պագցես անդ առա
11 ջի Տն Ա.Ծ քոյ։ *Եւ ուրախ լիցիս
անդ յամ բարութիւն՝ զորս ետ քեզ Տր
Ա.Ծ քո՝ և տան քում. դու՝ և ղևտա_
12 ցին՝ և պանդուխտն, որ 'ի քեզ։ *Եւ
եթէ կատարեսցես տասանորդել զամ
տասանորդս երկրի քոյ, յամին երրոր
դի կրկին տասանորդեսցիս։ ղևտաց
ւոյն՝ և եկին՝ և որբոյ՝ և այրւոյ։ և կե
րիցեն 'ի քաղաքս քո՝ և յագեսցին։
13 * Եւ ասասցես առաջի Տն Ա.Ծ քոյ՝
սրբեցի 'ի բաց զսրբութիւն 'ի տանէ
իմմէ. ‖ և ետու զայն ղևտացւոյն. և ‖ Վեր.
եկին՝ և որբոյ՝ և այրւոյ. ըստ ամենայն 14. 29.
պատուիրանաց Տն Ա.Ծ՝ զորս պատ_
ուիրեալ էր ինձ. ոչ անցի զպատուի
14 րանաւ քով։ և ոչ մոռացայ։ *Եւ ոչ
կերի 'ի վիշտս 'ի նոցանէ։ և ոչ ըն_
ծայեցի 'ի նոցանէ պղծոյն. և ոչ ետու
'ի նոցանէ մեռելոյ։ լուայ ձայնի Տն
Ա.Ծ իմոյ. և արարի որպէս պատուի
15 րեցեր ինձ։ *‖Արդ՝ հայեաց 'ի սրբոյ ‖ Եսայ.
բնակութենէ քումմէ յերկնից. և օրհ_ 63.15.
նեա զժողովուրդ քո զԻսրայէլ. և զերկիրն՝ Բարուք.
զոր ետուր նոցա. որպէս երդուար հարցն 2.16.
մերոց տալ մեզ՝ զերկիր՝ որ բղխէ
16 զկաթն և զմեղր։ * Յաւուր յայնմիկ
պատուիրեաց մեզ Տր Ա.Ծ մեր՝ առ_
նել զամ իրաւունս զայսոսիկ՝ և զդա
տաստանս. և պահեսջիք՝ և արասջիք
զսոսա յամ սրտէ ձերմէ. և յամենայն
17 անձնէ ձերմէ։ *Զտր Ա.Ծ քո ընտրեա
այսօր լինել քեզ Ա.Ծ, և գնասջիք 'ի
ճանապարհս նր. և պահեսջիք զիրաւ
ունս և զդատաստանս նր՝ լսել ձայնի
18 նր։ *‖Եւ Տր ընտրեաց զքեզ այսօր ‖ Վեր.
լինել նմա ժողովուրդ սեպհական՝ 7. 6.
որպէս և խոստացաւ քեզ. պահել զամ
19 պատուիրանս նորա։ *Եւ լինել քեզ
'ի վեր քան զամ ազգս. որպէս արար
զքեզ անուանի՝ և բարգաւաճ, և փա
ռաւոր՝ լինել քեզ ժողովուրդ սրբ Տն
Ա.Ծ քում. որպէս և խոստացաւ քեզ։

ԳԼ. ԻՆ.

Ա Ն պատուիրեաց մնաց և ծերա- 1
կոյան ՅԼի՝ և ասեն։ պահեցէք
զամ պատուիրանս՝ զորս ես պատուի
րեմ ձեզ այսօր։ *Եւ եղիցի յաւուր 2
յորում անցանիցես ընդ յորդանան,
յերկիրն զոր Տ՚Ը՚Ծ քո տացէ քեզ՝
կանգնեսցես անդ քարինս մեծամեծս.
և բռեսցես զնս բոով։ *Եւ գրեսցես 3
՚ի վէր քարանցն զամ պատգամն օրի-
նացս այսոցիկ. յորժամ անցանիցէք
ընդ յորդանան. ՚ի ժամանակի իբրև
մտանիցէք յերկիրն՝ զոր Տէր Ը՚Ծ
հարցն ձերոց տացէ քեզ՝ երկիր, որ
բղխէ զկաթն և զմեղր։ ոպ խոստա-
ցաւ Տ՚Ը՚Ծ հարց քոց տալ քեզ։ *Եւ 4
եղիցի՝ յորժամ անցանիցէք ընդ յոր-
դանան, կանգնեսջիք զքարինսն զայ
նոսիկ՝ զորս ես պատուիրեմ ձեզ այ-
սօր, ՚ի լերինն գերզաւ. և բռեսջիք զնս
Ելից. բոով։ *Եւ շինեսցես անդ զսեղան 5
20. 25. Տ՚Ն Ը՚Ծ քոյ. սեղան ՚ի քարանց. և մի
Յեսու. Հպեսցի ՚ի նոսա երկաթ։ *Ւոլորակ 6
8.31. վիմօք շինեսցես զսեղանն Տ՚Ն Ը՚Ծ քոյ.
և հանցես ՚ի վէր նորա ողջակէզս Տ՚Ն
Ը՚Ծ քումմ։ *Եւ զենցես անդ զզե- 7
նումն փրկութեանն Տ՚Ն Ը՚Ծ քումմ. և կե-
րիցես, և յագեսցիս անդ. և ուրախ լի
ցիս առաջի Տ՚Ն Ը՚Ծ քոյ։ *Եւ գրես 8
ցես ՚ի վէր քարանցն զամ զօրինս յայտ
նապէս յոյժ։ *Եւ խօսեցաւ Մնաց՝ 9
և քահանայքն՝ և ղևտացիք՝ ընդ ամ
ԼԻի՝ և ասեն։ լռեա լեր՝ և լուր ԻՍԼ.
յաւուր յայսմիկ եղեր ժողովուրդ Տ՚Ն
Ը՚Ծ քոյ։ *Եւ լսիցես ձայնի Տ՚Ն Ը՚Ծ 10
քոյ. և արասցես զամ պատուիրանս
նորն և զիրաւունս նոր՝ զորս ես պատուի
րեմ քեզ այսօր։ *Եւ պատուիրեաց 11
Մնաց ժողովրդեանն յաւուր յայնմիկ՝
և ասէ։ *Որք կացցեն օրհնել ՀԺՀ- 12
ղովուրդն ՚ի լերինն գարիզին յորժամ
անցանիցէք ընդ յորդանան՝ Շմաւօն.
զԼԻ՝ Յուդայ. Իսաքար. Յովսէփ. և Բե-
նիամին։ *Եւ սոքա կացցեն ՚ի վէրայ 13
անիծից, ՚ի լերինն գերզաւ՝ Ռուբէն.
Գադ. ասեր. զաբուղոն. Դան. և Նեփ
Ղևտ. թաղիմ։ *Եւ պատասխանի տուեալ 14
9.13. ղևտացւոցն՝ ասիցեն մեծաձայն ամ
ԼԻի։ *Անիծեալ ԼԻցի մարդն՝ որ ա- 15
նասցէ դրօշեալ և ձուլածուղի պիղծ
է Տ՚Ն ձեռագործ Հարտարի, և դնիցէ
զնա ՚ի թաքստեան։ և պատասխանի
տուեալ ժողովրդեանն ասասցեն՝ և
ղևտացիք։ *Անիծեալ՝ որ անարգեսցէ 16
զՀայր իւր՝ կամ զմայր իւր։ և ասաց
ցէ ամ ժողովրդին, եղիցի։ *Անի- 17
ծեալ՝ որ խոտորիցէ զիրաւունս եկեղ-
և որբոյ՝ և այրւոյ։ և ասասցէ ամ ժո
ղովրդին. եղիցի։ *Անիծեալ՝ որ 18
փոխեսցէ զսահմանս ընկերի իւրոյ։
և ասասցէ ամ ժողովրդին՝ եղիցի։
*Անիծեալ՝ որ մոլորեցուսցէ զկոյրն 19
՚ի ՃանապարՀէ. և ասասցէ ամ ժողո
վուրդն՝ եղիցի։ *Անիծեալ՝ որ ննջէս 20
ցէ ընդ կնոջ Հօր իւրոյ. զի յայտնեաց
զաներևոյթս Հօր իւրոյ. և ասասցէ
ամ ժողովուրդն՝ եղիցի։ *Անիծեալ՝ 21
որ ննջեսցէ ընդ ամենայն անասնոյ.
և ասասցէ ամ ժողովուրդն՝ եղիցի։
*Անիծեալ՝ որ ննջեսցէ ընդ քեռ իւր 22
ուս, որ առ՚ի Հօրէ իցէ. կամ առ՚ի մօ
րէ. և ասասցէ ամ ժողովուրդն՝ եղի-
ցի։ *Անիծեալ՝ որ ննջիցէ ընդ զո- 23
քանչի իւրոյ. և ասասցէ ամ ժողո
վուրդն՝ եղիցի։ *Անիծեալ՝ որ Հար 24
կանէ զընկեր իւր ՚ի ՆենգուԹ՚Ը. և ա
ասասցէ ամենայն ժողովուրդն՝ եղիցի։
*Անիծեալ՝ որ առնուցու զկաշառս 25
Հարկանել զանձն արեան արդարոյ. և
ասասցէ ամ ժողովուրդն՝ եղիցի։
*Անիծեալ ամ մարդ՝ որ ոչ կացցէ ¶ Գաղ.
յամենայն բանս օրինացս այսոցիկ՝ 3.10.
առնել զսոսա. և ասասցէ ամենայն
ժողովուրդն՝ եղիցի։

ԳԼ. ԻԸ.

Ա Ն ¶ եղիցի եԹէ լսելով լսիցէք ¶ Ա. Թես.
ձայնի Տ՚Ն Ը՚Ծ մերոյ, զգուշա- 26.3
նալ և առնել զամ պատուիրանս նո՛ր,
զորս ես պատուիրեմ ձեզ այսօր, տա
ցէ զքեզ Տ՚Ը՚Ծ քո ՚ի վեր քան զամ
աղգս երկրի։ *Եւ եկեսցեն ՚ի վերայ 2
քո ամ օրհնուԹիւնս այսոքիկ. և գա-
ցեն զքեզ՝ եԹէ լսիցես ձայնի Տ՚Ն Ը՚Ծ
քոյ։ *Օրհնեալ լիցիս դու ՚ի քաղա 3
քի՝ և օրհնեալ յանդի։ *Օրհնեալ 4
լիցին ծնունդք որովայնի քոյ. և արդիւն
երկրի քոյ. անդեայք արջառոց քոց.
և հօտք ոչխարաց քոց։ *Օրհնեալ 5
լիցին շտեմարանք քո. և համբարք քո
*Օրհնեալ լիցիս դու յերթանել և ՚ի 6
մտանել քումմ։ *Ետանեսցէ Տ՚Ը՚Ծ 7
քո զթշնամիս քո՝ և զհակառակորդս
քո խորտակեալս առաջի երեսաց քոց.
ընդ մի ճանապարհ ելցեն առ քեզ, և
ընդ եօԹն ճանապարհ փախիցեն յե-
րեսաց քոց։ *Առաքեսցէ Տ՚Ը՚Ծ 8
զօրհնուԹիւն ՚ի շտեմարանս քո՝ և
յամ ինչ ուր մխեսցես զձեռն քո. և
երկրին՝ զոր Տ՚Ը՚Ծ քո տացէ քեզ։
*Կանգնեսցէ զքեզ Տ՚Ը՚Ծ քո իւր 9
ժողովուրդ սո՛ր. ոպ երդուաւ Հարցն
քոց. եԹէ լսիցես ձայնի Տ՚Ն Ը՚Ծ մե
րոյ՝ և գնասցես ՚ի ճանապարՀս նո՛ր։
*Եւ տեսցեն ամ ազգք երկրի՝ զի ա- 10
նուն

նոյն Տ֊ն կոչեցեալէ՝ի վէր քո։ և երկի
ցեն՝իքէն։ *Եւ բազմացուսցէ զքեզ 11
Տ֊ր Ա֊ծ քո՝ի բարութի՝ծննդեամբք
սրովայնի քոյ ։ և արդեամբք երկրի
քոյ ։ և ծննդեամբք խաշանց քոց ։՝ի
վէր երկրին զոր երդուաւ Տ֊ր հարցն
քոց տալ քեզ ։ ըստ աւուրց երկնից՝ի
վէր երկրի։ *Բացցէ քեզ Տ֊ր զդանձան 12
բարութե իւրոյ զերկինս ։ տալ անձ֊
րեւ՝ի ժամանակի իւրում երկրին քոյ։
օրհնել զամ գործս ձեռաց քոց։ և տա
ցես փոխ ազգաց բազմաց ։ և դու ոչ
առնուցուս փոխ։ *Եւ իշխեսցես ազ 13
գաց բազմաց ։ և քեզ մի՛ իշխեսցեն ։
հաստատեսցէ զքեզ Տ֊ր Ա֊ծ քո՝ի
գլուխ, և ոչ՝ի վերջ։ և եղիցես՝ի վեր,
և ոչ՝ի խոնարհ ։ եթէ լսիցես պատ
ուիրանաց Տ֊ն Ա֊ծոյ ։ զորս ես պատ
ուիրեմ քեզ այսօր պահել՝ և առնել։
*Եւ ոչ անցանիցես զամ բանիւք՝ զոր 14
ես պատուիրեմ քեզ այսօր՝ ոչ յաջ և
ոչ յահեակ ։ երթալ զհետ աստուածոց
Ա֊ղ օտարաց՝ պաշտել զնոսա ։ *Եւ եղի 15
26. 14. ցի եթէ ոչ լսիցես ձայնի Տ֊ն Ա֊ծոյ,
Ա֊ղբոյ. պահել և առնել զամ՝ պատուիրանս
2.17. նի՝ զորս ես պատուիրեմ քեզ այսօր ,
Ա֊ռաքս. եկեսցեն՝ի վէր քո անէծքս այսոքիկ՝ և
1.20. հասցեն քեզ ։ *Անիծեալ լինիցիր դու 16
Ա֊ղաք. 'ի քաղաքի՝ և անիծեալ յանդի ։ *Անի 17
2. 2. ծեալ շտեմարանք քո՝ և համբարք քո
*Անիծեալ ծնունդք որովայնի քոյ՝ 18
և արդիւնք երկրի քոյ ։ և անդեայք
արջառոց քոց՝ և հօտք ոչխարաց քոց ։
*Անիծեալ լինիցիր դու ՝ի մտանել՝ և 19
անիծեալ յելանել ։ *Առաքեսցէ քեզ 20
Տ֊ր զնուաղութի՝ և զկարօտութի և
ծախս՝ի վէր ամենայն որ մեսցես զձեռն
քո ։ և զոր ինչ առնիցես ։ մինչև սա
տակեսցէ զքեզ Տ֊ր ։ մինչև կորուսցէ
զքեզ վաղվաղակի վասն չարութե գնա
ցից քոց՝ զի թողեր դու զիս ։ *Խան 21
ձեցուսցէ Տ֊ր՝ի քեզ մահ ։ մինչև սա
տակեսցէ զքեզ Տ֊ր յերկրէն՝ յոր դու
մտանելոց ես ժառանգել զնա։
*Հարցէ զքեզ Տ֊ր տարակուսանօք ։ 22
և ջերմամբ ։ և սաստօք ։ և խեթիւք
և երկիւղիւ ։ և խորշակաւ ։ և դունով ։
և հալածեսցեն զքեզ մինչև կորուս֊
ցեն զքեզ ։ *Եւ եղիցին՝ի վէր գլխոյ 23
քոյ երկինք պղնձի ։ և երկիր՝ի ներքոյ
քո երկաթի ։ *Տացէ Տէր զանձրև 24
երկրի քոյ փոշի ։ և հող յերկնից իջցէ
՝ի վէր քո ։ մինչև սատակեսցէ զքեզ՝
և կորուսցէ զքեզ։ *Տացէ զքեզ Տ֊ր 25
՝ի պարտութիւն առաջի թշնամեաց
քոց ։ և ընդ մի ճանապարհ ելցես՝ի
վերայ նոցա ։ և ընդ եօթն ճանապարհ
փախիցես յերեսաց նոցա ։ և եղիցիս

ցրուեալ ընդ ամ թագաւորութիւնս 26
երկրի։ *Եւ եղիցին մեռեալք ձեր
կերակուրք թռչնոց երկնից՝ և գազա
նաց երկրի ։ և ոչ ոք իցէ որ ընդոստու 27
ցանիցէ։ *Հարցէ զքեզ Տ֊ր կեղով
եգիպտացւոյն ։ և թանչիւք ։ և զայրա
ցեալ քոսով՝ և ջրով ։ զի մի կարասցես 28
բժշկիլ։ *Հարցէ զքեզ Տ֊ր յիմարու
թիւ ։ և շլացուցանիցէ մտաց։
*Եւ խարխափեսցես՝ի միջօրէի որ 29
պէս խարխափիցի կոյր՝ի խաւարի։ և
թէ ոչ ուղղեսցես զճանապարհս քո ։
և եղիցիս յայնժամ զրկեալ և յափշտա
կեալ զամ աւուրս ։ և ոչ ոք իցէ՝ որ
օգնիցէ քեզ։ *Ընտրեսցես կին՝ և 30
այլ այր հանիցէ զնա՝իքէն ։ շինեսցես
տուն, և մի բնակեսցիս՝ինամա ։ տն֊
կեսցես զայգի ։ և մի կթեսցես զնա։
*Ընձառ քո սպանեալ առաջի քո ։ և 31
մի կերիցես՝ի նմանէ ։ էշ քո յափշտա
կեալ՝իքէն ։ և մի դարձցի առ քեզ ։
ոչխար քո մատնեալ թշնամեաց քոց ։
և ոչ ոք իցէ՝ որ օգնիցէ քեզ։ *Ուս 32
տերք քո՝ և դստերք քո մատնեալք
ազգի օտարի ։ և աչք քո կկոցեալ հայի
ցին՝ի նոսա ։ և ոչ հասանիցի ձեռն քո
*Օքերս երկրի քոյ՝ և զամ վաս 33
տակս քո կերիցէ ազգ , զոր դու ոչ գի
տիցես ։ և եղիցիս զրկեալ և խորտա
կեալ զամ աւուրս ։ *Եւ եղիցիս յի 34
մարեալ վասն տեսլեանց աչաց քոց՝
զոր տեսանիցես։ *Հարցէ զքեզ Տ֊ր 35
չարչար կեղով՝ի ծունկս և՝ի սրունս ։
և ոչ կարասցես բժշկիլ՝ ՝ի թաթիւ
ոտից քոց մինչև ցգլուխդ քո։ *Տարցէ 36
զքեզ Տ֊ր՝ և վիշխանսն՝ զորս կացու֊
ցես ՝իվէր քո՝ յազգս զորս ոչ գիտի֊
ցես դու՝ և ոչ հարքդ քո ։ և պաշտեսցես
անդ զաստուածս օտարս ։ զփայտե
ղենս և զքարեղենս։ *Եւ եղիցիս յա 37
ռակ՝ և ՝ի ցոյց՝ և ՝ի զրոյց՝ ՝ի մէջ ամ
ազգաց՝ յորս տանիցի զքեզ Տ֊ր անդր։
*Սերմն բազում հանցես յանդի , և Մ֊է֊ա
սակաւ ժողովեսցես՝ զի կերիցէ զայն 6.15.
մարախ։ *Այգիս տնկեսցես և գոր Ա֊գէ֊այ
ծեսցես , և գինի ոչ արբցես ։ և մի ու 1. 6.
րախ լինիցիս ՝ինամանէ ։ զի կերիցէ
զայն որդն ։ *Եւ եղիցին ձիթենիք
յամ սահմանս քո , և իւղով ոչ օծցիս։
զի թափեսցին ձիթենիքդ քո։ *Ուս
տերս, և դստերս ծնցիս , և ոչ լինիցին
քո՝ քանզի երթիցեն ՝ի գերութի։
*Օամծառատունկ քո՝ և զարդիւնս
երկրի քոյ հարցէ թրթուր։ *Այն որ 43
՝իքեզ իցէ , ելցէ քան զքեզ ՝ի վեր՝ի
վեր ։ և դու իջցես ՝իվայր ՝իվայր։
*Այս տացէ քեզ փոխ , և դու ոչ 44
տացես նմա փոխ։ նա եղիցի գլուխ։ և

և դու եղիցես վերջ ։ * Նա եկեսցեն 45
'ի վերայ քո անեծքս այսոքիկ՝ և հալա
ծեսցեն զքեզ. և հասցին քեզ մինչև
սատակեսցեն զքեզ՝ և մինչև կորուս-
ցեն զքեզ. զի ոչ լուար ձայնի Տ֊Ն Ա֊Յ
քոյ. պահել զպատուիրանս նորա և
զկրաւունս նորա՝ զորս պատուիրեաց
քեզ ։ * Նա եղիցին 'ի քեզ նշանք և 46
արուեստք. և 'ի զաւակի քում մինչև
ց յաւիտեան ։ * Փոխանակ զի ոչ պաշ 47
տեցեր զՏ֊Ն Ա֊Ծ քո ուրախութիւք՝ և
ՀՀմարտիւ սրտիւ ։ վասն բազմութեն
իրաց ամենեցուն ։ * Պաշտեսցես զՔ 48
թշնամիս քո՝ զորս առաքեսցէ 'ի վէր
քո Տ֊Ր. 'ի սով՝ և 'ի ծարաւ՝ և 'ի մեր-
կութիւն՝ և 'ինուազութեն ամի. և դիցէ
զանուր երկաթի 'ի պարանոցի քում
մինչև սատակեսցէ զքեզ ։ * Ա֊ծցէ 'ի 49
վերայ քո զազգ 'ի հեռաստանէ 'ի ծա
գաց երկրի իբրև զթռչնոյ արծուոյ.
ազգ որոյ ոչ լսիցես զձայն նո֊ ։ * Ա֊զգ 50
ժպիրհ երեսօք. որ ոչ ապառիկ երե
սաց ծերոյ. և ոչ ողորմիցի տղայոյ ։
* Նա կերիցէ զծնունդս խաշանց քոց. 51
և զարդիւնս երկրի քոյ. և ոչ թողու
ցու քեզ ցորեան. գինի. իւղ. զան-
դեսս արջառոց քոց՝ և զհօտս ոչխա-
րաց քոց, մինչև կորուսցէ զքեզ ։
* Նա նեղեսցէ զքեզ յամենայն քաղաքս քո, 52
մինչև կործանեսցին պարիսպք քո
բարձրագեալք՝ և ամուրք՝ յորս դուն
յուսացեալ էիցես յամենայն երկրին քում՝
և նեղեսցէ զքեզ յամենայն քաղաքս քո՝
զորս եառ քեզ Տ֊Ր Ա֊Ծ քո ։ * Նա ‖ կե- 53
րիցես զծնունդս որովայնի քոյ ։ զմա ‖ Ղեւտ. 4.10.
ուստերայ քոց և դստերայ քոյ՝ զորս Երեմ. 2. 3.
եառ քեզ Տ֊Ր, յանձկութեն քում, և 'ի
նեղութեն քում, որով նեղեսցէ զքեզ
թշնամին քո ։ * Կիրդն որ 'ի քեզ՝ և 54
փափուկն յոյժ՝ չարաչեսցէ չեղբայր
իւր և 'ի կին ծոցոյ իւրոյ. և 'ի մնա-
ցեալ որդիսն՝ որք իցեն նմա ։ * Ցաղ 55
միւմ 'ինոցանէ 'ի մարմնոց որդւոց
իւրոց, զորոց ուտիցէ. վասն չմնալոյն
նմա ինչ՝ յանձկութեն քում և 'ինեղու
թեն, որով նեղիցեն զքեզ թշնամիքն
քո յամենայն քաղաքս քո ։ * Նա գիրդն որ 56
'ի քեզ՝ և փափուկն յոյժ, որոյ ոչ իցէ
ոտին իւրոյ առեալ զգիրկ դնալոյ 'ի
վերայ երկրի՝ վո֊ փափկութեն իւրոյ
և դրկութեն, չարաչեսցէ յայր ծոցոյ
իւրոյ. և յորդւոցն իւր և 'ի դստերս։
* Նա զաղան ելեալ 'ի միջոյ իւրմէ, և 57
զծնունդս՝ զոր ծնանիցի՝ խորովեսցէ
'ինոցանէ՝ և կերիցէ. և վո֊ նուազու
թեն յամս թաքուսցէ յանձկութենն
և 'ինեղութեն. որով նեղիցէ զքեզ
թշնամին յամենայն քաղաքս քո։ * Նա ե- 58

թե ոչ լսիցէք առնել զամենայն օրէն
նացս այսոցիկ, զգրեալս 'ի գիրս յայս
միկ, երկնչել 'ի պատուականն և 'ի սքան
59 չելի անուանէն Տ֊Ն Ա֊Յ քոյ ։ * Նորա
նշան արասցէ Տ֊Ր զՀարուածս քո. և
զՀարուածս զաւակի քոյ. զՀարուածս
մեծամեծս և զարմանալիս. և զցաւս
60 չարաչարս և զկարևորս ։ * Նա ածցէ
'ի վէր քո զամենայն ախտս չարաչարս
զեգիպտացւոցն՝ յորմէ սոսկայիրն յե
61 բեսցէ նոցա. և մնասցին 'ի քեզ ։ * Նա
զամ Հիւանդութիւնս. և զամ Հարու-
ածս գրեալս 'ի գիրս օրինացս այսո-
ցիկ ածցէ Տ֊Ր 'ի վէր քո՝ մինչև սատա
62 կեսցէ զքեզ ։ * Նա մնասջիք թիւով
սակաւք. փոխանակ զի եիք դուք իբրև
զաստեղս երկնից բազմութիւք. և ոչ
63 լսեսցէք ձայնի Տ֊Ն Ա֊Յ ձերոյ ։ * Նա
եղիցի ոյզ ուրախ եղև 'ի ձեզ Տ֊Ր բա-
րի առնել ձեզ, և բազմացուցանել
զձեզ՝ նոյնպէս ուրախ լինիցի Տ֊Ր 'ի
ձեզ՝ սատակել զձեզ. և բարձջիք յերկ
րէն՝ յոր մտանելոց էք ժառանգել
64 զնա ։ * Նա սրոնէսցէ զքեզ Տ֊Ր Ա֊Ծ
քո ընդ ամ ազգս. 'ի ծագաց երկրի
մինչև 'ի ծագս երկրի. և ծառայես
ցես անդ աստուածոց օտարաց. փայտից
և քարանց. զորս ոչ գիտէիր դու՝ և
65 հարք քո ։ * Այլև յազգն յայնոսիկ
ոչ հանգուսցես զքեզ. և ոչ լինիցի կայ
թ անթից ոտից քոց. և տացէ քեզ սիրտ
տրտմեալ. և աչս սրեալս՝ և անձն
66 հարեալ ։ * Նա եղիցին կեանք քո կա-
խեալ առաջի աչաց քոց. և զարհու-
րեսցիս զցայգ և զգերեկ. և ոչ հաւա
տասցես կենացն քոց։ * Ընդ առաւօտս
ասիցես՝ թէ երթ լինիցի երեկոյ. և
ընդ երեկոյս ասիցես՝ թէ երթ լինիցի
առաւօտ. 'ի զարհուրանաց սրտի քոյ
երկնչեսցես. և 'ի տեսլեանց աչաց քոց
68 զոր տեսանիցես ։ * Նա դարձուսցէ
զքեզ Տ֊Ր անդրէն յեգիպտոս նաւօք.
և ընդ ճանապարհ ընդ նոյն ոչ յաւել
սիցէ տեսանել զնա. և վաճառիջիք
անդ թշնամեաց ձերոց 'ի ծառայս և
յաղախնայս. և ոչ ոք իցէ՝ որ գնիցէ։

ԳԼ։ Ի֊Թ։

1 Ա֊յս բանք են ուխտին՝ զոր պատ
ուիրեաց Տ֊Ր մովսէսի հաստատել
որդւոցն Իսրայէլի յերկրին Մովաբու. թող
զայն ուխտ՝ զոր ուխտեաց նոքա 'ի քո֊
2 րեբ ։ * Նա կոչեաց մովսէս զամենայն
որդիսն Իսրայէլի և ասէ ցնոսա. ‖ դուք ‖ Ելից
ձեզէն տեսիք զամենայն՝ զոր արար Տ֊Ր 19.4.
յեգիպտոս առաջի ձեր. ը փարաւոն
և ընդ ծառայս նորա՝ և ընդ ամ եր
3 կիր նո֊ ։ * Ո֊փորձանսն մեծամեծս՝
զորս

զորս տեսին աչք ձեր ։ զնշանսն և զար
ուեստս մեծամեծս զայնոսիկ՝ զձեռն 4
հզօր ։ և զբազուկ բարձր ։ * Եւ ոչ եթ
ձեզ Տ՚Ն ձեր զսիրտ գիտելոյ՝ և աչս
տեսանելոյ ։ և ականջս լսելոյ ։ մինչև
|| Ալ էր· ցայսօր ։ * || Եւ եհաց զձեզ զքառա- 5
8. 2. սուն ամ ընդ անապատն ։ ոչ հնացան
ձորք ձեր ։ և ոչ մաշեցան կօշիկք յո-
տից ձերոց ։ * Հաց ոչ կերիք ։ և գի- 6
նի և գբի ոչ արբիք ։ զի ծանիցիք թէ
Ենթակ ես եմ Տ՚Ն ձեր ։ * Եւ եկիք մինչև 7
|| Ա Թագ· ՚ի տեղիս յայս ։ || և ել սեհօն թագաւոր
21. 33. Ալ էրն· Հեսբոնայ ։ և ովգ թագաւոր բասա-
3. ՚1. նու ընդդեմ մեր պատերազմաւ ։ և
հարաք զնոսա ։ * Եւ առաք զերկիրն նոցա· 8
և ետուաք զնա ՚ի ժառանգութիւն ռուբէ
նի՝ և գադայ՝ և կիսոյ ցեղին մանասէի ։
* Եւ զգուշասջիք առնել զիմ բանս 9
ուխտիս այսորիկ· զի խնդասցիք զիմ
զոր առնիցէք ։ * Դուք կայք աւադիկ 10
այսօր ամենեքեան առաջի Տ՚Ն Ա՚Ի ձե
րոյ ։ ցեղապետք ձեր ։ և ծերակոյտք
ձեր ։ և դատաւորք ձեր ։ և առնիս
դպիրք ձեր։ և ամ այր իսրայէլի ։ * Եւ 11
կանայք ձեր ։ և որդիք ձեր ։ և եկն, որ
՚ի միջի ձերում բնակի՝ և՚ի փայտա-
կոտորէ ձերմէ մինչև ցջրբեր ձեր ։
* Յանցանել ձեր զուխտիւ Տ՚Ն Ա՚Ի 12
քոյ. և զնդովիւք նորա՝ զոր Տ՚Ն Ա՚Ծ քո
ուխտ քեզ այսօր ։ * Օի կացուսցէ 13
զքեզ իւր ժողովուրդ ։ և նա եղիցի
քեզ Ա՚Ծ ոպ և ասաց ։ և զոր օրինակ
երդուաւ Հարցն քոց՝ աբրահամու՝ և
իսահակայ՝ և յակոբու ։ * Եւ ոչ ձեզ 14
միայն ուխտեմ ես զուխտս զայս ։ և
զնզովս զայսոսիկ ։ * Եւ յոմ որոց աստ 15
ընդ մեզ իցեն այսօր առաջի Տ՚Ն Ա՚Ի
մերոյ ։ և որոց չիցեն ընդ մեզ այսօր ։
* Օի դուք ինքնին գիտէք՝ ոպ բնա- 16
կեցայք յերկրին եգիպտացւոց ։ և ոպ
անցայք ընդ մէջ ազգացն ։ ընդ որս
անցիք դուք ։ * Եւ տեսիք զգարշե- 17
լիս նոցա և զկուռս իւրեանց՝ զփայտն
և զքար ։ զարծաթն և զոսկի ։ որ էր
առ նոսա ։ * Մի ոք իցէ ՚ի ձէնջ այր՝ 18
կամ կին՝ կամ ազգ՝ կամ ցեղ՝ որոյ
միտք իւր խոտորեալ իցեն ՚ի Տ՚Ն Ա՚Ի
իւրմէ, երթալ պաշտել զդիս ազգացն
այնոցիկ ։ մի ոք իցէ ՚ի ձէնջ արմատ
՚ի վեր բուսեալ դառնութիւն և դա-
ժանութիւն ։ * Եւ եղիցի՝ եթէ լսիցէ 19
զպատգամն նզովիցս այսոցիկ ։ և խո-
հասցի ՚ի սրտի իւրում՝ և ասիցէ, քաւ
ութիւն եղիցին ինձ, զի եթէ ես ըստ
մելորութիւն սրտի իմոյ գնայցեմ ։ զի
մի կորուսանիցէ մեղաւորն զանմեղն ։
* Եւ ոչ հաձեսցի Ա՚Ծ ներել նմա ։ 20
այլ յայնժամ բորբոքեսցի բարկութի-
ն դ

նորա և նախանձ նորա՝ ՚ի մարդն յայն
և հասցին նմա ամենայն նզովք ուխ
տիս այսորիկ ։ գրեալք ՚ի գրքի օրի-
նացս այսոցիկ ։ և ընկեսցէ Տ՚Ն զանուն
21 նորա ՚ի ներքոյ երկնից ։ * Եւ զատուս
ցէ զնա Տ՚Ն ՚ի չարիս յամենայն ցե-
ղսն իսրայէլի ։ ըստ ամ նզովից ուխտիս գրեցելոյ
22 ՚ի գիրս օրինացս այսոցիկ ։ * Եւ ասէ-
ցեն ազգքն միւս՝ և որդիքն ձեր՝ որք
յարիցեն յետ ձեր ։ և օտարոտին, որ
գայցէ յերկրէ հեռաստանէ՝ տեսանի
ցեն զվարուճածս երկրին այնորիկ ։ և
զախտս նո՚ զոր առաքեաց Տ՚Ն ՚ի վե՚
23 նո՚ ։ * Օծծումբն և զաղն այրեցեալ
յամի ՚ի հող նո՚, մի սերմանեսցի՝ և մի
բուսցի ։ և մի ելցէ ՚ի վերայ նորա ամ || Ննդ·
դեղ դալար ։ || ոպ կործանեցան սոդոմ 19. 24.
և գոմոր ։ ադմայ և սեբոյիմ, զորս
կործանեաց Տ՚Ն սրտմտութե՚ և բար
24 կութե՚ ։ * Եւ ասասցեն ամ ազգքն ։
|| ընդէր արար Տ՚Ն այնպես երկրին || 3. Թագ·
այնմիկ ։ զինչ իցէ սրտմտութե՚ մեծ 9. 8.
25 բարկութեն այնորիկ ։ * Պատասխանի Երեմ·
տացեն՝ և ասասցեն՝ զի թողին զուխտն 22. 8.
Ա՚Ի Հարց իւրեանց ։ զոր ուխտեաց
Հարցն նո՚ ։ յորժամ հանն զնա յերկրէն
26 եգիպտացւոց ։ * Եւ գնացեալ պաշ
տեցին զաստուածս օտարս ։ և երկիր
պագին նոցա՝ զոր ոչն ձանաչէին ։ և
27 ոչ բաժանեաց նոքա ։ * Եւ բարկացաւ
Տ՚Ն սրտմտութե՚ ՚ի վե՚ երկրին այնո-
րիկ ։ ածել ՚ի վե՚ նորա զամ նզո-
վից ուխտիս՝ գրեցելոյ ՚ի մատեանի օրի
28 նացս այսոցիկ ։ * Եւ երար զնա Տ՚Ն
յերկրէ իւրեանց՝ բարկութե՚ և սրտ
մտութե՚ և զայրացմամբ մեծաւ յոյժ ։
և մերժեաց զնա յերկիր օտար՝ մինչև
29 ցայժմ ։ * Ծածուկքն Տ՚Ն Ա՚Ի մեր
ում, և յայտնիքն մեզ՝ և որդւոց մե-
ծոց յաւիտեան՝ առնել զամ պատ-
գամս օրինացս այսոցիկ ։

Գ Լ։ Ի։

1 Եւ եղիցի եթէ հասանիցեն ՚ի վե՚
քո ամ պատգամքս այսոցիկ ։
կամ օրհնութի՚ կամ անէծք՝ զորս
ետու առաջի երեսաց քոց, և ընկալցիս
՚ի սիրտ քո ընդ ամ ազգսն՝ ուր ցրուես
2 ցէ զքեզ Տ՚Ն Ա՚Ծ քո անդ ։ * Եւ դարձ
ցիս առ Տ՚Ն Ա՚Ծ քո ։ և լսիցես ձայնի
նո՚ ըստ ամ՚ զոր ես պատուիրեմ քեզ
այսօր ։ յամ սրտիւ քումմէ՝ և յամենայն
3 անձնէ քումմէ ։ * Եւ բժշկեսցէ Տ՚Ն
զմեղս քո ։ և ողորմեսցի քեզ ։ և գայ
ձեալ ժողովեսցէ զքեզ յամ ազգաց՝
4 ուր ցրուեաց զքեզ Տ՚Ն անդր ։ * Եթէ
իցէ ցրումն քո՚ ՚ի ծագս երկրի մինչև
՚ի ծագս երկրի՝ և անտի ժողովեսցէ
զքեզ

Բ.Մակ. զքեզ Տր Ած քո ։ * ‖ Եւ անտի առցէ 5
1.29. և զքեզ Տէր Ած քո . և ածցէ զքեզ Տր
2.18. Ած քո յերկիրն՝ զոր ժառանգեցին
հարքն քո . և ժառանգեսցես զնա՝ և
բարի եղիցի քեզ . և բազմապատիկ
արասցէ զքեզ քան զհարսն քո ։ * Եւ 6
Նորէես պարուրեսցէ Տր զսիրտ քո և զսիրտ
ցէ զաւակի քոյ . սիրել զՏր Ած քո յամ
սրտէ քումմէ՝ և յամ անձնէ քումմէ .
զի կեցցես դու և զաւակ քո ։ * Եւ տա 7
ցէ Տէր Ած քո զնզովս զայս 'ի թշնա
միս քո . և յատելիս քո՝ որք հալածե_
ցինն զքեզ ։ * Եւ դու դարձցիս և լուի 8
ցես ձայնի Տն Այ քոյ ։ և արասցես
զպատուիրանս նորա՝ զոր ես պատուի
րեմ քեզ այսօր ։ * Եւ աճեցուսցէ 9
զքեզ Տր Ած քո յամ գործս ձեռաց
քոց՝ ծննդովք որովայնի քոյ . և ար_
դեամբք երկրի քոյ . և ծննդովք ա_
նասնոց քոց . զի դարձցի 'ի քեզ Տր Ած
քո՝ ուրախ լինել քեւ 'ի բարութիւն՝ որպէս
ուրախ եղև հարբքն քովք ։ * Եթէ 10
լուիցես ձայնի Տն Այ քոյ , պահել
զամ պատուիրանս նր և զիրաւունս
նորա , և զդատաստանս նր , զգրեալս
'ի գրի օրինացս այսոցիկ ։ եթէ դարձ
ցիս առ Տր Ած քո յամ սրտէ քումմէ
և յամենայն անձնէ քումմէ ։ * Զի 11
պատուիրանս այս՝ զոր ես պատուի_
րեմ քեզ այսօր, ոչ ծանրաբեռն ինչ է.
և ոչ հեռի 'ի քէն ։ * Ոչ յերկինս՝ թէ 12
Հռոմ. ասիցես ‖ ով ելանիցէ մեզ յերկինս՝
10.6. և առնուցու զնա և լուիցուք՝ և արաս
ցուք ։ * Եւ ոչ յայնկոյս ծովու է՝ թէ 13
ասիցես՝ ով անցանիցէ յայնկոյս ծո_
վու՝ և առնուցու մեզ զնա . և լսելի
արասցէ մեզ՝ և արասցուք ։ * Մերձ է 14
բանն առ քեզ յոյժ , 'ի բերան քո և 'ի
սրտի քում . և 'ի ձեռս քո է առնել
զնա ։ * Ահաւասիկ ետու այսօր ա_ 15
ռաջի երեսաց քոց զկեանս՝ և զմահ .
զբարի՝ և զչար ։ * Եւ եթէ լուիցես 16
պատուիրանաց Տն Այ մերոյ՝ զորս
ես պատուիրեմ քեզ այսօր , սիրել զՏր
Ած քո՝ գնալ 'ի ճանապարհս նորա ,
պահել զիրաւունս և զպատուիրանս
նր , և զդատաստանս նորա, կեցջիք՝ և
բազումք լինիցիք . և օրհնեսցէ զքեզ
Տր Ած քո յամ երկրին՝ յոր մտանե_
լոց ես ժառանգել զնա ։ * Եւ եթէ 17
փոխեսցի սիրտ քո՝ և ոչ լուիցես , և
մոլորեալ երկիր պագանիցես աստու
ծոց օտարաց . և պաշտեսցես զնոսա ։
* Պատմեմ քեզ այսօր . զի կորստեամբ 18
կորնչիցիք . և ոչ լինիցիք բազմօրեայք
'ի վր երկրին՝ յոր դուք անցանէք ընդ
յորդանան ժառանգել զնա ։ * Ունիմ 19
ձեզ վկայ այսօր զերկինս և զերկիր .
զկեանս և զմահ եդու առաջի երե_
սաց ձերոց . զօրհնութիւն և զանէծս .
և ընտրեա՛ զկեանս . զի կեցցես դու և
20 զաւակ քո ։ * Սիրել զՏր Ած քո . և
լսել ձայնի նր . և ունել զնմանէ . զի
այն է կեանք քո . և երկայնութիւն ա_
ւուրց քոց . բնակել յերկրին զոր երդ_
ուաւ Տր հարցն քոց . աբրահամու և
իսահակայ և յակոբայ՝ տալ նոցա ։

ԳԼ: ԼԱ։

1 Եւ կատարեաց մովսէս խօսել զամ
բանս զայսոսիկ առ ամ որդիսն
2 իղի ։ * Եւ ասէ ցնս . հարիւր և քսան
ամաց եմ ես այսօր . և ոչ ևս կարեմ
ելանել և մտանել . քանզի Տէր ասաց
ցիս՝ թէ ‖ ոչ անցանիցես ընդ այդ յոր ‖ Թուոց
3 դանան ։ * Տր Ած քո երթայ առաջի 27.13.
երեսաց քոց . նա սատակեսցէ զազգսն ‖ Վեր.
զայնոսիկ յերեսաց քոց . և ժառան_ 3.27.
գեսցես զնս . և յեսու երթայ առաջի
4 երեսաց քոց՝ որպէս խօսեցաւ Տր ։ * Եւ
արասցէ Տր ընդ նոսա ‖ որպէս արար ընդ ‖ Թուոց
սեհոնի և ընդ ովգ . ընդ երկուսին թա 21.24.
գաւորսն ամորհացւոց՝ որք էին յայն
կոյս յորդանանու, և ընդ երկիրն նց ։
5 * Որպէս սատակեսցէ զնս . և մատնես
ցէ զնոսա Տր առաջի ձեր . և արասջիք
ընդ նոսա որպէս պատուիրեցի ձեզ ։
6 * Քաջ լեր՝ և զօրացիր . մի երկնչիր .
և մի զանգիտեր . և մի զարհուրեսցիս
յերեսաց նոցա . զի Տր Ած քո ինքնին
է՝ որ երթայցէ յառաջագոյն ընդ ձեզ
'ի միջի ձերում . ոչ թողցէ զքեզ՝ և
7 ոչ ընդ վայր հարկանիցէ ։ * Եւ կո_
չեաց մովսէս զյեսու՝ և ասէ ցնա ա_
ռաջի ամ իղի . ‖ քաջ լեր՝ և զօրացիր . ‖ Յեսու
քանզի դու մտանելոց ես առաջի երե 1. 6.
սաց ժողովրդեանդ այդորիկ՝ յերկիրն 3.Թագ
զոր երդուաւ Տր հարցն ձերոց տալ 2. 2.
նոցա . և դու ժառանգեցուսցես զնս
8 * Եւ Տր, որ երթալոց է ընդ քեզ, ոչ
թողցէ զքեզ . և ոչ ընդ վայր հարցէ .
9 մի երկնչիր , և մի զանգիտեր ։ * Եւ
գրեաց մովսէս զամ՝ բանս օրինացս այ
սոցիկ 'ի մատենի . և ետ զայն ցքահա
նայսն ցորդիսն ղևեայ . որք բառնային
զտապանակ ուխտին Տն . և ցծերս
10 որդւոցն իսրայէլի ։ * Եւ պատուիրեաց
նց մովսէս յաւուր յայնմիկ՝ և ասէ ։ յետ
եօթն ամի ժամանակի տարւոյն թո_
ղութեն 'ի տօնի տաղաւարահարացն ։
11 * 'Ի գումարել ամ իսրայէլի յանդի_
ման լինելոյ առաջի Տն Այ քոյ , 'ի
տեղւոջն զոր ընտրեսցէ Տր՝ ընթեռ_
նուցուք զօրէնս զայս առաջի իղի յա
12 կանջս նոցա ։ * Եկեղեցացուցեալ
զժողովուրդն . զարս՝ և զկանայս՝ և
զման_

զմանկունս՝ և զկին որ՝ի քաղաքս ձեր. զլուիցեն. և ուսանիցին երկնչել՝ի
Տէր Աստ մերմէ. և ուսցին առնել զամ
պատգամն օրինացս այսոցիկ ։ * Եւ 13
որդիքն նոցա՝ որք ոչ գիտիցեն, լսի
ցեն՝ և ուսցին երկնչել՝ի Տէր Աստ մեր
մէ զամ աւուրս՝ որչափ և կեցցեն նո
՝ի վերն երկրին՝ յոր դուք անցանելոց
էք ընդ յորդանան ժառանգել զնա ։
*Եւ ասէ Տէր ցմովսէս. ահա մերձեցան 14
աւուրք մահուանդ. կոչեա զյեսու՝
և կացէք առջի դրան խորանին վկայ
ութեան, և հրամայեա տալ նմա. և գնա
ցին մովսէս և յեսու՝ի խորանն վկայու
թեան. և կացին՝ի դրան խորանին վկայ
ութեան ։ * Եւ երև Տէր սեամբ ամպոյ՝ և 15
եկաց առ դրան խորանին վկայութեան.
և եկաց սիւն ամպոյն առ դրան խորա
նին * Եւ ասէ Տէր ցմովսէս՝ ահաւասիկ 16
դուն ննջեսցես ընդ հարս քո. և յարու
ցեալ ժողովուրդդ այդ պոռնկեսցի
զհետ աստուածոց օտարաց երկրին յոր
մտանիցէ դա՝ի նոսա. և թողուցուն
զիս. և սրիցեն զուխտն իմ, զոր ուխ
տեցի ընդ դոսա ։ * Եւ բարկացայց 17
դոցա սրտմտութիւ՛ն յաւուր յայնմիկ.
և լքից զդոսա. և դարձուցից զերեսս
իմ՝ի դոցանէ. և եղիցին կերակուրք
թշնամեաց՝ և գտցեն զդոսա չարիք
բազումք և նեղութիւ՛ն. և ասասցեն
յաւուր յայնմիկ. քանզի չէ Տէր Աս
մեր ընդ մեզ՝ գտին զմեզ չարիքս այ
սոքիկ ։ * Եւ ես դարձուցանելով դար 18
ձուսից զերեսս իմ՝ի նոցանէ յաւուր
յայնմիկ՝ վասն ամենայն չարեացն՝ զորս ա
րարին. զի դարձան յաստուածս օտա
րոտիս ։ * Եւ արդ գրեցէք զբանս 19
օրհնութեանս այսորիկ. և ուսուսջի՛ք
զդա որդւոցն իսրայէլի. և արկջի՛ք զդա՝ի
բերան նոցա. զի եղիցի ինձ օրհնու
թիւդ այդ՝ի վկայուն՝ի մէջ որդւոցդ
իսրայէլի ։ * Վասնզի տարայց զդոսա յեր 20
կիրն քարի՝ զոր երդուայ հարց նոցա.
երկիր, որ բղխէ կաթն և մեղր. և
կերիցեն, և լցեալ յագեսցին. և դառ
նայցեն յաստուածս օտարոտիս. և
պաշտիցեն զնոսա. և զայրացուցանի
ցեն զիս. և սրիցեն զուխտն իմ, զոր
ուխտեցի՛ն ։ * Եւ ընդդէմ կացցէ 21
նոքա օրհնութիւդ այդ՝ յանդիմանն լի
նիլ վկայ. և մի մոռասցի՝ի բերանոց
նոցա. և՝ի բերանոյ զաւակի նո՛ց. քան
զի գիտեմ զչարութի՛ն նո՛ց. զոր արա
րին առ այսօր, յառաջ քան զտանիլն
իմ զնո՛ց յերկիրն բարութե՛ զոր եր
դուայ հարցն նոցա ։ * Եւ գրեաց մո 22
սէս զօրհնութիւնս զայս յաւուր յայն
միկ. և ուսոյց զսա որդւոցն իսրայէլի ։

23 * Եւ պատուիրեաց մովսէս յեսուայ
որդւոյ նաւեայ՝ և ասէ. ‖ քա՛զ լեր՝ և ‖ Յեսու
զօրացի՛ր. զի դու տանելոց ես զորդիսն 1. 6.
իսրայէլի՛ զոր խոստացաւ տալ նո՛ց
24 Տէր. և նա եղիցի ընդ քեզ ։ * Եւ
իբրև կատարեաց մովսէս գրել զամ
զբանս օրինացս այսոցիկ՝ի մատեանի
25 մինչև խոպան ։ * Եւ պատուիրեաց
ղեւտացւոցն՝ որք կրէին զտապանակ
26 ուխտին Տե՛ն. ասէ. * Ա՛ռեալ զմատեանն
օրինացդ այդոցիկ՝ դնիցէ՛ի կողմա
նէ տապանակի ուխտին Տե՛ն Աստ մե
րոյ. և եղիցի անդ ընդ քեզ՝ի վկայու
27 թի՛ն ։ * Ո՛ւ ես գիտեմ զհեւսուութի՛
քո՝ և զնեխա պարանոց քո. զի մինչ
դեռ ես ընդ ձեզ կենդանի եմ այսօր,
դառնացուցի՛ք էք Ա՛ծակողմանն.
որպէս ոչ ապաքէն և յետ մահուա
28 նիմ։ * Ա՛րդ՝ ժողովեցէ՛ք առ իս զքե
զսպետս և զծերս ձեր. և զդատաւո
րս ձեր. և զատենադպիրս ձեր. զի
խօսեցայց յականջս նոցա զամ զբանս
զայսոսիկ. և կալայց ձեզ վկայ զեր
29 կինս և զերկիրս ։ * Ա՛ճքանզի գիտեմ
եթէ յետ վախճանի իմոյ անօրինե
լով անօրինիցի՛ք. և խոտորիցի՛ք՝ի ճա
նապարհէն՝ զոր պատուիրեցի ձեզ. և
պատահիցին ձեզ չարիքն՝ի վախճա
նի աւուրց. քանզի առնիցէ՛ք զչար ա
ռաջի Տե՛ն. բարկացուցանել զնա գոր
30 ծովք ձեռաց ձերոց ։ * Եւ խօսեցաւ
մովսէս յականջս ամենայն եկեղեցւոյն
իսրայէլի զբանս օրինացս այսորիկ
մինչև խոպան։

ԳԼ. ԼՐ.

1 Լայեցարո՛ւք երկինք՝ և խօսեցայց.
և լսէիցէ երկիր զպատգամն բե
րանոյ իմոյ։
2 * Ա՛կնկալեսցի իբրև զանձրև քար
քաո իմ. և իջցէ իբրև զցօղ պատ
գամք իմ։ իբրև զանձրև՝ի վերայ սիզոյ.
և իբրև զտեղատարափ՝ի վերայ խոտոյ։
3 * Օ՛ի անուն Տե՛ն կարդասցի. տո՛ւք պանուն
օրհնութի՛ն Տե՛ն Աստ մերոյ։ Տե՛ն կար
4 *Ա՛ծ որոյ գործքն են կատարեալք. դոպէց
և ամ ձանապարհք նո՛ր իրաւամբք ։
Ա՛ծ հաւատարիմ է. և ոչ գոյ՝ի նմա
անիրաւութի՛ւն արդար՝ և անսպատակ Տե՛ն։
5 * Ա՛ղան՝ և ոչ նմա որդիք արատոյ.
ազգ թիւր և խոտորեալ։
6 * Օ՛յդ Տե՛ն հատուցանէք այդպէս.
ժողովուրդ յիմար՝ և ոչ խմաստուն։
ոչ նա՛ հայրն՝ որ ստացաւ զքե՛զ. ա
րար զքե՛զ և հաստատեաց զքե՛զ։
7 * ‖ Յի՛շ լեցին քե՛զ աւուրքն յաւիտե ‖ Յոբ.
նից. խմացէ՛ք զամն յազգաց յազգս 8. 8.
հարց ցհարսն քո՝ և պատմեսցեն քե՛զ

և ցծերս քո՝ և ասասցեն քեզ։
8 *Յորժամ բաժանեաց բարձրեալն զազգս ամ՛. որպէս սփռեաց զորդիսն ադամայ. կացոյց սահմանս ազգաց ըստ թուոյ որդւոց Ա՛Յ։
9 *Եղև բաժին Տ՛ն ժողովուրդ իւր յակոբ. և վիճակ ժառանգութեան իւրոյ իսրայէլ։
10 *Գտաւականն եղև նմա յանապատի. ՚ի ծարաւ տօթոյ յանջրդի պաշտպա նեաց զնա։ և խրատեաց՝ և պահեաց զնա իբրև զբիբ ականն։
11 *Իբրև զարծուի ՚ի ծածկել զբոյն իւր. և ՚ի ձագս իւր գթացաւ։ տա ծածեաց զթեւս իւր՝ և ընկալաւ զնա. և բարձեալ բերեր զնա ՚ի վերայ միջ նողանց իւրոց։
12 *Տ՛ր միայն ածեր զնա. և ոչ գոյր ընդ նմա աստուած օտար։
13 *Նհան զնա ՚ի զօրութիւն երկրի. կերա կրեաց զնոսա արդեամբք անդաստա նաց։ դիեցոյց մեղր ՚ի վէմ. և իւղ յա պառաժ վիմէ։
14 *Կոճի կովուց՝ և կաթն մաքեաց. հանդերձ ձարպով գառանց խոյոց՝ որդւոց ցլուց՝ և նոխազաց։ ընդ ձար պոյ երիկամանց ցորենոյ՝ և զարիւն խաղողոյ ըմպէին գինի։
15 *Լկեր յակոբ՝ և յագեցաւ. յօրացաւ՝ և անկուչեաց զսիրելին։ գիրացաւ՝ աստուածացաւ՝ և լայնացաւ. և եթող զՏ՛ն Ա՛ծ զարարիչ իւր. և ապստամ բեցաւ Ա՛Յ փրկչէ իւրմէ։
16 *Նարկացուցին զնս օտարոտութիւք. և գարշելեօք իւրեանց դառնացուցին զնս։
17 *Ո՛հնեցին դիմաց և ոչ Ա՛Յ. դիմ՝ զորս ոչ գիտէին. նորք և առժամայինք եկեալ. զորս ոչ գիտէին հարք ձեր։
18 *Զսղեր զՏ՛ն՝ որ ծնաւ զքեզ. մոռա ցար զՏ՛ն զկերակրիչն քո։
19 *Նտես Տ՛ն՝ և նախանձեցաւ. և սրտմտեցաւ վասն բարկութեան ուստերաց և դստերաց իւրոց։
20 *Նև ասաց՝ դարձուցից զերեսս իմ՛ ՚ի նոցանէ. և տեսցից նոցա զինչ լինելոց էին ՚ի վախճանի աւուրց։ զի ազգ թիւր են. որդիք՝ յորս ոչ գոն հա ւատք։
21 *Նրքա նախանձեցուցին զնս չաստու ծով. և բարկացուցին զնս կռով իւրեանց։ ‖ և ես նախանձեցուցից զնս չազգաւ. և անմիտ ժողովրդեամբ բարկացուցից զնոսա։
22 *Ո՛ի հուր բորբոքեալ ՚ի բարկութիւն իմմէ. այրեսցէ մինչ ՚ի դժոխս ներ քինս։ կերիցէ զերկիր և զբմուխս նո՛ր բորբոքեսցէ զհիմունս լերանց։
23 *Կուտեցից ՚ի նոսա չարիս. և զնետս իմ սպառեցից ՚ի նոսա։
24 *Մաշեալք սովով և կերակրով թռչ նոց. լաբս առանց բժշկութե՛ն, և ժա նիս գազանաց առաքեցից ՚ի նոսա. սրա մնոյ թե՛ք քարշել զնս ընդ երկիր։
25 *Ք՛րտաքուստ անղաւակեսցէ զնոսա սուր. և ՚ի իշտեմարանաց երկիւղ։ զե րիտասարդն հանդերձ կուսիւն. և զծանդիացն հանդերձ հաստատելով ծերով։
26 *Ա՛սացի թամ՛ ցրեցից զնա. դադարե ցուցից ՚ի մարդկանէ զյիշատակս նո՛ն։
27 *Ցի ոչ զնա բարկութե՛ թշնամեաց. զի մի երկայնակեացք լինիցին. և զի մի բարձրասցին հակառակորդքն՝ և ասիցեն, թէ ձեռն մեր բարձր՝ և ո՛չ Տ՛ն արար զայս ամ՛։
28 *‖ Ո՛ի ազգ խորհրդակորոյսք են. և ‖ Նչեմ. 9.12.
ո՛չ գո՛յ ՚ի նոսա խնաստութի՛ն։
29 *Նե՛ ոչ խորհեցան ՚ի միտ առնուլ զայս. արդ ընկալցին առ յապայ ժա մանակս։
30 *Ո՛ իարդ հալածեսցէ մի զհազարս. և երկուք շարժեսցեն զբիւրս. եթէ ոչ Ա՛ծ վաճառեաց զնոսա։
31 *Ո՛ի ո՛չ են իբրև զԱ՛ծ մեր՝ աստուածք նո՛ն. և թշնամիք մեր վատախորհուրդք։
32 *Ո՛ի յորթոյ սոդոմայ է որթ նո՛ն. և ուռ նոցա՝ ՚ի գոմորայ։ խաղող նո՛ն խա ղող լեղի. և ողկոյզ նո՛ն դառնութի՛ն։
33 *Սրտմտութի՛ վիշապաց գինի նոցա. և սրտմտութի՛ խժից առանց բժշկութե՛։
34 *Ո՞չ ապաքէն այս ամ՛ ժողովեալ է առիս. և կնքեալ կայ ՚ի գանձի իմում։
35 *‖ Յաւուր վրէժխնդրութե՛ն հատու ‖ Ներ. 28.1.
ցից՝ ՚ի ժամանակի յորում սխալեսցի ոտն նո՛ն. զի մերձ է օր բարկութե՛ն նո՛ն. և հասեալ պատրաստեալ կայ ձեզ։ Հռոմ. 12.19.
36 *Ո՛ի դատեսցէ Տ՛ն զժողովուրդ իւր. և ‖ ՚ի ծառայս իւր միսիթարեսցի. զի տես զնոսա լուծեալս՝ և լքեալս՝ և մնացեալս ՚ի գերութի՛ն։ ‖ Ներ. 10.30. Բ՚Օր. 2.36. 7.6.
37 *Նև ասաց Տ՛ն՝ ‖ ո՞ր են աստուածք նոցա. յորս յուսացեալ էին ՚ի նոսա։ ‖ Ներ. 2.28.
38 *Ո՞րոց զձարպ զոհից նո՛ն ուտէիք. և ըմպէիք զգինի նուիրաց նոցա. յա րիցեն օգնեսցեն ձեզ. և եղիցին ձեր թիկունք։ ‖ Ա՛Թագ. 1.36
39 *Տեսէ՛ք՝ տեսէ՛ք՝ զի ես եմ. և չիք այլ ոք բաց յինէն։ ‖ ես սպանանեմ, և ես Տ՛ն. կեցուցանեմ. հարկանեմ, և բժշկեմ։ ‖ և ո՛չք իցէ որ հանիցէ ՚ի ձեռաց իմոց։ Ա՛մոս. 13.2. Ա՛Թագ. 16.13.
40 *Ո՛ի ամբարձից յերկինս զձեռս իմ. և երդուաւ յաղ իմ. և ասացից, կեն ‖ Յոբ. 10.7.
դանի եմ ես յաւիտեան։
41 *Ո՛ի սրեցից իբրև զփայլակն զսու սեր իմ. և կալցի զդատաստանաց ձեռն իմ. ‖ Ա՛մոս. 16.15.

իմ. և հատուցից զվրէժս թշնամեաց
իմոց. և ատելեաց իմոց հատուցից.
* Արբեցուցից զնետս իմ յարենէ. և 42
սուր իմ կերիցէ զմիս յարենէ վիրաւո
րաց և գերութե̃. 'ի գլխոց իշխանաց
թշնամեաց Տն̃. ուրախ լերուք եր_
կինք հանդերձ նովաւ. և երկիրպագ
ցեն նմա ամ̃ որդիք Այ̃.
‖ Եբր. 1. 6. * ‖ Ուրախ լերուք ազգք ընդ ժողովր 43
դեան նորա. և զօրասցուսցեն զնա ամ̃
հրեշտակք Այ̃. զի խնդրի վրէժ
արեան որդւոց նորա. և խնդրեսցէ
զվրէժ՝ և հատուսցէ դատաստանս
թշնամեաց. և ատելեացն հատուսցէ.
և սրբեսցէ Տր̃ զերկիր ժողովրդեան
իւրոյ. (և գրեաց մովսէս զօրհնութի̃ս
զայս յաւուր յայնմիկ. և ուսոյց զսա
որդւոցն իսրայելի.)
* Եւ եմուտ մովսէս 'ի ժողովուրդն. 44
և խօսեցաւ զամ̃ բանս օրհնացս այսո
ցիկ յականջս ժողովրդեանն. ինքն՝ և
յեսու որդի նաւեայ.
* Եւ կատարեաց մովսէս խօսիլ ընդ 45
ամ̃ իսրայելի.
* Եւ ասէ ցնս̃. զգոյշ լերուք սրտիւք 46
ձերովք ամ̃ բանիցս այսոցիկ. զորոց ես
դնեմ զվկայութի̃ ընդ ձեզ այսօր.
զոր պատուիրիցէք որդւոց ձերոց.
պահել և առնել զամ̃ բանս օրհնացս
այսոցիկ.
* Զի ոչ եթէ բան ինչ ընդունայն 47
իցէ ձեզ. զի սա է կեանք ձեր. և վասն
այսր բանի երկայնօրեայք լինիցիք 'ի
վերայ երկրին՝ յոր դուք անցանէք ը̃
յորդանան ժառանգել զնա.
* Եւ խօսեցաւ Տէր ընդ մովսէսի 'ի 48
նմին աւուր՝ և ասէ.
‖ Թուոց 27. 12. * ‖ Ել դու 'ի լեառն աբարիմ և 'ի 49
լեառն նաբաւ՝ որ է յերկրին մովա_
բու յանդիման երիքովի. և տես զեր
կիրն՝ զոր ես տաց որդւոցն իսրայելի
'ի կալուածս.
* Եւ վախճանեսցիս անդէն 'ի լերինն 50
յոր ելանիցես. և յաւելցիր 'ի ժողո_
‖ Թուոց 20. 26. վուրդ քո՝ ‖ զորօրինակ մեռաւ ահա
րոն եղբայր քո 'ի հովր լերինն. և
յաւելաւ առ ժողովուրդն իւր.
‖ Թուոց 20. 12. և 27. 14. * ‖ փոխանակ զի հեստեցիք բանին 51
իմոյ 'ի մէջ որդւոցն իսրայելի՝ 'ի վ̃ր
ջուրցն հակառակութեան 'ի կադէս՝
յանապատին 'ի սին. զի ոչ սրբեցիք
զիս 'ի մէջ որդւոցն իսրայելի.
* Յանդիման տեսցես զերկիրն՝ և 52
անդր մի մտանիցես.

ԳԼ. ԼԳ.

Այս է օրհնութի̃ զոր օրհնեաց 1
մովսէս այրն Այ̃ զորդիսն Իլ̃ի
2 յառաջ քան զվախճանիլն իւր. * Եւ
ասէ. Տէր 'ի սինայէ եկեսցէ. և երևե
ցաւ մեզ 'ի սէիրայ. և փութացաւ 'ի
լեռնէն փառանու. բիւրաւորօքն 'ի
կադէսայ. յաջմէ նորա հրեշտակք
3 իւր ընդ իւր. * Եւ խնայեաց 'ի ժողո
վուրդ իւր՝ ‖ և ամենայն սրբեալք 'ի ‖ Իմաստ.
ներքոյ ձեռին քո. և նոքա ընդ քև են. 3. 1. և
4 * Եւ ընկալաւ 'ի պատգամաց նորա 5. 5.
օրէնս՝ զորս պատուիրեաց մեզ մովսէս
զժառանգութի̃ ժողովոյն յակոբայ.
5 * Եւ եղիցի իշխան 'ի մէջ սիրեցելոյն.
գումարելոց իշխանաց ժողովրդոց՝
6 հանդերձ ցեղիւքն Իլ̃ի. * Կեցցէ ռու
բէն՝ և մի մեռցի. և եղիցի բազմաւոր՝ և Շմաւոն
7 թուով. * Եւ զայս ասէ զյուդայէ. Եղիցի
լուր Տր̃ ձայնի յուդայի. և 'ի ժողո_
վուրդ նր̃ եկեսցես. և ձեռք նորա ընտ
րեսցեն նմա. և օգնական 'ի թշնա_
8 մեաց եղիցիս նմա. * Եւ զղևեայ ա_
սէ. տուք ղևեայ զյայտնութի̃ նորա.
և զճշմարտութի̃ նորա առնն անարա
տի. զոր փորձեցին փորձանօք, և
բամբասեցին զնա 'ի վերայ ջրոցն հա
9 կառակութե̃. * Որ ասէր ցհայր իւր,
և ցմայր իւր՝ թէ ոչ տեսի զքեզ. և
զեղբարս իւր ոչ ծանեաւ. և զորդիս
իւր ոչ գիտաց. զգուշացաւ բանից
10 քոց. և զուխտ քո պահեաց. * Պատ_
մեսցեն զիրաւունս քո յակոբայ՝ և զօ
րէնս քո Իլ̃ի. դիցեն խունկս 'ի բար
կութե̃ քում՝ հանապազ 'ի վերայ սե
11 ղանոյ քոյ. * Օրհնեա Տր̃ զզօրութի̃
նորա. և ընկալ զգործս ձեռաց նր̃.
խորտակեա զմէջս 'ի վ̃ր յարուցելոց
թշնամեաց նորա. և ատելիք նորա մի
12 կանգնեսցին. * Եւ զբենիամինէ ա_
սէ. սիրեցեալն 'ի Տէ̃ բնակեսցի յու
սով. և Այ̃ հովանի լիցի նմա զամ̃
աւուրս. և 'ի մէջ ուսոց նորա հան
13 գեաւ. * Եւ զյովսեփայ ասէ. յօրհ_
նութե̃ Տն̃ երկիր նորա՝ 'ի ժամանա_
կաց երկնից՝ և 'ի ցօղոյ. և յանդնդոց
14 աղբերաց 'ի ներքուստ. * 'Ի ժամա_
նակի արդեանց՝ արեգական փոփոխ_
մանց. և 'ի գումարելոյ առ ամսեանս
15 ամսոց. * 'Ի գագաթանց լերանց
զարուեստս իւրեանց . և ոչ հատանի
20 խիստ ճանապարհայ իւրեանց ։ * Եւ
բարկացաւ սրտմտութիւն Տն իսրայէ-
լի՝ և ասէ . փոխանակ զի եթող ազգդ
այդ զուխտ իմ , զոր պատուիրեցի
հարց դոցա . և ոչ լսէին ձայնի իմում
21 * Եւ ես ոչ յաւելից բառնալ զայր
յերեսաց նոցա յազգացն՝ զորս եթող
22 յեսու որդի Նաւեայ ։ * Եւ եթող
փորձել նովաւ զիսրայէլ՝ եթէ զգուշա-
նայցեն ճանապարհին Տն գնալ ընդ
նա . զոր օրինակ զգուշացան հարքն
23 նոցա . և եթէ ոչ ։ * Եւ եթող Տէր
զազգսն զայնոսիկ՝ չբառնալ զնոսա
վաղվաղակի . և ոչ մատնեաց զնոսա
ի ձեռս յեսուայ ։

ԳԼ։ Գ։

1 Եւ սա ազգք են՝ զորս եթող յե-
սու փորձել նոքօք զիսրայէլ . զամե-
նեսին որք ոչ գիտէին զամ՝ պատե-
2 րազմունս քանանացւոց ։ * Այլ վա՞
ազգաց որդւոցն իսրայէլի ուսուցանել նց
պատերազմ. սակայն և որք յառաջա
գոյն քան զնոսա էին՝ ոչ գիտէին ։
3 * Հինգ նախարարութիւնս այլազ-
գեաց . և զամ՝ քանանացին . և զսիդո
նացին . և զևեւացին զբնակեալն ի լեռն
ի լեռնէն բաղէբմոնեայ՝
4 մինչև յդաքովեմաթ ։ * Եւ եղև ի
փորձել նոքօք զնոսիկ . գիտել եթէ լսի
ցեն պատուիրանացն Տն՝ զորս պատ-
ուիրեաց հարցն նոցա ի ձեռն մովսէսի
5 * Եւ որդիքն իսրայելի բնակեցան ի
մէջ քանանացւոյն . և քեթացւոյն . և
ամորհացւոյն . և փերեզացւոյն . և հև
ացւոյն . և յեբուսացւոյն . և գերգե-
սաց-

21 * Եւ եղև ընդ յառնելն նմա զգեաց
աւազդ զձեռն իւր զձախ. և հար ըզ
սուրն յաջոյ ազգերկ իւրմէ. և եհար
22 ՚ի կռտի եգլոմայ։ * Եւարկ և վերա-
խակալն ևս զհետ վիրին. և արգել
ձարան զվիրաբերանն. վի ոչ ձգեաց
23 ՚ի բաց զսուրն ՚ի կռտէ նր։ * Եւ եկ
՚ի պատշգամն. և էանց ընդ վանդա
կապատն. և փակեաց զդուրս վեր-
նատանն ընդդէմ նր. և ինքն եկ՝ և
24 գնաց։ * Եւ ծառայքն նորա մտին՝
և տեսին. և ահա դուրք վերնատանն
փակեալ էին. և ասեն՝ գուցէ յաթոռն
25 նստիցի ՚ի պետս ՚ի սենեկին։ * Եւ կա
յին՝ մնային ամաչեցեալք. և ահա ոչ
ոք էր որ բանայր զդուրս վերնա-
տանն. և առին զանահտին՝ և բացին.
և ահա տէրն իւրեանց անկեալ կայր
26 մեռեալ ՚ի գետնի։ * Եւ աւազդ վեր
ծաւ ՚ի սիրօթայ մինչ նորա զաղվկաւն
էին. և ոչնք էր՝ որ փայթ առնէր զնր
մանկ. և նա էանց առ դրօշելովքն.
27 և վերծաւ անկաւ ՚ի սիրօթայ։ * Եւ
եղև՝ իբրև եկն աւազդ յերկիրն իւր.
եհար փող ՚ի լերինն եփրեմայ. և իջին
ընդ նմա որդիքն իսրայելի ՚ի լեռնէ
28 անտի. և ինքն առաջի նոցա։ * Եւ ասէ
ցնոսա. իջէք զկնի իմ. զի մատնեաց
Տէր Ա.ծ մեր զթշնամիս մեր զմնալաբա
ցիս ՚ի ձեռս մեր։ և իջին զկնի նորա.
և կալան նախ զանցանս յորդանանու ՚ի
մնալաբայ. և ոչ թողին մարդոյ ան-
29 ցանել։ * Եւ հարին ՚ի մնալաբայ յաւ
ուր յայնմիկ իբրև տասն հազար ա-
նանց զնմ պատերազմողս ՚ի նոցանէ։
և զնմ զայր զօրութիւն. և ոչ ապրե-
30 ցաւ և ոչ մի այր։ * Եւ վանեցաւ մն-
ալաբ յաւուր յայնմիկ ընդ ձեռամբ
իսրայելի։ և դադարեաց երկիրն ամն
31 ութսուն։ և դատեցաւ զնոսա աւազդ
մինչև մեռաւ։ * Եւ յետ նորա յա-
րեաւ սամեգար որդի անաթայ. և
եհար յայլազգեացն վեց հարիւր այր.
Թող. ըղրթս արջառոյ։ և փրկեաց [խոփէ]
նա զիսրայէլ։ արջառոյ

Գ Ի։ Գ։

1 Եւ յաւելին որդիքն իսրայելի առ-
նել չար առաջի Տ՚ն. և սամեգար
2 մեռաւ։ * Եւ մատնեաց զնոսա Տ՚ն ՚ի ‖ Ի ցած
ձեռս յաբինայ արքայի քանանացւոց. 12.9.
որ Թագաւորեաց յասոր։ և իշխան
զօրուն նորա սիսարա. և ինքն բնակէր
3 յարիսաթ ազգաց։ * Եւ աղաղակե-
ցին որդիքն իսրայելի առ Տ՚ն. զի ինն-
հարիւր կառք երկաթիք էին նորա. և
նա նեղէր զնի զ սաստիկ՝ ամ քսան։
4 * Եւ դեբովրա կին մարգարէ. կին ղա-

սացոյն։ * Եւ առին զդատերս նոցա 6
իբրեանց ՚ի կանայս. և զդատերս իւր-
եանց էառն ուստերաց նոցա. և պաշ
տեցին զդիս նոցա։ * Եւ արարին որ 7
դիքն իսի չար առաջի Տ՚ն. և մոռա-
ցան զՏ՚ն Ա.ծ իւրեանց. և պաշտեցին
զբահաղ՝ և զանատառան։ * Եւ բար- 8
կացաւ սրտմտութիւն Տ՚ն իսի. և մատ
նեաց զնոսա ՚ի ձեռս քուսարսաթե-
մայ արքային ասորւոց միջագետաց.
և ծառայեցին նմա ամն ութ։ * Եւ 9
աղաղակեցին որդիքն իսի առ Տ՚ն. և
յարոյց Տ՚ն փրկիչ իսրայելի՝ և էառն
զգոթոնիէլ որդի կենազայ զեղբայր
քաղեբայ՝ կրտսեր քան զնա։ * (Եւ 10
լցաւ նոցա.) և եղև ՚ի նմա հոգի
Տ՚ն. և դատեաց զնի. և ել ՚ի պատե-
րազմ ընդ քուսարսաթեմայ. և մատ
նեաց Տ՚ն ՚ի ձեռս նորա զքուսարսա-
թեմ արքայ ասորւոց. և սաստկացաւ
ձեռն նր ՚ի վերայ քուսարսաթեմայ։
* Եւ դադարեաց երկիրն ամն քառա- 11
սուն. և մեռաւ գոթոնիէլ որդի կե-
նեզի։ * Եւ յաւելին որդիքն իսրայելի 12
առնել չար առաջի Տ՚ն. և զօրացոյց
Տ՚ն զեգղոմ արքայ մոաբացւոց ՚ի վերայ
իսի. վասն առնելոյ նոցա չար առաջի
Տ՚ն։ * Եւ ժողովեաց ՚ի վերայ նոցա 13
զնմ որդիսն ամմինայ. և զամաղէկ. և
եզաւ եհար զիս. և ժառանգեաց
զքաղաքն արմաւենեաց։ * Եւ ծա- 14
ռայեցին որդիքն իսի եգլոմայ արք
քայի մնալաբացւոց ամն ութսուն։
* Եւ աղաղակեցին որդիքն իսի առ 15
Տ՚ն. և յարոյց նոցա Տ՚ն փրկիչ զաւոդ
որդի գերեայ՝ զորդի առն յեմինեացւոյ.
երկոտունց ձեռաց աջոտակն. և առա
քեցին որդիքն իսի ՚ի ձեռս նր պա-
տարագս եգլոմայ արքայի մնալաբացւոց։
* Եւ արար իւր աւոդ սուր երկայ 16
րի թզաս յերկայնութիւն. և եզ յաջոյ
ազգեր իւրում ընդ տառատուկն.
և գնաց։ * Եւ մատոյց զպատարագն 17
եգլոմայ արքայի մնալաբացւոց. և եգլոմ
եր այր յոյժ։ * Եւ եղև իբրև 18
վախճանեաց աւոդ մատուցանել
զպատարագն. և արձակեաց զպա-
տարագաբարձն։ * Եւ եգլոմ դար 19
ձաւ ՚ի դրօշելոյն հանդերձ դպա-
գատն։ և ասէ աւոդ. բանք ինչ են
ինձ ընդ քեզ լռեալեայն արքայ. և ասէ
եգլոմ լուռ լեր։ և ասէ կամենեսին.
՚ի բաց գնացեալք. և եկին արտաքս որք
զնովաւն կային։ * Եւ նա նստէր յա 20
մարանոցի ՚ի վերնատանն իւրում մի-
այն առանձինն։ և ասէ աւոդ. պատ
գամ Ա.Ի է իմ առ քեզ արքայ։ և յա
րեաւ եգլոմ յաթոռոյն մերձ առ նա

բիդովթայ։ նա դատէր զԻսրայէլ՝ի ժամա-
նակին յայնմիկ։ * Եւ ինքն բնակեալ 5
էր ընդ արմաւենեաւն դեբովրայ՝ ի
մէջ ռամայ և՝ի մէջ բեթէլայ՝ի լե-
բինն եփրեմայ։ և ելանէին որդիքն
Իսրայէլի առ նա՝ի դատաստան։ * Եւ ա- 6
ռաքեաց դեբովրա՝ և կոչեաց զբարակ
զորդի աբինաեեմայ՝ի կադեսայ նեփ-
թաղիմի։ և ասէ ցնա։ ոչ ապաքէն
հրամայեաց Տէր Ա.Ծ Իսրայէլի. և երթիցես
՚ի լեառն թաբոր։ և առցես ընդ քեզ
տասն հազար արանց յորդւոցն նեփ-
թաղիմայ. և յորդւոցն զաբուլոնի։
* Եւ տարցիս ընդ քեզ՝ ի հեղեղատն 7
կիսոնի՝ի վերայ սիսարայ իշխանի զո-
րուն յաբինայ՝ և զորայ նորա. և կա-
ռայց նորա։ և մատնեցից զնա՝ի ձեռս
քո։ * Եւ ասէ ցնա բարակ. եթէ երթ 8
երթիցես ընդիս՝ երթայց. և եթէ ոչ
երթիցես ընդիս՝ ոչ երթայց։ (զան-
զի ոչ գիտեմ զօրն՝ յորում յաջողեսցէ
Տէր զճանապարհ իւր ընդիս)։ * Եւ ասէ 9
ցնա դեբովրա. երթալով երթայց ես
քեզ. բայց գիտասջիր՝ զի ոչ քո լիցի
փառք ի ճանապարհին՝ զոր եր-
թիցես. քանզի՝ ի ձեռն կնոջ մատ-
նեսցէ Տէր զսիսարայ։ և յարեաւ դեբո-
րա. և գնաց ընդ բարակայ՝ի կադէ-
սայ։ * Եւ պատուիրեր եաւ բարակ զա- 10
բուլոնի. և նեփթաղիմի՝ի կադես.
և ելին զհետ նորա տասն հազար ա-
րանց։ ել ընդ նմա և դեբովրա։ * Եւ 11
մերձաւորք կինեցւոյն մովսեցան՝ի
կինեայ յորդւոցն յոթորայ աներոյն
մովսեայ։ և եհար զխորան իւր առ կաղ
նեաւն հանդուցելոցն՝ որ է մերձ՝ի
կադես։ * Եւ պատմեցին սիսարայ ե- 12
թէ ել բարակ որդի աբինաեեմայ՝ի
լեառն թաբոր։ * Եւ գումարեաց սի- 13
սարա զամ կառս իւր. ինն հարիւր
կառս երկաթեղէնս. և զամ զօրն որ
ընդ իւր յարիսօթայ ազգաց՝ի հեղե-
ղատն կիսոնի։ * Եւ ասէ դեբովրա 14
ցբարակ. արի, զի այսօր է՝ յորում
մատնեաց Տէր զսիսարա՝ի ձեռս քո.
զի ահա Տէր է առաջի քո։ և էջ բարակ
՚ի լեառնէն թաբորայ. և տասնհազար
արանց զհետ նորա։ * Եւ զարհուրեց 15
ցոյց Տէր զսիսարա. և զամենայն կառս
նորա. և զամ բանակն նորա՝ սրով սո-
սերի առաջի բարակայ։ և էջ սիսա-
րա՝ի կառաց իւրոց՝ և փախեաւ հե-
տիոտս։ * Եւ բարակ զհետ մտեալ 16
երթայր զկնի կառացն. և զհետ բա-
նակին մինչև յանտառն ազգայ։ և ան
կաւ ամ բանակն սիսարայ սրով սո-
սերի. և ոչ ինոյ և ոչ մի։ * Եւ սիսա- 17
րա մեհինեցաւ՝ և գնաց հետիոտս՝ի

խորանն յայելի կնոջ քաբերայ կինեց
ւոյ. քանզի խաղաղութի էր՝ի մէջ յա-
բինայ արքայի ասորայ և՝ի մէջ տանն
քաբերայ կինեցւոյ։ * Եւ ել յայել 18
ընդ առաջ սիսարայ՝ և ասէ ցնա։ խո-
տորեաց տէր իմ, խոտորեաց,
և մի երկնչիր։ և խոտորեցաւ առ նա
՚ի խորանն և ծածկեաց զնա ընդ փեղ
կիւ։ * Եւ ասէ ցնա սիսարա. 19
արբո՛ ինձ սակաւ մի ջուր՝ զի ծարաւի
եմ։ և եբաց զտիկ կաթինն՝ և արբոյց
նմա. և ծածկեաց զերեսս նր։ * Եւ 20
ասէ ցնա սիսարա. կաց դու առ դրան
խորանիդ. և եղիցի եթէ եկեսցէ ոք
առ քեզ. և հարցցէ՝ և ասասցէ ոք
ց քեզ. եթէ է ոք այդր այր, ասասցես՝
թէ ոչ է։ (* Եւ ծածկեաց զնա ընդ 21
փեղկիւքն նորա։) և էառ յայել կին
քաբերայ զցից խորանին. և կալաւ
զուռնն՝ի ձեռինն իւրում. և եմուտ
մեղմառնա. և բաղխեաց զցիցն ընդ
ծամեղս նորա՝ և վարսեաց ընդ գե-
տինն. և նա տապալեցաւ՝ի մէջ ոտից
նր. և եհան զոգի։ * Եւ ահա բարակ 22
պնտեալ գայր զհետ սիսարայի. և ել
յայել ընդ առաջ նորա՝ և ասէ ցնա.
եկ այսր. և ցուցից քեզ զայրն՝ զոր
դու խնդրես. և եմուտ առ նա և ահա
սիսարա կայր անկեալ և մեռեալ՝ և
ցիցն՝ի ծամեղսն նորա։ * Եւ կոր- 23
ծեաց Տէր Ա.Ծ յաւուր յայնմիկ զյաբին
արքայ քանանացւոց առաջի որդւոցն
Իսրայէլի։ * Եւ ձեռն որդւոցն Իսրայէլի 24
երթալով երթայր խստացեալ՝ի վե-
րայ յաբինայ արքայի քանանացւոց՝
մինչև ատակեցան։

Գ.Լ. Ե.

Եւ օրհնեաց դեբովրա. և բարակ 1
որդի աբինաեեմայ յաւուր յայն-
միկ՝ և ասեն։ * Սկսանել զօրավա- 2
րացն Իսրայէլի. մտադիւրաբար ժող
վրդեանն օրհնեցէք զՏր։ * Ա՛ արքա 3
թագաւորք՝ և ունկնդիր լերուք նա
խարարք. ես Տ՚ն երգեցից. և սաղմոս
ասացից Ա.Ի Իսրայէլի։ * Տր յելանել 4
քոյ՝ի սեիրայ. և՝ի չուել քումմէ յան-
դաստանացն եդովմայ՝ երկիր շարժե-
ցաւ. և երկինք խոռվեցան. և ամպք
ցօղեցին ջուր։ * Լերինք շարժեցան 5
յերեսաց Տ՚ն Ելոհայ սինայի. յերեսաց
Տ՚ն Ա.Ի Իսրայէլի։ * Յաւուրց սամեգա- 6
բայ որդւոյ անաթայ՝ յաւուրս յայելի
պակասեցան թագաւորք. և գնացին
ք շաւիղս. գնացին ընդ ճանապարհս
կամակորս։ * Պակասեցան փարա- 7
զունք բնակչաց՝ի մէջ Իսրայէլի պա
կասեցան՝ մինչև յարեաւ դեբովրա.
մինչև

Ա Սաղմ. 82.10.

պարք իմ զՀպարտութիւնս զարհուրա
23 նաց նոցա։ * Կզովեցէք զՄարով զ՝ ասէ
Հրեշտակն Տ՚ն՝ անիծանելով անիծէք
զբնակիչս նորա. զի ոչ եկին յօգնա
կանութիւն Տ՚ն ։ օգնական Տ՚ր ՚ի մէջ
24 նահատակաց հզօրն։ * Օրհնեալ լի
ցի ՚ի կանանց Յայէլ կին քաբերայ կի
նեցւոյ. օրհնեսցի ՚ի կանանց ՚ի խորա
25 նի իւրում։ * Ջուր խնդրեաց, և եա
կաթն՝ դաշխարհանաւ զօրաւորաց
26 մատոյց զկոգի ։ * Ձեռն իւր ձախ
ձգեաց ՚ի սկիցն. և զաջ իւր խոպատ
սպուռ ջախջախանս անսիտանացու
ցանել. և վախճանեցոյց զսիսարա ։
վարեաց ընդ ծամելիսնի. և անցոյց
ցկոյ ընդ գլուխ նորա. և սատակեաց։
27 * Ի մէջ ոտից նորա անկաւ ծանրա
ցեալ. և նիրհեցոյց ՚ի մէջ ծնգաց իւր
ոց. յորում կորացաւ՝ մինչև զգեա
նեցաւ՝ անդ անկաւ չոճառականն։
28 * Այրն սիսարայ Հայեցեալ դիտակն
ունէր ՚ի վանդակապատ պատուհա
նէն՝ քանզի տեսանէր զդարձեալսն ՚ի
սիսարայ. վնզի յետնեցան կառք նո
՚ի դալոց. ընդէր յամեցին հետք կա
29 ռաց նո։ * Կանայք իմաստունք իշխա
նաց նո եառն անդրէն պատասխանի
նման և սասենև ինքնին անձամբ անձին
30 առնէր իւր պատասխանի։ * Ոչ գտա
նիցեն զնա աւարաբաշխք. առնել
սեր քարեկամաց ՚ի գլուխ արանց. և
եդեալ զաղխս նորա կապուտ երան
գոյն սիսարայ. կապուտ երանգոյն
գունագոյն նկարուց. նարօտ պէսպէս
նկարուց. այն էր պարանոցի նորա
31 կապուտ։ * Այսպէս կորիցեն ամե
նայն թշնամիք քո Տ՚ր ։ և որք սիրե
ցինն զնա՝ իբրև զելս արեգական ՚ի
32 զօրութեան նո։ * Եւ դադարեաց եր
կիրն ամ քառասուն։

Գ Լ Ը Օ ։

1 Եւ արարին որդիքն Լէի չար առա
ջի Տ՚ն՝ և եառ զնոսա Տ՚ր ՚ի ձեռս
2 Մադիամու ամս եօթն ։ * Եւ զօրա
յաւ ձեռն Մադիամու ՚ի վերայ Լէի ։
և արարին իւրեանց որդիքն Լէի լե
րեսաց Մադիամու գոմն ՚ի լերինս.
3 յայրս և յամուրս։ * Եւ լինէր իբրև
վարէր այր Լէի ։ ելանէր Մադիամ և
ամաղեկ. և որդիքն արևելեայց հա
4 սանէին ՚ի վերն նոցա։ * Եւ բանակէին
առնոքօք. և ասպականէին զերս երկ
րին մինչև ՚ի մուտս գազայ ։ և ոչ թո
ղուին պատառ կենաց Լէի ։ ոչխար.
5 և արջառ. և էշ ։ * Օն ինքեանք, և
խաշինք իւրեանց ելանէին. և զվրանս
իւրեանց բերէին. և հասանէին իբրև
զմա

զհացդ բաղարջ. և դիր ի վերայ վէ-
միս այնորիկ. և հիւղ զարգանակս. և
21 արար այնպէս ։ * Եւ ձգեաց հրեշ-
տակն Տ՚ն զծայր գաւազանին՝ որ ի
ձեռին իւրում. և հասոյց ի միսն և ի
բաղարջսն. և բորբոքեցաւ հուր ի
վէմէ անտի. և եկեր զբաղարջսն. և
22 հրեշտակն Տ՚ն գնաց յաչաց նր ։ * Եւ
եահս գեդէօն թէ հրեշտակ Տ՚ն է ։ և
ասէ գեդէօն. ա՛հ ա՛հ Տ՚ր Տ՚ր. զի տեսի
զհրեշտակն Տ՚ն դէմ յանդիման ։
23 * Եւ ասէ ցնա Տ՚ր. խաղաղութի՛ ընդ-
քեզ. մի՛ երկնչիր. ոչ մեռանիցիս ։
24 * Եւ շինեաց անդ գեդէօն զսեղան
Տ՚ն. և կոչեաց զնա խաղաղութի՛ Տ՚ն
մինչև ցայսօր ։ և մինչդեռ ինքն ան-
դէն էր յերիքայ հօր իւրոյ եսբեայ ։
25 * Եւ եղև ի գիշերին յայնմիկ՝ և ասէ
ցնա Տ՚ր. առ դու քեզ զեզն պարա-
կաի հօր քոյ. և զեզն զերկրորդ զեօթն
ամեան. և քակեսցես զսեղանն բահա
ղոս՝ որ է հօր քոյ. և կոտորեսցես զան
26 տառն՝ որ զնովաս ։ * Եւ շինեսցես
սեղան Տ՚ն Ա՚Յ քումմ. որ երևեցաւ
քեզ՝ ի գլուխ լերինն մանոզայ՝ ի տեղ
ւոջ պատերազմին. և առցես զեզն
զերկրորդ. և հանցես յողջակէզ փայ
տիւք անտառին՝ զոր կոտորեսցես ։
27 * Եւ էառ գեդէօն երեքտասան այր
՚ի ծառայից իւրոց. և արար՝ ոյն և նմա
սեցաւ ընդ նմա Տ՚ր. և եղև իբրև եր
կեաւ՝ ի տանէ հօր իւրոյ՝ և յարանց
քաղաքին առնել՝ ի տուէ. արար՝ ի
28 գիշերի ։ * Եւ կանխեցին արք քաղա
քին ընդ առաւօտն. և ահա կործա-
նեալ էր սեղանն բահաղու. և ան-
տառն որ զնովաս կոտորեալ. և եզն
պարարակ հանեալ ողջակէզ՝ ի սե-
29 ղանն շինեալ ։ * Եւ ասէն այր ցընկեր
իւր. ո՞ արար զբան զայս. և յուզէին՝
և քննէին. և ասէին՝ թէ գեդէօն որ
30 դի յովասու արար զբանդ զայդ ։ * Եւ
ասեն արք քաղաքին ցյովաս՝ հան զո-
րդին քո՝ և մեռցի. զի կործա
նեաց զսեղանն բահաղու. և կոտո-
31 րեաց զանտառն՝ որ զնովաս ։ * Եւ
ասէ յովաս ցարսն ցյարուցեալս՝ ի
վէր նորա. դուք այժմ դատիցէք վէ
բահաղու. և կամ դուք ապրեցուցա
նիցէք զնա. որ միասեաց նմա, մեռ-
ցի մինչև ցառաւօտ ։ եթէ Ա՚ծ է՝ և
ինքն խնդրեսցի զվրէժ անձին իւրոյ՝
32 զի կործանեաց զսեղան նր ։ * Եւ կո-
չեաց զնա յաւուրն յայնմիկ յերոբաալ
և ասէ՝ դատաստան բահաղու. զի
33 կործանեաց զսեղան նորա ։ * Եւ ամ
մադիամ և ամաղէկ. և ամ որդիքն
արևելեայց ժողովեցան՝ ի միասին. և
եկին

զմարախ բազմութի՛ն. և ոչ գոյր թիւ
նոցա. և ուղտուց իւրեանց. և հասա-
նէին յերկիրն լիէլ ապականել զնա ։
6 * Եւ աղքատացաւ լիէլ յոյժ յերեսաց
մադիամու ։ և աղաղակեցին որդիքն
լիէլ առ Տ՚ր ։ * Եւ եղև իբրև աղաղա
7 կեցին որդիքն լիէլ առ Տ՚ր վ՚ս մա-
դիամու ։ * Եւ առաքեաց Տ՚ր այր
8 մարգարէ առ որդիսն իսրայելի՝ և ա-
սէ ցնոսա. այսպէս ասէ Տ՚ր Ա՚ծ ցլինել
ես եմ՝ որ հանի զձեզ յերկրէն եգիպ-
տացւոց. և կորզեցի զձեզ ՚ի տանէ
9 ծառայութե՛ն ։ * Եւ փրկեցի զձեզ ՚ի
ձեռաց եգիպտացւոցն. և ՚ի ձեռաց
ամենայն նեղչաց ձերոց. և մերժեցի զնո
յերեսաց ձերոց. և ետու ձեզ զեր-
կիրն նոցա ։ * Եւ ասացի ցձեզ. ես եմ
10 Տ՚ր Ա՚ծ ձեր. մի՛ երկնչիք յաստուածոց
ամորհացւոցն. յորոց միջի դուք զնա
կեալք յերկրի նոցա. և ոչ լուա՛յք
ձայնի իմում ։ * Եւ եկն հրեշտակ Տ՚ն
11 և նստաւ ընդ կաղնեառն՝ որ էր յեփ-
բայ յովասու հօր եսբեայ. և գեդէօն
որդի նր ծեծէր զցորեան ՚ի կալ՝ փախ
չել յերեսաց մադիամու ։ * Եւ երևե
12 ցաւ նմա հրեշտակ Տ՚ն և ասէ ցնա ։
Տ՚ր ընդ քեզ հզօր զօրութ՚ ։ * Եւ ասէ
13 ցնա գեդէօն. չիս Տ՚ր իմ. եթէ էր Տ՚ր
ընդ մեզ. ընդէր գտին զմեզ ամ չա
րիքս այսոքիկ. և ուր են ամ սքանչե
լիքն նր՝ զորս պատմեցին մեզ հարքն
մեր՝ և ասեն. ոչ ապաքէն յեգիպտո
սէ հան զմեզ Տ՚ր ։ և արդ ընդէր
մերժեաց զմեզ. և մատնեաց զմեզ ՚ի
ձեռս մադիամու ։ * Եւ հայեցաւ ցնա 14
Հրեշտակն Տ՚ն. և ասէ ցնա. ՚Երթ- ‖ ւ.Թագ.
զօրութ՚քդ քով այդոսիկ. և փրկես- ւշ.ւ։.
ցես զիսէլ ՚ի ձեռաց մադիամու. ոչ
աւասիկ ես առաքեցի զքեզ ։ * Եւ 15
ասէ ցնա գեդէօն. չիս Տ՚ր՝ ի՞նչ փրկե
ցից զիսէլ և ահա հաղարաւորն իմ խո
նարհագոյն է ՚ի մէջ մանասէի ։ և ես
կրտսեր եմ ՚ի տան հօր իմոյ ։ * Եւ ա- 16
սէ ցնա. Տ՚ր ընդ քեզ. և հարցես զմ
մադիամ իբրև զայր մի ։ * Եւ ասէ 17
գեդէօն. եթէ գտի շնորհս առաջի
աչաց քոց. արասցես ինձ զնշան՝ եթէ
դու խօսեացիս ընդիս ։ * Մի՛ գնաս- 18
ցես աստի՝ մինչև եկիցէ առ քեզ. և բե
րիցէ զպտ իմ, և եդիցէ առաջի քո։ և
ասէ՝ ես եմ. և նստայց աստ՝ մինչև
դարձիս առիս ։ * Եւ եմուտ գե- 19
դէօն՝ և հասոյց ուլ մի յայծեաց. և
արդու մի ալիւր բաղարջ. և զմիսն եդ
՚ի վերայ խոյնի. և զարգանակն եարկ
՚ի պոյան. և եհան առ նա ընդ կաղ
նեաւն՝ և երկիր եպագ ։ * Եւ ասէ 20
ցնա հրեշտակն Տ՚ն. առ դու զմիսդ՝ և

փեցին ձեռամբ և լեզուով իւրեանց՝
երեքհարիւր այր. և մնացորդք ժողո-
վրդեանն՝ անկան ՚ի վէր ծնկաց իւր-
7 եանց ըմպել զջուր։ * Եւ ասէ Տէր
ցգեդէօն. երեքհարիւր արամբքդ՝ որք
լափեցին զջուր՝ փրկեցից զձեզ. և տաց
զմադիամ ՚ի ձեռս քո ։ և ամ ժողո-
վուրդդ՝ երթիցեն այր իւրաքանչիւր
8 ՚ի տեղի իւր ։ * Եւ առին զպաշար
ժողովրդեանն ՚ի ձեռս իւրեանց. և
զփող նոցա զերջերեայս. և զամ այր
իսկ արձակեաց զայր ՚ի քնակութիւն
իւր ։ և զերեքհարիւր արան և եթ կա
լաւ ։ և բանակն մադիամու՝ էին ՚ի
9 ներքոյ նմ ՚ի հովիտսն ։ * Եւ եղև ՚ի
գիշերին յայնմիկ, և ասէ ցնա Տէր. արի
էջ առ վաղվաղակի ՚ի բանակն. զի
10 մատնեցի զնա ՚ի ձեռս քո ։ * Այլ թէ
երկնչիցես դու իջանել. էջ նախ դու
և պատանեակդ քո փարա ՚ի բանակն։
11 * Եւ լուիցես եթէ զինչ խօսիցին՝
և ապա զօրասցին ձեռք քո. և իջցես
՚ի բանակն և էջ ինքն և պատանեակն
իւր փարա ընդ նմա ՚ի մասն ինչ յես-
12 ներորդաց բանակին ։ * Եւ մադիամ
և ամաղէկ. և ամ որդիքն արևելեայց
բանակեալք էին ՚ի ծովրծորան. իբրև
զմնծաս բազմութիւն. և ուղտուց նո-
ցա գոյր թիւ. այլ էին իբրև զաւազ
13 առ եզերբ ծովու բազմութիւն ։ * Եւ
եմուտ գեդէօն ։ և ահա այր պատ-
մէր ընկերի իւրում զերազ տեսի ասէ
զերազ. և ահա նկանակ գարեղէն հո
լովեալ ՚ի բանակս մադիամու. և եկն
մինչև ՚ի խորանն մադիամու. և եհար
զնա և կործանեաց. անկաւ խորանն
14 վերուստ ՚ի վայր ։ * Պատասխանի ետ
ընկերն նորա՝ և ասէ. ոչ ևս այն՝ եթէ
ոչ սուրն գեդէօնի որդւոյ յովասու՝
առն իսրայէլացւոյ. մատնեաց Տէր ՚ի
ձեռս նորա զմադիամ՝ և զամ բանակս ։
15 * Իբրև լուաւ գեդէօն զպատմութիւն
երազոյն՝ և զմեկնութիւն նորա. երկիր
եպագ Տեառն. և դարձաւ անդրէն ՚ի բա-
նակն իւր. և ասէ՝ արիք, զի մատնեաց
Տէր զբանակն մադիամու ՚ի ձեռս մեր։
16 * Եւ բաժանեաց զերեքհարիւր արան
իւրիս առաջս. և ետ զփողսն եղջե-
րեայս ՚ի ձեռս ամենեցուն՝ և ջահս ՚ի
17 մէջ սափորացն ։ * Եւ ասէ ցնոսա.
ընդիս հայեսջիք. և այնպէս արասջիք.
ահա ես մտանեմ ՚ի մէջ բանակին. և
եղիցի որպէս ես առնիցեմ, նոյնպէս և
18 դուք արասջիք։ * Եւ հարիցէ ես զփողն
եղջերեայ. և ամենեքեան որք ընդիս
եք՝ հարջիք և դուք զփողսն եղջե-
րեայս շուրջ զամ բանակատն. և
19 ասասջիք՝ սուրն Տեառն և գեդէօնի։ * Եւ
եմուտ

եկին բանակեցան ՚ի հովիտն յեզրսյի
լիւ։ * Եւ հոգի Տեառն զօրացոյց զգեդէօն։ 34
և էհար փող. եղջերաւն. և խրախոյս
եբարձ աբիեզեր զկնի նր ։ * Եւ առ 35
ձակեաց հրեշտակս յասեր. և ՚ի զա-
բուլոն. և ՚ի նեփթաղիմ. և ելին ընդ
առաջ նր ։ * Եւ ասէ գեդէօն յԱ՛Ծ 36
եթէ փրկեսցես ձեռամբ իմով զիսրա-
ոլ և խօսեցաւ ։ * Ահա դնեմ գգաթա 37
մի ասուի ՚ի կալ. եթէ լինիցի անձրև
՚ի վէր գգաթուն միայնոյ, և ՚ի վերայ
ամենայն երկրի ցամաքութի, գիտացից ե-
թէ փրկեսցես ձեռամբ իմով զիսրա-
ոլ և խօսեցաւ ։ * Եւ եղև այնպէս և 38
կանխեաց գեդէօն ՚ի վաղիւ անդր. և
քամեաց զգգաթն. և եկն ցօղ ՚ի գգա-
թէ անտի լի կոնքիւ ջրոյ ։ * Եւ ասէ 39
գեդէօն յԱ՛Ծ. մի բարկասցի ցասումն
քո ինձ. և խօսեցայց դարձեալ միւս
անգամ. և փորձեցից միւսանգամ գգա
թուն. և եղիցի միւսանգամ ցամաքու
թի ՚ի վէր գգաթուն միայնոյ. և ՚ի վէր
ամենայն երկրի եղիցի անձրև ։ * Եւ արար 40
Ա՛Ծ այնպէս ՚ի գիշերին յայնմիկ. և ե-
ղև ցամաքութի ՚ի վէր գգաթուն միայ-
նոյ։ և ՚ի վէր ամ երկրի եղև անձրև։

Գ Լ։ Լ։

Եւ կանխեաց յերոբաաղ. նա ինքն 1
և գեդէօն. և ամ զօրն ընդ նմա.
և բանակեցան առ աղբիւրն արեդայ.
և բանակն մադիամու, և ամաղէկայ՝
էր նոցա ընդ հիւսիսոյ. ՚ի գաբաա
թամ որ ՚ի հովխոյ ։ * Եւ ասէ 2
Տէր ցգեդէօն. բազումք զօրդ որ ընդ
քեզ է. առ ՚ի չմատնեսցէ հինձ զմա-
դիամ ՚ի ձեռս դոցա. գուցէ պարծի
ցի ՚ի վէր իմ ինձ և ասիցէ. թէ ձեռն
իմ փրկեաց զիս ։ * Եւ ասէ Տէր. խո 3
սեաց յականջս ժողովրդեանդ. և ա-
սացես. ո՞ք վատասիրտ իցէ՝ դարձ
ցի ։ և դիմեցին ՚ի լեռնէն գաղաա
դու. և դարձան ՚ի զօրուէն քսան և
երկու հազարք. և մնացին տասն հա
զարք ։ * Եւ ասէ Տէր ցգեդէօն. տա 4
կաւին բազումք զօրդ. իջո զդոսա ՚ի
ջուրն. և փորձեցից քեզ զդոսա անդ.
և եղիցի զորմէ ասացից ցքեզ՝ եթէ
դա երթիցէ ընդ քեզ՝ նա երթիցէ ընդ
քեզ. և զամենայնէն զորմէ ասացից՝
թէ դա մի երթիցէ ընդ քեզ. նա մի
երթիցէ ընդ քեզ ։ * Եւ իջոյց զզօրն 5
՚ի ջուրն ։ և ասէ Տէր ցգեդէօն. ամ որ
լափիցէ լեզուաւ իւրով ՚ի ջրոյ անտի
իբրև զշուն, կացուսցես զնա ուրոյն ։
և ամ որ անկցի ՚ի վէր ծնկաց իւրոց
ըմպել, կացուսցես զնա առանձինն ։
* Եւ եղև թիւ ամենեցուն՝ որք լա- 6

ոսացես. ոչ ոք վատասիրտ իցէ՝ դարձ
20. 5. ցի ։ և դիմեցին ՚ի լեռնէն գաղաա
1.Կաթ. դու. և դարձան ՚ի զօրուէն քսան և
3.56. երկու հազարք. և մնացին տասն հա
զարք ։ * Եւ ասէ Տէր ցգեդէօն. տա 4
կաւին բազումք զօրդ. իջո զդոսա ՚ի
ջուրն. և փորձեցից քեզ զդոսա անդ.
և եղիցի զորմէ ասացից ցքեզ՝ եթէ
դա երթիցէ ընդ քեզ՝ նա երթիցէ ընդ
քեզ. և զամենայնէն զորմէ ասացից՝
թէ դա մի երթիցէ ընդ քեզ. նա մի
երթիցէ ընդ քեզ ։ * Եւ իջոյց զզօրն 5
՚ի ջուրն ։ և ասէ Տէր ցգեդէօն. ամ որ
լափիցէ լեզուաւ իւրով ՚ի ջրոյ անտի
իբրև զշուն, կացուսցես զնա ուրոյն ։
և ամ որ անկցի ՚ի վէր ծնկաց իւրոց
ըմպել, կացուսցես զնա առանձինն ։
* Եւ եղև թիւ ամենեցուն՝ որք լա- 6

եմուտ գեդէոն և հարիւր այր ընդ
նմա, 'ի կողմն բանակին 'ի սկզբան միջ_
նոյ պահուն. միայն զարթուցանելով
զարթուցին զպահապանսն. և հարին
զփողսն եղջերեայս. և թօթափեցին
զսափորսն որք 'ի ձեռս իւրեանց:
*Եւ հարին զփողսն եղջերեայս երե 20
քին առաջքն. և խորտակեցին զսա
փորսն. և առին ձախու ձեռամբք իւր
եանց զջահսն, և աջու ձեռօք իւր_
եանց զփողսն՝ հարկանել. և աղաղա_
կեցին՝ և ասեն. սուր Տն և գեդէոնի:
*Եւ կացին իւրաքանչիւր առանձինն 21
շուրջ զբանակաւն: և ընթացաւ ամ
բանակն՝ փող հարին՝ և փախեան:
* Եւ գոչեցին երեքհարիւրեքին 22
‖ Սաղմ. փողքն եղջերեայք. ‖ և եդ Տր զսուր
82. 10. առն յընկեր իւր. և յամ բանակն:
* Եւ փախեաւ ամ բանակն մինչև 23
ցբեթսատայ. և միւս գունդն՝ մինչև
ցդարն աբէլմաուլայ. և ցտաբէթ: և
գոչեաց այր իսրայէլացի, 'ի նեփթա_
ղիմայ. և յասերայ. և յամ մանասէ.
և զհետ մտին մադիամու: *Եւ հրեշ 24
տակս արձակեաց գեդէոն յամենայն
սահմանս եփրեմայ. և ասէ՝ իջէք յա
ռաջս մադիամու. և կալարուք զկիրճս
ջրոցն մինչև ցբեթփարայ և ցյորդա
նան. և գոչեաց ամենայն այր եփրե_
մի. և կալան իւրեանց զանցս ջրոցն.
մինչև ցբեթփարայ և ցյորդանան:
‖ Սաղմ. *‖ Եւ կալան զերկուս իշխանսն մա_ 25
82. 12. դիամու զորեբ. և զզեբ. և սպանին
Եսայ. զորեբ 'ի սորորեբայ. և զզեբ՝ սպա_
10. 26. նին յակեբզեբայ. և հալածեցին զմա
դիամ. և զգլուխսն որեբայ և զեբայ
բերին առ գեդէոն յայնմ կողմանէ
յորդանանու:

ԳԼ: Ը:

Եւ ասեն ցգեդէոն արք եփրեմի. 1
զինչ է բանդ այդ՝ զոր արարեր
ընդ մեզ. զի ոչ կոչեցեր զմեզ յոր_
ժամ երթայիր պատերազմիլ ը մա_
դիամու. և վիճէին ը նմա սաստկա_
գոյնս: *Եւ ասէ ցնոսա. ա՛րդ զինչ 2
ինչ արարի իբրև զձեզ. ո՞չ ապաքէն
լաւագոյն է ճռաքաղութիւն եփրեմի.
քան զկութսն աբիեզերայ: *Ի ձեռս 3
ձեր մատնեաց Տր զիշխանս մադիա_
մու՝ զզորեբ և զզեբ. և զի՞նչ կարացի
առնել իբրև զձեզ՝ և ապա դադա_
րեաց ոգի նոցա 'ի նմանէ 'ի խօսիլ նր
զբանս զայս: *Եւ եկն գեդէոն 'ի 4
յորդանան. և եանց ինքն և երեք հար
իւր արքն որք ը նմա պարտասեալք
և քաղցեալք: *Եւ ասէ ցարսն սոկ_ 5
քովթայ. տո՛ւք աւադիկ հաց 'ի կերա
կուր զօրուս այսմիկ՝ որ ընդ իս. զի
քաղցեալ են. և ես պնդեցայց զհետ
զեբեհի և սաղմանայ թագաւորացն
6 մադիամու: *Եւ ասեն իշխանքն
սոկքովթայ. մի՛ թէ ձեռն զեբեհի և
սաղմանայ իցէ 'ի ձեռին քում; զի տա
7 ցուք հաց զօրականիդ քում: *Եւ
ասէ գեդէոն. ոչ այդպէս. այլ 'ի տալ
Տն զզեբեհ և զսաղմանա 'ի ձեռս իմ.
և ես քարշեցից զմարմինս ձեր փշովք
8 անապատի և բորկոնիմու: *Եւ ել
անտի 'ի փանուէլ. և խօսեցաւ ընդ նս
նոյնպէս. և պատասխանի արարին
նմա արք փանուէլայ, զոր օրինակ ա_
րարին նմա պատասխանի արք սոկ_
9 քովթայ: *Եւ խօսեցաւ գեդէոն ը
արս փանուէլի՝ և ասէ. 'ի դառնալ ի_
մում այսրէն խաղաղութը. կործա_
10 նեցից զաշտարակդ զայդ: *Եւ զե_
բեհ և սաղմանա էին 'ի կարկար. և
բանակ նց ընդ նոսա. իբրև հնգետա
սան հազար այր ընդ ամ, որք մնա_
ցեալ էին յամ բանակէ որդւոցն ա_
րևելից. և անկեալք էին հարիւր և
քսան հազար արանց սուսերամերկաց:
11 *‖ Եւ ել գեդէոն ընդ ճանապարհս ‖ Ռե.
վրանաբնակչացն յարևելից նաբայէ. 10. 14
և հանդէպ նաբեայ. և եհար զբա_
նակն. զի ահա էր բանակն յանհոգս:
12 *Եւ փախեան զեբեհ և սաղմանա. և
պնդեցաւ զհետ նց. և ձերբակալ ա_
րար զերկուս թագաւորսն մադիա_
մու՝ զզեբեհ և զսաղմանա. և զամ
13 բանակ նր դղրդեցոյց: *Եւ դարձաւ
գեդէոն որդի յովասու 'ի պատերազ
մէն 'ի զառիվայրէ անտի արեսայ:
14 *Եւ կալաւ զպատանեակ մի յարանց
սոկքովթայ. և եհարց զնա. և գրեաց
առ ինքն զիշխանսն սոկքովթայ. և
զծերս նր եօթանասուն և եօթն այր:
15 *Եւ եկն գեդէոն առ իշխանսն սոկ_
քովթայ. և ասէ ցնոսա. ահաւասիկ
զեբեհ և սաղմանա. վս որոց նախա
տեցիք զիս՝ և ասայիք. միթէ ձեռն
զեբեհի և սաղմանայ այժմ 'ի ձեռին
քում իցէ. զի տացուք հաց արանց
16 քոց նքթելոց: *Եւ էառ զիշխանսն
և զծերս քաղաքին. և փուշս յանապա
տէ և զբորկոնիմս. և քարշեաց նոքօք
17 զարսն սոկքովթայ: *Եւ զաշտարակն
փանուէլի կործանեաց. և կոտորեաց
18 զարս քաղաքին: *Եւ ասէ ցզեբեհ
և ցսաղմանայ՝ ո՞ւր են արքն՝ զորս կո_
տորեցիք 'ի թաբոր. և ասեն՝ որպ դու.
նոյնպէս և նք նման քեզ՝ և դու նման
նոցա. իբրև զտեսիլ որդւոց թագա
19 որի: *Եւ ասէ գեդէոն՝ եղբարք իմ
և որդիք մօր իմոյ էին՝ և երդուաւ նր
և

և ասէ․ կենդանի է Տէր՝ եթէ կենդա
նի պահեալ էր ձեր զնոսա, ոչ սպանա_
նէի զձեզ ։ *Եւ ասէ ցյեթեր ցանդ_ 20
րանիկ իւր․ արի, և սպան զդոսա․ և
ոչ եհան պատանեակն զսուր իւր՝ զի
երկեաւ՝ քանզի մանուկ էր ։ *Եւ ա_ 21
սեն զեբէէ և սաղմանա․ արի և դու
քեզէն պատահեաց մեզ․ զի ըստ առն
և զօրութիւն իւր․ և յարեաւ գեդէօն․
Սաղմ. 82.12. ‖ և սպան զզեբէէ և զսաղմանա ։ և
էառ զմանեակսն ՚ի պարանոցաց ուղ_
տուց նոցա ։ *Եւ ասեն արք Իսրայէլի ցգե 22
դէօն․ իշխեա մեզ դու՝ և որդի քո․ և
որդի որդւոյ քոյ․ զի փրկեցեր զմեզ
՚ի ձեռաց մադիամու ։ *Եւ ասէ ցնոսա 23
գեդէօն․ ոչ իշխեցից ես ձեզ․ և ոչ
իշխեսցէ ձեզ որդի իմ․ այլ Տէր իշխես
ցէ ձեզ ։ *Եւ ասէ ցնոսա գեդէօն՝ 24
խնդրեցից ՚ի ձէնջ հայցուածս ինչ․ և
տուք ինձ՝ առ այր գինտ մի յաւարէ
անտի․ զի գինտք ոսկիք էին նոցա․ քան_
զի իսմայելացիք էին ։ *Եւ ասեն՝ տա 25
լով տացուք․ և տարածեցին զհան_
դերձս նորա․ և ընկեցին անդր այր իւրա
քանչիւր զգինտս ոսկիս զաւարի իւրոյ ։
*Եւ եղև կշիռ գնտացն ոսկեաց՝ 26
զորս խնդրեաց՝ հազար և եօթն հար
իւր սիկղ ոսկւոյ, թող զշուշանուոսն
և զմեհեանդս․ և զպատկակալս․ և
զծիրանիս․ և որ ինչ ՚ի թագաւորսն
մադիամու․ և թող զմանեակսն ոսկիս
պարանոցաց ուղտուց նոցա ։ *Եւ արար 27
զայն գեդէօն յեփուտ․ և հաստատեաց
զայն ՚ի քաղաքի իւրում յեփրայ․ և
պոռնկեցաւ ամենայն Իսրայէլ զհետ նորա
անդր․ և եղև գեդէօնի և տան նորա ՚ի
գայթակղութիւն ։ *Եւ վանեցաւ մա 28
դիամ առաջի որդւոցն Իսրայէլի՝ և ոչ ևս
յաւելին ամբառնալ զգլուխս իւր_
եանց․ և դադարեաց երկիրն ամս քա
ռասուն յաւուրս գեդէօնի ։ *Եւ 29
գնաց յերոբաաղ որդի յովասու, և
բնակեցաւ ՚ի տան իւրում ։ *Եւ գե_ 30
դէօնի էին եօթանասուն որդիք ե_
լեալք յերանաց նորա․ զի կանայք բա
զումք էին նորա ։ *Եւ հարճ նորա 31
որ ՚ի սիկիմայ, ծնաւ նմա և նա որդի․
և եդ անուն նմա աբիմելէք ։ *Եւ մե 32
ռաւ գեդէօն որդի յովասու ՚ի բար_
ւոք ծերութեան․ և թաղեցաւ ՚ի գե_
րեզմանի յովասու հօր իւրոյ․ յեփրայ
հօրն եզրեայ ։ *Եւ եղև իբրև մեռաւ 33
գեդէօն՝ դարձան որդիքն Իսրայէլի՝ և
պոռնկեցան զհետ բահաղիմայցն․ և
եդին զուխտ իւրեանց ընդ բահաղու
բերիթայ, լինել նոցա նմա Աստուած ։
*Եւ ոչ յիշեցին որդիքն Իսրայէլի զՏէր 34
Աստուած իւրեանց՝ որ փրկեաց զնոսա յամ
ենթ

թշնամեաց իւրեանց շուրջանակի ։
35 *Եւ ոչ արարին ողորմութիւն ընդ տանն
յերոբաաղայ՝ որ նա ինքն է գեդէօն․
ըստ ամենայն բարութեանն զոր արար
ընդ Իսրայէլի ։

ԳԼ ։ Թ ։

1 Եւ գնաց աբիմելէք որդի յերոբա
աղայ ՚ի սիկիմ առ եղբարս մօր
իւրոյ․ և խօսեցաւ ընդ նոսա․ և ընդ
ամենայն ազգատոհմի տան հօր մօր իւրոյ՝
2 և ասէ ։ *Խօսեցարուք յականջս ամենայն
արանց սիկիմացւոց․ ո՞ր լաւ իցէ
ձեզ՝ իշխել ձեզ եօթանասուն արանց
ամենայն որդւոց յերոբաաղայ, եթէ տի_
րել ձեզ առն միոյ ։ և յիշեցէք․ զի
ոսկր ձեր՝ և մարմին ձեր եմ ես ։
3 *Եւ խօսեցան զնմանէ եղբարք մօր
նորա յականջս ամենայն արանց սիկիմաց_
ւոց․ զամենայն բանս զայսոսիկ․ և
միտեցաւ սիրտ նոցա զհետ աբիմելէ_
քայ․ զի ասացին թէ եղբայր մեր է ։
4 *Եւ ետուն նմա եօթանասուն ար_
ծաթոյ ՚ի տանէ բահաղու բերիթայ
ուխտին․ և վարձեցաւ նոքօք աբիմե ցեաց
լէք արս սրիկայս և զարհուրեցու_
5 ցիչս․ և գնացին զհետ նորա ։ *Եւ ե_
մուտ ՚ի տուն հօր իւրոյ յեփրայ․ և կո
տորեաց զեղբարս իւր զորդիսն յերո_
բաաղայ․ արս եօթանասուն ՚ի վերայ
վիմի միոյ․ և մնաց յովաթամ որդի յե
րոբաաղայ կրտսեր, քանզի թաքեաւ ։
6 *Եւ ժողովեցան ամենայն արք սիկիմաց_
ւոց․ և ամենայն տունն մաալոնայ․ և չոգան
թագաւորեցուցին զաբիմելէք ՚ի թա
գաւոր․ առ կաղնեաւ կռոցն որ ՚ի
7 սիկիմայ ։ *Եւ ազդ եղև յովաթա_
մայ․ ել՝ գնաց և եկաց ՚ի վերայ գլխոյ
լերինն ՚ի գարիզին․ ամբարձ զձայն
իւր՝ և ելաց․ և ասէ ցնոսա․ լուարուք
ինձ արք սիկիմացւոց՝ և լուիցէ ձեզ
8 Աստուած ։ *Գնալով գնացին ծառք օծա
նել իւրեանց թագաւոր․ և ասեն ցձի
թենին․ թագաւորեա ՚ի վերայ մեր ։
9 *Եւ ասէ ցնոսա ձիթենին․ թողից
զպարարտութիւն իմ, յորս փառաւորեաց
զիս Աստուած և մարդիկ․ և երթայցեմ իշ_
10 խել ծառոց ։ *Եւ ասեն ծառքն ցթզե
նին․ եկ՝ և թագաւորեա ՚ի վերայ մեր ։
11 *Եւ ասէ ցնոսա թզենին․ թողեալ
զքաղցրութիւն իմ․ և զբերս բարութե
իմոյ․ և երթայցեմ իշխան լինել փայ
12 տից ։ *Եւ ասեն ծառքն ցորթն․ եկ՝
13 և թագաւորեա ՚ի վերայ մեր ։ *Եւ ասէ
ցնոսա որթն․ թողեալ զգինի իմ, և զու
րախութիւն Աստուծոյ և մարդկան՝ և երթայ
14 ցեմ իշխան լինել փայտից ։ *Եւ ա_
սեն ծառքն ցդժնիկն․ եկ՝ և թագաւո
րեա

բեամ 'ի վերայ մեր : * Եւ ասէ դժնիկն 15
ցծառս . թէ արդարև օծանիցէք զիս
թագաւորել 'ի վերայ ձեր . եկա՛յք՝ և
ծածկեցարո՛ւք ընդ հովանեաւ իմով.
եթէ ո՛չ ելանիցէ հուր 'ի դժնկէ աս_
տի՛ և կերիցէ զեղևնափայտս լիբա_
նանու : * Եւ արդ՝ եթէ ճշմարտու_ 16
թբ և բոլանդակութբ արարէք . և
թագաւորեցուցիք զաբիմելէք . և թէ
որպէս արարէք ընդ յերոբաաղ և ընդ
տուն նորա . և եթէ ըստ հատուցման
ձեռին նր արարէք նմա : * Որպէս ես 17
պատերազմ հայր իմ փոխանակ ձեր .
և ընկէց զանձն իւր յառաջ . և ապրե
ցոյց զձեզ 'ի ձեռաց մադիամու : * Եւ 18
դուք յարեայք 'ի վր տան հօր իմոյ
այսօր . և կոտորեցիք զորդիս նր՝ արս
եօթանասուն 'ի վերայ վիմի միոյ . և
թագաւորեցուցիք զաբիմելէք զորդի
աղախնոյ նր, 'ի վերայ արանց սիկի_
մացւոց՝ զի եղբայր ձեր է : * Եւ թէ 19
ճշմարտութբ և բոլանդակութբ ա_
րարէք ընդ յերոբաաղայ և ընդ տան
նր յաւուրս յայսմիկ՝ օրհնեսջիք դուք.
և ուրախ լիջիք յաբիմելէք . ուրախ լի
ցի և նա 'ի ձեզ : * Ապա թէ ո՛չ՝ ելցէ 20
հուր յաբիմելեքայ . և կերիցէ զարս
սիկիմացւոց . և զտունն մաաղոնայ .
ապա թէ ո՛չ՝ ելցէ հուր յարանց սիկի
մացւոց և 'ի տանէն մաաղոնայ՝ և կե_
րիցէ զաբիմելէք : * Եւ փախեաւ յո 21
վաթամ, և գերծաւ . և գնաց ընդ
ճանապարհն 'ի բերայ . և բնակեցաւ
անդ յերեսաց աբիմելեքայ եղբօր իւր
ոյ : * Եւ իշխեաց աբիմելէք 'ի վերայ 22
իղի ամս երիս : * Եւ առաքեաց Ած 23
ոգի չար 'ի մէջ աբիմելեքայ և 'ի մէջ
արանց սիկիմացւոց . և արհամարհե_
ցին արք սիկիմացւոց զտունն աբիմե
լեքայ : * Ածել 'ի վերայ նոցա զանի 24
րաւութն եօթանասնից որդւոցն յե_
րոբաաղայ . և հատուցանել զարիւն
նոցա 'ի վերայ աբիմելեքայ եղբօրն
իւրեանց՝ որ կոտորեաց զնոսա . և 'ի
վերայ արանց սիկիմացւոց՝ զի զօրա_
ցուցին զձեռս նր կոտորել զեղբարս
իւր : * Եւ գործեցին նմա դարան 25
արք սիկիմացւոց 'ի վր գլխոց լերանց.
և յափշտակէին զամենեսին՝ որք ան_
ցանէին առ նոքօք ընդ ճանապարհն .
և ազդ եղև աբիմելեքայ : * Եւ եկն 26
գաաղ որդի աբեդդայ և եղբարք նր .
և անցին 'ի սիկիմ . և վստահ եղեն 'ի
նա արք սիկիմացւոց : * Եւ ելին յան 27
դաստանն . և կթեցին զայգիս իւր_
եանց . և հարին հնձանս . և արարին
պարանցիկս . և մտին 'ի տուն աստու_
ծոյն իւրեանց . և կերին՝ և արբին՝ և

28 անիծին զաբիմելէք : * Եւ ասէ գաաղ
որդի աբեդդայ՝ ո՞ է աբիմելէք՝ և ո՞ է
որդին սիքեմայ՝ զի ծառայեմք նմա .
ո՞չ նա է որդի յերոբաաղայ՝ և զեբուղ
ծառայ իւր՝ ստահակ նր . հանդերձ
արամբք եմօրայ հօր սիքեմայ . և զի՞ է
29 զի ծառայիցեմք նմա : * Եւ ո՞ տայր
զժողովուրդս զայս 'ի ձեռս իմ . և փո
խէի զաբիմելէք . և ասէի ցաբիմելէք՝
30 բազմացո՛ զզօրս քո՝ և ե՛լ ինձ : * Եւ
լուա՛ւ զեբուղ՝ իշխան քաղաքին՝ բզ
բանս գաաղայ որդւոյ աբեդդայ . և
31 սրտմտեցաւ բարկութբ : * Եւ առա
քեաց առ աբիմելէք հրեշտակս պա_
տարագօք՝ և ասէ . ահաւասիկ գաաղ
որդի աբեդդայ և եղբարք նր եկին
'ի սիկիմ . և պաշարեն զքաղաքս 'ի վր
32 քո : * Արդ՝ արի՛ զցայգ դու և զօրդ
քո՝ որ ընդ քեզ է . և դարանամուտ
33 լեր յանդաստանին : * Եւ եղիցի ընդ
առաւօտն 'ի ծագել արեգականն ,
կանխեսցես՝ և հասցես զքաղաքաւս .
և ահա սա՝ և զօրս որ ընդ սմա է՝ ելա
նէ առ քեզ . և արասցես ընդ սա որ
34 ինչ գտցէ ձեռն քո : * Եւ յարեաւ
աբիմելէք և ամենայն զօրն որ ը նմա
զցայգ . և մտին 'ի դարանս զսիկիմաւ
35 չորք առաջք : * Եւ եղև ընդ առաւ
օտն . ել գաաղ որդի աբեդդայ՝ և ե_
կաց 'ի մուտս դրան քաղաքին . և յա_
րեաւ աբիմելէք և ամ զօրն որ ընդ
36 նմա 'ի դարանացն : * Եւ ետես գաաղ
որդի աբեդդայ զզօրն . և ասէ ցզե_
բուղ , ահաւանիկ զօր իջանէ 'ի գլխոյ
լերանց . և ասէ ցնա զեբուղ՝ զստուեր
լերանցն տեսանես դու իբրև զմար_
37 դիկ : * Եւ յաւել ևս խօսել գաաղ
և ասէ՝ ահաւանիկ զօր իջանէ ը ծո_
վակողմն առ պորտով երկրին . և ա_
ռաջ մի ել ընդ ճանապարհ կաղնւոյն
38 դիտանողաց : * Եւ ասէ ցնա զեբուղ.
արդ ո՞ւր է բերան քո՝ որ ասէր՝ թէ
ո՛վ է աբիմելէք , զի ծառայեսցուք
նմա . ո՞չ աւանիկ այն զօր է՝ զոր դուն
աղարտէիր . արդ ե՛լ՝ և տո՛ւր ընդ նմա
39 պատերազմ : * Եւ ել գաաղ առաջի
արանցն սիկիմացւոց . և մարտեաւ ը
40 աբիմելեքայ : * Եւ հալածեաց զնա
աբիմելէք . և փախեաւ յերեսաց նր
և անկան վիրաւորք բազումք մինչև
41 ցդրունս քաղաքին : * Եւ նստաւ աբի
մելէք յարիմ . և եհան զեբուղ՝ բզ
գաաղ և զեղբարս նր՝ զի մի՛ բնակես
42 ցին 'ի սիկիմ : * Եւ եղև 'ի վաղիւ
անդր՝ և ել ժողովուրդն 'ի դաշտն . և
43 ազդ եղև աբիմելեքայ : * Եւ էառ
զզօրն՝ և բաժանեաց յերիս առաջս .
և եմուտ նոկաւ 'ի դարան . և ետես՝
ահա

ահա զօր եւանելը ՚ի քաղաքէ անտի. և
յարեաւ ՚ի վե՛ր նո՛ւ և եհար. զնոսա ։
44 * ԵՒ՚ աբիմելէք՝ և գունդքն որք ընդ
նմա՝ ձակատեցան՝ և կացին առ դրան
քաղաքին. և երկու գունդքն սփռե-
ցան ՚ի վե՛ր ամենեցուն՝ որք յանդաս-
տանան էին. և հարին զնո՛ս ։ 45 * ԵՒ՚ աբի-
մելէք պատերազմէր ընդ քաղաքին
զօրն զայն ողջոյն. և առին զքաղաքն.
և զժողովուրդն որ ՚ի նմա՛ կոտորե-
ցին. և զքաղաքն կործանեցին՝ և ա-
ղարտ վարեցին ։ 46 * ԵՒ՚ լուան ամ՛ արք
աշտարակին սիկիմացւոց. և եկին յամ՛
րոց տանն բեթէլ բերիթայ ։ 47 * ԵՒ՚ ե-
պո՛ւ եղե՛ աբիմելէքայ՝ եթէ ժողովե-
ցան ամենայն արք աշտարակին սիկի-
մացւոց ։ 48 * ԵՒ՚ ել աբիմելէք ՚ի լեառն
սեղմո՛ն. ինքն, և ամ՛ զօրն որ ընդ նմա.
և էառ աբիմելէք զտապար ՚ի ձեռն
իւր. և կոտորեաց բեռն մի փայտի՝
էառ զայն՝ և եդ զայն ՚ի վերայ ուսոց
իւրոց. և ասէ ցզօրն իւր՝ զինչ տեսա
նիցէք յիս՝ զօր առնիցեմ, արասջի՛ք
և դուք վաղվաղակի իբրև զիս ։
49 * Կոտորեցին և նոքա իւրաքանչիւրք
ամենեքեան զբեռն մի փայտի՝ և բար-
ձին՝ և գնացին զհետ աբիմելէքայ. և
եդին ՚ի վե՛ր ամրոցին. այրեցին ՚ի վե՛ր
նո՛ւ զամրոցն հրով. և մեռան ամ՛ արք
աշտարակին սիկիմացւոց. իբրև հա-
զար մի ընդ այր և ընդ կին ։ 50 * ԵՒ՚ ե-
կաւ աբիմելէք ՚ի թեբեսս. և նստաւ
շուրջ զնովաւ. և էառ զնա ։ 51 * ԵՒ՚ աշ-
տարակ մի էր հզօր ՚ի մէջ քաղաքին. և
փախեան անդր ամ՛ արք և կանայք. և
ամ՛ գլխաւորք քաղաքին. և փակեցին
ընդդէմ իւրեանց. և ելին ՚ի տանիս
աշտարակին ։ 52 * ԵՒ՚ եկն աբիմելէք
մինչև զաշտարակն. և մարտեան ընդ
նմա. և մերձեցաւ աբիմելէք ՚ի դուրս
աշտարակին՝ զի այրեսցէ զնա հրով ։
Բ հմտ. 53 * ԵՒ՚ ընկեց կին մի բեկոր երկանի
11.21. ՚ի վերայ գլխոյ նո՛ւ. և մանրեաց զգա-
Բ հմտ. գաթն աբիմելէքայ ։ 54 * ԵՒ՚ աղաղա
31.4. կեաց վաղվաղակի առ պատանեակն
1.Պնա. կապարձակիքն իւր՝ և ասէ ցնա. մերկեա
10.4. զսուր քո՝ և սպան զիս. գուցէ ասիցեն
Թէ կին սպան զնա. և խոցեաց զնա
պատանին իւր. և մեռաւ աբիմելէք ։
55 * ԵՒ՚ եռես այր Իսրայէլ Թէ մեռաւ
աբիմելէք. գնացին այր իւրաքանչիւր
՚ի տեղի իւր ։ 56 * ԵՒ՚ դարձոյց Ա՛Ծ զչա-
րիսն աբիմելէքայ՝ զորս արար հօր իւր
ում կոտորելով զեօթանասունն եղ-
բարսն իւր ։ 57 * ԵՒ՚ զամ՛ չարիսն սիկի-
մացւոց դարձոյց Ա՛Ծ ՚ի գլուխս նոցա.
և եկին ՚ի վերայ նոցա անէծքն յովա
Թամայ որդւոյ յերոբաալայ ։

Գ Լ Ը Ժ

1 ԵՒ՚ յարեաւ յետ աբիմելէքայ փր-
կել զԻսրայէլ Թովղա որդի փուայ
որդի հօր եղբօր նորա ։ այր յիսաքա-
րայ ։ և նա բնակէր ՚ի սամարիայ. ՚ի
2 լերինն եփրեմի ։ * ԵՒ՚ դատեաց զԻսրայէլ
ամս տասն և երիս ։ և մեռաւ և թա- Ասան Ա
3 ղեցաւ ՚ի սամարիայ ։ * ԵՒ՚ յարեաւ յետ
յետ նո՛ւ յայիր գաղաադացի. և դա-
տեաց զԻսրայէլ ամս քսան և երկուս ։
4 * ԵՒ՚ եղեն նորա որդիք՝ երեսուն և
երկու. որք հեծանէին յերեսուն և եր
կուս յովնակս ։ և երեսուն և երկու
քաղաք նոցա ։ և կոչեաց զնո՛ս աւանս
յայիրայ մինչև ցայսօր՝ որք են ՚ի գա-
5 ղաադ ։ * ԵՒ՚ մեռաւ յայիր՝ և թաղե
ցաւ ՚ի կամո՛ն ։ * ԵՒ՚ յաւելին որդիքն
6 Իսրայէլի առնել չար առաջի Տ՛ն. և պաշ-
տեցին զբահաղիմն. և զաստարովթն.
և զաստուածս ասորւոց. և զաստու-
ածան սիդովնայ. և զաստուածս մով
բայ. և զաստուածս որդւոցն ամմնայ.
և զաստուածս պղշտգեացն. և թո-
ղին զՏ՛ն. և ոչ ծառայեցին նմա ։
7 * ԵՒ՚ սրտմտեցաւ բարկութի՛ Տ՛ն
Իսրայէլ. և մատնեաց զնո՛ս ՚ի ձեռս պղշտ
գեացն. և՚ ի ձեռս որդւոց ամմնայ ։
8 * ԵՒ՚ խախտեցին՝ և խորտակեցին
զորդիսն Իսրայէլացիս
ամն ութուտասն զամ՛ իսրայէլացիս
յայնկոյս յորդանանու. յերկրի ա-
9 մորհացւոց ՚ի գաղաադ ։ * ԵՒ՚ անցին
որդիքն ամմնայ ընդ յորդանան տալ
պատերազմ ընդ յուդայ, և ընդ տանն
եփրեմայ, և ընդ բենիամինի. և նե-
10 ղեցան որդիքն Իսրայէլ յոյժ ։ * ԵՒ՚ աղա
ղակեցին որդիքն Իսրայէլ առ Տ՛ն՝ և ասէն.
մեղաք քեզ՝ զի Թողաք զԱ՛Ծդ մեր՝ և
11 պաշտեցաք զբահաղիմն ։ * ԵՒ՚ ասէ
Տ՛ն ցորդիսն Իսրայէլ. ո՞չ ապաքէն եգիպ
տացիք և ամորհացիք՝ և որդիք ամմո-
12 նայ. և մովաբ. և պղշտգեք ։ * Ա՛ի-
դոնացիք՝ և ամաղէկ. և քանան՝ նեղե
ցին զձեզ. և աղաղակեցիք առ իս՝ և փր
13 կեցի զձեզ ՚ի ձեռաց նո՛ւ ։ * ԵՒ՚ դուք
Թողիք զիս՝ և ծառայեցիք աստուածոց
օտարաց. վա՛ն այնորիկ ո՛չ յաւելից փր
14 կել զձեզ ։ * Երթա՛յք աղաղակեցէք
առ աստուածսն զորս ընտրեցիք ձեզ.
և նոքա փրկեսցեն զձեզ ՚ի ժամանակս
15 կի նեղութե՛ն ձերոց ։ * ԵՒ՚ ասէն որ
դիքն Իսրայէլ Տ՛ն. մեղաք. արա դու ընդ
մեզ զամ՛, որ ինչ հաճոյ Թուի առաջ
քո. բայց Տ՛ն միայն ապրեցո զմեզ
16 յաւուր յայսմիկ ։ * ԵՒ՚ մերժեցին
զաստուածսն օտարոտիս ՚ի միջոյ իւր
եանց. և պաշտեցին զՏ՛ն միայն. և ո՛չ

հաշտեցաւ ընդ ժողովրդեան ։ և յո֊
գիս ապաստան եղև յաշխատութենէ
Իսրայէլի ։*Եւ ելին որդիքն ամմօնայ․ 17
և բանակեցան ՚ի Գաղաադ ։ և ելին
որդիքն Իսրայէլի , և բանակեցան ՚ի
դիտանոցին ։ * Եւ ասեն իշխանք 18
ժողովրդեանն Գաղաադու՝ այր ցըն֊
կեր իւր ։ այր որ սկիզբն առնիցէ պա֊
տերազմիլ ընդ որդիսն ամմօնայ, ե֊
ղիցի գլուխ ամենայն բնակչացս Գա֊
ղաադու ։

ԳԼ. ԺԱ.

Եւ յեփթայէ գաղաադացի ․ էր 1
այր հզօր զօրութբ․ և նա որդի
կնոջ պոռնկի ․ և ծնաւ գաղաադու
զյեփթայէ ։*Եւ ծնաւ կին գաղաա 2
դու նմա որդիս․ և հաստատեցան որ֊
դիք կնոջն․ և մերժեցին զյեփթայէ․
և ասեն ցնա ․ ոչ ժառանգեսցես ՚ի
տան հօր մերոյ․ զի որդի կնոջ պոռն
կի ես դու ։*Եւ փախեաւ յեփթայէ 3
յերեսաց եղբարց իւրոց․ և բնակե֊
ցաւ յերկիր ՚ի տովբ․ և ժողովէին առ
յեփթայէ արք սրիկայք․ և ելանէին
ընդ նմա ։*Եւ եղև յետ աւուրց․ և 4
պատերազմեցան որդիքն ամմօնայ ը̅
Իէլացիսն ։*Եւ եղև յորժամ եռուն 5
պատերազմ որդիքն ամմօնայ ը̅ Իէլի ։
չոգան ծերք գաղաադու առնուլ
զյեփթայէ յերկրէն տովբայ ։ * Եւ 6
ասեն ցյեփթայէ․ եկ՝ և եղիցիս մեզ
՚ի զօրավար ․ և տացուք պատերազմ
ընդ որդիսն ամմօնայ։*Եւ ասէ յեփ֊ 7
Ծննդ. 26.27. թայէ ցծերս գաղաադու ։ ‖ ո՞չ ապա
քէն դուք ատեցէք զիս ․ և հանէք ՚ի
տանէ հօր իմոյ․ և արձակեցէք զիս ՚ի
ձէնջ․ և արդ զի՞ եկիք առ իս յորժամ
նեղեցայք ։ *Եւ ասեն ծերքն գա 8
ղաադու ցյեփթայէ․ ոչ այդպէս է ։
այլ եկաք առ քեզ․ և երթիցես ընդ
մեզ՝ և տացուք պատերազմ ընդ որ֊
դիսն ամմօնայ։և եղիցիս մեզ ՚ի գլուխ
ամ̅ բնակչացս գաղաադու ։*Եւ ասէ 9
յեփթայէ ցծերսն գաղաադու ․ եթէ
դարձուցանիցէք զիս պատերազմիլ
ընդ որդիսն ամմօնայ, և մատնեսցէ
զնա Տր առաջի իմ, ես եղէց իշխան ։
*Եւ ասեն ծերքն գաղաադու ցյեփ֊ 10
թայէ․Տր կացցէ լսօղ ՚ի միջի մերում․
եթէ ոչ ըստ բանից քում նոյնպէս և
արասցուք։*Եւ գնաց յեփթայէ ընդ 11
ծերս գաղաադու ․ և կացուցին զնա
ժողովուրդն ՚ի վր̅ իւրեանց գլուխ,
և առաջնորդ ։ և խօսեցաւ յեփթայէ
զամ̅ զբանս իւր առաջի Տն ՚ի մասե֊
փայ ։*Եւ առաքեաց յեփթայէ հրեշ 12
տակս առ թագաւոր որդւոցն ամմօ֊
նայ՝ և ասէ․ զի՞ կայ իմ, և քո․ զի ե֊
կեալ ես առ իս պատերազմիլ յերկրի
13 իմում։*Եւ ասէ արքայ որդւոցն ամ
մօնայ ցհրեշտակսն յեփթայեայ․‖ըն֊ ‖Թուոց
դէ՞ր էառ Իէլ զերկիր իմ յելանել իւր 21. 13.
ում՝ յեգիպտոսէ ․ յառնօնայ մինչև և 24.
ցյաբոկ․ և մինչև ցյորդանան․և արդ
դարձո՛ զնա առ իս խաղաղութբ՝ և
գնացից ։ և դարձան հրեշտակքն առ
14 յեփթայէ ։*Եւ յաւել ևս յեփթայէ
առաքել հրեշտակս առ արքայ որդ֊
15 ւոցն ամմօնայ։ * Եւ ասէ ցնա․ այս֊
պէս ասէ Իէլ, և յեփթայէ․ ո՛չ էառ
Իէլ զերկիրն մովաբայ ․ և զերկիր
16 որդւոցն ամմօնայ ։ * Այլ յելանել
իւրեանց յեգիպտոսէ , գնաց Իէլ ընդ
անապատն մինչև ցծովն կարմիր ․ և
17 եկն մինչև ցկադէս։*‖Եւ առաքեաց ‖Թուոց
Իէլ հրեշտակս առ արքայ եդովմայ՝ և 20.14.
ասէ․ թո՛ղ անցից ընդ երկիր քո ։և ո՛չ
անսաց արքայն եդովմայ։ և առաքեաց
առ արքայն մովաբու՝ և ո՛չ կամեցաւ։
18 և նստաւ Իէլ ՚ի կադէս ։ *Եւ շրջե֊
ցաւ ը̅ անապատն․ և պատեցաւ զերկ
րաւն եդովմայ․և զերկրաւն մովաբայ։
և եկն առ արևելիւք երկրին մովա֊
բու․ և բանակեցաւ յայնկոյս առնօ֊
նայ․‖ և ո՛չ մտին ՚ի սահմանս մովա֊ ‖Թուոց
բու․ քանզի առնօն էր սահման մովա 21.13.
19 բու ։ *Եւ առաքեաց Իէլ հրեշտակս
առ սեհօն արքայ ամօրհացւոց՝ թա֊
գաւոր եսեբօնայ և ամօրհացւոց՝ և
ասէ ցնա Իէլ․թո՛ղ անցից ընդ երկիր
20 քո մինչև ցտեղի իմ։ *Եւ ո՛չ կամե֊
ցաւ սեհօն զԻէլ անցանել ընդ սահ֊
մանս իւր ։ և ժողովեաց սեհօն զամ̅
ժողովուրդ իւր ․ և բանակեցաւ յաս
սայ ։ և ետ պատերազմ ընդ Իէլի ։
21 *Եւ մատնեաց Տր Ա̅ծ Իէլի զսեհօն՝
և զամ̅ ազգն նորա ՚ի ձեռս Իէլի ․ և
եհար զնս̅․ և ժառանգեաց Իէլ զեր֊
կիր ամօրհացւոցն՝ բնակելոյն յերկ֊
22 րին յայնմիկ ։*Եւ ժառանգեաց Իէլ
զամ̅ սահմանս ամօրհացւոց յառնօ֊
նայ մինչև ցյաբոկ ․ և յանապատէն
23 մինչև ցյորդանան ։ * Եւ արդ Տէր
Ա̅ծ Իէլի եբարձ զամօրհացին յերե֊
սաց ժողովրդեան իւրոյ Իէլի․ և դու
24 ժառանգիցես զնա։*Ոչ ապաքէն զոր
ժառանգեցոյց քեզ քամովս աստու֊
ածն քո՝ զայն ժառանգեսցես․ և զամ̅
զոր ժառանգեցոյց Տր Ա̅ծ մեր յերե֊
սաց ձերոց՝ զայն մեք ժառանգեսցուք։
25 *‖Իսկ արդ՝ միթէ լա՞ւ ինչ իցես դու ‖Թուոց
քան զբաղակ որդի սեփովրայ զարքայն 22.2.
մովաբու․ միթէ մարտի՞ մարտեաւ
ընդ Իսրայէլի ․ կամ պատերազմաւ
26 պատերազմեցա՞ւ ընդ նոսա։*Ի բնա
կիլն

կին իւր յեսեբօն եւ 'ի դստերս նր̅ . եւ
դատա_ յարոէր եւ 'ի դստերս նր̅ . եւ յա̅մ քա_
նէբրա ղաքս՝ որ առ եզերբ յորդանանու .
ամս երեքհարիւր : զի՞ է՝ զի ոչ թափե
ցին զնոսա 'ի ժամանակին յայնմիկ :
* Եւ ես ոչ ինչ մեղայ քեզ . եւ դու 27
առնես ընդ իս զչարութի̅ տալ ընդ իս
պատերազմ : դատեսցէ Տր̅՝ որ դա_
տաւորն է՝ այսօր 'ի մէջ որդւոցն իղի
եւ 'ի մէջ որդւոցն ամմօնայ : * Եւ ոչ 28
անսաց արքայ որդւոցն ամմօնայ բա_
նիցն յեփթայեայ՝ զորս առաքեաց
առ նա : * Եւ եղեւ 'ի վր̅ յեփթայեայ 29
հոգի Տն̅ . եւ էանց ընդ գաղաադ . եւ
ընդ մանասէ . եւ էանց ընդ դիտա_
նոցն գաղաադու . եւ 'ի դիտանոցէն
գաղաադու յայնկոյս որդւոցն ամմօ_
նայ : * Եւ ուխտեաց յեփթայէ ուխտ 30
Տն̅՝ եւ ասէ : եթէ մատնելով մատ_
նեսցես զորդիսն ամմօնայ 'ի ձեռս իմ :
* Եւ եղիցի որ ելանելով ելանիցէ 'ի 31
դրանց տան իմոյ ընդառաջ իմ՝ իդառ_
նալ իմում խաղաղութբ̅ յորդւոցն
ամմօնայ, եղիցի զի մատուցից զնա
Տն̅ յողջակեզ : * Եւ էանց յեփթայէ 32
առ որդիսն ամմօնայ պատերազմիլ ը̅
նս̅ : եւ մատնեաց զնս̅ Տր̅ 'ի ձեռս նորա :
* Եւ եհար զնս̅ . յարոէրայ մինչեւ 'ի 33
մուտս սեմենիթայ . քսան քաղաքք .
մինչեւ ցաբէլ այգեստանեացն՝ հար_
ուածս մեծամեծս յոյժ : եւ վանեցան
որդիքն ամմօնայ յերեսաց որդւոցն
իղի : * Եւ եկն յեփթայէ 'ի մասե_ 34
փայ 'ի տուն իւր : եւ ահա դուստր իւր
ելանէր ընդ առաջ նորա թմբկօք եւ
պարուք : եւ նա էր միամօր սիրելի նր̅ .
եւ ոչ գոյր նորա բայ 'ի նմանէ ուստր
կամ դուստր : * Եւ եղեւ իբրեւ ետես 35
զնա՝ պատառեաց զհանդերձս իւր՝ եւ
ասէ . վա՜յ է ինձ դուստր իմ . ընկճե_
ցեր զիս . խոչընդակն եղեր ինձ . զի
ես բացի զբերան իմ վս̅ քո առ Տէր .
եւ ոչ կարացից դարձուցանել : * Եւ 36
ասէ ցնա . եթէ վս̅ իմ բացեր զբե_
րան քո առ Տր̅, արա զիս որպէս ել 'ի
բերանոյ քումմէ . փոխանակ զի արար
քեզ Տր̅ վրէժխնդրութի̅ 'ի թշնա_
մեաց քոց յորդւոցն ամմօնայ : * Եւ 37
ասէ ցհայր իւր . արա ինձ զբանս զայս .
թողացո ինձ զերկուս ամիսս . եւ եր_
թայց՝ շրջեցայց ընդ լերինս . եւ լացից
զկուսութիս իմ . ես, եւ ընկերք իմ :
* Եւ ասէ ցնա՝ երթ : եւ արձակեաց 38
զնա զերկուս ամիսս : եւ չոգաւ ինքն եւ
ընկերք իւր . եւ ելաց զկուսութիւն իւր
'ի վր̅ լերանց : * Եւ եղեւ յետ կատարե 39
լոյ երկուց ամսոցն, դարձաւ առ հայր
իւր : եւ արար նովաւ զուխտն՝ զոր ուխ
տեաց : եւ նա ոչ գիտէր զայր : եւ եղեւ
40 'ի կրօնս 'ի մէջ իսրայելի : * Յաւուրց
յաւուրս ժողովէին դստերք իղի ,
ողբալ զդուստրն յեփթայեայ գաղաա
դացւոյ չորս աւուրս 'ի տարւոջ :

ԳԼ : ԺԲ :

1 Եւ ժողովեցան որդիքն եփրեմի .
եւ եկին 'ի սեփենայ . եւ ասեն
ցյեփթայէ . զի՞ է՝ զի ելեր պատերազ
միլ ընդ որդիսն ամմօնայ . եւ զմեզ ոչ
կոչեցեր երթալ ընդ քեզ : արդ այրես
ցուք հրով զտուն քո 'ի վերայ քո :
2 * Եւ ասէ ցնոսա յեփթայէ՝ այր զր_
կեալ էի ես . եւ ժողովուրդ իմ . եւ
որդիք ամմօնայ տառապեցուցանէին
զիս յոյժ . եւ բողոք արկի առ ձեզ . եւ
3 ոչ փրկեցիք զիս 'ի ձեռաց նց̅ : * Եւ
տեսի, զի ոչ ոք էր որ փրկէր . եւ եդի
զանձն իմ 'ի ձեռին իմում . եւ անցի
առ որդիսն ամմօնայ . եւ մատնեաց
զնս̅ Տր̅ 'ի ձեռս իմ : եւ արդ ընդէ՞ր ե_
լիք առ իս յաւուր յայսմիկ մարտնչել
4 ընդ իս : * Եւ ժողովեաց յեփթայէ
զա̅մ արս գաղաադու . եւ տայր պա_
տերազմ ընդ եփրեմի : եւ հարին արք
գաղաադու զեփրեմ . զի ասացին ապ
րեալքն եփրեմի, թէ դուք գաղաա_
դացիք 'ի մէջ եփրեմի եւ 'ի մէջ մանա
5 սէի էք : * Եւ կալաւ գաղաադ զկիրճս
յորդանանու զեփրեմի : եւ եղեւ՝ իբրեւ
ասացին ապրեալքն եփրեմայ , թէ
թո՛ղ անցցուք . ասեն ցնս̅ արք գաղաա
դու . մի թէ եւ դո՞ւք յեփրեմէ իցէք :
6 եւ ասեն, չեմք 'ի նոցանէ : * Եւ ասեն
ցնս̅, տո՛ւք մեզ նշան ինչ . եւ ասացէք
հա՛սկ հա՛սկ : եւ ոչ յաջողեցան խօսել
այնպէս : եւ կալան՝ եւ կոտորեցին զնս̅
յանցս՝ յորդանանու : եւ անկան 'ի ժա
մանակին յայնմիկ յեփրեմէ քառա_
7 սուն եւ երկու հազարք : * Եւ դատեաց
յեփթայէ զիղ̅ ամս վեց՝ եւ մեռաւ
յեփթայէ գաղաադացի՝ եւ թաղե_
ցաւ 'ի քաղաքի իւրում 'ի գաղաադ :
8 * Եւ դատեաց յետ նր̅ զիղ̅ եսեբօն
9 'ի բեթղէհեմէ : * Եւ եղեն նր̅ ուս_
տերք երեսուն . եւ դստերք երեսուն
տուեալք արտաքս : եւ երեսուն կին
էած ուստերաց իւրոց արտաքուստ :
10 եւ դատեաց զիղ̅ ամս եօթն : * Եւ
մեռաւ եսեբօն՝ եւ թաղեցաւ 'ի բեթ
11 ղէհեմ : * Եւ դատեաց յետ նր̅ զիղ̅՝
12 էլօն զաբուղոնացի ամս տասն : * Եւ
մեռաւ էլօն զաբուղոնացի . եւ թաղե
ցաւ յելիմ . յերկրին զաբուղոնի :
13 * Եւ դատեաց յետ նր̅ զիղ̅, աբդօն
14 որդի էլլէքայ փարաթոնացի : * Եւ
եղեն նորա որդիք քառասուն՝ եւ երե

սուն

սուն որդիք որդւոց նորա. որք հեծա֊
նէին յեօթնասուն յաւանակս. և դա֊
տեաց զԻէլ ամս ութ: * Եւ մեռաւ 15
աբդոն որդի Էլլէքայ փարաթոնա֊
ցի. և թաղեցաւ յեփրաթոն. յերկրի
եփրեմայ ՚ի լերինն ամաղեկայ:

ԳԼ. ԺԳ.

‖ Վեր. 10,6. Եւ ‖ յաւելին որդիքն իսրայելի 1
առնել չար առաջի Տն. և մատ
նեաց զնոսա Տր ՚ի ձեռս այլազգեացն
ամս քառասուն: * Եւ եղև այր մի ՚ի 2
սարայ ՚ի ցեղէ դանայ. և անուն նր
մանուէ: և կին նորա ամուլ էր՝ և ոչ
ծնանէր: * Եւ երևեցաւ հրեշտակ 3
Տն կնոջն. և ասէ ցնա. ահաւադիկ
‖ Ծննդ. դու ամուլ ես. և ոչ է քո ծնեալ. ‖ և
16. 11. յղասցիս՝ և ծնցիս որդի: * Արդ ‖ զգ 4
1. Թագ. գոյշ լեր. գուցէ ըմպիցես զգինի՝ և
1. 20. զօղի. և մի ուտիցես զամ զանսբ:
Ղուկ. * Զի ահա յղասցիս դու. և ծնցիս 5
1. 31. որդի. և երկաթ մի ելցէ ՚ի գլուխ
‖ Թուոց նորա. զի ուխտաւոր Ա՟Յ եղիցի ման
6. 3. և 4. ուկն անդստին յորովայնէ. և նա
սկսցի փրկել զիսրայէլ ՚ի ձեռաց փղշ
տացւոցն: * Եւ եմուտ կինն՝ և ասէ 6
ցայր իւր. եթէ այր Ա՟Յ եկն առ իս.
և տեսիլ նր իբրև զտեսիլ հրեշտակի
Ա՟Յ երևելի յոյժ. և հարցի ցնա՝ թէ
ուստի ես. և զանուն իւր ոչ պատ֊
մեաց ինձ: * Եւ ասէ ցիս. ահա յղաս 7
ցիս դու. և ծնցիս որդի: և արդ մի
ըմպիցես զգինի և զօղի. և մի ուտի֊
ցես զամ անօրէ: զի ուխտաւոր Ա՟Յ
եղիցի մանուկն անդստին յորովայնէ
մօր իւրոյ մինչև ցօր մահուան իւրոյ:
* Եւ աղաչեաց մանուէ զՏր՝ և ասէ. 8
յիս Տր. այրն Ա՟Յ՝ զոր առաքեցեր
առ մեզ, եկեսցէ դարձեալ առ մեզ՝
և լուսաւորեսցէ զմեզ. թէ զինչ ա֊
րասցուք մանկանն՝ որ ծնանիցի:
* Եւ լուաւ Ա՟Ծ ձայնի մանուէի: և 9
եկն հրեշտակն Ա՟Յ միւս անգամ առ
կինն նորա մինչդեռ նստէր յանդի. և
մանուէ այր նորա չէր առ նմա: * Եւ 10
փութացաւ կինն՝ և ընթացեալ պատ
մեաց առն իւրում, և ասէ ցնա: ահա
երևեցաւ ինձ այրն՝ որ եկն առ իս յաւ
ուր յայնմիկ: * Եւ յարեաւ գնաց մա 11
նուէ զհետ կնոջ իւրոյ. և եկն առ
այրն. և ասէ ցնա. եթէ դու իցես
այրն, որ խօսեցար ընդ կնոջն: և ասէ
հրեշտակն. Ես եմ: * Եւ ասէ մանուէ: 12
արդ գալով չափ բանին քոյոյ. զինչ
լինիցին իրաւունք մանկանն՝ և գործք
նորա: * Եւ ասէ հրեշտակն Տն ցմա 13
նուէ. յամենայնէ զոր ասացի ցկինդ՝
զգուշ լինիցի: * Յամէ՝ որ ելանէ յոր 14
թոյ՝ մի կերիցէ. և զգինի և զօղի մի
արբցէ. և զամ անօրէ մի կերիցէ.
յամէ զոր պատուիրեցի նմա՝ զգոյշ
15 լինիցի: * Եւ ասէ մանուէ ցհրեշ֊
տակն. թող բռնադատեսցուք զքեզ.
և արասցուք առաջի քո ուլ մի յայ֊
16 ծեաց: * Եւ ասէ հրեշտակն Տն ցմա
նուէ: եթէ բռնադատեսցես զիս՝ ոչ
կերայց ՚ի հացից քոց. և եթէ արաս
ցես ողջակէզ՝ Տն մատուսցես զնա:
զի ոչ գիտաց մանուէ թէ հրեշտակ
17 Տն իցէ: * Եւ ասէ մանուէ ցհրեշ֊
տակն Տն. զի՞նչ անուն է քեզ. զի յոր
ժամ եկեսցէ բանն քո՝ փառաւոր
18 արասցուք զքեզ: * Եւ ասէ ցնա
հրեշտակն Տն. ‖ զի՞ հարցանես զան֊ ‖ Ծննդ.
ուանէ իմմէ. և նա է սքանչելի: 32. 29.
19 * Եւ էառ մանուէ զուլն այծեաց
զզոհն. և մատոյց ՚ի վերայ վիմին՝ Տն
սքանչելարարի: և մանուէ և կին նր
20 հայէին: * Եւ եղև ընդ ամբառնալ
բոցոյն ՚ի վերուստ ՚ի սեղանոյն յեր֊
կինս. ամբարձաւ և հրեշտակն Տն
բոցովլ սեղանոյն. և մանուէ և կին նր
հայէին: և անկան ՚ի վերայ երեսաց
21 իւրեանց յերկիր: * Եւ ոչ ևս յաւել
երևել հրեշտակն Տն մանուէի և
կնոջ նորա. յայնժամ գիտաց մանուէ
22 թէ հրեշտակ Տն է: * Եւ ասէ մա֊
նուէ ցկինն իւր. մահու մեռանիցիմք՝
23 զի զԱ՟Ծ տեսաք: * Եւ ասէ ցնա կին
նորա. եթէ կամեցեալ էր Տն սպա֊
նանել զմեզ, ոչ ընդունէր ՚ի ձեռաց
մերոց զողջակէզն և զզոհն. և ոչ լու֊
սաւորէր մեզ զայն ամ ընդ ժամա֊
նակս ժամանակս. և ոչ լսելի առնէր
24 մեզ զայն: * Եւ ծնաւ կինն որդի. և
կոչեաց զանուն նր սամփսոն. և աճեաց
25 մանուկն. և օրհնեաց զնա Տր: * Եւ
սկսաւ Հոգի Տն շրջել ընդ նմա ՚ի
բանակին դանայ. ՚ի մէջ սարայ. և
՚ի մէջ եսթաւուղայ:

ԳԼ. ԺԴ.

1 Եւ էջ սամփսոն ՚ի թամնաթայ.
և ետես զկին մի ՚ի թամնաթայ.
՚ի դստերացն այլազգեաց. և հաճոյ
2 թուեցաւ առաջի նր: * Եւ ել պատ
մեաց հօր իւրում և մօր՝ և ասէ: կին
մի տեսի ՚ի թամնաթայ ՚ի դստերացն
այլազգեաց. և արդ առէք զնա ինձ
3 կնութե: * Ասեն ցնա հայր և մայր
իւր. մի թէ ո՞չ գուցէ ՚ի դստերաց
եղբարց քոց. և յամ ժողովրդեան ի֊
մում կին. զի երթիցես դու առնուլ
զկին յայլազգեաց անթլփատից: և
ասէ սամփսոն ցհայր իւր. զնա առ
ինձ. զի նա հաճոյ է աչաց իմոց:
* Եւ

*Եւ հայր նր եւ մայր նր ոչ գիտացին 4
թէ 'ի ՏՆէ է. զի զհատուցումն խնդ_
րիցէ նա յայլազգեացն. 'ի ժամանա
կին յայնմիկ այլազգիքն տիրէին իՂի:
*Եւ էջ սամփսոն՝ եւ հայր նորա եւ 5
մայր իւր 'ի թամնաթայ: եւ խոտորե_
ցաւ սամփսոն յայգեստանն թամնա_
թայ. եւ ահա կորիւն մի առիւծու գո
չեաց ընդդէմ նորա: *Եւ յաջողե_ 6
ցաւ 'ի վ՛ր նր Հոգի ՏՆ. եւ ձեղքեաց
զնա իբրեւ զուլ մի այծեաց: եւ ոչ ինչ
գոյր 'ի ձեռին նորա: եւ ոչ պատմեաց
հօր իւրում եւ մօր իւրում, զոր արար:
*Եւ իջին՝ խօսեցան ընդ կնոջն: եւ 7
հաճոյ թուեցաւ առաջի սամփսոնի:
*Եւ դարձաւ յետ աւուրց առնուլ 8
զնա. եւ խոտորեցաւ տեսանել զգէշ
առիւծուն. եւ ահա գունդ մեղուաց
'ի բերան առիւծուն. եւ մեղր: *Եւ 9
էառ զայն 'ի բերան իւր. եւ երթալով
երթայր՝ եւ ուտէր: չոգաւ առ հայր
իւր եւ առ մայր իւր. եւ ետ նոցա՝ եւ կե
րին. եւ ոչ պատմեաց նց՝ թէ 'ի բե_
րանոյ առիւծուն եհան զմեղրն:
*Եւ էջ հայր նր առ կինն. եւ արար 10
անդ սամփսոնի հարսանիս զեօթն օր:
զի այնպէս առնէին երիտասարդք:
*Եւ եղեւ 'ի զարհուրիլ նց 'ի նմանէ. 11
կացուցին առ նա ընկերս երեսուն.
եւ էին ընդ նմա: *Եւ ասէ ցնս սամփ 12
սոն. արկից ձեզ առասպել. եթէ առ_
եղծանելով առեղծանիցէք զնա ինձ
զեօթն օր խրախութեան՝ եւ գտանիցէք՝
տաց ձեզ երեսուն պատառակալս, եւ
երեսուն պատմուճանս հանդերձից:
*Ապա թէ ոչ կարիցէք առեղծանել 13
ինձ. տաջիք դուք ինձ երեսուն պա_
տառակալս եւ երեսուն պատմուճանս
հանդերձից: եւ ասեն ցնա՝ արկ մեզ
զառասպելն քո. եւ լուիցուք զնա:
*Եւ ասէ ցնոսա: 'ի կերչէ ել կերա 14
կուր. եւ 'ի հզօրէ ել քաղցր: եւ ոչ կա_
րացին առեղծանել զառասպելն զե_
րիս աւուրս: *Եւ եղեւ յաւուրն չոր_ 15
րորդի. եւ ասեն ցկինն սամփսոնի. պատ
րեա զայր քո՝ եւ պատմեսցէ քեզ զա_
ռասպելն. գուցէ այրիցեմք զքեզ՝ եւ
զտուն հօր քո: թէ աղքատացուցա_
նել կոչեցեր զմեզ այսր: *Եւ ելաց 16
կինն սամփսոնի առ նա՝ եւ ասէ ցնա.
ատեցեր զիս՝ եւ ոչ սիրեցեր զիս. զի
զառասպելն զոր արկեր որդւոց ժողո
վրդեան իմոյ՝ ինձ ոչ պատմեցեր: եւ
ասէ ցնա սամփսոն. ահա հօր եւ մօր
իմոյ ոչ պատմեցի. եւ արդ քեզ պատ
մեցեմ: *Եւ ելաց առ նա զեօթն օր՝ 17
յորս էր խրախութիւն: եւ եղեւ յաւուրն
եօթներորդի՝ պատմեաց նմա՝ քանզի
թախանձեաց զնա: եւ նա պատմեաց
18 որդւոց ազգին իւրոյ: *Եւ ասեն ցնա
արք քաղաքին յաւուրն եօթներոր_
դի՝ յառաջ քան զմտանել արեգա_
կանն: զի՞նչ քաղցրագոյն քան զմեղր.
կամ զի՞նչ հզօրագոյն քան զառիւծ:
եւ ասէ ցնս սամփսոն: եթէ ոչ ձնչեալ
էր զերինջն իմ. ոչ գտանէիք զառաս էէ:
19 պելն իմ: *Եւ յաջողեցաւ 'ի վերայ
նր Հոգի ՏՆ՝ եւ էջ յասկաղոն. եւ եհար
անդ արս երեսուն: եւ էառ՝ եւ ետ ըզ
պատմուճանսն առեղծանելեաց ա_
ռասպելին: եւ բարկացաւ սրտմտութ
սամփսոն. եւ ել 'ի տուն հօր իւրոյ:
20 *Եւ ամուսնացաւ կինն սամփսոնի
ընդ հացկերոյթն նր՝ որ էր նր ընկեր: ԺԵ Դ---Տ

ԳԼ: ԺԵ:

1 Եւ եղեւ յետ աւուրց՝ յաւուրս
հնձոց ցորենոյ, այց արար սամփ
սոն կնոջ իւրում. ածեալ զուլ մի յայ
ծեաց: եւ ասէ՝ մտից առ կին իմ 'ի սե
նեակ. եւ ոչ եթող զնա հայրն նորա
2 մտանել առ նա: *Եւ ասէ հայրն նր.
ասելով ասացի՝ թէ ատեցեր զնա. եւ
ետու զնա ընկերի քում. ոչ աւանիկ
քոյր նորա կրտսեր լաւագոյն է քան
զնա. եղիցի սա քեզ փոխանակ նր:
3 *Եւ ասէ սամփսոն. անպարտ եմ ես
միանգամայն յայլազգեաց. եթէ ա_
4 րարից ես ընդ դոսա չարութի: *Եւ
գնաց սամփսոն. եւ կալաւ երեքհար_
իւր աղուէսս. եւ էառ ջահս՝ եւ կա_
պեաց զնոսա ընդ միմեանս ձետ ընդ
ձետ. եւ եդ զջահսն 'ի մէջ երկուց ձե
տոցն. եւ կապեաց 'ի միջոցին զջահսն:
5 *Եւ ելոյց հուր 'ի ջահսն. եւ արձա_
կեաց յոր այլազգեացն. եւ այրեաց
զորանն, եւ զյառաջագոյն հնձեալսն
'ի բարդից մինչեւ ցկանգնաւորսն. եւ
6 մինչեւ ցայգիս եւ ցձիթենիս: *Եւ
ասեն այլազգիքն. ո՞ արար զայս: եւ
ասեն՝ սամփսոն փեսայ թամնացւոյն:
զի եհան զկին նորա՝ եւ ետ ընկերի նր:
եւ ելին այլազգիքն՝ եւ այրեցին զտուն
հօր նորա՝ եւ զկինն եւ զհայր նր հրով:
7 *Եւ ասէ սամփսոն. եթէ դոյն չափ
եւս առնիցէք. սակայն ոչ հաճեցայց.
այլ զվրէժ իմ յիւրաքանչիւր ումեք
8 'ի ձէնջ խնդրեցից: *Եւ եհար զնս
'ի սրունից մինչեւ ցերանս հարուածս
մեծամեծս: եւ էջ՝ եւ բնակեցաւ առ
9 հեղեղատաւն յայրին ետեմայ: *Եւ
ելին այլազգիքն. եւ բանակեցան զյու
10 դայիւ. եւ անկան զելքեաւ: *Եւ
ասէ ցնոսա այր յուդայ. ընդէ՞ր ելէք
'ի վ՛ր իմ: եւ ասեն այլազգիքն. կա_
պել զսամփսոն ելաք՝ եւ առնել ընդ
նա՝

հաւ՝ զօրօրինակ արար ընդ մեզ։ *Եւ 11
ի կոչն երեք հազարք արանց յուդայ՝ ի
ծագ վխմին եաեմայ. և ասեն ցսամի
սոն. ոչ գիտեաս զի իշխեն մեզ այլազ
դիքն. և ընդէր արարեր զայդ ընդ
մեզ։ և ասէ ցնոսա սամիսոն. որպէս
արարին ընդիս, նոյնպէս արարի ընդ
նոսա։ *Եւ ասեն ցնա. կապել գքեզ 12
իմաք. և մատնել՝ ի ձեռս այլազ
գեացն։ և ասէ ցնոսա սամիսոն. եր
դնուարուք ինձ դուք՝ չսպանանել զիս։
և տուք զիս ցնա. և դուք մի երբեք
պատահիցիք ինձ։ *Եւ երդուան 13
նմա՝ և ասեն. ոչ. այլ կապելով կա
պեսցուք զքեզ. և տացուք՝ ի ձեռս
նոյ. բայց մահու ոչ սպանցուք զքեզ։
և կապեցին զնա երիւք կապովք նո
րովք. և հանին զնա՝ ի վխմէն։ *Եւ 14
եկն մինչև ցծնօան։ և այլազգիքն ա
ղաղակեցին՝ և ընթացան ընդդէմ
նմա։ և յաջողեցաւ՝ ի վերայ նորա հո
գի Տեառն. և եղեն կարքն՝ ի բազուկս նո
իբրև զխծուծ՝ յորժամ՝ ի հուր հատա
նիցի. և հալեցան կապանքն՝ ի բազ
րազմ. և մատնեսցէ զձեզ Տ՛՛ ՚ի ձեռս
48 մեր։ *Եւ յարեաւ պղշտացին՝ և եկն՝
և մերձեցաւ ընդդէմ դաւթի։ և ա
չապարեաց դաւիթ՝ և ընթացաւ ՚ի
ճակատն ընդդէմ պղշտացւոյն։

49 *Եւ ձգեաց դաւիթ զձեռն իւր ՚ի մա ‖ Սերա. 47.4.
խաղն. և էառ անտի քար մի. և պար
սաքարեաց՝ և էհար զճակատ պղշտա
ցւոյն. և եմուտ քարն ընդ սաղաւ
արան ՚ի ճակատն. և անկաւ ՚ի վերայ 1.Կո՛ե. 1.
50 երեսաց իւրոյ յերկիր։ *Եւ զօրա 4. 30.
ցաւ

ցաւ դաւիթ քան զայլազգին պար_
սիւքն և քարիւ, և եհար զայլազգին՝
և սպան զնա․ և սուր չէր 'ի ձեռին նր ։
*Եւ ընթացաւ դաւիթ՝ և հարաւ 'ի 51
վր նորա ։ և էառ զնորին սուսեր․ և
մերկեաց զնա 'ի պատենից իւրոց՝ և
սպան զնա․ և եհատ զգլուխ նորա ։
Իբրև տեսին այլազգիքն, եթէ մեռաւ
զօրաւորն նց՝ փախեան ։ *Եւ յա_ 52
րեան արք Իլի և յուդայ․ աղաղակե_
ցին՝ և յարձակեցան զհետ նց մինչև 'ի
մուտս գեթայ․ և մինչև 'ի դրունս աս
կաղոնի ։ և անկան վիրաւորք այլազ
գեացն զճանապարհայնն մինչև ցդը_
րունս գեթայ՝ և ակկարոնի ։ *Եւ 53
դարձան արք Իլի ասպատակեալքն
զհետ այլազգեացն․ և կոխեցին զբա
նակս նց ։ *Եւ էառ դաւիթ զգլուխ 54
այլազգւոյն․ և եբեր զնա յեմ ։ և
զզէն նր եդ 'ի վրանս իւրում ։ *Եւ 55
իբրև ետես սաւուղ զդաւիթ ելեալ
ընդդէմ այլազգւոյն․ ասէ ցաբեններ
իշխան զօրուն․ ո՞յր որդի է պատա_
նեակդ այդ՝ աբեններ ։ և ասէ աբեն
ներ․ կենդանի է անձն քո արքայ՝ ե_
թէ գիտիցեմ ։ *Եւ ասէ արքայ․ 56
հարց՝ թէ ո՞յր որդի իցէ պատանեակդ ։
*Եւ իբրև դարձաւ դաւիթ 'ի հար_ 57
կանելոյ զայլազգին, էառ զնա աբեն
ներ՝ և եած զնա առաջի սաւուղայ․
և զգլուխ այլազգւոյն 'ի ձեռին նորա ։
*Եւ ասէ ցնա սաւուղ․ ո՞յր որդի ես՝ 58
մանուկ դու ։ և ասէ դաւիթ․ որդի
ծառայի քոյ յեսսեայ բեթղեհեմա_
ցւոյ ։

ԳԼ․ ԺԸ․

Եւ եղև իբրև վախճանեաց զխօ_ 1
սելն ընդ սաւուղայ, և ոգի յով
նաթանու կապեցաւ ը ոգւոյն դաւ_
թի․ և սիրեաց զնա յովնաթան ըստ
անձին իւրում ։ *Եւ էառ զնա սաւ 2
ուղ առ իւր յաւուր յայնմիկ․ և ոչ ետ
նմա դառնալ 'ի տուն հօր իւրոյ ։
*Եւ ուխտեաց ընդ նմա յովնաթան 3
ուխտ՝ առ 'ի սիրել զնա ըստ անձին
իւրում ։ *Եւ մերկացաւ յովնաթան 4
զլօդիկն՝ որ զիւրև՝ և ետ զայն դաւ_
թի․ և զվարապանակս իւր, մինչև
ցսուսեր իւր․ և ցաղեղն իւր ։ և ցկա_
մար իւր ։ *Եւ երթայր դաւիթ ամ 5
ուրեք՝ ուր և առաքէր զնա սաւուղ․
և իմաստնանայր ։ և կացոյց զնա սաւ
ուղ 'ի վերայ արանց պատերազմի․ և
հաճոյ եղև առաջի աչաց ամ ժողո_
վրդեանն․ նաև առաջի աչաց ծառայ
իցն սաւուղայ ։ *Եւ եղև 'ի մտանել 6
նց՝ իբրև դարձաւ դաւիթ 'ի սպանա

նելոյ զայլազգին, ելին պարաւորք ը
առաջ դաւթի յամենայն քաղաքացն
Իլի երգել՝ պար առնուլ ընդառաջ
սաւուղայ արքայի, թմբկօք՝ և ուրա_
7 խութը՝ և ծնծղայիւք ։ *Եւ նուա_
գէին կանայք խաղալիկք՝ և ասէին․
‖ Եհար սաւուղ զհազարս՝ և դաւիթ ‖ Վայր․
8 զբիւրս ։ *Եւ զչարեցաւ սաւուղ վն 21․ 11․
բանին այնորիկ՝ և ասէ ։ դաւթի ե_ Սիրաք․
տուն զբիւրս․ և ինձ ետուն զհազարս․ 47․7․
և արդ զինչ պակաս է նմա՝ բայց ե_
9 թէ թագաւորութիս ։ *Եւ ընդ ա_
կամբ հայէր սաւուղ յօրէ յայնմանէ՝
10 և առ յապայ ։ *Եւ եղև 'ի վաղիւ
անդր․ և հարաւ այս չար յԱծյ 'ի վր
սաւուղայ․ և մարգարէանայր 'ի մէջ
տան իւրոյ․ և դաւիթ երգէր ձեռամբ
իւրով ըստ և հանապազն․ և գեղարդն
11 'ի ձեռին սաւուղայ ։ *Եւ ասէ հա_
րից և կարեցից զդաւիթ գեղար_
դեամբս ընդ որմն․ և ձգեաց սաւուղ․
և խոյս ետ յերեսաց նր դաւիթ եր_
12 կիցս ։ *Եւ երկեաւ սաւուղ յերեսաց
դաւթի․ զի Տր էր ընդ նմա․ և 'ի սաւ
13 ուղայ մերժեալ էր ։ *Եւ 'ի բաց
արար զնա սաւուղ յիւրմէ․ և կացոյց
զնա իւր հազարապետ․ և ելանէր և
մտանէր առաջի ժողովրդեանն ։
14 *Եւ էր դաւիթ խելամուտ յամ ճա
նապարհս իւր․ և Տէր ընդ նմա ։
15 *Եւ ետես սաւուղ թէ այնչափ ի_
մաստուն է յոյժ․ ակն ածէր յերեսաց
16 նորա ։ *Եւ ամ Իէլ և յուդայ սիրէր
զդաւիթ․ զի նա ելանէր և մտանէր
17 առաջի երեսաց ժողովրդեանն ։ *Եւ
ասէ սաւուղ ցդաւիթ․ ահա դուստր
իմ երէց մերոբ՝ տաց զնա քեզ կնու
թն․ բայց լեր դու ինձ յորդի զօրու
թն․ և պատերազմեա՛ց զպատերազ
մունս Տն ։ քանզի ասաց սաւուղ՝ մի
եղիցի ձեռն իմ 'ի նա․ այլ եղիցի 'ի
18 նա ձեռն այլազգեացն ։ *Եւ ասէ
դաւիթ ցսաւուղ․ ո՞վ եմ ես՝ և կամ
կեանք ազգատոհմի հօր իմոյ 'ի մէջ
19 Իլի, զի լինիցիմ փեսայ արքայի ։ *Եւ
եղև 'ի ժամանակի տալոյ զմերոբ
դուստր սաւուղայ՝ դաւթի, տուաւ
նա եդրիելի մօլաթացւոյ կնութն ։
20 *Եւ սիրեաց մեղքող դուստր սաւու
ղայ զդաւիթ․ և ազդ եղև սաւուղայ․
և հաճոյ թուեցաւ բանն յաչս նորա ։
21 *Եւ ասէ սաւուղ՝ տաց զնա նմա կնու
թն․ և եղիցի նմա 'ի գայթագղութի ․
և էր 'ի վերայ սաւուղայ ձեռն այլազ
գեացն ․ և ասէ սաւուղ ցդաւիթ ․
երկոքումբք փեսայանացիս դու ինձ այ
22 սօր ։ *Եւ պատուիրեաց սաւուղ ծա
ռայից իւրոց և ասէ ․ խօսեցարուք
դուք

դուք լուելեայն ընդ դաւթի՝ և ասա_
ցէք . ահա արքայ հաճեալ է ընդ քեզ .
և ամ ծառայք նորա սիրեն զքեզ ։ և արդ
փեսայացի՛ր դու արքայի ։ *Եւ խօ_ 23
սեցան ծառայքն սաւուղայ յականջս
դաւթի ըստ ամենայն բանիցս այսո_
ցիկ . և ասէ դաւի՛թ՝ թեթև ինչ յաչս
ձեր փեսայանալ արքայի ։ և ես այր
մի տառապեալ եմ, և ոչ փառաւոր ։
* Եւ պատմեցին նմա ծառայքն իւր 24
ըստ բանիցս այսոցիկ զոր խօսեցաւ
դաւի՛թ ։ *Եւ ասէ սաւուղ . այսպէս 25
ասասջի՛ք ցդաւի՛թ . եթէ ոչ կամի ար
քայ վարձանս . այլ հարիւր անթլփա
տութիւն այլազգեաց՝ առնուլ վրէժ
'ի թշնամեաց արքայի . և սաւուղ խոր_
հէր արկանել զնա 'ի ձեռս այլազ_
գեացն ։ *Եւ պատմեցին դաւթի ծա 26
ռայքն սաւուղայ զբանս զայսոսիկ .
և հաճոյ թուեցաւ բանն յաչս դաւ_
թի՝ փեսայանալ արքայի . և չէին
լցեալ աւուրք ։ * Եւ յարեաւ դա_ 27
ւիթ և գնաց ինքն և արք իւր . և եհար
յայլազգեացն արս հարիւր . և եբեր
զանթլփատութիւս նց . և ելից զնո_
սա առաջի արքայի . և փեսայացաւ
‖ 2. Թագ. 3.14. արքայի . ‖ և ետ սաւուղ զմեղքող
դուստր իւր նմա կնութե ։ *Եւ ետես 28
սաւուղ և ծանեաւ եթէ Տր է ընդ
նմա . և ամ իէլ սիրէ զնա ։ *Եւ յաւել 29
ես ակնածել 'ի դաւթէ . և եղև սաւ
ուղ թշնամութբ ընդ դաւթի զամ
աւուրս ։ * Եւ ելին իշխանք այլազ_ 30
գեացն . և եղեն 'ի բազում ժամանա
կաց ելք նց . և խելամուտ էր դաւիթ
քան զամենայն ծառայսն սաւուղայ .
և պատուեցաւ անուն նորա յոյժ ։

Գլ: ԺԹ.

Եւ խօսեցաւ սաւուղ ընդ յովնա_ 1
թանայ որդւոյ իւրում . և ընդ
ամ ծառայս իւր սպանանել զդաւիթ ։
* Եւ յովնաթան որդի սաւուղայ հա 2
ճեալ էր ընդ դաւիթ յոյժ . և պատ_
մեաց յովնաթան դաւթի և ասէ . հայր
իմ խնդրէ սպանանել զքեզ . զգո՛յշ
լեր վաղիւ ընդ առաւօտն ։ և թաքի
ջի՛ր . և նստի՛ջի՛ր 'ի թաքստեան ։ *Եւ 3
ես ելից և կացից մօտ առ հօր իմում
յանդի, ուր և իցես դու . և ես խօսե_
ցայց վն քո ընդ հօր իմում . և տեսից
եթէ զինչ իցէ և պատմեցից քեզ ։
* Եւ խօսեցաւ յովնաթան վն դաւ_ 4
թի բանս բարիս ընդ սաւուղայ հօր
իւրում . և ասէ ցնա . մի մեղիցէ ար_
քայ 'ի ծառայ իւր դաւիթ, զի ոչինչ
մեղաւ նա քեզ . և գործք նր բարու_
թբ են առ քեզ յոյժ ։ *Եւ եդ զանձն 5
իւր 'ի ձեռին իւրում, և եհար զայլազ
գին . և արար Տր փրկութի մեծ . և
ամ իէլ տեսին և ուրախ եղեն . և ըն
դէր մեղանչիցես յարիւն արդար՝
սպանանել զդաւիթ տարապարտուց ։
6 *Եւ լուաւ սաւուղ ձայնի յովնաթա
նու . և երդուաւ սաւուղ և ասէ . կեն
7 դանի է Տր եթէ մեռանիցի ։ * Եւ
կոչեաց յովնաթան զդաւիթ . և պատ
մեաց նմա յովնաթան զամ բանս զայ
սոսիկ . և տարաւ յովնաթան զդաւիթ
առ սաւուղ . և էր առաջի նորա իբրև
8 յերէկն և յեռանդ ։ *Եւ յաւել ևս
լինել պատերազմ . և զօրացաւ դաւ_
իթ տալ պատերազմ ը̅ այլազգիսն .
և եհար 'ի հարուածս մեծամեծս 'ի
նոցանէ յոյժ . և փախեան յերեսաց նր ։

9 *Եւ եղև այս չար 'ի Տէ 'ի վերայ
սաւուղայ . և նստէր 'ի տան և գե_
ղարդն 'ի ձեռին նր . և դաւիթ երգէր
10 ձեռօք իւրովք ։ *Եւ խնդրէր սաւուղ
հարկանել զգեղարդն ընդ դաւիթ
և ընդ որմն . և խուսեաց յերեսաց
սաւուղայ . և եհար զգեղարդն յորմն .
11 և դաւիթ ել գնաց և զերծաւ ։ *Եւ
եղև 'ի գիշերին յայնմիկ առաքեաց
սաւուղ հրեշտակս 'ի տուն դաւթի
պահել զնա . զի սպանցէ զնա ընդ ա_
ռաւօտն . և պատմեաց դաւթի մեղ
քող կին իւր՝ և ասէ . եթէ ոչ ապրե
ցուցես զանձն քո 'ի գիշերիս յայս_
12 միկ՝ վաղիւ մեռանելոց ես ։ *Եւ իջոյց
մեղ

մեղքող զդաւիթ ընդ պատուհանն ,
և փախեաւ. գնաց և ապրեցաւ: *Եւ 13
էառ մեղքող պաճուճապատանս՝ և
եդ 'ի մ͞ջ մահճացն. և լեարդ այծեաց,
և կծիկ մազոյ եդ 'ի սնարս. և ծած֊
կեաց զնա համդերձիւ : *Եւ առա֊ 14
քեաց հրեշտակս սաւուղ ունել զդաւ֊
իթ. և ասեն խօթ է: *Եւ առաքեաց 15
'ի վ͞ր դաւթի դարձեալ և ասէ. հա֊
նէք զնա մահճօքն առ իս՝ և սպանից
զնա: *Եւ եկին հրեշտակքն. և ահա 16
պաճուճապատանք 'ի վերայ մահ֊
ճացն. և լեարդ այծեաց՝ և կծիկ մա֊
զոյ 'ի սնարսն : *Եւ ասէ սաւուղ 17
ցմեղքող՝ ընդէ՞ր այսպէս խաբեցեր
զիս. և արձակեցեր զթշնամին իմ, և
ապրեցաւ. և ասէ մեղքող ցսաւուղ.
ինքն ասաց թէ արձակեա՛ զիս. ապա
թէ ոչ , սպանանեմ զքեզ: *Եւ դաւ 18
իթ փախեաւ և ապրեցաւ. և եկն առ
սամուէլ յարիմաթեմ. և պատմեաց
նմա զա͞մ ինչ զոր արար նմա սաւուղ.
և գնացին սամուէլ և դաւիթ՝ և նս֊
տան 'ի նաւաւթ հռամայ: *Ազդ եղև 19
սաւուղայ և ասեն . ահա դաւիթ 'ի
նաւաւթ հռամայ է: *Եւ առաքեաց 20
սաւուղ հրեշտակս ունել զդաւիթ .
և տեսին զեկեղեցին մարգարէից մար
գարէացելոց. և սամուէլ կայր 'ի մ͞ջ
նոցա. և եղև 'ի վերայ հրեշտակացն
սաւուղայ հոգի Ա͞Յ , և մարգարէա֊
ցան և նոքա: *Եւ պատմեցաւ սաւու 21
ղայ: և յաւել սաւուղ առաքել այլ
հրեշտակս. և մարգարէացան և ն͞ք.
և յաւել սաւուղ առաքել այլ հրեշ֊
տակս, և մարգարէացան և նոքա:
* Եւ բարկացաւ սրտմտութ͞բ սաւ 22
ուղ. և գնաց ինքն յարիմաթեմ . և
եկն մինչև 'ի ջրհորն մեծ՝ որ 'ի սոկ֊
քով. և եհարց և ասէ. ո՞ւր է սամուէլ
և դաւիթ. և ասեն՝ 'ի նաւաւթ հռա֊
մայ է: *Եւ գնաց անտի 'ի նաւաւթ 23
հռամայ. և եղև 'ի վերայ նորա հոգի
Ա͞Յ. և երթայր երթալով և մարգա
րէանայր. մինչև հասանել նմա 'ի նա
ւաթ հռամայ: *Եւ մերկացաւ զհան 24
դերձ իւր ինքնին , և մարգարէացաւ
առաջի նոցա. և անկաւ մերկ զտիւն
‖ Ա Թգ. 10.12. ողջոյն . և զգիշերն ամենայն. ‖ Վասն
այնորիկ ասէին՝ թէ և սաւուղ 'ի
մարգարէս:

Գլ: Ի:

Եւ փախեաւ դաւիթ 'ի նաւաւթայ 1
հռամայ. և եկն խօսեցաւ առա֊
ջի յովնաթանայ և ասէ. զի՞նչ արարի
և զի՞նչ վնաս է իմ. և զի՞նչ մեղայ առա
ջի հօր քո՝ զի խնդրէ զանձն իմ: *Եւ 2
ասէ ցնա յովնաթան. քա՛ւ քեզ՝ ոչ
մեռանիցիս. զի ահա ոչ առնէ հայր
իմ բան մի մեծ կամ փոքր՝ զոր ոչ յայտ
նէ յունկն իմ. և զիա՞րդ իցէ զի թա
քուցանիցէ հայր իմ յինէն զբանդ
3 զայդ. չէ այդպէս: *Պատասխանի ետ
դաւիթ՝ և ասէ ցյովնաթան. գիտե֊
լով գիտէ հայր քո՝ զի գտի շնորհս
առաջի աչաց քոց. և ասէ թէ մի գի֊
տասցէ յովնաթան՝ գուցէ ոչ կամիցի.
այլ կենդանի է Տ͞ր, և կենդանի է անձն
քո. զի որպէս ասացի՝ վճարեալ է
ընդ իս և ընդ հայր քո մինչև ցմահ:
4 *Եւ ասէ յովնաթան ցդաւիթ. զի՞նչ
ցանկայ անձն քո՝ և արարից քեզ:
5 *Ասէ դաւիթ ցյովնաթան. ահա վա
ղիւ ամսամուտ է. և ես նստելով ո՛չ
նստայց ուտել զհաց ընդ արքայի. և
առաքեսցես զիս՝ և թաքեայց 'ի դաշ
տի աստ մինչև ցընդերեկս աւուրն եր
6 րորդի: *Եթէ առնելով առնիցէ այց
զինէն հայր քո՝ ասասցես՝ եթէ հրա֊
ժարելով հրաժարեցաւ յինէն դաւ֊
իթ երթալ մինչև ցբեթղեհեմ քա֊
ղաք իւր. զի զոհ աւուրց է անդ՝ ա͞մ
7 ցեղին: *Եթէ ասասցէ թէ բարւոք
է՝ խաղաղութի՛ է ծառայի քում: ա֊
պա թէ խստի՛ տայցէ պատասխանի՝
գիտասջիր՝ զի վճարեալ է չարութ͞ի
8 առ 'ի նմանէ: *Եւ արասցես ողոր֊
մութ͞ի ընդ ծառայի քում. զի յուխտ
Տ͞ն մուծեր զծառայ քո ընդ քեզ. և
եթէ վնաս ինչ է 'ի ծառայի քում, դու
իսկ սպան զիս. և ընդէ՞ր հասուցանի
9 ցես զիս առ հայր քո: *Եւ ասէ յով֊
նաթան. քա՛ւ լիցի քեզ. զի եթէ գի
տելով գիտասցիս եթէ վճարեալ է
չարութ͞ի առ 'ի հօրէ իմմէ գալ 'ի վ͞ր
քո. եթէ ոչ 'ի քաղաքն իսկ քո պատ
10 մեցից քեզ: *Եւ ասէ դաւիթ ցյով֊
նաթան՝ ո՛ պատմեսցէ ինձ եթէ խս֊
տի՛ պատասխանի տայցէ քեզ հայր քո:
11 *Եւ ասէ յովնաթան ցդաւիթ. երթ՝
և մնա՛ յանդին. և գնացին երկոքեան
12 յանդն: *Եւ ասէ յովնաթան ցդաւ
իթ. Տ͞ր Ա͞Ծ Ի͞Ղի գիտէ՝ եթէ ոչ քննե
ցից զհայր իմ զերեք ժամանն՝ և եթէ
բարի ինչ իցէ զդաւթէ և եթէ չար՝
13 առաքեցից առ քեզ յանդս: *Զայս
արասցէ Տ͞ր յովնաթանու , և զայս
յաւելցէ. եթէ ոչ քննեցից զչարու֊
թի՛ն վասն քո . և յայտնեցից յունկն
քո. և արձակեցից զքեզ՝ և երթիցես
'ի խաղաղութի. և եղիցի Տ͞ր ը͞ն քեզ՝
14 որպէս էր ընդ հօր իմում: *Եւ իցէ
թէ մինչդեռ ես կենդանի իցեմ, ա֊
րասցես ընդ իս զողորմութի՛ն՝ և
15 եթէ մահու մեռանիցիմ: *Մի՛ բարձ
ցես

ցես զողորմութիւն քո 'ի տանէ իմմէ
մինչև ցյաւիտեան . և եթէ ոչ՝ 'ի ջըն
ջել Տեառն զթշնամիս դաւթի զիւրաքան
չիւրոք յերեսաց երկրի : *Գտցի ա- 16
նուն յովնաթանու 'ի տան դաւթի ,
խնդրեսցէ Տէր 'ի ձեռաց թշնամեաց
դաւթի : *Եւ յաւել յովնաթան երդ- 17
մնեցուցանել զդաւիթ առ սէր նորա՝
զի սիրեաց զանձն սիրելւոյն իւրոյ :
*Եւ ասէ ցնա յովնաթան . վաղիւ 18
ամսամուտ է . և խնդրեսցիս : *Իսկ 19
զի խնդրեսցի աթոռ քո . և երեքօրեա
ցիս . և խնդրեսցիս . և եկեսցես 'ի տե
ղի քո՝ ուր թաքեարն յաւուրն գոր-
ծոյ , և նստցիս առ երգաբաւդ այդ-
ուրիկ : *Եւ ես երեքկնեցից փքնօք՝ յորս 20
ածել և ձգել յամատորայն : *Եւ 21
արձակեցից զպատանեակն՝ և ասա-
ցից . երթ՝ և գտ զփքինն . և եթէ ա-
սելով ասացից ցպատանեակն . 'ի քէն
և այսր է փքինն . և այսր առ զնա ,
եկեսջիր . զի խաղաղութի է քեզ . և
չէն ինչ բանք : կենդանի է Տր :
*Ապա թէ ասացից ցպատանին . 'ի 22
քէն և անդր է փքինն , գնասջիր՝ զի
արձակեաց զքեզ Տր : *Եւ բանից՝ 23
զոր խօսեցաք ես և դու՝ ահա Տր լիցի
վկայ՝ ընդ իս և ընդ քեզ մինչև ցյաւ-
իտեան : *Եւ թաքեաւ դաւիթ յան 24
դին . և եհաս ամսամուտն . և եմուտ
արքայ 'ի սեղանն ուտել զհաց : *Եւ 25
նստաւ արքայ յաթոռ իւրում որպէս
միանգամն և միւսանգամ աթոռով
յորմայեցն՝ և ժամանեաց յովնա-
թան . և նստաւ աբեններ 'ի կողմա-
նէ սաւուղայ . և խնդրեցաւ տեղին
դաւթի : *Եւ ոչ խօսեցաւ սաւուղ և 26
ոչ ինչ յաւուր յայնմիկ՝ քանզի ասաց՝
թէ դէպք ինչ իցեն չլինելոյ սուրբ՝
և չիցէ սրբեալ : *Եւ եղև 'ի վաղիւ 27
ամսամտին յաւուրն երկրորդի՝ խնդ-
րեցաւ տեղին դաւթի . և ասէ սաւ-
ուղ ցյովնաթան ցորդի իւր . զի՞ է՝
զի ոչ եկն որդին յեսսեայ երէկ և այ
սօր 'ի սեղանս : *Պատասխանի ետ 28
յովնաթան՝ և ասէ ցսաւուղ . հրաժա
րեցաւ յինէն երթալ 'ի բեթղեհէմ
քաղաք իւր : *Ասէ՝ արձակեա զիս՝ 29
զի զոհ է ցեղին մերոյ 'ի քաղաքին . և
պատուիրեցին յիս եղբարք իմ . և արդ
եթէ գտի շնորհս առաջի աչաց քոց՝
երթայց՝ և տեսից զեղբարս իմ : վն
այնորիկ ոչ եկն 'ի սեղան արքայի :
*Եւ բարկացաւ սաւուղ 'ի վր յով 30
նաթանու՝ և ասէ ցնա՝ աղջկորդի
անձնամատն . ես ո՛չ գիտեմ , զի դաշ
նաւոր ես դու որդւոյն յեսսեայ՝ յա-
մօթ քո և յամօթ առականաց մօր

31 քոյ : *Զի զամ աւուրս որչափ որ-
դին յեսսեայ կենդանի է՝ ոչ հաստա-
տեսցի թագաւորութի քո . արդ ա-
ռաքեա կալ զպատանին՝ զի որդի մա-
32 հու է նա : *Պատասխանի ետ յովնա
թան սաւուղայ հօր իւրում , և ասէ
ցնա . ընդէ՞ր մեռանիցի . զի՞նչ գոր-
33 ծեաց : *Եւ վերացոյց սաւուղ զգե-
ղարդն 'ի վր յովնաթանու սպանա-
նել զնա . և գիտաց յովնաթան՝ թէ
վճարեալ է չարութի 'ի հօրէ նր՝ սպա
34 նանել զդաւիթ : *Եւ դիմեաց յով
նաթան 'ի սեղանոյ անտի արտաքս
բարկութբ և սրտմտութբ . և ոչ եկեր
յաւուրն երկրորդի ամսոյն հաց . զի
բեկաւ վր դաւթի . զի վճարեաց վր
35 նորա հայրն իւր : *Եւ եղև ընդ ա-
ռաւօտն ել յովնաթան յանդն , որպ
ժամադիր եղև դաւթի 'ի վկայութի .
36 և մանուկ փոքրիկ ընդ նմա : *Եւ ասէ
ցպատանեակն . ընթա՛ , գտ զփքինն
զոր ձգեցից . և ընթացաւ պատա-
նեակն . և նա ձգեաց զփքինն և եբեր
37 զնա : *Եւ չոգաւ պատանեակն մինչև
ցտեղի փքնին զոր ձգեաց յովնաթան .
աղաղակեաց յովնաթան զկնի պատա
նեկին և ասէ . 'ի քէն և անդր է փքինն
38 *Եւ աղաղակեաց յովնաթան զկնի
պատանեկին և ասէ . փութացեալ
արագեա՛ և մի՛ կայցես . և քաղեաց
մանուկն յովնաթանու զփքինսն և ե-
39 բեր առ տէր իւր : *Եւ պատանեակն
ո՛չ ինչ գիտէր՝ բայց 'ի յովնաթանայ և
40 'ի դաւթէ՝ զի գիտէին զբանն : *Եւ
ետ յովնաթան զգործին իւր ցպատա
նեակն , և ասէ ցպատանեակն իւր , երթ
41 մուտ 'ի քաղաքն : *Եւ եմուտ պա-
տանեակն . և յարեաւ դաւիթ յարգա
բայն և անկաւ 'ի վր երեսաց իւրոց
յերկիր և երկիր եպագ նմա երիցս ան
գամ . և համբուրեաց իւրաքանչիւր
զընկեր իւր . և ելաց իւրաքանչիւր 'ի
վր ընկերի իւրոյ մինչև ցմեծ վախ-
42 ճան : *Եւ ասէ յովնաթան ցդաւիթ՝
երթ 'ի խաղաղութի . և որպ երդուաք
մեք երկոքեին յանուն Տն և խօսեցաք՝
Տր լիցի վկայ ընդ իս և ընդ քեզ . և
'ի մէջ զաւակի իմոյ և 'ի մէջ զաւակի
43 քոյ մինչև ցյաւիտեան : *Եւ յարեաւ
դաւիթ և գնաց . և յովնաթան եմուտ
'ի քաղաքն :

Գլ : ԻԱ .

1 Եւ եկն դաւիթ 'ի նոմբա՝ առ աքի
մելէք քահանայ . և զարհուրե-
ցաւ աքիմելէք 'ի պատահել նր . և ասէ
ցնա . զի՞ է՝ զի դու միայն ես՝ և ոչոք
2 է ընդ քեզ : *Եւ ասէ դաւիթ ցա-
քիմե-

քիմելէք քահանայ Ա՟Ծ․ բան ինչ հրա
մայեալ է ինձ արքայի այսօր. և ասէ
ցիս՝ մի՛ ոք գիտասցէ զբանն վասն որոյ
առաքեցի զքեզ. և վ՟ս որոյ պատուիրե
ցի քեզ. և հրամայեն եւ տուն մանկտ֊
ւոյն 'ի տեղւոջն որ կոչի Ա՟Ծ հաւա֊
տարմութիւն. փեղմոնի ելմոնի: *Եւ 3
արդ՝ եթէ իցեն 'ի ձեռին քում հինգ
նկանակ հացի, տո՛ւր 'ի պէտս իմ. թէ
որչափ և գտանիցի. *Պատասխանի 4
ետ քահանայն և ասէ ցդաւիթ. ո՛չ
կայ հաց պիղծ ընդ ձեռամբ իմով.
այլ հաց սրբութե. և եթէ իցեն զգու
շացեալ մանկտին 'ի կանանց, կերիցեն.
* Պատասխանի ետ դաւիթ քահա֊ 5
նային՝ և ասէ ցնա. 'ի կանանց մեկուսի
եմք յերէկն և յեռանդն՝ յելանել ինձ
'ի ճանապարհս սրբեցան և մանկտին.
զի և ճանապարհս իսկ պիղծ է. և վ՟ս
այնորիկ այսօր սրբեսցի գործովս ի֊
‖ Մատ. 12. 3. և 4. մով: *‖ Եւ ետ նմա աքիմելէք քա֊ 6
հանայ 'ի զառաջաւոր հացէն. զի ոչ
գոյր անդ հաց. բայց 'ի հացէն երեսաց՝
առեալ յերեսաց Տ՟ն. դնել առաջի
հաց ջերմ. յաւուրն յորում էառ զայն:
*Եւ անդ էր մի 'ի ծառայիցն սաւու 7
ղայ յաւուր յայնմիկ նեղեալ նեսա֊
րա՛ առաջի Տ՟ն՝ և անուն նր դովեկ
ասորի. արածէր զջորիս սաւուղայ:
*Եւ ասէ դաւիթ ցաքիմելէք, եթէ 8
իցէ՛ աստ ընդ ձեռամբ քով գեղարդն
կամ սուսեր. զի զսուսեր իմ և զկազ
մած իմ ո՛չ առի 'ի ձեռին իմում. քան
զի բանն արքայի ստիպեաց զիս:
*Եւ ասէ քահանայն. ահա սուսերն 9
գողիադու այլազգւոյ փղշտացւոյ՝ զոր
սպաներ 'ի հովիտն ելայ. և այն պա
տեալ կայ ձորձով յետոյ վակասին.
եթէ զայն առնուս ընդ քեզ՝ ա՛ռ. զի
ոչ գոյ աստ բաց յայնմանէ. և ասէ
դաւիթ, չի՛ք իբրև զնա. տո՛ւր ցիս
զայն. և ետ նմա զայն: *Եւ յարեաւ 10
դաւիթ և փախեաւ յաւուր յայնմիկ
յերեսաց սաւուղայ. և եկն դաւիթ
առ անքուս արքայ գեթայ. *Եւ ա֊ 11
սեն ծառայքն անքուսայ ցնա. ո՞չ սա
է դաւիթ՝ թագաւոր երկրին. ո՞չ սմա
նուագէին պարաւորքն. և ասէին.
եհար սաւուղ զհազարս. և դաւիթ
զբիւրս: *Եւ եդ դաւիթ զբանսն 'ի 12
սրտի իւրում. և երկեաւ յոյժ յերե֊
սաց անքուսայ արքայի գեթայ: *Եւ 13
այլակերպեաց առաջի նոցա զերեսս
իւր. և պատճառեցաւ յաւուր յայն֊
միկ. և կաքաւէր առ դուրս քաղա֊
քին. և ծործեցուցանէր զլորձունս իւր
'ի վերայ մօրուաց իւրոց. և յախի֊
թերս խաղայր: * Եւ ասէ անքուս 14

ցծառայս իւր. ահա տեսէք զայրն այ
սահար՝ ընդէ՞ր մուծիք զնա առ իս:
15 *Մի՞ թէ կարօտ ինչ իցեմ ես այսա
հարօք. զի ածիք զդա այսահարել ա֊
ռաջի իմ. մի՛ մտցէ դա 'ի տուն:

ԳԼ. ԻԲ.

1 Գնաց անտի դաւիթ՝ և եկն՝ զեր
ծաւ ոդոլոմայ. և լուան եղբարք 'ի յան֊ ձաւն ոդո֊ ղոմայ
նորա և տ՟ն հօր նորա. և իջին
2 առ նա անդր: * Եւ ժողովեին առ
նա ա՟մ վշտատեսք. և ամենայն պար
տապանք. և ա՟մ ցաւագնեալք ող֊
ւովք. և էր նոցա զօրագլուխ. և էին
ընդ նմա իբրև արք չորեքհարիւր:
3 * Եւ գնաց անտի դաւիթ 'ի մասե֊
փաթ մովաբայ. և ասէ ցարքայն մով֊
բայ. եղիցի հայր իմ և մայր իմ առ
քեզ. մինչև գիտացից թէ զինչ արաս
4 ցէ ինձ Ա՟Ծ: * Եւ աղաչեաց զերեսս
արքային մովաբայ. և բնակեցան առ
նմա զա՟մ աւուրս մինչև էր դաւիթ
5 յանձաւին: * Եւ ասէ գադ մարգա
րէ ցդաւիթ. մի՛ նստիր յանձաւիդ.
այլ արի՛, և երթիցես յերկիրն յու֊
դայ. գնաց դաւիթ և եկն նստաւ 'ի
6 քաղաքին սարիթ: * Եւ լուաւ սաւ
ուղ եթէ յայտնեցաւ դաւիթ՝ և արքն
որք ընդ նմա. և սաւուղ նստէր 'ի
բլրին 'ի ներքոյ հերկին որ 'ի ռամա.
և գեղարդն 'ի ձեռին իւրում. և ա՟մ
ծառայք նորա կային շուրջ զնովաւ:
7 *Եւ խօսեցաւ սաւուղ ընդ ծառայսն
իւր՝ որք կային շուրջ զնովաւ. և ասէ
ցնոսա. լուարո՛ւք որդիք բենիամինի՝
թէ արդարև ամենեցուն ձեզ տացէ
որդին յեսսեայ անդս և այգեստանս.
և զամենեսեան զձեզ առնիցէ հազա
8 րապետս և հարիւրապետս: * Զի
միաբանեալ կայք 'ի վերայ իմ դուք
ամենեքեան. և ո՛չ ոք էր որ յայտնէր
յունկն իմ՝ 'ի կռնել որդւոյն իմոյ ուխտ
ը՟ որդւոյն յեսսեայ: և չի՛ք ոք 'ի ձէնջ
որում ցաւէր վասն իմ, և յայտնէր
յունկն իմ. զի յարոյց որդի իմ զծա֊
ռայ իմ՝ 'ի վերայ իմ թշնամի. որպէս
9 յաւուր յայսմիկ: * Պատասխանի ետ
դովեկ ասորի. որ կայր 'ի վ՟ր ջորւոց
սաւուղայ. և ասէ: տեսի զորդին յես
սեայ եկեալ 'ի նոմբա առ աքիմելէք
10 որդի աքիտովբայ քահանայ: * Եւ
հարցանէր նա նմա 'ի Տ՟է. և ետ նմա
պաշար. և զսուսերն գողիադու այլ֊
11 ազգւոյ ետ նմա: * Եւ առաքեաց ար
քայ. և կոչեաց զաքիմելէք որդի աքի
տովբայ զքահանայ. և զա՟մ որդիս
հօր նր զքահանայս. որք էին 'ի նոմ֊
բա. և եկին ամենեքին առ արքայ:

* Եւ ասէ սաւուղ. լուր որդի աքի_ 12
տովբայ. և ասէ ահաւասիկ կամ. խօսեա՛ց
տէր: * Եւ ասէ ցնա սաւուղ. զի՞ է 13
զի միաբանեցայք դուք և որդին յես
սեայ՝ հակառակ ինձ. տալ նմա հաց
և սուսեր. և հարցանել նմա 'ի Տէ.
և զնել զնա ինձ թշնամի. որպէս և
յաւուր յայսմիկ: * Պատասխանի ետ 14
աքիմելէք արքային և ասէ. և ո՞վ է յա_
մենայն ծառայս քո հաւատարիմ իբ_
րև զդաւիթ. և փեսայ արքային. և իշ
խան ամ հրամանի քոյ. և փառաւոր
'ի տան քում: * Եթէ այսր աւուր ինչ 15
սկսեալ իցեմ հարցանել նմա յԱյ.
քա՛ւ մի՛ երբէք դիցէ արքայ 'ի վերայ
ծառայի իւրոյ այդպիսի բան. և 'ի վր
տան հօր իմոյ. զի ոչ գիտէ ծառայ քո
յամենայնի յայդմիկ բան մի՛ մեծ
կամ փոքր: * Եւ ասէ արքայ սաւուղ. 16
մահու մեռցիս աքիմելէք՝ դու և ամ
տուն հօր քո: * Եւ ասէ արքայ ցսուր 17
հանդակսն որք կային շուրջ զնովաւ.
մատիք և սպանէք զքահանայսն Տն.
զի ձեռն նոցա ընդ դաւթի է. զի գի
տացին եթէ փախչի նա՝ և ոչ յայտնե
ցին յունկն իմ. և ոչ կամեցան ծա_
ռայքն արքային արկանել զձեռս իւր
եանց. և մեղանչել 'ի քահանայսն Տն:
* Եւ ասէ արքայ ցդովեկ. դարձիր 18
դու՝ և պատահեա՛ց քահանայիցն. և
դարձաւ դովեկ ասորի. և կոտորեաց
զքահանայսն Տն. և սպան յաւուր
յայնմիկ երեքհարիւր և հինգ այր. (ութսուն և հինգ)
զամենեսին որք կրէին զեփուտն կտա
ւի: * Եւ զնոմբա քաղաք քահա_ 19
նայիցն եհար սրով սուսերի յառնէ
մինչև ցկին. 'ի տղայոց մինչև ցստն_
դիաց. յարջառոյ և յիշոյ մինչև ցոչ
խար՝ բերանով սրոյ: * Եւ ապրեցաւ 20
որդի մի աքիմելէքայ. որդւոյ աքի_
տովբայ. և անուն նորա աբիաթար.
և փախեաւ զհետ դաւթի: * Եւ 21
պատմեաց աբիաթար դաւթի եթէ
կոտորեաց սաւուղ զամենայն քահա
նայսն Տն: * Եւ ասէ դաւիթ ցա_ 22
բիաթար՝ գիտէի յաւուր յայնմիկ.
եթէ դովեկ ասորի պատմէ սաւու_
ղայ. ես եմ պարտական ոգւոց տան
հօր քո: * Նիստ առ իս. մի՛ երկնչիր. 23
զի ուր խնդրեցից անձին իմոյ տեղի,
խնդրեցից և քում անձին. զի պահես
ցիս դու առ իս:

ԳԼ. ԻԳ.

Եւ ազդ եղև դաւթի. և ասեն. 1
Ահա այլազգիք պատերազմին
ընդ կէիլա. և յափշտակեցին զկալ
որայն: * Եւ եհարց դաւիթ 'ի Տէ և 2
ասէ. եթէ երթա՞յց. և հարկանիցեմ
զայլազգիսն զայնոսիկ. և ասէ Տէր
ցդաւիթ. երթ. և հարցես զայլազ_
3 գիսն. և փրկեսցես զկէիլա: * Եւ
ասեն արք դաւթի ցնա՝ ահա մեք աս
տէն 'ի հրէաստանի յերկիւղի եմք. և
զիա՞րդ լինիցի եթէ երթիցեմք 'ի
4 կէիլա յաւար այլազգեացն: * Եւ յաւ
ել միւսանգամ դաւիթ հարցանել 'ի
Տէ. և պատասխանի ետ նմա Տէր՝ և
ասէ ցնա. արի՛ էջ 'ի կէիլա՝ զի ես
մատնեցից զայլազգիսն 'ի ձեռս քո:
5 * Եւ գնաց դաւիթ և արքն որք ընդ
նմա 'ի կէիլա. և մարտեաւ ընդ այլ_
ազգիսն. և փախեան յերեսաց նորա.
և էառ զանասունս նոցա. և եհար 'ի
նոցանէ հարուա՛ծս մեծամեծս. և փր
կեաց դաւիթ զբնակիչսն կէիլայ:
6 * Եւ եղև 'ի փախչելն աբիաթարայ
որդւոյ աքիմելէքայ առ դաւիթ. և
ինքն ընդ դաւթի էջ 'ի կէիլա. և ու
նէր զեփուտն 'ի ձեռին իւրում:
7 * Եւ ազդ եղև սաւուղայ. եթէ եկն
դաւիթ 'ի կէիլա. և ասէ սաւուղ.
վաճառեաց զնա Ած 'ի ձեռս իմ. զի
փակեցաւ մտեալ 'ի քաղաք դրանց և
8 դռնափակաց: * Եւ հրաման ետ սաւ
ուղ ամ ժողովրդեանն իջանել 'ի պա
տերազմ 'ի կէիլայ. ունիլ զդաւիթ
9 և զարս նորա: * Եւ գիտաց դաւիթ
զսաւուղայ եթէ ո՛չ դադարի 'ի չա_
րութենէ. և ասէ դաւիթ ցաբիա_
թար քահանայ. մատո՛ զեփուտ Տն:
10 * Եւ ասէ դաւիթ. Տր Ած Իղի լուր
լով լուաւ ծառայ քո՝ եթէ խնդրէ
սաւուղ գալ 'ի վերայ կէիլայ. ապա_
11 կանել զքաղաքս վասն իմ: * Եթէ
պաշարիցի. և եթէ իջանիցէ այժմ
այսր սաւուղ՝ որպէս լուաւ ծառայ քո:
Տր Ած Իղի պատմեա՛ ծառայի քում.
12 և ասէ Տր՝ պաշարեսցի: * Եւ ասէ
դաւիթ. եթէ մատնեսցեն զիս կէի_
լացիքս, և զարս իմ 'ի ձեռս սաւու_
13 ղայ. և ասէ Տր. մատնեսցեն: * Եւ
յարեաւ դաւիթ, և արքն որք էին նմա
իբրև չորեքհարիւր. ելին 'ի կէիլայ. և
գնացին յո և գնային. և ազդ եղև
սաւուղայ եթէ զերծաւ դաւիթ 'ի
կէիլայ. և դադարեաց յելանելոյ:
14 * Եւ նստաւ դաւիթ յանապատին 'ի
մասերեթ յանձուկսն. և նստէր 'ի լե
րին անապատին զիփայ 'ի մաւյլ լե_
րինն 'ի մթին երկրին. և խնդրէր զնա
սաւուղ զամ աւուրս. և ոչ մատնեաց
15 զնա Տր 'ի ձեռս նր: * Եւ ետես դաւ
իթ եթէ ելանէ սաւուղ խնդրել
զդաւիթ. և դաւիթ նստէր յանապա
տին 'ի մաւյլ լերինն զիփայ նորում:
* Եւ

գեացն. ազգ եղև նմա և ասեն. ահա
ընանիկ դաւիթ յանապատին գադգայ
3 է։ * Եւ էառ ընդ իւր երիս հազարս
արանց ընտրելոց յամենայն իսրայէլ. և գնաց
խնդրել զդաւիթ և զարս նր. Հան-
դիպ եղիմաց որոյն եղջերուաց.
4 * Եւ եկն ի պատահակս հօտիցն որ առ
ճանապարհաւն. և անդ էր այր մի։
և եմուտ սաւուղ հանգչիլ։ և դաւիթ
և արքն նստեին ի ներքնումն այրին։
5 * Եւ ասեն արքն դաւթի ցնա. ահա
այս օրն է, զորմէ ասաց Տր ցքեզ, մատ
նել զթշնամի քո ի ձեռս քո. և արաս
ցես ընդ նա՝ որպէս հաճոյ թուի քեզ
քո։ և յարեաւ դաւիթ և եհատ զտոը
տուն լոդկին սաւուղայ գաղտ։
6 * Եւ եղև յետ այնորիկ՝ զղջացոյց
զդաւիթ սիրտն իւր. զի եհատ զտը
7 տուն լոդկի նր։ * Եւ ասէ դաւիթ
յարս իւր. քաւ լինի ինձ ի Տէ, թէ
արարից զբանդ զայդ տեառն իմում.
օծելոյ Տն, մխել՝ ինձ զձեռս իմ. զի
8 օծեալ Տն է նա։ * Եւ հաձեաց դաւ
իթ զարան իւր բանիւք. և ոչ ետ նոյ
յառնել և սպանանել զսաւուղ։ և
սաւուղ յարեաւ յայրէ անտի և էզ ի
9 ճանապարհն։ * Եւ յարեաւ դաւիթ
զկնի նորա. ել յայրէ անտի։ և աղա-
ղակեաց դաւիթ զհետ նորա և ասէ.
աւր իմ արքայ. և հայեցաւ սաւուղ
ի թիկունս նորա. և անկաւ դաւիթ ի դիմի
ի վէր երեսաց իւրոց յերկիր. և եպագ ուանս էաք
10 նմա երկիր։ * Եւ ասէ դաւիթ ցսաւ
ուղ. ընդէր լսես բանից ժողովր-
դեանն՝ որք ասեն թէ դաւիթ խնդ-
11 րէ զանձն քո։ * Ահա յաւուրս յայսմիկ
տեսին աչք քո՝ ոգի մատնեաց զքեզ
Տր այսօր ի ձեռս իմ յայրէ անտ. և
ոչ կամեցայ սպանանել զքեզ. և
խնայեցի ի քեզ. և ասացի թէ ոչ
ձգեցից զձեռն իմ ի տէր իմ. զի օծեալ
12 Տն է նա։ * Եւ տես հայր իմ. ահա
տուն լոդկի քո ի ձեռին իմում. ես
հատի զտուն հանդերձի քոյ. և ոչ
սպանի զքեզ։ և ծանիր և տես այսօր.
զի ոչ գոյ ի ձեռին իմում չարութի՛ն.
և ոչ արհամարհութի՛ն. և ոչ մեղայ ինչ քեզ. և դու
պաշարես զանձն իմ առնուլ զնա։
13 * Դատ արասցէ Տէր ընդիս և ընդ
քեզ. և առցէ Տէր զվրէժ իմ ի քէն.
14 և ձեռն իմ մի եղիցի ի քեզ։ * Որպէս
ասէ հին առասպելն. յանօրէնն ել-
ցէ ելցէ չնաս. և ձեռն իմ մի եղի-
15 ցի ի քեզ։ * Եւ արդ՝ զո՞ր հետ ելեալ
ես արքայդ իսրայէլի. և զո՞ հալա-
ծես. զհետ շան միոյ մեռելոյ. և զհետ
16 լուծոյ միոյ։ * Եղիցի Տէր դատաւոր և

16 * Եւ յարեաւ յոնաթան որդի սաւ-
ուղայ. և գտաւ առ դաւիթ ի նորն.
և հաստատեաց զձեռս իւր ի Տէր։
17 * Եւ ասէ ցնա՝ մի երկնչիր. զի ոչ
գտցէ զքեզ ձեռն սաւուղայ հօրիմոյ.
և դու թագաւորեսցես ի վերայ ի՛ր.
և ես եղէց քո երկրորդ. և սաւուղ
18 հայր իմ գիտէ թէ այդպէս է։ * Եւ
ուխտեցին ուխտ երկոքեան առաջի
Տն. և նստեր դաւիթ ի նորումն. յոն
նաթան գնաց ի տուն իւր։ * Եւ
19 եղին զնիզակքն ի մէջ երկրին առ
սաւուղ ի բլուրն. և ասեն. ոչ աւա-
նիկ դաւիթ թաքուցեալ է առ մեզ
ի մասերս՝ յանձուկս նորոյն ի բլուրն
եքեղատուս. ընդ աջմէ յեսեմինայ։
20 * Եւ արդ ըստ ամենայն ցանկութե՛ն
անձին արքայի ի քէն ի քէ՛ անել առ
մեզ. քանզի փակեսցուք զնա ի ձեռս
21 արքայի։ * Եւ ասէ ցնա սաւուղ. օրհ
նեալ էք դուք ի Տէ. զի ցաւեաց ձեզ
22 վասն իմ։ * Երդ երթա՛յք և այլ ևս
կազմեցարո՛ւք. և դիտեցէ՛ք և տեսէ՛ք
զտեղին ուր իցէ ոտն նորա. հասէք
վասլվաղակի անդր. ուր ասացի՛ն
թէ է. գուցէ խորամանկիցէ։ * Եւ 23
քննեսջի՛ք և տեսջի՛ք յամ՛ամեղեաց ուր
թաքուցեալ իցէ. և դարձջի՛ք առ իս
պատրաստութի՛ւն. և երթիցո՛ւք ընդ
ձեզ։ և եղիցի եթէ իցէ յերկրին, խու
զեցից զնա ամենայն հազարաւորօք
յուդայ։ * Եւ յարեան և գնացին զի- 24
մացի՛ն յերեսաց սաւուղայ. և դաւ
իթ և արք նորա էին յանապատին մա
ինայ առ երեկս ընդ աջմէ յեսեմի-
նայ։ * Եւ գնաց սաւուղ և արք իւր 25
խնդրել զդաւիթ. և ազդ արարին
դաւթի. և էջ ի վէմն որ յանապա-
տին մաինայ։ և լուաւ սաւուղ և ալրն
դեցաւ զհետ դաւթի յանապատն մաի
նայ։ * Երթայր սաւուղ և արք իւր 26
զայս կողմն լերինն. և դաւիթ և արք
իւր առ ի կողմն զայն կողմն լերինն։
և եղև դաւթի թաքստեամբ երթալ
յերեսաց սաւուղայ։ և սաւուղ և արք
նր պատեցան զդաւթի՛ և զարամբք
նր ունել զնա։ * Եւ եկն հրեշտակ առ 27
սաւուղ և ասէ. փութա՛ եկ այսր. զի
արշաւեցին այլազգիք յերկիրս։ * Եւ 28
դարձաւ սաւուղ չհնդել զհետ դաւ
թի։ և գտաւ ընդդէմ այլազգեացն.
վասն այնորիկ կոչեցաւ տեղին այն
վէմ բաժանեալ։

ԻԴ։ ԻՊ։

1 Եւ յարեաւ դաւիթ անտի և նս-
2 տաւ յանձուկս գադգայ։ * Եւ
եղև իբրև դարձաւ սաւուղ յայլազ

իրաւարար ընդ իս և ընդ քեզ։ տեսցէ Տէր՝ և դատեսցէ զդատաստանս
իմ· և արասցէ ինձ իրաւունս 'ի ձեռաց քոց։ *Եւ եղև իբրև կատա-
17 րեաց դաւիթ խօսել զբանս զայսոսիկ
ընդ սաւուղայ· և ասէ սաւուղ· այդ
քո ձայն իցէ որդեակ իմ դաւիթ· և
ամբարձ սաւուղ զձայն իւր և ելաց։
18 *Եւ ասէ սաւուղ ցդաւիթ· դու ար-
դար ես քան զիս· զի դու հատուցեր
ինձ բարիս· և ես հատուցի քեզ չա-
19 րիս։ *Եւ դու պատմեցեր ինձ այ-
սօր զոր արարեր ինձ բարիս· և թէ
ո՛րպ փակեաց զիս Տր̃ այսօր 'ի ձեռս
20 քո· և ո՛չ սպաներ զիս։ *Զի որպէս
գտանէ ոք զթշնամիս իւր 'ի նեղու-
թե՛· և արձակիցէ զնա բարեաւ ընդ
ճանապարհ, և Տէր հատուսցէ նմա
բարիս· որպէս դու արարեր այսօր։
21 *Եւ արդ գիտեմ, զի թագաւորե-
լով թագաւորեսցես· և հաստատես-
ցի 'ի ձեռս քո թագաւորութի՛ն իէլի·
22 *Եւ արդ երդուի՛ր ինձ 'ի Տր̃· զի մի՛
սատակեսցես զզաւակ իմ զկնի իմ·
և մի՛ եղծցես զանուն իմ 'ի տանէ հօր
23 իմոյ։ *Եւ երդուաւ դաւիթ սաւու-
ղայ։ և գնաց սաւուղ 'ի տեղի իւր·
և դաւիթ և արք իւր ելին 'ի մասա-
րա յանձուկն։

ԳԼ։ ԻԵ։

Սամ. 28. 3. Սերաք. 46.23.

1 Եւ մեռաւ սամուէլ։ և ժողո-
վեցան ա՛մ իսրայէլ և կոծեցան
զնա։ և թաղեցին զնա 'ի տան իւրում
յարիմաթեմ· և յարեաւ դաւիթ և
2 էջ յանապատն մաօնայ։ *Եւ էր այր
մի 'ի մաօն· և հօտք իւր 'ի կարմէլոս·
և այրն մեծատուն էր յոյժ· և նորա
էին ոչխարք երեքհազարք· և այծք
հազարք։ և եղէն կտուրք հօտիցն 'ի
3 կարմէլոս։ *Եւ անուն նր̃ նաբաղ և
անուն կնոջ նորա աբիգեա· և կին
նր̃ առատ իմաստութբ̃· և գեղեցիկ
տեսլեամբ յոյժ· և այրն խիստ և չար
4 խորհրդովք, և այր շնաբարոյ։ *Եւ
լուաւ դաւիթ յաւուր յայնմիկ եթէ
կտրէ նաբաղ կարմելացի զհօտս իւր։
5 *Եւ առաքեաց դաւիթ մանկունս
տասն· և ասէ դաւիթ ցմանկունսն·
ելէք 'ի կարմէլոս· և երթայք առ նա-
բաղ· և հարցէք յանուն իմ զողջու-
6 նէ նորա։ *Եւ ասասջի՛ք այսպէս։ 'ի
սոյն աւուրս ո՛ղջ իցես դու և տուն
7 քո· և ա՛մ որ ինչ քո ողջ լիցի։ *Եւ
արդ՝ ասացին լուա՛յ եթէ կտուրք են
հօտից քոց, որք ընդ մեզ էին յանա-
պատի աստ· և ո՛չ արգելաք զդոսա·
և ո՛չ խուեցաք զդոսա· և ոչ ինչ
զա՛մ աւուրս որչափ և էին ընդ մեզ
8 'ի կարմէլոս։ *Հա՛րց ցմանկտիդ քո
և պատմեսցեն քեզ։ և գտցեն ման-
կունքդ շնորհս առաջի աչաց քոց· զի
'ի բարի աւուր եկին։ արդ՝ տացես
որչափ ինչ և գտցէ ձեռն քո՝ ծառայ
իցքոց· և որդւոյ քում դաւթի։
9 *Եւ եկին մանկունքն դաւթի· և
խօսեցան զբանսն ընդ նաբաղայ· ըստ
ա՛մ բանիցն այնոցիկ· յանուն դաւ-
10 թի։ *Եւ մեռուտացաւ· և ետ պատաս
խանի ծառայիցն դաւթի և ասէ։ ո՛
դաւիթ· կամ ո՛ որդին յեսսեայ· բազ
մացեալ են այսօր ծառայք գնացա-
կանք իւրաքանչիւր յերեսաց տեառն
11 իւրոյ։ *Արդ առնուցո՞ւմ զհաց իմ,
և զգինի իմ, և զզենլիս իմ, զոր զե-
նի կտրողաց իմոց պատրուճակս, և
տայցեմ արանց զորս ո՛չ գիտիցեմ
12 ուստի իցեն։ *Եւ դարձան ման-
կունքն դաւթի 'ի ճանապարհ իւր-
եանց։ և եկին պատմեցին դաւթի
13 ըստ բանից այնոցիկ։ *Եւ ասէ դաւիթ
ցարսն իւր· ածէ՛ք ընդ մէջ իւրա-
քանչիւր զսուր իւր· և ածին ընդ մէջ
այր իւրաքանչիւր զսուսեր իւր։ և
էած ընդ մէջ և դաւիթ զսուր իւր·
և ելին զհետ դաւթի իբրև չորեք-
հարիւր· և երկերիւրն եւս անդէն նըս
14 տան առ կարասին։ *Եւ աբիգեայ
կնոջ նաբաղու պատմեաց միոմն 'ի
մանկտւոյ անտի և ասէ· ահա առա-
քեաց դաւիթ զհրեշտակս յանապա-
տէն օրհնել զտէր մեր· և նա խու-
15 սեաց 'ի նոցանէն։ *Եւ արքն երախ
տաւորք էին մեզ յոյժ։ և ո՛չ արգելին
զմեզ· և ո՛չ ի՛նչ խուեցին զմեզ· որ
չափ եղեաք ընդ նոսա 'ի բացի։
16 *Եւ իբրև զպարիսպ էին մեզ զցայգ
և զցերեկ՝ զամենայն աւուրսն որ-
չափ էաք ընդ նոսա՝ և արածէաք զխա
17 շինսն։ *Եւ արդ գիտասցես և տես
ցես զինչ գործեսցես· զի վճարեալ է
չարութի 'ի վր̃ տեառն մերոյ· և 'ի վր̃
ա՛մ տան նր̃· և նա ժանտ է· և ո՛չ գոյ
18 խօսել ընդ նմա։ *Եւ ածապարեաց
աբիգեա· և էառ երկերիւր նկանակ·
և երկուս ամանս գինւոյ· և հինգ ոչ-
խար հասուցեալ· հինգ արդու փոխն-
դոյ· և կայթ մի չամիչ· և պաղատիս
երկերիւր· և եդ 'ի վերայ իշոյ։
19 *Եւ ասէ ցմանկտին իւր· երթա՛յք
յառաջագոյն քան զիս· և ես գամ
զկնի ձեր։ և առն իւրում նաբաղայ
20 ո՛չ էհան 'ի վեր։ *Եւ եղև ընդ եւա-
նել նր̃ յէշն, և ընդ իջանել զանխուլ
լերինն, և ահա դաւիթ և արք նորա
իջանէին ընդ առաջ նորա· և դիպե
ցաւ

ցաւ նոցա ։ *Եւ ասէ դաւիթ ․ զուր 21
ուրեմն պահեցի զամ ինչ նաբաղու
յանապատի անդ ․ և ոչ խլեցաք առ_
նուլ յամէ որ ինչ էր նորա և ոչ ինչ ․
և հատոյց ինձ չար երախտեաց իմոց ։
* Օնաւօն արասցէ Ա՟Ծ դաւթի , և 22
օնաւօն յաւելցէ , եթէ թողից յամէ
նաբաղու մինչև ցառաւօտն ․ որ զոր_
մով միզիցէ ։ *Իբրև ետես աբիգեա 23
զդաւիթ , փութացաւ և վազեաց յի
շոյն ․ և անկաւ առաջի դաւթի 'ի վ՟ր
երեսաց իւրոց ․ և երկիր եպագ նմա
յերկիր ։ * Եւ անկաւ առ ոտս նորա 24
և ասէ ․ յիս տէր մեղս իմ ․ բայց խօ_
սեսցի աղախին քո յականջս քո ․ և
լուիցես բանից աղախնոյ քոյ ։ * Մի 25
դիցէ տէր իմ զսիրտ իւր 'ի վ՟ր առն
ժանտի նաբաղայ ․ զի ըստ անուան
նր և ինքն է ։ նաբաղ անուն նորա ․ և
անզգամութի ընդ նմա ։ և ես աղա_
խին քո ոչ տեսի զմանկունսն քո զոր
առաքեցեր ։ * Եւ արդ կենդանի է 26
Տր ․ և կենդանի է անձն քո ։ որպ ար_
գել զքեզ Տր չգալ յարիւն անպարտ․
այլ պահել զձեռն քո առ քեզ ․ և արդ՝
եղիցին իբրև զնաբաղ թշնամիք քո՝
և որք խնդրիցեն տեառն իմում չա_
րիս ։ *Եւ արդ առ զօրհնութիս զայս 27
զոր եբեր աղախին քո տեառն իմում ․
և տացես մանկտւոյդ՝ որք կան առա
ջի տեառն իմում ։ * Եւ բարձ զմեղս 28
աղախնոյ քոյ ։ զի առնելով արասցէ
Տէր տեառն իմում տուն հաւատա_
րիմ ․ զի զպատերազմ տեառն իմոյ
Տր պատերազմի ․ և չարութի մի եր_
բէք գտցի 'ի քեզ ։ * Եւ ոչ յարիցէ 29
մարդ հալածել զքեզ ․ և խնդրել
զանձն քո ․ և եղիցի անձն տեառն իմոյ
ծրարեալ 'ի ծրարի կենաց Տն Ա՟Ծ ․
և զանձն թշնամեաց քոց պարսաքա_
րեսցես 'ի մէջ պարսատկաց ։ * Եւ 30
եղիցի յորժամ արասցէ Տէր տեառն
իմում զամ բարիս զոր խօսեցաւ ա_
ծել 'ի վ՟ր քո , և տացէ զքեզ պատուէի
րանաւ առաջնորդ 'ի վերայ իղի ։
* Մի լիցի պղծութի և գայթագղու 31
թի 'ի սրտի տեառն իմոյ ․ հեղուլ զա
րիւն արդար տարապարտուց ․ և պա_
հեսցի ձեռն տեառն իմոյ առ իւր ․ և
բարի արասցէ Տր տեառն իմում ․ և
յիշեսցես զաղախին քո , բարի առ_
նել նմա ։ * Եւ ասէ դաւիթ ցաբի_ 32
գեայ ․ օրհնեալ Տր Ա՟Ծ իղի ․ որ առա
քեաց զքեզ այսօր ընդ առաջ իմ ։
* Եւ օրհնեալ բարք քո ։ և օրհնեալ 33
լիցիս դու ․ որ արգելեր զիս այսօր աստ․
չերթալ յարիւն ․ և պահել զձեռն իմ
առ իս ։ * Բայց կենդանի է Ա՟Ծ իղի ․ 34
որ արգել զիս այսօր 'յառնելոյ քեզ
չար ․ զի եթէ չէիր փութացեալ և ե_
կեալ ընդ առաջ իմ ․ քանզի ասացի ․
թէ ոչ մնասցէ նաբաղայ մինչև ցլոյս
35 առաւօտու որ զորմով միզիցէ ։ *Եւ
էառ դաւիթ 'ի ձեռաց նորա զամ
ինչ զոր եբեր նմա ․ և ասէ ցնա ․ ել 'ի
տուն քո խաղաղութբ ․ տես զի լուայ
ձայնի քում ․ և ակն առի երեսաց քոց ։
36 *Եւ գնաց աբիգեա առ նաբաղ ․ և
էր խրախութի տան նր իբրև զխրա_
խութի թագաւորի ։ և սիրտ նաբա_
ղու զուարճացեալ էր յինքեան ․ և ինքն
արբեալ էր յոյժ ․ և ոչ պատմեաց նմա
բան մի մեծ կամ փոքր մինչև ցլոյս
37 առաւօտուն ։ *Եւ եղև ընդ առաւ_
օտն ․ իբրև սթափեցաւ նաբաղ 'ի
գինւոյ անտի , պատմեաց նմա կին
իւր զբանս զայսոսիկ ․ և մեռաւ սիրտ
նորա 'ի նմա ․ և եղև իբրև զքար ։
38 * Եւ եղեն իբրև աւուրք տասն ․ և
39 եհար Տր զնաբաղ , և մեռաւ ։ *Եւ
լուաւ դաւիթ եթէ մեռաւ նաբաղ ․
և ասէ ․ օրհնեալ Տէր , որ դատեաց
զդատաստանս նախատանաց իմոց՝ 'ի
ձեռաց նաբաղայ ․ և զծառայ իւր ապ
րեցոյց 'ի ձեռաց չարեաց ․ և զչարու_
թի նաբաղայ դարձոյց Տր 'ի գլուխ
նորա ։ և առաքեաց դաւիթ և խօսե_
ցաւ ընդ աբիգեայ առնուլ զնա իւր
40 կնութե ։ *Եւ եկին ծառայքն դաւ_
թի ․ առ աբիգեա 'ի կարմեղոս ․ խօսե
ցան ընդ նմա և ասեն ․ դաւիթ առա
քեաց զմեզ առ քեզ՝ առնուլ զքեզ
41 իւր կնութե ։ * Եւ յարեաւ ․ երկիր
եպագ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր
և ասէ ․ ահաւասիկ կայ աղախին քո
'ի սարկութի լուանալոյ զոտս ծառայ
42 ից տեառն իմոյ ։ * Եւ փութացեալ
յարեաւ աբիգեա ․ ել յէշ ․ և հինգ
աղջիկ գնացին զհետ նորա ․ և չոգաւ
զհետ ծառայիցն դաւթի ․ և եղև նր
43 կին ։ * Եւ զաքինովամ էառ դաւիթ
յեզրայելէ ․ և էին նր երկոքեան կա_
44 նայք ։ * Եւ սաւուղ ետ զմեղքող
զդուստր իւր զկին դաւթի , փաղտիե
լի որդւոյ յեմեսսեայ ռոմմացւոյ ։

ԳԼ: ԻԶ:

1 Եւ || եկին զիփացիքն 'ի մաւայլէն || Ա Թգ.
առ սաւուղ 'ի բլուրն ․ և ասեն ․ 23.19.
ահա դաւիթ թաքուցեալ է առ մեզ
'ի բլրին եքեղատու՝ հանդէպ յեսեմո
2 նայ ։ * Եւ յարեաւ սաւուղ ․ և էջ
յանապատն զիփայ ․ և ընդ նմա երեք
հազարք արանց ընտրելոց յիսրայէլէ՝
խնդրել զդաւիթ յանապատին զի_
3 փայ ։ * Եւ բանակեցաւ սաւուղ 'ի
բլրին

մահու էք դուք՝ որք պահէք զտէր ձեր
զարքայ զօծեալ Տեառն։ և արդ աւասիկ
գեղարդն արքային և կուժ ջրոյն ուր
17 է որ առ մնարս նր կային։ * Եւ ծա
նեաւ սաւուղ զձայնն դաւիթի և ասէ.
այդ ձայն քո՞ է որդեակ իմ դաւիթ։
և ասէ դաւիթ ։ ծառայ քո եմ տէր
18 իմ արքայ։ * Եւ ասէ ընդէ՞ր է այդ
տէր իմ՝ զի մնաւել ես զկնի ծառայի
քոյ։ զի՞ մեղայ. և զի՞ գտաւ յիս չնաս
19 * Եւ արդ լուիցէ տէր իմ արքայ ըզ
բանս ծառայի իւրոյ. եթէ Ա՛ր շար
ժեալ է զքեզ՝ ի վէր իմ, ձեռնձերեսցի
ղհ քո ։ և եթէ որդւոց մարդկան՝
անիծեալ լիցին դոքա առաջի Տեառն։ զի
մերժեցին զիս այսօր չհաստատել ինձ
՝ի ժառանգութեան Տեառն. ասեն՝ երթ
20 ծառայեա աստուածոց օտարաց ։ * Եւ
արդ՝ մի անկցի արիւն իմ յերկիր ա
ռաջի երեսաց Տեառն։ զի ելեալ է թա
գաւոր իսրայէլ խնդրել զանձն իմ, որ
ընթանայցէ ագռաւ ընդ լերինս։
21 * Եւ ասէ սաւուղ. մեղայ. դարձիր
որդեակ իմ դաւիթ. զի ոչ ինչ արա
րից քեզ չար՝ փոխանակ զի պատուա
կան է անձն իմ առաջի աչաց քոց. և
ես յայսմ աւուր ժամանակի զբախտ
22 դիր և յանցաւոր եմ յոյժ։ * Պատաս
խանի եւ դաւիթ և ասէ։ ահաւասիկ
գեղարդն արքայի . անցցէ մի ոք՝ ի
23 մանկտւոյդ և առցէ զսա ։ * Եւ Տէր
հատուսցէ իւրաքանչիւր ումեք ըստ
արդարութեանց իւրոց՝ և ըստ հաւա
տարմութեան. թէպ ոմն մատնեաց զքեզ
Տէր այսօր՝ ի ձեռս իմ. և ոչ կամեցայ
24 ձգել զձեռն իմ՝ յօծեալ Տեառն ։ * Եւ
որպէս մեծացաւ անձն քո առ այսօր
առաջի աչաց իմոց , այնպէս մեծաց
սի անձն իմ առաջի Տեառն. և ամրացու
սէ զիս . և ապրեցուսէ զիս յամենայն
25 ղուլթենէ ։ * Եւ ասէ սաւուղ ցդա
ւիթ . օրհնեալ ես դու որդեակ իմ
դաւիթ . և առնելով արասցես և զո
բանալով զօրասցես։ և գնաց դաւիթ
զձանապարհ իւր . և սաւուղ դարձաւ
՝ի տեղի իւր ։

ԻԱ։ ԻԲ։

1 Եւ խօսեցաւ դաւիթ ՝ի սրտի իւր
ում և ասէ ։ արդ անկանիցիմ
յաւուր միում՝ ի ձեռս սաւուղայ, և
չէ ինձ բարի . եթէ ոչ դարձայց յեր
կիրն փղշտացւոց ։ և եթէ իցէ խնդ
րեսցէ զիս սաւուղ յամենայն հնդ
2 ապրեցայց՝ ի ձեռաց նորա ։ * Եւ յա
րեաւ դաւիթ . և գնաց ինքն՝ և վեց
հարիւր արքն որք ընդ նմա . և գնաց
առ անքուս որդի մաւաքայ՝ արքայ
գե-

գէթայ։ *Եւ նստաւ դաւիթ ընդ 3
անքուսայ 'ի գէթ․ ինքն՝ և արք իւր՝
իւրաքանչիւր տամբ իւրով։ և դաւիթ
և երկոքին կանայք իւր․ աքինովամ
յեզրայելացի․ և աբիգեա կին նա_
բաղայ կարմելացւոյ։ *Եւ ազդ եղեւ 4
սաւուղայ եթէ փախեաւ դաւիթ 'ի
գէթ՝ և ոչ եւս յաւել խնդրել զնա։
*Եւ ասէ դաւիթ ցանքուս․ եթէ 5
եգիտ ծառայ քո շնորհս առաջի աչաց
քոց, տացես ինձ տեղի 'ի միում քա_
ղաքաց յանդս․ և նստայց անդ․ և ընդ_
էր նստիցի ծառայ քո 'ի թագաւո_
րեալ քաղաքի ընդ քեզ։ *Եւ ետ նմա 6
անքուս յաւուր յայնմիկ զսիկելակ․
վասն այնորիկ եղեւ սիկելակ արքայի
հրէաստանի մինչեւ ցայսօր։ *Եւ եղեւ 7
թիւ աւուրցն զորս նստաւ դաւիթ
յանդի այլազգեացն՝ աւուրք չորից
ամսոց։ *Եւ ելանէր դաւիթ և արքն 8
որք ընդ նմա էին․ և ասպատակէին
'ի վերայ ա՟մ գեսուրացւոյն․ և գիզե_
րացւոյն․ և ամաղեկացւոյն․ և ահա
բնակէր երկիրն 'ի գեղամսուրայ յա
պահովելոց պարսպաւորաց մինչեւ ցե
գիպտոս։ *Եւ հարկանէր դաւիթ 9
զերկիրն և ոչ ապրեցուցանէր զայր
և զկին․ և առնոյր հօտս և անդեայս․
և էշս․ և ուղտս․ և հանդերձս․ և դառ_
նայր՝ և գայր առ անքուս։ *Եւ ասէր 10
անքուս ցդաւիթ․ որո՞ւմ կողման ար_
շաւեցիք այսօր։ և ասէր դաւիթ։ 'ի
կողմանս հարաւոյ հրէաստանի․ և 'ի
կողմանս յերամելի․ և 'ի կողմանս կե
նեզայ։ *Զայր և զկին ոչ ապրեցու 11
ցի ածել 'ի գէթ։ ասեմ․ գուցէ ազդ
լինիցի զմէնջ 'ի գէթ․ և ասիցեն թէ
զայս ինչ գործէ դաւիթ։ և այս իրաւ
ունք էին նորա զա՟մ աւուրս որչափ և
նստաւ դաւիթ յանդի այլազգեացն։
*Եւ հաւատաց անքուս դաւթի յոյժ․ 12
և ասէ․ ամաչելով ամաչէ 'ի ժողովր_
դենէ իւրմէ յիսրայէլէ․ և եղիցի ինձ
ծառայ յաւիտեան։

ԳԼ: ԻԸ:

Եւ եղեւ յաւուրսն յայնոսիկ՝ ժո_ 1
ղովեցան այլազգիքն բանակօք
իւրեանց ելանել պատերազմել ը՟ Իղի։
և ասէ անքուս ցդաւիթ։ գիտելով
գիտասցես՝ զի ընդ իս ելանելոց ես 'ի
պատերազմ դու և արք քո։ *Եւ ասէ 2
դաւիթ ցանքուս։ այդպէս լիցի։ արդ
գիտասցես զինչ գործեսցէ ծառայ
‖ Ա Եր․ քո։ և ասէ անքուս ցդաւիթ․ այդ_
25.1. պէս լիցի․ անձնապահապետ արարից
Սիրաք․ զքեզ զամենայն աւուրս։ *‖ Եւ սա_ 3
46.23. մուէլ մեռաւ․ և կոծեցան զնա ա՟մ
իսրայէլ․ և թաղեցին զնա 'ի քաղա_
քին իւրում յարիմաթեմ։ և սաւուղ
եբարձ զվհուկս և զգէտս յերկրէ։
4 *Եւ գումարեցան այլազգիքն․ և ե_
կին բանակեցան 'ի սոմման։ և ժողո_
վեաց սաւուղ զա՟մ այր Իղի․ և բանա
5 կեցան 'ի գեղբուէ։ *Իբրեւ ետես
սաւուղ զբանակ այլազգեացն՝ եր_
կեաւ․ և զարհուրեցաւ սիրտ նր յոյժ։
6 *Եւ եհարց սաւուղ 'ի Տէ․ և ոչ արար
նմա պատասխանի Տր․ երազովք և
7 գուշակութբք և մարգարէիւք։ *Եւ
ասէ սաւուղ ցծառայս իւր։ ‖ խնդրե ‖ Ղեւ․
ցէք ինձ կին մի վհուկ․ և երթայց առ 20.27.
նա և խնդրեցից նովաւ։ և ասեն ծա_ 2.( )րէ․
ռայք նորա ցնա․ ահաւէ կին մի վհուկ 18.11.
8 յայէնդովր։ *Եւ ծպտեցաւ սաւ_ Գործ․
ուղ․ և զգեցաւ այլ հանդերձս․ և 16.16.
գնաց ինքն և երկու արք ընդ նմա։ և
եկին առ կինն գիշերի։ և ասէ ցնա․
գիւթեա՛ դու ինձ վհկաւդ․ և հա՛ն
9 ինձ զոր ես ասացից քեզ։ *Եւ ասէ
կինն։ ահա դու ինքնին իսկ գիտես․
զոր ինչ արար սաւուղ․ որպէս սատա
կեաց զվհուկս և զգէտս յերկրէ․ և
արդ ընդէ՞ր որսաս զանձն իմ սպանա
10 նել զնա։ *Եւ երդուաւ նմա սաւուղ
'ի Տր և ասէ․ կենդանի է Տր․ եթէ
պատահեսցի քեզ վնաս 'ի բանիս յայս
11 միկ։ *Եւ ասէ կինն․ զո՞ հանից քեզ։
12 և ասէ՝ զսամուէլ հա՛ն ինձ։ *Եւ ե_
տես կինն զսամուէլ։ և աղաղակեաց
'ի ձայն մեծ․ և ասէ կինն ցսաւուղ․
ընդէ՞ր խաբեցեր զիս․ և դու սաւուղ
13 ես։ *Եւ ասէ ցնա արքայ․ մի՛ երկն_
չիր՝ ասա՛ զո՞ տեսեր։ և ասէ ցնա կինն․
աստուածս տեսանեմ ելեալս յերկրէ։
14 *Եւ ասէ ցնա՝ զի՞նչ գիտացեր։ և ա_
սէ ցնա․ այր ուղղորդ ելեալ յերկրէ․
և արկեալ զիւրեւ կրկնոց։ և ծանեաւ
սաւուղ եթէ սամուէլ է նա։ և ան_
կաւ 'ի վերայ երեսաց իւրոց յերկիր՝
15 և եպագ նմա երկիր։ *Եւ ասէ սա_
մուէլ ցսաւուղ․ ‖ զի՞ լլկեցեր զիս ‖ Սիրաք․
ելանել ինձ։ և ասէ սաւուղ․ նեղեալ 46.23.
եմ յոյժ․ և այլազգիք պատերազմին
ընդ իս․ և Ած հեռացաւ յինէն․ և ոչ
լուաւ ինձ՝ ոչ մարգարէիւք և ոչ երա
զովք։ և արդ կոչեցի զքեզ ցուցանել
16 ինձ զինչ գործեցից։ *Եւ ասէ սամու
էլ․ զի՞ հարցանես զիս․ և Տր հեռա_
ցաւ 'ի քէն․ և եղեւ ընդ ընկերի քում։
17 *‖ Եւ արար ընդ քեզ Տր որպէս խօ_ ‖ Ա Եր․
սեցաւ յիմ ձեռն․ և պատառեսցէ Տր 15. 28.
զթագաւորութիդ 'ի ձեռաց քոց․ և
տացէ զդա ընկերի քում դաւթի։
18 *Զի ոչ լուար ձայնի Տն․ և ոչ արա
րեր զսրտմտութի բարկութե նորա
յամա_

յամաղէկ ։ վասն այնր բանի արար
քեզ ՏՐ զայդ յաւուր յայսմիկ ։* Եւ 19
մատնեսցէ ՏՐ զիէլ քեւ հանդերձ 'ի
ձեռս այլազգեացն. և վաղիւ դու և
որդիք քո ընդ քեզ անկցին. և զբա-
նակն իէլի տացէ ՏՐ 'ի ձեռս այլազ-
գեացն ։* Եւ փութացաւ սաւուղ 20
և անկաւ յոտնկելեայ 'ի գետին ։ և
զարհուրեցաւ յոյժ 'ի բանիցն սամու-
էլի. և զօրութիւն ոչ ևս գոյր 'ի նմա.
զի ոչ եկեր հաց զաւուրն ողջոյն և զգի-
շերն ամենայն ։* Եւ եմուտ կինն առ 21
սաւուղ. և ետես զի տագնապեալ էր
յոյժ. և ասէ ցնա. ահա լուաւ աղա-
խին քո ձայնի քում. և եդի զոգի իմ
'ի ձեռին իմում. և ունկնդիր եղէ բա-
նիցն զոր խօսեցար ընդ իս ։* Եւ արդ 22
լուր և դու ձայնի աղախնոյ քոյ. և
եդից առաջի քո պատառ մի հաց. և
կերիցես. և եղիցի քեզ զօրութիւն. զի
երթիցես զճանապարհ քո ։* Եւ ոչ 23
կամեցաւ ուտել ։ և բռնադատեցին
զնա ծառայքն իւր և կինն. և լուաւ
ձայնի նոցա. և յարեաւ 'ի գետնոյն.
և նստաւ յաթոռ ։* Եւ կնոջն մնու- 24
ցեալ էր որթ մի 'ի տան ։ և փութա-
ցաւ եզեն զնա և էառ ալիւր՝ թրեաց
և եփեաց բաղարջս ։* Եւ մատոյց 25
առաջի սաւուղայ. և առաջի ծառայ-
ից նորա ։ և կերին. և յարեան գնա-
ցին զգիշերն զայն ։

ԳԼ: ԻԹ.

Եւ ժողովեցին այլազգիքն զամ 1
զբանակս իւրեանց յափեկն. և բա-
նակեցաւ իէլ յայենդովր յեզրայելի ։
*Եւ նախարարքն այլազգեացն հարիւ- 2
րաւորօք և հազարաւորօք ։ և դաւիթ
և արք իւր երթային յետոյ ընդ ան-
քուսայ ։ *Եւ ասեն նախարարքն այլ- 3
ազգեացն ։ ո՞յք են դոքա որք անցա-
նենդ ։ և ասէ անքուս ցնախարարս
այլազգեացն ։ ո՞չ դա է դաւիթ ծա-
ռայ սաւուղայ արքայի իէլի. և այս եր-
կու ամք են զի առ մեզ է. և ոչ ինչ
գտի 'ի դմա յօրէ յորմէ հետէ անկաւ
Ա. Մնա 12.19. 'ի մեզ մինչև ցայսօր ։* ‖ Եւ խոժո- 4
ռեցան նմա նախարարքն այլազգեացն.
և ասեն ցնա ։ դարձո՛ զայրն. և եր-
թիցէ 'ի տեղի իւր. ուր կացուցեր զնա
անդ ։ և մի՛ եկեսցէ ընդ մեզ 'ի պատե-
րազմ. և մի՛ լիցի դաւաճան բանա-
կիս ։ և իւ̃ հաճիցի դա ընդ տեառն
իւրում, եթէ ոչ գլխովք արանցդ այ-
դոցիկ ։ *Ո՞չ այդ դաւիթ է. որում 5
նուագէին 'ի պարս. և ասէին. եթէ
եհար սաւուղ զհազարս՝ և դաւիթ
զբիւրս ։ *Եւ կոչեաց անքուս զդա- 6
ւիթ. և ասէ ցնա. կենդանի է ՏՐ. զի
ուղիղ և բարի ես դու յաչս իմ. և
մուտ քո և ել 'ի բանակի աստ ընդ իս.
և ոչ գտի 'ի քեզ չարութիւն, յօրէ յոր-
մէ հետէ եկիր առ իս՝ մինչև ցայսօր
ժամանակի ։ և յաչս նախարարացն՝
7 ոչ թուիս դու բարւոք ։ *Եւ արդ
դարձիր. և երթ 'ի խաղաղութիւն. և
ոչ արասցես չարութիւն յաչս նախարա-
8 րաց այլազգեացս ։ *Եւ ասէ դաւիթ
ցանքուս ։ զի՞նչ արարի քեզ. և զի՞նչ
գտեր 'ի ծառայի քում. յօրէ յորմէ էի
առաջի քո, մինչև ցայսօր. զի՞ ոչ գայ-
ցեմ պատերազմել ընդ թշնամիս ՏՆ
9 իմոյ արքայի ։ *Պատասխանի ետ ան-
քուս. և ասէ ցդաւիթ. գիտեմ զի
բարւոք թուիս դու յաչս իմ իբրև
զհրեշտակ ԱՅ. այլ նախարարքս այլ-
ազգեաց ասեն. մի՛ եկեսցէ ընդ մեզ
10 'ի պատերազմ ։ *Եւ արդ կանխեա՛
դու ընդ առաւօտն. դու և ծառայք
տեառն քոյ, որք եկեալք են ընդ քեզ.
և երթայք 'ի տեղին յորում կացուցի
զձեզ. և բան ինչ յոռութեան մի՛ դիցես
'ի սրտի քում. զի հաճոյ ես դու առա-
ջի իմ. և վաղվաղակի լինիցիք 'ի ճա-
նապարհ. և լուսասցի ձեզ, և գնասջիք ։
11 *Եւ կանխեաց դաւիթ և արք իւր
գնալ ընդ առաւօտն. և պահել զեր-
կիր այլազգեացն ։ և այլազգիքն ելին
'ի պատերազմել ընդ իսրայէլի ։

ԳԼ: Լ.

1 Եւ եղև ընդ մտանել դաւթի և
արանց նր 'ի սիկելակ յաւուրն
երրորդի. և ամաղէկ ասպատակեաց 'ի
հարաւակողմն. և 'ի սիկելակ. և եհար
զսիկելակ. և այրեաց զնա հրով.
2 *Եւ գերեաց զկանայս և զամ ինչ որ
'ի նմա 'ի փոքուէ մինչև ցմեծ. և ոչ
սպանին զայր և զկին. այլ գերեցին.
և գնացին զճանապարհ իւրեանց ։
3 *Եւ եկն դաւիթ և արք իւր 'ի քա-
ղաքն. և ահա այրեցեալ էր քաղաքն.
և կանայք նր և ուստերք և դստերք
4 իւրեանց գերեալք ։ *Եւ ամբարձին
դաւիթ և արք նր զձայնս իւրեանց,
և լացին մինչև ոչ ևս գոյր 'ի նոսա զօ-
5 րութի լալոյ ։ *Եւ երկոքին կանայքն
դաւթի գերեցան. աքինովամ յեզրայ-
ելացի. և աբիգեա կին նաբաղու կար-
6 մելացւոյ ։ *Եւ նեղեցաւ դաւիթ
յոյժ. զի ասաց ժողովուրդն քարկո-
ծել զնա. զի զայրացեալ էր ոգի ամ
ժողովրդեանն՝ իւրաքանչիւր 'ի վերայ
ուստերաց և դստերաց իւրեանց ։ և
զօրացաւ դաւիթ 'ի ՏՐ ԱՅ իւր ։
7 *Եւ ասէ դաւիթ ցաբիաթար քա-
հանայ

հանայ որդի աբիմելեքայ. մնաւ զե-
փուած. և մնացեալ աբիաթար զե-
փուան առ դաւիթ։ * Եւ եկաւ 8
դաւիթ ի Ցիէ, և ասէ. պնդեցայց զինէ
գեդեւրայն այնորիկ, եթէ հասա-
նիցեմ նմա։ և ասէ ցնա Ցիէ. պնդեաց
և հասանելով հասանիս. և թափե-
լով թափեսցես։ * Եւ գնաց դաւիթ 9
600 և զօրեքհարիւր արքն որք ընդ նմա.
և եկին մինչև ցհեղեղատն բոսորայ.
և աւելորգքն զտեղի առին։
* Եւ պնտեցաւ դաւիթ զօրեքարիւր 10
արամբքն. և երկերիւր արք մնացին.
որք նստան յայնկոյս հեղեղատին բո-
սորայ։ * Եւ գտին այր մի եգիպտա- 11
ցի յանդին. և կալան զնա. և ածին
առ դաւիթ յանդն. և եռուն նմա
ջուր և եկեր. և արբուսին նմա ջուր։
* Եւ եռուն նմա կոտոր մի պաղատը- 12
ւոց. և երկուս չամչեայս. և եկեր.
և հաստատեցաւ ոգի նր. քան
զի չեր կերեալ ջուց. և ոչ արբեալ
զջուր՝ զերիս աւիւս և զերիս գիշերս։
* Եւ ասէ ցնա դաւիթ. որ ես դու. 13
և ուստի՞ ես։ և ասէ պատանեակն.
եգիպտացի եմ ես՝ ծառայ առն ամա
ղեկացւոյ. և եթող զիս տէր իմ. զի
նքաղեցայ ես այս երրորդ օր։ * Եւ 14
մեք ասպատակեցաք ի կողմանս հա-
րաւոյ քերեթացւոյ. և ի կողմանս հրէ
ատանի. և ի հարաւակողմն քաղե-
բայ. և զսիկեղակ այրեցաք հրով։
* Եւ ասէ ցնա դաւիթ. եթէ իջու- 15
ցանիցես զիս ի գեդեւրն յայն. և
ասէ ցնա եգիպտացին. երդուիր ինձ.
զի մի սպանցես զիս. և ոչ մատնեսցես
զիս ի ձեռս տեառն իմոյ. և իջուցից
զքեզ ի գեդեւրն։ և երդուաւ նմա։
* Եւ իջոյց զնա անդր։ և ահա նոքա 16
ցրուեալ էին ընդ երեսս ամենայն երկրին.
ուտէին և ըմպէին. և տօնէին առ-
նայն աւարօքն մեծամեծօք զոր առին
յերկրէն պղշտացւոց. և յերկրէն
յուդայ։ * Եւ եհար ի վերայ նոցա 17
դաւիթ. և եհար զնոսա դաւիթ յեղա-
նելոյ արուսեկին մինչև յերեկոյ՝ և ի
վաղիւ անդր. և ոչ ապրեցաւ ի նոցա
նէ այր. բայց միայն պատանեակք ե-
րեքարիւր հեծեալ յուղտս և փախեան։
* Եւ թափեաց դաւիթ զամենայն զոր 18
առին ամաղեկացիքն. և զերկոսին
կանայս իւր թափեաց դաւիթ։ * Եւ 19
ոչ սպասեցաւ ինոչ նոցանէ ի փոքրէն մին
և յմեծ. և յուստերաց և ի դստե-
րաց. և յաւարէն մինչև ցայմ ինչ, զոր
առին ի նոցանէ՝ զամ ինչ դարձոյց
դաւիթ։ * Եւ եհաւ դաւիթ զամ 20
ոչխաս՝ և վանդեայս. և տանէր առաջի

աւարին և աւարին անուն կոչեր. թէ 21
այս աւար դաւթի է։ * Եւ եկին դա-
ւիթ առ երկերիւրեան լքեալս յերթալ
ընդ դմին դաւթի. և նստոյց զնոսա ի
հեղեղատին բոսորայ. և ելին ընդ
առաջ դաւթի և ընդ առաջ զօրուն
որ ընդ նմա։ և մատեաւ դաւիթ առ
զօրն. և եհարց զողջոյնս նորա ի նոս
ղաղուեթին։ * Եւ պատասխանի եռուն 22
նմա ամենայն արք ժանտք և անպէ-
տքն յաղանց պատերազմողաց՝ որք
երթեալ էին ընդ դաւթի. և ասեն.
եթէ ոչ եղեն հետամուտք ընդ մեզ,
ոչ տացուք դոցա յաւարէ աստի զոր
թափեցաք. բայց եթէ զիւրաքանչիւրս
դնդին և զորդիս առցեն. և գնասցեն
ի բաց։ * Եւ ասէ դաւիթ. մի ոգոյ 23
ցի այդպէս եղբարք իմ. յետ մատնե
լոյ զնոսա մեզ Ցիէ. և պահելոյ զմեզ.
և մատնեաց Ցիէ ի ձեռս մեր զդէզ-
դուրն եկեալ ի վերայ մեր։ * Եւ ո՞ 24
անսասցէ բանիցդ ձերոց այդոցիկ. զի
ոչ են ընդհատ ի ձէնջ. քանզի ըստ
մասին երթելոյն ի պատերազմ, նոյն
պէս եղիցի մասն վանապանին. բաժ
նիցեն օրինակի բաժանեսցին։ * Եւ 25
եղև յօրէ յայնմանէ և անդր՝ իբրև
օրէնք և իրաւունք ի մէջ իշի մինչև
յայսօր։ * Եւ եկն դաւիթ ի սիկե- 26
լակ. և առաքեաց յաւարէ անտի ծե
րոցն յուդայ՝ և ընկերաց իւրոց. և ա-
սէ. այդ ձեզ օրհնուի յաւարէ թշնա
մեաց Ցիէ։ * Որք ի բեթէլ էք. և 27
յեռեմաթ հարաւոյ. և որք յեթեր։
* Եւ յարոէր. և որք յեփեթամովթ. 28
և որք յեթաքել. 29
և որք ի քաղաքս յերեմելացւոյն. և
որք ի քաղաքս կինեացւոյն։ * Որք ի 30
հորմայ. և որք ի քաւրսան. և որք
յանաթաք։ * Եւ որք ի քեբրօն. և 31
որք յամենայն տեղիս ընդ որ չըջեցաւ
դաւիթ ինքն և արք իւր։

Գ. Ի. Ա.

1 Եւ ‖ այլազգիքն պատերազմէին ‖ 1.Պ.ԺԸ
ընդ իշէլ։ և փախեան արք իշէլ 10.2.3ª
յերեսաց այլազգեացն։ և անկանէին
2 վիրաւորք ի լերինն գեղբուէայ։ * Եւ
հասին այլազգիքն ի սաւուղ և յոր-
դիսն նր։ և հարին այլազգիքն զյով
նաթան. և զամինադաբ. և զմելքի
3 սաւէ զորդիս սաւուղայ։ * Եւ ծան
րացաւ պատերազմն ի վրն սաւուղայ։
և գտին զնա արք կորովիք աղեղնաւ
որք. և վիրաւորեցաւ ընդ կարաւ-
4 անդան ի ներքս։ * ‖ Եւ ասէ սաւուղ ‖ 1.Պ.ԺԸ
ցկապարձակիրն իւր. մերկեա զսուր 10.4.
քո և խոցեա զիս նովաւ. գուցէ գայ-

ցեն անթլփատքն և խոցոտիցեն զնա։
և խաղացցեն զնովաւ։ և ոչ կամեցաւ կա
պարձակիրն՝ քանզի երկեաւ յոյժ։ և
էառ սաւուղ զսուսերն իւր. և անկաւ
կաւ ՚ի վերայ նորին։ * Իբրև ետես կապար 5
ձակիրն թէ մեռաւ սաւուղ. անկաւ
և նա ՚ի վերայ սուսերին իւրոյ և մեռաւ
ընդ նմա։ * Եւ մեռաւ սաւուղ և 6
երեքեան որդիք նորա. և կապարձա
կիրն իւր. և ամենայն արք նորա յաս
ուր յայնմիկ ՚ի միասին։ * Եւ իբրև 7
տեսին արք իսրայէլի որք յայնկոյս հով
տացն. և որք յայնկոյս յորդանանու.
եթէ փախեան արք իւրք. և թէ մե
ռաւ սաւուղ և որդիք նորա. թողին
զքաղաքս իւրեանց և փախեան. և է
լին պղշտացիքն և քնակեցան ՚ի նոսա։
* Եւ եղև ՚ի վաղիւ անդր եկին պղ 8
շտացիքն մերկացուցանել զդիակունսն.
և գտին զսաւուղ և զերիս որդիս նո
ա անկեալս ՚ի լերինն գեղբուէլ։
9 * Դարձուցին զնա. և մերկացուցին
զհանգերձ նորա. և հատին զգլուխ
նորա. և առաքեցին յերկիրն պղշ
տեաց շուրջանակի աւետաւորս ՚ի
կուռս իւրեանց՝ և ՚ի ժողովուրդն։
10 * Եւ եդին զկարասին նորա յաստա
ւրոթին. և զմարմինս նորա կախեցին
11 զպարսպին բեթսանայ։ * Եւ լուան զնո 2 Թագ.
ցանէ քնակիչք յաբեսայ գա 21. 4.
ղաադացւոց զոր ինչ արարին պղշ
12 տիքն ընդ սաւուղ։ * Եւ յարեան
ամենայն այր զօրութեամբ. և գնացին
զդիակունսն նորա. և առին զմարմինն սա
ուղայ և զմարմինն յովնաթանու որդ
ւոյ նորին ՚ի պարսպին բեթսանայ. և բե
րին զնոսա յաբես. և այրեցին զնոսա
13 անդ։ * Եւ առին զոսկերս նոցա և
և թաղեցին զնոսա ընդ անդիւնն յա
բեսայ. և պահեցին զեօթն օր։

Եւ դաւիթ և որդիքն Իէլի խաղային առաջի Տն՟ փառօք և նուագարանօք : 2. Թագ. 6.5.

Իբրև ետես զհրեշտակն որ հարկանէր զժողովուրդն, ասէ. ահաւանիկ եմ, ես մեղայ : 2. Թագ. 24. 17.

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ ՍԱՄՈՒԷԼԻ:

ԶՈՐ ՄԵՔ ԵՐԿՐՈՐԴ ԹԱԳԱՒՈ ՐԱՑ ԱՍԵՄՔ.

Գլուխ Առաջներորդ :

ԵՒ ԵՂԵՒ 1
ՅԵՏ ՄԱՀ-
ուանն սաւու-
ղայ. և դաւիթ
դարձաւ 'ի հար-
կանելոյ զամա-
ղէկ. և նստաւ
դաւիթ 'ի սի-
կելակ աւուրս երկուս : * Եւ եղեւ 2
յետ աւուրն երկրորդի. և ահա այր
եհաս 'ի բանակէ զօրուն սաւուղայ.
և հանդերձք իւր պատառեալք. և
հող զգլխով իւրով : և եղեւ 'ի մտա-
նել նր առ դաւիթ. անկաւ յերկիր,
և երկիր եպագ նմա : * Եւ ասէ ցնա 3
դաւիթ. ուստի գաս դու. և ասէ ցնա.
'ի բանակէն իէլի զերծեալ եմ ես :

4 * Եւ ասէ ցնա դաւիթ. զի՞նչ զրոյց
է, պատմեա ինձ : և ասէ. փախեաւ ժո-
ղովուրդն 'ի պատերազմէն. և անկան
բազումք 'ի ժողովրդենէն և մեռան.
և սաւուղ և յովնաթան մեռան :
5 * Եւ ասէ դաւիթ ցպատանին որ
պատմեաց նմա. զիա՞րդ գիտես եթէ
մեռաւ սաւուղ և յովնաթան որդի նր:
6 * Եւ ասէ պատանին որ պատմեաց
նմա : դիպելով դիպեցայ 'ի լերինն
գեղբուայ. և ահա սաւուղ յեցեալ
կայր 'ի նիզակն իւր. և ահա կառք և
ախոյեանք հեծելոց գումարեցան 'ի
7 նա : * Եւ հայեցաւ 'ի թիկունս իւր և
ետես զիս. և կոչեաց զիս. և ասեմ
8 աւասիկ եմ ես : * Եւ ասէ ցիս. ո՞վ
ես դու. և ասեմ. ամաղեկացի եմ ես.
9 * Եւ ասէ ցիս. արի՛ 'ի վերայ իմ և
սպա՛ն զիս. զի կալաւ զիս մութն ան-
հնարին. մինչ դեռ ամ շունչ իմ յիս է :

* Եւ յարեայ ՚ի վ՞ր նր եւ սպանի զնա. 10
զի գիտէի թէ ոչ է ապրանաց . յետ
անկանելոյն նորա ։ և առի զթագն ՚ի
գլխոյ նր, և զապարանջանս ՚ի բազկէ
նր, և բերի զնս տեառն իմում այսր ։
* Եւ բուռն եհար դաւիթ զհան_ 11
դերձից իւրոց և պատառեաց զնս ։ և
ամ արք որք ընդ նմա՝ պատառեցին
զհանդերձս իւրեանց ։ * Եւ կոծե_ 12
ցան՝ և արտասուեցին՝ և լացին՝ մինչև ցընդ-
երեկս ՚ի վերայ սաւուղայ և յովնա_
թանու որդւոյ նորա . և ՚ի վ՞ր ժողո_
վրդեանն յուդայ ։ և ՚ի վ՞ր տանն իէլի.
զի հարան սրով ։ * Եւ ասէ դաւիթ 13
ցպատանին որ պատմեաց նմա. ուստի
ես դու ։ և ասէ. որդի առն պանդխտի
ամաղեկացւոյ եմ ես ։ * Եւ ասէ ցնա դա 14
‖ Սաղ. ւիթ . և ‖ զիարդ ոչ երկեար ձգել
104.15. զձեռն քո ապականել զօծեալն տն ։
* Եւ կոչեաց դաւիթ զմի ՚ի մանկտ_ 15
ւոյն և ասէ. մատիր՝ պատահեաց դմա.
և եհար զնա և մեռաւ ։ * Եւ ասէ ցնա 16
դաւիթ . արիւնքո ՚ի գլուխ քո . զի բե
րան քո խօսեցաւ զքէն և ասէ . թէ
ես սպանի զօծեալն տն ։ * Եւ ողբաց 17
դաւիթ զողբս զայս ՚ի վ՞ր սաւուղայ
և ՚ի վերայ յովնաթանու որդւոյ նր ։
* Եւ ասաց դաւիթ ուսուցանել որդ- 18
ւոյն յուդայ աղեղնաւորութիւն ։ և
ահա գրեալ է ՚ի գիրս ուղղութե ։ * Ար 19
ձանացիր իէլ ՚ի վերայ բլրոցն ՚ի բար
ձունս քո վիրաւորաց ։ զիարդ անկան
զօրաւորքն ։ * Մի պատմէք ՚ի գէթ . 20
և մի տայք զայդ աւետիս յելս ասկա_
ղոնի ։ զի մի երբէք ուրախ լիցին դըս
տերք այլազգեացն . և մի ցնծասցեն
դստերք անթլփատիցն ։ * Լերինք 21
գեղբուէայ . մի իջցէ ՚ի ձեզ ցօղ . և մի
եկեսցէ ՚ի վերայ ձեր անձրև անդաս
տանք պտղոց ։ զի անդ ապականեցաւ
ասպար զօրաւորաց ։ վահանն սաւու
ղայ ոչ օծաւ իւղով ։ * Յարենէ վի_ 22
րաւորաց . և ՚ի ճարպոյ զօրաւորաց ։
աղեղն յովնաթանու ոչ դարձաւ ու_
նայն յետս ։ և սուրն սաւուղայ ոչ ամ
29 կրաց տանն յովսեփայ ։ * ‖ Եւ եղև 'ի ‖ 2. Մն.
ժամանակին յայնմիկ . և ել յերոբովամ 10.15.
յերուսաղեմէ . և եգիտ զնա աքիա սի
լոնացի մարգարէ 'ի ճանապարհի . և
մեկուսացոյց զնա 'ի ճանապարհէն . և
աքիա զգեցեալ էր հանդերձ նոր . և
30 երկոքեան 'ի դաշտին ։ * Եւ բուռն
եհար աքիա զհանդերձէն իւրմէ զնո_
րոյ , որ 'ի վն իւր . և պատառեաց զնա
31 յերկոտասան կապերտս ։ * Եւ ասէ
ցյերոբովամ . առ դու քեզ զտասն կա
պերտսդ . զի այսպէս ասէ Տէր Ած
իղի՝ ահա ես պատառեցից զթագաւո
րութին 'ի ձեռաց սաղոմոնի . և տաց
32 քեզ զտասն գաւազանսն ։ * Եւ եր_
կու գաւազանքն եղիցին նր՝ վն դաւ_
թի ծառայի իմոյ՝ և վասն երէմի քա_
ղաքի՝ զոր ընտրեցի յամենայն ցեղից
33 իղի ։ * Փոխանակ զի եթող զիս . և
երկիր եպագ աստարտայ գարշելւոյ
սի_

սիդոնացւոց. և քամոսայ կռոց մովա
բու. և մելքոմայ զազրութեան որդւոցն
ամոնայ. և ոչ գնաց 'ի ճանապարհս
իմ առնել ուղղութիւն առաջի իմ. և
զճշմարտութիւնս՝ և զդատաստանս իմ
իբրև զդաւիթ զհայր իւր: *Եւ ոչ 34
առից զամենայն թագաւորութիւն 'ի
ձեռանէ նորա. զի հակառակութբ
կացից հակառակ նմա զամ աւուրս
կենաց նորա. վասն դաւթի ծառայի
իմոյ զոր ընտրեցի. որ պահեաց զպատ
ուիրանս իմ, և զճշմարտութիւնս:

զի պաշտ պանելով պաշտպան եղեց նմա

*Եւ առից զթագաւորութիւն 'ի ձե 35
ռանէ նր. և տաց քեզ զտասն գաւա
ռանսն: *Եւ որդւոյ նր տաց զեր 36
կուս գաւառանսն. վասն մնալոյ ճրա
գի ծառայի իմում դաւթի զամենայն
աւուրս առաջի իմ յերուսաղէմ քա
ղաքի՝ զոր ընտրեցի դնել զանուն իմ
անդ: *Եւ զքեզ առից. և թագաւորե 37
ցես, որոց և ցանկասցի անձն քո.
և դու եղիցիս թագաւոր 'ի վր իէլի:
*Եւ եղիցի՝ եթէ պահեսցես զամ ինչ՝ 38
զոր ես պատուիրեմ քեզ. և գնասցես
'ի ճանապարհս իմ. և արասցես ուղղու
թիւն առաջի իմ. զգուշանալ պատուի
րանաց իմոց՝ և հրամանաց իմոց՝ որպէս
արար դաւիթ ծառայ իմ. և եղէց ընդ
քեզ՝ և շինեցից քեզ տուն հաւատա
րիմ՝ որպէս շինեցի դաւթի. և տաց քեզ
զիէլ: *Եւ չարչարեցից զզաւակն 39
դաւթի վասն այնորիկ. բայց ոչ զամ
աւուրս: *Եւ խնդրեաց սողոմոն սպա 40
նանել զյերոբովամ՝ և յարեաւ յերո
բովամ և փախեաւ յեգիպտոս՝ առ սո
սակիմ արքայ եգիպտացւոց. և էր յե
գիպտոս մինչև մեռաւ սողոմոն: *Եւ 41
մնացորդք բանիցն սողոմոնի. և ամ
ինչ զոր արար. և ամ իմաստութիւն
նորա. ոչ աւանիկ գրեալ է 'ի գիրս
բանից սողոմոնի: *Եւ աւուրքն՝ զորս 42
թագաւորեաց սողոմոն յերուսաղէմ
'ի վր ամ իէլի ամք քառասուն:
*Եւ ննջեաց սողոմոն ընդ հարս իւր՝ 43
և թաղեցին զնա 'ի քաղաքի դաւթի
հօր իւրոյ: և թագաւորեաց ռոբո
վամ որդի նորա ընդ նորա:

ԳԼ: ԺԲ:

Բ.Մն. 10.1.

Եւ ‖ չոգաւ արքայ ռոբովամ 'ի 1
սիւքեմ. զի 'ի սիւքեմ գայր ամ
իէլ թագաւորեցուցանել զնա: *Եւ 2
եղև իբրև լուաւ յերոբովամ որդի
նաբատայ. և ինքն էր տակաւին յե
գիպտոս յորմէ հետէ փախեաւ յերե
սաց արքային սողոմոնի. և դարձաւ յե
րոբովամ յեգիպտոսէ: *Եւ առաքե 3
ցին՝ և կոչեցին զնա. և եկն յերոբո
վամ և ամ եկեղեցին իէլի: և խօսե
ցաւ ամ ժողովուրդն ընդ արքային ռո
4 բովամայ՝ և ասեն: *Հայր քո ծան
րացոյց զանուր մեր. և դու թեթևա
ցո 'ի խիստ ծառայութէ հօր քոյ՝ և 'ի
ծանր անրոյ նր զոր ետ 'ի վր մեր. և
5 ծառայեսցուք քեզ: *Եւ ասէ ցնոսա.
երթայք մինչև ցերիս աւուրս. և
6 դարձջիք առ իս: և գնացին: *Եւ խոր
հեցաւ արքայ ռոբովամ ընդ ծերսն
որք կային առաջի սողոմոնի հօր նր՝
մինչդեռ կենդանի էր. և ասէ: զիա՞րդ
խորհիք՝ և տացուք պատասխանի ժո
7 ղովրդեանն: *Եւ խօսեցան ընդ նմա՝
և ասեն. եթէ յաւուր յայսմիկ լինի
ցիս ծառայ ժողովրդեանն այսմիկ՝ և
ծառայեսցես նոցա. և անսասցես նց,
և խօսեսցիս ընդ նոսա բանս բարիս.
եղիցին քեզ ծառայք զամ աւուրս:
8 *Եւ եթող զխորհուրդ ծերոցն՝ զոր
խորհեցաւ ընդ նոսա. և խորհեցաւ ընդ
մանկտին մննդակիցս իւր՝ որք կային
9 առաջի նր: *Եւ ասէ ցնոսա. զինչ
տայք խրատ. և տաց պատասխանի
ժողովրդեանն՝ որք խօսեցան ընդ իս
և ասեն. թեթևացո յանրոյն՝ զոր ետ
10 հայր քո 'ի վր մեր: *Եւ խօսեցան ընդ
նմա մանկտիքն մննդակիցք իւր՝ որք
կային առաջի նր՝ և ասեն: ‖ այսպէս ‖ Սիրաք. 47.28.
խօսեսցիս յականջս ժողովրդեանն՝
որք խօսեցան ընդ քեզ՝ և ասեն. հայր
քո ծանրացոյց զանուր մեր. և դու
թեթևացո 'ի մէնջ. այսպէս խօսես
ցիս ընդ նոսա: ճկոյթ իմ ստուար է
11 քան զմէջ հօր իմոյ: *Եւ արդ՝ հայր
իմ եդ 'ի վերայ ձեր անուր ծանր՝ և
ես յաւելից յանուրն ձեր: հայր իմ
խրատեաց զձեզ գանիւք. և ես խրա
12 տեցից զձեզ քքովք: *Եւ եկն ամ
իսրայէլ առ արքայ ռոբովամ յաւուրն
երրորդի՝ որպէս խօսեցաւ ընդ նոսա
արքայ՝ և ասէ: դարձջիք առ իս յաւ
13 ուրն երրորդի: *Եւ պատասխանի
ետ արքայ ժողովրդեանն խստութբ.
և եթող ռոբովամ զխորհուրդ ծե
14 րոցն՝ զոր խորհեցան ընդ նմա: *Եւ
խօսեցաւ ընդ նոսա ըստ խորհրդեան
մանկտւոյն՝ և ասէ. հայր իմ ծանրա
ցոյց զանուր ձեր՝ և ես յաւելից յա
նուր ձեր. հայր իմ խրատէր զձեզ գա
նիւք՝ և ես խրատեցից զձեզ քքովք:
15 *Եւ ոչ լուաւ արքայ ժողովրդեանն.
զի էր խոտորումն 'ի տէ. զի հաստա
տեսցէ՝ ‖ զոր խօսեցաւ 'ի ձեռն աքիայ ‖ Վեր.
սիլոնացւոյ. վասն յերոբովամայ որդ 11.31.
16 ւոյ նաբատայ: *Իբրև տեսին ամ
իէլ՝ եթէ ոչ լուաւ նց արքայ. պա
տասխանի ետ ժողովուրդն արքային

և

և ասէ. զի՞նչ բաժին կայ մեր ընդ
Դաւթի. և ոչ գոյ մեր ժառանգութի
ընդ որդւոյ Յեսսեայ. գնասցե՛ս ՚ի բնա
կութիս քո Իսրայէլ: և արդ դու ա_
րածեա՛ զտունն Դաւթի : և գնաց
Իէլ ՚ի բնակութիս իւր :* Եւ որդւոցն 17
Իէլի՝ որք նստէին ՚ի քաղաքս Յուդայ՝
թագաւորեաց Ռոբովամ :* Եւ առա 18
քեաց արքայ Ռոբովամ զԱդոնիրամ
հարկապետ. և քարկոծեցին զնա ամ
Իսրայէլ քարամբք՝ և մեռաւ: և ար_
քայ Ռոբովամ աճապարեաց ելանել
՚ի կառս՝ փախչել յԵմ: * Եւ արհա 19
մարհեաց Իէլ զտունն Դաւթի մինչև
ցայսօր : * Եւ եղև իբրև լուաւ ամ 20
Իէլ՝ եթէ դարձաւ Յերոբովամ, առա
քեցին՝ և կոչեցին զնա ժողովուրդն.
և թագաւորեցուցին զնա ՚ի վ՟ր Իէլի:
և ոչ ոք էր զկնի տանն Դաւթի. բայց
միայն ՚ի գաւազանէ տանն Յուդայ, և
Բենիամինի : * Եւ Ռոբովամ եմուտ 21
յԵմ. և եկեղեցացոյց զժողովուրդն
Յուդայ. և զգաւազանն Բենիամինի
հարիւր և ութսուն հազար երիտա_
սարդաց պատերազմողաց՝ պատերազ
մել ընդ տանն Իէլի. դարձուցանել
զթագաւորութիւն Ռոբովամայ որդ_
Բ.Մն 11.2. ւոյ Սողոմոնի : * Եւ եղև բանն Տն 22
առ Սամեա այր ԱՅ՝ և ասէ : * Խօ_ 23
սեա՛ց ընդ Ռոբովամայ որդւոյ Սողո_
մոնի արքայի Յուդայ. և ընդ ամ տանն
Յուդայ՝ և Բենիամինի. և ընդ մնա_
ցորդս ժողովրդեանն՝ և ասասցես :
* Այսպէս ասէ Տր: մի՛ ելանիցէք՝ և մի՛ 24
տայք պատերազմ ընդ եղբարս ձեր՝
ընդ որդիսն Իլի. դարձցի՛ իւրաքանչ
իւրոք ՚ի տուն իւրդ, յինէն եղև բանն
այն : և լուան բանի Տն: և դադարե_
ցին յերթալոյ՝ ըստ բանին Տն: * Եւ 25
շինեաց Յերոբովամ զՍիկիմ ՚ի լերինն
Եփրեմայ՝ և բնակէր ՚ի նմա: և ել ան
տի՝ և շինեաց զՓանուէլ : * Եւ ասէ 26
Յերոբովամ ՚ի սրտի իւրում. ահա
արդ դառնայցէ թագաւորութիւն իմ
՚ի տունն Դաւթի : * Եթէ ելանիցէ 27
ժողովուրդս զոհել զոհս ՚ի տան Տն
յԵմ. և դառնայցէ սիրտ ժողովր_
դեանս այսորիկ առ Տէր. և առ տէր
իւրեանց Ռոբովամ արքայ Յուդայ. և
սպանանիցեն զիս. և դառնայցեն առ
Տոբ. 1. 5. Ռոբովամ արքայ Յուդայ: * Եւ խոր 28
հեցաւ արքայ. և չոգաւ՝ և արար երկու
երինջս ոսկիս. և ասէ ցժողովուրդն.
Ելից 32. 8. շատ լիցի ձեզ ելանել յԵմ. || ահա
աստուածք քո Իէլ՝ որք հանին զքեզ
յերկրէն Եգիպտացւոց : * Եւ եդ 29
զմին ՚ի Դան՝ և զմիւսն ՚ի Բեթէլ:
* Եւ եղև բանն այն ՚ի մեղս. և եր_ 30

թայր ժողովուրդն առաջի երեսաց
31 միոյն մինչև ցԴան : * Եւ արար տունս
՚ի վերայ բարձանց: || և արար քուրմս Բ.Մն
զմասն ինչ ժողովրդեանն որք ոչ էին 11. 15.
32 ՚ի տանէ Ղևեայ : * Եւ արար Յերոբո
վամ տօն յամսեանն ութերորդի՝ յաւ
ուր հնգետասաներորդի նորին ամ_
սոյ՝ ըստ տօնին՝ որ յերկրին Յուդայ. և
ել ՚ի սեղանն՝ զոր արար ՚ի Բեթէլ՝ զո
հել երնջոցն զոր արար : և կացոյց ՚ի
Բեթէլ քուրմս բարձանցն՝ զոր արար:
33 * Եւ ել ՚ի սեղանն՝ զոր արար ՚ի Բե_
թէլ. որ օր հնգետասան էր ամսոյն
ութերորդի ՚ի տօնին: ստեղծ ՚ի սրտէ
իւրմէ. և արար տօնս որդւոցն Իլի.
ել ՚ի սեղանն զոհել:

ԳԼ: ԺԳ:

1 Եւ ահա այր ԱՅ եհաս ՚ի Յուդայէ
բանիւ Տն ՚ի Բեթէլ. և Յերո_
բովամ կայր ՚ի վ՟ր սեղանոյն իւրոյ զո
2 հել ՚ի վ՟ր: * Եւ կոչեաց զսեղանն բա
նիւ Տն՝ և ասէ. սեղա՛ն, սեղա՛ն. այս_
պէս ասէ Տր: || ահա որդի ծնցի տան 4 Թագ
Դաւթի. Յովսիա անուն նր. և զոհես_ 23.16.
ցէ ՚ի վերայ քո զքուրմս բարձանցդ՝
որք զոհեն ՚ի վ՟ր քո. և զոսկերս մարդ
3 կան այրեսցէ ՚ի վ՟ր քո: * Եւ ետ յաւ
ուր յայնմիկ նշան՝ և ասէ. այս նշան է՝
զոր խօսեցաւ Տր՝ և ասէ. ահա սեղանդ
պատառեսցի. և հեղցի պարարտու_
4 թիւդ՝ որ ՚ի վերայ դորա : * Եւ եղև
իբրև լուաւ արքայ Յերոբովամ զբանս
առնն ԱՅ բարբառելոյ սեղանոյն ՚ի
վ՟ր՝ որ ՚ի Բեթէլ՝ ձգեաց արքայ զձեռն
իւր ՚ի սեղանոյ անտի և ասէ: կալա_
րո՛ւք զդա. և գօսացաւ ձեռն նր՝ զոր
ձգեաց ՚ի նա. և ոչ կարաց դարձու_
5 ցանել զնա առ ինքն : * Եւ սեղանն
պատառեցաւ՝ և հեղաւ պարարտու_
թիւն ՚ի սեղանոյ անտի՝ ըստ նշանին
զոր ետ այրն ԱՅ՝ ըստ բանի Տն:
6 * Եւ ասէ արքայ Յերոբովամ ցայրն
ԱՅ. աղաչեա՛ զերեսս Տն ԱՅ քո. և
արա՛ աղօթս վ՟ս իմ. և դարձցի ձեռն
իմ առ իս: և աղաչեաց այրն ԱՅ ա_
ռաջի Տն. և դարձաւ ձեռն արքայի
առ նա. և եղև իբրև զառաջինն:
7 * Եւ խօսեցաւ արքայ ընդ առնն ԱՅ՝
և ասէ. մուտ ընդ իս ՚ի տուն՝ և ճա_
8 շեա՛. և տաց քեզ պարգևս :* Եւ ասէ
այրն ԱՅ ցարքայ. եթէ տացես ինձ
զկէս տան քոյ. ոչ մտից ընդ քեզ. և ոչ
կերից զհաց. և ոչ արբից զջուր ՚ի տեղ
9 ւոջս յայսմիկ : * Զի այսպէս պատ_
ուիրեաց ինձ Տր բանիւ և ասէ : մի՛
ուտիցես զհաց. և մի՛ ըմպիցես զջուր.
և մի՛ դառնայցես ընդ նոյն ճանապարհ.

ընդ

ընդ որ երթայցես։ *Եւ գնաց զՆա- 10
նասարէ իւր. այլ ոչ ընդ նոյն Ձանա
պարհ՝ ընդ որ եկն՝ գնաց՝ ի բեթելայ։
*Եւ մարգարէ մի ծեր բնակեալ էր 11
՚ի բեթել. և եկին որդիք նո՛ւ. և պատ
մեցին նմա զամ զգործեան. զոր արար
այրն ԱՅ յաւուր յայնմիկ՝ ի բեթել.
և զբանն. զոր խօսեցաւ ընդ արքային.
և զարձուցին զերեսս հօրն իւրեանց։
*Եւ խօսեցաւ ընդ նոսա հայրն նո՛ւ 12
և ասէ։ ընդո՞ր Ձանապարհ գնաց։ և
ցուցին նմա որդիք նո՛ւ զՁանապարհն՝
ընդոր գնաց այրն ԱՅ. որ եկեալ էր
՚ի յուդայէ։ *Եւ ասէ ցորդիս իւր. 13
կազմեցէ՛ք ինձ զէշն. և կազմեցին նմա
զէշ. և եհ՚ի նա։ *Եւ գնաց զհետ 14
առնն ԱՅ. և եգիտ զնա նստեալ ընդ
կաղնւով։ և ասէ ցնա՝ եթէ դու իցես
այրն ԱՅ, եկեալ՚ի յուդայէ. և ասէ.
ես եմ։ *Եւ ասէ ցնա. եկ ընդիս ՚ի 15
տուն. և կեր զՀաց։ *Եւ ասէ. ոչ կա 16
րեմ դառնալ ընդ քեզ. և ոչ գալ ընդ
քեզ. և ոչ կերիմ զՀաց. և ոչ արբից
ջուր ՚ի տեղւոջս յայսմիկ։ *Զի այն 17
պէս հրաման տուեալ է ինձ բանիւ
Տ՚ն. և ասացեալ. թէ մի՛ ուտիցես անդ
Հաց. և մի՛ ըմպիցես ջուր. և մի՛ դառ
նայցես ընդ նոյն Ձանապարհ՝ ընդ որ
երթայցես։ *Եւ ասէ ցնա. և ես մար 18
գարէ եմ իբրև զքեզ. և հրեշտակ Տ՚ն
խօսեցաւ ընդիս՝ և ասէ. դարձո՛ զնա
առ քեզ ՚ի տունդ. և կերիցէ Հաց՝ և
արբցէ ջուր. և ստեաց նմա։ *Եւ 19
դարձոյց զնա ընդ իւր. և եկեր զՀաց
՚ի տան նորա. և եարբ ջուր։ *Եւ լի- 20
նէր մինչ դեռ նստեին նոքա ՚ի սե
ղանն. և եղե բան Տ՚ն առ մարգարէն.
որ դարձոյց զնա։ *Եւ խօսեցաւ ընդ 21
առնն ԱՅ եկեալ ՚իյուդայէ՝ և ասէ։
այսպէս ասէ Տ՚ն։ փոխանակ զի դառ
նացուցեր զբանն Տ՚ն. և ոչ պահեցեր
զպատուիրեսն՝ զոր պատուիրեաց քեզ
Տ՚ն Ա՚Ծ դո։ *Եւ դարձար՝ և կերեր 22
զՀաց. և արբեր զջուր ՚ի տեղւոջդ
յայդմիկ՝ զորմէ խօսեցաւ ընդ քեզ՝ և
ասէ. մի՛ ուտիցես զՀաց՝ և մի՛ ըմպել
ցես զջուր։ արդ մի՛ մնասցէ մարմին քո
՚ի գերեզման հարցդ քոց։ *Եւ եղե 23
յետ ուտելոյն նորա զՀաց և ըմպելոյ
զջուր, հանդերձեաց զէշ մարգարէին.
և դարձաւ՝ և գնաց։ *Եւ եգիտ զնա 24
առիւծ ՚ի Ճանապարհին. և սպան զնա.
և էր մարմին նորա ընկեցեալ ՚ի Ճա
նապարհին. և էշն կայր առ նմա. և
առիւծն կայր առ մարմնին։ *Եւ 25
ահա արք անցաւորք տեսին զմեռեալն՝
ընկեցեալ ՚ի Ճանապարհին. և առիւծն
կայր առ ընթեր մեռելոյն. և մտեին,
և խօսեցան ՚ի քաղաքին՝ ուր մարգա
րէն ծեր բնակեալ էր։ *Եւ լուաւ 26
որ դարձոյցն զնա ՚ի Ճանապարհէն,
ասէ. այն այրն Ա՚Ծ է. որ դառնացոյց
զբանն Տ՚ն. և ետ զնա Տ՚ն առիւծու.
և եբեկ զնա. և սպան զնա ըստ բա
նին Տ՚ն. զոր խօսեցաւ ընդ նմա։
*Եւ խօսեցաւ ընդ որդիսն իւր՝ և 27
ասէ։ Հանդերձեցէ՛ք ինձ զէշն. և Հանդեր
ձեցին։ *Եւ գնաց՝ և եգիտ զմարմին 28
նո՛ւ ընկեցեալ՚ի Ճանապարհին. և էշն՝
և առիւծն կային առ մարմնին։ և ոչ
եկեր առիւծն զմարմին առնն Ա՚Ծ.
և ոչ եբեկ զէշն։ *Եւ կառ մարգա 29
րէն զմարմին առնն Ա՚Ծ. և եդ զնա՚ի
վերայ իշոյն. և դարձոյց զնա. և եկն
՚ի քաղաք մարգարէին ծերոյ կոծել՝
և թաղել զնա։ *Եւ ցածոյց զդին նո՛ւ 30
մարգարէն ՚ի թաղել զնա ՚ի գերեզ
մանի իւրում. և կոծեցան զնա՝ և ա
սեն. վայ եղբայր։ *Եւ եղե յետ կո 31
ծելոյն զնա. խօսեցաւ ընդ որդիսն
իւր՝ և ասէ. եթէ մեռանիցիմ, թա
ղեսջիք զիս յայրի՝ գերեզմանի՝ ուր
թաղեցաւ այրս Ա՚Ծ. առ ոսկերս դո
րա դիջիք զիս։ զի ապրեսցին ոսկերք
իմ ընդ ոսկերս դորա։ *Զի լինելով 32
լինիցի բանն. զոր խօսեցաւ բանիւ
Տ՚ն ՚ի վէմ սեզանոյն ՚ի բեթել. և ՚ի վէմ
տանց բարձանց որք ՚ի սամարիայ։
*Եւ յետ բանիցս այսոցիկ ոչ դար 33
ձաւ յերօբոամ՝ ՚ի չարեաց իւրոց. և
դարձաւ՝ և արար ՚ի մանուկ ժողովր
դեանն քուրմս բարձանց. որ կամէր
ընդոյզ զձեռս իւր. և լինէր քուրմ բար
ձանց։ *Եւ եղե բանն այն ՚ի մեղս 34
տանն յերօբոամայ. և ՚ի սատակումն՝
և յապականութի՛ն յերեսաց երկրին։

ԳԼՒ. ԺՈՂ.

*Ա՚Ժամանակի յայնմիկ հիւանդա 1
ցաւ աբիա որդի յերօբոամայ։
*Եւ ասէ յերօբոամ՝ցկին իւր. արի՛, 2
և այլակերպեա՛ց. և մի՛ գիտասցեն թէ
դու կին յերօբոամայ իցես. և երթի
ցես ՚ի սեղոմ. ահա անդ է աբիա մար
գարէ. ‖ նա խօսեցաւ վասն իմ թա- ‖ Ա ԷԴ.
գաւորել ՚ի վերայ ժողովրդեանս այս- 11. ՚31.
րիկ։ *Եւ առ ՚ի ձեռին քոյ առնն հա 3
հաց և բլիթս որդւոց նորա. և ջամիչ՝
և ստոման մի մեղու. և երթ ցես առ
նա. և պատմեսցէ քեզ զինչ լինելոյ
իցէ մանկանն։ *Եւ արար այնպէս 4
կինն յերօբոամայ. և յարեաւ՝ և
գնաց ՚ի սեղոմ. և եմուտ ՚ի տուն ա
քիայ. և այրն ծերացեալ՚ի տեսանե
լոյ. և վատեալ աչք իւր ՚ի ծերութէ
իւրմէ։ *Եւ ասէ Տ՚ն ցաքիա. ահա 5
կինն

կնոջն Երոբովամայ գայ հարցանել
բան 'ի քէն վն որդւոյ իւրոյ. զի հիւ-
անդ է. զայս ինչ եւ զայս ասասցես
նմա ։ * Եւ եղեւ 'ի մտանելն նորա. 6
եւ ինքն յանծանօթս լինէր. եւ եղեւ իբ-
րեւ լուաւ Աքիա զձայն ոտից նորա. 'ի
դրանն մտանել նր. եւ 'ի բանալ. ասէ՝ մուտ
կին Երոբովամու. ընդէ՞ր իցէ այդ՝
զի յանծանօթս լինիս. եւ ես եմ առա-
քեալ առ քեզ խստութբ ։ * Երթ՝ 7
եւ ասա ցԵրոբովամ. այսպէս ասէ Տր
Ած Իղի. փոխանակ զի բարձրացու-
ցի զքեզ 'ի միջոյ ժողովրդեանդ ։ եւ
ետու զքեզ յառաջնորդ 'ի վերայ ժո-
ղովրդեան իմոյ Իղի ։* Եւ պատառե- 8
ցի զթագաւորութին 'ի տանէն Դաւ-
թի. եւ ետու զնա քեզ. եւ ոչ եղեր իբ-
րեւ զծառայ իմ Դաւիթ. որ պահեաց
զպատուիրանս իմ. եւ եկն զկնի իմ
ամ սրտիւ իւրով՝ առնել ուղղութի
առաջի իմ. * Եւ չարայար՝ առնել 9
քան զամենեսին. որք եղեն յառաջ
քան զքեզ. եւ գնացեր. եւ արարեր քեզ
աստուածս օտարոտիս. եւ ձուլածոյս՝
բարկացուցանել զիս ։ եւ զիս ընկեցեր
յետս 'ի մարմնոյ քումմէ ։ *Վասն այ- 10
սորիկ ես ածից չարիս 'ի վերայ տանն
‖ Մ. այր. Երոբովամայ. ‖ եւ սատակեցից զԵ-
15.29. րոբովամայ. որ միզիցէ զորմով ։
կծկեալ եւ լքեալ 'ի մէջ Իղի. եւ հաւա-
քեցից զհետ տանն Երոբովամայ. որպ
հաւաքիցի աղբ՝ մինչեւ սպառել զնա ։
* Զմեռեալսն Երոբովամու 'ի քա- 11
ղաքի, կերիցեն շունք. եւ զմեռեալս
յանդի, կերիցեն թռչունք երկնից.
զի Տր խօսեցաւ ։ * Եւ դու արի՛ գնա 12
'ի տուն քո. եւ 'ի մտանել ոտից քոց 'ի
քաղաքն՝ մեռցի մանուկն ։ * Եւ կո- 13
ծեսցեն ամ Իսրայէլ. եւ թաղեսցեն
զնա. զի նա միայն Երոբովամայ մտցէ
'ի գերեզման. զի գտաւ 'ի նմա բան
բարի՝ վասն Տն Այ Իսրայէլի՝ 'ի տան
Երոբովամայ ։ * Եւ յարուսցէ Տէր 14
իւր թագաւոր 'ի վր Իղի. որ հարցէ
զտուն Երոբովամայ յաւուր յայսմիկ ։
* Եւ արդ (զի՞նչ եւս) հարցէ Տր զԻղ. 15
որպ շարժի եղէգն 'ի ջուր. եւ խլեսցէ
Տր զԻղ յերկրէս բարութենէ յայսմա-
նէ. զոր ետ հարց նոցա. եւ հոսեսցէ
զնս յայնկոյս գետոյն. փոխանակ զի
արարին իւրեանց անտառս բարկա-
ցուցանել զՏր ։ * Եւ մատնեսցէ Տր 16
զԻղ վն մեղացն Երոբովամու. որ
մեղաւ՝ եւ մեղոյց զԻղ ։ * Եւ յարեաւ 17
կինն Երոբովամու. եւ գնաց 'ի Սա-
րիրա. եւ եղեւ իբրեւ եմուտ առաջի
դրան տանն, մեռաւ մանուկն ։ * Եւ 18
կոծեցան զնա, եւ թաղեցին ամ Իղ
ըստ բանին Տն. զոր խօսեցաւ 'ի ձեռն
ծառայի իւրոյ Աքիայ մարգարէի ։
19 * Եւ մնացորդք բանից Երոբովա-
մայ՝ թէ որչափ պատերազմեցաւ. եւ
որչափ թագաւորեաց. ահա գրեալ
են 'ի գիրս բանից աւուրց թագաւո-
20 րացն Իղի ։ * Եւ աւուրք զորս թա-
գաւորեաց Երոբովամ. ամք քսան եւ
երկու. եւ ննջեաց ընդ հարս իւր ։ եւ
թագաւորեաց Նաբատ որդի նր ընդ
21 նորա ։ * ‖ Եւ Ռոբովամ որդի Սողո- ‖ 2.Մն.
մոնի թագաւորեաց 'ի վր Յուդայ ։ որ- 12.1. և
դի քառասուն եւ մի ամաց Ռոբովամ 13.
'ի թագաւորել իւրում, եւ եօթնու-
տասն ամ թագաւորեաց յԵմ քաղա-
քի՝ զոր ընտրեաց Տէր դնել զանուն
իւր անդ, յամ ցեղիցն Իղի ։ եւ անուն
22 մօր նր Նաամա Ամանացի ։ * Եւ ա-
րար Ռոբովամ չար առաջի Տն. եւ
նախանձեցաւ ընդ ամ. զոր արարին
հարք նր. եւ ըստ մեղաց նց. զորս մե-
23 ղան ։ * Եւ շինեցին նոքա իւրեանց
բարձունս՝ եւ անտառս 'ի վր ամ բլրոյ
բարձու. եւ 'ի ներքոյ ամ վարսաւոր
24 ծառոց ։* Եւ նուէրք եղեն յերկրին.
եւ արարին յամ գարշութեց ազգացն՝
զորս եբարձ Տէր յերեսաց որդւոցն
25 Իղի ։ * Եւ եղեւ 'ի տարւոջն յորում
թագաւորեաց Ռոբովամ. ել Սուսա-
կիմ արքայ Եգիպտոսի 'ի վր Եէմի ։
26 * ‖ Եւ էառ զամ գանձս տանն Տն. ‖
եւ զգանձս տանն արքայի. եւ զնիզակն 10.16.
ոսկիս. (զոր էառ Դաւիթ 'ի ձեռաց
Ադրաազարայ արքային Սուբայ. եւ տա-
րաւ յԵէմ զամ. զոր էառ ։ եւ էառ
զվահանս ոսկիս) զոր արար Սողոմոն ։
27 * Եւ արար արքայ Ռոբովամ փոխա-
նակ նոցա զէնս պղնձիս ։ եւ դիմեցին
'ի վերայ նր զօրագլուխք սուրհան-
դակացն. որք պահէին զդրունս տանն
28 արքային ։ * Եւ լինէր յորժամ մտա-
նէր արքայ 'ի տունն Տն. բառնային
զայն սուրհանդակքն. եւ յեցուցանէին
29 զնս 'ի թեւէ սուրհանդակացն ։ * Եւ
մնացորդք բանիցն Ռոբովամայ. եւ
ամ ինչ զոր արար. ոչ աւանիկ գրեալ
են 'ի գիրս բանից աւուրց թագաւո-
30 րացն Յուդայ ։ * Եւ պատերազմ էր
'ի մէջ Ռոբովամայ եւ 'ի մէջ Երոբո-
31 վամայ զամենայն աւուրս ։ * Եւ ննջ-
եաց Ռոբովամ ընդ հարս իւր. եւ
թաղեցաւ ընդ հարս իւր 'ի քաղաքի
Դաւթի ։ եւ թագաւորեաց Աբիու որ-
դի նորա ընդ նորա ։

Գլ ։ ԺԵ ։

1 Յամին ութուտասներորդի թա-
գաւորութեանն Երոբովամայ
որդւոյ

որդւոյ Նաբատայ. Թագաւորէ աբիու
որդի ռօբովամայ 'ի վերայ յուդայ ։
2. Մնա * ‖ Եւ զերիս ամս թագաւորեաց 'ի 2
13.2. վր̄ եմի. և անուն մօր նորա մաաքա
դուստր աբեսաղոմայ ։ * Եւ գնաց 'ի 3
մեղս հօր իւրոյ. զոր արար առաջի Տ՟ն
Ա՟Յ իւրոյ. և ոչ էր սիրտ նորա կատա
րեալ ը̄ Տ՟ն Ա՟Յ իւրոյ՝ իբրև զսիրտն
դաւթի հօր իւրոյ ։ * Այլ 'ի ձեռն 4
դաւթի ետ նմա Տէր Ա՟Ծ մնացորդ
յեմ. զի կացուսցէ զորդիս ն՟ր յետ
նորա. և հաստատեսցէ զեմ ։ * Ո՟պ 5
արար դաւիթ ուղղութի առաջի Տ՟ն.
և ոչ խոտորեցաւ յամէ. զոր պատուէ
րեաց նմա զամ աւուրս կենաց իւրոց.
2 Թագ ‖ բաց 'ի բանէն ուրիայ քետացւոյ ։
11.4. * Եւ պատերազմ էր 'ի մէջ աբիայ 6
և 'ի մէջ յերոբովամայ զամ աւուրս
կենաց նորա ։ * Եւ մնացորդք բանից 7
աբիայ՝ և ամ ինչ զոր արար՝ ո՞չ աւա
նիկ գրեալ են 'ի գիրս բանից աւուրց
2. Մնա թագաւորացն յուդայ ։ ‖ և պատերազմ
13.2. էր 'ի մէջ աբիայ և 'ի մէջ յերոբովա
մայ ։ * Եւ ննջեաց աբիու ընդ հարս 8
իւր. և թաղեցաւ 'ի քաղաքի դաւթի.
2. Մնա ‖ և թագաւորէ ասա որդի ն՟ր ընդ ն՟ր ։
14.1. * Եւ յամի քսաներորդի յերոբովա 9
մայ արքայի Իղի. թագաւորէ ասա 'ի
վր̄ յուդայ ։ * Եւ քառասուն և միամ 10
թագաւորեաց յեմ. և անուն մօր ն՟ր
մաաքա՝ դուստր աբեսաղոմայ ։ * Եւ 11
արար ասա ուղղութի առաջի Տ՟ն իբ
րև զդաւիթ զհայր իւր ։ * Եւ եբարձ 12
զնուէրս յերկրէն . և ջնջեաց զամ
խարդախութիւն. զոր արարին հարք
նորա ։ * Եւ զմաաքա զմայր իւր 'ի բաց 13
արար 'ի տիկնութէ ։ քանզի արար
ժողովս յանտառին իւրում. և կոտո
րեաց ասա զամբոխս նորա. և այրեաց
հրով 'ի հեղեղատին կեդրոնի ։ * Սա 14
կայն զբարձունսն ոչ եբարձ ։ բայց
սիրտ ն՟ր կատարեալ էր ընդ Տ՟ն զամ
աւուրս իւր ։ * Եւ եբեր զսիւնսն հօր 15
իւրոյ. և զսիւնս զիւր եմոյծ 'ի տուն
Տ՟ն. արծաթ և ոսկի և անօթս ։ * Եւ 16
պատերազմ էր 'ի մէջ ասայի և 'ի մէջ
բաասայ արքայի Իղի զամ աւուրս ն՟ց ։
2. Մնա * ‖ Եւ ել բաասա արքայ Իղի 'ի վր̄ 17
16.1. յուդայ. և շինեաց զռամա. զի մի՛ լի
ցի մտանել և ելանել ասայի արքայի
յուդայ ։ * Եւ էառ ասա զամ ար 18
ծաթն և զոսկի գտեալ 'ի գանձս տանն
Տ՟ն. և 'ի գանձս տան թագաւորին. և
ետ զայն 'ի ձեռս ծառայից իւրոց. և
առաքեաց զն՟ս ասա արքայ առ որդին
ադերայ՝ որդւոյ աբեներայիմայ որդ
ւոյ ազայիլի արքայի ասորւոց բնակե
Ուխ է ընդե լոյ 'ի դամասկոս՝ և ասէ ։ * Ուխտեա՛ 19
խտ

ուխտ ընդ իս և ընդ քեզ. և 'ի մէջ հօր
իմոյ և հօր քոյ. ահաւադիկ առաքեցի
քեզ պատարագ արծաթ և ոսկի. և
լո՛յծ զուխտ քո, որ ընդ բաասայ ար
20 քայի Իղի. և գնասցէ յինէն ։ * Եւ
լուաւ որդի ադերայ՝ արքայի ասայի.
և առաքեաց զիշխանսն իւր 'ի քաղաքսն
Իղի. և եհար զային. և զդան. և զա
բէլ տանն մաաքայ. և զամ զքեներ
բէթ մինչև յամ երկիրն նեփթաղի
21 մայ ։ * Եւ եղև՝ իբրև լուաւ բաասա.
դադարեաց 'ի շինելոյ զռամա. և դար
22 ձաւ 'ի թերսայ ։ * Եւ արքայ ասա
պատուիրեաց ամ յուդայ, որք էին
յենակիմ. զի առցեն զքարինսն ռա
մայ, և զփայտ ն՟ր, զոր շինեաց բաա
սա. և շինեաց նոքօք արքայ ասա զամ
բլուր բենիամինի՝ և զդիտանոցսն ։
23 * Եւ մնացորդք բանից ասայի և ամ
զօրութի նորա. և ամ ինչ զոր արար,
և քաղաքսն զորս շինեաց. ո՞չ աւանիկ
գրեալ են 'ի գիրս բանից աւուրց թա
գաւորացն յուդայ ։ բայց 'ի ժամանա
կի ծերութե իւրոյ ցաւեցան ոտք իւր
24 * Եւ ննջեաց ասա ընդ հարս իւր. և
թաղեցաւ ընդ հարս իւր 'ի քաղաքին
դաւթի ։ ‖ և թագաւորէ յովսափատ ‖2. Մնա
25 որդի ն՟ր ընդ ն՟ր ։ * Եւ նաբատ որդի 17.1.
յերոբովամայ թագաւորէ 'ի վր̄ Իղի
յամին երկրորդի ասայի արքայի յու
դայ ։ և թագաւորեաց 'ի վր̄ Իղի ամս
26 երկուս ։ * Եւ արար չար առաջի Տ՟ն.
և գնաց զճանապարհ հօր իւրոյ. և 'ի
27 մեղս իւր որովք յանցոյց զԻղ ։ * Եւ
նստաւ զնովաւ բաասա որդի աքիայ
'ի վերայ տանն իսաքարու . և եհար
զնա բաասա 'ի գաբաթոն այլազ
գեաց ։ և նաբատ և ամ Իղ նստէին
28 զգաբաթոնաւ ։ * Եւ սպան զնա բաա
սա. յամին յերկրորդի ասայի արքայի
յուդայ. և թագաւորեաց ընդ նորա ։
29 * ‖ Եւ եղև իբրև թագաւորեաց. ե ‖ Դ արք.
հար զամ տունն յերոբովամու. և ոչ 21.22.
թողոյր զամ շնչաւոր տանն յերոբովա
մայ. մինչև սատակել զնա ըստ բանին
Տ՟ն ‖ զոր խօսեցաւ 'ի ձեռն ծառայի ‖ Գ էր.
30 իւրոյ աքիայ սիլոնացւոյ ։ * Վասն ամ 14. 10.
մեղացն յերոբովամայ. որ մեղաւ. և
յանցոյց զԻղ 'ի զայրացուցանել իւր
ում. որովք զայրացոյց զՏ՟ր Ա՟Ծ Իղի ։
31 * Եւ մնացորդք բանից նաբատայ. և
ամ ինչ զոր արար, ո՞չ աւանիկ գրեալ
են 'ի գիրս բանից աւուրց թագաւո
32 րացն Իղի ։ * Եւ էր պատերազմ 'ի
մէջ ասայի՝ և 'ի մէջ նաբատայ ար
33 քայի Իղի զամ աւուրս նոցա ։ * Եւ
յամին երրորդի ասայի արքայի յու
դայ թագաւորէ բաասա որդի աքիայ

'ի վր ամ Իլի 'ի Թերսայ ամս քսան
և չորս : * Եւ արար չար առաջի Տն: 34
և գնաց զճանապարհ յերոբովամայ
որդւոյ նաբատայ՝ և 'ի մեղս նորա .
որովք յանցոյց զիսրայէլ:

ԳԼ: ԺԶ:

Եւ եղեւ բան Տն 'ի ձեռն յէուայ 1
որդւոյ անանեայ առ բաասա՝
և ասէ : *Փոխանակ զի բարձրացուցի 2
զքեզ յերկրէ . և ետու զքեզ առաջ_
նորդ 'ի վր ժողովրդեան իմոյ Իլի . և
գնացեր զճանապարհն յերոբովամայ .
և յանցուցեր զժողովուրդ իմ զԻլ
բարկացուցանել զիս սնոտիւք իւր_
եանց : * Ահա ես յարուցից զհետ 3
բաասայ և զհետ տան նորա . և տաց
զտուն քո իբրև զտունն յերոբովամայ
‖ Վեր. 14.11. որդւոյ նաբատայ : * ‖ Որ մեռանիցի 4
բաասայ 'ի քաղաքի , շունք կերիցեն .
և որ մեռանիցի նր 'ի դաշտի , կերի_
‖ 2. Մնա. 16.1. ցեն զնա Թռչունք երկնից : * ‖ Եւ 5
մնացորդք բանից բաասայ . և զմ ինչ
զոր արար . և զօրութիւք նր . ոչ աւա
նիկ գրեալ են 'ի գիրս բանից աւուրց
Թագաւորացն Իլի : * Եւ ննջեաց 6
բաասա ընդ հարս իւր . և Թաղեցաւ
'ի Թերսայ : և Թագաւորէ Էլա որդի
նորա ընդ նորա : (յամի քսաներորդի
ասայի արքայի :) *Եւ 'ի ձեռն յէուայ 7
որդւոյ անանեայ մարգարէի . խօսե_
ցաւ Տր 'ի վերայ բաասայ՝ և վր տան
նր . զմ չարիսն զոր արար առաջի
Տն 'ի բարկացուցանել զնա գործովք
ձեռաց իւրոց . առ 'ի լինելոյ իբրև
զտունն յերոբովամայ . և վս հարկա
նելոյ զնա : * Յամին քսաներորդի և 8
վեցերորդի արքայի յուդայ : և Թա_
գաւորեաց Էլա որդի բաասայ 'ի վր
Իլի 'ի Թերսայ ամս երկուս : *Եւ ժո 9
ղովեաց 'ի վերայ նորա զամբրի ծա_
ռայ իւր իշխան կիսոյ սպառազինաց .
և նա ըմպէր . և արբեալէր 'ի տանն
արսայ հանդերձապետի 'ի Թերսայ :
‖ 4 Թագ. 9.31. * ‖ Եւ եմուտ զամբրի . և եհար զնա՝ 10
և եսպան . յամի քսաներորդի եօթնե
րորդի ասայի արքայի յուդայ . և Թա_
գաւորեաց ընդ նորա : * Եւ եղեւ 'ի 11
Թագաւորել նր՝ և նստել յաթոռն
իւրում , եհար զմ տունն բաասայ՝
և ոչ եԹող նմա՝ որ միզիցէ զորմով .
և զմերձաւորս նորա՝ և զբարեկամս
նորա : * Եւ ջնջեաց զամբրի զմ 12
տունն բաասայ՝ ըստ բանին Տն՝ զոր
խօսեցաւ 'ի վերայ տանն բաասայ 'ի
ձեռն յէուայ մարգարէի : * Վս ամ 13
մեղացն բաասայ՝ և էլայ որդւոյ նր՝
որ մեղաւ : և ոյք յանցոյցն զԻլ բար
կացուցանել զՏր Այ Իլի սնոտեօք
14 իւրեանց : * Եւ մնացորդք բանիցն
էլայ . և ամ ինչ զոր արար . ոչ աւա_
նիկ գրեալէն 'ի գիրս բանից աւուրց
15 Թագաւորացն Իլի : * Յամի քսանե_
րորդի եօթներորդի ասայի արքայի
յուդայ . Թագաւորեաց զամբրի աւ_
ուրս եօթն 'ի Թերսայ . և բանակն
16 Իլի 'ի գաբաԹոնի այլազգեաց : *Եւ
լուաւ ժողովուրդն 'ի բանակին անդ .
ասեն՝ դաւաճանեցաւ զամբրի՝ և եհար
զարքայն . և Թագաւորեցուցին զԱմ
րի զօրավար զօրուն 'ի վր Իսրայէլի
17 յաւուր յայնմիկ 'ի բանակին : * Եւ
ել ամրի . և ամ Իլ ընդ նմա 'ի գա_
18 բաԹոնէ . և նստաւ զԹերսաւ : * Եւ
եղեւ իբրև ետես զամբրի Թէ յառ_
նուլ եղեւ քաղաքն . եմուտ 'ի սենեակ
մի տանն արքայի . և այրեաց 'ի վերայ
նր զտունն արքայի հրով . և մեռաւ :
19 * Վս մեղացն իւրոց զոր արար առ_
նել չար առաջի Տն . և գնաց զմ
ճանապարհս յերոբովամայ որդւոյ
նաբատայ . և 'ի մեղս նր . զոր արար՝
20 որովք յանցոյց զԻլ : * Եւ մնացորդք
բանից զամբրեայ՝ և խռովք նր՝ զոր
խռովեցաւ . ոչ աւանիկ գրեալ են 'ի
գիրս բանից աւուրց Թագաւորացն
21 Իլի : * Յայնժամ բաժանեցաւ ժողո
վուրդն Իլի . կէս ժողովրդեանն լի_
նէր զհետ Թամնեայ որդւոյ գոնաԹայ
Թագաւորեցուցանել զնա . և կէս ժո
ղովրդեանն լինէր զկնի ամրեայ :
22 * Եւ յաղԹահարեաց ժողովուրդն՝
որ զկնի ամրեայ . և պարտեցաւ ժողո
վուրդն՝ որ զհետ Թամնեայ որդւոյ գօ
նաԹայ . և մեռաւ Թամնի . (և յոլովամ
եղբայր նորա 'ի ժամանակի յայնմիկ .)
և Թագաւորեաց ամրի յետ Թամնեայ :
23 * Յամին երեսներորդի և առաջնոր_
դի ասայի արքայի յուդայ . Թագաւո_
րէ ամրի 'ի վր Իլի ամս երկոտասան .
'ի Թերսայ Թագաւորեաց ամս վեց :
24 * Եւ ստացաւ ամրի զլեառնն սոմո_
րոն 'ի սամերայ տեառնէ լերինն եր_
կուց տաղանդաց արծաԹոյ . և շինեաց
զլեառնն . և կոչեաց զանուն լերինն՝
զոր շինեաց , յանուն սամերեայ տն
25 լերինն սամիրոն : * Եւ արար ամրի
չար առաջի Տն . և չարացաւ քան զմ
26 եղեալս յառաջ քան զնա : * Եւ գնաց
զմ ճանապարհս յերոբովամայ որդ
ւոյ նաբատայ . և 'ի մեղս նորա . որովք
յանցոյց զԻլ 'ի բարկացուցանել զՏր
27 Այ Իլի սնոտեօք իւրեանց : * Եւ
մնացորդք բանից ամրեայ՝ և ամ ինչ
զոր արար . և զօրուԹի նր զոր արար .
ոչ աւանիկ գրեալ են 'ի գիրս բանից
աւուրց

ւուրց Թագաւորացն Իլի ։ * Եւ նըն 28
ջեաց Ամրի ընդ հարս իւր. եւ թաղե
ցաւ 'ի Սամարիայ. եւ թագաւորեաց
Աքաաբ որդի նորա ընդ նր ։ * Եւ Ա_ 29
քաաբ որդի Ամրեայ թագաւորեաց
'ի վերայ Իլի. յամին երեսներորդի եւ
ութերորդի Ասայի արքային Յուդայ.
թագաւորեաց Աքաաբ որդի Ամրեայ
'ի վերայ Իլի 'ի Սամարիայ ամս քսան
եւ երկուս ։ * Եւ արար Աքաաբ որդի 30
Ամրեայ չար առաջի Տն քան զամենե
սեան. որք յառաջ քան զնա էին ։
* Եւ ոչ ինչ էր նմա ընդ հատ գնալ 31
ըստ մեղաց Յերոբովամայ որդւոյ Նա
բատայ. եւ եառ կին զՅեզաբէլ դուստր
Յովբաաղայ արքային Սիդոնացւոց. եւ
գնաց՝ եւ ծառայեաց Բահաղու՝ եւ եր_
կիր եպագ նմա ։ * Եւ կանգնեաց սե 32
ղան Բահաղու 'ի տան գարշելեաց նր.
զոր շինեաց 'ի Սամարիայ ։ * Եւ արար 33
Աքաաբ անտառ. եւ յաւել Աքաաբ առ
նել առ 'ի բարկացուցանել զՏէր Ա.Ծ
Իլի, քան զամ Թագաւորս Իլի եղեալս
յառաջ քան զնա ։ * Յաւուրս նորա 34
շինեաց Աքիէլ Բեթելացի զԵրիքով.
Աբիրոնաւ անդրանկաւ իւրով եարկ
նմա հիմունս. եւ Սեգուբաւ կրտսերով
‖Յեսու. 6.26. իւրով կանգնեաց զդրունս նր ‖ ըստ
բանին Տն. զոր խօսեցաւ 'ի ձեռն Յե
սուայ որդւոյ Նաւեայ ։

ԳԼ: ԺԷ:

‖Սիրաք. 48.1. Եւ ‖ ասէ Եղիա մարգարէ 'ի Թեզ 1
բեայ Գաղաադու ցԱքաաբ. կեն
Յակոբ. 5.17. դանի է Տր Ա.Ծ զօրութեանց Ա.Ծ Իլի.
որոյ կացի առաջի նորա. եթէ եղիցի
յամս յայսոսիկ ցօղ՝ կամ անձրեւ.
բայց եթէ բանիւ բերանոյ իմոյ ։ * Եւ 2
եղեւ բան Տն առ Եղիա՝ եւ ասէ ։
* Գնա՛ աստի ընդ արեւելս. եւ թաքի 3
ցես 'ի հեղեղատին Քոռաթու. որ է
յանդիման Յորդանանու ։ * Եւ եղի 4
ցի ըմպել քեզ ջուր 'ի հեղեղատէն. եւ
հրաման տաց ագռաւուց կերակրել
զքեզ անդ ։ * Եւ գնաց. եւ արար Եղիա 5
ըստ բանի Տն ։ եւ չոգաւ՝ եւ նստաւ 'ի
հեղեղատին Քոռաթայ յանդիման
Յորդանանու ։ * Եւ ագռաւք բերէին 6
նմա հաց եւ միս ընդ առաւօտս. եւ հաց
եւ միս ընդ երեկոյս. եւ 'ի հեղեղատէն
ըմպէր զջուր ։ * Եւ եղեւ յետ աւուրց. 7
եւ ցամաքեցաւ հեղեղատն ։ * Եւ եղեւ 8
բան Տն առ Եղիա՝ եւ ասէ ։ * Արի՛ եւ 9
գնա՛ 'ի Սարեփթա Սիդոնացւոց. եւ
նստցիս անդ. եւ ահա պատուիրեալ է
իմ անդ կնոջ միոյ այրւոյ կերակրել
‖Ղուկ. 4.26. զքեզ ։ * ‖ Եւ յարեաւ՝ եւ գնաց 'ի Սա 10
րեփթա 'ի դրունս քաղաքին. եւ ահա
խա 2

անդ կին մի քաղէր փայտ. եւ աղաղա_
կեաց զկնի նորա Եղիա՝ եւ ասէ ցնա.
ա՛ռ դու ինձ սակաւ մի ջուր ամանով
11 եւ արբից ։ * Եւ գնաց բերել. եւ աղա
ղակեաց զհետ նորա Եղիա՝ եւ ասէ.
առցես ինձ պատառ մի հաց 'ի ձեռին
12 քում ։ * Եւ ասէ կինն. կենդանի է
Տր Ա.Ծ քո. եթէ գուցէ իմ նկանակ.
բայց եթէ որչափ բուռն մի ալիւր 'ի
սափորի. եւ սակաւ մի իւղ 'ի կամիսա
կի. եւ ահա քաղեմ կրկուտս երկուս.
եւ մտից՝ եւ արարից զայն ինձ եւ ման_
կանց իմոց. եւ կերիցուք զայն՝ եւ մեռ
13 ցուք ։ * Եւ ասէ ցնա Եղիա. քաջա_
լերեա՛ց ։ մտ՛ու՝ եւ արա՛ ըստ բանի քում ։
այլ արասցես նախ ինձ անտի նկանակ
մի փոքրիկ. եւ բերցես ինձ. եւ ապա
14 արասցես քեզ եւ մանկանց քոց ։ * Զի
այսպէս ասէ Տր Ա.Ծ Իլի. սափոր ա_
լերն մի՛ պակասեսցի. եւ կամիսակ
իւղոյն մի՛ նուազեսցի մինչեւ յօր տալոյ
Տն անձրեւ 'ի վերայ երեսաց երկրի ։
15 * Եւ գնաց կինն. եւ արար ըստ բա_
նին Եղիայի. եւ ուտէր նա՛ եւ նա՝ եւ որ_
16 դիք նր ։ * Եւ յօրէ յայնմանէ սափոր
ալերն ոչ պակասեցաւ. եւ կամիսակ
իւղոյն ոչ նուազեցաւ ըստ բանին Տն.
17 զոր խօսեցաւ 'ի ձեռն Եղիայի ։ * Եւ
եղեւ յետ բանիցս այսոցիկ հիւանդա
ցաւ որդի տիկնոջ տանն. եւ էր ախտ
նորա սաստիկ յոյժ. մինչ ոչ մնաց 'ի
18 նմա շունչ ։ * Եւ ասէ ցԵղիա. զի՞
կայ իմ եւ քո՝ այր Ա.Յ. մտեր առ իս
յիշատակել զանօրէնութիւնս իմ. եւ
19 սպանանել զորդի իմ ։ * Եւ ասէ Ե_
ղիա ցկինն. տո՛ւր ցիս զորդիդ քո ։ եւ
եառ զնա 'ի գրկաց նր. եւ եհան զնա
'ի վերնատունն յորում ինքն նստէր.
եւ արար զնա 'ի կողմն 'ի վր մահճաց
20 իւրոց ։ * Եւ աղաղակեաց Եղիա՝ եւ
ասէ. ո՛հ ինձ Տր. որ վկայդ ես այր_
ւոյն, առ որում ես բնակիմ. դու չար_
չարեցեր զորդի նորա մեռուցանել ։
21 * Եւ փչեաց երիցս 'ի մանուկն. եւ կար
դաց զՏր՝ եւ ասէ. Տր Ա.Ծ իմ. դարձ
ցի շունչ մանկանս 'ի սա. եւ եղեւ այն
22 պէս ։ * Եւ աղաղակեաց. եւ լուաւ Տր
ձայնի Եղիայի. եւ դարձաւ շունչ ման
կանն 'ի փոր նր՝ եւ կենդանացաւ ։
23 * Եւ եառ Եղիա զմանուկն՝ եւ իջոյց
զնա 'ի վերնատանէ անտի 'ի տունն.
եւ ետ ցմայր իւր. եւ ասէ Եղիա. տե՛ս՝
24 զի կենդանի է որդիդ քո ։ * Եւ ասէ
կինն ցԵղիա. ահա արդ գիտացի,
եթէ այր Ա.Յ ես դու. եւ բան Տն ճշ
մարիտ է 'ի բերան քո ։

Գլ: ԺԸ:

Եւ եղեւ յետ աւուրց բազմաց. եւ 1
բան Տն̃ եղեւ առ Եղիա յամին
երրորդի, եւ ասէ. Երթ՝ եւ երեւեաց
աքաաբու. եւ տաց անձրեւ 'ի վ̃ր երե_
սաց երկրի: * Եւ չոգաւ Եղիա երեւել 2
աքաաբու: եւ սով սաստիկ էր 'ի սամա
րիայ: * Եւ կոչեաց աքաաբ զաբդիու 3
զհազարապետ իւր. եւ աբդիու երկիւ_
ղած էր 'ի Տէ յոյժ: * Եւ եղեւ 'ի կո_ 4
տորել յեզաբելայ զմարգարէսն Տն̃.
եւ էառ աբդիու հարիւր այր մարգա_
րէ. եւ թաքոյց զնն̃ յիսուն յիսուն յայ_
րի՝ եւ կերակրեաց զնն̃ հացիւ եւ ջրով:
* Եւ ասէ աքաաբ ցաբդիու. Եկ՝ շրջի 5
ցուք ընդ երկիրդ առ ամ̃ աղբերբք
ջրոց՝ եւ առ հեղեղատօք. թերեւս գտ
ցուք խոտ. եւ ապրեցուսցուք զձիս եւ
զջորիս. եւ ոչ սատակեսցին յանասնոց:
* Եւ բաժանեաց իւրեանց զճանա_ 6
պարհն շրջել: եւ աքաաբ գնաց ընդ մի
ճանապարհ միայն. եւ աբդիու գնաց
ընդ այլ ճանապարհ միայն: * Եւ էր 7
աբդիու 'ի ճանապարհին. եւ եկն ել
Եղիա ընդառաջ նորա միայն: եւ աճա
պարեաց աբդիու. անկաւ 'ի վ̃ր երե
սաց իւրոց՝ եւ ասէ. եթէ դո՛ւ իցես
տէր իմ Եղիա: * Եւ ասէ Եղիա. Ես 8
եմ: Երթ՝ եւ ասա՛ ցտէր քո՝ թէ ահա՛ա
սիկ Եղիա: * Եւ ասէ աբդիու: զի՞նչ 9
մեղայ. զի մատնես զծառայ քո 'ի ձեռս
աքաաբու սպանանել զիս: * Կենդա 10
նի է Տր ԱԾ քո. եթէ իցէ ազգ. կամ
թագաւորութի. ուր ոչ առաքեաց
տէր իմ խնդրել զքեզ. եւ ասեն՝ թէ
չէ ուրեք: եւ այրեաց զթագաւորութին՝
եւ զաշխարհ նորա. զի ոչ եգիտ զքեզ:
* Եւ արդ դու ասես. թէ երթ՝ եւ 11
պատմեա՛ տեառն քում, թէ ահա՛ա
սիկ Եղիա: * Եւ եղիցի՝ թէ ես եր_ 12
թայցեմ 'ի քէն. եւ հոգի Տն̃ առնու_
ցու զքեզ յերկիր, զոր ոչ գիտիցեմ.
եւ մտանիցեմ պատմել աքաաբու, եւ
ոչ գտանիցէ զքեզ. եւ սպանանիցէ
զիս: եւ ծառայ քո երկիւղած է 'ի Տէ
'ի մանկութէ իւրմէ: * Եւ ո՞չ պատ_ 13
մեցաւ տեառն իմում. զորինչ արարի
ես 'ի կոտորել յեզաբելայ զմարգա_
րէսն Տն̃: թաքուցի 'ի մարգարէիցն
Տն̃ հարիւր այր. յիսուն յիսուն այր՝
յայրի. եւ կերակրեցի զնն̃ հացիւ եւ
ջրով: * Եւ արդ դու ասես ցիս. Երթ՝ 14
եւ ասա՛ տեառն քում թէ ահա՛ասիկ
Եղիա. եւ սպանանիցէ զիս: * Եւ ասէ 15
Եղիա. կենդանի է Տր զօրութեց. որոյ
կացի առաջի նորա. զի այսօր երեւե_
ցայց նմա: * Եւ գնաց աբդիու ընդ 16
առաջ աքաաբու՝ եւ պատմեաց նմա:
եւ ընթացաւ աքաաբ՝ եւ գնաց ընդ ա_
17 ռաջ Եղիայի: * Եւ եղեւ իբրեւ ետես
աքաաբ զԵղիա. ասէ աքաաբ ցԵղիա.
եթէ դո՛ւ իցես խանգարիչն իսրայէլի:
18 * Եւ ասէ Եղիա. ես ո՛չ խանգարեմ
զԻլ̃, այլ դու եւ տուն հօր քո. 'ի թո_
ղուլ ձեր զՏր ԱԾ ձեր՝ եւ երթալ զհետ
19 բահաղիմայցն: * Եւ արդ առաքեա՛.
եւ ժողովեա՛ առ իս զամ̃ Իէլ 'ի լեառն
կարմելոս՝ եւ զմարգարէսն բահաղու
զչորեքհարիւր եւ զյիսուն՝ (զմարգա_
րէսն ամօթոյ զչորեքհարիւր եւ զյի_
սուն.) եւ զմարգարէսն անտառաց
զչորեքհարիւր. որք ուտեն զսեղանն
20 յեզաբելայ: * Եւ առաքեաց աքաաբ
ընդ ամ̃ իսրայէլ. եւ ժողովեաց զմար
21 գարէսն 'ի լեառնն կարմելոս: * Եւ
մերձեցոյց Եղիա զամ̃ ժողովուրդն.
եւ ասէ ցնն̃ Եղիա. մինչեւ ցե՞րբ կաղայք
յերկուս հետս: եթէ Տր է ԱԾ, եր_
թայք զհետ նորա. եւ եթէ բահաղն
իցէ, երթայք զհետ նր: եւ ո՛չ ետ ժո_
22 ղովուրդն նմա պատասխանի: * Եւ
ասէ Եղիա ցժողովուրդն. ես մնացել
եմ մարգարէ Տն̃ միայն. եւ մարգարէք
բահաղու արք չորեքհարիւր եւ յիսուն.
եւ մարգարէք անտառին՝ չորեքհար_
23 իւր: * Տացեն մեզ երկուս եզինս. եւ
ընտրեսցեն իւրեանց զմին. եւ յօշես_
ցեն՝ եւ դիցեն 'ի վ̃ր փայտից. եւ հուր մի
դիցեն: եւ ես արարից զմիւս եզն. եւ
եդից 'ի վ̃ր փայտից՝ եւ հուր ո՛չ մատու
24 ցից: * Եւ կարդասջի՛ք զանուն աս_
տուածոյն ձերոյ: եւ ես կոչեցից զանուն
Տն̃ ԱՅ իմոյ. եւ եղիցի ԱԾ որ լուիցէ
հրով՝ նա է ԱԾ: պատասխանի ետուն
ամ̃ ժողովուրդն՝ եւ ասեն. բարի է
25 բանդ՝ զոր խօսեցար: * Եւ ասէ Եղիա
ցմարգարէսն ամօթոյ: ընտրեցէ՛ք
դուք ձեզ զուարակ մի. եւ արարէ՛ք յա
ռաջագոյն. քանզի դուք բազումք էք:
եւ կարդացէ՛ք զանուն աստուծոյ ձե_
26 րոյ. եւ հուր մի՛ դնէք 'ի վ̃ր: * Եւ առին
զզուարակն՝ զոր ետ նց̃. եւ արարին.
եւ կոչէին զանուն բահաղու յայգուէ
մինչեւ ցհասարակ օր. եւ ասէին. լո՛ւր
մեզ բահաղ՝ լո՛ւր մեզ: եւ ո՛չ գոյր բար
բառ՝ եւ ոչ ունկնդրութի: եւ ընթա_
նային շուրջ զսեղանովն՝ զոր արարին
27 * Եւ եղեւ 'ի միջօրէին՝ եւ այպանեաց
զնոսա Եղիա թեզբացի՝ եւ ասէ. մեծա
ձա՛յն կարդացէ՛ք. զի ած̃ է. թերեւս
զբօսանք ինչ իցեն նմա. եւ միանգա_
մայն թերեւս առնիցէ հրաման. կամ
28 թէ 'ի քուն իցէ՝ եւ յառնիցէ: * Եւ
կարդային մեծաձայն. եւ ցտէին ըստ
օրինի իւրեանց. սրով եւ գեղար_
դեամբք

դեամբք՝ մինչեւ ցհեղուլ արեան 'ի վր
նո։ * Եւ եղեւ իբրեւ մերձեցաւ յընդ- 29
երեկսն. եւ մարգարէանային մինչեւ
ցժամանակ մատուցանելոյ զոհին. եւ
ոչ գոյր ձայն։ (Եւ խօսեցաւ եղիա Թեզ-
բացի ընդ մարգարէսն գարշելեացն՝
եւ ասէ. 'ի բաց կացէք. արդ ես արա-
րից զողջակէզն իմ։ եւ 'ի բաց կացին՝
եւ գնացին։) * Եւ ասէ եղիա ցժողո- 30
վուրդն՝ մատերուք առ իս. եւ մատեան
ամ ժողովուրդն առ նա. եւ ողջացոյց
զսեղանն Տն, զկործանեալ։ * Եւ 31
էառ եղիա երկոտասան քար՝ ըս թուոյ
ցեղիցն իղի. որպ խօսեցաւ Տր ըն նմա
Ծննդ. ‖ եւ ասէ՝ իղ եղիցի անուն քո։ * Եւ 32
32. 28. շինեաց զքարինսն յանուն Տն. եւ ա-
4 Թագ. րար ծով՝ որ տանէր երկուց գրուից
17. 34. սերմն շուրջ զսեղանովն։ * Եւ եդեղ 33
զշերտսն 'ի վերայ սեղանոյն՝ զոր ա-
րար։ եւ յօշեաց զողջակէզն. եւ եդեղ 'ի
վր շերտիցն. եւ եդեղ 'ի վր սեղանոյն։
* Եւ ասէ. առէք ինձ չորս սափորս 34
ջրոյ. եւ հեղէք 'ի վերայ ողջակիզիդ՝
եւ 'ի վր շերտիցդ։ եւ ասէ. կրկնեցէք.
եւ կրկնեցին։ եւ ասէ. երեքկնեցէք. եւ
երեքկնեցին։ * Եւ գնայր ջուրն շուրջ 35
զսեղանովն. եւ զծովն լցին ջրով։ * Եւ 36
եղեւ 'ի ժամու մատուցանելոյ պատա-
րագին, աղաղակեաց եղիա յերկինս՝
եւ ասէ. Տր Ած աբրահամու՝ եւ իսա-
հակայ՝ եւ իղի. այսօր ծանիցեն եթէ
դու ես Տր Ած իղի. եւ ես ծառայ քո.
եւ ես արարի զգործս զայսոսիկ։
* Լուր ինձ Տր. լուր ինձ հրով. եւ ծա- 37
նիցէ ժողովուրդս՝ թէ դու ես Տէր
Ած. եւ դու դարձուցեր զսիրտ ժողո-
վրդեանս այսորիկ յետս։ * Եւ անկաւ 38
հուր յերկնից. եւ եկեր զողջակէզն՝ եւ
զշերտսն. եւ զհողն՝ եւ զջուրն՝ որ 'ի ծո-
վուն՝ լափեաց հուրն։ * Իբրեւ ետես 39
ամ ժողովուրդն, անկան 'ի վերայ ե-
րեսաց իւրեանց՝ եւ ասեն. արդարեւ
Տր՝ նա է Ած. Տէր նա է Ած։ * Եւ 40
ասէ եղիա ցժողովուրդն. կալարուք
զմարգարէսն բահաղու. եւ մի՛ ոք ապ-
րեսցի 'ի նոցանէ։ եւ կալան զնոսա. եւ
իջոյց զնոսա եղիա 'ի հեղեղատն կի-
սոնի՝ եւ կոտորեաց զնս անդ։ * Եւ ասէ 41
եղիա ցաքաաբ. ե՛լ կե՛ր՝ եւ ա՛րբ. զի
ոտնաձայն անձրեւի է։ * Եւ ել աքաաբ 42
ուտել եւ ըմպել։ եւ եղիա ել 'ի գլուխ
լերինն կարմելայ. եւ խոնարհեցաւ յեր-
կիր. եւ եդ զերեսս իւր 'ի մէջ ծնգաց
իւրոց։ * Եւ ասէ ցպատանեակն իւր. 43
ե՛լ եւ հայեա՛ց ընդ ճանապարհ ծո-
վու։ եւ ե՛լ եւ հայեցաւ պատանեակն.
եւ ասէ՝ ո՛չ ինչ է։ եւ ասէ եղիա. ա՛ղէ՝
դու դարձի՛ր եօթն անգամ։ եւ դար-
ձաւ պատանեակն եօթն անգամ։
44 * Եւ եղեւ յետ եօթներորդումն դառնա-
գին, եւ ահա ամպ մի փոքրիկ իբրեւ
զթաթ առն՝ հանէր ջուր։ եւ ասէ՝ ե՛լ
եւ ասա՛ ցաքաաբ. լծեա՛ զկառս քո՝ եւ
է՛ջ. գուցէ հասանիցի քեզ անձրեւ։
45 * Եւ եղեւ մինչ նա այսր՝ եւ անդր դառ-
նայր՝ երկինք մթացան ամպովք եւ
հողմով. եւ եղեւ անձրեւ մեծ։ եւ լայր՝
46 եւ երթայր աքաաբ յեզրայէլ։ * Եւ
ձեռն Տն եղեւ 'ի վր եղիայի. եւ պն-
դեաց զմէջ իւր՝ եւ ընթացաւ առաջի
աքաաբու մինչեւ մտանել յեզրայէլ։

ԳԼ. ԺԹ.

1 Եւ պատմեաց աքաաբ յեզաբելայ
կնոջ իւրում զամ, զոր արար ե-
ղիա. եւ որպէս կոտորեաց զամ մարգա-
2 րէսն սրով։ * Եւ առաքեաց յեզաբէլ
հրեշտակս առ եղիա՝ եւ ասէ. եթէ
դու եղիա իցես՝ եւ ես յեզաբէլ. ա՛յն եւ
ա՛յն արասցեն ինձ աստուածքն՝ եւ ա՛յն եւ
ա՛յն յաւելցեն. եթէ ոչ վաղիւ 'ի սոյն
ժամու եդից զանձն քո իբրեւ զանձն
3 միոյ 'ի նոցանէ։ * Եւ երկեաւ եղիա՝
եւ յարեաւ՝ գնաց առանձինն. եւ եկն
'ի բերսաբէէ յերկիրն յուդայ. եւ ե-
4 թող անդ զպատանեակն իւր։ * Եւ
ինքն գնաց յանապատ աւուր միոյ ճա-
նապարհ. եւ չոգաւ՝ եւ նստաւ ընդ
բաւեկնեաւ. եւ խնդրեաց մահ անձին
իւրոյ. եւ ասէ։ շա՛տ է արդ. ա՛ռ զոգի
իմ յինէն Տէր. զի ո՛չ եմ ես լաւ քան
5 զհարս իմ։ * Եւ 'ի քուն եմուտ՝ եւ
ննջեաց ընդ տնկովն՝ եւ ահա ոմն մեր-
ձեցաւ 'ի նա՝ եւ ասէ. արի՛ եւ կե՛ր։
6 * Եւ հայեցաւ եղիա. եւ ահա 'ի սնա-
րից նորա նկանակ հաճարոյ՝ եւ կուժ
ջրոյ. եւ յարեաւ՝ եկեր՝ եւ էարբ. եւ դար-
7 ձեալ ննջեաց։ * Եւ դարձաւ հրեշ-
տակն Տն երկրորդ անգամ. մերձեցաւ
առ նա՝ եւ ասէ ցնա. արի՝ կե՛ր. զի բա-
զում է 'ի քէն ճանապարհդ։
8 * Եւ յարեաւ՝ եկեր՝ եւ էարբ. եւ գնաց
զօրութբ կերակրոյն այնորիկ զքառա-
սուն տիւ՝ եւ զքառասուն գիշեր. մին-
9 չեւ ցլեառնն Այ 'ի քորեբ։ * Եւ ե-
մուտ անդ յայրն՝ եւ դադարեաց։ եւ
ահա բան Տն եղեւ առ նա՝ եւ ասէ. զի՞
10 ես դու աստ եղիա։ * Եւ ասէ՝ եղիա.
նախանձեցայ զնախանձ Տն ամենա-
կալի. ‖ զի թողին զքեզ որդիքն իղի. ‖ Հռոմ.
զսեղանս քո կործանեցին. եւ զմարգա- 11. 3.
րէս քո կոտորեցին սրով. եւ միայն մնա-
ցեալ եմ. եւ խնդրեն զանձն իմ առ-
11 նուլ զնա։ * Եւ ասէ. ելցես դու վա-
ղիւ՝ եւ կացցես 'ի լերին առաջի
Տն. եւ ահա Տր անցցէ. եւ հողմ մեծ
յուժ-

յուժգին՝ որ զլերինս քակիցէ եւ զվէմս
խորտակիցէ առաջի Տն՝ եւ ոչ 'ի հողմն
Տր։ եւ յետ հողմոյն շարժումն՝ եւ ոչ 'ի
շարժմանն Տր։ * Եւ յետ շարժմանն 12
հուր՝ եւ ոչ 'ի հուրն Տր. եւ յետ հրոյն
ձայն մեղմոյ օդոյ։ * Եւ եղեւ իբրեւ 13
լուաւ Եղիա, ծածկեաց զերեսս իւր
մաշկեկաւն. եւ ել՝ եւ եկաց 'ի ներքոյ
այրին. եւ ահա բարբառ առ նա՝ եւ
ասէ. զի՞ ես դու աստ Եղիա։ * Եւ 14
ասէ Եղիա. նախանձեցայ զնախանձ
‖ Հռոմ. Տն ամենակալի. ‖ զի թողին զուխտ
11.3. քո որդիքն Իղի. զսեղանս քո քակե
ցին. եւ զմարգարէս քո կոտորեցին
սրով. ես միայն մնացեալ եմ. եւ խնդ
րեն զանձն իմ առնուլ զնա։ * Եւ ասէ 15
ցնա Տր. գնա՛ եւ դարձիր զճանապարհ
քո. եւ երթիցես զճանապարհ անա
‖ Սիրաք. պատին դամասկեայ. եւ ‖ երթիցես՝ եւ
48. 8. օծցես զազայէլ 'ի թագաւոր ասորւոց։
* Եւ զյէու որդին ամեսսեայ 'ի թա 16
գաւոր 'ի վերայ Իղի. եւ զեղիսէէ որ
դի սափատայ յաբելմայուլայ՝ օծցես
‖4 Թագ. 'ի մարգարէ փոխանակ քո։ * ‖ Եւ ե 17
9. 7. ղիցի զապրեալն 'ի սրոյ ազայիլի՝ սպան
ցէ յէու։ եւ զապրեալն 'ի սրոյ յէուայ՝
‖ Հռոմ. սպանցէ եղիսէէ. * ‖ Եւ թողից ինձ 18
11. 4. յԻղէ եօթնհազար արանց. զամ որոց
ոչ իցէ կրկնեալ ծունր բահաղու. եւ
զամ բերան՝ որոյ ոչ իցէ պագեալ զնա։
* Եւ գնաց անտի. եւ եգիտ զեղիսէէ 19
որդի սափատայ. եւ նա՝ վարէր երկո
տասան եզամբք. եւ զոյգք զոյգք եզանց
առաջի նր. եւ ինքն 'ի վերայ երկոտա
սանիցն. եւ եհաս Եղիա առ նա. եւ ըն
կէց զմաշկեակն իւր 'ի վր նր։ * Եւ 20
եթող եղիսէէ զեզինսն. եւ ընթացաւ
զհետ եղիայի։ եւ ասէ՝ համբուրեցից
զհայր իմ, եւ զմայր իմ, եւ եկից զկնի
քո։ եւ ասէ ցնա։ երթ՝ դարձիր անդ
չէ ինչ րէն. զի՞նչ արարի քեզ։ * Եւ դարձաւ 21
ինէր՝ ա 'ի նմանէ. եւ էառ զզոյգս զոյգս ե
րարի քեզ զանցն. եւ եզեն. եւ գործեօք եզանցն
հարոյց զնոսա։ եւ ետ ժողովրդեանն,
եւ կերին. եւ յարեաւ եւ գնաց զհետ
եղիայի. եւ պաշտէր զնա։

Գլ. Ի.

Եւ որդի ադերայ, արքայ ասորւոց 1
ժողովեաց զամ զօրս իւր. եւ ել.
եւ նստաւ զսամարեաւ. եւ երեսուն եւ
երկու թագաւորք ընդ նմա. եւ ամ երի
վարք եւ կառք. ելին՝ եւ նստան զսամա
րեաւ. եւ տային պատերազմ ընդ նմա։
* Եւ առաքեաց հրեշտակս առ ա 2
քաաբ արքայ Իղի 'ի քաղաքն։ * Եւ 3
ասէ ցնա՝ այսպէս ասէ որդի ադերայ.
արծաթ քո՝ եւ ոսկի քո իմ է. եւ կանայք
քո՝ եւ որդիք քո գեղեցիկք՝ իմ են։
4 * Պատասխանի ետ արքայն Իղի՝ եւ ա
սէ. որպէս խօսեցար տէր իմ արքայ. քո
5 եմ ես. եւ ամ ինչ իմ։ * Եւ դարձան
հրեշտակքն՝ եւ ասեն. այսպէս ասէ որդի
ադերայ. ես յղեցի, զի զարծաթ քո՝
եւ զոսկի քո՝ եւ զկանայս քո ցիս տացես
6 * Զի վաղիւ 'ի սոյն ժամու առաքե
ցից զծառայս իմ. եւ յուզեսցեն զտուն
քո. եւ զտունս ծառայից քոց՝ եւ եղի
ցին ցանկալիք աչաց նց. յոր արկանի
7 ցեն զձեռս իւրեանց՝ առցեն։ * Եւ կո
չեաց արքայն Իղի զամ ծերակոյտ երկ
րին՝ եւ ասէ. գիտասջիք՝ եւ տեսջիք՝ զի
չարիս ինչ խնդրէ նա. զի առաքեաց
առ իս զուստերաց իմոց եւ զդստերաց
իմոց. զարծաթ իմ, եւ զոսկի իմ ոչ
8 արգելի 'ի նմանէ։ * Եւ ասեն ցնա
ծերքն՝ եւ ամ ժողովուրդն. մի լսեր.
9 եւ մի յանձն առնուր։ * Եւ ասէ ցհրեշ
տակս որդւոյն ադերայ. ասասջիք ցտրն
ձեր ցարքայ. զամ ինչ՝ զոր առաքեցեր
առ ծառայ քո յառաջնումն նուագին,
արարից. բայց զայդ բան ոչ կարեմ
առնել։ եւ գնացին արքն՝ եւ դարձուցին
10 նմա պատասխանի։ * Եւ առաքեաց
առ նա որդին ադերայ՝ եւ ասէ. զնե զն
արասցեն ինձ դիքն. եւ զնե զն յաւել
ցեն. եթէ բաւեսցէ հող սամարեայ
աղուեսուք հանդերձ ամ զօրականի
11 հետեւակաց իմոց։ * Եւ պատասխա
նի ետ արքայն Իղի՝ եւ ասէ. շատ է արդ.
մի պարծեսցի կորն իբրեւ զուղիղն։
12 * Եւ եղեւ իբրեւ պատասխանի ետ
նմա զբանս զայս. եւ ինքն 'ի գինուջ
էր. եւ ամ թագաւորք որք ընդ նմա
'ի խորանս. եւ ասէ ցծառայս իւր. շի
նեցէք պատնէշ. եւ եդին պատնէշ
13 շուրջ զքաղաքաւն։ * Եւ ահա մար
գարէ մի մատեաւ առ աքաաբ արքայ
Իղի՝ եւ ասէ. այսպէս ասէ Տր։ եթէ
տեսանիցես զայն ամբոխ մեծ. ահա
ես մատնեցից զնա այսօր 'ի ձեռս քո. եւ
14 գիտասցես՝ թէ ես եմ Տէր։ * Եւ ասէ
աքաաբ. իւ։ եւ ասէ. այսպէս ասէ Տր.
մանկտւովն իշխանաց գաւառաց։ եւ
ասէ աքաաբ. ո՞ նախ գրգռեսցէ զպա
15 տերազմն. եւ ասէ. դու։ * Եւ հանդէս
արար ծառայից իշխանաց գաւառաց.
եւ եղեն երկերիւր եւ երեսուն. եւ ապա
հանդէս արար ամ ժողովրդեանն. եւ
ամ որդւոց զօրութեան եօթն հազար
16 արանց։ * Եւ ելանէր զմիջօրէիւ. եւ
որդին ադերայ ընդ գինի մտեալ էր.
եւ արբեալ 'ի սոկքովլ. ինքն եւ երե
սուն եւ երկու թագաւորքն օգնականք
17 նորա։ * Եւ ելին նախ մանկտւնք իշ
խանաց գաւառացն. եւ առաքեցին առ

որդին

որդին ադերայ · և պատմեցին նմա՝ և
ասեն · արք ելին 'ի սամարիայ ։ * Եւ 18
ասէ ցնա · եթէ 'ի խաղաղութիւն ելա_
նիցեն, կալջի՛ք զնոսա կենդանիս · և
եթէ 'ի պատերազմ ելանիցեն , կալ_
ջի՛ք զնս կենդանիս ։ * Եւ ելին 'ի քա_ 19
ղաքէն մանկտի իշխանաց գաւառացն ·
և զօրն զկնի նոցա ։ * Եւ եհար իւրա 20
քանչիւրոք որում դիպեցաւ · և փա_
խեան ասորիքն · և հալածեաց զնոսա
Իէլ · և ապրեցաւ որդին ադերայ ար_
քայ ասորւոց հեծեալ ձիով՝ հանդերձ
երիւք ոմամբք հեծելովք ։ * Եւ ել 21
արքայն իսրայէլի · և էառ զերիվարս և
զկառս · և եհար յասորւոց հարուածս
մեծամեծս ։ * Եւ մատեաւ մարգա_ 22
րէն առ արքայ Իլի · և ասէ ցնա · զօրա
ցի՛ր · և գիտեա՛ · և տե՛ս զինչ գործես_
ցես · զի 'ի դարձի տարւոյս այսորիկ
որդի ադերայ արքայ ասորւոց ելանե
լոց է 'ի վերայ քո ։ * Եւ ծառայք ար 23
քային ասորւոց ասեն ցնա · ԱԾ լե_
րանց է ԱԾն Իլի · և ոչ ԱԾ դաշտաց ·
վասն այնորիկ յաղթահարեցին զմեզ ·
եթէ տայցեմք ընդ նս պատերազմ
'ի դիւրի՛ յաղթեմք նոցա ։ * Եւ զայս 24
բան արասցես ·'ի բաց արա զթագա_
ւորսն յիւրաքանչիւր տեղւոջէ · և դի՛ր
ընդ նոցա նախարարս ։ * Եւ փոխա_ 25
նակեսցուք քեզ զօրս ընդ զօրացն՝ որք
անկան 'ի քէն · և երիվարս ընդ երի_
վարացն · և կառս ընդ կառացն · և
տացուք ընդ նոսա պատերազմ 'ի դիւ
րոջ՝ և յաղթեսցուք նոցա · և անսաց
բարբառոյ նոցա · և արար այնպէս ։
* Եւ եղև 'ի դառնալ տարւոյն · հան 26
դէս արար որդին ադերայ՝ ասորւոց ·
ընդդէմ և ել յափեկայ 'ի պատերազմ ընդ Իլի ։
* Եւ որդիքն Իէլի արարին հանդէս՝ 27
և երկդիմեցան · և հասին յառաջս նց ·
և ճակատեցան որդիքն Իլի ընդդէմ
ասորւոցն · իբրև երկու երամակք այ
ծից · և ասորիքն լցին զերկիրն ։ * Եւ 28
մատեաւ այրն ԱՅ՝ և ասէ ցարքայն
Իլի՝ այսպէս ասէ Տր · փոխանակ զի
ասացին ասորիքն թէ ԱԾ լերանց է՝
Տր ԱԾ Իլի՝ և ոչ ԱԾ դաշտաց · նա տա
ցէ զզօրն զայն զմեծ 'ի ձեռս քո · և գի
տասցես թէ ես եմ Տր ։ * Եւ բանա 29
կեցան նոքա ընդդէմ սոցա զեօթն
օր · և եղև յաւուրն եօթներորդի ընդ
խառնեցաւ պատերազմն · և եհար Իէլ
յասորւոցն հարիւրհազար հետևա_
կաց 'ի միում աւուր ։ * Եւ մնացեալքն 30
փախեան յափեկայ 'ի քաղաքն իւր_
եանց · և անկաւ պարիսպն 'ի վ՟ր քսան
և եօթնհազար արանց մնացելոց · և
որդին ադերայ փախեաւ՝ և եմուտ 'ի

31 տուն իւր սենեակ 'ի սենեկէ ։ * Եւ ա_
սեն ցնա ծառայքն իւր · ահաւասիկ
գիտեմք՝ զի թագաւորք տանն Իէլի
թագաւորք ողորմութեան են · արկցուք
քուրձս զմիջովք · և չուանս 'ի գլուխս
մեր · և ելցուք առ արքայն Իլի · թե_
րևս ապրեցուսցէ զանձինս մեր ։
32 * Եւ զգեցան քուրձս 'ի մէջս իւրեանց ·
և եդին չուանս 'ի գլուխս իւրեանց ·
և ասեն ցարքայն Իլի · ծառայ քո որդի
ադերայ ասէ, կեցցէ անձն իմ ։ և ասէ ·
եթէ տակաւին կենդանի իցէ, եղբայր
33 իմ է ։ * Եւ արքն հմայեցին՝ և նուէի_
րեցին՝ և քաղեցին զբանսն 'ի բերա_
նոյ նորա · և ասեն՝ եղբայր քո որդի
ադերայ աստ է · և ասէ · մտէ՛ք՝ և ա_
ծէ՛ք զնա · և ել առ նա որդին ադե_
րայ · և հանին զնա առ նա 'ի կառսն ։
34 * Եւ ասէ ցնա · զքաղաքսն զոր էառ
հայր իմ 'ի հօրէ քումմէ՝ դարձուցից
առ քեզ · և հանցես քեզ հարկս 'ի դա
մասկոս · որպէս եդ հայր իմ 'ի սամարիայ ·
և ասէ · և ես արձակեցից զքեզ ուխ_
տիւ · և եդ ընդ նմա ուխտ · և արձա_
35 կեաց զնա ։ * Եւ այր մի յորդւոց մար
գարէիցն ասէ ցընկեր իւր բանիւ Տն՝
հա՛ր զիս · և ոչ կամեցաւ այրն հար_
36 կանել զնա ։ * Եւ ասէ ցնա · փոխա_
նակ զի ոչ լուար ձայնի Տն · ահա իբ_
րև գնասցես յինէն՝ սպանցէ զքեզ
առիւծ ։ և իբրև գնաց 'ի նմանէ, եգիտ
37 զնա առիւծ՝ և սպան զնա ։ * Եւ եգիտ
այլ այր՝ և ասէ՝ հա՛ր զիս ։ և եհար զնա
38 այրն՝ եհար, և ջախջախեաց ։ * Եւ
չոգաւ մարգարէն՝ և եկաց առաջի
արքայի 'ի վերայ ճանապարհին · և կա
39 պեաց պատանաւ զաչս իւր ։ * Եւ եղև
իբրև անցանէր ընդ այն արքայ · և
նա աղաղակեաց առ արքայ՝ և ասէ ·
ծառայ քո ել ընդ զօրու 'ի պատերազ
մի · և ահա այր մի էած առ իս այր · և
ասէ՝ պահեա՛ զայրդ զայդ՝ ապա եթէ
զերծանելով զերծցի · եղիցի անձն քո
ընդ անձին դորա · կամ տաղանդ մի
40 արծաթոյ կշռեսցես ։ * Եւ եղև՝ մինչ
ծառայ քո այսր և անդր հայէր · և նա
չէր ուրեք · և ասէ արքայն Իսրայէլի
ցնա · ահա և այդ յինէն կողմանէ
41 դաւ է · սպաներ ուրեմն ։ * Եւ փու_
թացաւ՝ 'ի բաց էառ զպատանն յա_
չաց իւրոց · և ծանեաւ զնա արքայն
Իսրայէլի՝ թէ 'ի մարգարէից անտի է ։
42 * Եւ ասէ ցնա · այսպէս ասէ Տէր՝
‖ փոխանակ զի հաներ դու զայրն մա ‖ Ա թգր.
սակար 'ի ձեռաց իմոց · եղիցի անձն 22. 38.
քո փոխանակ անձին նորա · և ժողո
վուրդ քո փոխանակ ժողովրդեան նո
43 րա ։ * Եւ գնաց արքայն Իսրայէլի 'ի

տունն

տունն իւր տխրեալ՝ և լքեալ. և եկն
'ի Սամարիայ։

ԳԼ. Ի.

Եւ եղև յետ բանիցս այսոցիկ. 1
այգի մի էր Նաբովթայ Յեզրայե
լացւոյ. մերձ առ արքունիս կալ Աքա
աբու արքայի Սամարիայ։ *Եւ խօ 2
սեցաւ արքայ ընդ Նաբովթայ՝ և ասէ.
տո՛ւր ինձ զայգին քո. և եղիցի ինձ 'ի
պարտէզ բանջարոյ, զի մերձ է 'ի տուն
իմ. և տաց քեզ այլ այգի լաւ քան
զնա. և եթէ հաճոյ իցէ առաջի քո,
տաց քեզ արծաթ գինս այգւոյն քոյ.
(և եղիցի ինձ 'ի պարտէզ բանջարոյ։)
*Եւ ասէ Նաբովթ ցարքայ. քաւ լի 3
ցի ինձ 'ի Տ՟է իմմէ տալ քեզ զժառան
գութի՟ հարց իմոց։ *Եւ եկն Աքա 4
աբ 'ի տուն իւր տխրեալ՝ և լքեալ. վ՟ս
բանին զոր խօսեցաւ ընդ նմա Նաբօթ
Յեզրայելացի. և ասէ՝ ոչ տաց քեզ
զժառանգութի՟ հարց իմոց։ և ննջ
ջեաց 'ի մահիճս իւր. և ծածկեաց զե
րեսս իւր. և ոչ եկեր հաց։ *Եւ ե 5
մուտ առ նա Յեզաբէլ կին իւր՝ և խօ
սեցաւ ընդ նմա. և ասէ. զի՞ խռովեալ
է ոգի քո՝ և ոչ ուտես զհաց։ *Եւ 6
ասէ ցնա. զի խօսեցայ ընդ Նաբովթայ
Յեզրայելացւոյ՝ և ասեմ. տո՛ւր ինձ
զայգին քո ընդ արծաթոյ. և եթէ
կամիս՝ տաց քեզ այլ այգի փոխանակ
ն՟ր. և ասէ. ոչ տաց քեզ զժառանգու
թի՟ հարց իմոց։ *Եւ ասէ ցնա Յեզա 7
բէլ կին իւր. արդ՝ ա՞յդպէս առնիցես
զթագաւորութի՟դ 'ի վերայ Ի՟ղի. արի,
կեր հաց՝ և սթափեաց. և ես տաց քեզ
զայգին Նաբովթայ Յեզրայելացւոյ։
*Եւ գրեաց հրովարտակ յանուն 8
Աքաաբու. և կնքեաց մատանեաւ ն՟ր.
և առաքեաց զհրովարտակն առ ծերս՝
և առ ազատս քաղաքին ն՟ր. որք ընա
կեալ էին ընդ Նաբովթայ։ *Եւ գրեա՟լ 9
էր 'ի հրովարտակին այսպէս. պահե
ցէք պահս. և նստուցէք զՆաբովթ 'ի
գլուխ ժողովրդեանն։ *Եւ նստու 10
ցէք երկուս արս՝ որդիս անօրինաց
հանդէպ նորա. և վկայեսցեն զնմանէ՝
և ասասցեն. թէ օրհնեցեր զԱ՟ծ և
զարքայ. և հանցեն զնա՝ և քարկոծես
ցեն. և մեռցի։ *Եւ արարին արք 11
քաղաքին ն՟ր ծերք՝ և ազատք, որք նս
տէին 'ի քաղաքին նորա՝ ո՟ր առաքեաց
առ նոսա Յեզաբէլ. զօրօրինակ գրեա՟լ
էր 'ի հրովարտակսն։ *Քարոզեցին 12
պահս. և նստուցին զՆաբովթ 'ի գլուխ
ժողովրդեանն։ *Եւ եկին երկու 13
արք՝ որդիք անօրինաց. և նստան հան
դէպ նորա. և վկայեցին արքն ապս
տամբութե՟ զՆաբովթայ առաջի ա՟մ
ժողովրդեանն՝ և ասեն, թէ օրհնեաց
Նաբովթ զԱ՟ծ՝ և զարքայ. և հանին
զնա արտաքոյ քաղաքին. և քարկոծե
14 ցին զնա քարամբք՝ և մեռաւ։ *Եւ
առաքեցին առ Յեզաբէլ՝ և ասեն.
քարկոծեցաւ Նաբովթ՝ և մեռաւ։
15 *Եւ եղև՝ իբրև լուաւ Յեզաբէլ՝ թէ
քարկոծեցաւ Նաբովթ՝ և մեռաւ,
ասէ Յեզաբէլ ցԱքաաբ. արի ժառան
գեա՛ զայգին Նաբովթայ Յեզրայելա
ցւոյ՝ զոր ոչ ետ քեզ ընդ արծաթոյ.
զի ոչ է Նաբովթ կենդանի՝ քանզի մե
16 ռաւ։ *Եւ եղև՝ իբրև լուաւ Աքաաբ՝
թէ մեռաւ Նաբովթ Յեզրայելացի.
(պատառեաց զհանդերձս իւր՝ և զգե
ցաւ քուրձ՝ և եղև յետ այնորիկ.) յա
րեաւ Աքաաբ՝ և էջ յայգին Նաբով
թայ Յեզրայելացւոյ ժառանգել։
17 *Եւ խօսեցաւ Տ՟ր ընդ Եղիայի Թեզ
18 բացւոյ՝ և ասէ. *Արի էջ ընդ առաջ
Աքաաբու արքայի Ի՟ղի՝ որ 'ի Սամա
րիայ. և նա էջ յայգի Նաբովթայ ժա
19 ռանգել զնա։ *Եւ խօսեսցիս ընդ
նմա՝ և ասասցես. այսպէս ասէ Տէր.
ո՟ր սպաներ՝ և ժառանգեցեր՝ վ՟ս այ
դորիկ այսպէս ասէ Տ՟ր. ‖'ի տեղւոջ ‖Անդ.
ուր լափեցին շունք և խոզք զարիւն 22.38.
Նաբովթայ, անդ լափեսցեն զարիւն
քո. և բոզք լուասցին յարեան քում։
20 *Եւ ասէ Աքաաբ ցԵղիա. եթէ գտեր
զիս թշնամի իմ. և ասէ՝ գտի. զի 'ի [illegible]
զուր հպարտացար գործել չար առա
ջի Տ՟ն. առ 'ի բարկացուցանելոյ զնա։
21 *‖Արդ ահա ես ածից 'ի վերայ քո չարիս. ‖4 Թագ.
և բորբոքեցից զկնի քո. և սատակե 9. 8.
ցից զԱքաաբու՝ որ միզիցէ զորմով. և
22 զնեղեալն և զլքեալն յԻ՟է։ *Եւ տաց
զտուն քո իբրև ‖զտունն Յերոբովա ‖Անդ.
մու որդւոյ Նաբատայ. և իբրև զտունն 15.29.
‖Բաասայ որդւոյ Աքիայ. վ՟ս բարկու ‖Անդ.
թեցն որով բարկացուցեր զիս՝ և 16.3.
23 յանցուցեր զԻ՟ղ։ ‖*Եւ առ Յեզաբէլ ‖4 Թագ.
խօսեցաւ Տ՟ր՝ և ասէ՝ շունք կերիցեն 9.36.
24 զնա առ պարսպին Յեզրայելի։ *Զմե
ռեալ Աքաաբու 'ի քաղաքի՝ կերիցեն
շունք. և զմեռեալ նորա 'ի դաշտի,
25 կերիցեն թռչունք երկնից։ *Սակայն
'ի զուր մեծամտեցաւ Աքաաբ առնել
չար առաջի Տ՟ն. որպէս յիմարեցոյց
26 զնա Յեզաբէլ կին իւր։ *Եւ գարշա
ցաւ յոյժ երթալ զհետ գարշելեացն՝
ըստ ա՟մ զոր արար Ամորհացին. զոր
սատակեաց Տէր յերեսաց որդւոցն
27 Ի՟ղի։ *Եւ վասն բանին զի ստրջացաւ
արքայ յերեսաց Տ՟ն. և երթայր լա
լով. և պատառեաց զպատմուճան իւր.
և զգեցաւ քուրձ 'ի վ՟ր մարմնոյ իւրոյ.
և

և պաշնեայ. և զգեցաւ քուրձ յաւ_
ուրն յորում սպան զնաբովթ յեզրայէ
ղացի. և գնայր կորակոր։ *Եւ եղև 28
բան Տն 'ի ձեռն ծառայի իւրոյ եղի_
այի վասն աքաաբու. և ասէ Տր։
*Տեսեր զի զղջացաւ աքաաբ յերե_ 29
սաց իմոց. փոխանակ զի ակնկորեաց
յերեսաց իմոց. ոչ ածից չարիս յաւ_
Դ.Թագ. ուրս նր. այլ ‖ յաւուրս որդւոյ նորա
9.26. ածից չարիս 'ի վերայ տան նորա։

Գլ: ԻԲ.

ԵՒ նստան զերեամ. և ոչ էր պա_ 1
տերազմ 'ի մէջ ասորւոց և 'ի մէջ
Բ.Մն. Իղի։ *‖ Եւ եղև յամին երրորդի էջ 2
18.2. յովսափատ արքայ յուդայ՝ առ արքայ
Իղի։ *Եւ ասէ արքայն Իղի ցծա_ 3
ռայս իւր. ո՞չ գիտէք՝ եթէ մեր է ռա
մաթ գաղաադու. և մեք լռեալ կամք
առնուլ զնա 'ի ձեռաց արքային ասոր
ւոց։ *Եւ ասէ արքայ Իղի ցյովսա_ 4
փատ. ելցես ընդ մեզ յռամաթ գա_
ղաադու 'ի պատերազմ։ և ասէ յովսա
փատ ցարքայն իսրայելի. որպ ես. նոյն
պէս և դու. և որպէս զօրք իմ. զօրք
քո. և որպ երիվարք իմ. երիվարք քո։
*Եւ ասէ յովսափատ արքայ յուդայ 5
ցարքայն Իղի. անդէ, հարցցուք այսօր
զՏր։ *Եւ ժողովեաց արքայն Իղի 6
զամ մարգարէս իբրև արս չորեքհար
իւր. և ասէ ցնոսա արքայ. երթա՞յց
յռամաթ գաղաադու 'ի պատերազմ.
թէ զտեղի կալայց. և ասեն. Ե՛լ. և
տալով տացէ Տր 'ի ձեռս արքայի։
*Եւ ասէ յովսափատ ցարքայն Իղի. 7
իցէ՞ որ արդեօք աստ մարգարէ Տն՝
թէ չիցէ. և հարցցուք զՏր նովաւ։
*Եւ ասէ արքայ Իղի ցյովսափատ. է 8
աստ այր մի Այ՝ հարցանել նովաւ
զՏր. և ես ատեցի զնա. զի ոչ խօսի
զինէն բարի, այլ չար. միքիա որդի
յեմլեայ։ և ասէ յովսափատ արքայ յու
դայ. մի՛ ասասցէ այդպէս արքայ։ *Եւ 9
կոչեաց արքայ Իղի ներքինի մի, և ասէ.
վաղվաղակի ա՛ծ այսր զմիքիա որդի
յեմլեայ։ *Եւ արքայ Իղի և յովսափատ 10
արքայ յուդայ նստէին այր իւրաքանչ
իւր յաթոռ իւրում վառեալ 'ի դրունս
սամարիայ. և ամ մարգարէքն մար_
գարէանային առաջի նոցա։ *Եւ ա_ 11
րար իւր սեդեկիա որդի քանանու եղ_
ջիւրս երկաթիս՝ և ասէ. այսպէս ասէ
Տր. սոքօք խեթկեսցես զասորիս մին
չև սպառեսցին։ *Եւ ամենայն մար 12
գարէքն մարգարէանային նոյնպէս.
և ասէին. Ե՛լ յռամաթ գաղաադու.
և յաջողեսցիս. և տացէ Տր 'ի ձեռս
քո զարքայն ասորւոց։ *Եւ հրեշ_ 13
տակն

տակն, որ չոգաւ կոչել զմիքիա. պատ
մեաց նմա՝ և ասէ. ահաւասիկ ամ
մարգարէքն խօսին իբրև ընդ մի բե_
րան բարի զարքայէ. արդ եղիցի բանն
քո իբրև զմիոյ 'ի նոցանէն. և խօսեա՛ց
14 բարի։ *Եւ ասէ միքիա. կենդանի է
Տր. եթէ ոչ՝ զոր ինչ ասասցէ ցիս Տր,
15 զայն խօսեցայց։ *Եւ եկն առ ար_
քայ. և ասէ ցնա արքայ. միքիա. ելի՞ց
յռամաթ գաղաադու 'ի պատերազմ;
թէ զտեղի կալայց. և ասէ, Ե՛լ և յա
ջողեսցիս. և տացէ Տր 'ի ձեռս ար_
16 քային։ *Եւ ասէ ցնա արքայ. զար_
ձեալ կրկին երդմնեցուցեալ զքեզ.
զի խօսեսցիս ընդ իս ճշմարտութի յա
17 նուն Տն։ *Եւ ասէ, ոչ այդպէս է.
տեսի զամ Իղի ցրուեալ ընդ լերինս
իբրև զհօտ՝ որոյ ոչ գուցէ հովիւ. և
ասէ Տր. ոչ գոն դոցա տեարք. դարձ_
ցին իւրաքանչիւրոք 'ի տունս իւր խա_
18 ղաղութի։ *Եւ ասէ արքայն Իղի
ցյովսափատ արքայ յուդայ. ո՞չ ասացի
քեզ թէ ոչ մարգարէանայ նա ինձ
19 բարի. բայց եթէ չար։ *Եւ ասէ մի_
քիա. ոչ այդպէս. ոչ ես ինչ. այլ լո՛ւր ոչ ես ինչ
զպատգամ Տն. ոչ այսպէս տեսի խօսիմ յի
զՏր Ած Իղի նստեալ 'ի վերայ աթո նէն
ռոյ իւրոյ. և ամ զօրք երկնից կային
շուրջ զնովաւ, յաջմէ և յահեկէ։
20 *Եւ ասէ Տր. ո՞ պատրեսցէ զաքաաբ
արքայ Իղի. և ելցէ՝ անկցի յռամաթ
գաղաադու. և ասէ ոմն այսպէս. և
21 ոմն այնպէս։ *Եւ ել ոգի. և եկաց
առաջի Տն և ասէ. ես պատրեցից
22 զնա. և ասէ Տր. իւ՞։ *Եւ ասէ. ե_
լից՝ և եղէց ոգի սուտ 'ի բերան ամ
մարգարէից նորա. և ասէ՝ պատրես_
ցես, և կարասցես. ե՛լ՝ և արա՛ այդպէս։
և զսեղան նորա. և զպատկերս նորա
խորտակեցին մանր։ և զմաթան քղ
քուրին բահաղու սպանին յանդիման
սեղանոյն և եդ քահանայն ոստիկանս
՚ի տան Տ՚ն։ * Եւ եառ զհարիւրա- 19
պետսն՝ և զքոռին՝ և զրասիմ, և զամ
ժողովուրդ երկրին. և իջուցին զար
քայ ՚ի տանէ Տ՚ն։ և եմուտ ընդ ձա-
նապարհ սուրհանդակացն դրան
տանն արքունի։ և նստոյց զնա յաթոռ
թագաւորացն։ * Եւ ուրախ եղև ամ 20
ժողովուրդ երկրին. և քաղաքն դա-
դարեաց։ և զգոթողիայ սպանին
սրով ՚ի տան արքայի։ * Որդի եօթն 21
ամաց յովաս ՚ի թագաւորել իւրում։

Գ.Ի: ԺՒՌ.

Յամի եօթներորդի յեհուայ թա- 1
գաւորեաց յովաս. և քառասուն
ամ թագաւորեաց յԵրի՛մ։ և անուն
մօր նո՛ր սաբիա ՚ի բերսաբէէ։ * Եւ 2
արար յովաս ուղղութի՛ առաջի Տ՚ն.
զամ աւուրս զորս լուսաւորեաց զնա
յովհադա քահանայ։ * Բայց ՚ի բար 3
ձանցն ոչ մեկնեցան. և անդ տակա-
ւին զոհէր ժողովուրդն. և արկանէր
խունկս ՚ի բարձունս։ * Եւ ասէ յովաս 4
ցքահանայն. զամ արծաթ սրբու-
թեցն մտեալ ՚ի տունն Տ՚ն՝ արծաթ՝
իւրաքանչիւր առն անցելոյ ՚ի համարի
ոգւոց. զամ արծաթ՝ որ անկանիցի ՚ի
սիրտ մարդոյ բերել ՚ի տունն Տ՚ն։ * Ու- 5
ցեն յիւրեանս քահանայքն. այլ իւրա
քանչիւր ՚իվաճառէ իւրեանց. և նո՛ք

Եդին նմա դաւաճանութիւն. և հարին
զՅովաս ՚ի տան Մաալովնայ բնակեալ
՚ի Գաղաադ: *Եւ Յովզաքար որդի Յե 21
մաւթայ և Յեզեբութ որդի Սեմերայ.
պատանդք ծառայք նր՝ հարին զնա
և սպանին. և թաղեցին զնա ընդ հարս
իւր ՚ի քաղաքի Դաւթի: և թագաւո_
րեաց Ամասիա որդի նորա ընդ նորա:

Գլ: ԺԳ:

Ի քսաներորդի և երրորդի ամի Յո 1
վասու որդւոյ Ոքոզիայ արքային
Յուդայ. թագաւորեաց Յովաքազ որ
դի Յէուայ ՚ի վերայ Իղի ՚ի Սամարիայ
ամս եւթն և տասն: *Եւ արար չար 2
առաջի Տն. և գնաց զհետ մեղացն Յե_
րոբովամու որդւոյ Նաբատայ՝ որ յան
ցոյց զԻսրայէլ: և ոչ մեկնեցաւ ՚ի նո_
ցանէն: *Եւ բարկացաւ սրտմտութբ 3
Տր Իղի. և ետ զնս ՚ի ձեռս Ազայելի
արքային Ասորւոց. և ՚ի ձեռս որդւոյ
Ադերայ որդւոյ Ազայելի զամ աւուրս:
*Եւ աղաչեաց Յովաքազ զերեսս Տն 4
և լուաւ նմա Տր. և ետես զնեղութի
Իղի՝ զոր նեղեաց զնս արքայն Ասոր_
ւոց: *Եւ ետ Տր փրկիչ Իղի. և ել 5
՚ի ձեռանէ Ասորւոց: և նստան որդիքն
Իղի ՚ի բնակութիւնս իւրեանց որպէս
երեկն և յեռանդն: *Սակայն ոչ մեկ 6
նեցան ՚ի մեղացն Յերոբովամու որդ_
ւոյ Նաբատայ. որ յանցոյցն զԻղ. այլ
՚ի նոսա գնացին: նաև անտառն կայր
՚ի Սամարիայ: *Եւ ոչ մնաց Յովաքա 7
զայ զօր. այլ հեծեալք յիսուն՝ և կառք
տասն. և տասն հազար հետևակաց: զի
կորոյս զնոսա արքայն Ասորւոց. և եդ
զնոսա իբրև զհող ՚ի կոխումն: *Եւ 8
մնացորդք բանից Յովաքազու՝ և ամ
ինչ զոր արար՝ և զօրութիւնք նորա. ո՞չ
աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւ
ուրց Թագաւորացն Իղի: *Եւ ննջ_ 9
եաց Յովաքազ ընդ հարս իւր. և թա
ղեցին զնա ընդ հարս նորա ՚ի Սամա_
րիայ: և թագաւորեաց Յովաս որդի
նորա ընդ նր: *Յամի երեսներորդի 10
և եւթներորդի Յովասու արքային Յու_
դայ. թագաւորեաց Յովաս որդի Յո_
վաքազու ՚ի վր Իղի ՚ի Սամարիայ ամս
երկոտասան: *Եւ արար չար առա_ 11
ջի Տն. և ոչ մեկնեցաւ յամ մեղացն
Յերոբովամու որդւոյ Նաբատայ՝ որ
յանցոյց զԻղ. այլ ՚ի նոսա գնաց:
*Եւ մնացորդք բանիցն Յովասու՝ և 12
ամ ինչ զոր արար. և զօրութիւնք նորա
զոր արար ընդ արքային Յուդայ. ո՞չ
աւանիկ գրեալ են ՚ի գիրս բանից աւ
ուրց Թագաւորացն Իղի: *Եւ ննջեաց 13
Յովաս ընդ հարս իւր. և Յերոբովամ
նստաւ յաթոռ նորա: և թաղեցաւ
Յովաս ՚ի Սամարիայ ընդ Թագաւորս
14 Իղի: *Եւ Եղիսէէ հիւանդացաւ հիւ
անդութի. որով և մեռաւ իսկ: և էջ
առ նա Յովաս արքայ Իղի. և լաց ՚ի
վր երեսաց նորա՝ և ասէ. Հա՛յր՝ հա՛յր.
15 կառք Իղի և հեծեալք նր: *Եւ ասէ
ցնա Եղիսէէ. ա՛ռ դու զաղեղն քո՝ և
զնետս քո: և էառ զաղեղն և զնետս:
16 *Եւ ասէ ցարքայն Իղի. մատո ընդ
աղեղն ձեռօք քով: և եմուտ ընդ
աղեղն ձեռօք իւրով: և եդ Եղիսէէ
զձեռն իւր ՚ի վր ձեռաց արքային:
17 *Եւ ասէ. բա՛ց զպատուհանն՝ որ է
ընդ արևելս: և եբաց: և ասէ Եղի_
սէէ. ձգեա՛: և ձգեաց: և ասէ նետ
փրկութե Տն. և նետ փրկութե ընդ_
դէմ Ասորւոց: և հարցես զԱսորիս
18 յԱփեկ մինչև ի սպառ: *Եւ ասէ ցնա
Եղիսէէ: ա՛ռ դու քեզ նետս: և էառ:
և ասէ ցարքայն Իղի: ձգեա՛ և հա՛ր
զգետին: և եհար արքայ երիցս՝ և
19 եկաց: *Եւ տրտմեցաւ ՚ի վերայ նր
այրն Այ. և ասէ՝ եթէ հարեալ էիր
հնգիցս կամ վեցիցս. յայնժամ հար
կանէիր զԱսորիս մինչև ի սպառ: և
20 արդ երիցս հարցես զԱսորիս: *Եւ
մեռաւ Եղիսէէ՝ և թաղեցին զնա: և
մեկնակալքն Մովաբու եկին յեր_
21 կիրն ՚ի գալ տարւոյն: *Եւ եղև թաղել
նց զայր մի. և ահա տեսին զմեկնակա
լսն || և ընկեցին զայրն ՚ի գերեզ_ || Սիր. 48. 14.
մանն Եղիսէի: և գնաց՝ և մերձեցաւ
յոսկերսն Եղիսէի. և կենդանացաւ՝
և կանգնեցաւ ՚ի վերայ ոտից իւրոց:
22 *Եւ Ազայէլ արքայ Ասորւոց նեղեաց
23 զԻղ զամ աւուրս Յովաքազու: *Եւ
ողորմեցաւ նոցա Տր. և գթացաւ ՚ի
նոսա՝ և հայեցաւ ՚ի նոսա վսն ուխտին
իւրոյ՝ որ ընդ Աբրահամու՝ և ընդ Իսա
հակայ՝ և ընդ Յակոբայ. և ոչ կամե_
ցաւ Տր ապականել զնս. և ոչ ընկէց
24 զնս յերեսաց իւրոց: *Եւ մեռաւ Ա_
զայէլ արքայ Ասորւոց. և թագաւո_ Բենադադ
րեաց որդի Ադերայ՝ որդի նր ընդ նր: որդի նր
25 *Եւ դարձաւ Յովաս որդի Յովաքա_
զայ. և էառ զքաղաքսն ՚ի ձեռաց որդ_ ՚ի Բենադա
ւոյ Ադերայ՝ որդւոյ Ազայելի. զորս Բենադա
էառ ՚ի ձեռաց Յովաքազու հօր նր ՚ի դայ
պատերազմին: երիցս եհար զնա Յո_
վաս՝ և դարձոյց զքաղաքսն Իղի:

Գլ: ԺԴ:

1 Յամի երկրորդի Յովասայ որդւոյ
Յովաքազու արքային Իղի || Թա_ || 2. Մն.
գաւորեաց Ամասիա որդի Յովասու 25. 1.
2 Թագաւոր Յուդայ: *Որդի քսան և
հինգ ամաց էր ՚ի թագաւորել իւր_
ում.

ամ . և քսան և ինն ամ Թագաւորեաց
յեմ ։ և անուն մօր նորա Յովադէն
յեմէ ։ * Եւ արար ուղղութիւն առա 3
ջի Տն . բայց ոչ որպ Դաւիթ հայր իւր ։
ըստ ամե զոր ինչ արար Յովաս հայր
իւր՝ արար ։ * Բայց զբարձունսն ոչ 4
եբարձ ։ և տակաւին ժողովուրդն զո_
հէր ։ և արկանէր խունկս 'ի բարձունս ։
* Եւ եղև՝ իբրև հաստատեցաւ Թա 5
գաւորութիւն 'ի ձեռին նր , և եհար
զծառայսն իւր՝ որք հարին զարքայ
զհայր նր ։ * Եւ զորդիս սպանողացն 6
ոչ սպան . որպէս և գրեալ է 'ի գիրս
օրինացն Մովսէսի . զոր օրինակ պատուէ
Բ.Օրէ. րեաց Տր՝ և ասէ . ‖ մի մեռցին հարք
24.16. վն որդւոց . և մի որդիք մեռցին վասն
Եզեկ. հարց . այլ իւրաքանչիւրոք 'ի մեղս իւր
18. 20. ում մեռցի ։ * Նա եհար զԵդովմ 'ի մայլ 7
լոյ տասն հազար . և էառ զՍէլմն պա
տերազմաւ . և կոչեաց զանուն նորա
յեկթովէլ մինչև ցայսօր ։ * Յայնժամ 8
ժամանակի առաքեաց Ամասիա հրեշ
տակս առ Յովաս որդի Յովաքազու որդ
ւոյ յէուեայ արքայի Իղի՝ և ասէ ։ Եկ
յանդիման լիցուք միմեանց երեսօք ։
* Եւ առաքեաց Յովաս արքայ Իղի առ 9
Ամասիայ արքայ Յուդայ՝ և ասէ . ակ_
քանն 'ի Լիբանանն , յղեաց առ եղև_
նափայտն որ 'ի Լիբանանն . և ասէ՝ տուր
զդուստր քո որդւոյ իմում կնութե .
և անցին գազանք անտառին՝ որք 'ի
Լիբանանն՝ և կոխեցին զակքանն ։
* Հարկանելով հարեր զԵդովմ և հպար 10
տացոյց զքեզ սիրտ քո ։ մեծարեայ՝
և նիստ 'ի տան քում . ընդէր գրգռէ
զքեզ չարութիւն քո ։ և անկանիցիս
դու և Յուդա ընդ քեզ ։ * Եւ ոչ անս 11
սաց Ամասիա ։ և ել Յովաս արքայ Իղի
և երևեցան երեսօք . ինքն և Ամասիա
արքայ Յուդայ 'ի Բեթսամիւս հրէաս
տանի ։ * Եւ պարտեցաւ Յուդա յերե 12
սաց Իղի . և փախեաւ այր իւրաքանչ
իւր 'ի բնակութիւն իւր ։ * Եւ զԱմա_ 13
սիա զարքայ Յուդայ՝ զորդի Յովասու
որդւոյ Ոքոզիայ՝ կալաւ Յովաս որ_
դի Յովաքազու արքայ Իղի 'ի Բեթ_
սամիւս՝ և եկն յեմ ։ և եհատ զպա_
րիսպն եմի 'ի դրանէ Եփրեմի մինչև
ցդուռն անկեանց՝ չորեքհարիւր կան
գուն ։ * Եւ էառ զոսկի՝ և զարծաթ՝ 14
և զամ անօթս գտեալ 'ի տան Տն . և
'ի գանձս տան Թագաւորին . և զոր_
դիս խառնակութեան . և դարձաւ 'ի
Սամարիայ ։ * Եւ մնացորդք բանից 15
Յովասու՝ և որ ինչ արար զօրութբ
իւրով . և պատերազմն՝ զոր պատե_
րազմեցաւ ընդ Ամասեայ արքայի Յու
դայ , ոչ աւանիկ գրեալ են 'ի գիրս
խդ

բանից աւուրց Թագաւորացն Իղի ։
16 * Եւ ննջեաց Յովաս ընդ հարս իւր ։
և թաղեցաւ 'ի Սամարիայ ընդ Թա_
գաւորս Իղի ։ և Թագաւորեաց յերո
17 բովամ որդի նորա ընդ նր ։ * Եւ ե_
կեաց Ամասիա՝ որդի Յովասու՝ արքայ
Յուդայ՝ յետ մահուանն Յովասու որդ
ւոյ Յովաքազու Թագաւորի Իղի՝ ամս
18 հնգետասան ։ * Եւ մնացորդք բանից
Ամասեայ՝ և ամ ինչ զոր արար . ոչ
աւանիկ գրեալ են 'ի գիրս բանից աւ
19 ուրց Թագաւորացն Յուդայ ։ * Եւ
գումարեցան 'ի վերայ նորա գունդք
յեմ . և փախեաւ 'ի Ղաքիս՝ և առա
քեցին զկնի նր 'ի Ղաքիս՝ և սպանին
20 զնա անդ ։ * Եւ բարձին զնա ձիովք՝
և Թաղեցաւ յեմ ընդ հարս իւր 'ի
21 քաղաքի Դաւթի ։ * ‖ Եւ էառ ամ ‖2.Մն.
ժողովուրդն Յուդայ զԱզարիա . և նա 26.1.
էր ամաց վեշտասանից . և Թագաւո_
րեցուցին զնա փոխանակ հօր իւրոյ
22 Ամասեայ ։ * Նա շինեաց զԵղոթ ։ և
դարձոյց զնա անդրէն 'ի Յուդայ յետ
ննջելոյ արքայի ընդ հարս իւր ։
23 * Յամի հնգետասաներորդի Ամա_
սեայ՝ որդւոյ Յովասու արքայի Յու_
դայ . Թագաւորեաց Յերոբովամ որ_
դի Յովասու արքայի Իղի 'ի վր Իղի 'ի
Սամարիայ՝ ամս քառասուն և մի ։
24 * Եւ արար չար առաջի Տն ։ և ոչ մեկ
նեցաւ յամ մեղաց Յերոբովամու որդ
ւոյ Նաբատայ՝ որ յանցոյց զԻղ ։ Նա դար_
25 * Նա մերժեաց զսահմանս Իսրայէլի ձոյց
'ի Մուտից Եմաթայ մինչև ցծովն արա_
բայ ըստ բանի Տն Այ Իղի՝ զոր խօ_
սեցաւ 'ի ձեռն ծառայի իւրոյ ‖ Յովնա_ ‖ Յովն.
նու որդւոյ Ամաթեայ մարգարէի 'ի 1. 1.
26 գեթայ ոփերայ ։ * Զի ետես Տէր
զտառապանս Իղի յոյժ դառնութե .
և սակաւաւորս՝ և նեղեալս՝ և անօս_
րայեալս՝ և լքեալս՝ և ոչոք էր՝ որ օգ_
27 նէր Իղի ։ * Եւ ոչ խօսեցաւ Տր ջնջել
զզաւակ Իսրայէլի 'ի ներքոյ երկնից ։
և փրկեաց զնս Տր 'ի ձեռաց Յերոբո_ 'ի ձեռն
28 վամայ որդւոյ Յովասու ։ * Եւ մնա_
ցորդք բանից Յերոբովամայ . և ամ
ինչ զոր արար . և զօրութիւնք նր զոր
պատերազմեցաւ . և որպ դարձոյց զԴա
մասկոս՝ և զեմաթ անդրէն առ Յու_
դայ յԻղէ ։ ոչ աւանիկ գրեալ են 'ի
գիրս բանից աւուրց Թագաւորացն
29 Իղի ։ * Եւ ննջեաց Յերոբովամ ընդ
հարս իւր՝ ընդ Թագաւորս Իղի . և
Թագաւորեաց Ազարիա որդի Ամա_
սեայ փոխանակ հօր իւրոյ ։

Գլ: ԺԵ:

Յամի քսաներորդի և եօթներոր- 1
դի յերոբովամայ արքային Իլի,
Թագաւորեաց ազարիա որդի ամա-
սեայ արքային յուդայ: *Որդի վեշտա 2
սան ամաց էր 'ի թագաւորել իւրում.
և յիսուն և երկու ամ թագաւորեաց
յեմ: և անուն մօր նորա յեքելիա
յեմէ: *Եւ արար բարի առաջի Տն. 3
ըստ ամի զոր արար ամասիա հայր նր:
*Բաց 'ի բարձանցն զոր ոչ եբարձ: և 4
տակաւին ժողովուրդն զոհէր. և ար-
‖2.Մնա կանէր խունկս 'ի բարձունս: *‖Եւ 5
26.21. եհարկ Տր ձեռն 'ի թագաւորն, և էր
բորոտեալ մինչև ցօր մահուան իւրոյ.
և նստէր 'ի տան ափփուսովթ: և յովա
թամ որդի արքային էր 'ի վերայ տանն
դատել զժողովուրդ երկրին: *Եւ 6
մնացորդք բանից ազարիայ. և ամ ինչ
զոր արար. ոչ աւանիկ գրեալ են 'ի
գիրս բանից աւուրց թագաւորացն
յուդայ: *Եւ ննջեաց ազարիա ընդ 7
հարս իւր. և թաղեցին զնա առ հարս
իւր 'ի քաղաքին դաւթի: և թագաւո
րեաց յովաթամ որդի նր ընդ նորա:
*Յամի երեսներորդի և ութերորդի 8
ազարիայ արքային յուդայ՝ թագաւո-
րեաց զաքարիա որդի յերոբովամայ
'ի վր Իլի 'ի սամարիայ ամիսս վեց:
*Եւ արար չար առաջի Տն. որպէս 9
արարին հարքն նր. և ոչ մեկնեցան 'ի մե
ղացն յերոբովամու որդւոյ նաբատայ՝
որ յանցոյցն զԻէլ: *Եւ դաւմարեցան 10
'ի վր նր սեղղում որդի աբիսայ. և
կեբդամ. և հարին զնա յանդիման
ժողովրդեանն. և սպանին զնա: և
թագաւորեաց սեղղում ընդ նորա:
*Եւ մնացորդք բանից զաքարիայ ա- 11
հա գրեալ են 'ի գիրս բանից աւուրց
‖Վեր. թագաւորացն Իլի: *‖Այս է բանն 12
10.30. Տն զոր խօսեցաւ առ յէու՝ և ասէ. որ
դիք չորրորդք նստցին քեզ յաթոռն
Իլի. և եղև այնպէս: *Եւ սեղղում 13
որդի աբիսայ թագաւորեաց յամի ե-
րեսներորդի իններորդի ազարիայ ար
քային յուդայ: և թագաւորեաց սեղ
ղում ամսօրեայ մի աւուրց 'ի սամա-
րիայ: *Եւ ել մանայեմ որդի գադ- 14
դեայ 'ի թերսիղայ. և եմուտ 'ի սա-
մարիայ. և եհար զսեղղում զորդի ա-
բիսայ 'ի սամարիայ. և սպան զնա. և
թագաւորեաց ընդ նր: *Եւ մնա- 15
ցորդք բանից սեղղումայ. և դաւմա-
րութիւնք նր զոր դաւմարեցաւ. ահաւա
նիկ գրեալ են 'ի գիրս բանից աւուրց
թագաւորացն Իլի: *Յայնմ ժամա- 16
նակի եհար մանայեմ զթերսայ՝ և
զամ ինչ որ 'ի նմա. և զսահմանս նր 'ի
թերսայէ. քանզի ոչ բացին նմա: և
եհար զնա. և զյղիս նր պատառեաց:
17 * Յամի երեսներորդի և իններորդի
ազարիայ արքային յուդայ. թագաւո-
րեաց մանայեմ որդի գադդայ 'ի վր
18 Իլի 'ի սամարիայ ամս տասն: *Եւ ա-
րար չար առաջի Տն. և ոչ մեկնեցաւ
յամ մեղացն յերոբովամու որդւոյ
նաբատայ՝ որ յանցոյցն զԻէլ մեղք
19 իւրովք: *Եւ ել փուա արքայ ասո-
րեստանեայց 'ի վր երկրին: և մանայ
եմ ետ փուայ հազար տաղանդ արծա
թոյ՝ լինել ձեռին նր ընդ նմա. հաս-
տատել զթագաւորութիւն 'ի ձեռին
20 նր: *Եւ եհարկ մանայեմ զարծաթն
'ի վր Իէլի. 'ի վր ամ զօրաւորի զօ-
րութեան՝ տալ արքային ասորեստան-
եայց յիսուն սիկղ արծաթոյ առ այր
մի. և դարձաւ արքայն ասորեստան-
21 եայց. և ոչ եկաց յերկրին: *Եւ մնա-
ցորդք բանից մանայեմայ. և ամ ինչ
զոր արար. ոչ աւանիկ գրեալ են 'ի
գիրս բանից աւուրց թագաւորացն
22 Իլի: *Եւ ննջեաց մանայեմ ընդ հարս
իւր: և թագաւորեաց փակէէ որդի
23 նր ընդ նր: *Յամի յիսներորդի ազա
րիայ արքային յուդայ. թագաւորեաց
փակէէ 'ի վր Իլի 'ի սամարիայ ամս
24 տասն: *Եւ արար չար առաջի Տն.
և ոչ մեկնեցաւ 'ի մեղացն յերոբովա-
մու որդւոյ նաբատայ՝ որ յանցոյցն
25 զԻէլ: *Եւ դաւմարեցաւ 'ի վր նորա
փակէէ որդի ռոմելայ ասպառազէն
իւր՝ և եհար զնա 'ի սամարիայ առաջի
տանն արքային: և ընդ նմա արգովբ.
և ընդ նմա արիէ. և ընդ նմա յիսուն
այր 'ի չորեքհարիւրոյն: և սպան զնա
26 և թագաւորեաց ընդ նր: *Եւ մնա-
ցորդք բանիցն փակեայ. և ամ ինչ զոր
արար՝ ահա գրեալ են 'ի գիրս բանից
27 աւուրց թագաւորացն Իլի: *Յամի
յիսներորդի և երկրորդի ազարիայ
արքային յուդայ թագաւորեաց փակէէ
որդի ռոմելայ 'ի վր Իլի 'ի սամարիայ
28 ամս քսան: *Եւ արար չար առաջի
Տն. և ոչ մեկնեցաւ յամ մեղացն յե-
րոբովամայ որդւոյ նաբատայ. որ յան
29 ցոյցն զԻէլ: *Յաւուրս փակէի ար-
քային Իլի եկն թագղաթփաղասար ար
քայ ասորեստանեայց. և էառ զայիոն.
և զկաբէլ. և զբեթմաաք. և զյա-
նովք. և զկենեզ. զասովր. և զգա-
ղաադ. և զգալիլեայ. և զամ երկիրն
նեփթաղիմայ. և խաղացոյց զնս յասո
30 րեստան: *Եւ դաւմարեաց գունդ
ովսեէ որդի էլայի 'ի վր փակէի որդ-
ւոյ ռոմելայ՝ և եհար զնա՝ և սպան
զնա.

ջնա. և Թագաւորեաց ընդ նմ. յամի
քսաներորդի յովաքիմայ որդւոյ ո-
զիայ։ * 31 Եւ մնայորդք բանից փակելի
և ամենայն զոր արար. ահաւասիկ գրեալ
են ի գիրս բանից աւուրց Թագաւո-
ցացն Իւդայ։ * 32 Յամի երկրորդի փա-
կելի որդւոյ ռօմելայ Թագաւորի Իւդ.
Թագաւորեաց յովաքիմ որդի ոզիայ
արքայի յուդայ։ * 33 Որդի քսանևհինգ
ամաց էր ի Թագաւորել իւրում. և
վեցետասան ամ Թագաւորեաց յԵրէմ։
և անուն մօր նր յերուսայ դուստր
սադովկայ։ * 34 Եւ արար ուղղութիւն
առաջի Տեառն ըստ ամենայն զոր արար
հայր նորա։ * 35 Լոյց ի քարձանցն զոր
ոչ եքարձ. և տակաւին ժողովուրդն
զոհէր. և արկանէր խունկս ի բար-
ձունսն։ Նա շինեաց զդուռն տանն Տեառն
զվերինն։ * 36 Եւ մնայորդք բանից յո-
վաքիմայ՝ և ամենայն զոր արար. ո՞չ
ահաւասիկ գրեալ են ի գիրս բանից աւ-
ուրց Թագաւորացն յուդայ։ * 37 Յաւ-
ուրս յայնոսիկ սկսաւ Տէր առաքել
զասորին արքայ ասորւոց. և զփակէհ
որդի ռօմելայ։ * 38 Եւ ննջեաց յովա-
քիմ ընդ հարս իւր. և Թագեցաւ
առ հարս իւր ի քաղաքին դաւթի հօր
իւրոյ. և Թագաւորեաց աքազ որդի
նորա ընդ նորա։

ԳԼ. ԺՕ.

1 Յամի եօթնուտասներորդի փա-
կելի որդւոյ ռօմելայ Թագաւո-
րեաց աքազ որդի յովաքիմայ։ * 2 Երի-
դի ամաց քսանևհնգից էր արքայ ա-
քազ ի Թագաւորել իւրում. և վեց-
տասան ամ Թագաւորեաց յԵրէմ. և
ոչ արար ուղղութիւն առաջի Տեառն Ա-
հաւատարմութիւն իբրև զդաւիթ ընդ
հայր իւր։ * 3 Եւ գնաց զճանապարհ
յերօբովամայ որդւոյ նաբատայ ար
քայի ի՛սրայէլ. նաև զորդին իւր անցոյց
ընդ հուր՝ ըստ գարշութեց ազգացն.
զորս եքարձ Տէր յերեսաց որդւոցն իսրայէլ։
4 * Եւ զոհէր՝ և արկանէր խունկս ի
բարձունս՝ և ի վերս բլրոց, և ի ներքոյ
անտառախիտ ծառոց։ * 5 Յայնժամ
եկն ռասօն արքայ ասորւոց՝ և փակէհ
որդի ռօմելի արքայ Իսրայէլի Երուսաղէմ
ի պատերազմ, և պաշարեին զնա ի
վերայ աքազու. և ոչ կարէին պատե
րազմիլ։ * 6 Ժամանակին յայնմիկ
դարձոյց ռասօն արքայ ասորւոց զայն
ելեթ յասորիս. և եհան զհրէայսն յայն
ելեթայ. և եկին եդովմայեցիք յայիլա
թայ՝ և բնակեցան անդ մինչև ցայ-
սօր։ * 7 Եւ առաքեաց աքազ հրեշտակս
առ Թագելաթփաղասար արքայ ասո

րեստանեայց՝ և ասէ. ծառայ քո՝ և
որդի քո եմ ես՝ ել. և փրկեա զիս ի
ձեռաց արքային ասորւոց. և ի ձեռաց
արքային Իսրայէլի որ յարուցեալք ի վերայ իմ։
8 * Եւ հառ աքազ զարծաթ և զոսկի
զգտեալ ի գանձս տանն Տեառն և ի տան
Թագաւորին. և առաքեաց արքային
9 ասորեստանեայց պատարագս։ * Եւ
լուաւ նմա արքայն ասորեստանեայց.
և ել արքայն ասորեստանեայց ի դա
մասկոս. և հառ գնաց. և վարեաց գնա
ի գերութիւն ի կիւրէն. և զրասոփն
10 սպան։ * Եւ գնաց արքայ աքազ ընդ
առաջ Թագելաթփաղասարայ արքայի
ասորեստանեայց ի դամասկոս. և ե-
տես զսեղանն որ ի դամասկոս. և ա-
ռաքեաց արքայ աքազ առ ուրիայ քա
հանայ զնմանութիւն սեղանոյն, և
զձև նր. ըստ ամենայն գործուածոյն նր։
11 * Եւ շինեաց ուրիա քահանայ զսե-
ղանն՝ ըստ ամենայնի որպէս առաքեաց ար
քայ աքազ ի դամասկոս. նոյնպէս
արար ուրիա քահանայ մինչև ի գալ
12 արքային աքազու ի դամասկոս։ * Եւ
տես զսեղանն. և մատեաւ արքայ ի
սեղանն. եւ ի վեր. և ձեռնձերեաց
13 զողջակէզսն իւր՝ և զպտղան։ * Եւ նուէր
բեաց զնուէրս իւր. և եհեղ զարիւն
14 խաղաղականաց իւրոց։ * Եւ զսե-
ղանն պղնձի, որ կայր առաջի Տեառն, փո
խեաց յերեսաց տանն Տեառն ի սեղանոյէ
իւրմէ. և եդ զնա ի կողմանէ սեղա-
15 նոյն ընդ հիւսիսի։ * Եւ պատուիրեաց
եւս արքայ աքազ ուրիայ քահանայի՝
և ասէ. ի վերայ մեծի սեղանոյդ մա
տուցանիցես զողջակէզս առաւօ-
տիւնս. և զպտղս երեկոյիւնս. և զողջա-
կէզս արքային՝ և զպտղս նր. և զողջա-
կէզս ժողովրդեան երկրին. և զպտղս
նց. և զնուէրս նց. և զամ զարիւն ող
ջակիզացդ. և զամ զարիւն զոհից ի վե
նր հեղուցուս. բայց սեղանն պղնձի
16 եղիցի ինձ յառաւօտիւնս։ * Եւ արար
ուրիա քահանայ ըստ ամենայնի. որ պատուի
17 իրեաց նմա արքայ աքազ։ * Եւ կո-
տորեաց արքայ աքազ զաղխս մեքե-
նովթացն. և փոխեաց ի նոցանէ զաւ
աղանն. և զծովն իջոյց ի ցլոյն պղնձ
ձեաց երկոտասանեցուցն. որք ի նե
քոյ նր. և եդ զնա ի վերայ քարեղէն
18 խարսխի։ * Եւ զհիմն աթոռոյն շի-
նեաց ի տան Տեառն. և զմուտ թագաւո
րին զարտաքին դարձոյց ի տուն Տեառն.
յերեսաց արքային ասորեստանեայց։
19 * Եւ մնացորդք բանից աքազու՝ զոր
արար. ո՞չ աւանիկ գրեալ են ի գիրս
բանից աւուրց թագաւորացն յուդայ։
20 * Եւ ննջեաց աքազ ընդ հարս իւր. և

Թաղեցաւ ընդ հարս իւր 'ի քաղաքի Դաւթի. և թագաւորեաց Եզեկիա որդի նորա ընդ նորա:

Գլ: ԺԷ:

Յամի երկոտասաներորդի Աքա_ 1
զու արքայի Յուդայ. թագաւո_
րեաց Ովսէէ որդի Էլայի 'ի վր Իէլի 'ի
Սամարիայ ամս ինն: * Եւ արար չար 2
առաջի Տն. բայց ոչ իբրև զթագա_
ւորսն Իէլի. որք էին յառաջ քան զնա:
|| Դ Թագ. * || Ի վերայ նր ել Սաղմանասար ար 3
18.9. քայ Ասորեստանեայց. և եղև նմա Ով_
Տոբ. սէէ ծառայ. և տայր տանել նմա ման_
1. 2. նայ: * Եւ եգիտ արքայ Ասորեստա_ 4
նեայց յՈվսէէ վնաս. զի առաքեաց
հրեշտակս առ Սովա արքայ Եգիպտա_
ցւոց. և ոչ ետ մանանա արքային Ասո_
րեստանեայց 'ի տարւոջն յայնմիկ. և
պաշարեաց զնա արքայն Ասորեստա_
նեայց. և կապեաց զնա 'ի տան բան_
տի: * Եւ ել արքայն Ասորեստանեայց 5
յամ երկիրն. ել և 'ի Սամարիայ. և
|| Դ Թագ. պաշարեաց զնա ամս երիս: * || Յամին 6
18.10. իններորդի Ովսեայ՝ էառ արքայ Աս
որեստանեայց զՍամարիայ. և խաղա_
ցոյց զԻէլ յԱսորեստանեայս. և բնա_
կեցոյց զնոսա 'ի Յալաթ. և Աբովր.
զգետովն Գովզանայ. և զլերամբքն
Մարաց: * Եւ եղև իբրև մեղան որ_ 7
դիքն Իէլի Տն Ա.Ծ իւրեանց. որ եհան
զնոսա յերկրէն Եգիպտացւոց՝ 'ի ձե_
ռաց փարաւոնի արքայի Եգիպտաց_
ւոց. և երկեան յաստուծոց օտա_
րաց: * Եւ գնացին ըստ կրօնից ազ_ 8
գացն. զորս եբարձ Տր յերեսաց որդ_
ւոցն Իէլի. և թագաւորքն Իէլի որչափ
ինչ արարին: * Եւ որչափ ինչ պաճու_ 9
ճեցին որդիքն Իէլի բան, ոչ այնպէս
ինչ զՏէր Ա.Ծ իւրեանց. և շինեցին իւր
եանց բարձունս յամ քաղաքս իւր_
եանց. յաշտարակէ պահապանացն մին
չև 'ի քաղաքն ամուր: * Եւ կանգնե_ 10
ցին իւրեանց արձանս. և անտառս.
յամ բլուրս բարձունս. և 'ի ներքոյ
ամ անտառախիտ ծառոց: * Եւ ար 11
կանէին խունկս յամ բարձունս. իբ_
րև զամ ազգսն. զորս մերժեաց Տր
յերեսաց նոցա. արարին զոլոյս. և
ընկերշակեցին առ 'ի բարկացուցանե
լոյ զՏր: * Եւ պաշտեցին զկուռս. որ 12
ղորդ ով՚ք ասաց նց Տէր. եթէ մի առնիցէք
զբանդ զայդ Տն: * Եւ ետ վկայու_ 13
թն Տր ընդ Իէլի և ընդ Յուդայ՝ 'ի
ձեռն ամ մարգարէից իւրոց. և ամ
|| Երեմ. տեսանողաց՝ և ասէ. || դարձարուք 'ի
25.5. ճանապարհաց ձերոց չարաց. և պա_
հեցէք զպատուիրանս իմ. և զիրաւ_
ունս իմ. և զամ օրէնս. զորս պատուի
րեցի հարց ձերոց. զորս առաքեցի առ
ձեզ 'ի ձեռն ծառայից իմոց մարգա_
14 րէից: * Եւ ոչ լուան նոցա. և խստա
ցուցին զողն իւրեանց քան զողն հարց
իւրեանց. և ոչ հաւատացին 'ի Տր Ա.Ծ
15 իւրեանց: * Եւ ընկեցին 'ի բաց զհաս
տատութիւն իւրեանց. և զդաշինսն,
զորս կռեաց ընդ հարսն նց. և զվկայ_
ութիւն նորա. զորս ուխտեաց նց, ոչ
պահեցին. և գնացին զհետ ունոտեաց.
և ունոտեցան զհետ ազգացն. որք շուրջ
զնոքօք. յորոց պատուիրեաց նոցա Տր ղորդ
16 չառնել ըստ նմին օրինակի: * Թողին
զամ պատուիրանսն Տն Ա.Ծ իւրեանց.
և արարին իւրեանց ձուլածոյս եր_
կուս երինջս. և երկիր պագին զօրու_
թն երկնից. և պաշտեցին զԲահաղ:
17 * Եւ անցուցին զուստերս և զդստերս
իւրեանց ընդ հուր. և դիւթեցին դիւթ_
ութիւնս. և հմայեցին հմայս. և հա_
մարձակեցան առնել չար առաջի Տն
18 առ 'ի բարկացուցանելոյ զնա: * Եւ
բարկացաւ Տր յոյժ Իէլի. և մերժեաց
զնս յերեսաց իւրոց. և ոչ մնաց. բայց
19 միայն ցեղն Յուդայ: * Այլ և Յու
դայ ոչ պահեցին զպատուիրանս Տն
Ա.Ծ իւրեանց. և գնացին ըստ կրօնիցն
20 Իէլի՝ զորս արարին: * Եւ մերժեցին և մերժ_
զՏր յամ զաւակէն Իէլի. և շարժեաց եաց ամ
զնոսա՝ և ետ զնոսա 'ի ձեռս աւարա_ զամ զա_
ռուաց իւրեանց. մինչև ընկէց զնոսա ւակ
21 յերեսաց իւրոց: * || Սակայն Իէլ առ_ || 3 Թագ.
տամբն խուլ Դաւթի թագաւորեցոյց 12.19.
զՅերոբովամ որդի Նաբատայ. և մեր
ժեաց Յերոբովամ զԻէլ 'ի գնացից Տն.
22 և մեղոյց զնս մեղս մեծամեծս: * Եւ
արարին որդիքն Իէլի ըստ ամ մեղաց
Յերոբովամու՝ զորս արար. և ոչ մեր
23 ժեցան 'ի նոցանէն: * || Մինչև փո_ || Երեմ.
խեաց Տր զԻէլ յերեսաց իւրոց. որպ 25.9.
խօսեցաւ Տէր 'ի ձեռն ամ ծառայից
իւրոց մարգարէից. և վարեցաւ Իէլ
յերկրէ իւրմէ յԱսորեստանեայս մին
24 չև ցայսօր: * Եւ էած արքայն Ասո_
րեստանեայց 'ի Բաբելոնէ. և 'ի Քու_
թայ. և յԱյայ. և յԵմաթայ. և 'ի Սեփ
փարուիմայ. և բնակեցան 'ի քաղաքս
Սամարեայ փոխանակ որդւոցն Իէլի՝ և
ժառանգեցին զՍամարիայ. և բնակե
25 ցան 'ի քաղաքս նորա: * Եւ եղև 'ի
սկզբան բնակութեան նց անդ. ոչ եր_
կեան 'ի Տէ. և առաքեաց Տր առիւծս.
26 և կոտորէին զնս: * Եւ խօսեցան ընդ
արքային Ասորեստանեայց՝ և ասեն.
ազգն զոր փոխեցեր. և նստան փոխա
նակ 'ի քաղաքս Սամարեայ, ոչ գի_
տեն զկրօնս Ա.Ծ երկրին. և առաքեաց
Տր

Տէր՝ ինոսա առիւծս. և ահա կատրեն
զնոսա. քանզի ոչ գիտեն զկրօնս Ա.Յ
երկրին։ *Նէ հրաման ետ արքայն ա- 27
սորեստանեայց՝ և ասէ. առէք անդր
զմիոք ՚ի քահանայիցն գերելոց անտի՝
զի երթեալ բնակեսցի անդ՝ և ցուց-
ցէ զկրօնս Ա.Յ. և լուսաւորեսցէ զնոս
իրաւամբք Ա.Յ երկրին։ * Նէ առ- 28
բան զի ՚ի քահանայիցն. զոր գերեցին
՚ի սամարիայ. և նստաւ ՚ի բեթէլ. և
լուսաւորէր զնոսա. զի երկնչեցին ՚ի
Տէ։ *Նէ արարին ազգ ազգ աստուծ 29
ածս իւրեանց. և եդին ՚ի տունս բար
ձանցն՝ զոր արարին սամարացիքն՝
իւրաքանչիւր ազգքն ՚ի քաղաքս իւր-
եանց. յորս հնքեանք բնակէին։ * Նէ 30
արք բաբիլոնի արարին զսաքքովթ՝
և զբանովթ. և արք քութացի արարին
զնդեղ. և արք եմաթացի արարին զա
սիմաթ։ * Նէ այիացիք արարին զա- 31
բեւազեր. և զնեբաս. և զթարթակ.
և զսեփարուիմ. ուր այրէին զորդիս
իւրեանց ՚ի հուր՝ ադրամելեքեայ. և
անամելեքեայ՝ աստուածոց սեփարուի
մայ։ * Նէ երկնչէին ՚ի Տէ. և բնա- 32
կեցուցին զդարչելիսն իւրեանց ՚ի
տունս բարձանցն. զորս արարին ՚ի
սամարիայ իւրաքանչիւր ազգ ազգ յոր
ում բնակէին. և երկնչէին ՚ի Տէ և
արարին իւրեանց քուրմս բարձանց։
* Նէ երկնչէին ՚ի Տէ. և պաշտէին 33
զաստուածսն իւրեանց ըստ կրօնից
ազգացն՝ զորս Ա.Ծ մերժեաց անտի։
* Նէ մինչև ցայսօր առնէին նոքա ըստ 34
կրօնից նոցա. և երկնչէին ՚ի Տէ. և
առնեն ըստ կրօնից նոցն. և ըստ պատ
ուիրանաց նոցն՝ և ըստ օրինաց. և ոչ
ըստ պատուիրանին զոր պատուիրեաց
Ա.Ծննդ. Տէր որդւոցն յակոբայ ՚որ ում եդ ա- 35
32.28. նուն ինքն։ * Նէ ուխտեաց Տէր ուխտ՝
և պատուիրեաց նոցա և ասէ. մի երկն
չիցիք յաստուածոց օտարաց. և մի եր-
կիր պագանիցիք նոցա. և մի պաշտի
ցիք զնոս. և մի զոհիցիք նոցա։ * Ա.յլ 36
Տն Ա.Յ՝ որ եհան զձեզ յերկրէն ե-
գիպտացւոց մեծաւ զօրութ և բարձր
բազկաւ. ՚ինմանէ երկնչիցիք. և նմա
երկիր պագանիցիք. և նմա զոհիցիք։
* Նէ իրաւանց՝ և դատաստանաց՝ և 37
օրինաց՝ և պատուիրանացն՝ զորս
գրեաց ձեզ՝ զգուշանայցիք առնել. և
մի՛ երկնչիցիք յաստուածոց օտարաց։
* Նէ զուխտն՝ զոր ուխտեաց ընդ ձեզ՝ 38
մի՛ ցրեցիք. և մի՛ երկնչիցիք յաստու-
ծոց օտարաց։ * Ա.յլ՝ ի Տէ Ա.Յ ձեր- 39
մէ երկնչիցիք. և նա փրկեսցէ զձեզ
յամենայն թշնամեաց ձերոց։ * Նէ 40
մի՛ ունկնդիր լինիցիք կրօնից նոցն. զորս
41 նոքա առնիցեն։ * Նէ երկնչէին ազգքն
այնոքիկ ՚ի Տէ։ և զբօշելոց իւրեանց
ծառայէին. և որդիք նոյ. և որդւոց
որդիք նոցա. որպէս արարին հարք իւր
եանց, առնեն մինչև ցայսօր։

ԳԼ։ ԺՐ։

1 Նէ եղև յամին երրորդի ‖ ոլ սեի ‖2.Պնա
որդւոյ ելայ արքայի Եղէմ թագա- 28. 26.
որեաց եղեկիա որդի աքազու արքայի և 29.1.
2 յուդայ։ * Որդի քսանև հինգ ամաց
էր ՚ի թագաւորել իւրում. և քսանև
հինն ամ թագաւորեաց յերուսաղէմ.
և անուն մօր նորա աբուէթ՝ դուստր
3 զաքարիայ։ * Նէ արար ուղղութիւն
առաջի Տն ըստ ամենայնի. զոր արար դաւ-
4 իթ հայր նորա։ * Նա եբարձ զբար
ձունսն. և խորտակեաց զնմա՛ արձանսն.
և կոտորեաց զանտառսն. ‖ և զօձն ‖ Թագ.
պղնձի. զոր արար մովսէս. զի մինչև 21.9.
այն աւուրս ծխէին նմա որդիքն Իսի-
5 և կոչեցին զնա նեհեսթան։ * ՚Ի Տէր
Ա.Ծ իսէի յուսացաւ. և յետ նր նմանն
նմա ոչ եղև յամենայն թագաւորս յուդայ.
և յեղեալսն յառաջագոյն քան զնա։
6 * Յարեցաւ ՚ի Տէր. և ոչ մեկնեցաւ ՚ի
գնալոյ նորա. և պահեաց զպատուէր
բանս նորա. զոր պատուիրեաց մովսէս։
7 * Նէ էր Տէր ընդ նմա յամի. և զոր ինչ
և առնէր՝ խելամուտ լինէր. և նշխա-
հեաց զաբքայն ասորեստանի. և ոչ ծա
8 ռայեաց նմա։ * Նա եհար զպղեշտ-
գիսն մինչև ցգազայ և մինչև ցսահ-
մանս նր՝ յաշտարակէ պահապանացն
9 մինչև ցքաղաքն ամուր։ * Նէ եղև
յամի չորրորդի եղեկիա արքայի. այն
է ամ եօթներորդ ովսեայ՝ որդւոյ
եղայ արքայի ԵՂէմ. էլ սամարիա.
արքայ ասորեստանեայց ՚ի սամարիա.
10 և պաշարեաց զնա։ * Նէ էառ զնա՝ ՚ի
կատարել ամաց երից. յամի վեցերոր
դի եղեկիայ. այն ‖ ամ հինգերորդ էր ‖ Պ էր.
ովսեայ արքայի ԻՂէմ, առաւ սամա- 17.6.
11 րիա։ * ‖ Նէ խաղացոյց արքայն ասո ‖ Ծննդ.
րեստանեայց զսամարիա յասորեստա 1. 2.
նեայս. և նստոյց զնս յաղաթ՝ և յա-
բոռ՝ առ գետովն գովզանայ՝ և լե-
12 ռամբքն մարաց։ * Օի ոչ լսեան ձայ
նի Տն Ա.Յ իւրեանց. և անցին զսա-
հմանս նր՝ ըստ ամի զոր պատուիրեաց
նոցա մովսէս ծառայ Տն. ոչ լսեան, և
13 ոչ արարին։ * ‖ Նէ յամի չորեքտասան ‖2.Պնա
երորդի արքայի եղեկիայ. էլ սեննա 32.1.
քերիմ արքայ ասորեստանեայց ՚ի վէր ‖Երաժ.
ամուր ամուր քաղաքացն յուդայ. և 48. 20.
14 էառ զնս։ * Նէ առաքեաց եղեկիա ‖Ասայ.
արքայ յուդայ հրեշտակս առ արքայ 36.1.
ասորեստանեայց ՚ի ղաքիս՝ և ասէ. մե-
ղայ։

ղայ. դարձիր յինէն. և զոր ինչ դիցես
'ի վերայ իմ, բարձից: Եւ եդ արքայն
ասորեստանեայց 'ի վերայ Եզեկիայ
արքային յուդայ երեքհարիւր տաղանդ
արծաթոյ՝ և երեսուն տաղանդ ոսկ-
ւոյ: *Եւ ետ Եզեկիաս զամ արծաթ 15
գտեալ 'ի տան Տն. և 'ի գանձս տան
թագաւորին: *'Ի ժամանակի յայն 16
միկ կոտորեաց Եզեկիա զդրունս տա-
ճարին Տն՝ և զսեամսն. զոր պատեաց
ոսկւով Եզեկիա արքայ յուդայ. և ետ
զայն արքային ասորեստանեայց: *Եւ 17
առաքեաց արքայ ասորեստանեայց
զԹարաթայ՝ և զռաբսարիս՝ և զռափ
սակ 'ի Լաքիսայ առ արքայ Եզեկիայ
զօրու ծանու 'ի վերայ երուսաղեմի.
և ելին. և եկին յերուսաղեմ. և կա-
ցին 'ի վերայ ջրմղին վերնոյ աւազա-
նին. որ է 'ի ճանապարհին ագարա-
կին Թափչի: *Եւ աղաղակեցին առ 18
Եզեկիայ. և եկին առ նոսա. Եղիակիմ
որդի Քեղկեայ հազարապետ. և Սոմ-
նաս դպրապետ. և Յովաք որդի Ասա-
փայ. որ 'ի վր յիշատակաց: *Եւ ասէ 19
ցնոսա Ռափսակ. ասացէք ցԵզեկիայ.
այսպէս ասէ արքայ մեծ՝ արքայ ասո
րեստանեայց. զի՞նչ իցէ յոյսն՝ յոր
դու յուսացեալ իցես: *Բայց թէ 20
ասիցես՝ թէ բանք շրթանց՝ և խոր-
հուրդ՝ և զօրութի պիտոյ իցէ պատե
րազմի. և արդ յո՞ յուսացեալ նշկա-
հեցեր զիս: *Ահա յուսացեալ իցես 21
'ի ցուպն եղեգնեայ ջաղջախեալ յե-
գիպտոս. յոր թէ յենուցու այր. մտա
նիցէ ընդ ձեռս նր. և խոցիցէ զնա.
այնպէս փարաւոն արքայ եգիպտաց-
ւոց ամ յուսացելոց իւրոց: *Եւ զի 22
ասացեր ցիս՝ թէ 'ի Տր Ած յուսացեալ
եմք. ո՞չ դա այնէ. զորոյ մերժեաց
Եզեկիա զբարձունս նր. և զսեղանս
նր. և ասէ ցյուդայ. և ցերուսաղեմ.
առաջի սեղանոյս այսորիկ երկիր պա
գէք յերուսաղեմ: *Եւ արդ աղէ՝ 23
խառնեցարո՛ւք 'ի տէր իմ արքայ ասո
րեստանեայց. և տաց քեզ երկուս հա
զար երիվարաց. եթէ կարասցես տալ
դու քեզ հեծեալս 'ի վերայ նց: *Եւ 24
զի՞արդ կարիցես զդէմ ունիլ միոյ ու
րուք կուսակալի 'ի ծառայից տեառն
իմոյ 'ի յետնոց. զի յուսացեալդ ես յե
գիպտոս 'ի կառս և յերիվարս: *Իսկ 25
արդ՝ առանց Տն ինչ ելեալ իցեմք 'ի
տեղիս յայս ապականել զսա. Տր ա-
սաց ցիս. ել յերկիրն յայն. և ապակա
նեա զնա: *Եւ ասէ Եղիակիմ որդի 26
Քեղկեայ. և Սոմնաս՝ և Յովաք Ասա-
փայ ցՌափսակ. խօսեաց ընդ ծառայս
քո ասորերէն. քանզի լսեմք մեք. և

մի՛ խօսիր հրեարէն յականջս ժողովր
27 դեանդ. որք կան 'ի պարսպիդ: *Եւ
ասէ ցնս Ռափսակ. միթէ առ տէրն
քո՝ և առ քեզ առաքեաց զիս տէրն
իմ խօսիլ զբանս զայսոսիկ. ո՛չ ապա
քէն առ արսդ. որք նստին 'ի վերայ
պարսպիդ ուտել զաղբ իւրեանց. և
ըմպել զմէզ իւրեանց՝ ձեօք հանդերձ:
28 *Եւ յարեաւ Ռափսակ. և աղաղա-
կեաց մեծաձայն հրեարէն. և խօսե-
ցաւ՝ և ասէ. լուարո՛ւք զպատգամս
արքային մեծի. արքային ասորեստա
29 նեայց: *Այսպէս ասէ արքայ. մի՛
հպարտասցուսցէ զձեզ Եզեկիա. զի ոչ
կարէ ապրեցուցանել զձեզ 'ի ձեռաց
30 իմոց: *Եւ մի՛ յուսացուսցէ զձեզ
Եզեկիա 'ի Տր. և ասասցէ. եթէ փր-
կելով փրկէ զմեզ Տր. և ոչ մատնես-
ցի քաղաքդ 'ի ձեռս արքային ասորես
31 տանեայց: *Մի՛ լսէք Եզեկիայ. զի
այսպէս ասէ արքայն ասորեստանեայց.
արարէ՛ք ընդ իս օրհնութի. և ելէք
առ իս. և կերիցէ այր իւրաքանչիւր
զայգի իւր. և զթզենի իւր. և արբցէ
32 ջուր 'ի ջրհորոյ իւրումէ: *Մինչև եկից.
և առից. և տարայց զձեզ յերկիրն.
որ իբրև զերկիրս ձեր է. երկիր ցորե
նոյ՝ և գինւոյ. այգեաց՝ և հացի՝ եր-
կիր ձիթենեաց. իւղոյ՝ և մեղու: կե-
ցջիք. և ոչ մեռանիցիք. և մի՛ լսէք Եզե
կիայ. զի խաբէ զձեզ. և ասէ. եթէ
33 Տր փրկեսցէ զմեզ: *Միթէ փրկե-
լով փրկեցի՞ն աստուածք ազգացն
զիւրաքանչիւր զաշխարհ 'ի ձեռաց ար
34 քային ասորեստանեայց: *Ո՞ւր է աս
տուածն Եմաթայ. և Արփաթայ: և
ո՞ւր է աստուածն Սեփփարուիմայ՝ քա
ղաքին Անայ. և Աւայ: միթէ փրկե
ցի՞ն զՍամարիայ 'ի ձեռաց իմոց:
35 *Ո՞վ ոք յամ աստուծոց աշխարհաց,
որք փրկեցին զաշխարհս իւրեանց 'ի
ձեռաց իմոց. զի փրկեսցէ Տր զԵմ
36 'ի ձեռաց իմոց: *Եւ լռեցին. և ո՛չ
ետուն պատասխանի. զի պատուէր
տուեալ էր արքային. եթէ մի՛ տայք
37 նմա պատասխանի: *Եւ եմուտ Ե-
ղիակիմ որդի Քեղկեայ հազարապետ.
և Սոմնաս դպրապետ. և Յովաք որդի
Ասափայ. որ 'ի վր յիշատակաց առ Ե-
զեկիայ պատառեալ զհանդերձս. և
պատմեցին նմա զպատգամս Ռափ-
սակայ:

ԳԼ. ԺԹ.

1 Եւ եղև իբրև լուաւ արքայ Եզե- Ես.
կիա. պատառեաց զհանդերձս 37. 1.
իւր և զգեցաւ քուրձ. և եմուտ 'ի
2 տուն Տն: *Եւ առաքեաց զԵղիակիմ
հա-

հազարապետ՝ և զսմենաս դպրապետս.
և զծերս ի քահանայիցն քրձազգածս
առ եսայի մարգարէ որդի ամովսայ։
* Եւ ասեն ցնա. այսպէս ասէ եզեկիա, 3
օր նեղութեան, և կշտամբանաց. և զայ
բացուցանելոյ օրս այս. զի հասեալ են
մանկունք յերկունս. և չիք զօրութեան
ի ծնանելիս ։ * Թերևս լուիցէ Ա.Ծ 4
քո զպատգամս ռափակայ. զոր առա
քեաց արքայն ասորեստանեայց տէր
իւր՝ նախատել զՄ.Ծ կենդանի՝ և հայ
հոյել բանից. զորս լուաւ Տ Ա.Ծ քո.
և արասցես աղօթս ի վերայ մնացորդ
դաց՝ որք մնացին ։ * Եւ եկին ծա 5
առայք արքային եզեկիայ՝ առ եսայիա ։
* Եւ ասէ ցնոսա եսայի. այսպէս ասաս 6
ջիք տեառն ձերում. այսպէս ասէ Տ.
մի երկնչիր յերեսաց պատգամացն՝
զորս լուար՝ որովք հայհոյեցին զիս
ծառայք արքային ասորեստանեայց ։
* Ա.հա ես տամ ի նա այս. և լուիցէ 7
գոյժ. և դարձցի յերկիր իւր. և կոր
ծանեցից զնա սրով յերկրի իւրում ։
* Եւ դարձաւ ռափակ՝ և եգիտ զար 8
քայն ասորեստանեայց պատերազմեալ
ընդ ղօբնայի. զի լուաւ թէ չուեաց
ի ղաքիսայ ։ * Եւ լուաւ զԹարակայ 9
արքայէ եԹիովպացւոց. ասեն՝ ահա
ել պատերազմիլ ընդ քեզ. և դարձաւ
անդրէն՝ և առաքեաց հրեշտակս առ
եզեկիա և ասէ ։ * Ա.յսպէս խօսեսջիր 10
ընդ եզեկիայ արքայի յուդայ. ասել՝
մի՛ հպարտացուսցէ զքեզ Ա.Ծ քո. յոր
դուն յուսացեալ ես. ասել՝ եԹէ ոչ
մատնեսցի եիմ՝ ի ձեռս արքային ասո
րեստանեայց ։ * Ա.հա դու քեզէն իսկ 11
լուար զինչ՝ զոր արարին Թագաւ
որք ասորեստանեայց ընդ ամենայն աշ
նզովել զնոսա. և դու փրկիցիս ։ * Ա՞ի 12
Թէ փրկեցի՞ն զնոսա աստուածք ազ
գաց՝ զորս ապականեցին Հարք իմ,
զԳովզան՝ և զՔառան՝ և զՌափեթ.
և զորդիսն եդովմայ առ Ծովէզերբ ։
* Ո՞ւր է արքայն Եմաթայ՝ և արքայն 13
արփադայ. և արքայ քաղաքին սե
փարուիմայ՝ անայ և աւայ։ * Եւ եհան 14
եզեկիա զՀրեշտակսն՝ ի ձեռաց
հրեշտակացն. և ընթերցաւ զնոսա.
և ել՝ ի տուն Տ՛ն. և տարածեաց զնս
եզեկիա առաջի Տ՛ն ։ * Եւ եկաց յա 15
ղօթս եզեկիա առաջի Տ՛ն և ասէ. Տ
Ա.Ծ իսրայէլի ։ որ նստիս ի քերովբէս. դու
ես միայն Ա.Ծ յամենայն Թագաւորութիւնս
երկրի. դու արարեր զերկինս և զեր
կիր ։ * Խոնարհեցո՛ Տ՛ն զունկն քո՝ և 16
լո՛ր. բա՛ց Տ՛ն զաչս քո՝ և տե՛ս. լո՛ր
զբանսն սենեքերիմայ՝ զոր առա
քեաց նախատել զՄ.Ծ կենդանի։

17 * Ո՛չ արդարև Տ՛ն՝ աւերեցին Թա
գաւորք ասորեստանեայց զաղգս և
18 զերկիրս նո՛ց։ * Եւ եառն զաստուածս
նոցա հրով. զի չէին աստուածք, այլ
գործք ձեռաց մարդկան. փայտ՝ և
19 քար. և կորուսին զնոսա։ * Եւ արդ
Տ՛ն Ա.Ծ մե՛ր՝ փրկեա զմեզ՝ ի ձեռաց
նորա. և ծանիցեն ամ՛ Թագաւորք
երկրի, զի դու ես Տ՛ն Ա.Ծ միայն ։
20 * Եւ առաքեաց եսայիա որդի ամով
սայ առ եզեկիայ՝ և ասէ. այսպէս ասէ
Տ՛ն Ա.Ծ զօրութեանց՝ Ա.Ծ իսրայէլի՝ զոր
կացեր յաղօթս առիս՝ վն սենեքե
րիմայ արքայի ասորեստանեայց՝ լուա
21 յ։ * Ա.յս բանն՝ զոր խօսեցաւ Տ՛ն վն
նորա. արհամարհեաց. անգոսնեաց
զքեզ կոյս դուստր սիովնի. գլուխ շար
ժեաց՝ ի վերայ քո դուստր երուսաղէմի ։
22 * Օ՛ն նախատեցեր. և հայհոյեցեր.
և յո՞ի վերայ բարձրացուցեր զբար
բառ քո՝ նախատել. և ամբարձեր՝ ի
բարձունս զաչս քո՝ ի սուրբն Իլի ։
23 * Ի ձեռն հրեշտակաց քոց նախատե
ցեր զՏ՛ն՝ և ասացեր. բազմութեամբ կա
ռաց իմոց ելի՝ ի բարձրութիւն լերանց
՝ի կողմն լիբանանու. և կոտորեցի զմե
ծութիւն եղևնափայտից նր. և զընտիր
ընտիր նոձից նորա. և հասի յեզը
սպառուածոյ անտառին կարմելոյ ։
24 * Եւ պահեցի՝ և արբի զջուրս օտա
րոտիս. և աւերեցի Թաթիմ ոտին ի
25 մոյ զամ գետս սատակիս ։ * Ո՞րպէս
լսեցե՛ լուեալ՝ ի հեռաստանէ զայդ՝ զոր
արարի յաւուրց յառաջնոց. ստեղծի
զդա՝ և ածի՝ հասուցի. և եղեն՝ ի
հպարտութիւն գերեվարաց պատերազ
26 մողաց քաղաքաց ամուրց ։ * Եւ նահակեաց
՝ի նոսա տկարացան ձեռամբ՝ և զար
հուրեցան. և ամաչեցին՝ և եղեն իբ
րև զխոտ վայրի՝ և իբրև զդալարի
բանջարոյ՝ և զդալարի տանեաց՝ և կո
27 խան առաջի հասելոյն ։ * Ա.րդ՝ զնա
տիլ քո՝ և զել և զմուտ քո գիտեմ. և
28 զսրտմտութիւն քո ։ * Ի բարկանալ
քում՝ ինձ՝ և խայտալդ քո ել յականջս
իմ. և արկից կարթ՝ ի քիւիւս քո. և
դանդանաւանդ՝ ի կզակս քո. և դար
ձուցից զքեզ ընդ ճանապարհ, ընդոր
29 եկիր ։ * Եւ քեզ այս նշանակ լինի. * Եզ ոՀ
կերիցես յայս ամ զինքնաեկս. և յամին եղէկիա
երկրորդի զինքնաեկաց լինքնեկս. և յա
մին երրորդի սերմանք՝ և հունձք՝ և
տունկք այգեաց. և կերիջիք զպտուղս
30 նո՛ց։ * Եւ յաւելցի ապրեալ տանդ յու
դայ. և ծնցեն արձակեսցէ ար
մատս՝ ի խոնարհ. և պտուղ՝ ի վեր։
31 * Օ՛ի յԵրեմէ ելցէ մնացորդ. և՝ ի սիո
նէ լեռնէ ապրեալ. նախանձ Տ՛ն զո
րու

բութեանց արասցէ զայս ։ * Վասն այ_ 32
նորիկ այսպէս ասէ Տր․ արքայն ասո_
րեստանեայց մի՛ մտցէ 'ի քաղաքդ յայդ․
և մի՛ ձգեսցէ դմա նետս ․ և մի՛ պա_
տեսցէ զդա վահանօք․ և մի՛ կուտես_
ցէ զդովաւ հող ։ * Ընդ ճանապարհն 33
ընդ որ եկն՝ ընդ նոյն դարձցի ․ և 'ի
քաղաքդ յայդ մի՛ մտցէ․ ասէ Տր ։
* Եւ վերակացու եղէց քաղաքիդ այդ_ 34
միկ փրկել զդա վն իմ, և վն դաւթի
‖ Տոբ․ ծառայի իմոյ ։ * ‖ Եւ 'ի հասանել գի_ 35
1.21. շերոյն ել հրեշտակ Տն․ և եհար 'ի բա
Սիրաք․ նակն ասորեստանեայց հարիւր ութ
48. 24. սուն և հինգ հազար․ և կանխեցին ը̄
Եսայ․ առաւօտն ․ և ահա ա̄մ մարմինք մե_
37. 36. ռեալք ։ * Եւ չուեալ գնաց ․ և դար_ 36
1. Մակ․ ձաւ սենեքերիմ արքայ ասորեստան_
7.41. եայց՝ և բնակեցաւ 'ի նինուէ ։* ‖ Եւ ե_ 37
‖ 2. Մակ․ ղև մինչդեռ երկիր պագանէր 'ի տան
8.19. նեսրաքայ աստուծոյ իւրում․ ‖ և ադ
‖ Տոբ․ րամելէք և սարասար որդիք նր հա_
1.24. րին զնա սրով ․ և ինքեանք զերծան
յերկիրն արարադայ ․ և թագաւո_
րեաց ասորդան որդի նր ընդ նորա ։

ԳԼ ։ Ի ։

‖ 2. Մնաս․ Յաւուրսն ‖ յայնոսիկ հիւանդա_ 1
32. 24. ցաւ եզեկիա 'ի մահ ․ և եմուտ
Եսայ․ առ նա եսայիա որդի ամոսայ մարգա
38.1. րէ, և ասէ ցնա ․ այսպէս ասէ Տր․ հրա
մա̄ն տուր վն տան քում․ զի մեռանիս
դու ․ և ոչ ապրեսցիս ։ * Եւ դարձոյց 2
եզեկիա զերեսս իւր յորմն․ և եկաց
յաղօթս առ Տր՝ և ասէ ։ * Ով Տէր՝ 3
յիշեա․ որպ գնացի առաջի քո ճշմար_
տութբ․ և կատարեալ սրտիւ․ և զբա
րին առաջի քո արարի․ և ելաց եզե_
կիա լալիւն մեծ ։ * Եւ էր եսայի 'ի 4
սրահին միջնում․ և բան Տն եղև առ
նա՝ և ասէ ․* Դարձիր անդրէն․ և ա_ 5
սասցես ցեզեկիա ցառաջնորդ ժողո_
վրդեան իմոյ ․ այսպէս ասէ Տր Ա̄Ծ
դաւթի հօր քոյ․ լուայ աղօթից քոց ․
և տեսի զարտասուս քո․ ահա ես բժշ
կեցից զքեզ․ և յաւուրն երրորդի ել_
ցես 'ի տուն Տն ։ * Եւ յաւելից յաւ_ 6
ուրս քո ամս հնգետասան․ և 'ի ձեռաց
արքային ասորեստանեայց փրկեցից
զքեզ, և զքաղաքդ զայդ․ և վերակա
ցու եղէց քաղաքիդ այդմիկ վն իմ․ և
վն դաւթի ծառայի իմոյ ։ * Եւ ասէ 7
եսայիա ․ առցեն պաղատիտս թզոյ․ և
Չոր եբրա առաւ․ և դիցես 'ի վր վիրին՝ և ողջաս
բերին և ցի ։ * Եւ ասէ եզեկիա ցեսայիա․ զինչ 8
եդին 'ի նշան է եթէ բժշկեսցէ զիս Տր․ և ե_
վերայ վէ լանիցեմ 'ի տուն Տն յաւուր երրորդի։
րին նորա, * Եւ ասէ եսայիա․ այս նշան է 'ի Տէ․ 9
ողջացաւ զի արասցէ Տր զբանն, զոր խօսեցաւ․
երթիցէ ստուերն զտասն աստիճանօք։
10 * Եւ ասէ եզեկիա ․ դիւրին է ստուե
րին դառնալ զտասն աստիճանօք․ ոչ եթէ
այդպէս է․ այլ դարձցի ստուերն ըզ
տասն աստիճանօք անդրէն յետս ։
11 * Եւ աղաղակեաց եսայի մարգարէ
առ Տր․ և դարձաւ ստուերն զտասնե
քումբք աստիճանօքն անդրէն յետս․
զտասնեքումբք աստիճանօքն աքա_
12 զու ։ * ‖ 'Ի ժամանակի յայնմիկ առա_ ‖ Եսայ․
քեաց մարոդաք բաղադան որդի 39.1.
բաղդանայ արքայ բաբելոնի հրո_
վարտակս՝ և պատարագս առ եզե_
կիայ․ զի լուաւ թէ հիւանդացաւ ե_
13 զեկիա ։ * Եւ ուրախ եղև 'ի նս եզե
կիա․ և եցոյց նց զա̄մ տունս նաքով
թայ․ զարծաթ․ և զոսկի․ և զխունկս․
և զիւղս անուշունս․ և զտունս անօ_
թոց․ և որ ինչ գտանիւր 'ի գանձս նր․
և ոչ էր տեղի․ զոր ոչ եցոյց նոցա եզե
կիա 'ի տան իւրում․ և յամ իշխանութե
14 իւրում ։ * Եւ եմուտ եսայիա մարգա
րէ առ արքայ եզեկիայ և ասէ ցնա ․
զինչ խօսեցան արքդ այդորիկ․ և ուս
տի եկին առ քեզ ։ և ասէ եզեկիա ․
յերկրէ հեռաստանէ եկին առ իս 'ի
15 բաբելոնէ ։ * Եւ ասէ զինչ տեսին 'ի
տան քում ։ և ասէ եզեկիա․ զա̄մ ինչ
որ 'ի տան իմում էր՝ տեսին․ և ոչ ինչ
էր 'ի տան իմում, զոր ոչ ցուցի նոցա․
16 այլ և ոչ 'ի գանձս իմ ։ * Եւ ասէ եսայի
17 ցեզեկիայ․ լուր զբան Տն ։ * Ահա ա_
ւուրք գան․ և առցի ա̄մ որ ինչ 'ի տան
քումդ․ և զոր ինչ գանձեցին հարքն
քո մինչև ցայսօր․ և երթիցէ 'ի բաբե
լոն․ և մի՛ ինչ մնասցէ․ զի բանն է՝ զոր
18 խօսեցաւ Տր ։ * Եւ որդիք քո, որք ե_
լանիցեն 'ի քէն՝ առցին․ և եղիցին ներ
քինիք 'ի տան արքային բաբելացւոց ։
19 * Եւ ասէ եզեկիա ցեսայիայ․ բարիէ
բանն Տն․ զոր խօսեցաւ ։ և ասէ՝ եղի
ցի խաղաղութի և ճշմարտութի յաւ_
20 ուրս իմ ։ * Եւ մնացորդք բանից ե_
զեկիայ՝ և ա̄մ զօրութի նորա ․ և որ
արար զջրաբուղխսն․ և զջրմուղն․ և
եած ջուր 'ի քաղաքն ․ ոչ ահաւասիկ
գրեալ են 'ի գիրս աւուրց թագաւո_
21 րաց յուդայ ։ * Եւ ննջեաց եզեկիա
ընդ հարս իւր ․ և թագաւորեաց մա
նասէ որդի նորա ընդ նորա ։

ԳԼ ։ ԻԱ ։

1 Որդի ‖ երկոտասանից ամաց մանաս ‖ 2. Մնաս․
էէ 'ի թագաւորել իւրում ։ և յի_ 33.1.
սուն և հինգ ամ թագաւորեաց յերու_ և 4.
սաղէմ․ և անուն մօր նր եփսիբայ ։
2 * Եւ արար չար առաջի Տն․ ըստ գար
շութեանց ազգացն․ զորս եբարձ Տր յե_
րեսաց

բեսաց որդւոցն Իլի ։ * ‖ Նէ զարձաւ 3
և շինեաց զբարձունս · զորս կործա-
նեաց եղեկիա հայրն նր · և կանգնեաց
զսեղանն բահաղու և արար անտառս.
ոյզ արար աքաաբ արքայ Իլի ։ և երկիր
եպագ ամ զօրութե երկնից · և ծա-
ռայեաց նոցա ։ * Նէ շինեաց սեղան ի 4
տան Տ̃ն · ոյզ ասաց Տ̃ր · ‖ յերեմ եզիպ
զանթոռ իմ ։ * Նէ շինեաց սեղան ամ 5
զօրութե երկնից յամ սրահս տանն
Տ̃ն ։ * Նէ անցոյց զորդիս իւր ընդ 6
հուր · և մնայեր · և հաճահարց լիներ ·
և արար վհուկս · և գեաս · և յաձա-
խեաց առնել զբար առաջի Տ̃ն առ ի
բարկացուցանելոյ զնա ։ * Նէ եդ զկ 7
դրօշեալն անտառաց ի տան Տ̃ն · ‖ զոր
ասաց Տ̃ր ցդաւիթ և ցսաղոմոն
որդի նր · թէ ի տանս յայսմիկ և յե-
րուսաղէմ. զոր ընտրեցի յամ ցեղից
Իլի , եզից զանուն իմ յաւիտեան ։
* Նէ ոչ յաւելից շարժել զոտն Իլի 8
յերկրէդ · զոր ետու հարց նոցա ։ որք
զգուշանայցեն առնել զամ · որինչ
պատուիրեցի նմ · ըստ ամ պատուի-
րանին · զոր պատուիրեաց նմ Ծառայ
իմ Մովսէս ։ * Նէ ոչ լուան ։ և մոլորե- 9
ցոյց զնոսա մանասէ առնել չար առա
ջի Տ̃ն առաւել քան զազգն , զորս ա-
պականեաց Տ̃ր յերեսաց որդւոցն
Իլի ։ * Նէ խօսեցաւ Տ̃ր ի ձեռն Ծա- 10
ռայից իւրոց մարգարէից՝ և ասէ ։
‖ յեր. * ‖ Փոխանակ զի արար մանասէ ար- 11
15.4. քայ յուդայ զգարշելիսդ զայդոսիկ ,
զչար՝ առաւել քան զամ · զոր արար
ամբհայեն առաջի իմ։ և յանցեաւ և
յուդայ կռովք իւրեանց ։ * Ա ն այնո 12
րիկ այսպէս ասէ Տ̃ր Ա̃ծ Իլի ։ ահա
ես աճեմ չարիս ի վրն երուսաղէմի. և
ամ որ ի վրն յուդայ · զի ամի որ եղիցի · հնչես
ջեն երկոքին ականջք իւր ։ * Նէ ձգե 13
ցից ի վրն եճմի զչափն սամարիայ . և
զկշիռ տանն աքաաբայ . և ջնջեցից
զեճմ ոյզ զկշիռ մի ջնջեալ · որ կործա
նեսցի ի վրն երեսաց իւրոց ։ * Նէ մեր 14
ժեցից զմնացորդս ժառանգուե իմոյ ·
և մատնեցից զնս ի ձեռս թշնամեաց
իւրեանց · և եղիցին ի յափշտակուի
և յաւար ամ թշնամեաց իւրեանց ։
* Փոխանակ զի արարին չար առաջի 15
իմ. և բարկացուցանէին զիս յօրէ յոր
մինչեւ հանի զնս յեգիպտոսէ մինչև
ցայսօր ։ * Եւ զարիւն անպարտս է- 16
հեղ մանասէ բազում յոյժ · մինչև եղիցի
զեճմ ի ծայրէ ի ծայր ։ թմղ զմեղս
իւր · որով մեղոյցն զյուդայ առնել
չար առաջի Տ̃ն ։ * Նէ մնացորդք բա- 17
նից մանասէի և ամ ինչ զոր արար · և
մեղք նորա՝ զորս մեղաւ՝ ոչ ամանիկ
են

գրեալ են ի գիրս բանից աւուրց թա
գաւորացն յուդայ ։ * Նէ ննջեաց մա 18
նասէ ընդ հարս իւր · և թաղեցաւ ի
պարտիզի տան իւրոյ՝ ի պարտիզին
ոզայ ։ և թագաւորեաց ամիմն որդի
նր ընդ նորա ։ * Որդի քսանևերկուց 19
ամաց ամիմն ի թագաւորել իւրում.
և երկուտասան ամ թագաւորեաց յե
րուսաղէմ. և անուն մօր նորա մեսոլ
միթ՝ դուստր արուսայ յետեքաղայ ։
* Նէ արար չար առաջի Տ̃ն. ոյզ արար 20
մանասէ հայր նորա ։ * Նէ գնաց յամ 21
ճանապարհ՝ յոր գնաց հայր նորա · և
պաշտեաց կիւռս · զորս պաշտեաց
հայր նր · և երկիր եպագ նց ։ * Նէ ե- 22
թող զՏ̃ր Ա̃ծ հարց իւրոց · և ոչ գնաց
ի ճանապարհ Տ̃ն ։ * Նէ գումարե- 23
ցան ծառայք ամիմնայ ի վրն նորա · և
սպանին զարքայ ի տան իւրում ։ * Նէ 24
եհար ամ ժողովուրդն զամ գումա
րեալսն ի վրն արքային ամիմնայ. և թա
գաւորեցուցեալ ժողովուրդ երկրին զյո
սիայ որդի նր ի նր ։ * Նէ մնացորդք 25
բանից ամիմնայ զոր արար · ոչ ա՞ա
նիկ գրեալ են ի գիրս բանից աւուրց
թագաւորացն յուդայ ։ * Նէննջեաց 26
ամիմն ընդ հարս իւր · և թաղեցին
զնա ի գերեզմանի իւրում ի պարտի
զին ոզայ ։ և թագաւորեաց յօսիա
որդի նորա ընդ նորա ։

ԳԼ. ԻՒ.

1 Որդի ‖ ամաց ութից յօսիա ի թա- ‖2.Պնա
գաւորել իւրում. և երեսուն և 34.1.
մի ամ թագաւորեաց յեռ. և անուն
մօր նորա յեդիդա · դուստր յեդ իդայ հոպայե
2 ի բասուրովթայ ։ * Նէ արար ուղղու
թի առաջի Տ̃ն. և գնաց յամ ճանա
պարհս դաւթի հօր իւրոյ · և ոչ խոտո
3 րեցաւ յաջ կամ յահեակ ։ * Նէ եղև
յամի ութևտասներորդի յօսիայ ար
քայի յուդայ · յամսեանն եօթներոր
դի առաքեաց արքայ զսափան զորդի
եսելիայ որդւոյ մեսոլամայ զդպրա
4 պետ տանն · և ասէ ։ * Նէ ըթ առ քեղ հաւա
կէայ քահանայ մեծ · զի ձուլեսցեն զորդ
զարծաթն մտեալ ի տունն Տ̃ն · զոր ժողովեցին պահապանքն կշռով ի ժո
5 ղովրդենէն ։ * Նէ տացեն զայն ի
ձեռս գործաւորաց գործոյն ցվերա
կացուս տանն Տ̃ն · և ետուն ցգործաւ
որս գործոյն ի տան Տ̃ն զօրացուցա
6 նել զբեդեկ տանն Տ̃ն ։ * Ցհիւսուն.
և ցշինօղս. և ցձարտարս. գնել փայտ.
և քարինս կոփածոյս՝ առ ի կազմել
7 զբեդեկ տանն Տ̃ն ։ * Բայց ոչ առ
նէին համար արծաթոյն տուեալ նց.
8 քանզի յաճառ գործէին ։ * Նէ ասէ
քեղ-

քեղկեա քահնայ մեծ ցսափան գպրա
պետ ։ մատեան օրինաց գտի ՚ի տան
Տ֊ն ։ և ետ քեղկեա ցսափան. և ընթերց
ցաւ զայն ։ * Եւ տարաւ առ արքայ 9
զպատգամն ։ և ասէ. ձուլեցին ծա֊
ռայք քո զարծաթն գտեալ ՚ի տան
Տ֊ն. և եւտուն զայն ՚ի ձեռս գործաւո֊
րացն գործոյն՝ վերակացուաց ՚ի տան
Տ֊ն ։ * Եւ խօսեցաւ սափան գպրա֊ 10
պետ ընդ արքայի՝ և ասէ. մատեան մի
ետ ինձ քեղկեա քահանայ ։ և ընթերց
ցաւ զայն սափան առաջի արքային ։
* Եւ եղև իբրև լուաւ արքայ զբանս 11
մատենի օրինացն. պատառեաց զհան
դերձս իւր ։ * Եւ պատուիրեր ետ ար֊ 12
քայ քեղկեայ քահանայի. և աքիկա֊
մայ որդւոյ սափանայ. և աքոբորայ
որդւոյ միքեի. և սափանայ գպրապե
տի. և յասայեայ ծառայի արքային՝ և
ասէ ։ * Երթայք խնդրեցէք ՚ի Տ֊ն վե֊ 13
ւմ և վե֊ւմ ժողովրդեանդ՝ և վասն
ամ՛ յուդայ. և վե֊ւ բանից մատենիդ
գտելոյ այդորիկ ։ զի մեծ բարկութի֊ւն
Տ֊ն բորբոքեալ է ՚ի մեզ. փոխանակ զի
ոչ լսեան հարք մեր բանից մատենիդ
այդորիկ առնել ըստ ամ՛ գրելոյդ
վմեզ ։ * Եւ գնաց քեղկեա քահանայ. 14
և աքիկամ. և աքոբուղ. և սափան. և
յասայեա. առ ողդա մարդարէ կին
սելումայ որդւոյ թեկուէայ. որդւոյ
արաասայ պատմուճանակի ։ և նա բնակեր
յերեմ՛ ՚ի մատենայ ։ և խօսեցան ընդ նմա֊
* Եւ ասէ ցնա. այսպէս ասէ Տ֊ր Ա֊ծ 15
ելի. ասացէք ցայրն. որ առաքեաց
զձեզ առ իս ։ * Այսպէս ասէ Տ֊ր. ահա 16
ածեմ չարիս ՚ի վերայ տեղւոյդ այդո֊
րիկ. և ՚ի վե֊ւ բնակչաց դորա. ըստ ամ՛
բանից մատենին. զոր ընթերցաւ ար֊
քայ յուդայ ։ * Փոխանակ զի թողին 17
զիս. և արկանէին խունկս աստուածոց
օտարաց. զի բարկացուցանէն զիս գոր
ծովք ձեռաց իւրեանց. և բորբոքեաս
ցի սրտմտութի֊ւն իմ՛ ՚ի տեղւոյդ այդ֊
միկ. և մի՛ շիջցի ։ * Եւ ցարքայ յու֊ 18
դայ՝ որ առաքեաց զձեզ խնդրել զՏ֊ր.
զայս ասասջիք. այսպէս ասէ Տ֊ր Ա֊ծ
իլի ։ բանքն՝ զոր լուար. այսոքիկ են ։
* Փոխանակ զի կակղացաւ սիրտ քո. 19
և պատկառեցար յերեսաց Տ֊ն. իբրև
լուար զինչ խօսեցաւ ՚ի վե֊ւ տեղւոյդ
այդորիկ. և ՚ի վե֊ւ բնակչաց դորա լինել
յապականութի֊ւն և յանէծս. և պատա
ռեցեր զհանդերձս քո. և լացեր առաջի
իմ. և ես լուայ՝ ասէ Տ֊ր ։ * Վ֊ւ այդորիկ 20
ես յաւելում զքեզ առ հարս քո. և ժո
ղովեսցիս ՚ի տեղւոյդ բոմ՛ յերեմ. և ոչ
տեսցեն աչք քո զամ՛ չարիսն. զոր ես
ածից ՚ի վերայ տեղւոյդ այդորիկ ։

Գ։ Լ։ ԻԳ։

1 Եւ դարձուցին արքայի զպատ֊
գամն. զոր յղեաց արքայ ։ || և ժո || 2.Պտ.
ղովեաց առ ինքն զամ՛ ծերս յուդայ՝ 34. 28.
2 և եկն ։ * Եւ եել արքայ ՚ի տունն Տ֊ն.
և ամ՛ այր յուդայ՝ և ամ՛ բնակիչք
եկն ընդ նմա. և քահանայք՝ և մար֊
գարէք՝ և ամ՛ ժողովուրդն ընդ նմա
՚ի փոքրուէ մինչև ցմեծ. և ընթերցաւ
յականջս նոցա զամ՛ բանս մատենի
3 ուխտին գտեալ ՚ի տան Տ֊ն ։ * Եւ ե֊
կաց արքայ ՚ի վե֊ւ սեանն. և ուխտեաց
ուխտ առաջի Տ֊ն երթալոյ զհետ Տ֊ն
և պահելոյ զպատուիրանս նորա, և
զվկայութիս նո՛ և զիրաւունս նո՛ յամ՛
սրտէ՝ և յամ՛ անձնէ. կանգնել զբանս
ուխտին գրելոյ ՚ի մատենի յայնմիկ. և
4 եկաց ամ՛ ժողովուրդն յուխտ ։ * Եւ
պատուիրեր ետ արքայ քեղկեայ քահա
նայի մեծի. և քահանայիցն երկրոր֊
դաց. և պահապանաց կշռոցն՝ || հա֊ աեմոդ
նել ՚ի տաճարէն Տ֊ն զամ՛ անօթ գոր֊ || Իշ.
ծեալ բահաղու. և անտառաց. և զօ֊ 49. 3.
րութեց երկնից. և այրեաց զնո՛ ար֊
տաքոյ եր֊մ. ՚ի սադեմօթ կեդրօնի. և
5 եարկ զմնխիր նց՛ ՚ի բեթէլ ։ * Եւ այ֊
րեաց զքուէմարիմն. զոր տուեալ եր
արքային յուդայ՝ և արկանէին խունկս
՚ի բարձունս. և յամ՛ քաղաքս յուդայ՝
և շուրջ զեր֊մ. և զկնկարկուսն ա֊
րեգական՝ և լուսնին՝ և աստեղաց՝ և
6 ամ՛ զօրուէ երկնից ։ * Եւ եհան զան
տառն ՚ի տանէ Տ֊ն արտաքոյ եր֊մ ՚ի
հեղեղատն կեդրօնի. և այրեաց զայն
՚ի հեղեղատին կեդրօնի. և մանրեաց
իբրև զփոշի. և ցանեաց զմնխիրն նո՛
՚ի գերեզմանս որդւոց ժողովրդեանն։
7 * Եւ քակեաց զտուն կադէսիմացն.
որ ՚ի տան Տ֊ն յորում կանայքն անկա
նէին զպատմուճանս անտառացն ։
8 * Եւ եհան զամ՛ քուրմսն ՚ի քաղաքէն
յուդայ. և պղծեաց զբարձունսն. յոր
արկանէին խունկս քուրմքն ՚ի գա֊
բաայ մինչև ցբերսաբէէ. և քակեաց
զտուն դրանցն. որ առ դրանաւոջ պէչան
դրանն յեսուայ իշխանի դրան ՚ի ձախ
9 մ֊ւ առ դրան քաղաքին ։ * Սակայ ոչ
եղանէին քուրմք բարձանց ՚ի սեղան
Տ֊ն. որ յեր֊մ, եթէ ոչ ուտէին բաղարջ
10 ՚ի մէջ եղբարց իւրոց ։ * || Եւ պղծեաց || Ա. Եսա.
զթոփոթ. որ ՚ի ձոր որդւոցն ենոմայ 18. 21.
առ՛ ՚ի չածելոյ առն զուստր իւր կամ
11 զդուստր զոցով մեղքովմայ ։ * Եւ
այրեցին զձիան. զոր ետ արքայն յու֊
դայ արեգական՝ ՚ի մուտս տանն Տ֊ն՝ ՚ի
գանձանակին նաթանայ ներքինւոյ ար
քայի. որ ՚ի փարուրիմ. և զկառսն արե
գա֊

դական այրեաց հրով: *Եւ զսեղանս· 12
որ 'ի վերայ տանեաց վերնատանն· զոր
արարին թագաւորքն յուդայ· եւ զսե_
ղանս՝ զորս արար մանասէ յերկուս
սրահս տանն Տն: եւ քակեաց զայն ար
քայ· եւ կործանեաց անտի· եւ ընկէց
զհողն նց 'ի հեղեղատն կեդրոնի: *Եւ 13
եւ զտունն· որ 'ի դիմաց եէմի ընդ աջ
||3 Թագ մէ լերինն մոսաթայ· ||զոր շինեաց սա
11.7. ղոմոն արքայ իէլի աստարտայ գարշե_
լոյ սիդոնացւոյ· եւ քամովսայ զազրո
ւոյ մովաբայ· եւ մեղքոմայ գարշե_
լոյ որդւոցն ամմոնայ՝ պղծեաց ար_
քայ: *Եւ խորտակեաց զարձանսն· 14
եւ կոտորեաց զանտառսն· եւ ելից զտե
||3 Թագ ղիս նոցա ոսկերօք մարդկան: *||Եւ 15
13.32. զսեղանն որ 'ի բեթէլ զբարձր· զոր
արար յերոբովամ որդի նաբատայ· որ
մեղոյց զիէլ· եւ զայն եւս սեղան զբարձր
կործանեաց· եւ խորտակեաց զքարինս
նորա· եւ մանրեաց 'ի փոշի· եւ այրեաց
զանտառն: *Եւ հայեցաւ յովսիա· եւ 16
ետես զգերեզմանս՝ որք 'ի քաղաքին·
եւ առաքեաց, եւ էառ զոսկերսն 'ի գե
րեզմանացն՝ եւ այրեաց 'ի վր սեղա_
նոյն· եւ պղծեաց զնա ըստ բանին Տն·
զոր խօսեցաւ այրն Այ· մինչ կայր յե_
րոբովամ 'ի տօնին 'ի վր սեղանոյն: եւ
դարձոյց զաչս իւր 'ի գերեզման առնն
Այ· որ խօսեցաւ զբանս զայսոսիկ:
||3 Թագ *||Եւ ասէ՝ զինչ է կոթողն այն՝ զոր 17
13.2. ես տեսանեմ: եւ ասեն ցնա արք քաղա
քին· այրն Այ է՝ որ եկն 'ի յուդայէ·
եւ բարբառեցաւ զբանս զայսոսիկ 'ի
վր սեղանոյն բեթելայ: *Եւ ասէ· 18
թոյլ տուք զայն· մի ոք շարժեսցէ զոս
կերս նր: եւ դտան ոսկերք նր ընդ ոս_
կերս մարգարէին եկելոյ 'ի սամարիայ:
*Եւ եւ զամ տունս բարձանց· զորս 19
'ի քաղաքս սամարիայ արարին թա_
գաւորքն իէլի առ 'ի բարկացուցանելոյ
արքայ զՏր, մերժեաց յովսիա արքայ իէլի· եւ
յուդայ արար ըստ ամ գործոցն· զոր արար 'ի
բեթէլ: *Եւ զենզեններաց զամենայն 20
քուրմս բարձանցն· որք էին անդ 'ի վր
սեղանոյն: եւ այրեաց զոսկերս մարդ_
կան 'ի վր նց· եւ դարձաւ յեէմ: *Եւ 21
պատուէր ետ արքայ ամ ժողովրդ_
||2.Մնա եանն՝ եւ ասէ· Արարէք զատիկ Տն այ
35.1. մերում· որպս եւ գրեալ է 'ի մատենի ուխ
տիս այսորիկ: *Զի ոչ եղեւ զատիկն 22
այն յաւուրց դատաւորացն· որք դա_
տէին զիէլ՝ եւ յաւուրս թագաւորացն
իէլի· եւ թագաւորացն յուդայ: *Այլ 23
զի յութուտասներորդի ամի արքային
յովսիայ եղեւ զատիկն այն Տն յեէմ:
*Եւ զվհուկս՝ եւ զգէտս՝ եւ զթերա_ 24
փիմս՝ եւ զկուռսն՝ եւ զամ գարշելիսն

եղեալս 'ի յուդայ· եւ յեէմ, եբարձ յո_
սիա· զի հաստատեսցէ զբանս օրի_
նացն գրելոց 'ի մատենին· զոր եգիտ
25 քեղկեա քահանայ 'ի տան Տն:*Եւ նման
նմա ոչ եղեւ յառաջքան զնա թագաւ
որ· որ դարձաւ առ Տր յամ սրտէ իւր
մէ· եւ յամ անձնէ իւրմէ· եւ յամ զօրու
թէ իւրմէ· ըստ ամ օրինացն մովսէսի:
26 եւ յետ նր ոչ եկաց նման նմա: *Սա_
կայն ոչ դարձաւ Տր 'ի սրտմտութենէ
բարկութե իւրոյ մեծէ· զոր սրտմտե
ցաւ բարկութբ իւրով 'ի վր յուդայ
վն զայրացութեցն· որովք զայրացոյց
27 զնա մանասէ: *||Եւ ասէ Տր· նաեւ ||Ա Մնա.
զյուդայ մերժեցից յերեսաց իմոց՝ որպս 24.2.
մերժեցի զիէլ: եւ մերժեցից զքաղաքդ
զայդ· զոր ընտրեցի զեէմ· եւ զտունդ
զորմէ ասացի թէ դիցի անուն իմ անդ:
28 *Եւ մնացորդք բանիցն յովսիայ՝ եւ ամ
ինչ զոր արար· ոչ ահաւասիկ գրեալ են
'ի գիրս բանից աւուրց թագաւորացն
29 յուդայ: *||Յաւուրս յայնոսիկ ել ||2.Մնա
փարաւոն նեքաւով արքայ եգիպտա_ 35.20.
ցւոց 'ի վր արքային ասորեստանեայց
առ եփրատ գետով· եւ գնաց յովսիա
արքայ ընդ առաջ նորա· եւ սպան զնա
'ի մակեդով 'ի տեսանելն նորա զնա:
30 *Եւ բարձին զնա ծառայքն նր 'ի մա
կեդովայ· եւ բերին զնա յեէմ· եւ թաղե
ցին զնա 'ի գերեզմանի իւրում: ||Եւ ||2.Մնա
էառ ժողովուրդ երկրին զյովաքազ 36.1.
որդի յովսեայ· եւ օծին զնա՝ եւ թագաւո
րեցուցին զնա փոխանակ հօր իւրոյ:
31 *Որդի քսան եւ երից ամաց էր յովա_
քազ 'ի թագաւորել իւրում· եւ երիս
ամիս թագաւորեաց յեէմ: եւ անուն
մօր նր ամիտաղ· դուստր երեմիայի 'ի
32 ղոբնայ: *Եւ արար չար առաջի Տն
33 ըստ ամի· զոր արարին հարքն նր :*Եւ
փոխեաց զնա փարաւոն նեքաւով 'ի
դեբլաթայ յերկրին եմաթայ· չթա_
գաւորել նմա յեէմ· եւ եարկ հարկ
երկրին հարիւր տաղանդ արծաթոյ
34 եւ տասն տաղանդ ոսկւոյ: *Եւ թա
գաւորեցոյց փարաւոն նեքաւով 'ի վր
նր զեղիակիմ որդի յովսիայ արքայի
յուդայ փոխանակ յովսիայ հօր իւրոյ:
եւ փոխեաց զանուն նր յովակիմ· եւ
զյովաքազ էառ՝ եւ տարաւ յեգիպ_
35 տոս· եւ մեռաւ անդ:*Եւ զարծաթն
եւ զոսկին ետ յովակիմ փարաւոնի:
սակայն ճշդով գրեցին զերկիրն տալ
զարծաթն բանիւ փարաւոնի· այր ըստ
սակի իւրում եառուն զարծաթն եւ զոս
կի հանդերձ ժողովրդեամբ երկրին
36 տալ փարաւոնի նեքաւովայ: *Որդի
քսան եւ հինգ ամաց էր յովակիմ 'ի թա
գաւորել իւրում: եւ մետասան ամ թա

դաւորեաց յԵրմ. և անուն մօր նորա
Եռամսեայ Ելդափ . դուստր յեդդելայ յոլմնայ :
* Եւ արար չար առաջի Տն ըստ ամի. 37
զոր արարին հարք նորա :

ԳԼ : ԻԴ.

1 Յաւուրս նր ել նաբուգոդոնոսոր
արքայ բաբիլոնի . և եղև նր ծա
ռայ յովակիմ ամն երիս . և դարձաւ
վտարանջեաց 'ի նմանէ : * Եւ առա 2
քեաց Տր նմա զմեկնակալէնսն քաղ_
դէացւոց . և զմեկնակալէնսն ասոր_
ւոց . և զմեկնակալէնսն մովաբայ . և
զմեկնակալէնսն որդւոց ամոնայ . և
առաքեաց զնս յերկիրն հրէաստանի .
Մ էր. ստակել զնս ըստ բանին Տն . զոր խօսե
23.27. ցաւ 'ի ձեռն ծառայից իւրոց մարգա
րէից : * Բայց բարկութի Տն էր 3
'ի վր յուդայ մերժել զնա յերեսաց
իւրոց՝ վս մեղաց մանասէի ըստ ամի
զոր արար :* Եւ վս անպարտ արեանցն . 4
զոր եհեղ . և ելից զԵրմ անպարտ ա_
րեամբ . և ոչ կամեցաւ Տր ցածնուլ :
* Եւ մնացորդք բանից յովակիմայ՝ և 5
ամ ինչ զոր արար . ոչ աՀանիկ գրեալ_
են 'ի գիրս բանից աւուրց թագաւո_
րացն յուդայ . և ննջեաց յովակիմ ը
հարս իւր : * Եւ թագաւորեաց յովա 6
կիմ որդի նր ը նր :* Եւ ոչ ևս յաՀել 7
արքայն եգիպտացւոց ելանել յերկ_
րէն իւրմէ : քանզի էառ արքայն բա_
բիլոնի 'ի հեղեղատէն եգիպտացւոց
մինչև ցգետն եփրատ . զամ ինչ , որ
էր արքային եգիպտացւոց : * Որդի 8
ամաց ութուտասնից էր յովակիմ 'ի
թագաւորել իւրում . և երիս ամիս
թագաւորեաց յԵրմ . և անուն մօր նր
ամեսթայ . դուստր եղամաթայ յԵրմէ :
* Եւ արար չար առաջի Տն . ըստ ամի 9
Դանի. զոր արար հայր նր :* Ի ժամանակին 10
1. 1. յայնմիկ ել նաբուգոդոնոսոր արքայ
բաբիլոնի յԵրմ . և եկն քաղաքն 'ի պա
շարումն : * Եւ եմուտ արքայն բաբե 11
լացւոց 'ի քաղաքն . և ծառայք նր պա
շարեալ պահէին զնա : * Եւ ել յովա 12
կիմ արքայ յուդայ առ արքայն բաբե
լացւոց . ինքն՝ և ծառայք իւր՝ և մայր
իւր՝ և իշխանք իւր՝ և ներքինիք իւր . և
էառ զնս արքայն բաբելացւոց . յամի
ութերորդի թագաւորութե իւրոյ :
* Եւ եհան զամ գանձս տանն Տն . և 13
զգանձս տան թագաւորին : և կոտո_
րեաց զամ անօթս ոսկեղէնս . զոր ա_
րար սողոմոն արքայ իՂի 'ի տաճարին
Տն . ըստ բանին Տն : * Եւ խաղացոյց 14
զամ զԵրմ . և զամ իշխանս . և զամ զօ
րաւորս զօրութե 'ի գերութե տասն
հազար գերեաց : և զամ զհիւսունս և

զդահիճս : և ոչոք մնաց՝ բաց յաղքա_
15 տաց երկրին : * Եւ խաղացոյց զյո_ Եզ.Մն.
վակիմ 'ի բաբիլոն . և զմայր թագաւո 36.10.
րին . և զկանայս նորա և զներքինիսն նր . Եսթե.
և զզօրաւորս երկրին վարեաց 'ի գե_ 2.6.Ա.
րութե յԵրուսաղեմէ 'ի բաբիլոն : 11.4.
16 * Եւ զամ արս զօրութե . արս եօթն
հազար : և զհիւսունսն՝ և զդահիճս .
հազար այր : ամենեքին զօրաւորք՝ պա
տերազմօղք : և վարեաց զնս արքայն Երեմ.
բաբիլացւոց 'ի գերութե 'ի բաբիլոն : 37.1.
17 * Եւ թագաւորեցոյց արքայն բաբե 52.1.
լացւոց զմեթթանիայ որդի նր ը նր .
18 և եդ նմա անուն սեդեկիա : * Որդի
քսան և մի ամաց էր սեդեկիա 'ի թա
գաւորել իւրում . և մետասան ամ
թագաւորեաց յԵրմ . և անուն մօր նր
ամաբել դուստր երեմիայ 'ի ղուբնայ :
19 * Եւ արար չար առաջի Տն . զոր արար
20 յովակիմ : * Զի սրտմտութի Տն էր
'ի վերայ եԵրմի և յուդայ . մինչև ըն_
կէց զնս յերեսաց իւրոց : և նշկահեաց
սեդեկիա զարքայն բաբելացւոց :

ԳԼ : ԻԵ.

1 Եւ եղև յամի իններորդի թա_ Երեմ.
գաւորութե նր . յամսեանն տաս 39.1.
ներորդի . որ օր տասն էր ամսոյն . եկն 52.4.
նաբուգոդոնոսոր արքայ բաբիլոնի . և
ամ զօրք իւր 'ի վր եԵրմի . և բանակե_
ուանէ թագաւորեցուցանել զդա_
32 ւիթ ։ * Եւ յորդւոց իսաքարայ . որք
գիտէին զհանճար 'ի ժամանակի ճա
նաչելով՝ թէ զինչ առնիցեն իլի՝ յիշ_
խանութեն իւրեանց երկերիւր . և
ամենեքեան եղբարք իւրեանց ընդ
33 նոսա ։ * Եւ 'ի զաբուղոնէ . որք ելա
նէին 'ի մարտ պատերազմի պատերազ
մական գործեաւ . յիսուն հազար՝ օգ
34 նել դաւթի . ոչ ունայնաձեռն ։ * Եւ
'ի նեփթաղիմայ իշխանք հազարք . և
ընդ նոսա վահանաւորք և տիգաւորք
35 երեսուն և եօթն հազար ։ * Եւ 'ի դա
նայ կարգեալք 'ի պատերազմ՝ քսան
36 և ութ հազար և վեցհարիւր ։ * Եւ
յասերայ՝ որք ելանէին օգնել 'ի պա_
37 տերազմի . քառասունհազար ։ * Եւ
յայնմ կողմանէ յորդանանու . 'ի ռու
բինէ . և 'ի գադայ . և 'ի կիսոյ ցեղէն
մանասէի . ամ պատերազմական գոր
38 ծեօք հարիւր և քսանհազար ։ * Ամե
նեքեան նոքա արք պատերազմօղք
կարգեալք 'ի մարտ . խաղաղական ան
ձամբ եկին 'ի քեբրոն թագաւորե_
ցուցանել զդաւիթ 'ի վերայ իլի ։ և
այլ մնացորդքն իլի իբրև զանձն մի՝
39 թագաւորեցուցանել զդաւիթ ։ * Եւ
էին անդ աւուրս երիս . ուտէին . և
ըմպէին . վասն զի պատրաստեցին նց
40 եղբարքն իւրեանց ։ * Եւ սահմանա
կիցքն նոցին . մինչև յիսաքար . և 'ի
զաբուղոն . և 'ի նեփթաղիմ , և բե_
րին նց ուղտուք . և իշովք . և ջորեօք .
և եզամբք կերակուրս . ալիւր . և թուզ
և չամիչ . և գինի . և ձէթ . և զուա_
րակս . և ոչխարս բազումս . վասն զի
ուրախութիւն էր իսրայէլի ։

ԳԼ ։ ԺԳ ։

1 Եւ խորհեցաւ դաւիթ ընդ հազա
րապետսն . և Ը հարիւրապետսն .
2 և ընդ ամ իշխանսն ։ * Եւ ասէ դա_
ւիթ ցամ եկեղեցին իլի . եթէ իցէ
բարութիւնդ 'ի ձեզ . և 'ի Տէ Ա.Յ մեր_
մէ յաջողեցաւ . առաքեսցուք առ եղ
բարսն մեր՝ որք մնացեալ են յամ իլի .
և ընդ նոսա քահանայքն և ղևտացիք
'ի քաղաքսն կալուածոց իւրեանց . և
3 ժողովեսցին առ մեզ ։ * Եւ բերցուք
այսր առ մեզ զտապանակն Ա.Յ մե_
րոյ . վասն զի ոչ խնդրեցին զնա յաւ_
4 ուրսն սաւուղայ ։ * Եւ ասաց ամ ե_
կեղեցին առնել այնպէս . վասն զի ու
ղիղ էր բանն յաչս ամ ժողովրդեանն

* Եւ

Բ. Թագ. 6. 2. *‖ Եւ եկեղեցացոյց դաւիթ զամ իէլ 5
’ի սահմանացն եգիպտոսի մինչև յե_
մաթ . տանել զտապանակն Այ ’ի
կարիաթարիմ քաղաքէն յարիմայ : * Եւ եհան զնա 6
դաւիթ և ամ իէլ ել ’ի քաղաքն դաւ_
թի . որ էր յուդայի . բերել անտի
զտապանակ Տն Այ . որ նստէր ’ի վր
քերովբէից . յորոյ վերայ կոչեցաւ ա_
նուն նորա : * Եւ եդին զտապանակն 7
Այ ’ի վր սայլի նորոյ . ’ի տանէն ամի_
նադաբայ : և ոզա և եղբարք նորա
ածէին զսայլն : * Եւ դաւիթ և ամ 8
իէլ խաղային առաջի Այ ամ զօրու_
թբ . երգովք սաղմոսաց տաւղօք և
քնարօք և թմբկօք և ծնծղայիւք և
փողովք : * Եւ եկին մինչև ’ի կալն քե 9
դոնայ : և ձգեաց ոզա զձեռն իւր ու_
նել զտապանակն . վն զի թիւրեաց
զնա զուարակն : * Եւ բարկացաւ Տր 10
սրտմտութբ ’ի վր ոզայ . և եհար զնա
անդ . յաղագս ձգելոյ նորա զձեռն իւր
’ի տապանակն . և մեռաւ անդ առա_
ջի Այ : * Եւ տրտմեցաւ դաւիթ . 11
վն զի խրամատեաց Տր զխրամատու_
թն յոզայ : և կոչեաց զտեղին զայն
խրամատութն ոզայ մինչև յօրս յայս :
* Եւ երկեաւ դաւիթ յԱյ յաւուրն 12
յայնմիկ և ասէ . զիարդ տարայց առ
իս զտապանակն Այ : * Եւ ոչ դար_ 13
ձոյց դաւիթ զտապանակն առ ինքն
’ի քաղաքն դաւթի . և խոտորեցոյց
զնա ’ի տունն աբեդդարայ գեթաց_
ւոյ : * Եւ նստաւ տապանակն Այ ’ի 14
տանն աբեդդարայ ամիսս երիս : և
օրհնեաց Ած զաբեդդար . և զամե_
նայն որ ինչ նորա :

Գլ : ԺԴ :

Բ. Թագ. 5.11. Եւ ‖ առաքեաց քիրամ արքայ տիւ_ 1
րոսի հրեշտակս առ դաւիթ . և
փայտս մայրս . և շինօղս որմոյ . և հիւս
ունս փայտից շինել նմա տուն :
* Եւ ծանեաւ դաւիթ եթէ պատրաս 2
տեաց զնա Տր ’ի վերայ իէլի . վասնզի
աճեաց ’ի բարձրութն թագաւորու_
թն նորա վն ժողովրդեանն իւրոյ իէլի :
Բ. Թագ. 5.13. * ‖ Եւ էառ դաւիթ այլևս կանայս 3
յեէմ : և ծնան նմա այլևս ուստերք
և դստերք : * Եւ այսոքիկ են անու_ 4
անք նոցա . որք ծնան նմա . և էին նմա
յեէմ : սամաա . և սովբաբ . նաթան .
սաղոմոն : * Եւ յեբաար . և եղիսաւ . 5
և եղիփաղետ : * Եւ նագէթ . և նա_ 6
փատ . և յափիէ : * Եւ եղիսամա . և 7
Բ. Թագ. 5.17. և 20. բաղիադա . և եղիփաղատ : * ‖ Եւ լուան 8
այլազգիքն եթէ օծաւ դաւիթ թա_
գաւոր ’ի վր ամ իէլի . և ելին ամ այ_
լազգիքն խնդրել զդաւիթ : զոր իբրև
խէ 2

9 լուաւ դաւիթ . ել ընդ առաջ նոցա : * Եւ
այլազգիքն եկին . և հանդիպեցան մի_
10 մեանց ’ի հովիտն սկայից : * Եւ եհարց
դաւիթ զԱծ և ասէ . եթէ ելից ’ի վե_
րայ այլազգեացն և տացես զնոսա ’ի
ձեռս իմ : և ասէ ցնա Տր . ել . և տաց
11 զնոսա ’ի ձեռս քո : * Եւ ել դաւիթ ’ի
բաաղփարասին : և եհար զնս դաւիթ :
և ասէ դաւիթ . խրամատեաց Ած զթշ_
նամիս իմ ձեռամբ իմով իբրև զխրա_
մատութն ջրոյ : յաղագս այնորիկ կո_
չեաց զանուն տեղւոյն այնորիկ խրամա_
12 տութն փարասինայ : * Եւ թողին Բաաղ փա
անդ զաստուածս իւրեանց : և ասաց րասինայ
13 դաւիթ այրել զնս հրով : * Եւ յաւե_
լին ևս այլազգիքն . և հանդիպեցան ’ի
14 հովիտն սկայից : * Եւ եհարց դաւիթ
դարձեալ զԱծ . և ասաց ցնա Ած . ոչ
ելթիցես զկնի նոցա . դարձիր ’ի նո_
ցանէ . և թողցես զնոսա մերձ ’ի տան_
15 ձիսն : * Եւ եղիցի ’ի լսել քեզ զձայն
շարժման ծայրից տանձեացն . յայն_
ժամ ելցես ’ի պատերազմն , վասն զի
ելցէ Ած առաջի քո . հարկանել զբա_
16 նակ այլազգեացն : * Եւ արար . որ_
պէս պատուիրեաց նմա Ած . և եհար
զբանակ այլազգեացն ’ի գաբաւօնայ
17 մինչև ’ի գազերայ : * Եւ եղև անուն
դաւթի յամ երկիր . և Տր ետ զերկիւղն
նորա ’ի վր ամենայն ազգաց :

Գլ : ԺԵ :

1 Եւ արար իւր տունս ’ի քաղաքի դաւ_
թի : և պատրաստեաց զտեղի տա_
պանակին Այ և արար նմա խորան :
2 * Յայնժամ ասաց դաւիթ : ‖ Ոչ այլ ու_ ‖ 2. Օրէ.
մեք է բառնալ զտապանակն Այ . 10.8.
բայց միայն ղևտացւոյն . վասն զի զնս
ընտրեաց Տր բառնալ զտապանակն
իւր . և պաշտել առաջի նորա մինչև յա_
3 ւիտեանս : * Եւ ժողովեաց դաւիթ
զամ իէլ յերուսաղէմ հանել զտապա_
նակն Տեառն ’ի տեղին , զոր պատրաս_
4 տեաց նմա : * Եւ ժողովեաց դաւիթ
զորդիսն ահարօնի . և զղևտացիսն :
5 * Յորդւոցն կահաթու , ուրիէլ իշ_
խան . և եղբարքն նորա հարիւր և քսան :
6 * Յորդւոցն մերարեայ , ասայիաս իշխան .
և եղբարք նորա երկերիւր և յիսուն :
7 * Յորդւոցն գերսոնի յովէլ իշխան . և
8 եղբարքն նր հարիւր և երեսուն : * Յորդ_
ւոցն եղիսափանայ սամիաս իշխան .
9 և եղբարք նորա երկերիւր : * Յորդ_
ւոցն քեբրոնի եղիէլ իշխան . և եղ_
10 բարք նորա ութսուն : * Յորդւոցն
ոզիէլի ամինադաբ իշխան : և եղբարք
11 նորա հարիւր և երկոտասան : * Եւ
կոչեաց դաւիթ զսադովկ և զաբիա_

Թար զքահանայսն. և զղևտացիսն.
և զուրիէլ. և զասաիա. և զյովէլ.
և զսեմայիա. և զէղիէլ. և զամինա_
դաբ: *Եւ ասէ ցնոսա. դուք էք իշխանք 12
տոհմիցն ղևտացւոց. դուք սրբեցա_
րուք՝ և եղբարքն ձեր. և հանէք զտա_
պանակն Տ.Ն իսրայէլի՝ ի տեղին, զոր
‖ Ա Եր. պատրաստեցի նմա: * ‖ Զի ապաքէն 13
13.10. զի ոչ էիք դուք յառաջ. խրամատեաց
Տ.Ծ ձեր՝ 'ի մեզ. վասն զի ոչ խնդ_
րեցաք իրաւամբք զնա: *Եւ սրբե_ 14
ցան քահանայքն և ղևտացիք բերել
զտապանակն Տ.Ն Իէլի: *Եւ առին 15
որդիք ղևտացւոց զտապանակն Տ.Ն.
‖ Ելից. ‖ որպէս և պատուիրեաց մովսէս բանիւ
25. 14. Տ.Ն ըստ գրոց՝ բառնալեօքն 'ի վե
ուսոց իւրեանց: *Եւ ասէ դաւիթ 16
ցիշխանս ղևտացւոցն: կացուցէք զեղ_
բարսն ձեր. որք երգեն զսաղմոսն
նուագարանօք երգոցն. քնարօք. և
սրնգօք. և ծնծղայիւք. ամբառնալ
զձայնսն 'ի բարձունս, ուրախութե
ձայնիւ: *Եւ կացուցին ղևտացիքն 17
զհաման որդի յովէլի. և յեղբարց
նր զասափ որդի բարաքեայ: և յորդ_
ւոցն մերարեայ յեղբարցն նորա զե_
թան որդի կիսեայ: *Եւ ընդ նոսա 18
եղբարքն իւրեանց երկրորդք: զաքա
րիաս. և յովէլ. և սեմիրամօթ. և եէլ.
և անանիաս. և եղիաբ. և բանէաս.
և մասիաս. և մատաթիաս. և եղի
փալա. և մակեդիաս. և աբեդդոմ.
և յէէլ. և ոզիաս, դռնապանքն:
*Եւ սաղմոսանուագքն. աման. և 19
ասափ. և եթան. տաւղօք պղնձեօք
լսելի առնել զձայնն: *Զաքարիաս. 20
և ոզիէլ. և սեմիրամօթ. և եղիէլ. և
անանիաս. և եղիաբ. և մասիաս. և
նաթիաս քնարօք, և ադեմօթ: *Եւ 21
մատաթիաս. և եղիփաղէաս. և մակե
դիաս. և աբեդդոմ. և յէէլ. և ո_
զիաս. սրնգօք սենեթիաս զօրացուցա
նել: *Եւ քոնիաս իշխան ղևտացւոցն, 22
իշխան 'ի վերայ երգոցն. վն զի էր հան
ճարեղ. *Եւ բարաքիաս. և եղկա_ 23
նա. դռնապանք տապանակին: *Եւ 24
սոբենիաս, և յոսափատ. և նաթանայ
էլ. և աման. և զաքարիաս. և բա_
ճարչանէ նաիաս. և եղիեզեր. քահանայքն յու_
ին փողս սացեալք փողովք առաջի տապանա_
առաջէ կին Տ.Ն: և աբեդդոմ. և յեխիաս. դռ_
տապա_ նապանք տապանակին Տ.Ն: * ‖ Եւ 25
նակին դաւիթ և ծերքն Իէլի. և հազարա_
‖ 2 Թագ. պետք, երթային հանել զտապանակ
6.12. ուխտին Տ.Ն 'ի տանէն աբեդդարայ ու
րախութբ: *Եւ եղև 'ի զօրացուցա 26
նելն Տ.Ն զիշխանսն՝ որք բարձին զզ
տապանակ ուխտին Տ.Ն. զենին եօթն

27 զուարակս. և եօթն խոյս: *Եւ դա
ւիթ զգեցեալ էր պատմուճան բեհե
զեղէն. և ամ ղևտացիքն բարձին զզ
տապանակ ուխտին Տ.Ն. և սաղմոսա
նուագքն. և քոնոնիաս էր իշխան եր
գոցն՝ որք նուագէին: և դաւիթ զգե
ցեալ պատմուճան բեհեզեղէն:
28 *Եւ ամ իէլ հանին զտապանակ ուխ
տին Տ.Ն հռչակաւ՝ ձայնիւ յօբելեան
և փողով՝ և ծնծղայիւք՝ նուագելով.
29 քնարօք՝ և տաւղօք: *Եւ եղև մինչ
դեռ տապանակն Տ.Ն գայր 'ի քաղաքն
դաւթի. մեղքող դուստր սաւուղայ
կարկառեալ ընդ պատուհանն. ետես
զարքայ դաւիթ զի կաքաւէր՝ և խա_
ղայր. և անարգոնեաց զնա 'ի միտս իւր:

Գլ. ԺԶ.

1 Եւ ‖ տարան 'ի ներքս զտապանակն ‖ 2 Թագ.
Տ.Ն. և հաստատեաց զնա 'ի մէջ 6.17.
խորանին՝ զոր պատրաստեաց նմա դա
ւիթ: և մատուցին ողջակէզս՝ և զփր
2 կութեցն առաջի Տ.Ն: *Եւ կատա_
րեաց դաւիթ մատուցանել զողջա_
կէզսն՝ և զփրկութեցն: և օրհնեաց
3 զժողովուրդն յանուն Տ.Ն: *Եւ բաշ
խեաց ամ իէլի յառնէ մինչև ցկին. 'ի
մարդ հաց մի 'ի հացարարոցէ. և պա_
4 տառ մի 'ի կասկարայից: *Եւ կար_
գեաց առաջի երեսաց տապանակին
կտակարանաց Տ.Ն, 'ի ղևտացւոցն
պաշտօնեայս, երգել ձայնիւ. և խոս_
5 տովան լինել զՏր Ած Իէլի: *Ասափ
առաջնորդ: և երկրորդ նմա զզաքա
րիաս. զէէլ. զսեմիրամօթ. զյայէլ.
զմատաթիաս. զեղիաբ. զբանէաս. զա
բեդդոմ. և զեսիէլ, նուագարանօք
տաւղաց՝ և քնարաց: և ասափ ծնծղայ
6 իւք նուագէր: *Եւ բանէաս. և ո_
զիէլ քահանայք փողովքն հանապազ
առաջի տապանակի կտակարանացն
7 Տ.Ն: *Եւ յաւուր յայնմիկ յայնժամ
կարգեաց դաւիթ 'ի սկզբանն օրհ_
նել զՏէր. 'ի ձեռն ասափայ՝ և եղ
8 բարցն նր: * ‖ Եւ րդ: Խոստովան եղե_ ‖ Սաղ.
րուք Տ.Ն. և կարդացէք զանուն նորա. 104.1.
ծանուցէք ժողովրդոց զգործս նր: Եսայ.
9 *Երգեցէք նմա՝ և օրհնեցէք զնա. 12.4.
պատմեցէք ամենեցուն զսքանչելիս
10 նր՝ զոր արար Տր: *Օրհնեցէք զա_
նուն սբ նորա: ուրախ լիցի սիրտ՝ որ
11 խնդրէ զհաճոյսն նր: *Խնդրեցէք
զՏր՝ և հզօրք եղիջիք. խնդրեցէք զե
12 րեսս նր յամ ժամ: *Յիշեցէք զսքան
չելիս նր՝ զորս արար. զնշանս՝ և զիրաւ
13 ունս բերանոյ նր: *Զաւակ իէի ծա
ռայք նր. որդիք յակօբայ ընտրեալք
14 նորա: *Նա է Տէր Ած մեր. յամ
երկրի

երկրի են իրաւունք նորա։ *Յիշեաց 15
յաւիտենից զուխտ իւր։ զբանն։ զոր
պատուիրեաց ՚ի հազար ազգս։
*Զոր ուխտն՝ զոր եդ ընդ աբրահա- 16
մե։ և զերդումն իւր ընդ իսահակայ,
*Եւ հաստատեաց զնա յակոբայ ՚ի հրա- 17
մանս։ և իսրայէլի ուխտ յաւիտենական։
*Եւ ասէ։ ձեզ տայց զերկիրն քանանայ։ 18
պարհակ ժառանգութեանն ձերոյ։ *Որ 19
էին նորքա սակաւք թուովք։ նուազք և
պանդուխտք ՚ի նմա։ *Գնացին յազ 20
գէ յազգ։ և ՚ի թագաւորութենէ ՚ի ժո
ղովուրդ յայլ։ *Ոչ եթող առն հար- 21
ստահարել զնոսա։ և կշտամբեաց վասն
Ա Սամ. նոցա զթագաւորս։ *Մի մերձենայք յա 22
104.15. ծեալդ իմ։ և ՚ի մարգարէիդ իմ մի
Ա Սամ. լինիք չար։ *Երգնեցէք զՏէր ամ երա- 23
95. 1. կիր։ պատմեցէք օրըստօրէ զփրկու-
թիւն նորա։ *Պատմեցէք ՚ի հեթանոսս 24
զփառսն նր։ յամենայն ժողովուրդս զքան-
ելիսն նր։ *Զի մեծ է Տէր։ և օրհնեալ է 25
յոյժ։ ահաւոր է ՚ի վերայ ամենայն աստուածոց։
*Զի ամենայն աստուածք ազգաց կուռք 26
են։ և Տէր զերկինս արար։ *Փառք՝ 27
և գովութիւն առաջի երեսաց նորա։
զօրութիւն՝ և պարծանք՝ ՚ի տեղւոջն նր։
*Տուք Տէր ամենից ազանց։ տուք Տէր 28
զփառս՝ և զզօրութիւն։ *Տուք Տէր զփառս 29
անուան նորա։ առէք պատարագս՝ և
մտուջիք առաջի երեսաց նորա։ և
երկիր պագէք Տէր ՚ի սրահ սրբութե
նորա։ *Երկիւղ յերեսաց նորա ամ 30
երկիր։ յաջողեսցի երկրի՝ և մի սասա-
նեսցի։ *Ուրախ եղիցին երկինք՝ և 31
ցնծասցէ երկիր։ և ասասցեն ՚ի հեթա
նոսս, Տէր թագաւորեաց։ *Ընչեսցէ 32
ծով լիութիւն իւրով։ փայտք անդաս-
տանի՝ և ամ, որ է ՚ի նմա։ *Այնժամ 33
ուրախ լիցին ամ ծառք անտառի։ զի
եկն դատել զերկիր։ *Խոստովան եղե 34
ջուք Տէր զի բարի է։ զի յաւիտեան է
ողորմութիւն նորա։ *Եւ ասացէք։ կե 35
ցո զմեզ Ա Ծ փրկութեան մերոյ։ և ապրե
ցո զմեզ ՚ի թիւնամեաց մերոց։ զի օրհ
նեսցուք զանուն քո սբ։ և պարծի-
ցուք յօրհնութիւնս քո։ *Օրհնեալ 36
Տէր Ա Ծ իսրայէլի յամենից մինչև յաւի-
տեանս։ և ասասցէ ամ ժողովուրդն։
ամէն։ և օրհնեցին զՏէր։ *Եւ եթող 37
անդ առաջի տապանակի կտակարա-
նացն Տեառն զասափ և զեղբարս նորա։
պաշտել առաջի տապանակին յամ
ժամ օրըստօրէ։ *Եւ աբդոդոմէն 38
և եղբարքն վաթսունևութ։ և աբդո
դոմէն որպէս իդիթունայ։ և ովսէդ ՚ի
դռնապանսն։ *Եւ զասադովկ քահա- 39
նայ։ և զեղբարսն զքահանայսն առաջ
ի խորանին Տեառն ՚ի բամայ՝ որ ՚ի գա-

40 բաւծն։ *Պատուցանել ողջակիզս Տեառն
՚ի վերայ սեղանոյ ողջակիզացն հանա
պազ առաւօտուց և երեկոյին։ և բոլո
ամի որ ինչ գրեալ էօրէնսն Տեառն զոր
պատուիրեաց որդւոցն իսրէլ։ ՚ի ձեռն
41 մովսէսի ծառային՝ Ա Ծ։ *Եւ ընդ
նմա եման։ և իդիթուն։ և այլք ընտ
րեալք յանուանէ, օրհնել զՏէր զի յաւ
42 իտեան է ողորմութիւն նորա։ *Եւ ընդ
նոսա փողք և ծնծղայք։ նուագել
քնարօք երգոցն Ա Ծ։ և որդիքն իդի
43 թունայ ՚ի դրանն։ *Եւ գնաց ամ
ժողովուրդն իւրաքանչիւրոք ՚ի տունս
իւր։ և դարձաւ դաւիթ օրհնել զիւր
տունն։

ԳԻ։ ԺԱ։

1 Եւ եղև իբրև բնակեցաւ դա- ‖2 Թագ.
ւիթ ՚ի տան իւրում։ ասէ դա- 7. 2.
ւիթ ցնաթան մարգարէ։ ահա ես
բնակիմ ՚ի տան մայրփայտից։ և տա-
2 պանակն Ա Յ ընդ վրանօք։ *Եւ ա-
սէ նաթան ցդաւիթ։ զամ, որինչ է
յանձին քումդ, արա։ վասնզի Ա Ծ ընդ
3 քեզ է։ *Եւ ՚ի գիշերին յայնմիկ եղև
4 բան Ա Ծ առ նաթան՝ և ասէ։ *Երթ՝
և ասա ցդաւիթ ծառայ իմ։ այսպէս
ասէ Տէր։ ոչ շինեսցես դու ինձ տուն
5 բնակելոյ ՚ի նմա։ *Վասնզի ոչ երբեք
բնակեցայ ՚ի տան՝ յօրէ յորմէ հանի
զիսրայէլ մինչև յօրս յայս։ և
6 խորանաւ ՚ի վայրաքնակս։ *Եւ ընդ ամենայն այլ խո-
ուրեք՝ ընդոր անցին որդիքն իսրէլ։ ե- րանաւ
թէ խօսեցայ խօսեցայ ընդ միոմն ՚ի
ցեղից իսրէլ։ և ՚ի դատաւորացն նր
։ որոց պատուիրեցի հովուել ժողովր
դեան իմոյ՝ և ասացի։ ընդէր ոչ շինե
7 ցիք ինձ տուն ՚ի մայրի փայտից։ *Եւ
արդ՝ այսպէս ասասցես ցծառայ իմ
դաւիթ։ այսպէս ասէ Տէր ամենակալ։
առի զքեզ ՚ի վերջէ վանաց հովիւ
ացն։ առ ՚ի լինիլ առաջնորդ ժողովր
8 դեան իմում իսրէլ։ *Եւ էի ընդ քեզ
ամ ուրեք՝ ուր և երթայիր։ և սատա-
կեցի զամ թշնամիսն քո յերեսաց քոց։
և արարի քեզ անուն ըստ անուանն մե-
9 ծամեծաց՝ որք ՚ի վերջ երկրի։ *Եւ
արդ եդից զտեղի ժողովրդեան իմոյ
իսրէլ։ և տնկեսցես զդա։ և բնակեսցի փնչեցէ
առ անձինն։ և ոչ ևս հոգասցէ ինչ։ և
ոչ ևս յաւելցի անիրաւութիւն խոնար
հեցուցանել զդա որպէս ՚ի սկզբանէ։
10 *Եւ յաւուրց, յորոց կարգեցի դա-
տաւորս ՚ի վերջ ժողովրդեան իմոյ իսրէլ,
նոքուն արարի զամ թշնամիս քո։ և
արդ՝ աձեցուցից զքեզ։ և շինեցից
11 զքեզ ես Տէր։ *Եւ եղիցի յորժամ
լցցին աւուրք քո։ քունեսցես ընդ հարս
քո։

քո ։ և յարուցից զզաւակ քո յետ քո․
որ եղիցի յորովայնէ քումմէ ։ և պատ
րաստեցից զթագաւորութիւն նր ։ * Նա 12
շինեսցէ ինձ տուն ։ և ուղղեցից զա_
թոռ նորա յաւիտեան ։ * Ես եղէց 13
նմա 'ի հայր․ և նա եղիցի ինձ յորդի․
և զողորմութիւն ոչ արարից 'ի բաց 'ի
նմանէ․ որպէս մերժեցի յայնցանէ․
որք յառաջքան զքեզ էին ։ * Եւ հա 14
ւատարիմ լիցի նա 'ի տան իմում ։ և
թագաւորութիւն նորա մինչև յաւի_
տեանս․ և աթոռ նր եղիցի ուղղեալ
մինչև յաւիտեան ։ * Ըստ ամ բանիցս 15
այսոցիկ․ և ըստ ամ տեսլեանս այսո
րիկ․ նոյնպէս խօսեցաւ Նաթան ընդ
Դաւթի ։ * Եւ եկն արքայ Դաւիթ․ 16
նստաւ առաջի Տն և ասէ․ ո՞վ եմ ես
Տր Ա.Ծ․ և կամ զի՞նչ տուն իմ․ զի սի
րեցեր զիս մինչև յաւիտեան ։ * Եւ ո՛չ 17
փոքրկացան այսոքիկ առաջի քո Ա.Ծ․
խօսեցար յաղագս տան ծառայի քոյ
յերկարագոյն ։ և հայեցար դու յիս
տեսլեամբ մարդոյ ։ բարձրացուցեր
դու զիս Տր Ա.Ծ ։ * Եւ զի՞նչ ևս յաւ 18
ելցի Դաւիթ փառաւորել զքեզ ։ դու
գիտես զծառայ քո ։ * Ըստ սրտի 19
քում արարեր զամ զմեծութի քո Տր ։
* Ոչ ոք է նման քեզ․ և ոչ ոք գոյ բաց 20
'ի քէն․ ըստ ամի զորս լուաք ականջօք
մերովք ։ * Եւ ոչ ոք է իբրև զժողո_ 21
վուրդ քո Իէլ ազգ 'ի վր երկրի․ ո_
րում առաջնորդեաց նմա Ա.Ծ փրկել
իւր ժողովուրդ․ և դնել զանուն իւր
մեծ և երևելի ։ հանել յերեսաց ժո_
ղովրդեան քոյ․ զոր փրկեցեր յեգիպ
տոսէ, զազգսն ։ * Եւ եդեր զժողո_ 22
վուրդ քո Իէլ, 'ի ժողովուրդ քեզ
յաւիտեան․ և դու եղեր նոցա Ա.Ծ ։
* Եւ արդ Տր․ զբանն, զոր խօսեցար 23
ընդ ծառայի քում՝ և յաղագս տան
նորա․ հաւատարիմ լիցի մինչև յաւի_
տեան ։ * Որ ասացեր Տր․ Տր ամե_ 24
նակալ՝ Ա.Ծ Իէլի․ եթէ տուն Դաւթի
ծառայի քոյ ուղղեալ եղիցի առաջի
ցայտ_ քո ։ * Զի դու Տր բացեր զունկն 25
նեցեր ծառայի քոյ շինել քեզ տուն ։ յա_
յաւնէն ղագս այսորիկ եգիտ ծառայ քո կալ
յաղօթս առաջի քո ։ * Եւ արդ Տր․ 26
դու ես Ա.Ծ․ և խօսեցար վր ծառայի
քոյ զբարիսդ զայդոսիկ ։ * Սկսիր այ_ 27
սուհետև օրհնել զտուն ծառայի քոյ․
լինել առաջի քո յաւիտեան ։ զի դու
Տր օրհնեցեր․ և օրհնեա՛ յաւիտեան ։

Գլ ։ ԺԸ ։

2 Թագ 8. 1. Եւ եղև յետ այսորիկ՝ եհար Դա 1
ւիթ զայլազգիսն․ և վանեաց
զնոսա․ և էառ զԳէթ՝ և զգեօղս նր
2 'ի ձեռաց այլազգեացն ։ * Եւ եհար
զմովաբ․ և էին մովաբացիքն ծա
3 ռայք Դաւթի բերել ընծայս ։ * Եւ
եհար Դաւիթ զադրաազար արքայ սու
բայ յեմաթ․ յերթալ նր հաստատել
զձեռն իւր 'ի վր գետոյն եւփրատայ ։
4 * Եւ էառ Դաւիթ զնր հազար կառս՝
և եօթն հազար ձիոն՝ և եօթնհազար 20000
արանց հետևակաց․ և քակեաց Դա_
ւիթ զամ զկառսն․ և եթող 'ի նոցա_
5 նէ հարիւր կառս ։ * Եւ եկն ասորին
'ի Դամասկոսէ օգնել Ադրաազարայ ար
քայի սուբայ․ և եհար Դաւիթ յասո
րեացն քան և երկուս հազարս արանց ։
6 * Եւ եդ Դաւիթ ամրոց յասորիս 'ի
Դամասկոսի․ և էին Դաւթի ծառայք
բերել նմա ընծայս․ և ապրեցոյց Տր
զԴաւիթ յամ տեղիս․ ուր և երթայր ։
7 * Եւ էառ Դաւիթ զմանեակսն ոսկե
ղէնս․ որք էին 'ի ծառայսն Ադրաազա_
8 րայ․ և եբեր զայնս յէմ ։ * Եւ 'ի մա
տեբեթայ, և յընտիր քաղաքացն Ադ
րաազարայ էառ Դաւիթ պղինձ բա_
զում յոյժ․ և 'ի նոցանէ արար Սողո_
մոն զծովն պղնձի․ և զսիւնսն․ և
9 զկահսն պղնձիս ։ * Եւ լուաւ Թովու
արքայ Եմաթայ՝ եթէ եհար Դաւիթ
զամ զօրութիւն Ադրաազարայ արքայի
10 սուբայ ։ * Եւ առաքեաց զԴուրամ
զորդի իւր առ արքայ Դաւիթ, հար_
ցանել զնմանէ 'ի խաղաղութի․ և
օրհնել զնա․ վասն զի պատերազմ
տայր Ադրաազար ընդ նմա․ և եհար
զնա․ քանզի այր թշնամի էր Թովու
Ադրաազարայ ։ և ամենայն անօթք ոս
կեղէնք և արծաթեղէնք 'ի ձեռս նր ։
11 * Եւ զայնոսիկ օրհնեաց Դաւիթ Տն,
հ արծաթոյն և ոսկւոյ․ զոր էառ յա_
մենայն ազգացն․ յեդովմայ, և 'ի մովաբայ․
և յորդւոցն ամոնայ․ և յայլազգեացն․
12 և յամաղեկայ ։ * Եւ աբեսսա որդի
սարուեայ եհար զեդոմ 'ի հովտին աղ
13 նայ՝ ութն և տասն հազար ։ * Եւ եդ
'ի հովտին ամրոց․ և էին եդովմայե_
ցիքն ծառայք Դաւթի․ և փրկեաց Տր
զԴաւիթ յամենայն տեղիս․ ուր և եր_
14 թայր ։ * Եւ թագաւորեաց Դաւիթ
'ի վերայ ամենայն Իէլի․ և էր առնել
իրաւունս և արդարութի ամենայն
15 ժողովրդեան իւրում ։ * Եւ յովաբ
որդի սարուեայ 'ի վերայ զօրացն․ և յո
սափատ որդի աքիղուդայ յիշատակաց
16 դպիր ։ * Եւ սադովկ որդի աքիտոբայ․
և աքիմելէք որդի աբիաթարայ քահա
17 նայք․ և սուսա դպրապետ ։ * Եւ բա
նեաս որդի յովիդայեայ 'ի վր քերե_
թայն և ոփելեթայն․ և որդիք Դա_
ւթի առաջինք փոխանորդք արքայի ։

Գլ: ԺԹ:

‖Բ Թագ 10. 1.
Եւ ‖ եղև յետ այսորիկ մեռաւ Նա 1
աս արքայ որդւոցն Ամոնայ . և
թագաւորեաց Անան որդի նորա ընդ
նորա : * Եւ ասէ Դաւիթ . արասցուք 2
ողորմութիւն ընդ Անանայ որդւոյ Նաա
սայ . որպէս արար հայր նր ընդ իս ողոր
մութիւն : և առաքեաց հրեշտակս Դա
ւիթ մխիթարել զնա վն հօրն իւրոյ . և
եկին ծառայքն Դաւթի յերկիր որդ
ւոցն Ամոնայ մխիթարել զնա : * Եւ 3
ասեն իշխանքն Ամոնայ ցԱնան . միթէ
փառաւորել Դաւիթ զհայր քո առաջի
քո առաքեաց քեզ զմխիթարիչսդ . ոչ
ապաքէն զի քննեսցեն զքաղաքս . և
դիտել զերկիրս եկին ծառայքդ նորա
առ քեզ : * Եւ էառ Անան զծառայսն 4
Դաւթի՝ եգերծ զնոսա . և եհատ զդրօ
շակսն նոցա զհասարակածն մինչև 'ի
վեր . և արձակեաց զնոսա : * Եւ եկին 5
պատմել Դաւթի վն արանցն : առա
քեաց ընդ առաջ նոցա . վն զի էին
ամաչեցեալք յոյժ . և ասէ արքայ .
նստարուք յԵրիքով . մինչև աճեսցին մօ
րուք ձեր . և ապա եկեսջիք : * Եւ 6
տեսին որդիքն Ամոնայ եթէ ամաչեաց
զօրն Դաւթի՝ առաքեաց Անան և որ
դիքն Ամոնայ հազար տաղանդ արծա
թոյ . և 'ի վարձու կալան իւրեանց յա
սորեաց Միջագետաց . և յասորեաց
Մաաքայ և Սուբայ՝ կառս՝ և հեծե
ալս : * Եւ 'ի վարձու կալան իւրեանց 7
երեսուն և երկուս հազարս կառաց . և
զարքայն Մօաքայ . և զզօրն նր . և եկին՝
բանակեցան յանդիման Մեդաբայ . և
որդիքն Ամոնայ ժողովեցան 'ի քաղա
քացն իւրեանց . և եկին պատերազմել :
* Լուաւ Դաւիթ . առաքեաց զՅովաբ 8
և զամ զօրաւորացն : * Եւ ելին որ 9
դիքն Ամոնայ՝ և ճակատեցան 'ի պա
տերազմ առ դրան քաղաքին . և թա
գաւորքն եկեալք բանակեցան առան
ձինն 'ի դաշտին : * Եւ ետես Յովաբ 10
եթէ եղեն դէմ յանդիման պատերազ
մին ընդ նմա առաջի երեսաց և զկնի .
ընտրեաց յամենայն երիտասարդայն
Իէլի . և կարգեաց ընդդէմ Ասորւոցն :
* Եւ զմնացորդս զօրուն ետ 'ի ձեռս 11
Աբեսսայ եղբօրն իւրոյ . և կարգեաց
ընդդէմ որդւոցն Ամոնայ : * Եւ ասէ՝ 12
եթէ զօրասցի քան զմեզ Ասորին , լի
ցիս մեզ 'ի փրկութիւն . և եթէ որդիքն
Ամոնայ զօրասցին քան զքեզ , ապրե
ցուցից զքեզ : * Քաջ լեր՝ և զօրաս 13
ցուք վն ժողովրդեան մերոյ : և վն
քաղաքացն Այ մերոյ . և Տր՝ որ ինչ
բարի իցէ յաչս նորա , արասցէ : * Եւ 14
ճակատեցաւ Յովաբ և զօրն նորա ընդ
դէմ Ասորեացն 'ի պատերազմին . և
15 փախեան 'ի նմանէ : * Եւ որդիքն Ա
մոնայ տեսին՝ եթէ փախեան Ասորիքն՝
փախեան և նոքա յերեսաց Յովաբայ .
և յերեսաց Աբեսսայ եղբօրն նորա : և
մտին 'ի քաղաքն . և եկն Յովաբ յԵմ :
16 * Եւ ետես Ասորին եթէ յաղթեաց
նմա Իէլ . առաքեաց հրեշտակս . և եհան
զԱսորեստանեայն յայնմ՝ կողմանէ գե
տոյն . և զՍովփաք զօրավար զօրուն Ա
17 դրազարայ առաջի նց : * Եւ պատմե
ցին Դաւթի . գումարեաց զամենայն
Իէլ . էանց ընդ Յորդանան՝ և եկն 'ի վր
նոցա՝ և ճակատեցաւ ընդդէմ նոցա .
և կարգեցաւ Դաւիթ ընդդէմ Ասոր
18 ւոյն . և պատերազմէր ընդ նմա : * Եւ փա
խեաւ Ասորին յերեսաց Դաւթայ . և
կոտորեաց Դաւիթ յԱսորեացն եօթն
հազար կառաց . և քառասուն հա
զար հետևակաց . և զՍովփաք զօրա
19 վար զօրուցն սպան : * Եւ տեսին
ծառայքն Ադրազարայ եթէ անկան
առաջի Իէլի . եդին ուխտ ընդ Դաւթի
և ծառայեցին նմա . և ոչ ևս կամեցաւ
Ասորին օգնել որդւոցն Ամոնայ :

Գլ: Ի:

1 Եւ ‖ եղև 'ի միւսում տարւոջն յե ‖2 Թագ
լանել թագաւորացն՝ էած Յո 10.7. և
վաբ զամ զօրացն . և ապա 11.1.
կանեաց զերկիր որդւոցն Ամոնայ :
եկին , և նստան շուրջ զՀռաբաթաւ .
և Դաւիթ նստէր յԵմ . և էառ Յո
վաբ զՀռաբաթ . և կործանեաց զնա :
2 * Եւ էառ Դաւիթ զպսակն Մողքո
մայ թագաւորին նոցա 'ի գլխոյն նր .
և գտաւ կշիռ նորա տաղանդ ոսկւոյ .
և 'ի նմա ակն պատուական . և էր 'ի
գլուխն Դաւթի . և աւար բազում
3 յոյժ եբեր : * Եւ զժողովուրդն . որ
էր 'ի նմա՝ եհան . և սղոցեաց սղոցօք
և ուրագօք երկաթեօք . և այնպէս
արար Դաւիթ ամ քաղաքաց որդւոցն
Ամոնայ . և դարձաւ Դաւիթ՝ և ամ
4 զօրն իւր յԵրուսաղէմ : * ‖ Եւ յետ ‖2 Թագ
այնորիկ եղև միւսանգամ պատերազմ 21.18.
'ի Գազեր ընդ այլազգիսն . յայնժամ
եհար Սուբաք Քուսաթացի զՍեփփա
յորդւոց Սկայիցն՝ և վանեաց զնա :
5 * Եւ եղև դարձեալ պատերազմ ընդ
այլազգիսն . և եհար Եղէանան որդի
Յայիրայ զԼեեմի զեղբայրն Գողիա
թու Գեթացւոյ . և փայտ նիզակի նր
6 իբրև զօտորի ոստայնանկաց : * Եւ
եղև դարձեալ պատերազմ 'ի Գեթ .
և էր այր ոմն մեծ յոյժ . և մատունք
նր վեց վեց . քսան և չորք . և նա էր

յորդ

յորդւոց սկայիցն։ *Եւ թշնամաներ 7
զինել. և եհար զնա յոնաթան որդի
սամայ. որդի եղբօր դաւթի։ սոքա
եղեն հռափայ ի գէթ. ամենեքեան
էին արք հսկայք. և անկան ի ձեռս
դաւթի, և ի ձեռս ծառայից նը։

Գ։ Ի։

Եւ ‖ եկաց բանսարկու ի համբ լինի. 1
և դրդուեցոյց զդաւիթ թուել
զիսրայէլ։ *Եւ ասէ դաւիթ ցյո- 2
ւաբ՝ և ցիշխանս զօրուն. երթայք
թուեցէք զիսրայէլ ի բերսաբէէ մինչև
ցդան. և բերէք առ իս. և գիտասցից
զթիւն նոցա։ *Եւ ասէ յովաբ. յաւել 3
յե Տր ի ժողովուրդ իւր. որպէս են
դոքա՝ հարիւրապատիկ. և աչք Տեառն
իմոյ տեսանեն. զի ամենեքեան ծա-
ռայք են Տեառն իմոյ. և ընդէր խնդրէ
տէր իմ զայդ. զի մի լինիցի մեղք ի
ժողովրդեանդ իսրայէլ։ *Եւ բան ար- 4
քային զօրացաւ ի վերայ յովաբայ. և
եւ յովաբ. և եկն յամահմանան իսրայէլ.
և եկն յերուսաղէմ։ *Եւ եհաս յովաբ 5
զթիւ համարոյ ժողովրդեանն դաւ-
թի. և եղեւ ամ իսրայէլ հազարք հա-
զարաց. և հարիւրհազար արանց. որք
ձգէին սուսերս. և յուդաս չորեքհա-
րիւր և յիսունհազար արանց սուսե-
րաւորաց։ *Եւ այլ զլեւիա և զբենիա- 6
մին ոչ թուեաց ի մէջ նոցա. վասն
զի տագնապացաւ բանն արքային առ յո
վաբ։ *Եւ չար երևեցաւ առաջի Աստ 7
ւան իրացն այնոցիկ. և եհար զիսրայէլ։
*Եւ ասէ դաւիթ ցԱստ. մեղայ յոյժ. 8
զի արարի զկրթագ զայդ. և արդ՝ իբաց
բարձ զչարութիւն ծառայի քոյ. վասն
զի ընդունայնացայ յոյժ։ *Եւ խոսե 9
ցաւ Տր ընդ գադայ տեսանողի առ
դաւիթ՝ և ասէ։ *Երթ՝ խոսեաց ընդ 10
դաւթի՝ և ասասցես. այսպէս ասէ Տր.
երիս ինչս ես առեմ իվերդ. ընտրեա
անձին քումմէ՝ ի նոցանէ՝ և արարից
քեզ։ *Եւ եկն գադ առ դաւիթ՝ և 11
ասէ ցնա. այսպէս ասէ Տր. ընտրեա
քեզ։ *Կամ երիս ամն սովու՝ կամ զե 12
րիս ամիսս փախչիլ քեզ յերեսաց թշ
նամեաց քոց. և սուր թշնամեաց քոց
եղիցի ի սատակել զքեզ։ կամ զերիս
աւուրս սուր Տեառն՝ և մահ յերկրի քումմէ.
և հրեշտակ Տեառն սատակեսցէ յամ ժա
ռանգութիս իսրայէլ. և արդ՝ տես զինչ
դարձուցանիցեմ պատասխանի. որ առա-
քեացն զիս։ *Եւ ասէ դաւիթ ցգադ. 13
նեղուեցի ես յինէ յոյժ երեքեան այդո-
քիւք. բայց անկայց ի ձեռս Տեառն. վասն
բազում են գթութիք նորա յոյժ. և
ի ձեռս մարդկան մի անկայց։ *Եւ 14
եհաս Տէր մահ յիսրայէլ. և անկան յիս-
րայէլէ եօթանասունհազար արանց։
*Եւ առաքեաց Աստ զհրեշտակն յե- 15
րուսաղէմ սատակել զնա. և մինչդեռ
սատակէր. տեսես Տր. և զղջացաւ ի չա-
րութենէն. և ասէ ցհրեշտակն Տեառն. որ
սատակէր. շատ լիցի քեզ. թուլացո
զձեռն քո. և հրեշտակ Տեառն կայր ի
կալն ոռնայ յեբուսացւոյ։ *Եւ ամբարձ 16
դաւիթ զաչս իւր, և ետես զհրեշ-
տակն Տեառն. զի կայր ի մէջ երկնի և
երկրի. և սուրն իւր ձգեալ ի ձե-
ռին իւրում. և կարկառեալ ի վերայ
երուսաղէմ. և անկան դաւիթ և
ծերքն զգեցեալ քուրձ ի վերայ երե
սայ իւրեանց։ *Եւ ասէ դաւիթ ցԱստ. 17
ոչ ապաքէն ես ասացի թուել զժողո-
վուրդ. ես եմ, որ մեղայ. առնելով
արարի զչարիսդ. և ոչխարքդ այդո-
քիկ զի՞ արարին. Տէր Աստ. եղիցի ձեռն
քո յիս. և ի տուն հօր իմոյ. և մի՛ ի
ժողովուրդ քո կորուսանել Տէր։
*Եւ ասէ հրեշտակն Տեառն ցգադ. ասա 18
ցդաւիթ. զի ելցէ, կանգնեսցէ զսե
ղան Տեառն ի կալն ոռնայ յեբուսացւոյ։
*Եւ ել դաւիթ ըստ բանին Տեառն. զոր 19
խոսեցաւ յանուն Տեառն։ *Եւ դարձաւ ոռնայ 20
ոռնայ. ետես զարքայ և զչորեսեան
որդիսն նորա ընդ նմա ծածկեալս.
և ոռնայ կասկը՝ ի կալն ցորեան։ *Եւ 21
եկն դաւիթ առ ոռնայ. և ել ոռնայ
՝ի կալէն. երկիր եպագ դաւթի ի
վերայ երեսաց իւրոց յերկիր։ *Եւ 22
ասէ դաւիթ ցոռնայ. տուր ինձ զտե
ղիդ քո զայդ զկալդ. և շինեցից այդր
սեղան Տեառն՝ արծաթոյ, որքան ար-
ժան իցէ. տացես ինձ զդա. և դադա
րեսցին հարուածքն՝ ի ժողովրդենէն։
*Եւ ասէ ոռնա ցդաւիթ. առ դու 23
քեզ. և արասցէ տէր իմ արքայ զա-
րին առաջի իւր։ ահա ետու քեզ զե-
զինադ յողջակէզս. և զփայտս սայլիցդ
և զցորեանդ ի զոհս. զամենայն ետու
քեզ։ *Եւ ասէ արքայ դաւիթ ցոռ 24
նայ՝ ոչ այդպէս. այլ գնելով գնեցից ար-
ծաթոյ. որքան արժան իցէ. և ոչ ա-
ռից՝ որինչ է քո. մատուցանել ողջա-
կէզս Տեառն ձրի։ *Եւ եհաս դաւիթ ցոռ 25
նայ վասն տեղւոյն նորա՝ վեցհարիւր
սիկղ ոսկւոյ կշռով։ *Եւ շինեաց դա 26
ւիթ անդ սեղան Տեառն. և եհան ողջա-
կէզս՝ և վասն փրկութեան. և դոչեաց
առ Տր. և լուաւ նմա յերկինից նմա ի
վերն սեղանոյ ողջակիզին. և ծախեաց
զողջակէզսն։ *Եւ ասէ Տր ցհրեշ- 27
տակն. դարձո զսուրդ քո ի պատեանս։
*Ի ժամանակին յայնմ՝ ի տեսանելն 28
զնա դաւթի. թէ ել լուաւ նմա Տր ի
կալն

կալն Ոռնայ յեբուսացւոյ • և եզեն
‖ Մնէց. 36.2. անդ զոհս: * ‖ Եւ խորանն Տն, զոր 29
արար Մովսէս յանապատին • և սեղան
ողջակիզացն 'ի ժամանակին յայնմ
էին 'ի բամայ Գաբաւոնի: * Եւ ոչ 30
կարէր Դաւիթ երթալ առաջի նորա
խնդրել զԱյ • վասնզի տագնապե_
ցաւ յերեսաց սրոյ հրեշտակին Տն:

ԳԼ: ԻԲ:

Եւ ասէ Դաւիթ • այս է տուն Տն 1
Այ • և այս սեղան ողջակիզաց Իղի:
* Եւ ասաց Դաւիթ ժողովել զամ 2
եկսն յերկրէն Իղի: և կացոյց քարա_
հատս հատանել քարինս կոփածոյս՝
և շինել զտունն Այ: * Եւ երկաթ 3
բազում 'ի բևեռս դրացն՝ և դրանն • և
զշրջանակսն արար Դաւիթ • և պղինձ
բազում յոյժ • որոյ ոչ գոյր կշիռ:
* Եւ մայր փայտս • որոյ ոչ գոյր թիւ • 4
վզի բերէին սիդոնացիքն • և տիւրա
ցիք մայր փայտս յաճախութ Դաւթի:
* Եւ ասէ Դաւիթ • սողոմոն որդի իմ 5
մանուկ փոքր է • և տունն՝ զոր շինէ Տն •
մեծ է 'ի վեր անուանբ՝ և 'ի փառս ամ
երկրի • պատրաստեցից նմա նիւթս •
և պատրաստեաց Դաւիթ յաճախու_
թե յառաջ քան զվախճանն իւր:
* Եւ կոչեաց զսողոմոն որդի իւր • և 6
պատուէրեաց նմա շինել զտուն ան_
ուան Տն Այ Իղի: * Եւ ասէ Դաւիթ 7
ցսողոմոն, որդեակ իմ • եղև 'ի մտի
իմում շինել տուն անուան Տն Այ:
* Եւ բան Տն եղև առ իս՝ և ասէ • ա_ 8
րիւն բազում հեղեր • և պատերազ_
մունս մեծամեծս արարեր • ոչ շինես_
ցես դու տուն անուան իմոյ • վասն զի
արիւն բազում հեղեր 'ի վր երկրի ա_
ռաջի իմ: * Ահա ծնցի քեզ որդի • և 9
նա եղիցի այր հանգստեան • և հան_
գուցից զնա յամ թշնամեաց շուրջա_
նակի • քանզի սողոմոն անուն է նր • և
զխաղաղութի և զհանդարտութի տաց
‖ Բ թագ. 7.13. 'ի վերայ Իղի յաւուրս նր: * ‖ Նա շի_ 10
նեսցէ տուն անուան իմոյ • նա եղիցի
Գ թագ. 5.5. ինձ յորդի • և ես եղէց նմա 'ի հայր • և
ուղղեցից զաթոռ թագաւորութե նր
յԻղի մինչև յաւիտեան: * Եւ արդ՝ 11
որդեակ իմ • եղիցի ընդ քեզ Տր • և յա_
ջողեսցէ • և շինեսցես տուն Տն Այ
քո • որպէս խօսեցաւ վասն քո: * Եւ տա 12
ցէ քեզ իմաստութի և հանճար Տր •
և զօրացուսցէ զքեզ 'ի վր Իղի • և պա_
հեսցես առնել զօրէնս Տն Այ քո:
* Եւ յայնժամ յաջողեսցիս, եթէ պա 13
հեսցես առնել զհրամանսն՝ և զիրաւ_
ունս • զոր պատուիրեաց Տր մովսիսի 'ի
վր Իղի • քաջ լեր՝ և զօրացիր • մի եր_
խը

14 կիցես՝ և մի զարհուրիցիս: * Եւ ահա
ես ըստ աղքատութե իմում պատրաս
տեցի ոսկի 'ի տուն Տն տաղանդս հա
րիւր հազար • և արծաթ տաղանդս
հազարս հազար • և պղինձ • և երկաթ՝
որոյ ոչ գոյ թիւ • վասնզի բազում է
յոյժ • և փայտս՝ և քարինս՝ պատրաս
15 տեցի: * Եւ դու յաւելցես յայդ բազ
մութե առնել գործ արուեստից • շի
նօղս քարանց • և հիւսունս փայտից •
և ամ իմաստուն յամենայն գործ:
16 * Ոսկւոյն՝ և արծաթոյն • և պղնձոյ՝
և երկաթոյ • որոյ ոչ գոյ համար: արդ՝
արի • և արա • վզի Տէր ընդ քեզ է:
17 * Եւ պատուէրեաց Դաւիթ ամ իշխա
նացն Իղի՝ օգնել սողոմոնի որդւոյ
18 իւրում: * Եւ ասէ • ոչ ապաքէն Տր
ընդ ձեզ է • և հանգոյց զձեզ շուրջա
նակի • վզի ետ 'ի ձեռս ձեր զբնակիչս
երկրիդ • և հնազանդեցաւ երկիրդ
առաջի Տն • և առաջի ժողովրդեան
19 նր: * Եւ արդ՝ տուք զսիրտս ձեր՝ և
զանձինս ձեր՝ խնդրել զՏր Այ ձեր •
արիք՝ և շինեցէք զսրբութիւս Տն Այ
մերոյ • տանել 'ի ներքս զտապանակ
ուխտին Տն՝ և զսպաս սրբութեցն
Այ 'ի տունն • զոր շինէք անուան Տն:

ԳԼ: ԻԳ:

1 Եւ Դաւիթ էր ծեր՝ և լի աւուրբք •
և թագաւորեաց սողոմոն որդի
2 նր փոխանակ նր 'ի վերայ Իղի: * Եւ
ժողովեաց զամ իշխանսն Իղի • և զքա
3 հանայս՝ և զղևտացիս: * Եւ մտին 'ի
թիւն ղևտացիքն յերեսնամենից և
'ի վեր • և եղև թիւն նոցա ըստ գլխոց
իւրեանց՝ արք ութ հազար և երե_ 38000.
4 սուն: * Եւ 'ի նոցանէ գործավարք 'ի
վերայ գործոյ տանն • և քսան և չորք
հազարք դպիրքն • և դատաւորք վեց
5 հազար: * Եւ չորք հազարք դռնա_
պանք • և չորք հազարք օրհնիչք Տն •
նուագարանօքն որովք արարին օրհ_
6 նել զՏր: * ‖ Եւ որոշեաց զնս Դա_ ‖ Ելից
ւիթ յորբստորէ պաշտամունս • զոր_ 6. 1.
դիոն ղևեայ • զգերսոմն • և զկահաթ • Մնէց.
7 և զմերարի: * Եւ գերսոնի • և եղիա_ 6.17.
8 դան • և սեմէի: * Որդի եղիադանայ
9 իշխան իէլ: և եթօմ • և յովէլ: * Եւ
որդիքն սեմեայ • սաղոմիթ • և ադիէլ •
և արան • երեք սոքա իշխանք տոհմիցն
10 եղիադանայ: * Եւ որդիքն սեմեայ •
յեթ՝ և զիզա • և յովաս • և բերիայ •
11 սոքա որդիք սեմեայ չորք: * Եւ էր
յեթ իշխան • և զիզա երկրորդ • և յո_
վաս • և բերիա՝ ոչ յաճախեցին որդիս •
և եղեն 'ի տուն տոհմին 'ի միում՝ հա_
12 մարի: * Որդիք կահաթու • ամրամ •

և խաւսաւ. քեբրոն. և ոզիէլ՝ չորք:
Ելից. * Որդիք ամրամայ. ահարոն. և մով_ 13
6.20. սէս. և որոշեցաւ ահարոն սուրբ լի_
Եբրայ. նել 'ի սրբութիւ սրբութեանցն՝ ինքն և
5. 4. որդիք իւր մինչև յաւիտեան. ծխել
խունկս առաջի Տն. պաշտել՝ և աղօթս
առնել յանուն նր մինչև յաւիտեան:
* Եւ մովսէս այր Այ. և որդիքն նր 14
Ելից. կոչեցան 'ի ցեղն ղևեայ: * Որդիք 15
2.22. և մովսիսի. գերսամ. և եղիազար: * Որ_ 16
18.3. դիք գերսամայ. սուբայէլ: * Եւ էր 17
որդի եղիազարու հռաբիա իշխան: և
ոչ գոյր այլ որդի եղիազարու՝ և որ_
դիքն հռաբիայ աճեցին 'ի բարձրու_
թի: * Որդիք սահառայ. սաւուղ. և 18
մովէ իշխանք: * Որդիք քեբրոնի. յե_ 19
րիայ իշխան. և ամարիայ երկրորդ. և
ոզիէլ երրորդ. և յեկմիաս չորրորդ:
* Որդիք ոզիէլի. միքիա իշխան. և յե 20
սիաս երկրորդ: * Որդիք մերարեայ, 21
մոողի. և մուսի. որդիք մոողեայ. ե_
ղեազար. և կիս: * Եւ մեռաւ եղեա 22
զար. և ոչ գոյին նր որդիք. այլ դըս_
տերք միայն. և առին զնոսա որդիքն
կիսեայ, եղբարքն իւրեանց: * Որդիք 23
մուսեայ. մոողի. և եդեր. և արիմոթ.
երեք: * Այսք որդիք ղևեայ ըստ տանց 24
տոհմից իւրեանց. իշխանք ցեղիցն իւր
եանց. ըստ համարոյ իւրեանց. և ըստ
թուոյ անուանց. ըստ գլխոյն իւր_
եանց առնէին զգործ պաշտաման 'ի
տան Տն 'ի քսանամենից և 'ի վեր:
* Զանզի ասաց դաւիթ. հանգոյց 25
Տր Այ զիէն զժողովուրդ իւր. և
բնակեցաւ մինչև յաւիտեան: * Եւ 26
ղևտացիքն ոչ բառնային ամենեքեան
զխորանն՝ և զամ սպասս նր 'ի պաշ_
տաման նորին: * Զանզի 'ի բանսն 27
դաւթայ 'ի վերջինս, եր թիւ որդ_
ւոցն ղևեայ 'ի քսանամենից և 'ի վեր:
* Քանզի կացոյց զնոսա 'ի ձեռն որդ 28
ւոցն ահարոնի պաշտել 'ի տան Տն 'ի
սրահսն՝ և 'ի սենեակսն. և 'ի սրբու_
թիսն. և 'ի վր ամ սրբութեանցն. և 'ի
պաշտամունսն տանն Այ: * Հացին 29
զառաջադրութե. և 'ի վր նաշհոյ պա
տարագացն. և քաքարացն. բաղար_
ջացն. և տապակին. և զանգելոցն իւղ
ով. և յամ չափսն: * Կալ առաւօ_ 30
տուցն. օրհնել և խոստովան լինել
Տն: նոյնպէս և ընդ երեկս: * Եւ 'ի 31
վերայ ամենայն մատուցելոց ողջա_
կիզաց Տն 'ի շաբաթսն. և յամսա_
մուտս. և 'ի տօնս. ըստ թուոյն. ըստ
իրաւանցն. 'ի վերայ նոցին յամենայն
ժամ Տն: * Եւ պահէին զպահպա_ 32
նութիւնս խորանին վկայութեան. և
զպահպանութիւս որդւոցն ահարո_
նի եղբարցն իւրեանց պաշտել 'ի
տանն Տն:

Գլ. ԻԴ.

1 Եւ զորդիս ահարոնի զատոյց: որ_
դիք ահարոնի. նադաբ. և ա_
բիուդ. և եղեազար. և իթամար:
2 * Եւ մեռան նադաբ. և աբիուդ Ղևտ.
առաջի հօրն իւրեանց. և որդիք ոչ 10.1.
գոյին նց. և քահանայացան եղեազար Թւոց
3 և իթամար որդիքն ահարոնի: * Եւ 3. 4.
զատոյց զնս դաւիթ. զսադովկ յորդ_ 26.61.
ւոյն եղեազարու՝ և զաքիմելէք յորդ
ւոյն իթամարայ. ըստ համարոյն իւր
եանց. և ըստ պաշտաման իւրեանց:
4 (ըստ տանց տոհմից նց:) * Եւ գտան
որդիքն եղեազարու յոլովագոյնք յիշ
խանս զօրաւորացն՝ քան զորդիսն ի_
թամարայ: և որոշեաց զնս. և զորդիսն
եղեազարու կացոյց իշխանս 'ի տանց
տոհմիցն, արս վեշտասան: և զորդիսն
իթամարայ ըստ տանց տոհմիցն, արս
5 ութն: * Եւ զատոյց զնս ըստ վիճա_
կի նոցին. վասն զի էին իշխանք սրբու
թեանցն. և առաջնորդք 'ի տանն Տն.
յորդւոյն եղեազարու. և յորդւոցն
6 իթամարայ: * Եւ գրեաց զնս սա_
մէաս որդի նաթանայելի, դպիր 'ի
ղևտացւոցն՝ յանդիման (կալ) արքայի
և իշխանացն. և սադովկայ քահանայի.
և աքիմելէքայ որդւոյ աբիաթարայ:
և իշխանք տոհմից քահանայիցն և ղև
տացւոցն 'ի տանէ ազգին իւրեանց.
մի մի առ որդիսն եղեազարու: և մի
7 մի առ որդիսն իթամարայ: * Եւ ել
վիճակն առաջին յարիբայ: երկրորդն
8 յադիմայ: * Երրորդն քարեմայ: չոր_
9 րորդն սէորիմայ: * Հինգերորդն
10 մելքեայ: վեցերորդն մէրայ: * Եօթն
երորդն ակկուսայ: ութերորդն ա_
11 բիայ: * Իններորդն յեսուայ: տասն
12 երորդն սեքենիայ: * Մետասանե_
րորդն եղիասաբայ: երկոտասանե_
13 րորդն սաղակիմայ: * Երեքտասան
երորդն ոփփայ: չորեքտասաներորդն
14 իզբայիլի: * Հնգետասաներորդն
բեղգայ: վեշտասաներորդն եմմե_
15 րայ: * Եօթնուտասաներորդն եզի_
րայ՝ ութուտասաներորդն ափեսեայ:
16 * Իննուտասաներորդն ոփեթիայ. քսան
17 երորդն եզեկիելի: * Քսաներորդ
առաջներորդն յաքիմայ: քսաներորդ
18 երկրորդն գամուլի: * Քսաներորդ
երրորդն դաղաիայ: քսաներորդ չոր
19 րորդն մոզիայ: * Այս է համար նո_
ցա ըստ պաշտամանն իւրեանց մտա
նել 'ի տունն Տեառն: ըստ իրաւանց
իւրեանց. 'ի ձեռն ահարոնի հօրն իւր
եանց.

եանց · որպէս պատուիրեաց Տր Ա.ծ
Իղի : *Եւ որդւոցն Ղեւեայ մնացելոցն 20
որդւոցն ամրամայ · սուբայէլ · յադայ
իայ · աբադիայ : *Յորդւոցն աբիայ՝ 21
իշխանն յեսիաս : *Եւ յորդւոց սարի_ 22
սայ՝ սաղոմոթ : և յորդւոցն սաղոմո_
թայ, յանաթ : *Եւ յորդւոցն քեբրոնի 23
յեդիու առաջին : ամարիաս երկրորդ :
յեզիէլ երրորդ · յեկեմաս չորրորդ :
* Որդիքն ոզիելի , միքա առաջին · 24
և յուսա երկրորդ : և որդի միքայի ,
սամեր : *Եւ եղբայր միքայ յեսիէ : 25
որդի յեսիայ՝ զաքարիաս : *Որդիք 26
մերարեայ · մոողի՝ և մուսի : ոզիա ·
որդի նորա՝ բոնիա : *Որդի նորա զակ 27
քուր · և ոբդիա : *Մոողի · եղէազար · 28
և կիս · որդի նորա : *Եւ որդի կիսայ · 29
իմայէլ : *Եւ որդիք մուսեայ մոողի · 30
և եդեր · և յերիմոթ : այս էին որդիք
ղևտացւոյն · ըստ տանց տոհմիցն իւր
եանց : *Արկին և նոքա վիճակս · ոպ 31
և եղբարքն իւրեանց որդիքն ահարոնի ·
առաջի թագաւորին : և սադովկ · և
աքիմելէքայ յիշխանաց տոհմից քահա_
նայիցն : և ղևտացւոց ցեղք · որք կա
ցին իբրև զեղբարսն իւրեանց զկրտսե
րագոյնսն (զորս :)

ԳԼ: ԻԵ:

Կացոյց դաւիթ արքայ՝ և իշխանք 1
զօրուն ՚ի գործն , ընդ որդիսն
ասափայ · և եմանայ · և իդիթունայ :
որք երգէին տաւղօքն · և քնարօքն · և
ծնծղայիւք : և եղև թիւ նոցա · որք
գործէին զգործսն իւրեանց : *Որ_ 2
դիք ասափայ · զակքուր · և յովսէփ · և
նաթանիաս · և յէսիէլ : որդիքն ասա
փայ մօտ առ թագաւորն : *Եւ իդի_ 3
թունայ որդիք · գոդողիաս · սուրի ·
և յէիմ · և սեմէի , և ասաբիաս · և
մատաթիաս՝ վեց : համդերձ հարբն
իւրեանց իդիթունաւ երգէին քնա_
րօքն զգոհութիւն՝ և զօրհնութիւն Տն :
* Եւ որդիք եմանայ · բոկքիաս · և 4
մաթանիաս · և ոզիէլ · և սուբայէլ · և
յերիմութ · և անանիաս · և անան · և
եղէաթան · և գեդողաթի · և հռե_
մոթի · և եզեր · և սեբանատան · և
մեղամոթ · և յօթիրի · և մազիովթ :
* Ամենեքեան սոքա որդիք եմանայ : 5
որք նուագէին առաջի արքային բա_
նիւքն Այ՝ բարձրացուցանել եղջե_
րուն : և ետ Ած որդիս եմանայ հնգե
տասան · և դստերս երիս : * Ամենե 6
քեան նոքա համդերձ հարբն իւրեանց
երգէին օրհնութիւնս ՚ի տանն Տն ·
ծնծղայիւք · և տաւղօք · և քնարօք մերձ
առ արքայն : և ասափ · և իդիթուն ·

7 և եման : *Եւ եղև թիւ նոցա համ_
դերձ եղբարբքն իւրեանց · որք ուսեալ
էին զերգսն Տն · ամենեքեան հանճա
րեղք երկերիւր և ութսուն և ութ :
8 *Արկին և նոքա վիճակս · հանապա
զորդ պաշտամանն · ըստ փոքու և մե
ծի՝ կարելոցն · և որք ուսանէինն :
9 *Եւ ել վիճակն առաջին ասափայ , և
որդւոց նր և եղբարցն իւրոց : յովսէփ
առաջին · գոդողիաս երկրորդ · ինքն
և եղբարքն իւր՝ և որդիք իւր երկո_
10 տասան : *Երրորդ՝ զակքուր · որդիք
իւր՝ և եղբարք իւր երկոտասան :
11 *Եւ չորրորդ · եզրի · որդիք իւր՝ և եղ_
12 բարք իւր երկոտասան : *Հինգերորդ
նաթանիաս · որդիք իւր՝ և եղբարք
13 իւր երկոտասան : *Վեցերորդ , բո_
կիաս · որդիք իւր՝ և եղբարք իւր եր
14 կոտասան : *Եօթներորդ՝ յեսուէլ ·
որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան :
15 *Ութերորդ՝ իսիաս · որդիք իւր՝ և եղ_
16 բարք իւր երկոտասան : *Իններորդ
մաթանիաս · որդիք իւր՝ և եղբարք
17 իւր երկոտասան : *Տասներորդ՝ սե_
մէի · որդիք իւր՝ և եղբարք իւր երկո
18 տասան : *Մետասաներորդ՝ եզրիէլ ·
որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտա_
19 սան : *Երկոտասաներորդ՝ ասաբիաս ·
որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան :
20 *Երեքտասաներորդ · սուբայէլ · որ
դիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան :
21 * Չորեքտասաներորդ , մատաթիաս ·
որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտա_
22 սան : *Հնգետասաներորդ՝ յերիմոթ ·
որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտա_
23 սան : *Վեշտասաներորդ · անանիաս ·
որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտա_
24 սան : *Եօթնուտասներորդ , եզբա_
կատան · որդիք իւր՝ և եղբարք իւր եր
25 կոտասան : *Ութուտասներորդ , ա_
նանի · որդիք իւր՝ և եղբարք իւր եր_
26 կոտասան : *Իննուտասներորդ , մե_
ղեթի · որդիք իւր՝ և եղբարք իւր եր_
27 կոտասան : *Քսաներորդ , եղիաթ ·
որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան :
28 *Քսաներորդ առաջնորդ՝ յեթիրի ·
որդիք իւր՝ և եղբարք իւր երկոտասան :
29 *Քսաներորդ երկրորդ , գեդդեղո_
թի · որդիք իւր՝ և եղբարք իւր երկո_
30 տասան : *Քսաներորդ երրորդ , մա_
զիովթ · որդիք իւր՝ և եղբարք իւր եր
31 կոտասան : *Քսաներորդ չորրորդ ,
հռոմեթեզեր · որդիք իւր՝ և եղբարք
իւր երկոտասան :

ԳԼ: ԻԶ:

1 Եւ ՚ի զատուցեալսն դրանցն յորդ
ւոցն կորխայ · մոսողամ որդի կոր

խայ․ յորդւոցն ասափայ ։ * Եւ մա 2
սեղեմիայ որդիք՝ զաքարիա անդրա_
նիկ՝ յադիել երկրորդն՝ աբդիաս եր_
րորդ․ նաթանա չորրորդ ։ * Եւ ով 3
դամ հինգերորդ ։ յօնաթան վեցե_
րորդ ։ եղիովլի եօթներորդ ։ * Եւ ի_ 4
դիթումայ որդիք ։ սամէաս անդրա_
նիկ ։ և յովզաբադ երկրորդ․ յովա
դա երրորդ ։ սաքար չորրորդ ։ նաթա
նայել հինգերորդ ։ * Ամիել վեցե_ 5
րորդ ։ իսաքար եօթներորդ ։ փեղաթի
ութերորդ ։ վասն զի օրհնեաց զնա
ԱԾ ։ * Եւ սամէնայ որդւոյ նր անդ_ 6
րանկին ծնան որդիք զօրաւորք ՚ի տան
հօրն իւրոյ․ վն զի հզօրք էին ։ * Որդիք 7
սեմէյայ․ ադոնի․ և հռափայել ․ և
յովբեթ․ և եղզաբեդ․ աքիու․ և եղ
բարք իւր որդիք զօրաւորք ուժով ։
եղիու․ և սամաքիաս ․ (և իզբակոս ։)
* Ամենեքեան սոքա որդիք աբեդոմ․ 8
ինքեանք՝ և որդիք իւրեանց՝ և եղբարք
իւրեանց՝ զօրացեալք զօրութբ․ գոր
ծեին զօրութբ զգործ ; վաթսուն և
երկու յաբեդոմայ ։ * Եւ սեղեմիայ , 9
որդիք և եղբարք հասունք՝ ութ և_
տասն ։ * Եւ յեսամայ յորդւոյն մե_ 10
րարեայ որդի մի շամրի․ որում պա
հէին զգլխաւորութի ․ զի ոչ գոյր
անդրանիկն ՚ի միջի ․ և առ եդ զնա
հայր իւր ՚ի սկզբան ։ * Քեղկիա երկ 11
րորդ ․ նաաբէլ երրորդ ․ զաքարիա
չորրորդ ։ ամենեքեան սոքա ուսայեայ
որդիք՝ և եղբարք նր՝ չորեքտասանք ։
* Սոցա են բաժինն վիճակաւ դրանցն 12
գլխաւորութեց՝ կալ շաբաթաւոր
առաջի եղբարցն իւրեանց․ և պաշտել
՚ի տանն ՏՆ ։ * Եւ արկին վիճակ ըստ 13
փոքուն և ըստ մեծին․ ըստ տանց ազ
գատոհմին իւրեանց ՚ի դրունս ։
* Եւ ել վիճակ դրանն արևելից սե_ 14
մեայ՝ և զաքարիայ որդւոյ նր ։ յովադ_
խորհրդականն ՚ի միտս իւր․ արկանէին
վիճակս․ և ել նմա վիճակն ը կողմն
հիւսիսոյ ։ * Եւ աբդեդոմայ ընդ հա 15
րաւակողմն կոյս ։ և որդւոց իւրոյ ․
ընդդէմ տանն ասափայ ։ * Յերրոր_ 16
դեանն՝ սեմիյն և ովսայ ընդ արև_
մուտս կոյս․ դրամբն հանդերձ սրահա
պանին․ ելից ճանապարհին․ պահ առ
պահ ընդ արևելս ։ * Իսկ ղևտացիքն 17
վեց վեց յաւուր ընդ կողմն հիւսի_
սոյ ։ չորս չորս յաւուր ընդ կողմն հա
րաւոյ ։ չորս չորս յաւուր՝ յասափինն ․
և երկուս երկուս ՚ի փոխանակել ։
* Եւ ընդ արևմուտս չորս ։ և ՚ի ճա_ 18
նապարհ երկուս երկուս փոխանակաւ ։
* Այս վիճակք բաժնին դարապա_ 19
նաց որդւոյն կորխայ՝ և որդւոյն մե_

20 րարեայ ։ * Եւ ղևտացիքն եղբարք
իւրեանց հանդերձ ՚ի վերայ գանձին
տանն ՏՆ․ և ՚ի վր գանձին սրբոյն սր
21 բոց ։ * Որդիքն ղադանայ որդւոյ գեր
սամեայ և ՚ի ղադանայ իշխանք ազգաց
տոհմին ղադանու․ և գերսոնեայ․ յե
22 իեղ ։ * Որդիք յեիեղի․ զեթամ․ և
յովէլ՝ եղբարք նր ՚ի վերայ գանձին
23 տանն ՏՆ ։ * Եւ ամրամ․ և իսահառ ․
24 և քեբրոն․ և ոզիել ։ * Եւ սեբիել
որդի գերսոմայ որդւոյ մովսէսի ։ զօ_
25 րագլուխք ՚ի վր գանձուցն ։ * Եւ եղ
բայր նորա եղիազար․ աբիա որդի նր․
յուսէէ որդի նր․ յովրամ որդի նորա․
զեքրի որդի նր․ և զելմիթ որդի նորա
26 * Եւ ինքն սաղամիթ և եղբարք իւր
՚ի վր ամ գանձուն սրբոյն սրբոց․ զոր
նուիրեաց դաւիթ՝ և իշխանք տոհ_
միցն՝ հազարապետք և հարիւրապետք․
27 և իշխանք զօրութեցն ։ * Զոր առեալ
էր ՚ի քաղաքաց անտի առար, և նուի_
րեալ էր ՚ի նոցանէն․ զի մի նուաղես_
ցի գործ շինուածոյ տանն ՏՆ ։
28 * Զոր նուիրեցին սամուէլ տեսա_
նողն․ և սաւուղ կիսեանց․ և աբեններ
ներեանց․ և յովաբ որդի շարուհեայ․
և ամ նուէրք․ որք էին ՚ի ձեռս սա_
29 ղոմեայ և եղբարց իւրոց ։ * Յեսսա_
րի․ և քոնոնիա․ և որդիք իւր․ և գործք
գործոյն արտաքնոյ ՚ի վր իլի․ զի
30 դրիցին՝ և վճարիցեն ։ * Ի քեբրոնայ
սադիաս և եղբարք իւր․ որդիք զօրու
թե հազար և եօթնհարիւր ․ և ՚ի վր
տեսչութե իլի յայնկոյս յորդա_
նանու դետոյն ընդ արևմուտս․ յամ
գործ պաշտաման ՏՆ ․ և ՚ի գործ ար
31 քունի ։ * Քեբրոնայ ուրիաս իշխան ,
քեբրոնայ ազգատոհմօքն իւրեանց
հանդերձ․ յամին քառասներորդի թա
գաւորութեն դաւթի․ այս յաշխարհա
գրի անդ գտաւ ։ այր զօրութեց ՚ի նմա
32 յազերին գաղադիացւոց ։ * Եւ եղ
բարք իւր որդիք զօրաւորք․ երկու հա
զար և եօթնհարիւր․ գլխաւորք տոհ
մին ։ և կացոյց զնոսա արքայ դաւիթ
՚ի վերայ գնդին ռուբինայ՝ և գադայ՝
և կէս ազգին մանասեան գնդին․ վն
ամ բանից ԱԾ․ և բանից արքունի ։

ԳԼ ։ ԻԷ ։

1 Եւ որդիք իլի իւրաքանչիւր թուոց նահապետք ազգատոհմին հա
զարաւորք և հարիւրաւորք․ և համա_
րակար դպիրք․ որք պաշտէին ՚ի ժողո
վրդեանն զամ համարս արքունի․ ը
իւրաքանչիւր գործոյն համարոյ ելին
և մտին ամսոյ ամսոյ․ յամ ամիս տար
2 ւոյ ընտրութի ։ * Առաջին համարոյ
առաջ_

առաջնոյ ամսեանն յեզբաադ · և բա_
զդիէլ · և ընտրութիւն ելից նորա քսան
և չորս հազարք ։ * Յորդւոցն փարէ_ 3
սայ · որ գլուխ էր ամ իշխանացն զօ_
րաց · և ամսեանն առաջնոյ ։ * Ընտրու 4
թի ամսոյն երկրորդի · դուդայի · և
դաքոլթի · և մագաղանովթ առաջ_
նորդք · և ընտրութի նր̃ քսան և չորս
հազարք ։ * Իշխանք զօրութեան երրոր_ 5
դի ամսեանն · բանեաս յովադ՝ քա_
հանայ իշխան · և յընտրութեան նր̃ քսան
և չորս հազարք ։ * Նոքին բանեաս հզօ 6
րագոյն քան զերեսունսն · և 'ի վերայ
երեսնիցն բաժին ընտրութեան իւրոյ ։
* Յամսեանն չորրորդի · ասայէլ եղ_ 7
բայր յովաբու · և զաբդեաս որդի նր̃ ·
և եղբարք իւր զկնի նորա · և ընտրու
թիւք բաժնի նր̃ քսան և չորս հազարք ։
* Հինգերորդ՝ յամսեանն հինգերոր_ 8
դի՝ իշխան սամովթ , յեզրա · և բա_
ժին մասին նորա քսան և չորք հազարք ։
* Վեցերորդ՝ յամսեանն վեցերորդի՝ 9
իշխան եկես որդի եկկեայ թեկուեց
ւոյ · և մասն բաժնի նորա քսան և չորս
հազարք ։ * Եօթներորդում ամ_ 10
սեանն՝ եօթներորդ իշխան · քեղ փա_
ղամեանց յորդւոյն եփրեմայ · և մասն
բաժնի իւրոյ քսան և չորս հազարք ։
* Ութերորդ՝ յամսեանն ութերոր_ 11
դի · սոաբ եկխեսթայեանց զարայ_
եայ · և մասն բաժնի նր̃ քսան և չորս
հազարք ։ * Իններորդ՝ յամսեանն իննե 12
րորդի աբիեզեր · որ յանաթօթայն ·
որ 'ի բենիամին երկրի · և մասն բաժ
նի իւրոյ քսան և չորս հազարք ։ * Տասն 13
երորդ՝ յամսեանն տասներորդի · մա_
րինետոպաթեանց զարայ · և մասն
բաժնի իւրում · քսան և չորս հազարք ։
* Եւ մետասաներորդն՝ յամսեանն 14
մետասաներորդի բանաեաս 'ի փարա
թոնայ · յորդւոյն եփրեմի ։ և 'ի զատու
ցեալն նորա քսան և չորք հազարք ։
* Եւ երկոտասաներորդն՝ յամսեանն 15
երկոտասաներորդի · քողդայի · նետո
փատայ · որդի գոդոնիէլի ։ և 'ի զա_
տուցեալն նր̃ քսան և չորք հազարք ։
* Եւ 'ի ցեղիցն իէլի · ռուբինի իշխան · 16
եղիեզեր որդի զեքրեայ ։ և շմաւոնի ·
սափատեաս · որդի մաաքեայ ։ * Եւ 17
ղևեայ · ասաբիաս · որդի կամուէլի ։
և ահարոնի՝ սադովկ ։ * Որդւոյն յու 18
դայ · եղիաբ · յեղբարցն դաւթի ։ և
իսաքարայ՝ ամարիաս · որդի միքայէլի ։
* Եւ զաբուղոնի · սամէաս՝ որդի աբ 19
դիմեայ · և նեփթաղիմայ՝ յարիմութ ·
որդի ազիէլի ։ * Եւ եփրեմի՝ ովսէր · 20
որդի ոզիայ · և կիսոյ ցեղին մնասա_
սէի՝ յովէլ՝ որդի փադդիայ ։ * Եւ կի 21

սոյ ցեղին մնասէի , որ էր 'ի գաղաադ_
յադայի՝ որդի զաբդիայ ։ յորդւոցն բե որդի զա_
նիամինի · ասիէլ՝ որդի աբեններեայ ։ բդիելայ
22 * Եւ դանայ՝ եզրիէլ՝ որդի յովրամայ ։
սոքա էին նահապետք ցեղիցն իէլի ։
23 * Եւ ոչ էառ դաւիթ զթիւ նոցա 'ի
քսանամենից և 'ի վայր · վ̃զի Տէր
ասաց բազմացուցանել զիէլ իբրև
24 զաստեղս երկնից ։ * ‖ Եւ յովաբ որ ‖ Վեր.
դի սարուհեայ սկսաւ թուել զժողո_ 21.2.
վուրդն · և ոչ կատարեաց ։ և եղև յա
ղագս այնորիկ բարկութի 'ի վ̃ր իէլի ·
և ոչ յարդեցաւ գիրն 'ի գիրս բանից
25 աւուրց թագաւորին դաւթի ։ * Եւ 'ի
վ̃ր գանձուց արքային ազմովթ որդի
ադիէլի ։ և 'ի վերայ գանձուց ան_
դաստանաց 'ի գեօղսն · և 'ի տունս · և
յաշտարակս · յոնաթան որդի ոզիայ ։
26 * Եւ 'ի վերայ երկրագործացն , որք
գործէին · եզրաս որդի քեղուբայ ։
27 * Եւ 'ի վ̃ր ագարակացն , սեմէի արի
մաթացին և 'ի վ̃ր շտեմարանաց գեղից
գինւոյն · զաբդի , որդի սեփինեայ ։
28 * Եւ 'ի վ̃ր ձիթենեացն և մոլեթզե_
նեացն · որք 'ի դաշտս՝ բաղ դանա · որ
դի գեդօնի ։ և 'ի վ̃ր շտեմարանաց ձի
29 թոյն յովաս ։ * Եւ 'ի վ̃ր արջառոց արօ
տականաց · որք էին 'ի հովիտն , սով_
30 փատ · որդի ադայիայ ։ * Եւ 'ի վ̃ր
ուղտուցն ուբիաս իսմայելացի ։ և 'ի
վ̃ր իշոցն յադիաս մարաթօնացի ։
31 * Եւ 'ի վ̃ր հօտիցն · յովազ ագարացի ։
ամենեքեան սոքա վերակացուք ստա
32 ցուածոցն դաւթի արքայի ։ * Եւ յօ_
նաթան հօրեղբայր դաւթի՝ խորհր_
դակից · այր հանճարեղ · և ինքն
դպրապետ ։ և յէիէլ որդի աքամենայ
33 ընդ որդիս արքայի ։ * Եւ աքիտոփէլ
խորհրդակից արքայի ։ և քուսի առա
34 ջին բարեկամ արքայի ։ * Եւ զկնի
նորա աքիտոփէլ · մերձ իւսա ։ և յովի_
դայեայ · որդի բանեայ · և աբիա_
թար ։ և զօրավար զօրացն արքայի
յովաբ ։

ԳԼ. ԻԸ.

1 Եւ ժողովեաց դաւիթ զամենայն
իշխանսն իէլի · զիշխանս դատա
ւորացն · և զամենայն իշխանս օրա_
մոյն 'իսպաս անձնապահաց թագա
ւորին · և զիշխանս հազարաւորացն ·
և հարիւրաւորացն · և գանձապա_
հացն · և որք էին 'ի վերայ ստացուա
ծոցն նր̃ , և զզօրաւորսն · և զպատե_
րազմօղս զօրավարացն յերուսաղէմ ։
2 * Եւ եկաց դաւիթ արքայ 'ի մէջ եկե
ղեցւոյն՝ և ասէ · լուարո՛ւք ինձ եղ_
բարք իմ , և ժողովուրդք իմ · 'ի սրտի
իմում

խմում եղև շինել տուն հանգստեան
տապանակի ուխտին Տ՟ն. և կայան
ոտից Տ՟ն մերոյ. և պատրաստեցի ես
'ի քնակութիւն յայն զկազմած զայդ.
(ոսկի. և արծաթ. և պղինձ. և արոյր.
Բ Թագ. և երկաթ. և փայտ բազում։) * Եւ 3
7. 13. ասաց Ա՟Ծ ցիս. ոչ շինեսցես դու ինձ
տուն անուանել զանուն իմ 'ի վ՟րնի.
վ՟ղի այր պատերազմօղ ես դու. և հե
ղեր արիւն բազում։ * Եւ ընտրեաց 4
Տ՟ր Ա՟Ծ յամազգաց զիս. և յամ ի՟ղէ
զյուդաս ընտրեաց. կանգնել զթա
գաւորութի իւր յաւիտեան։ և 'ի տա
նէն յուդայ զտուն հօր իմոյ ընտրեաց.
և յորդւոց հօր իմոյ կամեցաւ զիս, լի
նել թագաւոր 'ի վերայ ամենայն ի՟ղի.
Սաղմ. * Եւ յամ որդւոց իմոց (վասն զի որ 5
9. 7. դիս բազումս ետ ինձ Տ՟ր.) ընտրեաց
զսողոմոն որդի իմ. նստուցանել յա
թոռ թագաւորութեն Տ՟ն. 'ի վերայ
ի՟ղի։ * Եւ ասաց ցիս Ա՟Ծ. սողոմոն 6
որդի քո շինեսցէ զտունն իմ, և զսրահն
իմ. վասն զի ընտրեցի զնա լինել ինձ
որդի. և ես եղէց նմա 'ի հայր։ * Եւ 7
ուղղեցից զթագաւորութի նր մինչև
յաւիտեան. եթէ զօրասցի պահել
զպատուիրանս իմ. և զիրաւունս իմ.
իբրև յաւուրս յայսմիկ։ * Եւ արդ՝ 8
դիք առաջի երեսաց ամ եկեղեցւոյս
Տ՟ն. և յականջս Ա՟Յ մերոյ. պահեցէք՝
և խնդրեցէք զամ պատուիրանս Տ՟ն
Ա՟Յ մերոյ. զի ժառանգիցէք զերկիրս
բարի. և ժառանգեցուցանիցէք որդ
ւոցն ձերոյ զկնի ձեր մինչև յաւի_
տեան։ * Եւ դու սողոմոն որդի իմ. 9
ծանիր զԱ՟Ծ հարցն քոյ. և ծառայեա
նմա կատարեալ սրտիւ. և մտօք կա_
Ա Թագ. մաց քոց. վասն զի զամ սիրտս քննէ
16. 7. Տ՟ր. և զամ խորհուրդս ճանաչէ. եթէ
Սաղմ. խնդրեսցես զնա, գտցի քեզ. և եթէ
7. 11. թողցես զնա, լքցէ զքեզ իսպառ։
Երեմ. * Տես այժմ. զի ընտրեաց զքեզ շի_ 10
11. 20. նել նմա տուն 'ի սրբութի. և զօրա_
և 17. 10 ցիր, և արա։ * Եւ ետ դաւիթ սողո 11
և 20. 12 մոնի որդւոյ իւրում զօրինակ տաճա
րին՝ և սենեկաց նորա. և գանձարա
նաց նր. և վերնատանցն՝ և շտեմարա
նաց ներքնոց. և տանն քաւութե։
* Եւ զօրինակ, զոր ունէր 'ի միտի իւր 12
ում սրահից տանն Տ՟ն. և զամ շտեմա
րանացն շուրջանակի. յամբարս տանն
Տ՟ն. և մթերից սրբութեցն։ * Եւ 13
մնացորդացն յօրամոից 'ի պաշտօն քա
հանայիցն. և ղևտացւոցն յամ գործ
պաշտամանց տանն Տ՟ն։ * Եւ զմէտս 14
կշռոցն նոցա՝ զոսկւոյ և զարծաթոյ։
* Զկշիռ աշտանակաց ետ նմա. և 15
զճրագմանկացն նմանութիս։ * Եւ ըղ 16

կշիռս սեղանոցն առաջադրութե. և
զնուրաքանչիւր ուրուք ոսկեղէն սեղա
նոց. նոյնպէս և զարծաթեղինացն։
17 * Եւ զմսահանացն. և զնուիրանո_
ցացն. և զտաշտիցն ոսկեղինաց. և
զկշիռս ոսկւոյն և արծաթոյ. և ըղ
18 տփոցն զնուրաքանչիւր ուրուք։ * Եւ
զսեղանոյ խնկոցն 'ի մաքուր ոսկւոյ,
զկշռութիւն եցոյց նմա. և զօրինակ
քերովբէիցն. որոց տարածեալէր ըղ
թևսն իւրեանց. և հովանի ունէին
'ի վերայ տապանակի ուխտին Տ՟ն։
19 * Զամ գրով 'ի ձեռանէ Տ՟ն ետ դա
ւիթ՝ սողոմոնի. ըստ եղելոյ 'ի նմա
իմաստութեն. և ըստ օրինակին։
20 * Եւ ասէ դաւիթ ցսողոմոն որդի
իւր. զօրացի՛ր՝ և քա՛ջ լեր. արա՛ և մի՛
երկնչիր. և մի՛ զարհուրեսցիս. վ՟ղի
Տէր Ա՟Ծ իմ ընդ քեզ է. ոչ թողցէ
զքեզ. և ոչ լքցէ. մինչև կատարեսցես
զամ գործ սպասու տանն Տ՟ն (և ահա
այդ է օրինակ տաճարին. և սենեկաց
նորա՝ և սրահից նր. և վերնատանցն.
և շտեմարանաց ներքնատանցն. և
տանն քաւութե. և օրինակ տաճա_
21 րին Տ՟ն այդ է։) * Եւ օրամոից քա_
հանայիցն՝ և ղևտացւոց. յամ պաշ_
տամունս տանն Ա՟Յ. և ընդ քեզ ե_
ղիցի յամ իրս. ամենայն ոք որ յօժա
րեսցի 'ի իմաստութե՝ ըստ համօրէն
արուեստից. իշխանքդ. և ամենայն
ժողովուրդ յամի բանս քո։

ԳԼ. ԻԹ.

1 Եւ ասէ դաւիթ արքայ ցամ եկե
ղեցին. սողոմոն որդի իմ. զոր
ընտրեաց իւր Տ՟ր. մանուկ փոքր է. և
գործս մեծ է. վասն զի ոչ մարդոյ է
2 շինուածս, այլ Տ՟ն Ա՟Յ։ * Ըստ ամ
զօրութե իմոյ պատրաստեցի նիւթս
տանն Ա՟Յ իմոյ. ոսկի. և արծաթ.
պղինձ. և երկաթ. փայտս. և քարինս
անկեանց. և կամարաց. և քարինս ըն
տիրս. և ականս պատուականս. և այլ
3 պատրաստութի բազում։ * Եւ ես
վասն հաճոյ լինելոյն իմ 'ի տան Տ՟ն
իմոյ։ և եղև ինձ զորս նուիրեցից Տ՟ն.
ոսկի և արծաթ. և ահաւասիկ ետու
զայդ 'ի տուն ա՟յ իմոյ 'ի բարձրութի.
բաց յայնցանէ՝ զոր պատրաստեցի 'ի
4 տուն սրբութեցն։ * Երիս հազարս
տաղանդ ոսկի 'ի սոփերայ. և եօթն
հազար տաղանդ ընտիր արծաթ օծա
5 նել նոքօք զորմս տաճարին։ * 'Ի ձեռն
արուեստաւորաց։ և որոք յօժարեալ է
մտօք լնուլ զձեռս իւր այսօր Տ՟ն։
6 * Եւ յառաջամիտք եղեն իշխանք տոհ
միցն. և իշխանք որդւոցն ի՟ղի. հազա
րա_

բաղեաք՝ և հարիւրապետք ․ և վերա
կացուք գործոյն ․ և գանձապետք
արքային ։ * Եւ ետուն ՚ի գործ տանն 7
Տն ․ ոսկի՝ տաղանդս հինգ հազար ․
և բիւր դահեկան ․ և արծաթ՝ տա_
ղանդս տասն հազար ․ և պղինձ՝ տա_
ղանդս բիւր և ութն հազար ։ * Եւ 8
որոց գտաւ քար պատուական ․
ետուն ՚ի շտեմարանս տանն Տն ․ ՚ի
ձեռն յեքիելի որդւոյ եսրոմի ։ * Եւ 9
զուարճացաւ ժողովուրդն յաղագս
յառաջամիտ լինելոյն ․ վասն զի լի սր
տիւ եղեն յառաջամիտք Տն ․ և դա_
ւիթ արքայ ուրախ եղև մեծապէս ։
* Եւ օրհնեաց արքայ դաւիթ զՏէր 10
առաջի եկեղեցւոյն՝ և ասէ ․ օրհնեալ
է Տր Ա.ծ իղի հարցն մերոց յաւիտե
նից մինչև յաւիտեանս ։ * Քո է Տէր 11
մեծութի ․ և զօրութի ․ և պարծանք ․
և յաղթութի ․ և կարողութի ․ վ՞ զի
դու ամենեցուն՝ որք են յերկինս և ՚ի
վերայ երկրի՝ տիրես ․ յերեսաց քոց դո
ղան ա՞մ թագաւորք՝ և ազգք ։ * Ի քէն 12
է մեծութի և փառք ․ դու ես ամենե
ցուն իշխան՝ Տր ․ և իշխան ա՞մ իշխա_
նութեց ․ ՚ի ձեռն քո քում է զօրութի և
հզօրութի ․ և ՚ի ձեռն քո քում ամենա
կալ մեծութի զօրացուցանել զա՞մ ։ * Եւ 13
արդ Տր՝ գոհանամք զքէն ․ և օրհնեմք
զանուն պարծանաց քոց ։ * Ո՞ եմ ես ․ 14
և ո՞ է ժողովուրդ քո ․ զի կարասցուք յօ
ժարամիտ լինել քեզ յայսմ ա՞մի ․ վ՞
զի քո է ա՞մ ինչ ․ և ՚ի քոյոց տուաք
քեզ ։ * Վասնզի պանդուխտք եմք 15
մեք առաջի քո՝ և նժդեհք ․ որպէս և
‖ Իմաս. ամենայն հարք մեր ․ ‖ իբրև զստուեր
2.1. են աւուրք մեր ՚ի վերայ երկրի ․ և ոչ
գոն մեր մնացուածք ինչ ։ * Տր Ա.ծ 16
մեր ․ ամենայն բազմութիս այս ․ զոր
պատրաստեցի շինել զտուն անուան
սրբութե քոյ ․ է ՚ի ձեռանէ քումմէ ․
և քո է ամենայն ինչ ։ * Եւ ծանեայ 17
Տր՝ եթէ դու ես ․ որ քննես զսիրտս ․
զարդարութիւն սիրես ․ և մեք պարզ
սրտիւք յօժարամիտք եղեաք յայսմ
ամենայնի ․ և արդ՝ զժողովուրդս քո ․
որ գտաւ աստ ․ տեսի ուրախութբ
լի ․ եղեալ առ քեզ յօժարամիտ ։
* Տէր Ա.ծ աբրահամու ․ և իսահա_ 18
կայ ․ և իսրայէլի՝ հարցն մերոց ․ պա
հեա՛ զայս ՚ի միտս և ՚ի խորհս ժողովր
դեան քոյ յաւիտեան ․ և ուղղեա՛ զսիր
19 տս նոցա առ քեզ ։ * Եւ՛ սողոմոնի
որդւոյ իմում տուր սիրտ բարի ․ առ_
նել զպատուիրանս քո ․ և զվկայութիս
քո ․ և զհրամանս քո ․ և ՚ի կատարումն
ածել զպատրաստութի տան քոյ ։
20 * Եւ՛ ասէ դաւիթ ցամենայն եկեղե
ցին ․ օրհնեցէք զՏր Ա.ծ ձեր ։ և օրհ
նեաց ամենայն եկեղեցին զՏր Ա.ծ
հարցն իւրեանց ․ և խոնարհեցուցեալ
զծունգս՝ երկիր պագին Տն ․ և ար_
21 քային ։ * Եւ՛ եղեն դաւիթ Տն զոհս ․
և մատոյց ողջակէզս Ա.Յ ՚ի վաղիւն
առաջնոյ աւուրն ․ զուարակս հազար ․
խոյս հազար ․ գառինս հազար ․ և զնուէ
րս նոցա ․ և զզոհսն յաճախութբ
22 ամենայն իղի ։ * Կերին՝ և արբին առա
ջի Տն յաւուր յայնմ ուրախութբ՝ և
թագաւորեցուցին երկրորդ անգամ
զսողոմոն որդի դաւթի ․ ‖ և օծին զնա ‖ 3 Թագ.
Տն ՚ի թագաւոր ․ և զսադովկ ՚ի քա_ 1.34.
23 հանայութի ։ * Եւ՛ նստաւ սողոմոն
յաթոռ հօր իւրոյ դաւթի ․ և յաջո_
ղեցաւ ․ և հնազանդեցաւ նմա ամե
24 նայն իղ ։ * Իշխանք զօրաւորք ․ և
ամենայն որդիք արքային դաւթի հօրն
զի էր ձեռն Տն՝ի բարութիւն ընդ մեզ․
յորդւոցն ղևեայ յորդւոցն Իլի․ և
զառաջինն եկին առ մեզ որդիք նր և
19 եղբարք նորա ութն և տասն ։ *Եւ
ասեբիա՝ և յեսեա որդի մերարեայ՝ և
եղբարք նր և որդիք նորա արք քսան։
20 *Եւ՝ի նաթանայ․ զոր ետ դաւիթ
և իշխանքն՝ի ծառայութիւն ղևտա_
ցւոցն․ և՝ի նաթանայիմ երկերիւր և
քսան․ ամենեքեան ժողովեցան ըստ
21 անուան իւրեանց ։ *Եւ քարոզեցաք անդ
պահս առ եզր գետոյն աւհա․ և մա_
տուցաք անդ աղօթս առաջի Տն Այ
մերոյ խնդրել՝ի նմանէ զճանապարհ
ուղղութեան մեզ և որդւոց մերոց՝ և ամի
22 որ ընդ մեզ ։ *Աման զի ամաչեցաք
խնդրել՝ի թագաւորէն հեծեալս ապ
րեցուցանել զմեզ՝ի թշնամեացն մե
րոց՝ի ճանապարհին․ վն զի ասացաք
ցթագաւորն այսպէս․ եթէ ձեռն
Տն մերոյ ընդ ամենեցուն․ որք խն_
դրեն զնա՝ի բարութիւն ։ և զօրութիւն
նորա՝ և բարկութիւն նորա՝ի վե ամե
23 նեցուն․ ոյք թողուն զնա ։ *Եւ պա
հեցաք․ և խնդրեցաք յԱյ մերոյ վն
24 այսր ամենայնի․ և լուաւ Տր ։ *Եւ
առաքեցաք յիշխանացն քահանայից
երկոտասան զսարաբիայ․ և զասա_
բիայ և ընդ նոսա յեղբարց նց տասն ։
*Եւ

* Եւ կշռեցաք և տուաք ցնոսա՝ զար 25
ծաթ և զոսկի. և զսպաս առաջաւո_
րութեան տանն ամ̃յ մերոյ. որ բարձրա_
ցոյց զմեզ թագաւորն, և խորհրդա_
կիցքն նր՝ և իշխանք նր՝ և ամ̃ Իէլ՝ որք
միանգամ էին անդ: * Եւ կշռեալ 26
ետու ցնս արծաթ տաղանդս վեցհա
րիւր և յիսուն. և կահ արծաթոյ հա_
րիւր. և ոսկւոյ տաղանդս հարիւր:
* Եւ այլ կահ ոսկւոյ քսան և երիս. և 27
կահ պղնձոյ սուրբ և մաքուր ոսկե_
զօծ: * Եւ ասացի ցնոսա. և դուք սր 28
բեալք Տն̃ Ա.Ծ էք. և ամ̃ կահ սուրբ
է Տն̃. և ոսկեղէնք և արծաթեղէնք
ընտրեալք Տն̃ Ա.Ծ հարցն մերոց:
* Արթո՛ւն կացէք՝ և պահեցէ՛ք մին_ 29
չև կշռեսջիք զդոսա առաջի իշխա_
նաց քահանայիցն՝ և ղևտացւոցն. և
հայրապետացն Իէլի՝ որք են յերուսա_
ղէմ՝ ի խորանս տան Տն̃: * Եւ առեալ 30
քահանայիցն, և ղևտացւոցն զհամար
ոսկւոյ և արծաթոյ՝ և զկահս ՚ի տա_
նիլ յԵրէմ ՚ի տուն Ա.Ծ մերոյ: * Եւ 31
յարուցեալ չուեցաք ՚ի գետոյն Եա՝
որ օր երկոտասան էր ամսոյն առաջ
նոյ. և եկեալ հասաք յԵրէմ. և ձեռն
Ա.Ծ մերոյ էր ընդ մեզ. և փրկեաց
զմեզ ՚ի ձեռաց թշնամեաց մերոց և
՚ի պատերազմողաց զճանապարհայն:
* Եւ եկաք յԵրէմ. և հանգեաք անդ 32
աւուրս երիս: * Եւ յաւուրն չորրոր_ 33
դի կշռեալ տուաք զարծաթ և զոսկի
և զկահ ՚ի տուն Տն̃ Ա̃յ մերոյ. ՚ի ձեռս
Մարեմովթ որդի Ուրիայ քահանայի.
և որ էր ընդ նմա. Եղէազար որդի Փե
նէեսի. և Յովզաբաթ որդի Յեսուայ.
և Նովադիա որդի Բանեայ. և այլք ղև
տացիք: * Եւ էր թուով և համարով 34
ամ̃. և գրեցաւ ամ̃ կշիռ համարոյն
բովանդակ: * Եւ ՚ի ժամանակին 35
յայնմիկ. որք եկեալ էին ՚ի գերութէն
որդիք պանդխտութե, մատուցին
ողջակէզս Տն̃ Ա.Ծ Իէլի, զուարակս
երկոտասան վն̃ ամ̃ Իէլի. խոյս իննս_
սուն և վեց. գառինս եօթանասուն
և եօթն. ամիկս վասն մեղաց երկո_
տասան. զայս ամ̃ ողջակէզս մատու
ցին Տն̃ Ա̃յ: * Եւ ետուն զգիր կա_ 36
րասւոյն. զոր հրամայեալ էր թագա
ւորին ցիշխանս կողմանց գետոյն Եփ
րատու. և փառաւորեցին զժողո_
վուրդն և զտաճարն Ա̃յ:

Գլ. Թ.

Ա.Եզր 1.69. Ե՛Ւ ՚ի կատարել այսր ամ̃ի՝ մերձե 1
ցան առ իս իշխանքն՝ և ասեն.
ոչ որոշեցան ժողովուրդն Իէլի. և քա_
հանայքն՝ և ղևտացիքն ՚ի ժողովրդոց՝
և յերկրէ. որք են հեռագոյն ՚ի նոցա
նէ. քանանացին. և քետացին. և փե_
րեզացին. և յեբուսացին. և ամմօնա
ցին. և մօաբացին. եգիպտացին. և
2 ամօրհացին: * Քանզի արարին կա_
նայս ՚ի դստերաց նց. ինքեանք՝ և որ_
դիք իւրեանց. և խառնակեալ պղծե
ցաւ սերմն սրբութե նոցա ընդ ժո_
ղովուրդ երկրին այնորիկ. և եղև
սկիզբն անօրէնութեա այսորիկ յիշխա_
3 նացն: * Եւ եղև յորժամ լուայ ես
զբանս զայսոսիկ. պատառեցի զհան
դերձս իմ. և փետտեցի զհերս և զմո
րուս իմ. և այնպէս նստէի ՚ի սուգ:
4 * Եւ ժողովեցան առ իս ամենեքեան.
որք էին երկիւղածք յԱ.Ծ Իէլի. որք
էին ժողովեալ յելիցն պանդխտու_
թե. և ես այնպէս նստէի ՚ի սուգ մին
5 չև ՚ի ժամ զոհի երեկորին: * Եւ ՚ի
զոհել երեկորին՝ յարեայ ՚ի տառապա
նաց իմոց. և պատառեալ հանդեր_
ձիւք իմովք խոնարհեալ (հանդեր_
ձիւք իմովք. և խոնարհեալ) կորա_
նայի ՚ի վերայ ծնգաց իմոց. և տարա
ծեալ համբարձեալ զձեռս իմ, առ
6 Տր̃ Ա.Ծ: * Եւ ասեմ. Տր̃ Ա.Ծ իմ, և
Տր̃. ամաչեմք՝ զարհուրիմք ՚ի քէն.
բարձրացո՛ Ա.Ծ իմ զերեսս իմ առ քեզ.
վն̃զի անօրէնութիւնք մեր բազմացան
՚ի վերայ գլխոց մերոց. և մեղք մեր
մեծացան. և բարձրացան մինչև յեր
7 կինս: * Յաւուրց և ՚ի ժամանակաց
հարցն մերոց. և եմք մեք ՚ի մեղս մե_
ծամեծս մինչև ցայս օր. և վն̃ մեղաց
մերոց մատնեցեր զմեզ՝ և զթագաւ_
որս մեր՝ և զորդիս մեր՝ ՚ի ձեռս թա_
գաւորացն հեթանոսաց. և ՚ի սուր՝ և
՚ի գերութի՝ և ՚ի յափշտակութի. և
յամօթ երեսաց մերոց եղեաք մինչև
8 յօրս յայս: * Եւ այժմ գթութիւնք քո
եղեն ՚ի վերայ մեր Տէր Ա.Ծ մեր՝ և
շնորհեցեր մեզ փրկութի. և հաստա
տեցեր զմեզ ՚ի տեղի սրբութե քո. և
լուսաւորեցեր զաչս մեր այսօր Տր̃ Ա.Ծ
մեր. և ետուր մեզ կենդանութի փոքր
՚ի չառէ ՚ի ծառայութեն մերում:
9 * Վասն զի ծառայք եղեաք. և ՚ի ծա
ռայութեն մերում ոչ թողեր զմեզ
Տր̃ Ա.Ծ մեր. և խոնարհեցան առ մեզ
ողորմութիւնք քո առաջի թագաւորին
պարսից տալ մեզ ՚ի կենդանութի. և
բարձրացուցանել զտուն Ա.Ծ մերոյ՝
կանգնել՝ և շինել զաւերակս զայս.
և արկանել ցանգ և պարիսպ ամրու_
10 թե ՚ի յուդայ և յերուսաղէմ: * Եւ
արդ զի՞նչ տացուք պատասխանի առա
ջի քո Տր̃. վասն այսր ամ̃ի. քանզի ան
ցաք զօրինօք քովք Տր̃՝ և զհրամանօք:

* Զոր

* Զոր ետուր 'ի ձեռն ծառայից քոց 11
‖2. Օրէ. մարգարէից. ասելով այսպէս. ‖Եթէ
7. 3. յերկիրն. յոր մտանելոցես ժառան_
գել զնա. է երկիր պղծեալ 'ի պղծու
թեց ազգաց երկրին այնորիկ՝ և աղ
տեղութբք իւրեանց լցին զնա: * Եւ 12
արդ մի առնուցուս 'ի դստերաց նց
կանայս որդւոց քոց. և զդստերս քո
մի տացես կանայս որդւոց նց. և մի
խնդրեսցես առնել զխաղաղութի ը
նոսա զամ ժամանակս. և եղիջիր դու
զօրաւոր ուտել զբարութի երկրին.
և ժառանգեսցեն որդիք քո զերկիրն
զայն՝ յաւիտեանս ժամանակաց:
* Եւ որինչ միանգամ անցք անցին ը 13
մեզ վասն գործոց մերոց. և չարութե
մեղաց մերոց. այլ դու Տր. բազում
անգամ թողեր զմեղս մեր. և ետուր
մեզ զայսպիսի զաւակ և արմատ: * Եւ 14
մեք դարձեալ խոտորեցաք անցեալ
զօրինօք քովք. և խառնակեցաք ընդ
աղտեղութիս հեթանոսաց երկրին.
և ոչ բարկացար մեզ 'ի կորուսանել
զմեզ մինչև ցայս վայր. եթէ ոչ մնաս
ցէ արմատ՝ և զաւակ՝ և անուն մեր:
* Տր Այ իղի. դու արդարև ճշմարիտ 15
ես. որ ոչ սպառեցեր զզաւակ մեր. այլ
մնաց մեր արմատ և զաւակ մինչև
ցայս օր. և արդ ահաւասիկ եմք այսօր
առաջի քո յանօրէնութիս մեր. և ոչ
ևս կարեմք ամբառնալ զգլուխս մեր՝
և կալ առաջի երեսաց քոց. զի բազ
մացան անօրէնութիք մեր և չարիք՝
առաւել քան զգլուխս մեր:

Գլ: Ժ.

‖1. Եզր. Եւ յորժամ եկաց եզրաս յաղօթս 1
8. 92. հանդերձ խոստովանութբքս այ
սոքիւք. և ողբովք մեծամեծօք ան_
կեալ 'ի վերայ երեսաց երկրի առաջի
Տն. ժողովեցան առ նա ամ. որք էին
յեմ ժողովուրդ բազումարք և կա
նայք՝ երիտասարդք և կուսանք. և ող
բայր ժողովուրդն. և համբարձին
զձայնս լալոյն իւրեանց: * Եւ պա_ 2
տասխանի ետ յեքոնիա որդի եղեայ
որդւոյն եղամայ. և ասէ ցեզրաս՝ մեք
մեղաք առ Տէր Այ մեր. և արարաք
զկանայս յայլազգեաց երկրիս այսո_
րիկ. և այժմ են անօրէնութիք այսօր
'ի մէջ իղի: * Եւ արդ ուխտեսցուք 3
ուխտս առաջի Տն այ մերոյ՝ հանել
զամ կանայս այլազգիս. և զզաւակս
որք 'ի նոցանէ. և արդ որպէս կամիս՝
արի և կեցո զսոսա օրինօքն Տն այ.
և որպէս պատուիրանք հրամայեն:
* Արի և լուիցուք 'ի բերանոյ քումմէ. 4
և մեք ընդ քեզ. զօրացիր՝ և արա. ոչ

5 և հրամայեալ է 'ի Տէ Այ: * Եւ յա_
րուցեալ եզրայ երդմնեցոյց զիշխանս
ցեղից քահանայից և ղևտացւոց. և
զամ իղի՝ առնել ըստ այսմ օրինակի
6 երդման: * Եւ յարուցեալ եզրայ
յերեսաց տանն Այ երթալ 'ի տուն
դանձին առ յօհան որդի եղիսուբայ.
հաց ոչ եկեր. և ջուր ոչ էարբ. և ող
բացեալ 'ի վր անօրէնութեն՝ և մե_
7 ծամեծաց մեղաց բազմութեն: * Եւ
քարոզ կարդային 'ի հրէաստանի,
8 և յերուսաղէմ: * Ամենայն ոք՝ որ ոչ
եկեսցէ յերուսաղէմ մինչև յերիս աւ
ուրս՝ յիշխանաց և 'ի ծերոցն՝ եղիցի
նզովեալ. և ամենայն ստացուածքն
նր. և ինքն 'ի բաց եղիցի յեկեղեցւոյ
9 ժողովրդոցն իղի: * Եւ ժողովեցան
ամ արք յուդայ և բենիամինի յեմ
յերիս աւուրս. յիններորդ ամսեանն՝
որ օր քսան էր ամսոյն. և նստան ամ
ժողովուրդն 'ի հրապարակի տանն Տն.
և էին զարհուրեալք 'ի բանից նր՝ և
10 'ի ցրտութենէ ձմեռայնոյն: * Եւ յա
րուցեալ եզրայ ասէ ցնոսա. դուք էք՝
որք մեղայք. և արարիք կանայս ըզ
դստերս այլազգեաց. և յաւելիք զմեղս
11 և զանօրէնութի 'ի վերայ իղի: * Եւ
արդ տուք զօրհնութի Տն Այ հարցն
մերոց. և արարէք զհաճոյսն առաջի
նր. և զատեալ որոշեցարուք յամ հե
թանոսաց երկրի. և 'ի կանանց այլ
12 ազգեաց՝ զորս արարիք: * Եւ պա_
տասխանի ետուն ամ եկեղեցին՝ և ա_
սեն՝ մեծ է բանս այս. զոր ասես դու
13 'ի վր մեր: * Այլ զի ժողովուրդք բա
զումք եմք. և ժամանակս ձմեռնէ. և
ոչ կալ կարեմք արտաքոյ. և գործքդ
ոչ է զմի օր, կամ զերկու՝ վզի սաս_
14 տիկ մեղաք յիրս յայս: * Կացցեն իշ
խանք յամ տեղիս և 'ի քաղաքս. և
որոց իցէ արարեալ զկանայս յայլազ
գեաց՝ եկեսցեն 'ի ժամանակի. զոր
ծերքն և հայրապետքն կարգեսցեն 'ի
քաղաքս քաղաքս՝ և դատաւորք բաւես
ցեն զմեղս զայս 'ի մէնջ՝ և դարձուս_
ցեն զբարկութի այ 'ի մէնջ. որ վասն
16 բանիս այսորիկ: * Եւ արարին այս
պէս՝ որք եկեալք էին 'ի գերութէն.
և ընտրեաց եզրաս արս իշխանս 'ի հայ
րապետաց տանն իւրոյ՝ զարս անուա
նիս. և շրջեցան յամսամտի տասնե_
17 րորդի ամսոյն՝ և վճարեցին: * Եւ
որոշեցին զամենայն արս՝ որք ունէին
զկանայս յայլազգեաց մինչև 'ի մուտ
18 ամսոյն առաջնոյ: * Եւ գտան յորդ
ւոց քահանայիցն. որք ունէին զկա_
նայս յայլազգեացն. յորդւոց յես_
ուայ յոսեդեկեանց. և եղբարց նորա
մա_

մանասէի. և եղիեազարու. յարիբ՝ և
գադալիայ: *Եւ ոչ կամին հանել զկա 19
նայս այլազգեացն յինքեանց. և մա_
տուցին իւրաքանչիւր խոյս վասն թո
ղութեան մեղացն անգիտութեան: *Եւ 20
յորդւոցն երամ. մասիաս. եղիա.
սամեայիա. և եզեկիաս: *Եւ յորդ_ 22
ւոցն փասուր. եղիանաս. մասիէլ
միսայէլ նաթանայէլ. յօզաբադ. և
եղասա: *Եւ յորդւոցն ղևտացւոցն. 23
յեզաբաթ. սամութ. կոլիթա. այս
է կոլիտոս. և աթեթիաս. և յու_
դաս. և եղիազար: *Եւ'ի սաղմոսեր 24
գուացն եղիասիփ. և 'ի դռնապանացն
կողեմետեղես. և ուրի: *Եւ յիւէ. 25
յորդւոցն փորոսայ. հռամիա. յազիա.
մեղքիա. եակիմ. եղիեազար. ասա_
բիա. նիբանայիա: *Եւ յորդւոցն 26
եղամ. մատաթանիա. զաքարիա.
յաւել. աբդիա. երիմոլթ. և եղիա:
*Եւ յորդւոցն զաթուայ՝ ելիոնէ. ե_ 27
ղիասաբ. մաթթանայ. յարմոթ. զա_
բադ. զաղիա: *Եւ յորդւոցն բա_ 28
բեի. յոհաննան. անանիա. և զաբուու.
աթայի: *Եւ յորդւոցն բանի. մո_ 29

սողամ. մաղաք. ադայիաս. իասուբ.
30 սաադ. հռեմոլթ: *Եւ յորդւոցն փա
աթ մովաբ. ադնէք աղել. բանայիա.
մասէա. մատթէա. բէսելէլ. մանա_
31 սէ: *Եւ յորդւոցն երամ. եղիեզի.
եսիա. մեղքիա. սամէրաս. սիմէօն:
32 *Բենիամին. մաղուք. սամարիա:
33 *Եւ յորդւոցն ասեմ. մատթանիա.
մատաթիա. զաբաթ. եղիփաղէթ.
34 յերեմի. մանասէ. սամէի: *Եւ յորդ_
ւոցն բանի. մովադիա. ամրամ. ուէլ:
35 *Բանեայ. բադայիա. քեղիայ:
36 *Ուանիա. մարիմոլթ. եղիասիբ:
37 *Մաթանիա. մաթանայ:
38 *Եւ արարին որդիքն բանի, և որ_
39 դիքն սեմէի: *Սելեմիաս. նաթան.
40 ադաղիաս: *Մաքնա գայագու. սե_
41 սեարու: *Եզրիէլ. սաղամիաս. սա
42 մարիաս: *Սեղում. ատարիաս. յո_
43 սէփ: *Յորդւոցն. աբուիէ. իէ_
ուէլ. մատաթիաս. զաբադ. զեբին_
նաս. յադայի. յադէ. յովէդ. բա_
44 նայիա: *Բոլոր էին ամենեքեան.
որք ունէին զկանայս յայլազգեացն. և
ծնան'ի նոցանէ ուստերս և դստերս:

ԳԻՐՔ ՆԵԵՄԵԱՅ ·

ՈՐ ԵՒ ԵՐՐՈՐԴ ԵԶՐԱՍԱՅ ԱՍԻ · ՈՐ Է

ԸՍՏ ԼԱՏԻՆԱՑԻՈՑՆ ԵՐԿՐՈՐԴ ·

Գլուխ Առաջներորդ ։

ԵՒԵՂԵՒ 1
ՅԱՄՍԵԱՆՆ
քասղև · յամի
քսաներորդի ար
տաշէսի արքայի ·
ես էի 'ի շուշ
'ի մայր քաղա_
քացն աբիրայ ։
* Եւ եկն առիս յեղբարց իմոց · նա 2
և արք յուդայ · և հարցի զնոսա վասն
փրկելոցն · որք ապրեցան , և եկին 'ի
գերութենէն՝ և վասն եմի ։ * Եւ ա_ 3
սեն ցիս՝ զերծեալքն 'ի գերութենէն՝
անդ են յաշխարհին իւրեանց 'ի մեծ
նեղութեան և 'ի նախատինս · և պա_
րիսպքն եմի կան նոյնպէս քակեալք
և աւերեալք · և դրունք նորա հրկի_
զեալք հրով ։ * Եւ եղև յորժամ լուայ 4
ես զբանս զայս՝ նստայ՝ և լացի · և
զաւուրս սուգ առի զաւուրս · և պահեցի պահս ·
բազումս և կացի յաղօթս առաջի Տն Այ երկ
նից ։ * Եւ ասեմ ։ Տր Այ երկնի և 5
երկրի · որ զօրաւորդ ես և մեծ՝ և ա_
‖ Դան. հարկու · ‖ պահես զուխտ և զողոր_
9.4. մութիւն · որք սիրեն զքեզ · որք և պա
հեն զօրէնս քո ։ * Եղիցին ականջք քո 6
'ի լսել · և աչք քո 'ի տեսանել ։ և արդ
լուր · և տես զաղօթս ծառայի քո՝ զոր
ես այսօր մատուցանեմ առաջի քո ·
վս որդւոցն իղի ծառայից քոց՝ որք
մատնեցաք 'ի նեղութի վս մեղաց մե
րոյ · զորս մեղաքն · ես՝ և տուն հօր ի_
մոյ , մեղաք ։ * Ազի յանցանելով 7
յանցեաք · և ոչ պահեցաք զօրէնս՝ և
զհրամանս · և զդատաստանս քո · զորս
պատուիրեցեր մզ 'իձեռն ծառային
8 քոյ մովսէսի ։ * Յիշեա՛ Տր զբանն · զոր
պատուիրեցեր ծառային քոյ մովսէսի ·
և ասացեր · եթէ դուք ոչ պահեսջիք
զօրէնս իմ · և ես ցրուեցից զձեզ ընդ
9 հեթանոսս ։ * Եւ եթէ դարձջիք՝ և
պահեսջիք զօրէնս իմ · և արասջիք
զնոսա · և եթէ իցէք ցրուեալք մին_
չև 'ի ծագս երկրի՝ և անտի ժողովե_
ցից · և ածից զձեզ 'ի տեղին · զոր ընտ
րեցից · և յորում բնակի անուն իմ 'ի
10 նմա ։ * Եւ արդ սոքա ծառայք քո՝ և
ժողովուրդք · զորս փրկեցեր զօրու_
թ̃ք քով մեծաւ՝ և բարձր բազկաւ ։
11 * Մի թողուր 'ի ձեռաց · այլ եղիցին
ականջք քո հայիլ յաղօթս ծառայից
քոց · և անսալ խնդրուածոց · որոց
երկնչին յանուանէ քումմէ · և յաջո_
ղեա՛ զխնդրուածս ծառայի քոյ այսօր ·
և տուր ինձ գտանել զգթութիւնս ա_
ռաջի առնս այսորիկ ։ և ես էի տա_
կառապետ թագաւորին ։

Գլ. Բ ։

1 ԵՒ եղև յամսեանն նիսան 'ի քսան
երորդի ամի արտաշէսի արքայի ·
և խնդրեաց յինէն գինի · և առեալ
զգինին ետու թագաւորին և էր թա
գաւորն միայն · և յորժամ էարբ զգի
2 նին ։ * Ասէ ցիս · ընդէ՞ր տրտում և
տխուր են երեսք քո · և ոչինչ են այժմ
պատճառք , եթէ ոչ չարութի սրտի
3 քոյ ։ և ես երկեայ յոյժ ։ * Եւ ասեմ
ցթագաւորն · արքայ՝ դու յաւիտեան
կեաց · ընդէ՞ր ոչ տրտում, և տխուր
լինիցին երեսք իմ · վասնզի քաղաքն և
տուն

տուն Հօր իմոյ անապատ է. և դրունքն
ապականեալք ի հրոյ։ * Եւ ասէ ցիս 4
Թագաւորն. վասն որոյ իրաց խնդրես
դու զայս։ և կացեալ իմ յաղօթս՝ և
ամբարձեալ զիմս առ Տէր Աստ
երկնից։ * Եւ ասեմ ցԹագաւորն. եղի 5
ցի՝ իբրեւ թագաւորութեդ քոյ բա
րի է. և եթէ եգիտ ծառայ քո շնորհս
առաջի երեսաց քոց. և կամիս, յղեա
զիս ի հրեաստան ի քաղաք յիշատա
կարանաց հարցն իմոց. և ես բանիւք 6
հրամանի քոյ շինեցից զնա։ * Եւ ասէ
ցիս Թագաւորն և Տարձն նորա. որ
նստէր առ նմա. յորժամ ժամանես
դու. և կամ երբ դարձցիս։ և արար
առ իս բարութի Թագաւորն՝ և ար
ձակեաց զիս. և ես կալայ առ նմա
ժամանակ։ * Եւ ասացի ցԹագաւո 7
րն. եթէ գտի շնորհս առաջի քո.
տուր ինձ Թուղթս առ իշխանս կող
մանց գետոյն. և տարցին զիս՝ մինչև
երթայց ի հրեաստան։ * Եւ Թուղթ 8
մի առ ասափ. որ է պահապան դրախ
տին արքունի. զի տացէ ինձ փայտս
ի կազմած դրանցն՝ և պարսպաց քա
ղաքին՝ և տանն. յոր ես մտից անդր և
եաս ինձ Թագաւորն. և ետ զի ձեռն Աստ
իմոյ էր ընդիս բարութի։ * Եւ եկի 9
առ իշխանս գետոյն. և ետուս առ նո
ցա զԹուղթս Թագաւորին. և առաքեաց
ընդիս Թագաւորն առաջնորդս զօ
րաւորս՝ և ձիս։ * Եւ լուան սանաբա 10
ղատ իշխան. և տուբեհա ծառայ ամո
նի. և չար Թուէեցաւ առաջինդ. վասն
խնդրեցի ազա ի բարւոիս և ի պէտս
եղի։ * Եւ եկի յԵրէմ, և եղէ անդ 11
աւուրս երիս։ * Եւ յարեայ ի գիշերի 12
ես՝ և սակաւ արք ընդ իս. և ոչ պատ
մեցի արանցն. եթէ զինչ Աստ ետարկ
ի սիրտ իմ առնել ի Երուսաղէմ. և գրաստ
ոչ էր ընդիս. բայց ի գրաստ. յորոյ
վերայ նստէի ես։ * Եւ ելի ես ընդ 13
դուռն հեղեղատին՝ և առ բերանով
երկրի Թզենւոյն՝ և մինչև ի դուռն
աղբերցն. և ճանեւին ի նեղութի ան
ցին առ պարսպաւն Երէմի. զոր էին
նոցա սրթեալ. և դրունք նր ապակա
նեալք էին ի հրոյ։ * Եւ անցի ընդ 14
դուռն աղբերն առ ջրբղխօք Թագա
ւորին. և ոչ էր անդ տեղի գրաստու
իմոյ՝ անցանել ընդ նա հեծեալ։ * Եւ 15
ելանէի ի վեր ի պարիսպն առ հեղե
ղատուն գիշերի. և ի նեղութենէն
էի ճանեալ ի պարսպին. և էի առ
դրան ձորոյն. և դարձայ։ * Եւ ոչ 16
գիտացին պահապանքն. եթէ զի՞ էի
երթեալ՝ և կամ զինչ առնէի. և հրէ
իցն՝ և քահանայիցն՝ և պատուակա

նացն՝ և զօրագլխաց՝ և այլք. որք վձա
րէին զիրս գործոյն. մինչ ցայն վայր 17
ոչ պատմեալ էր նոցա։ * Եւ ասացի
ցնոսա. դուք տեսէք զչարիսս յորում
եմք այժմ. և զիմոյդ եէմ՝ անապատ է
և դրունք սորա հրկէզք. եկայք՝ և շի
նեսցուք զպարիսպս Երէմի. և ոչ եւս
եղիցուք ի նախատինս։ * Եւ պատ 18
մեցի նց զձեռն Աստ. որ էր ընդ իս բա
րութի. և զբանս Թագաւորին. զոր
ասաց ցիս. և ասեմ ցնա. արդ եկայք՝
յարիցուք՝ և շինեսցուք։ և զօրացան
ձեռք նոցա ի բարութի։ * Եւ լուան 19 արօնացի
սանաբաղատ արօն՝ և տուբեհա ծա
ռայ ամմնի. և գեսամ արաբացի. և
ծաղր առնէին զմեզ. և էկին առ մեզ.
և ասեն ցմեզ. զի՞նչ են իրքդ սյդ.
զորս դուքդ առնէք. և կամիք դուք ի
Թագաւորէն ապստամբել։ * Եւ ետու 20
պատասխանի նոցա՝ և ասեմ. Աստ երկ
նից և երկրի յաջողեսցէ մեզ. և մեք
ծառայք նր եմք սուրբք. և շինեմք
զքաղաքս. և ձեզ ոչ գոյ բաժին՝ և
յիշատակ՝ և արդարութի յԵրէմ։

Գլ. Գ.

Եւ յարեաւ Եղիասիբ քահանայ 1
մեծ՝ և եղբարք նր քահանայք.
և շինեցին զդուռն աճաղանայ ջրմը
ղին. և սրբեցին զնա. և կանգնեցին
զդրունս նր. և կանգնեցին զնա մին
չև յաշտարակն անասնայելի։ * Եւ ի 2
ձեռն որդւոց արանց երիքովի. և ի
ձեռն որդւոց զաքուր, որդւոյն ամրի։
* Եւ զդուռն նեքտիւբան շինեցին 3 ձկանց
որդիքն ասանայ. և նորա յարդարեալ
կազմեցին զնա. և զփականս՝ և զնիգս
նորա։ * Եւ ի ձեռանէ նոցա ունէին 4
մեսոզամ որդի բարաքի. որդի մեսե
զբէլ. և ի ձեռանէ նոցա ունէին
սադովկ որդի բաանայ։ * Եւ ի ձե 5
ռանէ նոցա ունէին թեկուացիդ որեմ.
և ոչ արկին զպարանոցս ի ծառայու
Թի նց։ * Եւ զդուռնն հին ունէին 6
յոյդայ որդիք փասեկ. և մեսոզամ.
որդի բասոդիայ. և սոքա կազմեցին
զնա՝ և կանգնեցին զդրունս նորա. և
զդռնափակս. և զնիգս։ * Եւ ի ձեռ 8
նոցա՝ ի կարգին՝ կալաւ անանիա որ
դի հառսհէլիմ. և եթող եէմացւոցն
մինչև ի պարիսպն հրապարակաց։
* Եւ ձեռն նց կալաւ հռափիա իշխան 9
կողմանց տեղեացն եէմի։ * Եւ ի ձե 10
ռանէ նորա կալաւ յերդէիա որդի
յերոմաք. և ի կողմանէ տանն իւրոյ.
և ի ձեռանէ նր կալաւ ատտուս որ
դի սաբանիայ։ * Եւ երկրորդ կալաւ 11
մեղքիաս որդի երամ. և ասուբ որդի

փառաց մուլաք. մինչև յաշտարակն
Թանուրիմ: *Եւ 'ի ձեռանէ նորա 12
կալաւ սաղում որդի աղոհեմ՝ իշխան
Երուսա կիսոյ կողմանն իլէի. ինքն և դստերք
ղէմ իւր:*Եւ զդուռն ձորոյն կալաւ անուն. 13
և որք բնակեալ էին 'ի զանու. նոքա
շինեցին զնա. և կանգնեցին զդրունս
նր. և զփականս և զնիգս. և հա_
զար կանգուն շինեցին 'ի պարսպէն
մինչ 'ի դուռն մոխրոցին:*Եւ զդուռն 14
մոխրոցին կալաւ մեղքիայ որդի՝ հռե
քաբ իշխան տեղեացն բեթաքարմայ.
Ինքն և ինքն և տեղիք իւր. և արկին զնա. և
որդիք կանգնեցին զդրունս՝ և զփակս, և
իւր զնիգս նր: *Եւ զպարիսպ Ջրբուղխ 15
աղբերն կալաւ ադիոզի իշխան Թա_
գաւորին մինչև յաշտիճանսն՝ որ իջա
նէ 'իքաղաքէ դաւթի: *Եւ զհետ 16
նր կալաւ նեեմիա որդի ազբուք՝ իշ_
խան կողմանն բեթսուր մինչև 'իպար
տէզ տեղեացն դաւթի. մինչև 'ի Ջր_
բուղխան կազմելոյ. և մինչև ցբեթա
գաբարին: *Եւ զհետ նր կալան ղև 17
տացիքն. հռայում որդի բանեայ. և
'ի ձեռանէ նոցա կալաւ ասաբիա՝ իշ
խան կողմանցն կեիղայ: *Եւ զհետ 18
նր կալան եղբարք նր. բենայի՝ որդի
Հիւսոյ ադադ. իշխան կողմանց կեիլայ:*Եւ 19
Ճաշէն զհետ նր կալաւ ազուր որդի յեսու.
իշխան մասփեայ. չափ երկրորդի
Խառ_ պարսպին. որ ելանէր և խոռնէր յան
նէար կիւնս աշտարակին: *Եւ զհետ նր 20
կալաւ բարուք որդի զաբու. չափ երկ
րորդ յանկիւնէն մինչև 'ի դուռն բե
Եղիա_ թեղիասուբ. ուր կայր քահանայն
սուբ մեծ:*Եւ զհետ նր կալաւ մերամօթ 21
որդի ուրիայ. որդի ակովմ. չափ երկ
Եղիա_ րորդ 'ի դրանցն բեթեղիասուբ մինչ
սուբ 'ի սպառուած նորա: *Եւ զհետ նր 22
ատեկորայ կալան քահանայքն արք աքերայ:*Եւ 23
զհետ նր կալաւ բենիամին և ասուբ
առաջի տանց իւրեանց. և զհետ նր
կալաւ ազարիա որդի մասու. որդի
անանիայ մօտ առ տամբն իւրով:
*Եւ զհետ նր կալաւ բանի որդի են 24
դադայ. չափ երկրորդ 'ի բեթազարայ
մինչև յանկիւնն: *Եւ զշրջան դար_ 25
ձի տեղւոյն կալաւ փաղաք որդի ու_
զիայ ընդդէմ անկեանն. և զաշտա_
րակն. որ էր արտաքոյ ապարանից Թա
գաւորին վերագոյն քան զգաւիթ
բանտին. և զհետ նորա փաթաւայ որ
դի փորոնայ: *Եւ նաթանայիմքն՝ 26
որք բնակեալքէին յոփաղէոս պարտի
զի դրան Ջրոյն կողմանն արևելից: և
աշտարակն. որ արտաքոյ կողմանն:
*Եւ զհետ նր կալան թեկուացիքն. 27
չափ երկրորդ ընդդէմ աշտարակին
մեծի. որ էր արտաքոյ՝ մինչև 'ի պա_
28 րիսպն սովփեղայ: *Եւ վերագոյն
դրան ձիոյն կալան քահանայքն՝ այր
իւրաքանչիւր հանդէպ տանց իւրոց:
29 *Եւ զհետ նր կալաւ սադովկ որդի
եմեր հանդէպ տան իւրոյ. և զհետ
նր կալաւ սամէիա. որդի սեքենեայ.
որ էր պահապան արևելից: և զհետ
նր կալաւ անանիա որդի սեղեմիայ.
և անոմ որդի սեղեփոյ չափ երկրորդ:
և զհետ նորա կալաւ մեսուղամ որդի
բարաքիայ՝ ընդդէմ գանձու տանն
30 իւրոյ: *Եւ զհետ նորա կալաւ մեղ
քիա որդի սարեփի. մինչև 'ի բեթա
նաթան. և այլք մեծատունք քաղա_
քին հանդէպ դրանն մափկաթ մինչև
31 յելս շրջանակին: *Եւ 'ի մէջ դրանն
Ջրբղխայ կալան քեղկիա, և մեծա_
տունք քաղաքին:

ԳԼ: Գ:

1 Եւ եղև իբրև լուաւ սանաբա_
ղատ եթէ մեք շինեմք զպա_
րիսպն՝ և կանգնեմք զաշտարակս նր.
չար թուեցաւ առաջի նորա՝ և զայրա
ցեալ ուժգին ծաղր առնէր զհրեա
2 յսն. *Եւ ասէ առաջի եղբարց իւր
ոց. այս է զօրութի ձեր՝ ով սամա_
րացիք. և զի՞արդ հրեայք շինեն. և
ամրացուցանեն զքաղաք իւրեանց:
3 *Եւ տուբիաս ամմանացի, 'ի տես ե_
կեալ առ նոսա, ասէր. մի կարիցեն շի Գ Բէ
նել և զոհել զոհս. և կամ ուտել զնոճ
էրսն 'ի տեղւոջն իւրեանց. և ոչ ելա
նեն այժմ աղուէսք, և քակեն զքա_
րինս պարսպաց նորա: և ասեմք մեք:
4 *Լուր մեզ ՏՐ ԱԾ մեր՝ զի եղեաք
մեք յարհամարհանս և 'ի թշնամանս.
և դարձո զնախատինս նոցա 'ի գլուխս
իւրեանց. և տուր զնս 'ի թշնամանս
5 առաջի գերչաց նոցա: *Եւ մի ծած
կեսցես անօրէնութիք՝ և ոչ մեղքնց
յերեսաց քոց ջնջեսցին. քանզի այ_
6 պանեցին զշինօղս: *Բայց հետև
շինեցաք զպարիսպն զայն. և շրջափա
կեցաք զպարիսպն մինչև 'ի կէս նորա.
և եղև սիրտ ժողովրդեանն առ 'ի կա
7 տարել: *Եւ եղև իբրև լուան սա_
նաբաղատ և տուբիաս. արաբացիք՝
և ամոնացիք՝ թէ յաջողեցաւ շինու
ած պարսպին երուսաղէմի. և սկսաք
իւրաքանչիւր տեղեացն գործն երև
եցուցանել. թուեցաւ չար առաջի
8 նոցա: *Եւ ժողովեցան ամենեքեան
'ի միասին. գալ և պատերազմիլ ընդ
9 երուսաղէմի: *Եւ կացաք յաղօթս
առ ՏՐ ԱԾ մեր. և կացուցաք պա_
հանորդս 'ի վերայ մեր 'ի տուէ և 'ի
գիշե_

գիշերի առ 'ի յերեսաց թշնամեացն։
* Եւ ասեն արք հրեաստանի. ոչ 10
բաւեմք այսպիսի՝ պատերազմիլ. և
շինել միանգամայն. այլ ոմանք կազմ
կացցեն զինու. և ոմանք շինեսցեն։
* Եւ ասեն՝ որք զմեզ նեղէին. ոչ 11
տամք նոցա գիտել՝ և ոչ տեսանել.
մինչև յիւրաքանչիւր տեղեաց յարու
ցեալ եկեսցուք 'ի մէջ նոցա. և սպան
ցուք զնոսա. և խափանեսցուք զգոր
ծըս նոցա։ * Եւ եղև իբրև եկին 12
հրէայքն. որք բնակեալ էին 'ի տեղիս
տեղիս. և ասացին ցմեզ. եթէ ելանեն
յանկարծակի, յա̃մ տեղեաց 'ի վե_
րայ մեր։ * Եւ կացուցի 'ի խոնարհա 13
գոյն տեղիսն յետոյ պարսպին ը̃ն յար
կօքն արս հանդերձ զինու՝ և գեղար
դեամբ՝ և աղեղամբ իւրեանց։ * Եւ 14
իմ յարուցեալ ասեմ ցարսն. որք կազմ
պատրաստեալ կային. և ցզօրագլուխս
նոցա՝ և ցայլս որք տեղեաց տեղեաց
պահապանքն էին։ մի երկնչիք յերե_
սաց նոցա. յիշեցէք զԱ̃ծ մեր զմեծ,
և զահարկու՝ և պատերազմեցարո՛ւք
վ̃ն եղբարց ձերոց. և վասն կանանց և
որդւոց և դստերաց և տանց ձերոց։
* Եւ եղև յորժամ լուան թշնամիքն 15
մեր, թէ իմացաք. և կազմեալ պատ
րաստեցաք. ցրուեաց Ա̃ծ զխոր_
հուրդս նոցա. և մեք ամենեքեան դար
ձաք 'ի շինել զպարիսպն՝ այր յիւրաքան
չիւր գործ իւր։ * Եւ եղև յորէ յայն_ 16
մանէ. կէսքն կարգեալ էին 'ի գործն.
և կէսքն զինեալ ը̃դդէմ թշնամեացն.
և գեղարդն՝ և ասպար՝ և աղեղն՝ 'ի ձե
ռին իւրեանց. և կայր պատրաստ այր
իւրաքանչիւր յետոյ եղբօր իւրում։
* Որ շինէր զպարիսպն. և էր ժամ զի 17
օգնէր եղբօր իւրում կրելով զզէնն 'ի
ձեռին իւրում. և միւսով ձեռամբն
տայր ցեղբայր իւր զխիճն՝ կամ զտա
ղախ։ * Եւ որք շինէինն՝ ունէր այր 18
զսուսեր իւր ը̃ն մէջ իւր՝ և զմիասայրի
'ի վ̃ր բարձի իւրոյ. և այնպէս շինէին
զպարիսպն եէմի։ և որ հարկանէր
զփողն եղջերեայ. կայր մօտ առ ն̃ս։
* Եւ ասեն ցայնս՝ որք կային զինեալ և 19
պատրաստեալ՝ և ցիշխանսն նց̃. գործս
մեծ և ընդարձակ է. և մեք ցրուեալ
եմք 'ի շինուած պարսպիս. և հեռի
եմք 'ի միմեանց՝ այր յեղբօրէ իւրմէ։
* Արդ կացուսցուք 'ի տեղիս տեղիս 20
զարսն. որք հարկանեն զփողսն. և յոր
ժամ լսիցէ ոք զձայն եղջեր փողոյն՝
անդր ժողովեսցին ամենեքեան, և Ա̃ծ
մեր պատերազմեսցի ը̃ն թշնամիս մեր՝
վ̃ն մեր։ * Եւ կէսքն գործէին. և 21
կէսքն ունէին զզէնսն պատրաստ 'ի
ծագել առաւօտուն մինչև յելանել
22 աստեղն։ * Եւ ասեմ ես ցարս ժողո
վրդեանն. եկեսցուք՝ և բնակիցուք 'ի
մէջ քաղաքիս եէմի. և զցայգ պահ
արկցուք զմեօք շուրջ. և զցերեկ գոր
23 ծեսցուք։ * Եւ կացի ես՝ և արքն. որք
շուրջ զինև պահէին զիս. և ոչոք էր
'ի մէնջ. որ մերկանայր. և կամ հանէր
զզէն իւր յինքենէ։

Գլ. Ե.

1 Եւ եղև աղաղակ մեծ 'ի ժողովր
դեանն. և կանանց իւրց̃, այր առ
2 եղբայր իւր։ * Եւ ասեն վ̃ն որդւոց
մերոց՝ և դստերաց մերոց. որոց պակա
սեցան կերակուրք. երթիցուք՝ գնես
3 ցուք՝ և կեցցուք։ * Եւ ոմանք ասէին
զանդաստանս մեր՝ և զայգիս դիցուք
'ի գրաւի. և առցուք ցորեան. և կերի
4 ցուք։ * Եւ էին ոմանք. որք ասէին՝
տացուք զստացուածս մեր. և առցուք և առ_
զսակի. և զարծաթ. և տուաք 'ի հարկս ցուք զա
5 թագաւորի։ * Եւ արդ որպէս մար_ կէ և զար
մինք եղբարց մերոց, են մարմինք մեր. ծաթ, և
և որպէս որդիք նոցա՝ որդիք մեր. և փոխոք
արդ՝ ընդէր տուաք մեք զորդիս մեր
'ի ծառայութիւն. և դստերք մեր վա
րեալ են 'ի բռնութ̃ի. և ոչ գոյ 'ի ձեռս
մեր կար՝ որով փրկեսցուք զնոսա։
6 * Եւ տրտմեցայ եսյոյժ՝ յորժամ լուայ
7 զաղաղակն՝ և զբանս նց̃։ * Եւ արարի
խորհուրդ ընդ միտս իմ. և կագեցայ
ընդ պատուականս նց̃. և ասեմ ցն̃ս.
դուք էք. որք խնդրէք զհարկս յեղ
բարց ձերոց. և հրամայեցի նց̃ լինել
8 ժողով մեծ։ * Եւ ասեմ ցնոսա. մեք
փրկեսցուք զեղբարս մեր զհրէայս՝
որք վաճառեցան հեթանոսաց. զորս
մեք ոչ գիտացաք. և դուք վաճառե
ցիք զն̃ս։ և լռեցին. և ոչինչ կարացին
9 տալ պատասխանի։ * Եւ ասացի՝ ո՛չ
բարւոք է գործդ. զոր դուքդ առնէք.
վ̃նզի ոչ երկնչիք յԱ̃յ. և վասնայսո_
րիկ ո՛չ ևս զերծ աք մեք 'ի նախատա_
նաց հեթանոսաց՝ և թշնամեաց մերոց։
10 * Եւ ասեմ ես ցեղբարսն իմ, և ցծա
նօթս. և ես և դուք տացուք զարծաթ
և արդիւնս 'ի փրկանս. զոր խնդրեն
11 հարկահանքդ։ * Եւ դարձուսցուք
այսօր զանդաստանս՝ զայգիս՝ և զձի_
թենիս՝ և զտունս դոցա. և ը̃ն արծա
թոյ մերոյ գնեսցեն զցորեան՝ և զգի
12 նի և զձէթ՝ և բերցեն դոցա։ * Եւ ասեն
իշխանքն՝ և այլ մեծամեծքն. դար_
ձուսցուք անդրէն՝ և 'ի դոցանէ ո՛չ
ինչ խնդրեսցուք. և այդ պէս արաս_
ցուք. որպէս հրամայեցերդ։ և կո_
չեցի զքահանայսն. և երդմնեցուցի
զնոսա

զնոսա վասն բանիս այսորիկ ։ *Եւ 13
զգրկանելին իմ թօթափեցի ուժգին․
և ասեմ․ այսպէս թօթափեսցէ Ա՟Ծ
զամենայն․ որ ոչ կատարեսցէ զբանս
զայս, 'ի կենաց իւրոց․ և 'ի տեղեաց իւ_
րոց եղիցի այսպէս ունայնացեալ՝ և
թօթափեալ 'ի կենաց իւրոց ։ և ասա
ցին ա՟մ ժողովուրդ եկեղեցւոյն այնորիկ,
ամէն․ և օրհնեցին զՏ՟Ր․ և արարին՝ և
կատարեցին ամենայն ժողովուրդքն
զբանս զայս ։ *Եւ յօրէն յայնմանէ․ 14
յորմէ հետէ պատուիրեցի․ զի մի՛ լի
ցին նոցա իշխանք յուդայ․ 'ի քսան
երորդի ամին․ մինչև յամն երեսներորդ
երկրորդ արտաշէսի արքայի զերկոտա
սան ամ, ես և եղբարք իմ եղեաք իշ_
խանք․ բռնի զուրուք մեք ոչ կերաք՝
և արբաք ։ *Եւ որք էին բռնացեալք՝ 15
զառաջինն ծանրացուցին նց․ և առի
'ի նոցանէ զհաց և զգինի․ և զայլ ա՟մ
արծաթ դիդրաքմայս քառասուն ․
և դարձուցի 'ի տեարս իւրեանց ․ և
'ի բաց արարի զնոսա յիշխանութենէ ժո
ղովրդեանն․ և ես ո՛չ եղէ իբրև զնոսա
վասն երկիւղին Ա՟Յ ։ *Եւ յաջողէր 16
գործ պարսպին․ և ոչ զուրուք բռնա
ցայ ունիլ զանդաստանս, և կամ զայ_
գիս․ և ամենեքեան էին անխափան
'ի գործ պարսպին ։ *Եւ արս հարիւր 17
'ի հրէից․ և այլք՝ որք գային 'ի հե_
թանոսաց առ մեզ․ որք շուրջ էին
զմեօք․ ես ծախէի՝ և խառնէի 'ի ճաշն
իմ ։ *Եւ լինէր յաւուր միում զուա_ 18
րակ մի․ և ոչխարք վեց ընտիրք․ և ա_
միկ մի․ այս էր յաւուր ծախքն իմ․ և
ը̃ մէջ տասն աւուր անխնայէի զգինին
ըմպել ամենեցուն․ և ոչ յումեքէ առի
զհաց բռնի․ քանզի գիտէի եթէ ծանր
է գործ ժողովրդեանն ։ *Յիշեսցէ 19
զիս Ա՟Ծ 'ի բարութիւն ․ որպէս արարի
ա՟մ ժողովրդեանն ։

Գլ․ Զ։

Եւ եղև յորժամ լուաւ սանաբա 1
ղատ և տուբիաս՝ և երկիրն արա
բացւոց՝ և այլք բազումք 'ի թշնա_
մեաց մերոց՝ եթէ շինեցի զպարիսպն․
և ոչ մնաց 'ի նմ զօրութիւն․ և յայնժամ
զմիւս դրունսն ո՛չ էր կազմեալ ։ *Եւ 2
առաքեցին սանաբաղատ և գեսամ
առ իս․ և ասեն ․ եկ՝ և ժողովեսցուք
'ի միասին 'ի գեօղ մի 'ի դաշտին ոնոյ․
և նոքա կամէին խորհիլ չար 'ի վերայ
իմ ։ *Եւ առաքեցի առ նոսա հրեշ_ 3
տակս , և ասեմ․ գործս , զոր գոր_
ծեմ ես՝ գործ մեծ է ․ և ո՛չ ժամա_
նեմ իջանել առ ձեզ՝ զի մի խափանես
ցի գործս․ յորժամ կատարեմ զսա ,
4 ապա իջից առ ձեզ ։ *Եւ առաքեցին
առ իս բազումանգամ ․ և ես զնոյն
5 պատասխանի արարի նց ։ *Եւ առա_
քեաց առ իս սանաբաղատ զպատանի
իւր․ և ունէր 'ի ձեռին իւրում թուղթ
6 արձակ ։ *Յորում գրեալ էր այսպէս՝
յամենայն հեթանոսս լուր եղև ․
եթէ դու՝ և ա՟մ հրէայք կամիք ապս
տամբիլ 'ի թագաւորէն՝ և վասն այնո
րիկ շինես դու զպարիսպդ՝ և ամրա_
ցուցանես զաշտարակս դորա ․ վասն
7 զի կամիս դու թագաւորել ։ *Եւ
վասն այնորիկ կացուցեր քեզ մարգա
րէս ․ զի կամիս նստիլ յերուսաղէմ ։
և թագաւորել 'ի վերայ հրէաստանի․
արդ գուցէ պատմեսցեն զբանս զայս
թագաւորին ․ եկ՝ և վասն այսր եր_
8 կոքեանս խորհիցուք ։ *Եւ առաքեցի
առ նա՝ և ասեմ ։ ո՛չ ուստեք են բանքդ
այդ՝ զոր դու խօսիս ․ այլ քեզէն 'ի
9 սրտէ քումմէ դու ասես զայդ ։ *Զի
ամենեքեան զարհուրեցուցանէին ըզ
մեզ՝ և ասէին ․ լքցին ձեռք իւրեանց ․
և մի՛ կատարեսցեն զգործս իւրեանց ․
և արդ զօրացուցի զձեռս իմ ․ մինչև
10 կատարեսցի գործս 'ի գլուխ ։ *Եւ ես
մտի 'ի տուն սիմեայ որդւոյ դաղայիայ․
որդւոյ մետաբեղայ ․ և նա էր լռեալ
'ի տան իւրում ․ և ասէ ցիս ․ ժողովի
ցուք 'ի տուն Տ՟Ն․ և ամրասցուք 'ի միջի
դորա ․ և փակեսցուք զդրունս դորա ․
զի մի՛ գուցէ եկեալ թշնամիքն գիշե_
11 րի սպանանիցեն զմեզ ։ *Եւ ասեմ
ես՝ ո՞վ է այն այր․ յորմէ ես փախեայց ․
և կամ ո՞ք իբրև զիս այր ․ որ մտցէ
'ի տուն Տ՟Ն․ և կարասցէ ապրիլ ։
12 *Եւ գիտացի՝ եթէ ոչ էր Ա՟Յ առա_
քեալ․ և ոչ էր բան մարգարէի վ՟ն իմ ։
13 *Եւ տուբիաս՝ և սանաբաղատ կա_
լան վարձկանս ․ և ժողովս բազումս
վ՟ն իմ ․ զի երկեայց ․ և մտից 'ի տուն
Տ՟Ն՝ և մեղայց ․ և դիցեն 'ի վ՟ր իմ ա_
14 նուն չար ։ *Յիշեսցէ Ա՟Ծ ը̃ նենգու_
թենն տուբիայ՝ և սանաբաղատայ ․ ոյք
խորհեցան 'ի վ՟ր իմ չար ․ և սոփերին
սուտ մարգարէանալ՝ զի զարհուրե_
15 ցուսցեն՝ և երկեցուսցեն զիս ։ *Եւ
կատարեցաւ պարիսպն 'ի քսաներորդի
հինգերորդ ամսոյն ելուլի՝ յիսուն և
16 երկու աւուրս ։ *Եւ եղև յորժամ
լուան ա՟մ թշնամիքն մեր ․ զարհուրե
ցան ամենայն հեթանոսքն ․ որք շուրջ
զմեօք ․ և անկաւ 'ի վ՟ր նց ահ և եր_
կիւղ յոյժ ․ և գիտացին՝ թէ յԱ՟Յ էր
17 կատարումն գործոյս մերոյ ։ *Եւ
յաւուրսն յայնոսիկ մեծաւ պատուով
առաքիւր թուղթ 'ի հրէից առ տու_
բիայ ․ և 'ի տուբիայէ գայր առ նա ։

*Բան_

* Քանզի էր ընտանութիւն մեծ առ մի_ 18
մեանս. զի էր փեսայ սեքենիայ որդ_
ւոյ երայ. և յովնաթան որդի նորա ա_
ռեալ էին զդուստր մեսուղամայ որդ_
ւոյ բարաքիայ ։ * Եւ զբանս նր բե_ 19
րէին առ իս. և զբանս իմ պատմէին
նմա. և թուղթս բազումս տայր առ
՚ի երկեցուցանել զիս ։

ԳԼ ։ Է ։

Սիրաք 49.15.

ԵՒ եղև յորժամ կատարեցաւ 1
պարիսպն՝ և կանգնեցի զդրունս
նր. և կացին դռնապանք՝ և երգե_
ցիկք. սաղմոսասացք՝ և ղևտացիք ։
* Եւ պատուիրեցի եղբարցն իմոյ՝ և 2
անանիայ. որ էր իշխան ՚ի վր եճմի.
վզի նա էր ճշմարիտ այր՝ և երկիւ_
ղած յԱՅ քան զբազումս ։ * Եւ ա_ 3
սեմ ցնոսա, մի՛ բանայցեք փողփողա_
կի զդրունան մինչև ՚ի ծագել արևուն
և մինչ դեռ ամենեքեան արթունք
իցեն, կալցեն զդրունան. և փակ արկէ՛
պնտեսցեն զնոսա. և կացցեն պահա_
պանք դրանց՝ և բնակչաց երճմի՝ այր
՚ի պահու իւրում. և այր իւրաքանչիւր
՚ի տան իւրում ։ * Վասն զի քաղաքս 4
մեծ և ընդ արձակ էր՝ և ժողովուրդս
սակաւ ՚ի նմա. և ոչ ևս էին դեռ տուն
ապարանք շինեալք ։ * Եւ էարկ ՏԾ 5
՚ի սիրտ իմ, և ժողովեցի զպատուա_
կանսն՝ և զիշխանսն՝ և ժողովուրդն
՚ի ժողովս՝ և գտի զգիրսն ազգահա_
մարին՝ որք էին ելեալք յառաջնում
՚ի գերութենէն. և էր գրեալ ՚ի նմա այս

Եզրա 2. 1.

պէս ։ * Այսոքիկ են անուանք որդ_ 6
ւոցն իլի՝ որք ելին ՚ի գերութենէն՝
զորս պանդխտեցոյց նաբուգոդոնո_
սոր թագաւոր բաբելացւոց. և դար_
ձան յերճմ, և ՚ի հրէաստան. այր իւրա
քանչիւր ՚ի քաղաք իւր ։ * Որք եկին 7
ընդ զորաբաբելի՝ և ընդ յեսուայ՝ և
ընդ նեեմիայ ազարիանց ։ դայէմիայ.
նաեմանի. մարդոքէոս. բեղսան. մա
սաափարաթ՝ եզրայ. բագուէիէ. նաւ_
ում. բարանայ. միփրայ ։ արք ժողո_
վրդեանն իլի ։ * Որդիք փորոսայ. եր 8
կուհազար հարիւր և եօթանասուն և
երկու ։ * Որդիք սափատիայ. երեք_ 9
հարիւր եօթանասուն և երկու ։ * Որ 10
դիք արեսայ. վեցհարիւր յիսուն և
վեց ։ * Որդիք փարաթմովաբ յորդ_ 11
ւոցն յեսուայ և յովաբայ. երկուհա_
զար երկուհարիւր ութն և տասն ։
* Որդիք եղամ. հազար երկուհարիւր 12
յիսուն և չորս ։ * Որդիք զաթուայ . 13
ութհարիւր քառասուն և հինգ ։ * Որ 14
դիք զաքու՝ եօթնհարիւր վաթսուն ։
* Որդիք բանուայ . վեց հարիւր քա_ 15

16 ռասուն և ութն ։ * Որդիք բիբէի՝ վեց
17 հարիւր և քառասուն և ութն ։ * Որ_
դիք աղխա՝ երկու հազար երեքհարիւր
18 և քսան և երկու ։ * Որդիք ադոնիկա_
մայ՝ վեցհարիւր յիսուն և եօթն ։
19 * Որդիք բագուէի՝ երկու հազար վաթ
20 սուն և եօթն ։ * Որդիք ադինայ, վեց
21 հարիւր յիսուն և չորս ։ * Որդիք ատ_
տեր. որդիք եզեկիայ իննսուն և ութն ։
22 * Որդիք հասումայ՝ երեքհարիւր քսան
23 և ութն ։ * Որդիք բէսսի՝ երեքհա_
24 րիւր քսան և չորս ։ * Որդիք արիփ՝ հա
25 րիւր տասն և երկու ։ * Որդիք գիբեոնի
26 իննսուն և հինգ ։ * Որդիք բեթղէ_
հեմ՝ հարիւր քսան և երեք ։ որդիք նե
27 տոփայ՝ յիսուն և վեց ։ * Որդիք անա_
28 թոթ, հարիւր քսան և ութն ։ * Որդիք
29 թազմայ՝ քառասուն և երկու ։ * Արք
կարիաթարիմ քափիրայ՝ և բերոթ՝
30 ութհարիւր քառասուն և երեք ։ * Արք
արամայ և գաբայ՝ վեցհարիւր քսան
31 և մի ։ * Արք մաքեմար՝ հարիւր քսան
32 երկու ։ * Արք բեթէլ և արա՝ հա_
33 րիւր քսան և երեք ։ * Արք նաբիայ՝
հարիւր յիսուն և երկու ։ արք մակե_
34 բոս՝ հարիւր յիսուն և վեց ։ * Արք ե_
35 ղամայ՝ հազար յիսուն և չորս ։ * Որդիք
36 երամ, երեքհարիւր քսան ։ * Որդիք
երիքով, երեքհարիւր քառասուն և
37 հինգ ։ * Որդիք ղոդ ադիդ և անօն՝
38 եօթնհարիւր քսան և երեք ։ * Որդիք
անանայ երեքհազար հարիւր երե_
39 սուն ։ * Եւ քահանայք որդիք յովդի_
դեայ ՚ի տանէն յեսուայ՝ իննհարիւր
40 եօթանասուն և երեք ։ * Որդիք եմեր՝
41 հազար յիսուն և երկու ։ * Որդիք փա
սեուր՝ հազար երկուհարիւր քառա_
42 սուն և եօթն ։ * Որդիք երամ, հազար
43 տասն և եօթն ։ և ղևտացիք ։ * Որդիք
44 յեսուայ՝ կադմիէլ որդւոցն ։ * Ու_
դայիդ՝ եօթանասուն և չորս ։ և եր_
45 գեցիկք սաղմոսասացք ։ * Որդիք ա_
սափայ՝ հարիւր քառասուն և ութն ։
46 * Եւ դռնապանք որդիք եղումայ. որ
դիք ատտեր. որդիք տեմոնի ։ որդիք
ակուբ. որդիք ատիտայ. որդիք սա_
47 բեի հարիւր երեսուն և ութն ։ * Եւ
նաթանիմացիք. որդիք սիդայ. որդիք
48 ասիփայ. որդիք տաբովթ ։ * Որդիք
սարիաս. որդիք սիայ. որդիք փադօն ։
որդիք ղաբանու. որդիք ագաբայ ։ որ
դիք ակուդ. որդիք ուտայ. որդիք կե
տար. որդիք ագաբ. որդիք սեղեմի ։
49 * Որդիք անան . որդիք գադել . որ_
50 դիք գայար ։ * Որդիք հռեայ . որդիք
51 հռասոն. որդիք նեկոդայ ։ * Որդիք
գեզամ. որդիք ոզի . որդիք փեսէ ։
52 * Որդիք բեսեի. որդիք մեինոս. որ_
դիք

վրդենէն՝ և նաթանիմացիքն. և ամ
ին՝ ի քաղաքս իւրեանց ։ և ժամա
նեաց եհաս ամին եօթներորդ. և էին
որդիքն իսրայէլ՝ ի քաղաքս իւրեանց ։

Գլ. Ը.

1 Եւ ժողովեցան ամ ժողովուրդքն
իբրև զայր մի՝ ի հրապարակն ա
ռաջի դրանն ջուրցն ։ և ասացին ցեզ
րաս գրիչ օրինացն Ցն. զի բերցէ զո
րհնան մովսէսի. զոր հրամայեալ Ցն
2 Ա.Ի նոյն ։ * Եւ եբեր եզրաս քահա
նայ զօրինացն առաջի եկեղեցւոյն. որք
ժողովեալէին արք և կանայք՝ և ամե
նեքեան որք կամէին լսել յամսամտին
3 եօթներորդի ամսոյն ։ * Եւ սկսաւ
կարդալ զնա յառաւօտէ՝ յորժամ ծա
գեր արեգակն, մինչև ցօր հասարակ
առաջի արանց և կանանց. և իմանային
ամենեքեան. և դնէին ունկն ամ ժո
ղովուրդն ՝ի լսել ամ գրելոց օրինացն
4 * Եւ կայր եզրաս քահանայ և գրիչ՝ ի
վերայ բեմին փայտեղինի. և կային
առ նմա մատաթիաս՝ և սամէաս. և
անանիաս. և ուրիաս. և քեղկիա. և
մասեիաս՝ ընդ աջմէ նր. և ընդ ահեկէ
նր փադայիաս՝ և միսայէլ՝ և մելքիաս՝
և ասամ, և ամրդանա՝ և զաքարիաս՝ և
5 մոսողամ ։ * Եւ յորժամ եբաց եզրաս
զգիրս առաջի ամ ժողովրդեանն. վա
զի նա էր վերակացու ամ ժողովր
դեանն. և եղև ՝ի բանալ նր զգիրսն ,
6 կայր ժողովուրդն առաջի նր ։ * Եւ
օրհնեաց եզրաս զՑն Ա.Ծ մեծ. և ա
սեն ամ ժողովուրդքն. ամէն ։ և համ
բարձին զձեռս իւրեանց. և խոնար
հեալ երկրպագեցին Ցն Ա.Ի ՝իվերայ
7 երեսաց իւրեանց յերկիր ։ * Եւ յե
սու՝ և բանեաս՝ և ասարաիաս էին՝ որք
իմացուցանէին զօրէնսն ժողովր
դեանն. և ժողովուրդքն կային ըստ
9 կարգի իւրեանց ։ * Եւ ասէ նեեմիաս՝
որ է աթերսաթայ՝ և եզրաս քահա աՆկատ
նայ և գրիչ, և ղևտացիքն. որք իմա նայ
10 ցուցանէին ժողովրդեանն ։ * Եւ ա
սեն ամ ժողովրդեանն. օրս այս օր
սուրբ է Ցն Ա.Ի մերոյ. մի սգայք. և
մի լայք ։ քանզի լային ժողովուրդքն
յորժամ լսէան զբանս օրինացն ։ և
ասեն ցնոսա. երթայք՝ կերայք և ար
բէք զպարարտս և զքաղցունս. և ա
ռաքեցէք մնասն. որոց ոչ գոյ. վա
զի օր սուրբ է Ցն Ա.Ի մերոյ. արդ զո
րացարուք. և մի տրտմեցուցանէք
11 զսա ։ * Եւ ղևտացիքն լռեցուցա
նէին զժողովուրդսն՝ և ասէին. լռեա
ջերուք. և մի տրտմիք. վանզի օր սուրբ
12 է սա ։ * Եւ գնաց ժողովուրդն յոյ
տել

դիք նեփուսայիա ։ * Որդիք բաբօկ · 53
որդիք աքիփայ · որդիք արուր ։ * Որ 54
դիք բասղոթ · որդիք մեհիդա · որդիք
ռադասան ։ * Որդիք բարկուէ · որդիք 55
սիսարայ որդիք թեմայ ։ * Որդիք նե 56
սիայ · որդիք ասրիփայ ։ * Եւ որդիք 57
ծառայիցն սաղոմոնի · որդիք սոտէ ·
որդիք սոփերաթ · որդիք փարեդայ ։
* Որդիք յեաղէ · որդիք դարկօն · որ 58
դիք գադել ։ * Որդիք սափատիայ · 59
որդիք եռեմ · որդիք փաքարաթ · որ
դիք սեբայիմ · որդիք հեմին ։ * Ա.Մ 60
նայն նաթինայիմք · և որդիք ծա
ռայիցն սաղոմոնի երեքհարիւր ինն
սունևերկու ։ * Եւ սոյք էին՝ որք եկին 61
՝ի թեմելմելեայ · թեղարսա · քերուբ ·
երոմէլ · եմեր · և ոչ կարացին պատմել
զտունն հարցն իսրեանց · և ոչ զազգն
իսրեանց · որ յիսրայիէլ էին ։ * Որդիք 62
դաղայ · որդիք բոճայ · որդիք տո
բէայ · որդիք նեկոդայ · վեցհարիւր
քառասուն և երկու ։ * Եւ ՝ի քահա 63
նայիցն · որդիք եբեխիա · որդիք ակով ·
որդիք եդիսեայ · վանզի էառ կին ՝ի
դստերաց բերզեդեկեայ գաղայադաց
ւոյ · և կոչեցաւ բստ անունն նորա ։
* Սոքա խնդրեցին գրել զազգահա 64
մարս իւրեանց · և ոչ գտան ։ և մեր
ժեցան ՝ի քահանայութենէն ։ * Եւ ասաց 65
արթաբասթայ ցնոսա · մի կերիցեն ՝ի
սրբութենէն սրբութենէ · մինչև յարի
ցէ քահանայ՝ և լուսաւորեալ յայտ
նեսցէ զնոսա ։ * Եւ եղև ամ ժողով 66
եկեղեցւոյն չորք բիւր երկերիւր և
վաթսուն ։ * Ալ՝ոյղ զծառայս և զա 67
ղախնայս իւրեանց՝ որք էին եօթնհա
զար երեքհարիւր երեսունևեօթն ։
և որք էին երգեցիկք սաղմոսասացք
արք և կանայք՝ երկու հարիւր քառա
սունևհինգ ։ * Ձիք եօթնհարիւր ե 68
րեսունևվեց · ջորիք՝ երկու հարիւր
քառասունևհինգ ։ * Ուղտք՝ չորսհա 69
րիւր երեսունևհինգ։ էշք՝ վեցհազար
եօթնհարիւր քսան ։ * Եւ իշխանքն 70
ըստ հայրապետացն իւրեանց ետուն
՝ի գործն ։ և աթարսաթայ ետ ՝ի աՆկատ
գանձն ոսկի սկաւառակս չիսուն · և նա
պատմուճանս քահանայից երեսուն ։
* Եւ իշխանք հայրապետացն ետուն 71
՝իգանձս գործոյն ոսկի երկուս բիւրս.
և արծաթի բիւր միասս. և երկերիւր Ե 2200
հազարս և երկերիւր ։ * Եւ այլ ժողո 72
վուրդն ետ դահեկանս երկուս բիւրս.
և կամ արծաթի երկուս հազարս · և
պատմուճանս քահանայից վաթսուն
և եօթն ։ * Եւ նաման քահանայքն՝ 73
և ղևտացիքն՝ և դռնապանքն՝ և եր
գեցիկք սաղմոսասացքն՝ և ՝իժողո

տել և յըմպել, և առաքէին մասն •
որոց ոչ գոյր • և առնէին ուրախու_
թիւն մեծ, վասն զի իմացան զբանս
օրինացն • զոր կարդաց նոցա ։
* Եւ յաւուրն երկրորդի ժողովե_ 13
ցան իշխանքն հայրապետաց ամ ժողո
վրդեանն՝ և քահանայք՝ և ղևտացիք
առ եզրաս դպիր օրինացն • զի տեղե
կասցին, և ուսցին 'ի նմանէ զամենայն
բանս օրինացն ։ * Եւ գտին գրեալ 14
յօրէնսն՝ զի էր հրամայեալ Տն Այ
մովսէսի • ոչ արժան է որդւոցն Իղի
բնակել 'ի տաղաւարս 'ի տօնի եօթն_
երորդ ամսոյն ։ * Եւ որպէս նշանա 15
կել փողով յամ քաղաքս իւրեանց՝ և
յեմ. և ասէ եզրաս, ելէք 'ի լեառն.
և բերէք տերևս ձիթենեաց՝ և տերևս
'ի ծառոց սօսեաց • և տերևս մրտոց
խնկենեաց • և տերևս արմաւենեաց՝
և տերևս 'ի թաւ ոստոց ծառոց՝ և
արարէք ձեզ տաղաւարս ըստ գրեցե
լոյն ։ * Եւ ելին ժողովուրդքն • և բե 16
րին՝ և արարին իւրեանց տաղաւարս,
այր 'ի տանիս իւրում • և այր 'ի սրահի
իւրում, և 'ի սրահի տանն Այ • և 'ի
հրապարակս քաղաքին մինչև 'ի դրունս
եփրեմայ ։ * Եւ արարին տաղաւարս 17
ամ ժողովք եկեղեցւոյն • որք դար_
ձեալ էին 'ի գերութենէն. և նստան
'ի տաղաւարս • քանզի ոչ երբէք արա
րին որդիքն Իղի յաւուրցն յեսուայ
որդւոյ նաւեայ այսպէս՝ մինչև յօրն
յայն • և եղև ուրախութիւն մեծ յոյժ ։
* Եւ կարդայր զգիրս օրինացն օր_ 18
ըստօրէ • յօրէ առաջնմէ մինչև յօրն
եօթներորդ • և արարին զտօնն զեօթն
օր • և յաւուրն ութներորդի եղև կա
տարումն ըստ օրինացն ։

Գլ: Թ •

Ո.Յոբ. 9.38. Եւ 'ի քսանևչորս ամսոյն ժողովե 1
ցան որդիքն Իղի • և սկսան պա_
հել պահս • և զգեցան քուրձ • և արկին
զմոխիր 'ի վերայ գլխոց իւրեանց ։ * Եւ 2
որոշեցան որդիքն Իղի յամենայն որդ_
ւոցն այլազգեաց • և քաւէցին զմեղս
իւրեանց՝ և զմեղս հարց իւրեանց ։ * Եւ 3
կային 'ի կարգի իւրեանց ։ և կար_
դայր եզրաս զգիրս օրինացն Տն Այ •
և երկիր պագանէին ամենայն ժողո
վուրդքն Տն Այ իւրեանց ։ * Եւ 4
կային 'ի բարձաւանդակ տեղւոջ
եզրաս՝ և ղևտացիք՝ և յեսու յովսեդե
կեանց • և որդիքն կադմիելի • սաբա
նիա՝ որդի սարեբիայ՝ որդիք անանիայ։
և գոչեցին մեծաձայն առ Տր Ած իւր
եանց ։ * Եւ ասեն ղևտացիքն յեսու և 5
կադմիէլ • եղբարք, օրհնեցէք զՏր Ած
ծէ

մեր յաւիտեանս յաւիտենից • և եղիցի
օրհնեալ փառք Տն • և բարձրասցի
օրհնութիւն նր և գոհութի ։ և սկսաւ
6 օրհնել եզրաս զՏր Ած և ասէ ։ * Դու
ես նոյն ինքն Տր Ած միայն • դու արա_
րեր զերկինս՝ և զերկինս երկնից՝ և
զամ կարգս նոցա • և զերկիր և զամ
կարգս նորա • և զամենայն ինչ՝ որ է
'ի նմա՝ զծով և զամ որ է 'ի նմա • և դու
կենդանացուցեր զամենեսեան • և քեզ
երկրպագեն զօրք երկնից՝ և զքեզ փա
7 ռաւորեն երկինք երկնից ։ * Վասնզի
դու միայն ես Տր Ած մեր • որ ընտրե_
ցեր զաբրահամ, և հաներ զնա յերկ_ Ծննդ.
րէն քաղդէացւոց • և եդեր նմա անուն 11.31.
8 աբրահամ ։ * Եւ գտեր զսիրտ նորա
հաւատացեալ առաջի քո • և եդեր
դու նմա ուխտ • տալ նմա զերկիրն քա
նանացւոց • և քետացւոց՝ և ամօրհաց
ւոց • և փերեզացւոց • և յեբուսաց_
ւոց • և գերգեսացւոց • և զաւակի
նր մինչև յաւիտեան • և հաստատեցեր
9 զբանս քո • վասնզի արդար ես ։ * Եւ
տեսեր զնեղութիւս հարցն մերոց • որ
յեգիպտոս • և լուար աղաղակի նոցա
10 'ի վերայ կարմիր ծովուն ։ * Եւ արա_
րեր նոցա նշանս յեգիպտոս՝ և 'ի փա
րաւոն և յամ ծառայս նորա • և յամ
ժողովուրդ երկրի նորա ։ քանզի գի_
տացեր • եթէ հպարտացաւ 'ի վր ժո
ղովրդեան քոյ՝ և արարեր քեզ անուն
11 մեծ մինչև ցայսօր ։ * Եւ զծովն կար_
միր հերձեր առաջի նոցա • և անցին
ընդ մէջ ծովուն իբրև ընդ ցամաք • և ըզ
հալածիչս նց ընկղմեցեր իբրև զվէմ
12 'ի ջուրս բազումս ։ * Եւ սեամբ ամ_
պոյ առաջնորդեցեր նոցա 'ի տուէ •
և սեամբ հրոյ 'ի գիշերի • վասնզի լու
սաւորէր զճանապարհն նոցա ընդ որ
13 գնային ։ * Եւ 'ի լեառն սինայ իջեր՝
և խօսեցար ընդ նոսա յերկնից • և ե_
տուր նոցա զդատաստանս ուղիղս • և
օրէնս ճշմարիտս • հրամանս, և պա
14 տուիրանս բարիս ։ * Եւ զշաբաթս
քո սբս ծանուցեր նոցա • և զպատուի
րանս՝ զհրամանս՝ և զօրէնս ետուր նց •
15 'ի ձեռն մովսէսի ծառայի քոյ ։ * Եւ
զհաց երկնից ետուր նոցա 'ի կերա_
կուր • և զջուր բղխեցուցեր 'ի վիմէ •
և արբուցեր նոցա • և բացեր նոցա
մտանել՝ և ժառանգել զերկիրն • յոր
համբարձեր զձեռն քո տալ նոցա ։
16 * Եւ ինքեանք իսկ հարքն մեր հպար_
տացան • և անօրինեցան • և խստացու
ցին զպարանոցս իւրեանց • և ոչ լուան
17 պատուիրանաց քոց ։ * Եւ ակնկորե_
ցին յօրինաց քոց՝ և ոչ յիշեցին զսքան
չելիս քո • զոր արարեր դու ընդ նս •

այլ խստացուցին զպարանոցս իւրեանց.
և դարձուցին զթիկունս իւրեանց. և
կամեցան դառնալ 'ի ծառայութիւն
անդրէն յեգիպտոս: այլ դու Տր̃ Ած̃
մեր՝ գթած ես և ողորմած՝ երկայնա_
միտ և բազումողորմ. և ոչ իսպառ
մերժեցեր զնս̃: *Եւ դարձեալ արա_ 18
րին իւրն̃ զորթ ձուլածու. և ասացին.
այսոքիկ են աստուածք. որք հանին
զմեզ յերկրէն եգիպտացւոց. և արա_
րին մեծամեծ բարկութիւս: *Եւ դու 19
ի̃ բազումգթութե̃ և ողորմութեան
քում ոչ թողեր՝ և ցրուեցեր զնս̃ յա_
‖ Ելից. 13.22. նապատին. ‖ և զսիւն ամպոյն ոչ հեռա
ցուցեր 'ի նոցանէ՝ որ առաջնորդէր նց̃
'ի տուէ. և զսիւն հրոյն՝ որ լուսաւո_
րէր զնս̃ 'ի գիշերի՝ զճանապարհսն զոր
երթային: *Եւ զհոգի քո սուրբ և 20
զբարերարետուր նց̃ իմանալ զօրէնսն.
և զմանանայն ո՛չ հեռացուցեր 'ի բե_
րանոց նոցա. և ետուր նց̃ ջուր 'ի ծա_
րաւոյ վիմէ: *Եւ զքառասուն ամ 21
շրջեցուցեր զնոսա յանապատին: հան
դերձք նոցա ո՛չ մաշեցան. և կօշիկք
նոցա ո՛չ հնացան: *Եւ հարեր առա 22
ջի նց̃ զթագաւորս և զժողովուրդս.
և բաժանեցին, և կալան զերկիր նց̃
'ի ժառանգութի̃. զերկիրն սեհօնի
թագաւորին եսեբօնայ. և զերկիրն
ովգայ թագաւորին բասանու: *Եւ 23
զորդիս նոցա բազմացուցեր իբրև զաս
տեղս երկնից. և ածեր զնոսա յերկիր.
զոր խոստացար հարցն նց̃. և ժառանգե
ցին զնա: *Սն̃ զի սատակեցեր առա_ 24
ջի նց̃ զբնակիչս երկրին քանանաց_
ւոց. և ետուր զերկիրն նց̃ 'ի ձեռս
նոցա. և զթագաւորս նոցա և զժողո_
վուրդ երկրին սպառեցեր. որպէս և
կամեցան ըստ կամաց իւրեանց: *Եւ 25
առին զքաղաքս բարձրաբերձս՝ և զպա
րիսպս. և ժառանգեցին զտունս լի
ա̃մ բարութբ̃: ջրհորս փորեալս և
կազմեալս. այգիս և ձիթենիս և զա̃մ
ծառս պտղաբերս 'ի կերակուրս լիու
թե̃ նց̃. կերին՝ և յագեցան. և գիրա
ցան՝ և փափկացան 'ի բարութիս մե
ծամեծս՝ զորս ետուր նոցա: *Եւ հե 26
ռացան. և մերժեցան 'ի քէն. և յետս
դարձան յօրինաց քոց. և զմարգարէսն
քո կոտորեցին. որք բարոզեցին նոցա
դառնալ առ քեզ. և արարին զբար_
կութի̃ մեծ առաջի քո: *Եւ ետուր 27
զնս̃ 'ի ձեռս նեղչաց նոցա. և նեղե_
ցին զնոսա: և աղաղակեցին առ քեզ
'ի ժամանակս նեղութե̃ իւրեանց. և
դու յերկնից լուար նոցա. և բազում
գթութբ̃ և ողորմութբ̃ փրկեցեր զնս̃.
և հաներ զնոսա 'ի ձեռաց նեղչաց նց̃:

28 *Եւ յորժամ հանգեան. դարձան՝ և
արարին զչարիս առաջի քո. և թողեր
զնոսա 'ի ձեռս թշնամեաց նց̃. և չար_
չարեցին զնոսա. և դարձեալ աղաղա
կեցին առ քեզ. և դու յերկնից լուար
նց̃. և փրկեցեր զնոսա բազում ողոր
29 մութբ̃ քով: *Եւ դարձեալ եդեր
վկայութի̃ առ նոսա դառնալ յօրէնս
քո. իսկ նոքա անմտացեալք յիմարու
թբ̃ ոչ լուան օրինաց քոց. և 'ի հրա_
մանս՝ և 'ի պատուիրանս քո մեղան.
զոր դու ասացեր՝ և հրամայեցեր, զի
ո՛ որ արասցէ 'ի մարդկանէ զբան պատ
ուիրանաց քոց՝ կեցցէ նոքիմբք. իսկ
նոքա դարձուցին զթիկունս իւրեանց.
և եղեն խստապարանոցք. և ոչ լուան
30 բանի քում: *Եւ դու երկայնամտե_
ցեր առ նս̃. և առաքեցեր 'ի վկայու_
թի̃ զմարգարէսն հոգւով քով սրբով.
սակայն և այնպէս ո՛չ լուան. և մատ_
նեցեր զնս̃ 'ի ձեռս ժողովրդոց օտա_
րաց երկրին. ուր տառապեցուցին զնս̃
31 յոյժ: *Եւ դու ըստ բազումգթու_
թե̃ և ողորմութե̃ քում ոչ թողեր
զնոսա մինչև իսպառ. և ոչ մերժեալ
հեռացուցեր զնոսա 'ի քէն. զի դու
հզօր ես՝ գթած և ողորմած՝ երկայ_
32 նամիտ և բազումողորմ: *Եւ այժմ
Տր̃ Ա̃ծ մեր՝ զօրաւոր և մեծ. ահե_
նակալ և ահարկու՝ արդար և ճշմա_
րիտ. պահեա՛ զուխտ և զողորմութի̃
և հայեա՛ց 'ի տառապանս մեր և 'ի նե_
ղութիս. և թագաւորացն մերոց և
իշխանացն մերոց. և քահանայից՝ և
մարգարէիցն մերոց. և ա̃մ հարցն
մերոց. և ժողովրդեանս քո. զոր տա_
ռապեցուցին. և բռնացան 'ի վր̃ մեր
թագաւորք ասորեստանեայց մինչև
33 ցայսօր: *Եւ դու արդար ես յա̃մի.
զոր ածեր 'ի վր̃ մեր վս̃ մեղաց մերոց՝
34 վս̃ զի ճշմարտութբ̃ արարեր: *Քան
զի մեղաք մեք՝ և թագաւորք մեր՝ և
իշխանք. և քահանայք՝ և հարք մեր՝
և ոչ արարաք զպատուիրանս քո. և
ոչ հայեցաք յօրէնս քո և 'ի վկայութիս.
35 զոր եդեր առ մեզ: *Զգթութիս
քո՝ և զբազում զբարութիս՝ զորս ե_
տուր մեզ, և յերկրիս յայսմիկ՝ 'ի լայն,
և յընդարձակ և 'ի պարարտ՝ զոր ե_
տուր մեզ՝ ո՛չ գիտացաք ծառայել
քեզ. այլ դարձուցաք զսիրտս մեր յօ_
րինաց քոց. և մատնեցաք մեք 'ի գե_
36 րութի̃ վս̃ մեղաց մերոց: *Եւ ահաւա
սիկ եմք այսօր 'ի ծառայութի̃. և եր_
կիրս՝ զոր ետուր հարցն մերոց ուտել
զպտուղ և զբարութիս սորա ազատու
37 թբ̃: *Արդ այսօր թագաւորք օտարք
տիրեն 'ի վր̃ մեր՝ և ուտեն զսա վասն
մե_

մեղաց մերոց. և անկեալք 'ի ծառայ_
ութ̃ի տամք հարկս. և վարեն զմեզ
և զանասունս մեր՝ ըստ կամին. և եմք
'ի նեղութ̃ե՝ և 'ի վիշտս մեծս այսօր
վ̃ս մեղաց մերոց ։* Եւ արդ 'ի վերայ 38
այսր ամ̃ի մեք դնեմք ուխտս և հաւա
տարմութ̃իս. և հաստատեմք յօրէնս
քո. և առնեմք զնո. և որինչ գրեալ է
'ի նոսա. և զբանս զայս գրով հաստա
տեմք՝ և կնքեմք ամ̃ իշխանք մեր. և
ղևտացիք, և քահանայք մեր։

Գլ: Ժ։

Եւ այսոքիկ են՝ որք կնքեն զգիրս 1
զայս հաւատարմութ̃ե առ քեզ.
նէեմիա որդի աքաղիայ. և սեդեկիա։
*Սարերա և ազարիա. և երեմիա։ 2
*Եւ փասուր. ամարիա. մեքիա։ 3
*Ատուս. սաբանիա. մաղուք։ 4
*Եմաթ. մերամօթ. աբդիա։ 5
*Դանիէլ՝ կանաթօն. բարուք։ 6
*Մեսուղամ. աբիա. միամին։ 7
*Մադիա. բեղգեէ. սեմէի. այսք 8
ամենքն են քահանայք։ *Եւ ղևտացիք. 9
յեսու որդի ազանիայ. բանիա. յորդ
ւոց ենադադայ. դաղմիէլ։ *Եւ եղ 10
բարք սեբանիա. ոդուիա. կաղիտան.
փեղիա. անան։ *Միքա. հրոբ, ասե_ 11
բի։ *Զաքուր. սարաբիա. (սատա_ 12
նիա.) սեբանիա։ *Հոդուիա. կաղի 13
տան. փեղիտաման. (միքայ. հրոբ ասե
բի. զաքուր. սարաբիա. սատանիա.
սեբանիա. հոդուա. որդիք բանու_
նեայ)։*Իշխանք ժողովրդեանն. փորոս. 14
փարաթմովաբ. եղամ. զատթուրա։
*Որդիք բանեայ ազուրաթ. բեբայի։ 15
*Ադոնիա. բագու. եդին։ 16
*Ատեր. եզեկիա. ազուր։ 17
*Ադիա. ասամ. բեսեի։ 18
*Արիփ՝ անաթովթ. նովբա։ 19
*Մագափես. մեսուղամ. եզրմէ։ 20
*Եոզաբէլ. զադուկ. եդուք։ 21
*Փաղտիա. անան. անաիա։ 22
*Օսէէ. անանիաս. ասուբ։ 23
*Աղօես. պիղա. սօբէկ։ 24
*Հայում. եսաբանան. մայաղեայ։ 25
*Ադիա. ենան. օնան։ 26
*Մաղուս. հուէում. բաանա։ 27
*Եւ այլևս մնացորդք ժողովրդեանն՝ 28
քահանայք՝ և ղևտացիք՝ դռնապանք՝
երգեցիկք՝ նաթինացիք և ամենեքեան
ժողովուրդքս. որք լսեմք զօրէնս Տ̃ն
Ա̃յ մերոյ, դնեմք վկայութ̃ի այսօր
առաջի քո՝ արք և կանայք՝ որդիք և
դստերք իւրեանց։*Եւ որ միանգամ 29
անցցէ զօրինօք քովք՝ երդմամբ հաս
տատեմք այսօր առաջի քո՝ եղիցի նա
'ի նզովս՝ և յանէծս. որ ոչ պահեսցէ

զօրէնս քո. որ տուաւ 'ի ձեռն մովսէսի
ծառայի քոյ. այլ ամ̃ կամօք մերովք
պահեսցուք. և արասցուք զամ̃ զպատ
ուիրանս Տ̃ն Ա̃յ. և զդատաստանս
30 նորա՝ և զհրամանս։ *Եւ մի տացուք
զդստերս մեր ուստերաց ժողովրդոց
օտարաց. և զդստերս հեթանոսաց ոչ
31 առցուք որդւոց մերոց ։ *Եւ ժողո_
վուրդք երկրիս այսորիկ ոչ բերիցեն
առ մեզ վաճառս յաւուր շաբաթու.
և ոչ գնեսցուք 'ի նոցանէ 'ի շաբա_
թուն. զի օր սուրբ է. և սուրբ պահես
32 ցուք զօրն եօթներորդ։ *Եւ տացուք
զողորմութ̃իս երրորդ դիդրաքմոյ
33 ամ̃ի ամէ 'ի հարկ տանն Ա̃յ։*Եւ
զհաց զառաջեկից՝ և զզոհս ըստ ժամա
նակս ժամանակս. և զողջակէզս յամ
տօնս՝ և 'ի տարեկանս՝ և 'ի շաբաթս՝
և յամսամուտս՝ և 'ի նաւակատիս՝ և
'ի սրբութ̃իս՝ և վ̃ս մեղաց. որք են 'ի
քաւութ̃ի իէլի՝ և 'ի գործս տաճա_
34 րին Տ̃ն Ա̃յ մերոյ։*Եւ վիճակս արկ
ցուք վասն ժառանգութ̃ե փայտիցն.
որ երթայ քահանայիցն՝ և ղևտաց_
ւոցն. և ժողովրդն բերցէ 'ի տուն
Ա̃յ մերոյ. 'ի տունս հարցն մերոց ըստ
ժամանակս ժամանակս ամ̃ ամէ՝
զորս արժան է այրել 'ի վերայ սեղա_
նոյ զոհից Տ̃ն Ա̃յ մերոյ. ըստ գրեալ է
35 յօրէնսն մովսէսի։ *Եւ տայցուք զպը
տուղս զառաջաւորութ̃եց երկրի մե_
րում. և զպտուղս ծառոց մերոց ամ̃
36 ըստ ամէ 'ի տունն Տ̃ն Ա̃յ մերոյ։ *Եւ
զդիդրաքմայս անդրանկաց որդւոց
մերոց. և զանդրանիկս անասնոց մե_
րոց՝ որպէս և գրեալ է յօրէնսն մովսէ
սի՝ և զանդրանիկս արջառոյ մերոց՝
և հօտից, բերցուք 'ի տուն Ա̃յ մերոյ՝
քահանայից մերոց ղևտացւոց. որք
37 կան 'ի պաշտօն տանն Տ̃ն։*Եւ զառա
ջաւորս ցորենոյ՝ և զպտուղս ծառոց՝
գինւոյ և ձիթոյ բերցուք առ քահա_
նայսն 'ի տունն գանձանակին Ա̃յ. և
զտասանորդս երկրիս մերոյ՝ ղևտա_
ցիքն շրջեսցին՝ և առցեն զամենայն
38 բովանդակ ։ *Եւ եղիցի քահանայ
որդի ահարօնի՝ որ տասանորդեսցէ
զղևտացիսն. և ղևտացիքն 'ի տասա_
նորդացս մերոց տասանորդեսցեն քա
հանային մեծի 'ի տունն Ա̃յ մերոյ. 'ի
տունն գանձանակին. որք կան 'ի տա_
39 ճարին Տ̃ն։ *Մինչի կայցէ 'ի գանձա
նի համբարս որդւոց ղևտացւոց. և
սպասաւորաց՝ 'ի տեղիսն ուր կան սր_
բութ̃եցն. և եղիցի քահանայիցն և
ղևտացւոց և դռնապանաց. և եր_
գեցկաց սաղմոսաց. և մի պակա_
սեսցին նոցա ռոճիկք երբեք 'ի տա_

նէ՝ այ մերոյ՝ և նորա զսպաս Տեառն խափանեսցեն։

Գ.Ի: ԺՒ.։

1 Եւ Նաստան իշխանք ժողովրդոցն
յԵրէմ. և արկին վիճակս զմի՛ի
տասանց. որում՛ և ելցէ վիճակն՝ նատ
ցի յԵրէմ քաղաք սրբութեան. և ինն ե
Եւինն բա քինդն բաղդքն գնասցեն յիւրաքանչիւր քա
2 զաքս։ * Եւ օրհնեաց ժողովուրդն
զարան զայնս. որք որոշեցան. և Նաստան
3 յԵրէմ։ * Եւ սոքա են իշխանք երկրին՝
որք նստան յԵրէմ. և քահանայք՝ և
ղևտացիք՝ և նաթինեցիք՝ և որդիք
4 ծառայիցն սաղոմոնի։ * Եւ որք նս
տան յԵրէմ. էին յազգէն յուդայ, և
բենիամինի. և սոքա են յորդւոցն յու
դայ. աթայէ որդի ոզիայ. որդի զաքա
րիայ. որդի սամարիայ՝ որդի սափա
տիայ. որդի մաղղեելայ. և յորդւոցն
5 փարեսայ։ * Եւ մաղասիա որդի բա
րուք. որդի ադայէլ. որդի ոզիայ. որ
դի ադիայ. որդի յովարիբ. որդի զա
6 քարիայ. որդի եղովնի։ * Եւ ի՛ որդիք
փարեսի՝ որք նստան յԵրէմ. չորսհար
իւր վաթասունևուրեքն՝ որք զօրաւորք։
7 * Եւ սոքա են որդիք բենիամինի. սե
լօն որդի մեսելամ. որդի յովադ. որ
դի փադայի. որդի կոլիայ՝ որդի մաս
սայ. որդի աթիէլ. որդի յեսայէ։
8 * Եւ զհետ նո՛ գեբբէի. սելէի. իննհա
9 րիւր քառասունևուրեքն։ * Եւ յոսէլ
որդի զեքրի՝ պյելու և վերակացու՛ի
10 վո՛ր նո՛ա. և յուդա որդի ասանայ։ * Եւ
՛ի քահանայիցն ադդիէ՝ որդի յովա
րիբ, յաքին. որ էր յերկրորդի քաղա
11 քին։ * Սարիա որդի եղքիայ. որդի
մեսուղամ. որդի սադոկ. որդի մա
12 քաւօթ. որդի եւոբ. և էին տունք իւր
եանց մեծ՛ի տաճարն Ա՛Ծ։ * Եւ եղ
բարեք նո՛ա. որք գործէին զգործ սպա
սաւորութե տանն Ա՛Ծ. և ութնհարիւր
քսանևերկու. և ադայէ որդի երուամ
որդւոյ փաղալիայ. որդւոյ ամնսեայ.
որդի զաքարիայ. որդի փասհուր. որ
13 դի մեղքիայ։ * Եւ եղբարք նորա իշ
խանք հայրապետացն. երկուհարիւր
քառասունևերկու. և ամասիա որդի
եզրիել։ * Եւ եղբարք նո՛ր զօրաւորք
14 յոյժ. հարիւր քսանևութն. և տյեղ
լուք՝ և վերակացուք նո՛ր զեբրիել. որ
15 էր՛ի մեծացն իշխանաց։ * Եւ՛ի ղևտ
ացւոցն սամեիա՝ որդի ասուբ. որդի
Եւ համա նէա եզրաւմ։ * Եւ մաթանայիք որդի մի
17 քայ. և յօրեբ որդի սամոէի. երկու
հարիւր եօթանասունևչորս։ * Եւ
19 դռնապանք. ակուբ ի բեռեմին և եղբարք
նո՛ր հարիւր եօթանասունևերկու։

22 * Եւ այդելոյք՝ և վերակացուք ղևտա
ցւոցն յԵրէմ. ազա որդի բանի. որդի
ասաբիայ. որդի մատթանէ. որդի մի
քայ. յորդւոցն ասափայ. որք էին եր
23 գեցիկք մծատառ տունն Ա՛Ծ։ * Ա՛ ան ղէ
հրամանն թագաւորին էր առ նոսա
լինիլ անդ. և անխափան ունիլ զպաշ
24 տօնն։ * Եւ փաթահայ որդի մեսիզա
բիւելայ. զարեհ որդի յուդայ. որ՛ի
ձեռանէ թագաւորին ունէր զամ
25 կազմած։ * Եւ գնակերը յագարակի իւր
ումն. և յորդւոցն յուդայ. որք նստան
՛ի կարիաթարբայ. և յեսու՝ և բեթսա
30 բէէ և գնակուրեի՛ նո՛ր։ * Ասքիա՝ և
ագարակք իւրեանց՝ որք և ունէին
31 զբերսաբէէ։ * Եւ որդիք բենիամինի
36 ՛ի գաբա. մսքմաս։ * Եւ ղևտացւոցն
բարժին յուդայ և բենիամին։

Գ.Ի: ԺԲ.։

1 Եւ սոքա են քահանայք և ղևտա
ցիք. որք ելին ընդ զօրաբաբելի
սաղաթիէլեանց. և յեսու յոսեդե
կեանց սարայիա. երեմիա՝ եզրաս։
2 * Եւ ամարիա. մաղուք. արտուս։
3 * Եբենիա. այսոքիկ են իշխանք քահա
նայիցն և եղբարք նո՛ր յաւուրս յեսո
8 վայ։ * Եւ ղևտացիք յեսու. բանուի.
կադմիէլ. սարաբիա յուդա, մատթա
նիա. և եղբարք նո՛ր որք էին կարգեալք
օրըստօրէ։ և յովակիմ. եղիասիբ.
9 և եղիասիբայ՝ * յովադէ՝ և յովդայեայ
յանաթան՝ և յօթանա յադդուս. և
յաւուրս յովակիմայ եղբարք նո՛ր էին
իշխանք և քահանայք հայրապետացն.
սարիա. եմարիա. անան
նիա. ազարիա. եզրաս. մեսողամ. ամա
22 րիա. յոնան. մաղուք։ * Եւ ղևտա
ցիք յաւուրս եղիասիբ. յովադայ. և
յովայ. և յոնան. և իդդուայ գրեալք
իշխանք հայրապետացն. և այս ամ
քահանայք էին ՛ի թագաւորութեն
23 դարեհի։ * Որդիք ղևեայ իշխանք
հայրապետացն գրեալք ՛ի գիրս բա
նիցն աւուրց համարոյն մինչև յոնան
24 որդի եղիասիբ։ * Եւ իշխանք ղևտա
ցւոց ասաբիա. և սարաբիա. և յեսու.
և որդիք կադմիէլ և եղբարք նո՛ր մա
առ նման օրհնել և սաղմոս ասել. ոմ
և հրամայեաց դաւիթ այրն Ա՛Ծ։
25 * Որըստօրէ զօրհանապազ ՛ի ժողով
իւրեանց հանդերձ դռնապանօքն։
26 * Սոքա էին յաւուրս յովակիմայ որդւոյ
յեսուէ. որդւոյ յոսեդեկեայ. և
յաւուրս նեեմիայ և եզրայ քահանայի
27 և գրչի օրինացն Ա՛Ծ։ * Եւ ՛ի նաւակա
տիս պարսպին երուսաղէմի խնդրե
ցին ղղևտացիսն ՛ի տեղիս իւրեանց
ածել

ածել զնոսա յԵրուսաղէմ, և առնել
վրդեան մերոյ. տացուք պատերազմ
'ի վ̄ր սրբութեցն՝ և 'ի վերայ ազգայ
մերոց: *Եւ ժողովեցան ժողովք 'ի 44
պատրաստութի պատերազմի. կալին
յաղօթս. և խնդրէին զողորմութն
'ի Տ̄է: *Եւ էր եէմ աւերակ՝ և թա 45
փուր. և ոչոք էր՝ որ մտանէր՝ և ելա_
նէր յազգաց նր. և սրբութին կայր
կոխան որդւոցն այլազգեաց. և ամրա
կողմն գլուխ քաղաքին 'ի բնակութի
եղև հեթանոսաց. և բարձան ուրա_
խութիք յակոբայ. պակասեցան փողք
և տաւիղք. և լռեցին ա̄մ ցանկալի
ուրախութիք արուեստականաց:
*Եւ եկին՝ և ժողովեցան ամենեքին 46
'ի մասեփայ՝ դէմ յանդիման եէմի.
զի անդ էր տեղի աղօթից յառաջ
իէլացւոցն 'ի մասեփայ: *Ժո̄մ կալ 47

նգ

դացին. քրձազգածք լինէին. խորգ և
մոխիր առնուին՝ հող 'ի գլուխ լինէին.
48 զօձիս պատառէին: * Ամատեանսն
օրինացն տարածանէին. վ̄ն որոյ պըն
49 տէին զնն հեթանոսք: *Եւ բերէին
զհանդերձս քահանայութե. և զծը_
նունդս անդրանկացն, և զտասա_
նորդսն 'ի մէջ առնուին. յարուցա_
նէին՝ և ածէին զուխտաւորսն. որոց
50 լցեալ էր զաւուրսն իւրեանց:*Ի ձայն
բարձր միաբարբառ աղաղակէին յեր
կինս. և ասէին. արդ՝ զի՞ արասցուք
51 զայսոսիկ. կամ՝ յո՞ տարցուք: * Զի
սրբութիւք քո կոխանք եղեն. և քա_
հանայք քո 'ի սուգ և 'ի տառապանս
52 նստին: *Եւ ա̄մ հեթանոսք ժողո_
վեալք են առ̂աւնիկ ջնջել զմեզ. դու
գիտես, զոր ինչ խորհին նոքա 'ի վ̄ր
53 մեր: *Որդ՝ զիա՞րդ կարասցուք մեզ
զդէմ ունիլ. թէ ոչ դու օգնեսցես
54 մեզ: *Փող հարկանէին. զաղաղակ
դնէին. 'ի ձայն բարձր յերկինս կար_
55 դային: * Յետ այսորիկ կարգել
սկսաւ յուդա զժողովուրդսն. և կա_
ցոյց 'ի վերայ նոցա իշխանս՝ հազարա
պետս. և հարիւրապետս. և յիսնա_
56 պետս: * ‖ Եւ ասեն ցայնոսիկ. որք ‖2. Օրէ
շինէին զշինուածս. և խօսէին կա_ 20.5.
նայս. և տնկէին այգիս. և պատուէր Դատ.
տային վատասրտացն. զի դարձցին՝ 'ի 7. 3.
57 տունս իւրեանց ըստ օրինացն: *Եւ
ա̄մ զօրքն հասանէին՝ բանակէին 'ի
58 թիկանցն ամաւոյ: *Ընդ ուստ քա_
ջալերել սկսաւ յուդա զզօրսն՝ և ասէ.
վառեցարո՛ւք՝ պատրաստեցարո՛ւք՝ զօ
րացարո՛ւք վաղորդեայն տալ պատե_
րազմ ընդ հեթանոսս. ընդ այնոսիկ՝
որք ժողովեալք են 'ի վերայ մեր ջն_
59 ջել զմեզ՝ և զսրբութիս մեր: * Զի
լաւ լիցի մեզ մեռանել 'ի պատերազ
մի. քան տեսանել զչարչարանս ազգի
60 մերոյ՝ և սրբութեցն մերոց: *Որպէս
և իցեն կամք Տ̄ն յերկինս. այնպէս
և կատարեսցին:

ԳԼ: Դ.

10 Եւ յիշեսցէ զուխտ կտակարանացն՝ ‖ Ելից.
որ ընդ հարսն մերս. և բեկցէ 24.9.
11 զզօրս առաջի ոտից մերոց: *Գիտաս
ցեն հեթանոսք՝ թէ գոյ Ա̄Ծ. որ փր_
12 կէ զի̄էլ: *Եւ ամբարձին զաչս իւրե̄ց
այլազգիքն. և տեսին զնոսա. զի յար
13 ձակեալ գային ընդդէմ նոցա: *Եւ
ելին յառաջքան զգունդն 'ի պատե_
րազմ: փող հարին 'ի կողմանցն յու_
14 դայի: *Ի մի վայր ժողովեցան, 'ի վ̄ր
յարձակեցան՝ ձեռն 'ի գործ առնէին.
15 'ի փախուստ դարձուցանէին: * Զօրա

զումս առ. եւեղ սատակէին · զբա_
զումս փախստականս առնէին ընդ
երեսս դաշտին · 'ի սուր սուսերի իւր
եանց անկանէին մինչ 'ի սահմանս
դաղիրօնայ · 'ի կողմանս եդօմայեց_
ւոց · և ազովտայ · և յամենայ · և ան
կանէին յաւուր յայնմիկ վիրաւորք իբ
րև երեքհազարք արք ։ *Եւ դառնայր 16
յուդա զօրօքն հանդերձ · իբրև գայր՝
հասանէր 'ի տեղի պատերազմին ։
*Խօսիլ սկսաւ ընդ զօրսն՝ և ասէ · մի 17
ինչ աչս արձակէք դուք յաւար, 'ի կա
պուտ դիականցն անկելոց ։ *Զի դեռ 18
աւանիկ գորգիաս վառեալ պատրաս
տեալ ընդդէմ կայ մեր զօրօք իւրովք ·
այլ կացէք · կալարուք զտեղի · զդէմ
կալարուք թշնամեաց ձերոց · ապա
յետ մարտին յաղթութեան դարձջիք
համարձակութեամբ ։ *Մինչ դեռ նա 19
զայն ընդ նոսա խօսէր · տեսին, զի
գունդ մի երևեցաւ 'ի լեռնէ անտի ։
*Եւ գիտացին եթէ 'ի պարտութ՟ի 20
մատնեալ է · հուր արկանել սկսան 'ի
բանակի անդ · և ծուխն որ դիզանիւր,
նշան լինէր գործոյն եղելոյ ։ *Նոքա 21
իբրև զայն տեսանէին՝ կասէին · մա_
նաւանդ իբրև հայէին 'ի գունդն յու
դայեան՝ ո՟չ ճակատեալ կայր պատ_
րաստութ՟բ 'ի մարտ պատերազմի ։
*Զոտս արձակէին · փախստեայ գնայ 22
ին յերկիրն փղշտացւոց ։ *Եւ յուդա 23
դառնայր 'ի տեղին պատերազմի 'ի կա
պուտ կողոպուտ յաւար դիականցն
անկելոց · և առնոյր 'ի բանակէ անտի
ն՟ց զոսկի և զարծաթ և զհանդերձս
պատուականս · զկարմիր · և զկապու_
տակ · զծովու ծիրանիս · մեծութիւն
բազում ։ *Եւ իբրև դարձան անտի 24
սկսան գոհանալ՝ օրհնել զԱ՟Ծ յեր_
կինս · և ասել ։ զի բարի է՝ զի յաւի_
տեան է ողորմ՟նի ։ *Եւ եղև փրկու 25
թ՟ի մեծ 'ի մ՟ջ ի՟ղի յաւուր յայնմիկ ։
*Եւ որք միանգամ յայլազգեաց ան_ 26
տի ապրեցան · եկեալ պատմէին լիւս
իայ զամենայն գործ՝ որ գործեցաւ ։
*Իբրև զայն լսէր լիւսիաս · տրտմէր՝ 27
խոնարհէր՝ անկանէր 'ի վերայ երե_
սաց իւրոց · զի ոչ այն կամք կատարե
ցան · որպէս նա խորհէր 'ի մ՟ջ իսրայէ
լացւոցն · և որպէս նմա ետ պատուէր
թագաւորն · այն ոչ կատարեցաւ ։ *Ի 28
գալուստ ամին միւսոյ՝ զօր հատանէր ·
Վաթսուն հազար զայր և զձի առնէր՝ իբրև վեցհազար
հետևակ · հինգհազար հեծեալ սպա
ռազէն · գալ՝ հասանիլ՝ աւար առնուլ
զերկիրն հրէաստանի ։ *Եկին՝ հա_ 29
սին՝ ճակատեցան՝ 'ի կողմանս բեթսօ
րայ · ել ն՟ց ընդ յառաջ յուդայ մետա
30 սան հազար արամբք ։ *Եւ իբրև տե
սին զգունդն ստուար և հզօր · սկսան
կալ յաղօթս՝ օրհնել զԱ՟Ծ՝ և ասել ·
Տ՟ր Ա՟Ծ՝ դու այն ես՝ ‖ որ խորտակե_ ‖ 1 Թագ. 17.50.
ցեր զզօրութ՟ի յարձակելոյ հզօրին 'ի
ձեռն ծառայի քո դաւթի · ‖ և մատ_ ‖ 1 Թագ. 14.13.
նեցեր զբանակս այլազգեաց 'ի ձեռս
31 յօնաթանու որդւոյ շաւուղի ։ *Արդ
խորտակեա դու զզօրութիւն զօրացս
այսոցիկ 'ի ձեռս ի՟ղի · շիջցի զօրութ՟ի
ն՟ց երիվարօքն և զօրօքն հանդերձ ։
32 *Արկ զնոքօք զվատութ՟ի · և հալա_
ծեա զզօրութ՟ի հպարտութեան նոցա ·
շարժեսցին նոքա 'ի բեկումն իւրեանց ։
33 *Կործանեսցես՝ արկցես զն՟ս 'ի սուր
սիրողաց քոց · և օրհնեսցեն զքեզ յօրհ
նութիւնս · որք ճանաչեն զանուն քո ։
34 *Եւ հարան միմեանց 'ի դիմի · և ան_
կան 'ի ժամանակին յայնմիկ 'ի գնդէ
անտի լիւսիայ՝ հինգհազար հեծեալ
35 առաջի նոցա ։ *Եւ իբրև ետես լիւս
իաս զպարտութ՟ի գնդին իւրոյ · և
զյաղթութ՟ի քաջալերութեան գնդին
յուդայ · և ո՟չ զի պատրաստ էին 'ի
կեալ և 'ի մեռանիլ 'ի վ՟ր անուան քա
ջի յաղթութեան · չուեաց՝ խաղաց՝ գնաց
'ի կողմանս անտիոքացւոց · դարձեալ
զօրաժողով լինէր՝ կազմել՝ պատրաս
տել անդէն · անդրէն արշաւել 'ի կող
36 մանս հրէաստանի ։ *Խօսիլ սկսաւ
յուդա եղբարբքն հանդերձ ընդ ժո
ղովուրդն՝ և ասէ · ահաւասիկ խորտա
կեցան թշնամիք մեր 'ի ներքոյ ոտից
մերոց · եկա՛յք՝ երթիցուք և մաքրես_
ցուք զսրբութիւնն · մաքրեսցուք զտա
ճարն առնել նաւակատիս 'ի նմա ։
37 *Ժողովեցան ժողովքն ա՟մ · եկին՝
38 հասին 'ի լեառնն սիօն ։ *Տեսին զսր_
բութիւնն աւերեալ · և զսեղանն աղ
տեղեալ՝ զդրունսն այրեցեալ՝ թուփ
առթուփ բուսեալ 'ի սրահսն իբրև
յանտառի · կամ իբրև միոյ միոյ լե_
րանց · զկոնքսն աւերեալս · և զվարա_
39 գուրաձիգս խաթարեալս ։ *Զեռս զօ
ձեօք արկանէին · զպատմուճանս պա
տառէին · հող 'ի գլուխ լինէին ։
40 *Ընդ երկիր թաւալէին · փողանշանս 10.22.
հարկանէին՝ յերկինս աղաղակէին ։
41 *Յայնմ ժամանակի հրաման տայր
յուդա՝ զօրահատոյց առնէր 'ի վերայ
միջնաբերդին պաշարել զնա · զի մաք
42 րեսցէ զսրբութիւնն ։ *Եւ ընտրեաց
նա քահանայս անարատս կամարարս
43 օրինացն ։ *Եւ սրբեաց զսրբութիւնն ·
և 'ի բաց առին զվէմսն՝ զոր պղծեալս
44 էին · եդին մեկուսի 'ի տեղի մի ։ *Եւ
խորհուրդ կալան 'ի վ՟ր սեղանոյ ողջա
կիզացն · որ պղծեալն էր 'ի թշնամեաց
անտի ·

անտի. եթէ զինչ արասցեն զնա:
* Հաստատեցաւ բանս այս 'ի խորհր_ 45
դի անդ. քակել զսեղանն զի պղծեալ
էր 'ի թշնամեաց. զի մի՛ լիցի նց՟ այն
խիղճ մնաց. և 'ի նախատինս յաւի_
տենից. և քակեցին զսեղանն: * Եւ 46
տարան եդին զքարինսն 'ի դիպան
տեղւոջ՝ մինչև եկեսցէ մարգարէ. և
խօսեսցի վ՟ նոցա: * Եւ առին վէմս 47
անկոփս ըստ օրինացն. և շինեցին զսր
բութիւն: * Եւ ոչինչ էր 'ի ներքս 'ի 48
տաճարի անդ. և զսրահսն սրբեցին:
* Եւ սպաս սրբութե՟ նոր գործե_ 49
ցին. և տարան 'ի ներքս զաշտանակն
լուսոյ. և զսեղանն խնկոց. և զսեղանն
տաճարին: * Եւ արկանէին խունկս 50
'ի վ՟ր սեղանոյն՝ ճրագս լուցանէին. և
լոյս տային տաճարին: * Դնէին 'ի վ՟ր 51
սեղանոյն զհացն հանապազորդ. և
ձգէին զվարագոյրսն. և կատարէին
զգործսն զամ՟ սպասուն՝ զոր առնէին:
* Կանխեցին ընդ առաւօտն յաւուրն 52
քսաներորդի հինգերորդի՝ յամսեանն
իններորդի. յամին հարիւրորդի քա_
ռասներորդի ութերորդի: * Մատու 53
ցանէին պատարագս ըստ օրինացն 'ի
վ՟ր սեղանոյ ողջակիզացն. որոյ նոր
արարին ըստ ժամանակին: * Յաւ_ 54
ուրս յայնոսիկ՝ յորում պղծեցին հե_
թանոսքն. 'ի նմին ժամանակի նորոգե
ցաւ յերգս օրհնութե՟ 'ի փող և 'ի քնար
և 'ի սրինգ: * Եւ անկանէին ամ՟ ժո_ 55
ղովուրդքն 'ի վ՟ր երեսաց իւրեանց.
անկանէին 'ի խոնարհ. երկիր պագա_
նէին. օրհնէին զՏ՟ծ յերկինս. որ յա
ջողեաց նոցա: * Եւ արարին զնաւա_ 56
կատիս սեղանոյն աւուրս ութն. և մա
տուցին զողջակէզսն ուրախութբ՟. և
մատուցին պատարագս փրկութե՟ և
օրհնութե՟: * Զարդարեցին զկոնքսն՝ 57
և զվարագուրանձիգսն յանդիման տա
ճարին ոսկի պսակօք՝ և ոսկեւոլք տա
պակօք. և նորոգեցին զդրունսն. և
կանգնեցին զդրունսն: * Եւ եղև ու_ 58
րախութի՟ մեծ 'ի վերայ ժողովրդեանն
յոյժ. և ջնջեցան նախատինք հեթա
Յօհ. 10.22. նոսաց 'ի նոցանէ: * Եւ հաստատեաց 59
յուդա եղբարքն հանդերձ. և ամ՟
ժողովքն իէլացւոց. զի հանապազ
կացցեն աւուրքս այսոքիկ նաւակա_
տեաց սեղանոյն 'ի ժամանակի իւրե՟
'ի տարւոջէ 'ի տարի. 'ի գլուխ տարե
կանի աւուրս ութն 'ի քսաներորդի
հինգերորդի ամսոյն՝ ուրախութբ՟ և
ցնծութբ՟: * Եւ շինեցին նոքա 'ի ժա 60
մանակի յայնմիկ զլեառն սիոն շուր_
ջանակի 'ի պարիսպս բարձրացեալս.
և յաշտարակս ամրացեալս. մի՛ գուցէ
գայցեն հեթանոսք. և կոխան առնի
ցեն զդոսա. ոպ՟ արարին զառաջինն:
61 * Եւ զօր թողոյր 'ի վերայ՝ պահապան
նմա. և ամրացոյց զնա՝ պաշարել պաշտպա
զբեթսուրայ. զի լիցի ամրութի՟ զօ_ նել
րացն 'ի կողմանցն եդոմայեցւոց:

Գլ: Ե:

1 Եւ իբրև լուան հեթանոսքն շուր
ջանակի. եթէ շինեցաւ սեղանն.
և նորոգեցաւ սրբութի՟ն միւսանգամ.
ոպ՟ էր զառաջինն՝ բարկացան յոյժ:
2 * Խորհեցան գալ՝ հասանել՝ և ջնջել
զազգն յակոբեան. որք էին 'ի մէջ նց՟.
և սկսան կոտորել և սպանել զնոսա:
3 * Եւ տայր պատերազմ յուդա հանա
պազ ընդ որդիսն եսաւայ. որք էին
'ի կողմանս եդոմայեցւոց ակրաբա_
տեանց. զի շուրջանակի եկեալ պա_
տեալ պաշարեալ նստէին շուրջ զիս_
րայէլի՟. հարկանէր զն՟ս 'ի հարուածս
բազումս. և նուաղ առնէր զնոսա. և
առնոյր նա զկապուտ զաւար նոցա:
4 * Եւ յիշէր զչարութի՟ զորդւոցն բա
նեայ. որք էին լեալ ժողովրդեանն
յորոգայթ գայթագղութե՟ վարա_
նել զն՟ս 'ի ճանապարհս իւրեանց:
5 * Փախստեայ լինէին 'ի նմանէ. և ամ
րանային 'ի բերդս իւրեանց. գայր
շուրջ՝ պահ դնէր զնոքօք. և հրձիգ
առնէր զամուրս նոցա ամ՟ բնակչօքն
6 հանդերձ: * Եւ անցանէր՝ խաղայր
նա 'ի վերայ որդւոցն ամոնայ. և անդ
գտանէր ձեռն հզօր զօրս բազումս.
և զտիմոթէոս զօրագլուխ նոցա:
7 * Հարկանիւր նց՟ 'ի դիմի. և բազում
անգամ պատերազմաւ սատականայր
8 'ի վերայ նոցա: * Հարկանէր՝ վանէր.
և առնոյր զազէր քաղաք՝ և զդստերս
իւր. և դառնայր 'ի կողմանս հրէաս_
9 տանի: * Եւ ժողովեցան ամ՟ հեթա_
նոսքն 'ի գաղաադ վ՟ իէլի. որք էին
'ի կողմանս նոցա. զի ջնջեսցեն զն՟ս.
և նոքա փախստեայք անկանէին յամ
10 ուրսն 'ի դաթայիմ: * Եւ արձակեցին
նոքա հրովարտակս առ յուդայ և առ
եղբարսն՝ և ասեն. ժողովեալ են ա_
հաւասիկ 'ի վ՟ր մեր ամ՟ հեթանոսք.
պատեալ պաշարեալ սպառեն զմեզ ջն
11 ջել 'ի տեղւոջէ աստի: * Պատրաստք
են յառնուլ զամուրսն՝ յոր անկեալ եմք.
և տիմոթէոս զօրագլուխ է նոցա:
12 * Արդ եթէ իցէ ինչ 'ի ձեռս, արա_
դեսցես փրկել զմեզ 'ի ձեռաց նց՟. զի
13 անկան բազումք 'ի մէնջ: * Եւ ամ՟
եղբարք, որք էին 'ի տոբեայ՝ կոտորե_
ցան. և 'ի գերութի՟ վարեցան կանայք
նոցա՝ և որդիք նց՟. ամ՟ կահիւ և կա_

բանեաւ իւրեանց առ հասարակ կո_
րեան նոքա, որչափ 'ի կողմն մի աւագի
հազարապետութե միոջ ։ * Մինչ 14
դեռ թուղթքն 'ի ձեռին էին . այլ
գուժկանք հասանէին 'ի կողմանցն
գալիլիացւոց անտի . զօձիս պատա_
ռեալ՝ զձայն հարեալ՝ զգոյժ զայս
տային ։ * Եւ ասէին՝ ժողովեցան 'ի վր 15
մեր 'ի պտողոմեայ . և 'ի ծուրայ . և
'ի ծայդանայ . և ամ՛ կողմանք գալի_
լիացւոց յայլազգեաց կուսէ, ջնջել
զմեզ անտի ։ * Եւ իբրև լուան զբանսն 16
զայն յուդա և ժողովուրդն . 'ի խոր_
հուրդ ժողովեցան վաղվաղակի . զի
խորհեսցին, զինչ գործ գործեսցեն
վասն եղբարցն՝ որք էին 'ի նեղութե.
և ճգնէին 'ի ձեռաց պատերազմողացն ։
* Խօսիլ սկսաւ յուդա ը̄ շմաւօնեայ 17
եղբօր իւրում, և ասէ . ընտրեա դու
քեզ արս հզօրս . և երթ դու փրկեա
զեղբարսն որք են 'ի նեղութե 'ի կող_
մանս գալիլիացւոց . և ես և յօնաթան
եղբայր իմ երթիցուք 'ի կողմն գաղաա
դու ։ * Եւ եթող անդ զյօսէպոս զա 18
քարեանց . և զաքարիայ զօրագլուխ
ընտիր ընտիր զօրօք հանդերձ՝ երկ_
րին հրէաստանի պահապանս ։ * Պա_ 19
տուէր ետ նոցա՝ և ասէ . առաջնոր_
դեսջիք ժողովրդեանս այսմիկ . և մի
տայցէք դուք մարտ պատերազմի ընդ
հեթանոսս մինչև 'ի գալ մեր անտի ։
* Զօրահատոյց արարին . ընդ երկու 20
զզօրսն բաժանեցին . գնացին երեք_
հազարքն ընդ շմաւօնեայ 'ի կողմանս
գալիլիացւոց . և ութհազար յերկիրն
գաղաադու ։ * Եւ գնաց շմաւօն յեր 21
կիրն գալիլիացւոց . տայր պատերազմ
ընդ հեթանոսս . և խորտակեցան հե_
թանոսք յերեսաց նր . և հալածական
տանէր զնս մինչև 'ի դրունս պտողո_
մեայ ։ * Յայնմ աւուր անկանէին 'ի 22
հեթանոսաց անտի երեքհազար վա_
ռեալք սպառազէնք ։ * Եւ առնոյր 23
զաւար նց 'ի կողմանցն գալիլիացւոց .
և յարբաթուց . կանամբք և որդ_
ւովք հանդերձ . և գանձի կահիւ . և
եկին ածին զայն ամ՛ ցնծութբ և ու
րախութբ յերկիրն հրէաստանի ։
* Եւ յուդա մակաբէ . և յօնաթան 24
եղբայր նր՝ անցին յայնմ կողմն յոր_
դանան դետոյն . և գնացին երից ա
ւուրց գնաց ճանապարհի յերկիր անա
պատ ։ * Եւ ընդառաջ եղեն նց նաբա 25
տացիք խաղաղութբ . և պատմեցին
նց զամ՛ անցսն . որք անցին ընդ եղ_
բարսն յերկրին գաղաադու ։ * Եւ 26
բազումք 'ի նոցանէ յաւարի երթեալ
են 'ի քաղաքսն բոսորայ . և բոսոր_

մայ . և սեփոլը մակեդեայ . և զառ_
նասպասեայ . այս քաղաքք ամուրք և
27 մեծամեծք են ։ * Եւ այլոց քաղա_
քացն 'ի կողմանցն գաղաադու . և 'ի
մի վայր միաժողովք են . առ վաղիւ
ժամադիրք են փակել պատել զա_
մուրսն . առնուլ՝ ջնջել՝ սատակել զա
28 մենեսեան յաւուր միում ։ * Իբրև
զայն լուան՝ յուդա դունդ կազմեաց
վաղվաղակի . ճանապարհ կալաւ ընդ
անապատ . յանկարծակի անկանիւր
'ի վր բոսորայ . յանկարծակի յեղակար
ծումն ժամու զամ՛ քաղաքն 'ի բուռն
արկանէր անտի 'ի սուր սուսերի իւր_
ոյ . սպանանէր զամ՛ արու մանուկ . և
առնոյր զամենայն զաւար քաղաքին
բոսորացւոց ։ Եւ զքաղաքն ամենայն
29 հրձիգ առնէր ։ * Եւ ինքն գիշերայն
գնդաւն հանդերձ դիմէր 'ի վր ամ
30 րոցացն պաշարելոց ։ * Մինչ կամէր
առաւօտն 'ի գիշերոյն մերկանալ՝ զաչս
'ի վեր ամբարձին . տեսանէին զօրս
բազումս՝ զի ոչ գոյր նոցա թիւ . զի
բարձեալ բերէին սանդուղս և մանգ
ղիոնս . և պէսպէս մեքենայս 'ի վր ամ
րոցին . մարտ եդեալ՝ և 'ի պատերազմ
31 մատուցեալ ։ * Իբրև ընդ այն հայե_
ցաւ յուդա՝ և ետես . զի սկիզբն էր մար
տին . անտի աղաղակ քաղաքին, և սա
տի զօրացն . որք պաշարեալ պահէին .
ձայն մարտի՝ ձայն պատերազմի՝ ձայն
փողոյ առ հասարակ յերկինս ելանէր ։
32 * Սկսաւ խօսիլ ընդ զօրսն իւր՝ և ասէ .
հապա ժիր լերուք՝ պնդկացէք, գործ
այսօր է մարտնչիլ ձեզ 'ի վր եղբարց
33 ձերոց ։ * Եւ զզօրսն ամենայն յերիս
գունդս բաժանէր . և շուրջ զնոքօք
ճակատեալ՝ 'ի մարտ մատուցանէր՝ փող
հարին . խրախոյս բարձին՝ գոչեցին
աղօթիւք առ Տր, 'ի վր յարձակե_
34 ցան ։ * Ազդ եղև տիմոթեայ և զօ_
րացն, եթէ մակաբէ զօրօքն 'ի վր հա
սեալ է . իբրև հայեցան՝ տեսին . շփո_
թեան . լքան . կասեցին . ընկեցին զիւր
աքանչիւր մեքենայս . և 'ի փախուստ
դարձան . և հարկանէր յաւուր յայն_
միկ զնս 'ի հարուածս սաստիկս . տա
նէին փախստեայս առաջի իւրն . մի առ
միոջ դիաթաւալ կացուցանէին . արկա
նէին 'ի սուր սուսերի իւրն իբրև արս
35 ութն հազար սպառազէնս ։ * Եւ ինքն
դառնայր 'ի կողմն մոյափայ . մարտ պա
տերազմի դնէր զնովաւ՝ և առնոյր
զնա՝ և 'ի նմա սպանանէր զամ՛ արու
մանուկ նց . և առնոյր զամենայն ինչս
և զաւարս նոցա յաւարի . և զքա
36 ղաքն այրէր հրով ։ * Անտի խաղայր՝
դայր՝ պատէր զքասփոն մակեթ . և
զբոսոր .

զբոսոր • և զմնացեալ քաղաքս գաղաա
դու: * Յետ այսց ժամանակաց դար 37
ձեալ զօրաժողով լինէր տիմոթէոս •
և գայր՝ բանակէր դէմ յանդիման
ռափոնայ յայնկոյս գետոյն: * Դէտ 38
արձակեաց յուդա • զի տեսցէ զբա_
նակս նոցա • եկին՝ պատմեցին՝ և ասեն •
միաժողովք են ամենայն ազգք և ազինք
յոյժ • որք շուրջ զմեօք բնակեալ են •
և զօրք բազումք կուտեալք են յոյժ:
* Եւ արուացիկս բազումս ածեալ է՝ 39
՚ի վարձու են յօգնականութիւն իւրեանց •
և բանակեալք են յայնկոյս գետոյն •
պատրաստ են գալ անկանել ՚ի վերայ քո:
իբրև զայն լուեր յուդա • նոյնժամայն
խաղայր՝ գնայր ՚ի վերայ նոցա: * Իբրև ե_ 40
տես տիմոթէոս • խօսիլ սկսաւ ընդ իշ_
խանսն՝ և ասէ • մինչ դիջի գունդ յու_
դայ և գնդի նորա՝ առ հասանիլ յափն
գետոյն • եթէ զհասանիլն և զանցա_
նելն մի արասցէ • ապա մեք ոչ կարեմք
դիմակալ լինիլ նմա • զի յաղթելով յաղ_
թեսցէ նա մեզ: * Ապա թէ հասցէ 41
յափն գետոյն • և ճակատեսցի • յայտ
արար թէ զանգիտեաց • մեք անցցուք
մարտիցուք՝ և յաղթեսցուք նմա: * Այն 42
ինչ նորա բանք ՚ի բերան էին • և յուդա
զօրօքն հասանէր յափն գետոյն • անդ
առ ափին գետոյն կացուցանէր զաշ_
խարհամար դպիրսն • և տայր նոցա պա
տուէր • զի մի զոք ամենևին թողցեն
առ ափն գետոյն բանակիլ • այլ զամենայն
զայր պատերազմող զկնի նոցա փութեցին:
* Եւ ինքն զհասանիլն զանցանելն և 43
զյարձակիլն ՚ի վերայ մի առնէր • և նախ
զգունդն նահատակաց ՚ի ներքս բե_
կանէր • զզօրսն ամենայն ՚ի փախուստ
դարձուցանէր • և ամենայն ազգք և ազինք
զէնընկէցք փախստեայք գնային յամ
րակողմն ՚ի նուիրեալ տեղին մեհենին
՚ի կառնայիմ: * Սոքա եկին՝ հասին՝ և 44
պատեցին զքաղաքն • հրձիգ արարին
զամուրն մեհենին հանդերձ: և կառ
նայիմ նեղիւր • և ոչ կարէր հանդար_
տել ընդդէմ յուդայ: * Հրաման ետ 45
յուդա խաղացուցանել զամենայն ազգս
հրէիցն՝ որք էին ՚ի կողմանս գաղաա
դու • կանամբք և մանկտովն ամենայն կա_
հիւ հանդերձ ածել հասուցանել յեր
կիրն հրէաստանի: և էին նոքա բա_
նակք մեծամեծք: * Եւ եկին հասին 46
նոքա ՚ի դուռն եփրոն քաղաքի: և այս
քաղաք է մեծ ՚ի վերայ ճանապարհի յա_
մուր վայրի • և ոչ գոյր նոցա այլ ճանա_
պարհ խոտորիլ յաջ կամ յահեակ • բայց
երթալ ընդ մէջ քաղաքին: * Իբրև տե 47
սին զօրք քաղաքին զամբոխ զօրացն •
և զբազմութիւն բանակացն, զդրունսն

փակեցին • զդրանդսն սեղմեցին վի
մօք • և ոչ տային անցանել նոցա: իբրև
զայն ետես յուդա • առաքեաց առ նո
48 սա բանս խաղաղութեան: * Եւ ասէ •
թոյլ տուք • անցից ընդ երկիր քո • եր_ Թոյլ
թալ անցանել ինձ յաշխարհ իմ • և ոչ տուր՝ զի
ինչ մեղիցէ քեզ • բայց այնչափ որչափ անցցուք
ոտիւք մերովք կոխեսցուք զերկիր քո: ընդ եր_
և ոչ առին նոքա յանձն բանալ ըզ կիր ձեր
49 դրունսն նմա: * Ապա հրաման ետ յու
դա փող հարկանել • քարոզ կարդալ
և ասել • հապա իւրաքանչիւր գունդ
յորում վայրի և կայցէ՝ ՚ի ներքս խա_
50 ղասցէ: * Եւ մատեան զօրքն՝ յիւրա
քանչիւր տեղւոջէ յորում կային՝ ՚ի
մարտ պատերազմի զամենայն տիւն և զամենայն
գիշերն ՚ի մարտ • մինչև մատնեցաւ
51 քաղաքն ՚ի ձեռս նոցա: * Անդ սատա
կեցին զամենայն արու մանուկ նոցա ՚ի սուր
սուսերի իւրեանց • խլեցին զնոսա յար
մատոց • խաղացուցին զաւար քաղա_
քին • և ինքեանք անցին ընդ մէջ քաղա
քին • գնային՝ երթային ՚ի վերայ դիա
52 կանցն անկելոց: * Եւ անցին նոքա
ընդ յորդանան գետ ՚ի տափակողմն ՚ի
դաշտ մի մեծ • և անդ բանակեցան
53 դէմ յանդիման բեթսանայ: * Եւ
անդ յանձանձէր զկաց մնաց ժողովր
դեանն • մխիթարէր զամենեսին յու
դա • ընդ ամենայն չուս ճանապարհին այս
պէս առնէր • մինչև ածէր՝ և հասու_
54 ցանէր յերկիրն հրէաստանի: * Եւ
եկին՝ հասին՝ ելին ՚ի լեառն սիօն ու_
րախութեամբ • անդ մատուցանէին զող_
ջակէզս և զպատարագս • զի ոչ ծախե
ցաւ ՚ի նոցանէ • մինչև եկին՝ և հասին
անդրէն ՚ի տեղի իւրեանց խաղաղու
55 թեամբ: * Եւ յաւուրսն յայնոսիկ էին
յուդա և յօնաթան յերկրին գաղաա
դու • և շմաւօն եղբայր նոցա էր յերկ
րին գալիլիացւոց՝ յանդիման պտողո
մեայ • իբրև զայն քաջութիւն պատե
56 րազմի լուէին: * Յովսէպոս զաքարիանց •
և զաքարիա իշխան զօրացն մնացելոց: աղարիա
57 * Ասեն • եկայք, և մեք երթիցուք •
տացուք մարտ պատերազմի ընդ հե_
թանոսս • որք շուրջ զմեօք են • արաս
58 ցուք և մեք մեզ անուն: * Ամենուն
զօրօքն • խաղացին՝ գնացին ՚ի կող_
59 մանս յամնեայ: * Եւ ել գորգիէ ՚ի քա
ղաքէ անտի զօրօք հանդերձ • որք ընդ
իւր էին ՚ի մարտ պատերազմի • և հա
60 րաւ ՚ի դիմի նոցա: * ՚Ի պարտութիւն
մատնեցան յովսէպոս և զաքարիա • և Եւ աղա_
հալածականս երթային մինչև ՚ի սահ րիա
մանս երկրին հրէաստանի: յայնմ աւ
ուր անկանէին ՚ի նոցանէ արք իբրև
երկու հազարք • և եղև կործանումն
այն

այն սատակի՛ 'ի վերայ ժողովրդեանն:
* Զի ոչ անսացին նոքա յուդայի և 61
եղբարց նորա. խորհեցան թէ և մեք
չնոսա իբրև զնա առցուք անուն քաջութե: 62
* Բայց նոքա չէին 'ի զաւակէ անտի
արանց այնոցիկ, որոց տուեալ էր զփր
կութի իւրի 'ի ձեռս նոցա: * Եւ այրն 63
յուդա՛ և եղբարքն նր փառաւոր լի
նէին յոյժ ժողովրդեանն առաջի ա՛մ
ազգացն հեթանոսաց. ուր և լսէին
նոցա զանուն նր: * Փողոլէին՝ և օրհնէին 64
զնա: * Եւ ել յուդա եղբարքն հան 65
դերձ տալ պատերազմ ընդ որդիսն
եսաւայ 'ի հարաւակողմն կուսէ անդ:
անդ հարկանէր զքեբրոն քաղաք՝ և
զդստերս իւր. քակէր՝ կործանէր զա՛մ
ամուրս նոցա. և հրձիգ առնէր զաշ
նոցա տարակս նր շուրջ. ուր և գտանէր:
* Եւ ել՝ դիմեաց նա գնալ յերկիրն 66
այլազգեաց. գայր՝ հասանէր 'ի կողմն
առմարիսայ մարիսայ: * Յաւուր յայնմիկ անկան 67
քահանայք 'ի պատերազմի անդ. մինչ
նա դեռ կամէր քաջութի ինչ առնել.
զի ել նա տալ պատերազմ առանց խոր
հրդոց: * Եւ դարձաւ յուդա 'ի կողմն 68
ազովտայ յերկիրն այլազգեաց. աւե
րէր զմեհեանս նոցա. և կործանէր
զկուռս նոցա. և հրձիգ առնէր զքա
ղաքս նոցա. 'ի գերութե վարէր զինչս
և զստացուածս նոցա. և դառնայր՝
գնայր յերկիրն հրէաստանի:

Գլ: Զ:

Եւ անտիոքոս կայսր գնայր ընդ 1
վերնադաւառսն. ապա լու եղև
նմա. եթէ է քաղաք մի 'ի կողմանս ելի
մեայ 'ի պարսից աշխարհին. քաղաք
փառաւոր. լի՛ ոսկւով և արծաթով:
* Եւ մեհեանն որ 'ի նմա, է մեծագանձ 2
յոյժ. և կուռք ոսկեղէնք ձուլածոյք
մեծամեծք 'ի նմա: էառ նա զէն բա
զում, զրահք և պատեանք. զորս թո
ղեալ էր աղեքսանդրի կայսեր մակե
դոնացւոց. որ թագաւորեաց նախ 'ի մէ՛
յունաց աշխարհին: * Եկն՝ էհաս նա 'ի 3
քաղաքն յայն. և խնդրէր առնուլ ա
ւարաբար: այլ եղև քաղաքացւոցն:
* 'Ի մարտ պատերազմի պատրաստե 4
ցան. և ոչ ետուն մտանել: զահի հա
րաւ՝ խաղաց՝ գնաց 'ի կողմանցն արևե
լից յերկիրն բաբելացւոց: * Անդր 5
գուժկան հասանէր առ կայսր անտի
ոքոս 'ի կողմանցն հրաւոյ. եթէ 'ի պար
որք եր_ տութի մատնեցան զօրքն. որք երևեալ
ևեալ էին էին յերկրին հրէաստանի: * Զի չո 6
գաւ զառաջինն նուագն լիւսիաս զօրօք
բազմօք. և 'ի պարտութի մատնեցաւ
յերեսացն նց. զօրացան զինուք զօրօք.

և լցան աւարաւ բազմաւ. կոտորե
ցին զբանակսն նոցա. զինչս և զստացո՛
ածս նոցա 'ի գերութե վարեցին:
7 * Զմեհեանս աւերեցին. զկուռս կոր
ծանեցին՝ որ շինեալ էր 'ի վերայ սեղա
նոյն յերուսաղէմ. և զսրբութիւն փա
կեցին պարսպօք բարձրութե. որպէս
էր առաջինն՝ և ընդ նմին զքաղաքն
8 բեթսուր: * Եւ եղև՝ իբրև լուաւ զայն
բան թագաւորն. հիացաւ՝ զարմա
ցաւ՝ թմբրեցաւ՝ և խռովեցաւ յոյժ.
անկաւ 'ի մահիճս իւր՝ և հիւանդա
ցաւ. զի ոչ կատարեցաւ խորհուրդ
9 հրամանի նր: * Եւ անդ դնիւր նա
բազում աւուրս. զի նորոգեցան 'ի վե՛
նր տրտմութիք բազումք. եած զմտաւ
10 թէ մեռանիմ: * Կոչեաց զա՛մ բա
րեկամս իւր՝ և ասէ ցնս. քուն հատաւ
յերեսաց իմոց. պահեալ եմ 'ի սիրտ յոլով
11 իմ հոգւոյ իմոց: * Խօսեցայ ընդ սր
տի իմում, և ասեմ. ցոր վայրնեղութեց
հասանիս. և խռովութեց բազմաց. յո
րում այժմիկ պաշարեալ կամ. զի
քաղցր՝ և բարերար՝ և սիրելի էի զօ
12 րաց իմոց: * Արդ՝ յուշ եղեն ինձ չա
րիքն այնք՝ զորս գործեցի ես յերէմ.
և առի ես զամենայն սպասն զայն զոսկ
ւոյ և զարծաթոյ. և զօրս ես գումա
րեցի տարապարտուց 'ի վր նց ջնջել
13 զնոսա: * Արդ՝ գիտեմ. թէ վասն այ
սորիկ գտին զիս չարիքս այս ամենայն.
և կործանիմ աւասիկ տրտմութբ յօտար
14 երկրի. * Եւ կոչեաց նա զփիլիպպոս՝
զմի 'ի բարեկամաց անտի իւրոց. կա
ցոյց զնա 'ի վր ա՛մ թագաւորութե
15 իւրոյ: * Եւ ետ ցնա թագ՝ և պատմու
ճան՝ և զմատանին իւր. ածել զորդի
իւր զանտիոքոս սնուցանել՝ և յիւր տե
ղի թագաւորեցուցանել զնա:
16 * Եւ մեռաւ անդ անտիոքոս արքայ.
յամին հարիւրորդի քառասներորդի
17 իններորդի: * Ազդ եղև լիւսիայ. եթէ
մեռաւ արքայ. և կացոյց թագաւոր
զորդի իւր անտիոքոս. և եդ անուն
18 նմա հօրանոյն անտիոքոս: * Եւ որք
'ի միջնաբերդին էին արգելեալք.
որք նեղէին զիէլ. և շուրջ զսրբութն
խնդրէին զչարիսն հանապազ. և զօրու
19 թն էին նոքա հեթանոսաց: * Խոր
հեցան քաղաքացիքն ջնջել զնոսա. և
իբրև ժողովեաց զամենայն ժողովս
20 զօրացն: * Եւ եկին նստան շուրջ
զնոքօք. և ժողովեցան 'ի մի վայր. և
պաշարեցին զնա յամին հարիւրորդի
յիսներորդի. շինեցին պատուարս և
նետակալս և մեքենայս բազումս:
21 * Եւ եկին՝ ելին նոքա յարգելանէ
անտի. և կցեցան յարս անօրէնս յիսրա
ցւոց

ցւոց անտի ։ * Եւ գնացին նոքա առ 22
արքայն՝ և ասեն . մինչև յերբ ոչ արաս
ցես դու զդատաստանն՝ և զվրէժ
խնդրեսցես եղբարցն մերոց ։* Մեք 23
հաւանեալ էաք ծառայել հօր քում,
և երթալ զհետ հրամանացն նորա ։
* Եւ նստէին զնովաւ որդիք ժողովր 24
դեան մերոյ . վասն այսորիկ օտարա_
նային բազումք 'ի մէնջ . բայց որք
գտանէին 'ի մէնջ՝ մահու մեռանէին .
և ժառանգութիւնք մեր 'ի յափշտակու
թի մատնէին ։* Եւ ոչ 'ի մեզ միայն 25
ձեռս մխեցին , այլ և յամ սահմանս
իւրեանց ։ * Եւ այժմ եկեալ պաշա_ 26
րեալ շուրջ զմեզ . և աւադիկ եկեալ
փակեալ՝ պաշարեալ պահէն զմիջնա
բերդն երեմի առնուլ զնա . և զսրբու
թիւն . և զբեթսօրայ ամրացուցին ։
* Եւ եթէ ոչ վաղ աճապարեսջիք , 27
եւս մեծամեծ ինչ քան զայս գործի_
ցեն . և դուք զառաջս ոչ կարիցէք ու
նիլ ։* Իբրև զայն լուաւ թագաւորն՝ 28
բարկացաւ յոյժ . հրամայեաց կոչել
զբարեկամս իւր և զիշխանս . որք 'ի
վերայ զօրացն էին ։* Եւ յայլմէ թա 29
գաւորութէ . և յայլոց կղզեաց եկին
առ նա զօրք բազումք 'ի վարձու ։
* Եւ էր թիւ զօրացն նր հարիւրհա_ 30
զար 'ի ձեռն ետիգաւոր հետևակ . և
քսանհազար հեծեալ սպառազէն .
երեսուն և երկու փիղք վառեալք երի
վարիկք ։ * Եւ եկին անցին ընդ ե_ 31
դոմ ։ Ճակատեցան՝ և պատեցին զբեթ
սոր քաղաք . և մարտ պատերազմի ե_
դին շուրջ զնովաւ աւուրս բազումս .
կազմեցին շուրջ զմանգղիոնս և մե_
քենայս . և ելին 'ի քաղաքէ անտի . այ
րեցին զմեքենայս . և մարտ եդին ընդ
նոսա քաջութբ ։ * Չուեաց՝ Յուդայ՝ 32
և գնաց յուդա 'ի միջնաբերդ յամրո
ցէ անտի՝ և եկն բանակեցաւ 'ի բեթ
սաքարիայ . դէմ յանդիման բանակի
արքային ։* Կանխեաց ընդ առաւօտն 33
թագաւորն . եառ զբանակն՝ տարաւ
Ճիւ և բանակեցոյց 'ի միջոյ անտի ընդ ճա
նապարհին բեթսաքարիայ . և զզօրսն
սփռեաց՝ ճակատեցոյց 'ի մարտ պա_
տերազմի . փողհարին ։ * Կազմեցին 34
պատրաստեցին զփիղսն ճաշակեցու_
ցին յարիւն խաղողոյ 'ի զմուռս և 'ի
գինի ։* Եւ կարգեցան՝ բաշխեցին 'ի 35
գունդս գունդս . և կարգեցին առ
փիղ փիղ հազար հազար այր սպառա
զէն . և պահապան գլուխ գնդիցն
500 հինգհազար հեծեալ վառեալ նժոյգ
հետեւոլ 'ի ձեռն պաշտպան գնդիցն ։ * Ու 36
ուր և կայցեն գազանքն՝ կայցեն նք .
ուր և գնայցեն՝ գնասցեն նոքա ։* Եւ 37

վանդակակապ մարտկոցս մեքենայ_
իւք 'ի վերայ փղացն կազմեցին . և
զփղապանն 'ի վր գլխոյն նստուցին ։
38 * Եւ զայլ այրուձին յաջ և յահեակ
39 թևս գնդին կազմեցին ։ * Իբրև ան
տի արեգակն ծայրս արձակէր՝ առ
հասարակ 'ի զրահաւոր պատենազէն
պղնձապատ վահանացն նշոյլք զլե_
րամբն փայլատակէին . և ճառագայթք
հատանէին իբրև 'ի փայլատականց
40 հրոյ ։* Եւ երկայնէր ճակատն՝ և զե_ երէոյ_
ղջր՝ որ զբարձամբք լերանց . որ զձո_ նեար
41 րօք , և զխորօք , և զդաշտիւք ։ * Եւ
խաղային յառաջ առ հասարակ կար_
գեալք և կազմեալք՝ միաբան շար_
ժէին առհասարակ ամենեքին՝ որք
լսէին զձայն բարբառոյ բազմութե .
զշաչիւն զինու . զշառաչիւն երիվա_
րացն՝ զթնդիւն սոսաձայն վահանա
42 որ վառելոցն ։* Եկն՝ եհաս և յուդա
իւրով գնդաւն . կարգեցաւ՝ կազմե_
ցաւ՝ ճակատեցաւ . պատրաստեցաւ .
յարձակեցաւ . 'ի դիմի հարաւ գնդի
թագաւորին՝ յայնմ տեղւոջ յանդի_
ման թագաւորին՝ զվեցհարիւր հե_
ծեալ սպառազէն դիաթաւալ կացու
ցանէր յանդիման թագաւորին ։
43 * Յայնմ վայրի դիտակն 'ի վեր բառ
նայր . եղիազար աւարեան . տեսանէր
մի 'ի գազանաց անտի վառեալ՝ զար_
դարեալ՝ 'ի զէն արքունի վառեալ՝ և
նշանս արձակեալս . համարեցաւ թէ
44 արքայն իսկ 'ի նմին իցէ ։ * Յարձակե
ցաւ 'ի վերայ գնդին՝ յաջ և յահեակ
կոտորեաց . չոգաւ՝ մինչև եհաս 'ի փիղ
45 անդ նշանաւոր . զէն վերացոյց ։* Եւ
եմուտ 'ի ներքոյ . եհար՝ և անդէն կոր
46 ծանեաց ։ * Եւ էջ՝ նստաւ փիղն 'ի
47 վր . և զնա անդէն ճմլեաց ։ * Նոքա
իբրև տեսին զզօրութի զօրաց թա_
գաւորին՝ խոյս ետուն 'ի նոցանէ ։
48 * Սակայն յոր կողմն և գային . ընդա_
ռաջ լինէին նց գունդքն արքունի .
մինչև եկին 'ի կողմանս երեմի . և եկն
արքայն . և բանակեցան 'ի հրէաստա
49 նի . և 'ի լեառն սիոն ։ * Եւ խօսեցաւ
նա 'ի հաշտութի խաղաղութե բեթ
սոր քաղաքին . և ելին սփռեցան նոքա
'ի քաղաքէ անտի . զի ոչ գոյին նց անդ
համբարք . զի բազում ժամանակաց
արգելեալ պաշարեալ էին . և ամն իսկ
ընդ աշխարհ շաբաթ դիպեցաւ ։
50 * Եւ եառ թագաւորն զբեթսօր քա
ղաք . և հրամայեաց զզօրն 'ի ներքս
51 տանիլ պահապան քաղաքին ։ * Եւ
ինքն պաշարեալ պահէր զսուրբ քա_
ղաքն աւուրս բազումս . և շուրջ զնո
վաւ կանգնէին մանգղիոնս և մեքե_
նայս .

նայս · հրացանս · և քարընկէցս · ամբա
քարս · և փայլխտոր · նետաձիգ աշտա
րակս · և աշտարակս պարսպաւորս ։ պարսպա_ ւորայ
*Դարձեալ և նոքա 'ի քաղաքէ անտի 52
սկսան կազմել մեքենայս առ մեքե_
նայս նորա՝ մարտ եդեալ կռուէին աւ
ուրս բազումս ։ *Բայց համբար ինչ 53
ոչ գտանէին · զի այն ամ եօթներորդ
էր ընդ երկիր · զի գաղթականք աշ_
խարհին սպառեցին զհամբարս մթե
րեալս ։ *Մնացեալ էին սակաւք 'ի 54
նըս անդ · զի սփռեալ էին ընդ իւրա_
քանչիւր տեղիս · զի սովն սաստկացեա_
էր 'ի վերայ նց · և ցրուեցան յիւրա_
քանչիւր տեղիս ։ *Իբրև լուաւ լիւս 55
իաս · եթէ փիլիպպոս · որում հրամայ
եաց ինքնին անտիոքոս սնուցանել
զորդի իւր զանտիոքոս · զի կացուսցէ
զնա արքայ ։ *Իբրև դարձաւ նա 'ի 56
պարսից և 'ի պարթևաց · եթէ զօրք
ամ 'ի նա հարան · և ինքն կամի հասա
նիլ 'ի վերայ իրաց աշխարհին ։ *Եկն 57
և ասէ նա ցարքայն և ցամենայն մե_
ծամեծս զօրացն՝ նեղին զօրքս հանա
պազ՝ համբարք նուազեալ են · և կե_
րակուրք կարճեալ են · և տեղիդ յո_
րոյ վերայ պատերազմ է՝ ամուր է՝ և
անհնարին է · և գործ թագաւորութե
'ի մեզ հասեալ է ։ *Արդ՝ եկայք 'ի 58
հաշտութի խօսեսցուք · դաշինս կռես_
ցուք՝ խաղաղութի արասցուք ը արս
ազգիդ այդմիկ ։ *Բանս հաստատես 59
ցուք մեք ընդ նոսա · կալ նոցա յիւրա
քանչիւր օրէնս իբրև զառաջինն · զի
վասն օրինացն իսկ իւրեանց յորում
խռովեցաք զնս՝ բարկացան նոքա 'ի
մէնջ · 'ի վեդ եկին՝ և արարին զայս
ամ ։ *Հաճոյ թուեցաւ բանն առա 60
ջի թագաւորին և իշխանաց նորա · և
արձակեաց նա հրեշտակս խօսիլ 'ի խա
ղաղութի և ընկալան ։ *Երդուան եր_ 61
դուաւ նց թագաւորն և իշխանքն · և
ապա նոքա ելին յամրոցաց անտի ։
* Եւ եմուտ թագաւորն 'ի լեառնն 62
սիօն · և ետես զամրութի տեղւոյն · և
ստեաց զերդումն · զոր երդուաւ · հրա
ման ետ քակել շուրջանակի զպա_
րիսպս նր ։ *Զու արար վաղվաղակի 63
'ի կողմանս անտիոքայ · և եգիտ նա ըզ
փիլիպպոս տիրեալ քաղաքին · մարտեաւ
ընդ նմա · և էառ զքաղաքն բռնութե ։

ԳԼ: Է:

Յամին հարիւրորդի յիսներորդի 1
յառաջնում · համբարձաւ դե_
մետրիոս սելևկեան 'ի հռոմ քաղաքէ ։
և եկն նա սակաւ զօրօք 'ի քաղաքն
ծովեզերեայ՝ և թագաւորեաց նա 'ի
2 նմա ։ *Եւ եղև իբրև մտանել կամէր
անտիոքոս 'ի տուն թագաւորութե
հարց իւրոց · շուրջ եղեն՝ պատեցին
զնա զօրք բազումք · ձերբակալ արա
րին զլիւսիաս և զանտիոքոս · կալեալ
3 կապեալ ածէին առ դեմետր ։ *Իբրև
ցուցին դեմետրի զբանսն · հրաման
ետ՝ և ասէ · բնաւ զերեսս նոցա ինձ
4 յակն մի արկանէք ։ *Եւ առին ար_
տաքուստ արտաքս զօրքն · և տարան
սպանին զնս · և նստաւ յաթոռ թա_
5 գաւորութեն դեմետր ։ *Եւ եկին
առաջի նր արք անօրէնք ամպարիշտք
յազգացն իէլի · և յակիմոս գլուխ էր
նց · զի ինքն իսկ անսայր քահանայութե ։
6 *Ամբաստան եղեն զժողովրդենէն ·
և ասեն · կորոյս սպառեաց յուդա զմեզ
զեղբարս իւր · և զքո զբարեկամս · և
7 զմեզ ցրուեաց յերկրէ անտի ։ *Արդ
առաքեա՛ դու արս հաւատարիմս · որք
եկեսցեն և տեսցեն զչարչարանս ազ
գին · և զստակումն · զոր հասոյց 'ի
վր մեր · զի սատակեաց նա զերկիրն
արքունի · և վշտացոյց զօգնականս նց ։
8 *Եւ ընտրեաց կայսր զբաքիդ սիրե
լի արքային՝ զիշխան յայն կողմն գետոյն
զիշխան մեծ հաւատարիմ յարքայու_
թեն իւրում · և արձակեցին զնա ։
9 *Եւ զամբարիշտն յակիմոս ընդ նմա · և
յանձն արարին նմա զքահանայութին ·
և ետ հրաման խնդրել զվրէժ որդ_
10 ւոցն իէլի ։ *Զու արար՝ խաղաց՝ գնաց
բաքիդ · և հրեշտակս արձակեաց 'ի
տեղւոջէ անտի առ յուդա և առ եղ_
բարս նր խօսիլ ընդ նոսա 'ի խաղա_
11 ղութի, բանիւք նենգութե ։ *Եւ նք
ոչինչ անսացին բանից նորա · զի տե_
սին զնա հասեալ զօրօք բազմօք ։
12 *Ակսան ժողովիլ առ բաքիդ և առ
յակիմոս ժողովք դպրաց · որք խնդ
13 րէին զիրաւունս ։ *Նախ ասիդա_
ցիքն էին յորդիսն իէլի · որք խնդրէին
14 զխաղաղութի ։ *Զի այսպէս համա
րեցան · եթէ այր քահանայ 'ի զաւա_
կէ ահարօնի եկեալ է ընդ զօրուն · ո՛չ
15 ինչ տացէ մեղանչել մեզ ։ *Եւ խօ_
սեցաւ ընդ նս բանս խաղաղութե · և
երդմնի եղև նց · եթէ ոչինչ տաց մե_
ղանչել ձեզ · և ոչ բարեկամաց ձերոց ։
16 *Եւ հաւատացին 'ի նա · և նա էառ
'ի նոցանէ արս վաթսուն · և սպան
յաւուր միում · ըստ բանին որպէս և
17 գրեալ է ։ *‖Ընկեցին զմարմինս սրբոց ‖ Սաղ.
քոց թռչնոց երկնից · և հեղին զարիւն 78. 1.
նց շուրջ զեմաւ · և ոչոք էր՝ որ թա 2. 3.
18 ղէր զնս ։ *Եւ անկաւ ահ և երկիւղ
'ի վր ժողովրդեանն · զի ասացին թէ
չիք 'ի նոսա իրաւունք՝ և ոչ ճշմարտու
թի ·

թէ. զի անցին ըստ հաստատութեան. և
ե երդումն զոր երդուան։ * Դուէաց 19
քաքիդ յերկիր. և եկն և բնակեցաւ
ի բերաեթ. և առաքեաց և կալաւ
նա զբազումս ի նոցանէ յարանցն ինք
նեկաց. և զբազումս ի ժողովրդենէ
անտի. և հրամայեաց փողոտել ի քա-
հոր անդր ի ներքս։ * Եւ եղ զքա- 20
խարէն ի ձեռն յակիմայ. և եթող
առ յակիմայ զօրս բազումս օգնական
նմա. և գնաց բաքիդ առ արքայ։
* Եւ ջանայր յակիմս վասն քահա- 21
նայապետութեան։ * Եւ ժողովեցան 22
առ նա ամ խռովիչք ժողովրդեանն.
և յալեհարեցին զերկիրն յուդայ.
և արարին հարուածս մեծամեծս ի
վր իլի։ * Իբրև եռես յուդա զայս- 23
րիսն զորս արար յակիմս. և որք ընդ
նմա էին որդիքն իլի։ * Յարձակե- 24
ցաւ նա ի վր հրեաստանի շուրջանակ
կի զսահմանօք նորա. և արար վրէժ-
խնդրութիւն ի վր արանցն. որք ինքնա
կամ գնացեալ էին ի հեթանոս. և
կարձեցան նորա այնուհետև դա-
նալ անդրէն յերկիրն հրէաստանի։
* Իբրև եռես յակիմս. եթէ միւսան 25
գամ և զօրացաւ յուդա. և գիտաց
թէ ոչ կարէ ժոյժ ունել նմա. դար-
ձաւ անդրէն առ թագաւորն յարա-
խոս լինել զնմանէ։ * Եւ առաքեաց 26 ‖2.Մակ. 14.11.
թագաւորն զնիկանօրս. մի ի փառա-
ւորս յերիքովնա անտի. որ մինաւանդ
առեալր. և թշնամութիւն կեալր ընդ
կողմն իւր. պատուէր ետ նմա. զի ջն
ջեսցէ զժողովուրդն ի տեղւոջէ։
* Եւ եկն եհան նիկանօր զօրօք բազ 27
մօք. և առաքեաց նա առ յուդայ՝ և
առ եղբարս իւր բանս խաղաղութեան
նենգութիւն։ * Ի՝ի եղիցի կռիւ ընդ 28
ձս և ձեզ. եկից ես սակաւ արամբք
տեսանել զերեսս ձեր խաղաղութեամբ։
* Եւ եկն առ յուդայ. և ողջոյն ետուն 29
միմեանց խաղաղութեամբ. և զօրքն ձե-
կատեալ պատրաստեալէին յարձա-
կիլ և ձերբակալ առնել զյուդայ։
* Իբրև ազդ եղև բանն այն առ յու- 30
դայ. եթէ նենգութեամբ եկեալ գնան
նէ. խռովեցաւ՝ խորհեցաւ՝ մերժե-
ցաւ՝ հեռացաւ՝ և այլ ոչ կամէր տե-
սանել զերեսս նր։ * Իբրև եռես նի- 31
կանօր, եթէ յայտնեցաւ խորհուրդն
նմա. խաղաց պատահիլ նմա պատե-
րազմաւ՝ ի կողմանս փարաձոյ։ * Եւ 32
անկան ի կողմանսն նիկանօրայ իբրև
արք հինգհարիւրք. և փախաւեալք
եղեն ի քաղաքն դաւթի։ * Եւ յետ 33
այսց բանից եկն նիկանօր ի լեառն
սիօն. և եկին՝ ելին ի քահանայից ան

տի սրբոց ընդ նմա՝ ողջոյն առ նմա
խաղաղութիւն. և յուսացանել նմա զող
ջակէզս պատարագաց. զոր մատու-
ցանէին հանապազ վասն կենաց ժո-
34 ղովրդեանն։ * Եւ անարգեաց զնոսա.
և ծիծաղեր զնոքօք. և պղծեաց զնո
բանիւք հպարտութեամբ և ամբարտա-
35 ւանութեամբ։ * Եւ ետար զնոսա՝ և ասէ
ցասմամբ. եթէ ոչ ի ձեռս իմ տա-
կիք զյուդայ զնդապետն իւրով. այժմ
ահա՝ ոչ և իցէ. քայց եթէ ընդ այն
դարձայց խաղաղութեամբ, զայն տաձար
հրով դատեցայց. և ի ձէնջ վրէժ
խնդրեցից. և էանց՝ գնաց սրտմտու-
36 թեամբ և մեծաւ բարկութեամբ։ * Եւ քա-
հանայքն եկին՝ մտին՝ և կացին յան-
դիման սեղանոյն և տաձարին. սկսան
37 լալ և ասել։ * Դու ընտրեցեր զտա-
ձարս քո զայս սուրբ՝ կոչել զանուն քո
ա՛ի վերայ սորա. զի լիցի դա տուն
ուխտից ժողովրդեան քոյ խնդրուա-
38 ծոց։ * Դու խնդրեա զվրէժ յառնէ
այսոքիկ յայդմանէ. և ի բանակէ դորա.
և անկցին ինքեանք ի սուր իւրեանց.
յիշեա դու զհայհոյութիւնս նոցա և մի
տար նոյ դադար։ * Եւ եղ նիկանօր 39
յերէմ՝ և բանակեցաւ ի բեթսորօն.
ընդ առաջ եղեն նմա զօրք սասրես-
40 տանեայք։ * Եւ յուդա ինքն բանա-
կեալէր յադասայ երիւքհազարօք ա-
րամբք. սկսաւ կալ յաղօթս՝ և ասել։
41 * Այնժամ որք ի թագաւորէ ոմն ‖4 Թագ.
տի սենեքարիմայ եկեալ հայհոյեին. 19.35.
եւ հրեշտակ քո. և եհար զնոսա ի հար- Տոբ.
իւր ուրեմն և հինգհազար. և ան- 1.21.
դէն սատակեաց։ ըստ այմ օրինակի Սիրաք.
սատակեա դու զբանակս զայս այսօր՝ 48.24.
և գիտասցեն միացեալքն. եթէ ինա- Հայոյ.
նիր խօսեցաւ ի վր սրբութեան քոյ. և 37.36.
դատեա դու զնա ըստ իւրում չարու 2.Մակ.
42 թեան։ * Հասին ձակատքն երկոքեան 8.19.
ի միմեանս. և ընդ միմեանս բաղխե-
ցան յաւուրն երեքտասաներորդի յամ
սեանն ադարայ. ի պարտութեի մատ-
նեցաւ. խորտակեցաւ գունդն նիկա-
նօրայ. և անկաւ նախ ինքն ի սուր
սուսերի ի մէջ երկուց ձակատուցն։
43 * Իբրև եռես գունդն եթէ անկաւ
նիկանօր՝ զենունակեցք լինէին. ի փա-
45 խուստ դառնային։ * Որոց զհետ եր-
թային նոքա օր մի յադասայ մինչև եկին
հասին յաղերայ. և հարկանէին փոյթ
46 նշանակաց զհետ նոցա։ * Եւ ելանէին
յայմ քաղաքաց անտի շուրջանակի. և
կրձնատէին զնոս. դարձեալ անդրէն
առ միմեանս միմեանց ընդդէմ ի մի
վայր ժողովեին. և անկան յայնմ աս-
ուր ամենեքեան ի սուր սուսերի. և

ոչ մնաց 'ի նոցանէ և ոչ մի ։ *Եւ եկին 47
խառնեցան ընդ աւար՝ ընդ կապուտ՝
ընդ զէն՝ ընդ գանձ՝ և ընդ կահ բա_
նակին . և զգլուխ նիկանովրայ աջու
ձեռամբն հանդերձ • զոր իշխեաց
ձգել նա հպարտութ 'ի տաճար անդր •
և բերին պրկեցին զնա յանդիման
Երմի ։ *Եւ ուրախ եղև ժողովուրդն 48
յոյժ • և արարին զօրն զայն տարեկան
մեծ ։ *Եւ կարգեցին ամ յամէ զօրն 49
զայն տօն տարեկանաց • զերեքտասա_
ներորդ ամսոյն ադարայ ։ *Եւ լռեաց 50
երկիրն յուդայ աւուրս քանի մի ։

Գլ. Բ.

Իբրև լուաւ յուդա զանուն հռոմայ 1
եցւոց • եթէ նոքա հզօրք են զօրու
թբ իւրց • և նց բարուք թուի • թէ որք
թիկունս առնէ զնոսա • և դաշնաւոր
լինի նց • և զի զօրացեալք են զօրութբ
'ի վերայ երկրի ։ *Եւ վն մարտից պա 2
տերազմի • զի հարկանէին քաջութբ
իւրեանց զկողմանս գաղատացւոց • զի
զօրացան 'ի վն նց • և կացուցին զնս
'ի հարկի ։ *Եւ որինչ միանգամ արա 3
րին նոքա ընդ կողմանս սպանիացւոց •
և թափեցին 'ի նոցանէ զտեղն ուստի
ոսկին և արծաթն հատանի • և ըմբռ_
նեցին նոքա զտեղին զայն ամ խոր_
հրդով իւրեանց՝ և երկայնմտութբ
իւրց • զի էր տեղին կարի բացարձակ
'ի նոցանէ ։ *Եւ 'ի թագաւորաց ան_ 4
տի • որք եկեալ էին 'ի վն նց 'ի ծագաց
երկրի , մինչև հարին զնս ։ և հարին
զնս 'ի հարուածս մեծամեծս • և ջնջե
ցին զնս • և զմնացորդսն 'ի հարկի կա_
ցուցին տալ նց հարկս ամ յամէ ։ *Եւ 5
զփիլիպպոս՝ և զարքայ կիտացւոց • որք
յարուցեալք էին 'ի վերայ նոցա • սա_
տակեցին զնոսա 'ի պատերազմի • և
յաղթեցին նոցա ։ *Եւ զանտիոքոս 6
մեծ արքայն ասիացւոց • որ եկեալ էր
'ի վն նց մեծաւ պատերազմաւ • ընդ
իւր ունէր հարիւր և քսան փիղ • և
կառս և երիվարս բազումս յոյժ • և
պարտեցաւ նա 'ի նոցանէ ։ *Զի ձեր_ 7
բակալ արարին զնա կենդանւոյն • և
կացուցին զնա 'ի տեղի մի հարկ հար
կանել ։ *Եւ զթագաւորսն՝ որք ընտ 8
նմանէ էին տալ պատանդս՝ և գրաւա
կանս • և զաշխարհն հնդկաց՝ և պար_
թևաց՝ և լիդացւոց • զընտիր ընտիր
գաւառաց նց • և առին զայն • և 'ի ձեռս
ետուն եւմենայ արքայի ։ *Իբրև զայն 9
և ս լուան • եթէ յոյնք խորհեցան գալ
սատակել զնոսա • և իբրև ազդ եղև
բանն նոցա ։ *Արձակեցին զմի 'ի զօ_ 10
րավարաց անտի ։ և եկին՝ էհար՝ և սա_
տակեաց զնոսա մեծաւ պատերազ_
մաւ ։ և արկին 'ի նոցանէ 'ի սուր իւր_
եանց վիրաւորս բազումս ։ 'ի գերու_
թն վարեցին զկանայս և զորդիս նց •
յաւարի առին զինչս և զստացուածս
նոցա ։ կալան զերկիրն 'ի ծառայութ •
զամուրսն քակեցին • զաշխարհն 'ի հար
կի ծառայութն կացուցին մինչև ցօրս
11 յայս ։ *Եւ զայլ թագաւորութիւնն և
զկղզիսն • որք խլրտէին՝ սատակեցին •
12 և 'ի ծառայութն կացուցին ։ *Բայց
ընդ բարեկամս իւրց • և որ թիկունս
առնէր զնս • հաստատութբ սէր առ_
նէին ընդ նոսա ։ և հզօրացան նոքա 'ի
վն ամ թագաւորութեց • որք մերձ
էին՝ և որք հեռի էին • և որք միան_
գամ լսէին զանուն նց , երկնչէին 'ի
13 նոցանէ ։ *Ում կամէին՝ տային զթա_
գաւորութի • զոր կամէին՝ հանէին 'ի
14 տէրութէ • և բարձրացան յոյժ ։ *Եւ
'ի վն այսր ամի ոչ ոք 'ի նոցանէ յանձն
էառ զթագ առնուլ՝ և ծիրանիս ար_
կանել • զի հաստատեսցի տէրութին ։
15 *Այլ տուն խորհրդոց շինեցին • և հա
նապազօր երեք հարիւր և քսան այր 'ի
խորհուրդ մտանէին վն զօրաց • զի
16 զաշխարհ շէն կալցին ։ *Եւ մի մի այր
'ի նոցանէ որ հաւատարիմ էր • իշխան
և գլուխ կացուցանէին տարւոյն • զի
տիրեսցէ 'ի վն ամ երկրի նց • և ամե
նեքեան հնազանդութբ լսէին միում •
և ոչինչ դոյր հեռ և նախանձ 'ի մէջ նց ։
17 *Ապա կարգեաց արս ընտիրս յուդա
յիւրաքանչիւր գնդէ անտի՝ զեպօղէ
մոս զորդի յովնաթանու • և զյասոն
զորդի զեղէազարու • և առաքեաց զնս
'ի հռոմ քաղաք խնդրել 'ի նոցանէ ըզ
18 հաշտութի և թիկունս ։ *Եւ զի բարձ
ցեն զլուծն 'ի պարանոցէ նց • քանզի
ծանրացուցեալ էր յունաց զլուծ ծա
ռայութե 'ի վն պարանոցին իէլաց_
19 ւոց ։ *Եւ գնացին 'ի կողմանս հռո_
մայեցւոց ։ և էր ճանապարհն մեծ •
եկին՝ և հասին հրեշտակքն • և յանդի
ման եղեն նոցա 'ի տաճարին խորհր_
դոյ ։ կացին 'ի մէջ • և սկսան տալ ըզ
20 պատգամն ։ *Յուդա մակաբէ՝ և եղ
բարք իւր • և ամ սպահ հրէաստան_
եայց • խօսիլ ընդ ձեզ 'ի հաշտութի
առնել զձեզ թիկունս՝ և խնդրել 'ի
ձէնջ զխաղաղութի • զի ձեզ ես կամ
լիցի գրել ձեզ զմեզ նիզակակիցս և
21 բարեկամս ։ *Եւ հաճոյ թուեցաւ
22 բանն առաջի նոցա ։ *Եւ այս է պատ
ճէն հրովարտակի նց • զոր գրեցին նք
առ նոսա 'ի տախտակս պղնձիս • և ա_
ռաքեցին յէմ • և առ իւրեանս թո_
ղին յիշատակ թիկանց և խաղաղութե ։

*Խա_

*Խաղաղութի և բարիք լիցին ընդ 23
Հրէաստան և ընդ Հռոմայեցւոց՝ ընդ
ծով, ընդ ծով և ընդ ցամաք · սուր և
Թշնամի հեռի լիցի 'ի նոցանէ։ *Ապա 24
եթէ հասցէ պատերազմ, նախ 'ի վր
Հռոմայեցւոց · կամ ամենայն բարեկա_
մաց նոցա՝ ընդ ամ տեղիս տէրութե_
նց։ *'Ի Թիկունս վաղվաղակի հա_ 25
սանիցի գունդն Հրէաստանեայց · որպ
ժամանակն ցուցանիցէ նց՝ մտադիւր
սրտի մտօք։ *Եւ 'ի Թշնամի ինչ մի 26
տայցեն · և մի ձեռնտու լիցին արծա
թով կամ ոսկւով՝ կամ զինու՝ կամ
նաւուք · այսպ հաճոյ թուեցաւ Հռո
մայեցւոց · զի պահեսցեն զպատուէի_
րանդ զայդ առանց կաշառոյ։ *Նոյն 27
պէս եթէ 'ի վր ազգին Հրէից հասցէ
պատերազմ, 'ի Թիկունս հասանիցեն
վաղվաղակի Հռոմայեցիք՝ միամտու
թե սրտի մտօք · որպ ժամանակն նոցա
ցուցանիցէ։ *Եւ 'ի Թշնամի ինչ ոչ 28
տայցեն ոսկի՝ կամ արծաթ՝ կամ զէն՝
կամ նաւս · որպ հաճոյ թուեցաւ Հռո
մայեցւոյ։ պահեսցեն զպատուէիրանս
զայս առանց նենգութե։ *Եւ ըստ 29
բանիցս այսոցիկ այսպէս հաստատե_
ցին Հռոմայեցիք ընդ գնդին Հրէից։
*Ապա թէ յետ այդց բանիցդ խոր_ 30
հուրդ ինչ 'ի մէջ մտցէ սոցա կամ նց·
հանել կամ յաւելուլ · որինչ դէպ տա
ցէ՝ կարգեսցեն հասարակ հաւանու_
Թե · և հաստատուն կացցեն ։ *Եւ 31
վն չարեաց արքային Դեմետրեայ · որ
հասուցանէ նոցա · գրեցաք առնա ·
դոգցուք· ընդէ՞ր ծանրացուցեր զլուծ
'ի վր պարմանոցի նիզակակից բարե_
կամաց մերոց։ *Զայս գիտասջիր ։ 32
եթէ զքեն ամբաստան լինիցին դո_
քա · դատաստան իրաւի կալցուք ·
մարտ պատերազմի տացուք ընդ քեզ·
եթէ 'ի ծով իցէ· և եթէ ընդ ցամաք։

Գլ. Թ.

Եւ ոչինչ լուաւ Դեմետր · զի ան_ 1
կեալ կործանեալ էր Նիկանոր
գնդաւն իւրով 'ի նոցանէն պատերազ
մաւ ։ և նա դարձեալ անդրէն կրկ_
նեալ յղեաց զԲաքիդ և զԱլկիմոս ·
և զաջակողմն Թևին իւրոյ ընդ նմ
յերկիրն Հրէաստանի ։ *Եւ գնացին 2
'ի Ճանապարհն Գաղգաղայ · և եկին
Ճակատեցան 'ի մեսաղօթ՝ յերկիրն
արբելացւոց · և առին զնա · և սատա
կեցին անձինս բազումս մարդկան 'ի
նմա ։ *Յամսեանն առաջնում, յամին 3
հարիւրորդի յիսներորդի երրորդի
բանակեցան մերձ առ յԵմ։ *Եւ 4
չուեցին՝ գնացին՝ հասին 'ի բերեթ ·

քսանհազար մկնդաւոր արամբք · և
երկոքումբք հազարօք հեծեալ սպա_ սպառա_
5 ռազինաւ։ *Եւ յուդա էր բանակեալ զինու
յԵղիշայ · և երեքհազարք սպառա_
6 զէնք ընտիրք ։ *Իբրև տեսին զամ_
բոխ բազմութեան գնդին , երկեան
յոյժ · և բազումք Թօթափեցան 'ի
նմանէ · և ոչոք մնաց առ յուդայի ,
բայց ութհարիւր հեծեալ սպառա_
7 զէն ։ *Իբրև ետես յուդա թէ Թօ_
թափեցան զօրքն 'ի նմանէ · և պատե
րազմն նեղէր զնա · նեղեցաւ 'ի սիրտ
իւր՝ զի ոչ էր ժամանօղ միւսանգամ
ժողովել զնս՝ լուծաւ՝ լքաւ՝ անկաւ ։
8 *Ասաւ խօսել ընդ մնացելոցն , և
ասէ · եկայք հարցուք 'ի դիմի Թերևս
կարասցուք ինչ կծանել 'ի նոցանէ ։ կծանել
9 *Եւ ինքն յարձակ յարձակ խաղայր ·
և զօրքն մատուցեալ պաշարէին դար
ձուցանել անդրէն՝ սկսան խօսել ընդ
նմա՝ և ասեն · այր դու · նոցա ինչ մեք
ոչ կարեմք ստնանել· բայց այժմ զանձն
ապրեցուցանել ուշ դիցուք· ապա դարձ
ձուք՝ և ժողովեսցուք զեղբարս մեր ·
ապա մարտիցուք · Թէպէտ և իցեմք
10 սակաւք ։ *Պատասխանի ետ նոցա
յուդա՝ և ասէ · քա՛ւ լիցի ինձ առնել
զիրդ զայդ ոմիկ · 'ի փախուստ դառ
նալ ինձ 'ի նոցանէ · եթէ հասեալ
իցէ ժամանակ մեր , մեռցուք քաջու_
թե 'ի վերայ եղբարց մերոց · և ոչ
խառնեսցուք զանուն վատութե մե_
11 րոյ ընդ արութիւն քաջութե ։ *Եւ
ելին զօրքն յիւրաքանչիւր բանակէ ·
և Ճակատեցան դէմ յանդիման մի_
մեանց · երկու գունդք լինէին՝ գունդ
քըն բաքիդեան սպառազինաւ · պար
սաւորքն և աղեղնաւորքն առաջի գըն
դին խաղային · և նահատակքն յառա
12 ջագոյն խաղացեալ էին։ *Բայց բա
քիդ յառաջնում Թևի անդ Ճեպէր·
զզօրսն 'ի ձայն փողոյ տագնապաւ յա
13 ռաջ մատուցանէր ։ *Եւ գունդն
յուդայեան փողհարեալ 'ի վր յարձա
կեալ գային մինչև երկիրն շարժիւր
յամբոխ յաղաղակէ անտի յերկո_
ցունց կողմանց · և եղև պատերազմ
խառնեալ անդադար յառաւօտէ մին
14 չև յերեկոյ ։ *Իբրև ետես յուդա եթէ
բաքիդ ընտիր ընտիր զօրօք յաջում
Թևի անդ է · զընտիր ընտիր զսպա_
ռազինաց յիւրմէ գնդէ անտի յառաջ
կոչէր · քաջալերէր · և անդրէն 'ի վր
15 յարձակէր ։ *Ընդ նմին ժամանակի զա
ջակողմն Թևին բեկանէր՝ և զձախուն
արկանէր · և անդստին առաջի ար_
կեալ փախստեայս տանէր մինչև 'ի
16 կողմանս լերինն աղօտայ ։ *Եւ որ

'ի ձախակողմն թեւի անդ էին. իբրև
տեսին. եթէ աջակողմն թեւն բե֊
կաւ առաջի յուդայեանց. գային՝ խառ֊
նէին. և զյուդայ գնդաւն հանդերձ
'ի մէջ արկանէին ։ * Յայնմ վայրի 17
վիրաւորք յերկոցունց կողմանց ան֊
կեալ ընդ երկիր թաւալէին ։* Անդ 18
անկանէր յուդա առաջին նահատա
կօքն. և որք մնացեալնէին՝ 'ի փախուստ
դառնային ։ * Դարձան յոնաթան և 19
շմաւօն եղբարքն երկոքին. բարձին
զյուդայ. տարան՝ թաղեցին 'ի շիրիմս
հարց իւրեանց 'ի մոդիմ ։ * Լացին՝ 20
կոծեցան որդիքն իլի կոծ մեծ. սուգ
առին աւուրս բազումս. և սկսան խօ
սիլ ։* Եւ ասեն՝ զիարդ անկաւ՝ կոր֊ 21
ծանեցաւ հզօրն՝ փրկիչն իլի ։ * Այլ 22
ուրեքուրեք մարտ՝ կամ Ճակատ՝ կամ
մրել պատերազմի. կամ քաջութի
նս՝ զոր արարեալէր յուդայի, գրե֊
ցաւ իսկ ոչ յայսմ մատենի. զի բա֊
զում էր կարի յոյժ ։ * Եւ եղև յետ 23
մահուն յուդայի. բուսցին անօրէնքն
շուրջ զսահմանօքն իէլացւոց՝ բու֊
սան՝ բղխեցան՝ և բազմացան. որք
գործէին զանօրէնութի ։* Յաւուրսն 24
յայնոսիկ եղև սով մեծ. և ինքնա֊
կամ գնացին մարդիկն 'ի նոսա. և
աշխարհն ձեռնտու էր 'ի նոսա ։* Եւ 25
ընտրեաց բաքիդ արս անօրէնս. և կա
ցոյց իբրև տեարս 'ի վերայ նց ։ * Որք 26
քննէին. և խնդրէին. և ածէին զբա
րեկամսն յուդայի առ բաքիդ. և խն֊
դրէին զվրէժ 'ի նոցանէ. տառապե֊
ցուցանէին. և այպն առնէին ։ * Եւ 27
նեղէին՝ և ծաղր առնէին զիսրայէլ.
զի ոչ երբէք լեալ էր այս. յորմէ հե֊
տէ երևեցաւ մարգարէ ։ * Եւ ժողո 28
վեցան ամ բարեկամքն յուդայի. և
չոգան առ յոնաթան ափսոս՝ և ասեն ։
* Եղբայր քո յուդա մեռաւ. և այր 29
չիք՝ որ նման է նմա ելանել ընդդէմ
թշնամւոյ. տալ պատասխանի այդո֊
ցիկ՝ որք եկեալ թշնամութե նեղեն
զազգս մեր ։* Արդ զքեզ ընտրեցաք 30
մեք 'ի տեղի նորա. զի եղիցիս դու իշ
խան 'ի վր մեր. լինիլ մեզ առաջնորդ՝
և տալ պատերազմ ընդ թշնամիս մեր ։
* Եւ յանձն էառ յոնաթան 'ի ժամա֊ 31
նակին յայնմիկ զառաջնորդութի. և համ
բարձաւ նա փոխանակ յուդայի եղբօր
իւրոյ ։* Իբրև գիտաց բաքիդ. խնդ֊ 32
րէր սպանանել զյոնաթան՝ և զշմաւօն
զեղբայրնորա ։* Եւ փախեան նոքա յա 33
նապատն թակովեայ. և եկին՝ և բա
նակեցան 'ի ջուր անդր ակու ասփառ ։
* Եւ գիտեաց բաքիդ զօրն շաբա֊ 34
թուց. և եկն ինքն՝ և բանակեցաւ զօ֊
րօքն իւրովք յայնկոյս յորդանան գե
35 տոյ ։* Եւ առաքեաց առ նոսա զեղբայր
մի զիւր՝ զօրագլուխ զօրաց բազմաց. և
աղաչէին զնաբատացիս զբարեկամսն
իւրեանց. յանձն առնէին նց զկահ
և զգրաստ՝ և զամենայն ինչս. որ մնա
36 ցեալէր 'ի բնի իւրեանց ։* Եւ ելին որ
դիքն յամբրեայ. որ 'ի մէջ դամասայն
էին. ըմբռնեցին զյօհաննէս. և առին
գնացին հանդերձ կահիւն ընդ իւր֊
37 եանս ։ * Յետ ժամանակաց այսոցիկ
ազդ եղև յօհաննու՝ և շմաւօնի՝ և եղ֊
բարցն իւրեանց՝ եթէ որդիքն ամբ֊
րեայ հարսանիս արարին. և առեալ ա֊
ծէին զհարսնն յաբաղալթայ՝ դուստր
միոյ ուրումն 'ի մեծամեծաց աւագաց
քանանացւոց անտի. մեծաւ չափով՝
38 անչափ հանդերձիւ ։ * Եւ յիշեցին
նոքա զյօհաննէս զեղբայրն իւրեանց.
և ելին՝ մտին նոքա 'ի դարան 'ի ծոր֊
39 ծոր լերինն ։* Եւ համբարձին զաչս
իւրեանց. և տեսին. զի գոյր չու մեծ՝
և ամբոխ բազում. և ել փեսայն փե֊
սաւիրօքն և եղբարբքն հանդերձ՝ և
փողօք. և թմբկաւ. և պէսպէս արուե
ստականօք. և բազում վառելօք.
40 * Եւ ելին նոքա 'ի դարանէ անտի.
սպանին զբազումս. և զբազումս վի֊
րաւորս արձակեցին. և զվառեալսն
փախստեայ արարին. և առին յաւարի
զկահ և զհանդերձ. և զչուն աւար
41 հարկանէին ։ *Եւ դարձան հարսա֊
նիքն 'ի կոծ. և դարձան ձայն արուես
42 տականացն 'ի սուգ և յողբս ։* Դար֊
ձան՝ և խնդրեցին սպառսպուռ ըզ
վրէժ արեան եղբօր իւրյ. և դարձան
43 'ի մարգն յորդանան գետոյ ։ * Իբրև
լուաւ բաքիդ, էառ զօրս. և խաղաց
'ի վերայ նց. և եկն՝ էհաս յանձաւսն
44 յորդանան գետոյ ։ * Ասէ յոնաթան
ցզօրսն իւր. եկայք՝ յարիցուք՝ մարտ
դիցուք վն ոգւոց մերոց. զի ոչ է այ֊
45 սօր իբրև զերեկն և զյեռանդն ։*Եւ
ահաւասիկ զօրք ճակատեալէն յան֊
դիման մեր. ոչ ամուր թաքստի՝ և ոչ
դաշտ փախստի. և գետս յորդանան
46 շուրջ զմեօք պատեալէ ։ * ‖ Արդ ե֊ ‖ 2.Մն 20.3.
կայք ձայն բարձցուք յերկինս. յար֊
ձակիցուք 'ի վր. թերևս ապրեսջիք
'ի ձեռաց թշնամեաց ձերոց. զբանսն
ասաց. և անդէն խառնեցաւ. յարձա֊
47 կեցաւ 'ի վր բաքիդայ ։ * Այն ինչ
լինէր զոգիսն 'ի գիրկս իւր թափել.
48 և նա յետս կոյս կործանեցաւ ։ * Եւ
հոսեցան յոնաթան. և որք ընդ նմա
49 էին 'ի դարանէ անտի ։* Անդ հարին՝
կոտորեցին զբաքիդեանս՝ 'ի գնդէ
անտի արս հազար մի ։ և դարձան
յերու֊

յերուսաղէմ ։ *Սկսան շինել քաղաքս 50
ամուրս յերկրին հրէաստանի . և զա_
մուրս երիքովի և զամաւսայ . և զբե_
թորեայ՝ և զբեթելայ . և զթինաթա_
րովթայ . և զտափայ . ՚ի պարիսպս ամ
րացեալս . և ՚ի դրունս հզօրս . և ՚ի
նիգս հաստատունս ։ *Եւ պահապանս 51
կացուցին թշնամւոյ ՚ի վերայ իէլա_
ցւոց ։ *Եւ ամրացուցին զքաղաքն 52
բեթսորայ . և զգազերայ . և զականս .
և կացոյց ՚ի նմա զօրս բազումս՝ և
համբարս յոյժ ։ *Եւ էառ նա զոր_ 53
դիսն իշխանաց երկրին ՚ի պատանդս ։
և եդ զնս յականն եէմի ՚ի պահեստ ։
*Յամին հարիւրորդի յիսներորդի եր 54
րորդի՝ յամսեանն երկրորդում, հրա
մայեաց յակիմոս քակել զպարիսպն
որահից սրբութեն ՚ի ներքոյ . և սկսան
քակել զգործն մարգարէից ։ *Ի ժա 55
մանակին յայնմիկ հարաւ յակիմոս . և
խափանեցան գործք նորա . քակեցան
երախք նր . պապանձեցաւ՝ և ոչ կա_
րէր խօսել բան մի և հրաման տալ վն
տան իւրոյ ։ *Եւ մեռաւ յակիմոս ՚ի 56
ժամանակին յայնմիկ մեծաւ տանջա
նօք ։ *Իբրև ետես բաքիդ՝ եթէ մե 57
ռաւ յակիմոս . դարձաւ անդրէն առ
արքայն . և դադարեաց երկիրն հրէաս
տանի ամս երկուս ։ *Խորհեցան անօ 58
րէնքն՝ և ասեն . ահաւադիկ յոնա_
թան՝ և որք ընդ նմա են . խաղաղութբ
նստին բնակութբ յանհոգս . արդ՝ ե_
կայք՝ ածցուք զբաքիդ . և ըմբռնես
ցէ զդոսա զամենեսին ՚ի գիշերի միում ։
*Գնացին՝ խորհեցան ընդ նմա ։ 59
*Եւ խաղաց գալ վաղվաղակի զօրօք 60
բազմօք . և առաքեաց նա հրովար_
տակս գաղտ առ խորհրդակիցս իւր .
որք էին ՚ի հրէաստանի . զի ըմբռնես
ցեն զյոնաթան . և որք ընդ նմա էին .
և ոչ կարէին . զի ազդ եղև նմա վասն
խորհրդոյն ։ *Եւ նք կալան արս յերկ 61
րին առաջնորդաց չարաց յիսուն մի և
անդէն խողխողեցին ։ *Եւ խոյս ե_ 62
տուն յոնաթան և շմաւօն . և որք ընդ նմ
էին ՚ի բեթբեսի յանապատն . և խրա
մակարկատ արարին զնա . և ամրացու
ցին զնա ։ *Եւ իբրև ետես բաքիդ, զօ 63
րահաւոյց լինէր . և գայր՝ պաշարէր ։
*Մարտ եդեալ զբեթբեսաւ . և մարտն 64
չէր աւուրս բազումս . և առնէին՝ կան
գնէին շուրջ զնովաւ մեքենայս ։ *Եւ 65
եթող յոնաթան զշմաւօն զեղբայր
իւր ՚ի քաղաքի անդ . և ելն՝ ել նա ՚ի
գաւառ անդր՝ և եկն արթամէ ։
*Եհար զոդոմերայ և զեղբարս 66
իւր . և զորդիսն փասիրոնայ ՚ի խորա_
նի իւրեանց . և սկսաւ ելանել հարկա

67 նել զզօրսն ։ *Եւ շմաւօն՝ և որք ընդ
նմա էին . ելին և հրձիգ արարին զմե_
68 քենայսն ։ *Եւ մարտ պատերազմի ե_
դին ընդ բաքիդայ . ՚ի պարտութիւն
մատնեցան ՚ի նոցանէ . զի էր խոր_
հուրդն այն՝ և արշաւանն նորին ընդ
69 ունայն ։ *Եւ բարկացաւ սրտմտու_
թբ ՚ի վն արանցն . որք խրատ ետուն
նմա արշաւել յերկիրն նորա . սպան նա
զբազումս ՚ի նոցանէ . և խորհեցաւ նա
դառնալ յերկիր իւր ուստի եկեալ էր ։
70 *Իբրև գիտաց յոնաթան, առաքեաց
զկնի նր հրեշտակ՝ և խօսէր ընդ նմա
խաղաղութբ դնել ուխտ . և դարձու
71 ցանել նմա զգերին ամ ։ *Յանձն
էառ . և արար, որպ խօսեցաւ նա ընդ
նմա . և երդուաւ նմա՝ թէ այլ ոչ
ևս խնդրեսցէ ՚ի վերայ ձեր չարիս . ցոր
72 չափ կենդանի իցեմ ։ *Եւ դարձոյց
անդրէն զգերին՝ զոր առեալ էր յառա
ջու յերկրէն հրէաստանի . և ինքն
գնաց յաշխարհ իւր . և այլ ոչևս դի_
73 մեաց դառնալ ՚ի սահմանս նր ։ *Եւ
դադարեաց սուր յիէլէ . և բնակեցաւ
յոնաթան ՚ի մաքմաս . և սկսաւ դա
տել յոնաթան զժողովուրդ իւր . և
սատակել զանօրէնսն յիէլէ ։

Գլ ։ Ժ ։

1 Յամին հարիւրորդի վաթսներոր
դի ել աղեքսանդրոս անտիո_
քեան եպիփան . և էառ նա զքաղաքն
պտղոմեացւոց . ընկալան զնա՝ և թա
2 գաւորեաց նա անդ ՚ի նմա ։ *Լուաւ
դեմետր արքայ . եթէ ժողովեաց զզօրս
բազումս . և ել տալ ընդ նմա մարտ պա
3 տերազմի ։ *Եւ յղեաց առ նա դե_
մետր բանս խաղաղութբ . զի մեծա
4 րեսցէ նոքա զնա ։ *Աճապարեսցուք
դնել ընդ նմ ուխտ խաղաղութե . մինչ
չև եդեալ է ընդ նմ ուխտ աղեքսան
5 դրեայ վասն մեր ։ *Նա գիտեմ յուշ
լիցին նմա չարիքս՝ զոր անցուցաք մեք
ընդ նա՝ և ընդ եղբարս նր՝ և յազգս
6 նր ։ *Եւ ետ նմա իշխանութի ժողո_
վել զզօրս՝ և պատրաստել զզէն . զի լի
ցի նա նիզակակից նմ . և զպատանդսն .
որք էին յականն, հրամայեաց տալ ՚ի
7 ձեռս նր ։ *Եւ եկն յոնաթան յեէմ .
ընթերցաւ նա զթուղթսն առաջի ամ
ժողովրդեանն՝ և առաջի այնոցիկ՝
8 որք յամրի անդ էին ։ *Եւ երկեան
նոքա յերկիւղ յոյժ . զի լուան՝ եթէ
ետ նմա իշխանութի արքայն ժողո_
9 վել զզօրս ։ *Սակայն ածին՝ կալան
զպատանդսն առաջի նր . և ետ զնոսա
10 ցծնողսն իւրեանց ։ *Եւ բնակեցաւ
յոնաթան յեէմ . սկսաւ շինել՝ և նորո
գել

դնել զքաղաքն։ * Եւ ասէ ցայնոսիկ․ 11
որք գործէին զգործ շինուածոյ պարս
պացն․ շինեցէք ասէ զպարիսպդ․ և
զլեառն սիոն շուրջ 'ի չորս կոյս յոր_
ձաքար վիմաց ։ և արարին այնպէս ։
* Եւ փախստեայ գնային այլազգիքն․ 12
որք էին յամուրս անդ․ որոյ շինեաց
յայնժամ բաքիդ ։ * Եւ եթող զնոսա 13
յիւրաքանչիւր տեղւոջ․ և գնաց նա
յերկիրն․ ուստի էր ։ * Եւ 'ի բեթսոր 14
մնացեալք էին ոմանք․ որոց թողեալ
էր զօրէնսն և զհրամանսն․ զի նա էր
ամուր ։ * Երբև լուաւ աղէքսանդրոս 15
արքայ զաւետիսն՝ զոր ետ բերել դե_
մետրիոս առ յօնաթան․ և պատմեցին
նմա զպատերազմ քաջութեն, որ արա
րեալ էր եղբարք իւրովք․ և զվիշտն՝
որ անցեալ էր ընդ նոսա ։ * Եւ ասէ․ մի 16
թէ կարեմք ուրեք գտանել այր մի
այնպիսի․ զի առնիցեմք զնա մեզ բա
րեկամ և թիկունս ։ * Եւ հրամայեաց 17
առ նոսա հրովարտակս ըստ բանիցս
այսոցիկ ։ * Արքայ աղէքսանդրոս՝ առ 18
եղբայր յօնաթան ողջոյն ։ * Լուաք եւ 19
մեզ վն քո․ եթէ այր քաջ զօրութբ
ես․ և արժանի ես դու մեզ լինել բա
րեկամ ։ * Արդ կացուցաք մեք զքեզ 20
այսօր գլուխ քահանայապետութեան
ազգի քո․ և բարեկամ արքայի կոչել
զքեզ․ և ետ տանել նմա պսակ ոսկի
և ծիրանիս ։ արդ՝ կալ լիցի քեզ յուխ
տի մերում․ և պահել զհաւատ բարե
կամութե առ մեզ․ ողջ լեր ։ * Եւ 21
էառ՝ և զգեցաւ յօնաթան զայն ըն_
տիր պատմուճան․ յամին հարիւրոր_
դի վաթսներորդի եօթներորդի 'ի տօնին
տարեկանաց տաղաւարահարաց․ ժո_
ղովեցին զօրս․ և կազմեցին զէնս․ և
ուրախ լինէին ։ * Եւ լուաւ դիմետր 22
զբանս զայս․ և տրտմեցաւ յոյժ ։ * Եւ 23
ասէ․ զինչ գործ գործեցաք․ զի ոչ
մեք մեզ արարաք զնոսա թիկունս․ և
արդ աճապարեաց աղէքսանդրոս․ և
խօսեցաւ ընդ նոսա 'ի հաշտութի․ և
արար իւր ձեռն հաստատութե զհրէ
աստան ։ * Արդ՝ առէք՝ և մեք գրես_ 24
ցուք առ նոսա զբանս մխիթարութե՝
մեծարանաց՝ և պարգևաց․ զի եղիցին
նոքա մեզ յօգնականութի ։ * Եւ ետ 25
տանել նոցա հրովարտակս ըստ բանիցս
այսոցիկ․ արքայ դեմետրիոս առ ազգն
հրէից ողջոյն ։ * Ի՞անզի պահեցիք 26
դուք զուխտս և զդաշինս․ զորս ընդ մեզ
եդիք․ կացիք՝ մնացիք դուք 'ի մերում
բարեկամութե․ և ոչ ձեռնտու եղէք
'ի թշնամիս․ լուաք մեք․ և ուրախ ե_
ղեաք ։ * Եւ արդ՝ կացէք՝ պահեցէք՝ 27
մնացէք դուք առ մեզ զնոյն հաւատ ։

28 * Եւ մեք հատուսցուք ձեզ թողութիւ
բազումս․ և տացուք ձեզ պարգևս
29 բազումս ։ * Եւ արձակեսցուք զձեզ՝
և թողցուք զամ հրէայ 'ի հարկաց․ և
զգաժ աղիցն և պսակաց․ և փոխա_
30 նակ երրորդաց սերմանն ։ * Եւ զհասա
րակուց այգւոյն և զծառոյն․ որ գայր
ինչ․ թողում ձեզ յայսմ օրէ և յապայ․
և յերիցն օրինացն․ որք յաւելան 'ի
ձեզ․ և 'ի շամրտացիս և 'ի գալիլեա_
ցիս․ յայսմհետէ և 'ի յաւիտեանս ժա_
31 մանակաց ։ * Եւ եէմ նուիրեալ՝ սբ
թողեալ կացցէ շուրջ զսահմանօք
իւրովք հանդերձ․ և 'ի տասանորդէ
32 զմաքս ձեզ թողեալ լիցի ։ * Եւ զիշ
խանութի ամրիդ 'ի ներքս տուեալ
լիցի ցքահանայապետդ․ և կացուսցէ
դա 'ի նմա արս․ զորս ինքն ընտրեսցէ
33 պահել զդա ։ * Եւ զամ անձն հրէի․
որ 'ի գերութե գտցի յերկրէն հրէա
տանի՝ յամի թագաւորութե իմում,
արձակեալ ձրի առանց փրկանաց․
զամ հարկս հասի՝ և մաքսի՝ և գրաս_
34 տու ։ * Եւ յամ տօնս տարեկանաց․
շաբաթք, և գլուխք ամսոց․ և աւուրք
յառաջքան զտօնն․ և երեքերեք աւ
ուրք զկնի տօնին եղիցին․ ապահարկ
թողեալ ամ հրէից․ որք իցեն 'ի թա
35 գաւորութե իմում ։ * Եւ մի իշխեսցէ
պահանջել նեղել զոք վասն ամ իրաց
36 իմոց ։ * Եւ առաջինք գտցին նոքա 'ի
զօրս արքունի քսան և վեց հազար զօ
րական․ և պարգևք եղցեն նոցա․ որպէս
օրէն է ընդ առաջին զօրս արքունի ըստ
37 մեծամեծս ։ * Եւ 'ի նոցանէ դար_
ձեալ հաստատեսցի 'ի ձեռանէ արքու
նի․ որք են հաւատարիմք․ և իշխանք՝
և վերակացուք՝ եղիցին նոցունց․ և
գնասցեն նոքա ըստ օրէնս իւրեանց․
որպէս հրաման ետ արքայ երկրին հրէա
38 տանի ։ * Եւ զերիս օրէնս՝ որ յառա_
ջագոյն եդեալ էր հրէաստանեայց,
յերկրէն շամրտացւոց անդրէն դար_
ձուցանել 'ի հրէաստան․ և համարիլ
ընդ երկոսին մի օրէնս․ զի մի այլ իշխան
ձեռնահաս լիցի 'ի վերայ նց․ այլ քա
39 հանայապետն ։ * Եւ քաղաքն պտղո_
մէացւոց տուեալ լիցի նց 'ի պարգևս
'ի նուէրս սրբոյն․ որք յերուսաղէմ
են 'ի պէտս ծախիցն․ որք 'ի սբս անդր
40 ծախիցին ։ * Եւ ես տաց ամ յամէ հն
գետասան հազար կշիռ արծաթոյ՝
յարքունի համարէ․ 'ի կողմանց, ուս_
41 տի արժան իցէ ։ * Օամ մթեր․ զոր
նոքա ոչն կարէին ընուլ, յարքունուստ
լիցի․ որպէս ընդ առաջին ազգմն ։
42 * Յայսմհետէ տացեն յարքունի տա_
րաշէ․ և 'ի վր այսօրիկ զհինգհազար
կշիռ

55 փեսայութեանէ։ * Եւ պատասխանի ար
քայն եգիպտացւոց. և ասէ. օրն յա
ւուրս բարութեան՝ յորում պարձար դու
յերկիր նախնեաց քոց. և նստար դու
յանդիման արքայութեանէ հարց քոց։
56 * Եւ ես պատրաստեալ եմ՝ ի կամ
քաղցրութեանէ՝ առնել զայս ամենայն.
որպէս գրեցեր դու առիս. բայց եկ՝
յանդիման լինցուք մեք միմեանց՝ ի քա
ղաքն պատուհասացւոց. զի տեսցուք զմի
մեանս. և փեսայեցուցից ինձ զքեզ՝ ոյզ
57 ասացեր։ * Եւ եղ պատուհաս ար
քայ յերկրէն եգիպտացւոց ինքն կնքեա
պատրաս դատերըն հանդերձ՝ ի քա
ղաքն պատուհասացւոց յամին հարիւրորդ
58 դի վաթանաերորդի երկրորդի։ * Եւ
յանդիման եղեն Թագաւորքն երկո
քեան միմեանց. և ետ զկին պատրաստ
զդուստր իւր. և արարին հարսանիս մե
ծաս պատրաստութեանէ՝ և մեծաս փառաւ
բանս օրինաց Թագաւորաց՝ ի քաղաքին
59 պատուհասացւոց։ * Եւ հրամայ արտակս
այնքանդրոս առ յոնաթան. զի եկես
60 ցէ՞ նա առ նա։ * Ցաղաց՝ գնաց յոնա
թան մեծաս փառաւք՝ ի քաղաքն պատուհա
սացւոց. և եկն՝ յանդիման եղև Թա
գաւորացն երկոցունց մեծաւ պատա
րագաւք. և եգիտ հնարհս՝ ի նոցանէ։
61 * Եւ կուտեցան՝ ի վերայ նորա արք
անօրէնք յերեմ. ամբաստան լինիլ
զնմանէ. և ոչինչ անասայր Թագաւորն
62 նոցա։ * Հրամայեաւ արքայ մերկա
ցուցանել զյոնաթան՝ ի հանդերձից
իւրոց. և զգեցուցին նմա ծիրանիս.
63 և ընդ իւր նստոյց գնա։ * Եւ ասէ
ցիշխանսն. արդ՝ երթիջիք դուք ընդ
նմա. և ընդ ամենայն քաղաքս քարոզ
ասջիք կարգալ. զի մերք իշխեսցէ ամ
բաստան լինիլ վասն դորա. և ամի ոք
նեղեսցէ զդա մինչև բանիւ միայն։
64 * Եւ եղև՝ իբրև տեսանէին զփառս
նր. և լսէին զձայն բարբառոյ քարո
զին. և տեսանէին, զի զգեցեալէր
ծիրանիս. փախչէին՝ Թաքչէին՝ կորն
65 չէին ամ չարախօսքն։ * Եւ փառա
ւորեաց գնա Թագաւորն ընդ առա
ջինն բարեկամն. և արար գնա սպա
66 րապետ և կուսակալ։ * Եւ գնաց յո
նաթան յերուսաղէմ՝ ի ուրախութեանէ
67 և խաղաղութեանէ։ * Վարձեալ յամին
հարիւրորդի վաթանաերորդի հինգ
երորդի. եկն դեմետրիոս որդի դե
մետրեայ՝ ի կողմանց կրետացւոց՝ յեր
68 կիրն հարց իւրոց։ * Յրամեցաւ յոյժ
այնքանդրոս. դարձաւ անդրէն՝ ի
69 քաղաքն անախորձացւոց։ * Եւ կա
յսոյ անդ դեմետրիոս զապոնիոս.
որ էր՝ ի վերայ ասորին ասորւոց. և

ժո

կշիռ արծաթոյն. զոր առնուին՝ ի
մտից սրբուէ ըս համարոյ տաճարին.
և այդ թողեալ լիցի. զի անկ է այդ
քահանայից և պաշտօնէից։ * Որ 43
միանգամ դիւեցեալ ոք փախստեայ ան
կանիլ՝ ի տաճար անդր յերեմ, կամ որ
միանգամ՝ ի սահմանաց դորա իցէ. որ
պարտիցի ոք ինչ յարքունիս՝ Թողեալ
լիցի նմա. և ինքեանք արձակեալք լի
ցին։ * Եւ ամ ինչ՝ որ արատեալ կոր 44
ծանեալ իցէ չինուածոց սրբոցդ. չի
նեսցին՝ նորոգեսցին. և ծախս համա
րոյն յարքունուստ վճարեսցի. * Եւ 45
շինեսցեն զպարիսպն երեմ. ամենա
կուսցեն շուրջանակի. և ծախս համա
րոյն յարքունուստ վճարեսցի. և ամ
պարիսպք ամենայն հրեաստանի շի
նեսցին։ * Եւ իբրև լուաւ յոնաթան 46
և ժողովուրդն զբանս զայս. ոչինչ
հաւատացին՝ և ոչ յանձն առին՝ զի յի
շեցին զչարիսն մեծամեծս. որ արա
րեալ էր ընդ եմի. և նեղուէին յոյժ.
զոր նեղեցին նորա գնա։ * Ի. ամ 47
գան՝ հաւանեցան ընդ հաստատութեանն
այնքանդրեայ. զի նա եղև նոցա նախ
առաջնորդ բանիցն՝ ի խաղաղութեան.
և էին նորա նման նիզակակից և Թի
կունք զամ աւուրս կենաց իւրեանց։
* Օրաժողով լինէր արքայ այնք 48
անդրոս. և կուտէր զօրս բազումս
գալ տալ պատերազմ ընդ դեմետրեայ։
* Եւ եկին՝ բաղխեցան Թագաւորքն 49
երկոքին ընդ միմեանս. ի փախուստ
դառնայր գունդն դեմետրեայ՝ յաղ
թական լինէր նոցա այնքանդրոս։
* Եւ սաստկացուցանէր զձակատա 50
մարտն՝ ի վերայ նոցա մինչև արեւուն
մտանելոյ անդ. յայնմ աւուր անկա
նելոյ դեմետր առաջի այնքանդրի.
հարկանէին. վանէին. և առ օրինն ըզ
գործն վճարէին։ * Հրեշտակս արձա 51
կեր այնքանդրոս յերկիրն եգիպ
տացոց՝ (զի դարձաւ տերութեանն իմ
յիս) առ պատուհասս արքայ պատգամ
տայր բանից. ըստ օրինակիս ըստ այս
միկ։ այս ինչ յայտնի լիցի քեզ արքայդ
եգիպտացոց։ * Զի դարձաւ տերու 52
թեանն իմ՝ յիս. և նստայ ես յաթոռ Տարց
իմոց. ՚ի ձեռն առի զիշխանութեանն
իմ. Տարի՝ վանեցի զդեմետրիոս զօրօք
իւրովք. և նուճատեցի անդրէն զաշ
խարհն իմ։ * Ի մարտ պատերազմի 53
Տարի՝ վանեցի զնա՝ և զգօրս իւր. և
նստայ յաթոռ Թագաւորութեանէ։
* Եւ դարձ՝ եկ հաստատեացուք ՚ի միջի մե 54
րում զհաստատուն խաղաղութեանէ. տուր
ինձ դու զդուստր քո կնութեանէ. զի ար
ժանի լիցի ինձ. և ես քեզ արժանի եղեց

ժողովեաց նա զօրս բազումս. և եկն
բանակեցաւ նա ՛ի յամնիա՝ և առա
քեաց նա առ յոնաթան քահանայա_
պետն և ասէ: *Դու միայն վերացեալ 70
հպարտացեալ կաս ՛ի վերայ մեր. և
ես եղէ ծաղր նախատանաց վն քո.
ընդէ՞ր դու զինիս ՛ի վերայ մեր լե_
րամբքդ: *Արդ՝ անէ. դու յուսացեալ 71
ես ՛ի զօրսդ քո. եկ՝ էջ դու ՛ի դաշտ
այսր առ մեզ. զի յանդիման լիցուք
միմեանց. զի գոն և աստ ընդ իս զօրք
քաղաքաց: *Արդ հա՛րց փորձեա՛ դու. 72
և տես՝ ո՛ իցեմ ես. կամ ո՛յք այնք
իցեն. որք օգնականք իցեն ձեզ. և
ասեն. ո՛չ գոյ ձեզ ոտից կալ առաջի
մեր. զի երկիցս անգամ ՛ի պարտութի
մատնեցան հարքն ձեր յերկրին իւրե՛:
*Եւ արդ ո՛չ կարէք դուք զդէմ ու_ 73
նել այդչափ այր ու ձիոյ ՛ի դաշտի. ուր
ոչ գուցէ Թուփ Թաքստի. և ոչ տեղի
փախստեան. և ոչ վէմ ապաւինի. և
ոչ խիճ ձեռն ՛ի քար ձգելոյ: *Իբրև 74
լուաւ յոնաթան զպատգամսն զայն
զապողոնեայ. բարկացաւ ՛ի միտս իւր.
յատն եկաց վաղվաղակի. ընտրէր զըն
տիր ընտիր զօրացն իբրև արս տասն
հազար. և գայր ՛ի դուրս յերէմէ. ընդ
առաջ եղև նմա շմաւոն եղբայր նր.
ձեռնտու լինել նմա յօգնականութի:
*Եւ եկին հասին ՛ի քաղաքն յոպպէա 75
ցւոց. քաղաքացիքն զդուրս ընդդէմ
դնէին. զի պահապանք ոստիկանու_
Թե կային ապողոնեայ ՛ի վերայ նր,
հարին՝ զմարտ պատերազմի եդին ՛ի
վր քաղաքին: *Նոքա առ երկիւղի 76
բացին զդրունսն. նոքա մտին՝ և տի
րեցին ՛ի վերայ քաղաքին: *Եւ իբրև 77
զայն լուաւ ապողոնիոս. կազմեցաւ.
պատրաստեցաւ. և էառ ընդ իւր երիս
հազարս սպառազէնս. և այլ զօրս բա
զումս: *Եւ գնաց ՛ի կողմանս ազով 78
տայ՝ մօտ քերէր առ դաշտին. զի յու
սացեալ էր ՛ի զօրս իւր. զկնի լինէր նր
յոնաթան տալ մարտ պատերազմի:
*Նա եթող հազար հեծեալ ՛ի դարա 79
նի զհետ նր: *Իբրև ետես յոնաթան. 80
եթէ դարան գործեցին զհետ նորա.
եկին՝ փակեցին՝ պաշարեցին զամրոց
դարանակալացն. և շուրջ զնոքօք ար
կին պատնէշ. և կային՝ պահէին յա_
ռաւօտէ մինչ յերեկոյ. ո՛րպ հրամանն
ետ նր յոնաթան: *Սատակեցան՝ 81
տաժանեցան հեծեալքն. և լուծան:
*Զգօղ ուղի կալաւ շմաւոն զնդին 82
իւրով. և գայր ձորձորակին ՛ի վր. և
անկանէր զնոքօք ձանձրացեալք՝ մինչ
դեռ նոքա կային լուծեալք՝ անկա_
նէր ՛ի վր. զբազումս ՛ի դարանին անդ

83 սատակէր: *Զբազումս հեծելազօրս
փախստեայս ընդ երեսս դաշտին ա_
ռաջի երեսաց իւրոց տանէր. հասու_
ցանէր մինչև ՛ի կողմանս ազովտայ.
այնչափ շտապ տագնապի ՛ի վերայ հա
սուցանէր. զի փախստեայք գնային
՛ի մեհեանն դագոնայ ամրանալ անկա
84 նէին: *Հասանէր յոնաթան զօրօքն
հանդերձ. պատէր զմեհեանն դագօ
նայ ամրացելօքն հանդերձ այրէր
85 հրով: *Եւ եղեն անկեալքն ՛ի սրոյ
այրեցելօքն հանդերձ՝ իբրև արք ութ 8000
86 հազար: *Չուեաց՝ խաղաց՝ գնաց
յոնաթան անտի. և եկն բանակեցաւ
՛ի կողմանս ասկաղոնայ. եկին՝ ելին՝
՛ի քաղաքէ անտի ընդառաջ նմա մե_
87 ծաւ փառօք: *Եւ դարձաւ յոնաթան
յերէմ զնդաւն իւրով. և բազմաւ աւ
արաւ. զի բերէր զկապուտ կողոպուտ
88 բազում՝ Թշնամեաց: *Եւ իբրև լուա
աւ զայս աղէքսանդրոս. յաւել փա_
ռաւորել առաւել ևս զյոնաթան:
89 *Եւ ետ տանել նմա շինդադ՝ ոսկի. զոր
օրինակ օրէն էր ունել եղբարց Թագա
ւորին. և ետ նմա զակկարօն հմ սահ
մանօքն հանդերձ ՛ի ժառանգութի:

Գլ. ԺԱ:

1 Եւ Թագաւորն եգիպտացւոց զօ_
րաժողով լինէր. կուտէր զօրս
բազումս իբրև զաւազ առ ափն ծո_
վու. և նաւս բազումս. և խնդրէր նա
ունել զարքայութիւն աղէքսանդրեայ
նենգութբ. և յաւելուլ յիւր արքայ_
2 ութին: *Եւ էլ ընդ կողմանս ասո_
րեստանեայց բանիւ խաղաղութե. և
նոքա զդուռն բանային նմա. և ընդ
առաջ երթային նր՝ քանզի պատուէր
էր յաղէքսանդրէ յարքայէ. քանզի ա_
3 ներ էր նր: *Եւ իբրև մտանէր պտղո
մէոս ՛ի քաղաքսն. յիւրոց զօրացն պա
հապանս Թողոյր յիւրաքանչիւր քա_
4 ղաքաց: *Իբրև եկին՝ մերձեցան նք
՛ի քաղաքն ազովտացւոց. ցուցին նմա
զմեհեանն դագոնայ այրեցեալ. զքա
ղաքն՝ և որ շուրջ զիւրև էին այրե_
ցեալ՝ ՛ի ժամանակի պատերազմի. և
զդիակունս՝ որ այրեցեալ էր՝ բերեալ
կուտէր կոյտս կոյտս ՛ի վերայ ճանա ճանապհին
5 պարհին: *Եւ պատմէին առաջի ար
քային. զորինչ միանգամ գործեաց
յոնաթան. և յաչաց հանէին զնա.
և Թագաւորն լռիկ կայր:
6 *Եւ եկն յանդիման եղև յոնաթան
Թագաւորին ՛ի քաղաքն յոպպէացւոց
փառօք մեծօք. ողջոյն ետուն միմ_
եանց. և եղեն այն օր առ միմեանս:
7 *Եւ գնաց յոնաթան ընդ արքային
մինչև

մինչև՝ ի կողմանս գետոյն, որ կոչի Ա-
զատ։ և դարձաւ անդրէն յօնաթան
յեէմ։ *Եւակ արքայ պատուիրեաց տի 8
րեաց՝ ի վերայ քաղաքացն Ծովեղե-
րեայց՝ մինչ՝ ի քաղաքն սեղևկիացւոց.
և խորհեր՝ ի վերայ ածիքսանդրեայ
խորհուրդս չարութեան։ *Եւ արձա- 9
կեաց նա հրեշտակս առ դեմետր ար
քայ՝ և ասէ՝ եկ՝ ուխտ դիցուք ընդ մի
մեանս. և դաշինս կռեսցուք. և տայ
քեզ զդուստր իմ՝ զոր ունի ածիքսանդ-
րոս արքայ. և տիրեսցես դու՝ ի վե՛ր ար
քայութեան հօր քոյ։ *Օի զղջացեալ 10
եմ ես. թէ ընդէ՞ր ետուս ես զդուստր
իմ նմա կնութեան. զի խորհեցաւ նա
՝ի վերայ իմ մահու։ *Եւ այսպէս յաչաց 11
հաներ զնա. զի իւր ակն եդեալ էր տե
րութեան նորա։ *Եւ եհան զդուստրն. 12
և ետ դեմետրի. և խոտորեցաւ յաղէք
ամանդրէ. և յայտնեաց զթշնամութի
իւր. և եկն՝ եմուտ պտղոմէոս. և
տիրեացնա՝ ի վե՛ր քաղաքացն. և սեղև
կեայ ծովեղերեայցն (և խորհեր չարու
թի՝ ի վե՛ր ածիքսանդրոս։) *Եկն՝ և 13
մուտ՝ ի քաղաքն անտիոքացւոց. և
եդ զթագ զասիացւոց. և պսակե-
ցաւ կրկին՝ թագաւն ասիացւոց, և
թագաւն եգիպտացւոց։ *Էայց ա- 14
ծիքսանդրոս արքայ էր՝ ի կողմանս
կիւլիկեացւոց՝ ի ժամանակին յայն-
միկ. զի ապստամբք էին մարդիկն՝ ի
նմանէ։ *Եւ լուաւ ածիքսանդրոս. 15
դիմեաց գալ՝ ի վերայ նորա մնրտիճ
պատերազմի. և եկ պտղոմէոս ընդ-
առաջ նմի զօրօք բազմօք. և դարձոյց
զնա՝ ի պարտութի։ *Եւ փախստեայ 16
լիներ ածիքսանդրոս՝ ի կողմանս ա-
րաբացւոց. զի անդ թաքուցի, և ա-
պրիցի՝ ի նմանէ։ և արքայ պտղո-
մէոս բարձրացաւ։ *Եւ եհան զաբեել 17
արուսալիմ. և էհատ զգլուխն ածիքսան-
դրեայ. և ետ տանել պտղոմէոսի ար-
քայի։ *Եւ պտղոմէոս մեռաւ յաւ- 18
ուրն երրորդի. և որք էին զամրօքն. սա
տակեցան յամրակառացն։ *Եւ թա- 19
գաւորեաց դեմետր. յամին հարիւր
որդի վաթսներորդի եօթներորդի։
*Ընդ աւուրսն ընդ այնոսիկ ժողո- 20
վեաց յօնաթան զօրս՝ ի հրէաստան՝
դալմարտ դնել զբերդատն. որ յեէմ
եր։ կազմեցին զնովաւ շուրջ մեքե-
նայս բազումս։ *Եւ պա գնացին ոմանք՝ 21
որք թշնամիք էին ազգին հրէից՝ արք
անօրէնք պատմել թագաւորին. եթէ
յօնաթան մեքենայս կազմեալ՝ շուրջ
զբերդատն պատեալ՝ յառնուլ պատ-
րաստեալէ։ *Եւ երբև լուաւ՝ բարկա- 22
ցաւ յոյժ-չուեաց՝ և եկն՝ իպտղոմէոս.

Կե

եւ հրով արտասուս առ յօնաթան. զի մի
և զբերդն շուրջ պաշարեալ պահի-
ցէ. այլ ինքն յարուցեալ վաղվաղակի
առ նա հասանիցէ՝ ի պտղոմէացւոց
քաղաքն. զի անդ յանդիման լինիցի
միմեանց։ *Եւ երբև լուաւ յօնաթան՝ 23
եւ քանզևս պատել հրամայեաց զպահ
բերդին. և ինքն էառ արս ընտիրս ի
մատուցս՝ ի ծերակոյտ ժողովրդենէ
անտի. և՝ ի քահանայից անտի։ *Եւ 24
դերձեցաւ պատարագօք. ոսկւով. և
արծաթով. և եդ զանձն՝ ի մահ. գնաց
յանդիման լինել թագաւորին՝ ի քա-
ղաքն պտղոմէացւոց։ և եդիտ նա
շնորհս՝ ինմանէ։ *Եվպէտ և բա- 25
զումք եին յանօրինաց անտի ամբաս
տան գնմանէ։ *Եւ մեծարեաց զնա 26
թագաւորն որպէս առաջինքն իւր.
և բարձրացոյց զնա յոյժ առաջի ամե
նայն բարեկամաց իւրոց։ *Եւ կար- 27
գեաց նմա զիշխանութի քահանայա-
պետութեան. և որ ինչ այլ ինչ պատիւս
ունէր յառաջ քան զնա՝ կացոյց՝ կար-
գեաց զնա ընդ առաջինն բարեկամն։
*Եւ ապաչեաց յօնաթան զարքայն. 28
զի ապահարկ արասցէ զհրէաստան.
և զերեսին կուսակալութի. և զշամ
բին։ և յանձն էառ նա՝ տալ նմա ե-
րեք հարիւր քանքար։ *Եւ հաճոյ 29
թուեցաւ թագաւորին. և վե՛ր այսր
ամի հրամայեաց տալ
առ յօնաթան օրինակաւս այսոսիկ։
*Արքայ դեմետր. առ յօնաթան եղ- 30
բայր՝ ողջոյն։ *Օպատճէն հրովար- 31
տակիս այսորիկ գրեցաք մեք առ ազա
գենէս եղբայրս մեր. նովին օրինակաւ.
և առ ձեզ գրեցաք՝ զի գիտասջիք։
*Արքայ դեմետր. առ ազգենէս 32
հայր՝ ողջոյն։ *Ազգին հրէից՝ օգնա- 33
կան՝ նիշակակից՝ ուխտակալ բարե-
կամաց մերոց. իրաւունս համարեցաք
գիւրել՝ բարիս առնել փոխանակ ար
դարութի միամտութեանն, զոր պահե-
ցին նոքա առ մեզ։ *Կարգեցաք մեք 34
զսահմանս հրէաստանի. և զերիս օ-
րինան՝ ափարիմ. և լիդդայ. և ռաթա
մին յաւելցին՝ ի հրէաստանի՝ ի կող
մանցն շամրնի. և ամօրինչ հասի օրէն
գայր՝ ինոցանէ. լիցի այն պաշտօնեից
յերուսաղէմ. փոխանակ արքունական
մուիսն. որ գայր՝ ինոցանէ ամ յամ
յարմտեաց երկրին՝ և՝ ի բերոյ ծա-
ռոյն պտղոց։ *Եւ այլ որինչ տուրազ 35
արքունի. կամ՝ տասանորդք. կամ
մաքս. կամ՝ որինչ մուռք յարքունիս
իցեն. կամ՝ բաժ աղից. կամ տարազ
պսակաց։ *Օայս ամ՝ թողուք՝ ի 36
նմա. և նոցա մի՛ մի՛ ինչ յայսցանէ անտր

Ttt գեալ

դեալ գացի մինչև յաւիտեանս ժամա
նակաց ։ *Արդ ձեզ փոյթ լիցի առ_ 37
նել պատճէն մի հրովարտակիդ՝ և
տալ ՚ի յօնաթան․ զի դիցէ ՚ի գանձա
սրբութեն ՚ի գլխաւոր վայրի ՚ի նշանաւ
որ տեղւոջ ։ * Իբրև ետես դեմետր 38
արքայ՝ եթե հնազանդեցաւ ամ եր_
կիր առաջի նր․ և ոչինչ էր յաշխար_
հի․ որ ընդդէմ դառնայր հրամանաց
նր․ հրաման ետ արձակել զզօրսն յիւր
աքանչիւր տեղիս․ բաց ՚ի զօրաց ազ
գաց հեռաւորաց․ և ՚ի մարզիկ գնդէ
կղզեաց կղզեաց ոք․ և ՚ի թշնամութի
դարձան ամ զօրք ազգաց ընդ նմա ։
*Տրիփոն անուն՝ էր աղէքսանդրեան 39
տոհմին․ իբրև ետես․ եթե զօրքն ամ
տրտունջ են զդեմետրեայ․ գնաց նա
արաբ առ իմանիկուս արուայիկ՝ որ սնուցա
նէր զանտիոքոս զպատանեակն աղէք
սանդրի ։ * Եւ առ նմա կանխէր․ զի 40
տացէ նա զնա զմանուկն․ և ածցէ՝ և
իպեղուող թագաւորեցուսցէ ՚ի տեղի հօր իւր
ոյ․ և պատմեաց նմա որինչ միանգամ
գործս գործեաց դեմետր․ և զամ թշ
նամութիւն՝ որք միանգամ դառային
զօրքն․ և անդ լինէր առ նմա աւուրս
բազում ։ *Առաքեաց յօնաթան առ 41
դեմետր արքայ․ զի հրաման տացէ ի_
ջուցանել զզօրսն․ որք ՚ի միջնաբերդի
անդ էին․ և որք յամուրս անդ էին․
զի էին նոքա թշնամութբ ընդ իլի ։
*Եւ առաքեաց դեմետրոս առ յօնա 42
թան՝ և ասէ․ ոչ զայդ միայն արարից
քեզ, և ազգի քում, այլ փառօք փառա
ւորեցից զազգ քո եթե ժամանակ միայն
դացի ։ *Արդ դու բարւոք արասցես․ 43
առաքեսցես առ իս գունդ մի ՚ի թի_
կունս․ զի զօրքս աւասիկ յինէն յետս
կացին ։ *Իբրև լուաւ զայն յօնաթան․ 44
վաղվաղակի գունդ մի յերից հազա_
րաց արս ընտիրս սպառազէնս արձա
կեաց ՚ի թիկունս թագաւորին ՚ի քա
ղաքն անտիոքացւոց ․ և ուրախ եղև
թագաւորն ՚ի հասանիլ նոցա ՚ի ձեռս
նր ։ *Իբրև զայն լուան քաղաքացիքն․ 45
ժողովեցան յիւրաքանչիւր տեղւոջէ
՚ի մէջ քաղաքին՝ իբրև բիւրք երկոտա
սանք․ այն ինչ յարձակեալ էին ՚ի վր
թագաւորին․ կամէին անդէն սպանա
նել ։ * Եւ նա խոյս ետ ՚ի նոցանէ ․ և 46
նոքա առին վաղվաղակի զկիրճս ամ
գնացից քաղաքին․ մարտ եդին․ և սկսան
մաքառիլ ։ *Ապա եղև իհէլեան գնդին․ 47
կուտեցան ՚ի վր ապարանից թագաւո
րին․ ձայն ետուն միմեանց․ և սփռեցան
ընդ ամ քաղաքն ։ *Իբրև հարին՝ սպա 48
պատն նին՝ և կոտորեցին արս իբրև տասն
Բիւրս հազար․ հրձիգ արարին զամ փայտա

կերտս զապարանից նորա․ և զինչս՝ և
զստացուածս նր առին յաւարի․ ար_
կին յիւրեանս զթագաւորն․ և ապրե_
49 ցուցին զնա ՚ի ձեռաց նր ։ * Իբրև ե_
տես մնացեալ գունդն քաղաքին․ եթե
զօրացաւ գունդն իհէլեան ՚ի վր նր․ և
կամակար յաղթեցին նր․ լքան․ նուա
ղեցան ․ և տկարացան ՚ի խորհուրդս
իւրեանց․ ՚ի ձայն բարբառոյ ողոքա_
նաց սկսան աղաղակել առ թագաւ_
50 որն՝ և ասեն ։ * Ձեռն տուր մեզ ․ և
դադարեսցէ գունդս մոլեկան ՚ի կոտո
51 րածէ քաղաքիս ։ * Զայն բանս ասէ_
ին ․ և զիւրաքանչիւր զզէնս առ ոտս
պատերազմողացն ընկենուին․ և բարձ
րանայր փառօք գունդն իհէլեան առա
ջի թագաւորին ․ և առաջի ամ զօրաց
նր ․ և դառնային անդրէն յեմ անուա
ամբ մեծաւ և բազմաւ աւարաւ ։
52 *Եւ նստաւ դեմետր արքայ յաթոռ
տէրութե իւրոյ․ և սարսեցաւ երկիրն
53 ամ առաջի նր ։ *Եւ ստեաց իհէլաց_
ւոցն ․ յամի որինչ խոստացաւ նա նր ․
և ամենեւին օտարացաւ յաչս յօնաթա
նու ․ և ոչ հատոյց նմա ըստ միամտութե
54 վաստակոց նր ։ *Յետ այսորիկ դար_
ձաւ տրիփոն , և պատանեակն անտիո
քոս ընդ նմա թագաւորեալ՝ և նստէր
55 յաթոռ տէրութե ։ *Եւ առ նա ժո
ղովեցին զօրքն ամ․ զոր ցրուեալ էր դե
մետրեայ ․ և ետուն մարտ պատերազ
մի ընդ դեմետրեայ ․ և փախուցին զնա
56 վատթարեալ ։ *Եկն՝ էառ զգազանան
տրիփոն ․ և կալաւ զքաղաքն անտիո_
57 քացւոց ։ * Հրաման ետ հրովարտակ
առնել մանուկն անտիոքոս առ յօնա_
թան՝ և ասէ ․ կացուցեալ իմ զքեզ ՚ի
գործ քահանայապետութե ․ և հաստա
տեալ իմ զքեզ ՚ի վր չորից օրինաց ․
և կարգեցաք զքեզ ընդ բուն և ընդ
58 առաջին բարեկամս մեր ։ *Եւ ետ տա
նիլ նմա նուագս ոսկիս՝ և սպաս տա
ճարին ․ և ետ նմա իշխանութի ըմպել
ոսկի նուագօք ․ արկանել ծիրանիս ․
և իշխել կրել նշան ․ շգել ըստ նշանի ճճել
59 թագաւորաց ։ *Եւ զշմաւոն զեղբայր
նր հրաման ետ իշխան և զօրավար կա
ցուցանել կողմանցն ծովու մինչև ՚ի
60 սահմանս եգիպտացւոց ։ *Եւ ել յօ_
նաթան շրջիլ յայնկոյս յորդանան գե
տոյ՝ և ընդ քաղաքսն ․ և ժողովեցան
առ նա ամ զօրք ասորւոց ՚ի թիկունս ․
և եկն նա ՚ի կողմանս ասկաղոնայ ․ և
ելին նմա քաղաքացիքն ընդ առաջ մե
61 ծաւ փառութբ ։ *Անտի գնաց ՚ի գա
զայ՝ և գազացիքն փակեցին նմա ըզ
դրունսն գազայ ․ նստաւ շուրջ զնոքօք ․
և հրձիգ արար զաւանս նր ․ և զինչս
եւ՝

եւ՝ և զստացուածս նց վարեցին՝ի գե
րութիւն ։ *Ապա եկին գազացիքն. ա_ 62
ռաջի կացին՝ ձեռն ետուն նմա . և մա
տուցին զորդիս իշխանացն իւրեանց
՚ի պատանդութիւն . և նա էառ՝ և ետ
տանել զնս յեհմ. և ինքն էանց ընդ
երկիրն՝ի կողմանս դամասկեայ ։ *Եւ 63
լուաւ յոնաթան, եթէ հասին իշխանք
դեմետրեայ ՚ի կադէս՝ ՚ի կողմանս գա
լիլեացւոց զօրօք բազմօք . իբրև կա_
մէին նմա թէ փոխեսցուք զնա ՚ի գոր_
ծոյ անտի ։ *Նա եթող զեղբայր իւր 64
զշմաւոն յերկրին վր . և ինքն գնաց
ընդ առաջ նց ։ *Եւ շմաւոն հասանէր 65
պատերազմաւ ՚ի վր բեթսորայ. և պա
շարէր զնա աւուրս բազումս . և յար_
գել արկանէր զնս ։ *Աղաչել սկսան 66
նոքա զնա. զի դաշինս արասցէ ընդ նս.
նա ետ ձեռն նոցա. և էհան զնս անտի.
և կացոյց անդ նա պահապանս քաղա
քին ։ *Եւ յոնաթան զօրօքն իւրովք 67
եկն՝ և բանակեցաւ ՚ի վր ջուրցն գեն
նեսարեթայ . կանխեաց նա ընդ առաւ
օտն ՚ի դաշտն նասօրայ ։ *Եւ գունդ 68
մի այլազգեաց ընդ առաջ եղև ՚ի դաշ
տի անդ. և դարան գործեցին ՚ի վր նր.
կէսքն ՚ի դարան մտին . կէսքն ՚ի դիմի
հարան նմա ։ *Եւ յարեան դարանա 69
կալքն յիւրաքանչիւր տեղեաց՝ զհետ
եղեն նոցա . և զյոնաթան ՚ի մէջ ար_
կին զօրօքն հանդերձ ։ *Եւ արարին 70
զզօրսն յոնաթանու փախստեայս . և
ոչ մնաց առ նմա . բայց միայն մատա_
թիա աբեսաղոմեայն . և յուդաս կա_
փեան զօրավարք զօրացն ։ *Ձեռն զօ 71
ձեօք արկանէր յոնաթան . զպատմու
ճանն պատառէր . հող ՚ի գլուխ լինէր։
*Ի վր յարձակէր բարկութբ բազ 72
մաւ. և ՚ի պարտութիւն մատնէր զնոսա ։
*Յայնմ ժամանակի փախստեայքն 73
ամենեքին անդրէն ՚ի նոյն դառնային.
հալածական զթշնամիսն առնէին ա_
ռաջի իւրեանց՝ մինչև ՚ի բանակն իւր
եանց ՚ի կադէս . եկին՝ և անկան զբա
նակաւն այլազգեաց ։ *Հարին՝ կոտո 74
րեցին յաւուր յայնմիկ իբրև երիս հա
զարս հեծելոյ սպառազինս . և դար_
ձաւ յոնաթան յերուսաղէմ։

ԳԼ ։ ԺԲ ։

Իբրև ետես յոնաթան եթէ ժամա 1
նակն յաջողեալ է նմա. կոչեաց արս
ընտիրս . առաքեաց զնոսա ՚ի քաղաքն
հռովմայեցւոց. երթալ՝ նորոգել զուխտ
հաշտութեն ընդ նոսա ։ *Եւ ի սպար 2
տացիս, և ընդ այլ տեղիս տեղիս՝ արար
հրովարտակս ըստ նմին օրինակի ։
*Գնացին հրեշտակքն . և եկին՝ հա_ 3

սին ՚ի քաղաքն հռովմայեցւոց. և յանդի
ման եղեն նց ՚ի տաճարին խորհրդոյ .
և ասեն. յոնաթան քահանայապետ՝ և
ազգն հրէից առաքեցին զմեզ առ ձեզ
նորոգել զհաշտութիւն առաջինն. լինել
նիզակակից և թիկունք ըստ օրինակին
4 առաջնում ։ *Յանձն առին . հաճե_
ցան . և ետուն հրովարտակս ՚ի տեղիս
տեղիս . զի յուղարկեսցին նոքա խաղա
5 ղութբ յերկիրն հրէաստանի ։ *Եւ
այս պատճէն հրովարտակացն է՝ զոր
գրեաց յոնաթան առ աշխարհակալս
իշխանս. և առ կուսակալս նոցա ։
6 Յոնաթան քահանայապետ ծերա_
կոյտ ժողովրդեամբ հանդերձ՝ և քա
հանայք. գունդ և սպայ ազգին հրէաս
տանեայց՝ առ սպարտացիս եղբարս
7 մեր՝ ողջոյն ։ *Քանզի յառաջ իսկ ա_
ռաքեցան առ ոնիա քահանայապետ
՚ի դարեհէ արքայէ ՚ի թագաւորէ
ձերմէ՝ եթէ նիզակակիցք եղբարք
մեր՝ որպէս մեզ պատճէնքս ցուցա_
8 նեն ։ *Ընկալաւ ոնիա զայրն՝ որ ա_
ռաքեցաւ մեծաւ փառօք . և էառ ՚ի
ձեռն հրովարտակ մի . ուր նշանակէր
զմեզ նիզակակիցս՝ և թիկունս իւր .
9 և սիրելի բարեկամս ։ *Արդ՝ մեք քան
զի լի և ոչ կարօտեալք միխթարեցաք
10 ձերովք հրովարտակօքս ։ *Առաքել՝
նորոգել միւսանգամ զնոյն հաւանու_
թիւն հարազատութե . զի մի օտարա
ցուք մեք ՚ի ձէնջ . զի բազումք են
այնք ժամանակք. որք անցին ՚ի վր հին
հաւանութեցն . զորս դուք առ մեզ արա
11 րիք ։ *Արդ մեք անպակաս յամ ժամա
նակի ՚ի տօնս տարեկանաց՝ և յայլ աւ
ուրս արժանաւորս՝ յիշեմք զձեզ ՚ի վր
պատարագացն . զորս մատուցանեմք .
յիշեմք յաղօթս մեր որպէս արժան՝ և
12 օրէն է յիշել զեղբարս մեր ։ *Եւ ցն_
13 ծամք մեք ընդ փառս ձեր ։ *Արդ՝ ըզ
մեօք պատեցան աւասիկ բազումնե_
ղութիւնք պատերազմաց . մարտ եդին
աւասիկ թագաւորք՝ որք շուրջ զմեօք
14 էին ։ *Եւ մեք ոչինչ կամեցաք արդ
նեղել զձեզ . ոչ զձեզ, և ոչ՝ որք շուրջ
զձեօքդ բարեկամք նիզակակիցք մեր
15 են՝ յայս մարտս պատերազմի ։ *Օի
դոյր մեզ օգնութիւն յերկնից . և ապրե
ցաք մեք ՚ի ձեռաց թշնամեաց մերոց.
և ՚ի պարտութի մատնեցան թշնամիք
16 մեր ։ *Արդ ընտրեցաք մեք զնումե_
նիոս զանտիոքեան. և զանթիպատրոս
յասոնեանց . և առաքեցաք առ հռո_
մայեցիս . զի նորոգեսցեն զառաջին
հաշտութիւն հաւանութեն . թիկունս՝ բա
17 րեկամութիւն եղբայրութե ։ *Տուաք
նց պատուէր անցանել առ ձեզ . տալ

նոցա ձեզ ողջոյն ․ և մատուցանել
Թուղթս՝ վն նորոգութե՛ն սիրոյ եղբայ
րութե՛ն մերոյ ։ *Արդ՝ բարւոք առնէք 18
հրաման տալ ․ և պատասխանի առնել
մեզ ։ *Եւ այս պատճէն հրովարտա_ 19
կացն ․ զոր արարին անդրէն առ Ոնիայ
Աշրեա քահանայ ։ *Արեայ սպարտիացւոց 20
առ Ոնիա մեծ քահանայապետ ողջոյն ։
*Գտան հինք մատեանք վասն սպար 21
տիացւոց և հրէաստանեայց՝ զի են եղ_
բարք հարազատք ․ և են յաբրահամէ ։
*Արդ՝ յորմէ հետէ զայս այսպէս գի_ 22
տացեք ․ բարւոք առնիցէք հանապա
զորդ գրել առ մեզ ․ վն խաղաղութե՛
և ողջունի ձեր առ մեզ ։ *Եւ մեր առ 23
ձեզ ինչք և ստացուածք՝ և ա՛մ անա_
սուն մեր ձեր է ․ ն՟ղ և ձերն մեր է ․ արդ
տամք զայս պատուէր ․ զի հանապազ
պահեսջիք զայս առ ձեզ ։ *Եւ լուաւ 24
յոնաթան ․ եթէ դարձան իշխանքն
դեմետրեայ զօրօք բազմօք քան զառա
ջինն ․ գալ 'ի վ՟ր ն՟ր 'ի մարտ պատերազ
մի ։ *Չու արար յէնմէ ․ խաղաց 'ի վ՟ր 25
ն՟ր և եհաս ․ 'ի դիմի հարաւ 'ի կողմանս
համաթիտայ վայրաց ․ քանզի չետ
թոյլ նմա հասանել յուզել զերկիր
իւր ։ *Արձակեաց նա լրտես 'ի բա_ 26
նակ ն՟ց ․ և պատմէին նմա այսպ՟ս՝ եթէ
պատրաստեալքեն գիշերայն անկա_
նիլ 'ի վ՟ր մեր ։ *Եւ իբրև արեւն 'ի 27
մուտս եղև ․ հրաման ետ յոնաթան զօ
րացն ․ զի վառեալք՝ արթունք՝ և պատ
րաստեալք՝ միագունդ կայցեն մինչ 'ի
յառաւօտ 'ի մարտ պատերազմի ․ պա
րեկապանս հանէին ․ շուրջ զիւրեամբք
փակեցին ․ (և ինքեանք կային պատ_
րաստեալք 'ի մարտ պատերազմի ։)
*Իբրև լուան թշնամիքն՝ եթէ գիշե 28
րայն պատրաստեցան 'ի պատերազմ ․
երկեան՝ զարհուրեցան՝ բեկան 'ի
սիրտս իւրե՟ց ․ խիտ առ խիտ խարոյկս
վառեցին ընդ ա՟մ տեղիս ․ և ինքեանք
գիշերայն փախստեայք մեկնեցան ։
*Եւ ոչ գիտաց յոնաթան զօրօքն հան 29
դերձ զփախուստն ն՟ց ․ զի հայէր ընդ
խարոյկսն բորբոքեալս ․ համարէր թէ
առ տեղ իցեն ։ *Ապա թէպէտ և 30
զհետ եղև ն՟ց՝ չկարաց հասանել ․ քան
զի անցեալ էր նոցա ը̄ գետն ազատ ։
*Ապա դարձաւ 'ի նոցանէ յոնաթան 31
'ի վ՟ր արաբացւոցն ․ որք անուանեալք
կոչէին զաբդեցիք՝ հարկանէր՝ սատա_
կէր՝ վանէր զբանակս ն՟ց ․ և առնոյր
զինչս և զստացուածս նոցա յաւարի ։
*Եւ դառնայր 'ի կողմանս դամաս_ 32
կեայ ։ *Եւ հասանէր յասկաղօն ․ և 33
առնոյր զամուրս ա՟մ, որք շուրջ զնո
վաւն էին ․ և դառնայր 'ի կողմանսն

յոպպէացւոց ․ արագէր ․ և զօրս 'ի
34 ներքս մուծանէր ։ *Զի լուաւ թէ ամ
րակացքն ձեռն տային 'ի դեմետր ․ պա
հապանս՝ ստիկանս 'ի վ՟ր կացուցա_
35 նէր ։ *Եւ դարձեալ յոնաթան ․ զօր_
ընտիր լինէր ․ զծերակոյտն 'ի խոր_
հուրդ կոչէր ․ կամէր զամուրսն շինել
36 հրէաստանի ։ *Եւ բարձրացուցանել
'ի բարձրութի 'ի մէջ միջնաբերդին ․
և քաղաքն 'ի բարձրութի մեծ՝ անջր
պետել կամէր ընդ նն և ընդ քաղաքն ․
զի առանձինն լիցին ․ զի մի տայցեն՝ և մի
առնուցուն ․ մի գնիցեն ․ և մի վաճառի
37 ցեն ։ *Եւ ժողովեցին շինել զքաղաքն ․
և ինչ որ անկեալ էր 'ի պարսպացն յուղ
խաջուրն հեղեղատաց 'ի ծմակին կող
մանն անտի՝ որ անուանեն կոչի փակն_
38 թա ։ *Եւ շմաւօն սկսաւ շինել զադե
դայ յափինայ ։ ամրացոյց զնա ․ և դը_
րունս եդ նմա ․ և նգօք հաստատեաց
39 զնա ։ *Եւ խնդրէր տրիփոն թագա_
ւորել կողմնցն ասիացւոց ․ դնել թագ՝
և ձգել զձեռն 'ի վ՟ր արքային անտիո
40 քացւոց ։ *Նայց երկեաւ ․ զանգի_
տեաց, թէ գուցէ յանձն ոչ առնուցու
յոնաթան ․ և խաղայցէ 'ի վ՟ր ն՟ր մար
տիւ պատերազմի ․ և խնդրէր նա հնարս
41 ըմբռնել զնա և կորուսանել ։ *Խաղաց՝
գնաց՝ և եկն 'ի կողմանս բեթսանայ ․
և ել ը̄ առաջ ն՟ր յոնաթան քառասուն
հազարաւ՛ ընտիր ընտիր վառելով պատ
րաստեալ պատերազմի՝ և եկն ․ եհաս
42 և նա 'ի բեթսան ։ *Եւ ետես տրի_
փոն ․ եթէ հասեալ է յոնաթան զօ_
րօք բազմօք ․ և զանգիտեաց ձգել
43 զձեռն իւր 'ի նա ։ *Ապա էառ՝ ընկա
լաւ զնա փառաւորութ՟բ ․ և յանդիման և յոխ_
նեաց զնա ա՟մ բարեկամացն իւրոց ․ և նեացն
ետ նմա պարգևս ․ և հրաման ետ զօ_
րացն իւրոց՝ զի հնազանդ լիցին նմա ։
44 *Խօսել սկսաւ ընդ յոնաթանու՝ և
ասէ ․ ընդէր զայդ չափ զօրս կոտորե_ զօրս ու_
ցեր ․ զի ոչինչ գոյր 'ի միջի գործ պատե խտեցու
45 րազմի ։ *Արդ արձակեա դու զզօրսդ ցէր
յիւրաքանչիւր տեղիս ․ և ընտրեա դու
ընդ քեզ արս սակաւս ․ որք ընդ քեզ
հանապազ շրջիցին ․ և եկ դու ընդ իս
'ի քաղաքն պտողոմեացւոց ․ և տաց
քեզ զնա 'ի ձեռս ․ և զայլ ամուրս զօ_
րօքն հանդերձ, ն՟ղ 'ի ձեռն լիցի ․ և ես
դարձայց անդրէն ․ զի վասն այսր իսկ
46 եկեալ եմ ։ *Եւ հաւատաց նա 'ի նա ․
և արար ն՟ղ հրամայեաց նմա ․ և արձա
կեաց զզօրսն յիւրաքանչիւր տեղիս
47 յերկիրն հրէաստանի ։ *Եւ եթող
առ իւր 'ի նոցանէ իբրև արս երկու հա_
զարս ․ դարձեալ եթող 'ի նոցանէ զեր
կուս հազարս յերկիրն գալիլեացւոց ․
և

և ինքն գնաց ը՛ նմա հազարաւ միով։
*Եւ իբրև եմուտ յոնաթան 'ի քաղաքն 48
պտղոմէացւոց. առին զդրունս քա
ղաքացիքն. և զնա 'ի ներքս արգելին.
և հանին ընդ սուր զամենեսին. որք
ընդ նմա մտեալ էին։ *Եւ արար տրի 49
փոն զօրս 'ի վերայ զօրացն նորա. որք
էին յերկրին գալիլեացւոց՝ և 'ի դաշ
տին մեծի. զի երթիցեն՝ սատակես_
ցեն զամ զօրս յոնաթանու։ *Նոքա 50
իբրև գիտացին. թէ նա 'ի ներքս ար
գելաւ՝ և ամենեքեան կորեան՝ որք ը
նմա էին. մխիթարեցին զանձինս. և
գնացին միագունդ միաբանութբ 'ի
մարտ պատերազմի։ *Իբրև տեսին 51
զօրականքն. որք 'ի վերայ երթեալ
էին. թէ սրտի մտօք 'ի վերայ իւրա_
քանչիւր ոգւոյն մարտնչէին՝ զանդի
տեցին. թողին, և դարձան։ *Եւ ա 52
քա եկին՝ հասին յերկիրն հրէաստա_
նի խաղաղութբ. կոծ առին՝ լացին
զյոնաթան և զզօրսն. որք ընդ նմա
էին. և էին յերկիւղի մեծի. և նստէր
'ի սուգ ամենայն իէլ. և լային զյոնա
թան։ *Սկսան խնդրել ամ հեթա_ 53
նոսք. որք շուրջ զնոքօք էին. սատա_
կել զնո. զի ասէին այսպէս։ *Ոչ է 54
չիք ոք գլուխ՝ և իշխան 'ի վերայ նց.
որ տայ ընդ մեզ մարտ պատերազմի.
արդ եկայք՝ հասցուք 'ի վերայ. ջնջես
ցուք զյիշատակ նոցա յերկրէ։

ԳԼ: ԺԳ։

Եւ լուաւ շմաւոն եթէ ժողովեաց 1
տրիփոն զօրս բազումս գալ հա
սանել 'ի վերայ երկրին հրէաստանի և
սատակել զնո։ *Եւ ստուգեաց թէ 2
ժողովուրդն յահի և յերկիւղի մեծի
է. և ինքն եկեալ յերուսաղէմ, ժողո
վեաց զժողովուրդսն։ *Մխիթա_ 3
րեաց զնոսա՝ և ասէ. դուք ինքնին գի
տէք. որչափ գործ գործեցաք՝ ես և
եղբարք իմ, և տուն հօր իմոյ. քանի՞
մարտ պատերազմի մղեցաք. կամ ո՞ր
չափ նեղութն համբերեցաք՝ 'ի վերայ
սրբութեց օրինացն և քաղաքիս։
*Զի վն իլի՝ և ձեր ամենեցուն կո_ 4
րեան եղբարքն իմ ամենեքեան. և ես
մնացեալ եմ միայն։ *Եւ արդ՝ քա՛ւ 5
լիցի ինձ խնայել՝ ապաշաւել զանձն իմ
յամ ժամանակս նեղութե. արդ թէ
ինչ չեմ լաւ քան զեղբարսն իմ։
*Բայց սակայն զօրացայց խնդրել 6
զվրէժ ազգի 'ի վն սրբութեցն օրի_
նաց. 'ի վն կանանց և որդւոց. զի աւա
սիկ ժողովեալ են հեթանոսքն ամ,
հասանել՝ սատակել զյիշատակս մեր
յերկրէ։ *Իբրև զայն խօսէր. զուա՛ր 7
թացուցանէր, մխիթարէր զամենայն
8 միտս ժողովրդեանն։ *Եւ տուին պա_
տասխանի. սկսան խօսել 'ի ձայն մեծ՝
և ասեն. դու ես մեր առաջնորդ փո_
խանակ յուդայի և յոնաթանու եղ_
9 բարց քոց։ *Մարտիր զպատերազմս
մեր. և զամ որինչ ասես՝ հնազանդ
10 լիցուք քեզ։ *Եւ ժողովեաց նա զամ
արս պատերազմի. վաղվաղեաց՝ փու
թացաւ՝ և շինեաց զպարիսպն եէմի
11 *Եւ արձակեաց նա զյոնաթան զա
բեսողոմեան զօրօք բազմօք 'ի քա_
ղաքն յոպպէացւոց. և էհան նա անտի
զպահապանսն. և ինքն եմուտ. ամրա
12 ցաւ. և պահէր զնա։ *Յետ այսորիկ
խաղաց, գնաց տրիփոն 'ի քաղաքէն
պտղոմէացւոց զօրօք բազմօք՝ գալ
յերկիրն հրէաստանի. և ածէր ընդ
իւր զյոնաթան 'ի զգուշութի պահ_
13 պանութե։ *Եւ շմաւոն բանակեալ
էր 'ի դիւդայ 'ի կողմանս դաշտին։
14 *Եւ գիտաց տրիփոն, եթէ համբար
ձաւ շմաւոն փոխանակ յոնաթանու
եղբօր իւրոյ. և պատրաստեալ է նա
'ի մարտս պատերազմի. արար հրեշ_
տակս՝ և արձակեաց առ նա՝ և ասէ։
15 *Վն արծաթոյն. զոր պարտէր յոնա
թան յարքունիս՝ արգելեալ կայ աստ։
16 *Արդ՝ տո՛ւր բերել զարծաթն հար_
իւր քանքար. և երկուս որդիս յորդ
ւոց նորա տո՛ւր ածել առիս. զի մի՛
յորժամ արձակեսցուք. ապստամբ
17 լիցիս 'ի մէնջ։ *Եւ գիտաց շմաւոն,
թէ նենգութբ խօսի նա ընդ նմա. ետ
տանել զարծաթն և զպատանեակսն.
դուցէ ինչ թշնամութի լինիցի ընդ
18 ժողովուրդն և ընդ նա։ *Եւ ասի_
ցեն. եթէ ագահեաց յարծաթն. և
չետ տանել զպատանեակսն. և այրն
19 կորեաւ։ *Առա ետ տանել զպատա
նեակսն՝ և զհարիւր քանքարն։ և սա_
կայն ստեաց. և ո՛չ արձակեաց զյօ_
20 նաթան։ *Եւ յետ այսորիկ եկն տրի
փոն 'ի կողմանս երկրին շրջել՝ և սա_
տակել զնոսա. և պատեցին զճանա_
պարհն ադօրայ. և շմաւոն բանակաւն
հանդերձ զառաջս ունէր նորա. յոր
21 կողմ և երթայր նա։ *Եւ որք 'ի միջ
նաբերդին յէէմ էին. յղեցին առ տրի
փոն հրեշտակս. ստիպել զնա. զի ե_
կեսցէ առ նոսա ընդ անապատն. և
22 համբարս բերցէ նոցա։ *Եւ
պատրաստեցաւ տրիփոն գնդաւն հան
դերձ՝ գալ մտանել 'ի գիշերին յայն_
միկ. և ձիւնաբեր եղև յոյժ. վն այ_
նորիկ ոչ կարաց մտանել. չու արար.
և եկն 'ի կողմանս գաղաադու։
23 *Իբրև մերձեցաւ նա 'ի բասկամայ.
անդ

անդ սպան զյօնաթան . և անդէն թա
ղեցաւ ։ *Դարձաւ անտի տրիփոն՝ և 24
եկն յաշխարհ իւր ։ *Եւ առաքեաց 25
շմաւօն՝ և եբարձ անտի զոսկերսն յօ_
նաթանու եղբօր իւրոյ . և բերին՝ և
թաղեցին զնա ՚ի մովդիիմ՝ ՚ի քաղաքն
հարց իւրոց ։ *Կոծ եդին . լացին զնա 26
ամենայն իսրայէլ . և սուգ առին աւ
ուրս բազումս ։ *Եւ անդ շինեաց շի 27
նուա՛ծ ՚ի վերայ գերեզմանի հօր իւրոյ
և եղբարց իւրոց . և բարձրացոյց զնա
գործ քարկուի քարակոփ շուրջանա_
կի ։ *Եւ կանգնեաց ՚ի վերայ նորա 28
բրգունս դէմ յանդիման . և կացոյց
անդ երիս վառեալս հօրն և եղբարցն
դէմ ընդդէմ ։ *Սեամբք բարձրու_ 29
թեան վանդակապատ . և արար իւր
անուն յաւիտենից . և եդ զկողիւք
վանդակին գործ քանդակի նաւաց
նմանութիւն . զի երևելի կայցեն՝ որք
անցանեն ընդ ծով նաւուք ։ *Աս 30
շիրմօք . զոր արարին ՚ի մովդիիմ մին_
չև յօրս յայս ։ *Եւ տրիփոն դնայր 31
նենգութեամբ ընդ արքայի անտիոքայ
մանկան . և սպան զնա ։ *Եւ թագա 32
ւորեաց ընդ նորա . և թագ էառ նա
զասիացւոց . և արար հարուած մեծա_
մեծս յերկրի ։ *Եւ շինեաց շմաւօն 33
զամուրսն հրէաստանի . բարձրացոյց
պարսպօք . և կանգնեաց աշտարակս .
դրամբք՝ և նգօք հաստատեաց . և պն
դեաց զամուրսն համբարօք ։ *Եւ կո 34
չեաց շմաւօն արս ընտիրս . և առաքեաց
առ դեմետր . զի արասցէ թողութիւն երկ
րին . զի ամ̃ գործքն տրիփոնայ յափշ_
տակութիւնք էին ։ *Եւ առաքեաց դե 35
մետր թագաւոր ըստ բանիցս ը̃ այսո
ցիկ . պատասխանի ետ նմա . և գրեաց
հրովարտակս ը̃ օրինակիս ը̃ այսմիկ ։
*Դեմետր արքայ առ շմաւօն քահա_ 36
նայապետ՝ առ բարեկամ թագաւո_
րաց՝ և առ ամ̃ ծերակոյտ ազգիդ հրէ
ից՝ ողջոյն ։ *Պսակդ ոսկի՝ և զօրհնու 37
թիւն . զոր ետուք բերել մեզ՝ ընկալաք . և
պատրաստք եմք առնել զխաղաղութի
մեծ՝ և գրել առ իշխանս հարկահա_
նաց . զի թողցին ձեզ պարտիքն ։ *Եւ 38
զոր միանգամ հաստատեցաք առ ձեզ՝
հաստատուն կացցէ . և ամուրքդ զոր
շինէք՝ այդ ձեզ իսկ լիցին ։ *Եւ թո_ 39
ղեալ լիցի ՚ի մէնջ ձեզ մեղք ակամայ
մինչև յայսօր ժամանակի . և զպսակն՝
և ըէ զոր պարտիք՝ և ինչ այլ ինչ որ մաքս ե_
լանէ յերուսաղէմ . այլ մի ելցէ ։
*Եւ թէ որք պիտանիք իցեն ձեր . և ար 40
ժանք իցեն ՚ի մեր գիր մտանել՝ մտ_
ցեն համարձակ . և եղիցի մեզ ընդ ձեզ
խաղաղութի ։ *Յամին հարիւրորդի 41
եօթանասներորդի բարձաւ լուծն հե
թանոսաց յիլեան տոհմէ անտի ։
42 *Եւ սկսաւ ժողովուրդն գրել ՚ի
մատեանս իւրեանց . և ՚ի կտակս վա_
ճառաց իւրեանց . յամին առաջնոր_
դի յաւուր շմաւօնի մեծի քահանայապե
տի՝ առաջնորդի՝ և զօրավարի ազգին
43 հրէից ։ *Յաւուրսն յայնոսիկ պա_
տեաց նա զքաղաքն գազացւոց . և պա
շարեաց զնա զօրօք . և արար անդ մե
քենայս . և մատոյց ՚ի պարիսպ անդր .
44 և կործանեաց աշտարակ մի ։ *Եւ ելին
՚ի մեքենայէ անտի՝ և յարձակեցան ՚ի
ներքս ՚ի քաղաքն . և եղև խռովութի
45 յոյժ ՚ի քաղաքի անդ ։ *Եւ դիմեցին
առ հասարակ քաղաքացիքն կանամբք
և մանկտովք հանդերձ . ճիչ առեալ՝
և զօձիս պատառեալ՝ և զաղաղակ բար
46 ձեալ կարդային առ շմաւօն ։ *Եւ
աղաչէին ձեռն տալ նոցա ։ զի մի դա
տեսցէ զնոսա ըստ չարութեան նց̃ . այլ
ըստ ողորմութեան իւրում գթասցի ՚ի
47 վ̃ նոցա ։ *Եւ հակեցաւ շմաւօն . և
ցածոյց զպատերազմն . և հրամայեաց
հանել զնս̃ արտաքս քան զքաղաքն . և
սրբեցին զապարանսն յոմ̃ աղտեղու
թէ պղծութեան կռոցն . և ապա եկն՝
եմուտ ՚ի ներքս ցնծութբ̃ և օրհնու_
48 թբ̃ ։ *Եւ սրբեաց ՚ի նմանէ զամ̃ պղղ
ծութիւս . և բնակեցոյց ՚ի նմա արս՝
որք զօրէնսն պահիցեն . ամրացոյց և
զնա . և շինեաց ՚ի նմա բիւր ազգի գոր
49 ծած ապարանից ։ *Իսկ որք ՚ի միջնա
բերդն էին յեմ̃ արգելեալք՝ նեղեալք՝
պաշարեալք կային . զի ոչ էր նց̃՝ ոչ ել
և ոչ մուտ . ոչ գին . և ոչ վաճառ . և
նեղեալք սովամահ էին . և բազումք ՚ի
50 նոցանէ սատակեցան ։ *Աղաղակեցին
առ շմաւօն . աղաչէին կալ առաջի նր̃ .
նա ետ նց̃ ձեռն . և եհան զնս̃ անտի .
և սրբեաց նա զմիջնաբերդն յամ̃ պղղ
51 ծութեանց նոցա ։ *Եւ եկն՝ եմուտ նա
անդր ՚ի քսաներորդի երրորդի ամ_
սոյն, յերկրորդում ամսեանն . յամին
հարիւրորդի եօթանասներորդի ա_
ռաջներորդի մտանէր անդր՝ օրհնու
թբ̃՝ գոհութբ̃ ոստօք արմաւենեօք . ՚ի
ցնծութի փողոյ և սրնգի . զի խորտա
կեցաւ մեծ թշնամի ՚ի տանէն իլի ։
52 *Եւ հրամայեաց նա առնել զտօնն
զայն, ամի ամի ըստ աւուրն ը̃ այնմիկ՝
53 ուրախութբ̃՝ և ցնծութբ̃ ։ *Ամրա_
ցոյց նա զլեառն տաճարին , առ միջ
նաբերդաւն . և բնակեալ էր ինքն ՚ի
ներքս սեպհական գնդաւն հանդերձ ։
54 *Եւ ետես շմաւօն զյօնաթան զորդի
իւր , եթէ այր կատարեալ է ՚ի չափ
հասեալ է . էառ՝ և կացոյց զնա իշխան

զօ-

զօրավար՝ առաջնորդ՝ի վերայ ամենայն զօրացն. և կացոյց զնա՝ի կողմանս գաղերայ։

Գ.Ի: Ժ.Դ:

Յամին հարիւրորդի եօթանասն երորդի երկրորդի. զօրաժողով լիներ դեմուտը արքայ. և անցանէր՝ի կողմանս մարաց և պարթևաց խնդրել իւր անտի Թիկունս. զի եկեսցէ՝ տացէ մարտ պատերազմի ընդ տրիփոնայ։ * Իբրև զայն լսեր արշակ արքայ պարսից և պարթևաց, եթէ եկն՝ և եմուտ դեմուտը՝ի սահմանս աշխարհի նորա. արձակեաց նա մի յիշխանաց իւրոց՝ երթալ և ձերբակալ առնել զնա։ * Գնաց նա՝ և տակաւին զզօրսն դեմուտրեայ. և առ բար զնա ձերբակալ. եկն՝ և տաճ. կալաւ զդեմուտր առաջի արշակայ։ և հրամայեաց կապել զնա՝ի կապանս և դնել՝ի բանտի։ * Յետ դադարեաց՝ի խաղաղութեն երկիրն ամ՝ յաւուրս շմաւճան. և յաւելոյր բարիս՝ի բարեաց վերայ ազգին իւրեանց. տիրեր նա՝ի վերայ գաւառացն։ * Յետ ժողովեր զգերիս բազումս. տիրեր՝ի վրայ կողմանցն գաղիրծնայ՝ և բեթսուբայ. և ակառեանց։ * Յետ գործեին զերկիր իւրեանց խաղաղութիւն։ և երկիրն ապր զպտուղ իւր. և ամ փայտ ծառատունկ տայր զբեր իւր առատութիւն։ * Ելեր՝ի հրապարակս նատեին. ձառ արկեալ զբանից բարութիւն ընդ միմեանս խորհեին։ երիտասարդք զգ փառս զգեցեալք, զարդարեալք՝ի զարդ պատերազմի։ * Ո քաղաքս պնտեին համբարզք. և զանձինս պատրաստեին պատրաստութիւն զարդու՝ ամրութիւն զինու. մինչև երթայր անուն փառաւորութիւն նորա մինչև՝ի ծագս երկրի։ * Յետ առներ խաղաղութիւն. և ցնծայր իսրայէլ յուրախութիւն մեծ։ * Յետ նստեին իւրաքանչիւր ընդ որթով իւրեանց՝ և ընդ թզենեաւ իւրեանց. և ոչք զարհուրեցուցանէր զնոսա։ * Յետ պակասեցան ամենեքեան. որք մարտնչէին ընդ նոսա՝ յերկրէ. և թագաւորքն խորտակեցան յաւուրս իւրեանց։ * Յետ հաստատեաց՝ և զօրացոյց զնոսա ժողովրդեանն՝ խնդրել զվրէժ օրինացն. և զամենայն չարս՝ և անօրէնս ջնջեաց յերկրէ։ * Փառաւորեցոյց զսբթութիւնն. և բազմացոյց զսպաս սրբութեանն։ * Ու եղև՝ի հռոմ քաղաք՝ մինչև՝ի կողմանս սպարտիացւոց, եթէ մեռաւ յովնաթան. և արտմեցան յոյժ։

17 * Այլ երբև լուան եթէ շմաւճան եղբայր նր կայ՝ի գլուխ քահանայութեն ընդ նր. և տիրեալ հաստատեալ ու նի զքաղաքս և զգաւառս. որք՝ինն
18 սայն էին։ * Երեշտակս արարին. և հրովարտակս գրեցին՝ի տախտակս պղնձիս. նորոգել զկին բարեկամութիւն. զոր ուխտեցին՝ և հաստատեցին առ յուդայ՝ և առ յովնաթան եղբայր նորա։ * Յետ երբև բերին՝ ընթերցան առաջի ժողովրդոցն երուսաղէմ. և այս պատճէն հրովարտակացն. զորս առաքեցին սպարտիացիքն։ * Սպարտիացւոց իշխանք և առաջնորդք մեծաւ քաղաքաւ հանդերձ. առ շմաւճան մեծ քահանայ. և առ ծերակոյտ իշխացւոց՝ և առ քահանայս. և առ ամ գունդ հրեից եղբարս մեր՝ ողջոյն։ * Երեշտակք. որք արձակեցան՝ի ձէնջ առ մեզ. պատմեցին մեզ վասն փառաց և պատուոյ ձերոյ. և ուրախ եղեաք՝ի գալստեան գոցա։ * Յետ գրեցաք մեք զպատգամս ձեր՝ի մատեանս խորհրդոյ գնդի մերոյ՝ օրինակ զայս՝ Նումենիոս անտիոքեան. և անտիպատրոս յասօնեան հրեշտակք հրեից. որք եկին առ մեզ նորոգել զբարեկամութիւնն ընդ ազգի մերում։ * Յետ հաճոյ թուեցաւ ամ սպարտիացւոց ընդունել զարան մեծաւ փառաք. և զպատգէն բանից նոցա դնել՝ի տեղի երևելի՝ի մատեանս խորհրդոյ գնդի սպարտիացւոց։ և պատասխանի արարին հրովարտակացն առ շմաւճան մեծ քահանայ։
24 * Յարձեալ յետ այսց ժամանակաց. շմաւճան հրեշտակս առնէր անդրէն՝ի հռոմ մեծաւ պատարագաւ. և ոսկով վահանաւ՝ի հաղար քանքարէ. զի երթիցէ հաստատեսցէ զառաջինն բարեկամութիւնն և թիկունս։
25 * Իբրև զայն լուան գունդքն հռոմայեցւոց. սկսան խորհիլ՝ և ասել. լսկ արդ զինչ երթայեաց երթիս դարձուսցուք շմաւճան՝ և որդւոց նորա։ * Ո՞՛ի հաստատեաց նա և եղբարք իւր՝ և առն հօր իւրոյ զայն առ մեզ բարեկամութիւն. հարկանելով հաստատեաց զմեզ ընդ իւր՝ի բարեկամն և՝ի թիկունս։ և հաստեցին նմա ազատութիւն. և գրեցին զայս՝ի տախտակս պղնձիս. և կանգնեցին նմա արձան՝ի լերինն սիոնի։ * Յետ այս պատճէն է գրոյն. զոր գրեցին՝ յամին հարիւրորդի եօթանասներորդի երկրորդի. որ օր ուրբաթ էր ամսոյն՝ իվր՝ յամին երրորդի առ քահանայ

քայ բարձրացոյց զքահանայապետուԹԹեն ։ * Եւ ամն այսր ամենայնի ընդ 39
բուն բարեկամս փառաւորեաց զնա՝ ի
փառս մեծուԹԹե ։ * Օ՛ի լուաւ եղևնամս. 40
եԹէ անուճանեալ կոչին հրեայք զա
րեկամՔ հռոմայեցւոց. եղբարՔ՝ և Թի
կունՔ՝ և նիզակակիցՔ. և զի ընկալան
զհրեշտակսն շմաւոնի փառաւորուԹ ։
* Օ՛ի հրեայքն ինՔեանՔ և քահա 41
նայքն հաՃեցան. յանձն առին իշխան
քահանայապետ կացուցանել զնա յա
ւիտեանս ժամանակի. մինչև կանգ
նեսցի մարգարէ հաւատարիմ։ * Օ՛ի 42
լինցի նՄ զօրավար առաջնորդուԹԹե. և
զի փոյԹ լինցի նմա վՃ սրբոցն. և կա
յուցանել՝ ի նՄ ձեռանէ՝ ի վՃ գոր
ծոց նոցա. ՚ի վՃ գաւառաց նՄ. ՚ի վՃ
պինու զարդուս նոցա. և ՚ի վերայ ամ
րոցի նոցա ։ * Եւ զգի փոյԹ լինցի նմա 43
վասն սրբոցն. և Նաազանդեայնն նոցա
Ամ ազգք. և յանուն նորա կնքիցին
Ամ մարհակք աշխարհի. զի իշխան լի
ցի արկանել Ծիրանիս. և զարդարիլ
ոսկւով ։ * Եւ մի ոք իշխեսցէ ՚ի ժողո 44
վրդոց անտի կամ՚ի քահանայից ընդ
դէմ դառնալ հրամանաց նՄ. և կամ
ժողովել ժողովս յերկրի նՄ առանց
նորա. կամ զգենուլ Ծիրանիս. կամ
արկանել շիւղ ոսկւոյ ։ * Օ՛ի եԹէ ոք 45
մի ինչ յայսցանէ անցցէ՝ և կամ անար
գեսցէ՝ մնասպարտ լիցի ։ * Եւ հա 46
Ճոյ Թուեցաւ ժողովրդեանն առնել
շմաւոնի ըստ բանիցս այսոցիկ ։
* Եւ առ յանձն շմաւոն. և հաՃեցաւ 47
կալ՚ի գլուխ քահանայապետուԹԹե.
լինիլ սպարապետ զօրավար գնդին
հրեաստանի. և կալ գլուխ քահա
նայից. և առաջնորդել ամենեցուն ։
* Եւ զգերս զայս գրել՚ի տախտակս 48
պղնձիս. և հրամայեցին դնել յամրի
՚ի նշանաւոր և յերևելի տեղւոջ՚ի
մՋ սրբոցն ։ * Եւ զսպատաՃենս 49
նոցա դնել՚ի գանձի. զի շմաւոն և
որդիք նորա զայն առ իւրեանս ունի
ցին հանապազ ։

ԳԼ. ԺԱ.

1 Եւ առաքեաց անտիոքոս որդի դե
մետրեայ արքայի հրովարտակս
՚ի կղզեաց անտի առ շմաւոն քահա
նայապետ՝ և կուսակալ ազգին հրեից՝
2 և առ ամենայն ազգս նՄ։ * Եւ ու
նէին հրովարտակքն զօրինակ զայս.
արքայ անտիոքոս. առ շմաւոն մեծ
քահանայապետ առ կուսակալ ազգին
3 հրեից՝ ողջոյն ։ * Ո՛անզի ոմանք անօ
րէնք եկին՚ի բուռն եղեն արքայու
ԹԹե հարցն իմոց. և արդ ես աւասիկ
՚ի հան

'ի խնդիր եմ անդրէն շինել՝ կանգնել՝
հաստատել զնոյն արքայութիւն. ով
էր զառաջինն. արդ՝ ես զօրաժողով
եմ զօրօք բազմօք՝ պատրաստեալ նաւս
պատերազմի։ * Ելանել՝ և խնդրել 4
զվրէժ հարց իմոց յազգաց վնասակա
րաց երկրիս մերոյ. և որք աւերեցին
զքաղաքսն մեր զմեծամեծս։ * Արդ 5
հաստատեալեմ քեզ զամ ուխտ հար
ցն. զոր թողին ձեզ թագաւորքն
առաջինք. և որ ինչ այլինչ հաս օրէն
հարկի իցէ, թողեալ լիցի քեզ։ * Եւ 6
հրամանս ետ տուաք, զի իշխան լիցիս
հատանել առանձինն դահեկան յաշ
խարհի քում։ * Եւ երուսաղէմ և սր 7
բութիւնքդ ազատք լիցին յամենայնէ.
և զէնդ և զարդդ՝ զոր գործեցեր, և
զամուրսդ՝ զորս ամրացուցեր՝ քեզ լի_
ցին այդուքիկ։ * Եւ ամ պարտք ար_ 8
քունի, հարք, և օրէնք՝ որք այսու
դային՝ քեզ լիցին յայսմհետէ մին_
չև յաւիտեանս ժամանակաց։ * Այլ 9
իբրև հասցուք 'ի տէրութիւն մեր. փա_
ռաւորեսցուք զքեզ՝ և զազգ քո. և
զտաճարդ՝ 'ի փառս մեծութե. զի յայտ
նի լիցին փառքն ձեր ընդ ամ երկիր։
* Յամին հարիւրորդի եօթանասներոր 10
դի չորրորդի եկն՝ էհաս անտիոքոս յեր
կիրն հարց իւրոց. ժողովեցան առ նա
ամ զօրք. և սակաւք ինչ մնացին առ
տրիփոնայ։ * Եւ հալածեաց զնա ան 11
տիոքոս. և եած՝ էարկ զնա 'ի դօրայ ծո
վեզերեայց։ * Եւ թողին զնա ամե_ 12
նայն զօրքն. և իբրև տեսին զչա_
րիսն. որք անցին ընդ նա։ * Անտիո_ 13
քոս եկն՝ և բանակեցաւ շուրջ զդօ_
րաւ երկոտասան հազարաւ՝ մարտիկ
պատերազմօղ արամբ. և ութնհա_
զար հեծեալ սպառազինաւ։ * Եւ 14
զծովակողմն փակեաց նաւօք. և 'ինեղ
էարկ զքաղաքն 'ի ծովէ և 'ի ցամաք
կուսէ. և ոչ զոք թողուին ելանել։
* Եւ եկն նումենիոս. և որք ընդ նմա 15
էին. բերին հրովարտակս 'ի հռոմ քա
ղաքէ առ թագաւորս երկրին. յորս
գրեալէր այսպէս։ * Ղուկիոս հիւ_ 16
պատոս հռոմայեցւոց՝ առ արքայ պտո
ղոմէոս ողջոյն։ * Ծերքդ 'ի հրէաս_ 17
տանէ եկին առ մեզ նորոգել զառա
ջին սէր բարեկամութե՝ նիզակա_
կիցս և թիկունս մեզ. զորս արձա_
կեալ առ մեզ շմաւօնի քահանայա_
պետի՝ և դնդին հրէից։ * Բերին մեզ 18
1000 վահան ոսկի 'ի հինգհազար քանքա_
րէ։ * Վասն այսորիկ հաճոյ թուե_ 19
ցաւ մեզ՝ գրել առ թագաւորս երկ_
րիդ՝ և ամենայն ազգացդ. զի մի ոք
ինչ չարի խորհիցի 'ի վերայ նոցա. և

մի տայցեն մարտ պատերազմի ը քա
ղաքս դոցա՝ և ընդ երկիր. զի մի դօ_
քա ընկեր լիցին մարտի թշնամեաց.
20 * Հաճոյ թուեցաւ մեզ առնուլ զվա
21 հանն 'ի դոցանէ։ * Արդ եթէ իցեն
արք անօրէնք փախուցեալք յերկրէ
դոցա՝ 'ի ձեռս տաջիք շմաւօնի քահա
նայապետի. զի խնդրել մարթասցի
22 զվրէժ ըստ օրինացն իւրեանց. * Եւ
այսպէս գրէր առ դեմետր արքայ. և
առ աթաղոյ. և առ արիարեթ. և առ
23 արշակ։ * Յամ գաւառս. ուրինչ բար
ւոք թուիցի սպարտիացւոց. և 'ի դէ_
ղոս. և 'ի մինդոնայ. և 'ի սիկոնայ. և 'ի
կարադայ. և 'ի սամոն. և 'ի պամփիւ
լայ. և 'ի փասելիդայ. և 'ի սիդեն. և 'ի
սարադօն. և 'ի պորտունիայ. և 'ի կնի
24 դոս. և 'ի կիպրոս. և 'ի կիւրէն։ * Եւ
պատճէն հրովարտակցն գրեցին առ
25 շմաւօն քահանայապետ։ * Եւ անտի
ոքոս արքայ եկն պաշարեաց զդօրայ.
և 'ի վաղիւ անդր մատուցանէր առ
նա մեքենայս, և ձեռնարկէր 'ի նա. և
'ի ներքս արգելեալ պաշարեալ պա_
հէր զտրիփոն։ և ոչ ել ումեք դուր 'ի
ներքուստ արտաքս՝ և ոչ մտաւ արտա_
26 քուստ 'ի ներքս։ * Եւ յղեաց շմաւօն
'ի թիկունս նմա արս ընտիրս մրտիկս
պատերազմօղս, երկուս հազարս սպա
ռազէնս. և 'ի պատարագս հանդեր_
27 ձեալս յոյժ ոսկի և արծաթ։ * Այլ
անարգեաց զամ բանսն. զոր ուխտեաց
28 նմա. և օտարանայր 'ի նմանէ։ * Եւ
առաքեաց նա զաթենոբիոս՝ զմի 'ի բա
րեկամացն իւրոց. խօսս 'իմէջ առնել
ընդ նմա՝ և ասել. դուք իշխեալ զօրա
ցեալ ունիք զքաղաքս թագաւորու_
թե իմոյ. զքաղաքն յոպպէացւոց. և
գազարացւոց. և զմիջնաբերդն երէմի.
29 * Զսահմանս նոցա աւերեցիք դուք.
և հարուածս մեծամեծս հասուցիք
'ի վր երկրիս նր. տիրեցիք դուք կող
մանց բազմաց՝ և գաւառս բազումս
30 հատիք իմոյ տէրութե։ * Արդ տուք
'ի դուրս զքաղաքս՝ և զգաւառս՝ և
զհարկս նոցուն. և որինչ միանգամ
բռնութբ կալեալէ ձեր 'ի մէնջ. ար_
տաքոյ սահմանացն հրէաստանի։
31 * Ապա եթէ ոչ, տուք փոխանակ այնո
ցիկ հինգ հարիւրքանքար արծաթոյ.
և զխափանած հարկաց քաղաքացն,
զորս ցայսօր խափանեցիք՝ այլևս հինգ 500
հազար քանքար։ ապա եթէ ոչ՝ եկես
ցուք՝ հարցուք՝ վանեսցուք զերկիրն՝
32 և սատակեսցուք։ * Եւ իբրև եկն
աթենոբիոս բարեկամ արքային յէմ.
ետես զփառս շմաւօնի. և զսպաս զսկ
ւոյ. և զարծաթոյ. և զհանդերձս

պատրաստութեան զօրաց բազմաց. յոտն
կայր առաջի նորա. և շքով տայր զպատ
գամս թագաւորին: *Պատասխանի 33
ետ նմա շմաւոն՝ և ասէ. ոչ յերկիր
օտար ուրուք մտեալ եմք. և ոչ 'ի բա_
ժին ուրուք տարապարտուց ձեռն բա
նութե մխեալ եմք. զվիճակ ժառան
գութե հարցն մերոց վտարանդի լեալ
յանպարտ թշնամեաց տարապար_
տուց: *Քաջութե ժամանակ գտեալ 34
խնդրեցաք: *Իսկ վն յոպպէացւոց քա 35
ղաքին. և գազարայ՝ զոր դուքն խն_
դրէք. նոքա բազում գործեցին 'ի մէջ
աշխարհին մերում, վրէժ խնդրեցաք.
վասն այսորիկ տուժիցուք հարիւր
քանքար: և ոչ ետ նմա բանիցն պա_
տասխանի: *Եւ դարձաւ բարկութե 36
առ թագաւորն. և պատմեաց նմա
զփառսն շմաւոնի. և զամ պատրաս_
տութի զոր ետես սպասուց նորա. և
բարկացոյց յոյժ զթագաւորն: *Եւ 37
տրիփոն փախեաւ յորթոսիայ: *Եւ 38
թագաւորն գումարեաց զկենդեբոս
ծովեզերեայց սպարապետն. և զօրս
բազումս հեծեալս և հետևակս ընդ
նմա: *Պատուէր ետ նմա. զի բանա_ 39
կեսցի դէմ յանդիման հրէաստանի.
և շինեսցեն զամուրսն 'ի պատրաս_
տութիւն մարտի պատերազմի ընդ
զօրսն իսրայելացւոց. և ինքն թագաւորն
զհետ էր տրիփոնայ: *Խաղաց՝ գնաց 40
կենդեբոս. եկն՝ եհաս 'ի կողմանս յա
մնեայ. և սկսաւ գրգռել զզօրսն. և
մխել՝ 'ի հրէաստան. գերել՝ և սպանա
նել. և շինեաց նա զկեդրոն: *Եւ 41
գումարեաց անդ հեծելազօրս բա_
զումս. զի մխեսցին 'ի հրէաստան. և
պաշարեսցեն զճանապարհս նոցա.
որպէս հրաման ետ թագաւորն:

ԳԼ: ԺԶ:

Եւ ել յոհան 'ի գազարայ. և եկն՝ 1
պատմեաց շմաւոնի հօր իւրում.
որպէս և գնայր կենդեբոս: *Եւ կոչ 2
եաց շմաւոն զերկոսին որդիսն զյու_
դայ. և զյոհան. և ասէ ցնս՝ ես և եղ
բարք իմ՝ և տուն հօր իմոյ մարտ պա_
տերազմի տուաք ընդ թշնամիսն իսրա
յելացւոց 'ի մանկութէ մերմէ մինչև յայսօր
ժամանակի. և յաջողեցան գործքն
բազմիցս մե 'ի ձեռս մեր փրկել զբազում
զազգս իսրայելացւոց: *Բայց արդ ծերա 3
ցայ. և դուք հերիք էք յամս իմ. փո_
խանակ իմ և եղբօր իմոյ. արդ ելէք
մարտերուք 'ի վերայ ազգիդ մերոյ.
և զօրութի օգնութեց յերկնից եղիցի
ընդ ձեզ: *Եւ ընտրեաց նա յաշխար 4
հէ անտի իբրև քսան հազար հեծեալ
սպառազէն. և խաղաց 'ի վր կենդե_
5 բոսեայ: *Եւ եկին՝ ագան այն օր 'ի
մովդիիմ. ընդ առաւօտն կանխեալ
լինէին դաշտամուխ. անդ տեսանէին
զօրս բազումս հեծեալս և հետևակս.
որք գային ընդդէմ նց. և հեղեղատ
6 մի էր 'ի մէջ երկոցունցն: *Եւ ճակա
տեցաւ յանդիման նց ինքն և զօրքն.
իբրև հայեցաւ՝ և ետես զզօրսն՝ եթէ
դանդաղեցան անցանել ընդ հե_
ղեղատն. յառաջ ինքն նախհատակե_
ցաւ, հապա զօրքն միագունդ զկնի
7 փոխեցան: *Եւ բաժանեաց յերկուս
գունդս զհեծելազօրն 'ի մէջ հետևա_
կացն. և էր հեծելազօրն կարի յոյժ:
8 *Փող հարին՝ խրախոյս բարձին, 'ի վր
յարձակեցան. 'ի պարտութի մատ_
նեցաւ կենդեբոս՝ և անկան 'ի նոցա
նէ յաւուր յայնմիկ վիրաւորք բա_
զումք. և որք մնացեալ էին՝ փախս_
9 տեայ անկանէին յամուրսն: *Յայնմիկ
խոց մնայր և յուդայ. բայց յոհան զհետ
լինէր փախստէիցն. մինչ ածէր առ
կանէր զնս 'ի կողմանս կեդրոնայ. զոր
10 շինեաց: *Եւ մեկնեցան նոքա ընդ
բրգունսն 'ի կողմանսն ազովտայ. և
հրձիգ արար զնս. յայնմ այրեցան 'ի
հրոյ իբրև արք երկու հազարք. և
ինքն դարձաւ 'ի կողմանս հրէաստա_
11 նի խաղաղութե: *Եւ պտոլոմէոս
աբուբբեանց էր կացուցեալ կող_
մանցն դաշտին երիքովի. և ունէր նա
12 արծաթ և ոսկի յոյժ: *Զի էր նա
13 փեսայ քահանայապետին: *Եւ հպար
տացաւ 'ի սիրտ իւր. մեծամտեցաւ 'ի
խորհուրդս իւր. և կամէր տիրել 'ի
վերայ կողմանցն գաւառին. և խոր_
հուրդ խորհէր նենգութե 'ի վերայ շմա
ւոնի և որդւոցն նորա, ջնջել զնոսա
14 'ի միջոյ: *Եւ շմաւոն շրջէր 'ի կող_
մանս գաւառացն. խնամէր՝ և տեսա_
նէր զպէտս նոցա. և եկն՝ էջ յերիքով
ինքն և մատաթի. և յուդայ՝ որդիք
նորա. յամին հարիւրորդի եօթա_
նասներորդի եօթներորդի. յամ_
սեանն մետասաներորդի. այս է ամիս
15 շաբաթու: *Եւ ընկալաւ զնոսա պտո
ղոմէոս 'ի մեծարանս նենգութե 'ի
քաղաքի անդ դոքայ՝ զոր շինեաց. և
արար ուրախութի կոչնոյն. անդ 'ի
16 դարանի առնէր արս: *Եւ իբրև կե
րին՝ և արբին. շմաւոն և որդիքն իւր
արբեցան. յարեաւ պտոլոմէոս թա_
քուցելոքն հանդերձ. առին զզէնս
իւրեանց. և մտին 'ի վերայ շմաւոնի.
և սպանին անդէն 'ի տաճարի անդ
զնա՝ և զորդիս իւր՝ և զծառայսն. որք
17 ընդ նմա էին: *Եւ արարին անօրէ_

նու_

նութեամբ. և հատուցին չար փոխա
նակ բարւոյ։ *Եւ գրեաց պտղո_ 18
մէոս առ արքայն. զի զոր 'ի Թիկունս
արձակեսցէ նմա. զի 'ի ձեռս տացէ
նոցա զքաղաքսն իւրեանց՝ և զհարկս։
*Օ կեան արձակեաց 'ի կողմն Գազա 19
րայ. բառնալ անտի զՅովհաննէս. և
գրեաց նա առ զօրագլուխսն. զի եկես
ցեն՝ և առցեն 'ի նմանէ ոսկի և ար_
ծաթ. և պարգևս բազումս։ *Եւ 20
այլս արձակեաց յԵրէմ. զի աճապա_
րեսցեն հասցեն՝ առցեն զլեառն տա
ճարին։ *Այր մի ընթացաւ յառաջա 21
գոյն 'ի Գազարայ. գոյժ ետ Յովհան_
նու՝ թէ կորեաւ հայր նր և եղբարք
իւր. և զքեն ևս յղեալ է նենգութե՝
22 զի սպանցեն զքեզ։ *Իբրև լուաւ՝
զարմացաւ յոյժ՝ և յիմարեցաւ. և ըմ
բռնեաց զարսն զայնս. և անդէն սպան
զնոսա. իբրև գիտաց եթէ նենգու_
23 թե եկեալ էին կորուսանել զնա։ *Եւ
այլ ինչ բանք՝ որք իցեն զՅովհաննէ
վասն մարտի պատերազմաց. կամ
այլոց քաջութեանց. կամ շինուածոց
պարսպաց. կամ գործոցն բարութե։
24 *Այն ամենայն գրեալ է 'ի մատեանս
քահանայից. յորմէհետէ եկաց նա
քահանայապետ զկնի հօր իւրոյ։

ԳԻՐՔ ԵՐԿՐՈՐԴ
ՄԱԿԱԲԱՅԵՑՒՈՑ.

Գլուխ Առաջին։

Առ եղ բայրս հրէ այսոց 'ի

ԱՌ ԵՂ 1
ԲԱՅՐՍ ՀՐԷ-
աստանեայս.
որք 'ի կողմանս
եգիպտացւոց
էն. յեղբարց
հրէից ողջոյն.
խաղաղութի բազ
մաւ։ *Բարւոք արասցէ 'ի ձեզ Ած. և 2
յիշեսցէ նա զուխտն. զոր եդ ը աբ_
րահամու. ընդ իսահակայ. և ընդ յա
կոբայ. ընդ հաւատարիմ ծառայս
իւր։ *Եւ տացէ ձեզ զսիրտ յամի պաշ_ 3
տել զնա. և առնել զկամս նորա յան
ձինս միադիւրս. և 'ի սիրտս կամա_
կարս։ *Բանալ զաչս և զականջս սր 4
տից ձերոց, յօրէնս իւր և 'ի հրամանս
իւր։ առնել խաղաղութի։ *Եւ լսել 5
խնդրուածոց ձերոց. հաշտեսցի ընդ
ձեզ. և մի 'ի ձեռաց թողցէ զձեզ 'ի
ժամանակս նեղութե։ *Եւ արդ՝ այժ 6
միկ կանխեմք մեք յաղօթս մեր վասն
ձեր։ յամս թագաւորութե դեմետրի։
7 *Յամին հարիւրորդի վաթսներոր_
դի իններորդի. մեք հրէայք գրեցաք
զայս առ ձեզ 'ի նեղութեն, որ հասեալ
էր 'ի վ՜րա մեր 'ի ժամանակի անդ՝ յոր
ում եկաց յեսու յասօն. և որք ը նմա
էին 'ի սուրբ երկրէն և յարքայութե
8 անտի։ *Եւ հրձիգ արարին զդրունսն.
և հեղին զարիւն անմեղ։ աղօթս մա
տուցաք մեք Տն. և լուաւ մեզ. և
մատուցաք մեք ուխտ՝ և խունկս՝ և
պատարագս նաշհօք. և եդաք մեք
9 զհացն յաձախսայ առաջի։ *Եւ արդ՝
արասջիք դուք ‖ զաւուրսն տաղաւա ‖Ղեւտ. 23.24.
րահարաց. յամսեանն քասղև։
10 *Յամին հարիւրերորդի ութսներոր
դի ութերորդի։ որ յեհմացւոց. և 'ի
ծերակոյտ հրէաստանեայց. և 'ի յու
դայէ՝ առ երիստաբուղոս վարդա_
պետ պտղոմեայ արքայի. որ է ինքն
յազգէ քահանայիցն օծելոց սակի.
որք էին 'ի կողմանս եգիպտացւոց հրէ
այք. ողջոյն ընդ ձեզ և խաղաղութի։
11 *Ի մեծամեծ վշտաց ապրեալք յայ.
մեծապէս գոհանամք զնմանէ. ոչ զի
զիարդ 'ի մարտ պատերազմի պատրաս
տեալ էաք ընդ առն թագաւորի. զի

նա ինքն եռացոյց. և եհեղ զայնոսիկ։
12 * Որք եկեալ՝ պատեալ՝ պաշարեալ
պահէին զբը քաղաքն ։ քանզի ի ժա-
մանակի իբրև դիմեաց ինքնին իշ-
13 խանն ի կողմանս պարսից ։ * Լ՚նթիւ
անհամար զօրացն հանդերձ. և անդէն
անկան՝ կործանեցան շուրջ զանմեայ
տաճարատն . ի խորհուրդ յիմարուե
խորհեցան նոքա . զնեեմեայ տաճա-
14 բատն ։ * Օ՚ի իբր քննակութիւն ինն հա
սեալ կայր ի տեղի անդր ինքնին ան
տիոքոս՝ և որք ընդ նմա բարեկամքն
էին առնուլ զգանձան նմա, իբրև ի
պատճառս վարձանաց համարի ։
15 * Լ՚ռաջի արարին քահանայք տաճա
բին զնմա։ և նա յօժարեցաւ գալ, մոա
նել սակաւուք ի ներքս . իբրև եղև
միջամուտ սրահիցն համարձակ . ըզ
դրունն առին զարտաքինս պարս-
պայն՝ ընդ որ եմուտ անտիոքոս ։ * Լ՚ռ 16
բացին զպատուհանս գաղտնիս . որք
ընդ առաստաղակալքն էին . և ընդ-
այն սկսան հոսել վիրգս մեծամեծս.
և անդէն զառաջնորդն գնդապետն հան
դերձ սատակեցին ։ իբրև զնոսա ի
ներքս յօշեցին, հանին զկառափունն՝
և ընկեցին ի պրպտին ի մէջ զօրացն։
17 * Ա՚ստն այսր ասի օրհնեալ Լ՚ծ. որ
18 եա ՚ի ձեռս զամպարիշտս ։ * Լ՚րդ
մէջ իբրև կամեցաք ի քսաներորդի ի
հինգերորդի քսաղև ամենեան սրբել
պատաճարն . լաւ համարեցաք զայս և
ձեզ յուցանել . զի և դուք արասջիք
իբրև զօրհնս տօնիցն՝ և սաղաւարտ
Հարացն՝ և հրոյն ։ ոչ՝ չինեալ նեեմի
զտաճարն և զսեղանն . յորում մնատու
ցաներ զպատարագն ողջակիզացն ։
19 * Ո՚ստղ ի ժամանակին՝ յորում վա
բեցան Հարքն մեր ի կողմանս պար-
սից ։ որք այնց ժամանակաց պաշտօ-
նեայք քահանայքն էին . առին ի սե-
ղանոյ անտի զՀուրն ի ծածուկ . և տա
բան՝ Թաքուցին ի խոռ կողմանցն
անջուր ջրհորոյն . անդ զգուշութիւն
զտեղին հետախաղաղ ծածկեին . զի
ամենեքեան տեղին անեւոյթ լինի ։ * Իբրև 20
անցին ամք բազումք . և իբրև կամք
եղեն Լ՚Ա . առաքեաց նեեմի Հրոյն՝
Հրամանաւ պարսից արքայի , զթո-
ռունս քահանայապետիցն այնոցիկ .
որոց ծածկեալ Թաքուցեալ էր զՀուրն՝
գի բերցեն ։ նոքա իբրև եկին , պատ-
մեցին՝ և ասեն . բայ՝ Հուր ինչ մեք
անդ ոչ գտաք . բայց գաւազ մեք ջուր
անդ դանդաղամած՝ Թանձրացեալ ։
* Լ՚պա եա նոյա Հրամանն երթալ 21
մնոց առնել՝ և բերել . և իբրև եղև
ժամ պատարագացն ողջակիզաց ,

Հրամանն եա քահանայապետան նեեմի
ցանել զայն ի վէր փայտիցն և պատա
22 րագայն ։ * Լ՚ր իբրև զայս արարին.
փոքր ի ժամանակ եանց ի վերայ. և
արեգակն պշղղ ամպագոյն ի վերայ
ծագեաց . բորբոքեցաւ բոց Հրոյն ի
վերայ փայտից սեղանոյն . և մաշեաց
զողջակէզսն . զի սքանչացեալ էին ա-
23 մենեքեան ։ * Զայն առին՝ սկսան օրհ
նել քահանայքն մինչդեռ ողջակէզքն
կատարեին . բայց առաջնորդքեր յօնս
Թան իբրև ի բերանոյ նեեմեայ . և
24 այլքն զկնի կացին ։ * Լ՚ր եր աղօթիցն
օրինակ այս։ Տ՚ր Տ՚ր Լ՚ծ ամ արարա
ծոց . ահեղ . հզօր . Ճշմարիտ . արդար՝
և ողորմած . դու միայն Թագաւոր
25 քաղցր ։ * Ո՚ւ միայն ես . որ մատա-
կարարես ամ զամ. դու միայն ես ար
դար՝ և Ճշմարիտ ամենակալ յաւիտե
նից . որ առլեցուցանես զնէլ յամ
չարեաց . որ արարեր զՀարս այնպէս
26 ընտրեալ . և սրբեցեր զնա ։ * Լ՚նկալ
զպատարագս քոյս՝ և պահեա դու զժա-
ղովուեան քոյ՝ և պահեա դու զժա-
27 ռանգութիւն քո ։ * Ա՚րբեա և ժողովեա
զցրուեալ գերութենէ մերոյ . ազատեա
զայնոսիկ . որք կան ի ծառայութենէ
անարգելոց և պղծոց . Հայեաց ի ծա-
ռայս քո . ծանիցեն Հեթանոսք՝ եթէ
28 դու ես Լ՚ծ մեր ։ * Հար Հարուճածով
քովք զայնոսիկ . որք բռնադատեցին
զմեզ՝ Հեթանոսք պիղծք և անար-
դեալք . որք այժմ Հպարտացեալք և
ամբարտաւանեալք են ի վէր մեր ։
29 * Լ՚ռ անկեա դու զժողովուրդ քո ի
30 տեղիս սրբութե քոյ ։ * Լ՚ր քահանայքն
31 օրհնէին զօրհնութիւն իբրեանց ։ * Լ՚ր
ողջակէզքն տակաւ վառեալք՝ բոր-
բոքեալք մաշէին . և իբրև վախճան
եղև պատարագացն , զջուրն մնացեալ
Հրամայեաց նեեմի զվիմօքն արկա-
32 նել ։ * Լ՚ր իբրև այս եղև . առաւել
բոյն ի վեր բորբոքեցաւ . և իբրև բո
յսին նշոյլք եղեն . դարձեալ միսան-
գամ վառեցաւ՝ բորբոքեցաւ սեղանն.
և որինչ էր մնացեալ՝ և այն մաշեցաւ։
33 * Լ՚ր իբրև իբրն այն Համարձակ յայտ
նեցան . և քանք ի Թագաւոր անդր
Հասին . և եկին՝ տեսին զտեղին յոր-
ում զՀուրն Թաքուցեալ էր քահա-
նայիցն գերելոց , ջուր բղխեցաւ .
ուստի և քահանայքն՝ որք զնեեմեան
էին՝ զողջակէզսն իբրեանց կատա-
34 րեալ սրբեցին ։ * Լ՚պա իբրև կ՚Հաս
Թագաւորն իրացն Հատատուեցաւ ի
վերայ , Հրամայեաց շուրջ փակել
35 զտեղին . և տաճար չինեցին ։ * Լ՚ր
սմա կամեր ընորհս առնել Թագա-
ւորն.

ւորն, անուխ տայր պարգեւս. եւ ում
տայր բաղում ինչս, մատուցանէին
նմա ։ *Եւ անուն եդին նմա՝ որք զնէե 36
միաւն էին՝ նեփթէ. որ թարգմա_
նեալ կոչի սրբիչ ։ այլ կարգային զա_
նուն նորա բաղումք, եփրաթայ ։

Գլ. Բ.

Եւ գտանի այս գրեալ յիմաստեանս 1
առաջինս. եթէ երեմիա մարգա
րէ հրամանն ետ առնուլ 'ի հրոյ անտի
յայնմանէ յետնոց նշ. որպ ցուցանէ.
եւ ետ պատուէր մարգարէն զաւակի
Երեմ. 29.7. նշ. որք յետնոցայն էին ։ *Եւ օրէնս 2
եւոնգա. զի մի մոռասցին զհրամանս
Տն. եւ մի մոլորեսցին 'ի խորհուրդս
իւրեանց. յորժամ տեսանիցեն կուռս
քանդակեալս. պատկերս կերպարա_
նեալս՝ ոսկեղէնս եւ արծաթեղէնս. եւ
որ զնոքօք զարդ ինչ իցէ ։ *Եւ զայլ 3
պատուիրանաւն. մի մոռանալ զօրէնս
'ի սրտից իւրց ։ *Եւ էր գրեալ 'ի մա_ 4
տեանս անդ այսպէս. իբրեւ զվրան
ժամուն. եւ զտապանակ կտակարա_
նացն հրամայեաց մարգարէն՝ ըստ
երկնաւոր հրամանին՝ ընդ իւրեանս
Բ.Օրէ. շրջեցուցանել. իբրեւ ելանէր մօսէս
34.1. 'ի լեառն անդր տեսանել զժառանգու
թիւն Այ ։ *Արդ եկն՝ եհաս երեմիա 5
մարգարէ 'ի տեղի անդր. եւ անդ եգիտ
այրս ամուրս անտառախիտս ։ զվրան
ժամուն՝ եւ զտապանակն կտակարա_
նացն՝ եւ զսեղանն խնկոց անդր տար_
եալ դնէր 'ի ներքս. եւ զդրունսն ինք
նին առարկանէր ։ *Եւ անդէն մա_ 6
տեան. որք ընդ նմայն իսկ էին՝ նշա_
նակել զտեղին. եւ ամենեւին Ճանա_
պարհի տեղի անդր ոչ կարացին գտա
նել ։ *Իբրեւ զգաց երեմիա՝ պատու 7
հասել սկսաւ զնոսա՝ եւ ասէ. իբրեւ ոչ
գիտէիք՝ եթէ յանծանօթ հրամանէ
զտեղիդ կայուցանել՝ մինչեւ հաճես_
ցի Տրն տերանց ընդ արարածս իւր.
եւ ժողովել հրամայեսցէ Ած զժողովս
ժողովրդեան իւրոյ ։ *Եւ ապա Տր 8
յայտնեսցէ զայս. եւ երեւեսցին փառքն
Տն 'ի սիւն ամպոյն՝ որպէս եւ 'ի ժամա
Գ Թագ. նակին մօսէսի. որպ եւ սաղոմոն աղա_
8.11. եւ չեաց. զի տեղին սրբեսցի Տն ։ *Յայտ 9
62. էին այսպէս առնէր. եթէ իմաստու_
Բ.Մն. թե խորհրդով մատուցին զպատա_
6.14. րագ նաւակատեացն. եւ զկատարե_
Ղեւ. լեաց տաճարին ։ *Որպէս եւ մօսէսն 10
9. 24. եկաց յաղօթս առ Տէր. եւ էջ հուրն
յերկնից եւ մաշեաց զփայտսն. եւ զող_
Բ.Մն. ջակէզս պատարագացն. Սոյնպէս եւ
7. 1. սաղոմոն եկաց յաղօթս. էջ հուրն՝ եւ
մաշեաց զողջակէզսն 'ի վր սեղանոյն ։

11 *Զի մօսէսի ասէր հրամայեալ ու_ Ղեւ.
տելի առնել զվասն մեղացն. իջանէր 10. 16.
հուրն՝ եւ մաշէր զպատարագսն ։ եւ 17.
12 *Սոյնպէս եւ սաղոմոն առնէր զայն
13 զութ օրն 'ի գլուխ ։ *Եւ խնդրէին 'ի
հին մատեանս 'ի գիրս հարցափորձից.
որ առ ամօքն նէեմեայ եղեալ. եւ իբրեւ
զիւր եդեր զայս ամ ժողովէր. եւ զայլ
մատեանս թագաւորաց, եւ մարգա_
րէից. եւ դաւթի ինքնին գլխովին. եւ
զայլ հրովարտակս 'ի թագաւորաց՝
որ վս ինչ ինչ 'ի պատիւ թագաւորաց
'ի տաճարին եդեալ էր. զամ 'ի մի վայր
14 կուտէր ։ *Սոյնպէս եւ յուդա զամ կոր
ծանեալն 'ի պատերազմաց անտի, եւ
զցրուեալսն 'ի մի վայր ժողովեաց. եւ
15 այժմ բովանդակեալ պահի ։ *Եւ
արդ՝ որպէս զխարդ եւ պիտոյ իցէ ձեզ՝
յղեսջիք. եւ մեք տացուք բերել ձեզ ։
16 *Եւ զայն ինչ բարի գործեսջիք. ե_
թէ զաւուրս տօնիցն հանապազորդ
17 առնիջիք ։ *Եւ Այլ Ած. որ փրկեաց
զամ ժողովուրդ իւր. եւ դարձոյց զամ
'ի ժառանգութի զարքայութի. եւ
18 զքահանայութի եւ զսրբութի ։ *Որպ Բ.Օրէ.
խոստացաւ 'ի ձեռն կտակարանացն. 30. 3.5.
յուսամք 'ի Տր՝ եթէ հուպ ընդ հուպ
19 ժողովեսցէ 'ի սրբ տեղին ։ *Զի փր_
կեաց իսկ զմեզ 'ի մեծամեծաց չա_
րեաց. եւ զտեղին 'ի սրբութի դարձոյց ։
20 *Եւ Այլ վասն յուդայ մակաբեանց՝ եւ
եղբարցն սորին. եւ տաճարին մեծի
սրբութե. եւ սեղանոյն նաւակատեաց ։
21 *Եւ վս ընդ երեւիլ անտիոքայ. կամ երեւելի
ընդ քաջահայր որդի նորա Ճակատա
22 մարտս ։ *Կամ որինչ յերկնից յայտ_
նութիք եղեն. այն որինչ վս քաջու_
թե պնդութե օրինացն. եւ կամ որ
զքաջութի 'ի միոյ դնել. եւ սակաւուք
զբազումս, որք զաշխարհս յաչս դնէին
23 զխուժ դուժ ազգս հալածել ։ *Կամ
զհռչակաւոր ընդ ամ տիեզերս զշքեղ
տաճարն վերստին շինել. կամ զմեծ
քաղաքն ամէ յամէ յազատութի հա
նել. կամ զի ամ քաղցրութբ հեզու_
թե. խաղաղութբ Տն Այ ընդ մեզ
24 հաճ լինիլ ։ *Զայն ամ որինչ միան_ հաճոյ
գամ 'ի ձեռն յասոնայ կիւրենացւոյ.
'ի հինգ գլուխ դպրութե ցուցեալ է.
զայս ամ ջանասցուք 'ի մի գլուխ հրա
վարտակիս կարճ 'ի կարճոյ ցուցա_
25 նել ։ *Զի հայեցաք մեք 'ի խուռն
մեծաթիւ համարոյ բանիցդ. եւ որ 'ի
ներքս ծանրութի թուիցի. որ կամի
26 մխիլ 'ի բանս մատենիցդ ։ *Այդրին
ընդ դոյն թաթաւեալ վս թանձրու
թե հիւթոյ՝ խորութե բանիցդ՝ հո_
գացաք մեք առնել ընթերցանելեացն
զբօ_

զբօսանս՝ իմաստնոց յիշատակ առանց
աշխատութեան, և ամենեցուն անեղծ
անարատութեան: *Նմա մեզ՝ որ զաշխա 27
տութիւն զայս յանձն առաք վասն համա
ռօտ բանիս. մի դիւրին ինչ ջան հա
մարիցիք. կամ սակաւ քրտանց և տքն
ութեանց: *Այլ որպէս զի պատրաստիցի 28
առնել ուրախութիւն կոչնոց ընկերաց.
մեծահաց գործիցէ, զընկերացն ու
րախութիւն, և ոչ զիւր դիւրութիւն խոր
հիցի. սակայն վասն բազմաց հաճու
թեան ջան յանձն առաք: *Զճշդելն, 29
և զճշմարտելն զայն առաջնոյն թո
ղաք. զեղչելն և զբազկելն. և զկար
ճառօտ բանն 'ի համառօտ կացուցա
նել, զայն մեք ոչ դանդաղեցաք: *Որպէս 30
վասն հասարակաց շինութեան ապարա
նից՝ բազմաց զգործ բաժանել. բայց
սկիզբն և կատարածն շինուածոյն 'ի
բուն ճարտարապետ անդր հայի. այլ
ծեփելն՝ գունելն՝ և արծնելն՝ և նկա
րելն՝ այն 'ի զարդարիչն անդր հայի:
*Այնպէս և մեր հարցանելն՝ և փոր 31
ձելն՝ և քննելն՝ և զհետ վարել ճշմար
տութեան բանիցն. և զխորին խորհուրդս
խորագիտութեան 'ի վեր բերել. որ ա
ռաջնորդ եղև այնց դպրութեանց, 'ի նմա
նէ խնդրելի է: *Այլ զհամառօտ՝ և 32
զկարճառօտ բանից՝ որ այժմիկ պատ
մելոց յանձն առեալս իցէ, յինէն պա
հանջելի է: *Արդ աստի սկիզբն ա 33
ռասցուք բանիցդ պատմել խոստացե
լոց. այսչափ ինչ զօդեսցուք յառաջին
անդր. բայց սակայն և այս անագո
րոյն մնաց է՝ զճառս մատենին յառա
ջագոյն երկայնել՝ և զմատեանն 'ի
գլխովին համառօտ, և կարճառօտ
պատմել:

ԳԼ: Գ.

Սրբոյ քաղաքին ամենայն խաղաղութեամբ 1
բնակեցելոյ՝ և օրինացն ճշմար
տութեան իբրև զի գեղեցիկ իսկ պար
հեցելոց. վասն Ոնեայ քահանայապետի
'ի բարեպաշտ չարեաց սրբութեան: *Զի 2
իբրև հարկ իսկ լինէր. և թագաւո
րացն ինքնին մեծարել զերևելի տա
ճարն հրովարտակօք. պատարագօք՝
և գրովք բազմօք: *Մինչև սելև 3
կոս արքայ կողմանցն ասիացւոց 'ի
ապաս պաշտաման՝ ելիւրոց միոյ զամենայն
ապաս պաշտաման 'ի պատարագս ող
ջակիզացն ծախէր: *Սիմօն ոմն անուն 4
'ի բաղդեղ գնդէ անտի առաջնորդէր
տոհմին իւրոյ՝ ընդ հակառակս ելքա
հանայապետին՝ վասն իւր 'ի քաղաք
անդր անօրինելոյ: *Իբրև յաղթել 5
ինչ և առնել ոնեայ ոչ կարաց. եկն

Բարեպաշտ տութէն և հոգւոյ ատեցողի չարի

եկաց առաջի ապողոնեայն դրասեանցն
[illegible] այնմ ժամանակի ասորին ասորւոց՝
որ և տաճկաստանի սպարապետ էր:
6 *Նա պատմեաց նմա եթէ բազումք
են գանձք՝ որովք լցեալք պահեն զգ
տուն գանձիցն՝ յերուսաղէմ. և ազգի ազգի
գանձիցն զթիւ իսկ և զհամար ոչ մար
թի ոք ունիլ. և պարտ այնմ էր՝ ասէ.
ընդ բռամբ արքային 'ի ապաս զոհիցն
7 պաշտել զայն: *Զանձնեաւ ապո
ղոնիոս և թագաւորին. որում նմա պատ
մեցաւ վասն գանձիցն ցուցանիլ. նա
յառաջ կոչեաց զհեղիոդորոս զհան
դերձապետն իւր. հրաման ետ նմա
զայսչափ գանձ հանել 'ի քաղաքէ ան
8 տի: *Վաղվաղակի չու առնէր՝ խա
ղայր՝ գնայր հեղիոդորոս. պատճա
ռանօք իբրև ասորին ասորւոց՝ և տաճ
կաստանի քաղաքացն զաշակերտութիւն
շրջիլ. բայց 'ի սրտէ զհրաման թա
գաւորին վաղվաղակի կատարէր:
9 *Իբրև եկն՝ էհաս յերուսաղէմ, անդ սիրով
քահանայապետն և քաղաքն ամենայն ըն
կալան զնա ամենայն առատութեամբ. սկսաւ
նա պատմել նոցա. որում ցուցին արքային:
և ասէ. ո՞ կամ ընդ էր՝ կամ որում ամ
բաստան եղեն զձեռն առ արքայն. և
կամ արդարև այնչափ գանձք իցեն.
10 զոր ասացին: *Եկաց յառաջ քահա
նայապետն՝ և ասէ. են՝ են արդարև
աւանդք այրեաց և որբոց 'ի պահ ե
11 դեալ: *Իցեն ևս և որկանեայ տու
բեանց առն աւագի. այլ ոչ եթէ այն
չափ որչափ ամբաստանօղն նամակա
գիրն՝ անօրէնն սիմօն խօսեցաւ. ընդ
ամենայն թէ քաղք իցեն քանքարք արծա
թոյ չորեքհարիւր. և քանքարք ոսկ
12 ւոյ երկերիւր: *Այլ զրկել զհաւա
տացեալս՝ վասն մեծապատիւ շքեղ ընդ
ամենայն աշխարհահամբաւ անխաբ տաճարիդ
13 չիք ինչ հնար: *Նա իբրև լսէր զբանս
քահանայապետին՝ զարքունի հրա
մանն 'ի մէջ առնոյր՝ և ասէր, 'ի ապաս
և 'ի պէտս արքունի երթալ գանձիդ
14 այդմիկ: *Որ և ժամ յայտ առնէր.
մտանել՝ համարել՝ առնուլ պատրաս
տէր ըստ հրամանին արքունի. և անդ
լինէր ոչ սակաւ ջան և վտանգ խռո
15 վութեան քաղաքին: *Քահանայքն
ինքնին անկեալք թաւալէին առաջի
սեղանոյն նովին սրբութեան պատմու
ճանաւն. աղաչէին զայն՝ որ վասն աւան
դապահ զգուշութեան զօրէնս հաստա
տեաց. որ զայս ողջ անարատ յիւրա
քանչիւր աւանդատուրս հաւուցա
16 նել մարթասցին: *Անդ էր տեսանել
զտեսիլ քահանայապետին. և զհայելի
միտս իւր. զի տեսիլն և գոյն երե
սացն

սայն ցուցանէր զարտին թախծութիւն
* Զի իջեալ՝ մածեալ՝ պատեալ պա_ 17
շարեր զնա ահ և երկիւղ՝ և սոսկումն
մարմնոյ․ յայնմ ամենայնէ յայտնի էր
տեսանելեացն սրտին տաղտկութիւն ։
* Դարձեալ յիւրաքանչիւր յապարա 18
նիցն դաս դաս մտանէին՝ ՝ի համար աշ
խարհի խնդրուածս․ զի մի՛ յարհա_
մարհանս՝ պատիւ մեծի տաճարին
գնասցէ ։ * Եւ կանայք քրձազգածք 19
ընդ հրապարակս աշխարհին․ արգե_
լականք ՝ի կուսաստանաց անտի ՝ի
դրունս և ՝ի պարիսպս ընթանային․ և
կէսքն ընդ պատուհանս արտաքս կար
կառէին ։ * Եւ ամենեքեան առ հա_ 20
սարակ աղօթից բարբառով զձեռս
համբարձեալ յերկինս՝ մատուցին տա
տանէին ։ * Եւ անդ էր ողորմ տեսիլ 21
տեսանել․ զի առհասարակ անկեալ
մարդկան՝ զաղօթս՝ թաւալելով յեր
կինս մատուցանել․ զմեծապէս սքան
չելի շտապ տագնապի ըստ քահանայա
պետին կարծեաց ։ * Եւ նոքա այն_ 22
պէս թաւալելով անկեալ առ ամենա
կալն կարդային․ աւանդս հաւատա_
ցելոցն ՝ի հաւատացելոյն ողջ անա_
րատ հաստուցանել ։ * Եւ Հելիոդորոս 23
յայտնութեան վճիռն գտանէր․ և մինչ
դեռ նա սպասաւորաւն հանդերձ ընդ
գանձին տուն շրջէր ։ * Որ ՝ի վերայ 24
ոգւոց․ և տէր իշխանութեանց զօրու_
թիւն ՝ի ձեռս իւր ունի․ երևոյթ մի նշա
նի մեծի արար․ զի ամենեքին՝ որք իշ_
խեցին մտանել ընդ նմա , լուծան՝
լքան՝ ընդ արմացան՝ ՝ի պարտութիւն
վատթարութեան մտանեցան յԱյ զօ_
րութենէ անտի ։ * Զի երևեցաւ նց 25
յանկարծ երիվար մի մեծաշուք հեծե
լով հանդերձ․ երևելի զարդու ՝ի վէն
ոսկի վառելով ։ * Եւ այլ երկու արք 26
երիտասարդք հզօրեալք ՝ի զարդ գեղե
ցիկ զարդարեալք առաջի հեծելոյն․
որք մտեան վաղվաղակի յաջմէ և
յահեկէ․ ՝ի մեծամեծս հարուածս
հարկանէին զՀելիոդորոս ։ * Մինչև 27
անկեալ յանզգայ թմբրեալ մերձ ՝ի
մահ բառնային զնա ։ * Որ այնչափ 28
շքով՝ և սաստիւ և սպասաւորաւ ,
մտեալ ճեմէր ՝ի տան գանձին․ արդ
բարձեալ բերէին յանզգայ՝ զչափ ա_
ռեալ ։ * Զի յայտնապէս զօրութիւնն 29
Այ ՝ի վր հասեալ ։ անմռունչ՝ անբար
բառ՝ պակասեալ յամ յուսոյ փրկութե՝
ընկեցեալ յերկիր կիսամահ դնիւր ։
* Իսկ որք զնէեմեաւն էին , զՏր օրհ 30
նէին․ որ փառաւորէր զիւր տեղին
սրբութե ։ և զայն՝ որ փոքր մի յառաջ
խռովութբ լցեալ էր զտաճարն․ յեր
և իլ փառացն ամենակալ Տն՝ խնդու
թբ և ուրախութբ լնուլ․ և անպա_
31 կաս զուարթութբ ։ * Յայնժամ
փութապէս ոմանք յէկելոց անտի․
բարեկիրք՝ աւագք՝ ընկերք զօրավա_
րին․ յոտս հասանէին նմայ՝ խնդրել
՝ի բարձրելոյն գտնէ շունչն շնորհել
նմա ։ այնպէս անկեալ չարաչար․ ՝ի
վերայ յետին ժամանակի այլն ցամա
32 քեալ դնիւր ։ * Խորհուրդ կալաւ քա_
հանայապետն․ գուցէ կարծիս ինչ
տայցէ թագաւորին իբրև դաւով
ինչ ՝ի նմանէ․ կամ ՝ի հրէից անտի
զայրն վնասեալ՝ ՝ի խնդրուածս լինէր․
պատարագս մատուցանէր վասն առն
33 փրկութե ։ * Այն ինչ քաւութիւնսն ՝ի
ձեռս քահանայապետին մատչէին ,
վաղվաղակի նոյն երիտասարդք գային՝
իջանէին առաջի Հելիոդորոսի․ նո_
վին հանդերձով զարդարեալ․ և ա_
սէին՝ բազում շնորհս դու մնեայ քա_
հանայապետի կաջին․ վասն նորա՝
քեզ Տր ՝ի ձեռն նորա զոգիդ շնոր_
34 հեաց ։ * Այլ դու վասն նորա այդ_
չափ տանջանօք պատուհասեալ , պատ
մեսջիր զայդչափ մեծութի զօրու_
թեցն Այ առ ամենեսեան․ և զայս
իբրև ասացին , անդրէն վերացան ։
35 * Հելիոդորոս իբրև անձին զգաստացաւ
կացեալ վաղվաղակի․ ողջակէզս պա
տարագաց մատուցանէր Տն․ ուխտս
և աղօթս մեծամեծս կատարէր Տն ․
որ շնորհեաց նմա զոգին․ և անդէն
՝ի նոյնչափ յառաջին զօրացոյց․ և զքա
հանայապետն զնիայ մեծապատիւ
մեծապարգև մեծարեաց ․ և ինքն
չու արար՝ խաղաց՝ գնաց անդրէն առ
36 թագաւորն ։ * Եւ ընդ ամենայն տե
ղիս ընդր զքանչելիսն Այ՝ վկայու_
թբ ․ զոր ինքնին իսկ իւրովք աչօք
37 տեսեալ լինէր ։ * Թագաւորն իբրև
սկսաւ հարցանել զՀելիոդորոս ․ եթէ
որպէս՝ զիա՞րդ՝ յոր գործ երթեալն
էիր․ զինչ վճռեցեր․ սկսաւ տալ զրոյցս
քանքար տալով և ասէ՝ ո՞հ յերուսա_ եւ ասէ՝ -
38 ղէմ երթեալ երթիցէ ։ * Որ ոք ձեր
թշնամի իցէ ․ և իրաց մեծաց ձերոց
վնասակար իցէ , զնա հրամայեսջիք
յղել․ և գտջիք զնա անտի այսր գա_
նալից չարագան ․ թէ ապրիլ միայն
39 կարասցէ ։ * Զի այնպէս Ճշմարիտ
մեծ զօրութի նստի ՝ի տեղւոջ անդ ․
զի ինքն իսկ՝ որոյ զօրութիւն յերկնից
երկինս է , այցելու և օգնական է նր ․
և որ միանգամ թշնամութբ , կամ
թէ արհամարհանօք յայն տեղի հա_
սանէ, մեծամեծ հարուածօք հարեալ
40 է ․ թէ արձակեսցէ և եթ ։ * Սան
հե_

հեղիոդորայ՝ և գանձին տանն պաշտա_
ընելոյ՝ այսչափ բանք եղեն:

Գլ: Դ:

Այլ վն սիմոնի՝ որ գանձին և գաւա_ 1
առին նամակագիր էր. առաւ_
ել ևս յաճախէր. ամբաստան լինէր
զոնիայ. եթէ նա ինքն գլխովին. որ
զհեղիոդորոսն շարժեալ՝ և ըլկեաց.
և ամչարեացն ինքն է առաջնորդ՝ և
գործօղ: * Եւ զբարերար քաղաքին՝ 2
և զայցելու. և զերախտաւոր ազգին.
և զնախանձայոյզ զվրէժխնդիր օրի_
նացն՝ իբրև զվնասակար իրացն արքու_
նի իշխէր 'ի ներքս առնել կշտամբելով:
* Եւ այնչափ վարէր զհեռ և զնա_ 3
խանձ թշնամութե. մինչև զոմանց՝
զորս 'ի գործ կացուցեալ էր շմաւօնի
մահապարտ առնէր նր: * Եւ իբրև 4
զայնչափ անհնարին տեսանէր հա_
կառակութե ոնիա. դարձեալ 'ի մոլո
րութի անդր հայէր ապողոնեայ. որ
ատորին ատրւոց. և տաճկաստանի
սպարապետն էր. զի և նա չարեաց ըն
կեր՝ և գործոց կցորդ էր սիմօնի. յայն
չափ զմիտս թագաւորին բորբոքէին:
* Անհնար համարեցաւ այնուհետև 5
զհասարակաց օգուտ 'ի մէջ մատուցա
նել՝ առանց օգնականութե թագաւո
րի առն հրամանի: * Մանաւանդ զի 6
տեսանէր՝ սիմոնն անդադար 'ի վերայ
խարդախութեց խորամանկութե ան
հանգիստ ջանացեալ: * Իբրև սելև_ 7
կոս փոխեցաւ յաշխարհէ. և էառ
զթագաւորութին անտիոքոս. որ ան_
ուանեալն կոչիւր երևելի. յասոնն ա_
նուն ոմն՝ եղբայր ոնիայ. ջանացաւ շնոր
թե մտանել՝ և հանել զքահանայութին
յոնիայ:* Խոստացաւ տալ յարքունիս 8
վաթսուն քանքար: * Եւ այլ հարիւր 9
ևս մատուցից՝ ասէ. եթէ գործն յաջո
ղեսցի. զքաղաքն 'ի ձեզ նուաճեցից.
թատրոնս՝ և զկրկէսս շինեցից՝ ասէ. և
եմացուցն 'ի ձեր անուն անտիոքացիս
գրեցից: *Իբրև յանձն էառ թագաւ 10
որն. եգիտ նա զիշխանութին՝ զոր խնդ
րէր՝ հետ ընդ հետ վաղվաղակի. 'ի
յունաց հեթանոսութի անդր՝ զընտա_
նի օրէնս դարձուցանէր: * Զպատր_ 11
գևսն զառաջինսն զարքունի՝ որք 'ի
ձեռն յօհաննու, և պտողոմեայ հօր 'ի
ժամանակի հրեշտակութեն, որ վն
հասարակաց սիրոյ օգնականութե կա
տարեցան, և զկրօնսն օրինաւորս՝ 'ի
բաց քակեցին. և անօրէնութե նոր
կրօնս 'ի ներքս արկանէր: * Զի 'ի 12
ներքս ընդ բերդաւն իսկ թատրոնս
և երիտասարդանոցս շինէր. ժիրա_

ոչ մօնէ

Եւ զէրուս աղէմա_ ցիս

Եւ Եպօղէ մոսէ

ժիր մանկունս ընտրանաւ զայն յու_
սումն արուեստականաց տային:
13 * Եւ այնպէս իմն եռանդն ածէին.
սկիզբն արարեալ այլազգութե և հե
թանոսութե. վասն ամպարիշտ և չքա
հանայապետութե յասօնայ անհնարին
14 մոլորութեն: * Զի յայնմ հետէ թո
ղեալ էր զպաշտօն պատարագաց սե_
ղանոյն. և զսպաս տաճարին. և արհա
մարհեալ էր զողջակէզս պատարա_
գացն. յօժարադոյն տային զանձինս
իւրեանց ազգ քահանայիցն 'ի մար_
զիչս և բռնամարտիկ մարտիկս. և յա
նօրէն բաշխոյս կաքաւչայ. և արդնըն
կէց տեգընկէց ձայնատուր ժամանա
15 կաւն: * Եւ զհայրենի պատիւն առ
ոչինչ համարէին. բայց զանօրէն հե_
թանոսութե փառս՝ քան օրհնութե
16 փառս լաւ համարէին: * Վն այսորիկ
իսկ և վաղ հասանէին 'ի վր նոցա նե
ղութիւնք. որք շուրջանակի հասեալ՝
պատեալ՝ պաշարեալ պահէին. զի որոց
ընդ բարս և ընդ գնացս նախանձէին՝
և կամէին ամե նմանիլ նց, զնոսին
իսկ դահիճս՝ և թշնամիս՝ և տանջիչս
անձամբ անձին իսկ ինքեանց պատ_
17 րաստեցին:* Զի անօրինել ոք յԱծ_
եղէն օրէնսն դիւրին մի համարեսցի.
այլ զայս ամ, ժամանակդ որ առաջի
18 կայ՝ յայտնապէս պատմեսցէ: * Արդ
է ժամանակ՝ եկեալ հասեալ էր դից
պաշտօնն. հինգ ամեակ պաշտաման
'ի ծուր քաղաքին առաջի թագաւո_
19 րին: * Յայն պաշտօն՝ անօրէնն յասօն
խաղալիկս և հանդիսականս 'ի սուրբ
եմ քաղաքէ՝ անուանեալս անտիոքա
ցիս յղէր: 'ի ձեռն տայր նց երեքհար
իւր սատերս 'ի գինս զոհից վահագնի
պաշտաման. իբրև եկին՝ բերին՝ որք
բերէինն. աղաչեցին՝ զի մի խառնես_
ցեն զայն արծաթ 'ի զոհս կռոցն պաշ
տաման. զի ոչ էր պարտ և պատշաճ
'ի սուրբ տեղւոջէ անտի գանձ եր_
թալ զոհից կռոց դիւացն պաշտաման:
20 * Նոքա որք առինն՝ առնուլ առին վն
այնորիկ. որ ետ բերել յանուն զոհիցն
պաշտաման. բայց վասն բարեացն
աղաչելոյ՝ անդր ինչ ոչ խառնեցին.
այլ ետուն 'ի գործ արքունի վարձ նա
21 ւաց գործելոյ: * Այլ հետ հրեշտա_
կութեան ապողոնեայ մնեսթեանց
յերկիրն եգիպտացւոց՝ պտողոմէոս
թագաւորին՝ և էառ զթագ փոխանակ
նր անտիոքոս. և իբրև ստարացեալ
իմն համարեալ զանձն իւր կողմանցս
այսոցիկ. դարձ արար՝ խաղաց՝ գնաց՝
եկն 'ի կողմանս յոպպէացւոց. անտի
22 եկն յեմէմ: * Եւ անդ մեծապէս մե_
ծա_

որք ձեւ ժամանակ

ծարեցաւ 'ի յասոնէ՝ և 'ի քաղաքէ ան
տի. մեծամեծ սքանչելեօք՝ ջահիւք՝
և բոցաձաձանչ սպասուք. ապա ան
տի խաղաց՝ գնաց 'ի կողմանս տաճ
կաստանի ամ զօրօք հանդերձ: *Ապա 23
յետ երից ամաց ժամանակի՝ արձա
կեաց յասոն զմենելաւոս զեղբայր սի
մօնի մոլեկանի. 'ի ձեռն ետ նմա տա
նիլ առ արքայ զգանձն զարքունի:
*Նա իբրև յանդիման եղև արքային՝ 24
և մեծարեցաւ 'ի նմանէ. յանձն իւր
սկսաւ կորզել զքահանայութիւն. և
զանցանել զյասոնաւ. յաւել ևս 'ի սակ
գանձին այլ ևս երեքհարիւր քանքար:
*Նա առեալ գայր զհրաման իշխանու 25
թե արքունի. եկն՝ էհաս. քահանայա
պետութե լինչ արժանի գործ ոչ գոր
ծեր. այլ զսրտմտութի դառնութե
չարաչար գազանաց վարեալ բերեր:
*Նա յասոնն այն որ դաւեալ զիւրոյ 26
եղբօր զքահանայութիւնն. նոյնպէս այլ
տարաւ. և նա փախստեայ յերկիրն
ամոնացւոց փախստական անկանիւր:
*Իսկ մենելաւոս առնուլ էառ 'ի 27
ձեռն զիշխանութի քահանայութենն.
բայց զայն ինչ՝ որ թագաւորին խոս
տացեալ էր. ողջ ոչ կարէր առնել. իբ
րև ստիպել՝ պահանջել՝ տագնապել
սկսաւ հազարապետն զդղեակ բեր
դին: *Զի նմա էր յանձն, հանել զհ 28
հարկ աշխարհին. վն այսորիկ և երկո
քին 'ի միասին 'ի դուռն կոչեցան: *Նա 29
իբրև ետես մենելաւոս. եթէ չէ
զհարկն 'ի դուրս հատուցանելոյ՝ ե
մուտ ընդ փոխանակաւ՝ և կացոյց փո
խանակաւ զլիւսիմաքոս զեղբայր իւր.
և սուստրատոս կայր 'ի վր գործոյն
կիպրացւոց: *Իբրև այս իրք այսպէս 30
հաստատեալ կային, դէպ եղև տար
սացւոց և մալոտացւոց ժամանակն 'ի
գրգիռ վայրի դիպել. վն զի տուեալ
էր զնս յուտեստ անտիոքիդեայ հար
ճի թագաւորին: *Փոյթ կալաւ չու 31
առնել ցածուցանել զնոսա. եթող 'ի
տեղւոջ իւրում փոխանակ իւր զանդ
րոնիկոս 'ի նմին պատուհի: *Իբրև ժա 32
մանակ իւր պարապոյ գտեալ մենելա
ւոս՝ մեղմով սպաս ոսկի գողացաւ 'ի
տաճարէ անտի. և ետ նա անդրոնի
կեայ. նաև այլևս վաճառեալ էր նր
'ի ծուր. և յայլ քաղաքս. որք շուրջ
զնովաւ էին: *Զոր յանդիմանութե յայտ 33
առնէր օնիա յամրէ անտի. յոր ան
կեալ էր 'ի դափնայ անտիոքացւոց:
*Վն այսորիկ մենելաւոս. իբր իւր 34
առանձնեալ զանդրոնիկոս՝ աղաչէր զնա.
և նովաւ ջանայր զօրամբ արկանել
զօնիայ. նա գնաց՝ և եկն առ օնիայ՝ և
դէ

հաւատացուցանէր նմա նենգութբ՝
և դաշինս հաւատարիմս կռէր ընդ
նմա ծանր ծանր երդմամբք. սակայն
հաւանեցոյց զնա ելանել յամրէ ան
տի. թէպէտ և էր ինքն 'ի միտս կաս
կածոտ. և անդրէն իբրև էհան՝ խող
խողեաց. ամենևին ոչ զանդիտեաց
35 յիրաւանցն արդարութե: *Վն այսորիկ
ոչ միայն հրեայք՝ այլև հեթանոսք բար
կացեալք՝ և կարիս առնէին վն առն
36 տարապարտուց մահուանն: *Այլ
թագաւորն իբրև դարձաւ 'ի կողմանցն
կիւլիկեայ. առաջի անկանէին քաղա
քացք քաղաքաց հրէայք, և հեթանոսք
սրտցաւութբ. վասն առնն զուր մե
ռելոյ. տարապարտուց կորուսելոյ:
37 *Յայնր վերայ սրտիմտօք անտիոքոս
գժդմնեցաւ՝ 'ի դութ դարձաւ՝ և ար
տասուեաց յոյժ 'ի վերայ սրբութե և
38 բազում իմաստութե առնն: *Նա զկե
ռաւ՝ բորբոքեցաւ 'ի սրտմտութի բար
կութե իւրոյ. և անդրէն հրամայեաց
զգլխով ածել զծիրանիսն՝ զանդրոնի
կոս մերկացեալ 'ի հանդերձէ իւրմէ,
շուրջ ածել զքաղաքաւն՝ և 'ի նմին տե
ղւոջ ուր զօնիայն անօրինեցին, հրա
մայեաց սպառափն հարկանել զանօ
րէն մահապարտին. 'ի Տէ զարժանի
տանջանս 'ի վր չարագործին հատու
39 ցելոյ: *Իբրև բազում գաղտագողոնք
լինէին գանձին 'ի ձեռն լիւսիմաքեայ
մենելայի խորհրդով. և համբաւն 'ի
դուրս յաճախիւր. ժողովեցան զօրքն
'ի վր լիւսիմաքեայ. քանզի բազում
նուագս ոսկիս կորուսեալ 'ի միջոյ հա
40 մարուէն: *Իբրև սկսան զօրքն տագ
նապիլ. և լի բարկութբ 'ի վր յարձա
կիլ վառեցոյց լիւսիմաքոս արս իբրև
երիսհազարս. սկսաւ ձեռն 'ի գործ
առնել. և սկիզբն առնել գործոյն չա
րութե. արամբ միով, որ խուժա
դուժ ևս էր տեսանելով քան զմտօքն
41 թանձրութբ: *Իբրև տեսին լիւսի
մաքեայ զդաւն և զնենգութին՝ որ
եղև. խռնեցան վաղվաղակի. ձեռն 'ի
գործ առնէին. ոմն վէմ՝ ոմն վիրգս՝
կէսքն զաւազն՝ զխիճն հողախառնն
առ հասարակ յարձակելոցն 'ի վերայ
42 արկանէին: *Զոմանս վիրաւորս.
զոմանս կառափնատս արձակէին. զբա
զում սպանանէին. զամենեսին հա
սարակ 'ի փախուստ դարձուցանէին.
զնոյն ինքն սեղանաղերծ, զտաճարա
կապուտ՝ զգանձի տաճին արկանէին
43 փախստեայ: *Վն այսր ամի լինէին
44 դատաստանքն ընդ մենելայ: *Իբրև
եկն՝ և էջ թագաւորն 'ի ծուր. յան
դիման նր իսկ էին դատաստանքն. զե
Xxx եկին

ենէին արք երեք 'ի ծերակոյտ ժողովը
դէնէն յուցանել զիրաւունս ։* Իբրև 45
'ի պարտուն մատնեցաւ մենելաւոս ,
խոստացաւ գանձ բազում տալ պտո-
ղոմեայ' որ հաճեսցի զմիտս նորա ։
*Առն այսորիկ առեալ զթագաւորն 46
մեկուսի' իբրև զզօսանաց պատճա-
ռանաւ' շրջեաց զմիտս նորա ։* Զամ 47
չարեացապարտ զմենելաւոս արձա-
կել 'ի պարտեաց անտի . և զայնս տա-
ռապեալս . որք թէպէտ առաջի խաղ-
տեաց դատ վարէին , իրաւունս գտա
նէին արձակեալք' դատեալք անարատք
երթային . զնոյն մահապարտս արարին ։
*Եւ վաղվաղակի զանիրաւութիւն զսպա- 48
ռման զնոքօք արկանէին . որք վասն
քաղաքին' և գնդին' և սպասուն սր-
բութեան դատել եկեալ էին ։ *Եւ վն 49
այսր ամի ծուրացիքն չարատեաց ա-
ռատապէս սրտացաւութեամբ հանդեր
ձեցին զնոսա ։ *Եւ յուղարկեցին զմե- 50
նելաւոս վն իշխանացն գժտութեան
և ագահութեան . հաստատեալ կայր չա
րախօսութեան մեծեղեան փառաւ քա-
ղաքացւոց իւրոց կացուցանէր ։

Գլ. Ե.

Եւ ժամանակօք երկրորդ գալըստ- 1
եանն . անտիոքոս յերկիրն եգիպ
տացւոց առաքէր 'ի կողմանցն անտիո
քացւոց ։ * Իբր դէպ լինէր ընդ ամ 2
քաղաքն յաւուրս քառասուն' երևիլ
ընդ երկինս և ընդ երկիր . արս հե-
ծեալս տիգաւորս 'ի զարդ ոսկւ ։*Աա 3
ռեալս' զարդարեալս' արշաւեալս' յար
ձակեալս ընդ միմեանս . անդ էր լսել
թնդիւն վահանաց . շկահիւն զաղե-
ղանց . շողիւն սուսերաց . շաչիւն նշա-
նաց . գշառաչիւն նետից . զփայլիւն
զոսկեղէն վառելոց ։ *Եւ ամենեքին 4
անկեալ աղաչէին զայն նշանս 'ի բարի
ինչ կատարել . *Իբրև շաւինդն իմն 5
յանկարծուստ համբաւի հարկանէր .
իբրև անտիոքոս փոխեալ յաշխարհէ .
առնոյր յասօն ոչինչ պակաս քան զհա
զար վառեալ' և յարձակէր 'ի վր քաղա
քին . և նոքա վր յանկարծ դաւոյն' 'ի
պարսպէ անտի մերժէին . և մենելաւ
ոս արշաւեալ 'ի քաղաք անդր հասա
նէր ։* Այլ յասօն մոլեգին' յանխնայ 6
անկեալ գործէր մեծամեծ կոտորած
քաղաքացւոյն իւրոց' իբրև 'ի մէջ թշ
նամեաց գործէր . և ոչ ածէր զմտաւ
զտոհմային զքաղաքակից զընկերու-
թեան բարեկամութիւն ։ զի 'ի թշուառու
թիւն դարձուցանէր . այլ համարէր իբ
րև 'ի մէջ թշնամեաց անկանիլ ստէպ
ստէպ տագնապիլ . և 'ի վր թշնամւոյն

7 նշան յաղթութեան կանգնել ։ *Եւ պա
իշխանութեան ինչ ոչ կարաց հասանել .
բայց 'ի կատարած զամօթ դաւոյն
ժառանգէր ։ և ինքն փախստեայ ան-
8 կանէր 'ի կողմանս ամոնացւոց ։*Յուամ
մէ չարաչար կատարած վախճանի ըն
դունէր . արգելեալ 'ի բանտի արետայ
արաբացւոց արքայի . դարձեալ 'ի քա
ղաքէ 'ի քաղաք փախստեայ լինէր . ա-
տելի' հալածական յամենեցունց իբրև
ապստամբ յօրինացն . պղծեալ' զար-
շեցեալ' իբրև զաւառի և գնդի և քա
ղաքի մատնիչ' և դահիճ . յերկիրն ե-
գիպտացւոց հեռացեալ թաքեաւ ։
9 *Բազումս անթիւս յիւրմէ աշխար
հէ օտարացոյց . և ինքն օտարացեալ
10 'ի մէջ օտարաց կորեաւ ։ *Անուղ .
անխնամ . անհանդերձ . և գերեզ-
մանացն չեղև հայրենեացն արժանի ։
11 *Իբրև աղդ եղև արքայի վն իրացն
եղելոց . ապստամբ համարեցաւ թա
գաւորն զհրէաստան յիւրմէ . վասն
այսորիկ փութացաւ' գնաց յերկրէն
եգիպտացւոց գազանացեալ սրտիւ .
եկն' էառ զքաղաքն 'ի սուր սայր սու
12 սերի' և 'ի տէգս նիզակաց ։ *Եւ հրա
ման ետ զօրացն' որ 'ի բուռն անկցի'
յանխնայս կոտորեսցեն . և որք յա-
պարանս ամրասցին' անդէն սատակես
13 ցեն ։*Եւ անդ լինէր ծերոց և տղայոց
առ հասարակ կոտորած . կանանց և
մանկանց առ հասարակ սատակումն .
կուսից և կուսանաց առ հասարակ կո
14 տորած ։ *Եւ ութ բիւրս յայն երիս
աւուրս միանգամայն կոտորեցին . և
զչորս բիւրսն 'ի վաճառ ի ոչինչ պակաս
լաւութեամբ քան զսպանեալսն վաճառե
15 ցին ։*Եւ իբրև այսու չարեօք ոչ յա-
գեցաւ . իշխեաց ձեռնամուխ լինիլ 'ի
նըս ամ աշխարհաց . իշխեաց մտանել
'ի տաճար անդր ։ առաջնորդ 'ի ձեռս
ունէր զմենելաւոս . որ օրինաց աշ-
խարհին և գնդին մատնիչ և դահիճ
16 եղեալ էր ։ *Եւ պիղծ և անօրէն ձե-
ռօքն զսբ զսպաս սեղանոյն . և որ յայ
լոց թագաւորաց և յայլոց քաղաքաց
եդեալ էր 'ի սրբութիւն յաճումն և 'ի
փառս տեղւոյն . զայն առեալ պղծոյն
17 բաշխէին ։ * Մեծացաւ հպարտացեալ
յիմարեալ էր 'ի միտս իւր անտիոքոս'
և ասէր . եթէ վասն մեղաց և անօ-
րէնութեան քաղաքիս բնակչաց բարկա-
ցեալ է սոցա Տր' վասնայսորիկ եղեն
արհամարհանք 'ի վերայ տեղւոյն սր-
18 բութեան ։ * Զի եթէ ոչ մեղօք մեծօք
պաշարեալ էին . || որպէս հելիոդորոսն
առաքեցաւ 'ի սելևկեայ արքայէ . զի
առաքեցաւ նա համար առնել գան-
ձին .

ձին. զի ոտ արդեօք վաղվաղակի մոնէ
կործանիւր 'ի հպարտութէ իւրմէ :
*Բայց ո՛չ վասն տեղւոյն զազգն. այլ 19
վասն ազգին զտեղին ընտրեաց Տէր :
*Բանզի և տեղին ինքն ժառանգեաց 20
զազգին խոտորութի. որպէս և յետոյ
բարեացն կցորդ լինիցի. 'ի միւսան_
գամ հաշտիլ մեծի փառօք ուղղութէ :
*Բայց անտիոքոսն ութհարիւր քան_ 21
քար 'ի վ՟ր ինն հարիւրոյն բարձեալ
բերէր 'ի տաճարէ անտի. արագ ա_
րագ հասանէր 'ի քաղաքն անտիոքա_
ցւոց հպարտացեալ մտօք. համարէր
զծով 'ի ցամաք. և զցամաք 'ի ծով
փոփոխել :*Եւ անդ թողոյր վարդա 22
պետս խիստս. չարչարել զմնացորդսն
երուսաղէմացւոց. և զփիլիպպոս յազ
գէ փռանգս. բայց 'ի բարուց խժդժա
գոյն ևս քան զայն. որ եթող զնա
անդ : *Եւ 'ի գարիզին զանդրոնի_ 23
կոս. և 'ի վ՟ր սոցա զմենելաւոս. որ
չարաչարքև.քան զնոսա 'ի վ՟ր հասեալ
դատէր զքաղաքն : *Բայց զի ունէր 24
սակաւ մի գութ ընդ հրէայսն. առա
քեաց նա միշոնէ զապողոնիոս երկուք
բիւրուք զօրօք. թող զհազար զօրն
զառաջինն. զի զամ մարդ հասակա_
չափ կոտորեսցէ. և զկանայս և զման_
կունս վաճառեսցէ : *Սա իբրև եկն 25
յեմ. նախ զառաջինն խաղաղութե
դաւով եմուտ. և եղև անդ մինչև յօրն
ՙըբ՝ յօրն շաբաթուց. և իբրև յօրն շա
բաթուց եգիտ զհրէայսն դատար_
կացեալս՝ հրաման ետ զօրացն իւրոց
վառել : *Որք միանգամ 'ի զնին տես_ 26
լեանն եկին. սուր 'ի վերայ եդեալ կո
տորեաց. և ընդ քաղաքն ընդ ամ զի_
նու հանդերձ այսր անդր վառեալք
ընթանային. առ հասարակ տարա_
ծեալ դիաթաւալ կացուցանէին :
*Եւ յուդա մակաբէ՝ որ տասներորդն 27
եղեալ էր. փախուցեալ լինէր՝ յանապատ
եւանէր. գազանակեաց կեանս 'ի լերինս
անցուցանէր. և այնպէս գնդաւն՝ որք
Է նմա էին՝ խոտաբուտ կերակուր կե
րակրեալ անցուցանէին զժամանակն.
զի մի 'ի պղծութիւնս մերձեսցին :

Գլ : Զ :

Յետ բազում ժամանակաց առա 1
քեաց թագաւորն զաթենացիոս
ծերունի. ստիպել՝ տագնապել զհրէ_
այսն անցանել զհարցն օրինօք. և յօ
րինացն Այ այլ մի ևս յամենալ : *Եւ 2
պղծել զտաճարն եմի. անուանել
զնա յայտնէ յանուն որմզդական
դիցն ողիմպիացւոց. որք 'ի գարիզին
էին. որպէս որք զտեղին բնակեալ

նստէին. հիւրասէր որմզդական դից
3 վանատրի :*Եւ չարաչար դժուարին
նեղութի չարեաց 'ի վերայ հասուցա_
4 նէին : *Զտաճարն ոք պղծութեք
արուեստականօք հեթանոսաց լնոյր.
և սրբուն սրահն արամբք և կանամբք
միմեանց խառնակութե յաղտեղու_
թի դարձուցանէին. և որինչ ոչև ար
ժանի էր ինչ՝ զայն 'ի ներքս համար_
5 ձակ տանէին : *Եւ սեղանն ինքնին
գլխովին անարգելովք յօրինաց՝ և խո
6 տորելովք լնուին : *Եւ անդ էր ո՛չ
զօրէնս շաբաթուց տեսանել. և ո՛չ
զտօնս տարեկանաց զհայրենիս պա_
հել. և ո՛չ բնաւ ամենևին հրէայ անուն
7 անուանել իշխել : *Վարէին. ածէին
ստէպ ստէպ տագնապաւ. յամս աւուր
յօր տօնի ծննդեան թագաւորին՝ զի
զոհեսցեն. իբրև տօն հասանէր սպան_
դարամետական պաշտամանն. տագ_
նապէին զնա. պսակեալս թաւ ոստովք
8 սպանդարամետին կաքաւել :* Հրա_
ման առաքեցին յամ մօտաքաղաքս
պաշտօնաւորս. իբրև բանս 'ի բերան
եդին պտղոմէացիքն. յոր հաւա
նեցեն զոհիւք զպաշտօնն պաշտիցեն :
9 *Եւ այնք՝ որք ոչ յանձնառնուցուն
զոհել՝ անդէն սուր 'ի վերայ դնել :
և անդ էր տեսանել չտապ տագնապէ
10 տառապանս չարչարելոցն : *Նամա_
կադիր եղեն զերկուց կանանց՝ վասն
զորդիսն իւրեանց թլփատելոյ. ածին
վաղվաղակի՝ զմանկունսն զատեանց
կախեցին. և զնոսա Է հրապարակսն
առ առակէ շրջեցուցանէին. ապա 'ի
պարսպաց անտի 'ի վայր հոսեցին :
11 * Այլքն երթեալ գաղտուկ յայրսն
մօտաւորս՝ զշաբաթու աւուրսն ան_
ցուցանէին : իբրև 'ի վ՟ր հասանէին,
կենդանւոյն խանձատեալ սրով սպա
նանէին. վասն երկիւղածութե աւ_
ուրն փափկութե՝ և օրինացն սրբու_
12 թե : *Բայց ես աղաչեմ զամենեսին.
որք զգիրսդ յակն արկանիցէք. մի ինչ
վասն ազգին խղճիցէք. և զկիշտս զայս
ամ առ սատակման տոհմին համարի_
13 ցիք. այլ 'ի խրատ ազգին մերոյ : *Եւ
ո՛չ առ բազում ժամանակս ինչ թողու
զանօրէնս. այլ վաղվաղակի զնշանս
14 իւր և զարուեստս իւր յայտնէ : *Զի
ո՛չ եթէ որպէս առ այլ հեթանոսս
երկայնամիտ լինի Տր. մինչև լցցեն
զչափ մեղաց իւրեանց. եկեսցեն՝ հաս
ցեն 'ի դատաստանս անհնարինս :
15 *Այնպէս և առ մեօք կատարէ զամ.
զի հասցուք մեք 'ի տեղի դատաստանի :
16 *Բայց մօտ առ մօտ խրատէ. և արագ
արագ ածէ 'ի վերայ զողորմութի՛ւն :

* Զայս բանս ընդ ձեզ վասն յիշատա 17
կի բանիցդ խօսեցաք ։ արդ՝ անդրէն
'ի գլուխ պատմելոյն մատիցուք ։
* Եղիազարոս այր մեծ ընդ առա_ 18
ջինս 'ի գնդի անդ ։ լցեալ աւուրբք ․
ծերացեալ հասակաւ ․ գեղեցիկ երե_
սօք ․ ածեալ գայր 'ի բերան ․ ստիպէին
ուտել խոզենիս ։* Նորա 'ի մտի եդեալ՝ 19
յամառեալ՝ պնդեալ սրտիւ ․ յանձն
առեալ զմահ քաջ անուանմբ՝ քան ըզ
կեանս խղճիւ ։ և ընկերայ ստդտանե
լով ․ ընտրեաց ինքնակամ հասանել
'ի տանջանս ․ ձեռներէց լինէր ․ թքա_
նել՝ անարգել՝ զպաշտօն նը ։ * Որպէս 20
օրէն է համբերողաց ․ բացէ 'ի բաց ա_
նարգել զինչ՝ որինչ ոչէ օրէն յանձին
մատուցանել ։ * Իսկ այնք՝ որք պատ_ 21
րաստեալք եկեալ էին, ինքեանք առ
տկարութե մտաց վն անձնասէր բա
րոյից զոհից 'ի պաշտօն ․ ծանօթ ես
էին առնն աւագուե ։ առեալ մեկու_
սի իւրեանց տկարութե մտօքն՝ զհա
տատեալ միտսն 'ի հրապոյրս ցոփուե (զհաստա_ տուն)
դարձուցանել ջանային ։ յանձն առ
աւեն զհրաման թագաւորին ։ * Եւ 22
քեզ զայլ միս մատուսցուք ։ զի լուծ
ցես զկարծիսն ․ և 'ի մահուանէդ ապ
րեսցիս ։ * Նա գեղեցիկ խորհուրդն 23
հաստատուն յանձին եդեալ զարժա
նի հասակին ․ ըստ ծերութե մեծու
թեն ․ ըստ երևելի վայելչութեանն ․
ըստ զուարթածաղիկ ալեացն զուար
ճացելոյ ․ ըստ գեղեցիկ 'ի մանկութե
մինչև յաւագոյթ սննդեանն ։ մանաւ
անդ առաւել ըստ Այ ծագործ սրբու
թե օրինադիր կրօնից նմ կարգօք լի ։
արագ արագ առնէր զպատասխանին ։
* Ոչ արժան ․ ոչ պատշաճ առէ՝ մերոյ 24
չափու հասակի կեղծաւորութբ մտա
նել ընդ սրբութե խոստովանութի ։
իցեն բազումք 'ի մանկտւոյ այտի ․
որք ընդակամբ հայիցեն ․ կարծիս 'ի
մտի դնիցեն՝ և ասիցեն ․ եթէ Եղիա
զարոս իննսնամեայն անցեալ ծերու_
թբ ․ հասեալ 'ի դուռն վախճանի՝ յայլ_
ազգութի դարձաւ ։ * Եւ նոքա վն 25
իմ կեղծաւորեալք գայթագղեսցին ․
և զայս խիղճ մտաց և կեղտ անուն
ծերութեանս յաշխարհի թողից ։ * Իսկ 26
արդ՝ եթէ ամենևին նոյնչափ ժամա
նակս կենաց շնորհիցեն ինձ՝ և 'ի ձեռս
մարդկան բնաւ այլ ոչ մատնիցիմ ․
սակայն 'ի յաւիտենից 'ի մշտնջենաւ
որ ձեռաց անտի՝ ոչ կենդանեօք , և
ոչ յետ կենդանութե ուրեք փախչիլ
կարիցեմ ։* Վասն այսորիկ քաջութբ 27
փոխեցայց յաշխարհէ աստի ․ զի արժա
նի իմոյ ծերութեանս երևեցայց ։ * Եւ 28
օրինակ բարեաց և քաջուե մանկտւոյ
թողից ։ զի յօժարութբ և քաջութբ
'ի վն սրբուե օրինացն մահուչափ ջա
նալ մարթասցին ․ զայս նմ իբրև ասէր,
ինքնակամ՝ դիմադրաւ՝ կամակար՝ 'ի
վիշտս մահուն և տանջանացն դիմէր ։
29 * Նոքա՝ որք յառաջագոյն շուրջ մա_
տուցեալ մխիթարէին ․ զբանս մխիթա
րութե 'ի թշնամութի դարձուցա_
նէին ․ և զիմաստութե խորհուրդն
իբրև մոլորութի համարէին ․ առաւել
մատուցեալ 'ի տանջանս տագնա_
30 պէին ։ * Նա իբրև մերձ եղև 'ի տան_
ջանացն անտի 'ի վախճան ․ եբաց զբե
րան իւր հեծելով ․ սկսաւ խօսիլ զտե
րունի զգիտուե սրբութե խորհրդոց՝
և ասէ ։ այս մի ինչ յայտ եղև ․ եթէ 'ի
ձեռս էր իմ արձակիլ 'ի մահուս վըշ
տաց ․ զայս խստութե տանջանս մարմ
նոյ ընկալեալ համբերեմ ․ այլ հոգ_
ւով քաջ քաղցրութբ՝ վասն ահի սա
31 տեցն Տն ընդունիմ ։ * Եւ սա զայս
օրինակ պատերազմեալ՝ յաշխարհէ
փոխեցաւ ։

Գլ. Է.

1 Դէպ եղև եղբարս եօթն մարբն
հանդերձ կալեալս ածել յատ_
եան թագաւորին ․ 'ի խոշտանկանս
տագնապի դանէին ուտել զխոզենի ։
2 * Մի 'ի նոցանէն նախաստակեցաւ յա_
ռաջագոյն ։ սկսաւ խօսիլ՝ և ասէ ․ զի
կայք անցեալ ․ կամ զմեզ զինչ հար_
ցանելոց էք ․ մեք եմք պատրաստեալք
'ի մեռանիլ քան անցանիլ ըստ օրէնս
3 հայրենիս ։ * Բարկութբ՝ և սրտմտու
թբ լի եղև թագաւորն ․ հրաման ետ
ջեռուցանել տապակս՝ և կաթսայս ․ և
անիւս ․ և պէսպէս գործիս տանջա_
նաց պատրաստել ։ զայն իբրև վաղ_
վաղակի ջեռուցին՝ պատրաստեցին ։
4 * Հրամայեաց զնախաստակն յառաջ
կացուցանել ։ և նախ զլեզուն կտրե_
ցին ․ և զգլխոյն մորթ զերեսօքն դար
ձուցին ․ ապա զոտս և զձեռս առաջի
մօրն և եղբարցն ծայրաքաղս առնէին ։
5 * Եւ ապա իբրև 'ի բանից ․ և 'ի ձե_
ռաց անպիտանս առնէր ․ հրամայէր
կենդանւոյն 'ի տապակսն ջեռուցելս
իջուցանել ։ ապա իբրև ճենճերն
ընդերկար այնպէս 'ի տապակէ անտի
ելեալ՝ դիզացեալ ծառանայր ․ սկսան
եղբարքն ընդ միմեանս մարբն հան_
դերձ մխիթարել՝ և ասել ․ քաջութբ
մեռցուք ․ զանուն և զոգիս ժառան_
6 գեսցուք ։ * Հայի Տր Այ 'ի ճգնութի
պատերազմի մերոյ ․ և 'ի ծառայս իւր
մխիթարի՝ ‖ որպէս յայտ յանդիմանութե ‖2. Օր. 32. 36.
ասաց

ասաց մեզ յօրհնութիւնէ իւրում. և՛ի
7 ծառայս իւր միխթարեացն։ * Իբրև
առաջինն զօրինակ զայս յաշխարհէ
փոխեցաւ։ և Գերկրորդն՝ի տեղի տան
Քանացն մատուցանէին. և զգլխոյն
մրթին վարսիւքն հանդերձ գերե-
ացն արկանէին. և անդէն հարցա-
նէին. կերիցես խոզի միս մինչեւ ամ
մարմինդ անդամ անդամ լուծեալէ։
8 * Նա ես պատասխանի իւրեանց բար
բառէին, և ասէ. ոչ։ մի այսորիկ և սա
9 Քինոյն տանջանս տանջեալ վախճան-
եաւ։ * Իբրև յոգւոց պարզել ապաս
տան եղև. սկսաւ խօսիլ՝ և ասէ ցԹա
գաւորն. այ սեգ՝ Հպարտ՝ և ամբար-
տաւան. դու զմեզ յայսց կենացս յաշ
խարհէս կարձել համարիս. իսկ այն
որ աշխարհաց Թագաւորն է, Թեպէտ
և մեռանիմք մեք վասն օրինացն. Քի
կեանս յաւիտենից միւսանգամ ծնան-
դեանն ժամանակի՝ կենաց Քի կեանս
10 դարձուցանէ։ * Ետ սորա զերորդն
ածէին. և զլեզուն խնդրէին. և նա
վաղվաղակի մատուցանէր. և զձեռն
12 քաջասիրտս տարածանէր։ * Ո՛ի Թա
գաւորն ինքնին իսկ զարմացեալ լի-
նէր վ՚ը պատանւոյն ուշիմ մտացն. և
որտին քաջուԹ. զի առ ոչինչ զցաւն
13 համարեցաւ։ * Նմ ասա Իբրև փոխիւր
չորրորդն՝ի տեղի մատուցեալ՝ Քինոյն
14 տանջանս չարչարէին։ * Նմ Իբրև
չունչն վախճանի հասանէր. խօսիլ
սկսաւ այսպէս. մեզ լաւ է. զի փոխումք
աստ՝ Քի մարդկանէ. և յոյսոյն ակն ու
նիմք միւսանգամ ծննդեանն յարու-
ԹԻ մեռելոց. քան քեզ՝ Քի կենդանիս.
զի արգելեալ փակեալ է՝ Քի քէն յարու
15 ԹԻ մեռելոց։ * Ետ սորա զհինգ-
երորդն մատուցին՝ Քի տանջանս չարչա
րանացն. և Իբրև զաչս՝ Քի վեր եւարձ,
Հայեցաւ ընդ Թագաւորն. սկսաւ խո
սիլ ընդ նմա՝ և ասէ։ * ՆչհանուԹի
16 առեալ մարդկան. և դու մարդ մահ
կանայոյ՝ գործես զինչ և կամիս. բայց
մի՝ Քի վաստուԹի ինչ և զմեզ ազգս հա
տանիցես. կամ լքեալ՝ Թողեալ ինչ
17 Քի ձեռաց ոյ Համարիցիս։ * Կայ՝ միա
դու. տեացես զզօրուԹիս մեծամեծս
աքանչելեացն. ոյ զքեզ և զազգատոհմն
18 քո չարչարիցէ։ * Ետ այսորիկ ածէ
զվեցերորդն. և Իբրև մերձ եղև՝ Քի մե
ռանիլ՝ ասէ. զի՞ մեղորեալես տարա-
պարտուց. ընդ մեզ այսք անցք՝ որք
անցանեն վ՚ը մերոց մեղաց. զի մեզան
չեմք առ Նծ. արժանի զարմանալոյ։
19 * Նայց դու մի ակնունկիցիս ողջան-
դամ՝ բարեմիտ ապրիլ՝ Նծ ամենայն
20 մատուցեալ։ * Նս առաւել քարեաց

յիշատակաց արժանի՝ մայրն աքանչե
լի. որ զայնպիսի զեօԹն որդւոց Քիբմէ
կորուսեալ՝ Քի միում աւուր ժամանա-
21 կի՝ վ՚ը յոսոյն Նյ։ * Վաջալերեալ՝
սրատախտեալ զմի Քինոցանէ քաջա
լերէր՝ միխԹարեր իւրեանց բարբա
ռոյն. և զսիրտն և զմիտսն իգուԹե
22 առնապէս վառեալ։ * ՎաջուԹէ յա
ռաջ մատուցել՝ ասէր. չգիտեմ քնաւ՝
ոյ դուք յարգանաւթ իմ երևեցայք.
և ոչ ես ինչ զոգիսդ կամ զկեանսդ
ձեզ չնորհեցի. ոչ զկերպարանսդ ձեր
զլուրաքանչիւր ես նկարեցի. և զհա ոչ
սակդ ձեր ծնեալ և մնուցեալ՝ այսու-
23 հետեւ ես ինչ ոչ Համարեցայց։ * Նյլ
որ աշխարհի արարիչն է. որ ստեղծ
զծննուն մարդկան. զկեանսդ և զո
գիսդ՝ի գալստեան իւրում իւրով ո-
24 գորմուԹէ՝ Քի ձեզ դարձուցէ։ * Նն-
տիոքոս Թէպէտ և արհամարհեալ
զինքն համարեցաւ՝ Քի բարբառոյ նա-
խատանացն. սակայն մինչ դեռ ոգիքն
կրտսերոյ մանկանն առ իւր կային.
սկսաւ ոչ միայն բանիւք միխԹարուԹի
մատուցանել. այլ երդմամբ հաստա
տեր. Քի մեծուԹիս աՀագուԹէ Հա-
ստուցանել. երանելի առնել յաշխար-
հի. միայն Թէ՝ Քինախնեացն օրինաց
փոփոխեսցի. գործ՝ Քի ձեռն տալ՝ և բա
րեկամ անուճանիլ Թագաւորաց։
25 * Նբրև ետես՝ եԹէ ամենևին պատա
նին Քի բանս Թագաւորին ոչ խոտորե
ցաւ, կոչեաց Թագաւորն զմայրն. և
զայլսն լինել պատանւոյն կենաց խոր-
26 հրդական՝ զի փրկեսցի։ * Նբրև կարի
շատ ստիպեաց յանձնեաւ խօսիլ ընդ
27 որդւոյն. խնայարհեցաւ՝ Քինա։ * Կսկսաւ
ծաղր առնել զՀպարտ զամբարտաւան
Թագաւորն. և ասէ։ ողորմեա՛ց ինձ
որդեակ իմ. յուշ լեցի քեզ՝ զի կրեցի
զքեզ զինն ամիս յարգանաւթ. և մնու
ցի զերիս ամս՝ Քիփրկս առեամբք. և
Հասուցի զքեզ յայդ չափ մեծուԹ Հա
28 սակի։ * Նրդ ալաչեմ զքեզ. Հայեաց
ցիս դու յերկինս և յերկիր. և որ՝ Քինն
արարածք իցեն. յուշ լեցի քեզ՝ զի
յոչնչէ արար զնոսա Նծ. սոյնպէս և
ազգ մարդկան ստեղծան՝ Քինմանէ։
29 * ԿՔի զարհուրիր դու՝ Քի չարաչուք
դահձէ այսի. այլ եղբարցն արժանի
եղեալ՝ ընտրեալ զմահ քան զկեանս
աշխարհի. զի ընդ այն եղբարան ընկա
լայց զքեզ՝ Քի ձեռս ողորմուԹէ մեծին
30 Նյ։ * ԿՔինչ դեռ մայրն զայն մխի
ԹարուԹիս մատուցանէր՝ Քիմիտս Հաս
տատնոյ. սկսաւ խօսիլ պատանեակն՝
և ասէ. ա՞ւ մարդ. զի՞ յապաղէք. չեմ
ինչ լսելոց Հրամանի Թագաւորիդ։
այլ

այլ հրամանաց հնազանդեալ եմ օրի
նաց հարցն մերոց. որք տուեալն 'ի ձեռս
մովսեսի։ *Այլ դու՝ որ զամ ինչ զչարիս 31
խորամանկեցեր 'ի վր որդւոցդ եբրայ
եցւոց, ոչ ապրեսցիս 'ի ձեռաց Այ։
* Զի եթէ առ խրատու պատուհասի 32
զայս վն մեղաց մերոց կրեմք։ * Կեն 33
դանի Տր մեր, առ փոքր մի ինչ բարկա
ցեալ իցէ. դարձեալ հաճեսցի ողոր
մութբ ընդ ծառայս իւր։ *Այլ դու 34
անօրէն. ապստամբ. պիղծ. վատ ա
րանց. զի զուր հպարտանաս յուսովդ
քո մնոտւով 'ի վերայ ծառայից նորա։
* Սակայն չես ինչ ապրելոց յամենա 35
գէտ յամենակալ դատաստանացն Այ։
* Զի այժմիկ մեր եղբարք սակաւ ինչ 36
ցաւոց համբերեալ վն կենացն յաւի
տենից՝ 'ի վերայ ուխտի կտակարա
նացն Այ. անկեալ կան մինհու տարա
ծեալ։ *Այլ ես հաւասար եղբարցն 37
իմոց զշունչ և զմարմին մատնեալ պատ
րաստեալ ունիմ 'ի վերայ հարցն օրի
նաց. յուսացեալ կարդամ առ Ած.
զքաւութիւն ազգին ամի գտանել. և
զքեզ մեծամեծ տանջանօք հեծութբ
խոստովանել. զի նա միայն է Ած. և
այլ ոք չիք։ *Ինև՝ և եղբարբքն իմովք 38
զամ զնիւթեալ սրտմտութիւն բար
կութեն ջնջել՝ և 'ի բաց անցուցանել։
*Յայնչափ քաջութեն սրտի մանկանցն 39
եօթանեացունց՝ սրտաբեկ լինէր թա
գաւորն. առաւել 'ի վերայ կրտսերոյն
դառնապէս տանջանս մատուցանէր։
* Սակայն և սա անարատութբ և սր 40
բութբ յուսացեալ 'ի Տր՝ մեկնեցաւ
յաշխարհէ ։ * Զհետ որդւոցն և 41
մայրն երանելի 'ի նոյն օրէնս կատա
րեցաւ։ *Այլ որ ինչ վասն հարցմանց 42
զոհիցն՝ և վն անհնարին տանջանացն՝
ցայս վայր ցուցեալ լիցի։

ԳԼ: Ը.

Այլ Յուդա Մակաբէ՝ և որք ընդ 1
նմայն էին. ստտ անդ գաղտագո
ղացեալ մտանէին 'ի գեօղս՝ 'ի քա
ղաքս՝ յազգատակս. յինքն արկանէին
զազգատոհմն. և նուաճէր զհրէայսն.
որք կացեալ էին հաստատութբ յուխ
տին իւրեանց. գունդ լինէին. յաւե
լուին. բազմանային. լինէին իբրև
վեցհազար այր։ *Կարդային առ Տր. 2
այց առնել՝ հայիլ 'ի ժողովուրդ անդր՝
որ կոխան եղև 'ի հեթանոսաց. գթալ
'ի վերայ տաճարին՝ որ յամպարշտաց
ձեռացն պղծեցաւ ։ * Ողորմիլ և 'ի 3
վերայ քաղաքին. որ յապականութե
և 'ի սատակումն յատակացն հասու
ցանելոյն էր. և հայիլ 'ի գոչումն ար

4 եանցն։ * Յիշել զանմեղ մանկանցն
կորուստ տարապարտուց. ածել զմտաւ
5 զհայհոյանս անուանն սրբոյ։ *Իբրև
կազմէր՝ լինէր զօրաժողով մակաբէ.
դիմակալ ինչ ոչ լինէին նմա հեթա
նոսքն. զի սրտմտութի բարկութե
մեծութեցն Ածութե յողորմութի
6 դարձաւ։ *Հասանէր 'ի վերայ գեղի
և քաղաքաց. հրձիգ առնէր զամուր
ամուր տեղիս թշնամւոյ ։ անդրէն
նուաճէր՝ դարձուցանէր զըմբռնեալսն
թշնամեացն. մեծամեծ սատակ հա
րուածս 'ի վերայ թշնամւոյն հասու
7 ցանէր ։ * Մանաւանդ զգիշերն ևս
իւր օգնական գործակից դտանէր. և
համբաւ քաջութե ընդ ամ կողմանս
8 ընթանայր ։ * Իբրև զայն տեսանէր
փիլիպպոս. զի դամ քան զդամ իրք
առնն յառաջադէմ յաջողէին. ար
քունի հրովարտակօք առ պտղոմէոս
սպարապետ ստորին ասորւոց և տաճ
կաստանի՝ հրեշտակս առնէր. օգնա
կան 'ի թիկունս զօրս 'ի ձեռն հասու
9 ցանել ։ *Նա վաղվաղակի իբրև առ
նոյր զհրովարտակն՝ զնիկանորայ ըզ
պատրոկղեանց զառաջին սիրելի յա
ւագաց իւրոց. 'ի ձեռն գումարէր ոչ
ինչ պակաս քան զքառասուն հազար.
առ հասարակ բառնալ 'ի միջոյ՝ և ջն
ջել զազգն հրէից. յանդիմանեալ նմա
և զգորգի սպարապետ՝ զայր քաջ իրաց
10 պատերազմի տեղեակ ամի ։ * Ընդ
մուտն՝ յանձն էառ նիկանոր զհարկն
առաջին. զոր տային հռոմայեցւոց հա
11 րիւր քանքար՝ 'ի հրէից գերութե
անտի լնուլ ։ * Ընդ որ հրաման տայր
շուրջ զծովեզերօքն. կոչէր զվաճառա
կանս մարդադին 'ի հրէաստան. խոս
տանայր ինննուն մարդ տալ նոցա 'ի
քանքար մի. յայն ինչ ոչ հայէր. որ
երկնից դատաստանն յամենակալէ
կանխեալ պատրաստեալ կայ 'ի վերայ
12 նորա ։ * Յուդայի էին ոմանք, որք
գուշակ լինէին վասն նիկանորայ ար
13 շաւանին ։ *Նոքա՝ առ վատասրտիլ
իւրեանց՝ այսր անդր խուսափէին ։
14 *Նոր որ ինչ իւրեանց մնացեալ էր, վա
ճառէին. և առ հասարակ զՏր ամե
նակալ աղաչէին. ապրել յանօրէն յան
րժան ձեռացն նիկանորայ. որ մինչ
չև տեսեալ էր նոցա. ընդ վաճառա
կանս՝ անձանց նոցա զգին հատանէր
15 * Իսկ արդ եթէ ոչ վն նոցա. բայց սա
կայն վն ընդ հարսն ուխտիցն և կտա
կարանացն. և վասն մեծի և սրբոյ
անուան իւրոյ փրկէր զնս 'ի նմանէ։
16 * Զօրաժողով լինէր մակաբէ, որք
զիւրևն էին, արամբք իբրև վեցհազա
րօք.

րօք ։ մխիթարէր զնոսա՝ զի մի՛ պակի_
ցեն յանչափ զօրաց բազմութէ ։ և մի՛
վհատեսցին զուր տարապարտուց 'ի
վ՜ր եկելոց կուտելոց բազմութե՛ հե
Թանոսաց գնդին ։ այլ կալ՝ և մարտն
չիլ քաջութ՜ ։ * Նախանձ 'ի միտ 17
դնել սրբութե տեղւոյն զկատարեալ
անարգանս ։ և զհարեալ քաղաքին գե
րութե զչարչարանս ։ զնախնեաց սր_
բութե ։ և զվարատիլ օրինացն ։ * Եւ 18
նոքա՛ ասէ ։ 'ի զէնս յուսացեալ քեն՝ և
'ի զօրութիւս իւրեանց ։ մեք յամենա_
կալն Ա՛Ծ ։ որ կարող է զայնոսիկ ։ որք
զմեզ յաչս դնեն, և զաշխարհ ամ
'ի մի շունչ ոգւոյ զօրութե սասանել ։
* Եւ սկսաւ յուշ առնել զմիոյ միոյ զա 19
ռաջնոց զքաջութիւս ։ և զօգնակա_
նութիւս ։ որք եղեալք են 'ի Տ՜է ։ Մինչե
ցե՛ք զսենեքերիմ ։ և զերկոսեան բիւ_
րուն սատակումն միանգամայն ։
4 Թագ. * Յուշ լիցի ձեզ պատերազմն հռոմայե 20
19.35. ցւոց ընդ գաղատացիս ։ զի ամենե_
Տոբ. քին առ հասարակ 'ի գործ անդր հա_
1.21. սեալ էին երկոտասան բիւրու ։ սոքա
Սիրաք ելին վեցհազարաւ ։ առ հասարակ 'ի
48.24. միում ժամանակի ։ զերկոտասան բիւրն
Եսայի առ հասարակ կոտորեցին՝ օգնակա_
37. 36. նութ՜ք լցեալք բարձրելոյն ։ * Եւ 21
1. Մակ. այսու մխիթար քաջալեր բանի՛ վա_
7.41. ռեր՝ պատրաստեր զն՜ս 'ի վ՜ր օրինացն
և աշխարհին իւրեանց՝ մտադիւր մար
տնչիլ՝ համարձակ մեռանիլ ։ * Յերիս 22
գունդս զզօրսն բաժանէր ։ երկոցունց
դնդացն զերկոսին զեղբարսն զշմաւօն
և զյօսէփ զօրավար կացուցանէր ։
* Դարձեալ առ քաջալերութե զօ_ 23
րացն՝ բերեալ եզրայ զս՜բ մատեանն՝
առաջի ընթեռնոյր ։ իւրաքանչիւր զօ
րացն յանուն Տ՜ն նշանս բաշխէր ։ և
առաջնոյ գնդին ինքնին զօրագլուխ
պատրաստեալ յարձակիւր՝ 'ի դիմի
հարկանէր նիկանորայ ։ * Իբրև օգ_ 24
նականութի յամենակալէ նոցա 'ի վ՜ր
իջանէր ։ հասանէին՝ հարկանէին 'ի
զօրաց անտի 'ի Թշնամեաց ։ աւելի
քան զինն հազար սպառազէն՝ յառաջ
նումն յարձակիլ անդ՝ պակաս առնէին ։
և զայլսն խոցս՝ և խեղս՝ և վիրաւորս
առնէին ։ և շուրջ զբանակաւն պահ
արկանէին ։ * Եւ զինչսն և զգանձսն 25
մարդագին վաճառականացն յիւր_
եանս առնուին ։ և զմնացեալ զօրսն նի
կանորայ առաջի իւրեանց փախստա_
կանս տանէին ։ մինչ օրն տարաժամիւր ։
* Իբրև ժամ առուրն 'ի տարաժամիլ 26
անկանիւր ։ և այսրէն վաղվաղակի
տագնապաւ դառնային ։ և ո՛չ ընդեր
կա՛ր հալածէին զնոսա ։ զի 'ի վաղիւ՛

27 անդր շաբաթ էր ։ * Ա՛ւուր հասեալ
այսրէն ունէին զճակատուն տեղի ։
զէնս քաղէին զանկելոց ․ դիաղերծ առ
նէին զվիրաւորսն ։ և ինքեանք շաբա
Թուն պատրաստէին՝ օրհնէին՝ խոս_
տովան լինէին՝ և փառաւոր առնէին
զՏ՜ր ։ զի փրկեաց զն՜ս 'ի նոցանէ յաւ_
ուր յայնմիկ ։ զայն օր ողորմութեան
28 հատէին՝ և նշան յաղթութե ։ * Յետ
շաբաթուն՝ նեղելոց՝ և այրեաց՝ և որ
բոց մասն առնէին յաւարէ անտի ։ և
ապա ինքեանք ընդ բաժինս աւարին
29 խառնէին ։ * Իբրև զայս գործեցին ։
առհասարակ աղօթս անկեալ մատու
ցանէին ։ առ ողորմածն աղաչէին՝
մինչ 'ի վախճան հաշտ լինիլ ընդ ծա_
30 ռայս իւր ։ * Տիմօթէոս իւր ։ և բագի
դէս յոր գործ հասեալ էին ։ հասա_
նէին ։ բախէին ։ և հարկանէին 'ի նո_
ցանէ աւելի քան զերկուս բիւրս ։ ա_
մուրս բազումս և զբարձունս քաջու՜թ
ունէին ։ բազում գանձս ընչից ստա_
ցուածոց նո՜ց յաւարի տանէին ։ բաժա
նակիցս իւրեանց զտնանկս և զորբս
և զծերս աւարի իւրեանց առնէին ։
31 * Զզէն սպանելոյն քաղէին ։ 'ի պի_
տոյս տեղիս Թողուին ։ և ինքեանք ա_
րաւն յեր՜մ առ նահապետ ազգացն
32 գային ։ * Ա՛նդ սպանեալ լինէր նոցա
զտիմօթէոս ։ որ բազում չարչարանս
'ի վերայ ազգին հրէից հասուցանէր ։
33 * Խողովեցին զմարդիկ գաւառացն ։
որ ուրախութե առնէին ։ նշան յաղ_
Թութե կանգնէին ։ ածէին զկալիս_
Թենէս փախստեայ՝ և որք զնովաւն
էին ։ որոց զդրունս լուցեալ էր՝ կեն_
34 դանւոյն այրէին ։ * Իսկ յամ կողմանց
Թշուառացեալ նիկանոր ։ որ զհազար
վաճառականս 'ի մարդագին ածէր
35 որդւոց հրէից ։ * Մեծաւ տառապա
նօք Թշուառութ՜բ անկեալ 'ի փառացն
հանդերձէ՝ հրամանաւ Տ՜ն ։ ձգեալ
ընդ մուրօղս՝ անկեալ ։ մեծ սուգ ա_
ռեալ վ՜ս զօրացն կորստեան ։ փախս_
տեայ կորացեալ 'ի քաղաքն անտիոքա
36 ցւոց անկանէր ։ * Եւ որ հռոմայեցւոց
խոստանայր զհարկն յէմմացւոց գե_
րութե անտի լնուլ ։ ինքն նովին բերա
նով պատմէր ։ եԹէ յայտնի Ա՛ծ է նո՜ց
օգնական ։ վ՜ս այսորիկ ողջանդամք և
առանց խոցոտելոյ 'ի պատերազմէ ե_
լանէին ։ զի հաստատութ՜բ ուրեմն պա
հէին զօրէնսն՝ որ 'ի նմանէ կալեալ է ։

Գլ ։ Թ ։

1 Ընդ այն ժամանակս դէպ եղև դառ
նալ անտիոքայ մեծիք կորանօք 'ի
կողմանց պարսից ։ քանզի էր երԹեալ

նդ

նէր ի քաղաքն ի բուն նոցա . խորհե-
ցաւ ձեռն արկանել զգանձիսն . և թէ
հնարեսցի , զքաղաքն իսկ աւերել ջա-
նայր : իբրև զայն զգային զօրք քաղա-
քին , առ հասարակ ի վէնս իւրեանց
ընթանային . և զայն՝ որ մեծաւ սաստ
կութ ի վէր ընթացեալէր . անարժան՝
կորակոր՝ յանձանց ի բաց մերժէին :
2 *Իբրև չոս առնէր՝ խաղայր գնայր
ամենաւելից անտիոքոս ի կողմանցն
պարսից . գայր՝ հասանէր ի կողմանս
եկբատանոյ : ազդ լինէր նմա որ ինչ
3 անցք անցեալէին ընդ նա : *Ոմնոսւ
ևս ածէր զտահակութի քաղաքաց
ացն . որք զնա ի փախուստ դարձու-
4 ցին : *Ի ցեալ սրտմտութի՝ զերկոցունց
կողմանցն զմնաւ ածէր յերուսաղէմ
ցիս անդ յապէցուցանել զսրտմտու-
թիւն իւրոյ : վասն այսորիկ հրա
ման տայր կառավարչին . ասել տագ
նապաւ անդադար տայր վարել : միտ
եդեալ ձանապարհին . զայն ինչ ոչ
ածէր զմնաւ . թէ յերկնից իրաւունք
ինչ ոչ երթային . քայց ինքն մեծամեծս
փքայր ի հպարտութի ամբարտաւա-
նութիւն իւրոյ . և ասէր . յանմարդի
5 զէ մհրէից հասուցանել : *Ոչ ամե
նակալ բարձրեալ Տէր Աստուծ ինչ էհար
զնա աներեւոյթ հարուածով : այն
ինչ նէր զանք ի բերան լինէին . ցաւք
սաստիկք և անհնարինք ոսկերաց ի
վերայ հասանէին . և դառնութեան
6 խիթք ի փորն անկանէին : *Կարի յի-
րաւունս . զի որ քաղցմ նորանոր չա-
րաչար ցաւս յայլոց մարմնոց տանջա-
նօք հասուցանէր . նոյնք սաստկութե
ցնով աւ անկեալ պաշարեալ պահէին :
7 *Ակայն և այնպէս ոչ կասէր ի հպար
տութէ անտի . այլ առաւել քորքո-
քիւր յամբարտաւանութե բարկութէ
ի վէր հեբրայեցւոց . սպիպէր ձեռել
զձանապարհն : մինչ դեպ եղև նմա
անկանիլ ի կառաց անտի՝ մինչ դեռ
գայրնա տաղնապաւ . անդ անկանէր
ի չարաչար տանջանս . զի ամոսկերքն
8 առ հասարակ խորտակեին : *Եւ այն՝
որ այնինչ կամէր ի վէր ալեաց ծովու
ասուել՝ վասն անօրէնն հպարտութե նոյ .
և զվերին լերանցն ներքին առնել . և
զներքինն վերին առնել . զնա ինքն յեր
կիր հողեալ շալակաւ շրջեցուցանէին .
յայտնապէս Աստ զօրութե երևելոյ :
9 *Մինչև յայսց անտի անօրինին եղան
դէմ որդանց բղխեալ սորսորիլ . և կեն
դանութե իւրով ախտին ցաւոց զան
գամն ի միմեանց յօշել և ի ներկայ հո
տոյ զօրացն ամի նեղիլ տագնապաւ :
10 *Եւ որ յառաջն հպարտացեալ մտօք
զաստեղս երկնից ամիսպել համա-
րէր . այսր անդր շրջշրջել ոչոք կարէր
վասն նեխութե հոտոյն տագնապի :
11 *Այսմ վայրի սկսաւ բեկանիլ ի նը
պարտ և յամբարտաւան խստութէ ան
տի . և ի միտս իւր իջանել առ տանջա
նացն Աստուծոյ միով միով ցաւով ի վէր հա
12 րեալ մարմնոցն զայրացելոց : *Օ՛ի
ինքն իսկ ոչ կարէր ժոյժ ունել ի նե-
խոյ հոտոյ անտի . սկսաւ այսպէս խո
սիլ . պարտ և պատշաձէ հնազանդ լի
նել Աստուծոյ՝ և մի՛ ի մարմնոյ մահկանա
ցուս Աստուծոյ օրինակ բարձրանալ :
13 *Ա՛ղաչէր՝ ուխտս դնէր առ այն՝ որ չէր
14 նման ողորմելոց : *Ա՛ն զնոքա քաղաքն
հարեթատակ և անմարդի կացուցանե
լոյ . զսուն մարդաշատ և սպատ ցու-
15 ցանել : *Օ՛չ եբրայեցիսն որոց սպառ
նայր . ոչ պատանաց և ոչ թաղելոյ ար
ժանի առնել . այլ կամաւք և մանկ
տուվ ի հաւակերի դնել՝ գազանա-
բեկս արարեալ զնոսա քաղաքակիցս
հաւասար աթենացւոց գրով մուրհա
16 կացն կացուցանել : *Եւ զտաճարն իսկ այն
նոր՝ զոր յառաջ սպառնայր կապուտ զնա
կողոպուտ թողուլ գեղեցիկ պատա-
րագօք զարդարեցեալ . և զարդ՝ և սպաս զոսկ
տաճարին . զոր յառաջ անտի տարեալ
էր , բազմապատիկ անդրէն դարձու
ցանել : և զկարգս մտից պիտոյ պա-
17 տարագաց յարքունեաստ ընծայել : *Եւ
ի վէր այսր ամի հեբրայեցի և լինիլ .
և յամ մարդաշէն տեղիս հասանիլ
պատմել զզօրութէն մեծութեցն Աստ
18 *Իբրև ոչինչ եր հնար ցաւոցն դադա
րիլ . զի հասեալ եր ի վէր նր պատու-
հաս ի ցնէ արդար դատաստանաւք . իբ
րև ակն ինչ ոչ կալաւ այնուհետև աղ
րելոյ իւրոյ . հրովարտակս առնէր առ
եբրայեցիս մեծաւ խնամարհութէ՝ օրի
19 նակաւս այսմիկ : *Ա՛ռ քաղցր հեբ-
րայեցիս՝ առ ընկերս , և զբարս քաղա
20 քացիս , ողջոյն յոյժ : *Ե՛նորհ յոյժ
21 ունիմ վէր Աստ : *Ա՛ես ի սակա
րութէ իմմէ յանհնարին հիւանդու
թէ , մեծաւ գթով յիշեի զձեզ . դար
ձեալ եմ՝ ի կողմանց պարսից . և ան
կայ ի հիւանդութի դժուարին . և
այսպէս լաւ համարեցայ՝ ի մտի իմում
վէ օգտի հասարակաց՝ և շինութե :
22 *Ա՛ստ իմ ոչ եթէ յոյս ինչ հատեալ է
վասն կենաց . այլ ակն ունիմ ապրիլ
ի դժուարին հիւանդութէ աստի :
23 *Այլ և յայն վայր հայեցայ . եթէ
հայրենի ժամանակի՝ յորում վերնա-
կողմն կոչման չոս առեալ գնացեալ
երթայր . եցոյց նա զփոխանակն իւր :
24 *Օ՛ի եթէ որ ինչ անցք անցեն ընդ
նա .

ամենե-
ցուն

նա. կամ համբաւ ինչ դժուարին ե-
կեսցէ. գիտիցեն ում պահեալ կայ՝
եւ յանձն է տէրին. եւ մի խռովեսցին։
*Եւ Թող զայս։ հայեցայ ես շուրջ 25
զմեօք 'ի մերձաւորս արքայութեն մե-
րոյ. եւ որք շուրջ զմեօք ընդ ակամբ
նայէին 'ի մեզ. յայտ արարի ես զորդի
իմ զանտիոքոս 'ի տեղի իմ թագաւո-
րութեն. զոր բազում անգամ արդեօք
իբրեւ չու արարեալ իմ գնացի 'ի վե-
րին կողմանսն երթայի. բազմաց ու-
մեք 'ի ձէնջ յանձն արարեալ՝ եւ 'ի ձեռն
եդեալ երթայի. այլ ես եւ առ նմա գրե-
ցի պատճէնիհդ այդուհիկ. զոր առ
ձեզդ 'ի ներքոյ գրեցի։ *Արդ՝ աղա- 26
չեմ զձեզ՝ յիշել ձեզ զերախտիսն զառ
հասարակացն բարեաց. եւ սէր օգուտ
առ իւրաքանչիւր՝ պահել ընդ իս ըզ
հաւանութիւն միաբանութեն՝ եւ առ որ-
դիդ. *Ոչ զայս ինչ հաստատեալ 27
հաւատացեալ գիտեմ. եթէ քաղցրա
գոյն մարդասիրագոյն եւս յանդ իցէ
'ի ձեզ՝ զիմոց բարուցս զկնի հայեցեալ։
*Եւ մարդասպանն՝ անօրէն հայհոյ 28
իչն զայս օրինակ անկեալ՝ կործանեալ
սաստկամահ լինիւր յօտար լերինս
չարաչար տանջանօք. զոր ընդ այլս
անցոյց. կարճիւր 'ի կենաց անտի։
*Իսկ փիլիպպոս դայեակորդի իւր. 29
որ առեալ տանէր զմարմինն նորա՝
երկեաւ յորդւոյ անտի. առ պտողո-
մէոս յերկիրն եգիպտացւոց հատ-
ուած փախստեայ լինէր։

ԳԼ: Ժ.

Մակաբէոս՝ եւ որք ընդ նմա էին 1
յօգնականութե Տն զօրացեալք.
գերեվարձ առնէին քաղաքին եւ տա-
ճարին։ *Եւ զբագինսն՝ որք 'ի մէջ 2
քաղաքին էին. զորս այլազգեացն ա-
րարեալ էր. եւ զտեղին պաշտամանց՝
քակէին։ *Եւ զտաճարն սրբէին. եւ 3
այլ սեղան շինէին. սրբեալ զվէմսն
հրով. եւ դարձեալ 'ի նոցունց հուր
առնուին. եւ մատուցանէին զողջա-
կէզս պատարագացն յետ երկեամ ժա
մանակի. ճրագունս՝ եւ խունկս՝ եւ
զդնել նուէրս հանապազորդս յաճա-
խաց հացին։ *Եւ զայս իբրեւ արա- 4
րին. անկեալ տարածեալ 'ի վրա երե-
սաց իւրեանց զՏր աղաչէին. զի այլ
մի կրկնեսցին 'ի վրա նց նոյնք չարիք։
այլ թէպէտ երբեք յանցանիցեն ինչ՝
'ի ձեռն իւր հեզութբ խրատել. եւ մի
'ի ձեռս հայհոյիչ խուժադուժ հեթա
նոսաց մատնել զմեզ։ *Արդ յորում 5
աւուր տաճարն 'ի ձեռս հեթանոսաց
պղծեցաւ. դէպ եղեւ 'ի նմին աւուր 'ի
կը

նոյն ժամանակի զսրբութիւն անդրէն
նորոգել. 'ի քսաներորդի հինգերոր-
դի ամսեանն. որ անուանեալ կոչի
6 քասղեւ։ *Ցնծութբ ուրախութբ
առնել զտօն աւուրցն զութ օր. ըստ
բանի աւուրցն տաղաւարահարաց.
զի յուշ լիցի նոցա՝ որպէս յառաջ ըզ
տօնս տաղաւարահարացն 'ի լերինս
պաշտէին յայրս եւ 'ի քարանձաւս,
զօրէն երէոց խոտաճարակ շրջիլ։
7 *Վասն այսորիկ ոստս առեալ գեղե-
ցիկս՝ 'ի թաւ ծառոց. եւ ոստս արմաւե-
նեաց՝ որ յաջողեաց նմա սրբել զիւր
8 տեղին։ *Հրաման տուաք ածել
զօրս զայս 'ի տօն տարեկանաց բարե
կենդանութե ցնծութբ եւ ուրախու
թբ 'ի հասարակաց համարուէ ազգին
հեբրայեցւոց՝ ածել զայս տօն տարե-
կանաց 'ի կարգի աւուրց իւրոց։
9 *Այլ վասն անտիոքայ երեւելին ա-
նուանելոյ մահուանն. այս չափ բանք։
10 *Բայց վասն հօրամոյն անտիոքայ ա-
նօրէն զաւակի. ցուցցուք համառօտ.
որինչ անցք ընդ քաղաքսն անցանէին։
11 *Իբրեւ էառ թագ անտիոքոս. կա-
ցոյց 'ի վերայ իրացն արքունի՝ կող-
մանցն տորին ասորւոց եւ տաճկաս-
12 տանի զլիւսիաս։ *Եւ զպտողոմէոս՝
որում բարձր անձն ասէին։ զիրաւ-
ունս հաստատուն պահէր ընդ եբ-
րայեցիսն՝ վասն ուխտիցն եդելոց՝ եւ
իրացն զրկելոց՝ ջանայր խաղաղու-
13 թբ անցանել։ *Վասն այսորիկ ամ
բաստան լինէին զնմանէ ընկերքն իւր
առ անտիոքոս. եւ մատնիչ կոչէին զնա
յայն սակս. զի կողմանքն կիպրացւոց
'ի ձեռին էին նորա 'ի փիլոմետորայ
հրամանէն։ եթող զնա. եւ եկն առ
անտիոքոս. նա իբրեւ ոչ համբերէր
նախատանացն. դեղս էառ անձամբ
14 իւրով. եւ մեռաւ։ *Գորգիաս զօ-
րավար վայրացն՝ զօրաժողով լինէր
եդոմայեցւովքն հանդերձ. հաստա-
նիլ՝ հարկանել՝ խուզել զամուր ա-
15 մուր կողմանցն։ *Ընդելուզանէին.
14 * Այլ զաղգատոհմն նոցա առանց ոխս ՚ի մտի ունելոյ ։ վասն բազմապատիկ յանդգնութե ժպրհութեան նոցա ։ սակայն հրամայեցաք աղէքսանդրա ցւոց քաղաքակից արժանիս առնել ՚ի համարի ։ 15 * ՚Այրքա և մատեան յետսամիտ խորհրդով՝ և անկակից խորամանկութե՝ զայն բարիս յան ձանց մերժեցին ։ և քանզի հանապազ զմիտան իւրեանց ՚ի չարին հաստատե Թե ունէին ։ ոչ միայն ՚ի բաց մերժե ցին զերևելի պատիւ մեծարանաց ընկերութե՛ն ։ այլ գարշելի և անաւր գեն ։ և պիղծ համարին բանիւք և լուութեամբ ։ և զայնս ևս սակաւս որք ՚ի մեզ գԹոլին նոՀաճեցան՝ խո տեն ։ և անարգեն ։ և անկեաց կեանս շտապ տագնապաւ ՚ի վերոյ հասու ցանեն կարՀ ՚ի կարձոյ վաղվաղակի ։ ՚ի կործանումն իրաց նոցա խոստա նան անցուցանել ։

16 * Այսմ ամենայնէ հաստատեցաք նոցա ընդ մեզ Թշնամութիւն ։ և խորհուրդ ևս ՚ի մտի եդաք ։ եԹէ գուցէ առ այսպիսի խորամանկ բա րոյիւք նոցա յանկարծակի խռովու Թի՛ ինչ ՚ի մեր վերայ հասանիցէ ։ նո քա ըստ իւրեանց անօրէնութեանն զԹիկունս հատ առնիցեն ։ մատըն տու ՚ինեքըստ արտաքս առ Թշնա միս անդր գտանիցին ։ հրաման տուաք վաղվաղակի իբրև ՚ի ձեռն առնու ցուք զայդ մեր առ ձեզ հրովարտակս ։ զմնելեկան չարագործդ կնաւ և ման կամբ հանդերձ մեծաւ Թշնամանաւ և աշխատութեամբ ։ ոտիւք և ձե ռովք և պարանոցօք կապելովք ։ շուր ջանակի պատեալք պաշարեալք պահ պանօք ։ ահագին պատուհասիւք առ 17 մեզ արձակել ։ * Օ՛ի իբրև նոքա խո րամանկս ըստ անօրէն չարագործու Թեան ։ պատիժ և պատուհաս ըստ իւրեանց արժանի գործոցն կրեսցեն ։ խաղաղագոյն և դիւրին մերոյ իրաց կազմած հաստատութե՛ պատրաս տեսցի ։ ապա Թէ գացի ։ որ Թագուս ցէ ոք ՚ինոցանէ ։ այր մի՝ կամ կին մի ։ կամ տղայ մանուկ մի ։ յանցեալ ծերութե՛ մինչև ՚ի դիւեցիկն ՚ի գրկի ։ չարաչար տանջանօք պատուհասաս մահու զնա տոհմաւ հարցեն ։

18 * Այսպա Թէ ոք գտցի ։ որ զղօղեալն Թագուցեալն գուշակել ։ ինչքն և գոյք։ ստացուածքն գուշակողացն լիցին ։ և հեղ յարքունի գանձէն նմա պարգև լի ցի ։ և աղատութե՛ պատակս պատու հեալ ՚ի հրապարակ եկեսցէ կոչեցեալ ։ 19 * Այսմ ամենայն տեղի՝ որ երևեսցի ՚ի նմա՝ ՚ինոցանէ ոք զղօղեալ կամ Թա քուցեալ ։ աւեր՝ հրձիգ՝ և անապատ լեսցի ։ և ամենայն ազգի մարդկան յամենայն պետս անպետ կացցէ մին չև յաւիտեանս ժամանակաց ։

Գ Ի Ր Գ Ր ։

1 Այսմ հրովարտակն արքունի օրի նակ այս գրեցաք ։ բայց ընդ ամենայն տեղիս՝ ուր և հասանէր հրաման հրովարտակին ։ գաւառա կոյս քաղաքաժողով ուրախութիւն լինէր հեԹանոսացն մեծաւ ցնծու Թեամբ և ուրախութեամբ ։ զա ռագաստեալ խորամանկ նենգութի՛ զոխութիւն խորհրդոցն գաղտնեաց յայտնութեան համարձակութեամբ զիշնամութիւնն ցուցանէին ։

2 * Այսմ քաջացն սուգ անհնարին՝ և դեր և արծիւն արտօսրալից գոչմամբ եռանդն ՚ի վե րոյ հասեալ զսիրտս ձմեր ։ յան կարծակի հրաման գաւնութեանն որ ՚ի սատակումն զամենեսեան առ հասարակ հրաւիրեր ։

* Այն-

*Բանզի զինչ օրէնք՝ կամ քաղաք. 3
կամ բնակութիւն բնաւ տեղի մարդ֊
կան, կամ որ անցք փողոցաց ընդ ա֊
մենայն քաղաքս գուժիւ աղաղակաւ
և կոծով՝ 'ի վերայ նոցա չէին լցեալ
ճչելով:
* Զի այնպէս մեծաւ սաստիկ դառ֊ 4
նութեամբ և անողորմ հրամանաւ
զազգն ընտրեալ՝ 'ի քաղաքաց քաղա֊
քաց ժողովեալ յուղարկէին 'ի ձեռն
զօրավարաց քաղաքացն և գաւա֊
ռացն. զի արտաքոյ բնակութեան 'ի
տալ պայման հրամանին տարապար֊
տուց մեռանիլ: և յայնչափ աղէտ տա
րակուսի էր 'ի վերայ անհնարին
վշտացն. մինչև սիրտն ոխակալ՝ ակն
նախանձալից՝ վասն հաւասար գթոյն
յանողորմ տեսիլ չարչարանաց մարդ֊
կան արտասուօք քամէին, զյանկար
ծակի զթշուառութեան ճանապար֊
հօքն: * Զի երթային՝ տանէին բազ֊ 5
մութիւն ծերակոյտ ալեացն հնա֊
ցելոց հիւանդաքայլ ոտիւք, տա֊
րակուսեալ տկարութեամբ 'ի հնու֊
թեան ժամանակի: իսկ որ արդեւս
նորոգ ամուսնութիւնք 'ի միմեանս
հասեալ թերալից ուրախութեամբ
նորասէր առագաստիցն չարաչար
գուժիւ մերկացեալք ուղւոյ լինէ֊
ին: * Եւ ամրածածուկ քողաձիգ 6
ծնգասէր հարսունք՝ վարսս մերկա֊
ցուցեալ՝ գոյժ առեալ՝ զիւղաթորմ
ցցունս. յանդգնեալ՝ հոլանեալ՝ հող
'ի գլուխ տանէին: փոխանակ երգոյն
ուրախութե՝ ձայնակից ընկերօք անըն
դել աշխատութե տառապանօք. հե֊
բարձակք ցտեալք՝ և կապեալք՝ ընդ
հրապարակն մինչև 'ի նաւացն նաւա
հանգիստս բռնութբ քարշեցեալք
երթային: * Եւ նոցունց ամուսինքն՝ 7
տուն ընդ անձն փոխանակ երիտա֊
սարդութեան ցնծութեանն՝ ձեռա֊
կապօք խառնաձիգք 'ի մանչիւն լալոյ.
վասն հասեալ ժամանակին անդէն
առ ոտս իւրեանց զօրհաս մահուն
դէմ յանդիման առ 'ի դժոխս նկա֊
րէին: * Եւ այսպէս զամենեսին իբրև 8
զգազանս ինչ 'ի վայրէ երկաթակապս
ածեալս. ընդ խելս նաւացն զպա֊
րանոցսն կապէին. և նովին շղթայ
իւք բևեռէին. կիսոցն զոտիսն և զձե
ռացն կապելոյն առեալ ընդ վերնա
կողմն՝ տախտակամած նաւին բևե֊
ռէին. յամենայն կողմանց թմբ֊
րեալք անձին ինչ հրամայել՝ յերթալ
նաւացն նենգութեամբ ինչ մի արաս
ցեն: * Իբրև այնպէս զամենեսին 9
զնոսա 'ի նաւ անդր ամրացեալ տա֊
նէ

նէին. և ընդ հողմոյն աջողել ըստ
հրամանի թագաւորին 'ի տեղի հա֊
սուցանէին. և հրաման ետուն ար֊
տաքոյ քաղաքին յասպարիսի անդ՝
յընդարձակ տեղւոջ՝ յաշխարհակոյտ
վայրի՝ վասն խայտառակութեան
ազգին. զի ամենեցուն համարձակ
իցէ տեսանել. զորս յայնկոյս յայս֊
կոյս շահատակեն. զի առաջին քինու
վրէժն զամենեցունց ընդ այն հա֊
10 նէին: * Իբրև այս ամենայն լինէր.
դարձեալ լու լինէր, թէ ազգակիցքն
դաղտուկ ելանէին արտասուակցորդ
լինիլ. վասն յանկարծակի թշուառու
թեանն 'ի վերայ ազգին հասելոյ.
իբրև այն ազդ լինէր, 'ի սրտմտու֊
թի բարկութեան բրդիւր թագաւ
որն. հրաման տայր այնոցիկ. որք 'ի
ներքս 'ի քաղաքի անդ էին. ածել՝
խառնել ընդ նոսա. և առ հասարակ
'ի նմին պատժի պատուհասի արժանի
առնել զամենեսեան. և ընդ միով
աշխարհամար գրովն զազգատոհմն
ամենայն յանուանէ գրել:
11 * Զի առ սակաւ մի յառաջ յայտնե
լոյ գործոյն՝ վասն սրտցաւութե պաշ
տամանն պատուիրեալ էր սաստիկ
պատուհասիւք՝ մեծամեծ տանջա֊
նօք 'ի միում ժամանակի արագ կո֊
12 րուսանել: * Եւ նոցա գիր համա֊
րոյն այսպէս դառնութեան սաստիկ
հրամանին սրտցաւութե պնդապէս
յարևելից մինչև յարևմուտս ան֊
վախճան կատարած յուղարկս քառա
13 սուն ձկտիւր: * Առաւել մեծապէս
քան զօրէն հանապազորդ՝ թագաւ֊
որն լի ցնծութեամբ հրաման տայր
մեծի տաճարին կոչնականս նուիրել
յամենայն մեծամեծաց՝ մոլորեալ
մտօք 'ի ճշմարտութենէ. անօրէն և
պիղծ բերանովն զանշունչ զանձայն
զանմռունչ կուռսն յարգէր՝ գովէր.
և յօրինաւոր սրբութիւնսն խօսէր՝
որինչ ոչ էր արժան:
14 * Եւ յետ սակաւ ժամադիր ժամու
եկին մատուցին աշխարհամար դպիրքն
զգիրն առաջի թագաւորին. սկսան
պաղատիլ. և անհնար համարեցան
առնել գիր զաշխարհամար հրէիցն:
ասէ. ոչ յաղթեմք վասն անչափ բազ
մութեանն. զի բազումք են՝ ասէ.
որք ցրուեցան աստ անդ ընդ աշխարհ՝
անհամար մնացեալք են արտաքոյ
այդր գրոյ. (անհամար կան.) և որք
'ի տեղիս տեղիս յապարանս ապա֊
րանս 'ի կողմանս երկրին եգիպտաց
15 ւոց անհամար կան: * Իբրև զայն
լսէր թագաւորն. պատուհասակոծս

արձակեր զդպիրսն իբրև զկաշառս բեկս . իբրև զայն ինչ խելս մեքենայ իմն խառնել , զի ապրեցուցանել մատ Թագուհին նոքա զնոսա ։

16 * Նոքա հաստատեին . և ասէին . և յայս յանդիման ցուցանէին զքարտեղս պահառել . և զդրիչսն մաշել և այս ամենայն լինէր վասն օգնականութեանն բարձրելոյն . որ ցուցանէր զգթութեն իւրոյ ի վերայ հեբրայեցւոցն ։

Գ Լ : Ե ։

1 Յայնմ ժամանակի Հոչեր նա ըզ Հերմէն փղպապետ մեծաւ սաստկութեամբ վառել զփիղսն ի վաղիւ անդր . զի առանց յապաղելոյ պատրաստեսցէ գինեզինս՝ խնկալիցս՝ զայրացուցեալս կնդրկաւ՝ գազանացուցեալս անապակաւ՝ ի հրապարակ առնել Թումով իբրև եօթնհարիւր . 500 ածել պատրաստել յահագին պատուհաս աղգին հեբրայեցւոց ։

2 * Յն Թագաւորն զայս հրամանն տայր փղպապետին . և ինքն յուրախութիւն դառնայր բազում զօրօք . բարեկամք մեծամեծ աւագանւոյդք առաւել և աս Թշնամութեք էին ընդ ազգին հեբրայեցւոց քան զԹագաւորն ։

3 * Յակ փղպապետն իբրև առնոյր զհրամանն սաստկութեան , կատարեր . և ի ժամ՝ անդր զփիղսն պատրաստեր . և այլ սպասաւորքն ելանէին՝ կապէին զտառապելոյն զոտս և զձեռս . և զայլ պահ գիշերապահ շուրջ զնոքօք զգուշութեամբ բիւրազգի ածէին ի միտս իւրեանց՝ համարեալ ընդ այգն ընդ առաւօտն վահճան սատակման ածել ի վերայ ազգին տեսանէին ։

4 * Յակ հրեայքն յամենայն կողմանց զանձինս իւրեանց անզօրս և առանց օգնականութեան , գէշ անկեալ հեԹանոսացն համարէին . զամենակալն Յ՚Ծ . և զամենայն զօրութեանցն զօրս յուսացեալ , զողորմածն Յ՚Ծ անդադար բարբառով արտասուօք կարդային . անկեալ առ հասարակ աղաչէին . զար ձուցանել՝ շրջել զկորհուրդն անօրէնութեան՝ մեծապէս յայտնութեք անցուցանել զօրհասն . որ անդէն մօտալուտ զոտիւքն և զձեռսն պատեալ է ։ * Փղպապետն զանողորմ 5 զգազանսն՝ գինեզինս՝ խնկալիցս զայրացուցեալս՝ ընդ առաւօտն ի դուռն Թագաւորին հասուցանէր ։

6 * Յակ այն՝ որ յաբիտենից ժամանակաց կայ գերկեղիկ արարածք բարւոք բա

ժին տուննջեան և գիշերոյ . վիճակ եղեալ յերկնաւոր՝ի պարգևատու յառատաձեռն Յ՚Ի , ելանէր պարգև մի մնան քնոյ . զոր առաքէր՝ի վերայ Թագաւորին . և անդէն Թանձր և խորխորին . և քաղցր և անոյշ քնով՝ի զօրութէ Ծ՚ն կապէր զԹագաւորն . և զնա յանշարժ խորհրդոյ անտի խաբեալ՝ վրիպեալ կացուցանէր ։

7 * Յնդ որմէն հեբրայեցւոց զժամակալ զմահաբեր զօրհասն զժամն նահն զանցուցեալ . զսուրբն զերկնաւորն զՅ՚Ծ օրհնէին . և դարձեալ անկեալ՝ի վէր երեսաց իբրեանց աղաչէին . կատարել զպարգևն՝ի մեծաձայն զօր բազկէ անտի . ՝ի մէջ հպարտացեալ հեԹանոսացն երև եցուցանել ։

8 * Յբրև ընդ մէջ լինէր ժամ տասներորդ . և սպաս տաճարին ամ պատրաստեալէր . և կոչնականք չիւրաքանչիւր չափս յօրինեալ կային . յան կարծակի խԹեաց՝ ազդ արար . մերձ ՝յանցանել լինիլ ժամն ուրախութէ տաճարին . զայն ժամ ուրախութէ զմնաս ածէր Թագաւորն և անդրէն բազմեալ վազվազակի հրամայէր զկոչնականսն՝ի ներքս կոչել . սպաս առնել տաճարին՝ բարձիցն պատրաստութեան , զայր այր չիւրաքանչիւր գահ հրամայէր մատուցանել ։

9 * ՝Ի ձեռն առեալ զուրախութիւն . խրախուսնա առնէր տաճարին . և զա նագան ժամանն ընդ ուրախութիւն զոհարԹութէ անցուցանել . իբրև յերկարագոյն նոճագքն զբանիւքն անկանէին . կոչեալ զփղպապետն ա հեղ սատկութէ դառնապէս պատուհասեր . ընդէ՞ր՝ կամ՝ զմէ՞ . ժամադիր սատիկ հրամանի զօրահասս անցեալ հրեայքն . և այսօր կեցեալ գտանին ։ * Յա կայր՝ ցուցանէր զհրամանն արքունի գիշերապահն կատարեալ . և նոքին կոչնականքն վկայէին բանիցն փղպապետին . ապա Թագաւորն զդառնութիւնն ցածուցանէր , և ասէր . երթ դու՝ քեզ այսօր քնոյ չնորհք կալցին նոքա . բայց անվրէպ զվաղուձի օրն պատրաստեսջիր ՝ի նմին գազանութեան զփիղսն ՝ի վերայ անօրէն ազգին հրեից սատակման հասուցանելոյ ։

11 * Յբրև զայս ասէր Թագաւորն . և ամենեքեան լի ուրախութէ իբրև ընդ մի բերան զհրամանն գովէին . չիւրաքանչիւր վանս ՝ի միմեանց բա ժանեալք . վասն անագան ժամուն մեհենին . և սակայն այնչափ ոչ տային

քնոյ

քնոյ զանձինս , որչափ զգիշերն ամե_
նայն զմտաւ ածէին մեքենայել ·
զինչ նոր նոր չարչարանս 'ի վերայ
տառապելոցն մարթասցին հասուցա
նել : * Մինչ հաւ խօսէր , կանուխ 12
ընդ առաւօտն դազանացուցեալ՝ մա
ռեալ զգազանսն 'ի գինի և 'ի խունկ՝
ածեալ՝ պատրաստեալ · և ինքն իջեալ
'ի մեծ սրահի անդ ձեռն առեալ շր_
ջիւր · իսկ որք 'ի քաղաքին զօրքն
էին · առ հասարակ եկեալ հեղեալ՝
եկեալ ժողովեալ էին · դէտ ակն ու
նէին թշուառութեան տեսլեանն ,
որ ընդ այդ ընդ առաւօտն 'ի վերայ
հրէիցն սպառնացեալ պահիւր :
* Իսկ հրէայքն ժամ 'ի ժամ անցեալ 13
զօրհասաւն · բազում արտօսր՝ պահոց
պնտութեան · ձայն ողորմ ողբոց ·
զձեռս յերկինս բարձեալ՝ զմեծ զա_
մենազօրն Ա.ծ աղաչէին , միւսան_
գամ այցելու լինիլ · և փրկել զնոսա
յանհնարին յօրհասէն :
* Եւ լինէր արեգական ճառա_ 14
գայթիցն յաշխարհս սփռել · և թա
գաւորն յարուցեալ դէտ ակն ունէր
մեծամեծացն · և հասեալ 'ի դուռն
փղապետն՝ աչօք ցուցանէր զպատրաս
տութի փղաց · որպէս վառեալ պատ
րաստեալ և 'ի դուռն հասեալ էր :
* Թագաւորն շնորհակալ լինիւր · և 15
զարմացեալ էր ընդ պատրաստու_
թեն · դարձեալ միւսանգամ անդրէն
զառածանէր · զի՞նչ իրք իցեն վասն
անօրէն ձեռոյն · դարձեալ զմիտս
դարձուցանէր · պատուհաս 'ի վերայ
փղապետին կայեր · թէ որինչ հրա
մանն տուեալէր՝ զայն ոչ վաղվա_
ղակի 'ի գլուխ հանեալ ցուցանէր :
* Իսկ այս ամենայն լինէր 'ի հրամա 16
նէ Տ՛ն ամենակալի · զանհնարին զօր_
հաւին պնտութեան խորհուրդն՝
յապուշ դարձուցանէր : արդ մա_
տուցեալ փղապետն 'ի մեծամեծ յա
ւագանին 'ի վկայութիւն ածէր ·
որպէս կանխաւ փիղքն վառեալք և
զօրքն պատրաստեալ · զհրամանն ար
քունի հաստատուն 'ի գլուխ կատա
րեալ ցուցանէր :
* Դարձեալ յայնմ ժամանակի թա 17
ընկեր գաւորն ընդր մեծաւ բարկութեամբ
լի մեծութեց գթոյն Ա.յ · զի կամէր
ցրել զխորհուրդս նորա · որ անդէն
իսկ մեծաւ բարկութեամբ՝ սաստ_
կաւ պատուհասիւ հայեցաւ ընդ
փղապետն · սկսաւ խօսիլ՝ և ասէ :
* Որք միանգամ հարք և մարք , կամ 18
որդիք 'ի տեսանել իսկ եկեալ իցեն ·
դրեսցին կորուսանել գազանացդ · և
զքեզ ընդ նոսա փոխանակ մեղացդ
այդոցիկ · որ 'ի սկզբանէ նախնեաց
մինչև 'ի նախնիս անարատ զարդա_
րութիւն և զհաւատ առ մեզ պահեալ
է հեբրայեցւոցդ այդոցիկ · և եթէ
ոչ վասն դայեկատոհմ միամտութեան սի_
րոյն էր · զքաղցր արևդ յաչացդ հա
տանէի · և զքեզ նենգաւոր չարա_
գործ , 'ի միջոյ պակաս առնէի :
19 * Փղապետն այսպէս յանկարծ ժա_
մանակի յեղեղնաւոր պատուհասէն
մազապուրծ եղանէր · և յառաջին 'ի
զուարթութէ անտի զիջեալ տրտ_
մագոյն երեսօք այր ընդ արամբ զինքն
'ի միջոյ անտի 'ի բաց մերժէր · և բա
րեկամքն իւրաքանչիւր գլուխ 'ի վայր
արկեալ՝ զամբոխն ժողովեալ · յիւ_
րաքանչիւր պէտս՝ հրաման տուեալ
20 ցրուէին : * Որդիքն հեբրայեցւոց
իբրև լուան զթագաւորին · զերևե_ զհրաման
լին զՏՐ Ա.ծ · զթագաւորն թագա_
ւորաց օրհնել սկսան · առաւել իբրև
զայս օգնութիւն 'ի վերայ անձանց
իւրեանց գտին : և անդէն վաղվա_
ղակի թագաւորն հրաման տայր կոչ
նականացն յուրախութիւն դառնալ :
21 * Կոչեաց զփղապետն դարձեալ , մե_
ծաւ պատուհասիւ սկսաւ խօսիլ
ընդ նմա՝ և ասէ · քանի՞ցս անգամ
քեզ վասն նոցա · ով թշուառական ,
պատուիրեալէ վառել՝ կազմել՝ պատ
րաստել զփիղսն · դոնէ արդ առ
վաղիւ պատրաստեսցես եղեռնաւոր
թշուառական ազգին հրէից :
22 * Իբրև զայն լուէին բազմականքն ա_
մենայն · առաւել զարմանային ընդ
յեղեղուկ միտս թագաւորին · և ա_
սեն : ցե՞րբ է այդ՝ ա՛րքայ · ցե՞րբ 'ի
միտս քո փորձես զմեզ · արդ՝ երիցս
անգամ հրամայեալէ սատակել զազգն
դժպհի · և դարձեալ միւսանգամ
զքոյին հրամանսդ անդրէն եղծա_
նես : զի արդ վասն այսորիկ և քա_ զի վասն
ղաքս ամենայն 'ի ժողովս իւրեանց այսորիկ
առաւել վշտացեալ են , քան զայն
չարագործս :
23 * Յայնժամնէ ամենայնիւ վրիպակ ար
քայն լի եղև յիմարութեամբ · 'ի վա
րանս մտանէր · և յայն ինչ ոչ հայէր ·
որ յերկնից այցելութ՛ին էր 'ի վերայ
հեբրայեցւոյն · դարձեալ սաստկու_
թեամբ երդնոյր զերդումն անկա_
տար · և ասէ · առանց իրիք երկուա
նալոյ զնոսա 'ի դժոխս յուղարկեսցից ·
առաւթուր կոխեալս անհնարին գա_
զանացն · զօրաժողով լինիլ · հաստ
նիլ վաղվաղակի 'ի վերայ հրէաստա
նի առ հասարակ · զփայտակերան

հուրբ դատել. և զկաւակերտն ջուրբ
լռնմնալ. և 'ի գերութեան վարել
առ հասարակ զինչս և զստացուածս.
և որինչ կայ 'ի նմա. և զայն պահեստ
'ի մէնջ զտաձարն նոցա՝ հրձիգ առ
նել. և զնա զտուն զոհից զամենայն
աւուրս ժամանակաց՝ կայուցանել.
* Յայնմ՝ ժամանակի հաստատութբ 24
քանս լռեալ կոչնականքն և բարե
կամք և տոհմային սիրելիք. հաստա
տութեամբ զբանսն լռեալ՝ զուար
ճացեալք դնային. հրաման տային
զօրացն՝ յամուր վայրի արգելեալս.
շուրջ գիշերապահս և խրամապահս
կացուցանել։ * Իսկ փղապետն յան 25
հնարին մոլորութի զգազանսն վա
ռեալ պատրաստէր. խնկեալ գին
ւով կնդրկախառն զահեղ պատրաս
տութիւն. վառէր զդիւագին գա
զանսն առ վաղիւ անդր անթիւ զօ
րաց դէշ անկեալ. հասեալ յասպա
րիսի անդ. արդ եկն եմուտ 'ի սրահ
անդր. տեսանէր տագնապաւ զթա
գաւորն 'ի կատարումն կապեալ ժո
ղովրդեանն. * Յայնմ ժամանակի 26
ամենայն զօրօքն անհնարին գազա
նօքն զինեալ գայր 'ի ներքս թագաւ
որն. 'ի մոի եդեալ անգութ աչօք.
անողորմ սրտիւ. ինքնին տեսանել
զվշտագին սատակումն թշուառա
կան ազգին. * Իբրև եկին հասին 27
փղովք պատրաստելովք. և զօրօքն
վառելովք 'ի դուռն քաղաքին. աղ
լինէր հրէից թնդիւն զօրացն. փայ
լիւն զինուն. փողին՝ որ ելանէր, դի
զանայր՝ յամպս հասանէր. ամբոխ
աղաղակին զնոքօք պատեալ միտսն
յապուշ դարձուցանէր. և զայն յե
տին կատարած համարեցան 'ի վերայ
թշուառութեան կարծեացն. յողորմ
գութ խանդաղատեալ հարք և մարք.
ուստերք և դստերք. քորք և եղ
բարք. տոհմային բարեկամք և սի
րելիք, զմիմեանց պարանոցօք ան
կեալք փարեալ պատեալ համբու
րէին. * Իսկ կէսքն զմատաղածին 28
մանկունս 'ի գիրկս առեալ զյետին
զանծուծ ստինս 'ի բերան եդեալ տայ
ոցն համարէին. և մինչ դեռ յայնմ
աղէտս տարակուսի և շտապ տագնա
պի էր՝ 'ի թաւ մածեալ կային. յի
շեցին զառաջին օգնականութիւնն,
որ եղև յերկնից. առ հասարակ միա
բան 'ի միմեանց մեկնէին. և 'ի տղայ
մանկանց բերանոցն զստինսն 'ի բաց
կորզէին. և առ հասարակ անկեալ
առաջի մեծութեանցն Տնութեանն
թաւալէին. ձայն բարձեալ մեծաւ
բարբառով 'ի գոչիւն լալոյ. զամե
նազօրն զամենակալն աղաչէին. 'ի
գութ դառնալ մեծաւ ողորմութբ.
փրկել զհատեալս 'ի յուսոյ՝ հասեալս՝
մերձեալս 'ի դրունս դժոխոց։

Գլ. Զ։

1 Եղեազարոս ոմն անուն՝ այր երևե
լի 'ի գնդէ քահանայիցն, յեցեալ
'ի ծերութիւն. զարդարեալ լուսա
որեալ ամենայն քաջութեամբ և ար
դարութեամբ 'ի մանկութենէ իւր
մէ. հաղիւ ինչ զծերսն՝ և զամենե
սին որք զիւրեն էին՝ հանդարտեցու
ցանէր. և առինքն յարեալ 'ի Տրն
Տր աղօթս մատուցանէր. և յա
ռաջ մատուցեալ ասէր այսպէս։
2 * Թագաւոր մեծազօր. բարձրեալ՝
ամենակալ Տր. որ զամենայն վա
րես՝ և ուղղես 'ի գթութիւնս ողոր
մութեանց քոց. հայեաց 'ի վերայ
աբրահամեան զաւակիս. 'ի սրբոյ
իսահակայ. 'ի յորդիս յակոբայ. 'ի
բաժին սրբութե քոյ՝ 'ի ժողովուրդ
օտար յօտար երկիր 'ի կորուստ մատ
3 նեալ։ * Դու այն Տր ես. որ զփա
րաւոն բազմացեալ կառօք և երիվա
րօք և զօրօքն եգիպտացւոց. զհպար
տացեալ՝ բարձրացեալ՝ մեծաբա
նեալ՝ ամբարտաւանեալ զօրօքն հան
դերձ ծովաթացս 'ի կորուստ յու
ղարկեալ ընկղմեցեր։
4 * Դու՝ որ զանթիւ զօրսն սերձա
ցեալս՝ պարծեցեալս՝ սանձարձակ ար
քային ասորեստանեայց. որ 'ի մի
սայր սուսերի. և 'ի մի տեղ նիզակաց
առեալ. աւարեալ. ամփոփեալ զեր
կիրն ամենայն հրեաստանի. հպար
տացաւ ևս հասանել ծանր բարբա
ռով. յանդուգն սատակութեամբ՝
մեծաւ նախատանօք 'ի վերայ քաղա
քին սրբութեանց։ Դու Տր ամենա
կալ հարեր՝ բեկեր՝ կործաներ.
յայտ յանդիմանութեամբ ցուցեր
զզօրութիւն բազկի քոյ ամենայն հե
5 թանոսաց։ * Դու որ յերկրին բաբե
լացւոց երեք մանկունքն ինքնակամ
զանձինս 'ի հուրն մատնեցին, զի մի
երկրպագեն անօտեաց պաշտա
մանց՝ փրկեցեր. զի և հերոյ վարսից
նոցա ոչ մերձեցաւ հուրն. ձարակ
ետուր հրոյն զօրութեանց զթշնա
6 մեաց։ * Դու՝ որ 'ի նախանձ նենգու
թեան 'ի գուբ արկեալ զդանիէլ՝ 'ի
բերանոյ անհնարին գազանայն 'ի
լոյս ածեր անարատ պահեալ։
7 * Դու և զհիւրն անդնդոց տեսեր.
զի մաշիւր 'ի պորտ ձկանն՝ անարատ
ածեալ

ածեալ յանդիման ընտանեաց իւր_
ոց կայուցանէիր ։
*Դու հայր. և արդ՝ ամբարտաւա_ 8
նատեաց. բարեսէր. ողորմած. ա_
պաւէն ամենայնի. արագ երևեա՛ց
'ի վերայ ազգիս Իսրայէլացւոց. որք
'ի ձեռս պղծոց՝ անօրինաց հեթա_
նոսաց անկեալ ք չարաչար կան 'ի պա
տուհասի ։ *Ապա եթէ ըստ ամ_ 9
պարշտութեան կեանքս մեր 'ի վախ
ճան մահու այսու սաստիւ հասեալ ք
իցեն . 'ի ձեռացս միայն 'ի թշնա_
մեացս փրկեա՛ զմեզ. և որով ք կա_
մեսցիս սաստիկ պատիժ պատուհա_
սիւք դատեսջի՛ր զմեզ. զի մի՛ ընդու
նայնամիտ զրախորհուրդ հեթանոսք
պարծեսցին առաջի սնոտեայն իւր
եանց 'ի վերայ կորստեանս մերոյ. և
ասասցեն. եթէ ոչ Աստուծն իւրեանց
փրկեաց զնոսա 'ի ձեռաց մերոց ։
*Ամէ դու որ զամենայն զօրութի՛ս՝ 10
և զիշխանութիւնս՝ և զպետութիւնս
'ի ձեռս քո ունիս. անուշակ՝ ան_
մահ, ողորմած Աստուած՝ ողորմեա՛ց
գթա՛ 'ի մեզ. որ այսչափ անօրէն
թշնամանօք զանկարգ զանխմաստ
պատուհաս մահու յանձին կրեալ.
'ի կենաց 'ի մահ՝ զօրէն չարագոր_
ծաց յուղարկիմք ։
*Հաշեսցէ, և մաշեսցէ զհեթանոսս 11
զօրութիւն յաղթութեան քոյ. զի
դոյ զօրութիւն փրկութեան 'ի պա_
տուի քում, 'ի վերայ փրկութեան
յակոբեան տոհմին ։
*Անկեալ աղաչեմ աւասիկ ամենայն 12
ալածրի երամ երամ բազմութիւն
տղայոց՝ և սոցուն հարք և մարք ար
տասուօք. զի ողորմութի քո յայտնի
լիցի ամենայն հեթանոսաց. եթէ
դու Տր մեր ընդ մեզ ես. և ո՛չ դար
ձուցեր զերեսս քո 'ի մէնջ. այլ որ_
պէս յառաջ իսկ խոստացար. եթէ
և յերկրի թշնամեաց նոցա զնոսա 'ի
ձեռաց ո՛չ թողից. և արդ զնոյն բան
հրամանի քոյ կատարեսջի՛ր Տր ։
*Այն ինչ լինէր՝ եղեազարու զա_ 13
ղօթսն առ Աստուած մատուցանել.
և թագաւորն գազանօքն և զօրօքն
հանդերձ յասպարէզ անդր մեծաւ
բարկութեամբ հասանէր. զաչս 'ի
վեր բարձին որդիքն հեբրայեցւոց.
իբրև զայն տեսին՝ 'ի ձայն մեծ գոչ
ման յերկինս զաղաղակ բարձին.
յայն ձայն գոչմանն առ հասարակ լե
ռինքն և հովիտքն անդէն կրկնեալ
բարբառով ընդդէմ հնչեցին. ան_
հնարին խռովութիւն յերկոցունց
աղաղակէ գոչմանն 'ի վերայ զօրացն
14 հասանէր ։ *Յայնմ ժամանակի
բարձրեալն փառօք՝ մեծապատիւ ա_
մենակալ՝ ճշմարիտն Աստուած երևե
ցոյց զերեսս իւր. եբաց նա զդրունս
երկնից. ուստի եկին իջին երկու փա
ռաւորեալք աներևոյթ հրեշտակք.
զի ո՛չ ումեք երևէին՝ բայց միայն
15 հրէից ։ *Նա՛ հարան 'ի դիմի թշնա
մեացն. և լցին զզօրսն խռովութբ.
և լի արարին ահիւ և դողութեամբ.
և առ հասարակ զամենեսեան ան_
շարժ կապեալ՝ պատեալ՝ պաշարեալ
պահէին . և թագաւորին գլխովին
սոսկացեալ դողացեալ և քստմնեալ
լինէին ոսկերքն և մարմինքն. սաստն
խստութեան գազանութեան՝ և արտ
մտութի բարկութեան անդրէն յա_
պուշ միտս եղծանէին. և գազանքն
անդրէն յետս 'ի վերայ վառեցելոց
զօրացն յարձակէին. և զբազումս 'ի
նոցանէ առաթուր հարեալ անդէն
առ ոտս իւրեանց սատակէին ։
16 *Յնմին տեղւոջ վաղվաղակի թա
գաւորին բարկութի 'ի գութ՝ յար_
տասուս վասն առաջնոյ պնտութե
յամառութեան խստութեանն հար
կանիւր. զի իբրև լուաւ զպոչիւն
բարբառոյն՝ և զմտաւ եած զկորու_
ստն բազմաց, զայրացաւ՝ հարաւ
յարտասուս. խօսիլ սկսաւ ընդ բա_
րեկամսն լի՛ բարկութբ՝ և ասէ ։
17 *Անցիք՝ զանցիք. ապաքէն բռնա_
ցայք. և թագաւորել կամիք. և զիս
իսկ 'ի վերայ ամենայն երախտեացն
'ի մտաց՝ 'ի խորհրդոց՝ 'ի տէրութենէ
առ հասարակ մերժել կամիք. գո_
ղացայք աւադիկ զմիտս իմ խորհր_
դականքդ առաջինիք. և զինչ ոչ է
օգուտ տէրութեան մերում, զայն
առնել տալ մեքենայիւք ։ Եգիպտ.
18 *Ո՞վ է, որ կհզօր աշտարակդ և
զհաւատարիմ աւանդապահսդ ուխ_
տից մերոց ։ ո՞վ է՝ որ զսոսա յիւրա_
քանչիւր տեղեաց բնակութե իբրև
զգազանս ինչ չարագործս յայս տեղի
կապեալս՝ կուտեալս՝ պաշարեալս
պահէ ։ ո՞վ է. որ զսոսա 'ի սկզբա_
նէ ընդ մեզ միաբանութեամբ և ար
դարութեամբ քան զամենայն ազգս
և ազինս 'ի մէջ բազում պատերազ
մաց և խռովութեան 'ի ժամանակի
հաւանութեան զարդարութի պար_
հեալ, այսպիսի անօրէն չարաչար
տանջանօք ածեալ՝ կապեալ՝ պա_
տեալ՝ պարշարեալ պահէ ։
19 *Լուծէք՝ արձակեցէք զանօրէն կա
պանդ. յիւրաքանչիւր տեղիս խա_
ղաղութեամբ յուղարկեցէք՝ զառա_
ջին

ջին զեղեալ լլկութիւն 'ի գրգռու_
ողորմանաց թիս ողորմանաց. մխիթարեցէք զոր
փոխեցէ դիտդ ամենակալն ԱԾ՝ երկնաւորի
կենդանւոյ. որ 'ի սկզբանէ նախնեաց
մինչև ցայսօր ան արգել տէրութիւն
և հաստատուն իրաւունք տուեալք
են մեզ. և թագաւորն յայն օրինա_
կի զբանս իւր մերկանայր:
* Իսկ հեբրայեցիքն վաղվաղակի յա 20
կան թօթափել լուծեալք 'ի կապա_
նաց անտի. զամենակալ փրկիչն
զսուրբն ԱԾ իւրեանց օրհնէին. այն
ինչ մաղապուրծք 'ի դրանց մահուա
նէ զհաւատալի զերծեալք լինէին:
* Իբրև զայն դիւրութիւն դիւրէր 21
հեբրայեցւոց թագաւորն. ինքն 'ի
ներքս 'ի քաղաքն դառնայր. կոչել
հրամայէր զմոից դպիրն՝ և ասէ.
հանպա վաղվաղակի գինի և նաշիհ,
և որ ինչ պիտոյ իցէ ուրախութեան
հրեիցն մատուցանել զեօթն օր. զի
հրամայեցաւ նոցա 'ի նմին տեղւոջ.
ուր համարեցան զեղեռնաւոր սա_
տակումն անձանց իւրեանց կատա_
րել. անդէն զայն եօթն փրկութե
անցուցանել: * Յայնմ ժամանակի՝ 22
որ յառաջ մատնցոյց նախատանօք
մերձեցեալ, մանաւանդ թէ մօտեալ
իսկ էին ընդ դրունս դժոխոց. փո_
խանակ դառնածաղր օրահասին՝ իմ
ձիոյ ուրախութեան կացուցեալ 'ի
փրկութեան տեղւոջն. ուր սատակ
մանն և վհին ակն ունէին. բազմա_
կանս բազմականս բաշխեալ լի ու_
րախութեամբ յիւրաքանչիւր կող_
մանս բաժանէին:
* Եւ փոխանակ արտօսրալից ողբոյն 23
երգս առեալ 'ի ձայն օրհնութեամբ
հայրենի բարբառոյն զնշանագործ
զփրկիչն զԱստուած օրհնէին. զլա_
լումն և զհեծութիւն 'ի բաց մերժե_
ցին. պար առեալ ուրախութեամբ
խաղաղութեան և ցնծութեան նշա
նակ կանգնէին:
* Այն օրինակ և թագաւորն վասն 24
նոցա մեծի տաձարին ժամ տուեալ
ուրախութեամբ բազմաւ զկոչնա_
կանս հրամայէր 'ի ներքս կոչել. ան
պակաս բերանով յերկինս հայեցեալ
բազմապատիկ 'ի վերայ սքանչելի
փրկութեան ժողովրդեանն զԱԾ 'ի
վեր օրհնէին. և որ յառաջին սա_
տակումն դաղանադէշ հաւակերի ըզ
ժողովուրդն նուէրէին. իմդութե
յոգւոց ելանէին զամօթ և զխաս
յանձին կալեալ. և զհրաշունչ բար
կութիւնն իւրեանց շիջուցեալ՝ ցըն
ծութեամբ զուրախութիւնն զոհար
25 թացուցանէին: * Իսկ հրեայքն՝ որ
պէս և ասացաք յառաջագոյն՝ պարս
ուրախութեան կազմեալ զեօթնօ_
րեայ ժամանակն զոհարթութեամբ
ցնծութեամբ օրհնէին զԱԾ՝ 'ի հաւ
ասար միաբանութեան:
26 * Օրէնս դնէին ընդ ամենայն տե_
ղիս բնակութեան իւրեանց ածել
զաւուրսն զայնոսիկ ուրախութեան.
ո՛չ վասն հպարտութեան. և ո՛չ
վասն որկորստութեան. այլ վասն
գոհութե փրկութեանն. զոր արար
ընդ նոսա Աստուած:
27 * Կարգեցին խառնել զաւուրսն զայ_
նոսիկ 'ի տօնս տարեկանաց իւրեանց.
և ապա խնդրեցին 'ի թագաւորէ
անտի արձակել զինքեանս յիւրաքան
չիւր տեղիս. յաշխարհամար խառ_
նէին զնա. 'ի հինգերորդ քսաներորդ
պաքոնայ, մինչ 'ի չորրորդն 'ի պի_
փայ, աւուրս քառասուն:
28 * Դարձեալ հրաման ետ արարին 'ի
տեղւոջն առնել զելս և զծախս 'ի
հինգերորդէ անտի 'ի պիփայ, մին_
չև յօրն երրորդ ամսոյ աւուրցն. յո_
րում մեծապէս փառաւոր եցոյց ԱԾ
զողորմութիւն իւր. զի փրկեաց զնո
սա անարատս առ հասարակ. և այն
պէս ուրախ լինէր 'ի հրամանէ թա_
29 գաւորին: * Ոչ հրամայեալ էր տալ
զամենայն զհանդերձն ուրախութե,
մինչև յօրն չորեքտասաներորդ՝ յո_
րում գտին զվճիռ արձակելոյն իւր_
եանց. յանձն էառ թագաւորն. հրա
ման ետ տալ հրովարտակս 'ի քա_
ղաքս քաղաքս. առ զօրավար զօրա_
վար օրինակ զայս:

ԳԼ. Զ.

1 Արքայ փիլոպատորն պտողոմէոս
'ի կողմանս եգիպտացւոց առ
զօրավարս՝ և առ ամենայն իշխանս՝
և պետս. որ 'ի վերայ իրաց արքունի
են՝ ողջոյն. դուք խրախ լիջիք. զի
և մեք ողջ եմք որդւովք և եղբարբք,
և ամենայն զօրօք հանդերձ. որպէս
զի ուղղեաց ԱԾ զիրս մեր. որպէս
մեր իսկ միտք խնդրէին:
2 * Արդ ոմանք 'ի ներքէին բարեկամաց
ատի մերոց՝ ըստ իւրեանց չարա_
բարոյութեան կանխեալ մերձե_
նայլն չարախօսք լինիլ. գրգռէին
զմիտս մեր. մինչև ածին 'ի հաւա_
նութիւն տալ հրաման՝ ժողովել զա_
մենայն հրեայ ազգ՝ որ ընդ մերով
իշխանութեամբ իցեն՝ խոնել 'ի մի
վայր՝ կատարել 'ի նորատեսիլ տան_
3 ջանաց: * Եւ ամենեւին թոյլ ո՛չ
եատուն

եւտուն սրատձառս եդեալ զոխութիւն. որք ունին ընդ ամենայն հեթանոսս. մինչև ածին՝ ժողովեցին՝ զորս կա_ պեալս ևս ածին. քաղում՝ լկու_ թեամբ և չարչարանօք խբրև զան_ աշխարհիկս. մնանաւանդ թէ իբ_ րև զչարագործս. առանց ամենայն հարցափորձի քննութեան յօժարե_ ցան կոտորել զնոսա միանգամայն՝ քան զնուժս և զդուժս վայրենա_ գոյն ևս զգածեալ էր զնուբեամբք զգազանութիւն։

4 *Ա.ՀԼ մեք որպէս սովոր եմք՝ զնո_ սա խոտագոյնս պատուհասեցաք. այլ որպէս մարդասիրութիւն ունիմք ընդ ամենայն մարդիկ. հազիւ մինչ նոցա զոգիսն հնորհեաք՝ և մեք զՄ.Ծ զերկնաւոր ծանեաք. զի ձնմարտու թեամբ այցելու եղև հրեից՝ որպէս ոչ կայր զի հայր որգւոց լինիցի։

5 *Ա.Հ դարձեալ նոցա զսէր և զմիա_ մտութիւն որպէս զի հաստատուն ու նելով մեզ՝ ի նախնեաց մերոց. մին_ չև թողաք դոցա զամենայն ինաս. զոր եդին՝ ի վերայ. և զայս ևս հրա մայն տուաք. զի զամենեցուն դոցա զորինչ և ուրուք առեալ իցէ՝ յիւրա քանչիւր տէր դարձուցանել. զի ոք՝ ի նոցանէ ամենևին մի՝ զրկեսցի. և մի ոք իշխեսցէ նախատել զնոսա վասն երացդ եղելոց։

6 *Օ՛ զայս գիտասջիք. եթէ ինչ ղդոսա խորամանկել՝ կամ տրամե_ ցուցանել յօժարիցուք՝ ո՛չ առ մարդ մեղանչեմք, այլ առ այն՝ որ ամե_ նայն զօրութեանց և բարձրութեց տիրէ Ա.ստուած. և ո՛չ եթէ՝ ի մեր դոյ միայն հատուցումն գտանէ այն պիսին. այլ անվրէպ ամենայն իրօք՝ ի բարձրելոյն գտանէ. և դուք ո՛ղջ լինջիք։

7 *Իբրև առին զհրովարտակն զայն. ո՛չ եթէ փութացան ելանել վաղվաղակի. այլ մնացեան առ թա գաւոր անդր՝ աղօթս մնուցցանել և ասել. յաղագ աստի հրեից՝ որք զսուրբն Ա.ստուած ինքնակամ ուրա ցան. և անցին ըստ օրէնսն Ա.Յ. հրամայել տալ՝ ի ձեռս նոցա. ըստ արժանի գործոյն ածել զպատու_ հասն՝ ի վերայ նոցա. և ասէին. Է_ թէ մարդք՝ որք վասն պորտոյն և որկորոյն չարութեան՝ յօժարեցան անցանել ըստ օրէնս նախնեացն. երբէք նոքա չիցս արքունի արգա_ րանալ միամտութեամբ ո՛չ կարեն։

8 *Իրաւունս համարեցաւ թագաւ_ որն. և ետ նոցա իշխանութիւն՝ զի սատակեսցեն զյանցաւորս օրինացն Ա.Յ ընդ ամենայն տեղիս տերու_ թեան թագաւորին՝ ուր և գտցեն, ամենայն հարմարձակութեամբ. և որք ընդդէմ մի դարձցի՝ մի իւիք սատ տիւք արքունի։

9 *Հայնմ ժամանակի գոհացան. և օրհնեցին՝ որպէս օրէն էր քահանայ_ իցն՝ և ամենայն ժողովուրդքն. և գլուխ բանից բարբառոյն եդին զա_ լէլուիայ։ Ինքեանք յնծութեամբ և ուրախութեամբ պագին երկիր. և ի թագաւորէ անտի գնացին։

10 *Իբրև անկան յուղի, որք միանգամ՝ ընդ անցեալք էին ըստ օրէնսն և անօրի_ նեալք՝ պղծեալք էին յապգատոհմէ անտի, տանջանօք առակելոլք սա_ տակէին. և յայն ի միում աւուր անդ սպանին աւելի քան զարս երեք հարիւր. և զայն օր ուրախութեամբ կատարէին. զի զպղծ զանօրէնս՝ զյանցաւորս օրինացն իւրեանց՝ զձեր բակալ ըմբռնեալս սատակէին. քան զի՝ ինքեանք՝ ի դրանց մահու Ա.Յ ողորմութեանցն զփրկութիւն գտեալ

11 էին։ *Ղուէցին՝ խաղացին՝ գնա_ ցին՝ ի քաղաքն անտի ազգի ազգի անուշութեամբ. և՝ ի գոյնագոյն ծա ղիկս պսակեալք՝ ուրախութեամբ և ցնծութեամբ և օրհնութեամբ՝ ի ձայն քաղցրութեն գոհանային զՄ.Յ հարցն նոցա. որ յաւիտենից է փր_ կիչ խրայելի։

12 *Ա.Հ իբրև եկին՝ հասին՝ ի քաղաքն պատրաստացոյց՝ որ անուանեալ կո_ չի վասն տեղւոյն յայտնութե՝ վար պեղոյն դաբերք. քանզի իակ անցեալք կա_ ցեալք մնային նոցանաքն՝ որով եկեալ անդ՝ ի հասարակաց հաւանութէն. երագեցին աւուրս եօթն՝ ուրախ լի պեղէ նէին. զի հրամանն տուեալ էր նոցա առն թագաւորին առաւոտպէս հանդերձս առնել՝ ի պետս Ձանապարհին. մին_ չև երթիցեն յիւրաքանչիւր տեղիս։

13 *Ա.Հ իբրև հասանէին՝ ի տեղի, ըստ արժանի իւր պարգևացն՝ գոհա_ նային. դարձեալ եդին օրէնս. և զայն աւուրս ևս խառնել՝ ի տօնս տա րեկանաց իւրեանց կատարել յուրա խութեան. նոքէրս մատուցին. ար_ ձանս կանգնեցին ըստ տեղեացդ ու_ րախութեան. խառնեցին զաւուրսն զայն՝ ի տօնս տարեկանաց։

14 *Ի՛ մի վայր ժողովեցան. աղօթս մատուցին՝ և գոհացան. մեկնեցան՝ ի միմեանց ողջք և անարատք. ա_ զատեալք. խրախամիտք. զոհարեալ ցեալք՝ ապրեալք ընդ ծով և ընդ ցամաք և ընդ գետս՝ ի կամաց Ա.Ն, ի հրա_

'ի հրամանէ Թագաւորին յիւրաքանչ
իւր տեղիս սիրեցան ։
* Որք յառաջ ընդ ձեռամբ Թշնամ 15
ւոյն էին ։ ապա իշխանութեան փա
ռօք և շքով գնային ։ զի ամենևին
գնոսա այնուհետև ոչոք կարէր խռո
վել ։ և զիւրաքանչիւր ինչս և զտա
ցոնՃաս յաշխարհագրին զամենայն

ժողովեցին ։ զի ահիմ և դողութիւ
ամենեքեան՝ որ զինչ առ ումեք կայր՝
բերեին՝ և տային 'ի դուրս վասն փր
կութեան մեծին Ա.Յ ։ Որհնեալէ
Ա.Ծ՝ որ յամենայնէ փրկէ զիսրայէլ
յամէն նեղութենէ՝ և 'ի վշտաց ։ նմա
փառք՝ և պատիւ և զօրութիւն այժմ
և միշտ և յաւիտեանս յաւիտենից։

Կատարեցաւ Առակք Գրոց Սահմանաց։

ԳԻՐՔ

Եւ ասէ Տէր ցսատանայ, ապաքէն հայեցար ընդ ծառայ իմ Յոբ յայր արդար։ Յոբ. 2. 3.

Եւ լուեալ երից բարեկամացն զչարիսն ամ, որք հասեալ էին ՚ի վր նր․ եկին մխիթարել զնա․ Յոբ. 2. 11.

ԳԻՐՔ ՅՈԲԱՅ.

Գլուխ Առաջներորդ։

ԱՅՐ ՈՄՆ 1
ԷՐ ՅՈՒՍՏԻՐ
աշխարհի որում
անուն էր յոբ։ և
էր այրն այն ճշ_
մարիտ․ անարատ․
արդար․ Աստուա_
ծապաշտ․ մեկնեալ
յամ իրաց չարութենէ մեղաց։ *Եղեն 2
նր ուստերք եօթն՝ և դստերք երեք։
*Եւ էին խաշինք նորա՝ եօթն հազար 3
ոչխարք՝ ուղտք երեքհազար՝ լուծք ե_
զանց հինգհարիւր․ և էշք մատակք
արօտականք հինգհարիւր․ և սպասք
բազում՝ յոյժ․ և գործք մեծամեծք
էին նր ՚ի վերայ երկրի․ և էր այրն այն
ազնուական քան զամ՝ արևելեայս։
*Միաբանեալ կային որդիքն նր առ մի_ 4
մեանս՝ առնէին խրախութիւն զօրհանա_
պազ՝ առեալ ընդ իւրեանս և զերեսին
քո

քորսն իւրեանց ուտել և ըմպել ընդ նս։
5 *Եւ իբրև յանկ ելանէին աւուրք
խրախութեան նց առաքէր յոբ՝ և սրբէր
զնոսա․ յարուցեալ ընդ առաւօտս մա
տուցանէր վասն նց զոհս ըստ թուոյ
նոցա։ և զուարակ մի վս մեղաց ընդ
ոգւոց նց․ քանզի ասէր յոբ՝ թէ գու_
ցէ որդիքն իմ իմացան ՚ի միտս իւրեանց
չարութիւն զԱծ․ այսպէս առնէր յոբ
6 զամ աւուրս նց։ *Եւ իբրև եղև զօրս
զայս՝ եկին հրեշտակք Այ կալ առա_
ջի Տն․ եկն և սատանայ ընդ նս․ յա_
7 ծեալ յերկրի և շրջեալ ՚ի նմա։ *Եւ
ասէ Այ ընդ սատանայ՝ ուստի գաս․
պատասխանի ետ սատանայ Տն, և ասէ․
շրջեալ ընդ երկիր՝ և յածեալ ՚ի ներ_
8 քոյ երկնից՝ եկեալ կամ։ *Եւ ասէ
ցնա Տր․ նայեցար միտք քոյք ընդ
ծառայ իմ ընդ յոբ․ զի ոչ գոյ իբրև
զնա ՚ի վր երկրի այր՝ անարատ՝ ճշմա
րիտ՝ Աստուածապաշտ՝ մեկնեալ յամ իրաց
9 չարաց։ *Եւ պատասխանի սատանայ
և ասէ առաջի Տն․ մի թէ ձրի պաշտի

առաջի Տ՚ն։ սահեալ՝ իներքոյ երկնից՝
3 և շրջեալ ընդ ամ, եկեալ կամ։ *Ո՞ւմ
ասէ Տ՚ն ցսատանայ. ապաքէն հայեցար
ընդ ծառայ իմ՝ յոբ. զի ոչ գոյ երբեք
զնա՝ ի վերայ երկրի այր արդար՝ ձշմա
րիտ՝ Ո՞ծապաշտ՝ մերկնեալ չար՝ ամ
Թէ. և տակաւին կայ յանմեղութեան.
դու տարապարտուց խօսեցար կորու
4 սանել զինչս նր։ *Արկնեաց անդրէն
սատանայ՝ և ասէ ցՏ՚ն։ մորթ ընդ մոր
Թոյ. և որինչ իւրեք մարդոյ, ընդ անձին
5 իւրոյ տուժեսցի։ *Ո՞պա Թէ ոչ՝ ձգէ
առաքեա զձեռն քո. և արկ զոսկերօք
նր՝ և զմարմնով. եԹէ ոչ յերեսս իսկ
6 օրհնեսցէ զքեզ։ *Ո՞ւ ասէ Տ՚ն ցսա
տանայ. ահա մատնեմ զնա քեզ. բայց
7 միայն զոգի նր պահեսցես։ *Ել սա
տանայ յերեսաց Տ՚ն. և եհար զյօբ չա
րաչար կեղգով յոտից մինչև գլուխ։
8 *Ո՞ւ առեալ խեցի քերէր զինքարին.
և նստեր յայրհիւս արտաքոյ քաղաքին։
(իբրև բազում ժամանակ անցանէր
9 ՚ի վր։) *Ո՞ւստ ցնա կինն իւր. մինչև
յերբ ժուժկալեալ ասիցես՝ Թէ ահա
համբերից տակաւին սակաւիկ ինչ
ժամանակ՝ ակն կալեալ յուսոյ փրկու
Թե իմոյ։ ահաւադիկ ապականեալ է
յիշատակ քո ՚ի վր երկրի. ոստերք քո
և դստերք՝ իմոյ որովայնի երկիք և եր
կունք. յորս տարապարտուց վաստա
կեր տառապանաց. դու ինքն ՚ի զազ
րուԹի որդանց նստիս օԹագայեալ
բացական. և ես մնջորեալ և հարկա
հար. տուն ՚ի տանէ. և տեղի ՚ի տեղ
ւոջէ. սպառեմ, Թէ երբ մոռանիցէ
արեգակն՝ զի հանգեալցէ ՚ի տառապա
նաց իմոց՝ և ՚ի ցաւոց իմոց. որք այժմ
պատեալքեն զինև. ածէ ասա քան
10 ինչ առ Տ՚ն. և վախճանեաց։ *Ո՞ւ նր
հայեցեալ ընդ նա՝ ասէ. իբրև զմի ՚ի
կանանց անզգամացն խօսեցար. եԹէ
զբարիսն ընկալաք ՚ի ձեռանէ Տ՚ն չա
րեացս ոչ հանիւերիցեմք։ և յայսմ՚ամի
որինչ անցին ընդ նա, ոչ մեղաւ յօբ շր
Թամբք իւրովք առաջի Տ՚ն. և ոչ եհա
11 անզգամուԹիւն Ո՞ւ։ *Ո՞ւ լուեալ երից
բարեկամացն զչարիսն ամ, որք հա
սին ՚ի վր նր։ եկին իւրաքանչիւր աշ
խարհէ առ նա։ եղիփազ արքայ Թեմ
նացւոց՝ բաղդատ բռնաւոր սօքեացւոց.
սոփար արքայ մինեացւոց։ և եկին առ
12 նա միաբան մխիԹարել զնա։ *Ո՞ւ
տեսեալ զնա ՚ի բացուստ՝ ոչ ճանեան.
և բարբառեալ մեծաձայն լացին. պա
տառեցին իւրաքանչիւր զպատմու
չանս իւրեանց. և ցանեցին հող ՚ի վր
13 գլխոց իւրեանց ընդ երկինս։ *Ո՞ւ
նստան շուրջ զնովաւ զեօԹն տիւ և
զեօԹն

ցե յօբ զՏ՚ն։ *Ո՞ւ դու ամբաստեցեր 10
զարտաքին նր՝ և զներքին տան նորա.
և որինչ միանգամ արտաքոյ շուրջ զնո
վաւէ։ զգործս ձեռաց նր օրհնեցեր.
և զանասունն նր բազմացուցեր ՚ի վր
երկրի։ *Ո՞ւկ՝ առաքեա դու զձեռն 11
քո. և արկ յամ ինչս նր. եԹէ ոչ յերեսս
իսկ օրհնեսցէ զքեզ։ *Յայնժամ 12
ասէ Տ՚ն ցսատանայ. ահա զամ ինչս նր
ամ՚ի ձեռս քո. բայց ՚ինքն մի մերձեր
նայցես։ և ել սատանայ յերեսաց Տ՚ն։
*Ո՞ւ եր Թբրև զօրս զայս. ուստերքն 13
յօբայ՝ և դստերք նր՝ ուտէին և ըմպ
էին գինի ՚ի տան երիցու եղբօրն իւրոյ։
*Ո՞ւ ահա հրեշտակ եկն առ յօբ՝ և 14
ասէ ցնա. հարկիք եզանցն վարէին. և
էշքն մատակք արածէին առ նովքօք։
*Ո՞ւ եկին գերեվարք. և գերեցին զնո. 15
և զմանկտիսն կոտորեցին սրով. ես մի
այն ապրեալ եկի պատմել քեզ։ *Ո՞ւ 16
մինչ դեռ նա խօսէր՝ այլ հրեշտակ եկն
առ յօբ՝ և ասէ ցյօբ. հուր անկաւ
յերկնից՝ և այրեաց զհօտսն. և զհո
վիւսն ըստ նմին օրինակի եկեր. ես
միայն ձեռացեալ՝ եկի պատմել քեզ։
*Ո՞ւ մինչ դեռ նա խօսէր, այլ հրեշ 17
տակ եկն՝ և ասէ ցյօբ. ասպատակաւ
որք ասպատակեցին ՚ի մեզ երեք ա
ռաք՝ և պատեցան զուղտսքն և գե
րեցին զնա. և զմանկտիսն կոտորեցին
սրով. ես միայն ապրեալ եկի պատմել
քեզ։ *Ո՞ւ մինչ դեռ նա խօսէր. այլ 18
հրեշտակ գայր՝ և ասէր ցյօբ. մինչ
դեռ ուստերքն քո, և դստերք ուտէին՝
և ըմպէին՝ առ երիցու եղբօրն իւրոյ։
*Յանկարծակի հով մեծ եկն յանա 19
պատ՝ և կհար զչորեսին անկիւնս
տանն. և անկաւ տունն ՚ի վերայ որդ
ւոցն քոց՝ և վախճանեցան. և ես միայն
ապրեալ եկի պատմել քեզ։ *Ո՞պա 20
յարուցեալ յօբ՝ պատառեաց զհան
դերձս իւր. և կարեաց զվարսս գլխոյ
իւրոյ. և անկեալ ՚ի գետինն երկիր ե
պադ Տ՚ն։ *Ո՞ւ ասէ՝ մերկ իսկ եկի ես 21
յորովայնէ մօր իմոյ՝ և մերկ անդամ
դարձայց անդր։ *Տ՚ն ետ՝ և Տ՚ն կա
ռոն Տ՚ն հաճոյ Թուեցաւ՝ նոյնպես և
եղև. եղիցի անուն Տ՚ն օրհնեալ։
*Ո՞ւ յայսմ՝ամի անցս՝ որք անցին ընդ 22
նա. ոչ մեղաւ յօբ առաջի Տ՚ն՝ և ոչ
ետ անզգամուԹիւն Ո՞ւ։

Գլ. Բ.

Ո՞ւ եղև իբրև զօրս զայս. և եկին 1
հրեշտակք Ո՞ւ կալ առաջի Տ՚ն.
եկն և սատանայ ՚ի մէջ նր կալ առաջի
Տ՚ն։ *Ո՞ւ ասէ Տ՚ն ցսատանայ. դու 2
ուստի գաս։ յայնժամ՝ ասէ սատանայ

Եւ ողջ
5.14.
1.Տիմո.
6.7.

զեօթն գիշեր ։ և ոչք ՚ի նոցանէ խօ-
սեցաւ ընդ նմա բան ։ քանզի տեսա-
նէին զանհնարին հարուածան և զմե-
ծամեծս յոյժ ։

Գլ. Գ։

1 Եւ ապա ուրեմն յօբ եբաց զբերան
2 իւր, և անէծ զօրն իւր։ * Եւ ասէ.
3 * ‖ Կորիցէ օրն՝ յորում ես ծնեալ . և գի-
շերն՝ յորում ասացին՝ Թէ արու-
4 * Լիցի այն գիշերն այն՝ և մի իրընդ-
րեսցէ զնա Ած ՚ի վերուստ . և մի ե-
5 կեսցէ ՚ի վերայ նորա լոյս ։ * Ընկալցի
զնա խաւար՝ և ստուերք մահու ։ և ե-
6 կեսցէ ՚ի վէր նորա մէգ ։ * Նիհծեալ
լիցի օրն այն՝ և գիշերն . և տարցի զնա
խաւար . մի եղիցի յաւուրս տարւոյ՝ և
7 մի թուեսցի յաւուրս ամսոց ։ * Եւ
գիշերն այն եղիցի ՚իցաւ և մի եկեսցէ
8 ՚ի վէր նորա ուրախութիւն և ցնծութիւն ։
* Եւ նզովեսցեն զնա՝ որ նզովելոցն
9 է զօրն զայն . որ զբառամբ ածելոց իակ
է զմեծ վիշապն ։ * Խաւարեսցին աս-
տեղք գիշերոյն այնորիկ . սպասեսցի, և
՚ի լոյս մի եկեսցէ . և մի տեսցէ զարու-
10 սեակն ծագեալ ։ * Օի ոչ փակեաց
զդրունս արգանտի մօր իմոյ . զի թեր-
11 եաս մերժէր զցաւս յաչաց իմոց ։ * Իակ
ընդէր յորովայնի ոչ վախճանեցայ .
այլ ելի յարգանտե՝ և ոչ անդէն վաղ
12 վաղակի կորեայ ։ * Ընդէր դիպեցաւ
ինձ ծնունդ . և ընդէր դիեցի ես
13 զաթնա ։ * Օի այժմ հանդարտեալ
դադարէի՝ և ննջեցեալ հանգչէի ։
14 * Ընդ թագաւորս և ընդ խորհրդա-
կան երկրի . որք հպարտացեալք եկին
15 ՚ի տուրս իւրեանց ։ * Կամ ընդ իշխանս՝
որոց բազում էր ոսկի . որք լցին զտունս
16 իւրեանց արծաթով ։ * Կամ իբրև
զանցուցեալն . որ ելանէ յարգանտե
մօր իւրոյ . կամ իբրև զտղայն՝ որք ոչ
17 տեսին զլոյս ։ * Ընդ ամպարիշտք բոր
բոքեցին զրտմտութիւն՝ ընդ
հանգեան աշխատեալք մարմնով ։
18 * Ի միասին յաւիտենականքն ։ ոչ
19 լուան զձայն հարկահանի ։ * Փոքր և
մեծ անդ են . և ծառայ աներկիւղ
20 ՚ի տեառնէ իւրմէ ։ * Իակ ընդէր տուեալ
է դառնացելոց լոյս . և կեանս ցաւա-
գնելոց ոգւովք ։ * Որք ցանկան մահու .
21 և ոչ հասանին . փորեն իբրև զգանձս ։
22 * Եւ ինդալից լինին . եթէ գտանիցեն
23 զմահ ։ * Ո՞արդոյ հանգիստ է . զի փա-
24 կեաց զնուաճ Ած ։ * Յառաջ քան
զկերակուրս իմ հեծծութիւն է եհաս . որ
տատամոք և ահիւ նեղեալ եմ ։ * Օի 25
երկիւղն՝ յորմէ խիթայի , եկն ՚ի վէր
իմ . և յորմէ կասկածէի՝ պատահեցաւ

26 ինձ ։ * Եւ ես խաղաղացայ՝ ոչ դադարե-
ցի՝ ոչ հանգեայ . քանզի եկն ՚ի վերայ
իմ բարկութիւն ։

Գլ. Դ։

1 Արձանագրեալ անդրէն եղիփազու Թեմանացւոյ՝ ասէ ։

2 Ո՞ի թէ բազում անգամ լեալ իցէ
քո բանք աշխատութիւն . և զօրուե-
3 բանից քոց ո՞ հանդարտեսցէ ։ * Օի
եթէ խրատեցեր դու զբազումս . և
4 զձեռս տկարս միսիթարեցեր ։ * Զի
զկիմանդացեալս կանգնեցեր բանիւք .
և ծնգաց կթուցելոց քաջալերութի-
5 զգեցուցեր ։ * Եւ արդ՝ եկին՝ հասին
՚ի վերջո ցաւք . տակայն դու վաղվաղե
6 ցեր ։ * Եւ ապաքէն երկիւղդ քո ան-
զգամութի՞ն . և կասկածդ քո՝ չարու-
7 թի՞ն Հանապարհի քոյ ։ * Ընդ յիշեա
ո՞ր որ եբեր՝ կորեաւ . կամ ՚ճշմարիտք
8 արմատաքի երբեք խլեցան։ * Օր որ օրի
նակ տեսի զայնոսիկ՝ որք զանպատեհն
արօրադիրս առնեն . որք սերմանեն
9 զնո՞ցաւս հնձեսցեն ՚ինոցանէ։ * Ընդ հրա
մանաւ Ած կորիցեն . ՚ի հոգւոյ բարկու-
10 թե նորա ատակեսցին ։ * Օրռւթի
առիւծու՝ գոչիւն մնատակ ՚առիւծու՝
պերձութիւն վիշապաց՝ շիջաւ ։
11 * Առիւծն առիւծն սատակեցաւ առ ՚ի
չգոյէ կերակրոյ . կորիւնք առիւծուց
12 լքին զմիմեանս ։ * Եթէ եր տակաւին
բան ՃՀմարիտ եղեալ ՚ի խօսս քո . ոչ
ինչ յայդպիսեաց չար պատահիւրքեզ։
ուրեմն ոչ ընդունիցի հրաշակերտս
13 ՚ի նմանէ ։ * Երկաւիրք՝ և բամբիւնք
գիշերականք . հասեալ ահ՝ ՚ի վէր մարդ-
14 կան ։ * Դողումն և սոսկումն պատա-
հեցան ինձ . և մեծապէս զոսկերս իմ
15 շարժեցին ։ * Եւ եկն հողմ՝ ՚ի վէր երե-
սաց իմոց . քաւմնեցան հեզք իմ և մար-
16 մինք ։ * Կանգնեցայ՝ և ոչ գիտացի ։
տեսի , և ոչ եկն կերպարանք առաջի
աչաց իմոց՝ բայց միայն օդ . և ոսաս-
17 փիւն լսեի ։ * ‖ Իակ արդ՝ մի Թէ երբ լի- ‖ Այլ.
նիցի մարդ առաջի Տեառն . կամ՝ ՚ի գոր- 25. 4.
18 ծոց իւրոց անարատ այր ։ * ‖ Եթէ ծա ‖ Այլ.
ռայից իւրոց ոչ Հաւատայցէ . և զհրեշ- 15. 15.
տակաց խոտորագոյնս ինչ իմացաւ ։ 2. Պետ.
19 * Իակ արդ զբնակեալս ՚ի տունս կաւե 2. 4.
ղէնս . յորոց և ինքեանք ՚ի նմին կաւոյ
եմք . Հեշտ գնոսա ըստ օրինակի ցե-
20 ցոյ ։ * Եւ յառաւօտս մինչև յերե-
կոյ ոչնչս իցեն . քանզի անձամբ ան-
ձին օգնել ոչ կարեին , կորեան ։
21 * Փչեաց ՚ինոսա , և ցամաքեցան . սա
տակեցան՝ քանզի ոչ եր ՚ինոսա իմաս
տութիւն ։

Գլ. Ե.

Արդ՝ ա՛ղէ կարդա՛, եթէ ոք տացէ՞ 1
քեզ ձայն. կամ թէ զոք 'ի հրեշ-
տակաց սրբոց տեսցես: * Քանզի և 2
զանզգամս սպանանէ բարկութիւն. և
զմոլորեալն մեռուցանէ նախանձ:
* Ես ես տեսի անզգամաց արմատս 3
ձգեալ. այլ վաղվաղակի հարան յարկք
նոցա: * Հեռի լիցին որդիք նց 'ի փր- 4
կուէ. կողկողեսցին առդրունս վատ-
թարաց. և ոչոք իցէ՝ որ փրկիցէ: * Զի 5
զոր նոքայն ժողովեցին, արդարք կերի-
ցեն. և նոքա մի՛ եղիցին ապրեալք 'ի
չարեաց: Ծծեսցի զօրութի նց: * Զի 6
ոչ եթէ յերկրէ ելանիցէ աշխատութի.
և ոչ 'ի լերանց բուսանիցին ցաւք: * Այլ 7
մարդ աշխատութե ծնանի. ձագք ար-
ծուեաց 'ի բարձունս թռչին: * Բայց 8
սակայն ես խնդրեցից 'ի Տէ. և զՏէր
ամենեցուն իշխանն կարդացից: * Որ 9
առնէ զմեծամեծս՝ և զանքննինս, և
զփառաւորս՝ և զհրաշակերտս. որոց ո՛չ
գոյ թիւ: * Որ տայ զանձրև յերկիր. 10
առաքէ զջուր 'ի ներքոյ երկնից: * Որ 11
առնէ զխոնարհս 'ի բարձունս. և
կանգնէ զկորուսեալս: * Նա՛ փոփոխէ 12
զխորհուրդս խորամանկաց. և ոչ գոր-
ծեսցեն ձեռք նոցա զճշմարտութիւն:
‖1. Կորն. 3.19. * ‖Որ հասանի իմաստնոց հանճարով. 13
և զխորհուրդս բազմանենգաց յիմա-
րեցոյց: * 'Ի տուէ պատահեսցի նոցա 14
խաւար. և 'ի միջօրէի իբրև 'ի գիշերի
խարխափեսցեն: սատակեսցին պատե-
րազմաւ: * Նա՛ աղքատն ապրեսցի 'ի 15
ձեռանէ հզօրին: * Եղիցի յոյս տկա- 16
րի. բերան անիրաւի խցցի: * Երա- 17
նեալ է մարդ՝ զոր յանդիմանեաց Տր.
խրատէ և 'ի խրատուէ ամենակալին մի՛ հրա-
ժարեսցիս: * Զի նա ցաւեցուցանէ. 18
և միւսանգամ անդրէն հաստատէ. է-
հար՝ և ձեռք նր բժշկեցին: * Վեցիս 19
'ի վշտաց փրկեսցէ զքեզ. և յեօթն-
երորդումն ո՛չ մերձեսցի առ քեզ չար:
* 'Ի սովու՝ փրկեսցէ զքեզ 'ի մահուա- 20
նէ: 'ի պատերազմի 'ի ձեռաց երկաթոյ
արձակեսցէ զքեզ: * 'Ի տանջանաց լե- 21
զուի ծածկեսցէ զքեզ. և մի՛ երկիցես
'ի չարեաց եկելոց: * Զանիրաւս՝ և 22
զանօրէնս արհամարհեսցես. 'ի գազա-
նաց վայրենեաց ոչ երկիցես: * Զի 23
գազանք վայրենիք խաղաղասցին ընդ
քեզ: * Ապա գիտասցես եթէ խաղա- 24
ղութի է տան քում. և բնակութի յար-
կի քոյ մի՛ վրիպեսցի: * Նա՛ ծանիցես՝ 25
զի բազում է զաւակ քո. և որդիք քո
եղիցին իբրև զբանջար վայրի: * Նա՛ 26
երթիցես 'ի գերեզման իբրև զցորեան
հասեալ 'ի ժամանակի հնձոց. և կամ
իբրև զշեղջ կալոյ 'ի ժամանակի ամ-
27 փոփեալ: * Ահաւասիկ զայս այսպէս
քննեցաք. այս է զոր լուաքն. բայց դու
գիտասջի՛ր յանձն քո՝ զինչ գործեսցես:

Գլ. Զ.

1 Կրկնեալ անդրէն յօբայ՝ ասէ:

2 Եթէ կշռելով ոք կշռէր զբարկու-
թիւս իմ. և զցաւս իմ միանգամայն
3 բառնայր 'ի լուծ կշռոց: * Քա՛ն զաւազ
ծովու ծանրագոյն լինէր: Նա՛ ուրեմն
4 բանք իմ անզգամք են: * Զի նետք Տն
'ի մարմնի իմում են. և սրտմտութի նր
ծծէ զարիւն իմ. յորժամ՝ սկսանիմ խօ-
5 սել կտտեն զիս: * Իսկ ա՞րդ՝ զիարդ. մի-
թէ տարապարտուց խանչիցէ ցիռ.
բայց եթէ կերակուր խնդրիցէ. կամ
եթէ գոչիցէ՞ եզն առ մսուր՝ յորժամ
6 ունիցի զկերակուր: * Կամ ուտիցի՛ հաց
առանց աղի. կամ գուցէ՛ համ 'ի բանս
7 ունայնս: * Նա ոչ կարէ հանդարտել
անձն իմ. զի շարաւ տեսանեմ զկերա-
կուր իմ՝ իբրև զհոտ առիւծու:
8 * Զի եթէ տայցէ՝ և եկեսցեն յիս խնդ-
րուածք իմ. և զյոյս իմ տացէ Տր:
9 * Սկսաւ Տր խոցոտել զիս. բայց ի-
10 սպառ մի՛ սպանցէ զիս: * Եղիցի ինձ քա-
ղաքն իմ գերեզման. յորոյ վերայ պարս-
պացն ճեմէի. և 'ի նմա ո՛չ խնայեցից. զի
ո՛չ սուտ արարից զբանս սրբոյն Այ
11 իմոյ: * Զի զի՛նչ է զօրութի իմ, թէ
համբերից. կամ զի՛նչ ժամանակ՝ զի
12 հանդարտեսցի անձն իմ: * Մի թէ
զօրութի վիմաց իցէ զօրութիւն իմ.
կամ մարմինք իմ պղնձիք. կամ թէ ոչ
'ի նմա ապաւինեի. արդ օգնութի իմ
13 մերժեցաւ յինէն: * Նա՛ ողորմութի
հրաժարեցաւ յինէն. այցելութի Տն
14 անտես արար զիս: * Ո՛չ հայեցան յիս
15 մերձաւորք իմ: * Իբրև զվտակ պակա-
16 սեալ. իբրև զալիս անցին զինև: * Որք
սարսէին յինէն, արդ ահաւանիկ հա-
17 սին 'ի վր իմ: * Իբրև զձիւն՝ կամ իբրև
զսառն պաղեալ: որ հալիցի 'ի հաս-
նելոյ ջերմութե. և ոչ ճանաչիցի թէ
18 ուրպէս էր: * Նոյնպէս և ես լքայ յա-
մենեցունց. կորեայ՝ և տնանկացայ:
19 * Տեսէ՛ք զճանապարհս Թեմնացւոց.
20 որք 'ի շաւիղս Սաբայ հայէիք: * Նա՛
ամօթ կրեսցեն յուսացեալքն 'ի քա-
21 ղաքս՝ և յինէն: * Նա և դուք անագթիկ
անողորմ հասէք 'ի վերայ իմ: հայե-
22 ցեալ 'ի վէրս իմ՝ երկերո՛ւք: * Արդ ես
23 զձեզ ինչ խնդրեցի: * Կամ ձերով ձեռացդ. բռնութե
զօրութե կարօտեալ իցեմ՝ ապրեցու-
ցանել զիս 'ի թշնամեաց. կամ 'ի ձե-
ռաց

ատ հզօրաց փրկել զիս ։ *Ուսուցէք 24
զիս՝ և ես լռեցից . եթէ մոլորեալ ինչ
իցեմ, արարէք զիս խելամուտ ։ *Այլ 25
ուրեմն խոտանք են բանք ճշմարտի .
քանզի ոչ եթէ 'ի ձէնջ խնդրեմ զզօ_
րութիւն ։ *Եւ ոչ կշտամբանք բանից 26
ձերոց լռեցուցանեն զիս . և ո՛չ բարբա
ռոյ բանից ձերոց անսայից ։ *Բայց 27
զի իբրև 'ի վերայ որբոյ յարուցեալ էք
'ի վ̃ր իմ . և խաղացեալ էք 'ի վ̃ր բարե
կամի ձերոյ ։ *Բայց արդ հայեցեալ 28
յերեսս ձեր ո՛չ ստեցից . նստարո՛ւք
դուք . և մի ինչ լիցի անիրաւութիւն ։
*Եւ դարձեալ իրաւանց ուշ ունիցէք ։ 29
*Զի ոչ գոյ 'ի լեզուի իմում անիրաւ_ 30
ութիւն . կամ կոկորդ իմ ո՞չ խոկայցէ
յիմաստութեան ։

Գլ. Է.

Ոչապաքէն իբրև փորձութիւն են 1
վարք մարդոյ 'ի վ̃ր երկրի . և իբրև
զաւօրեայ վարձք վարձկանի կեանք
նր ։ *Կամ իբրև զծառայ երկուցեալ 2
'ի Տ̃է իւրմէ՝ և զօղեալ ընդ հովա_
նեաւ . և իբրև զվարձկան՝ որ սպա_
սիցէ վարձուց իւրոց ։ *Նոյնպէս և 3
ես սպասեցի ամսոց սնոտեաց . գիշերք
ցաւագինք տուեալք են ինձ ։ *Եթէ 4
ննջեցից . ասեմ, երբ իցէ տիւ . և թէ
յառնիցեմ, դարձեալ՝ թէ երբ իցէ
երեկ . լի ցաւօք լինիմ յերեկորեայ մին
չև յառաւօտ ։ *Թաթաւին մարմինք 5
իմ 'ի զազրութիւն որդանց . մաշեցի ըզ
կոշտս երկրի առ 'ի գլթարախս քերելոյ ։
*Եւ կեանք իմ թեթևագոյնք են 6
քան զխօսս . և կորեան յունայնութիւ
յուսոյ ։ *Յիշեա զի փուք են կեանք 7
իմ . և ո՛չ դարձցի ակն իմ 'ի տեսանել
զբարի ։ *Եւ ո՛չ հայեսցի յիս ակն տե 8
սողի ։ աչք քո յիս ։ և ո՛չ ևս իցեմ ։
*Իբրև զամպ ջնջեալ յերկնից ։ զի ե_ 9
թէ իջանիցէ մարդ 'ի դժոխս, ո՛չ ևս
ելցէ ։ *Եւ ո՛չ դարձցի 'ի տուն իւր . և 10
ո՛չ ևս ծանիցէ զնա տեղի իւր ։ *Այ_ 11
սուհետև ո՛չ ևս խնայեցից 'ի բերանս իմ,
խօսեցայց՝ մինչև իցեմ 'ի վիշտս . բացից
զդառնութիւն անձին իմոյ տագնապեալ ։
*Մի թէ ծով իցեմ, կամ վիշապ . զի 12
կարգեցեր զինև պահս ։ *Ասացի թէ 13
մխիթարեսցեն զիս մահիճք իմ . վճա
րեցից զինէն զբանս իմ յանկողնի ի_
մում ։ *Զարհուրեցուցանես զիս ե_ 14
րազօք . և տեսլեամբք հարկանես զիս ։
*Թափես զոգի իմ յանձնէ իմմէ . և 'ի 15
մահուանէ զկեանս իմ ։ *Զի ո՛չ յաւի 16
տեան կեամ . եթէ երկայնամիտ եղէց .
'ի բաց կաց յինէն՝ զի ընդունայն են
կեանք իմ ։ *Զի զինչ է մարդ . զի մե_ 17
ծացուցեր զնա . կամ զի հայիցիս 'ի նա
18 միտ ։ *Կամ այցելութիւն առնիցես նմա
մինչև ցառաւօտ . և 'ի հանգիստ դա_
19 տիցես զնա ։ *Մինչև յերբ ոչ թողու_
ցուս զիս . և ոչ ընդարձակիցես ինձ .
մինչև ցաւօք կլանիցեմ զտողունս իմ ։ զխուխս
20 *Զի թէ մեղայ . զինչ կարիցեմ առ_
նել քեզ . որ գիտես զմիտս մարդկան .
ընդէ՞ր եդեր զիս քեզ ոսոխ . և իցեմ
21 քեզ բեռն ։ *Եւ ընդէ՞ր ոչ արարեր
մոռացումն անօրէնութեան իմոյ՝ և սրբու̃ն
մեղաց իմոց . արդ՝ ահա յերկիր դառ_
նայցեմ կանխեալ . և այլ ոչ ևս իցեմ ։

Գլ. Ը.

1 Կրկնեալ անդրէն Բաղդատայ սօքեցւոյ՝ ասէ ։
2
Մինչև ցերբ խօսիցիս զայդ՝ և ոգի
մեծաբանութեան 'ի բերանի քում ։
3 *Մի թէ անիրաւ դատիցէ Տ̃ր . և կամ
որ զա̃մ արար՝ պղտորիցէ զիրաւունս ։
4 *Եթէ որդիքն քո մեղան առաջի նր .
առաքեաց 'ի ձեռին զանօրէնութիւնս
5 նոցա ։ *Բայց դու կանխեա առ Տէր
6 ամենակալ աղօթիւք ։ *Եթէ սուրբ՝
և ճշմարիտ իցես, աղօթից քոց լուիցէ .
դարձուսցէ զքեզ յարկն արդարութեան ։
7 *Եւ լինիցին առաջինքն քո սակաւք .
8 և վերջինքն քո անբաւք ։ *Բայց ա՛ղէ
հա՛րց զազգն առաջին . և քննեա ըստ
9 տոհմից հարցն ։ *‖ Զի երեկեանք եմք, ‖ Սաղմ.
և ոչ գիտեմք . զի ստուեր են կեանք 143.4.
10 մեր 'ի վ̃ր երկրի ։ *Կամ թէ ոչ նոքին Այր.
իսկ ուսուսցեն զքեզ . և պատմեսցեն . 14.2.
11 և 'ի սրտէ հանցեն զբանս ։ *Միթէ կա
նաչանայ պրտու առանց ջրոյ . և կամ
բարձրանայցէ կնիւն առանց ըմպելոյ ։
12 *Մինչ դեռ անդէն 'ի վերայ արմա_
տոյ իւրոյ է՝ ոչ հնձեսցի . յառաջ
քան զամենայն բանջար ոչ ցամաքիցի ։
13 *Արդ այնպէս եղիցի վախճան ամե_
նեցուն . որք մոռանայցեն զՏէր . զի
14 յոյս ամպարշտի կորիցէ ։ *Անշէն լի_
ցի տուն նր . անցցէ իբրև սարդի ոս_
15 տայն յարկ նր ։ *Թէպէտ և հաստա_
տեսցէ զտուն իւր, մի կացցէ ։ յարկա_
նել ձեռին նորա մի հանդարտեսցի ։
16 *Զի խոնաւութի յարեգակնէ է ։ և 'ի զի խոնաւ
նեխութեն նր ելցէ շառաւիղ իւր ։ ութն սէ
17 'Ի վ̃ր կարկառի քարանց ննջեսցէ . և 'ի ամբ մինչ
18 մէջ մանրախիճ քարանց կեցցէ ։ *Եթէ չէ ելեալ
ընկլցի զնա տեղին . ստեսցէ, ոչ տե_ էջէ արե_
19 սեր այսպիսի ինչ ։ *Զի կործանումն գակն
ամպարշտի այսպիսի է . և յերկրէ այլ
20 բուսցի ։ *Զի Տ̃ր ոչ մերժեսցէ զան
մեղն . զա̃մ պատարագ ամպարշտի ոչ
21 ընկալցի Տէր ։ *Բերանք ճշմարտից
լցցին ծաղու . և շրթունք նոցա գոհու
թ̃բ ։

թ՟։ *Խնամիք նորա զգեցցին զամօթ. 22
յարկք ամպարշտի ոչ ևս իցեն։

Գլ: Թ.

Կրկնեալ անդրէն յոբայ՝ ասէ։ 1

Ճշմարտիւ գիտեմ. թէ այդ այդպէս 2
է. քանզի՝ զիա՞րդ լինիցի մարդ
արդար առաջի Տն։* Զի եթէ կամի- 3
ցի դատել ընդ նմա. ո՛չ լուիցէ նմա. զի
մի բան՝ հազար բանի պատասխանի ո՛չ
տացէ։* Զի իմաստունէ մտօք՝ զօրաւ- 4
որ՝ և մեծ. ո՞ խստացաւ ընդդէմ նորա,
և հանդարտեցաւ։ *Որ հնացուցանէ 5
զլերինս, և ոչ գիտեն. որ տապալէ զնս՟
բարկութ՟։ *Որ շարժէ զառ՚ի ներ- 6
քոյ երկնից ՚ի հիմանց. և սիւնք նորա
դողան։ *Որ ասէ արեգական. և ոչ 7
ծագէ. և ընդդէմ աստեղաց կնքէ։
*Որ ձգեաց զերկինս միայն. և շրջի՝ ՚ի 8
վերայ ծովու իբրև յատակի։ *Որ ա- 9
րարն զբազմաստեղսն՝ և զգիշերա-
վարն՝ և զայգն՝ և զշտեմարանս հա-
րաւոյ։*Որ առնէ զմեծամեծս՝ և զան- 10
քննելիս՝ և զփառաւորս՝ և զհրաշակերտս՝
որոց ոչ գոյ թիւ։ *Եթէ վերասցի 11
քան զիս. ոչ տեսից. և եթէ անցցէ առ
ինև, ոչ այնպէս գիտացից։ *Եւ ե- 12
թէ ստասցէ, ո՞ դարձուսցէ. կամ
ո՞վ ասիցէ ցնա. թէ զինչ արարեր։
*Զի նա դարձաւ ՚ի բարկութէ. և 13
՚ի նմանէ սասանեցան կէտք՝ որք ՚ի ներ-
քոյ երկնից։ *Ապա՞ եթէ լսիցէ ինձ՝ 14
կամ իրաւացուցանիցէ զբանս իմ։
*Եթէ իցեմ արդար, ո՛չ լուիցէ ինձ. 15
և զդատաստան նորա աղաչեցից։
*Եւ եթէ կարդայցիս, և անսասցէ. 16
չհաւատամ, եթէ լուաւ իսկ ինձ։
*Եւ ո՞չ մրրկաւ սատակիցէ. զի բա- 17
զում են հարուածք. զոր արար ինձ
տարապարտուց ։ *Եւ ո՛չ տայ ինձ 18
հանգչիլ. զի լցոյց զիս դառնութ՟։
*Վասնզի հզօր է՝ բռնանայ. իսկ արդ 19
ո՞ է, որ դատաստանի նորա կայցէ հա-
կառակ։* Իսկ եթէ իցեմ ես արդար. 20
սակայն բերան իմ ամպարշտեսցէ. և
եթէ իցեմ անարատ, կամակոր գտա-
նիցիմ։* Զի եթէ ամպարշտիցի անձն 21
իմ, ոչ գիտեմ. բայց զի բառնին յի-
նէն կեանք իմ։ *Վասն որոյ ասացի. 22
թէ զմեծն և զհզօրն՝ կորուսանէ բար-
կութի։ *Զի չարք յանհնարին մա- 23
հու. այլ արդարք ծաղր լինին։
*Զի մատնին ՚ի ձեռս ամպարշտի. զե- 24
րեսս դատաւորաց նորա ծածկեսցէ.
և եթէ ոչ նա է. ո՞վ իցէ։ *Բայց իմ 25
կեանք թեթևագոյնք են քան զսուր-
հանդակ. փախեան, և ոչ երևեցան։

26 *Եւ կամ թէ իցեն նաւաց հետք ճա-
նապարհի. և կամ արծուոյ թռուցե-
27 լոյ՝ որ խնդրեսցէ զկերակուր։ *Եթէ
ասիցեմ՝ թէ խօսեցայց, մոռանամ.
զերեսս ՚ի վայր արկեալ հեծեծեցից։
28 *Շարժեալ եմ ամ՟ անդամօք իմովք.
գիտեմ՝ զի անարատ զիս ոչ թո-
29 ղուցուս։ *Որովհետև ամպարշտեմ
30 ընդէ՞ր ոչ մեռայ։ *Եթէ լուացայց
ձեամբ. և սրբեցայց ձեռամբ սրբեցե-
31 լով։ *Սաստկացեալ աղտով էներկ
զիս. զազրացոյց զիս պատմուճան իմ։
32 *Զի ո՛չ ես իբրև զիս մարդ՝ ընդ ո-
րում դատեցայց. եթէ հասարակ ե-
33 կեսցուք ՚ի դատաստան ։ *Իսկ յան-
կարծ գոյր միջնորդ. և յանդիմանէր՝ և
34 լսէր ՚ի մէջ երկոցունց։ *Ի բաց արաս-
ցէ յինէն զգաւազան. և ահ նորա զիս
35 մի՛ զարհուրեցուսցէ։*Եւ մի՛ երկեայց,
այլ խօսեցայց՝ նաև ոչ այնպէ՟ գիտեմ։

Գլ: Ժ.

1 Աշխատեալ անձամբ իմով՝ հեծե-
ծելով հառեցից ՚ի նա զբանս իմ։
խօսեցայց դառնութ՟ անձին թախ-
2 ծեալ։ *Եւ ասացից՝ Տր մի՛ ուսուցա-
ներ զիս ամպարշտել. և ընդէ՞ր այսպէս
3 դատեցեր զիս։ *Կամ թէ բարւո՞ք
թուիցի քեզ՝ թէ անիրաւիցիմ։ զի
մերժեցեր զգործս ձեռաց քոց. և ՚ի
խորհուրդս ամպարշտաց հայեցար։
4 *Մի թէ որպ՟ հայիցի այր, հայիցիս.
կամ որպ՟ տեսանիցէ մարդ, տեսանի-
5 ցես։ *Կամ թէ ամք քո իբրև զառն։
6 *Զի վերստին խնդրիցես զանօրէնու-
7 թիւն իմ. և զմեղս իմ քննեսցես։*Գի-
տես՝ զի ոչ ամպարշտեցայ. այլ ո՞վ է,
8 որ ՚ի ձեռաց քոց հանիցէ։ *Ձեռք քո
արարին զիս. և ստեղծին. և ապա շրջե-
9 ցար՝ և հարեր զիս ։ *Յիշեա՛ զի կաւ
ստեղծեր զիս. և յերկիր միւսանգամ
10 դարձուցանես զիս ։ *Կամ թէ ո՞չ
իբրև զկաթն կթեցեր զիս. և մածու-
11 ցեր զիս իբրև զպանիր։*Մորթ և միս
զգեցուցեր ինձ. ոսկերօք և ջլօք հա-
12 նար զիս։* Զկեանս և զողորմութիւն
եդեր ՚ի վ՟ր իմ. այցելութի քո պահեաց
13 զոգի իմ։ *Զայս ամ՟ ունիս ՚ի քեզ.
գիտեմ. զի ամենայնի՛ կարող ես։ և
14 ոչինչ տկարանայ քեզ։ *Եթէ և մե-
ղանչեմ, պահես զիս. և յանօրէնութէ
15 անարատ ո՛չ արարեր զիս։ *Եթէ ամ-
պարշտեցայց՝ վա՜յ է ինձ. և եթէ ար-
դարացայց. ո՛չ կարեմ հայիլ ՚ի վեր. զի
16 լի եմ անարգանօք ։ *Որսացեալ եմ
իբրև առիւծ ՚ի սպանումն. դարձեալ
կրկնեալ չարաչար սատակես զիս։
17 *Նորոգես ՚ի վ՟ր իմ զհարուածս իմ.
բար-

բարկութեան մեծաւ ձեռնարկեր յիս .
և ածեր 'ի վերայ իմ հէն ։ * Ընդէ՞ր 18
հաներ զիս յորովայնէ . և ոչ անդէն
մեռայ . և ական չէր տեսեալ զիս ։
* Եւ իբրև զչեղեալ լինէի . ընդէ՞ր 19
յարգանդէ 'ի գերեզման ոչ վճարե_
ցայ ։ * Կամ թէ ոչ սակաւ իցէ ժամա 20
նակ կենաց իմոց . թո՛յլ տուր ինձ սակաւ
մի հանգչել ։ * Մինչև երթեալ իցեմ, 21
ուստի ոչ դառնայցեմ յերկիր խաւա
րին՝ և մթին ։ * Յերկիր աղջամղջին 22
յաւիտենական՝ ուր ոչ գոյ լոյս . և ոչ
տեսանել զկեանս մարդկան ։

ԳԼ. ԺԱ.

Արկնեալ անդրէն Սոփարայ Մինեցւոյ՝ ասէ ։ 1

Ո՞ր շատ խօսի , ապաքէն ընդ նմին 2
և լուիցէ . կամ որ խօսօղն իցէ , կա
րիցէ՞ բանիւք արդարանալ ։ * Օրհ_ 3
նեալ է ծնունդ կանանց սակաւա_
կեաց . մի՛ զբազում բանիւք անկանիր ։
զի ո՛չ գոյ՝ որ տայցէ զպատասխանի ։
* Մի՛ ասեր թէ սուրբ եմ գործով . և 4
անարատ առաջի Տն ։ * Այլ թէ զի՛_ 5
արդ Տր խօսեսցի ընդ քեզ ։ և բացցէ
զշրթունս իւր ընդ քեզ ։ * Ապա պատ 6
մեսցէ քեզ զզօրութիւն իմաստութեան .
զի կրկին եղիցի քան զքոյն . և ապա գի
տասցես՝ թէ արժանին որոց մեղարն,
եանց ընդ քեզ 'ի Տէ ։ * Եթէ զհետս 7
Տն գտանիցես . կամ 'ի վերջինսն հա_
սանիցես՞ զոր արար ամենակալն ։
* Բարձր են երկինք՝ և զի՞ գործեսցես ։ 8
խորք են դժոխք՝ և դու զի՞ խելամտես_
ցես ։ * Երկայն է չափ երկրի . լայն է 9
ծով ։ * Եւ եթէ տապալեսցէ զամ. 10
ո՞վ ասասցէ ցնա՝ թէ զի՞նչ գործեցեր ։
* Ինքն գիտէ զգործս անօրինաց ։ տե 11
սեալ զանարժանս ո՛չ արասցէ անտես ։
* Բայց մարդ 'ի խօսիլ զօղի բանիւք ։ 12
այր կանանցածին հանգոյն է ցռոյ անա
պատականի ։ * Իսկ եթէ դու սուրբ 13
եդեր զսիրտ քո . տարածեա՛ առ նա
զձեռս քո ։ * Ապա եթէ 'ի ձեռին քում 14
է անօրէնութիւն . հեռի՛ արա զայն 'ի
քէն . և անիրաւութիւն 'ի յարկի քում
մի՛ ագցի ։ * Ապա ծագեսցին երեսք 15
քո իբրև զջուր յստակ . մերկասցիս
զաղտեղութիւն , և ո՛չ երկիցես ։ * Եւ 16
մոռասցիս զաշխատութիւն իբրև զալիս
անցեալ , և ոչ զարհուրեսցիս ։
* Աղօթք քո իբրև զարուսեակ . 'ի միջօ 17
րէի ծագեսցին քեզ կեանք . վստահա
ցեալ լինիցիս՝ զի կայ քեզ յոյս . 'ի հո_
գոյ և 'ի տատանմունէ երևեսցի քեզ
խաղաղութիւն ։ * Հանդարտեսցիս , և 18
ո՛չք իցէ՝ որ պատերազմիցի ընդ քեզ ։

19 * Դարձցին բազումք՝ և աղաչեսցեն
զքեզ ։ փրկութիւն պակասեսցի 'ի նոցա
և ոչ փոխանակեսցէ զնոսա ։ զի լսելի
արասցէ զձայն իւր ։ *Որոտասցէ 5
հզօրն սքանչելի բարբառով իւրով ․
քանզի արար մեծամեծս՝ զոր ոչ գի_
տէաք ։ *Հրաման տայ ձեան՝ թէ լեր 6
յերկրի ․ և ձմերայնոյ անձրևաց ըստ զօ
րութե ն՟ր ։ *՚Ի ձեռն ամ՟ մարդոյ 7
կնքէ ․ զի ծանիցէ ամ՟ մարդ զիւր տկա
րութի ։ *Մտին գազանք ՚ի դադարս՝ 8
դաղեցին ՚ի խշտիս ։ *Յշտեմարանաց 9
եղանեն ցաւք ․ և ՚ի բարձրաւանդակաց
ցուրտ ։ *Եւ ՚ի շնչելոյ հզօրին տացէ 10
սառնամանիս ։ յեղյեղու զջուրն ․ որ
պէս և կամի ․ *Եւ զընտիր ամպ յա_ 11
նեսցէ ․ ցրուէ մէգ զլոյս նորա ։
*Եւ ինքն դարձուսցէ զշրջանակս ։ 12
ուր կամեցաւ՝ եդ զգործ ն՟ր ․ և զամ՟
ինչ զոր հրամայեսցէ ն՟ր ․ սոքա կար_
գեալք են առ ՚ի նմանէ ՚ի վ՟ր երկրի ։
*Եթէ ՚ի խրատ՝ և եթէ յերկիր իւր ։ 13
եթէ յողորմութե գտցէ զնա ։
*Ունկնդիր այսմիկ յոբ ․ կա՛ց և խրա 14
տեա՛ զզօրութի Տն ։ *Գիտեմք՝ զի 15
Ած եդ զգործս իւր ։ լոյս արար ՚ի

16 խաւարի ։ *Գիտէ զքննութի ամ_
պոց ։ արհաւիրք են յանցանք չարա_
17 գործաց ։ *Եւ քո ջերմ պատմուճան
հանդարտեալ կայ ՚ի վ՟ր երկրի ՚ի հա_
18 րաւոյ ։ *Հաստատեսցես ընդ նմա ՚ի
հնութիս ․ զօրացուցանել իբրև զտե_
19 սիլ եղեման ։ *Բայց ընդէ՞ր իսկ՝ ա՛ղէ
ուսո՛ զիս ․ զի՞նչ ասասցուք նմա ․ և դա
դարեսցուք ՚ի բազում խօսելոյ ։
20 *Մի՞թէ մատեան, կամ դպիր մերձ
կայցէ առ իս ․ զի զմարդկան գնալ լռե
21 ցուցից ։ *Ոչ ամենեցուն է լոյս տեսա_
նելի ․ փայլածու է ՚ի հնութիս ․ որպ
22 որ ՚ի նմանէն ՚ի վ՟ր ամպոց ։ *՚Ի հիւսի
սոյ ամպ ոսկէ ճաճանչ ․ ՚ի վ՟ր այսոցիկ
մեծ են փառք և պատիւ ամենակալին ։
23 *Եւ զոչ՛ք գտանեմք զայլ՛ք նման զօ
րութե ն՟ր ․ որ զարդարն դատէ՝ ո՛չ
24 համարիցիս լսել նմա ։ *Վասնորոյ եր
կիցեն ՚ի նմանէ մարդիկք ․ երկիցեն և
՚ի նմանէ իմաստունք սրտիւք ։ Յետ
դադարելոյ եղիուայ ՚ի խօսելոյ ։

ԳԼ ։ ԼԸ ։

1 Ասէ Տր յոբ ՚ի մրրկէ՝ և յամպոյ ․

2 Ո՞վ է դա՝ որ թաքուցանէ յինէն
զխորհուրդ ․ ժողովեալ զբանս ՚ի
սրտի ․ և համարի յինէն թաքուցա_
3 նել ։ *Պնտեա՛ իբրև զայր զմէջ քո ․
հարցից զքեզ՝ և տո՛ւր ինձ պատասխա
4 նի ։ *Ո՞ւր էիր՝ մինչ ես հիմունս ար
կանէի երկրի ։ պատմեա՛ ինձ ․ եթէ խե 1. 10
5 լամուտ իցես հանճարոյ ։ *Ո՞վ եդ
զչափ դորա, թէ գիտիցես ․ կամ ո՞վ
6 էարկ ՚ի վ՟ր դորա զլար ։ *Յե՞ր վ՟ր հաս
տատեցան ալեք դորա ։ ո՞վ է՝ որ էարկ
7 զվէմն անկեան ՚ի դմա ։ *Յորժամ
եղեն աստեղք ծերք՝ ամ՟ հրեշտակք
աստեղաց օրհնեցին զիս մեծաձայն ։
և ամ՟ հրեշտակք իմ գովեցին ։
8 *Փակեցի զծով դրամբք ․ յորժամ
ծնաւ յորովայնէ մօր իւրոյ ելանել ։
9 *Եդի նմա զմէգ ՚ի հանդերձ ․ և
զմառախուղ նմա ՚ի խանձարուրս ։
10 *Եդի նմա սահմանս՝ եդեալ փա_
11 կանս, և դրունս ։ *Ասացի՝ ցայդ վայր
եկեսցես՝ և այլ մի՛ անցանիցես ։ այլ
այդրէն ՚ի քեզ խորտակեսցին ալիք քո ։
12 *Եթէ առ քև՞ կարգեցի զլոյսն ա_
ռաւօտուն ։ արուսեակն ետես զկարգ
13 իւր ։ *Հասանիլ ՚ի վ՟ր թևոց երկրի ։
թօթափել զամպարիշտս ՚ի նմանէ ։
14 *Կամ թէ քո՞ առեալ զհողն կաւ՝ ստեղ
ծեր կենդանի՝ և խօսուն եդեր զնա
15 յերկրի ։ *Եւ մերժեցե՞ր զլոյսն յամ
պարշտաց ․ զբազուկս ամբարտաւա_
16 նից խորտակեցե՞ր ։ *Հասեա՞լ իցես

յակն

յակն ծովու : և ընդ հետս անդնդոց
շրջեցար : * Բացանիցին քեզ ահիւ 17
դրունք մահու . բաւապանաց դժոխոց
տեսեալ զքեզ սարսեցին : * Խելա_ 18
մուտ իցես լայնութեան 'ի ներքոյ երկ
նից . ասա՛ պատմեա՛ որչափ իցէ :
* Ո՛ւր երկիր իցէ՝ յորում լոյսն ագա 19
նիցի՝ կամ զի՞նչ տեղի խաւարի :
* Տանիցիս զիս 'ի սահմանս նոցա : եթէ 20
խելամուտ իցես շաւղաց նոցա : * Թերևս 21
գիտիցես՝ և ընդ այն ժամանակս ծը_
նեալ իցես . և թիւ աւուրց քոց բազում
իցեն : * Երթեալ իցես 'ի շտեմարանս 22
ձեան . և զգանձս կարկտի տեսեալ
իցես : * Համբարեալ կայցէ քեզ 'ի ժա 23
մանակս թշնամեաց՝ յօր մարտի՝ և պա
տերազմի : * Ուստի՞ ելանիցէ եղեամն . 24
կամ սփռիցի հարաւ 'ի ներքոյ երկնից :
* Ո՞ պատրաստեաց զհոսանս սաստիկ 25
անձրևոյ՝ և զճանապարհս ամպրոպաց
տեղեալ յերկիր : * Ուր ոչ դոյ մարդ՝ 26
յանապատ յանմարդի : * Յագեցու_ 27
ցանել զանկոխն, և զանշէն՝ և բղխեցու
ցանել զբոյս դալարւոյ : * Ո՞ է հայր 28
անձրևի . և ո՞վ է՝ որ ծնաւ զշաղս ցօ_
ղոյ : * Յո՞յր արգանդէ ելանէ սառն՝ 29
և զեղեամն ո՞ ծնաւ յերկնից : * Ո՛ր 30
իջանէ իբրև զջուր ծորեալ : և զերեսս
երկնից ո՞ հալեաց : * Խելամուտ իցես 31
կապից բազմաստեղաց . և քո բացեալ
իցէ զպատրուակ հայկին : * Եւ կամ 32
բանայցես զմազարօթն 'ի ժամանակի
իւրում : * Եւ զգիշերավարն 'ի վերայ
վարսից իւրոց ածիցես ընդ նոսա :
* Գիտիցես զշրջանս երկնից՝ կամ առ 33
հասարակ զլեալսն 'ի ներքոյ երկնից :
* Կոչիցես զամպ բարբառով . և դողու 34
թբ լի սաստիկ ջրով լուիցէ քեզ :
* Առձակիցես շանթս՝ և գնասցեն՝ և 35
ասիցեն ցքեզ՝ թէ զի՞նչ է : * Ո՞վ ետ 36
կանանց իմաստութի ոստայնանկու_
թեան կամ հանճար նկարակերտութեան :
* Ո՞ թուէ զամպս իմաստութբ . և 37
զերկինս յերկիր խոնարհեցոյց : * Եւ 38
հեղեալ կայ իբրև զհող փոշի՝ մածու
ցի զնա իբրև վիմաւ խորանարդ :
* Որսայցես առիւծուց կերակուր . և 39
զանձինս վիշապաց յագեցուցանիցես :
* Սարսիցին 'ի խշտիս իւրեանց . և նս_ 40
տիցին դարանակալք 'ի մայրիս :
Սաղմ. 146.9. * Ո՞ պատրաստեաց ագռաւուց կերա 41
կուր՝ զի ձագք նր առ Տր աղաղակե_
ցին . մոլորեալք խնդրեն զկերակուր .

Գլ : ԼԹ :

Եթէ գիտիցես զժամանակս ծնըն 1
դեան յամուրայ քարանձաւաց :
զդուշանայցես երկանց եղանց :

2 * Թուեցիցես լրով զամիս ծննդեան նց̃
3 լուծանիցես զերկունս նց̃ : * Սնուցա_
նիցես զմանկունս նոցա առանց երկիւ
ղի : մերժեսցես 'ի նոցանէ զերկունս :
4 * Փրծանիցին որդիք նոցա՝ բազմաս_
ցին 'ի ծննդեան իւրեանց . ելանիցեն՝
5 և անդրէն ոչ կրկնիցին : * Ո՞ եթող
զցիռ ազատացեալ : ո՞ ելոյծ զկապանս
6 նորա : * Եդ նմա կայանս զառապարս .
և բնակութիւնս նմա զաղտաղտուկս :
7 * Ծաղր առնէ զբազմամբոխ քաղա_
քաց . և զբամբասանս հարկահանաց
8 ոչ լսէ : * Դիտէ զլերինս արօտի իւրոյ .
և զհետ ամ̃ դալարւոյ շրջի խնդրել :
9 * Եթէ կամիցի քեզ միեղջերուն ծա_
ռայել՝ կամ հանգչիլ առ մսուր քո :
10 * Կապիցես սամետիք լուծ նմա . կամ
11 ձգիցէ ակօս 'ի դաշտի քում : * Յու_
սասցիս 'ի նա՝ զի բազում է զօրութի
նր : և թողուցուս 'ի նա զամ գործս քո :
12 * Հաւատայցես , թէ հատուցանիցէ
քեզ զսերմանիս . և ամփոփիցէ զկալ
13 քո : * Թևք թռուցելոց նէեղասաց :
եթէ յղասցի ասիդն և նէեսայն :
14 * Ո՛ր արկցէ յերկիր զձուս իւր՝ և ջե_
15 ռուսցէ ընդ հողով : * Եւ մոռացա
թէ ոտք ցրուիցէ . և գազանք անապա
16 տի կոխեսցեն : * Խծացոյց յորդւոց
իւրոց՝ իբրև ոչ յիւրմէ : 'ի զուր վաս_
17 տակեաց առանց երկիւղի : * Ո՛ր լռե
ցոյց Այ̃ 'ի նմանէ զիմաստութի . և ոչ
18 ետ նմա բաժին 'ի հանճարոյ : * 'Ի ժա_
մանակի բարձրասցի 'ի բարձունս .
ծաղր արասցէ զերիվարաւ՝ և զհեծե_
19 լով նորա : * Եթէ դու ագուցեր ձիոյ
զզօրութի . և զգեցուցեր զրահս զպա
20 րանոցաւ նր : * Արկեր զնովաւ սպա_
ռազինութի : զփառս լանջաց նր զան_
21 դգնութի : * Որոտայ 'ի դաշտի՝ և դափր
հատանէ . ելանէ 'ի դաշտ զօրութբ :
22 * Պատահեալ նետից՝ արհամարհէ . և
23 ոչ դարձցի յերկաթոյ : * Ի վր նորա
շողան աղեղն՝ և սուսեր . և շարժին
24 վահանք՝ և նիզակք : * Եւ բարկութբ
ապականէ զերկիր . և ոչ հաւատայ՝ մին
25 չև փող հարկանիցի : * Եւ իբրև փող
հարկանի . նա վաշ վաշ կարդայ : 'ի հե
ռաստանէ առնու զհոտ պատերազմի .
26 վազս առնելով և փռնչելով : * Եթէ
'ի քումմէ իմաստութէ եկաց բազէ
տարածեալ զթևս . անշարժ դիտէ ընդ
27 հարաւ : * Կամ թէ քով հրամանաւ
վերանայ արծուի . և անգղ 'ի վր բու
28 նոյ իւրոյ նստեալ դադարիցի : * Ի քա
29 րանձաւս վիմաց և 'ի ծակուկս : * Անդ
կայ՝ և խնդրէ զկերակուր : 'ի հեռաս_
30 տանէ դիտեն աչք իւր : * Եւ ձագք
նորա արեամբ թաթաւին . ուր ուրեք
իցէ

իցէ դէշ. անդ վաղվաղակի գտանին։
*Եւ պատասխանի ետ Տր Ած Յոբայ՝ 31
և ասէ։ *Մի թէ զդատաստան ոք 32
բաւականին թիւրիցէ. և յանդիմանես
ցէ զԱծ. և տայցէ նմա պատասխանի։
*Արկնեալ անդրէն յոբայ՝ ասէ ցՏէր։ 33
*Ը՛ր ես տակաւին դատիցիմ կշտամ 34
բեալ և յանդիմանեալ. 'ի Տէ լսեմ
զայդպիսի բանս։ զի ես ոչինչ եմ, 35
զի՞նչ տաց առ այդ պատասխանի. բայց
եթէ ամ'ի բերան լինիցիմ։ *Մի ան 36
գամ խօսեցայ. և յերկրորդումն ոչ
յաւելից։

Գլ. Խ։

Գոչեալ հրեշտակն Տն յամպոյն՝ ասէ ցյոբ։ 1

Ո՛չ այդպէս, այլ պնտեա՛ իբրև զայր 2
զմէջ քո. ես հարցից՝ և դու տո՛ւր
ինձ պատասխանի։ *Մի՛ զընկենուր 3
զդատաստանս իմ. և մի՛ համարիր այլ
ազգ արարեալ առ քեզ յայտնութի.
բայց թէ զի երևեսցիս արդար։
*Եթէ բազուկ առ բազուկ իցէ քո 4
Տն։ Եթէ բարբառ հանդոյն նմա որո
տայցես։ *Առ ա՞ղէ ա՛ռ զբարձրու 5
թի. և զզօրութի. և զփառս՝ և զպատիւ
զգեցի՛ր. *Առաքեա՛ զհրեշտակս բար 6
կութե. և զա՛մ հպարտս խոնարհեցո՛։
և շիջո՛ զամբարտաւանս։ *փտեա՛ 7
վաղվաղակի զամպարիշտս։ *Եւ ծած 8
կեա՛ յերկրի բացեայ 'ի բաց առ հասա
րակ. և լի՛ց զերեսս նց անարգանօք։
*Նակ յանձին կալայց արդեօք՝ թէ կա 9
րօղէ փրկել աջ քո։ *Նակ այդ քո առա 10
ջի իցէ. զի գազանք իբրև զարջառ խո
տաճարակին։ *Ահաւանիկ ոյժ իւր 11
զմիջով իւրով. և զօրութի զպորտին
որովայնի իւրոյ։ *Կանգնեաց զտուտ 12
իւր իբրև զնոճի. ջիլք իւր զմիմեամբք
պատեալ։ *Կողք իւր պղնձիք. և ողն 13
իւր ձոյլ երկաթոյ։ *Նա է սկիզբն 14
արարածոց Տն. արարեալ 'ի խաղալիկ
հրեշտակացն։ *Հասեալ 'ի վ՛ր առա 15
պար լերին. արար խնդութի չորքոտա
նեաց 'ի տարտարոսն։ *Ընդ ազգի 16
ազգի ծառովք ննջէ. առ պրտուով
և եղեգամբ և կնիւնով։ *Հովանա 17
ցան ընդ նովաւ ծառք մեծամեծք.
հանդերձ անտառովք և ձողք հադ
նւոյ։ *Եթէ լինիցի հեղեղ, ոչ զգաս 18
ցէ. յանձնապաստան է. զի թէ յոր
դանան դիմեսցէ 'ի բերան նորա։
*Յականակապիճ իւր ընկալցի զնա։ 'ի 19
խուսափիլ նր ծակիցես զռունգունս
նորա։ *Մերացուցանիցես զվիշապն 20
կարթիւ. դնիցես պախուրց շուրջ զցռ
կաւ նորա։ *Եթէ կապիցես անուր 21

'ի քիթ նր. անցուցանիցես դանդա
22 նաւանդ ընդ կզակս նորա։ *Խօսիցի
ընդ քեզ հնազանդութբ. և կակուղ
բարբառով դնիցէ ընդ քեզ ուխտ։
23 *Նուաճիցես զնա ծառայ յաւիտե
24 նական։ *Խաղայցես դու նովաւ իբ
րև ընդ հաւու. և կապիցես զնա իբրև
25 զձագ կաքաւ։ *Կերակրեսցին նովաւ
ազինք՝ և բաժանեսցեն զնա ազգք
26 փիւնիկեցւոց։ *Ամ նաւատորմիկն 'ի
մի վայր ժողովեալ ոչ բարձցեն թեփ
մի 'ի տտնոյ նորա. և 'ի նաւս ձկնորսաց
27 խաղամ նր։ *Դնիցես դու զձեռն քո
'ի վ՛ր նր. յիշատակեալ զպատերազմն
որ լինելոցն է 'ի մարմնի նր. զի այլ ոչ
28 ևս լինիցի։ *Ո՛չ տեսեր զնա. և ոչ 'ի
վ՛ր բանիցս ասացելոց զարմանայցես։

Գլ. ԽԱ։

1 Ո՞չ երկնչիցես. զի և ինձ պատրաս
տեալ է. բայց ո՞վ իցէ՝ որ ինձ հա
կառակ կայցէ. կամ ո՞վ իցէ՝ որ ինձ
ընդդէմ դառնայցէ՝ և հանդարտիցի։
2 *Եթէ ա՛մ առ 'ի ներքոյ երկնից իմ են։
3 *Ո՛չ լռեցից վն նորա. և բան հզօրին
4 ողորմեսցի զուգականին նորա։ *Ով
մերկասցի զպատրուճակ երեսաց նր. և
ընդ ագխ պատենից նորա ո՞ մտանիցէ։
5 *Զդրունս երեսաց նր ո՞ բանայցէ.
6 շուրջ զատամամբք նորա ահ։ *Փոր
նորա վահանք պղնձիք. յօդք նր իբրև
7 վէմ գայլախազ։ *Մի ի զմիոյ զկնի
կցեալ. և օդ ոչ անցցէ ընդ նա. այլ
8 զեղբօր զհետ երթիցէ։ *Զմիմեանս
9 կալցին. և մի՛ մեկնեսցին։ *Ի փռնչէ
լոյ նր փայլատակունք հատանին. աչք
10 նորա իբրև զտեսիլ արուսեկի։ *Ի բե
րանոյ նր ղամբարք բորբոքեալք. և հա
11 տանին՝ անկանին շանթք հրոյ։ *Ընդ
ռնգունս նր ծուխ ելանէ հնոցի՝ հրոյ
12 կայծականց։ *Անձն նր կայծակունք.
13 և բոց 'ի բերանոյ նր ելանէ։ *Ի պա
րանոցի նորա բնակի զօրութի. առաջի
14 նորա կորուստ ընթանայ։ *Անդամք
մարմնոյ նորա մածեալք. եթէ զեղցին
15 'ի վ՛ր նորա՝ ոչ խլրտեսցի։ *Զի սիրտ
նորա սալացեալ է իբրև զվէմ. և հաս
տատեալ կայ իբրև զսալ դարբնաց ան
16 շարժ։ *Ի խլրտիլ նորա ա՛հ գազանաց.
և չորքոտանեաց զեռնոց երկրի։
17 *Եթէ պատահեսցին նմա արդունք,
18 ոչ մտանեն զէնք և նիզակք։ *Զանզի
համարի զերկաթ յարդ. և զպղինձ իբ
19 րև զփայտ փուտ։ *Ո՛չ խոցոտէ զնա ա
ղեղն պղնձի. համարի զումբաքար խոտ։
20 *Եւ իբրև զեղէգն համարեցան նմա
ուռունք. ծաղր առնէ զշարժումն հրա
21 լից։ *Ընկողինք նորա տէգք սրեալք.
ամ

ամ ոսկի ծովու ընտաւ իբրև զկաւ
անբաւ ։ * Առացուցանէ զանդունդս 22
իբրև զկատսայ. համարի զծով իբրև
գոչինչ ։ * Նա զառաւտառան անդնդոց 23
իբրև զգերի մի. համարեցաւ զան-
դունդս իւր ձեմելի ։ * Նա չիք յերկ- 24
րի՝ որ նմանին նմա. արարեալ խաղալիկ
հրեշտակաց իմոց ։ * Ոչամ բարձուն 25
տեսանէ. և ինքն է թագաւոր ամե՛
որք՝ ի ջուրան են ։

ԳԼ։ ԽՄ։

Պատասխանի անդրէն յոբայ՝ ասէ տեառն ։ 1
Գիտեմ, զի կարող ես յամի. և ոչա 2
րգանայ ինչ ի քեզ։ * Ո՛վ է՝ որ ծած 3
կէ՝ ի քէն զխորհուրդ. խնայեաւ՝ ի
բանս. կարծիցէ թաքուցանել՝ ինձ պատ
մեսցէ ինձ. զոր ոչ գիտէի, զմեծամեծս
և զպարմանալիս՝ որոց ոչ էի խելամուտ
* Լո՛ւր լուր ինձ Տէր՝ զի և ես խոսե- 4
ցայց. հարցից զքեզ՝ և դու ուսո՛ զիս ։
* Լուր ականջաց լսէի զքէն յառա- 5
ջագոյն. բայց արդ՝ և ակն իմ հիւկ եռես
զքեզ ։ * Վասն որոյ խոտեցի զանձն՝ 6
և հալեցայ. և համարիմ զանձն իմ
հող և մոխիր ։ * Նա եղև յետ խօսելոյ 7
Տեառն զբանս զայսոսիկ ընդ Յոբայ. ասէ Տէր
ցԵղիփազ Թեմանացի ։ Մեղաւ դու. և եր-
կոքեան բարեկամք քո. զի ոչ խօսեցայք
առաջի իմ ճշմարիտ՝ և ոչ ինչ՝ իբրև
զծառայ իմ զՅոբ ։ * Այց արդ՝ առէք 8
զոչխարակս եօթեն. և խոյս եօթեն. և եր
թայք առ ծառայ իմ Յոբ. և արասջ
աղջախէզս վասն ձեր. և Յոբ ծառայ իմ
աղօթս առնիցէ վասն ձեր. զի թէ ոչ
նմա ակն առեալիցեր. և եթէ ոչ վասն
նորա էր. կորուսեալ էր իմ արդեօք
զձեզ. զի ոչ խօսեցայք ճշմարտութեամբ
զծառայէ իմմէ զՅոբայ ։ * Նա գնաց 9
Եղիփազ Թեմանացի. և բաղդատ սօքեցի.
և սոփար մինեցի. և արարին՝ որպէս հրա-
մայեաց նոցա Տէր. և եղոյծ զմեղս նոցա վասն
Յոբայ ։ * Նա Տէր աճեցոյց զՅոբ. և 10
յառնել նմա՝ աղօթս՝ իւր բարեկամացն
եթող զմեղս նոցա ։ և եառ Տէր կրկին՝ քան
որչափ ինչ էր յառաջագոյն Յոբայ՝ ի
յաճախութի ։ * Նա լուան նմա եղ- 11
բարք նր՝ և քոյր նորա՝ զնմա անյան,
որք անգին ընդ նա. և եկին առնա. և
ամենեքեան զյաջաղագոյն գիտեին
զնա. կերին՝ և արբին առնմա. և մխի
թարեցին զնա. և զարմացան՝ իվնաս
զոր եած՝ ի վր նր Տէր. և եառն նմա
իւրաքանչիւր մէն մի որոջ. և չորեք-
դրամեան մի ոսկի անգիր ։ * Նա Տէր
օրհնեաց զվերջինն Յոբայ քան զառա
ջինն. և էին խաշինք նր՝ ոչխարք բիւր.
և չորեքհարիւր ուղտք վեցհազարք ։ և ցրս
լուծք եզանց հազար ։ էշք մատակք հազար
արօտականք հազարք ։ * Նա ծնան 13
նմա ուստերք եօթեն. և դստերք երեք։
* Նա կոչեաց զառաջինն տիւ. և զեր 14
կրորդն կասիա. և զերրորդն մնղթ-
եղջիւր ։ * Նա ոչ գտան հասմանման 15
դստերացն Յոբայ աշխարհագոյնք՝ իներ
քոյ երկնից. և եառ նց ժառանգութիւն
ընդ եղբարս իւրեանց ։ * Նա եկեաց 16
յետ հարուածոցն ամս հարիւր և եօ-
թանասուն։ և տես զորդիս եկեաց եր
կերիւր քառասուն և ութն. և եռես
Յոբ զորդիս իւր՝ և զորդիս որդւոց
իւրոց ազգ յազգ մինչ զորրորդ. և վախճանե-
ցաւ Յոբ ծերացեալ և լցեալ աւուրբք ։
(և գրեալ է նմա յառնել ընդ որս Տէր
յարուցանէ ։ սա Թարգմանի յասորի
գրոց. բնակեր յերկրին օստացւոց.
՝իսահմանս եդոմացւոց և արաբացւոց։
յառաջ էր անուն նր Յոբաբ. և առեալ
կին արաբացի. ծնաւ որդի. որում
անուն էր Ենոմ։ և էր հայր նր զա-
րեհ. որդի որդւոյն եսաւայ ։ և մայր
նր բոսորացի ։ որում և նա եղև իշխան
աշխարհին. որպես զի լինիլ նմա հինգ
երորդ յաբրահամէ։ և այս են թագա-
որք. որք թագաւորեցին յեդոմ՝ առա
ջինն բաղակ բէօրայ. և անուն քաղա
քին նորա դէնաբայ ։ յետ բաղակայ
Յոբաբ՝ որ կոչեցաւ Յոբ ։ յետ նորա սա
ւղմ՝ որ էր զօրավար յերկրէն Թե-
մանացւոց։ յետ նր ադադ որդի բա-
րադայ՝ որ կոտորեաց զմադքամ՝ ի դաշ
տին մովաբայ. և անուն քաղաքին նր
գեթեմ։ և որք եկին առ նա բարե-
կամքն. եղիփազ յորդւոցն եսաւայ.
բաղակ բռնաւոր սօքեցւոց. սոփար աբ
քայ մինեցւոց ։)

Եւ էառ Սամուէլ զեղջիւրն իւղոյ, և օծ զԴաւիթ, և խաղաց հոգի Տն 'ի Դւթ: 1. Թագ. 16. 13.

Եւ Դաւիթ, և որդիքն Իսրայէլի խաղային առաջի տապանակին Տն: 2. Թագ. 6. 5.

ԳԻՐՔ ՍԱՂՄՈՍԱՑ.

Սաղմոս Առաջներորդ:

ԵՐԱՆԵԱԼ 1
Է ԱՅՐ. ՈՐ
ոչ գնաց 'ի խոր-
հուրդս ամպարշ-
տաց. 'ի ճանապար-
հի մեղաւորաց ոչ
եկաց. և յաթոռս
ժանտից ոչ նըս-
Յեսու. տաւ: * Այլ յօրէնս Տն են կամք նր. 2
1. 8. յօրէնս նորա խորհեսցի նա 'ի տուէ և
Երեմ. 'ի գիշերի: * Եւ եղիցի նա որպէս ծառ. 3
17. 8. որ տնկեալ է 'ի գնացս ջուրց: Որ զպտ-
ուղ իւր 'ի ժամու տացէ. տերև նորա
ոչ թափեսցի. և զամ զորինչ և առնի-
ցէ, յաջողեսցի նմա: * Ոչ այսպէս են 4
ամպարիշտք՝ և ոչ այսպէս. այլ որ-
պէս հողմ զփոշի զի հոսէ յերեսաց
երկրի: * Վասն այսորիկ ոչ յարի- 5
ցեն ամպարիշտք 'ի դատաստանի. և ոչ
մեղաւորք 'ի խորհուրդս արդարոց:
6 * Զի գիտէ Տր զճանապարհս
արդարոց. ճանապարհք ամպարշտաց
կորիցեն:

Անվերնագիր 'ի հեբրայեցւոց երկրորդն առա
ընդ մի համար էն: Բ:

1 Ընդէ՞ր խռովեցան հեթանոսք. և Գործ.
ժողովուրդք խորհեցան սնոտիս: 4. 25.
2 * Յանդիման եղեն թագաւորք երկրի.
և իշխանք ժողովեցան 'ի միասին՝ վասն
3 Տն և վն օծելոյ նր: * Խզեսցուք զկա- Փ.Է
պանս նց. և ընկեսցուք 'ի մէնջ զլուծ
4 նց: * Բնակեալն յերկինս ծիծաղես-
ցի զնոքօք. և Տր արհամարհեսցէ զնս:
5 * Յայնժամ խօսեսցի ընդ նոսա բար-
կութբ իւրով. և սրտմտութբ իւրով
6 խռովեցուսցէ զնս: * Ես կացի թա-
գաւոր 'ի նմանէ 'ի վերայ սիոնի լերին
սրբոյ նորա: 'ի պատմել զհրամանս Տն Գործ.
7 * Տէր ասաց ցիս՝ որդի իմ ես դու. և 13. 33.
8 ես այսօր ծնայ զքեզ: * Խնդրեա յի- Եբր.
նէն՝ և տաց քեզ զհեթանոսս 'ի ժա- 1. 5. և
ռանգութի. և իշխանութի քեզ զամ 5. 5.
ծագս

Հայս. Ծագս երկրի ։ * ‖ Հովուեսցես զնոսա 9
2.27. և գաւազանաւ երկաթեաւ. ոպէս զանօթ
19.15. բրտի փշրեսցես զնոսա ։ * Եւդ հասարո 10
որք, զայս ի միտ առէք. և խրատեսցի
ջուք ամենեքեան՝ որք դատէք զերկիր։
* Ծառայեցէք Տեառն երկիւղիւ. և ցընծա 11
ցայեք առաջի նորա դողութեամբ։ * Ընկալ 12
ջարուք զխրատ նորա. զի մի բարկանայցի
Տէր. և կորնչիցիք ի ճանապարհէն
արդարութեան։ * Ի ժամանակի յորժամ 13
բորբոքեսցի բարկութիւն նորա։ Երանի
ամենեցունց՝ որք յուսացեալք են ի նմա։

Ա։ Ի շաբ. 15.14. Սաղմոս Դաւթի ի ժամանակի զի փախուցանէր 1
զնա յերեսաց Աբիսողոմայ որդւոյ իւրոյ։
Գ։

ՏԵՐ զի բազում եղեն նեղիչք իմ. և 2
բազումք յարեան ի վերայ իմ։
* Բազումք ասեն զանձնէ իմմէ. թէ 3
չիք փրկութիւն նորա առ Ա՛ստուած իւր։
* Դու Տէր օգնական իմ ես. փառք 4
իմ, և բարձրացուցիչ գլխոյ իմոյ։
* Ձայնիւ իմով ես առ Տէր կարդացի. 5
և լուաւ ինձ ի լերինն սրբոյ իւրմէ։
* Ես ննջեցի՝ և ի քուն եղէ. զարթեայ՝ 6
և Տէր ընդունայր իմ էր։ * Ոչ երկեայց 7
ես ի բիւրուց զօրաց նոցա՝ որք շուրջանակի պատեալ՝ պաշարեալ պահէին
զիս։ Յարի Տէր՝ և փրկեա զիս Ա՛ստուած իմ։
* Զի դու հարեր զամենեսեան՝ որք 8
ելին ընդիս թշնամութեամբ՝ ի տարապար
տուչ՝ զատամունս մեղաւորաց փշրեցեր։ * Տեառն 9
է փրկութիւն. ի վերայ ժողովրդեան քոյ օրհնութիւն քո։

Ի նուագարան ընդ օրհնութիւնն. Սաղմոս 1
Դաւթի։ Գ։

ԵՐ կարդալ իմում լուաւ ինձ Ա՛ստուած 2
ըստ արդարութեան. ի նեղութեան
ինձ անդորր արարեր՝ ողորմեա ինձ.
և լուր աղօթից իմոց։ * Որդիք մարդ 3
կան՝ մինչև յերբ եք խստասիրտք. ընդ
ի՞նչ սիրէք զնանրութիւն. և խնդրէք զսո
ւտութիւն։ * Ծաներուք՝ զի սքանչելիս 4
արար Տէր սրբոյ իւրում. Տէր լսիցէ
ինձ ի կարդալ իմում առ նա։
* Յարկանայք՝ և մի մեղանչէք. ասա 5
ջիք ընդ սիրտս ձեր՝ յանկողինս ձեր
զղջացարուք։ * Ընծայեցէք պատա 6
րագ արդարութեան. և յուսացարուք ի Տէր։
Բազումք ասեն՝ թէ ով ցուցցէ մեզ
զբարութիւն Տեառն։ * Լուսաւորեցաւ առ մեզ 7
լոյս երեսաց քոց ։ Ետուր ուրախութիւն
սրտից մերոց ։ * Ի պտղոյ ցորենոյ՝ գի 8
նոյ՝ ձիթոյ՝ նոքօք լցուցեր զմեզ։
* Խաղաղութեամբ յայս և ի սոյն ննջեցից 9
և զարթեայց։ * Զի դու Տէր միայն առ 10
անձին յուսով քով բնակեցուցեր զմեզ։

Դ։

Ի նուագարան. վասն ժառանգաւորին։ 1
Սաղմոս Դաւթի ։ Ե։

ԲԱնեաց իմոց ունկն դիր Տէր. և ի միտ 2
առ զաղաղակ իմ ։ * Լուիր ի ձայն 3
աղօթից իմոց. Թագաւոր իմ և
Ա՛ստուած իմ։ * Զքեզ աղաչեմ Տէր. ընդ 4
առաւօտս լուիցես ձայնի իմում։
* Ընդ առաւօտս պատրաստ եղէց. 5
յանդիման լինիլ առ քեզ։ Ա՛ստուած դու
այն Ա՛ստուած ես՝ որ կամիս զանօրէնութիւն։
* և ոչ բնակիսցի առ քեզ չարք ։ անօ 6
րէնք մի բնակեսցին առաջի աչաց քոց։
* Ատեցեր զամենայն որք գործեն զա 7
նօրէնութիւն. կորուսանես զամենե
սեան՝ որք խօսին սուտ։ Ա՛այր արիւ
նահեղ՝ և զինեղաւոր՝ պիղծ առնէս
դու Տէր։ * այլ ես ըստ բազում ողոր 8
մութեան քում մտից ի տունդ քոյ և երկիր
պագից ի տաճար սուրբ քո երկիւղիւ
քո։ * Տէր առաջնորդեա ինձ յարդա 9
րութեան քում, վասն թշնամեաց իմոց. և
ուղիղ արա առաջի իմ զճանապարհս
քո։ * Ոչ ոչ գոյ ի բերանս նոցա ճշմար 10
տութիւն. և սիրտք նոցա նանրութիւն են։
* ‖ Ոչ գերեզման բաց է կոկորդ նոց. և ‖ Ա այլ. 11
լեզուօք իւրեանց նենգաւորք եղեն ։ 13.3.
դատեա զնոսա Ա՛ստուած՝ զի անկցին ի խոր Հռոմ.
հրդոց իւրեանց. ըստ բազումամբարշ 3.13.
տութեան նոց մերժեա զնոսա. զի դառ
նացուցին զքեզ։ * Ուրախ լինիցին ամե 12
նեքեան՝ որք յուսացեալք են ի քեզ.
յաւիտեան ցնծացցեն. և բնակեսցիս
դու ի նոսա։ Պարծեսցին ի քեզ սի
րելիք անուանդ քոյ ։ * Օրհնեսցես 13
դու զարդարն. Տէր՝ ոպէս զինու հաճու
թիւք քով պսակեցեր զմեզ։

Ի նուագարան. ընդ օրհնութիւնն վասն ուխտիւղ 1
դոցն ։ Սաղմոս Դաւթի։ Զ։

ՏԵՐ մի սրտմտութեամբ քով յանդիմա 2
ներ զիս. և մի բարկութեամբ քով խրա
տեր զիս։ * Ողորմեայ ինձ Տէր՝ զի հիւ 3
անդ եմ ես. բժշկեա զանձն իմ, զի խռո
վեցան ոսկերք իմ։ * Ընդձն իմ յոյժ 4
խռովեցաւ. և դու Տէր մինչև յերբ։
* Դարձ Տէր. և փրկեա զանձն իմ. կե 5
ցո զիս Տէր ըստ ողորմութեան քումմ։
* Օի ոչ ոք է. որ ի մահու յիշէ զքեզ. 6
կամ ի դժոխս ո՞ք խոստովանի առնի ստե
քեզ։ * Վաստակեցայ ես ի հեծութեան 7
իմում. լուացի զամ գիշեր զմահիճս
իմ. և արտասուօք իմովք զանկողինս
իմ թաց։ * Խռովեցաւ ի սրտմտութիւն 8
ակն իմ. և մաշեցայ ես ի վերայ ամենայն ‖ Ա այլ.
մտաց իմոց ։ * ‖ Ի բաց կացէք յիս ոչ 7.23. և
ամենեքեան. ոչ գործէք զանօրէնութիւն 25.41.
Թէ։ * Լուաւ Տէր ձայնի լալոյ իմոյ. Ա այլ.

լուաւ Տր աղօթից իմոց. և Տր զխնդ-
րուածս իմ ընկալաւ: * Ամաչեսցեն 11
և խռովեսցին յոյժ ամ թշնամիք իմ.
դարձցին յետս, և ամաչեսցեն յոյժ՝
վաղվաղակի. և խռովեսցին:

Սաղմոս Դաւթի. զոր ասաց Տն վասն բանիցն 1
Քուսեայ. որդւոյ Յեմինեայ: Է:

ՏՐ Ա՟Ծ իմ՝ ՚ի քեզ յուսացայ. փր- 2
կեա զիս յամ հալածչաց իմոց.
Դ՝ գուցէ և ապրեցո զիս: * Գուցէ եր- 3
բէք յափշտակիցէ որպ առիւծ զանձն
իմ. ոչք իցէ, որ փրկիցէ. և ոչ այն,
որ ապրեցուցանիցէ: * Տր Ա՟Ծ իմ. թէ 4
արարի զայս. և թէ իցեն անօրէնու-
թիւք ՚ի ձեռս իմ: * Թէ հատուցի եր- 5
բեք այնոցիկ. որք հատուցին ինձ չար.
անկեայց և ես ՚ի թշնամեաց իմոց ընդ-
ունայն: * Հալածեսցէ ապա թշնա- 6
մին զանձն իմ. հասցէ, և կոխեսցէ
յերկիր զկեանս իմ. և զփառս իմ ՚ի
հող բնակեցուսցէ: * Արի Տր բար- 7
կութ՟բ քով. և բարձր լեր ՚ի սպառել թշ
նամեաց իմոց: Զարթիր Տր Ա՟Ծ իմ
՚ի հրամանս քո. զոր պատուիրեցեր:
* և ժողովք ժողովրդոց շուրջ եղի- 8
ցին զքև: Վ՟ա այսորիկ ՚ի բարձունս
դարձ Տր: * և Տր դատէ զժողովուրդս 9
իւր: Դատ արա ինձ Տէր ըստ արդա-
րութե իմում. ըստ ամբծութե ի-
մում, որ է յիս: * Կատարեսցին չարիք 10
՚ի վ՟ր մեղաւորաց՝ և յաջողեսցես զա
Ա 1 Թագ. արդարոյ: ‖ Որ քննէ զսիրտս և զերի-
16. 7. կամունս Ա՟Ծ արդար իրաւ: * օգնու- 11
1. Մն. թի իմ յԱ՟Ծ. որ ապրեցուցանէ զայ-
28. 9. նոսիկ. որք ուղիղք են սրտիւք: * Ա՟Ծ 12
Երեմ. դատաւոր արդար՝ հզօր՝ և երկայնա-
11. 20: միտ. որ ոչ ածէ զբարկութի իւր զոր-
Լ 17. 10 հանապազ: * Ապա թէ ոչ դառնայք 13
Լ 20. 12 առ նա. զսուր իւր սրեալ է. և զաղեղն
իւր լարեալ: * և ՚ի նմին պատրաս- 14
տեալ է զանօթս մահու. և զնետս իւր
‖ Յոբ. այրեցելովք է գործեալ: * ‖ Ահա հաւա- 15
15. 35. սիկ երկնեաց զանօրէնութի. յղացաւ
Եսայ. զցաւս. և ծնաւ զանիրաւութիւն:
59. 4. * Գուբն՝ զոր փորեաց՝ և պեղեաց. ՚ի 16
նոյն անկցի ՚ի խորխորատ. զոր գոր-
ծեաց: * Դարձցին ցաւք ՚ի գլուխ նր. 17
՚ի վերայ գագաթան նորա անօրէնու-
թիւք իւր իջցեն: * Խոստովան եղէց 18
Տն ըստ արդարութե նորա. սաղմոս
ասացից անուան Տն բարձրելոյ:

՚Ի կատարած ՚ի վերայ հնձանացն սաղմոս 1
Դաւթի: Ը:

ՏՐ Տր մեր՝ զի սքանչելի է անուն քո 2
յամ երկրի: Համբարձաւ մեծ
վայելչութի քո՝ ՚ի վերոյ քան զերկինս:

3 * ՚ի բերանոյ մանկանց՝ տղայոց ստն-
դեայց հաստատեցեր զօրհնութիւն:
Վ՟ա թշնամեաց քոց Տր. զի եղծցի
4 թշնամին և հակառակորդն: * Տեսից
զերկինս զգործս մատանց քոց. զլու-
սին և զաստեղս՝ զորս դու հաստատե-
5 ցեր: * Ո՞վ է մարդ՝ զի յիշես դու զնա.
կամ որդի մարդոյ. թէ այց առնես
6 դու նմա: * ‖ Փոքր ինչ խոնարհ արա ‖ Եբր.
րեր զնա քան զհրեշտակս քո. փառօք 2. 7.
7 և պատուով պսակեցեր զնա: * և կա
ցուցեր զնա՝ ՚ի վերայ ձեռակերտաց
8 քոց: * ‖ Զամ ինչ հնազանդ արարեր ‖ Ծն.
՚ի ներքոյ ոտից նորա՝ զխաշն և զար- 1. 28.
9 ջառ՝ և զամ ինչ: * Այլ և զերեվայ- 1. Կր.
րի. զթռչունս երկնից. և զձկունս ծո- 15. 26.
վու. որք շրջին ընդ շաւիղս ծովու:
10 * Տէր Տէր մեր. զի սքանչելի է անուն
քո յամենայն երկրի:

1 ՚Ի կատարած. վասն գաղտնեացն որդւոյ.
Սաղմոս Դաւթի: Թ:

2 ԳՈՀԱՑԱՅՑ զքեն Տէր բոլորով սր-
տիւ իմով. պատմեցից զամ սքան
3 չելիս քո: * Ուրախ եղէց՝ և ցնծացայց
՚ի քեզ. սաղմոս ասացից անուան քում
4 բարձրեալ: * ՚Ի դառնալ յետս թշնա
մեաց իմոց տկարասցին. և կորիցեն
5 յերեսաց քոց: * Արարեր զդատաս-
տանս իմ. և զիրաւունս իմ. նստար
յաթոռ՝ դատաւոր արդարութե:
6 * Սաստեցեր ՚ի հեթանոսս՝ և կորեաւ
ամբարիշտն. զանուանս նոցա ջնջեցեր
7 յաւիտեանս յաւիտենից: * և թշնա
միոյն զէն պակասեցաւ մինչև իսպառ:
Զքաղաքս աւերեցեր. և կորեաւ յի-
շատակ նոցա աղաղակաւ: Ա՟Ծ կայ՝ և
8 մնայ յաւիտեան: * պատրաստ արար
9 զաթոռ իւր ՚ի դատաստանի: * Նաքն
դատէ զաշխարհս արդարութբ. և
10 զժողովուրդս իւր ուղղութբ: * Եղև
Տր ապաւէն տնանկի. օգնական ՚ի նե
11 ղութե, ՚ի դէպ ժամանակի: * Յու-
սասցին ՚ի քեզ ամենեքեան՝ որք գիտեն
զանուն քո. զի ոչ թողցես զայնոսիկ.
12 որք խնդրեն զքեզ Տր: * Սաղմոս ա-
սացէք Տն. որ բնակեալն է ՚ի սիոն.
պատմեցէք ՚ի հեթանոսս զգործս նորա:
13 * ՚Ի խնդրել զարիւն նց՝ յիշեաց. և
ոչ մոռացաւ զաղաղակս տնանկաց:
14 * Ողորմեա ինձ Տր՝ և տես զխոնար-
15 հութի իմ ՚ի թշնամեաց իմոց: * Ո,
բարձր արարեր զիս ՚ի դրանց մահու:
Որպ պատմեցից զամ օրհնութիս քո ՚ի
16 դրունս դստեր սիոնի: * ցնծացայց ՚ի
փրկութե քում: Ընկլան հեթանոսք
յապականութե իւրեանց՝ զոր արա-
րին. և որոգայթ՝ զոր թաքուցին. ա-

ցէ

ցէ զոտս ն̃ց։ *Ճանաչի Տէր առնել 17
զդատաստանս իւր. և՛ի գործս ձեռաց
իւրեանց կապեցին մեղաւորք։
*Դարձցին մեղաւորք անդրէն ՚ի դը 18
ժոխս. և ա̃մ հեթանոսք. որք մոռա_
ցան զԱ̃ծ։ *Զի ոչ իսպառ մոռանայ 19
Տր̃ զաղքատն. և համբերութի̃ տնան
կաց մի̃ կորիցէ իսպառ։ *Արի̃ Տր̃ և 20
մի̃ զօրասցի մարդ. դատեսցին հեթա
նոսք առաջի քո։ *Կարգեա̃ Տր̃ օրէնս_ 21
դիր ՚ի վերայ նոցա. ծանիցեն հեթա_
նոսք՝ թէ մարդիկ են։

Սաղմոս Ժ։ ըստ Եբրայեցւոցն։

Ընդէ՞ր Տէր՝ կայցես ՚ի հեռաստանէ. 1
անտես արարեր ՚ի դէպ նեղութե̃
ժամանակի։ *Յամբարտաւանել ա̃մ 2
պարշտին այրի աղքատն. արդելցին
՚ի խորհուրդս իւրեանց. զոր և խորհե
ցան։ *Զի գովի մեղաւորն ՚ի ցան_ 3
կութի̃ անձին իւրոյ. որ զրկէն. նա
գովի։ *Բարկացոյց մեղաւորն զԱ̃ծ. 4
ըստ բազում բարկութե̃ իւրում թէ
ոչ խնդրի։ *Ոչ է Ա̃ծ առաջի աչաց 5
ն̃ր. պղծեալ են ճանապարհք ն̃ր յա̃մ
ժամ. բարձեալ են իրաւունք յերեսաց
ն̃ր. ՚ի վերայ ա̃մ թշնամեաց իւրոց տի
րեսցէ։ *Ասաց ՚ի սրտի իւրում, թէ 6
ոչ սասանեցայց յազգէ յազգ առանց
‖Սաղմ. չարի։ *‖Անիծիւք, և դառնութե̃, և 7
13.3. նենգութե̃ լի է բերան նորա. ՚ի ներ_
Հռոմ. քոյ լեզուի նորա ցաւք և վաստակք։
3. 14. *Նստի դարանեալ ընդ մեծամեծս 8
՚ի գաղտնիս՝ սպանանել զանբիծն։
*Աչք նորա ՚ի տնանկս հային՝ վարա_ 9
նի ՚ի գաղտնիս. որպէս զառիւծ ՚ի մոր
ւոջ իւրում։ Դարանի յափշտակել
զաղքատն. յափշտակել զաղքատն՝ և
ձգել զնա։ *Յորոգայթ իւր խոնար_ 10
հեցուսցէ զնա. խոնարհեսցի՝ և անկցի
՚ի տիրելն իւրում ՚ի վերայ տնանկաց։
*Ասաց ՚ի սրտի իւրում թէ մոռացաւ 11
Ա̃ծ. դարձոյց զերեսս իւր՝ զի մի̃ տեսցէ
իսպառ։ *Արի̃ Տէր Ա̃ծ իմ. բարձր 12
եղիցի ձեռն քո. և մի̃ մոռանար զտը_
նանկս։ *Իսկ ընդէ՞ր բարկացոյց ամ 13
պարիշտն զԱ̃ծ. զի ասաց ՚ի սրտի
իւրում թէ ոչ քննի։ *Տեսանես դու 14
զնա ՚ի ցաւս. և ՚ի սրտմտութի̃ հայիս.
մատնել զնա ՚ի ձեռս քո. քեզ թողեալ
է աղքատն. և որբոյն դու ես օգնական։
*Խորտակեսցի բազուկ մեղաւորի՝ և 15
չարի. խնդրեսցին մեղք նորա՝ և մի̃
գտցի։ *Տր̃ թագաւոր յաւիտեանս 16
յաւիտենից. կորիցեն հեթանոսք յերկ
րէ նորա։ *Զցանկութի̃ տնանկաց 17
լուաւ Տր̃. ՚ի պատրաստութի̃ սրտից
նոցա հայեցաւ ունկն քո։ *Դատ առ 18

նել որբոյ և տնանկի. զի մի̃ ևս յաւել
ցի մարդ, ՚ի մեծաբանելն իւրում ՚ի
վերայ երեսաց երկրի։

1 ՚Ի կատարած. սաղմոս դաւթի։ Ժ։

2 ՚Ի Տր̃ յուսացայ. որպ̃ ասիցէք ցանձն
իմ. փոփոխեաց ՚ի լերինս որպ̃ ճնճ
3 ղուկ։ *Զի ահա մեղաւորք լարեցին
զաղեղունս իւրեանց. պատրաստ արա
րին զնետս ՚ի կապարճս՝ ձգել ընդ խաւ
ար այնոցիկ՝ որք ուղիղք են սրտիւք։
4 *Զի զոր դու շինեցեր՝ նոքա աւերե_
5 ցին. իսկ արդարն զի̃ արար։ *‖Տր̃ ՚ի ‖Ամբակ.
տաճար սուրբ իւրում. Տր̃ յերկինս 2.20.
յաթոռ իւրում։ Աչք ն̃ր ՚ի տնանկս
հային՝ արտևանունք ն̃ր քննեն զորդիս
6 մարդկան։ *Տր̃ քննէ զարդարն և
զամբարիշտն. որ սիրէ զմեղս, ատեայ
7 զանձն իւր։ *Տեղասցէ ՚ի վերայ մեղա
ւորաց՝ որոգայթ՝ հուր՝ և ծծումբ.
այս մրրիկ բաժին բաժակի նոցա։
8 *Արդար է Տր̃՝ և զարդարութի̃ սիրէ.
և զուղղութի̃ տեսանեն երեսք նորա

1 ՚Ի կատարած. ՚ի վերայ ութերորդայն։
Սաղմոս Դաւթի։ ԺԱ։

2 Ապրեցո՛ զիս Տր̃՝ զի նուաղեցաւ ար̃.
նուաղեցան ճշմարտութի̃ք յորդ
3 ւոց մարդկան։ *՚Ի նանիր խօսեցաւ
այր ընդ ընկերի իւրում։ շրթամբք
նենգաւորօք ՚ի սրտէ ՚ի սիրտ խօսեցաւ։
4 *Սատակէ Տր̃ զա̃մ շրթունս նենգա
5 ւորս. և զլեզու մեծաբանս։ *Որք
ասացին զլեզու մեր մեծ արասցուք.
շրթունք մեր առ մեզ են. և արդ՝ մեր
6 ո՞վ է Տր̃։ *Վ̃ն տառապանաց աղքա_
տին՝ և հեծութե̃ տնանկին. այժմ յա
րեայց, ասէ Տր̃. եդից զփրկութիւն
իմ. և համարձակեցայց ՚ի նոսա։
7 *‖Բանք Տն̃ են բանք ս̃բ՝ որպ̃ զարծաթ. ‖Առակ.
ընտրեալ և փորձեալ յերկրէ. սրբեալ 30.5.
և պարզեալ եօթնպատիկ ՚ի հողոյ։
8 *Դու Տր̃ պահեսցես զմեզ. և ապրե_
ցուսցես զմեզ յազգէ յայսմանէ մինչև
9 յաւիտեան։ *Շուրջանակի ամպա_
րիշտք շրջին. ըստ բարձրութե̃ քում
մեծս արասցես դու զորդիս մարդկան

1 ՚Ի կատարած, Սաղմոս Դաւթի։ ԺԲ։

Մինչև յերբ Տէր՝ մոռանաս զիս իս
պառ. մինչև յերբ դարձուցանես
2 զերեսս քո յինէն։ *Մինչև յերբ դնեմ
զխորհուրդս յանձն իմ. և ցաւք սրտի
3 իմոյ զաւուրս։ *Մինչև ցե՞րբ բարձ
4 րանայ թշնամին ՚ի վ̃ր իմ։ *Նայեա՛ց
և լո՛ւր ինձ Տէր Ա̃ծ իմ։ Լո՛յս տուր Տր̃
աչաց իմոց. զի մի̃ երբէք ննջեցից ՚ի
5 մահ։ *Մի̃ ասասցէ թշնամին. թէ

յալքեցի նմա , կամ նեղիչք իմ
ցնծասցեն , թէ ես սասանեցայց ։
6 * Եւ յոյսս ի քեզ Տէր յուսացայ ։
ցնծասցաւ սիրտ իմ ի փրկութենէ քումմէ.
օրհնեցից զՏէր՝ զբարերարդ իմ ։

Ի կատարած Սաղմոս Դաւթի ։ ԺԹ։ 1

ԱՍաց անզգամն ի սրտի իւրում ։ թէ
ոչ գոյ Ա՛ծ։ Պականեցան և պղծե
ցան յանօրէնութենէ իւրեանց ։ և ոչ
ոք է՝ որ առնէ զբարի ։ * Տէր յերկնից 2
նայեցաւ յորդիս մարդկան. տե
սանել թէ իցէ ոք իմաստուն. որ խնդ
րիցէ զԱ՛ծ։ * Ամենեքեան խոտորեցան՝ 3
ի միասին անպիտանացան ։ Ոչ ոք է՝
որ առնէ զբարի. և ոչ ոք ի մինչև ի մի ։
‖ Գերեզման բացեալ կոկորդ նոցա. լե‖ ԱՂԷ ։
զուօք իւրեանց նենգաւորք եղեն ։ 5։10։
Թոյնք իժից ի ներքոյ շրթանց նոցա. Յոան։
որոց բերանք անիծից և դառնութե 3։13։
լից են՝ երագք են ոտք նոցա հեղուլ ՎԱՂՂ։
զարիւն . բեկումն և թշուառութի 139։ 4։
ի ճանապարհս նոցա. և զճանապարհն ՎԱՂԷ։
խաղաղութե ոչ ծանեան. ոչ է երկիւղ 5։ 11։
Ա՛ի առաջի աչաց նոցա ։ * Ոչ ոչ ծա 4 Յոան։
նիցեն ամենեքեան. որք գործեն զա 3։16։
նօրէնութի ։ Ոյք ուտեն զժողովուրդ Եսայ։
իմ՝ ոպ կերակուր հացի ։ * և առ Տէր 5 59։7։
ոչ կարդացին։ Անդ երկիցեն զերկիւղ Հռով։
ուր ոչ իցէ երկիւղ ։ * զի Տէր է յազգս 6 1։16։
արդարոց ։ Հնարհուդք աղքատին
յամօթ արարին. զի Տէր է յոյս նորա ։
* Ով տացէ ի սիօնէ զփրկութի իսրայէլ։ 7
ի դարձուցանել Տ՚ն զգերութի ժո
ղովրդեան իւրոյ . ցնծասցի յակոբ՝ և
ուրախ եղիցի իսրայէլ ։

Սաղմոս Դաւթի ։ ԺԵ։ 1

ՏՈ՛ւր կացցէ ի խորանի քումմ.
կամ ով բնակեսցի ի լեառն
սուրբ քո ։ * Որ գնայ անբիծ՝ 2
գործէ զարդարութի ։ * խօսի ճշմարիտ 3
սութի ի սրտի իւրում ։ Որ ոչ նեն
դաւորեաց լեզուաւ իւրով. և չար ըն
կերի իւրում ոչ արար ։ Նախատինս
ի մերձաւորաց ոչ առնու ։ * արհամարհ 4
հեալ առաջի նո՛ր չարագործ ։ Զերկ
կիւղածս Տ՚ն փառաւորս առնէ՝ որ
երդնու ընկերի իւրում՝ և ոչ սուտ ։
* Զարծաթ իւր ի վարձու ոչ տայ . 5
և կաշառս ի վերայ իրաւանց ոչ առ
նու . որ զայս արասցէ . նա մի սասա
նեսցի յաւիտեան ։

Ա՚ղեչնոփերի Դաւթի ։ ԺԶ։ 1

ՊԱհեա զիս Ա՛ծ իմ. զի ես ի քեզ յու
սացայ ։ * ասացի Տ՚ն . Տէր իմ ես 2
դու . և բարիք իմ՝ չեն քեզ ինչ պիտոյ ։
3 * Սրբոց քոց՝ որք են յերկրի քումմ .
սքանչելի արարեր զամ իմ՝ ի
4 նոսա ։ * Յաճախեսցին հիւանդութիք
նո՛ց . յետ այսորիկ ոչա վաղվաղեսցին ։
Ոչ ժողովեցայց ի ժողովս նոցա յարե՛ւ
նէ . և ոչ յիշեցից զանուանս նոցա ի բեր
5 ընդ ։ Տէր բաժին ժառան
գութե իմոյ՝ և բաժակի իմոյ . դու
ես , որ անդրէն դարձուցանես զժա
6 ռանգութի իմ՝ յիս ։ * Ո՛ւխակք եղեն
ինձ ընդ ընտիրս . և ժառանգութիւն
7 իմ հաճոյ եղև ինձ ։ * Օրհնեցից զՏ՚ր՝
որ խնամատուն արար զիս . մինչ զի ի գի
շերի ևս խրատեցին զիս երիկամունք
8 իմ ։ * ‖ Յառաջագոյն տեսանէի զՏ՚ր ‖ Գոր.
առաջի իմ յամ ժամ. զի ե ընդ աջմէ 2.25.
9 իմմէ . զի մի սասանեցայց ։ * Ա՛ ես ա
սորիկ ուրախ եղև սիրտ իմ. և ցնծա
ցաւ լեզու իմ, ևս և մարմին իմ բնա
10 կեսցի յոյսով ։ * ‖ Ո՛չ թողցես ‖ Գոր.
զանձն իմ՝ ի դժոխս . և ոչ տացես սր 2.31.
քոյ քումմ. տեսանել զապականութի ։ 13. 35.
Յուցցես ինձ զճանապարհս կենաց .
լցուսցես զիս ուրախութի երեսաց
քոց՝ ի քաղցրութի վայելչութե աջոյ
քոյ միշտ խոպոտ ։

Ա՚ղօթ Դաւթի ։ ԺՀ։ 1

ԼՍա՛ր Տ՚ր արդարութե . և նայեաց՝ ի
խնդրուածս իմ . ունկնդիր ալո
թից իմոց , զի ոչ շրթամբք նենգաւո
2 րօք ։ * Յերեսաց քոց իրաւունք ինձ
ելցեն . և աչք իմ տեսցեն զուղղութի ։
3 * Փորձեցեր զսիրտ իմ, և քննեցեր՝ ի
գիշերի . փորձեցեր զիս՝ և ոչ գտաւ
4 յիս անիրաւութի ։ * Ո՛ւի խօսեցայ բե
րան իմ զգործս որդւոց մարդկան . վն
դանից շրթանց քոց ես պահեցից զճա
5 նապարհս խիստս ։ * Հաստատեա զշաւ
իղս իմ՝ ի ճանապարհի քումմ . զի մի
6 գայլեսցին գնացք իմ ։ * Ես առ
քեզ Տ՚ր կարդացի՝ զի լսեր ինձ Ա՛ծ՝
խոնարհեցո՛ ականջն քո . և լսիր
7 բանից իմոց ։ * Սքանչելի արարեր զո
ղորմութի՛ւնս քո՝ ո՛ փրկես զյոյսոսիկ .
8 ոյք յուսացեալք են ի քեզ ։ * յայն
յանէ , ոյք հակառակ կան աջոյ քոյ ։
Պահեա զիս ոպ բիբ ականի. ընդ ՚ո
վանեաւ թևոց քոց ծածկեսցես զիս ։
9 * յերեսաց ամբարշտաց . ոյք տառա
պեցուցին զիս ։ Թշնամիք զանձն իմ
10 պաշարեցին ։ * և՝ ի ճարպս իւրեանց ար
գելին . և բերանքն՝ խօսեցան զամբար
11 տաւանութի ։ * Պերճեցին զիս . և
այժմ դարձեալ պատեցան զինև . ուշ
եդին խոնարհեցուցանել զիս յերկիր ։
12 * Նմանեցան ինձ որպէս առիւծ . զի
պատրաստի յորս . և որպէս կորիւն
առիւ-

առիւծու ․ զի նստի դարանեալ ։
*Արի Տր ժամանեա նոցա ․ և խա_ 13
փանեա զնս ․ և փրկեա զանձն իմ յան_
պարշտաց ․ 'ի սրոյ ։ * և 'ի ձեռանէ 14
թշնամւոյն ։ Տր կորո զնոսա յերկրէ ․
բաժանեա, և խափանեա զնս 'ի կեանս
իւրեանց ։ Դարանեօք քովք լցան որո_
վայնք նց ․ յագեցան կերակրովք ․ և թո
ղին զմնացուածս տղայոց իւրեանց ։
*Ես արդարութբ երևեցայց երեսաց 15
քոց ․ յագեցայց յերևել փառաց քոց ։

Ի կատարած ․ 'ի վերայ պատերազմօղ նահատա_ 1
կին՝ ծառային Տն Դաւթի ․ զոր խօսեցաւ ընդ
Տն զբանս օրհնութե՝ յաւուր յորում փր_
կեաց զնա Տր 'ի ձեռաց ամենայն թշնամեաց,
և 'ի ձեռաց Սաւուղայ՝ և ասէ ։ ԺԷ ։

‖2 Թագ 22.2. Սիրեցից զքեզ՝ Տր՝ զօրութի իմ ․ ‖ Տր 2
հաստատիչ իմ՝ ապաւէն իմ՝ և
‖Եբր 2.13. փրկիչ իմ ։ *Այ օգնական իմ, ‖ և ես 3
յուսամ 'ի նա՝ ապաւէն իմ ․ եղջիւր
փրկութե իմոյ՝ ընդունօղ իմ է ։
* Օրհնելով կարդացից առ Տր ․ և 4
'ի թշնամեաց իմոց ապրեցայց ։
*Շուրջ եղեն զինև երկունք մահու ․ 5
և ուղխք անօրէնութե խռովեցուցին
զիս ։ * Վիշտք դժոխոց պաշարեցին 6
զիս ․ և ժամանեցին ինձ որոգայթք
մահու ։ * Ի նեղութեան իմում ես 7
առ Տր կարդացի՝ և առ Այ իմ աղա_
ղակեցի ։ Լուաւ ինձ 'ի տաճարէ սրբոյ
իւրմէ ձայնի աղօթից իմոց ․ և աղա
ղակ իմ առաջի նր, մտցէ յականջս նր ։
*Խռովեցաւ և դողաց երկիր՝ և հի 8
մունք լերանց սասանեցան՝ և խռովե
ցան ․ զի բարկացաւ 'ի վերայ նց Այ ։
*Ել ծուխ 'ի բարկութե նր ․ և հուր 9
յերեսաց նորա բորբոքեցաւ ․ և փայլա
տակունք հատան 'ի նմանէ ։
*Խոնարհեցոյց զերկինս՝ և էջ ․ և մէգ 10
'ի ներքոյ ոտից նորա ։ *Ել 'ի քրովբէս՝ 11
և թռեաւ ․ ոլացաւ նա 'ի թևս հողմոց ։
*Եդ զխաւար 'ի ծածկոյթ իւր ․ և 12
շուրջ զնովաւ էն յարկք իւր ․ և խաւա_
րային ջուրք ․ մինչև յամպս օդոց ։
*Ի փայլատակել նորա առաջի նոցա՝ 13
ամպք անցուցին զկարկուտ և զկայծա
կունս հուր ։ * Որոտաց Տր յերկնից ․ 14
և բարձրեալն ետ զձայն իւր 'ի կար_
կուտ՝ և 'ի կայծակունս հուր ։
* Առաքեաց զնետս իւր՝ և ցրուեաց 15
զնոսա ․ յաճախեաց զփայլատակունս
իւր՝ և խռովեցոյց զնոսա ։* Երև_ 16
ցան աղբիւրք ջուրց ․ և յայտնեցան
հիմունք աշխարհի ․ Ի սաստէ քում
մէ Տր ․ և 'ի շնչել հողմոյ բարկութե
քոյ ։ *Առաքեաց 'ի բարձանց՝ և ընկա 17
լաւ զիս ․ ընկալաւ զիս 'ի ջուրց բազ_

18 մաց ։ *Փրկեսցէ զիս Տր 'ի թշնամեաց ժրհեայ
իմոց հզօրաց՝ և յատելեաց իմոց ․ զի
19 հզօրք եղենքան զիս ։ * Ժամանեցին
ինձ յաւուրս չարչարանաց իմոց ․ եղև
20 Տր հզօրիչ իմ ։ * և եհան զիս յան_
դորր ․ փրկեաց զիս Տր ․ զի կամեցաւ
21 զիս ։ * Հատուսցէ ինձ Տր ըստ ար_
դարութե իմում ․ ըստ ամբծութեան
22 իմում հատուսցէ ինձ ։ * Ես պահե_ պահեցի
ցից զճանապարհս Տն ․ և ոչ անպարշտե ամբարշ_
23 ցայց յԱյ իմմէ ։ *Ամենայն իրաւունք տեցայ
նր ․ առաջի իմ են ․ զարդարութի իւր
24 ոչ 'ի բացէ արար յինէն ։ *Եղէց և ես եղէ
անբիծ ընդ նմա ․ և զգուշացայց յա_ զգուշա_
25 նօրէնութե իմմէ ։ * Հատուսցէ ինձ ցայ
Տր ըստ արդարութե իմում ․ ըստ սր_
բութե ձեռաց իմոց՝ առաջի աչաց իւ_
26 րոյ ։ * Ընդ սրբոյն սուրբ եղիցիս ․
ընդ առն ամբծի ամբիծ եղիցիս ։
27 * ընդ ընտրելոյն ընտրեալ եղիցիս ․
28 և ընդ թիւրոյն թիւրեսցիս ։ * Դու
զժողովուրդս խոնարհս կեցուցանես ․
և զաչս ամբարտաւանից դու խոնարհե
29 ցուցանես ։ * Դու լուսաւոր առնես
զճրագ իմ Տր՝ Այ իմ՝ լոյս առնես ինձ լոյս արա
30 'ի խաւարի ։ * Քև փրկեցայց 'ի փոր_
ձութե ․ աստուծով իմով անցից ընդ
31 պարիսպ ։ *Այ իմ անբիծք են ճա_
նապարհք նր ․ ‖ և բանք Տն ընտրեալք ‖Առակ.
են ․ և ապաւէն ամենեցուն ․ որք յու_ 30.5.
32 սան 'ի նա ։ *Զի ով է Այ բաց
'ի Տէ ․ կամ ով է Այ ․ բաց յԱյ մեր
33 մէ ։ *Այ որ զգեցուցեր ինձ զզօրու_
թի ․ և եդեր յամբծութե զճանա_
34 պարհս իմ ։* ‖ Հաստատեցեր զոտս իմ ‖2 Թագ
ոպ եղջերուի ․ և 'ի վերայ բարձանց 22.34.
35 կացուցեր զիս ։ *Ուսուցեր զձեռս իմ
'ի պատերազմ ․ և արարեր զբազուկ
36 իմ ոպ զաղեղն հաստ ։ * և ետուր ինձ
զպաշտպանութի փրկութե քոյ ։ Աջ
քո ընկալաւ զիս՝ և խրատ քո կանգ_
նեաց զիս իսպառ ․ և խրատ քո ուսուս
37 ցէ զիս ։ * Ընդարձակեցեր զգնացս
իմ 'ի ստորև իմմէ ․ և ոչ տկարացան
38 շաւիղք իմ ։ *Հալածեցից զթշնամիսն
իմ, և հասից նոցա ․ և ոչ դարձայց 'ի
նոցանէ՝ մինչև սպառեցից զնոսա ։
39 * Նեղեցից զնոսա ․ և մի կարասցեն
կեալ ․ և անկցին 'ի ներքոյ ոտից իմոց ։
40 * Զգեցուցեր ինձ զզօրութի 'ի պա_
տերազմի ․ և զյարուցեալսն 'ի վր իմ,
41 'ի ներքոյ իմ արարեր ։ * Զթշնամիսն
իմ հալածականս արարեր ․ և զատե_
42 լիսն իմ սատակեցեր ։ *Աղաղակեցին ․
և ոչոք էր՝ որ փրկէր զնոսա ․ կարդա_
ցին առ Տէր ․ և ոչ լուաւ նոցա ։
43 * Մանրեցից զնս որպէս փոշի առաջի
հողմոյ ․ և ոպ կաւ գռեհաց կոխեցից
զնոսա ։

զնոսա: * Փրկեսցէ զիս Տր 'ի հակա- 44
ռակութենէ ժողովրդոց. և կացուսցէ
զիս գլուխ հեթանոսաց: * Ժողո- 45
վուրդ՝ զոր ո՛չ գիտէի, ծառայեաց
ինձ. և 'ի լուր ականջաց լուաւ ինձ:
* Որդիք օտարաց ստեցին ինձ. որդիք 46
օտարաց մաշեցան. և կաղացան 'ի շաւ-
ղաց իւրեանց: * Կենդանի է Տր՝ և օրհ- 47
նեալ է Ած. և բարձր եղիցի Ած փր-
կութեան իմոյ: * Ած է՝ որ խնդրէ զվրէժ 48
իմ. և հնազանդ առնէ զժողովուրդս
ընդ ինև: փրկիչ իմ 'ի թշնամեաց ի-
մոց բարկացողաց: * յայնցանէ՝ որք 49
յարուցեալք են 'ի վերայ իմ. բարձր
արարեր զիս՝ և յառնէ անիրաւէ փր-
‖2 Թագ. կեցեր զիս: * ‖ Վս այսորիկ խոստո- 50
22.50: վան եղէց քեզ 'ի հեթանոսս. և անու-
Հռովմ. ան քում սաղմոս ասացից: * Մեծ 51
15.9 արարեր զփրկութիւն թագաւորի նր.
առնել ողորմութիւն ընդ օծելոյ նորա
դաւթի. և ընդ զաւակի նորա յազգէ
մինչև յազգ:

Ի կատարած. Սաղմոս Դաւթի: ԺԸ: 1

ԵՐԿԻՆՔ ՊԱՏՄԵՆ 2
զփառս Այ. և զարարածս
ձեռաց նորա պատմէ հաս-
տատութիւն: * Օր աւուր 3
բղխէ զբան. և գիշեր գի-
շերոյ ցուցանէ զգիտութիւն: * Ոչ են 4
բանք՝ և ո՛չ են խօսք՝ որոց ոչ լսին ձայնք
‖ Հռովմ. նոցա: * ‖ Ընդ ամ երկիր ել բարբառ 5
10. 18. նց. և մինչև 'ի ծագս աշխարհի են խօսք
Ղուկ. նոցա: * Յարևու եհար զխորան իւր. 6
24. 46. և ինքն որպէս փեսայ՝ զի ելանէ յառագաս-
տէ իւրմէ. և ցնծայ նա որպէս սկայ յըն-
թանալ 'ի ճանապարհս իւր: * 'Ի ծա- 7
գաց երկնից են ելք նր. հանգիստ նր
մինչև 'ի ծագս նորուն. և ոչ ոք իցէ. որ
թաքիցէ 'ի տապոյ նորա: * Օրէնք Տն 8
անբիծք են՝ և դարձուցանեն զհոգիս.
վկայութիւն Տն հաւատարիմ է. և իմաս-
տուն առնէ զտղայս: * Արդարութիւնք 9
Տեառն ուղիղք են, և ուրախ առնեն
զսիրտս. պատուիրանք Տն լոյսք են՝ և
լոյս տան աչաց. երկիւղ Տն սուրբ է.
և մնայ յաւիտեան: * Դատաստանք Տն 10
ճշմարիտ է. և արդար է 'ի նոյն:
* Ցանկալի է նա քան զոսկի՝ և քան զա 11
կանս պատուականս բազում. քաղցր
է նա քան զմեղու խորիսխ: * Քանզի՝ 12
ծառայ քո պահեսցէ զայս. 'ի պահել
նր հատուցումն բազում: * Ոյ յան- 13
ցանս իւր ո՞վ կարէ առնուլ 'ի միտ.
'ի գաղտնեաց իմոց սուրբ արա զիս Տր:

14 * և յօտարէն պահեա զծառայս քո.
Ապա թէ ոչ տիրեսցեն ինձ. յայնժամ՝
անբիծ եղէց՝ և սուրբ եղէց 'ի մեղաց
15 մեծաց: * Եղիցին քեզ հաճոյք բանք
բերանոյ իմոյ. խորհուրդք սրտի իմոյ
առաջի քո յամենայն ժամ. Տէր օգնա
կան իմ, և փրկիչ իմ:

1 Ի կատարած Սաղմոս Դաւթի: ԺԹ:

2 Լուիցէ քեզ Տէր յաւուր անձկութեան
օգնական եղիցի քեզ անուն Այ
3 յակոբայ: * Առաքեսցէ քեզ Տէր զօգ-
նութիւն 'ի սրբութենէ իւրմէ. և 'ի սիոնէ
4 ընկալցի զքեզ: * * Յիշեսցէ Տր զամ
պատարագս քո. և զողջակէզս քո ընդու-
5 նելի արասցէ: * Տացէ քեզ Տր ըստ
սրտի քում. զամ խորհուրդս քո նա կա-
6 տարեսցէ: * Ցնծասցուք մեք 'ի փր-
կութեան քում. յանուն Այ մերոյ մեք
7 մեծք եղիցուք: * Լցուսցէ Տր զամ
խնդրուածս քո. այժմ ծանեայ. զի
կեցոյց Տր զօծեալ իւր. Լուաւ նմա
յերկնից 'ի սրբութենէ իւրմէ՝ 'ի զօրու-
8 թիւն փրկութեան աջոյ իւրոյ: * Սոքա
կառօք՝ և սոքա երիվարօք՝ այլ մեք զա
նուն Տն Այ մերոյ կարդասցուք:
9 * Սոքա խափանեցան՝ և անկան. մեք
10 յարեաք՝ և ուղիղք եղեաք: * Տր կեցո
զթագաւորն՝ և լուր մեզ. յաւուր յո-
րում կարդասցուք առ քեզ:

1 Ի կատարած Սաղմոս Դաւթի: Ի:

2 ՏՐ 'ի զօրութեան քում՝ ուրախ եղիցի
թագաւորն. 'ի փրկութեան քում
3 ցնծասցէ յոյժ: * Զցանկութիւն սրտի
նր ետուր նմա. և զկամս շրթանց նր ո՛չ
4 արգելեր 'ի նմանէ: * Ժաման արա-
րեր զնա յօրհնութիւն քաղցրութեան քո.
և եդեր 'ի գլուխ նորա պսակ 'ի քարէ
5 պատուականէ: * Կեանս խնդրեաց 'ի
քէն. և ետուր նմա ընդ երկայն աւ-
ուրս՝ յաւիտեանս յաւիտենից:
6 * Մեծ են փառք նորա 'ի փրկութեան
քում. զփառս և զմեծ վայելչութիւն
7 դիցես 'ի վերայ նորա: * Տացես զնա
յօրհնութիւն յաւիտեանս յաւիտենից.
և ուրախ արասցես զնա յուրախութեան
8 երեսաց քոց: * Թագաւոր յուսացաւ
'ի Տր՝ յողորմութենէ բարձրելոյն նա մի
9 սասանեսցի: * Գտցի ձեռն քո 'ի վս
թշնամեաց քոց. և աջ քո գտցէ զամ
10 ատելիս քո: * Դիցես զնոսա որպէս
հնոց հրոյ. 'ի ժամանակի երեսաց
քոց: Տր բարկութեամբ իւրով խռո-
վեցուսցէ զնոսա. և հուր կերիցէ
11 զնոսա: * Զպտուղ նոցա յերկրէ կորու-
ցէ. և զաւակ նոցա յորդւոց մարդ-
12 կան: * Խորհեցան 'ի քէն չարութիւն.
և

և խորհեցան զխորհուրդ․ զոր ոչ կա
րասցեն հաստատել ։ * Արասցես զնոսա 13
հալածեալս․ 'ի մնացորդս քո պատ
րաստեսցես զերեսս նոցա ։ * Բարձր 14
լեր Տր 'ի զօրութեան քում․ օրհնեսցուք,
և սաղմոս ասասցուք զօրութեանց քոց ։

'Ի կատարած․ վասն առաւօտուն օգնականութեան ։ 1

Սաղմոս Դաւթի ։ ԻԱ ։

Մատ. 27. 46. Մարկ. 15.34. ԱԾ ԱԾ իմ, նայեաց առ իս․ ընդէ՞ր 2
թողեր զիս․ հեռի եղէ 'ի փրկու
թենէ իմմէ վն բանից յանցանաց իմոց ։
*ԱԾ իմ, 'ի տուէ կարդացի առ քեզ՝ 3
և ինձ ոչ լուար․ 'ի գիշերի, և ինձ
ոչ անսացեր ։ * Դու 'ի սուրբս բնա 4
կեալ ես․ գովեալդ Իսրայէլի ։ *'Ի քեզ 5
յուսացան հարքն մեր ։ յուսացան 'ի
քեզ․ և փրկեցեր զնս ։ * Առ քեզ ա 6
ղաղակեցին, և կեցին․ 'ի քեզ յուսա
ցան, և ոչ ամաչեցին ։ * Այլ ես որդն 7
եմ․ և ոչ եմ մարդ․ նախատինք մարդ
կան՝ և արհամարհանք ժողովրդոց ։
Մատ. 27.39. Մարկ. 15.29. *Ամենեքեան որք տեսանէին զիս՝ ար 8
համարհէին զինև․ խօսէին շրթամբք՝
և շարժէին զգլուխս իւրեանց ։
* Յուսացաւ 'ի Տր՝ և փրկեսցէ զնա․ 9
Մատ. 27.43. կեցուսցէ զնա՝ զի կամի զնա ։ * Դու 10
ես՝ որ հաներ զիս յարգանդէ յոյս իմ՝ 'ի
ստեանց մօր իմոյ ։ *'Ի քեզ անկայ ես 11
յարգանդէ․ յորովայնէ մօր իմոյ դու
ես ԱԾ իմ ։ * Մի 'ի բացեայ առներ յի 12
նէն՝ զի նեղութիւնք մերձեալ են․ և ոչ
ոք է՝ որ օգնէ ինձ ։ * Շուրջ եղեն 13
զինև զուարակք բազումք․ և ցուլք
գէրք պաշարեցին զիս ։ * Բացին 'ի վր 14
իմ զբերանս իւրեանց որպէս առիւծ․
զի մռնչէ՝ և յափշտակէ ։ * Իբրև զջուր 15
հեղայ՝ և ցրուեցան ամենայն ոսկերք
իմ․ և եղև սիրտ իմ իբրև մոմ հալեալ
'ի մէջ որովայնի իմոյ ։ * Չորացաւ 16
որպէս խեցի զօրութիւն իմ, լեզու իմ
'ի քիմս իմ կցեցաւ․ և 'ի հող մահու
իջուցին զիս ։ * Շուրջ եղեն զինև 17
շունք բազումք․ և ժողովք չարաց պա
շարեցին զիս ։ Ծակեցին զձեռս իմ, և
զոտս իմ ։ * և թուեցին զամենայն 18
ոսկերս իմ․ նոքա հայեցան, և տեսին
Մատ. 27.35. Յովհ. 19. 23. 24. զիս ։ * Բաժանեցին զհանդերձս իմ 19
'ի մէջ իւրեանց․ և 'ի վր պատմուճանի իմոյ
վիճակս արկանէին ։ * Դու Տր մի հե 20
ռի առներ զօգնութիւն քո յինէն․ և Տր
յօգնել ինձ նայեաց ։ * Փրկեա 'ի սրոյ 21
զանձն իմ․ և 'ի ձեռաց շանց՝ զմիամօ
րութիւն իմ ։ * Փրկեա զիս 'ի բերանոյ 22
առիւծու, յեղջերէ միեղջերուի զխո
Եբրայ. 2.12. նարհութիւն իմ ։ * Պատմեցից զանուն քո 23
եղբարց իմոց․ 'ի մէջ եկեղեցւոյ օրհ
նեցից զքեզ ։ * Երկիւղածք Տեառն 24

օրհնեսցեն զնա․ ամենայն զաւակքն օրհնեցէ՛ք
յակոբեան փառաւոր արասցեն զնա ։ զնա․
25 * Երկիցէ 'ի նմանէ ամ զաւակն Իէ՝
զի ոչ արհամարհեաց, և ոչ անար
գեաց զաղօթս աղքատի․ և ոչ դար
ձոյց զերեսս իւր յինէն․ այլ 'ի կար
26 դալ իմում առ նա լուաւ ինձ ։ *'Ի
քէն է գովութիւն իմ․ յեկեղեցիս մեծս
օրհնեցից զքեզ ։ Ուխտս իմ կա
տարեցից առաջի ամենայն երկիւղա
27 ծաց նորա ։ *Կերիցեն տնանկք, և յա
գեսցին․ օրհնեսցեն զՏէր՝ որք խնդ
րեն զնա ։ Կեցցեն սիրտք նոցա յաւի
28 տեանս յաւիտենից ։ * Յիշեսցեն, և
դարձցին առ Տէր՝ ամ ծագք երկրի ։
Երկիրպագցեն նմա ամ տոհմք ա
29 զանց ։ * զի Տն է արքայութիւն․ և նա
տիրէ 'ի վերայ ամենայն հեթանոսաց ։
30 *Կերին, և երկիր պագին նմա ամե
նայն պարարտք երկրի․ առաջի նորա
անկցին ամենեքեան՝ որք իջանեն 'ի
31 հող ։ *Անձն իմ նովաւ կեայ․ և զաւակ
32 իմ ծառայեսցէ նմա ։ *Պատմեսցի Տն
ազգ՝ որ գալոց իցէ․ պատմեսցեն զար
դարութիւն նորա ժողովրդեան․ որ
ծնանելոցն է՝ զոր արար Տէր ։

1 Սաղմոս Դաւթի ։ ԻԲ ։

ՏԷՐ հովուեսցէ զիս․ և ինձ ինչ ոչ Եսայ. 40. 11.
2 պակասեսցի ։ * 'Ի վայրի դալար
հօտ անդ բնակեցոյց զիս․ և առ ջուրս Երեմ. 23.4.
3 հանգստեան սնոյց զիս ։ * Դարձոյց
զանձն իմ առ իս․ առաջնորդեաց ինձ Եզեկ. 34. 11.
'ի ճանապարհս արդարութեան վասն ա 23.
4 նուան իւրոյ ։ * Եթէպէտ և գնացից ես
'ի մէջ ստուերաց մահու․ ոչ երկեայց 1. Պետ.
'ի չարէ․ զի դու Տր ընդ իս ես ։ Ցուպ 2.25. և
քո և գաւազան․ նոքա մխիթարեսցեն 5. 3.
5 զիս ։ * Պատրաստ արարեր առաջի իմ
զսեղան․ ակնյանդիման նեղչաց իմոց․
Օծեր իւղով զգլուխ իմ․ բաժակ քո
որպէս անապակ արբեցոյց զիս ։
6 * Ողորմութիւն քո Տր զհետ իմ եկեսցէ
զամ աւուրս կենաց իմոց․ բնակել ինձ
'ի տան Տն ընդ երկայն աւուրս ։

1 Սաղմոս միաշաբաթուոյ Դաւթի ։ ԻԳ ։

ՏԵԱՌՆ է երկիր լրիւ իւրով․ աշխարհ և Ելից.
2 ամ բնակիչք նր ։ * Նա ինքն 'ի վր 19.5.
ծովու հիմունս եարկ նմա․ 'ի վր գե 1. Կորն.
3 տոց պատրաստեաց զնա ։ * Ո՞վ ելցէ 'ի 10. 26.
լեառն Տն․ կամ ով կացցէ 'ի տեղւոջ Սաղմ.
4 սրբութեան նր ։ * Որ սուրբ է ձեռօք՝ և ան 49.12.
բիծ սրտիւ․ որ ոչ էառ զնանրութիւն
յանձն իւր՝ և ոչ երդուաւ նենգութեամբ
5 ընկերի իւրում ։ * Սա առցէ զօրհնու
թիւն 'ի Տէ․ ողորմութիւն յԱյ փրկչէ
6 իւրմէ ։ * Այս ազգ է՝ որ խնդրէ զՏր․

խնդրել տեսանել զերեսս Ա.Յակոբայ։
7 *Համբարձէք իշխանք զդրունս ձեր
ի վեր. համբարձցին դրունք յաւիտե
նից՝ և մտցէ Թագաւոր փառաց։
8 *Ո՞վ է սա Թագաւոր փառաց. Տէր հզօր
զօրութեամբ իւրով. Տէր հզօր ի պատերազ
մի։ 9 *Համբարձէք իշխանք զդրունս
ձեր ի վեր. համբարձցին դրունք յաւի
տենից՝ և մտցէ Թագաւոր փառաց։
10 *Ո՞վ է սա Թագաւոր փառաց. Տէր զօ
րութեանց սա ինքն է Թագաւոր փառաց։

1 Սաղմոս Դաւթի։ ԻԴ։

Առ քեզ Տէր համբարձի զանձն իմ։
2 *Ա.Ած իմ՝ ի քեզ յուսացայ. մի ա
մաչեցից։ 3 * և մի ծիծաղեսցեն զինեա
Թշնամիք իմ։ Ա.ևհանեքեան՝ ոչ հա՛մ
բերեն քեզ՝ մի ամաչեսցեն. * այլ ա
4 մաչեսցեն անօրէնք յունայնութեամբ իւր
եանց։ Ճանապարհս քո Տէր ցո՛ց
ցէ ինձ. և շաւիղս քո ուսո՛ ինձ։
5 *Առաջնորդեա՛ ինձ ի ճշմարտութեա
քումն. և ուսո՛ զիս. զի դու ես Ա.Ած փըր
կիչ իմ. և ես քեզ համբերեմ զօրհնա
պաղ։ 6 *Յիշեա՛ Տէր զգթութիւնս քո. և
զողորմութիւնս քո՝ որք են յաւիտենից։
7 *Ամեղս մանկութեա՛ իմոյ՝ և զանգի
տութիւնե իմոյ մի՛ յիշեր. այլ յիշեա՛ զիս
Տէր ըստ ողորմութեա քումն. վասն քաղ
ցրութեա քոյ Տէր։ 8 *զի քաղցր և ու
ղիղ ես։ Ա.ւանայսորիկ օրէնագի՛տ առ
նիցէ զմեղաւորս ի ճանապարհի։
9 *Առաջնորդեսցէ հեզսդ ի դատաստա
նի. ուսուցանիցէ հեզոց զճանապարհս
քո։ 10 *Ա.մ ճանապարհք Տեա՛ ողորմու
թիւն և ճշմարտութիւն են այսոցիկ՝ որք
խնդրեն զուխտ և զվկայութիւն նորա։
11 *Վասն անո՛ւան քոյ Տէր քաւեա՛ զմեղս
իմ. զի բազումք եղեն։ 12 *ո՛վ է մարդ
որ երկնչի ի Տէ՛ր. օրէնագի՛տ առնիցէ
զնա ի ճանապարհի՛ յոր հաճեսցի։
13 *Ա.նձն նո՛ր ի բարութեա՛ հանգիցէ. և
զաւակ նո՛ր ժառանգեսցէ զերկիր։
14 *Օրութեա՛ն է Տէր երկիւղածաց իւրոց.
և զկտակարանն իւր ուսուցանէ նոցա։
15 *Ա.չք իմ յա՛մ ժամ առ Տէր են. և նա
հանէ յորոգայթէ զոտս իմ։
16 *Նայեա՛ առ իս՝ և ողորմեա՛ ինձ. զի
միա՛նդ՝ և աղքատ եմ ես։
17 *Նեղութիւնք սրտի իմոյ բազումք եղեն
յոյժ. և ի վշտաց իմոց հա՛ն զիս։
18 *Տե՛ս զխոնարհութի՛ւն իմ՝ և զվաս
տակ իմ. և թո՛ղ ինձ զա՛մ զմեղս իմ։
19 *Տե՛ս զթշնամիս իմ, զի բազում եղեն
ատելութի՛ւն զոր ինամիր ատեցին զիս։
20 *Պահե՛ա զանձն իմ, և փրկեա՛ զիս. և
մի՛ յամաթ եղէց՝ զի յուսացայ՝ ի քեզ։
21 *Ա.մբիծք՝ և ուղիղք կցորդք եղեն ինձ.
22 և ես քեզ համբերի։ *փրկեա՛ Ա.Ած
զիեզ յա՛մ նեղութեանց նո՛ր։

1 Սաղմոս Դաւթի։ ԻԵ։

Դա՛տ արա ինձ Տէր՝ զի ես յամբծու
թեա իմում գնացի. ի Տէր յուսա
2 յայ. զի մի՛ եղէց հիւանդ։ *փորձեա՛
զիս Տէր՝ և քննեա՛ զիս. փորձեա զե
րիկամունս իմ և զսիրտ իմ։
3 *Ողորմութի՛ւն քո առաջի աչաց իմոց.
և հաճոյ եղէց ձշմարտութեա քումն։
4 *Ո՛չ նստայ ես յաթոռս նանրաց. և
5 ընդ անօրէնս ես ո՛չ մտից։ *Ա.տեցի
ես զժողովս չարաց. և ընդ ամպա
6 րիշս ես ո՛չ նստայց։ *Լո՛ացից սր
բութեա՛ զձեռս իմ. և շուրջ եղէց զսե
7 ղանդ քոյ Տէր։ *Լսել ինձ զձայն սրհ
նութե՛ քոյ. պատմել զա՛մ սքանչելիս
8 քո։ *Տէր սիրեցի զվայելչութեա՛ տան
քոյ և զտեղի յարկի փառաց քոց։
9 *Մի՛ կորուսաներ ընդ ամպարիշտս
զանձն իմ. և մի՛ ընդ արս արիւնահեղս
10 զկեանս իմ։ *Որոց ձեռք յանօրէ
նութե՛ են. և աջ նո՛ց լի՛ կաշառօք։
11 *Ա.յս յամբծութե՛ իմում գնացի.
փրկեա՛ զիս Տէ՛ր և ողորմեա՛ ինձ։
12 *Ո՛տն իմ կացոյ յուղղութե՛. յեկե
ղեցիս մեծս օրհնեցից զքեզ։

1 Սաղմոս Դաւթի դնդվա ծածեալ էր։
Ի.Օ։

Տէ՛ր լոյս իմ. և կեանք իմ. եա՛ յումմէ
երկեայց. Տէր ապաւէն կենաց
2 իմոց՝ եա՛ յումմէ դողայցայց։ *Ի մեր
ձենալ առ իս չարաց ուտել զմարմինս
իմ. նեղիչք իմ, և թշնամիք իմ. նոքա
3 տկարացան, և անկան։ *Ո՛վ պատ
րաստիցի՝ ի վերայ իմ պատերազմ, ո՛չ
երկիցի սիրտ իմ. Թէ յարիցէ՝ ի վի՛ր
իմ ձակատամարտ՝ սակայն և յայսմիկ
4 ի՛քեզ Տէր յուսացայց։ *Օ՛մի խնդրեցի
՝ի Տէ՛ր և զսոյն ազաչեմ. զնակիլ ինձ
՝ի տան Տէ՛ր զա՛մ աւուրս կենաց իմոց։
Տեսանել ինձ զվայելչութի՛ն Տէ՛ր և հրա
մանն տալ՝ ի տաճարի նորա։
5 *Օ՛ծածկեաց զիս՝ ի խորանի իւրում
յաւուր չարի. ընդ յարկաւ սրբոյ
զիս՝ ի ծածկոյթ խորանի իւրոյ։
6 *Ի վի՛մի բարձր արարեր զիս։ և
այժմ բարձր արար զգլուխ իմ՝ ի վերայ
թշնամեաց իմոց։ Շուրջ եղէց՝ մատու
ցից՝ ի խորանի նորա պատարագս օրհ
նութե՛. օրհնեցից՝ և սաղմոս ասացից
7 Տե՛ր։ *Լո՛ւր Տէր ձայնի իմում. զի կար
դացի առ քեզ. ողորմեա՛ ինձ և լո՛ւր
8 ինձ։ *զի քեզ ասաց սիրտ իմ. և խնդ
րեցին երեսք իմ, զերեսս քո Տէր խնդ
9 րեցից։ *Մի՛ դարձուցաներ զերեսս
քո

քո յինկն. և մի խոտորիր բարկութիւն
'ի ծառայէ քումմէ ։ Օգնական իմ
լեր Տէր՝ մի անարգեր զիս. և մի թո-
ղուր զիս՝ Ա.ծ փրկիչ իմ։ * Հայր իմ 10
և մայր իմ թողին զիս. և Տէր ընկա-
լաւ զիս։ * Օրէնագէտ արա զիս Տէր՝ի 11
ճանապարհի քում. առաջնորդեա ինձ
'ի շաւիղս քո ուղիղս։ * Ա՛ ե թէ-չնաւեաց 12
իմոց։ մի մատներ զիս 'ի ձեռս նեղչաց
իմոց։ Յարեան 'ի վէր իմ վկայք մե-
ղաց. և սուտկին ինձ յանօրէնութիւն իւր
եանց։ * Հաւատացի տեսանել զբա- 13
րութիւն Տեառն յերկրին կենդանեաց։
* Համբեր Տեառն և քաջալերեաց՝ զօրա- 14
ցի սիրտ քո՝ և համբեր Տեառն։

Սաղմոս Դաւթի։ Ի Լ։ 1

Ա ռ քեզ Տէր կարդացի՝ Ա.ծ իմ, մի
լռեր յինկն. մի երբեք լռիցես
յինկն. նմանիսկիմ այնոցիկ՝ ոյք իջա-
նեն 'ի գուբ։ * Լ սւր Տէր ձայնի խնդ- 2
րուածոց իմոց յաղաչել ինձ առ քեզ.
'ի համբառնալ ձեռաց իմոց 'ի տաճար
սրբ քո։ * Մի համարիր ընդ ամպա- 3
րիչս զանձն իմ. և մի ընդ այնոսիկ՝
ոյք գործեն զանօրէնութի՛ կորուսա-
ներ զիս ։ Ոյք խօսին զխաղաղութի՛
ընդ ընկերս իւրեանց. և չարութի՛ է
'ի սիրտս նոցա։ * Տո՛ւր նոյ ըստ գործոց 4
նոցա. ըստ անօրէնութե՛ գնացից նոյ
հատո՛ նոցա։ Ըստ գործոց ձեռաց նո՛յ
հատո՛ նո՛յ. զհատուցումն նոցա նոցին։
* Ո՛չ իմացան նոքա զգործս Տե՛ն. և ո՛չ 5
'ի գործս ձեռաց նորա Հայեցան. կոր
ծուսցես զնո՛ և այլ մի չինեսցին։
* Օրհնեալ է Տէր՝ զի լուաւ ձայնի 6
աղօթից իմոց։ * Տէր օգնական իմ, և 7
պաշտպան իմ։ 'Ի նա յուսացաւ սիրտ
իմ. օգնեցաւ՝ և զծաղկացաւ մար-
մին իմ. և ես կամօք իմովք խոստո-
վան եղէց նմա։ * Տէր զօրութի՛ ժողո- 8
վրդեան իւրոյ. ապաւէն փրկութե՛
օծելոյ իւրոյ։ * Փրկեա զժողովուրդ 9
քո՝ և օրհնեա զժառանգութիւն քո.
հովուեա և բարձրացո՛ զնոսա մինչև
յաւիտեան։

Սաղմոս Դաւթի։ Ի Ա։ 1

Ա տուցէք Տե՛ն որդիք Ա.ի. մատու-
ցէք Տե՛ն զորդիս խոյոց։ * Մատու- 2
ցէք Տե՛ն զփառս և զպատի՛ւ. մատուցէք
Տե՛ն զփառս անուան նորա. և երկիր
պագէք Տե՛ն 'ի սրահ սրբութե՛ նորա։
* Ձայն Տե՛ն 'ի վերայ ջուրց՝ և Ա.ծ փա- 3
ռաց օրոտաց. և Տէր ինքն 'ի վէր ջուրց
բազմաց։ * Ձայն Տե՛ն զօրութի՛. ձայն 4
Տե՛ն մեծ վայելչութե՛։ * Ձայն Տե՛ն փշրե 5
զմայրս. և մանրեա Տէր զմայրս Լիբանա

6 նու։ * Մանրեսցէ զնո՛ ոպ զմատաղա-
տունկն Լիբանանու. որ սիրելինէ ոպ
7 որդիս միեղջերուի։ * Ձայն Տե՛ն հատա
8 նէ զբոց հրոյ։ * Ձայն Տե՛ն շարժէ զա-
նապատն. և խռովեցուցանէ Տէր զա-
9 նապատն կադէս։ * Ձայն Տե՛ն հատա
ուէ զեղջերուս. և յայտնի առնէ զան-
տառս։ Ի տաճարի նորա ամենեքեան
10 ասացեն փառս նմա։ * Տէր զ ջրհե-
ղեղս նստուցանէ, և յաճուցանէ. թա
11 գաւորեսցէ Տէր յաւիտեան։ * Տէր
զզօրութի՛ ժողովրդեան իւրոյ տացէ.
Տէր օրհնեսցէ զժողովուրդս իւր 'ի
խաղաղութեան։

1 Սաղմոս օրհնութե՛ հաճախապէս պատճառին
Դաւթի։ Ի Բ։

2 Բ արձր առնեմ՝ զքեզ Տէր՝ զի ընկա-
լար զիս. և ո՛չ ուրախ արարեր զթշ
3 նամիս իմ յիս։ * Տէր Ա.ծ իմ կարդա-
4 ցի առ քեզ՝ և բժշկեցեր զիս։ * Տէր հա
ներ 'ի դժոխոց զանձն իմ. փրկեցեր
զիս յայնցանէ՝ ոյք իջանեն 'ի գուբ։
5 * Սաղմոս ասացէք Տե՛ն ո՛ք նո՛ւիրեալք
վան եղերութ յիշատակի սրբութե՛ նո՛ւ։
6 * Ցրտմտութե՛ է 'ի բարկութե՛ նո՛ւ. և
կեանք են 'ի կամս նո՛ւ։ Ընդ երեկոյս
հանգիցեն լալիք. առաւօտուց եղիցի
7 ուրախութե՛։ * Ես ասացի 'ի բարե-
կենդանութե՛ իմում. թէ ոչ սասանե
8 ցայց յաւիտեան։ * Տէր 'ի կամս քո է-
տուր գեղջ իմոյ զզօրութի՛. դարձու
ցեր զերեսս քո յինկն՝ և ես եղէ խռո
9 վեալ։ * Ա.ծ քեզ Տէր կարդացի՝ առ
10 Ա.ծ իմ աղաղակեցի։ * զինչ օգուտ է
քեզ յարենէ իմմէ՝ թէ իջանեմ ես յա
պականութե՛։ Միթէ հող խոստովան
առնիցի առ քեզ. կամ պատմեսցէ զճշ
11 մարտութե՛ս քո։ * Լ սո՛ւր ինձ Տէր՝
և ողորմեցար. և Տէր եղեւ իմ օգնա-
12 կան։ * Դարձոյց զսուգ իմ յուրախու
թի՛. էղերծ յինկն զքուրձ. և ինձ
13 զգեցոյց զուրախութի՛։ * Որպէս սաղ
մոս ասացեն քեզ փառք իմ. և մի՛
դ ղջացայց. Տէր Ա.ծ իմ՝ յաւիտեան
խոստովան եղէց քեզ։

1 'Ի հպատակ Սաղմոս Դաւթի։ օրհնութե՛
նահապակութե՛։ Լ։

2 Յ քեզ Տէր յուսացայ՝ մի ամաչեցից
յաւիտեան. յարդարութե՛ քումի
3 փրկեա զիս՝ և ապրեցո՛ զիս։ * Խո-
նարհեցո՛ առ իս զունկն քո. վաղվա
ղեա 'ի կեցուցանել զիս։ Լ ե՛ր իմ
Ա.ծ պաշտպան. և տուն ապաւինի
4 ապրեցուցանել զիս։ * զի հզօրիչ
իմ, և ապաւէն իմ դու ես։
Վ ասն անուան քոյ առաջնորդեսցես

ինձ՝ և մնուցես զիս: * և հանցես զիս 5
յորոգայթէ յայսմանէ՝ զոր թաքուցին
ինձ: Դու ես պաշտպան իմ Տր: *‖ և 6
'ի ձեռս քո յանձն առնեմ զհոգի իմ:
փրկեցեր զիս Տր Այ ճշմարտութե:
* ատեցեր զայնոսիկ՝ որք պահեն զեր 7
կիւղ սնոտի: Ես 'ի Տր յուսացայ:
* ցնծացայց՝ և ուրախ եղէց 'ի փրկու- 8
թե քում: Զի հայեցար 'ի խոնարհու
թն իմ և փրկեցեր 'ի վշտաց զանձն իմ:
* և ոչ մատնեցեր զիս 'ի ձեռս նեղչաց 9
իմոց. և կացուցեր յանդորրու զոտս իմ:
* Ողորմեա ինձ Տր. զի նեղեալ եմ ես. 10
խռովեցաւ 'ի սրտմտութէ ակն իմ՝
անձն իմ՝ և փոր իմ: * Պակասեցան 'ի 11
ցաւոց կեանք իմ. և ամք իմ յոգւոց
ելանելոյ: Տկարացաւ 'ի տկարութէ
զօրութն իմ. և ոսկերք իմ խռովե-
ցան: * Քան զամ թշնամիս իմ եղէ 12
||Ծննդ· տեան է ողորմ նորա : * ||Հաստա_ 6
1. 6. տեաց զերկիր 'ի վերայ ջուրց · զի յաւի
Երեմ· տեան է ողորմ նորա : * ||Որ արար լու_ 7
10. 12. սաւորս մեծամեծս՝ զի յաւիտեան է
— 51. 15 ողորմ նորա : * Զարեգակն արար իշ_ 8
||Ծննդ· խանական տունջեան · զի յաւիտեան
1. 14. է ողորմ նորա : * Զլուսին և զաս_ 9
տեղս իշխանական գիշերոյ · զի յաւի
||Ելից· տեան է ողորմ նորա : * ||Որ հար զեր_ 10
12. 29. կիրն եգիպտացւոց անդրանկօք իւր_
ովք հանդերձ · զի յաւիտեան է ողորմ
||Ելից· նորա : * ||Եւ եհան զԻէղ 'ի միջոյ նր̃ · 11
12. 37. զի յաւիտեան է ողորմ նորա :
— 13. 17 *'Ի ձեռն բարձր՝ և 'ի բազուկ հզօր · 12
զի յաւիտեան է ողորմ նորա :
*Որ հերձ զծովն մեծ · և բաժանեաց 13
յերկուս մասունս · զի յաւիտեան է :
*Եւ անցոյց զԻէղ ընդ մէջ նորա · զի: 14
||Ելից· *||Ընկղմեաց զփարաւոն և զզօրս իւր 15
14. 28. 'ի ծով կարմիր · զի յաւիտեան է ողորմ:
*Որ հան զժողովուրդ իւր յանապատ · 16
զի: *Որ եհար զթագաւորս մեծամեծս · 17
||Թուոց զի: *Եւ սպան զթագաւորս հզօրս · 18
21. 24. զի յաւիտեան է : * Զսեհոն թագաւ_ 19
||Թուոց որ ամորհացւոց · զի: *||Զովգ թա_ 20
21. 33. գաւոր բասանու · զի: * ||Ետ զեր_ 21
||Յեսուայ կիր նոցա 'ի ժառանգութի · զի:
13. 7. *Ժառանգութի իսրայէլի ծառայի 22
իւրոյ · զի յաւիտեան է ողորմ նորա :
*Յիշեաց զմեզ Տէր 'ի խոնարհութե̃ 23
մերում · զի : *Եւ փրկեաց զմեզ 'ի 24
ձեռաց թշնամեաց մերոց · զի: *Որ տայ 25
կերակուր ամենայն կենդանեաց· զի:
*Խոստովան եղերուք Այ̃ երկնաւո_ 26
րի · զի յաւիտեան է ողորմ նորա :

Սաղմոս Դաւթի 'ի ձեռն Երեմիայի : ՃԼԶ:

առ գետս 'Ի գետս բաբելացւոց · անդ նստաք՝ 1
և լայաք · որպէս յիշեցաք մեք անդ
զսիոն : *'Ի մէջ ուռեաց նր̃ կախեցաք 2
զկտակարանս մեր : *Անդ հարցանէին 3
գերիչք մեր զբանս օրհնութե̃ · գերե
վարք մեր առիպէին զմեզ · և ասէին :
Օրհնեցէք մեզ յօրհնութե̃ սիոնի :
* իսկ զիարդ օրհնեսցուք զօրհնու_ 4
թիւս Տն̃ յերկիր օտար : * Եթէ մո_ 5
ռացայց զքեզ Եմ̃ · մոռասցի զիս
աջ իմ : * Կցեսցի լեզու իմ 'ի քիմս 6
իմ · թէ ոչ յիշեցից զքեզ · թէ ոչ նախ
նուաճեցից զքեզ Եմ̃ սկիզբն ուրա
խութե̃ իմոյ : * Յիշեա՛ Տէր զորդիսն 7
եդոմայ՝ յաւուրս Եմի : Ոյք ասէին՝
քակեցէք՝ քակեցէք · մինչև 'ի հիմն
8 հասուցէք : * Դուստր բաբելացւոց
թշուառական · երանի՝ որ հատոյց ըզ
հատուցումն քո՝ զոր դու մեզ հատու
9 ցեր : *||Երանի որ կալցի զմանկունս ||Եսայ
քո՝ և էհար զքարի : 13. 16.

1 Սաղմոս Դաւթի : ՃԼԷ:

Խոստովան եղէց քեզ Տր̃ բոլորով
սրտիւ̃ իմով · առաջի հրեշտակաց
սաղմոս ասացից քեզ : Զի լուար ըզ
2 բանս բերանոյ իմոյ · *Երկիր պագից
'ի տաճար սուրբ քո · և խոստովան ե_
ղէց անուան քում · վասն ողորմու_
թե̃ և ճշմարտութե̃ քոյ : Մեծ արա
րեր յամենայնի զանուն սբ̃ քո :
3 * յորում աւուր կարդամ առ քեզ ·
վաղվաղակի լուր ինձ · և բազում ա_
րասցես զզօրութիւն յանձն իմ :
4 * Խոստովան եղիցին առ քեզ Տր̃ ամ̃
թագաւորք երկրի · զի լուան զբանս
5 բերանոյ քոյ : * և օրհնեսցեն զճանա_
պարհս քո : Մեծ են փառք Տն̃ · բարձր
6 է Տր̃ զխոնարհս տեսանէ : * և զբար_
ձունս 'ի հեռաստանէ ճանաչէ :
7 * Թէ գնացից ես 'ի մէջ նեղութեց ·
կեցուսցես զիս · 'ի բարկութե̃ թշնամ
ւոյն : Ձգեցեր զձեռն քո · և փրկեաց
8 զիս աջ քո · * և Տր̃ հատուսցէ ը̃ իմ :
Տր̃ ողորմութի̃ քո յաւիտեան · զգործս
ձեռաց քոց մի̃ անտես առներ :

1 'Ի կատարած Դաւթի : ՃԼԸ:

ՏՐ փորձեցեր զիս՝ և ծանեար զիս
2 * դու ծանեար զնստել իմ · և
3 զյառնել իմ : * 'Ի միտ առեր
զխորհուրդս իմ 'ի հեռաստանէ : զշաւ
իղս իմ, և զվիճակս իմ դու քններեր ·
4 * և զամենայն ճանապարհս իմ յառա_
ջագոյն տեսեր : զի ոչ գոյ նենգութի
5 'ի լեզուի իմում : * Ահա դու Տր̃ ծա_
նեար զյետին իմ և զառաջին իմ : դու
ստեղծեր զիս · և եդեր զձեռն քո 'ի
6 վերայ իմ : * Սքանչելի եղև գիտու_
թի̃ քո յինէն · զօրացաւ, և ոչ հան_
7 դարտիմ նմա : * Յո՛ երթայց ես յոգ_
ւոյ քումմէ · և կամ յերեսաց քոց ես
8 յո՞ փախեայց : * ||Թէ ելանեմ յեր_ ||Ամով
կինս՝ դու անդ ես՝ և թէ իջանեմ 'ի 9. 2.
9 դժոխս՝ և անդ մօտ ես : * Եւ թէ
առից զթևս իմ ընդ առաւօտս · և
բնակեցայց յեզերս ծովու :
10 * Սակայն և անդ ձեռն քո առաջնոր_
դեսցէ ինձ · և աջ քո ընկալցի զիս :
11 * Ասացի թէ խաւար ուրեմն արդեօք
ծածկեաց զիս · կամ գիշեր փոխանակ
12 լուսոյ փափկութե̃ իմոյ : * Խաւարն
'ի քէն

'ի քէն ոչ խաւարեսցի. և գիշերն որ-
պէս տիւ լուսաւոր եղիցի. և խաւար
նորա որպէս լոյս նմա։ * Դու ստա- 13
ցար զերիկամունս իմ. և ընկալար զիս
յորովայնէ մօր իմոյ։ * Խոստովան 14
եղէց քեզ Տր՝ զի ահեղ և սքանչելի
ես. սքանչելիք են գործք քո՝ և անձն
իմ գիտէ յոյժ։ * Ոչ թաքեաւ ոսկր 15
իմ 'ի քէն՝ զոր արարեր 'ի ծածուկ. և
կար զօրութ̃ե իմոյ ընդ ստորինս երկ
րի։ * Զանգործս իմ տեսին աչք քո. 16
և 'ի գիրս քո ամենեքեան գրեցան։
'Ի տուէ մոլորեցան. և ոչ՛ոք էր՝ որ
առաջնորդէր նոցա։ * Ինձ յոյժ մե- 17
ծարեալ եղեն բարեկամք քո Ա̃ծ. և
յոյժ զօրացան իշխանք նոցա։
* Թուեցից զնոսա՝ և քան զաւազ բազ 18
մասցին. զարթեայ՝ և արդ ընդ քեզ
եմ։ * Եթէ սպանանես զմեղաւորս 19
Ա̃ծ. արք արեանց 'ի բաց եղերուք
յինէն. * 'Ի հակառակութի̃ և 'ի նա- 20
խանձ. առցեն ինանիր զքաղաքս քո։
* Ոչ զատելիս քո Տր̃ միայն ատեցի. 21
այլ և 'ի վերայ թշնամեաց քոց մաշե-
ցայ։ * Յատելութի̃ կատարեալ ատե 22
ցի զնոսա. և եղեն ինձ թշնամիք։
* Փորձեա զիս Ա̃ծ՝ և ծանիր զսիրտ 23
իմ. քննեա զիս՝ և ծանիր զշաւիղս իմ։
* և տես թէ իցեն անօրէնութի̃ք 'ի 24
ճանապարհս իմ. և առաջնորդեա ինձ
'ի ճանապարհս քո յաւիտենից։

'Ի կատարած Սաղմոս Դաւթի։ ՃԼԹ։ 1

Ապրեցո զիս Տէր 'ի մարդոյ չարէ. 2
յառնէ անիրաւէ փրկեա զիս։
* Խորհեցան զանօրէնութի̃ 'ի սիրտս 3
իւրե̃. զօր ամ̃ պատրաստեցան 'ի պատե
‖Հռով. րազմ։ * ‖Սրեցին զլեզուս իւրե̃ ո̃պ զօ- 4
3.13. ձից. թոյնք իժից 'ի ներքոյ շրթանց
Սղ. նց̃։ * Պահեա զիս Տր̃ 'ի ձեռաց մե- 5
5.11. ղաւորի. և 'ի մարդոյ չարէ փրկեա զիս։
Խորհեցան խափանել զգնացս իմ։
* Թաքուցին ամբարտաւանք զորո- 6
գայթ ինձ։ Լարս ձգեցին յորոգայթ
ոտից իմոց. շուրջ զշաւղօք իմովք
եդին ինձ գայթագղութի̃։ * Ասա- 7
ցի Տն̃ Ա̃ծ իմ ես դու. ունկն դիր Տր̃
ձայնի աղօթից իմոց։ * Տր̃ Տր̃ զօ- 8
րութի̃ փրկութե̃ իմոյ. հովանի գլխոյ
իմոյ յաւուր պատերազմի։ * Մի մատ 9
ներ զիս Տր̃ 'ի ցանկութի̃ մեղաւորաց
ոյք խորհեցան վասն իմ. մի ընդ վայր
հարկաներ զիս։ Զի մի երբեք բարձ
րասցին. * և խորհուրդք նոցա մի կա 10
տարեսցին. վախճան կատարածի նց̃
վաստակ շրթանց իւրեանց՝ ծածկես
ցէ զնոսա։ * Արկցես 'ի վերայ նոցա 11
կայծակունս հրոյ. կործանեսցես զնո̃.

'ի տառապանաց մի կարասցեն կեալ։
12 * Մարդոյ լեզուանւոյ մի յաջողեսցի
'ի վերայ երկրի. զայր մեղաւոր, չա-
րիք իւր որսասցեն 'ի կորուստ։
13 * Ծանեայ՝ զի առնէ Տէր զդատաս-
տան աղքատի. և զիրաւունս տնանկի։
14 * Արդարք գոհասցին զանուանէ քում
մե. բնակեսցին ուղիղք առաջի երե
սաց քոց։

1 'Ի կատարած Սաղմոս Դաւթի։ ՃԽ։

Տր̃ կարդացի առ քեզ՝ և լուր ինձ.
նայեաց 'ի ձայն աղօթից իմոց
'ի կարդալ իմում առ քեզ։
2 * Ուղիղ եղիցին աղօթք իմ որպէս
խունկ առաջի քո Տր̃. համբառնալ համբար
ձեռաց իմոց պատարագ երեկորի։ ձեռին
3 * Դիր Տր̃ պահապան բերանոյ իմոյ.
և զդուռն ամուր շրթանց իմոց։
4 * և մի խոտորեսցի սիրտ իմ բանիւք
չարութե̃։ 'Ի պատճառել զպատճառս
մեղաց՝ ընդ մարդս՝ որք գործեն զա-
նօրէնութի̃. ոչ եղէց կցորդ ընտրե-
5 լոց նոցա։ * Խրատեսցէ զիս արդարն
ողորմութ̃բ. ակն յանդիման արասցէ
զիս. իւղ մեղաւորի մի օծցէ զգլուխ
իմ. և աղօթք իմ ըստ կամաց նոցա։
6 * Ընկլցին մերձ առ վիմին դատաւորք
նոցա. լուիցեն զբանս իմ. զի քաղ-
7 ցունք են։ * Որպէս թանձրութի̃ հո
ղոյ՝ զի սփռեալ է 'ի վ̃ր երկրի. ցրուե
ցան ոսկերք նոցա մերձ 'ի դժոխս։
8 * Առ քեզ Տր̃ Տր̃՝ են աչք իմ. 'ի քեզ
յուսացայ. մի հաներ զհոգի յինէն։
9 * Պահեա զիս յորոգայթէ՝ որ թա-
քուցաւ ինձ. 'ի գայթագղութե̃ ոյք
10 գործեն զանօրէնութի̃։ * Անկցին 'ի
ցանցս նորա մեղաւորք. միայն եմ ես.
մինչև անցից։

1 Իմաստութի̃ Դաւթի. աղօթք 'ի ժամանակի զի ‖1 Թագ.
էր նա յայրի անդ։ ՃԽԱ։ 24. 4.

2 Ձայնիւ իմով ես առ Տր̃ կարդացի։ Սղ.
ձայնիւ իմով զՏր̃ աղաչեցի. 76. 1.
3 * Սփռեցից առաջի Տն̃ զաղօթս իմ. և
զնեղութիս իմ առաջի նորա պատ-
4 մեցից։ * 'Ի նուաղել յինէն հոգւոյ
իմոյ՝ դու Տր̃ ծանեար զշաւիղս իմ.
'ի ճանապարհի՝ յոր գնայի. թաքու-
5 ցին ինձ զորոգայթ։ * Հայէի յաջ
իմ՝ տեսանէի. և ոչ՛ոք էր՝ որ ճանա-
չէր զիս. կորեաւ յինէն փախուստ իմ.
և ոչոք էր՝ որ խնդրէր զանձն իմ։
6 * Աղաղակեցի առ քեզ Տր̃՝ ասացի,
դու ես յոյս՝ և բաժին իմ յերկրին կեն
7 դանեաց։ * Նայեաց Տր̃ յաղօթս իմ.
զի ես խոնարհ եղէ յոյժ. ապրեցո զիս
'ի հալածչաց իմոց՝ զի հզօրք եղեն

քան զիս ։ * Տր հա՛ն 'ի բանտէ զանձն 8
իմ . խոստովան եղէց անուան քում ։
Ինձ սպասեն արդարք քո . մինչեւ հա
տուսցես ինձ ։

‖2 Թագ. 17. 2. Սաղմոս Դաւթի 'ի ժամանակի զի հալածեաց 1
զնա աբեսաղոմ որդի նր ։ ՃԽԲ ։

Տէր լուր աղօթից իմոց . ունկնդիր
խնդրուածաց իմոց ճշմար_
տութեամբ քով ։ Լուր ինձ արդա
‖ Ելից. րութեամբ քով ։ * ‖ Եւ մի՛ մտաներ ատեան 2
34. 7. ընդ ծառայի քոյ . զի ոչ արդարանայ
առաջի քո ամենայն կենդանի ։
* Հալածեաց թշնամին զանձն իմ . խո 3
նարհ արար յերկիր զկեանս իմ . և
նստոյց զիս 'ի խաւարի որպէս մեռեալ
յաւիտենից ։ * Ձանձրացաւ յիս հո_ 4
գի իմ . և սիրտ իմ խռովեցաւ յիս ։
* Յիշեցի զաւուրսն զառաջինս . խոր 5
հեցայ յամ գործս քո . յարարածս ձե
ռաց քոց խորհեցայ . և համբարձի
առ քեզ զձեռս իմ ։ * Անձն իմ ոպ 6
երկիր ծարաւի է առ քեզ ։ * Վաղ_ 7
վաղակի լուր ինձ Տր . զի նուաղեցաւ
յինէն հոգի իմ ։ Մի դարձուցաներ
զերեսս քո յինէն . նմանիցիմ այնոցիկ՝
ոյք իջանեն 'ի գուբ ։ * Լսելի արա 8
ինձ առաւօտուց զողորմութի քո . զի
ես 'ի քեզ Տր յուսացայ ։ Ցո՛յց ինձ ճա
նապարհ՝ յոր գնացից . զի առ քեզ
Տէր համբարձի զանձն իմ ։
* Փրկեա՛ զիս 'ի թշնամեաց իմոց Ա՟ծ . 9
զի զքեզ ապաւէն ինձ արարի ։
* Ուսո՛ զիս առնել զկամս քո . զի դու 10
ես Ա՟ծ իմ ։ Հոգի քո բարի՝ առաջ
նորդեսցէ զիս յերկիր ուղիղ ։
* Վասն անուան քոյ Տէր կեցուսցես 11
զիս ։ արդարութեամբ քով հանցես 'ի նե
ղութենէ զանձն իմ . * Եւ ողորմութեամբ 12
քով սատակեսցես զթշնամիս իմ . կո_
րուսցես զամենայն նեղիչս անձին ի_
մոյ . զի ես ծառայ քո եմ ։

Սաղմոս Դաւթի առ Գողիաթ ։ ՃԽԳ ։ 1

Օրհնեալ Տր Ա՟ծ իմ . որ ուսոյց
զձեռս իմ 'ի պատերազմ . և զմա_
տունս իմ 'ի ճակատամարտ ։ * Ողոր_ 2
մութի իմ՝ և ապաւէն իմ . օգնական
իմ՝ և փրկիչ իմ . ապաւէն իմ, և ես
յուսամ 'ի նա ։ Հնազանդէ զժողո_
վուրդս ընդ ինեւ ։ * Տր ո՞ է մարդ՝ 3
զի յայտնեցար նմա . կամ որդի մար
‖ Յոբ. 8. դոյ՝ թէ համարիս ինչ զնա ։ * ‖ Մարդ 4
9. և 14. նմանութեան նմանեցաւ . և աւուրք նր
2. որպէս հովանի անցին ։ * Տր խոնար_ 5
հեցո՛ զերկինս՝ և էջ . մերձեա՛ 'ի լե_
րինս՝ և ծխեսցին ։ * Փայլատակեա՛ 6
զփայլատակունս քո . և խռովեա՛

զնոսա . առաքեա՛ զնետս քո . և ցրուեա՛
7 զնոսա ։ * Առաքեա՛ զձեռն քո 'ի բար_
ձանց . և փրկեա՛ զիս 'ի ջրոց բազ_
մաց . և 'ի ձեռաց որդւոց օտարաց ։
8 * Որոց բերանք խօսեցան զնան_ խորշեան
րութի . և աջ նոցա աջ է մեղաց ։
9 * Ա՟ծ յօրհնութի նոր օրհնեցից ըզ_
քեզ . տասնաղեաւ սաղմոսարանաւ
10 սաղմոս ասացից քեզ ։ * Որ տացէ զփր_
կութի թագաւորաց մերոց . որ փր_
կեալ իցէ զդաւիթ ծառայ իւր ։
11 'Ի սրոյ չարէ * փրկեա՛ զիս . և ապրե
ցո՛ զիս 'ի ձեռաց որդւոց օտարաց ։
Որոց բերանք խօսեցան զնանրութի .
12 և աջ նոցա աջ է մեղաց ։ * Որոց
ուստերք որպէս նորատունկք հաս_
տատեալք են 'ի մանկութենէ իւրեանց .
դստերք նոցա զարդարեալ և պաճու
ճեալ 'ի նմանութի տաճարի ։
13 * Շտեմարանք նոցա լի են՝ և բղխեն
'ի միմեանս . խաշինք նոցա բազմա_
ծինք են՝ և բազմանան 'ի գնացս իւր_
14 եանց ։ * Եւ անդեայք նց պարարտք
են ։ Ոչ գոյ խրամատութիւն ցանգոյ
նոցա . և ոչ աղաղակ 'ի հրապարակս
15 նոցա ։ * Երանեցին ժողովր_
դեան . որոյ այս այսպէս է . նա երա
նի է ժողովրդեան . որոյ Տր Ա՟ծ է նց ։

1 Օրհնութիւն Սաղմոս Դաւթի .
ՃԽԴ ։

Բարձր առնեմ զքեզ Ա՟ծ իմ . և թա
գաւոր իմ . և օրհնեմ զանուն քո
յաւիտեան՝ և յաւիտեանս յաւիտե_
2 նից ։ * Զօրհանապազ օրհնեցից զքեզ .
և գովեցից զանուն քո յաւիտեան՝ և
3 յաւիտեանս յաւիտենից ։ * Մեծ է
Տր՝ և օրհնեալ է յոյժ . և մեծութե նր
4 ոչ գոյ չափ ։ * Ազգ և ազգ գովեսցեն
զգործս քո . և զզօրութիս քո պատ_
5 մեսցեն ։ * Զմեծ վայելչութի փառաց
սրբութե քոյ խօսեսցին . և զսքանչե_
6 լիս քո պատմեսցեն ։ * Զզօրութի
ահի քոյ ասասցեն . և զմեծութիս քո
7 պատմեսցեն ։ * Զյիշատակ բազում
քաղցրութե քոյ բղխեսցեն . և ար_
8 դարութեամբ քով ցնծասցեն ։ * Գթած՝
ողորմած է Տր . երկայնամիտ՝ և բա_
9 զումողորմ ։ * Քաղցր է Տր առ ամենե
սեան . և գթութի նր 'ի վր ամ արա
10 րածոց իւրոց ։ * Խոստովան եղիցին
առ քեզ Տր ամ գործք քո . և սուրբք
11 քո օրհնեսցեն զքեզ ։ * Զփառս ար_
քայութե քոյ ասասցեն . և զզօրու_
12 թիս քո պատմեսցեն ։ * Ծանուցել
որդւոց մարդկան զզօրութիս քո .
զփառս մեծվայելչութե արքայութե
13 քոյ ։ * Արքայութի քո արքայութիւն
ամ

ամ յաւիտենից . և Տէրութիւն քո յազգէ
մինչև յազգ ։ Հաւատարիմ է Տր յամ
բանս իւր . և արդար է յամենայն
գործս իւր ։ * Հաստատէ Տր զամ 14
գայթագղեալս . և կանգնէ զամ գլո
րեալս ։* Աչք ամենեցուն 'ի քեզ յուսան . 15
Սղ. ‖ և դու տաս կերակուր նց 'ի ժամու ։
103.27. * Բանաս զձեռն քո . լցուցանես զամե 16
նեսեան քաղցրութբ կամօք քովք ։
* Արդար է Տր յամ ճանապարհս իւր . 17
և սուրբ է յամենայն գործս իւր ։
* Մերձ է Տէր առ ամենեսեան՝ ոյք 18
կարդան առ նա . առ ամենեսեան որք
կարդան առ նա ճշմարտութեամբ ։
* Զկամս երկիւղածաց իւրոց առնէ 19
Տր . աղօթից նոցա լսէ՝ և կեցուցանէ
զնոսա ։* Պահէ Տր զամենեսեան՝ ոյք 20
սիրեն զնա . և զամենայն մեղաւորս սա
տակէ ։ * Զօրհնութիւն Տն խօսեսցի 21
բերան իմ . օրհնեսցէ ամենայն մարմին
զանուն սուրբ նորա յաւիտեան՝ և յա
ւիտեանս յաւիտենից ։

Ալէլուիա Անգեայ և Զաքարիայ ։ 1

ՃԽԵ ։

Սաղ. Օրհնեա՛ ‖ անձն իմ զՏր . օրհնեցից 2
144. 2. զՏր 'ի կեանս իմ . սաղմոս ասա
ցից Այ իմոյ մինչև եմ ես ։* Մի՛ յու 3
սայք յիշխանս յորդիս մարդկան . զի
ոչ գոյ փրկութիւն 'ի նոսա ։ * Ելցէ հո 4
գի 'ի նոցանէ՝ և դարձցին անդրէն 'ի
հող . և յայնմ աւուր կորիցեն ամ խոր
հուրդք նոցա ։ *Երանի ում Տր Ած 5
յակոբայ օգնական է նորա . և յոյս
Գործ. նորա 'ի Տր Ած է ։ *‖ Որ արար զեր 6
14. 14. կինս և զերկիր . զծով , և զամենայն
Յայտ. որ է 'ի նոսա ։ *Որ պահէ զճշմարտու 7
14.7. թիւն յաւիտեան ։ և առնէ իրաւունս
զրկելոց ։ Տայ զհաց քաղցելոց . և ար
ձակէ զկապեալս ։ * Տր բանայ զաչս 8
կուրաց . և կանգնէ զգլորեալս ։ Տէր
սիրէ զարդարս ։ * Տր պահէ զպան 9
դուխտս . զորբս և զայրիս ընդունի
Տր . և զճանապարհս ամպարշտաց կո
րուսանէ ։ * Թագաւորեսցէ Տր յաւի 10
տեան . Ած քո սիօն յազգէ մինչև յազգ ։

Ալէլուիա Անգեայ և Զաքարիայ ։

ՃԽԶ ։

Օրհնեցէք զՏր՝ զի բարի է սաղմոս . 1
Այ մերում քաղցր եղիցի օրհնու
թիւն ։* Շինէ զԵէմ Տր . և զցրուեալսն 2
իսրայէլի ժողովէ ։ *Բժշկէ զբեկեալ 3
սիրտս՝ և պատէ զամենայն վէրս նց ։
* Թուէ զբազմութիւն աստեղաց . և 4
զամենեսեան զնոսա յանուանէ կոչէ ։
*Մեծ է Տր մեր և մեծ է զօրութիւն 5
նորա . իմաստութեն նորա ոչ գոյ թիւ ։

6 *Ընդունի զհեզս Տր . և խոնարհ առ
նէ զմեղաւորս մինչև յերկիր ։
7 *Օրհնեցէք զՏր խոստովանութբ .
սաղմոս ասացէք նմա օրհնութբ ։
8 *Որ զգեցոյց զերկինս ամպօք . պատ
րաստ արար զանձրև յերկիր ։ Բու
սոյց զխոտ 'ի լերինս . և զդալարի 'ի
9 ծառայութիւն մարդկան ։ * ‖ Որ տայ ‖ Յոբ.
անասնոց զկերակուր իւրեանց՝ ձա 39.3.
գուց ագռաւուց՝ ոյք կարդան առ նա ։
10 *Ոչ թէ ընդ զօրութիւն ձիոյ կամե
ցաւ Տր . և ոչ ընդ իրանս առն սկայի
11 հաճեցաւ ։ * Այլ հաճեցաւ Տր յեր
կիւղածս իւր . և ընդ այնոսիկ՝ ոյք
յուսան յողորմութիւն նորա ։

Ալէլուիա Անգեայ և Զաքարիայ ։

ՃԽԷ ։

12 Գովեա՛ Եէմ զՏր ։ Եւ օրհնեա՛ զԱծ
13 քո սիօն ։ * Զի զօրացոյց զնիգս
դրանց քո . և օրհնեաց զորդիս քո 'ի
14 քեզ ։ * Որ եդ զսահմանս քո 'ի խա
ղաղութեան . պարարտութբ ցորենոյ
15 լցոյց զքեզ ։ * Որ առաքէ զբան իւր
յերկիր . վաղվաղ ընթանան պատ
16 գամք նորա ։ *Դնէ զձիւն որպէս զասր .
և զմէգ որպէս փոշի ցանեաց ։
17 *Արկանէ զսառն որպէս պատառս .
առաջի ցրտոյ նորա ո՛վ կարէ կալ ։
18 *Առաքէ զբան իւր՝ և հալէ զնոսա .
շնչեսցէ հողմ՝ և գնասցեն ջուրք ։
19 *Պատմէ զբան իւր յակոբայ . զար
20 դարութիւն և զիրաւունս իւր իղի ։ * Ոչ
այսպէս արար ամ ազգաց Տէր . և
զդատաստանս իւր ոչ յայտնեաց նց ։

1 Ալէլուիա Անգեայ և Զաքարիայ ։

ՃԽԸ ։

Օրհնեցէք զՏր յերկնից . օրհնեցէք
2 զնա 'ի բարձունս ։* Օրհնեցէք
զնա ամենայն հրեշտակք նորա . օրհ
նեցէք զնա ամենայն զօրութիւնք նորա ։
3 *Օրհնեցէք զնա արեգակն և լուսին .
օրհնեցէք զնա ամ աստեղք և լոյս ։
4 *‖ Օրհնեցէք զնա երկինք երկնից . ‖ Ծննդ.
ջուրք որք 'ի վերոյ քան զերկինս ։ 1. 7.
5 * օրհնեցէք զանուն Տն ։ Զի նա ա Դան. 3.
սաց՝ և եղեն . հրամայեաց՝ և հաստա 59.60.
6 տեցան ։ * Կարգեաց զնոսա յաւի
տեանս յաւիտենից . սահման եդ՝ և
7 ոչ անցցէ ։ * Օրհնեցէք զՏր յերկրէ
8 վիշապք՝ և ամենայն խորք ։ * Հուր
և կարկուտ . ձիւն և սառն . հողմ
մրրիկ՝ որք առնեն զբան նորա ։
9 * Լերինք և ամենայն բլուրք . ծառք
պտղաբերք՝ և ամենայն մայրք ։
10 * Գազանք՝ և ամ անասունք . սողունք՝
և ամենայն թռչունք թևաւորք ։

* Թա

* Ծագաւորք երկրի՝ և զորք իւր- 11
եանց. իշխանք՝ և ամենայն դատաւ-
որք երկրի։ * Երիտասարդք՝ և կու- 12
սանք. ծերք՝ և տղայք։ * օրհնեցէք 13
զանուն Տեառն։ * Բարձրացաւ անուն նր 14
միայն. * խոստովանութիւն նմա յերկինս և յերկրի։ Բարձր առնէ Տէր զեղ- 15
ջիւր ժողովրդեան իւրոյ. օրհնութիւն
ամենայն սրբոց նր. որդւոց իսրայէլ. ժողովրդեան՝ որ մերձ առ Տէր։

Ալէլուիա. ՃԽԶ.

1 Օրհնեցէք զՏէր յորհնութիւն նոր. օրհնութիւն նմա յեկեղեցիս սրբոց։
2 * Ուրախասցի Իսրայէլ ի նմին որ ստեղծ զինքն. որդիքն Սիովնի ցնծասցեն ի թագաւորին իւրեանց։ * 3
3 Օրհնեսցեն զանուն նորա յօրհնութիւն. սաղմոսիւք՝ և օրհնութիւն ասասցեն նմա։ * Զի հաճի Տէր 4
ժողովուրդս իւր. և բարձր արասցէ զնեղեալս ի փրկութիւն։ * Պարծեսցին 5
սքեք փառաւք և ցնծասցեն ի հանգիստս իւրեանց։ * և բարձր արասցեն զՏէր 6
7 բանիւք իւրեանց։ * Սուրք երկայրիք են ի ձեռս նոցա. առնուլ զհատուցումն ի տեղեանոսս. յանդիմանութիւն
8 ամ ժողովրդոց։ * Կապել զթագաւորս նց կապանօք. զընտրեալս նոցա ձեռ-
9 նակապաւ երկաթեաւ։ * Լինել ի նոսա զդատաստանն գրեալ. փառք այս են ամ սրբոց նորա։

Ալէլուիա. ՃՆ.

1 Օրհնեցէք զՏէր ի սրբութեան նր. օրհնեցէք զնա ի հաստատութեան զո-
2 րութեան նր։ * Օրհնեցէք զնա ի զորութեան նր. օրհնեցէք զնա ի բազում մե-
3 ծութեան նր։ * Օրհնեցէք զնա ի ձայն օրհնութեան. օրհնեցէք զնա սաղմոսիւք
4 և օրհնութեամբ։ * Օրհնեցէք զնա ցնծութեամբ՝ գոլեկեք զնա ուրախու-
5 թեամբ։ * Օրհնեցէք զնա ի բանս քաղցունս. օրհնեցէք զնա ի բարբառ լսելի։ Օրհնեցէք զնա ի ձայն
6 գոհութեան. * ամենայն հոգիք օրհնեցէք զՏէր։

Խնդրեցի 'ի Տեառնէ աղօթիւք, և տուաւ ինձ հանճար. կոչեցի և եկն ինձ հոգի իմաստութեան : Իմաստ. 7. 7.

Եւ թագուհին սաբայ լուեալ զիմաստութիւն սողոմոնի, և եկն փորձել զնա առակօք : 3. Թագ. 10. 1.

ԳԻՐՔ ԱՌԱԿԱՑ՝

ԶՈՐ ԵԲՐԱՅԵՑԻՔ ՄԻՍԼԷ ՅՈՐՋՈՐՋԵՆ:

Գլուխ Առաջներորդ:

Առակք Սողոմոնի Որդւոյ Դաւթի : Արքայի Իսրայէլի : 1

ՃԱՆԱՉ 2
ԵԼ ԶԻՄԱՍ
տութիւն և զխրատ:
իմանալ զբանս
հանճարոյ : * Ըն 3
դունել զդարձուած
ածս բանից, 'ի
միտ առնուլ զար
դարութիւն ճշմարիտ: և ուղղել զիրաւ
ունս: * Զի տացէ անմեղաց զխորա 4
գիտութիւն : մանկանց տղայոց զմիտս
և զհանճար : * Որոց եթէ լուիցէ ի 5
մաստունն, իմաստնագոյն լիցի : իսկ
որ հանճարեղն է, զառաջնորդութիւն
6 ստասցի: * Ի միտ առցէ զառակս՝ և
զբանս խորինս, զճառս իմաստնոց՝ և
7 զառակս նոցա: * Սկիզբն իմաստութեան Սաղմ.
երկիւղ Տեառն : հանճար բարի ամենե 110. 10.
ցուն՝ որք առնեն զնա: պաշտօն բարի Սիրաք.
առ Աստուած սկիզբն զգօնութեան : զիմաս 1. 16.
տութիւն և զխրատ ամպարիշտք անգոս
8 նեն : * Լուր որդեակ խրատու հօր
քո՝ և մի՛ մերժեր զօրէնս մօր քո :
9 * Զի պսակ շնորհաց ընկալցիս 'ի գլ
լուխ քո. և մանեակ ոսկի 'ի պարանոցի
10 քում: * Որդեակ՝ մի՛ խաբեսցեն զքեզ
արք ամպարիշտք. և մի՛ ախորժեսցես:
11 * Եթէ կոչեսցեն զքեզ՝ և ասասցեն.
եկ ընդ մեզ՝ կցորդ լեր արեան. ծած
կեսցուք յերկրի զայր արդար 'ի տարա
12 պարտուց : * Կլցուք զնա կենդանւոյն
իբրև դժոխք. և բարձցուք զյիշատակս
13 նորա յերկրէ : * Զի զստացուածս նորա
զպէսպէս ըմբռնեսցուք : լցցուք ըզ
տունս

2 ցես յանձին քում ։ * Լուիցէ իմաս-
տութեանն ունկն քո ։ և առակեսցես զս
սիրտ քո ՚ի հանճար ։ Լիցի ամանդես-
ցես զնոսա որդւոյ քում ՚ի խրատ ։
3 * Օի եթէ զիմաստութեանն կոչեսցես ՚ի
քեզ ։ և հանճարոյ տացես զանձն քո ։
4 * Լիցի եթէ խնդրիցես զնա իբրև զար
ծաթ ընտիր ։ և իբրև զգանձս քննես
5 ցես զնա ։ * Յայնժամ ՚ի միտ առցես
զերկիւղն ։ և զգիտութեանն Աստ գըտ
6 ցես ։ * Օի Տէր տայ զիմաստութեան ։ և
յերեսաց նո գիտութեան և հանճար ։
7 * Լիցի գանձէ ուղղոց զնրկութեան ։ վե
8 բակացու լինի գնացից նո ։ * Պահել
զհանապարհս իրաւանց ։ և զհանա-
պարհս երկիւղածաց իւրոց ամրացուս
9 ցէ ։ * Յայժամ ՚ի միտ առցես զար-
դարութեան և զնրաւունս. և ուղղեսցես
10 զնոմ շաւիղս բարութեան ։ * Օի եթէ
եկեսցէ իմաստութիւն ՚ի միտս քո ։ և
գհանճար անձին քում քաղցր համարես
11 ցիս լինիլ ։ * Խորհուրդ բարեաց զգու-
շասցի զքեզ ։ և միտք սրբք պահեսցեն
12 զքեզ ։ * Օի ապրեցուսցեն զքեզ ՚ի
ճանապարհէ չարէ ։ և յառնէ՝ որ խօ-
13 սիցի և ոչինչ հաւատարիմն ։ * Որոց
թողեալ են զճանապարհս ուղիղս
դնալ ՚ի ճանապարհս խաւարինս ։
14 * Որք լինին ընդ չարիս ։ և խնդաց-
15 ցեն ընդ խոտորումն չարութեան ։ * Որոց
թիւրք են ճանապարհք իւրեանց՝ և
16 կամակորք շաւիղք նոցա ։ * Հեռի առ
նել զքեզ յօտարէ ճանապարհէ ։ և օտա
րացուցանել յարդար խորհրդոց ։ (որ-
դեակ՝ մի հասցին քեզ խորհուրդք
17 չարք ։) * Որոց թողեալ իցէ զուսումն
մանկութեան ։ և մոռացեալ զուխտն
18 Աստուծոյ ։ * Օի եղ մերձ ՚ի մահ
զուսն իւր ։ և մօտ ՚ի դժոխս (ընդ երկ
19 րածինս) զշաւիղս իւր ։ * Ամենեքեան՝
որք գնան ընդ նա՝ ոչ դարձցին անդ
րկն ։ (այլ և ՚ի զղջումն ևս եկեսցեն)
և ոչ ժամանեսցեն ՚ի ճանապարհս ու-
20 ղիղս ։ և ոչ հասցին ՚ի տարեկանս կեն
21 դանութեան ։ * Օի եթէ գնացեալ եր
22 նոցա ՚ի ճանապարհս բարիս. գտանիցեն
արդեօք զշաւիղս արդարութեան, զդիւր
ինս ։ քաղցրացեալք եղիցին քնակիչք
երկրի ։ անմեղք մնացցեն ՚ի նմա ։
21 * Օի անմեղք բնակեսցեն յերկրի ։ և
22 անարատք մնացցեն ՚ի նմա ։ * Ապա ‖ Յոբ.
պարհք ամպատուսցեն յերկրէ. 18.17.
և անօրէնք մերժեսցին ՚ի նմանէ ։

Գլուխ Գ.

1 Որդեակ՝ զօրէնս իմ մի մոռանար ։
և զբանս իմ պահեսցէ սիրտ քո ։ ‖2.( ):է
2 * ‖ Օի ընդերկարութեան կենաց. և ամք 8. 1. և
կեն- 30.16.

կենդանութեան. և խաղաղութիւն յաւել-
3 ցին քեզ ։ * Ողորմութիւն և հաւատք 'ի
քէն մի պակասեսցին ։ արկ զնոսա ընդ
պարանոց քո. և գրեա զնոսա յընդար-
4 ձակուն սրտի քոյ ։ * Եւ գտցես շնորհս.
և խորհեսցիս զբարիս առաջի Տեառն և
5 մարդկան ։ * Լեր յուսացեալ 'ի Տէր
յամենայն սրտէ քումմէ ։ և յիմաստութիւն
6 քո մի հպարտանար ։ * Յամենայն ճանա-
պարհս քո ծանիր զնա ։ զի ուղիղ ա-
րասցէ զշաւիղս քո ։ (և ոտն քո մի գայ
7 Հռով. թագդեսցի ։) * Մի լինիր իմաստուն
12. 16. յաչս անձին քո ։ այլ երկիր 'ի Տէ. և
8 խոտորեաց յամենայն չարութէ ։ * Այս
բժշկութիւն եղիցի մարմնոյ քում. և
9 Տոբ. դարման ոսկերաց քոց ։ * Պատուեա
4. 7. զՏր 'ի քոյոց արդար վաստակոց ։ և
Ղուկ. հան նմա պտուղ 'ի քոց արդարութե
10 14. 13. արմտեաց ։ * Զի լցցին շտեմարանք
քո լիութեամբ ցորենոյ. և հնձանք գի-
նեաւ քով առաւել ես բղխեսցին ։
11 Եբրայ. * Որդեակ՝ մի լքանիր 'ի խրատու Տն
12. 5. և մի լուծանիր՝ յանդիմանեալ 'ի նմա
12 Յայտ. նէ ։ * Զի զոր սիրէ Տր՝ խրատէ. տանջէ
3. 19. զամենայն որդի. զոր ընդունի ։
13 * Երանեալ է այր՝ որ եգիտ զիմաստու-
թիւն ։ և մահկանացու՝ որ ետես զհան-
14 ճար ։ * Զի լաւ է զվաճառն զայն
գտանել. քան զգանձս ոսկւոյ և ար-
15 ծաթոյ ։ * Պատուականագոյն է քան
զականս պատուականս. (և ոչ ինչ է
չար. որ հակառակ կայցէ նմա ։ յայտ-
նի է ամենեցուն. որք մերձին առ նա ։)
և ամ ինչ՝ որ պատուական է. չարժէ
16 զնա ։ * Զի երկայն աւուրք՝ և ամք կե-
նաց 'ի յաջմէ իւրմէ ։ և յահեկէ իւր-
մէ փառք և մեծութիւն ։ 'ի բերանոյ նր
բղխի արդարութիւն ։ զօրէնս՝ և զողոր
մութիւն 'ի լեզուի իւրում կրէ ։
17 * Ճանապարհք նր, ճանապարհք բա
րեաց. և ամ շաւիղք նր խաղաղութբ ։
18 * Փայտ կենաց է ամենեցուն. որք պատս
պարին 'ի նա ։ և որք յենուն 'ի նա՝
19 իբրև 'ի Տր հաստատունք ։ * Ած իմաս
տութբ հիմունս էարկ երկրի. պատ-
20 րաստեաց զերկինս խորհրդով ։ * Եւ
հանճարով իւրով զանդունդս պատա
ռեաց ։ և ամպք հոսեցին զանձրև ։
21 * Որդեակ՝ մի լքանիր ։ պահեա զխոր-
22 հուրդս իմ, և զիմաստութիւն ։ * Զի
կեցցէ անձն քո. և շնորհք իցեն 'ի վզ
պարանոցի քում ։ եղիցի բժշկութիւն
մարմնոյ քում. և դարման ոսկերաց
23 քոց ։ * Զի գնասցես յուսով խաղա-
ղութե յամ ճանապարհս քո. և ոտն
24 քո ոչ գայթագղեսցի ։ * Զի եթէ
նստիցիս՝ աներկիւղ իցես ։ և եթէ
ննջիցես՝ քաղցր 'ի քուն լիցիս ։

ձա

25 * Եւ ոչ երկիցես 'ի զարհուրմանց 'ի
վր հասելոց ամպարշտաց. և յարշաւա
26 նաց 'ի վերայ եկելոց ։ * Զի Տր եղի-
ցի 'ի վր ամ ճանապարհաց քոց ։ և
հաստատեսցէ զոտն քո. զի մի սասա-
27 նեսցի ։ * Մի յապաղեր բարի առնել
կարօտելոյն. յորժամ ձեռնհաս իցես
28 օգնել նմա ։ * Մի ասիցես թէ երթ՝
և եկեսջիր. և վաղիւ տաց ։ զի կարող [illegible]
ես իցես բարի առնել ։ քանզի՝ ոչ գի- [illegible]
տես. զինչ վաղիւն ծնանիցի քեզ ։
29 * Մի նիւթեր բարեկամի քում չա-
րիս, որ յեցեալ և յուսացեալ իցէ 'ի
30 քեզ ։ * Մի թշնամանասեր լինիր
մարդոյ 'ի տարապարտու. զի մի չար
ինչ գործիցէ քեզ ։ մի ստանար նախա
31 տինս յարանց չարաց. * և մի նախան Սաղմ.
32 ձիր ընդ ճանապարհս նց ։ * Քանզի 36. 1.
պիղծ է առաջի Տն ամ անօրէն. և ընդ
33 արդարս ոչ հաղորդին ։ * Անէծք Տն
'ի տունս ամպարշտաց. յարկք արդա
34 րոց օրհնին ։ * Տէր ամբարտաւանից
հակառակ կայ. տայ շնորհս խոնար-
35 հաց ։ * Զփառս իմաստունք ժառան
գեսցեն ։ իսկ ամպարիշտք բարձրա-
ցուցին զանարգանս ։

Գլ ։ Դ ։

1 Լուարուք մանկունք զխրատ հօր.
և անսացէք, ճանաչել զիմաստու-
2 թիւն ։ * Զի պարգևս բարեաց պար-
գևեցից ձեզ. զօրէնս իմ մի թողուք ։
3 * Զի որդի եղեալ եմ և ես հպատակ
հօր իմոյ. և սիրեցեալ յաչս մօր իմոյ ։
4 * Որք ուսուցանէին զիս՝ և ասէին.
հաստատեսցի բան մեր 'ի սրտի քում.
պահեա զբան մեր՝ և կեաց ։
5 * Ստացիր զիմաստութիւն. ստացիր ըզ
հանճար՝ և մի մոռանար. և մի արհա
մարհեր զպատգամս բերանոյ իմոյ ։
Եւ մի խոտորիր 'ի բանից շրթանց
6 իմոց ։ * Մի թողուր զնա. և պատս
պարեսցէ զքեզ. սիրեա զնա. և պահես
7 ցէ զքեզ ։ * Սկիզբն զգօնութեան
ստացիր զիմաստութիւն. և յամ ստա
ցուածս քո ստացիր զհանճար ։
8 * Շուրջ փակեա զնովաւ՝ և բարձրա
ցուսցէ զքեզ. մեծարեա զնա՝ զի գիրկս
9 արկցէ զքև ։ * Զի տացէ գլխոյ քում
զպսակ շնորհաց. և պսակաւն փափկու
թե վերակացու լինիցի քեզ ։
10 * Լուր որդեակ՝ և ընկալ զբանս իմ ։
զի բազմասցին ամք կենաց քոց ։ (և յա
ճախեսցեն ճանապարհք կենաց քոց ։)
11 * Զճանապարհս իմաստութե ուսու
ցանեմ քեզ. խելամուտ առնել զքեզ
12 ուղիղ շաւղաց ։ * Զի եթէ գնասցես,
ոչ խափանեսցին գնացք քո ։ և եթէ

ընթանայցես, ոչ վաստակեսցիս։
* Բուռն հար զխրատուէ իմմէ. և մի 13
թողուցուս. այլ պահեա զնա անձին
քում 'ի կեանս։ * 'Ի ճանապարհս ամ 14
պարշտաց մի երթայցես. և մի նախան
ձիցիս ընդ ճանապարհս անօրինաց։
* Յո՛ր 'ի տեղւոջ ուր բնակիցին՝ ընդ 15
այն մի գնայցես. խոտորեա՛ց 'ի նոցա_
նէ. և խորշեա՛ց անտի։ * Զի ոչ 16
ննջեն. եթէ ոչ չար գործեն. բար_
ձեալ է քուն նոցա՝ և ոչ ննջեն։ * Որք 17
ուտեն զկերակուրս ամպարշտութեան.
և գինեաւ անօրէնութեան արբենան։
* Ճանապարհք արդարոց իբրև զլոյս 18
ծագեն։ առաջնորդեն՝ և լուսաւո_
րեն. մինչև տիւն ծագեսցի։ * Ճա_ 19
նապարհք ամպարշտաց խաւարինք.
և ոչ գիտեն՝ զիարդ գայթագղին։
* Որդեակ՝ իմոյ իմաստութեան անսա. 20
և իմոց բանից մատո զունկն քո։
* Զի մի պակասեսցին աղբիւրք քո. 21
պահեա զնոսա 'ի սրտի քում։
* Քանզի կեանք են՝ որոց գտանենն 22
զնոսա. և ամ մարմնոյ՝ բժշկութիւն։
* Ամ պահպանութեամբ պահեա զսիրտ 23
քո. զի 'ի սոցանէ են ելք կենաց։
* Բարձ արա 'ի քէն զբերան կամա_ 24
կոր. և զշրթունս անիրաւս մերժեա՛
'ի քէն։ * Աչք քո ուղիղ հայեսցին. 25
և արտևանունք քո արդար ակնարկես
ցեն։ * Շաւիղս ուղիղս արասցես 26
ոտից քոց. և զճանապարհս քո ուղ_
ղեսցես։ * Մի խոտորեսցիս յաջ՝ և 27
մի յահեակ. դարձո զոտն քո 'ի ճա_
նապարհէ չարէ. զի զճանապարհս որ
յաջմէ են՝ գիտէ Տր. թիւրք են ճանա
պարհք՝ որք 'ի ձախմէ են։ այլ ինքն
Տր ուղիղ արասցէ զշաւիղս քո. և
զգնացս քո խաղաղութեամբ յա_
ռաջեցուսցէ։

Գլ։ Ե։

Որդեակ՝ իմոյ իմաստութեան անսա. 1
և իմոց բանից մատո զունկն քո։
* Զի պահեսցես զխորհուրդս բա_ 2
րեաց. զիմաստութի շրթանց իմոց պատ
ուիրեմ քեզ։ Մի հայիր ընդ կին
չար։ * Զի մեղր կաթէ 'ի շրթանց 3
կնոջ պոռնկի. որ առ ժամանակ մի
պարարէ զքիմս քո։ * Բայց յետոյ դառ 4
նագոյն ևս գտցես քան զլեղի. և սրեալ
առաւել՝ քան զսուր երկսայրի։
* Անզգի ոտք անզգամութեան իջուցա_ 5
նեն զմերձաւորս նր մահու հանդերձ
'ի դժոխս։ * Յա՛ հետք նր ոչ են հաս_ 6
տատունք. զի 'ի ճանապարհս կենաց
ոչ գնան. գեղիք են ճանապարհք նր՝
և ոչ յայտնիք։ * Արդ՝ որդեակ լուր 7
ինձ. և մի ապախտ առնիցես զբանս իմ։
8 * Հեռի արա 'ի նմանէ զճանապարհս
քո։ և մի մերձենար 'ի դրունս տանց
9 նր։ * Զի մի մատնեսցես օտարաց զկ
կեանս քո. և զստացուածս քո անողոր
10 մից։ * Զի մի լցցին օտարք 'ի զօրու_
թէ քումմէ. և մի մտցեն վաստակք քո
11 'ի տունս այլոց։ * Յա՛ զղջանայցես յե
տոյ. յորժամ մաշիցին անդամք մարմնոյ
12 քոյ։ * Յա՛ ասիցես՝ թէ զիարդ ատե
ցի զխրատ. և 'ի յանդիմանութեանց խո
13 տորեցաւ սիրտ իմ։ * Ոչ լսէի ձայնի
խրատտուի իմոյ. և ուսուցչի իմոյ ոչ
14 դնէի զունկն իմ։ * Սակաւիկ մի ևս
անկանէի 'ի մէջ ամ չարեաց. 'ի մէջ եկե
15 ղեցւոյ՝ և ժողովրդոց։ * Արբ ջուր
'ի քոց ամանոց. և 'ի քոց աղբերաց ջրհո
16 րոյ։ * Բղխեսցին քեզ ջուրք 'ի քում_
մէ աղբերէ. և 'ի քո հրապարակս
17 գնասցեն ջուրք քո։ * Յա՛ եղիցի քեզ
միայնոյ լինել. և մի ոք օտար հաղոր_
18 դեսցի քեզ։ * Աղբիւր ջրոյ քոյ եղիցի
քեզ առանձին. և ուրախ լեր ը՜ կնոջ
19 մանկութ քոյ։ * Եղն սիրոյ՝ և յաւանակ
քոյ շնորհաց խօսեսցի ընդ քեզ. և քեզ
առանձինն եղիցի յամ ժամ. զի եթէ
զնորա սիրովն գայցես՝ բազմապատիկ
20 եղիցիս։ * Մի յաճախեր առ օտար.
և մի փարիր 'ի գիրկս՝ որք ոչ քո իցեն։
21 * ‖ Ազի առաջի աչաց Այ են ճանա ‖ Յոբ 34.21
պարհք առն. և յամ շաւիղս նր դիտէ։
22 * Անօրէնութիւնք որսան զայր. և 'ի տո
ռունս մեղաց շաղի իւրաքանչիւրոք։
23 * Մեռանի նա ընդ անխրատս՝ վն ան
խրատութեան. և 'ի բազմութենէ կենաց
իւրոց արտաքս ընկեցաւ. և կորեաւ
վն անզգամութեան իւրոյ։

Գլ։ Զ։

1 Որդեակ՝ եթէ լինիցիս երաշխաւոր
բարեկամի քում. մատնեսցես զկ
2 քեզ 'ի ձեռս թշնամւոյն։ * Զի որո_
գայթք բուռն են առն շրթունք իւր.
և ըմբռնի բանիւ բերանոյ իւրոյ։
3 * Արդ՝ արա որդեակ՝ զոր ինչ ես պատ
ուիրեմ քեզ՝ և կեցցես. զի անկար
'ի ձեռս չարաց վասն բարեկամին քոյ.
Արդ սնոտեա՛ց. և մի լքանիր. յորդո_
րեա՛ և զբարեկամն՝ զոր առեր յերաշ
4 խի։ * Մի տար քուն աչաց քոց.
և մի նիրհումն արտևանաց քոց։
5 * Զի ապրեսցիս իբրև այծեամն 'ի
հանդէից. և իբրև զհաւ յորոգայթից։
6 * Երթ առ մրջիւնն ով վատ. և նախան
ձեա՛ց ընդ ճանապարհս նր. լեր իմաստ
7 նագոյն ևս քան զնա։ * Զի նմա ոչ գոյ
երկրագործութիւն. և ոչ հարկադիր. և
ոչ այն՝ որ տագնապիցէ. և ոչ ընդ տէ_
րամբք

ըմբք է ։ * Կամ պատրաստէ յամարայ 8
նոյ զհերակուր. և բազում համբարս
դնէ ի հունձս ։ (կամ երթ առ մեղու.
և ուսիր՝ զիարդ գործունեայ է. գործ
նէր ոչ պարկեշտութիւն է. զորոյ զվաս
տակն թագաւորք և տնանկք ի բժշ
կութիւն մատուցանեն. յանկալիւ է աւիշն
և փառաւորեալ. զի թէպէտ և տկար
է զօրութիւն. պատուհեաց զիմաստու
թիւն և յարգեցաւ ։) * ‖ Մինչև յերբ 9
անկեալ կաս ով վատ. կամ երբ ի քնոյ
զարթիցես ։ * Փոքր մի ննջիցես. փոքր 10
մի նստիցիս. փոքր մի նիրհիցես. փոքր
մի հանգուցանիցես զձեռնս ի վերայ լան
ջաց քոց ։ * Այսպէս այնուհետեւ հասա 11
նիցի քեզ իբրեւ զչար ճանապարհորդ
աղ քատութիւն. և կարօտութիւն իբրեւ
զմիր սուրհանդակ ։ ապա եթէ ան
դադաղ լինիցիս. եկեսցէ իբրեւ զաղ
բիւր ամառն քո. և կարօտութիւն իբրեւ
զայր մի չար ինքնահալած լինիցի ։
* Այր անօրէն և անզգամ գնայ զճա 12
նապարհս թիւրս ։ * Աչքն նոյն ինքն ակն 13
արկէ ակամբ. և նշանակէ ոտամբ. և
ուսուցանէ նշանացն մատամբք ։
* Սիրտ խոտորեալ նիւթէ զչարիս. 14
յամ ժամանակի այնպիսին խառնու
թիւն առնէ քաղաքի ։ * Այն վնասնորիկ 15
յանկարծակի հասցի նմա կորուստ
իւր. հաշումն և բեկումն անբժշկելի ։
* Օն խնդայ ընդ ամ. զոր ատէ Տէր. 16
և խորտակի վասն պղծութիւն անձին
իւրոյ ։ * Աչք թշնամանողի լեզու ա 17
նիրաւ. ձեռք՝ որք հեղուն զարիւն ան
պարա ։ * Այն սիրտ՝ որ նիւթէ զնաւ 18
հուրդս չարս. և ոտք՝ որք փութան
գործել զչարիս, սատակեսցին ։
* Վորբոք զատութիւն ի մէջ եղբարց. 19
արկանէ գատաստանս ի մէջ եղբարց ։
* Երդեակ՝ պահեա զօրէնս հօր քոյ. 20
և մի մերժեր զնորատ մօր քոյ ։
* Կնկալ զնա ի գլուխ քո հանապազ. 21
և արկ իբրեւ զմանեակ ի պարանոյ քո ։
* Յորժամ գնասցես, ընդ քեզ տար 22
ջիր. և ընդ քեզ եղիցի ։ զի յորժամ
ննջիցես՝ պահեսցէ զքեզ ։ և յորժամ
յառնիցես՝ խօսակից իցէ քեզ ։ * Օի 23
պատուիրան ճրագ է. և օրէնք լոյս,
և ճանապարհ կենաց՝ յանդիմանու
թիւն խրատու ։ * Պահել զքեզ ի կնո 24
ջէ առն. և ի չարախօսութենէ օտար
լեզուի ։ * Երդեակ մի յաղթեսցէ քեզ 25
գեղոյ ցանկութեն ։ և մի ըմբռնեսցիս
աչօք քովք ։ և մի յափշտակեսցիս ար
տեւանամբքն ։ * Օի գինք կնոջ պոռն 26
կի՝ որչափ նկանակի միոյ հայիէ ։ քան
զի կին չար զարանց պատուականաց
զոգիս որսայ ։ * Ընդարիցէ՞ ոք զհուր 27
ի գոգ՝ և զհանդերձն ոչ այրիցէ ։
28 * Կամ գնայցէ՞ ոք ի վէր կայծականց
հրոյ. և զոտս իւր ոչ խարշիցէ ։
29 * Նոյնպէս՝ և որ մտանէ առ առնա
կին՝ ոչ լինի առանց պատժոց ։ և ոչ
արդարասցի՝ ամ որ մերձենայ ի նա ։
30 * Ոչինչ են զարմանք եթէ ըմբռնես
ցի ոք ի գողութենէ. գողանայ՝ զի լցուս
31 ցէ զանձն իւր քաղցեալ ։ * Այս եթէ
ըմբռնեսցի, եօթնապատիկ տուժեսցի.
և զամ ինչս իւր տուեալ փրկեսցէ
32 զանձն իւր ։ * Այն որ շնայ, առ պակա
սութենէ մտաց՝ զկորուստ անձին իւր
33 ումն ստանայ ։ * Ցաւս և անարգանս
կրէ. և նախատինք նորա՝ ոչ ջնջես
34 ցին յաւիտեան ։ * Վի է նախանձու
սրտմտութենէ առն նոյն ։ և ոչ խնայեսցէ աչս մտոց
35 յաւուր դատաստանի ։ * Այն ոչ փո խնդ
խանակեսցէ. և ոչ ընդ միոյ երիք փո
կանաց զթշնամութենէ ։ և ոչ վճարես
ցի բազում կաշառօք ։

Գլ. Լ։

1 Որդեակ՝ պահեա զբանս իմ. և զպ
պատուիրանս իմ ծածկեա յանձին
քումմ ։ որդեակ՝ պատուհեա զՏէր՝ և
զօրասցիս. և բաց ի նմանէ չայլ ու
2 մեք մի երկնչիցիս ։ * Որդեակ պա
հեա զպատուիրանս իմ, և կեցցես ։ և
զբանս իմ՝ իբրեւ զբիբ աչաց ։
3 * Յեռ զնոյն ընդ մատունս քո. և գրեա
4 յընդարձակութենէ սրտի քոյ ։ * Այս
իմաստութենէ քոյր քեզ լինիլ ։ և զհան
5 ճար կոչեա քեզ ծանօթ ։ * Օի պա
հեսցէ զքեզ ի կնոջէ օտարէ և ի չա
րէ ։ յորժամ բանիւք զքեզ ի պատ
6 րանս արկանիցէ ։ * Ի պատուհանից
տան իւրոյ ի հրապարակս կարկառէ ։
7 * Այն տեսանիցէ յանմիտս մանկանց.
զպակասամիտն յերիտասարդաց ։
8 * Որ անցանիցէ ընդ հրապարակն
առ անկեամբ գնայիցէ տան նորա ։
9 * Այն խօսեսցի ընդ խաւար երեկոյին.
յորժամ դադարումն՝ և մուԹն գի
10 շերոյն իցէ ։ * Այն ահա կինն ընդ առաջ
լինիցի նմա պոռնկութեն դիմաք. որ
յիմարեցուցանէ զմիտս երիտասար
դաց ։ որ արբեալ և պակչոտեալ ։
11 * Այն ի տան ոչ դադարեն ոտք նորա ։
12 * Օի ժամանակ ինչ արտաքոյ յածի ։
և ժամանակ ինչ ի հրապարակս ։ առ
ամ անկեան դարանակալ լինի ։
13 * Այսպէս բռնն հարեալ համբուրեաց
զնա. և լրբեալն երեսաք ասէ ցնա ։
14 * Զոհս խաղաղութեան են ինձ այսօր.
15 հատուցանեմ զաղօթս իմ ։ * Վասն իրի
իսկ եկի ընդ առաջ քո ։ ցանկացեալ
16 երեսաց քոց գտի զքեզ ։ * Երիզապատ

պնտեցի զզահոյս իմ։ եգիպտացի պաս
տառակալօք լցեալ զարդարեցի։
*Քրքմացան պատրաստեցի զանկո_ 17
ղինս իմ։ եւ զտուն իմ կինամոմոնով խնկե
ցի։ *Եկ՝ եւ վայելեսցուք սիրով մինչեւ 18
յառաւօտն. եկ՝ եւ խաղասցուք ցան_
կութք ։ * Զի ոչ է այր իմ 'ի տան։ 19
այլ գնացեալ է 'ի ճանապարհ հեռի։
* Զքսակն արծաթոյ 'ի ձեռին իւր_ 20
ում առեալ է ։ յետ բազմաց աւուրց
թէ ուրեք գայցէ 'ի տուն իւր։ *Ե՛ 21
մոլորեցոյց զնա բազում խօսիւք . եւ
խեղդիւք շրթանց իւրոց վարանեաց
զնա։ * Եւ գնաց զկնի նր յիմարեալ՝ 22
իբրեւ զարջառ 'ի սպանումն . եւ իբրեւ
զշուն տռուամբ։ * Կամ իբրեւ զեղջե 23
րու հարեալ նետիւ ընդ լերդակողմն։
եւ փութայ իբրեւ զհաւ 'ի ծուղակս. ոչ
գիտէ՝ թէ վն անձին կորստեան ընթա
նայ ։ * Արդ՝ որդեակ լուր ինձ . եւ ան 24
սա բանից բերանոյ իմոյ։ * Մի խո_ 25
տորեսցի սիրտ քո 'ի ճանապարհս նր.
եւ մի մոլորեսցիս 'ի շաւիղս նորա։
* Զի զբազումս տապաստ արկեալ է 26
նորա խոցոտելով . եւ անթիւք են սպա
նեալքն 'ի նմանէ ; * Ճանապարհք 27
դժոխոց են տուն նորա ։ որք իջուցեն
'ի շտեմարանս մահու։

Գլ։ Ը։

Սան այսորիկ դու զիմաստութի 1
քարոզեսցես։ զի հանճար ծայ_
նատու լիցի քեզ։ * Բանզի 'ի վերայ 2
լերանց գլխաւորացն է ։ եւ 'ի մէջ շաւ_
ղոց հաստատեալ կայ։ *Ե՛ առ դրունս 3
հզօրաց նստի. եւ 'ի մուտս օրհնի։
* Զձեզ աղաչեմ, ով մարդիկ. եւ բաշ 4
խեմ զբարբառ իմ որդւոց մարդկան ։
*Իմացարուք անմեղք զխորագիտու_ 5
թի ; եւ անխրատք դիք 'ի սիրտ ձեր։
*Լուարուք ինձ. զի զպարկեշտս բար_ 6
բառիմ . եւ բղխեմ 'ի շրթանց իմոց
զուղղութի ; * Զճշմարտութի խօ_ 7
սեսցի կոկորդ իմ։ եւ պիղծք են առաջի
իմ շրթունք սուտք ; * Արդարութբ 8
են ամ բանք բերանոյ իմոյ . եւ ոչ գոյ
'ի նոսա ծռութի՝ եւ ոչ թիւրութի։
* Ամենայն ինչ ուղիղ է իմաստնոց . եւ 9
յարմարեալ է այնոցիկ՝ ոյք գտանեն
զգիտութի ; * Ընկալարուք զխրատ՝ 10
եւ մի զարծաթ ։ եւ զգիտութի առաւել
քան զոսկի ընտիր ; (ընտրելի է հան_
ճար քան զոսկի մաքուր։) * Ե՛ լաւա 11
գոյն է իմաստութի քան զականս պատ
ուականս ։ ամ ինչ պատուական չար_
ժէ զնա ; *Ես իմաստութի բնակիմ 12
'ի խորհրդեան ։ զգիտութի եւ զհանճար
կոչեմ յիս ։ *Երկիւղ Տն ատեայ զա_ 13
նիրաւութիւն։ զթշնամանս՝ զամբար
տաւանութիւն. եւ զճանապարհս չա_
րեաց. եւ զբերան երկլեզու ատեակնէ։
14 *Իմ է խորհուրդ՝ եւ զգուշութի ; իմ
15 է հանճար՝ եւ իմ զօրութիւն ։ *Ինեւ
թագաւորք թագաւորեն ։ եւ հզօրք
16 գրեն զարդարութի ։ *Ինեւ մեծա_
մեծք մեծանան ։ եւ բռունք ինեւ ունին
17 զերկիր ։ *Ես՝ որք զիս սիրեն՝ սիրեմ։
եւ որք զիս խնդրեն , գտցեն շնորհս։
18 *Մեծութի եւ փառք իմ են ։ ստա_
ցուածք բազմաց՝ եւ արդարութի։
19 *Լաւ է զիս ստանալ՝ քան զոսկի. եւ
զականս պատուականս ։ եւ արդիւնք
իմ լաւագոյնք են քան զարծաթ ըն_
20 տիր։ * 'Ի ճանապարհս արդարութե
գնամ։ եւ 'ի մէջ շաւղաց Արդարութե
21 շրջիմ ։ * Զի բաշխեցից սիրելեաց
իմոց զմեծութի ։ եւ զգանձս նց լցու_
ցից բարութբ ։(եթէ պատմեցից ձեզ
զհանապազորդ լինելոցն . եւ յիշեցու_
ցից զայն. որք յաւիտ համարեալք են)
22 * Տր ստացաւ զիս 'ի սկիզբն ճանա_
պարհաց իւրոց 'ի գործս իւր ։ յառաջ
քան զյաւիտեանս հաստատեաց զիս։
23 * 'Ի սկզբանն . յառաջ քան զերկիր
24 առնել։ * Ե՛ նախ քան զանդունդս
գործել։ եւ յառաջ քան զբղխել աղբե
25 րաց ջուրց ; *Ե՛ նախ քան զլերինս
հաստատել։ եւ յառաջ քան զամ բլուրս
26 ծնաւ զիս ։ * Տր արար զշէնս՝ եւ զան_
շէնս ։ եւ զեզերս զբնակեալս 'ի ներքոյ
27 երկնից ; *Յորժամ պատրաստէր զեր
կինս՝ ընդ նմա էի ։ եւ մինչ զատուցա_
նէր զաթոռ իւր 'ի վերայ հողմոց։
28 *Ե՛ յորժամ զօրաւոր առնէր զամպս
վերինս ։ յորժամ անսխալ դնէր զաղ
29 բիւրս 'ի ներքոյ երկնից ։ *'Ի դնել ծո
վու զգուշութե նր ։ զի ջուրք մի անց
ցեն ընդ աւին նր ։ 'ի ժամանակի՝ յոր_
ժամ հաստատուն դնէր զհիմունս երկ
30 րի ։ *Ես էի առ նմա պատշաճեալ ։
ես էի՝ որով ուրախ լինէր Տր հանա_
պազ ։ եւ ցնծայի առաջի նր յամ ժամ։
31 *Յորժամ զուարճացեալ էր զտիեզերս
բովանդակել ; եւ ուրախ լինէր յորդիս
32 մարդկան ; *Արդ՝ որդեակ . լուր ինձ ;
երանելիք են՝ որք զճանապարհս իմ
33 պահեն ; * Լուարուք զիմաստութի
եւ իմաստունք լերուք . եւ մի պաշարի_
34 ցիք ; * Երանելի է այր , որ լուիցէ
ինձ . եւ մարդ , որ զճանապարհս իմ
պահիցէ ; որ տքնիցի առ դրունս իմ
հանապազ . եւ պահիցէ զսեամս մտից
35 իմոց ; * Զի որ զիս գտանիցէ՝ գտա_
նիցէ զկեանս . եւ ընդունիցի զփրկու
թի 'ի Տէ ; Ճանապարհք իմ են ճանա
պարհք կենաց ; եւ պատրաստին կամք
իմ

իմ 'ի Տէ : * Իսկ որք յիս մեղանչեն՝ 36
ամբարշտին յանձինս իւրեանց : և որք
ատեն զիս՝ սիրեն զմահ :

Գլ: Թ.

Իմաստութիւն շինեաց իւր տուն . 1
և կանգնեաց սիւնս եօթն :
* Եզեն զզենլիս իւր . և խառնեաց 'ի 2
խառնարանս զգինի իւր . և պատրաս
տեաց զսեղան իւր : * Եւ առաքեաց 3
զծառայս իւր՝ կոչել բարձր քարոզու_
թեամբ 'ի խառնելիս իւր :* Եւ ասէ՝ որոք 4
իցէ անզգամ՝ եկեսցէ առ իս : և զպա_
կասամիտս ասէ : * Եկայք՝ կերայք 5
'ի հացէ իմմէ՝ և արբէք զգինի իմ . զոր
խառնեցի ձեզ :* Թողէք զանզգամու 6
թիւն, և կեցջիք . խնդրեցէք զիմաստու
թիւն, զի ապրեսջիք: և ուղղեցէք զգիտու
թիւն զհանճար : և ուղիղ ճանապարհաւ
իմացարուք զխրատ : * Որ խրատէ ըզ 7
չարս՝ առցէ անձին իւրում անարգանս:
և որ յանդիմանէ զամբարիշտն, ատեսցէ
զանձն : * Մի՛ յանդիմաներ զչարս՝ 8
զի մի՛ ատեսցեն զքեզ : յանդիմանեա՛
զիմաստունն . և սիրեսցէ զքեզ : (զան
միտն . և յաւելցի ատել զքեզ :) * Տո՛ւր 9
իմաստնոյն պատճառս՝ և իմաստնա_
գոյն ևս լիցի : ծանո՛ արդարոյն՝ և
‖ Սէր. յաւելցի ընդունել : * ‖ Սկիզբն իմաս 10
1. 7. տութեան՝ երկիւղ Տն : և խորհուրդ
Սաղմ. սրբոց հանճար: (իմանալ զօրէնս՝ մտաց
110. 10. առատաց է :) * Այսու օրինակաւ բա 11
Սէրաք. զում ժամանակս կեցցես : և յաւելցին
1. 16. քեզ ամք կենաց : * Որդեակ՝ թէ իմաս 12
տուն լինիցիս . անձին քում իցես՝ և
ընկերացդ: եթէ անզգամ իցես՝ միայն
պեղեսցես զչարիս : (որ հաստատի 'ի
ստութեան՝ այնպիսին զհողմն արածէ :
և նոյն հալածէ զթռչունս թևաւորս :
քանզի եթող զճանապարհս այգւոյ
իւրոյ : և 'ի շաւղաց անդոյ իւրոյ մոլո_
րեալ է : գնայ ընդ անջուր՝ և ընդ
անապատ : և զերկիր կարգեալ 'ի ծա
րաւութ : և ժողովէ ձեռօք իւրովք
զանպտղութիւն :) * Կին անզգամ և յան 13
դուգն կարօտ լինիցի հացի: և որ ոչ գիտէ
զամօթ : * Նստաւ առ դրուրս տան 14
իւրոյ աթոռով յայտնապէս 'ի հրապա
րակս : * Կոչէ զանցաւորս՝ որք գնան 15
ուղիղ զճանապարհս իւրեանց :
* Որոք իցէ 'ի ձէնջ անմտա 16
գոյն՝ խոտորեսցի առ իս : և պակասա
մտացդ հրամանս տամ, և ասեմ:
* Զհաց գաղտնի մտադիւր կերիջիք . 17
և զջուր գաղտնի, ախորժելով արբ
ջիք : * Եւ ոչ գիտէ եթէ երկրածինք 18
առ նմա կորնչին . և յատակս դժոխոց
հասանին : (այլ 'ի բաց վազեա՛ և մի՛
յամեր 'ի տեղւոջ նորա : և մի՛ հաստա
տեր զակն քո 'ի նա : քանզի այնպէս
անցցես ընդ ջուր օտար : և անցանիցես
ընդ գետն օտարական : և 'ի ջրոյ օտա
րէ 'ի բաց լինիցիս : և յօտար աղբերէ
մի՛ ըմպիցես : զի բազում ժամանակս
կեցցես : և յաւելցին քեզ ամք կենաց :)

ԱՌԱԿՔ ՍՈՂՈՄՈՆԻ :

Գլ: Ժ.

1 Որդի իմաստուն ուրախ առնէ զհայր
որդի անմիտ տրտմութիւն է մօր :
2 * Ոչինչ օգնեսցեն գանձք անօրինաց .
այլ արդարութիւն փրկէ 'ի մահուանէ :
3 * Ոչ սովամահ առնէ Տր զանձն ար_
դարոյ : բայց զկեանս ամբարշտաց կոր
4 ծանեսցէ : * Աղքատութիւն զայր խո_
նարհեցուցանէ . ձեռք ժրաց մեծացու_
ցանեն : Որ ջանայ ստութեամբ . նա արա_
ծէ զհողմս . նոյն իսկ ինքն հետևի հաւ
5 ուց թռուցելոց : * Որ ժողովէ ներ
հնձում, որդի իմաստուն է . այլ որ
ննջէ յամարայնի՝ որդի պատկառա_
նաց : Որդի խրատեալ իմաստուն ե_
ղիցի : և անմիտն 'ի ծառայութիւն վա_
րեսցի . Ապրեցաւ 'ի խորշակէ որդի
իմաստուն : խորշակահար լինի յամա_
6 րայնի որդի անօրէն :* Օրհնութիւն Տն
'ի գլուխս արդարոց: զբերանս ամբարշ
տաց ծածկեսցէ սուգ տարաժամ :
7 * Յիշատակ արդարոց հանդերձ գո_
վութեամբ : և անուն ամպարշտաց շիջցի :
8 * Իմաստունն սրտիւ ընկալցի զպատ
ուիրանս : և ցոփն շրթամբք գայ_
9 թագղելով կործանեսցի : * Որ գնայ
միամտութեամբ՝ գնայ յուսով . իսկ որ
թիւրէ զճանապարհս իւր՝ յայտնի
10 եղիցի : * ‖ Որ ակնարկէ ակամբ՝ նեն_ ‖ Սէրաք.
գութեամբ . ժողովէ արանց զտրտմու_ 27. 25.
թիւն : Իսկ որ յանդիմանէ համարձա_
կութեամբ, առնէ զխաղաղութիւն :
11 * Աղբիւր կենաց յԱՋ բերան արդա
րոյ : զբերան ամբարշտի ծածկեսցէ
12 կորուստ :* Ատելութիւն գրգռէ զհա_
կառակութիւն : ‖ և զամենեսին որք ոչն ‖ 1. Պետ.
13 հակառակին, ծածկէ սէր : * Որ 'ի 4. 8.
շրթանց իւրոց բղխէ զիմաստութիւն . 1. Կոր.
իբրև գաւազանաւ հարկանէ զայր 13. 4.
14 անմիտ : * Իմաստունք ծածկեն զի_
մաստութիւն . բերան յանդուգն, մերձ
15 է 'ի բեկումն : * Ստացուած մեծա_
տանց քաղաք ամուր : և բեկումն ամ
16 բարշտաց աղքատութիւն : * Գործք
արդարոց կեանս առնեն . և պտուղք
17 ամբարշտաց մեղք : * Զճանապարհս
կենաց պահէ Տր : խրատ առանց յան
18 դիմանութեան մոլար է : * Ծածկեն
զթշնամութիւն շրթունք արդարք : իսկ
որք

որք 'ի վեր հանեն զբամբասանս ,
անզգամք են ։ * Ի շատախօս լինելով 19
ոչ զերծցիս 'ի մեղաց ։ եթէ խնայես
'ի շրթունս քո, իմաստուն լինիս ։
* Արծաթ ընտիր է լեզու իմաստնոյ ․ 20
սիրտ ամբարշտի նուաղեսցի ։ * Շր_ 21
թունք արդարոց ճանաչեն զբարձունս ։
իսկ անզգամք 'ի կարօտութե սատակես
ցին ։ * Օրհնութի Տ՟ն 'ի գլուխ ար_ 22
դարոց ․ և նայն մեծացուցանէ ։ և ոչ
ելս յաւելանայ տրտմութի 'ի սիրտ նր ։
* Ծիծաղելով գործէ անզգամն զչա_ 23
րիս ։ իսկ իմաստութի ածն՝ նիւթէ
զհանճար ։ * Ի կորստեան շրջի ամբա_ 24
րիշտն ․ ցանկութի արդարոց ընդու_
նելի է ։ * Ի յանցանել մրրկի՝ եղծա_ 25
նի ամբարիշտն ․ և արդարոյն խոյս
տուեալ՝ կեցցէ յաւիտեան ։ * Որպէս 26
ագոխ ատամանց վնասակար է՝ և ծուխ
աչաց ․ նոյնպէս և անօրէնութի՝ որոց
նովաւ վարին ։ * Երկիւղ Տ՟ն յաւելու 27
զաւուրս ։ ամք ամբարշտաց նուաղես
ցին ։ * Յերկարի արդարոց ուրախու_ 28
թի ․ յոյս ամպարշտաց կորիցէ ։
* Ամրութի արդարոց երկիւղ Տ՟ն ․ և 29
խորտակումն այնոցիկ ․ որք գործեն
զչարիս ։ * Արդարն յաւիտեան ոչ 30
սասանեսցի ․ և ամպարիշտք մի՛ բնա
կեսցին յերկրի ։ * Բերան արդարոյ 31
բղխէ զիմաստութի ։ լեզու անիրաւի
սատակեսցի ։ * Շրթունք արանց ար 32
դարոց կաթեն շնորհս ։ բերան ամ_
բարշտաց կործանի ։

ԳԼ ։ ԺԱ ․

Կշիռ նենգութե պիղծ է առաջի 1
Տ՟ն ․ կշիռ արդար ընդունելի է
նմա ։ * Ուր մտանեն թշնամանք, անդ 2
են և անարգութիք ։ իսկ ուր է խոնար_
հութի՝ անդ և իմաստութի ։ բերան
խոնարհաց խօսի զիմաստութի ։
* Կատարելութի ուղղոց առաջնոր_ 3
դեսցէ նզ ։ և գայթագղումն արհամար
Սիրաք․ հողաց աւերեսցէ զնս ։ * Ոչինչ օգնես 4
7․13․ ցեն ինչք յաւուր բարկութե ․ այլ ար
Սոփոն․ դարութի փրկէ 'ի մահուանէ ։ (մե
1․ 18․ ռաւ արդարն ․ և եթող զղջումն յոյժ ։
յանդուգն՝ և տոնհարութբ լինի կո_
րուստ ամբարշտաց ։) * Արդարութի 5
անարատի ուղղէ զճանապարհս ․ և
յամպարշտութի ս արկանէ անիրաւու
Ի վախ_ թի ։ * Արդարութի արանց ուղղոց 6
ճանել փրկէ զնս ։ անմտութբ կորնչին անօ
առն ամ րէնք ։ * Ի վախճանել առն արդարոյ 7
բարշտի ․ ոչ կորնչի յոյս ․ բայց պարծանք ամ_
ոչ ինչ է բարշտաց կորնչին ։ * Արդարն յորսոյ 8
[illegible] զերծանի ։ և փոխանակ նր մատնի
[illegible] ամբարիշտն ։ * Ի բերանս ամբարշ_ 9

տաց՝ որոգայթ քաղաքակցաց ․ իմաս [illegible]
տութի արդարոց յաջողեալ է ։ [illegible]
10 * Յարութիք արդարոց յօրինեն զքա [illegible]
ղաք ։ և 'ի կորուստ ամբարշտաց եղև [illegible]
11 ուրախութի ։ * Օրհնութբ արդա_
րոց բարձրանայ քաղաք ։ և բերանօք
12 ամբարշտաց կործանի ։ * Արհամար
հէ զքաղաքակիցս այր պակասամիտ և
այր իմաստուն զլռութի սիրէ ։
13 * Այր երկլեզու՝ յայտնէ զխորհուրդս Սիր․
յատենի ։ իսկ հաւատարիմն հոգւով 20․ 19․
14 ծածկէ զնս ։ * Որոց ոչ գոյ առաջ
նորդութի՝ թօթափին ոպ զտերև՝ փրր
կութի գտանի 'ի բազում խորհուրդս ։
15 * Չարն առնէ զչարիս՝ յորժամ խառ
նակի ընդ արդարոյն ։ և ատէ զբար_
16 բառ զգուշութե ։ * Կին շնորհակա_
լու բարձր առնէ զփառս առն իւրոյ ․
(աթոռ անարգութե ․ կին՝ որ ատէ
զարդարութի ։ 'ի մեծութե վատք կա
րօտք լինին ։) իսկ որք ժիրքն են՝ հաս_
17 տատին մեծութբ ։ * Անձին իւրում
գործէ բարիս ողորմածն ։ կորուսա_
նէ զմարմին իւր այր անողորմ ։
18 * Ամբարիշտն գործէ զգործ անիրաւ
ութե ։ զաւակ արդարոց վարձ ճշմար
19 տութե ։ * Որդի արդար 'ի կեանս ծնա
նի ։ հալածանք ամբարշտաց 'ի մահ ։
20 * Պիղծք են Տ՟ն ճանապարհք թիւրք ։
ընդունելիք են նմա ամ անարատք 'ի
21 ճանապարհս իւրեանց ։ * Որ ձեռնե_
րէց լինի 'ի տարապարտուց՝ առանց
պատժի ոչ լիցի ։ իսկ որ սերմանէ
զարդարութի , ընկալցի վարձս հաւա
22 տարիմս ։ * Որպ գինտ ոսկի 'ի քիթ խո_
զի ։ նոյնպէս կնոջ չարի գեղեցկութի
23 * Ցանկութի արդարոց ամ բարութբ ․
24 յոյս ամբարշտաց կորնչի ։ * Են՝ որք
զիւրեանց սերմանեն՝ և բազմապատիկ
առնեն ։ և են՝ որք յանիրաւութե ժո_
25 ղովեն՝ և կարօտանան ։ * Ամ անձն
օրհնեալ պարզամիտ է ։ և այր բարկա
26 ցօղ՝ տգեղ է կերպարանօք ։ * Որ խնայէ
'ի ցորեան, լքցէ զնա օտարաց ։ և որ
ճղէ զցորեան՝ հրապարականեծ լիցի
օրհնութի Տ՟ն 'ի գլուխ սփռողաց ։
27 * Որ նիւթէ զբարիս՝ խնդրէ զշնորհս
բարութե ։ իսկ որ խնդրէ զչար՝ հասցէ
28 նմա ։ * Որ յուսայ 'ի մեծութի այնպի_
սին կործանեսցի ։ իսկ որ օգնական լի
29 նի արդարոց՝ ծագեսցի ։ * Նա՛ որ ոչ
դայ զտամբ իւրով ․ նա զհողմն արա_
ծէ ․ և ծառայեսցէ անմիտն իմաստ_
30 նոյն ։ * Ի պտղոյ արդարութե բուսա
նի ծառ կենաց ։ բարձցին տարաժամ
31 որդիք անօրինաց ։ * Եթէ արդարն Ա Պետ․
հազիւ կեցցէ՝ իսկ մեղաւորն և ամբա 4․18․
րիշտն ուր երևեսցի ։

ԳԼ ։

Գլ. ԺԲ.

Որ սիրէ զխրատ, սիրէ զիմաստու 1
թիւն. եւ որ ատէ զյանդիմանութիւն՝
անմիտ է։ *Լաւ է գտանել զշնորհս 2
՚ի Տէ. իսկ այր անօրէն կարկեսցի։
*Ոչ յաջողեսցի մարդոյ յանիրաւու_ 3
թէ։ արմատք արդարոց ոչ հատցին։
*Կին ժրագլուխ պսակ է առն իւրում։ 4
որպէս որդն փայտի. նոյնպէս կորուսանէ
զայր, կին չարագործ։ *Խորհուրդք 5
արդարոց՝ իրաւունք։ առաջնորդեն
ճանս ամբարիշտք նենգութեամբ։ *Բանք 6
ամբարշտաց նենգաւորք։ բերան ուղ_
ղոց փրկէ զնոսա։ *Յոր կողմն եւ դարձցի 7
ամբարիշտն՝ եղծանի։ տունք արդա_
րոց յերկարասցին։ *Բերան իմաստ_ 8
նոց գովի ՚ի մարդկանէ։ իսկ խօթա_
Միքիա. սիրտն արհամարհեսցի։ *Լաւ է մար 9
10.30. դոյ խոնարհութբ ծառայել անձին։
քան անձին շուք եդեալ՝ եւ զհաց մու_
րանայցէ։ *Արդարն ողորմի անասնոց 10
իւրոց։ աղիք ամբարշտաց անողորմք
Միքիա. են։ *Որ գործէ զերկիր իւր՝ լցցի 11
20.30. հացիւ։ եւ որ զհետ երթայ դատարկու
թեան՝ լցցի աղքատութբ։ որ ախորժէ
զգինեաց դեգերմանս. թողցէ ՚ի բնա_
կութիւն իւր զանարգանս։ *Ցանկու 12
թիւք ամբարշտաց չարք են։ եւ ար_
մատք բարեպաշտաց հաստատունք։
*Վն չարութեան շրթանց անկանի յորո_ 13
գայթս մեղաւորն։ եւ արդարն զերծա
նի ՚ի նմանէ։ (քաղցրահայեաց զզը_
ջութի գտցէ։ որ պատահի ՚ի դրունս.
նեղէ զանձն։) *՚Ի պտղոյ բերանոյ առն 14
լցցի անձն իւր բարութբ։ եւ հատու_
ցումն շրթանց իւրոց հատուսցի նմա։
*Ճանապարհք անմտաց ուղիղ թուին 15
են առաջի նց։ ունկնդիր լինի խրա_
տու իմաստունն։ *Իսկ անմիտն առ 16
օրին յայտնէ զբարկութիւն իւր։ ծած
կէ զանարգանս իւր խորագէտն։
*Ի՛ յայտնի զհաւատս պատմէ ար_ 17
դարն։ վկայ անօրինաց նենգաւոր է։
*Են՝ որք բանիւք խրեանց խոցոտեն 18
որպէս սուր։ բայց լեզուք իմաստնոց բժշ
կեն։ *Շրթունք իմաստունք հաստա 19
տեն զվկայութի։ վկայ վաղվաղակ՝
ունի զլեզու անիրաւ։ *Նենգութի 20
՚ի սրտի չարանիւթի։ իսկ որ առնէ ըղ
խաղաղութի՝ ուրախ լիցի։ *Ոչ է հա 21
ճոյ արդարոյ՝ եւ ոչ ինչ անիրաւ։ իսկ
ամբարիշտք լցցին չարեօք։ *Պիղծք 22
են առաջի Տն շրթունք սուտք։ իսկ
որ առնէ զհաւատարիմս՝ ընդունելի է
նմա։ *Այր իմաստուն աթոռ հան_ 23
ճարոյ։ սիրտ անզգամաց պատահեսցի
նզովից։ *Ձեռն ընտրելոց դիւրաւ 24
յաղթեսցէ։ նենգաւորք մատնեսցին
25 ՚ի յափշտակութիւն։ *Ահն ահաւոր՝
խռովեցուցանէ զսիրտ առն արդարոյ.
աւետիք բարեաց ուրախ առնեն զնա։
(արդարն իրաւախոհ սիրէ զանձն իւր.
բարք ամբարշտաց մեղմեխք են։)
26 *Արդարոց հասցեն բարութիք։ Ճա_
նապարհք ամբարշտաց մոլորեցուսցէ
27 զնոսա։ *Ոչ պատահեսցի որս նեն_
գաւորի։ ստացուած պատուական է
28 այր բարի։ *՚Ի ճանապարհս արդա_
րութե կեանք։ ճանապարհք ոխա_
կալաց ՚ի մահ։

Գլ. ԺԳ.

1 Որդի խորագէտ հնազանդի հօր.
որդի անհնազանդ ՚ի կորուստ եղի
2 ցի։ *՚Ի պտղոյ արդարութե կերիցէ
առատ։ եւ անձինք անօրինաց սատա_
3 կեսցին տարաժամ։ *Որ խնայէ ՚ի բե
րան իւր՝ զանձն իւր սիրէ։ իսկ որ յան
դուգն է շրթամբք, խռովէ զանձն։
4 *՚Ի կարօտութե է ամ վատ։ ձեռք կամի եւ ոչ
5 ժրաց ՚ի դարմանս։ *Զբերան անի_ կամի ծոյլն
րաւ ատեայ արդար։ իսկ ամբարիշտն
ամաչէ. եւ ոչ ունի զհամարձակութի։
6 *Արդարութի պահէ զանմեղս ՚ի ճա
նապարհի։ զամբարիշտս սպիղծ առնեն
7 մեղք։ *Են՝ որք մեծացուցանեն զան
ձինս՝ եւ զոչինչ ունին։ եւ են՝ որք խո_
նարհեցուցանեն զանձինս՝ եւ լիք են
8 մեծութբ բազմաւ։ *Փրկանք անձին
մարդոյ՝ մեծութի իւր։ իսկ աղքատն՝
9 ոչ համբարտի պատուհասի։ *Լոյս
արդարոց յամժամ։ լոյս ամպարշտաց՝
շիջցի։ (Անձինք նենգաւորք մոլորես
ցին ՚ի մեղս։ այլ արդարք գթասցին՝
10 եւ ողորմեսցին։) *Անզգամն թշնամա
նօք գործէ զչարիս։ իսկ որք իրաւա_
խոհք են յանձինս, իմաստունք են։
11 *Մեծութի խուկեալ անիրաւութբ՝
պակասեսցի։ իսկ որ Ածպաշտութբ
ժողովէ, բազմասցի անձին իւրում։
(լաւ է ՚ի սկզբան օգնել սրտիւ. քան
12 վաղվաղելցէ խոստանալ։) *Լաւ կա_ Յոյս, որ
խեալ կայցէ զյուսոյ։ արդարն ողոք_ յապաղէ՝
մի՝ եւ տայ փոխ. ծառ կենաց է ցանկու նեղէ
13 թի բարեաց։ *Որ արհամարհէ զի_ զանձն
րօք՝ արհամարհեսցի ՚ի նոյանէ։ որ
երկնչի ՚ի պատուիրանէն Այ, առողջ
լիցի։ որդւոյ նենգաւորի բարի ինչ
մի եղիցի։ ծառայի իմաստնոյ յաջո_
ղեսցին գործք իւր։ եւ ուղղեսցին ճա
14 նապարհք նորա։ *Օրէնք իմաստնոյ
աղբիւր կենաց։ իսկ անմիտն ընդ որո
15 գայթիւ մեռցի։ *Իմաստութի բա
րի՝ տայ շնորհս։ եւ ճանաչել զօրէնս՝
մտաց բարեաց է։ ճանապարհք արհա
մար_

մարհողաց 'ի կորուստ ։ * Ամ խորա_ 16
գէտ գործէ իմաստութեամբ ․ իսկ անմիտն
տարածեաց յանձն իւր չարիս ։
* Թագաւոր յանդուգն՝ անկցի յորո_ 17
գայթ ։ և հրեշտակ հաւատարիմ փրկէ
զնա ։ * Աղքատութիւն և զանարգանս 18
'ի բաց բառնայ խրատ ։ և որ պահէ
զյանդիմանութիւն, փառաւորեսցի ։
* Ցանկութիւնք բարեպաշտաց քաղցրա 19
ցուցանեն զոգիս ։ գործք ամպարշտաց
հեռի են 'ի գիտութենէ ։ * Որ գնայ ընդ 20
իմաստունս՝ իմաստուն եղիցի ։ և որ
թարթափի ընդ անզգամս՝ յայտնի լի
ցի ։ * Զմեղաւորս հալածեն չարիք ․ 21
և արդարոց հասցեն բարութիւնք ։
* Այր անարատ ժառանգեցուցանէ 22
զորդիս որդւոց ։ գանձի արդարոց մե
ծութի ամպարշտաց ։ * Արդարք վայե 23
լեսցեն 'ի մեծութենէ, ամս բազումս ։
և անիրաւք կորնչին վաղվաղակի ։
* Որ խնայէ 'ի գաւազան, ատեայ զոր 24
դի իւր ։ իսկ որ սիրէ՝ խնամով խրա_
տէ ։ * Արդարն՝ յուտելն իւրում՝ յա 25
գեցուցանէ զանձն իւր ․ և անձինք
ամպարշտաց կարօտք եղիցին ։

Գլ ։ ԺԴ ։

Իմաստունք կանայք շինեցին տունս 1
իսկ անզգամքն ձեռօք իւրեանց
‖ Յոբ. 12.4. կործանեցին ։ * ‖ Որ գնայ ուղիղ՝ երկն 2
չի 'ի Տէ ։ և որ կամակոր 'ի ճանա_
պարհս իւր, անարգեսցի ։ * 'Ի բերանոյ 3
անզգամաց գաւազան բարկութեան ։
շրթունք իմաստնոց պահեսցեն զնո ։
* Ուր ոչ գոն եզինք՝ մսուրք սուրբք 4
են ։ և ուր բազում արդիւնք են, յայտ
նի է եզին զօրութի ։ * Վկայ հաւատա 5
րիմ, ոչ ստէ ։ բորբոքէ զստութիւն
վկայ անիրաւ ։ * Խնդրեսցես զիմաս_ 6
տութի առ 'ի չարաց՝ և ոչ գտցես ։ և
զհանճար առ յիմաստնոց դիւրաւ ։
* Ամենայն ինչ հակառակ է անզգա_ 7
մին ։ զէն հանճարոյ՝ շրթունք իմաս_
տունք ։ * Իմաստութի խորագիտաց 8
ծանիցէ զճանապարհս նոցա ։ անմտու
թի անզգամաց մոլորութբ ։ * Տունք 9
անօրինաց պարտաւորեսցին 'ի սրբու_
թենէ ։ տունք արդարոց ընդունելիք
են նմա ։ * Սիրտ առն ընդ մտաւորի 10
տրտմութի է անձին իւրոյ ։ և յորժամ
ուրախ լինի՝ չխառնի 'ի թշնամանս ։
* Տունք ամբարշտաց կործանեսցին ։ 11
յարկք արդարոց օրհնեսցին ։
* Է ճանապարհ որ թուի յաչս մարդ 12
կան թէ ուղիղ իցէ ․ բայց կատարած
նորա երթայ 'ի յատակս դժոխոց ։
* Ընդ ուրախութիս ոչ խառնի տրտ 13
մութի ։ բայց յետոյ ուրախութի 'ի

14 սուգ գայ ։ * Յիւրոց ճանապարհաց
յագեսցի խստասիրտն ։ և 'ի խորհր
դոց իւրոց ուղղեսցի այր բարերար ։
15 * Անմեղն հաւատայ ամենայնի բանի ։
իսկ խորագէտն գայ 'ի զղջումն ։ (որդ
ւոյ նենգաւորի ոչինչ եղիցի բարի ․
իսկ ծառայի իմաստնոյ՝ պատկանաւ
որք եղիցին գործք ․ և ուղղեսցին ճա
16 նապարհք նորա ։) * Իմաստունն զար_
հուրեալ խոտորեցաւ 'ի չարէ ։ իսկ անըզ
գամն յանձնապաստան խառնակի ընդ
17 անօրինին ։ * Սրտասիրտն գործէ ա_
ռանց խորհրդոյ ։ և այր իմաստուն յոյժ
18 համբերէ ։ * Բաժանեն անմեղք 'ի
չարիս ։ իսկ խորագէտք զօրանան իմաս
19 տութբ ։ * Գայթագղեսցին չարք ա_
ռաջի բարեաց ․ և ամբարիշտք կող_
կողեսցին առ դրունս արդարոց ։
20 * (Նայց բարեկամի իւրոյ աղքատն ա_
տելի եղիցի ։) բարեկամք ատեսցեն զբա
րեկամս աղքատս ։ բարեկամք մեծա_
21 տանց բազումք ։ * Որ անարգէ զաղ_
քատն՝ մեղանչէ ։ և որ ողորմի աղքա_
տաց, երանելի է ։ (որ հաւատայ 'ի Տր՝ զո
22 ղորմութի սիրէ ։) * Մոլորեալք նիւ
թեն զչարիս ։ զողորմութի և զճշմար
տութի նիւթեն բարիք ։ (ոչ գիտեն
զողորմութի և զհաւատ նիւթօղք չա_
րեաց ։ ողորմութի և հաւատք առ նիւ
23 թօղս բարեաց ։) * Ամենայնի որ հոգայ,
մի ինչ է աւելի՝ իմաստութի ։ իսկ
անձնդիւրն՝ և անհոգն՝ 'ի կարօտութե
24 եղիցի ։ * Պսակ իմաստնոց խորագի
տութի ։ և գնացք անմտաց՝ չարութի ։
25 * Փրկէ 'ի չարէ զանձն՝ վկայ հաւա_
տարիմ ։ և բորբոքէ ստութբ նենգաւ
26 որն ։ * Յերկիւղ Տն յոյս զօրութե ։ և
որդւոց իւրոց թողու զհաստատութի
27 խաղաղութեան ։ * Երկիւղ Տն աղ_ հրաման
բիւր կենաց ․ և առնէ խոտորիլ յո_
28 րոգայթից մահու ։ * 'Ի բազում զօրս
փառք թագաւորի ։ 'ի նուաղիլ ժո_
29 ղովրդոց՝ բեկումն հզօրաց ։ * Այր եր
կայնամիտ՝ բազմապատիկ է խորհր_
դով ։ իսկ կարճամիտն յոյժ անմիտ է ։
30 * Այր հեզ և երկայնամիտ՝ բժիշկ է
սրտի ։ ցեց ոսկերաց սիրտ հոգած ։
31 * ‖ Որ զրպարտէ զտնանկն, բարկացու ‖ Առ. 17.5.
ցանէ զարարիչն նորա ։ և որ պատուէ
սացի՝ ի սրտի իմում՝ թէ որպէս
ած է անմտին. և ինձ դիպեսցի՝ և ընդ
էր իմաստացայ. զաւելորդս խօսեցայ
՝ի սրտի իմում : զի և այն իսկ ունայ
նութիւն է : վասն զի անմտին յաւելորդացն
խօսի : * Զանգի ոչ գոյ յիշատակ ի- 16
մաստնոյ ընդ անմտին յաւիտեան : վասն
զի արդէն իսկ յաւուրան որք գալոցն
են . ամ ինչ մոռացեալ եղև : և զիարդ
մեռանիցի իմաստունն ընդ անմտին :
* Եւ ատեցի միանգամայն զկեանս իմ։ 17
վասնզի չար էր՝ իվերայ իմ՝ արարածն.
որ արարաւն՝ ինեղբոյ արեգական .
զի ամ ինչ ընդունայնութիւն է՝ և յո-
ժարութիւն ոգւոյ : * Եւ ատեցի զամ 18
վաստակս իմ. զոր ջանացայ՝ ինեղբոյ
արեգականն : վասն զի թողում զայն մար
դոյ՝ որ լինելոց է զկնի իմ : * Եւ ո՞վ 19
գիտիցէ՝ իմաստուն լինիցի, թէ ան-
միտ . և իշխեսցէ ամ վաստակոյ իմոյ՝
զոր ջանացայ . և յորս իմաստացայ ընդ
արեգականս : սակայն և այն մնոտի
է : * Եւ դարձայ հրաժարեալ սրտիւ 20
իմով . յամ վաստակոյ իմոյ՝ զոր վաս
տակեցի ընդ արեգականս : * Օի է 21
մարդ՝ զի վաստակ նր արդարութիւն և
իմաստութիւն է : և մարդ՝ որ ոչ ջանա
ցաւ՝ ինման՝ տացէ նման զինան իւր : սա
կայն և այն ընդունայնութիւն է՝ և չա-
րութիւն մեծ : * Վասնզի զինչ օգուտ 22
լինի մարդոյ յամ վաստակս իւր . և
յօժարութենէ սրտի իւրոյ՝ յորում ինքն
ջանայ ՝ինեղբոյ արեգականն :
* Օի ամ աւուրքն նր ցաւոյ՝ և որտ- 23
մունջեն զբօսանք իւր , և՝ի գիշերի ոչ
ննջեսցէ սիրտ նր : սակայն և այն ունայ
նութիւն է : * Եւ ոչ ինչ գոյ բարի մար 24
դոյ՝ բայց զոր ուտիցէ՝ և ըմպիցէ . և զոր
ցուցանիցէ բարի անձին իւրում՝ ի վաս
տակս իւրում : սակայն և զայն տեսի
զի ՝ի ձեռանէ Աստուծոյ է : * Վասնզի ո՞վ 25
իցէ . որ ուտիցէ՝ և ըմպիցէ առանց նր։
* Օի մարդոյ բարւոյ առաջի երեսաց 26
իւրոց ետ զիմաստութիւն՝ և զգիտու-
թիւն՝ և զուրախութիւն : և մեղանչակա-
նին ետ զզբաղումն . յաճախել՝ և ժո-
ղովել՝ և տալ բարւոյն՝ առաջի երե-
սաց Աստուծոյ : սակայն և այն մնոտի է՝ և
յօժարութեն ոգւոյ :

Գ.

Ամենայնի ժամանակ է՝ և ժամ՝ամ 1
իրաց ՝ինեղբոյ երկնից : * Ժամա 2
նակ ծնանելոյ . և ժամանակ մեռա-
նելոյ : Ժամանակ անկելոյ՝ և ժամա
նակ խլելոյ : * Ժամանակ սպանանե- 3
լոյ . և ժամանակ բժշկելոյ : Ժամա-
նակ քակելոյ . և ժամանակ շինելոյ :
* Ժամանակ լալոյ՝ և ժամանակ ծիծա- 4
ղելոյ : Ժամանակ կոծելոյ . և ժամա
նակ կաքաւելոյ : * Ժամանակ ձգելոյ 5
զքարինս . և ժամանակ ժողովելոյ
զքարինս : Ժամանակ գրկոց արկանե
լոյ՝ և ժամանակ հեռանալոյ ՝ի գրկոց
արկանելոյ : * Ժամանակ խնդրելոյ . 6
և ժամանակ կորուսանելոյ : Ժամա-
նակ պահելոյ . և ժամանակ արտաքս
հանելոյ : * Ժամանակ պատառելոյ՝ և 7
ժամանակ կարկատելոյ : Ժամանակ
լռելոյ՝ և ժամանակ խօսելոյ : * Ժամա 8
նակ սիրելոյ՝ և ժամանակ ատելոյ :
Ժամանակ պատերազմի . և ժամանակ
խաղաղութեան : * Եւ զինչ առաւելու- 9
թիւն է արարողին՝ յորս ինքն ջանայ :
* Տեսի միանգամայն զզբաղումն . զոր 10
ետ Աստուծ որդւոց մարդկան զբաղիլ
՝ինոսա : * Զամ ինչ արար Աստուծ բարի 11
՝ի ժամանակի իւրում : և սակայն զամ
յաւի-

յաւիտեանսն ետ 'ի սիրտս նոցա։ ո՟պ
զի մի՛ գտցէ մարդ զարարածն․ զոր
արար Ա՟Ծ 'ի սկզբանէ մինչեւ ցկատա
րած։ * Ծանեայ՝ զի ոչինչ է բարի 12
'ի նոսա։ բայց ուրախ լինիլ՝ եւ առնել
զբարիս 'ի կեանս իւրում։ * Եւ՛ սա_ 13
կայն ա՟մ մարդ՝ որ ուտէ՝ եւ ըմպէ․ եւ
տեսանէ զբարիս յա՟մ վաստակս իւր
ում․ այն տուրք Ա՟Յ են։ * Գիտացի՝ 14
զի զա՟մ, զոր արար Ա՟Ծ․ այնոքիկ կան
յաւիտեանս։ 'ի նոսա ոչինչ գոյ յաւե
լուլ․ եւ 'ի նոցանէ ոչինչ գոյ 'ի բաց բառ
նալ։ եւ արար Ա՟Ծ․ զի երկիցեն յերե_
սաց ն՟ր։ * Որ լինելոցն էր՝ արդէն իսկ 15
եղեւ։ եւ որում լինիլն պարտ էր՝ ահա
եղեւ։ եւ Ա՟Ծ խնդրեսցէ զհալածեալն։

Տեսի 'ի ներքոյ ա_ րեգական 'ի տեղւոջ դատա_ տանի ան բարեպաշտու թի․ եւ 'ի տեղւոջ արդարու_ թէ անօ_ րէնու թի․

*Տեսի 'ի ներքոյ արեգական տեղի դա 16
տաստանի՝ եւ անդ ամպարիշտ։ եւ տե_
ղի արդարոյ․ եւ անդ բարեպաշտ։
* Եւ՛ ասացի անդ 'ի սրտի իմում․ 17
եթէ զարդարն եւ զամպարիշտն դատէ
Ա՟Ծ։ վասն զի ժամանակ է ա՟մ իրաց․
եւ 'ի վ՟ր ա՟մ արարածոց՝ ժամ է եւ ժա
մանակ։ * Անդ ասացի 'ի սրտի իմում 18
վ՟ն խօսից որդւոց մարդկան՝ եթէ որո
շէ զնոսա Ա՟Ծ․ եւ ցուցանէ թէ անա_
սունք են նոքա։ * Եւ՛ ն՟յ սակայն դի_ 19
պուած է՝ եւ որդւոց մարդկան։ եւ դի_
պուած անասնոց, դիպուած է նոցա։
ո՟պ մահ սորա՝ նոյն՟ն եւ մահ ն՟ր։ եւ հո_
գի է յամենեսին՝ եւ զինչ առաւելու
մարդ քան զանասուն՝ եւ ոչինչ։ վասն
զի ա՟մ ինչ ընդունայն է։ * Ամենայն 20
ինչ 'ի մի տեղի երթայ։ ա՟մ ինչ 'ի հո
ղոյ եղեւ․ եւ ամենայն դառնայ 'ի հող։
* Եւ՛ ո՟վ գիտէ զհոգիս որդւոց մարդ 21
կան՝ եթէ ելանեն 'ի վեր․ եւ զշունչ ա_
նասնոց՝ եթէ իջանէ յերկիր 'ի խո_
նարհ։ * Եւ՛ տեսի՝ զի ոչինչ գոյ բարի․ 22
բայց ուրախ լինիլ մարդոյ յարարածն
իւր։ քանզի այն է բաժին ն՟ր։ զի ո՟վ ած
ցէ զնա տեսանել՝ որինչ լինելոցն յետ ն՟ր։

ԳԼ։ Դ։

Եւ՛ դարձեալ տեսի միանգամայն 1
զա՟մ զրկարարութիւնս՝ որք լինէին
ընդ արեգակամբ։ եւ ահա արտասուք
զրկարարելոյն․ եւ ոչ՛ոք էր՝ որ մխիթա
րէր զն՟ս։ եւ 'ի ձեռս զրկարարաց ն՟ց
բռնութիւն։ * Եւ՛ գովեցի առհասա_ 2
րակ զմեռեալսն․ որք յառաջագոյն
մեռանն՝ քան զկենդանիս՝ որք կենդա
նիքն են մինչեւ ցայժմ։
* Եւ՛ լաւագոյն քան զնոսա զերկո_ 3
սեան, որ չեւ եւս է լեալ։ որ ո՛չ ետես
զամենայն արարած չար՝ որ արարաւ
'ի ներքոյ արեգական։ * Եւ՛ տեսի զա՟մ 4
վաստակս․ եւ զա՟մ արութիւն արարա

ծոյն։ զի նոյն խնքեան նախանձ առն Ընդն
'ի մերձաւորէ իւրմէ։ սակայն եւ այն
ունայնութի՟ն է եւ յօժարութի՟ն ոգւոյ։
5 * Անզգամն բուռն էհար զգրկաց
իւրոց․ եւ եկեր զմարմինս իւր՝․ իւր՝ առէ
6 * Բարի է լիութի՟ բուռն միոյ հանգս_ ըղջ․
տեամբ․ քան զլիութի՟ երկուց բռանց՝
7 ջանիւ՛ եւ յօժարութե՟ ոգւոյ։ * Դար_ Եւ պատա
ձայ՝ եւ տեսի զընդունայնութի՟ 'ի ներ պահօք
8 քոյ արեգական։ * Զի մի է․ եւ ո՛չ կր ոգւոյ։
կին․ եւ որդի՝ եւ եղբայր ո՛չ գոյ ն՟ր․ եւ
ո՛չ է վախճան ա՟մ վաստակոյ նորա․ եւ
սակայն ակն ն՟ր ո՛չ յագի մեծութե՟։
Եւ՛ արդ՝ ո՟ւմ ջանամ ես․ եւ զրկեմ
զանձն իմ 'ի բարութե՟։ զի եւ այն ընդ
ունայնութի՟ է՝ եւ զբաղումն չար։
9 * Լա՛ւ են երկու քան զմի․ որոց գո՛ն
10 վարձք բարի 'ի վաստակս նոցա։ * Զի
եթէ գլորեսցի մին․ կանգնեսցէ զն՟ա
ընկեր իւր։ եւ վա՛յ միոյն եթէ գլորեսցի։
ո՛չ գուցէ միւս՝ որ յարուցանիցէ զնա։
11 * Զի եթէ ննջեսցեն երկուք՝ ջեռու_
ցանեն զմիմեանս։ իսկ մին՝ զիա՞րդ ջեռ
12 նուցու։ * Եւ՛ եթէ բռնասցի մին՝ եր
կուքն կալցեն զդէմ ն՟ր։ եւ առասան
երեքկուղի ո՛չ վաղվաղակի խզեսցի։
13 * Լա՛ւ է մանուկ աղքատ՝ եւ իմաստուն՝
քան զթագաւոր ծեր՝ եւ անմիտ։ որ
14 ոչ եւս իմացաւ հայիլ։ * Եթէ 'ի տա_
նէ կապանաց ելցէ այլումն առ 'ի թա_
գաւորել։ զի եւ 'ի թագաւորութեանն
15 իւրում եղեւ աղքատ։ * Տեսի միանգա
մայն զա՟մ կենդանիս՝ որք շրջին 'ի ներ
քոյ արեգական․ հանդերձ երիտասար
դաւն երկրորդաւ․ որ յառնելոցն է փո
16 խանակ ն՟ր։ * Ո՛չ գոյ վախճան ա՟մ ժո
ղովրդեանն․ ամենեցուն որք եղեն յա
ռաջ քան զն՟ա։ Նա եւ յետինք ո՛չ լի_
նիցին ուրախ 'ի վերայ նորա։ զի եւ այն
սնոտի է՝ եւ յօժարութիւն ոգւոյ։
17 * Զգո՛յշ լեր ոտիւն քում․ որով երթաս
'ի տուն Ա՟Յ։ եւ մերձ լիցին 'ի լսել։
18 *‖ Զի լաւագոյն է հնազանդութիւն ‖1 Թագ
քան զտուրս անզգամաց՝ վասն զի ո՛չ 15. 22.
են գիտակ բարիս առնելոյ։ Ովսէ.
6. 6.

ԳԼ։ Ե։

1 Մի՛ փութար բերանով քով․ եւ մի՛
վաղվաղեսցէ սիրտ քո հանել
բան առաջի Ա՟Յ։ զի Ա՟Ծ յերկինս է՝
եւ դու յերկրի։ վասն այդորիկ եղի_
2 ցին բանք քո սակաւք։ * Քանզի հասա
նի երազ՝ 'ի բազմութե՟ փորձութե՟։
եւ ձայն անզգամի 'ի բազմութե՟ բանից։
3 * Ո՟պ ուխտես զուխտս քո Ա՟Յ․ մի՛ յա
մեր հատուցանել զայն։ վասն զի ո՛չ
են կամք յանզգամսն։ արդ դու՝ զոր
4 ուխտեսն՝ հատո՛։ * Զի բարի է քեզ
ո՛չ

ոչ ուխտել. քան ուխտել և ոչ հատու-
ցանել ։ * Մի՛ տար զբերան քո առ'ի 5
մեղանչել մարմնոյդ քում. և մի՛ ասի-
ցես՝ թէ առաջի երեսաց Այ տգիտու-
թիւն է ։ զի մի՛ բարկասցի Տր 'ի վերայ
բարբառոյ քոյ . և ապականեսցէ ըզ-
գործս ձեռաց քոյ ։ * Վասն զի ըստ 6
յաճախութեանց երազոց՝ է և ընդունայ-
նութիւն բանից բազմաց ։ սակայն դու
զԱյ երկի՛ր ։ * Եթէ զրպարտութիւն 7
աղքատաց . և զյափշտակութիւն իրաւ-
անց՝ և զարդարութիւն տեսցես յերկրի.
մի՛ զարմասցիս 'ի վերայ իրացն ,քանզի
զբարձունս 'ի վերայ բարձանց պահէ ։
և զբարձրութիւն 'ի վերայ նոցա . և զա-
ռաւելութիւն երկրի ։ * 'Ի վերայ ամի է 8
թագաւոր անդաստանի գործեցելոյ ։
(և լիջի՛ր դու հաւատարիմ ամենայ-
նի . 'ի ծանր յափշտակելոյն ։) * Որ 9
սիրէ զարծաթ՝ ոչ յագեսցի արծա-
թով ։ և որ սիրեաց զարծաթ 'ի բազ-
մութէ իւրում զարդիւնս ։ սակայն և
Ի բազմու- թէ ար- դեանց այն ընդունայնութիւն է ։ * 'Ի բազմութէ 10
արդարութէ յագեցան՝ որք ուտէին
զնա ։ և զի՞նչ է արութիւն նմա առ'ի նմա-
նէ ։ վ՟զի սկիզբն տեսանելոյ՝ աչք իւր
են ։ * Քաղցր քուն է ծառայի եթէ սա 11
կաւ՝ և եթէ շատ կերիցէ ։ և որ յագի
մեծանալով՝ չէ՛ նմա համարձակ 'ի քուն
Ա. Յոբ. մտանել ։ * Է հիւանդութիւն զոր տեսի 12
20. 20. 'ի ներքոյ արեգական ։ մեծութիւն պա-
հեալ ումեք՝ առ 'ի նմանէ չարոյ իւրում ։
* Եւ կորիցէ մեծութիւն նր՝ և նա 'ի զբաղ- 13
մանս չարի ։ ծնաւ որդի՝ և ոչինչ գոյ 'ի
Ա. Յոբ. ձեռին նր ։ * Որպէս ել յորովայնէ մօր 14
1. 21. իւրոյ մերկ . դարձցի երթալ՝ որպէս և եկն ։
Ա. Տիմ. և զոչինչ առցէ 'ի վաստակոյն իւրմէ .
6. 7. եթէ երթայցէ 'ի ձեռին իւրում ։ * Սա 15
կայն և այն ախտ չար է ։ զի զոր օրինակ
եկն՝ նոյնպէս երթիցէ ։ և զինչ օգուտ
է նմա 'ի վաստակոյն՝ զոր ջանայ հող-
մոյ ։ * Զի ամ աւուրք նր 'ի խաւարի , 16
և 'ի սուգ . և սրտմտութք բազմաւ .
հիւանդութք՝ և ցասմամբ ։ * Ահա՝ 17
զոր տեսի ես զբարին՝ որ է լաւ ուտելն
և ըմպելն . և տեսանել զբարութի յամի
վաստակս իւրում . զոր ջանայ 'ի ներ-
քոյ արեգական . 'ի թիւ աւուրց կենաց
իւրոց՝ զոր ետ նմա Այ ։ վ՟զի այն է
բաժին նր ։ * Քանզի ամ մարդ՝ որոյ 18
ետ Այ զմեծութիւն և ինչս ։ և իշխան
արար զնա ուտել 'ի նմանէ . և առնուլ
զբաժին իւր , և ուրախ լինիլ 'ի վաս-
տակս իւրում . այն պարգև Այ է ։
* Զի ոչ յիշեաց զբազում աւուրց կե- 19
նաց իւրոց ։ զի Այ զբաղեցուցանէ
զնա յուրախութէ սրտի իւրոյ ։

Գլ ։ Զ ։

1 Է չարութիւն զոր տեսի 'ի ներքոյ արե-
գական ։ և բազում է 'ի վր մարդ-
2 կան ։ * Այր մի , որում տայցէ Այ զմե-
ծութիւն . և ինչս՝ և փառս ։ և ոչինչ պա-
կաս իցէ անձին իւրում . յամէ որում
ցանկանայցէ . և ոչ տացէ նմա ա՟ծ իշխա-
նութիւն ուտել 'ի նմանէ ։ քանզի այր օտար
կերիցէ զնա ։ և այն ընդունայնութի է՝
3 և ախտ չար ։ * Եթէ ծնցի այր հարիւր
զաւակ , և ամս բազումս կեցցէ ։ և ևս
բազումս եղիցին աւուրք կենաց նր . և
անձն նր ոչ յագեսցի 'ի բարութէ . և
գերեզման ոչ ևս գտցի նմա ։ ասացի
4 թէ լաւ է քան զնա վիժածն ։ * Զի ու-
նայնութք եկն՝ և խաւարաւ գնաց ։ և
'ի խաւարի անուն նր ծածկեցաւ ։
5 * Քանզի զարեգակն ոչ ետես . և ոչ
ծանեաւ՝ զինչ է հանգիստ սորա քան
6 զնորայն ։ * Եւ եթէ եկեաց նա զհազար
ամաց շրջանակս . և զբարութի ինչ ոչ
ետես՝ մի թէ ոչ երթիցէ ամ 'ի մի տե-
7 ղի ։ * Ամ ջան մարդոյ 'ի բերան իւրե.
8 սակայն անձն նր ոչ յագեսցի ։ * Վ՟զի
զինչ առաւելութի է իմաստնոյն քան
զանմտին ։ քանզի աղքատն գիտէ եր-
9 թալ առաջի կենաց իւրոց ։ * Լաւ է
տեսիլ աչաց՝ քան զգնացեալն հոգ-
ւով ։ սակայն և այն սնոտի է՝ և յօժա
10 րութիւն ոգւոյ ։ * Որ ինչ եղեն՝ ահա ան-
դէն կոչեցաւ անուն նր ։ և յայտնի եղև՝
որպիսի ինչ է մարդ ։ և ոչինչ կարէ
դատել ընդ Այ հզօրի քան զինքն ։
11 * Վասն զի են բանք բազումք՝ որք յա
ճախեն զընդունայնութիւն ։

Գլ ։ Է ։

1 Օ ինչ է առաւելութի մարդոյ ։ քան
զի ո՞վ գիտէ՝ զինչ բարի է մար
դոյն 'ի կեանս իւրում ։ 'ի թիւ աւուրց
կենաց ընդունայնութեն նր . զորս արար
'ի ստուերի ։ վ՟զի ո՞վ պատմեսցէ մար
դոյ՝ եթէ զինչ լինիցի նր 'ի ներքոյ արե
2 գական ։ * Լաւ է անուն բարի՝ քան Առակ.
զիւղ բարի ։ և օր մահուան իւրոյ՝ քան 22. 1.
3 ծննդեան իւրոյ ։ * Լաւ է երթալ 'ի
տուն սգոյ՝ քան 'ի տուն արբեցութէ ։
վ՟զի այն է կատարած ամ մարդոյ , և
որ կենդանին է՝ տացէ բարիս 'ի սիրտ
4 իւր ։ * Լաւ է սրտմտութի քան զծաղր .
քանզի չարութք երեսաց զուարճասցի
5 սիրտ ։ * Սիրտ իմաստնոց 'ի տան սգոյ ։
և սիրտ անզգամաց 'ի տան ուրախութէ ։
6 * Լաւ է լսել զսպառնալիս իմաստնոց ։
քան լսել մարդոյ զերգս անմտաց ։
7 * Զի որպ ձայն փշոյ 'ի ներքոյ կաթ-
սայի՝ այնպ է ծաղր անմտաց . սակայն
և

և այն սնոտի է։ *Զի զրպարտութիւն 8
տաշեցուցանէ զիմաստունս։ և կորու_
սանէ զսիրտ պնդութեն նր։ *Լաւ է 9
վախճան բանից՝ քան զսկիզբն իւրն։
Լաւ է երկայնամիտ՝ քան զհպարտա
ցեալն ոգւով։ *Մի փութար յոգւոջ քո 10
բարկանալ։ վասնզի բարկութիւն 'ի ծոց ան_
զգամաց դադարէ։ *Մի ասեր թէ զինչ 11
եղև. զի աւուրքն առաջինք բարւոք է_
ղեն քան զայսոսիկ։ վասնզի ոչ իմաստութբ
հարցեր վասն այդորիկ։ *Լաւ է իմաս_ 12
տութիւն հանդերձ ժառանգութբ. և
առաւելութիւն որոց տեսանեն զարե_
գակն։ *Քանզի ընդ հովանեաւ նր է 13
իմաստութիւն. իբրև զհովանի արծաթոյ։
և առաւելութիւն գիտութեան իմաստութեան
կենդանացուսցէ զայն առ 'ի նմանէ։
*Տես զարարածս Այ. վասնզի ով կարէ 14
զարդարել զոր Աձ եղծցէ։ *Յաւուր 15
բարութեան կեցջիր 'ի բարիս. և տես յաւ
ուր չարութեան։ ահա և այս միաբանի ընդ
այսմ։ արար Աձ զայն վասն խօսից. զի ոչ
գտանիցէ մարդ զկնի իւր՝ և զոչինչ։
*Զամենայն տեսի զամ աւուրս ու_ 16
նայնութեան իմոյ։ է արդար կորուսեալ
յարդարութեան իւրում. և է ամպարիշտ՝
որ կայ մնայ 'ի չարութեան իւրում։ *Մի լի 17
նիր կարի արդար՝ և մի առաւել ճար_
տարեր։ զի մի երբեք խոտորիցիս։ *Մի 18
ամպարշտիր յոյժ. և մի լինիր խիստ. զի
մի մեռանիցիս տարաժամ։ *Լաւ է 19
քեզ՝ եթէ պաշտպանիցիս յայսոսիկ։
սակայն այսու մի պղծիցես զձեռն քո։
վասնզի երկիւղածն յամ անցցէ ընդ ամ։
*Իմաստութիւն օգնեսցէ իմաստնոյ՝ քան 20
զտասն իշխանս՝ որք իցեն 'ի քաղաքի։
‖ 3 Թագ. 8.46. *‖ Ոչ մարդ ոչ գոյ արդար 'ի վերայ երկ 21
րի. որ արասցէ զբարի, և ոչ մեղանչիցէ։
2. Մնաց. 6.36. *Սակայն զամ բանս՝ զորս խօսիցին ամ 22
պարիշտք՝ մի դներ 'ի սրտի քում։ զի մի
Առակ. 20.9. լուիցես անէծս 'ի ծառայէ քումմէ՝ որ
զքեզ անիծիցէ։ *Ոչ բազում անգամ 23
1. Յովհ. 1. 8. չարախօսեսցէ զքեզ։ և ըստ բազում
ճանապարհաց չարչարեսցէ զսիրտ քո.
սակայն դու մի անիծաներ այլոց։
*Զայս ամ փորձեցի իմաստութբ. և ա_ 24
սացի՝ թէ իմաստնացայց։ և նա հեռա
ցաւ յինէն։ *Հեռագոյն քան որչափ 25
էրն։ և խորք խորոց ոչ գտցեն զնա։
*Շուրջ եկի ես՝ և սիրտ իմ. ճանաչել՝ 26
և խորհել՝ և խնդրել զիմաստութիւն, և
զհանճար։ և գիտել զամպարշտի զան_
զգամութիւն. և զլլկանս՝ և զծփանս։ *Եւ 27
գտի զնա դառնագոյն քան զմահ հան
դերձ կնաւն. որ է որս՝ և ուռկան սրտի
նր. և կապանք 'ի ձեռս նր։ բարին ա_
ռաջի երեսաց Այ զերծցի 'ի նմանէ, և
յանցաւորն ըմբռնեսցի 'ի նմա։ *Ահա 28
ձդ.

զայս գտի ասէ Էկղեսիաստէս. զի միում զի և
29 գտանել զխորհուրդն։ *Զոր խնդ_ զի—
րեաց անձն իմ, և ոչ գտի. Եւ այր՝ զմի 'ի
հազարաց գտի. բայց զկին ամենեին
30 ոչ։ *Սակայն զայս ահա գտի. զի արար
Աձ զմարդն ուղիղ։ և նոքա խնդրեցին
զխորհուրդս չարութեան։ ով գիտէ զիմաս
տունս՝ և ով գիտէ զմեկնութիւն բանից։

ԳԼ. Ը.

1 Իմաստութիւն մարդոյ լուսաւոր առնէ ‖ Սիր.
զերեսս իւր։ և լիրբն երեսօք իւր_ 2. 14.
2 ովք լինի ատելի։ *Բերանոյ թագաւո
րի զգուշ լեր. և 'ի բան երդման մի փու
3 թասցիս։ *Յերեսաց նր գնասցես։ մի
կայցես 'ի չար բանի. զի զամ զոր ինչ կա
4 միցի՝ արասցէ։ *Եւ իբրև զթագաւոր
իշխանութբ խօսի. և ով ասասցէ ցնա՝
5 թէ զինչ առնես։ *Որ պահէ զպատուի
րանն՝ ոչ գիտասցէ զբան չարութեան։ և
զժամանակ իրաւանց ճանաչէ սիրտ ի_
6 մաստնոյ։ *Զի ամ իրաց է ժամանակ՝
և իրաւունք։ քանզի տգիտութիւն մարդոյ
7 բազում է 'ի վերայ նր։ *Զի ոչոք է՝ որ
գիտէ՝ եթէ զինչ է՝ որ լինելոց է։ վասնզի
8 ով լինիցի՝ ով պատմեսցէ նմա։ *Ոչ է
մարդ իշխան ոգւոյ՝ արգելուլ զոգի, և
ոչ գոյ իշխանութիւն նր յաւուր մահու։ և
ոչ գոյ պատգամաւորութիւն յաւուր պա
տերազմի. և ոչ ապրեցուցանէ ամպարշ
9 տութիւն զմերձաւորն իւր։ *Եւ զայս ամ
տեսի միանգամայն. և ետու զսիրտ իմ
յամ արարածս. որք արարեալ են 'ի
ներքոյ արեգական։ որոց իշխան եղև
մարդն 'ի վերայ մարդոյ չարչարել զնա։
10 *Եւ յայնժամ տեսի զամբարիշտն 'ի
գերեզմանս ածեալ։ և 'ի սրբոցն գնա
ցին՝ և սուգ առին 'ի քաղաքի. վասն զի
այնպէս արարին։ սակայն և այն ընդու
11 նայնութիւն է։ *Քանզի ոչ գոյ ընդդէմ
դառնալ յայնցանէ՝ որք վաղվաղակի
գործեն զչար։ վասն այնորիկ համարձա
կեցան սիրտք որդւոց մարդկան յան_
12 ձինս իւրեանց առնել զչարիս։ *Որ մեղաւն,
արար զչար. յայսմհետէ՝ և 'ի վաղուց
ժամանակաց։ քանզի գիտեմ և ես՝
զինչ է բարին երկիւղածաց Այ։ զի
13 երկիցեն յերեսաց նր։ *Եւ ոչինչ գոյ
բարի ամբարշտի։ և ոչ յերկարեսցէ
աւուրս՝ իբրև ընդ հովանեաւ նր. որ ոչ է
14 երկիւղած յերեսացն Այ։ *Է՛ ընդու
նայնութիւն. որ եղեալ է 'ի վերայ երկրի։
վասնզի են արդարք. որոց ժամանեն չա_
րիք իբրև զգործս ամպարշտաց։ և են
ամպարիշտք՝ որոց հասանեն այնպէս իբ_
րև զգործս արդարոց։ ասացի թէ սա
15 կայն՝ և այն ընդունայնութիւն է։ *Եւ գո
վեցի միանգամայն զուրախութիւն. վասնզի

ուլինչ է բարի մարդոյ 'ի ներքոյ արեգա
կան. բայց ուտելն. և ըմպելն՝ և ուրախ
լինելն: և այն երթայ ընդ նմա 'ի վաս_
տակոց իւրոց յաւուրս կենաց իւրոց ։
զորս ետ նմա Ա՛ծ 'ի ներքոյ արեգական։
*Յոր միանգամ ետու զսիրտ իմ ճանա 16
չել զիմաստութիւն. և տեսանել զզբաղումն.
որ եղեալ է 'ի վ՛ր երկրի: զի 'ի տուէ և
'ի գիշերի զքուն յաչս ն՛ր ոչ է տեսանել։
*Եւ տեսի զա՛մ արարածս Ա՛յ: վ՛ն զի 17
ոչ կարասցէ մարդ գտանել ինչ միան
գամայն զարարածս ն՛ր: որք արարեալք
են 'ի ներքոյ արեգական։ Զոր միան_
գամայն ջանասցէ մարդ խնդրել՝ և ոչ
գտցէ ։ քանզի որչափ արասցէ իմաս_
տունն գտանել՝ ոչ կարասցէ գտանել։

Գլ. Թ.

Զի զա՛մ զայս եդու 'ի սիրտ իմ: և 1
ակն իմ ետես զայս ա՛մ: վ՛ն զի
են արդարք և իմաստունք . և գործք
իւրեանց 'ի ձեռին Ա՛յ են. քանզի զսէր
իսկ՝ և զատելութիւն ոչ գիտէ մարդն։
*Ա՛մ ինչ առաջի երեսաց ն՛ր է: և ընդ 2
ունայնութիւն է յամենեսեան: դիպուած
է արդարոյն՝ և ամբարշտին . բարւոյն՝
և չարին . սրբոյն՝ և պղծոյն . այնմ, որ
զոհիցէ՝ և որ ոչն զոհիցէ: Ո՛պ բարին՝ և
ո՛պ յանցաւորն . ո՛պ որք երդնուցուն՝ և
ո՛պ որք երկնչին յերդմանէ ։ *Այս է 3
չար յա՛մի՝ որ արարեալ է 'ի ներքոյ արե
գական: զի դիպուածք են յամենեսեան։
քանզի սիրտք որդւոց մարդկան լցան
չարութբ ։ և զբաղումն 'ի սիրտս նոցա 'ի
կեանս իւրեանց: և զկնի նոցա առ մե_
ռեալսն։ *Ո՛ զի ո՛վ են՝ որք հաւատարք 4
են առ ա՛մ կենդանիս ։ գոյ յոյս , թէ
շունն՝ որ կենդանի է՝ լաւ է քան զառիւծ
մեռեալ։ * Քանզի կենդանիքն գի_ 5
տեն՝ թէ մեռանելոց են: և մեռեալքն
ոչ են գիտակք՝ և ոչ իմիք: և ոչ ևս գոն
ն՛ց վարձք: զի մոռացաւ յիշատակ ն՛ց:
*Եւ սէր նոցա՝ և ատելութի ն՛ց: այլ 6
և նախանձ նոցա յայնմհետէ կորեաւ ։
և բաժին իսկ ոչ գոյ նոցա յաւիտեան
յա՛մի, որք արարեալք են 'ի ներքոյ արե
գական ։ *Ե՛կ կեր ուրախութբ զհաց 7
քո: և արբ սրտիւ զուարճացելով զգի
նի քո: զի արդէն իսկ հաճեցաւ Ա՛ծ 'ի
գործս քո: *Յա՛մ ժամանակի եղիցին 8
հանդերձք քո սպիտակք: և իւղ 'ի գլխոյ
քումմէ մի պակասեսցի: *Եւ տես ըզ 9
կեանս ը՛ կնոջ քոյ՝ զոր սիրեցեր զա՛մ
աւուրս կենաց ընդունայնութե քոյ ։
որ տուեալ է քեզ ընդ արեգակամբ .
մինչև յաւուրս վախճանի քոյ: զի այն է
բաժին քո 'ի կեանս քում . և 'ի վաստա
կոց քոց՝ զորս ջանաս 'ի ներքոյ արեգա
10 կան: * Զա՛մ որ ինչ գտանիցէ 'ի ձե_
ռին քոյ առնել . որքան է զօրութի քո՝
արա: վ՛ն զի ոչ գործ՝ և խորհուրդ՝
և գիտութի՝ և իմաստութի եղիցին 'ի
11 դժոխս. յոր դու երթալոց ես: *Դար_
ձայ՝ և տեսի 'ի ներքոյ արեգական՝ զի
ոչ թեթևաց են ընթացք: և ոչ զօրաւո
րաց պատերազմ: և ոչ իմաստնոց հաց.
և ոչ հանճարեղաց մեծութի , և ոչ
գիտնոց շնորհք: վ՛ն զի ժամանակք՝ և
դիպուածք պատահին ամենեցուն ն՛ց:
12 *Քանզի ոչ իսկ գիտաց մարդ զժա_
մանակն իւր . ո՛պ ձկունք որսացեալք
ցանցիւք չարեաց: և ո՛պ թռչունք ըմ_
բռնեալք 'ի ծուղակս: նոյնո՛պ անկանին
յորոգայթ որդիք մարդկան 'ի չար ժա
մանակի . յորժամ յանկարծակի հասա
13 նէ 'ի վ՛ր ն՛ց: *Սակայն և զայս իմաս_
տութի տեսի 'ի ներքոյ արեգական . և
14 է մեծ: *Քաղաք փոքր՝ և արք 'ի նմա
սակաւք՝ և գայցէ 'ի վ՛ր ն՛ր թագաւոր
մեծ՝ և պաշարիցէ զնա . և կանգնեսցէ
15 շուրջ պատնէշս մեծամեծս: *Եւ գտա
նիցի 'ի նմա այր աղքատ և իմաստուն՝
և ապրեցուցանիցէ նա զքաղաքն իմաս
տութբ իւրով: և մարդ ոչ յիշեաց զայրն
16 զայն զտնանկ: *Եւ ասացի՝ բարի է ի_
մաստութի քան զզօրութի. և իմաստութի
աղքատին արհամարհեալ է, և բանք ն՛ր
17 ոչ լինին լսելիք: * Բանք իմաստնոյն
մեղմով լսին՝ քան զաղաղակ իշխանաց
18 անզգամութբ: *Բարի է իմաստութի
քան զանօթս պատերազմի: և յանցաւ
որ մի կորուսանէ զբարութիւս բազումս:

Գլ. Ժ.

1 Ճանճք մեռեալք զազրացուցանեն
զիւղ անուշունս: պատուական է
սակաւ ինչ իմաստութե , քան զմեծ
2 փառս անմտութե: *Սիրտ իմաստնոյ յա
ջակողմն իւր . և սիրտ անմտի 'ի ձախա
3 կողմն իւր: *Քանզի և 'ի ճանապարհի
յորժամ գնասցէ անմիտն, սիրտ ն՛ր պա
կասեսցի: և զորինչ խորհի՝ ա՛մ անմտու
4 թի է: * Եթէ հոգի իշխանին ելցէ 'ի
վ՛ր քո՝ մի թողուր զտեղի քո: զի ողո_
քումն դարձուցանէ զմեղս մեծամեծս
5 *Է չարութի՝ զոր տեսի 'ի ներքոյ արե
գական. իբրև ակամայ ինն ել յերեսաց
6 իշխանի: *Տուաւ անմիտն 'ի բարձրու
թիս մեծամեծս . և մեծատունք 'ի խո
7 նարհութե նստցին: *Տեսի զծառայս
հեծեալս 'ի ձիս . և զիշխանս զի գնային
8 իբրև զծառայս յերկրի: *Որ փորէ Առակ
զխորխորատ՝ 'ի նոյն անկցի: և որ քակէ 26.27.
9 զցանկ , հարցէ զնա օձ: *Եւ որ բառ Սիրաք
նայ զքարինս՝ վտանգեսցի նոքիմբք, և 27.29.
որ հերձանէ զփայտ՝ վշտասցի 'ի նոսին:

*Եթէ

*Եթէ անկցի եւս երկաթ․ եւ նա տրտ 10
մեցոյց զերեսս իւր․ եւ զօրութիք զօրացու
ցանեն․ եւ է առաւելութի քաջ իմաստու
թեն ։ *Եթէ հարցէ օձ 'ի թովելն, ոչ 11
ինչ առաւելութի է թովչին ։ *Բանք բե 12
րանոյ իմաստնոյ շնորհք․ եւ շրթունք
անզգամի ընկղմեն զնա ։ *Սկիզբն բա 13
նից բերանոյ նր անզգամութի է ։ եւ վեր
ջինք բերանոյ նր յածութի չար ։ *Ա՟ն_ 14
միտն բազմացուցանէ զբանս ։ ոչ գիտէ
մարդ զինչ եղեալն է՝ եւ զինչ լինելոց է
զի զկնի նր ո՞վ պատմեսցէ նմա ։ *Բան 15
անմտին չարչարէ զնա․ որ ոչ գիտաց
երթալ 'ի քաղաք ։ *Վայ քեզ քաղաք․ 16
որոյ թագաւոր քո մանուկ է․ եւ իշխանք
քո ընդ առաւօտս ուտեն ։ *Երանի է 17
քեզ երկիր․ որոյ թագաւոր քո որդի
ազատի իցէ ։ եւ իշխանք քո 'ի ժամու ու
տեն զօրութե՝ եւ ոչ ամաչեսցեն ։
*'Ի վատութե խոնարհեսցին հեծա_ 18
նածգութիք․ եւ 'ի դատարկութէ ձեռաց
կաթեսցէ տուն ։ *'Ի ծաղր առնել 19
զհաց՝ եւ զգինի․ եւ իւղ ուրախ առնէ
զկենդանիս․ եւ արծաթոյ լուիցէ ա՟մ
ոք ։ *Սակայն 'ի միտս քում մի անիծաներ 20
թագաւորի ։ եւ յշտեմարանս սենեկաց
քոց մի նզովեսցես զմեծն ։ վո զի թռ_
չունք երկնից հասուցանեն զբարբառ
քո ։ եւ որ ունի զթեւս՝ պատմէ զբանս քո ։

Գլ ։ ԺԱ ։

Առաքեա զհացքո 'ի վերայ երեսաց 1
զի շինի ջրոյ․ զի բազմութե աւուրց քոց
գտցես զնա ։ *Տուր զբաժին եօթանց՝ 2
այլ եւ ութից ։ վո զի ոչ գիտես զինչ լինի
ցի չար 'ի վերայ երկրի ։ *Թէ լցցին ամպք 3
անձրեւօք, 'ի վերայ երկրի հեղուն ։ եւ եթէ
անկցի փայտն 'ի հարաւ՝ եւ կամ 'ի կողմն
հիւսիսոյ՝ ուր անկցի փայտն, անդ կաց
ցէ ։ *Որ խորէ զհողմն՝ ոչ սերմանէ ։ եւ 4
որ հայի յամպս, ոչ հնձեսցէ ։ *Յորս 5
ոչ գոյ գիտութի․ եթէ զինչ է ճանա_
պարհ հողմոյ ։ իբրեւ ոսկերք յորովայ_
նի յղւոյ, նոյնպէս ոչ գիտասցես զարա_
րածս ա՟յ․ զոր ինչ առնիցէ զա՟մ ։ *Ընդ 6
առաւօտս սերմանեա զսերմն քո ։ եւ
ընդ երեկոյս մի լքցին ձեռք քո ։ զի ոչ
գիտես՝ եթէ ո՞ր պատահեսցի ։ այս՝ թէ
այն ։ եթէ երկոքեան 'ի միասին՝ բարիք
են ։ *Քաղցր է լոյս․ եւ բարի աչաց՝ տե 7
սանել զարեգակն ։ *Զի եթէ ամս բա 8
զումս կեցցէ մարդ եւ յա՟մ 'ի նս ուրախ
լինիցի ։ եւ յիշեսցէ զաւուրս խաւարի ։
զի բազումք իցեն ։ ա՟մ ինչ որ գալոցն
ինչ է, ունայն է ։ *Ուրախ լեր երիտասարդ 9
'ի մանկութե քում ։ եւ զուարճասցու_
ցէ զքեզ սիրտ քո յաւուր մանկութե

10 քոյ ։ եւ գնա դու 'ի ճանապարհս սրտի
քոյ անարատ․ եւ 'ի տեսիլ աչաց քոց․
եւ ծանի՛ր, եթէ վասն այսր ամենայնի
ածցէ զքեզ Ա՟ծ 'ի դատաստան ։
10 *'Ի բաց արա զբարկութի 'ի սրտէ
քումմէ ։ եւ հեռացո զչարութի 'ի մար_
մնոյ քումմէ ։ վասն զի մանկութի եւ
անմտութի, ընդունայնութի է ։

Գլ ։ ԺԲ ։

1 Եւ յիշեա զարարիչն քո՝ յաւուր
մանկութե քոյ ։ մինչեւ հասեալ
իցեն աւուրք չարութե ։ եւ ժամանես_
ցեն ամք, յորս ասասցես, թէ ոչ են
2 կամք իմ 'ի դոսա ։ *Մինչեւ խաւա_
րեալ իցէ արեգակն՝ եւ լոյս՝ եւ լուսին՝
եւ աստեղք ։ եւ դարձցի ամպ զկնի անձ
3 րեւոյ ։ *Յաւուր յորում շարժեսցին
պահապանք տանն ։ եւ թիւրեսցին արք
զօրութեց ։ եւ դատարկասցին աղօրիք՝
զի նուազեցան ։ եւ խաւարեսցին՝ որք
4 տեսանեն ընդ ծակս ։ *Եւ փակեսցեն
զդրունս 'ի հրապարակս 'ի տկարութէ
ձայնի աղօրւոյն ։ եւ յարիցեն 'ի ձայն
հաւուն․ եւ նկուն եղիցին դստերք եր
5 գոց ։ *Եւ 'ի բարձանց տեսցեն ։ եւ ապ
շութի 'ի ճանապարհին ։ եւ ծաղկեսցի
նշին ։ եւ թանձրասցի մարախն ։ եւ ցա
րածեսցի կապարն ։ վո զի գնաց մարդ ճապպարն
'ի տուն իւր յաւիտենից ։ եւ շուրջ եղեն
6 'ի հրապարակս կոծողք ։ *Մինչեւ
կործանեալ իցէ լար արծաթոյն ։ եւ
խորտակեալ մանեակ ոսկւոյն ։ եւ ման
րեալ սափորն յաղբիւրն ։ եւ ընկրկեալ
7 անիւն 'ի գուբն ։ *Եւ դարձցի հողն
յերկիր՝ ուստի եւ էրն․ եւ հոգին դարձցի
8 առ Ա՟ծ, որ ետ զնա ։ *Ունայնութի
ունայնութեց ասաց ժողովողն․ ա՟մ
9 ինչ ունայն եւ աւելորդ է ։ *Զի եղեւ
ժողովողն իմաստուն․ եւ զի ուսոյց զգի
տութի ա՟մ մարդոյ ։ եւ ունկն քննէ
10 զզարդ առակաց ։ *Յոյժ խնդրեաց
ժողովողն գտանել զբանս կամաց ։ եւ
գրեալ զուղղութիս բանից ճշմարտու
11 թե ։ *Բանք իմաստնոց իբրեւ զխթան
եզանց ։ եւ իբրեւ բեւեռք հրացեալք ։
որք տուան 'ի նշանակացն 'ի հովուէ որք 'ի
12 միոջէ ։ *Եւ աւելորդ 'ի նոցանէ ։ որ յերանն խոր
դեակ՝ զգոյշ լեր 'ի ստանալոյ զգիրս հրդոյ
բազումս՝ զի ոչ գոյ վախճան ։ եւ խոր_ վարդա_
հուրդք բազումք՝ եւ ջան մարդոյ ։ պետաց
13 *Եւ վախճան բանիցս զամենայն ինչ պատճէալք
լուր ։ յԱ՟յ երկիր՝ եւ զպատուիրանս են 'ի հով_
նր պահեա ։ վո զի այս է ա՟մ մարդ ։ ուէ միոջէ
14 *Քանզի զա՟մ արարածս ածցէ Ա՟ծ
'ի դատաստան ։ յամենայն անտես ա_
րարելոց եթէ բարի՝ եւ եթէ չար․

ԵՐԳ ԵՐԳՈՑ ՍՈՂՈՄՈՆԻ·
ՈՐ Է ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆՑ· ՈՐ ԵԲՐԱՅԵՑԵՐԷՆ ԱՍԻ ՍԻՐ ՀԱՍԻՐԻՄ·

Գլուխ Առաջներորդ ։

Հարսն ասէ ։

ՀԱՄԲՈՒ- 1
ՐԵՍՑԷ ԶԻՍ
'ի համբուրից բե
րանոյ իւրոյ ։
վասնզի բարի են
ստինք քո քան ըզ
գինի ։ *Եւ հոտ 2
իւղոց քոց քան
զամենայն խունկս ։ իւղ թափեալ է
անուն քո ․ վասն այնորիկ օրիորդք սի
րեցին զքեզ ։ *Եւ ձգեցին զքեզ՝ զհետ 3
քո 'ի հոտ իւղոց քոց ընթասցուք ։
Օրիորդացն պատմէ հարսն վասն փեսային՝ զոր
ինչ շնորհեաց նմա ։ Տարաւ զիս արքայ 'ի
սենեակ իւր ։ Հարսին պատմեալ Օրիոր-
դացն ․ նոքա ասեն ։ Ցնծասցուք և ու-
րախ լիցուք 'ի քեզ ։ սիրեսցուք զստինս
քո քան զգինի ։ Օրիորդքն փեսային բար
բառին զնոսա հարսինն ։ Ուղղութիւն սի-
րեաց զքեզ ։ Հարսն ասէ ։ *Սեաւ եմ 4
ես և գեղեցիկ դստերք Եհմի ․ իբրև
զվրանսն կեդարու ․ և իբրև զխորանսն
սողոմոնի ։ *Մի՛ հայիք յիս ․ զի ես եմ 5
սևացեալ ։ վասնզի խեթիւ հայեցաւ
յիս արեգակն ։ որդիք մօր իմոյ մար-
տեան ընդ իս ․ և եդին զիս պահապան
յայգեստանի ․ զի զայգին իմ ոչ պա-
հեցի ։ Յփեսայն հարսն ասէ ։ * Պատմեա՛ 6
ինձ ․ զոր սիրեաց անձն իմ ։ ու՞ր հով-
ուե՞ս ․ ու՞ր հանգուցանես 'ի միջօրէի ։
մի՛ գուցէ լինիցիմ իբրև զընկեցեալն
'ի հօտս ընկերաց քոց ։ Փեսայն ցհարսն
ասէ ։ * Եթէ ոչ ճանիցես զանձն քո 7
գեղեցիկդ 'ի կանայս ։ ել դու զհետ
դարշապարացն հօտից , և արածեա՛
զուլս քո 'ի վրանս հովուաց ։ Դարձեալ
8 փեսայն ասէ ։ * Ձիոյն իմոյ 'ի կառսն
փարաւոնի նմանեցուցի զքեզ մերձա-
9 որ իմ ։ Օրիորդքն ցհարսն ասեն ։ * Ըան
զի գեղեցկացան ծնօտք քո իբրև ըզ
տատրակի ։ պարանոց քո իբրև զմա-
10 նեակ ։ *Նմանութիւն ոսկւոյ արասցուք
զքեզ՝ հանդերձ կիտուածովք արծա-
11 թոյ ։ * Մինչև արքայ 'ի գիրկս իւր
ընկալցի զքեզ ։ Հարսն ցիւր անձն ․ և ցփե
սայն ասէ ։ Նարդոս իմ բուրեաց զհոտ
12 իւր ։ *Ծրարս ստաշխին եղբօրորդին
իմ ինձ ։ 'ի մէջ ստեանց իմոց հանգի-
13 ցէ ։ *Ողկոյզ ծաղկեալ եղբօր որդին
իմ ինձ ։ 'ի մէջ այգեստանեացն են-
14 գադդայ ։ Փեսայն ցհարսն ասէ ։ *Ահաւա
սիկ ես գեղեցիկ մերձաւոր իմ ։ Ահա
ւասիկ ես գեղեցիկ ․ աչք քո աղաւնոյ ։
15 Հարսն ցփեսայն ասէ ։ *Ահաւադիկ ես
գեղեցիկ եղբօրորդի իմ, և վայելուչ ։
առ դահոյս մեր հովանաւորք ։
16 *Գերանք տանց մերոց մայրք ։ դարա
ւանդք մեր նոճիք ։

Գլ ։ Բ ։

1 Փեսայն ցհարսն յաղագս անձին իւրոյ ասէ ։

Ես ծաղիկ դաշտաց՝ և շուշան հով
2 տաց ։ *Իբրև շուշան 'ի մէջ փշոց ․
այնպէս է քոյր իմ 'ի մէջ դստերաց ։
3 Հարսն ցփեսայն ասէ ։ *Իբրև խնձոր 'ի
փայտս անտառի, այնպէս է եղբօրոր-
դին իմ 'ի մէջ ուստերաց ։ ընդ հովա
նեաւ նորա փափագեցի՝ և նստայ ։ և
պտուղ նո՛ քաղցր է 'ի կոկորդի իմում ։
4 Յօրիորդսն հարսն ասէ ։ *Մուծէք զիս 'ի
տուն գինւոյ ։ կարգեցէ՛ք 'ի վերայ իմ
զսէր ։

զսէր ։ * Հաստատեցէք զիս իւղովք ։ 5
հաւաքեցէք յիս խնձորս ։ վ՞ զի խան_
դակաթ եմ ես սիրով ։ * Ահեակ նո_ 6
'ի ներքոյ րա 'ի վերայ գլխոյ իմոյ ։ և աջ նորա
գլխոյ պատեսցէ զինև ։ Հարսն ցօրիորդսն ասէ ։
* Երդմնեցուցանեմ զձեզ դստերք 7
երուսաղէմի 'ի զօրութիւնս և յուժգնութիւնս
անդաստանի ։ եթէ յարուցիցէք , զար
թուսջիք զսէրն՝ մինչև կամեսցի ։
Եղբօրն դստերն Փեսային ասէ ։ * Ձայն եղ 8
բօր որդւոյ իմոյ ։ ահաւասիկ սա եկն
վազելով 'ի վերայ լերանց՝ խայտալով
'ի վերայ բլրոց ։ * Նման է եղբօր որ_ 9
դին իմ այծեմանն ․ կամ որթուց եղանց
'ի վերայ լերանց բեթելայ ։ Հարսն նշան
տայ Օրիորդացն ցՓեսայէն, և ասէ ։ Ահաւա
սիկ սա եկաց յետուստ որմոյն մերոյ ։
յառեալ ՟Է պատուհանսն ․ հայեցեալ
ընդ վանդակապատսն ։ * Պատասխա 10
նի տայ եղբօրորդին իմ ինձ՝ և ասէ ։
արի , եկ՝ մերձաւոր իմ ․ գեղեցիկ իմ ․
աղաւնի իմ ։ * Վասն զի ահա ձմեռն 11
եանց ։ անձրևք անցին , և գնացեալ
մեկնեցան ։ * Ծաղիկք երևեցան յերկ 12
րի ։ ժամանակ յատանելոյ հասա ։ ձայն
տատրակի լսելի եղև յերկրի մերում ։
* Թզենի ընձիւղեաց զբողբոջ իւր ։ 13
այգիք մեր ծաղկեցան՝ և ետուն ըզ
հոտս իւրեանց ։ արի ․ եկ՝ մերձաւոր
իմ ․ գեղեցիկ իմ ։ * Աղաւնի իմ ․ եկ 14
ընդ հովանեաւ վիմին ․ մերձ առ նա_
խապարիսպն ։ ցո՛յց զդէմս քո ․ և լսելի
արա՛ ինձ զբարբառ քո ։ վ՞ զի ձայն
քո քաղցր է՝ և դէմք քո գեղեցիկ ։
Յօրիորդսն Փեսային ասէ ։ * Կալարո՛ւք մեզ 15
աղուեսունս փոքունս ․ զապականիչս
այգեաց ։ և այգիք մեր ծաղկեսցին ։
Հարսն ասէ ։ * Եղբօր որդին իմ ինձ՝ և 16
ես նմա ։ որ հովուէն 'ի մէջ շուշանաց ։
* Մինչև տիւն շնչեսցէ ․ և շարժեսցին 17
ստուերք ։ դարձի՛ր՝ նմանեա՛ց եղբօրոր
դի իմ այծեմանն ։ կամ որթուց եղանց
'ի վերայ լերանց խնկաբերաց ։

ԳԼ ։ Գ ։

Յանկողնի իմում 'ի գիշերի խնդրե 1
ցի, զոր սիրեաց անձն իմ ․ խնդրե
ցի զնա՝ և ոչ գտի ։ կոչեցի զնա՝ և ոչ ետ
ինձ զձայն ։ * Յարեայց՝ և շրջեցայց 2
՟Է քաղաքն 'ի փողոցս և 'ի հրապարակս՝
և խնդրեցից՝ զոր սիրեաց անձն իմ ։
խնդրեցի զնա՝ և ոչ գտի ։ կոչեցի զնա՝
և ոչ ետ ինձ զձայն ։ * Գտին զիս պա_ 3
հապանքն ․ որք շրջէին ընդ քաղաքն ։
Հարսն Փեսային ցպահապանսն քաղաքին ասէ ։
ցպահա_ Մի թէ՝ զոր սիրեաց անձն իմ տե_
պանսն սէք ։ * Իբրև փոքր ինչ անցի ընդ նս ․ 4
գտի զոր սիրեաց անձն իմ ։ Կալեալ

ցՓեսային ասէ հարսն ։ Կալայ զնա ․ և ոչ
թողից զնա՝ մինչև տարայց զնա 'ի
տուն մօր իմոյ ․ և 'ի սենեակ յղացե_
լոյն զիս ։ Օրիորդսն երդմնեցուցանէ երէ
5 որդ անգամ հարսն՝ և ասէ ։ * Երդմնեցու
ցանեմ զձեզ դստերք երուսաղէմի 'ի զօրութիս
և յուժգնութիս անդաստանի ։ եթէ
յարուցիցէք, զարթուսջիք զսէրն, մինչև
կամեսցի ։ Փեսային վասն հարսին ասէ ։
6 * Ո՞վ է սա՝ որ ելանէ յանապատէ՝ իբ_
րև զստեղն ծխոյ խնկեալ ։ զմուռս և
կնդրուկ յամ փոշեաց իւղեփեցաց ։
7 Օրիորդքն ասացին զայս ինչ ։ * Ահա գա_
հոյք սաղոմոնի վաթսուն զօրաւորք
շուրջ զնովաւ 'ի զօրաւորացն իէլի ։
8 * Ամենեքեան ունին զսուր՝ ուսեալք
զպատերազմ ։ այր իւրաքանչիւր զսուր
իւր 'ի վ՟ր ազդեր իւրոյ 'ի զարհուրա_
9 նաց գիշերոյ ։ * Գահաւորակ արար
իւր արքայ սաղոմոն 'ի փայտից լիբա
10 նանու ։ * Զսիւնսն արար արծաթե_
ղէնս ։ և զյենարանն ոսկեղէնս ։ և զխա
րիսխն ծիրանի ։ և զմէջն ականակապ
տարածեալ զսէր 'ի դստերացն երուսաղէմի ։
11 * Ելէք՝ և տեսէք դստերք սիոնի յար_
քայն սաղոմոն զպսակն ․ որով պսա_
կեաց զնա մայր իւր յաւուր փեսայու
թեան իւրոյ ․ և յաւուր ուրախութեան
սրտի նր ։ Փեսային ընդ հարսն ասէ ։

ԳԼ ։ Դ ։

1 Ահա ես գեղեցիկ մերձաւոր իմ ։
Ահա ես գեղեցիկ՝ աչք քո աղաւն
ւոյ բաց 'ի լռութենէ քումմէ ։ վարսք
քո իբրև զհօտանս այծից ․ որք երևե_
2 ցան 'ի գաղաադէ ։ * Ատամունք քո
իբրև զերամակս կտրելոց ։ որք ելա_
նեն 'ի լուացեաց ։ ամենեքեան երկուո
3 րիք՝ և անորդի ոչ գոյ 'ի նոսա ։ * Իբրև
լար կարմիր՝ են շրթունք քո ։ և խօսք
քո գեղեցիկք ։ իբրև կեղև նռան այտք
4 քո՝ բաց 'ի լռութենէ քումմէ ։ * Իբրև
զաշտարակն դաւթի պարանոցք քո ։ որ
շինեալ է 'ի թալպիօթ ։ հազար վահան
կախեալ են 'ի նմա ․ և ամ նետք զօրաւ
5 որաց ։ * Երկու ստինք քո իբրև զեր_
կուս ուլս այծեմանն ․ որք արածին 'ի
6 շուշանս ։ * Մինչև տիւն ծագեսցի ․ և
ստուերքն շարժեսցին ։ գնացից ես ա_
ռանձինն 'ի լեառն զմռսոյ՝ և 'ի բլուր
7 կնդրկի ։ * Ամենևին գեղեցիկ ես մեր
ձաւոր իմ ․ և արատ ինչ ոչ գոյ 'ի քեզ ։
8 * Եկ 'ի լիբանանէ հարսն ․ եկ 'ի լիբա
նանէ ։ եկեսցես՝ և անցցես 'ի սկզբան
հաւատոյ՝ 'ի գլխոյ սանիրայ և հերմո_
նի ։ 'ի մորեաց առիւծուց ․ և 'ի լերանց
9 ընձուց ։ * Սրտացուցեր զմեզ քոյր իմ
հարսն ․ սրտացուցեր զմեզ միովակամբ
քով ․

քով. և միով քառամանեկաւ պարանո
ցի քոյ: * Օ՜ի գեղեցկացան ստինք քո 10
քոյր իմ հարսնացի գեղեցկացան ստինք
քոյ 'ի գինւոյ: և հոտ հանդերձից քոց
քան զամ խունկս: *Մեղր կաթեցու 11
ցանեն շրթունք քո՝ քոյր իմ հարսն:
մեղր՝ և կաթն 'ի ներքոյ լեզուի քոյ.
և հոտ հանդերձից քոց իբրև զհոտ
կնդրկի: * Պարտէզ փակեալ քոյր իմ 12
հարսն: պարտէզ փակեալ և աղբիւր
կնքեալ: *Առաքումն քո դրախտ նռ_ 13
նենեաց հանդերձ պտղօք ծառոց՝ ծա
ղիկ հանդերձ նարդոսիւ: *Նարդոս՝ 14
և քրքում. եղէգն՝ և կինամոմոն. հան
դերձ ամենայն փայտիւք լիբանանու:
զմուռս և հալուէ. հանդերձ ամ ա_
ռաջնովք իւղովքն: * Աղբիւր պար_ 15
տիզաց՝ ջրհոր ջրոյ կենդանւոյ՝ հոսե_
ցելոյ 'ի լիբանանէ: Հարսն ասէ: *Արի 16
հիւսիս. և եկ հարաւ. շնչեա՛ 'ի պար_
տէզ իմ. և բուրեսցին խունկք իմ:

Գլ: Ե:

Հարսն աղաչէ զփեսայն՝ և ասէ:

1 Եջցէ եղբօր որդին իմ 'ի պարտէզ
իւր: և կերիցէ զպտուղս ծառոց
իւրոց: Փեսայն ցհարսն ասէ: Մտի 'ի
պարտէզ իմ հարսն: կթեցի զմուռս
հանդերձ խնկօք իմովք: կերի զհաց
իմ մեղու իմով: արբի զգինի իմ կա
թամբ իմով: Կերայք մերձաւորք իմ.
և արբէք: արբեցարուք եղբօրոր_
դեակք իմ: *Ես ննջեմ. և սիրտ իմ 2
արթուն կայ: Հարսն զփեսայէն բաղ
խել զդուռն: Ձայն եղբօրորդւոյ իմոյ
բաղխէ զդուռն: Փեսայն յայնէ հարսին:
Բաց ինձ քոյր իմ. մերձաւոր իմ. ա_
ղաւնի իմ. կատարեալ իմ: վասն զի
գլուխ իմ լցաւ ցօղով: և վարսք իմ
տարափով գիշերոյ: Հարսն ասէ:
*Մերկացայ զպատմուճան իմ. զի_ 3
արդ զգեցայց զնա: լուացի զոտս իմ.
զիարդ աղտեղեցից զնա: * Եղբօրոր 4
դի իմ յառեաց զձեռն իւր ընդ ծա_
կոյցն. և որովայն իմ խռովեցաւ 'ի նա:
*Յարեայ ես 'ի բանալ եղբօրորդւոյ 5
իմոյ: Ձեռք իմ կաթեցուցին զմուռս.
և մատունք իմ լցան զմռսով: * Ի վե՞ր 6
դրաց փականակին: բացի եղբօրորդ
ւոյ իմոյ: եղբօրորդին իմ էանց՝ և հո
գի իմ ել ընդ բանի նորա: խնդրեցի
զնա՝ և ոչ գտի: կոչեցի զնա՝ և ոչ լու
աւ ինձ: * Գտին զիս պահապանքն՝ 7
որք շրջէին 'ի քաղաքին: հարին՝ և վի
րաւորեցին զիս. առին զխլայն իմ յի_
նէն պահապանք պարսպաց: * Երդ_ 8
մնեցուցանեմ զձեզ դստերք Եէմի՝ 'ի
զօրութիւն և յուժգնութիւն անդաստա_
նի: եթէ գտանիցէք զեղբօրորդին իմ,
պատմեսջիք նմա. եթէ խանդակաթ
եմ 'ի սէր քո: Դստերք Եէմ. և պահա_
պանք պարսպաց հարցանեն զհարսն:
9 * Զի՞նչ է եղբօրորդին քո յեղբօրոր
դիս՝ գեղեցիկդ 'ի կանայս: զի՞նչ է եղ
բօրորդին քո յեղբօրորդեաց. զի այդ_
պէս երդմնեցուցանես զմեզ: Հարսն
նշան տայ զեղբօրորդւոյն՝ զինչ ոք էր. և նա
10 ասէ: *Եղբօրորդին իմ սպիտակ է՝ և
կարմիր՝ ընտրեալ 'ի բիւրուց:
11 *Գլուխ նորա ոսկւոյ կեփազեայ. վարսք
նորա կուածոյք սեաւ իբրև զագռաւ:
12 *Աչք նորա իբրև զաղաւնիս լուացեալ
կաթամբ. նստեալ 'ի լիութենէ ջուրց:
13 *Ծնօտք նորա իբրև զտաշտս խնկոց
իւղեփեցաց բուրեալք զանուշահոտու
թիւն: շրթունք նորա շուշանք՝ բղխեն
14 զմուռս լիութեան: *Ձեռք նորա ճախարա
կեայք ոսկեղէնք. լցեալ ականբք
թարսսայ: որովայն նորա տախտակ
փղոսկրեայ ականակապ՝ 'ի քարանց
15 շափիւղայ: *Սրունք նորա սիւնք կճեայք:
հաստատեալք 'ի վերայ ոսկի խարս_
խաց: տեսակ նորա որպէս լիբանան. ընտ
16 րեալ իբրև զմայրս: *Կոկորդ նորա լի
քաղցրութեամբ: և ամենևին ցանկալի:
այն է եղբօրորդին իմ. և այն մերձաւ
որ իմ դստերք Եէմի: Հարցանեն դստերք
17 Եէմ՝ ուր էանց եղբօրորդի նորա: * Ո՞ւր
գնաց եղբօրորդին քո գեղեցիկդ 'ի կա
նայս. ո՞ւր դիտեաց եղբօրորդին քո՝ և
խնդրեսցուք զնա ընդ քեզ:

Գլ: Զ:

Պատասխանի տուեալ ասէ:

1 Եղբօրորդին իմ էջ 'ի պարտէզ
իւր 'ի տաշտս խնկոց: հովուել 'ի
բուրաստանս՝ և ժողովել զշուշանս:
2 * Ես եղբօրորդւոյ իմոյ՝ և եղբօրոր_
դին իմ ինձ. որ հովուէն 'ի մէջ շուշա
3 նաց: Փեսայն ընդ հարսն ասէ: * Գեղե_
ցիկ ես մերձաւոր իմ. իբրև զանուշա_
հոտութիւն. գեղեցիկ ես իբրև զԵէմ.
4 ահ հիացումն կարգեալ: *Դարձո՛ զաչս
քո առաջի իմ. վասն զի դոքա ընդոստու
ցին զիս: վարսք քո իբրև զերամակս
այծից՝ որք երևեցան 'ի գաղաադէ:
5 *Ատամունք քո իբրև զերամակս կտ
րելոց. որք ելանեն 'ի լուացեալ: ամե_
նեքեան երկուորիք են. և անորդի ոչ
6 գոյ 'ի նոսա: *Իբրև զլար կարմիր՝ են
շրթունք քո: և խօսք քո գեղեցիկք:
իբրև զկեղև նռան այտք քո՝ բաց 'ի
7 լռութենէ քումմէ: * Վաթսուն են թա
գուհիք. և ութսուն հարճք. և օրի_

որդք

որդք՝ որոց ո՛չ գոյ թիւ : *Մի է աղաւ_ 8
նի իմ. կատարեալ իմ. մի է մօր իւրոյ՝
ընտրեալ ծնողին իւրոյ : տեսին զնա
դստերք՝ և երանեցին նմա : թագու_
հիք՝ և հարճք գովեցին զնա : Դստերքն
և Երուսաղեմացիքն տեսին զհարսն, և երանեցին նմա :
*Ո՞վ է սա՝ որ երևեալս է իբրև զա_ 9
ռաւօտ. գեղեցիկ ո՛պ զլուսին. ընտիր
իբրև զարեգակն. իբրև զհիացումն
կարգեալ : Փեսայն ընդ հարսն ասէ :
*Ի պարտէզս ընկուզաց իջի հայել՝ի 10
յարմտիս ուղխից. տեսանել թէ ծաղ_
կեալ իցէ որթն. թէ ծաղկեալք իցեն
նռնենիք : Հարսն չքնաւոյն ասէ : *Անդ 11
տաց քեզ զստինս իմ, ո՛չ գիտաց անձն
իմ : եդ զիս իբրև զկառսն ամինադա_
բայ : Դստերք և Երուսաղեմացիքն ցհարսն ասեն :
*Դարձիր՝ դարձիր սուլամացիդ. դար_ 12
ձիր՝ դարձիր՝ և տեսցուք 'ի քեզ :

ԳԼ: Է:

Ցդստերսն՝ և ցԵրուսաղեմացիսն փեսայն ասէ :

Զի՞նչ տեսանիցէք 'ի սուլամացիդ. որ 1
եկեալ է իբրև զպարս բանա_
կաց : զի գեղեցկացան գնացք քո կօշ_
կօք դուստր նադաբայ : յարմարումն
բարձից քոց նմանութի ուլանց յեռե_
լոց՝ գործոց ձեռաց արուեստաւորի :
*Պորտ քո թակոյկ ձուլարակեայ : 2
ո՛չ նուազեալ 'ի գինւոյ խառնելոյ :
որովայն քո՝ ո՛պ զշեղջ ցորենոյ փա_
կեալ շուշանաւ : *Երկու ստինք քո՝ 3
իբրև երկուս ուլս երկուորիս այծե_
մանս : *Պարանոց քո՝ իբրև զաշտա_ 4
րակ փղոսկրեայ : աչք քո իբրև զծովս
եսեբոնի 'ի դրունս դստերաց բազմաց :
ռնգունք քո իբրև զաշտարակն լիբա_
նանու. որ դիտէ 'ի դէմս դամասկոսի :
*Գլուխ քո 'ի վերայ քո իբրև զկարմե_ 5
ղոս : հիւսք գլխոյ քո ո՛պ ծիրանի թա_
գաւորի : թագ 'ի գլուխ յընթացս
ասպարիզաց : *Քանզի գեղեցկա_ 6
ցար՝ և զի հեշտալի եղեր : սէր 'ի փափ_
կութեն քում : *Նմանեցաւ մեծու_ 7
թի քո արմաւենւոյ. և ստինք քո ողկու_
զաց : *Ասացի՝ ելից 'ի վ̃ր արմաւեն_ 8
ւոյն՝ կալայց զբարձրութէ նր̃. և եղի_
ցին ստինք քո իբրև զողկոյզ որթոյ :
և հոտ ռնգաց քոց իբրև զխնծոր :
*Եւ կոկորդ քո իբրև զգինի ազնիւ : 9
երթալ ընդ եղբօրորդւոյ իմոյ յուղ_
ղութի : բաւական լեալ շրթամբք
իմովք՝ և ատամամբք : *Ես եղբօր_ 10
որդւոյ իմոյ՝ և առ իս դարձ նորա :
*Եկ եղբօրորդի իմ, ելցուք յանդաս_ 11
տան. հանգիցուք 'ի գեօղս : *Կան_ 12
խեսցուք յայգիս. տեսցուք՝ թէ ծաղ_
կեալ իցէ որթն՝ ծաղկեալ իցէ նռան :
ծաղկեալք իցեն նռնենիք : անդ տաց
13 զստինս իմ քեզ : *Մանրագորք ետուն
զհոտս իւրեանց : առ դուրս մեր ա̃մ
մրգաբերք : նոր առ հնովն. զոր ես
ինձ մայր իմ. պահեցի քեզ եղբօրոր_
դի իմ :

ԳԼ: Ը:

1 Ո՞վ տայցէ քեզ եղբօրորդի իմ, դիեալ
զստինս մօր իմոյ : գտեալ զքեզ
արտաքոյ՝ համբուրեցից՝ և ո՛չ անգոս_
2 նեսցես զիս : *Առեալ ածից զքեզ 'ի
տուն մօր իմոյ՝ և 'ի սենեակ յղացե_
լոյն զիս. արբուցից քեզ 'ի գինւոյ իւ_
ղադործաց. յօշարակէ նռնենեաց ի_
3 մոց : *Ահեակ նր̃ ընդ գլխով իմով.
4 և աջ նր̃ պատեսցի զինև : *Երդմնե_
ցուցանեմ զձեզ դստերք եմ̃ի 'ի զօ_
րութիւ՝ և յուժգնութիւ անդաստա_
նի : եթէ յառնիցէք՝ զարթուցիք
զսէրն՝ մինչև կամեսցի : Դստերքն և Երու_
5 սաղեմացիքն ասեն : *Ո՞վ է սա՝ որ ելանէ
սպիտակացեալ. յեցեալ յեղբօրորդին
իւր : Փեսայն ցհարսն ասէ : 'Ի ներքոյ խն_
ձորոյ զարթուցից զքեզ : անդ երկ_
նեաց զքեզ մայր քո. անդ երկնեաց՝
6 որ ծնաւ զքեզ : *Դիր զիս իբրև զկն_
նիք 'ի վ̃ր սրտի քոյ. իբրև զմատանի
'ի վ̃ր բազկի քոյ : վ̃զի հզօր է իբրև
զմահ սէր. և խիստ իբրև զդժոխս նա_
խանձ. թևք նր̃ իբրև զթև բոցոյ՝ և
7 հրոյ : *Ջուրք բազումք ո՛չ կարեն շի_
ջուցանել զսէր. և գետք՝ ո՛չ արդելցեն
զնա : եթէ տայցէ այր զա̃մ զկեանս իւր
'ի սէր : արհամարհանօք անդոսնեսցեն
8 զնա : Օրիորդքն ասեն : *Քոյր մեր փոքր՝
և ստինս ո՛չ ունի : զի՞նչ արասցուք քեռ_
մերում. յաւուր յորում՝ պատմեսցի
9 նմա : *Եթէ պարիսպ իցէ՝ շինեսցուք
'ի վերայ նր̃ մարտկոցս արծաթեղէնս :
եթէ դուռն իցէ՝ յօրինեսցուք 'ի նմա
տախտակս մայրս : Հարսն համարձակ և
10 ասէ : *Ես պարիսպ՝ և ստինք իմ իբրև
զաշտարակ : ես յաչս նր̃ իբրև գտեալ
11 խաղաղութի : *Այգի եղև սողոմոնի
'ի բեէղմաւօն. ետ զայգի իւր ցպահա_
պանսն : բերցէ այր իւրաքանչիւր 'ի
պտղոյ իւրմէ հազարս արծաթոյ :
12 *Այգի իմ ինձ առաջի իմ : հազարք
սողոմոնի. և երկերիւրք՝ որոց պահեն
13 զպտուղ նր̃ : Հարսն ասէ : *Որ նստիդ
'ի պարտէզս՝ այլք անսան քեզ : զձայն
14 քո լսելի արա ինձ : *Փախիր եղբօր_
որդի իմ. և նմանեաց այծեմանց.
կամ որթուց եղանց 'ի վերայ լերանց
խնկաբերաց :

Աղօթս գտեալ բանս այս ի Մատենոյն ։
Օրհնօրգքն և Բազմաձայնքն ասեն ։

Բարձրասցի թագաւոր մեր՝ յըշտե
մարանս և 'ի գահոյս մեր ։ Իբրև
արմաւ ոսկեղէն զմուսալից լցցին
տաշտք մեր ։ Դարձցի թագաւոր անդ-
րէն 'ի մանկութիւն ։ Սիրելին 'ի սե_
նեակս մեր՝ երգեսցուք զսէր ։ Փեսայն
աւէ ։ Այս իսկ եմ երգ սաղմոսարանի ։
երգեսցես ընդ ընկերս իմ ։ Երգեսցուք՝
և ուրախ լիցուք ։ Հարսն և դարբներքն . և
օրհնօրգքն ասեն ։ Թագաւոր սիրելի . թէ
պէտ և ծածկեսցաք 'ի տեսլենէ՝ աչք
մեր յիմնաւորք ։ Տէր արար զքեզ ։
հաստատեաց զքեզ ։ պատրաստեաց
զքեզ յարգանդէ ։ Գեղեցիկդ 'ի կա_
նայս . մայր քո ծնցի մարմին անաղ_
խեղծ ։ Առ նոյն՝ յայնմանէ տուչու_
թէ . զի այսպէս ունէր ։

ԳԻՐՔ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ

Գլուխ Առաջներորդ ։

ՍԻՐԵ- 1
ՑԷՔ ԶԱՐ
Գ Թագ. 3. 9. դարութիւն որք
դատէք զերկիր.
Եսայ. 56. 1. խորհեցարուք ըզ
Տէ բարութեամբ. և
միամտութեամբ սրտի
խնդրեցէք զնա ։
‖ 2. Օրէ. * Զի գտանի այնոցիկ՝ որք ոչ փոր_ 2
4. 29. ձեն զնա ։ և երևի, որոց ոչ թերահաւա
2. Մնա. տեն 'ի նմանէ ։ * Զի խորհուրդք 3
15. 2. թիւրք անջատեն յԱյ ։ և զօրութիւն
փորձ՝ յանդիմանէ զանզգամս ։
* Զի յանձն չարարուեստ իմաստու_ 4
թիւն ոչ մտանէ . և ոչ բնակի 'ի մար
‖ Եփե. մնի վարեցելոյ մեղօք ։ * Զի սուրբ հո_ 5
4. 18. և գին իմաստութեան փախիցէ 'ի նենգու
22. թենէ ։ և հեռասցի 'ի խորհրդոց անմը_
տաց ։ և յանդիմանեսցէ 'ի հասանել
‖ Գաղա. 'ի վր անիրաւութեանց ։ * Զի մարդա 6
5. 22. սէր հոգին իմաստութեան ոչ արդարա
ցուցանէ զհայհոյիչսն 'ի շրթանց իւր_
‖ Երե. եանց ։ ‖ զի երիկամանց նորա է Այ վկայ
17. 10. և սրտի նորա տեսուչ ճշմարիտ ։ և լե_
‖ Եսայ. զուի նորա ունկնդիր ։ * Զի հոգի Տն 7
6. 3. ելից զտիեզերս ։ և որ ունի զամ . ունի
զգիտութիւն բարբառոյ ։ * Վն այնո_ 8
որ շշնջէ րիկ՝ որք շշնջեն զանիրաւս՝ ոչ ծած_
կեսցին ։ և ոչ իրաւունք առ նովաւ ա_
ռանց կշտամբութեանց անցցեն ։ * Զի 9
խորհրդոց ամբարշտաց հարց և փորձ
եղիցի . և բանից նորա լուր առ Այ
հասանիցի ։ զի կշտամբութիւն անօրէ_
10 նութեանց նորա է ։ * Զի ունկն նախան_
ձաւորութեան լսէ զամ ։ և շշնջիւն քրթմն_
11 ջմանց՝ ոչ ծածկի ։ * Այսուհետև
զգոյշ լերուք յանօգուտ քրթմնջմնջենէ ։
և 'ի բամբասանաց խնայեցէք զլեզու ։
զի շշնջիւն գաղտնի՝ դատարկ ոչ անց
ցէ ։ և բերան ստախօս սպանանէ զանձն ։
12 * Մի՛ ցանկայք մահու՝ մոլորութեամբ
կենաց ձերոց ։ և մի՛ ձգէք յանձինս
զսատակումն գործովք ձեռաց ձերոց ։
13 * Զի Այ զմահ ոչ արար . և ոչ խն_ ‖ Եզեկ.
դայ ընդ կորուստ կենդանեաց ։ 18. 32.
14 * Քանզի հաստատեաց 'ի լինել զամ ։ և 33. 11.
և 'ի փրկութիւն են գործք աշխարհի ։
և չիք 'ի նոսա դեղ սատակման ։ և ոչ
թագաւորութիւն դժոխոց 'ի ներքոյ երկ_
15 նի ։ * Զի արդարութիւն մշտնջենաւ_
16 որ և անմահ է ։ * Իսկ ամբարիշտք ձե
ռօք՝ և բանիւք կոչեցին զնա առ իւր_
եանս ։ ‖ բարեկամ՝ համարեցան զնա . ‖ [illegible]
և հալեցան ։ և դաշինս կռեցին ընդ 15. 6.
նմա ։ զի արժանի իսկ են բաժանա_
կից լինելոյ նմա ։

Գլ ։ Բ ։

1 Խորհեցան ‖ յանձինս իւրեանց զան ‖ Յոբ.
ուղղայս . և ասեն ։ սակաւ և ցա_ 7. 1. և
ւագին են կեանք մեր ։ և ոչ գոյ բժշ 14. 1.
կութիւն 'ի վախճանի մարդոյ ։ և ոչ ե_ 1. Երբ.
րևեցաւ . որ դարձաւ 'ի դժոխոց ։ 15. 3.

* Զի

* Օ՛ յանկարծակի ինն եղեաք. և յեա 2
այսորիկ լինիցիմք իբրև զչեղեալս ։
զի իբրև զծուխ է շունչ ՚ի յռնգուռնս
մեր. և իբրև զկայծակն՝ բանն ՚ի շարժ
ման սրտի մերոյ ։ * Յորոյ ՚ի հինջանիլն՝ 3
մխիթը լինի մարմինն. և ոգին սփռի
իբրև զօդ թոյլ ։ * Եւ անուն մեր մո- 4
ռասցի ժամանակաւ. և ոչըք յիշատա
կեսցէ զգործս մեր ։ և անցցեն կեանք
մեր իբրև զհետս ամպոյ. և իբրև զշա
մանդաղ յրուիեսցին հալածեալք ՚ի
ձառագայթից արեգական. և ՚ի տա-
ռապս նոր ծանրացեալք ։ * ‖ Օ՛ի անցք 5
ստուերի են կեանք մեր. և չիք խափան
վախճանի մարդոյ. զի կնքեցաւ՝ և ոչք
ե՛ որ դարձուցանէ ։ * ‖ Եկ՛ եկայք՝ 6
և վայելեսցուք ՚ի բարութիս՝ որք կան ։
և վարեսցուք արարածովք՝ զջաղելք
իբրև ՚ի մանկութե ։ * Պէսպէս գի- 7
նեաք՝ և անոյշ իւղոք ընծխցուք ։ մի՛
անցցէ առ մեզ ծաղիկ գարնանոյ ։
*Խոտորիցուք վարդից պսակիցուք՝ մինչ 8
չև թառամեալ իցեն ։ * ‖ Ոք ամե- 9
նեւին անմասն լիցի ՚ի մեծէ ուրախու-
թենէս մերմէ ։ յամ տեղիս թողցուք
նշանակ ուրախութե ։ զի այն է բաժին
մեր. և սոյն վիճակ ։ * Եւ բռնադա- 10
տեսցուք զաղքատն անիրաւութե ։ մի՛
խնայեսցուք յայրին. մի՛ խորշեսցուք ՚ի
քաղմաժամանակեայ ալեաց ծերոյն ։
*Եւ օրինադրութե, բռնութիս մեր 11
եղիցի ։ զի տկարութի անպիտան յան
դիմանի ։ * Դարանակալք լինցուք ար 12
դարոյն. զի դժպհի եղև մեզ և հա-
կառակ կայ գործոց մերոց ։ և նախա-
տինս դնէ մեզ զյանցանս օրինացն ։ և
բամբասէ զմեզ մեղաք մանկութե մե
րոյ ։ * ‖ Խոստանայ ունիլ զգիտութե 13
Եա՛ ։ և որդի Եա՛ զանձն իւր անուա
նէ ։ * ‖ Եւ եղև յանդիմանուի մտաց 14
մերոց ։ * Օ՛ծանր է մեզ և տեսանել 15
զնա ։ զի աննմանք են այլոց կեանք նո՛
և այլազգի շաւիղք նո՛ ։ * Դատին 16
թե համարեցաք նմա ։ և խորշի ՚ի ճա
նապարհաց մերոց՝ ոտն ՚ի պղծութե ։
երանե զվախճան արդարոյ ։ և կոյր
տացեալ կոչէ հայր զԵա՛ ։ * Տեսցուք 17
թե ճշմարիտք իցեն բանք նո՛ ։ և փոր
ձեսցուք զվախճան նո՛ ։ * ‖ Եթե իցէ 18
արդարև որդի Եա՛ պաշտպանեսցէ
նմա ։ և փրկեսցէ զնա Եա՛ ՚ի ձեռաց
հակառակորդաց ։ * ‖ Քննանութիւնք և 19
դանիւք խոշտանկեսցուք զնա՝ զի զսփի
առցուք հեզութե նո՛. և խելամուտ
լինցուք անոխակալութե նո՛ ։ * Ո՛ահու 20
խայտառակութե դատեսցուք զնա ։
եթե լինելի այցելութի նո՛ ՚ի բանից
իւրոց ։ * Օ՛այս խորհեցան՝ և խաբե- 21
ցան ։ զի կուրացոյց զնո՛ չարութի իւր
եանց ։ * ‖ Եւ ոչ ծանեան զխորհուրդս 22
Եա՛ ։ և ոչ վարձուց ակնկալեան սրբու
թե ։ ոչ ընտրեցին պատիւ ոգւոց
անարատից ։ * ‖ Օ՛ի Եա՛ հաստատեաց 23
զմարդն յանեղծութե ։ և ՚ի պատկեր
իւրոյ բարերարութե ստոյր զնա ։
* ‖ Նախանձու բանսարկուին եմուտ 24
մահ յաշխարհ ։ * Եւ փորձեն զնա. որք
նորա վիճակին սակի են ։

Գ։ Գ։

Բայց ոգիք արդարոց ‖ ՚ի ձեռին նո՛ 1
են ։ և ոչ մերձեսցէ ՚ի նոսա մահ ։
* ‖ Թուեցան յաչս անզգամաց՝ թե մե- 2
ռան ։ և համարեցան չարչարանք ելք
նոցա ։ * Եւ գնացն ՚ի միջնէ բեկումն. 3
քայց նոքա են ՚ի խաղաղութեան ։
* ‖ Օ՛ի թէպէտ յաչս մարդկան տան- 4
ջեցան. այլ յոյս նոցա լիե անմահու-
թե ։ * Սակաւիկ ինչ խրատեալք 5
գտցեն զմեծ բարութիս ։ զի Եա՛ փոր
ձեաց զնոսա՝ և եգիտ իւր արժանիս ։
* Իբրև ոսկի ՚ի բովս քննեաց զնոսա ։ 6
և ունի զողջակէզս զոհի ընկալաւ զնո՛,
՚ի ժամանակի այցելութե իւրեանց ։
* ‖ Պայծառասցին և իբրև զկայծակն 7
ընդ եղէգն ընթասցին ։ * ‖ Դատեսցեն զազգս՝ և կալցեն զժողովուրդս. 8
և թագաւորեսցէ նո՛ Տէր յաւիտեան ։
* Յուսացեալք ՚ի նա՝ իմասցին զճշմար 9
տութե ։ և հաւատարիմք սիրով սկիզ
կալցին նմա ։ զի շնորհք և ողորմութե
՚ի վերայ սրբոց նո՛ և այցելութե ՚ի վե
րայ ընտրելոց նորա ։ * ‖ Յակ ամպարիշտք 10
ըստ խորհրդոց իւրեանց ընկալցին զը
պատիժս. որք անհոգեն զարթին զիրաւ
անց. և եղեն ապստամբք ՚ի Տէ։ * Օ՛ի 11
որ զիմաստութե և զկրթսա անարգէ՝
թշուառական է. և ընդունայն է յոյս
նոցա. վաստակք նո՛ անօգուտք. և ան
պիտանք գործք նո՛ ։ * Եւ կանայք նո՛ 12
անմիտք. և չարաբարոյ մանկունք նո՛։
* Եւ անիծեալք ծնունդք նոցա ։ զի 13
երանելի է ամուլ անսրաատ՝ որ ոչ գի-
տաց զանկողնի յանցանաց. ընկալցի
զպտուղ այցելութե ոգւոց ։ * ‖ Եւ ‖ Եսայ. 14
ներքինի՝ որ ոչ գործեաց ձեռօք զանօ 56. 4.
րէնութի. և ոչ խորհեցաւ զՏէ զչա-
րութի. տացի նմա շնորհ ընտիր ըստ
հաւատոցն. և վիճակ յանկալի ՚ի տա-
ճարի Տ՛ն ։ * Օ՛ի ընդ վաստակոց քա 15
րեաց պտուղ փառաւոր է. և արմատ
անսալ չիմաստութե ։ * Որդիք չնա- 16
ցելոց թերակատարք եղիցին և զաւակ
անօրէն անկոչնից՝ սատակեսցի ։
* Եւ եթե երկայնակեացք եղիցին՝ 17
յոչինչ համարեսցին ։ և անարգի ՚ի

վախճանի ծերութիւն նոյ ։ *Եւ եթէ 18
արագ սատակեսցին՝ ոչ կալցին զայլ
եւ ոչ յաւուր յանդիմանութեանն մխիթա
րութիւն ։ *Օի ազգի անիրաւի չարա 19
չար կատարած ։

Գ։ Դ։

Լաւէ անպատակութիւն հանդերձ 1
քաջութիւնք ։ քանզի անմահութիւն
է յիշատակ նորա ։ զի Աստ ճանաչի՝ եւ
՚ի մարդկանէ ։ *Ի հասկ նմա՝ նմանօղ 2
լինի նմա ։ եւ ՚ի մեհենին նորա անձկա
առ նա ։ եւ յաւիտեան պսակաւորս ձե
մեցուցանէ ։ անթառամ նահատակու
թեանն պատերազմի յաղթեալ ։
*Բազմածնունդ բազմութի ամպարշ 3
տաց անպիտան լինին ։ եւ ՚ի փուտ շա
ռասիլաց մի տացի արմատս ՚ի խորս ։
եւ հիմն խախուտ մի՛ հաստատեսցի ։
Ագէի. *Օի թէպէտ ոստոք առ ժամանակ 4
17. 6. մի պակեսցի ։ սակայն զալիքաղիւն
Աստ. կանդալեաքն ՚ի հողմոյ շարժեսցի ։ եւ
7. 27. ՚ի բռնութիւնէ հողմոյ արմատաքի խլես
ցի ։ *Տեկտեսցին շուրջ շառաւիղքն 5
թերակատարք ։ եւ պտուղ նոցա տա
րաժամ անպիտան ՚ի կերակուր ։ եւ յոչ
ինչ պիտանացու ։ *Օի յանօրէնն անկող 6
նոյ որդիք ծնեալք ։ վկայք են չարեաց
ծնողաց իւրեանց ՚ի հարցափորձի իւր
եանց ։ *Իսկ արդարն եթէ հասցի ՚ի 7
վախճանիլ՝ ՚ի հանգստեան եղիցի ։
*Օի ծերութիւն պատուական՝ ոչ բազ 8
մաժամանակեայն է ։ եւ ոչ որ թուով
ամացն չափիցի՝ այլ ալիք իմաստութեի
մարդոյ են ։ *Եւ հասակ ծերութեան 9
Ագէայ. կեանք անարատք ։ *Օի հաճոյ եղեալ 10
11. 5. Աստ ՚ի սիրեցեալ ։ եւ կենդանւոյն ՚ի միջոյ
մեղաւորաց փոխեցեալ ։ *Յափշտակե 11
ցաւ՝ զի մի չարութի ինչ չարչիցէ զիմաս
տութեի իւր ։ կամ նենգութեի պատրի
ցէ զանձն նորա ։ *Օի չարութեի անբըղ 12
գամութեի շլացուցանէ զբարիս ։ եւ չա
ծումն ցանկութեի խոտորէ զմիտս
անմեղս ։ *Կատարեալն ՚ի սակաւուն 13
եղեալ զժամանակս երկայնս ։ *Օի ցան 14
կալի էր Տեառն անձն նորա ։ վասն այնորիկ
տագնապեցաւ ՚ի միջոյ չարեաց ։ իսկ
ժողովուրդք տեսին՝ եւ ոչ իմացան ։ եւ
ոչ եդին ՚ի մտի զայսպիսի ինչ ։ *Զի եթէ 15
իրաւունք Աստ ՚ի վերայ սրբոց իւրոց ։
եւ այցելութի ՚ի վերայ ընտրելոց նորա ։
*Դատապարտէ արդար հանգուցեալ 16
զամբարիշտս կենդանիս ։ եւ մանկուն
վաղվաղակի վախճանեալ՝ զբազմա
մեայ ծերութի անիրաւի ։ *Օի տես 17
ցեն զվախճան իմաստնոյ ։ եւ ոչ՝ խոհ
ցին՝ զինչ խորհեցաւ վասն նորա ։ եւ առ իմ
զգուշացաւ նմա Տէր ։ *Տեսցեն՝ եւ ան 18
գոհասցին զնա ։ այլ զնոքօք Տէր ծի
ծաղեսցի ։ *Եւ եղիցին յետ այսորիկ 19
՚ի կործանումն անպատութեան՝ եւ ՚ի քա
մանս՝ եւ մեռեալս յաւիտենից ։ զի պայ
թուսցէ զնոսա անշշունջս ուռուցեալս ։
եւ շարժեսցէ զնոսա ՚ի հիմանց՝ եւ մինչեւ
խոպառ խոպանասցին ։ եւ եղիցին ՚ի
ցաւս ։ եւ յիշատակ նոցա կորիցէ ։
*Հասցեն ՚ի մեծս ահագին իւրեանց 20
տագնապալից ։ եւ կշտամբեսցեն զնո
յանդիմանն անօրէնութիւնք իւրեանց ։

Դ։ Ե։

Այնժամ արդարն կացցէ բազ 1
մաւ յամարձակութիւն՝ հանդէպ
նեղչաց իւրոց ։ եւ որոց անգոսնեին զը
վաստակս նոքա ։ *Տեսեալ զնա խուճա 2
ցին անհնարին երկիւղիւ ։ եւ զարհու
րեսցին ՚ի վէր աքանչելի փրկութենէ նորա ։
*Եւ զղջասցին ՚ի միտս իւրեանց ։ եւ 3
առ նեղութեէ անձանց յոգւոց հանիլ
ցեն , եւ ասասցեն ։ այս այն այր է՝ զոր
երբեմն մեք ծաղր առնէաք ։ եւ յա
ռակս նախատանաց ։ *Մեք անմիտք Աստ. 3. 2.
զվարս դորա մոլորութեան համարեաք՝
եւ զվախճան դորա անպատութիւն ։
*Օի՝արդ համարեցաւ ընդ որդիս 5
Աստ ։ եւ ընդ սուրբս վիճակ դորա ։
*Արեգն մոլորեցաք ՚ի ճանապարհէն 6
ճշմարտութեան ։ եւ լոյս ողորմութեան ոչ
լուսաւորեաց զմեզ ։ եւ արեգակն ար
դարութեան ոչ ծագեցաւ ՚ի մեզ ։
*Լցաք անօրէնութեամբ , եւ կորստեան շաւղօք 7
լցաք ։ եւ գնացաք ընդ անկոխ անա
պատ ։ զճանապարհն Տեառն ոչ ծանեաք ։
*Օի՝նչ շահ եղեւ մեզ հպարտութեան ։ 8
եւ զինչ մեծութի ամբարտաւանութեանն
իսկ մեզ նպաստաւոր ։ *Անց այն Ամո. 4. 11.
ոմն՝ իբրեւ զստուեր ։ եւ իբրեւ զհամբաւ 29. 15.
առն ընթացեալ ։ *Եւ իբրեւ զնաւ Աիւ. 9.
ահեալ ՚ի վերայ ջուրց կուտակելոյ ։ 2. 5.
զորոյ իբրեւ անցանիցէ՝ ոչ գոյ գտեան Աիմա.
գտանել ։ եւ ոչ զշաւիղս գնացից նորա 30. 19.
՚ի մէջ ալեաց ։ *Կամ իբրեւ զհաւու 11
թռուցելոյ օդս ։ որոյ ոչ գտանին
նշմարանք գնացից՝ բաղխելով մաղլացն բա
պատառեաց զհողմն թեթեւս ։ եւ հեր ընդ
ձեալ բռնութիւնք ընդ ոլորտս մտեալ ։ այն
համբել թեւոցն յառաջադէմ սլանալ ։
եւ յետ այնորիկ ոչ գտանի նշանակ բա
նալոյ նմա ։ *Կամ իբրեւ՝ ինեաք ձգե 12
ցելոյ ՚ի նպատակ ։ կարեալ զօդն վաղ
վաղակի յինքն կարկառեալ առ՝ իշխե
տելոյ զանցս նմա ։ *Այսպէս եւ մեք 13
եղեալք՝ պակասեցաք ։ եւ առաքինու
նշանակ ոչ կարացաք յուցանել ։ բայց
՚ի չարիս մեր մնաքեցաք ։ *Այսպիսիս 14
ասացեն՝ ՚ի դժոխս այնոքիկ ։ ոչք մե
զան ։

Առակ. զանէ : * Զի յոյս ամպարշտի իբրև 15
10. 28. զփոշի յարուցեալ 'ի հողմոյ : և իբրև
և 11. 7. զեղեամն 'ի մրրկէ հալածեալ մանր :
Սաղմ. և իբրև զծուխ մաշեալ 'ի հողմոյ : կամ
1. 5. իբրև զյիշատակ իջաւորի միոյ աւուր
գնացելոյ : * Բայց արդարքն յաւիտեան 16
կացցեն : և 'ի Տէ է վարձք նց : և խնամ
նց 'ի բարձրելոյն : * Վասնայնորիկ ըն 17
կալցին զարքայութեն վայելչութ :
և զթագն գեղեցկութե 'ի ձեռանէ Տն :
զի աջով իւրով հովանի լիցի նոցա : և
բազկաւ իւրով վերակացու եղիցի :
Սաղմ. * Առցէ սպառազինութի զնախանձ 18
17.9. իւր : և վառեսցէ զարարածս իւր առ
'ի խնդրելոյ զվրէժս 'ի թշնամեաց :
Եփես. * Զգեցցի զրահս զարդարութի : և 19
6. 13. դիցէ զսաղաւարտ զդատաստանն ա_
նաչառ : * Առցէ զվահան զսրբութին 20
անյաղթ : * Այլ սրեսցէ զհատու բար 21
կութին 'ի սուսեր : պատերազմեսցի
խառն ընդ նմա և աշխարհս առ անզգ
գամսն : * Գնասցեն նետք կորովիք 'ի 22
փայլատակմանց . ոմ 'ի լայնալիճ աղե_
ղանէ ոստիցեն 'ի նպատակս : * Այլ 'ի 23
քարընկէց բարկութե թափեսցի լիով
կարկուտ : զայրագնեսցի 'ի վերայ նց
ջուր ծովու՝ և գետք ողողեսցեն յանխը
նայ : * Դիմի հարցի նոցա հողմ բռ 24
նութե . և իբրև զմրրիկ հոսեսցէ զնս :
աւերեսցէ զամենայն զերկիր անօրէ_
նութի . և խարդախութի կործանես
ցէ զաթոռս բռնաւորաց :

Գլ. Զ.

Բարեգոյն է իմաստութի քան զարս. 1
և այր հանճարեղ քան զզօրաւոր :
Իմաստ. * Լուարուք թագաւորք . և 'ի միտ ա_ 2
9.18. ռէք : ուսարուք դատաւորք ծագաց
երկրի : * Ունկն դիք՝ որք ունիք զբազ 3
մութի . և պերճացեալ էք 'ի վերայ ամ
Հռով. բոխից ազգաց : * Զի 'ի Տէ տուաւ 4
13.1. ձեզ իշխանութի : և հարստութի 'ի
բարձրելոյն : որ պահանջիցէ զգործս
ձեր . և քննեսցէ զխորհուրդս : * Զի 5
սպասաւորք էք նորա թագաւորութեն :
և ոչ դատէք ուղղութբ : և զի ոչ պա
հեցիք զօրէնս նորա և ոչ գնացիք ըստ
կամացն Այ : * Ահի և տագնապաւ 6
հասցէ 'ի վերայ ձեր : զի դատաստան
անաչառ իշխանաց լինի : * Այլ խառ 7
նիճաղանճն ներելի ողորմութե է :
հզօրք հզօրագոյնս պահանջեսցին :
Բ. Օրէ. * Զի ոչ առնու ակն ամենեցուն 8
10.17. Տէր : և ոչ խորշի 'ի մեծութէ : զի ըզ
2. Մնաց. փոքր՝ և զմեծ՝ ինքն արար : և զմի օրի_
19.7. նակ խնամ ունի ամենեցուն : * Բայց 9
Յոբ. 34 'ի վերայ զօրաւորաց՝ զօրաւոր քննութի
19. հասանի : * Արդ առ ձեզ՝ ով բռունք՝ 10

են բանք իմ : զի ուսանիջիք զիմաստու Սիրաք.
11 թի . և մի սխալիցիք : * Զի որք պա_ 35.15.
հեցին սրբութբ զսրբութի . սրբեսս_ Հռով.
ցին : և որք ուսան զնոսա՝ գտցեն զպա 2.11.
12 տասխանատուութի : * Արդ՝ ցանկա Գաղա.
ցարուք բանից իմոց . փափագեցէք՝ և 2. 6.
13 խրատեսջիք : * Լուսաւոր և անթա_ Եփես.
ռամ է իմաստութի : և դիւրաւ երևի 6. 9.
սիրողաց իւրոց՝ և գտանի խնդրողաց Կողոս.
14 իւրոց : * Հասանի առ ցանկացօղն 3.25.
իւր : առ յառաջագոյն ճանաչելոյ : Գործ.
15 * Որ կանխեսցէ առ նա՝ ոչ վաստակես 10. 34.
ցի : զի դեգերեալ գտցէ զնա առ դուրս 1. Պետ.
16 իւր : * Խոկալ և զմտաւ ածել զնմա 1. 17.
նէ՝ կատարեալ իմաստութի է : և որ
տքնի վասն նորա՝ վաղվաղակի անհոգ
17 լիցի : * Զի ինքն շրջի խնդրել զար_
ժանաւորս իւր : և 'ի շաւիղս երևի նց
քաղցրութբ : և յամ հնարագիտու_
18 թիս պատահի նոցա : * Զի սկիզբն
նորա ճշմարիտ ցանկութի է խրատու
19 աշխարհի : * Այլ խնամ խրատու՝ սէր :
և պահպանութի օրինաց նր՝ գութ :
մտադիւրութի օրինաց նորա՝ հաստա
20 տութի անեղծութե : * Իսկ անեղծու
21 թի, մերձաւոր առնէ Այ : * Ցան_
կութի իմաստութե՝ տանի յարքայու
22 թին : * Արդ՝ եթէ ցանկայք աթո_ Թագաւ.
ռոց՝ և գաւազանաց իշխանութեան . 27. 16:
դէմ անձին քոյ զսուտութի: *Մի՛ պատ 27
կառեցուցես զմեծաւորս քո նանկ_
ման իւրում: *Մի՛ արգելուր զբան 'ի 28
ժամանակի փրկութե: մի՛ թաքուցա_
ներ զիմաստութի քո 'ի գեղեցկութե
զի իմաս_ իւրում: *Զի ներ լեզուաւ իմաստ 29
տութիւն նում արժանաբար ճանաչի. և զգօ_
'ի լեզուաց նութի. և գիտութի. և ուսումն ներ
ճանաչի բանում զգօնացելոյ. և հաստատուն
ներ գործոց արդարութե: *Մի՛ ընդ 30
դէմ ասասցես բանի ճշմարտութե
ամենայն եղանակաւ. և յաղագս սուտ_
թե անուսումնութե քոյ ամաչեա:
*Մի՛ ամաչեսցես խոստովան լինիլ 31
զմեղս քո. և մի՛ ներգևեսցես զքեզ ումե
մարդոյ վասն մեղաց: *Մի՛ ընդդի_ 32
մանար ընդդէմ հզօրի. և մի՛ ջանաս_
ցիս ընդդէմ բաղխման գետոյ:
*Սակս արդարութե մարտիր վշ ան 33
ձին քոյ. և մինչև 'ի մահ ճգնեաց սակս
արդարութե. և Տր պատերազմի փո
խանակ քո ընդ թշնամիս քո: *Մի՛ 34
լինիր շուտափոյթ լեզուաւ քով. և
անշահ և լքեալ 'ի գործս քո: *Մի՛ լի 35
նիր իբրև առիւծ 'ի տան քոյ. կործա_
նող բարեկամի քոյ, և օգտող հնազան
դելոց քոց: *Մի՛ լիցի ձգեալ ձեռն քո 36
առ յառ և առ 'ի տալն կարկամեալ:

ԳԼ: Ե:

Մի՛ ձգտիր առ ստացուածս անիր_ 1
րաւս. և մի՛ ասասցես՝ է ինձ բա
ւական 'ի կեանս: զի ոչինչ օգուտ լիցի
'ի ժամանակի վրէժխնդրութե և պա
տերազմի: *Մի՛ զհետ երթար զօրու 2
թե քով ցանկութե սրտի քոյ: *և մի՛ 3
ասասցես՝ զիարդ կարացի. կամ ո՛վ ոք
զիս նուաճեսցէ վասն արարից իմոց:
զի Տր վրէժխնդիր վրէժխնդրեսցէ:
*Մի՛ ասասցես մեղայ. և զինչ ինձ պա 4
տահեցաւ տրտմական: զի բարձրեալն
է երկայնամիտ հատուցանօղ: *Վասն 5
քաւութե մեղաց մի՛ լինիր թարց տրտ_
մութե: և մի՛ յաւելուցուս զմեղս 'ի
վր մեղաց: *Եւ մի՛ ասասցես. գթու 6
թի Տն մեծ է. բազմութեան մեղաց
‖Ղուկ. իմոց ողորմեսցի: *‖Զի ողորմութի 7
10.6. և բարկութի յայնմանէ փութով մեր
ձաւորին. և 'ի մեղաւորս ակնարկէ
բարկութի նորա: *Մի՛ յապաղեր 8
դառնալ առ Տր. և մի՛ ձգեր յօրէ յօր:
*Զի յանկարծակի եկեսցէ բարկու 9
թի նր. և 'ի ժամանակի վրէժխնդ_
‖Ղուկ. րութե քայքայեսցէ զքեզ: *‖Մի՛ 10
11.28. լինիր զբաղեալ 'ի փարթամութիւնս
անիրաւս. զի ոչինչ օգնեսցեն քեզ
յաւուր պատերազմի և վրէժխնդրու
թե: *Մի՛ հողմակոծեսցես զքեզ ա_ 11
ձէ

մենայնիւ հողմով. և մի՛ գնասցես յամ
ճանապարհ. զի այսպէս մեղաւոր փոր
12 ձի յերկլեզուութե: *Լեր հաստա_
տուն 'ի ճանապարհի Տն. և 'ի ճշմար_
տութե զգօնութե քոյ և իմաստութե.
և հետևեսցի քեզ բան խաղաղութե
13 և արդարութե: *Լեր հեզ առ 'ի լսել
զբան. զի իմասցիս, և համբերձ իմաս
տութե արտաբերեսցես զպատասխա
14 նի ճշմարիտ: *Եթէ գոյ քեզ իմաս_
տութի, պատասխանեա մերձաւորին.
ապա եթէ ոչ, ափ 'ի բերան լիցիս. մի՛
ըմբռնեսցիս 'ի բանս անզգօնս, և
15 պատկառեսցիս: *Պատիւ և փառք 'ի
խօսս զգաստի. իսկ լեզու անխոհա_
16 կանի կործանումն է նորա: *Մի՛
յորջորջեսցիս բանսարկութեամբ. և
լեզուաւ քով մի՛ ըմբռնեսցիս՝ և ամա
17 չեսցես: *Զի 'ի վր գողոյ է ամօթ՝
և զղջումն. և նշաւակութի չարագոյն
'ի վերայ երկլեզուի. իսկ բանսար_
կուի ատելութի և թշնամութիւն՝ և
18 հայհոյութի: *Արդարացո զտրուկն.
և զմեծն նմանապէս:

ԳԼ: Զ:

1 Մի՛ լինիր վասն բարեկամի թշնա
մի մերձաւորին. զի զնախատինս՝
և զթշնամանս ժառանգեսցէ չար. և
ամ մեղաւոր մախացող և երկլեզու:
2 *‖Մի՛ զքեզ հպարտացուցես 'ի խոկ ‖Հռով.
ման անձին քոյ իբրև զցուլ. մի՛ գու_ 12. 16.
ցէ լռեսցի զօրութի քո 'ի ձեռն յիմա Փիլիպ.
3 րութե: *և զտերևս քո կերիցէ. և 2. 3.
զպտուղս քո կորուսցէ. և թողցիս
իբրև փայտ գօսացեալ յանապատի:
4 *Զի անձն չարայոյզ ցրուեսցէ՝ որ
ունի զինքն. և յուրախութի թշնամեաց
տայ զայն. և առբերէ 'ի բաժին ամ
5 բարշտաց: *Բան քաղցր բազմապատ
կէ զբարեկամս. և կակղացուցանէ ըզ
թշնամիս: և լեզու շնորհականու 'ի
բարւոք մարդում առատանայ:
6 *Բազումք խաղաղարարք լիցին քեզ.
և խորհրդակից լիցի քեզ մի 'ի հազա_
7 րաց: *Թէ ստանաս զբարեկամ, 'ի
փորձութե ստացիր զնա. և մի՛ դիւր_
8 աւ հաւատասցես նմա: *Զի է բարե
կամ ըստ ժամանակի իւրում. և ոչ մնա_
9 ցէ յաւուր նեղութե: *Եւ է բարե_
կամ. որ դառնայ 'ի թշնամութի. և
է բարեկամ, որ զատելութի և զկագ՝
զամենայն և թշնամանս յայտնեսցէ:
10 *Եւ է ընկեր սեղանոյ. և ոչ մնասցէ
11 յաւուր հարկաւորութե: *Բարե_
կամ թէ մնասցէ ամրացեալ. եղիցի
քեզ իբրև զհամահաւասար. և 'ի դբա
ցիս քո համարձակաբար գործեսցէ:

*Եթէ խոնարհեցուսցէ զինքն հանդէպ 12
քեզ. և յերեսաց քոց թաքուսցէ զինքն.
զհամաշունչ առասցիս զբարեկամութի
բարի: *'Ի թշնամեաց քոց զատ կաց. 13
և 'ի բարեկամաց զգուշացիր: *Բարե 14
կամ հաւատարիմ հովանաւորութի
հզօր. իսկ որ գտանէ զնա. գտանէ
զգանձ: *Բարեկամի հաւատարմի ոչ 15
ինչ է համեմատութի. և ոչ է արժանի
կշիռ ոսկւոյ և արծաթոյ հանդէպ բա
րութե հաւատոյ նորա: *Բարեկամ 16
հաւատարիմ բժշկականութի կենաց՝
և անմահութե: և որք երկնչին 'ի Տէ
գտցեն զնա: *Որ երկնչի յԱյ՝ հաստա_ 17
րակամ առասցի զբարեկամութի բա
րի. զի ըստ նմա եղիցի բարեկամն:
*Որդեակ, 'ի մանկութե քում ընկա՛լ 18
զուսումն. և մինչև 'ի ծերութի գտցես
զիմաստութի: *Իբրև այն, որ վա_ 19
րէ՝ և սերմանէ՝ մատի՛ր առ նա. և սպա
սեա՛ բարեաց պտղոց նորա:* Զի ներ 20
գործումն սակաւիկ մի աշխատես_
ցիս. և փութով կերիցես 'ի տոհմա_
կանաց նորա: *Զխա՛րդ կարի դժուա 21
րին է հանճար տգիտաց մարդոց. և
ոչ մնասցէ 'ի նմա անմիտն: *Իբրև 22
քարի զօրութի փորձառութի լիցի 'ի
նմա. և մի՛ յամեսցին 'ի բաց ձգել զնա:
*Զի զգօնութի ուսման ըստ անուան 23
նորա է. և ոչ է բազմաց յայտնի: իսկ
որոց ծանօթացեալ է. ներմնայ մինչև
'ի հայեցուածն Այ: *Լո՛ւր ինձ որ_ 24
դեակ՝ և ընկա՛լ զխորհուրդս իմացման.
և մի՛ ի բաց ձգեսցես զխորհուրդ իմ:
*Ա՛րկ զոտս քո յոտնակապս նորա. և 25
յանուրս նորա զպարանոց քո: *Են_ 26
թադրեա՛ զուս քո՝ և բա՛րձ զնա. և մի՛
ծուլասցիս 'ի շղթայից նորա: *Ամե_ 27
նայնիւ՛ հոգւով քով մատի՛ր առ նա.
և ամենայնիւ՛ զօրութբ քով պահեա՛
զճանապարհս նորա: *Հետազօտեա՛ 28
նմա՝ և յայտնեսցի քեզ. և պարփակեա՛լ
մի՛ թողցես զնա: *Զի 'ի վախճանի 29
գտցես զհանգիստ 'ի նմա. և շրջա_
դարձցի քեզ 'ի զուարճութի: *Եւ ե_ 30
ղիցին ոտնակապք նր 'ի պահպանու_
թի զօրութե՝ և խարիսխք առաքինու
թե. և անուրք նր յաթոռ փառաց:
*Զի զեղ կենաց է 'ի նմա. և շղթայ 31
նր կապ փրկութե: *Զվերարկու փա 32
ռաց զգեցցիս զնա. և զպսակ ցնոր_
հաց վերադիցես քեզ: *Որդեակ՝ թէ 33
զգուշասցիս ինձ, ուսցիս. և եթէ հա
մաձայնեսցես զհոգի քո՝ իմաստուն
եղիցիս: *Եթէ խոնարհեցուսցես 34
զունկն քո՝ առընկալցիս զիմացութի.
և թէ սիրեսցես լսել՝ իմաստուն եղի_
ցիս: *‖ Ներ բազմութեան ծերոց 35

'ի վերայ [illegible]

‖ [illegible] 8. 9.

ներբահայեցաց կա՛ց. և իմաստութե
նոցա 'ի սրտէ շարալծեա՛ց. զի զա՛մ
զպատգամս Այ կարասցես լսել. և
առակք գովութե մի՛ փախիցին 'ի քէն:
36 *Եւ՛ թէ տեսցես զոք հանճարեղական
խեա՛ առ նա. և զաստիճանս դրրաց նր
37 մաշեսցէ ոտն քո: *‖ Զմտածութի քո
կա՛լ 'ի հրամանս Այ. և 'ի պատուի_
րանս նորա առաւելապէս հանապա_
զորդեա՛: և նա տացէ քեզ զսիրտ. և
ցանկութի իմաստութե տացի քեզ:

Գլ. Է.

1 Մի՛ գործեր զչար. և զքեզ մի՛ ըմ
2 բռնեսցեն: *'Ի բա՛ց լեր յանի
րաւէ. և մերժեսցին 'ի քէն չարք:
3 *Որդեակ՝ մի՛ սերմաներ զչարիս յա_
կօսս անիրաւութե. և մի՛ հնձեսցես
4 զնոսա եօթնպատիկ: *Մի՛ խնդրեր
'ի Տէ զառաջնորդութի. և ո՛չ 'ի թա
5 գաւորէ զաթոռ պատուոյ: *‖ Մի՛
զքեզ արդարացուսցես առաջի Այ.
քանզի ճանաչող սրտի ինքն է. և հան
դէպ թագաւորի մի՛ կամիր տեսանել
6 իմաստուն: *Մի՛ խնդրեր լինել դա_
տաւոր. եթէ ոչ կարասցես զօրութբ
սաստել անիրաւաց. մի՛ գուցէ զանգի
տիցես յերեսաց հզօրի. և դնիցես ըղ
գայթագղութիւն յիրաւունս քո:
7 *Մի՛ մեղանչեսցես 'ի բազմութի քա
ղաքի. և մի՛ զքեզ արկցես 'ի ժողո_
8 վուրդ: *‖ Եւ մի՛ կապեսցես զմեղս
երկպատիկս. զի և ո՛չ 'ի միում եղիցիս
9 անպարտ: *Մի՛ լինիր կարճամիտ նոդ
10 ւոց քում: *Աղօթել՝ և առնել զողոր
11 մութի մի՛ անտես առներ: *Մի՛ ասի
ցես. 'ի բազմութի ընծայից իմոց հայ
եսցի Ած. և 'ի մատուցանելն իմ Այ
բարձրելոյ ընծայս իմ ընկալցի:
12 *Մի՛ այպանեսցես զմարդ 'ի դառնու
թե անձին. ‖ զի է՝ որ խոնարհեցուցա
նէ՝ և բարձրացուցանէ՝ շրջահայեացն
13 Ած: *Մի՛ սերմաներ զստութի հա
կառակ եղբօր քոյ. և ո՛չ 'ի բարեկամի
14 նմանապէս արասցես: *Մի՛ կամիր
ստել զա՛մ զստութի. զի հանապա_
15 զորդութի նր ոչ է բարի: *Մի՛ ճո_
խաբան լինիր ներ բազմութե ծերոց.
և մի՛ կրկնեսցես զբան յաղօթս քո:
16 *Մի՛ ատեր զգործս աշխատանաց. և
զերկրագործութի զստեղծեալ 'ի բարձ
17 րելոյն: *Մի՛ զքեզ 'ի թիւ արկցես
18 ներ բազմութե անխրատից. *Յիշեա՛
զբարկութի. քանզի ոչ յամեցուսցէ:
19 *Խոնարհեցո՛ յոյժ զհոգի քո. քանզի
վրէժխնդրութի մարմնոյ ամբարշտի
20 հուր և որդն: *Մի՛ վրիպիր 'ի բարե_
կամէ՝ ընդ դրամոյ փոխանակելով. և

‖ [illegible] 1. 2. — 142. 2. — [illegible] 7. 21. — [illegible] 9. 2. 10. — [illegible] 18. 11. — ‖ [illegible] 12. 3. — ‖ 1 [illegible] 2. 7.

ոչ զեղբայր սիրելի վասն ոսկւոյ անգոս
նեսցես ։ *Մի՛ մեկնիր 'ի կնոջէ զգօնէ՝ 21
և բարւոյ․ ընդորոյ վիճակեալ ես եր_
կիւղիւն Տ՟ն ։ զի շնորհ ամօթխածու
‖Ղեւ. թեն նորա գերքան զոսկի ։ *‖Մի՛ զայ 22
19. 13. րացուսցես զծառայ ճշմարտութ՟բ գոր
ծունեայ ․ և ոչ զվարձկան ․ որ տուեալ
է զանձն իւր ։ *Ծառայ զգօն լիցի 23
քեզ սիրելի իբրև անձն քո ․ մի՛ զրկես
ցես զնա յազատութէ ․ և մի՛ չքաւոր 'ի
բաց թողցես զնա ։ *Գրաստք գո՛ն 24
քեզ՝ դարմանեա՛ զնոսա ․ և թէ են
պիտանիք՝ մնան առ քեզ ։ *Որդիք 25
գո՛ն քեզ՝ խրատեա՛ զնոսա ․ և նուա_
ճեա՛ զնոսա 'ի մանկութէ նոցա ։
*Դստերք գո՛ն քեզ՝ պահեա՛ զմարմինս 26
նոցա ․ և մի՛ ցուցցես զդէմ քո զուարթ
նոցա ։ *Տուն տո՛ւր զդուստր քո ․ և 27
զմեծ գործ առնիցես ․ և առն հան_
ճարեղի տո՛ւր զնա ։ *Կին եթէ է քեզ 28
իբրև անձն քո՝ մի՛ հաներ զնա ․ և ա_
տելւոյ , զքեզ մի՛ հաւատասցես ։
‖Տոբ. * Բոլորով սրտիւ քով ‖ պատուեա՛ 29
4. 3. զհայր քո ․ և զհեծութիւն մօր քոյ մի՛ մո_
ռանար ։ *Յիշեա՛ զի եթէ 'ի ձեռն նոցա 30
ծնեալ ոչ եղիցիս ․ ոչ ևս լեալ լիցիս ․
և հատո՛ նոցա՝ զխարդ և նոքա քեզ ։
*Բոլորով անձամբ քով երկի՛ր 'ի Տ՟է ․ 31
և զքահանայս նորա սուրբ արա ։
* Յամենայնիւ զօրութ՟բ քով սիրեա՛ 32
զնա՝ որ զքեզ արար ․ և զպաշտօնեայս
‖2. Օրէ. նորա մի՛ 'ի բաց թողցես ։*‖Պատուեա՛ 33
12. 18. զՏ՟ր 'ի բովանդակէ անձնէ քումմէ ․
և զպատիւ դի՛ր քահանայից ․ և քաւեա՛
զքեզ հանդերձ բազկօք ։ *Տո՛ւր նոցա 34
‖Ղեւ. զմասն ․ ‖որպէս պատուիրեալ է քեզ ․
2. 3. առաջաւորութեանց՝ և քաւութեան ․ և յա
‖Թուոց. կամայեն քումմէ քաւեա՛ զքեզ սակաւ
18. 15. ուք ։ *Զտուրս բազկաց քոց ․ և զզոհ 35
սրբագործութեան մատուսցես Տ՟ն ․ և
զառաջինս սրբոց ։ *Եւ՛ աղքատաց 36
կարկառեա՛ զձեռն քո ․ զի կատարես_
ցի քաւութիւն քո՝ և օրհնութիւն քո ։
*Գոհութիւն տուրք առաջի ամենայնի 37
կենդանւոյ ․ և 'ի մեռելոյ մի՛ արգել_
‖Հռոմ. ցես զշնորհ ։ * ‖ Մի՛ պակասեսցիս 'ի 38
12. 15. մխիթարութէ սգաւորաց ․ և ընդ ող_
‖Մատ. բացողաց ողբեա՛ց ։ *‖ Մի՛ զքեզ յու_ 39
25. 36. լացուսցէ տեսանել զհիւանդս ․ զի
յայսցանէ յանդորրութէ հաստատես
ցիս ։ *Եր ամենեցուն գործոց քոց 40
յիշեա՛ զվախճանս քո ․ և յաւիտեան
ոչ մեղանչեսցես ։

ԳԼ: Ը:

‖Մատ. 25. 25. Մի՛ կադեր ընդ առն հզօրի ․ մի՛ 1
գուցէ անկցիս 'ի ձեռս նորա ։
Գ՛ Թագ. *‖Մի՛ հանդամանակիր ընդ առն մեծա 2
տուն ․ մի՛ գուցէ ընդդէմ քեզ կացուս_
3 ցէ զվէճ ։ *‖ Զի զբազումս կորոյս ‖Առակ.
ոսկի՝ և արծաթ ․ մինչև 'ի սիրտ թա 31. 6.
գաւորաց ներաձգի ․ և դարձուցանէ ։
4 * Մի՛ վիճեսցես ընդ առն լեզուա_
նւոյ ․ և մի՛ դիզեսցես 'ի վերայ հրոյ նորա
5 զփայտ ։ *Մի՛ հաղորդեսցիս ընդ առն
անուսի ․ զի մի՛ չարաբար սակս նախն_
6 եաց քոց խօսեսցի ։ *Մի՛ անտես արաս
ցես զմարդ դարձուցանող զինքն 'ի մե_
ղաց ․ ‖և մի՛ նախատեսցես զնա ․ յիշեա՛ ‖Գաղ.
զի ամենեքեան յապականութեան եմք ։ 6. 1.
7 *‖Մի՛ քամահեր զմարդ ըն ծերու_ 2. Կոր.
թեան իւրում ․ քանզի 'ի մէնջ ծերանան ։ 2. 7.
8 *Մի՛ սակս մահու թշնամւոյ քոյ ուրա ‖Ղեւ.
խանար ․ գիտելով զի ամենեքեան մե 19. 32.
ռանելոց եմք ․ և յուրախութեան ոչ կա
9 միմք գալ ։ *‖ Մի՛ քամահեր զճառս ‖Եր.
հնոց իմաստնոց ․ և յառակս նոցա շրջա 6. 35.
10 գայցիր ։ *Զի 'ի նոցանէ ուսցիս զիմաս
տութիւն ․ և զուսումն զգօնութեան ․ և ծա
ռայել մեծամեծաց առանց տրտունջ
11 ման ։ *Մի՛ զքև անցցէ պատմութի
հնագունից ․ զի և ինքեանք ուսան 'ի
12 հարց իւրեանց ։ *Քանզի 'ի նոցանէ
ուսցիս զիմացուածս ․ և 'ի ժամանա_
կի հարկաւորութեան մարթասցիս տալ
13 զպատասխանի ։ *Մի՛ բորբոքեսցես
զկայծակունս մեղաւորաց առարկե_
լով ընդ նոսա ․ և մի՛ կիզցիս բոցով
14 հրոյ մեղաց նոցա ։ *Մի՛ ներհակ կաց_
ցես յերեսս թշնամանողի ․ զի մի՛ նստցի
իբրև զդարանակալ բերանոյ քոյ ։ ‖Առակ.
15 *‖Մի՛ տար փոխ առն հզօրագունի 29. 4.
քև ․ զի եթէ փոխ տացես՝ իբրև զկո_ *որ տայ փոխ
16 րուսեալ կա՛լ ։ *Մի՛ երաշխաւորես_
ցես 'ի վ՟ր զօրութէ քոյ ․ զի եթէ երաշ 'ի վերայ
խաւորեսցես ․ իբրև զհատուցանող զօրութեան
17 վարկի՛ր զքեզ ։ *Մի՛ դատախազեր քո
ընդդէմ դատաւորի ․ քանզի ըստ որում
18 իրաւ է , դատէ ։*‖Ընդ համարձակի ‖Ծննդ.
մի՛ գնասցես 'ի ճանապարհ ․ մի՛ գուցէ 4. 8.
ծանրացուսցէ զչարս իւր 'ի քեզ ․ զի
ինքն ըստ կամաց իւրոց գնայ ․ և հա
մայն ընդ յիմարութեան նորա կորնչիս ։
19 *‖Ընդ բարկացողի մի՛ առնիցես զկագ ․ ‖Առակ.
և ընդ համարձակի մի՛ երթիցես յանա 22. 24.
պատ ․ քանզի իբրև ոչինչ է առաջի նորա
արիւն ․ և ուրանոր ոչ է օգնականու_
20 թի , լլկեսցէ զքեզ ։ *Ընդ յիմարից
'ի խորհուրդ մի՛ մտաներ ․ զի զոչինչ կա
րեն սիրել ․ եթէ ոչ որք նոցա հաճոյք
21 լիցին ։ *Առաջի օտարի մի՛ արասցես
զխորհուրդ՝ զի ոչ գիտես զինչ ծնանի ։
22 *Մի՛ ամենայն մարդոյ զխորհուրդ քո յայտ
նեսցես ․ մի՛ գուցէ ներբերիցէ զշնորհա
կալութիւն սուտ ․ և քամահիցէ զքեզ ։

ԳԼ. Թ.

Մի՛ մախասցիս ընդ կնոջ գրկի 1
քոյ. զի մի՛ ցուցցէ ՚ի վերայ քո
զչարութիւն գարշ ուսման ։ *Մի՛ տա- 2
ցես կնոջ զզօրութիւն անձին քոյ. զի մի՛
հասցէ ՚ի վերայ զօրութեան քոյ՝ և ամաչես-
ցես ։ *Մի՛ հայեսցիս ՚ի կին բազմա- 3
կամ. մի՛ գուցէ անկանիցիս ՚ի գուբ
նորա ։ *Ընդ երգեցիկս մի՛ կանխեր. զի 4
մի՛ լռեցես զայն. մի՛ գուցէ կորնչիցիս
‖Ծննդ. յաղդուրութեան նորա ։ *‖Ընդ կոյս մի՛ 5
6. 2. պշնուր. մի՛ գուցէ գայթագղեսցիս ՚ի
‖Առակ. գեղ նորա ։ *‖Մի՛ տացես պոռնկուեց 6
5. 2. զանձն քո ներ միում ումեք. զի մի՛ կո-
րուսցես զանձն քո՝ և զժառանգութիւն ։
*Մի՛ շուրջ հայիր ՚ի փողոցս քաղա- 7
քի. և մի՛ մոլորեսցիս ՚ի հրապարակս
‖Մատթ. նորա ։ *‖Դարձո՛ զերեսս քո ՚ի կնոջէ 8
5. 28. պճնելոյ. և մի՛ շուրջ հայեսցիս ՚ի տե-
Ծննդ. սակ օտար ։ *Առ տեսակի կնոջ յո- 9
34. 2. լովք կորեան. և յայսմանէ ցանկու-
2 Թագ. թի՝ իբրև զհուր առկիզցէ ։ *Ամե- 10
11. 4. և նայն կին՝ որ է պոռնկացեալ, իբրև
13. 1. զաղբ ներ ճանապարհում կոխան լի-
ցի ։ *Գեղով կնոջ օտարի բազումք 11
զարմացեալք, խոտեցեալք եղեն. զի
խօսակցութիւն նորա իբրև զհուր առկիզ-
ցէ ։ *Ընդ կնոջ օտարի մի՛ նստցիս 12
ամենևին. և մի՛ ընկողմանեսցիս ընդ
նմա ՚ի վերայ մահճի ։ *Եւ մի՛ վիճես- 13
ցես ընդ նմա ՚ի գինւում. մի՛ գուցէ
խոտորեսցի սիրտ քո ՚ի նա ։ և արեամբ
քով սահեսցիս ՚ի կորուստ ։ *Մի՛ թող- 14
ցես զբարեկամ հին. զի նորն ոչ լիցի
նման նմա ։ *Գինի նոր՝ բարեկամ 15
նոր. հնասցի՝ և հաճութեամբ ըմպես-
‖Գործ. ցես զնա ։ *‖Մի՛ նախանձիր ընդ 16
9. 4. փառս և փարթամութիւն մեղաւորաց.
2 Թագ. զի ոչ գիտես որ հանդերձեալ է կոր-
15. 10. ծանումն նորա ։ *Մի՛ հաճոյասցին քեզ 17
զրկանք անիրաւաց. գիտասցես զի
մինչև ՚ի սորինս ոչ հաճոյասցի ամբա-
րիշտն ։ *Հեռի՛ և ՚ի բաց լեր ՚ի մար- 18
դոյ՝ որ ունի զիշխանութիւն սպանանե-
լոյ. և մի՛ կասկածեսցես յերկիւղէ
մահու ։ *Եւ եթէ մերձեսցիս առ նա. 19
մի՛ զայլևին ՚ի մէջ արկաներ. զի մի՛ ՚ի
բաց բարձցէ զկեանս քո ։ *Զհաղոր 20
դութի մահու գիտասջիր. քանզի ՚ի
մէջ որոգայթից մտանես. և ՚ի վերայ
ցուեցուցչաց զինուշրջիս ։ *Ըստ զօ- 21
րութեան քոյ զգուշացի՛ր զքեզ ՚ի մերձաւո-
րէ քումմէ. և ընդ իմաստնոց՝ և հան-
ճարեղաց բացատրեա՛ ։ *Արք արդարք 22
եղիցին քեզ խրախճանակիցք. և ՚ի
և ՚յեր- ժամանակի Տ՟Ն եղիցի քեզ փառաւո-
հիւրէ ող րութիւն ։ *Եւ ՚ի զգօնութեան իցէ քեզ 23
խորհուրդ Տ՟Ն. և ամենայն վիպասա-
նութիւն քո ներ հրամանաց բարձրե-
24 լոյն ։ *Ի ձեռս ճարտարաց գործք գո-
վասանին. և իշխան ժողովրդեան ներ
իմաստութեան խօսից իւրոց. իսկ ՚ի զգօ-
25 նութեան երեցագունից բան ։ *Ահաւոր
է ներ քաղաքոջ իւրում այր լեզուա-
նի. և վստահն ՚ի բանի իւրում ատե-
լի եղիցի ։

ԳԼ. Ժ.

1 Դատաւոր իմաստուն դատեսցէ
զժողովուրդ իւր. և իշխանաւոր
2 զգօն, կայուն եղիցի ։ *‖Ըստ դա- ‖Առակ.
տաւորին ժողովուրդք՝ այսպէս և սպա- 29. 12.
սաւորք նորա. և որպիսի է կառավարող
քաղաքի՝ այնպիսիք և բնակիչք ՚ի նմա ։
3 *‖Թագաւոր անիմաստ՝ կորուսանէ ‖3 Թագ.
զժողովուրդ իւր. և քաղաքք բնակա- 12. 13.
նան ՚ի ձեռն զգօնութեան հզօրաց ։
4 *Ի ձեռին Տ՟Ն կարողութիւն երկրի.
և զշահաւէտ կառավարիչ յարուսցէ
ըստ ժամանակս ՚ի վերայ նորա ։
5 *Ի ձեռին Տ՟Ն կարողութիւն մարդոյ.
և ՚ի վերայ երեսաց դպրի ներադնէ
6 զպատիւ իւր ։ *Զամենևեան զրկանս
մերձաւորի մի՛ յիշեսցես ։ ‖և ոչինչ ‖Ղևտ.
արասցես ներ գործոց զրկանաց ։ 19. 17.
7 *Ատելի առաջի Տ՟Ն է և մարդկան
հպարտութիւն ։ և զազրալի ամենայն ‖Դան.
8 անիրաւութիւն ազգաց ։ *‖Թագաւո- 4. 14.
րութիւն յազգաց յազգս արտաքերի վա՛
անիրաւութեանց՝ և զրկանաց՝ և ամբար
տաւանութեան՝ և զանազանից նենգու-
9 թեանց ։ *Իսկ ագահի ոչինչ է անօրէ
նութիւն. զի մարդ հպարտանայ երկիր
10 և մոխիր ։ *Ոչինչ է անիրաւագոյն քան
թէ սիրել զարծաթ. զի սա և զանձն
իւր վաճառելի ունի. քանզի ՚ի կեանս
իւր զգեռնէ զընտանիս իւր ։
11 *Ամ զօրաւոր կարճօրեայ. հիւանդ
բազմաժամանակեայ ծանրացուցանէ
12 զբժիշկ ։ *Զկարճօրեայ զհիւանդ
նախահատանէ բժիշկ. այսպէս և թա-
գաւոր՝ այսօր է՝ և վաղիւն մեռանի ։
13 *Զի յորժամ մեռանիցի մարդ՝ ժա-
ռանգեսցէ զսողունս՝ զգազանս՝ և զոր-
14 դունս ։ *Սկիզբն ամբարտաւանու-
15 թեան յետս դարձումն ՚ի Տ՟Ն ։ *Քանզի
յայնմանէ, որ արար զնա՝ յետս դար-
ձաւ սիրտ նորա. զի նախկին ամենե-
ցուն մեղաց է հպարտութիւն ։ որ բռնա-
հարու զնմանէ, առ լցցի անիծիւք.
և կործանեսցէ զնա ՚ի վախճանի ։
16 *Վասն այսորիկ անպատուեաց զժո-
ղովս չարաց. և քակեաց զնոսա մինչև
17 ՚ի վախճան ։ *Զաթոռս նախարա-
րաց ամբարտաւանից կործանեաց Տ՟Ր.
և

և արար նստել զհեզս փոխան նոցա ։
* Զարմատս ազգաց ամբարտաւա_ 18
նից գօսացոյց Տր̃ · և տնկեաց զխո_
նարհս յայնցանէ ազգաց ։ * Զերկիրս 19
ազգաց տապալեաց Տր̃ · և կորոյս զն̃ս
մինչև 'ի հիմանց ։ * Գօսացոյց 'ի նո_ 20
ցանէ՝ և ցիր և ցան արար զնոսա · և
կործանեաց զյիշատակս նոցա յերկ_
րէ ։ * Զյիշատակ հպարտից կորոյս 21
Տր̃ · և եթող զյիշատակ խոնարհաց
զգօնութե̃ ։ * Չէ ստեղծեալ ամ_ 22
բարտաւանութի̃ ընդ մարդկան · և ոչ
ցասումն ցեղի կանանց ։ * Սերմն մարդ_ 23
կան պատուեսցի, այն որ երկնչի յԱյ̃ ·
իսկ սերմն այն անպատուեսցի · որ եանց
զպատուիրանաւ Տն̃ ։ * 'Ի մէջ եղբարց 24
ուղղիչ նոցա ներ պատուոմ · և որք
երկնչին 'ի Տէ̃ եղիցին յաչս նորա ։
* Փառք փարթամաց՝ պատուականա_ 25
նաց՝ և աղքատաց՝ երկիւղ Տն̃ ։
* Ոչ է անտես առնել զայր զարդար և 26
զաղքատ · և մի' մեծացուցանել զայր
մեղաւոր և զփարթամ ։ * Մեծ՝ և դա 27
տաւոր՝ և կարող է 'ի պատուում · և
ոչ գոյ մեծագոյն քան զնա · որ երկնչի
‖Առակ 17.2. յՏն̃ ։ * ‖ Ծառայի զգօնի ազատք ծա 28
ռայեսցեն · ‖ և այր խորագէտ և խրա_
‖2 Թագ 12. 13. տեալ ոչ տրտնջեսցէ կշտամբեալ · և
տգէտ ոչ պատուեսցի ։ * Մի' բարձրա 29
ցուցաներ զքեզ 'ի գործել զգործ քո · և
մի' յամրանար 'ի ժամանակի նեղութե̃ ։
‖Առակ 12.9. * ‖ Լաւ է որ գործէ՝ և առատա 30
նայ յամենայնի · քան որ պարծի՝ և կա
րօտանայ հացի ։ * Որդեակ 'ի հեզութե̃ 31
պահեա' զանձն քո · և տուր նմա զշուք
ըստ արժանւոյն իւրոյ ։ * Զմեղանչօղն 32
յանձն իւր՝ ո՞վ արդարացուսցէ՝ և ո՞
պատուեսցէ զանարգօղն զանձն իւր ։
* Աղքատ պարծի 'ի ձեռն մակացու_ 33
թե̃ և երկիւղի իւրոյ · և է մարդ՝ որ
Վր̃ փոյթ իւրոյ պատուի վասն գոյացութե̃ իւրոյ ։
* Նայց որ պարծի 'նաղքատութե̃ ո՞ր_ 34
քան առաւել 'ի գոյացութե̃ իւրում ·
և որ փառաւորի 'ի գոյացութե̃ զաղ_
քատութի̃ քամահէ ։

ԳԼ: ԺԱ.

‖Ծննդ. 41. 40. Իմաստութի̃ ‖ խոնարհի բարձրացու 1
ցանէ զգլուխ նորին · և 'ի միջի մե_
‖Դանիէ. 6. 3. ծամեծաց գահոյակից զնա արասցէ ։
* Մի' գովեսցես զայր առաջի իւր · և 2
Յօհ. 7. 18. մի' քամահեր զմարդ յանդիման ին_
քեան ։ * Փոքր է ներ թռչնոց մեղու · 3
զսկիզբն քաղցրութե̃ ունի պտուղ նր̃ ։
‖Գործ. 12. 21. և 22. * ‖ Ներ զարդուն մի' պարծեսցիս եր_ 4
բէք · և ոչ յաւուր պատուոյ քո բարձ_
րամտեսցիս · քանզի գործք զարմանա
լիք բարձրելոյն միայնոյ · և փառաւո
րագոյնք՝ և ծածկեալք՝ և անտեսանե
5 լիք գործք նորա ։ * Բազումք բռնա_
կալք նստան յաթոռ · և անակնկալուն
6 տարաւ զթագ ։ * ‖ Բազումք կարօղք ‖1 Թագ
նեղեցան յոյժ ։ և փառաւորագոյնք 15. 28.
7 մատնեցան 'ի ձեռս օտարաց ։ * Մինչ Նէեմ.
չև հարցեալ իցես, մի' պախարակեսցես 6. 7.
զոք երբէք · և իբրև հարցցես, յանդի
8 մանեա' արդարաբար ։ * ‖ Նախ քան ‖Առակ
զլսելն մի' պատասխանեսցես բանի · և 18.13.
'ի մէջ խօսից մի' առածցիս խօսիլ ։
9 * Սակս այնորիկ իրի, որ զքեզ թախան ոչ խա_
ձէ՝ մի' ընդդիմասցիս ։ և 'ի դատաստա խանձէ
10 նի մեղաց մի' կանգնեսցիս ։ * Որդեակ
մի' 'ի բազում իցեն գործք քո ։ ‖ Թէ ‖1. Տիմ.
փարթամ եղիցիս · ոչ եղիցիս ան_ 6. 9.
պարտ 'ի յանցանաց · զի թէ զհետ եր
թիցես՝ ոչ ըմբռնեսցես · և ոչ խուսես
11 ցես, եթէ նախընթաց լինիցիս ։ * ‖ Է ‖ Ժող.
մարդ ջանայօղ և փութայօղ · և նեն_ 4. 8.
գօղ ամբարիշտ · և այնքանաւ առա_
12 ւել ոչ յաւելցի ։ * Է մարդ վահրո_
տեալ կարօտ օգնականի · յաւէտ պա_
կասեալ 'ի զօրութե̃ · և յաւելեալ չքա
13 ւորութե̃ ։ * ‖ Աչք Տն̃ հայեցան 'ի ‖ Յոբ.
նա բարութե̃ · և ուղղեաց զնա 'ի խո_ 42.10.
նարհութե̃ նորա ։ և բարձրացոյց զգ
գլուխ նորա ։ և զարմացեալք եղեն 'ի
նա բազումք · և պատուեցին զՏր̃ ։
14 * ‖ Բարի և չար · կեանք և մահ · աղ_ ‖ Յոբ.
քատութի̃ և հարստութի̃ յՏն̃ են ։ 1. 21.
15 * Իմաստութի̃ և խրատ · և գիտութի̃
օրինաց առ Տր̃ ։ սէր՝ և ճանապարհք
16 բարեաց առ նմա ։ * Մոլորութի̃ և
խաւար վասն մեղաւորաց ստեղծան ·
բայց որք ցնծան 'ի չարիս՝ ծերասցին
17 'ի չարոջ ։ * Պարգև Տն̃ մնայ 'ի վերայ
արդարոց և յառաջադիմութի̃ նորա
18 փոխանորդ ունիցի յաւիտեան ։ * Է
որ փարթամանայ անխնայաբար առ_
նելով · և այն է մասն վարձու նորա ։
19 * Նայնժամ զոր ասէ ։ ‖ գտի զհանգիստ ‖Ղուկ.
ինձ ։ և այժմ կերից 'ի բարեաց իմոց 12. 19.
20 միայնակ ։ * և ոչ գիտէ՝ եթէ ժամանակ
անցանելոց է · և մահ մերձենալոց · և
թողլոց է զամենայնսն այլոց · և ինքն
21 մեռանելոց ։ * Կաց 'ի վկայութե̃ քո ·
և նմին խօսեաց՝ և ներ գործոց պատ
22 ուիրանաց քոց հնասցիր ։ * Մի' կաց_
ցես ներ գործոց մեղաւորաց · բայց
յուսա' յՏր̃՝ և կաց 'ի տեղւոջ քում ։
23 * Զի դիւրին է յաչս Այ̃ յանկարծ պատ
24 ուել զաղքատս ։ * Օրհնութի̃ Այ̃ 'ի վարձ
արդարոյ ճեպէ · և ներ ժամում արա_
գում փոխատրութի̃ նորա պտղաբե_
25 րի ։ * Մի' ասասցես · զինչ գործէ ինձ ·
և ո՞յք իցեն ինձ յայսմանէ բարիք ։
26 * Մի' ասիցես · բաւական եմ ինձ · և

զինչ

զինչ յայտնանէ չարագոյն եղէց·
Առակ. *Յաւուր բարեաց մի՛ լիցիս անյիշող 27
18.25. չարաց · և յաւուր չարաց մի՛ լիցիս ան
յիշող բարեաց : * Քանզի դիւրին է 28
առաջի Տն յաւուր վախճանի հատու_
ցանել իւրաքանչիւրոյ ըստ ճանապար
հաց իւրոց : *Չարութիւն ժամու՝ զմո_ 29
ռացումն առնէ փափկութեան մեծի · և
'ի վախճանի մարդոյ մերկութիւն գոր_
ծոց նորա : * Նախ քան զմահ մի՛ երա_ 30
ներ զմարդ զոք · զի յորդւոց իւրոց
ճանաչի այր : * Մի՛ զամենայն զմարդ 31
'ի տուն քո տարցիս · զի բազումք են
դարանք որոգայթի : * Որ որպէս 32
բղխեն 'ի փորոտեաց զնեխութիւն · և
որպէս կաքաւ առածի 'ի ծողակ · և
որպէս այծեամն յորոգայթ՝ այսպէս և
սիրտ հպարտից · և ո՛րպէս դէտ տեսանող
զկատումն մերձաւորի իւրոյ : * Քան_ 33
զի զբարիս 'ի չարս դարձուցանող դա_
րանակալի · և ներ ընտրելոց դնէ զբիծ :
*'Ի կայծոյ միոյ զօրանայ հուր · և 'ի 34
միոյ նենգութենէ զօրանայ արեան հե_
ղութիւն · իսկ մարդ մեղաւոր՝ արեան
դարանի : * Զգուշացի՛ր դու 'ի չարա 35
յուզէ · զի հնարէ զչարիս · մի՛ գուցէ
ածցէ 'ի վերայ քոյ զկատականս 'ի մշտն
ջենաւոր : * Ըռձգեա՛ առ քեզ զայլա_ 36
սեռն · և կործանեսցէ զքեզ փոթոր_
կաւ · և օտարացուսցէ զքեզ 'ի քոյոց
սեպհականաց :

Գլ: ԺԲ.

Եթէ բարերարեսցես, գիտեա՛ որոյ 1
արասցես · և եղիցի շնորհ ներ բա
րեացքոյ բազում : * Բարի՛ արա արդա 2
րոյն · և գտանիցես զտրիտուր զմեծ · և
եթէ ոչ 'ի նմանէ, ստուգիւ 'ի Տէ :
* Ոչ է նմա բարւոք · որ հանապա 3
զորդ է 'ի չարիս, և զողորմութիւն ոչ
բաշխողի : քանզի և բարձրեալն ատէ
զմեղաւորն · և ողորմած է ապաշաւո_
Գաղա. ղաց : *‖ Տո՛ւր ողորմածին՝ և մի՛ ընկալ 4
6.10. ցիս զմեղաւորն · և ամբարշտաց և մե_
ղաւորաց հատուսցէ զվրէժ · պահե_
լով զնոսա յաւուր վրէժխնդրութեան :
* Տո՛ւր բարւոյն · և մի՛ վերընկալցիս 5
զմեղաւորն : * Բարի՛ արա խոնարհին · 6
և մի՛ տացես ամբարշտին : արգել զհացս
տալ նմա · մի՛ ներ նովաւ հզօրագոյն քան
զքեզ լիցի : * զի զչարիս զերկպատիկս 7
գտցես նովին բարիս, զորս միանգամ
արասցես նմա : քանզի և բարձրեալն
ատէ զմեղաւորս · և ամբարշտաց հա_
տուցանէ զհատուցումն : * Ո՛չ ճանաչի 8
ներ բարեաց բարեկամ · և ո՛չ ծածկի
ներ չարաց թշնամի : * Ներ բարեաց 9
առն, թշնամիք նր 'ի տրտմութեան : և
'ի վիշտս նորա բարեկամն ճանաչի :
10 * Մի՛ հաւատասցես թշնամւոյ քոյ
յաւիտեան · զի ըստ պղնձեղինի ժանկոտ
11 է խորամանկութիւն նր : * Եւ թէ խո_
նարհեալ գնայ կորացեալ, վերադրեա՛
զանձն քո · և պահեա՛ զքեզ 'ի նմանէ :
12 * Մի՛ կացուսցես զնա հանդէպ քեզ ·
և մի՛ նստցի յաջմէ քումմէ · մի՛ գուցէ
դարձեալ 'ի տեղի քո՝ խնդրեսցէ զա_
թոռ քո : և յետոյ ծանիցես զբանս իմ ·
13 և խոցիւք իմովք մորմոքեսցիս : *Ո՛վ
ողորմեսցի թովչի՝ յօձէ խայթեցե_
լոյ · և ամենեցուն մերձեցողաց առ գա
զանս · և այսպէս որ հաղորդի ընդ առն
չարաբարոյի · և թաթաւի 'ի մեղս նր :
14 * Միով ժամու ընդ քեզ բնակեսցի ·
իսկ թէ խոտորեսցիս՝ ո՛չ համբերեսցէ :
15 * ‖ Շրթամբք իւրովք քաղցրանայ ‖ Նոյն.
թշնամի · և ներ սրտի իւրում նենգէ · 41. 6.
զի կործանեսցէ զքեզ 'ի խորափոսի :
16 * Աչօք իւրովք արտասուէ թշնա_
մին · և թէ գտանիցէ զժամանակ, ոչ
17 յագի արեամբ : * Եւ թէ դիպեսցին
քեզ չարիք · գտցես զնա անդ զառաջ
18 նորա : * Աչօք իւրովք արտասուէ թշ
նամի · և իբրև օգնական զներբանս
19 փորէ ոտից քոց : * Զգլուխ իւր շար_
ժեսցէ · և ծափէ ձեռամբ · և բա_
զում քսութիւնս արարեալ՝ փոխարկես_
ցէ զերեսս իւր :

Գլ: ԺԳ.

1 Որ ‖ շօշափէ զձիւթ՝ պղծեսցի 'ի ‖ [illegible]
նմանէ · և որ կցորդի ամբարտաւա 7. 2.
նի, սփածանի զամբարտաւանութիւն :
2 * Աշխու 'ի վերքան զինքն բառնայ · որ
պատուականագոյնի քան զինքն հա_
ղորդէ : և փարթամագունի քև մի՛ ըն
3 կեր լիցիս : * Որ հաղորդակցեսցէ ըղ_
կաթսայ ընդ պուտոյ · զի յորժամ ընդ
4 հարցին՝ փշրեսցին : * Փարթամն անի
րաւաբար գործեաց՝ և մռմռայ · իսկ
աղքատն առ ոտն հարեալ լռեսցէ :
5 * Եթէ տուեալ լիցիս՝ առցէ զքեզ ·
և եթէ ոչ ունիցիս՝ թողցէ զքեզ :
6 * Թէ ունիս՝ շարակեսցէ ընդ քեզ · և
ունայնացուսցէ զքեզ · և ինքն ո՛չ ցաւ
7 եսցի 'ի վր քո : * Թէ հարկաւոր նմա
լիցիս · ենթարկեսցէ զքեզ · և կատա_
կեալ զյոյս տացէ՝ պատմելով քեզ ըղ
բարիս՝ և ասասցէ : զինչ գործ է քեզ :
8 * Եւ ամաչեցուսցէ զքեզ կերակրօք
իւրովք · մինչև զքեզ նանրացուսցէ
երկիցս, և եռիցս · և 'ի վախճանի ծի
ծաղեսցի զքև · և յետոյ տեսեալ 'ի բաց
թողցէ զքեզ · և զգլուխ իւր շարժես
9 ցէ առ քեզ : * Խոնարհեա՛ց Այ · և
10 ակնկալ ձեռին նր : * Զգո՛յշ լեր՝ մի

խա

խաբեցեալ առ յիմարութիւն կործանայ
ցես: * Մի լինիր խոնարհ յիմաստու_ 11
թե քում. մի կորացեալ 'ի յիմարու_
թիւն զբաղեսցիս: * Հրաւիրեալ 'ի կա 12
'ի քանց գնա րողպունեք գնա. զի յայսմանէ առաւ
ել զքեզ հրաւիրեսցէ: * Մի վատ_ 13
թար լիցիս. և մի ըմբռստասցիս. և
մի հեռի լիցիս 'ի նմանէ. մի գնասցես
'ի մոռացումն: * Մի ըմբռնեսցիս 'ի 14
հաւասար խօսելոյն ընդ նմա. մի հա
ւատասցես բազմաց բանից նորա. զի 'ի յոլո
վից խօսից փորձեսցէ զքեզ. և կատա
կելով հարցանիցէ զքեզ 'ի գաղտնեաց
գոռոզ քոց: * Անգութ ոգի նորա պահեսցէ զբանս 15
քո. և ոչ խնայեսցէ 'ի չարութիւն և 'ի
բանտից: * Զգուշացիր քեզ՝ և զգաստ 16
լեր մտերմաբար լսարանի քոյ. քանզի
ընդ կործանման քոյ շրջիս: * Բայց 17
լսելով զսոսա իբրև յերազում տես.
և հսկեսցես: * Յամենայնեան կեանս 18
քո սիրեա զՏէր. և կոչեա զնա 'ի փր_
կութիւն քում: * Ամ կենդանի սիրէ զնր 19
մանիս իւր. այսպէս և ամ մարդ զմեր
ձաւորս իւր: * Ամ մարմին 'ի նմանին 20
իւր շարագուգի. և ամ մարդ նմանւոյ
Բ. Կորն. 6.14. իւրոյ ընկերանայ: * Զինչ հաղորդես 21
ցի գայլ ընդ գառին երբեք. այսպէս
մեղաւոր ընդ արդարոյ: * Զինչ հա_ 22
ղորդութիւն է մարդոյ սրբոյ ընդ շան.
կամ զինչ բաժին փարթամի ընդ աղ
քատի: * Որս առիւծու՝ ցիռ յանապա 23
տի. այսպէս և արօտ ընչեղաց աղքատք:
* Խոտ գարշութիւն է հպարտի խոնար 24
հութիւն. այսպէս և զազրութիւն հարս_
տի աղքատ: * Մեծատանն շարժեալ 25
հաստատի 'ի բարեկամաց իւրոց. իսկ
նուաստն յորժամ անկցի, մերժի և 'ի
ծանօթից: * Մեծատանն գթելով 26
ընդունողք բազումք. խօսեցաւ հպար
տութիւն՝ և արդարացուցին զնա:
* Նուաստն գթեցաւ՝ ես առաւել 27
յանդիմանի: խօսեցաւ զգօնաբար՝ և
ոչ տուաւ նմա տեղի: * Մեծատունն 28
խօսեցաւ՝ և ամենքն լռեցին. և զբան
նորա մինչև յամպս վերացուցին:
* Աղքատն խօսեցաւ. և ասեն. ո՞վ է 29
այս. և թէ գայթագղեսցի, կործա_
Բարի է ճոխութիւն նեն զնա: * Բարի է գոյացութիւն. որոյ 30
ոչ են մեղք 'ի խիղճ մտաց. և չարա_
գոյն աղքատութիւն 'ի բերանում ամ_
բարշտաց: * Սիրտ մարդոյ այլայլէ 31
զդէմ նորա. կամ 'ի բարիս. կամ 'ի չարս:
* Զհետ սրտի բարւոյ. և զդէմ բա_ 32
րի դժուարին գտցես՝ և հանդերձ աշ
խատութեամբ:

Գլ: ԺԴ:

1 Երանեալ է այր. որ ոչ է գայթագ ‖ Յակ.
ղեալ բանիւ բերանոյ իւրոյ. և 19. 16.
ոչ է մորմոքեալ տրտմութե յանցա_
2 նաց: * Երանելի է. որ ոչ ստացաւ
անձին իւրոյ զտրտմութիւն. և ոչ ան_
3 կաւ 'ի յուսոյ իւրոյ: * Առն կարճամտ
տի՝ և դիւրափոփոխի՝ թարց պատճա
ռի է գոյացութիւն. և մարդոյ նախան
4 ձոտի ընդէր է ոսկի: * Որ կեղեքէ յան
ձնէ իւրմէ անխրատաբար՝ այլոց ժողո
վէ. և 'ի բարիս նորա այլք յղփանայ:
5 * Որ ինքեան չար է. որո՞յ ուրուք բարի
եղիցի. և ոչ զուարճասցի 'ի բարիս իւր:
6 * Որ մախայ ընդ ինքեան. ոչ ինչ է ոչ ինչ է
նմա չար. և այս տրիտուր է չարութե չարագոյն
7 նորա: * Եւ թէ բարութ արասցէ. տգի քան զնա
տաբար և ակամայ առնէ. և 'ի վախ
8 ճանի յայտնէ զչարութիւն իւր: * Չար
է ակն նախանձոտի. և դարձուցանող
զերեսս իւր. և անտես առնող զանձն
9 իւր: * Անյագ է ակն կարճամտի 'ի մա
սին անիրաւութե. ոչ յագիցի՝ մինչև
սպառեսցէ խորշակահարեալ զանձն
10 իւր: * Ակն չար առ չարս. և ոչ յագի
հացիւ. այլ կարօտեալ և 'ի տրտմու_
թե եղիցի 'ի վերայ սեղանոյ իւրոյ:
11 * Որդեակ. թէ ունիս՝ զբարի արա ընդ
քեզ. և Տն զմատուցմունս արժա_
12 նաւորս մատո: * Յիշեա զի մահ ոչ
յամեսցի. և վկայութիւն ստորնայնոց,
զի ցուցաւ քեզ. զի վկայութիւն այսո_ ‖ Տոբ.
րիկ աշխարհի, մահու մեռանիցի: 4. 1.
13 * ‖ Յառաջ քան զմահ բարի արա սի_ Տոբիա.
րելւոյ քոյ. և ըստ արմտեաց քոց կար 4. 7.
14 կառեալ տուր աղքատի: * Մի զլա_ Ղուկ.
նար յօրէ բարւոյ՝ և մասնիկ բարւոյ 19. 9.
15 տրոյ զքև մի անցանիցէ: * Մի ար_ Դիւէ ոչ
դեօք այլոց թողցես զցաւս՝ և զվաս_ այլոց
տակս քո 'ի բաժանման վիճակի:
16 * Տուր՝ և առ. և արդարացո զանձն քո:
17 * Յառաջ քան զելն քո գործեա զար_
դարութիւն. քանզի ոչ է գտանել առ
18 ներքինս զկերակուր: * ‖ Ամ մսեղի ‖ Եսայի.
որպէս զխոտ հնասցի. և որպէս տերև պտղա 40. 6.
19 բեր 'ի ծառոջ դալարւոյ: * Այլք բու Յակոբ.
սանին. և այլք թօթափին. այսպէս 1. 10.
և լինելութիւն մսոյ և արեան. ոմն վախ 1. Պետ.
20 ճանի, և ոմն ծնանի: * Ամ գործ ա_ 1. 24.
պականելի ներ վերջնում պակասես_
ցի. և որ զայն գործէ. գնայ ընդ նմա:
21 * Եւ ամ գործ ընտրեալ արդարասցի.
և որ գործէ զայն՝ պատուեսցի 'ի նմա:
22 * ‖ Երանեալ է այր. որ ներ իմաստու ‖ Սաղմ.
թե յամիցի. և որ յարդարութե իւր 1. 2.
ում մտածիցէ. և 'ի զգօնութե խոր_
հեսցի զշրջադիտութիւնս Տն:

* Որ

* Որ մտախոհ լինի զճանապարհս նր 23
'ի սրտի իւրում. և ներ ծածկեցելոց
իւրոց իմացօղ. ընթացօղ զկնի նր իբ
րև զհետազօտօղ. և 'ի ճանապարհս
նր կայացօղ: * Որ նկատէ 'ի ձեռն պա 24
տուհանից նր. և ներ դրանց նր լսօղ:
* Որ հանգչի հանդէպ տան նորա. և 25
յորմն նր ցցեալ զցուպ կացուսցէ զհո
վանոց իւր առ ձեռս նր. և հանգիցին
ներ խղկում նր բարիք ը̅ երկայն աւ_
ուրս: * Կացուսցէ զորդիս իւր ը̅ վրա 26
նաւ նր. և 'ի ներքոյ ճղոյ յարամիասցէ:
* Հովանաւորեսցի ընթ վրանի նր 'ի 27
տօթում. և ներ փառաց նր հանգիցի:

Գլ. ԺԵ.

Որ երկնչի յՏն, արասցէ զբարի. և 1
որ բուռն հարկանէ արդարութե
ըմբռնէ զնա: * Եւ ընդ առաջ ելա_ 2
նէ նմա իբրու մայր պատուեալ. և
իբրև կին 'ի կուսութէ ընկալցի զնա:
* Կերակրեսցէ զնա հացիւ կենաց՝ և 3
‖ Յոհ. 4. 10. իմացականութե. ‖ և ջրով իմաստու
թե և փրկութե արբուսցէ զնա. և ամ
րասցի 'ի նմա. և ոչ կորասցի: * Եւ 4
պարփակեսցէ զնա՝ և ոչ ամաչեսցէ. և
բարձրացուսցէ զնա առ մերձաւորս
իւր: * Եւ 'ի մէջ եկեղեցւոյ բացցէ 5
զբերան նր. առ լցցէ զնա հոգւով ի_
մաստութե և մակացութե. և ձորձով
փառաց զգեստաւորեսցէ զնա:
* Զխնդութի և զբերկրութի գան_ 6
ձեսցէ 'ի վր նորա. և անուամբ մշտն
ջենաւորականաւ ժառանգեցուսցէ
զնա: * Մարդիկք յիմարք ոչ ըմբռ_ 7
նեսցեն զնա. և մարդիկք զգօնք ընդ
առաջ ելցեն նմա. մարդիկք խելա_
գարք ոչ տեսցեն զնա. զի 'ի հեռու 'ի
բաց գոյ յամբարտաւանութէ, և նեն
գութէ: * Արք ստաբանք ոչ եղիցին 8
նմա յիշատակօղք. և արք ճշմարիտք
գտանիցին 'ի նմա: և զփոխանորդու_
թի ունիցին մինչև 'ի հայեցուածս Տն:
* Ոչ է չքնաղ գովութի 'ի բերան մե 9
ղաւորի: * Վասնզի յՏն յառաջա_ 10
գայեցաւ իմաստութի. քանզի իմաս
տութե Տն առ կացցէ գովութի. և
'ի բերանում հաւատարմի առատաս_
ցի. և տիրօղն տացէ զնա նմա: * Մի 11
ասասցես 'ի ձեռն Տն ոչ է. զի զորս
ատէ, մի արասցես: * Մի ասասցես. 12
նա զիս ընկճեաց. քանզի ոչ են նմա
հարկաւորք մարդիկք ամբարիշտք:
* Զամ զազրութի մոլորութե ատէ 13
Տր. և ոչ եղիցի ցանկալի երկիւղա_
ծաց նորա: * Նա 'ի բնէ հաստատեաց 14
զմարդն. և եթող զնա 'ի ձեռս խոկ_
ման իւրոյ: * [illegible] զպատուի 15
16 րանս և զհրամանս իւր: * ‖ Եթէ կամես ‖ Մատ.
ցես զպատուիրանս պահել՝ պահեսցեն 19. 17.
զքեզ. և 'ի մշտնջենաւորս զհաւատ հա
17 ճոյական առնել: * Հակադրեաց քեզ ‖ Երեմ.
զջուր և զհուր. առ որ կամիս, մխեա 21. 7.
18 զձեռն քո: * ‖ Յառաջ քան զմարդ ‖ [illegible]
կեանք և մահ. բարի և չար. որ հաճոյ [illegible]
19 ասցի նմա, տացի նմա: * Վասնզի բա
զում իմաստութի Տյ. և հզօր 'ի կարո
ղութե. տեսօղ ամենայն առանց միջոցի:
20 * ‖ Աչք Տն առ երկիւղածս իւր. և ‖ Սաղմ.
ինքն ճանաչէ զամ զգործ մարդոյ: 33. 16.
21 * Ոչ ումեք պատուիրեաց ամբարշտա_ Եբր.
րէն գործել. և ոչ ումեք ետ զբացատու 4. 13.
22 թի մեղանչելոյ: * Զի ոչ ցանկայ բազ
մութե որդւոց անհաւատից՝ և անշա_
հեկանաց:

Գլ. ԺԶ.

1 Մի բերկրեսցիս ընդ որդիս ամբա
րիշտս՝ թէ բազմապատկեսցին.
և մի զուարճասցիս 'ի վր նց, թէ ոչ է
2 երկիւղն Տն 'ի նոսա: * Մի հաւատար
կենաց նց. և մի հայեսցիս յաշխատանս
3 նց: * Զի բարեգոյն է մի երկիւղած
յոյ. քան հազար որդիք ամբարիշտք:
4 * Եւ շահաւէտ է մեռանիլ անորդի.
քան թողուլ զորդիս ամբարիշտս:
5 * 'Ի միոջէ զգօնէ բնակ լիցի հայրենի.
յերից ամբարշտաց ամայանայ:
6 * Զյոլովս զայսպիսիս ետես ակն իմ.
և զօրագոյնս քան զսոսա լուաւ ունկն
7 իմ: * ‖ 'Ի ժողովարանի մեղանչօղաց ‖ Սիր.
բորբոքեսցի հուր. և 'ի ցեղում անհա 21. 10.
8 ւատում վառեսցի բարկութի: * ‖ Ոչ ‖ Ծննդ.
աղօթեցին վասն մեղաց իւրեանց հս_ 6. 4.
կայքն նախկինք. որք աւերեցան յու
9 սացեալք 'ի զօրութի իւրեանց: * Եւ ոչ
անխայեաց 'ի պանդխտութին ղոտայ.
և գարշեցոյց զնս վս հպարտութե բա_
10 նից նց: * Ոչ ողորմեցաւ նոցա. զբովան
դակ զազգն կորուսեալ. և բաց բար_
11 ձեալ զնոսա ներ մեղաց իւրեանց: * ‖ Եւ ‖ Թուոց
որպ զվեց հարիւր հազար հետևակն՝ 14. 20.
որք ժողովեցան 'ի խստութե սրտի իւր և 26. 51.
ոյ: և թէ միոյն էր ընդվզեալ՝ սքանչա
12 ցուածս. թէ լեալ էր ապահարկ: * Զի
ողորմութի և բարկութի է ընդ նմա.
կարօղ ողորմութի. և հեղօղ զբար_
13 կութի: * Ըստ ողորմութե իւրում.
այսպէս կշտամբութի նորա զմարդիկ
14 ըստ գործոց իւրեանց դատէ: * Ոչ փախիցէ
ներ յափշտակութե մեղաւորն. և ոչ
յամեցուսցէ անողութե զողորմութի
15 արարողին: * Ամ ողորմութի արասցէ ‖ Հռոմ.
զտեղի ‖ իւրաքանչիւրոյ ըստ արժանա_ 2. 6.
ւորութե գործոց իւրոց: և ըստ իմաց
16 մանն ոգւցհութե իւրոյ: * Մի ասա_
ցես.

չես. յՏեառնէ թաքեայց. և յաւարտին ամե
գլխս յիշեսցէ։ * 'Ի ժողովրդեան մե_ 17
ծում ո՛չ ճանաչիցիմ. զի զի՞նչ է անձն
իմ յայսքան անհուն ստեղծուածս։
* Ահա երկինք. և երկինք երկնից. և 18
անդունդ՝ և բովանդակ երկիր. և որք
'ի նոսա են՝ յերեսաց նորա սասանին։
* Լերինք միանգամայն. և բլուրք. և 19
հիմունք երկրի. երբ հայեսցի 'ի նոսա
Աստուած՝ ահիւ դողան։ * Եւ նամենեսեան 20
յայսոսիկ անզգայացեալ է սիրտ. և զամ
սիրտ իմանի յայնմանէ։ * Եւ զճանա 21
պարհս նորա, ո՞ գիտէ. և զմրրիկ. զոր
և ոչ ական տեսցէ մարդոյ։ * Զի բա_ 22
զումք են նորա գործք 'ի թաքստի. այլ
զգործս արդարութեան նորա ո՞ պատմեսցէ.
կամ ո՞վ ժուժկալեսցէ. զի հեռի է
վկայութիւն յոմանց. և հարցումն ամե
նեցուն 'ի կատարած իւր։ * Որ փոքրկա_ 23
նայ սրտիւ՝ խոկայ զնոյնիրս. և այր
անհանճար և մոլորեալ խորհի զյիմա_
րութիւն։ * Լուր ինձ որդեակ իմ. և 24
ուսի՛ր զխրատ զգօնութեան. և բանից
իմոց զգուշացի՛ր սրտիւ քով։ * Եւ ա_ 25
սացից 'ի հաւասարակութեան զխրատ.
և զննեցից ճառել զիմաստութիւն։ և 'ի
բանից իմոց զգուշացի՛ր սրտիւ քով.
և ասեմ 'ի հաւասարակութեան հոգւոյ զզօ
րութիւնս. զորս եդ Աստուած ներ գործոց իւր
ոց 'ի բնէ։ * Ներ իրաւանց Տեառն գործք 26
նորա 'ի սկզբանէ. և 'ի բաղկացութենէ
նոցա զանազանեաց զբաժինս նոցա՝ և սկզ_
բունս նոցա 'ի սեռս իւրեանց։ * Զարդարեաց 27
'ի մշտնջենաւորս զգործս նոցա. ո՛չ քաղ_
և ոչ աշ ցեան. և ո՛չ ծարաւեցան. և ոչ 'ի բաց
խատեցին թողան 'ի գործոց նորա։ * Իւրաքանչ_ 28
իւրոք զմերձաւոր իւր մի՛ նեղացուսցէ
մինչև յաւիտեան։ * Մի՛ լիցիս անհաւ 29
ատ բանից նորա։ * Յետ այսորիկ Աստուած 30
յերկիր հայեցաւ՝ և ելից զնա բարեօք
իւրովք։ * Հոգի կենդանականի ամ 31
ճառեաց առաջի երեսաց նորա. և 'ի նոյն
դարձեալ վերադարձումն նոցա։

ԳԼ: ԺԷ:

Ծննդ. ՏԷՐ ստեղծ յերկրէ զմարդն. և 1
1.27. ըստ պատկերի իւրոյ արար զնա։
* Եւ վերստին դարձոյց զնա յայս. և 2
ըստ ինքեան զգեցոյց զնա զօրութիւն։
* Զթիւ աւուրց՝ և պչափ ժամանա_ 3
կաց ետ նոցա. և ետ նոցա զկարողութիւն
նոցա. որք են 'ի վերայ երկրի։ * Եդ զեր_ 4
կիւղ նորա 'ի վերայ ամենայն մարմնոյ. և տիրեաց
Ծննդ. գազանաց՝ և թռչնոց։ * ‖ Ստեղծեաց 5
2.18. և յինքենէ օգնականութիւն նման ինք_
5. 1. եան. զխորհուրդ. և զլեզու. և զաչս.
և զունկն. և զսիրտ ետ նոցա խորհե_
լոյ. և մակացութեամբ իմացականի լե_
ճը

6 ըսւլցոյց զնոսա։ * Ստեղծ նոցա զգիտու_
թիւն հոգւոյ. զգօնութեամբ ելից զսիրտ
նոցա. զչարս և զբարիս եցոյց նոցա։
7 * Եդ զաչս իւր 'ի վերայ սրտից նոցա. ցուցա
նել նոցա զմեծամեծս գործոց իւրոց։
8 * Զի զանուն սրբագործութեան նորա
գովասանեսցեն. և պարծիլ 'ի սքանչե
լիս նորա՝ և մեծացուցանելով պատմես_
9 ցեն զգործս նորա։ * Յաւել նոցա զմակա_
ցութիւն. և զօրէնս կենաց ժառանգե_
10 ցոյց նոցա։ * Զուխտ յաւիտենական կա
ցոյց ընդ նոսա. և զարդարութիւն և
11 զդատաստան իւր եցոյց նոցա։ * Եւ զմե_
ծամեծս պատուոյ նորա ետես ական նոցա. և
զպատիւ ձայնի լուան ականջք նոցա. և
ասաց նոցա. զգուշացարուք յամենայն անի_
12 րաւութենէ։ * Եւ պատուիրեաց իւրա
քանչիւրոյ սակս մերձաւորի իւրոյ։
13 * Ճանապարհք նոցա առաջի նորա են միշտ.
ոչ են թաքուցեալք յաչաց նորա։
14 * ‖ Յիւրաքանչիւր ազգն նախակար_ ‖ Հռոմ.
15 գեաց զկառավար։ * Եւ մասն Տեառն 13.1.
16 Իսրայէլ եղև բացորոշեալ։ * Եւ ամենեք_
եան գործք նոցա իբրև արեգակն առա_
ջի Տեառն։ և աչք նորա թարց միջոցի նե_
րանկատողք 'ի ճանապարհս նոցա։
17 * Ոչ են ծածկեալք վկայութիւնք 'ի
ձեռն անօրէնութեան նոցա. և ամենեքեան
անօրէնութիւնք նոցա 'ի տեսութեան Տեառն։
18 * ‖ Ողորմութիւն առն իբրև զդրոշմիկ ‖ Մատ.
ընդ ինքեան. և զշնորհս մարդոյ իբրև 29. 16.
19 զբիբ պահպանեսցէ։ * ‖ Եւ յետոյ յա ‖ Մատ.
րիցէ. և հատուսցէ նոցա զհատուցումն 25. 35.
իւրաքանչիւրոյ 'ի գլուխ ինքեանց. և
դարձուսցէ 'ի կողմունս ներքինս եր_
20 կրի։ * Բայց զապաշխարողսն ետ զճանա_
պարհ արդարութեան։ և հաստատեաց
զպակասեալս տանիլ. և տեղեկացոյց
21 զվիճակ ճշմարտութեան։ * Դարձի՛ր առ
22 Տէր՝ և 'ի բաց թող զմեղս քո։ * Աղեր_
սեա՛ առաջի երեսաց Տեառն՝ և նուազեցո՛
23 զգայթագղութիւն։ * Դարձի՛ր առ
Տէր. և յետս դարձ յանիրաւութենէ քում
մէ. և սաստկապէս ատեա՛ զգարշու_
24 թիւն։ * Եւ ծանի՛ր զարդարութիւն և զի
րաւունս Տեառն։ և կա՛ց 'ի բաժնի առաջա
դրութեան, և աղօթից բարձրելոյն Տեառն։
25 * 'Ի կողմանս ընթացի՛ր յաւիտենից
սրբոյ. ‖ ընդ կենդանեաց՝ և տուր զոհ ‖ Սաղմ.
26 զխոստովանութիւն Տեառն։ * Մի՛ յամես_ 6. 6.
ցիս ներ մոլորութեան ամբարշտաց. յա_ Եսայ.
ռաջ քան զմահ խոստովանեսցիս. 'ի 38. 19.
մեռելոց իբրև ոչինչ կորնչի խոստովա
27 նութիւն։ * Խոստովան լիցիս կենդանի
գոլով. կենդանի և ողջ խոստովանես
ցիս. և գովեսցես զԱստուած. և պարծես_
28 ցիս 'ի գթութեան նորա։ * Զի որչափ մեծ է
ողորմութիւն Տեառն. և քաւութիւն նորա

անդրէն դարձողաց առ նա։ * Ոչ և 29
ոչ ամէն կարեն գոլ ներ մարդկան.
քանզի ոչ է անմահ որդի մարդոյ։ և
ունայնութիւն ընդ չարութի հաճեցան։
* Զի՞նչ լուսաւորագոյն քան զարե- 30
գակն. սակայն և նա նուազի. կամ
զի՞նչ անագորոյն քան զոր խոկացաւ
միս և արիւն. և այսու կշտամբի։
* Զզօրութի բարձրութե երկնի ինքն 31
նկատէ. և մարդիկք ամէն հող և մոխիր։

ԳԼ. ԺԸ.

‖ Ծննդոց 1. 1. Որ ‖ կեայ յաւիտեան. ստեղծ զամե 1
նեսեան ՚ի միասին։ Տ՟ր միայն ար
դարասցի. և միայն անպարտելի յաւի
տեան։ * Ո՞ բաւականանայ ճառել 2
զգործս նորա։ * Ո՛ և հետազօտեսցէ 3
զմեծութի նր։ * Իսկ զզօրութի մե 4
ծութե նորա ո՞վ պատմեսցէ. կամ
յաւելցէ վերպատմել զողորմութիւն
նր։ * Ոչ է նուազեցուցանել՝ և ոչ յաւե 5
լուլ. և ոչ է գտանել զմեծամեծս նր։
* Յորժամ վախճանեսցէ մարդ՝ յայնժամ 6
և յորժամ սկսանիցի. և յորժամ հանգչիցի, առ
հանգչի- ծաղեսցէ։ * Զի՞նչ է մարդ. և զի՞նչ է 7
ցնորարա շնորհ նր. և ո՞ւր է բարի. կամ զի՞նչ անի
հոտեսցի բաւութի նր։ * ‖ Թիւ աւուրց մարդ 8
‖ Սաղմ. կան որքան բազում, հարիւր ամ. իբ
89.10. րև զկաթիլ ջրոյ ծովու առհամարեալ
է։ և որպ զխիճ աւազոյ. այսպէս դուզ
նաքեայք ամք յաւուր երկարակեցի։
* Վասն այսորիկ երկայնամիտ է Տ՟ր 9
առ նոսա. և հեղու ՚ի վ՟ր նց զողորմու
թի իւր։ * Ետես զյառաջուն սրտի 10
նց՝ զի չար է. և ծանեաւ զտապալումն
նց՝ քանզի չար է։ * Վ՟ս այսորիկ ելից 11
զքաւութի իւր ՚ի նս. և եցոյց նց զճա
նապարհ իրաւանց։ * Գթութի մար 12
դոյ շուրջ զմերձաւորիւ իւրով. իսկ
ողորմութի Տ՟ր ՚ի վ՟ր ամ մարմնոյ։
* Որ զողորմութի ունի՝ ուսուցանէ. և 13
առաջնորդէ իբրև հովիւ հօտի իւրոյ։
* Զորոյն ընդունողին զուսումն ողոր 14
մութե. և որ փութայ յիրաւունս նր։
* Որդեակ, ներ բարեաց մի տայցես 15
տրտմութիւնս. և ներ ամենայն տրոց մի տա
ցես զտրտմութի բանի չարի։ * Ոչ 16
ապաքէն զտապ զովացուցանէ ցօղ՝ այս
պէս և բան բարեգոյն քան զտուրս։
* Ոչ ահաւասիկ բան ՚ի վեր քան զտուր 17
բարի. այլ երկաքանչիւրն ընդ մար
դոյ արդարացելոյ։ * Յիմարն դառ 18
նապէս նախատեսցէ. և տուրք անխրա
տի խորշակահար առնէ զաչս։ * Յա 19
ռաջ քան զդատաստան պատրաստեա
քեզ զարդարութի. և մինչչև խօսեալ
իցես՝ ուսիր։ * Յառաջ քան զախտա 20
‖ Ա. Կորն. նալ՝ ընկալ զբժշկականութի. ‖ և յա
11. 28.

ռաջ քան զդատաստան՝ հարց զքեզ
ինքնին։ և առաջի Տ՟ր գտցես զքաւ
21 ութի։ * Յառաջ քան զխօթանալն՝
խոնարհեցո՛ զքեզ. և ՚ի ժամանակի
հիւանդութե ցոյց զանդրադարձութի
22 քո։ * ‖ Մի՛ արգելցիս աղօթել միշտ. ‖ Ղուկ.
և մի՛ կասկածեսցես մինչև ՚ի մահ ար 18.1.
դարանալ. քանզի վարձ Տ՟ր մնայ յաւի 1 Թես.
23 տեան։ * Յառաջ քան զաղօթելն նա 5. 17.
խապատրաստեա զանձն քո. և մի՛ լի
նիր իբրև զմարդ՝ որ փորձէ զԱ՟ծ։
24 * ‖ Յիշեա զցասումն յաւուր կատա ‖ Սիր.
րածի. և զժամանակ հատուցման յանդ 7. 18.
25 րադարձութե երեսաց։ * ‖ Յիշեա զաղ ‖ Սիր.
քատութի ՚ի ժամանակի առատութե. 11. 27.
և զհարկաւորութի յաւուր հարստու
26 թե։ * Յայգունէ մինչև ցերեկոյ փոփո
խեսցի ժամանակ. և այսոքիկ ամենե
քեան արագաթևեալք յաչս Տ՟ր։
27 * Մարդ իմաստուն ներ ամենայն զահի
հարկանի. և ՚ի ժամու յանցանաց ըզ
28 գուշանայ ՚ի տգիտութե։ * Ամենայն
խորագէտ ճանաչէ զիմաստութի. և
գտանելով զնա տացէ զխոստովանու և փոխ
29 թի։ * Հանճարեղք բանիւք՝ և ինք զի տա
եանք իմաստնաբար արարին. և իմա
ցան զճշմարտութի և զիմաստութի։
և անձրևեցին զառակս և զիրաւունս։
30 * ‖ Զհետ ցանկութե քո մի՛ գնասցես. ‖ Հռոմ.
31 և ՚ի կամաց քոց հրաժարեա՛ց։ * Թէ 6.15. և
բաշխեսցես անձին քո զցանկութիւ 13. 14.
նր, արասցէ զքեզ ՚ի խնդութի թշնա
32 մեաց քոց։ * Մի՛ զբօսնուցուս ամբո
խիւք՝ և մի՛ սակաւուք. զի երկարաձիգ
33 է շաղախումն նոցա։ * Մի՛ լինիցիս մի
ջամուխ ՚ի գրգռութե առ ՚ի վաշխէ.
և դոյ քեզ ոչինչ ՚ի քսակի. զի եղիցիս
մախացօղ կենաց քոց։

ԳԼ. ԺԹ.

1 Գործունեայ արբշիռ ոչ հասցի ՚ի
մեծութի. և որ արհամարհէ
զսակաւն՝ փոքր փոքր կործանեսցի։
2 * ‖ Գինի և կանայք ապստամբեցուցա ‖ Ծնն.
նեն զիմաստունս. և ընդդիմադրեն 19. 33.
3 զհանճարեղս։ * Իսկ որ զինքն լծէ ընդ 3 Թագ.
պոռնիկս, եղիցի անօրէն. ցեց՝ և որ 11.1.
դունք սեպհականեսցեն զնա. և վե
րասցի ՚ի նշաւակ մեծագոյն. և բարձ
4 ցի ՚ի թուոյ հոգի նր։ * ‖ Որ վաղվաղ ‖ Յեսու
կոտ է ՚ի հաւատալ՝ թեթևասիրտ է 22. 11.
և փոքրկասցի. և որ զանցանէ զհոգ
ւով իւրով. ևս առաւել ունիցի։
5 * Որ ուրախանայ անիրաւութե՝ նշաւա
կեսցի. և որ ատէ զյանդիմանութի,
պակասեսցի կենօք։ և որ ատէ զունայ
նախօսութի՝ շիջուցանէ զչարութի։
6 * Որ մեղանչէ յանձն իւր՝ զղջասցի.
և

և որ քաղցրանայ 'ի չարութեան՝ նշաւա_
կեսցի։ * Մի՛ կրկներ զբան զանիրաւ 7
և զխիստ․ և ո՛չ նուաստասցիս։*Բա_ 8
րեկամի և չարակամի մի՛ ձառեր զզգա
ցումս քո ․ և թէ է քեզ մեղք․ մի՛ 'ի
բաց մերկանար։ * Զի լուիցէ քեզ ․ և 9
զգուշասցի զքէն ․ և իբրև զվրէժխն
դիր մեղաց առեսցէ զքեզ․ և այսպէս
առ լիցի քեզ միշտ։*Լուար զբան ընդ 10
դէմ մերձաւորի քոյ, մեռցի 'ի քեզ ․
հաւատացեալ զի ո՛չ պայթուցանէ
զքեզ։*Յերեսաց բանի երկնէ յիմարն․ 11
որպէս հեծութիւն երկանց երախայի։
* Նետ մխեալ 'ի բարձս մարմնոյ․ այս_ 12
Ղեւ․ պէս բան 'ի սրտի անմտի։ * Յանդի 13
19․17․ մանեա՛ զբարեկամն․ մի՛ գուցէ ո՛չ իցէ
Մատ․ իմացեալ՝ և ասասցէ․ ո՛չ արարի․ կամ
18․15․ թէ արար՝ մի՛ ևս յաւելցի առնել։
Ղուկ․ *Յանդիմանեա՛ զմերձաւորն․ մի՛ գու 14
17․3․ ցէ ոչ ասաց ․ և թէ ասաց՝ մի՛ գուցէ
կրկնեսցէ ։ * Յանդիմանեա՛ զբարե_ 15
չէնի յան կամն․ զի բազմիցս լինի շարախօսու_
դուռն թիւն։* Եւ մի՛ ամի բանի հաւատաս_ 16
ցես․ է որ գթէ լեզուաւ․ բայց ո՛չ է 'ի
Յակ․ հոգւոյ ։ *Ո՞վ է՝ որ ոչ յանցեաւ 17
3․ 3․ լեզուաւ իւրով ։ յանդիմանեա՛ զմեր_
ձաւորն յառաջ քան զսպառնալն։*Եւ 18
տո՛ւր զտեղի երկիւղի բարձրելոյն․ զի
ամ իմաստութիւն երկիւղ Տ՟Ն․ և 'ի
նմա երկնչել յՏ՟Ն․ և յամենում իմաս
պրաման_ տութեան հակադրութիւն օրինաց ։ *Եւ 19
դրութե ո՛չ է իմաստութիւն խրատ չարեաց․ և ո՛չ
օրինաց է խորհուրդ մեղաւորաց՝ զգօնութիւն։
* Է անիրաւութիւն և 'ի նմա գարշու_ 20
թիւն։ և է անզգամ․ որ նուազի յիմաս
տութենէ ։ *Լաւագոյն է մարդ՝ որ նուա 21
զի իմաստութեամբ․ և պակասեալ զգօ_
նութեամբ ներ երկիւղիւ․ քան որ առա
տանայ զգօնութեամբ․ և անցանէ զօրի_
նիւ բարձրելոյն ։ * Է յաջողակութիւն 22
ստոյգ․ և ինքն անիրաւութիւն։*Եւ է 23
որ արտաձգէ զբան ուղիղ ձառելով
զճշմարտութիւն։ է որ ստաբար խոնար
հեցուցանէ զինքն։ և ներս նորա լի են
նենգութեամբ ։ * Եւ է՝ որ զինքն յոյժ 24
խոնարհեցուցանէ բազմաւ խոնարհու
թեամբ․ և է՝ որ կորացուցանէ զդէմս իւր․
Ա․ Ենջէ և ամրացուցանէ՝ ոչ տեսանել զորինչ
ո՛չ տեսա տգիտացաւ ․ *Եւ թէ 'ի տկարութենէ 25
նել զօրութեանց արգելանի մեղանչել․ եթէ
գտանիցէ զժամանակ չար առնելոյ՝
չար առնէ ։ * 'Ի տեսութենէ ձանաչի 26
այր ․ և 'ի հանդիպմանէ երեսաց ձա_
նաչի իմաստունն ։ * Հանդերձ մար 27
մնոյ ․ ծաղր երեսաց ․ և քայլ մար_
դոյ պատմեն զնմանէ ։ * Է յանդի_ 28
մանութիւն սուտ բարկութեամբ թշնա
մանողի։ և է դատաստան, որ փոր_

ձի ոչ գոլ բարի ։ և է լուռ ․ և ինքն
է հանձարեղ ։

Գլ։ Ի։

1 Ո՜րչափ կարի լաւ է յանդիմանել՝
քան ցասնուլ․ և զհաւատարիմն
2 բանիւ՝ ոչ արգելուլ։ * Ցանկութիւն
ներքինւոյ անկուսացուցանէ զերիտա
3 սարդուհի։ *Նոյնպէս որ առնէ բռ_
4 նութեամբ զդատ անիրաւ։* Ո՜րչափ բա
րի է յանդիմանեցելոյն բացայայտել
զապաշխարութիւն․ զի այսպէս փախիցես
5 'ի հաւանութենէ մեղաց։ *Է լուռ՝ որ
գտանի իմաստուն․ և է ատելի՝ որ լիրբ
6 է առ 'ի խօսել ։ *Է լուռ՝ որ ոչ ունի
զզգօնութիւն խօսից․ և է լուռ՝ որ գի
7 տէ զժամանակ յարմար։*Այր իմաս
տուն լռեսցէ մինչև 'ի ժամանակն ․
իսկ անզգամն և ամբարիշտն ոչ պա_
8 հեսցեն զժամանակս ։ * Որ բազմօք
վարի բանիւք, վտանգէ զանձն իւր․ և
որ առնու ինքեան զիշխանութիւն անի
9 րաւաբար՝ ատելի լիցի ։ *Է յաջող
ութիւն ներ չարաց առն անխրատի ․ և է
10 գիւտ 'ի պատիժ ։ *Են տուրք՝ որք ո՛չ
են օգուտք․ և են տուրք՝ որոց հատու
11 ցումն է կրկնակի։*Է վնաս փառաց պա
կասութիւ․ և է որ 'ի խոնարհութենէ վեր
12 եբարձ զգլուխ։ *Է որ զբազում ա_
զատեսցէ փոքու գնով․ և հատուցումն
13 նորա եօթնպատիկ ։ * Իմաստունն բա_
նիւք ինքն զինքն սիրելի առնէ ։ իսկ
14 շնորհք մորոսաց հեղանիցին։ *Տուրք
անզգամի ո՛չ լիցի քեզ օգուտ․ զի աչք
15 նորա առ եօթնպատիկս են։ *Սակաւ
տայցէ․ և զբազումն նախատիցէ ։ և
բացումն բերանոյ նորա բոցակիզութիւն է։
16 *Այսօր փոխ տայ ոք․ և 'ի վաղիւն պա
հանջէ ․ ատելի է այսու կերպիւ մարդ։
17 *Մորոսին ո՛չ եղիցի բարեկամ․ և ո՛չ
18 եղիցի շնորհ բարեաց նորա ։ * Զի
որք ուտեն զհաց նորա, ստալեզուք են
քանիցս՝ և որքան այպանեն զնա։
19 * Զի և ոչ զորինչ ունելոց էր՝ ուղ_
ղի՞ զգօնութեամբ տարորոշեաց ։ նմա_
նապէս և զորինչ ո՛չ էր ունելոց։
20 *Գայթագղութիւն ստալեզուի․ իբրև
այն որ 'ի մուտս գայթագղի․ այսպէս
կործանումն չարաց վաղվաղակի հաս
21 ցի ։ *Մարդ ապաշնորհ՝ իբրև առաս
պել ընդունայն․ 'ի բերան անխրատից
22 հանապազորդ եղիցի ։ * 'Ի բերանոյ
առասպելաբանի անգոսնի առակ․ զի
ո՛չ ասէ զնա 'ի ժամանակի իւրում։
23 *Է որ արգելանի մեղանչել վասն անըն_
չութեան․ և 'ի հանգստեան իւրում մըտ
24 րակեսցի ։ *Է որ կորուսանէ զանձն
իւր սակս ամօթոյ ․ և առ 'ի տգիտու

Թէ անձին կորուսանէ զնա: * Ի՛ որ 25
սակս ամօթոյ խոստանայ բարեկամի.
և շահեցաւ զնա թշնամի 'ի տարապար
տուց: * Նախատինք անիրաւք 'ի մար- 26
դոջ ստութի. և 'ի բերանոջ անխրա-
տից հանապազորդ եղիցի: * Առաւել 27
լաւ է գող՝ քան զհանապազորդութի առն
ստոյ: զկորուստ երկոքեանն իսկ ժա-
ռանգեսցեն: * Բարք մարդոյ ստոյ 28
թարց պատուոյ. և ամօթ նր̃ ընդ ինք-
եանց անընդհատ: * Իմաստունն բա- 29
նիւք վերաբերէ ինքն զինքն. և մարդ
խորագէտ հաճոյասցի մեծամեծաց:
* Որ գործէ զերկիր իւր՝ բարձրացու- 30
ցէ զշեղջ ցորենոյ. և որ գործէ զարդա
րութի, ինքն բարձրասցի. իսկ որ հա
ճոյանայ մեծամեծաց՝ փախուսցէ զա-
Առակ. նիրաւութի: * Ընծայ և պարգև կու- 31
23:8. րացուցանեն զաչս դատաւորի. և իբրև
2. Օրէ. համր բերանով դարձուցանէ զյանդի
16.19. մանութիւնս նր̃: * Իմաստութի գաղեն 32
Սիր. և գանձ անյայտ. զինչ շահեկանութի
41.17. ներ երկաքանչիւրոց: * Լաւագոյն է՝ 33
որ թաքուցանէ զանզգամութի իւր.
քան մարդ՝ որ գաղէ զիմաստութի:

ԳԼ: ԻԱ:

Որդեակ մեղար, մի ևս յաւելցես 1
վերստին: այլ և սակս առաջնոյն
աղաչեա, զի թողցին քեզ: * Իբրև յե 2
րեսաց օձի փախիր 'ի մեղաց. և թէ մեր
ձեսցիս առ նոսա, ըմբռնեսցեն զքեզ:
* Ատամունք առիւծու՝ ատամունք 3
նր̃. միջատողք զհոգիս մարդկան: * Որպ̃ 4
սուսեր երկսայրի սրեալ ամ̃ անիրաւու-
թի. հարուածոց նր̃ ոչ գոյ բժշկութի̃:
* Մէջև զրկանք ոչընչացուցանեն զգոյ 5
ացութի. և տուն որ կարի ընչաւէտ
է՝ ոչընչանայ հպարտութե̃. այնպ̃ գոյ
ութի հպարտի արմատաքի խլեսցի:
* Աղօթք աղքատի 'ի բերանոյ մինչև 6
յականջս նր̃ հասանիցի. և իրաւունք
փութապէս առ հասանիցի նմա: * Որ 7
ատէ զյանդիմանութի, 'ի ճանապար-
հի մեղաւորաց է. և որ երկնչի յԱյ̃
դառնայ սրտիւ իւրով: * Յայտնի 'ի 8
հեռաստանէ հզօրն լեզուաւ հաւա-
տարմաւ. և զգօնն գիտէ զխիջուցանել
զինքն 'ի նմանէ: * Որ շինէ զտուն իւր 9
ընչիւք օտարաց. իբրև որ ժողովէ զքա
Ս Եր. րինս իւր 'ի ձմերան: * Խծուծ կու- 10
16. 7. տեալ ժողովարան անօրինաց. և կա-
տարած նր̃ բոց հրոյ: * Ճանապարհ 11
մեղաւորաց ողորկեալ քարիւք. և 'ի
վախճանի նոցա ստորինք՝ և խաւարք՝
և պատիժք: * Որ պահէ զարդարութի. 12
պարփակէ զզգացումն նր̃: * Կատա- 13
րած երկիւղի Այ̃ իմաստութի և զգօ-
14 նութի: * Ոչ խրատի. որ ոչ է իմաս-
15 տուն ներ բարւոյ: * Զի է իմաստու-
թի՝ որ յաճախէ 'ի չարիս: և ոչ է զգօ-
նութի, ուրանոր է դառնութի:
16 * Գիտութի իմաստնոյ իբրև զուղխ
յորդեսցի. և խոկացումն նր̃ որպ̃ աղ-
17 բիւր կենաց յարամնայ: * Սիրտ յիմա-
րի իբրև աման ջախջախեալ. և զամ̃
18 զիմաստութի ոչ ներընդունի: * Զբան
իմաստուն զոր միանգամ լուիցէ գի-
տունն, գովեսցէ. և առ ինքն յան-
կեսցէ: լուաւ անագորոյնն՝ և յափ-
րասցի նովաւ. 'ի բաց ընկեսցէ զնա
19 զկնի թիկանց իւրոց: * Ճառ մորոսի
իբրև քուրձ 'ի ճանապարհի. զի 'ի
շրթունս զգօնի գտանիցի շնորհ:
20 * Բերան խորագիտի քննիցի յեկեղեցւոջ.
և զբանս նր̃ խոկասցեն 'ի սիրտս իւր-
21 եանց: * Որպ̃ տուն արտասահմանեալ՝
այսպէս մորոսի իմաստութի. և գի-
տութիւն անզգայացելոյ անվիպելիք
22 բանք: * Շղթայք յոտս յիմարաց իմաս
տութի. և իբրև կապանք ձեռաց 'ի
23 վր̃ ձեռին աջու: * Յիմարն 'ի ծիծա-
ղիլն բարձրացուցանէ զձայնն. իսկ
այր իմաստուն հազիւ լռելեայն ծի-
24 ծաղեսցի: * Զարդ ոսկեղէն խորա-
գիտի ուսումն. և իբրև ապարանջան
25 'ի բազկի աջում: * Ոտք յիմարի դիւր-
ընթաց 'ի տուն մերձաւորի. և մարդ
կիրթ պատկառի 'ի դիմաց կարողի:
26 * Յիմարն 'ի լուսամուտէ հայեսցի 'ի
տունն. իսկ այր խրատեալ 'ի դուրս
27 կացցէ: * Յիմարութի է մարդոյ ունկն
դնել 'ի ձեռն դրան. և խորագէտն ծան
28 րասցի թշնամանօք: * Շրթունք ան
հանճարից յիմարութե̃ ճառիցեն. իսկ
բանք հանճարեղաց, կշռորդով կշ-
29 ռեսցին: * 'Ի բերանոջ մորոսաց սիրտ
նր̃. և ներ սրտում իմաստնոց բերան
30 նր̃: * Յորժ անիծանէ ամբարիշտն զսա
տանայ, անիծանէ ինքնին զանձն իւր:
31 * Քսուն պղծէ զանձն իւր. և յամե-
նեցունց ատի. և որ ընդ նմա բնակես
ցի՝ ատելագոյն եղիցի. լուռն՝ և զգօնն
պատուեսցի:

ԳԼ: ԻԲ:

1 Քարիւ կուեղինաւ քարկոծեցաւ
ծոյլն. և ամէն խօսին 'ի վր̃ քամա
2 հանաց նր̃: * Ի քակորէ եզանց քար-
կոծեցաւ պղերգն. և ամ̃ որ շօշափէ զնա,
3 թօթափէ զձեռն: * Ամօթ հօր է՝ որդ-
ւոյ անխրատութի. իսկ դուստր ներ
4 սարկաւունութե̃ եղիցի: * Դուստր
հանճարեղ ժառանգութի առն իւրոյ.
զի որ ամաչեցուցանէ՝ 'ի նախատինս լի
5 նի սերողաց: * Զհայր՝ և զմայր յամօթ
առնէ

առնէ համարձակն ․ և յամբարշտաց
ոչ պակասի ․ բայց յերկաքանչիւրոցն
անպատուիւ ։ * Երաժիշտ ներ սգուման 6
դէպ պատմութի ․ խոշտանկութի և
մակացութի յամենայն ժամու իմաս
տութե ։ * Որ ուսուցանէ զմորոս ․ 7
իբրու կցկցէ ոք զխեցեղէն ։ * Որ պատ 8
մէ զբան անլըոյ ․ իբրու զարթուցանէ
ոք զքնած 'ի քնոյ ծանուէ ։ * Ընդ քնա 9
ծի խօսի ․ որ ձառէ յիմարի զիմաստու
թի ․ և յաւարտի ձառին ասէ՝ զինչ է
Սիր. 38. 16. այս ։ * Ի վր մեռելոյ կոծեա՛, զի պա 10
կասեցաւ լոյս նր ․ և 'ի վր մորոսի լա՛ց՝
զի պակասեցաւ զգօնութի նր ։ * Սա 11
կաւ լա՛ց 'ի վր մեռելոյն՝ զի հանգեաւ ։
* Զի չարագունի կեանք , չարագոյնք 12
Ծննդ. 'ի վեր քան զմահ մորոսի ։ * ‖ Սուգ 13
50. 10. մեռելոյ զեօթն օր ․ իսկ մորոսին և ամ
բարշտին ամն աւուրք կենաց նր ։
* Ընդ յիմարի մի՛ բազում խօսեսցիս ․ 14
և ըն անմտին մի՛ գնասցես ։ * Պահեա՛ 15
զքեզ 'ի նմանէ ․ զի մի՛ վտանգեսցիս ․ և
մի՛ շաղախեսցիս 'ի մեղս նր ։ * Խոտո 16
րեա՛ց 'ի նմանէ ․ և գտցես զհանգիստ ․
և ոչ դառնասցիս 'ի յիմարութե նր ։
* Ի վր կապարի զինչ ծանրասցի ․ և 17
Եղինչ եթէ նմա այլ իմն անուն քան զմորոս ։
նմա *‖ Զաւազ՝ և զաղ՝ և զգանգուա՛ծ եր 18
‖ Առակ. կաթոյ դիւրին է բառնալ՝ քան զմարդ
27. 3. զանհանճար՝ և մորոս՝ և ամբարիշտ ։
* Պահանգակապ փայտեղէն շարա 19
փակեալ ներ հիման շինուածոյ՝ ոչ կոր
ծանեսցի ։ այնպէս և սիրտ հաստատուն
'ի խոկման խորհրդեան ։ * Խորհուրդ 20
զգօնի յամենայն ժամանակի , երկիւ
ղիւ ոչ թիւրեսցի ։ * Որպէս ցից 'ի բար 21
ձունս՝ և շաղախ թարց կափուցման
եդեալ ընդդէմ երեսաց հողմոյ ոչ կայ
ասցին ։ * Այնպէս և սիրտ երկչոտ 'ի 22
խոկման յիմարի՝ ընդդէմ ընթացից
Երիւղի երկչոտի ոչ ընդդիմասցի ։ * Որպ սիրտ 23
դանդաղկոտ 'ի խորհրդեան մորոսի ․
ամենին ամանակաւ ոչ զանգիտեսցէ ․
այնպէս և որ ներ հրամմանաց այ ներկայա
նայ միշտ ։ * Խթեալ ակն արտաբերէ 24
զարտասուս ․ և որ խթէ զսիրտ , յա
ռաջբերէ զզգօնութի ։ * Որ ձգէ զքար 25
թռչնոյ՝ ստորարկանէ զնա ․ այնպէս
և որ նախատէ զբարեկամ , լուծանէ
զբարեկամութի ։ * Առ բարեկամ ե 26
թէ հանցես զսուր , մի՛ յուսահատի
ցիս ։ զի է անդրէն դարձումն առ բա
րեկամն ։ * Եթէ բացցես զբերան տրտ 27
մութե՝ մի՛ երկիցես ․ զի է համակա
մութի 'ի բաց թողլով զանարգանս՝
և զնախատինս՝ և զհպարտութիւն՝ և
զբացայայտութի խորհրդոյ ․ և զհար
ուածս խարդախս ․ յայսցանէ ամենց

28 փախիցի բարեկամ ։ * Զհաւատար
մութի ստացի՛ր ընդ բարեկամի յաղ
6 քատութե նր ․ զի և 'ի բարիս նր ուրա
29 խասցիս ։ * Ի ժամանակի նեղութեան
նր մնա՛ նմա հաւատարիմ ․ զի և ի՛ ժա
7 ռանգութե նր ժառանգակից լիցիս ։
8 30 * Յառաջ քան զհուր հնոցի՝ մրրիկ և
ծուխ հրոյ բարձրանայ ․ այնպէս և յա
9 ռաջ քան զարիւն չարաբանութի ․ և
31 թշնամանք՝ և սպառնալիք ։ * Զբա
րեկամ ողջունել ոչ պատկառեցայց ․
10 յերեսաց նր զիս ոչ թաքուցից ։ և թէ
չարիք ինձ հասանիցեն 'ի ձեռն նորա ։
Այսպէս ասէ Տէր Ա.Ճ քրիստոսի իւր՝ 1
կիւրոս, զորոյ կալայ զաջոյ ձե-
ռանէ նորա՝ հնազանդեցուցանել ա-
ռաջի նորա զազգս. և զքաղաքս մի՛ փա-
գաւորաց խորտակեցից. բացից առա
ջի նորա զդրունս. և քաղաքք մի՛ փա-
կեսցին։ *Ես երթայց առաջի քո. 2
զլերինս հարթեցից. և զդրունս պղնձի
ձիս խորտակեցից, և զնիգս երկաթիս
փշրեցից։ *Եհ տայց քեզ զգանձս 3
խաւարինս. և զաճանգս աներևոյթս
քայից քեզ. զի ծանիցես, թէ ես եմ
Տէր Ա.Ճ. որ կոչեցի զանուն քո՝ Ա.Ճն
իսրայէլի։ *Վ ասն յակոբայ ծառայի իմոյ 4
և իսրայէլի ընտրելոյ. ես կոչեցի քեզ
զանուն քո՝ և ընկալայ զքեզ. և դու
գիս ոչ ծանեար. թէ ես եմ Տէր Ա.Ճ. և
չիք այլոք։ *Ես Տէր՝ և ոչ գոյ այլ բայ 5
լինէն ոչ գոյ Ա.Ճ. զգօտի ածի քեզ՝ և
ոչ ծանեար զիս։ *Ո՛ զի գիտասցեն աք՝ 6
որք յարևելից՝ և որք յարևմտից՝ զի բայ
լինէն այլոք ոչ գոյ. թէ ես եմ Տէր Ա.Ճ
և չիք այլոք։ *Ես եմ, որ հաստատեցի 7
զլոյս՝ և արարի զխաւար. ես եմ, որ առ
նեմ զխաղաղութիւն՝ և հաստատեմ զչար.
ես եմ Տէր Ա.Ճ որ առնեմ զայս ամ։

*Ուրախ լինիցին երկինք՝ի վերուստ. և 8
ամպք յօղեսցեն զարդարութիւն։ բղխեսցէ երկիր զողորմութիւն. և զարդարու
թիւն առ հասարակ բղխեսցէ. ես եմ
Տէր՝ որ հաստատեցի զքեզ իբրև զլաւ
հիմն։ *Ստեղծի զքեզ իբրև զկաւ բր- 9
տի. միթէ զօրն ամ հերկէ, որ հերկէն
զերկիր։ ‖ միթէ ասիցէ կաւն ցբրուտն՝ ‖ Ա Հռոմ. 9.20.
զի՞ կաս՝ զի ոչ գործես. չիք քո ձեռք։ Ա Թես. 1 8.6.
միթէ ասիցէ ստեղծուածն ցստեղ-
ծիչն իւր՝ թէ ընդէր այդպէս ստեղ
ծեր զիս։ *Վ՛այ որ ասէ ցհայր իւր՝ 10
թէ ընդէր ծնար զիս. կամ ցմայր իւր՝
թէ ընդէր երկնեցեր զիս։ *Ո՛ի այս 11
պէս ասէ Տէր Ա.Ճ իմ՛իւ. որ արար զայնս՝
որք յապագայն գալոց են. հարցէք զիս վե
րագոյն իմոց՝ և զստեղծագ. և վասն
գործոց ձեռաց իմոց պատուիրեր տուք
ինձ։ *Ես արարի զերկիր՝ և զմարդ՝ի 12
վերայ նր. ես ձեռամբ իմով հաստա
տեցի զերկինս. ես ամենայն աստեղաց
եսաւ հրամայեցի։ *Ես յարուցից զնա 13
արդարութեամբ թագաւոր. և ամ ճա
նապարհս նր ուղղեցք են. նա շինեսցէ
զքաղաքն իմ. և զգերեալ ժողովրդեան
իմոյ դարձուսցէ. ոչ կաշառօք և ոչ
պատարագօք ասէ Տէր զօրութեանց։

*Այսպէս ասէ Տէր զօրութեանց. վաս 14
տակ եղև երկիրն եգիպտացւոց՝ և վա
ճառականք եթէոպացւոց՝ և սաբայեցիքն. արք մեծամեծք առ քեզ անց
ցեն, և քեզ ծառայեսցեն. և զկնի քո
շղթայիւն կապեալք ձեռակապօք. և
առ քեզ եկեսցեն. և քեզ երկիր պագցեն՝
և՝ի քեզ ուխտադիրք լինցին՝ զի՝ի քեզ
Ա.Ճ գոյ. և ասասցեն՝ թէ ոչ գոյ այլ
Ա.Ճ բայ՝ի քէն։ *Դու ես Ա.Ճ և մարդ 15
ոչ գիտեաք. Ա.Ճ իսրայէլի փրկիչ։ *Ա.մա 16
չեսցեն՝ և յամօթ լինիցին ամ՛ հակառա
կորդք նորա՝ և գնասցեն ամօթով ամ
տարապետք մոլորութեանց, նորոգեցա
րուք առ իս կողմն։ *Ո՛ի իսրայէլ փրկե 17
ցաւ զփրկութիւնն յաւիտենից. մի՛ ամա
չեսցեն՝ և մի՛ ևս յամօթ լինիցին մինչև
յաւիտեան։ *Ո՛ի այսպէս ասէ Տէր՝ 18
որ արար զերկինս. սա՛ Ա.Ճ որ հաս
տատեաց զերկիր՝ և արար զնա. սա՛
որ սահմանեաց զնա. և ոչ՝ի զուր ինչ
արար զնա, այլ՝ի բնակութիւն ստեղծ
զնա։ ես եմ Տէր՝ և չիք այլոք։ *Ո՛չ՝ի 19
ծածուկ ինչ խօսեցայ՝ և ոչ՝ի տեղւոջ
խաւարին երկրի. չասացի ցզաւակն
յակոբայ թէ անուտիս խնդրեսջիք. ես
եմ. ես եմ Տէր. որ խօսիմ՝ զարդարու
թիւն՝ և պատմեմ զճշմարտութիւն։ *Ա՛ 20
ղովեցարուք՝ և եկայք՝ խորհեցարուք
՝ի միասին ապրեալքդ՝ի հեթանոսաց.
ոչ ծանեան՝ որք բարձեալ բերկին զը
փայտն դրօշեալ. և կան յաղօթս առ
աստուածս՝ որք ոչ փրկեն զնոսա։

*Այթէ պատմիցեն՝ անդէ մերձեսցին, 21
զի գիտասցեն՝ի միասին. ո՛րեքի արար
զայս ամ՛ի սկզբանէ. և յայսմհետէ
պատմեցաւ ձեզ. ես եմ Ա.Ճ և չիք այլ
ոք բայ յինէն արդարև փրկիչ և չիք
ոք բայ յինէն։ *Դարձարուք առ իս՝ 22
և ապրեսջիք՝ որք եկեալք էք՝ի ծա
գաց երկրի. ես եմ Ա.Ճ և չիք այլոք։
*Ընդէն իմ երդնում. թէ որինչ ելա 23
նէ՝ի բերանոյ իմոյ՝ արդարութի՛ն. և
բանք

‖ Հռոմ. 14.11. քանք իմ ոչ եղծցին ։ *‖ Օր ինձ կրկ 24
նեսցի ամենայն ծունր . և խոստովան
Փիլիպ. 2.10. լիցի ամ լեզու Աստ ։ * Նմ ասացէք՝ 25
Թէ արդարութի՛ւն և փառք՝ առ նա և
կեացեն . և ամաչեսցեն ամենեքեան՝
որք որոշեն զանձինս իւրեանց՝ի Տէ ։
*Արդարասցին ամենայն սերունդ՝ և փառա 26
Տրեսցի ամ՝ զաւակ որդւոցն Իսրայ ։

ԳԼ։ ԽՕ։

Նկաւ Բէլ՝ խորտակեցաւ Դագոն . 1
եղեն դրօշեալք նո՛ք՝ի գազանս՝ և
յանասունս . բարձէք զնո՛ կապեալս
իբրև զբեռն աշխատեցելոյ՝ և քաղցե
ցելոյ ։ * Քեզոյ և տկարացելոյ՝ի միա 2
սին . որք ոչ կարիցեն ապրիլ՝ի պատե
րազմէ . և նոքա՛ի գերութի՛ւն վարեցան ։
* Ունկարուք ինձ տունդ յակոբայ . և 3
ամենայն մնացեալդ իսրայ . ընտրեալքդ յորո
վայնէ՝ և խրատեալքդ՝ի մանկութէ ։
*Մինչև ցծերուի՛ն ես եմ։ և մինչև 4
կարի իակ ծերասջիք սակայն ես եմ.
ես համբերեմ ձեզ . ես արարի . և ես
անասայից . ես ընկալայց՝ և ապրեցու
ցից զձեզ ։ * Ում նմանեցուցիք զիս . 5
տեսէք՝ հնարեցարուք մոլորեալքդ ։
* Որք արկանէք ոսկի հանգանակ՝ի 6
քսակէ . և կշռէք զարծաթ՝ի կշիռս .
և՝ի վարձու ունիք զոսկերիչս գործել
կուռս ձեռագործս . և խոնարհեալ
Ներկիրպագանէք նոցա ։ * Վարձեալ 7
բերէք՝ի վե՛ր ուսոց . և եթէ դնիցէք՝ի
գետնի , անդէն՝ի տեղւոջ մնան՝ և ոչ
շարժեսցին ։ և եթէ ոք կարդայցէ առ
նա՝ ոչ լսէ . և՝ի չարեաց ոչ փրկեսցէ
զնա ։ *Յիշեցէք զայս՝ և յոգւոյ հա 8
նէք . ապաշաւեցէք մոլորեալքդ . դար
ձարուք սրտիւք . * Նմ յիշեցէք զառա 9
ջինն գործմն յաւիտենից՝ զի ես եմ, և
չէ այլոք բայց յինէն ։ * Որ պատմեցի 10
յառաջագոյն վերջինսն՝ մինչև եղեւ
իցեն . և միանգամայն կատարեսցին .
և ասացի Թէ՝ ամ խորհուրդք իմ հաս
տատեսցին . և՝ամ՝ զոր կամիմ արարից ։
*Կոչել յարևելից Թռչուն , և յերկ 11
րէ հեռաստանէ, վե՛ր որոյ խորհեցայն .
խօսեցայ՝ և ածի՝ հաստատեցի՝ և ա
րարի . ածի զնա՝ և յաջողեցի ճանա
պարհս նորա ։ * Ունկարուք ինձ կորու 12
սեալդ սրտիւք՝ հեռացեալքդ յար
դարութէ ։ * Երձեցուցի զարդարու 13
թի՛ւն իմ . և այլ ոչ հեռասցի . և զձգմար
տութէ՛ և զփրկութէ՛ իմ ոչ յամեցու
ցից. եւտու՝ի սիօն զփրկութի՛ւն, իսրայէլի
՝ի փառաւորութէ ։

ՂԼ 2

ԳԼ։ ԽԱ։

Լռ՛ նիստ յերկրի օրիորդ դուստր
բաբելացւոց ։ նիստ՝ի գետնի . զի
չկայ աթոռ ։ մնա՛ի խաւար դուստր
քաղդէացւոց . ոչևս յաւելցիս կոչիլ
գիրգ և փափուկ ։ * Ա՛ռ զերկան . աղա
ւնիւր . ընկեա՛ զքօղքո ։ քարշեա՛ զա
կիս քո ։ բաց զսրունս քո,անց ընդ գետ
* Յայտնեսցի ամօթ քո. և երևեսցին ‖ Ղաս. 3. 5.
նախատինք քո . զի բարձից՝ի քէն զի
բաւունս քո . ոչևս մատնեսցէ զքեզ
մարդկան ։ * Որ փրկեացն զքեզ . Տէ
սաբաւօթ անուն է նորա՝ նոքա՛ իշէ ։
* Նիստ Թախծեալ՝ զոյժացեալ . մնա՛
՝իխաւար դուստր քաղդէացւոց ։ ոչ ևս
կոչեսցիս զօրութի՛ւն Թագաւորաց ։ * Ես
բարկացեալէի՝ի վերայ ժողովրդեան
իմոյ՝ զի պղծեցին զժառանգութի՛ւն իմ
ես մատնեցի զնո՛ա՝ի ձեռս քո. և դու ոչ
արարեր՝ի վե՛ր նո՛ց զողորմութի՛ւն ։ ծան
բացուցեր զլուծ ծերոց յոյժ ։ * Ա՛ռ ա 7
սացեր՝ յաւիտեան կացից իշխան . ոչ
երբէք եդեր զայս՝ի սրտի՛ քում. և ոչ
յիշեցեր զվախձան ։ * Նմ արդ լո՛ւր 8
զայս փափուկդ՝ որ նստեիր յանձնա
պաստան . և ասեիր՝ի սրտի՛ քում. ‖ Ես ‖ Յայտ. 18.7.
եմ, և չիք ոք իմ ընկեր ։ ոչ նստայց կայ
րութէ . և ոչ ծանեայց զստրկութի՛ւն ։
* Ա՛ռ արդ հասցեն յանկարծակի՝ի ‖ Այր. 51. 19.
վե՛ր քո երկոքեան սոքա՝ի միում աւուր.
այրութի՛ւն , և անզաւակութի՛ւն եկեսցէ
յանկարծակի՝ի վե՛ր քո՝ վասն դիւթու
թեց քոց . և վե՛ր զօրացեալ կախարդու
թեց քոց ։ * Նմ վե՛ր վստահութեց չա 10
րութեց քոց ։ զի ասեիր՝ ես եմ. և չիք
այլոք իմ՝ ընկեր ։ զայս դիտասջիր . զի
առնուցուս զայս՝ի միտ . և պողնկուհին
քո յամօթ լինիցի քեզ . և ասացեր՝ի
սրտի՛ քում, ես եմ. և չիք ոք իմ՝ ընկեր։
*Նմ հասցէ՝ի վե՛ր քո կորուստ՝ զոր ոչ 11
դիտիցես . և խորխորատ՝ և անկցիս՝ի
նա . և եկեսցէ՝ի վե՛ր քո Թշնամանութի՛ւն.
և ոչ կարասցես նո՛ա լինել ։ եկեսցէ՝ի վե՛ր
քո յանկարծակի կորուստ . և ոչ ծանիս
ցես ։ *Ա՛ղէ՝ կաց դու այժմ՝ի դիւթու 12
թիւդ քո. և՝ի բազում կախարդութիւն
քո՝ զոր ուսար՝ի մանկութէ՛ քումմէ.
Թէ կարասցես ինչ օգտել ։ * Նթէ կա 13
րասցես կազդուրել՝ զի աշխատեցար
՝ի խորհուրդսդ քո . յարիցեն՝ և ապրե
ցուսցեն զքեզ աստեղագէտքն՝ որք նշ
մարեն զաստեղս երկնից . պատմեսցեն
քեզ՝ զինչ գալոց է՝ի վե՛ր քո ։ * Նհաւա 14
դիկ ամենեքեան իբրև զխո՛ւ՝ի հուր
այրեսցին . և մի՛ ապրեցուսցեն զանձինս
իւրեանց՝ի բոցոյ անտի . զի նստիս՝ի
վե՛ր կայծականաց հրոյ . նոքա եղիցին

Ccccc 2 քեզ

15 քեզ յօգնականութի՛ : *Ասատակեսցեն
վաճառականք քո 'ի վաճառս քո 'ի մա՛ն
կութե՛է իւրեանց . այր ըստ առնէ մոլո
րեցան . և քեզ ո՛չ եղիցի փրկութի՛ :

ԳԼ: ԽԸ:

1 Լուարո՛ւք զայս տուն յակոբայ՝
անուանեալքդ յանուն Իէլի . ծը
նեալքդ 'ի զաւակէ յուդայ . որք երդ
նուք յանուն Տն Ա՛յ Իէլի . որք յիշա
տակէքդ ո՛չ ճշմարտութե՛բ՝ և ո՛չ ար
2 դարութե՛բ : *Որք խրախուսէք յանուն
քաղաքին սրբոյ՝ և հաստատեալ համա
րիք յանուն Ա՛յ Իէլի . Տր սաբաւօթ
3 անուն է նր : *Զառաջինսն տակաւին
պատմեմ . եւ 'ի բերանոյ իմոյ՝ և լսելի
եղև . յանկարծակի արարի՝ և եկն
4 էհաս : *Գիտեմ՝ զի խիստ ես . և ջիլք
երկաթիք պարանոց քո . և ճակատ քո
5 պղնձի : *Պատմեցաւ քեզ առաջինն .
և մինչև հասեալ էր առ քեզ . լսելի
արարի քեզ . մի՛ երբէք ասիցես թէ
կուռքն իմ արարին . և մի՛ ասիցես թէ
դրօշեալքն՝ և ձուլածոյքն պատմեցին
6 ինձ : *Լուայք զա՛մ՝ և ո՛չ առիք 'ի միտ .
այլև լսելի արարի քեզ զնորն՝ որ յայսմ
7 հետէ լինելոց է : *Նա՛ ոչ ասացեր՝ թէ
այժմ լինի . և ոչ 'ի վաղուց հետէ՝
յաւուրցն առաջնոց . և ոչ եղեր ունկն
դիր այնմիկ : մի՛ ասիցես . թէ այո՛, գի
8 տեմ զայդ : *Ո՛չ ո՛չ գիտես՝ և ո՛չ ի_
մանաս . և ոչ 'ի սկզբանէ բացեր զա_
կանջս քո . զի գիտացի՝ թէ արհամար
հելով արհամարհեսցես : և անօրէն
9 անդստին յորովայնէ կոչեսցիս : *Վն
անուան իմոյ ցուցի քեզ զբարկութի
իմ, և զփառաւորութիւս իմ, զոր ածի
'ի վ՛ր քո . զի մի՛ սատակեցից զքեզ :
10 *Ահաւադիկ վաճառեցի զքեզ ո՛չ ար
ծաթոյ . և զերծուցի զքեզ 'ի հնոցէ
11 աղքատութե՛ : *Վասն իմ արարի քեզ
||Մ եր. 42.8. զայդ . զի մի՛ անուն իմ հայհոյեսցի . || և
12 զփառս իմ այլում ո՛չ տաց : *Լուր ինձ
||Մ եր. 41. 4. յակոբ . և իէլ զոր եսդ կոչեմ . ||ես եմ
առաջին՝ և ես եմ յաւիտեանս :
13 և 44.6. *Ձեռն իմ էարկ հիմունս երկրի . և
աջ իմ հաստատեաց զերկինս . կոչեցից
զամենեսեան զնոսա . և կացցեն 'ի միա
14 սին : *Ժողովեսցին ամենեքեան և
լուիցեն՝ թէ ո՞ պատմեաց նա զայն :
առ սէր քո արարի զկամս քո 'ի վ՛ր բա
բելոնի , բառնալ զզաւակն քաղդէա
15 ցւոց : *Ես խօսեցայ՝ և ես կոչեցի .
ածի զնա՝ և յաջողեցի զճանապարհս
16 նր : *Մատերո՛ւք առ իս՝ և լուարո՛ւք
զայս : ո՛չ 'ի սկզբանէ 'ի ծածուկ ինչ խօ
սեցայ . և ո՛չ 'ի տեղւոջ խաւարին երկ_
րի . յորժամ լինէրն իսկ՝ ես անդ էի . և
արդ Տր Տր առաքեաց զիս , և հոգի նր :
17 *Այսպէս ասէ Տր՝ որ փրկեացն ըզ_
քեզ սրբն Իէլի . ես եմ Տր Ա՛ծ քո՝ ցու_
ցի քեզ գտանել զճանապարհ , ընդ որ
18 գնայցես : *Նա՛ եթէ լուեալ էր քո պա
տուիրանաց իմոց . լինէր քեզ իբրև
զգետ խաղաղութի քո . և արդարու
19 թի քո իբրև զալիս ծովու : *Նա՛ լինէր
իբրև զաւազ զաւակ քո . և ծնունդք որո
վայնի քո իբրև զհող երկրի . սակայն
և արդ ո՛չ սատակեսցիս . և ոչ կորիցէ
20 անուն քո առաջի իմ : *||Ելէ՛ք 'ի բաբե ||Երեմ.
լոնէ . փախերո՛ւք 'ի քաղդէացւոց . ձայն 51. 6.
ուրախութե՛ պատմեցէք . և լսելի եղի
ցի . պատմեցէք մինչև 'ի ծագս երկրի՝
զոր ասէքդ՝ եթէ փրկեաց Տր զծառայ
21 իւր զյակոբ : *||Նա՛ եթէ ծարաւեսցին ||Ելից.
յանապատին . հանցէ նց ջուր 'ի վէ_ 17.6.
մէ . վէմ պատառեսցի . ջուրք բղխես Թուոց
ցին . և արբցէ ժողովուրդն իմ : || ո՛չ գոյ 20. 11.
ուրախութի ամպարշտաց , ասէ Տր : ||Մր.
57.21.

ԳԼ: ԽԹ:

1 Լուարո՛ւք ինձ կղզիք , և ունկն դիք
հեթանոսք : յետ բազում ժամա
նակաց հաստատեսցի այդ ասէ : յար_ ասէ Տր
գանդէ կոչեաց զիս . և յորովայնէ մօր
2 իմոյ կարդաց զանուն իմ : *||Եդ զբե_ ||Մր.
րան իմ իբրև զսուսեր սուր . և ընդ հո 51.16.
վանեաւ ձեռին իւրոյ թաքոյց զիս . եդ
զիս իբրև զնետ մի ընտիր , 'ի կապարճս
3 իւր թաքոյց զիս : *Նա՛ ասէ ցիս . ծա
ռայ իմ ես դու Իէլ . և 'ի քեզ փառաւո
4 րեցայց : *Նա՛ ասեմ, զուր ուրեմն վաս
տակէի տարապարտուց : յոչինչ ետու
զզօրութի իմ : վն այսորիկ իրաւունք
իմ 'ի Տէ . և վաստակք իմ առաջի Այ
5 իմոյ : *Նա՛ արդ այսպէս ասէ Տէր . որ
ստեղծ զիս յորովայնէ ծառայ իւր .
ժողովել զյակոբ և զիէլ առ ինքն . ժո
ղովեցայց , և փառաւորեցայց առաջի
6 Տն . և Ա՛ծ իմ է ինձ զօրութի : *Նա՛
ասէ ցիս . մեծ է քեզ այդ . կոչիլդ քեզ
ծառայ իմ : հաստատել զազգն յակո
բու՝ և զցրուեալսն Իէլի դարձուցանել .
||ահաւադիկ եդի զքեզ յուխտ ազգի . ||Մ եր.
և 'ի լոյս հեթանոսաց . լինիլ փրկութի 42.6.
7 մինչև 'ի ծագս երկրի : *Այսպէս ասէ Գործ.
Տր . որ փրկեացն զքեզ Ա՛ծ Իէլի . սր_ 13.47.
բեցէք զայն՝ որ խոտէն զանձն իւր .
զաղարտեալն յազգաց 'ի ծառայիցն
իշխանաց : թագաւորք տեսցեն զնա՝
և յոտն կացցեն . իշխանք երկիրպագ_
ցեն նմա վն Տն . զի հաւատարիմ է սրբն
8 Իէլի՝ որ ընտրեաց զքեզ : *||Այսպէս ||2.Կոր.
ասէ ցիէլ Տր , 'ի ժամանակի ընդունե 6. 2.
լութե լուայ քեզ . և յաւուր փրկութե
ստեղծի զքեզ՝ և օգնեցի քեզ . և ետու
զքեզ

զքեզ յուխտ հեթանոսաց հաստատել
զերկիր. և ժառանգեցուցանել զժա
ռանգութիւնս աւերակս: *Ասել կա_ 9
պելոց՝ թէ ելէք. և որք 'ի խաւարին
իցեն՝ թէ յայտնեցարուք. յամ ճանա
պարհս արածեսցին. և յամ շաւիղս ճա
Յայտ. 7.16. րակք նց: *Մի քաղցիցին՝ և ոչ ծա 10
րաւեսցին՝ և ոչ խորշակահար լիցին յա
րևու. այլ որ ողորմելոցն է՝ մխիթա_
րեսցէ զնս և ընդ աղբերականս ածցէ
զնս: *Եւ եդից զամ լերինս 'ի ճանա 11
պարհս. և զամ շաւիղս յարօտս նոցին:
*Ահաւասիկ ոմանք եկեսցեն 'ի հե_ 12
ռաստանէ. ոմանք 'ի հիւսիսոյ և 'ի ծո
վէ. և ոմանք յերկրէ պարսից: *Ուրախ 13
լերուք երկինք՝ և ցնծասցէ երկիր. գո
չեսցեն լերինք զցնծութի. և բլուրք
զարդարութի: զի ողորմեցաւ Տր ժո_
ղովրդեան իւրում. և զխոնարհս ժո_
ղովրդեան իւրոյ մխիթարեաց: *Բայց 14
սիոն ասաց. եթող զիս Տր. և մոռա_
ցաւ զիս Ած: *Միթէ մոռանայցէ՞ 15
կին զմանուկ իւր. կամ ո՞չ գթասցի
'ի ծնունդս որովայնի իւրոյ: և եթէ
մոռանայցէ զայս կին. սակայն ես ո՛չ
մոռացայց զքեզ ասէ Տր: *Ահաւա_ 16
սիկ 'ի վր ձեռաց իմոց նկարեցի զպա
րիսպս քո. և առաջի իմ ես դու յամ
ժամ: *Եւ արագ շինեսջիր յայնցա_ 17
նէ՝ որք քակեցինն զքեզ. և որք աւե_
րեցին զքեզ՝ 'ի քէն 'ի բաց մերժեսցին:
Ես. 60. 4. *Համբարձ շուրջ զքև զաչս քո՝ և տես 18
զամենեսին. զի ահաւադիկ ժողովե_
ցան՝ և եկին առ քեզ: կենդանի եմ ես՝
ասէ Տր. զի զամենեսին զնոսա իբրև
զպատմուճան զգեցցիս. և արկցես զնս
զքև իբրև զզարդ հարսին: *Զի աւե 19
րակքն՝ և ապականեալքն՝ և կործա_
նեալքն քո՝ արդ նեղեսցին 'ի բնակչաց
իւրեանց: և հեռասցին 'ի քէն՝ որք կլա
նէինն զքեզ: *Զի ասասցեն յականջս 20
քո որդիքն քո՝ զոր կորուսեր. նեղ է
մեզ տեղիս, ընդարձակեա մեզ՝ զի
բնակիցուք: *Եւ ասասցես 'ի սրտի 21
քում. ո՞ ծնաւ ինձ զսոսա: զի ես
անզաւակ և այրի էի. պանդուխտ՝ և
արգելական. և զսոսա ինձ ո՛ սնոյց. զի
ես միայն մնացեալ էի. և սոքա ո՞ւր էին:
*Այսպէս ասէ Տր Տէր՝ ահաւադիկ 22
ամբարձից զձեռս իմ 'ի վր ազգաց. և
'ի կղզիս կանգնեցից զնշան իմ. ևած
ցեն զորդիս քո 'ի ծոցս իւրեանց. և
զդստերս քո 'ի վր ուսոց իւրեանց բար
ձեալ բերիցեն: *Եւ եղիցին թագա 23
ւորք դայեակք քո. և կանայք նոցա
մանկակալք քո. 'ի վր երեսաց երկրի
երկիրպագանիցեն քեզ. և զհող ոտից
քոց լիզեսցեն. և ծանիցես, եթէ ես

եմ Տր. և ո՛չ ամաչեսցեն՝ ոյք սպասեն
24 ինձ: *Միթէ հանիցէ՞ ոք զկողոպ_
տած սկայի. կամ վարիցէ՞ ոք տարա_
25 պարտուց զգերի՝ և ապրիցի: *Այսպ
ասէ Տր. եթէ ոք վարիցէ զհսկայ գե
րի. առցէ և զաւար նր. և քաջ ապրի՝
որ առնուցու զաւար հսկայի: այլ ես
զդատաստան իմ դատեցայց. և զոր_
26 դիս իմ փրկեցից: *Եւ կերիցեն նե_
ղիչք քո զմարմինս իւրեանց. և արբ_
ցեն իբրև զգինի նոր զարիւնս իւր_
եանց՝ և արբեսցին. և ծանիցէ ամ
մարմին՝ թէ ես եմ Տէր՝ որ փրկեցի
զքեզ. և օգնեցի՝ և զօրացուցի զյակոբ:

ԳԼ: Ծ:

1 Այսպէս ասէ Տր՝ ո՞ւր է թուղթն
ապահարզանի. որով արձակե_
ցի զմայրն ձեր: կամ ո՞ւր է գրաւական
վաճառականացն՝ որով վաճառեցի
զձեզ: այլ 'ի մեղս ձեր վաճառեցայք.
և վն անօրէնութեց ձերոց արձակեցի
2 զմայրն ձեր: *Զի եկի՝ և ո՛չ գոյր
մարդ. կոչեցի՝ և ոչոք էր՝ որ լսէր. Մի Ես. 59.1.
թէ ո՞չ կարէ փրկել ձեռն իմ. կամ ո՞չ
զօրեմ ապրեցուցանել. ահա կշտամ
բուք իմով աւերեցից զծով. և զգետս
ապականեցից. և ցամաքեսցին ձկունք
նց 'ի ջուրցն պակասութէ. և մեռցին
3 'ի ծարաւոյ: *Զգեցուցից զերկինս
խաւարաւ. և իբրև զքուրձ արարից
4 զհանդերձ նր: *Տր Տր տայ ինձ լեզու
խրատու. զի գիտացից խօսել 'ի ժամու
զբանն: պատրաստեաց զիս ընդ առաւ
5 օտս. յաւել ինձ ունկն 'ի լսել: *Եւ
խրատ Տն բանայ զականջս իմ. և ես
ոչ խոտանեմ. և ո՛չ ընդդէմ դառնամ:
6 *Զթիկունս իմ ետու 'ի հարուածս. Մատթ.
զծնօտս իմ յապտակս. և զերեսս իմ 26.67.
ո՛չ դարձուցի յամօթոյ ընդ երեսս
7 թքանելոյ: *Եւ Տր Տր եղև իմ օգնա
կան. վասն այսորիկ ոչ ամաչեցի. այլ
արարի զդէմս իմ իբրև զվէմ հաստա
տուն. և գիտացի՝ թէ ոչ ամաչեցից:
8 *Զի մերձ է՝ որ արդարացուցանէն Հռովմ.
զիս: ո՞վ է՝ ասոխն իմ, եկեսցէ՝ կացցէ 8.33.
'ի մէջ. և ո՞վ է՝ որ դատէն զիս՝ մերձես
9 ցի առ իս: *Զի ահաւասիկ Տր Տէր
օգնական է ինձ. ո՞վ է՝ որ չարչարիցէն դատա_
զիս: ահաւադիկ դուք ամենեքին իբրև պարտեցէ
զձորձս հնասջիք. և ցեց մեզամէս կե_
10 րիցէ զձեզ: *Ով իցէ 'ի մէնջ՝ որ երկն
չիցի 'ի Տէ. լուիցէ զձայն ծառայի նր.
որք գնային ընդ խաւար՝ և ո՛չ գոյր նց
լոյս. յուսացեալք յանուն Տն և խրա_
11 խուսեալք յԱծ: *Ահաւադիկ դուք
ամենեքեան իբրև հուրբ վառեալ
պատրաստիջիք իբրև 'ի բոցոյ. գնաս_
ջիք

ջիք 'ի լոյս հրոյ ձերոյ ․ և բորբոքեջիք
բոցով ։ վասն իմ եղև ձեզ այդ ․ 'ի
տրտմութեան ննջեսջիք ։

ԳԼ․ ԾԱ․

1 Լուարո՛ւք ինձ, որք զհետ երթայք
իրաւանց՝ և խնդրէք զՏր ․ նայե
ցարո՛ւք 'ի վէմն հաստատուն՝ յորմէ կո
փեցայք․ և 'ի գուբ հորոյն յորմէ փո
2 րեցայք ։ * Նայեցարո՛ւք յաբրահամ
հայրն ձեր՝ և 'ի սառրայ, որ երկնեացն
զձեզ ։ զի մի էր՝ և կոչեցի զնա ․ և օրհ
նեցի զնա ․ և սիրեցի զնա ․ և բազմա
3 ցուցի զնա ։ * Եւ արդ մխիթարեցից
զքեզ սիոն ․ և մխիթարեցից զամ զաւե
րակս նր ․ և արարից զամ աւերակս նր
իբրև զդրախտ ։ և զկողմն արևմտից
իբրև զդրախտ Տն ․ ուրախութի և
ցնծութի գտցին 'ի նմա․ խոստովանու
4 թի և ձայն օրհնութե ։ * Լուարո՛ւք ինձ․
Ժողովք լուարո՛ւք ինձ թագաւորք՝ և ունկնդիր
ազգք և լերուք ինձ ․ զի օրէնք յինէն ելցեն․ և
թագաւո- դատաստան իմ 'ի լոյս հեթանոսաց ։
5 րք * Մերձ արագ մերձեսցի արդարութի
իմ․ և ելցէ իբրև զլոյս փրկութի իմ ․
'ի բազուկ իմ հեթանոսք յուսասցին ․
ինձ կղզիք սպասեալ մնան ․ և 'ի բա
6 զուկ իմ յուսասցին ։ * Համբարձէք յեր
կինս զաչս ձեր ․ և հայեցարո՛ւք յերկիր
'ի խոնարհ ․ զի երկինք իբրև զծուխ
հաստատեալ են․ և երկիր իբրև զձորձս
մաշեսցի ․ և բնակիչք նր իբրև զնոյն
‖ Սաղմ. կորիցեն ։ ‖ Այլ փրկութի իմ յաւիտեան
36. 39. կացցէ ․ և արդարութի իմ մի պակա
7 սեսցի ։ * Լուարո՛ւք ինձ՝ որք գիտէք
զիրաւունս․ ժողովուրդ իմ, որոյ օրէնք
իմ 'ի սիրտս ձեր ։ մի երկնչիք 'ի նախա
տանաց մարդկան ․ և բամբասանք նց
8 զձեզ մի պարտեսցեն ։ * Զի իբրև
ձորձք ընդ ժամանակաւ մաշեսցին ․ և
իբրև զասր որ ուտիցի 'ի ցեցոյ ։ բայց
արդարութի իմ յաւիտեան կացցէ ․ և
9 փրկութի իմ յազգս յազգս ։ * Զար
թի՛ր, զարթի՛ր եմ․ և զգեցի՛ր զզօ
րութի բազկի քո․ զարթի՛ր իբրև յաւ
ուրցն 'ի սկզբանէ՝ իբրև յազգացն յա
ւիտենից ։ ո՛չ դու այն ես՝ որ տաշեցեր
զլայնութիւն, վանեցեր զվիշապն ։
10 ‖ Ելից. * ‖ Ոչ դու այն ես՝ որ աւերեցեր զծովն
14. 21. զբազմութի ջուրցն անդնդոց․ որ արա
րեր զխորս ծովու ճանապարհ անցից
11 փրկելոցն և ապրելոց ։ * Զի 'ի Տէ եղե
ցի դարձ ․ և եկեսցեն 'ի սիոն ցնծութ
և ուրախութբ յաւիտենից․ զի 'ի վերայ
գլխոց նոցա օրհնութի ․ և ուրախութի
հասցէ նց․ մերժեցան ցաւք և տրտմու
12 թիք և հեծութիք ։ * Ես եմ, ես եմ
նոյն՝ որ մխիթարեցի զքեզ ․ ճանի՛ր՝
զինչ ոք էիր ․ և երկեար 'ի մահկանա
ցու մարդոյ ։ և յորդւոյ մարդոյ՝ որ իբ
13 րև զխոտ ցամաքեցաւ ։ * Եւ մոռացար
զՏր Ած զարարիչ քո ․ որ արար զերկինս ․
և հաստատեաց զերկիր ։ և երկնչէիր
միշտ զամ աւուրս, յերեսաց սրտմտու
թե նեղչին քոյ՝ ոյր խորհեցաւ ջնջել
զքեզ ։ և արդ ո՞ւր է սրտմտութի նեղ
14 չին քոյ ։ * Զի 'ի փրկութեն քում ո՛չ
կարասցէ կալ ․ և ոչ յամեսցի ․ և ոչ
սպանցէ զքեզ յապականութի ․ և ո՛չ
15 պակասեսցի հայն քո ։ * Զի ես եմ
Տր Ած քո՝ որ խռովեմ զծով ․ և գոչե
ցուցանեմ զալիս նորա ․ Տր սաբաւովթ
16 անուն է իմ ։ * ‖ Եդից զբանս իմ 'ի ‖ Ես.
բերան քո ․ և ընդ հովանեաւ ձեռին 49. 2.
իմոյ ծածկեցից զքեզ․ որով կանգնեցի
զերկինս ․ և արկի հիմունս երկրի․ և
ասացի ցսիոն՝ ժողովուրդ իմ ես դու ։
17 * Զարթի՛ր, զարթի՛ր․ և արի՛ կաց եմ։
որ արբեր 'ի ձեռանէ Տն զբաժակ բար
կութե նորա ․ զբաժակն կործանման՝
զբաժակն սրտմտութե ․ զոր արբեր՝
18 և թափեցեր ։ * Եւ ոչո՛ք էր՝ որ մխի
թարէր զքեզ յամ որդւոցն քոց՝ զորս
ծնար ։ և ոչո՛ք էր՝ որ ձեռնտու լինէր
քեզ յամ որդւոցն քոց՝ զորս բարձրա
19 ցուցեր ։ * ‖ Երկու ինչ հակառակ կան ‖ Ես.
քեզ ․ ո՞վ է, որ տրտմակից լինիցի քեզ։ 47. 9.
կործանումն, և բեկումն․ սով և սուր ։
20 և ո՞ մխիթարեսցէ զքեզ ։ * Որդիքն քո
տարակուսեալք՝ որք ննջեն 'ի կիցս ամ
ճանապարհաց․ իբրև զճակնդեղ կի
սեփեաց․ լիք են 'ի բարկութե Տն, լու
21 ծեալք 'ի Տէ Այ ։ * Վսն այսորիկ լո՛ւր
այսմ տառապեալդ՝ որ արբեալդ ես՝
22 և ոչ 'ի գինւոյ ։ * Այսպէս ասէ Տր Ած
որ դատէ զժողովուրդ իւր ․ ահաւա
դիկ 'ի բաց առի 'ի ձեռանէ քումմէ
զբաժակն կործանման՝ զբաժակն սրտ
մտութե իմոյ ․ և ո՛չ ևս յաւելցիս ըմ
23 պել զնա ։ * Եւ տաց զնա 'ի ձեռս չա
րչարացն քոց․ և 'ի ձեռս այնոցիկ որք
տառապեցուցինն զքեզ ։ որք ասէին
ցանձն քո՝ խոնարհեա՛ց , թո՛ղ անց
ցուք ․ և եդիր հաւասար երկրի զմէջ
քո արտաքոյ անցաւորաց ։

ԳԼ․ ԾԲ․

1 Զարթի՛ր՝ զարթի՛ր սիոն․ և զգե
ցի՛ր զզօրութի քո սիոն․ և դու
զգեցի՛ր զփառս քո եմ քաղաքդ սր
բոյն ։ զի ո՛չ ևս յաւելցին անցանել ընդ
2 քեզ պիղծք՝ և անթլփատք ։ * Թօթա
փեա՛ զփոշիդ․ յարո՛ւ կաց՝ և նի՛ստ եմ ։
լո՛յծ զկապ պարանոցի քո դերի
3 դուստր սիոնի ։ * Զի այսպէս ասէ Տր․
ձրի վաճառեցայք ։ և ո՛չ արծաթով
փր-

Ծննդ. փրկեսջիք: *Զի այսպէս ասէ Տ՟ր. Յեր_ 4
46. 6. կիրն եգիպտացւոց էջ ժողովուրդ իմ
զառաջինն՝ բնակել պանդխտութեամբ:
և յասորեստան բռնութեամբ վարեցան:
*Եւ արդ՝ ընդէ՞ր էք աստ. այսպէս ասէ 5
Տ՟ր. զի վարեցաւ ժողովուրդ իմ ձրի.
զարմացեալ էին, և լային: այսպէս ասէ
Հռովմ. Տ՟ր. Վասն ձեր անուն իմ հայհոյի հա
2. 24. նապազ 'ի մէջ հեթանոսաց: *Վասն 6
Եզեկ. այնորիկ ծանիցէ ժողովուրդ իմ զա_
36. 20. նուն իմ յաւուր յայնմիկ. թէ ես եմ
նոյն՝ որ խօսէի, և արդ եկի՝ հասի:
Հռովմ. *Իբրև զի գեղեցիկք են 'ի վ՟ր լե_ 7
10. 15. րանց ոտք աւետարանչի համբաւոյն
Նաւում խաղաղութեան. իբրև աւետարանչի բա
1. 15. րութեց. զի լսելի արարից զփրկութիւն
քո. ասել ցսիոն թէ թագաւորեսցէ
քեզ Ա՟ծ: *Օ՛ն ձայն պահապանաց 8
քոց բարձրացաւ. և 'ի նոյն բարբառ
առ հասարակ ցնծասցեն. զի դէմ յան
դիման տեսցեն զժամանակն՝ յորում
ողորմեսցի Տ՟ր սիոնի: *Երինք գո_ 9
չեսցեն աւերակօքն հանդերձ եր՟մի
զփրկութիւն: զի ողորմեցաւ նմա Տ՟ր. և
փրկեաց զեր՟մ: *Եւ յայտնի արասցէ 10
Տ՟ր զբազուկ իւր ս՟ր առաջի ա՟մ ազ_
Սաղմ. գաց: Եւ տեսցեն ա՟մ ծագք երկրի
97. 3. զփրկութիւն Ա՟յ մերոյ. *Ի բաց կա_ 11
Բ. Կորն. ցէք, 'ի բաց կացէք, ելէք այտի. Եւ 'ի
6. 17. պիղծս մի՛ մերձենայք. ելէ՛ք 'ի միջոյ ն՟ր.
մեկնեցարո՛ւք՝ որք բարձեալ բերէք
զսպաս Տ՟ն: *Օ՛ն ոչ խռովութեամբ ել_ 12
ջիք. և ոչ փախստեամբ գնայցէք. զի
առաջի ձեր Տ՟ր ինքնին գնասցէ. և որ
ժողովէն զձեզ Ա՟ծ ի՟ղի: *Ահաւադիկ 13
'ի միտ առցէ մանուկ իմ. վերասցի և
բարձրասցի և փառաւորեսցի յոյժ:
*Որ օրինակ զարմասցին բազումք 14
'ի վ՟ր քո. այնպէս անշքեսցի տեսիլ
քո 'ի մարդկանէ. և փառք քո յորդւոց
մարդկանէ: *Այնպէս զարմասցին ազգք 15
բազումք 'ի վ՟ր քո. և կարկեսցեն թա
Հռովմ. գաւորք զբերանս իւրեանց: զի որոց
15. 21. ոչ պատմեցաւ վ՟ն ն՟ր՝ տեսցեն. և որոց
ոչ իցէ լուեալ, 'ի միտ առցեն:

Յովհ. 12. 38.

ԳԼ: ԾԳ:

Հռովմ. 10. 16. Տէ՛ր ո՞ հաւատաց լրոյ մերում. և 1
բազուկ Տ՟ն ո՞ւմ յայտնեցաւ:
*Պատմեցաք առաջի նորա իբրև զմա 2
նուկ՝ իբրև զարմատ 'ի ծարաւուտ երկ
րէ. ոչ գոյր նորա տեսիլ՝ և ոչ փառք՝
տեսաք մեք զնա՝ և ոչ գոյր ն՟ր տեսիլ՝
և ոչ գեղեցկութիւն: *Այլ տեսիլ ն՟ր 3
անարգ՝ նուազեալ քան զա՟մ որդւոց
մարդկան. այր մի 'ի հարուածս՝ և գի
տէ համբերել ցաւոց: զի դարձուցեալ
Մարկ. զերեսս անարգեցաւ՝ և յոչինչ համա_
9. 11.
4 րեցաւ: *Սա զմեղս մեր բառնայ՝ և Մատթ.
վ՟ն մեր չարչարի. և մեք համարեցաք 8. 17.
զնա 'ի ցաւս՝ և 'ի հարուածս՝ և 'ի չար
5 չարանս իբրև յԱ՟յ: *Բայց նա վի_ 1. Կորն.
րաւորեցաւ վ՟ն մեղաց մերոց. և ստա 15. 3.
ժեցաւ վասն մերոց անօրէնութեանց.
խրատ խաղաղութեան մերոյ 'ի նմա. և ն՟ր
6 վիրօքն բժշկեցաք: *Ամենեքին իբրև
ոչխարք մոլորեալք՝ այր 'ի ճանապար_
հի իւրում մոլորեցաւ. և Տ՟ր մատնեաց
7 զնա առ մեղս մեր: *Եւ նա առ վշ_ Մատթ.
տին ոչ բանայ զբերան իւր. իբրև զոչ 26. 63.
խար 'ի սպանդ վարեցաւ. և իբրև որոջ Գործ.
առաջի կտրչի անմռունչ կայ. այնպէս 8. 32.
8 ոչ բանայ զբերան իւր: *Ի խոնար_
հութեան ն՟ր դատաստան նորա բարձաւ.
և զազգատոհմ նորա ո՞ պատմեսցէ. զի
բառնին յերկրէ կեանք ն՟ր. յանօրէ_
նութեանց ժողովրդեան իմոյ 'ի մահ վա
9 րեցաւ: *Եւ տաց զչարս փոխանակ
գերեզմանի ն՟ր. և զմեծամեծս փոխա
նակ մահու ն՟ր. զի անօրէնութիւն ինչ 1. Պետ.
ոչ գործեաց. և ոչ գտաւ նենգութիւն 'ի 2. 22.
10 բերան ն՟ր: *Եւ Տ՟ր կամի սրբել զնա 1. Յովհ.
'ի վիրաց անտի. եթէ տայցէք զվ՟ն մե_ 3. 5.
ղաց, անձինք ձեր տեսցեն զզաւակ եր_
կայնակեաց. և կամի Տ՟ր 'ի ձեռն նորա
11 բառնալ 'ի ցաւոց անձին ն՟ր: *Ցուցա
նել նմա լոյս՝ և ստեղծուլ իմաստութ՟բ.
արդարացուցանել զարդարն՝ որ մտա
դիւրն ծառայեաց բազմաց. և զմեղս
12 նոցա նա վերացուսցէ: *Վ՟ն այսորիկ
նա ժառանգեսցէ զբազումս. և զաւար
հզօրաց բաշխեսցէ. փոխանակ զի 'ի
մահ մատնեցաւ անձն նորա: Եւ ընդ Մարկ.
անօրէնս համարեցաւ. և նա զմեղս 15. 28.
բազմաց վերացոյց՝ և վասն անօրէնու Ղուկ.
թեանց նոցա մատնեցաւ: 22. 37.

ԳԼ: ԾԴ:

1 Ուրախ լեր ամուլ. որ ոչ ծնանէիր. Ղուկ.
գոչեա՛ և աղաղակեա՛ որ ոչդ երկ_ 23. 29.
նէիր. զի բազումք են որդիք սկրնդ_ Գաղատ.
կիդ՝ առաւել քան զարամբւոյն: քան 4. 27.
2 զի ասաց Տ՟ր: *Ընդարձակեա՛ զտեղի
խորանի քո և զվրահից քոց. կանգնեա՛.
և մի՛ անխայէր. երկայնեա՛ զապաւանս
դակս քո. հաստատեա՛ զցիցս քո:
3 *Յաջ և յահեակ թռուցիր. և զաւակ
քո զհեթանոսս ժառանգեսցէ. և զքա
4 ղաքս աւերեալս շինեսցես: *Մի՛ երկն
չիցիս, զի յամօթ արարին զքեզ. մի՛
պատկառեսցիս, զի նախատեցին զքեզ.
զի զամօթն յաւիտենից մոռասցիս. և
նախատինք այրութեան քոյ ոչևս յուշ լի
5 ցին քեզ: *Օ՛ն Տ՟ր է, որ առնէ քեզ
զայդ. Տ՟ր սաբաւօթ անուն ն՟ր. և որ Ղուկ.
փրկեաց զքեզ նոյն Ա՟ծ ի՟ղի ա՟մ երկրի 1. 32.
կո_

կոչեսցի ։ * Ոչ եթէ իբրև զկին մի 6
լքեալ տարակուսեալ կոչեաց զքեզ
Տր. և ոչ իբրև զկին մի ատեցեալ 'ի
մանկութենէ, այլ ասաց Ած ։ * Առժա 7
մանակ մի թողի զքեզ. և ողորմութբ
մեծաւ ողորմեցայց քեզ ։ * Առ փոքր մի 8
սրտմտութեն դարձուցի զերեսս իմ 'ի
քէն. և ողորմութբ յաւիտենից ողոր
մեցայց քեզ. ասաց՝ որ փրկեացն զքեզ ։
‖Ծննդ. 9. 11. *‖Եւ 'ի ջուրցն հեղեղէ առ Նոյիւ. այս 9
է ինձ, որպէս երդուայն նմա 'ի ժամանա
կին յայնմիկ չբարկանալ երկրի, նոյնպէս
և ոչ քեզ ։ *Եւ ոչ սպառնալեօք իմովք 10
շարժել զլերինս, և փոփոխել զբլուրս.
ոչ ողորմութի իմ պակասիցի 'ի քէն.
և ոչ ուխտ խաղաղութե քոյ անցանի
ցէ ։ ասաց Տր ։ * Հաշտեալ եմ ը քեզ 11
տառապեալդ և խախտեալդ, մինչև
մխիթարեսցիս. ահաւադիկ պատրաս
տեալ եմ կարկեհան զքարինս քո. և
զհիմունս քո շափիղայ ։ *Եւ կանգնե 12
ցից զաշտարակս քո յասպիս. և զդրունս
քո յականց վանակայց՝ և ածից շուրջ
զքև պարիսպ յընտիր ընտիր ականց
‖Յովհ. 6. 45. պատուականաց ։ *‖Եւ զամ որդիս 13
քո խրատեալս Այ. և 'ի բազում խա
ղաղութե մանկունք քո ։ * Եւ արդա 14
րութե շինեսջիր. 'ի բաց լեր յանիրաւէ
անտի. և ոչ երկիցես. և դողումն 'ի քեզ
ոչ մերձեսցի ։ * Զի ահաւադիկ եկք 15
առ քեզ վասն իմ մերձեսցին. և առ
քեզ ապաստան արասցեն ։ *Ահաւա 16
սիկ ես հաստատեցի զքեզ. ոչ որպէս
դարբին մի որ փչոմք կայծակունս ար
ծարծանէ և յառաջբերէ անօթս 'ի
գործ. այլ ես հաստատեցի զքեզ՝ ոչ 'ի
կորուստ ապականութե ։ *Ամ անօթ 17
մխասակար 'ի քեզ ոչ յաջողեսցի. և զամ
բարբառ՝ որ յարիցէ 'ի վր քո 'ի դա
տաստան, պարտեսցես. և ամ դատա
խազք քո 'ի նմին. զի դոյ ժառանգու
թի պաշտօնէից Տն. և դուք եղիջիք
ինձ իրաւացիք՝ ասէ Տր ։

ԳԼ. ԾԵ.

‖Սիրաք 51. 33. Որք ծարաւիդ էք՝ երթայք 'ի ջուր. 1
և որք միանգամ ոչ ունիք զարծաթ
երթայք՝ գնեցէք՝ և կերիջիք առանց
արծաթոյ՝ և գնոց գնոյ ։ *Եւ զձարպ 2
բնաւ ընդէ՞ր իսկ գնէք արծաթոյ՝ և
ոչ հացի. և զվաստակսն ձեր ոչ յագ
ուրդ. լուարուք ինձ՝ և կերիջիք զբա
րութի. և վայելեսցեն 'ի բարութե ան
ձինք ձեր ։ *Ունկնդիր լերուք լսելեօք 3
ձերովք՝ զհետերթայք ճանապարհաց
իմոց. լուարուք ինձ՝ և կեցցեն 'ի բա
րութե անձինք ձեր. և եդից ընդ ձեզ
‖Գործ. 13. 35. ուխտ յաւիտենական. ‖զսրբութիւնսն

4 դաւթի զհաւատարիմ ։ *Ահաւադիկ
'ի վկայութի հեթանոսաց ետու զնա.
իշխան և հրամանատար ազգաց ։
5 *Ազգք որք ոչ գիտիցեն՝ կարդասցեն
առ քեզ. և ժողովուրդք՝ որք զքեզ ոչ
ճանաչէին՝ ապաստան արասցեն զքեզ.
վասն Տն Այ քոյ սրբոյն Իէլի. զի փա
6 ռաւոր արար զքեզ ։ *Խնդրեցէք զՏր
և յորժամ գտանիցէք զնա՝ կարդացէք
առ նա ։ և իբրև մերձեսցի առ ձեզ ։
7 *Թողցէ ամպարիշտ զճանապարհս իւր.
և այր անօրէն զխորհուրդս իւր. և
դարձցի առ Տր՝ և գտցէ զողորմութի.
և առ Ած մեր՝ զի բազմապատիկ թող
8 ցէ զանօրէնութիս ձեր ։ *Զի ոչ են
խորհուրդք իմ իբրև զխորհուրդս ձեր.
և ոչ ճանապարհք իմ իբրև զճանա
9 պարհս ձեր՝ ասէ Տր ։ *Այլ որպէս հեռի
են երկինք յերկրէ. այնպէս հեռի են
ճանապարհք իմ 'ի ճանապարհաց ձե
րոց. և խորհուրդք իմ 'ի խորհրդոց ձե
10 րոց ։ *Զոր օրինակ եթէ իջանիցէ
անձրև կամ ձիւն յերկնից. և անդրէն
ոչ դառնայ. մինչև արբուսցէ զերկիր՝
ծնցի, և բղխեսցէ. ‖տացէ զսերմ սեր ‖2. Կորնթ.
մանողի՝ և զհաց 'ի կերակուր ։ 9. 10.
11 *Այնպէս եղիցի բանն իմ, որ ելանէ
'ի բերանոյ իմմէ. մի դարձցի դատարկ՝
մինչև կատարեսցէ, զորինչ կամիցիմ.
և դիւրեցից զճանապարհս քո. և զճա
12 նապարհս իմ պահեսցես ։ *Զի ուրա
խութբ ելջիք. և ցնծութբ ուսանի
ջիք. զի լերինք և բլուրք կայտառեսցին
ընդունել զձեզ ուրախութբ. և ամ
ծառք անտառի ծափս հարցեն ոստովք
13 իւրեանց ։ *Եւ փոխանակ ցրդոյն նոճ
բուսցի. և փոխանակ դժնկին մուրտ
ելցէ. և եղիցի Տն յանուն և 'ի նշան
յաւիտենից՝ և մի պակասեսցի ։

ԳԼ. ԾԶ.

1 Այսպէս ասէ Տր. ‖զգոյշ կացէք ‖Իմաստ.
իրաւանց՝ և գործեցէք զարդա 1. 1.
րութի. զի եկեալ հասեալ է փրկութի
իմ. և յայտնելոց է ողորմութի իմ ։
2 *Երանի առն՝ որ առնիցէ զայն. և
մարդոյ՝ որ կացցէ 'ի նմին. և պահիցէ
զշաբաթս իմ՝ և ոչ պղծիցէ. և պահի
ցէ զձեռս իւր յառնելոյ զանիրաւութի
3 *Մի ասասցէ օտարազգին, որ եկեալ
յեցեալ իցէ 'ի Տէր. եթէ մերժելով
մերժեսցէ զիս Տր 'ի ժողովրդենէ իւր
մէ. և մի ասասցէ ներքինին՝ թէ ես
4 եմ փայտ չոր ։ *Այսպէս ասէ Տր ցներ
քինիս՝ որք պահիցեն զպահպանութիս
իմ. և ընտրիցեն զոր կամիմ. և կալցեն
5 յուխտին իմում ։ *Տաց նոցա 'ի տան
իմում. և ընդ պարսպաւ իմով տեղի
անուա_

անուանի՝ առաւել քան զուսաերայ և
զդստերայ · անուն յաւիտենական
տայց նմ՝ և մի պակասեսցի ։* Եւ զայլ 6
ազգին՝ որք եկեալ յեցեալ իցեն ՚ի
Տէր՝ ծառայել նմա՝ և սիրել զանուն Տեր·
լինիլ նմա ՚ի ծառայս և յաղախնայս ·
և զամենեսեան՝ որք պահիցեն զշա-
բաթս իմ, և ոչ պղծիցեն · և կացցեն
յուխտին իմում ։* Տարայց զնոսա ՚ի 7
լեառն սրբութե՛ն իմոյ · և ուրախ արա
ըիկ զնոսա ՚ի տան աղօթից իմոց · ողջա
կէզք նոցա՝ և պատարագք նո՛ր ընդու-
Ա՚Ա- նելիք լիցին ՚ի վե՛ր սեղանոյ իմոյ ։ ‖ զի 8
21.13. տուն իմ տուն աղօթից կոչեսցի ա՛մ
Մարկ. հեթանոսաց ։* Ո՚ասէ Տէր՝ որ ժողո
11. 17. վէ զցրուեալսն Իսրա՛էլ · Թէ ժողովեցից
Ղ ա՛ւ. ՚ի վե՛ր նո՛ր ժողովս ա՛մ գազանաց անա-
19.46. պատի ։* Ակա՛յք՝ կերա՛յք ա՛մ գազանք 9
անտառի ։* Տեսէ՛ք · զի կուրացան ամե- 10
նեքեան՝ և ո՛չ գիտեն զհանձար · ամե
նեքեին ո՛չ շունք համրացեալք՝ որք ո՛չ
կարիցեն հաջել · յերազանան յանկո-
ղինս · սիրեն զնիրհել ։* Իբրև շունք 11
լիրբք եղեն յանձինս իւրեանց՝ որք ո՛չ
գիտեն զյագուրդ · և են չարք՝ և ո՛չ
ճանաչեն զհանձար · ամենեքեին ըստ
իւրաքանչիւր ճանապարհաց իւրեանց
գնացին ։* Ակա՛յք՝ առցո՛ւք զգինի · և 12
գինեհարիցո՛ւք արբեցուցի՛ւ · եղիցի այն
պիսի օրն մեզ զոհ մեծ առնել յոյժ ։

ԳԼ։ ՆՒ։

Տեսէ՛ք՝ զիաւրդ կորեաւ արդարն · և 1
չիք, որ անապ սրտի՛ւ · և արք ար-
դարք բառնին՝ և ոչք հայի · զի յերե
սաց անիրաւութե՛ն բառնի արդար ։
*Եղիցի խաղաղութի՛ւն գերեզմանն նո՛ր · 2
զի բարձաւ ՚ի միջոյ ։* Ապա դուք մա 3
ո՛ւք յառաջ՝ որդիք անօրէնք · որդիք
պոռնկորդիք · որդիք չնաւթե՛ ։* Ո՛վ 4
պերճասցյք · կամ յո՞յր վե՛ր բացիք զլե
բանս ձեր · և առ ո՞ արձակեցիք զլե-
զուս ձեր · ո՞չ դուք որդիք կորստեան
են՝ զաւակք անօրէնութե ։* Որք ան- 5
կեալ աղաչէիք զկուռս ձեր ՚ի ներքոյ
անտառախիտ ծառոյ՝ զոհէիք զորդիս
ձեր ՚ի խորաձորս · ՚ի մէջ գլխոյց վիմաց ։
*Ո՛չ ՚ի կողմանս ձորոյն՝ այնե՛ բաժին 6
քո՝ և նոյն վիճակ քո · նո՛ր հեղեր զնը-
ո՛ւէրս · և նոցին մատուցեր զպըհս · ի վե՛ր
այդր ասի ո՞չ բարկանայցեմ՝ ասէ Տէր
*Ի լերինն մեծի և բարձ՝ անդէ ան 7
կողմն քո · և անդր եղեր զոհել զպըհս ։
*Ո՛չ յետոյ դրանդեաց դրանց քոց 8
հաստատեցեր զյիշատակս քո · կար-
ծէիր, եթէ չինէն ՚ի բաց կացցես, ասե
լի ինչ գտանիցես · լայնեցեր զանկո-
ղինս քո · և տարածեցեր զքեզ առնո-

9 քաջ · սիրեցեր զհոմանիս քո ։* Ո՛չ բաղ
մացուցեր զպոռնկութի՛ւնս քո առնո ։
և զբազումն ՚ի հեռաւորաց արարեր
քեզ · և առաքեցեր հրեշտակս արտա
քոյ սահմանաց քոց · նկուն եղեր՝ և
10 ինքեր ՚ի դժոխս ։* Ո՛չ աշխատեցար ՚ի
բազում ճանապարհորդութի՛ւնս քո · և
ոչ ասեիր՝ Թէ արդ հանգեայց · զի
զայն առ ուժի գտիր ձեր · վ՚ն այնորիկ
11 ոչ հնազանդեցար ինձ ։* Յումմէ՞
զանգիտեալ զարհուրեցար · զի ստե-
ցեր ինձ՝ և ոչ յիշեցեր զիս՝ և ոչ ածեր
զմտաւ՝ և ոչ եդեր ՚ի սրտի քո՛ւմ: և ես
անսի զքեզ՝ և անտես արարի ։ ես այն
եմ, որ յաւիտենից եմ· և դու չինէն
12 ոչ զանգիտեցեր ։* Ո՛րդ ես պատմե-
ցից զարդարութի՛ւն իմ, և զբարիսն քո՝
13 որք ոչ օգնեցինքեզ ։* Յորժամ աղա
զակիցես · և ոչ ապրեցուցցեն զքեզ ՚ի
նեղութե՛ քումմէ · զի զամենեսեան զնո
հողմք առցեն · և մի՛րիկք բաժանես-
ցեն · իսկ որք յիս յուսացեալք են՝
ստացցին զերկիրն · և ժառանգեսցեն
14 զլեառն սրբութե՛ն իմոյ ։* ‖ Ո՛չ ասաս ‖ Ա՚ԺԲ·
ցեն · Հորդեցէ՛ք ծառայի նորա Հանա- 62.10.
պարհս · և ՚ի քաց արարէ՛ք զկոչ և
զկուռք ՚ի Հանապարհէ ժողովրդեան
15 իմոյ ։* Ո՞յսպէս ասէ բարձրեալն՝ որ
՚ի բարձունս բնակեալ է յաւիտեան՝
սեան ՚ի մէջ սրբոց · որոյ անուն բարձ-
րեալ է՝ և ՚ի սուրբս հանգուցեալ · որ
տայ զերկայնմտութի՛ւն տարակուսելոց·
և կեանս այնոցիկ՝ որք մաշեալք են սր
16 տիւք ։* Ո՛չ ոչ յաւիտեանս խնդրեսից
զվրէժս ՚ի ձէնջ · և ոչ յանագ բարկա-
ցայց ձեզ · զի հոգի յինէն ելանէ · և զնմ
17 շունչ ես արարի ։* Ո՛ւ ան մեղաց առ
ակաւ մի արամեցուցի զնա·հարի զնա
և դարձուցի զերեսս իմ՝ ՚ի նմանէ · և
տրամեցաւ՝ և գնաց թափածեալ առա-
18 զն իմ զհանապարհս իւր ։* Զհանա-
պարհս սրտի նորա տեսի · և բժշկեցի
զնա · և մխիթարեցի զնա · և ետու նմա
մխիթարութի՛ւն ճշմարտութե՛ն և սգաւո
19 րաց նո՛ր ։* Հաստատեցի զպտուղ խա
ղաղութե՛ ՚ի վերայ խաղաղութե՛ հե-
ռաւորաց և մերձաւորաց, ասէ Տէր՝ և
20 ես բժշկեցից զնոսա ։* Ո՛ւլ անօրէնք
իբրև զծով ծփեսցին՝ և չհանգիստ մի՛
գացեն · և կորիցէ ջուր նորա ՚ի կո-
21 խամն և ՚ի կաւ ։* ‖ Ո՛չ գոյ խաղաղու- ‖ Ա՚ԿԲ·
թի՛ւն ամենաբշտաց՝ ասէ Տէր ։ 48.22.

ԳԼ։ ՆԲ։

1 Պոչեա զօրութի՛ւն, և մի՛ խնայեր ·
բարձրացո՛ իբրև փողոյ զբար-
բառ քո · պատմեա ժողովրդեան իմոյ
զմեղսն՝ և տանն յակոբայ զանօրէնու-

թիս նորա ։ * Զիս օր ըստ օրէ խնդրեն՝ և 2
ճանաչել զճանապարհս իմ ցանկան՝
իբրև ժողովուրդեան՝ որոյ զարդարութի
գործեալ իցէ ․ և զիրաւունս Այ իւրոյ
չիցէ թողեալ ․ արդ եկեալ խնդրեն
զիրաւունս արդարութե ․ կարօտին մեր
ձեռնալ առ Այ ։ * Եւ ասեն՝ զի՞է՝ զի 3
պահեցաք մեք՝ և դու ոչ տեսեր ․ խո_
նարհեցուցաք զանձինս մեր՝ և դու ոչ
գիտացեր ․ զի յաւուրս պահոց ձերոց
գտանին կամք ձեր կատարեալք ․ և
կոծեցուցանէք զամենեսեան ․ որք ը
ձեռամբ ձերով են ։ * Ի հակառակու 4
թիս և՛ի կռիւս պահէք՝ և կոփէք զան
աճագն ․ իսկ զի՞նչ պիտոյ են ինձ այն
պիսւոյ աւուր պահք ․ գալ՝ բողոքել
‖ Զաքար. ձեզ առ իս՝ և ինձ ոչ լսել ձեզ ։ *‖ Ոչ 5
7. 5. զայսպիսի պահս ընտրեցի ․ և ո՛չ զօրն,
յորում կիրկամեցուցանէ մարդ զանձն
իւր ․ զի եթէ կորացուցանես իբրև զա
նուր զպարանոց քո ․ և քուրձ և մոխիր
'ի ներքոյ քոյ տարածանիցես ․ սակայն
և ո՛չ զայն կոչեսցիս պահս՝ և օր ընդու_
նելի ։ * Ոչ զայնպիսի պահս ընտրեցի, 6
ասէ Տր ․ այլ լո՛յծ զկնճիռն անիրաւ_
ութե ․ քակեա՛ զխարդախութի վաճա
ռաց քոց ․ արձակեա՛ զնեղեալս թողու
թե ․ և զամ մուրհակս անիրաւութե
‖ Եզեկ. պատառեա՛ ։ *‖ Բրդեա՛ քաղցելոց զհաց 7
18. 7. Ղու. քո ․ և զաղքատս անյարկս տա՛ր 'ի տուն
16. քո ․ եթէ տեսանիցես զմերկն, զգե_
Մատ. ցուցանիջիր ․ և յընտանեաց զաւակի
25. 35. քոյ զական մի՛ արկանիցես ։ * Յայնժամ 8
ծաւալեսցի կանուխ լոյս քո ․ և բժշկու
թի քեզ վաղվաղակի հասցէ ։ և գնաս
ցէ առաջի քո արդարութի քո ․ և փառքն
այ զքև փակեսցին ։ * Յայնժամ կար 9
դասցես՝ և Այ լուիցէ քեզ ․ և մինչդեռ
խօսեսցիս , ասասցէ՝ թէ ահաւասիկ
հասեալ եմ ․ և եթէ մերժեսցես դու
'ի քէն զկնճիռն՝ և զձեռնարձակութի
և զբանս տրտնջման ։ * Եւ տացես 10
քաղցելոց զհաց քո սրտի մտօք ․ և զան
ձինս կարօտեալս յագեցուսցես ․ յայն
ժամ ծագեսցի 'ի խաւարի լոյս քո ․ և
խաւարն քո իբրև զմիջօրեայ ։ * Եւ 11
եղիցի Այ քո ընդ քեզ յամ ժամ ․ և
լցցի ըստ ցանկութե անձն քո ․ և ոս_
կերք քո պարարեսցին ․ և եղիցի իբրև
զպարտէզ ջրալից ․ և իբրև զաղբիւր
‖ Եսայ. ուստի ջուր ոչ պակասիցի ։ *‖ Եւ շի_ 12
61. 4. նեսցին աւերակք քո յաւիտենից ․ և
եղիցին հիմունք քո մշտնջենաւորք
յազգս ազգաց ․ կանգնեսջիր՝ և կո_
չեսջիր խրամակարկատ ցանդոյ ․ և
զընդմիջաշաւիղս նոցա դադարեցու
ցես ։ * Եթէ դարձուսցես զոտն քո 13
չառնել զկամս քո յաւուր սրբութե ․

2 և կոչեսցես զշաբաթս փափուկս նուի
րեալս ․ և ոչ փոխեսցես զոտն քո 'ի
գործ ․ և ո՛չ խօսեսցիս բան ինչ բար_
14 կութե բերանով քով ։ * Եւ եղիցիս
յուսացեալ 'ի Տր ․ և տարցէ զքեզ 'ի
բարութիս երկրին ․ և ջամբեսցէ քեզ
3 զժառանգութի յակոբայ հօր քոյ ․ զի
բերան Տն խօսեցաւ զայս ։

ԳԼ ։ ԾԹ ։

1 Ահա թէ ‖ ո՞չ իցէ կարող ձեռն Տն ‖ Թուոց
փրկել ․ կամ ծանրացո՛յց ինչ զուն 11. 23.
4 2 կըն իւր՝ զի մի՛ լուիցէ ։ * Այլ մեղքն ‖ Եր.
ձեր որոշեն 'ի մէջ ձեր՝ և 'ի մէջ Այ ։ 50. 2.
և վս անօրէնութեց ձերոց դարձոյց
զերեսս իւր 'ի ձէնջ՝ զի մի՛ ողորմեսցի ։
5 3 *‖ Զի ձեռք ձեր պղծեալք են արեամբ. ‖ Եր.
և մատունք ձեր 'ի մեղս ։ շրթունք ձեր 1. 15.
խօսեցան զանօրէնութի ․ և լեզուք ձեր
4 խոկան զանիրաւութի ։ * Ոչ ոք որ խօ
սի զարդարութի ․ և ո՛չ գոն իրաւունք
ճշմարտութե ․ յուսացեալ են 'ի սնո_
տիս ․ և խօսին զունայնութի ․ ‖ զի յղա ‖ Յոբ.
6 նան զցաւս , և ծնանին զանօրէնութի ։ 15. 35.
5 * Զձուս քարբից ծակեցին ․ և զոս_ ‖ Սաղ.
տայն սարդից անկանեն ․ և որ կամիցի 7. 15.
ուտել 'ի նոցանէն ․ ծակեաց՝ եբաց՝ և
եգիտ զջուր ․ և 'ի նմին քարբ ։
7 6 * Ոստայնք նոցա ոչ զօրձեսցին ․ և ոչ
զգեցցին 'ի գործոց ձեռաց իւրեանց ․
քանզի գործք նոցա գործք անօրէնու
թե են ․ և գործք անօրէնութե 'ի ձեռս
8 7 նոցա ։ * ‖ Ոտք նց 'ի չարիս ընթանան․ ‖ Սաղ.
վաղվաղեն հեղուլ զարիւն անպարտ ։ 13. 3.
խորհուրդք նոցա խորհուրդք անզգա_ Առակ.
մաց ․ բեկումն և թշուառութի 'ի ճա_ 1. 16.
9 8 նապարհս նց ։ * Եւ զճանապարհն խա Հռով.
ղաղութե ոչ ծանեան՝ և ոչ գոն իրաւ 3. 15.
ունք 'ի ճանապարհս նց ․ զի շաւիղք նց
ընդ որս գնան, խոտորեալք են ․ և ոչ
9 ծանեան զխաղաղութի ։ * Վսն այնո_
10 րիկ հեռացան 'ի նոցանէ իրաւունք ․ և
մի՛ հասցէ առ նոսա արդարութիւն ։
մինչդեռ ակնունէին լուսոյ՝ եղև նոցա
խաւար ։ և մինչդեռ սպասէին նմա՝ ը
11 10 մութն շրջեցան ։ * Շօշափեսցեն զորմն ‖ Եր. 4. 18.
իբրև կոյրք ․ և իբրև զաչացաւս խար
խափեսցին ։ և գլորեսցին 'ի միջօրէի
իբրև 'ի հասարակ գիշերի ։ իբրև օր_
հասականք ընդ ոտս ջանայցեն ։
12 11 * Եւ իբրև զարջս , և իբրև զաղաւնիս
առհասարակ սահեսցին ։ կացաք՝ մնա
ցաք իրաւանց՝ և ո՛չ էր ․ և փրկութիւն
12 հեռացաւ 'ի մէնջ ։ * Զի բազումք են
անօրէնութիք մեր առաջի քո ․ և մեղք
մեր հակառակ կային մեզ ․ զի անօրէ
13 նութիք մեր 'ի մեզ են ․ և զանիրաւու
թիւնս մեր . մեք մեզէն գիտեմք ։
* Ամ_

* Ի մպարշտեցաք՝ և ստեցաք Տ֊ն. և 13
դարձաք յետս յԱ֊Ի մերմէ. խօսեցաք
զանիրաւութի՛ն և հեւտեցաք՝ յղացաք՝
և որոշեցաք ՚ի սիրտս մեր զբանս անի
րաւութե։ * Յետս հարաք զիրաւունս. 14
և արդարութի՛ն հեռացաւ ՚ի մէնջ ։ զի
ապառեցաւ ՚ի ճանապարհս նոյ ճշմար
տութե՛ն. և ընդ ուղղութի՛ն ոչ կարացին
գնալ։ * Եւ արդարութի՛ն բարձաւ ՚ի 15
նոցանէ. մերժեցին զսիրտս իւրեանց
յիմանալոյ. եւտես Տ֊ր, և ոչ հաճեցաւ.
զի ո՛չ գոյին իրաւունք։ * Հայեցաւ՝ և 16
ո՛չ գոյր մարդ. եւտես՝ և ոչ գոյր , որ
օգնական լինէր։ և հատոյց նոյ բազկաւ
իւրով. և ըստ ողորմութե՛ իւրում հաս֊
տատեաց։ * Եւ զգեցաւ իբրև զրահս 17
զարդարութի՛ն. և եդ ՚ի գլուխ իւրում
զսաղաւարտ զփրկութի՛ն. և արկաւ
զինուս զհանդերձ՝ և զպատմուճանն
վրէժխնդրութե՛ , հատուցանել զհա
տուցումն։ * Եւ նախատինս հակառա 18
կորդաց՝ և կղզեաց հատուածս զհա֊
տուցումն։ * Եւ երկիցեն յարեւմուտս 19
յանո՛ւնէ Տ֊ն. և յարեւելս ՚ի փառաւո
րեալ անո՛ւնէ նո՛ր. զի եկեսցէ իբրև
գետ բռնութի՛ւ բարկութի՛ն ՚ի Տ֊է ։
Հաւտ. Հասցէ սրտմտութի՛ւ։ * Եւ եկեսցէ ՚ի 20
11.26. սիօնէ փրկիչ՝ և դարձուսցէ զամպարշ
տութի՛ս յակոբայ, ասէ Տ֊ր։ * Եւ այս 21
նոցա որ յինէն ուխտ՝ ասէ Տ֊ր։ Հոգին
իմ որ է ՚ի քէզ, և բանքն՝ զորս եդու ՚ի
բերան քո՝ մի պակասեսցին ՚ի բերանոյ
քումմէ. և ՚ի բերանոյ զաւակի քոյ. և
՚ի բերանոյ զաւակի զաւակի քոյ՝ ասէ
Տ֊ր. յայսմհետէ մինչև յաւիտեան։

ԳԼ։ Կ։

Լուսաւորեա՛ , լուսաւորեա՛ եկի՛մ. 1
զի հասեալ է լոյս քո. և փառքն
Տ֊ն ՚ի վերջ քոյ ծագեսցին։ * Օի ահա 2
խաւար ծածկեսցէ զերկիր՝ և մառա֊
խուդ զհեթանոսս. բայց ՚ի քէզ Տ֊ր
յայտնեսցի. և փառք նո՛ր ՚ի քեզ երևես
ցին ։ * Եւ գնասցեն թագաւորք ՚ի 3
լոյս քո. և հեթանոսք ՚ի ծագել լուսոյ
Ա֊ր։ քոյ։ * Համբարձ շուրջ զքեզ զաչս 4
49. 18. քո. և տե՛ս ժողովեալ առ քեզ զամ
մնկունս քո. զի եկի՛ն՝ հասի՛ն ՚ի հե
ռաստանէ որդիք քո. և դստերք քո ՚ի
վե՛ր ուսոց նոցա բարձեալք բերիցին։
* Յայնժամ տեսցես՝ և խնդասցես. 5
երկիցես՝ և զարհուրեսցիս ՚իսրտի քում։
զի փոխեսցի ՚ի քեզ մեծութի՛ն ծովու.
և ազգաց՝ և ժողովրդոց։ * Եւկեսցեն 6
՚ի քեզ երամակք ուղտուց. և ծածկես
ցեն զքեզ ուղտերամակքն մադիա֊
մու՝ և գեփայ։ ամենեքեան ՚ի սաբայէ
եկեսցեն , բերել ոսկի և կնդրուկ՝ և
ականս պատո՛ւականս. և փրկութի՛ն
7 Տ֊ն առցեն զաւետիս։ * Եւ ամ֊բա֊
շինքն կեդարու ժողովեսցին առ քեզ.
և խոյք նաբեթեմայ ածցին. և մատուա
ցին ընդունելի պատարագք ՚ի վերայ
սեղանոյ իմոյ. և տուն աղօթից իմոյ
8 փառաւորեսցի ։ * Ո՛վ են սոքա՝ որք
իբրև զամպս թռուցեալքեա՛ն. և իբրև
զաղաւնիս ձագախառն երամովքին
9 գան առ իս ։ * Եւնձ ակն ունին կղզիք՝
և նաւք թարշիշ յառաջագոյն ածել
զորդիս քո ՚ի հեռաստանէ ։ զարծաթ
և զոսկի ընդ իւրեանս. վասն անո՛ւան
Տ֊ն սրբոյն. և վ֊ն սրբոյն Իլի փառաւո
10 րել։ * Եւ շինեսցեն որդիք այլազ
գեաց զպարիսպս քո . և թագաւորք
նոցա ընծայեսցին քեզ ։ զի վա՛ր բար֊
կութե՛ իմոյ հարի զքեզ. և վասն ողոր
11 մութե՛ իմոյ սիրեցի զքեզ։ * Եւ բաց Յայտ.
ցին դրունք քո հանապազորդ ՚ի տուէ 21. 25.
և ՚ի գիշերի. և մի՛ փակեսցին. կրել ՚ի
քեզ զղօրութի՛ն ազգաց ։ և զթագաւ
12 որս իւրեանց ածցեն առ քեզ ։ * Օի
ազգք և թագաւորք՝ որք քեզ ոչ ծա֊
ռայեսցեն, կորիցեն. և ազգքն աւերե
13 լով աւերեսցին ։ * Եւ փառք լիբա֊
նանու առ քեզ եկեսցեն. սարդիէ՛ն և
սօսիե՛. նոճիէ՛ն և մայրիե՛ առ հասա
րակ փառաւոր առնել զտեղի սրբութե՛
իմոյ. և զտեղի ոտից իմոյ փառաւո֊
14 րեցից ։ * Եւ եկեսցեն առ քեզ զարհու
րեալք որդիք նեղչացն քոց՝ և զարհու
րեցուցչաց. և երկիր պագցեն հետոց
ոտից քոց ամենեքե՛ն. որք զարհուրե֊
ցուցանէի՛ն զքեզ. և կոչեսջիր քաղաք
15 Տ֊ն սիօն սրբոյն Իլի ։ * Վ֊ն վի՛ եղեր
դու լքեալ և ատեցեալ. և ոչոք էր, որ
օգնէր ։ և արարից զքեզ յաւրհնութի՛ն
յաւիտենական՝ և ցնծութի՛ն յազգաց
16 յազգս ։ * Եւ դիեսցես զկաթն հե֊
թանոսաց. և զմեծութի՛ն թագաւո
րաց կերիցես ։ և ծանիցես՝ թէ ես եմ
Տ֊ր. որ ապրեցուցանեմ՝ և փրկեմ զըզ
17 քեզ Ա֊ծ Իլի ։ * Եւ փոխանակ պղնձի
ձոյն բերիցէ քեզ ոսկի. և փոխանակ
երկաթոյն բերիցէ քեզ արծաթ. և
փոխանակ փայտի բերիցէ քեզ պղինձ.
և փոխանակ քարի տայ քեզ երկաթ.
և տայ զհիշեցոյս քո ՚ի խաղաղութի՛ն և
18 զայցելուս քո յարդարութի՛ն ։ * Եւ ո՛չ
ևս լսիցի անիրաւութի՛ն յերկրի քում.
և ոչ թեկումն և թշնամութի՛ն ՚ի սահ
մանս քո ։ այլ կոչեսցին փրկութի՛ն պա
րիսպք քո. և դրունք քո ցնծութի՛ն։
19 * Եւ ո՛չևս եղիցի քեզ արեգակն ՚ի Յայտ.
լոյս տուընջեան. և ո՛չ ծագումն լուս֊ 21. 23.
նի տացէ քեզ զլոյս ՚ի գիշերի ։ այլ և 22. 5.
եղիցի քեզ Տ֊ր լոյս յաւիտենական՝ և

փառք քո Ա՛Ծ ։ * Ո՛չ մտցէ քեզ արե֊ 20
գակն . և լուսին 'ի քէն մի՛ պակասես֊
ցի . և եղիցի քեզ Տր լոյս յաւիտենա֊
կան, և կատարեսցին աւուրք սգոյ քոյ ։
* Եւ՛ ժողովուրդ քո ամենեքին ար֊ 21
դար . և յաւիտեան ժառանգեսցեն
զերկիր ։ պահել զնորատունկ գործոց
ձեռաց իւրեանց 'ի փառս ։ * Սակաւաւ 22
որն հազարաւոր եղիցի . և կրտսերն
յազգ մեծ . զի ես Տր ընդ ժամանակս
ժամանակս ժողովեցից զնոսա ։

ԳԼ ։ ԿԱ .

|| Ղուկ. 4.18. Հոգի || Տն 'ի վր իմ ։ վն որոյ և օծ 1
իսկ զիս աւետարանել աղքատաց
առաքեաց զիս . բժշկել զբեկեալս սր֊
տիւք ։ քարոզել գերեաց զթողութի
և կուրաց տեսանել ։ * Կոչել ամ Տն 2
ընդունելի . և օր հատուցման Ա՛Յ մե֊
|| Մտ. 5. 5. րոյ ։ || մխիթարել զամ սգաւորս ։
* Տալ սգաւորաց սիօնի փառս . փոխա֊ 3
նակ մոխրոյ օծումն ուրախութե . և
սգաւորացն հանդերձ փառաց՝ փոխա֊
նակ ոգւոյն վհատութե ։ և կոչեսցին
նոքա ազգք արդարութե՝ տունկ Տն 'ի
|| Եսյ. 58.12. փառս ։ * || Եւ՛ շինեսցեն զաւերակսն 4
յաւիտենից . և զյառաջագոյն աւե֊
րեալսն կանգնեսցեն . և նորոգեսցեն
զքաղաքս աւերեալս յազգաց մինչև
յազգս ։ * Եւ՛ եկեսցեն օտարածինք 5
հովիւք խաշանց քոց . և այլազգիք մա֊
ճակալք և այգեգործք քո ։ * Բայց 6
դուք քահանայք Տն կոչիջիք՝ և պաշ֊
տօնեայք Ա՛Յ մերոյ անուանիջիք . զզօ֊
րութիւս ազգաց կերիջիք . և մեծութբ
նց սքանչելի լինիջիք ։ * Փոխանակ ա֊ 7
մօթոյն ձերոյ կրկին ուրախութի . և
փոխանակ անարգանաց ձերոց ցնծու֊
թի . և այս զերկիրն յերկրորդում
ժառանգեսցեն . և ուրախութի յաւի֊
տենից 'ի վր գլխոյ նց ։ * Զի ես եմ 8
Տր՝ որ սիրեմ զարդարութի . և ատեմ
զյափշտակութիս յանիրաւութե . և
տաց զվաստակս նոցա արդարոց . և
ուխտ յաւիտենից ուխտեցից ընդ նս ։
* Եւ՛ ծանիցի 'ի մէջ ազգաց զաւակ 9
նց . և ծնունդք նոցա 'ի մէջ ժողովր֊
դոց ։ ամենեքին որք տեսանիցեն՝ ճա֊
նաչիցեն զնոսա . և ասիցեն՝ թէ սոքա
են զաւակք օրհնեալք յԱ՛Յ ։ և ուրա֊
խութբ ուրախ եղիցին 'ի Տր ։ * Ցնծաս֊ 10
ցէ անձն իմ 'ի Տէր . զի զգեցոյց ինձ
զհանդերձ փրկութե և զպատմուճան
ուրախութե . իբրև փեսայի եդ ինձ
զպսակ . և իբրև զհարսն զարդու զար֊
դարեաց զիս ։ * Եւ՛ իբրև զերկիր՝ որ 11
աճեցուցանէ զծաղիկս իւր . և իբրև
զպարտէզ՝ որ բուսուցանէ զսերմա֊
նիս իւր . այնպէս ծաղկեցուսցէ Տր
զարդարութի իւր՝ և զցնծութի առա֊
ջի ամենայն ազգաց ։

ԳԼ ։ ԿԲ .

1 Վասն սիօնի ո՛չ լռեցից . և վն եէմի
ո՛չ ներեցից . մինչև ծագեսցի
իբրև լոյս արդարութի նր . և փրկու֊
թի նորա իբրև զփայլակն վառեսցի ։
2 * Եւ՛ տեսցեն հեթանոսք զարդարու֊
թի քո . և թագաւորք զփառս քո . և
կոչեսցի քեզ անուն նոր . զոր Տր ա֊
3 նուանեսցէ ։ * Եւ՛ եղիցիս պսակ վայ֊
ելչութե 'ի ձեռին Տն . և թագ ար֊
4 քայութե 'ի ձեռին Ա՛Յ քոյ ։ * Եւ՛ ո՛չև
կոչեսցիս լքեալ . և երկիրն քո ո՛չև կո֊
չեսցի աւերակ . զի քեզ անուն կոչես֊
ցին կամք իմ . և երկրին քում շինու֊
թի բնակութե . զի հաճեսցի Տր ընդ
քեզ . և երկիրն քո խառնեսցի 'ի բնա֊
5 կութի ։ * Զորօրինակ բնակի երիտա֊
սարդ ընդ կուսի՝ այնպէս բնակեսցին
որդիք քո 'ի քեզ . և եղիցի՝ զորօրինակ
բնակի փեսայ առ հարսին՝ այնպէս ու֊
6 րախ լիցի Տր 'ի քեզ ։ * Եւ՛ 'ի վր պարս֊
պաց քոց եդէմ պահապանս կացուցից,
զօրն ողջոյն և զգիշերն ողջոյն . որ մին֊
չև յանդ մի՛ դադարեսցեն յիշել զՏր ։
7 * Զի ո՛չ գոյ նման ձեզ . եթէ ուղղես֊
ցէ՝ և արասցէ եէմի պարծանս 'ի վր
8 երկրի ։ * Երդուաւ Տր 'ի փառս իւր՝
և 'ի զօրութի բազկի իւրոյ . եթէ ոչ
տաց զցորեան քո և զկերակուր 'ի ձեռս
թշնամեաց քոց ։ և ո՛չ արբցեն որդիք
օտարաց զգինի քո՝ յորում դու վաս֊
9 տակեցեր ։ * Այլ որք ամփոփեսցին՝
կերիցեն զնա՝ և օրհնեսցեն զՏր . և որք
ժողովեսցենն զնա , արբցեն 'ի սրահս
10 սրբութեց իմոց ։ * Երթա՛յք՝ մտէք
ընդ դրունս իմ . կազմեցէք զճանա֊
պարհս՝ հորդեցէք զշաւիղս . || գործե֊ || Եսյ.
ցէք ճանապարհ ժողովրդեան իմոյ . և 57.14
զքարինս 'ի ճանապարհէ անտի 'ի բա՛ց
ընկեցէք . առէք նշան 'ի հեթանոսս ։
11 * Զի աւասիկ Տր լսելի արար մինչև
'ի ծագս երկրի ։ || ասացէք դստեր սիօ֊ || Զաք.
նի . ահաւասիկ փրկիչ քո հասեալ գայ՝ 9. 9.
և ունի զվարձս իւր ընդ իւր . և գործ || Մտ.
12 իւր առաջի երեսաց իւրոց ։ * Եւ՛ կո֊ 21.5.
չեսցէ զնա ժողովուրդ սբ՝ փրկեալ 'ի
Տէ . և դու կոչեսցիս խնդրեալ քա֊
ղաք՝ և ո՛չ լքեալ ։

ԳԼ ։ ԿԳ .

1 Աւկ այս ո՞վ է՝ որ դիմեալ գայ յեդո֊
մայ . կարմրութի ձորձոց իւրոց 'ի
բոսորայ . գեղեցիկ պատմուճանաւ
և բուռն զօրութբ ։ ես խօսիմ զար֊

դա֊

դարութի և իրաւունս փրկութեան:
‖Յայտ. *‖Մ՞էր կարմիր են ձորձք քո. և հան 2
19.13. դերձք քո իբրև հնձանահարի լիոյ հն_
ձանի կոխելոյ: *Հնձան հարի միայն՝ 3
և ՚ի հեթանոսաց ոչոք էր ընդ իս. կոխե
ցի զնս սրտմտութբ՝ և մանրեցի զնոսա
և էջուցի բարկութբ՝ և իջուցի յերկիր. և զամ
զարիւն հանդերձս իմ թաթաւեցի: *‖Օր 4
նոցա յերկրէ հասեալ էր ՚ի վ՟ր նց օր հատուցման.
‖Ես. և ամ փրկութե եկեալ հասեալ:
34.8. *Հայեցայ՝ և ոչոք էր՝ որ օգնէր. զմտաւ 5
ածի՝ և ոչոք էր՝ որ ՚ի թիկունս հասա
նէր: փրկեաց զնս բազուկ իմ. և սրտ_
մտութի իմ միայն զդէմ կալաւ:
*Կոխեցի զնս բարկութբ իմով՝ և զենի 6
և էջուցի զնս սրտմտութբ իմով. և իջուցի զնս
զարիւն յերկիր: *Զողորմութի Տն յիշեցից. 7
նոցա զքաջութի Տն յուշ արարից՝ յամի զոր
ինչ հատուցանէ մեզ Տր. Տր դատաւոր
բարերար տանն Իէլի. որ ածէ ՚ի վ՟ր
ը՟ ներո մեր ըստ ողորմութեն իւրոյ՝ և ըստ
ղութե իւր բազում արդարութե իւրոյ: *Եւ ա_ 8
ոյ՝ և ը՟ սաց՝ եթէ ժողովուրդ իմ են որդիքն
բազում իմ. և ոչ անարգեսցեն զիս. և եղև նց
ողորմութե ՚ի փրկութի: *Յամ նեղութե նց: ոչ 9
պատգամաւոր ոք. և ոչ հրեշտակ, այլ
ինքնին Տր փրկեաց զնս. վ՟ն սիրելոյն
զնս և խնայելոյն ՚ի նոսա՝ ինքնին փր_
կեաց զնս. և վերացոյց զնոսա. և բարձ
րացոյց զամ աւուրս յաւիտենից:
*Բայց նոքա հեստեցին. և բարկացու 10
ցին զհոգի նր սբ. և դարձաւ նց Տր ՚ի
թշնամութի. ինքնին եա ընդ նս պա_
տերազմ: *Եւ յիշեաց զաւուրսն յաւի 11
տենից: Թէ ուր է Մովսէս և ժողովուրդն
‖Ելից. նր. ‖ որ եհան յերկրէ զհովիւն հօտից.
14.29. ուր է՝ որ եդ ՚ի նոսա զհոգին Տն: *Որ 12
[illegible] վերացոյց աջով իւրով զՄովսէս. և ՚ի բա
զուկ փառաց նորա յաղթահարեաց
զջուրս առաջի երեսաց նր. առնել իւր
անուն յաւիտենական: *Էած զնս 13
ընդ անդունդս որպ ձի ընդ անապատ:
*Եւ իբրև գրաստ ինչ ընդ դաշտ. և 14
ոչ վաստակեցան. էջ հոգի ՚ի Տէ, և
առաջնորդեաց նոցա: այնպէս ածեր
զժողովուրդն քո՝ առնել քեզ անուն
‖2. Օրէ. փառաց: *‖Եւ արդ դարձ յերկնից՝ և 15
26.15. տես ՚ի տաճարէ սրբոյ քումմէ՝ և փա
Բարու.2. ռաց քոց. ուր է նախանձ քո՝ և զօրութի
16. քո. ուր է բազում ողորմութի գթու_
թե քոյ. որով ներէիր մեզ: *Զի դու 16
ես մեր հայր. զի աբրահամ ոչ գիտաց
զմեզ՝ և Իէլ ոչ ծանեաւ զմեզ. այլ դու
հայր մեր փրկեա զմեզ. զի ՚ի սկզբանէ
անուն քո է ՚ի վ՟ր մեր: *Զմէ՞ մոլորե 17
ցուցեր զմեզ ՚ի ճանապարհաց քոց.
խստացուցեր զսիրտս մեր չերկնչել ՚ի
քէն. դարձ վ՟ն ծառայից քոց. դարձ

18 վ՟ն ազգաց ժառանգութե քոյ: *Դու
ցէ ոչ ժառանգիցեմք զլեառն սրբու_
թե քոյ. հակառակորդք մեր նեղեցին
զմեզ՝ և կոխեցին զսրբութի քո:
19 *Եղեաք իբրև զառաջինն՝ յորժամ
ոչ նայէիր ՚ի մեզ. և ոչ կոչեցեալ էր
անուն քո ՚ի վերայ մեր:

Գլ: ԿԴ:

1 Եթէ բացցես զերկինս, դողումն
2 կալցի ՚ի քէն զլերինս: *Եւ հա
լեսցին իբրև զմոմ առաջի հրոյ. և այ_
րեսցէ հուր զհակառակորդս քո. և
յայտնի լիցի անուն քո ընդդիմակացաց
քոց: յերեւաց քոց հեթանոսք խռո_
3 վեսցին: *Յորժամ առնիցես փառաւո
րութիս, դողումն կալցի ՚ի քէն զլե_
4 րինս: *‖Յաւիտենից ոչ լուաք. և ոչ ‖1. Կորն.
տեսին աչք մեր այլ Ա՟Ծ, բաց ՚ի քէն. 2. 9.
և զգործս քո զոր արասցես այնոցիկ.
որք ակն ունին ողորմութե քում:
5 *Զի ընդ առաջ լիցի այնոցիկ՝ որք
առնեն զիրաւունս. և զճանապարհս
քո յիշեսցեն. արդ ահա դու բարկա_
ցար՝ և մեք մեղաք: վ՟ն այնորիկ մոլո_
6 րեցաք: *Եւ եղեաք իբրև զպիղծս
ամենեքեան. իբրև զհանդերձս ապա
հարից ամ արդարութի մեր. և թօ_
թափեցաք իբրև զտերև ամենեքին
մեք. վ՟ն անօրէնութեց մերոց հողմք
7 մերժեցին զմեզ: *Եւ ոչոք իցէ՝ որ
կարդայցէ զանուն քո. և ոչ որ յիշես_
ցէ ապաստան առնել զքեզ. զի դար_
ձուցեր զերեսս քո ՚ի մէնջ՝ և մատնե_
8 ցեր զմեզ վ՟ն մեղաց մերոց: *Եւ արդ
Տր՝ հայր մեր դու ես. մեք կաւ, և դու
ստեղծիչ մեր. և գործք ձեռաց քոց
9 ամենեքին մեք: *‖Մի բարկանար ‖Սաղմ.
մեզ Տր յոյժ. և մի ՚ի ժամանակի յիշեր 78.8.
զմեղս մեր: և արդ հայեաց Տր. զի ժո
10 ղովուրդ քո ամ: *Եւ քաղաք սրբու_ քո էմ
թե քոյ սիոն եղև աւերակ: իբրև զա զա մէ ամէ
11 նապատ եղև երուսաղէմ: *Յանէծս նեւեաւ.
մատնեցաւ տուն սրբութե քոյ. և
փառքն զորս օրհնեցին հարքն մեր՝ ե_
ղեն հրձիգք. և ամ փառաւորութիւն
12 մեր կործանեցաւ: *Եւ ՚ի վ՟ր ամի
այսորիկ անսաս Տր: և լռեցեր. և խո_
նարհ արարեր զմեզ մինչև յոյժ.

Գլ: ԿԵ:

1 Յայտնի ‖եղէ այնոցիկ՝ որք զինէն ‖Հռոմ.
ոչ հարցանէին. գտայ այնոցիկ՝ 10.20.
որք զիս ոչ խնդրէին: ասացից, ահա
սիկ եմ, ցազգն յայն՝ որք զանուն իմ
2 ոչ կարդային: *Զօրհանապազ ձգե
ցի զձեռս իմ առ ժողովուրդն անհա_
ւան և հակառակօղ. որք գնային զճա
նա_

նապարհ որ ոչ էր բարւոք. այլ զհետ
մերձաց իւրեանց։ * Ժողովուրդս այս՝ 3
որ բարկացուցաներ զիս. առաջի իմ
հանապազ զոհէին՝ ի պարտեզս իւրմ.
և արկանէին խունկս յարիւսեայս իւր
եանց։ * Վասն՝ որք չեն՝ յիշատակս 4
իւրեանց. և յայրս կողմանեալ՝ ննջէին
վասն երազ տեսանելոյ. որք ուտէին զխո
զենին՝ և զարգանակ զոհիցն. և ամա
նօթք նոյ պղծեալք էին։ * Որք ասէին 5
՝ի բաց կաց յինէն. մի մերձենար յիս,
զի սո՛ւրբ եմ՝ այս է ծուխ բարկութե իմոյ՝
յորում հնոյր բորբոքեալ զամաւուրս։
* Ո՛վ հասասիկ գրեալ առաջի իմ. ոչ 6
լռեցից՝ մինչև հատուցից՝ ի ծոցս նոց։
* Զմեղս նոց՝ և զմեղս հարց նոցա՝ ի 7
միասին՝ ասէ Տէր. որք արկանէին
խունկս՝ ի վերայ լերանց. և՝ ի վերայ բլրոց.
ուր նախատէին զիս. հատուցից զըղ
գործս նոց՝ յառաջագոյն՝ ի ծոցս նոց։
* Այսպէս ասէ Տէր. զորօրինակ եթէ 8
գտանիցի ճիւ՝ ի մէջ ողկուզոյ. և ասիցեն. մի՝ ապականեր զայս. զի օրհնու
թիւն Տեառն գոյ՝ ի դմա. այնպէս արարից
վասն ծառայից իմոց՝ զի որոյ ոչ կորուսից
զամենեսեան։ * Եւ՛ հանից զզաւակ՝ ի 9
յակոբայ՝ և յուդայ. և ժառանգեսցեն
զլեառն սրբութե իմոյ. և ժառանգեսցեն
ցեն ընտրեալք իմ՝ և ծառայք իմ. և
բնակեսցեն՝ ի նմա։ * Եւ եղիցին յան 10
տառին մանգաստեալք հովտաց. և
ձորն նաքորայ հանգիստ անդեաց ժո
ղովրդեան իմոյ՝ որք խնդրեցինն զիս։
* Եւ՛ դուք թողիք զիս. և մոռացայք 11
զլեառն սրբութե իմոյ։ և կազմիք դի
շաց սեղան. և խառնէիք խառնելիս
բախտիս։ * Եւ մատնեցից զձեզ՝ ի 12
սուր. և ամենեքեան կոտորիջիք։ զի
կոչեցի զձեզ՝ և ոչ լսեայք. խօսեցայ՝
և ստուգանեցիք. և արարիք չար ա
ռաջի իմ։ և զոր ոչն կամէի, ընտրեցիք։
* Վասն այսորիկ այսպէս ասէ Տէր. ա 13
հասասիկ որք ծառայեն ինձ, կերի
ցեն՝ և դուք քաղցիջիք. ահասասիկ
որք ծառայեն ինձ, արբցեն՝ և դուք
ծարաւիջիք՝ ահասասիկ որք ծառայ
են ինձ, ուրախ լինիցին՝ և դուք ամաչես
ջիք։ * Եւ՛ հասասիկ որք ծառայեն ինձ, 14
ցնծասցեն ուրախութ սրտիւ՝ և դուք
աղաղակեսջիք առ ցաւս սրտից ձերոց.
և առ բեկման ոգւոյ ձերոց ողբասջիք։
* Եւ թողջիք զանուն ձեր՝ ի յագուրդ 15
ընտրելոց իմոց. և զձեզ Տէր սատակես
ցէ։ և ծառայիցն իմոց կոչեսցի անուն
նոր։ * Որ օրհնեսցի՝ ի վերի երկրի. զի 16
օրհնեսցին զՏէր Աստուած ճշմարիտ. և որք
երդնուցուն՝ ի վերի երկրի. երդնուցուն
ի՛ Աստուած ճշմարիտ։ զի մոռացան զնեղու
թիւնն զառաջինն. և ոչ՝ և անկանիցի՝ ի
սիրտս նոց։ * Ով եղիցին երկինք նոր՝ 17
և երկիր նոր. և ոչ՝ և յիշեսցին զառա
ջինսն. և ոչ՝ և անկցի՝ ի սիրտս նոցա
զինան. և այլ անկցի՝ ի սիրտս նոցա
* Այլ ուրախութի՛ և ցնծութի՛ գոյի 18
՝ի նմա. զոր ես հաստատեցից։ զի ա
հասասիկ ես առնեմ՝ զԵրուսաղէմ՝ ցնծութի՛.
և զժողովուրդ իմ՝ ուրախութի՛։ * Եւ 19
ցնծացայց՝ ի վերայ Երուսաղէմի. և ուրախ եղեց
՝ի վերայ ժողովրդեան իմոյ։ և ոչ՝ և լսի
ցի՝ ի նմա ձայն լալոյ՝ և ձայն գոչիւն։
* Եւ՛ մի՛ լինիցի անդ տարաժամաւուրց. 20
և ծեր որոյ ոչ իցէ լցեալ զժամանակս
իւր՝ զի երիտի կրտսեր որդին հարիւր
ամեան. և որ հարիւրամեանն մեռա
նիցի, մեղաւոր և անիծեալ կոչեսցի։
* Եւ՛ շինեսցեն տունս՝ և ինքեանք բնա 21
կեսցին. տնկեսցեն այգիս՝ և ինքեանք
կերիցեն զպտուղս նոցա։ * Եւ՛ մի՛ և ոք 22
շինեսցեն՝ և այլք բնակեսցին. և նոքա
տնկեսցեն՝ այլք կերիցեն։ ըստ աւուրց
փայտին կենաց եղիցին աւուրք ժողո
վրդեան իմոյ. գործք ձեռաց նոցա հնաս
ցեն։ * Եւ՛ ընտրեալք իմ՝ մի՛ և վաս 23
տակեսցին ընդ ունայն. և ոչ՝ և ծնա
նիցին որդիս յանէծս. զի զաւակք օրհ
նեալք են այ՛ի՛ և ծնունդք նոցա ընդ
նեալք իսկ նոցա։ * Եւ՛ եղիցի՝ մինչև կարդա 24
ցեալ իսկ նոցա՝ ես լսեայց նոց. և մինչ
դեռ խօսիցին, ասացից՝ եթէ զինչ
խնդրեք։ * Գայլք և գառինք՝ ի միասին ձարակեսցին. և 25
առիւծ իբրև զեզն յարդ կերիցէ. և
օձ զհող իբրև զհաց կերիցէ. մի՛ մե
ղիցեն, և մի՛ վնասեսցեն զոք՝ ի լերին
սրբութե իմոյ ասէ Տէր։

ԳԼՒԽ Կ.Ո։

Այսպէս ասէ Տէր. երկինք աթոռ 1
իմ են՝ և երկիր պատուհանդան
ոտից իմոյ։ ո՞րպիսի տուն շինեցէք ինձ.
ասէ Տէր. կամ՝ ո՞րպիսի ինչ իսկ այն տե
ղի հանգստեան իմոյ։ * Ով զայս ամ 2
ենեսեան իմ՝ արար՝ և իմ եմ՝ ասէ Տէր.
և ես յո՞ հանգեայց. եթէ ոչ՝ ի հեզս՝
և՝ ի խոնարհս՝ և որ դողայ՝ ի բանից
իմոց։ * Այլ անօրէնն՝ որ մատուցա 3
նէ զեզն պատարագ՝ այնպէս է՝ ոյն թէ
հարկանիցէ որ զկատաւին մարդոյ։ և
որ մատուցանէ գոչխար պատարագ.
այնպէս է՝ ոյն թէ զշուն որ մորթիցէ.
որ մատուցանիցէ որ նաշխոյ. այսպես
է՝ ոյն թէ հեղուցու որ զարիւն խոզի.
և որ տայցէ զընդրուկ՝ ի խունկ յիշա
տակաց. այնպէս իցէ՝ ոյն զՏարհոյիչն.
և ինքեանք ընտրեցին զձանապարհս
իւրեանց. և զգարշելիս իւրեանց՝ զոր
անձինք իւրեանց ախորժեցին։
* Եւ

*Եւ ես առից 'ի ձեռն զխաբէութիւնս 4
նց̃. և ըստ մեղաց նոցա հատուցից նց̃ ։
Առակ. ‖ զի կոչեցի զնոսա՝ և ոչ լուան ինձ. խօ
1.24. սեցայ՝ և ոչ անսացին. և արարին զչար
Երեմ. առաջի իմ. և զոր ոչն կամէի, ընտրե
7. 13. ցին ։ *Լուարո՛ւք զպատգամ Տն̃. որք 5
Եր. դողայք 'ի բանից նր̃ ։ խօսեցարո՛ւք եղ
65.12. բարք մեր ընդ ատելիս ձեր՝ և ը̃ գար
շեցուցիչսն ։ զի անուն Տն̃ փառաւորես
ցի. և երևեսցի յուրախութեն ձերում.
և նոքա ամաչեսցեն ։ *Ձայն բարբա 6
ռոյ 'ի քաղաքէ. ձայն 'ի տաճարէ. ձայն
Տն̃ հատուցանէ զհատուցումն հակա
ռակորդաց ։ *Մինչև իցէ յղւոյն 7
ծնեալ. և մինչև իցեն հասեալ ցաւք
երկանց. ապրեցաւ, և ծնաւ արու ։
*Ո՞ լուաւ. ո՞ ետես այսպիսի ինչ. 8
եթէ երկնեաց երկիր 'ի միում աւուր.
և ծնաւ ազգ մի ողջոյն միանգամայն.
զի երկնեաց սիոն, և ծնաւ զմանկունս
իւր ։ *Ես ետու քեզ զյոյս զայս. և 9
դու ոչ յիշեցեր զիս՝ ասէ Տր̃ ։ ոչ ապա
քէն զամուլն և զծննդականն ես արա
րի՝ ասէ Ա̃Ծ քո ։ *Ուրախ լեր Եէմ. և 10
ժողովեցարո՛ւք առնել տօն 'ի դմա.
ամենեքին որք սիրէք զդա. խնդացէք՝
և ուրախ լերուք 'ի միասին՝ որք նստէիք
'ի սուգ վն̃ դորա ։ *Զի դիեցէք՝ և 11
յագեցիք 'ի ստեանց մխիթարութեան
դորա. և կշտացեալք վայելեցէք 'ի գալս
տենէ փառաց դորա ։ *Զի այսպէս ասէ 12
Տր̃. ահաւասիկ ես դարձուցանեմ 'ի
դոսա իբրև զգետ զխաղաղութի. և
իբրև զհեղեղատ յորդեալ զփառս հե
թանոսաց ։ զմանկունս դոցա 'ի վերայ
ուսոց իւրեանց բարձեալ բերիցեն. և
'ի վր̃ ծնգաց իւրեանց գգուիցեն ։
*Որպէս մայր՝ որ զմանուկ իւր գգուիցէ. 13
այնպէս գգուեցից զձեզ. և յԵէմ մխի
թարիջիք ։ *Եւ տեսջիք՝ և խնդաս 14
ցեն սիրտք ձեր. և ոսկերք ձեր իբրև
զդալարի զուարճասցին. և ծանիցի
ձեռն Տն̃ երկիւղածաց իւրոց. և սպառ
15 նասցի անհաւատիցն ։ *Զի ահաւա
սիկ Տր̃ իբրև զհուր եկեսցէ. և կառք
նր̃ իբրև զմրրիկ՝ հատուցանել սրտ
մտութը̃ զհատուցումն իւր. և բոցով
16 հրոյ զարհամարհանս իւր ։ *Զի 'ի
հուր Տն̃ դատեսցի ամ̃ երկիր. և 'ի
սուր նորա ամ̃ մարմին ։ բազումք եղի
17 ցին վիրաւորք 'ի Տէ̃ ։ *Որք սրբեն՝ և
մաքրեն 'ի պարտէզս՝ և 'ի սրահս իւր
եանց. որք ուտեն զմիս խոզենի՝ և զգար
շելիսն՝ և զմուկն՝ 'ի միասին սատակես
18 ցին նոքա՝ ասէ Տր̃ ։ *Եւ ես զգործս
նց̃ և զխորհուրդս նոցա գիտեմ ։ գամ
ժողովել զամ̃ ազգս՝ և զլեզուս. եկես
19 ցեն՝ և տեսցեն զփառս իմ ։ *Եւ թո
ղից 'ի վր̃ նոցա նշան. և առաքեցից 'ի
նոցանէ փրկեալս յազգս ։ 'ի Թարսիս.
և 'ի Փուդ. և 'ի Լուդ. և 'ի Մոսոք. և 'ի
Թոբէլ. և յԵլլադայ. և 'ի կղզիս հե
ռաւորս. որոց չիցէ լուեալ զանուն իմ.
և ոչ տեսեալ զփառս իմ ։ և պատմես
ցեն զփառս իմ և զանուն իմ 'ի մէջ
20 ազգաց ։ *Եւ ածցեն զեղբարս իւրե̃ զեղբարս ձեր յամ̃
յամ̃ ազգաց պատարագ Տն̃. հեծեալս
կառօք՝ հանդերձ պալարակապ երի
վարօք և հովանոցօք 'ի սբ̃ քաղաքն՝
Եէմ, ասէ Տր̃ ։ որպէս մատուցին որդիքն
Իղի զպատարագս իւրեանց ինձ սաղ
21 մոսիւք 'ի տուն Տն̃ ։ *Եւ 'ի նոցանէ
առից ինձ 'ի քահանայս՝ և 'ի ղևտա
22 ցիս՝ ասէ Տր̃ ։ *‖ Զոր օրինակ երկինք ‖ Յայտ.
նոր՝ և երկիր նոր՝ զոր ես առնեմ 21.1.
կալ առաջի իմ. ասէ Տր̃. նոյնպէս
23 կացցէ զաւակն ձեր ։ *Եւ եղիցի ամիս
յամսոյ՝ և շաբաթ 'ի շաբաթէ. եկես
ցէ ամ̃ մարմին երկիր պագանել առա
24 ջի իմ յԵէմ՝ ասէ Տր̃ Ա̃Ծ ։ *Եւ ել
ցեն՝ և տեսցեն զոսկերս մարդկան առ
իս յանցուցելոց ։ ‖ զի որդն նց̃ ոչ վախ ‖ Մարկ.
ճանեսցի. և հուր նոցա ոչ շիջցի ։ և 9.43.
եղիցին 'ի տեսիլ ամ̃ մարմնոց ։

ՄՌՐ.

Եւ ասէ ցիս Տր. զի՞նչ տեսանես Երեմիա, և ասեմ, կաթսայ յեռանդեան տեսանեմ. Երեմ. 1. 13.

Եւ առին զԵրեմիա, և ընկեցին զնա ՚ի գուբն Մեղ քեայ. և ո՛չ էր անդ ջուր, այլ տիղմ. Երեմ. 38. 6.

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ
ԵՐԵՄԻԱՅԻ.

Գլուխ Առաջիներորդ.

ՊԱՏԳԱՄ 1
ԱՍՏՈՒԾՈՅ.
որ եղև ՚ի վ՛ր Երե
միայ Քեղկեայ՝ ՚ի
քահանայից ան_
տի՝ որք բնակեալ
էին յանաթօթ
յերկրին բենիա
մինի: *Որ եղև բան Տն յաւուրս 2
յովսիայ որդւոյ ամոնայ՝ արքայի հրէաս
տանի. յերեքտասաներորդի ամի թա
գաւորութեան նր: *Եւ եղև յաւուրս 3
յովակիմայ որդւոյ յովսիայ՝ արքայի
հրէաստանի. մինչև ՚ի վախճան մետա
սաներորդի ամին սեդեկիայ որդւոյ
յովսիայ արքայի յուդայ՝ ցգերութիւն
երմի. յամսեանն հինգերորդի: *Եւ 4
եղև բան Տն առ իս՝ և ասէ. *Մինչ 5
Եր ԵՏ չև ստեղծեալ էր զքեզ յորովայնի,
զԵբր

գիտէի զքեզ. և մինչև ելեալ էիր
յարգանդէ, սրբեցի զքեզ. մարգարէ
6 ՚ի հեթանոսս եդի զքեզ: *Եւ ասեմ՝
որ եսդ Տր Տր. ահաւասիկ խօսել իսկ
7 ո՛չ գիտեմ. զի մանուկ եմ ես: *Եւ
ասէ ցիս Տր. մի՛ ասեր թէ մանուկ եմ
ես. զի առ ամենեսեան՝ առ որս առա
քեցից զքեզ՝ երթիցես. և ըստ ամի՝
զոր միանգամ պատուիրեցից քեզ՝ խօ
8 սեսցիս: *Մի՛ երկնչիցես յերեսաց նց՝
զի ես ը քեզ եմ ՚ի փրկել զքեզ՝ ասէ
9 Տր: *Եւ ձգեաց Տր զձեռն իւր առ
իս՝ և մերձեցոյց ՚ի բերան իմ. և ասէ
ցիս. ահա ետու զբանս իմ ՚ի բերան
10 քո: *Ահա կացուցի զքեզ այսօր ՚ի վ՛ր
ազգաց՝ և թագաւորութեանց: Խլել և Մտ
քրել. կործանել. և յատակել. և շի_ 18. 7.
11 նել և տնկել: *Եւ եղև բան Տն առ
իս՝ և ասէ. զի՞նչ տեսանես Երեմիա. և
ասեմ՝ գաւազան ընկուզի տեսանեմ
12 ես: *Եւ ասէ ցիս Տր. բարւոք տե_
սանես. զի զարթուցեալ եմ ՚ի բանս
իմ

‖Ստր. 4. 6. իմ առնել զնա։ *‖Եւ եղեւ բան Տն 13
առ իս կրկին անգամ՝ եւ ասէ զի՞նչ տե
սանես. եւ ասեմ. կաթսայ յեռանդան
տեսանեմ. եւ երեսք նր յերեսաց հիւ
սիսոյ։ *Եւ ասէ ցիս Տէր. յերեսաց 14
հիւսիսոյ բորբոքեսցին չարիք 'ի վերայ
բնակչաց երկրի։* Զի ահաւասիկ ես 15
միաբանեան կոչեցից զամ թագաւորու
թիւս թագաւորութեանց 'ի հիւսիսոյ
երկրէ՝ ասէ Տր. եկեսցեն, եւ արկցեն
իւրաքանչիւր զաթոռ 'ի վերայ սեմոց
դրանցն եջմի. եւ 'ի վր ամ պարսպաց
նր շուրջանակի. եւ 'ի վր ամ քաղա
քացն հրէաստանի։ * Եւ խօսեցայց 16
դատաստանաւ ընդ նոսա վս ամ չա
րեաց իւրեանց. զի թողին զիս, եւ զո
հեցին աստուծոց օտարաց՝ եւ երկիր
պագին գործոց ձեռաց իւրեանց։
*Եւ դու պնտեա զմէջ քո, արի, եւ 17
ասա նց, զամ զոր միանգամ պատուէ
րեմ քեզ. մի երկիցես յերեսաց նոցա՝
եւ մի զանգիտիցես առաջի նց. զի ընդ
քեզ եմ ես՝ 'ի փրկել զքեզ՝ ասէ Տր։
‖Ստր. 6. 27. *‖Բայց ես ահաւադիկ եդի զքեզ այ 18
սօր իբրեւ զքաղաք ամուր. եւ իբրեւ
զսիւն երկաթի՝ եւ իբրեւ զպարիսպ պղն
ձի ամուր՝ ամ թագաւորաց հրէաս
տանի եւ իշխանաց նց. եւ քահանայից
նոցա. եւ ժողովրդեան երկրին։
*Եւ մարտիցեն ընդ քեզ՝ եւ քեզ ինչ 19
ոչ կարասցեն առնել. զի ես ընդ
քեզ եմ 'ի փրկել զքեզ ասէ Տր։

ԳԼ: Բ.

Եւ եղեւ բան Տն առ իս՝ եւ ասէ։ 1
*Երթ՝ եւ ընթերցիր յականջս 2
որդւոցն եջմի՝ եւ ասասցես։ այսպէս
ասէ Տր՝ յիշեցի զքեզ՝ եւ զգութ ման
կութե քոյ. եւ զսէր կատարման քոյ՝ 'ի
գալ քեզ զհետ սրբոյն իէի՝ ասէ Տր։
*Սրբն իէի. Տն է սկիզբն արմտեաց 3
նորա. ամենեքին որք ուտիցեն զնա.
զղջասցին. չարիք հասցեն 'ի վր նոցա՝
ասէ Տր։ *Լուարուք զբան Տն տունդ 4
յակոբայ՝ եւ ամ ազգ տանդ իսրայէլի։
‖Միք. 6. 3. *Այսպէս ասէ Տր. ‖զի՞նչ գտին 5
յիս հարքն ձեր, զի հեռացան յինէն՝
եւ գնացին զհետ ունայնեացն. եւ ունայնք
եղեն։ * Եւ ոչ ասացին՝ ուր է Տր. որ 6
էհան զմեզ յերկրէն եգիպտացւոց.
որ առաջնորդեաց մեզ յանապատն
անբաւ՝ եւ յանկոխ՝ եւ յանջուր՝ եւ յան
պտուղ երկրի. եւ 'ի ստուերս մահու.
յերկիր՝ ուր ոչ էանց մարդ. եւ ոչ բնա
կեցաւ 'ի նմա որդի մարդոյ։ *Եւ տա 7
րայ զմեզ 'ի Քարմէղ. ուտել զպտուղ
նր՝ եւ զբարութիւս. եւ մտէք՝ եւ պղծե
ցէք զերկիրն իմ. եւ զժառանգութի
զէ

8 իմ եդիք 'ի պղծութի։ *Եւ քահա
նայքն ոչ ասացին՝ ուր է Տր. եւ վերա
կացուք օրինաց իմոց ոչ ծանեան զիս.
եւ հովիւքն ամպարշտեցան յիս. եւ մար
գարէքն մարգարէանային բահաղու.
9 եւ զկնի անշահիցն երթային։ *Վասն
այնորիկ տակաւին դատեցայց ը ձեզ՝
ասէ Տր. եւ ընդ որդիս որդւոց ձերոց
10 դատեցայց։ *Արդ անցէք ընդ կղզիս
քիտիմացւոց, եւ տեսէք. եւ 'ի կեդար
առաքեցէք՝ եւ խելամուտ եղերուք
յոյժ. եւ տեսէք, թէ եղեւ այսպիսի ինչ։
11 *Եթէ փոխեսցին ազգքն զաստուածս
իւրեանց. եւ նոքա ոչ են աստուածք. եւ
ժողովուրդ իմ փոխեաց զփառս իւր.
12 ուստի ոչ օգտիցին։ *Յիմարեցան եր
կինք՝ վս այսորիկ եւ սոսկացան յոյժ՝
13 ասէ Տէր։ * Զի երկուս չարիս գոր
ծեաց ժողովուրդն իմ. զիս թողին
զաղբիւր ջուրց կենաց. եւ փորեցին
իւրեանց գուբս. գուբս ծակոտս՝ որք
14 ոչ կարիցեն ունել զջուր։ * Միթէ
ծառայ իցէ իէլ. կամ ստրուկ՝ զի եղեն
15 յաւար։ *'Ի վր նր գոչեցին առիւծք.
եւ ետուն զձայնս իւրեանց. որք արա
րին զերկիր նր յաւերակ. եւ քաղաքք նր
կործանեցան՝ առ 'ի չգոյէ բնակչաց։
16 *Եւ որդիքն մեմփացւոց եւ տափնաց
ւոց ծանեան զքեզ՝ եւ այպանեցին։
17 *Ո՞չ ապաքէն թողուլն զիս արար քեզ
զայն ասէ Տր Աձ քո. 'ի ժամանակի
ածելոյն զքեզ ընդ Ճանապարհն։
18 *Եւ արդ զի՞նչ կայ քո՝ եւ Ճանապար
հին եգիպտացւոց ըմպել քեզ զջուրն
գեհոնայ. եւ զի՞ կայ քո եւ Ճանապար
հին ասորեստանեայց ըմպել զջուր գե
19 տոց։ *Խրատեսցէ զքեզ ապստամ
բութիւն քո. եւ չարիք քո կշտամբես
ցեն զքեզ. եւ ծիցես, եւ տեսցես թէ եւ ծանի
չար եւ դառն է քեզ թողուլն զիս՝ ասէ ցես՝ եւ
Տր Աձ քո. եւ ոչ հաճեցայ ընդ քեզ՝ տեսցես
20 ասէ Տր Աձ քո։ * Զի յաւիտենից
խորտակեցեր զլուծն քո. եւ խզեցեր
դու զկապանս քո. եւ ասացեր՝ թէ ոչ
ծառայեցից. ‖այլ երթայց 'ի վերայ ‖Ստր.
ամ բլրոց բարձանց. եւ 'ի ներքոյ ամ 3. 6.
հովանաւոր ծառոց՝ անդ շռայլեցայց
21 պոռնկութբ։ *‖Եւ ես տնկեցի զքեզ ‖Եսայ.
որթ պտղաբեր ամենեւին Ճշմարիտ. 5. 1.
զիա՞րդ դարձար ինձ 'ի դառնութիւն ‖Մտթ.
22 որթդ օտարացեալ։ *Եւ եթէ լուա 21. 33.
ցիս բաւրակաւ. եւ յաճախեսցես քեզ
օճառ. սակայն ծրդեալ կաս յանօրէ
նութիւս քո առաջի իմ՝ ասէ Տր Տր։
23 * Զիա՞րդ ասիցես, թէ ոչ պղծեցայ.
եւ զհետ բահաղու ոչ գնացի. տես զՃա
նապարհս քո 'ի գերեզմանս. եւ ծանի՛ր
24 զինչ գործեցեր։ *Ընդ երեկոյս ձայն

լալոյ նորա գուժեաց 'ի ճանապարհս
իւր • յաճախեաց 'ի ջուրս անապատի
ըստ ցանկութեան անձին իւրոյ • այսա_
բեկ լինէր՝ մատնեցաւ, և ո՞ դարձու_
ցէ զնա • ամենեքեան որք խնդրեսցեն
զնա, ո՛չ աշխատեսցին • 'ի տառապանս
նորա գտցեն զնա ։ * Դարձո՛ զոտս 25
քո 'ի խիստ ճանապարհէ • և զկոկորդ
քո 'ի ծարաւոյ • և նա ասէ՝ կարող եմ •
քանզի սիրէր զօտարոտիս՝ և երթայր
զհետ նոցա ։ * Որպէս ամաչեսցէ գող՝ յոր 26
ժամ ըմբռնեսցի • այնպէս ամաչեսցեն
որդիքն Իէլի, ինքեանք, և թագաւորք
իւրեանց • և իշխանք իւրեանց՝ քահանայք
իւրեանց՝ և մարգարէք իւրեանց ։
* Ցփայտն ասացին՝ թէ հայր իմ ես • 27
‖ Մ այլ • և քարին՝ թէ դու ծնար զիս • ‖ և դար
32. 33. ձուցին յիս զթիկունս, և ո՛չ զերեսս իւր
եանց ։ և 'ի ժամանակի չարեաց իւրեանց
ասասցեն, արի՛ և փրկեա՛ զմեզ ։ * Եւ 28
ո՞ւր են աստուածք քո՝ զորս արարեր
քեզ • յարիցեն, և փրկեսցեն զքեզ 'ի
‖ Մ այլ • ժամանակի չարեաց քոց • ‖ զի ըստ թուոյ
11. 13. քաղաքացն քոց էին քեզ աստուածք
քո յուդա • և ըստ թուոյ անցիցն Եմի
զոհէին բահաղու ։ * Ընդէ՞ր խօ 29
սիք ընդ իս • զի ամենեքեան դուք ամ_
պարշտեցայք • և ամենեքեան դուք ա_
նօրինեցայք յիս՝ ասէ Տր ։ * Զուր հա 30
րի զորդիսն ձեր • և զխրատ դուք ո՛չ
ընկալայք • սուր եկեր զմարգարէսն
ապականօղ ձեր • իբրև զառիւծ սատակէր • և ո՛չ
զարհուրեցայք ։ * Լուարո՛ւք զպատ_ 31
գամ Տն • այսպէս ասէ Տր • միթէ անա_
պա՞տ եղև տունդ Իէլի • կամ աւե՞ր եր_
կիր խոպանացեալ • զի ասաց ժողո_
վուրդ իմ • անտերունչք շրջիցուք՝ և
առ քեզ ո՛չ եկեսցուք ։ * Միթէ մո_ 32
ռասցի՞ հարսն զզարդ իւր • և կոյս ըզ
լանջազեղ կամար իւր • բայց ժողո_
վուրդ իմ մոռացաւ զիս զաւուրս ան_
թիւս ։ * Զի՞նչ ևս բարիս հնարեսցիս 33
'ի ճանապարհս քո խնդրել զհաշտութի •
ո՛չ այդպէս, այլ դու խակ անզգամեցար
պղծել զճանապարհս քո ։ * Եւ 'ի ձեռս 34
քո գտաւ արիւն անձանց տնանկաց
անմեղաց • ո՛չ 'ի վիհս գտի զնոսա • այլ
առ ամ կաղնեօք ։ * Եւ ասացեր թէ 35
անմեղ եմ • դարձցի սրտմտութի նր
յինէն • ահաւասիկ ես դատեցից ընդ
քեզ • զի ասացեր թէ՝ ոչ մեղայ ։
* Զի արհամարհեցեր յոյժ կրկնել 36
զճանապարհս քո ։ և յեգիպտոսէ ամա
չեսցես՝ որպէս ամաչեցերն յասորեստան_
ւոյն ։ * Զի և անտի ևս ձեռս 'ի գլուխ 37
ելցես • զի մերժեաց Տր զյոյսն քո • և
ո՛չ ևս յաջողեսցիս 'ի նմա ։

Գլ ։ Գ ։

1 Եթէ արձակեսցէ այր զկին իւր՝ և
գնասցէ 'ի նմանէ՝ և լինիցի առն
այլում • եթէ դառնալով դարձցի անդ
րէն 'ի նոյն • ո՞չ ապաքէն պղծելով
պղծեսցի կինն այն • և դու պոռնկեցար
ընդ հովիւս բազումս • և ո՛չ դարձար
2 առ իս՝ ասէ Տր ։ * Համբարձ զաչս քո
յուղղութի՝ և տես • ո՞ւր ոչ թաթաւե
ցար 'ի ճանապարհս քո • նստար դու նց
իբրև ագռաւ միայնացեալ թափուր •
և պղծեցեր զերկիր պոռնկութբ քով
3 և չարեօք քովք ։ * Եւ ստացար հո_
վիւս բազումս 'ի գայթագղութի քեզ •
երեսք կնոջ պոռնկի եղեն քո • անա_
4 մօթացար առ ամենեսեան ։ * Ո՛չ իբրև
զտուն կոչեցեր զիս • և հայր և իշխան
5 կուսութե քում ։ * Մի թէ յաւիտեան
կացցէ բարկութիւն քո • կամ խապա_
պահեսցի • ահա խօսեցար՝ և արարեր
զայդ ամենայն չարիս՝ և զօրացար ։
6 * Եւ ասէ ցիս Տր յաւուրս Յովսիայ ար
քայի • ‖ տեսե՞ր զինչ գործեաց բնա_ ‖ Մ եր.
կիչն Իէլի • գնաց առանձինն 'ի վերայ 2. 10.
ամ լերանց բարձանց • և 'ի ներքոյ ամ
անտառախիտ ծառոց • և անդ պոռնկե
7 ցաւ ։ * Եւ ասացի յետ այնչափ պոռն
կուե նր • դարձ առ իս՝ և ո՛չ դարձաւ •
և ետես զցոփութիւն ուխտադրուժն
8 յուդա ։ * Եւ տեսի՝ թէ յոյժ որովք
շնացաւ բնակիչն Իէլի, ըմբռնեցաւ •
արձակեցի զնա՝ և ետու նմա թուղթ
ապահարզանի 'ի ձեռս նր • և ո՛չ զար_
հուրեցաւ ուխտադրուժն յուդա քոյր
նորա • այլ գնաց, և պոռնկեցաւ և նա ։
9 * Եւ եղև յոչինչ պոռնկութի նորա •
և շաղախեր զերկիրն • զի շնայր ընդ քա
10 րի՝ և ընդ փայտի ։ * Եւ 'ի վերայ այսր
ամի ո՛չ դարձաւ առ իս ուխտադրուժ
քոյրն նորա յուդա՝ յամ սրտէ իւրմէ,
11 այլ ստութբ՝ ասէ Տր ։ * Եւ ասէ ցիս
Տր՝ արդարացոյց զանձն իւր ապստամ
բութիւն Իէլի առ ուխտազանցութբն
12 յուդայ ։ * Երթ՝ և ընթերցիր
զպատգամս զայս 'ի կողմանս հիւսի_
սոյ • և ասասցես, դա՛րձ առ իս բնա_
կիչդ Իէլի՝ ասէ Տր • և ո՛չ հաստատեցից
զերեսս իմ 'ի վերայ ձեր • զի ողորմած
եմ ես՝ ասէ Տր • և ո՛չ պահեցից ձեզ
13 ոխս յաւիտեան ։ * Բայց ծանիր զա_
նիրաւութիս քո • զի 'ի Տր Այ քո ամ_
բարշտեցար • և տարածեցեր զճանա_
պարհս քո օտարաց՝ 'ի ներքոյ ամ ան_
տառախիտ փայտից • և ձայնի իմում
14 ո՛չ լուար՝ ասէ Տր ։ * Դարձարո՛ւք որ_
դիք հեռացեալք՝ ասէ Տր՝ զի ես տիրե
ցից ձեզ • և առից զձեզ մի 'ի քաղաքէ՝
և

և երկուս յազգէ. և տարայց զձեզ 'ի
սիոն։ *Եւ տաց ձեզ հովիւս ըստ սր_ 15
տի իմում. և հովուելով հովուեսցեն
զձեզ իմաստութբ։ *Եւ եղիցի, եթէ 16
բազմանայցէք՝ և աճիցէք 'ի վերայ
երկրի յաւուրս յայնոսիկ՝ ասէ Տր. ոչ
եւս ասասցեն՝ տապանակ կտակարա_
նաց սրբոյն իսրայէլի. և ոչ անկանիցի
'ի սիրտ. և ոչ անուանեսցի 'ի նմա. և
ոչեւս խնդրեսցի. ոչ գործեսցի յաւ_
ուրս յայնոսիկ։ *Եւ 'ի ժամանակին 17
յայնմիկ կոչեսցեն զեհմ աթոռ տն.
և ժողովեսցին ամ ազգք յանուն Տն
յեհմ. և ոչեւս գնասցեն զհետ խորհր
դոց սրտից իւրեանց չարաց։ *Յաւ_ 18
ուրսն յայնոսիկ ժողովեսցին տունն
յուդայ առ տունն իէլի. և եկեսցեն 'ի
միասին 'ի հիւսիսոյ՝ և յամ գաւառաց
յերկիրն, յորում ժառանգեցուցից
զհարսն նոցա։ *Եւ ասեմ, (եղիցի Տր.) 19
զի կարգեցից զձեզ յորդիս. և տաց
ձեզ զերկիրն ընտիր. ժառանգութի
անուանի Այ ամենակալի ազգաց. և
ասացի՝ թէ հայր կոչեսցես զիս. և ոչեւս
դառնայցես յինէն։ *Բայց որպ անդառ 20
նեսցէ կին զհոմանի իւր. այնպէս ան
գոսնեաց զիս տունն իէլի՝ ասէ Տր։
*Ձայն 'ի շրթանց գուժեաց լալեան՝ 21
և պաղատանաց որդւոցն իէլի. զի անի
րաւեցան 'ի ճանապարհս իւրեանց։
*Դարձարուք որդիք. դարձջիք, և ես 22
բժշկեցից զբեկումն ձեր. և ասացին.
ահաւասիկ կամք. զի դու ես Տր Ած
մեր։ *Արդարև սուտ իսկ էին բլուրքն 23
և զօրութիւնք լերանց. բայց 'ի ձեռն
Տն Այ մերոյ է փրկութի տանն իէլի։
*Եւ ամօթ մաշեաց զվաստակս հարցն 24
մերոց 'ի մանկութէ իւրեանց. զխա_
շինս նոցա՝ և զանդեայս՝ և զուստերս
և զդստերս իւրեանց։ *Ննջեցաք ա_ 25
մօթով մերով՝ և ծածկեցին զմեզ
անարգանք մեր. քանզի առաջի Այ
մերոյ մեղաք մեք՝ և հարքն մեր՝ 'ի ման
կութէ մերմէ մինչև ցայսօր. և ոչ
լուաք ձայնի Տն Այ մերոյ։

Գլ. Դ.

Եթէ դարձցի առ իս իէլ՝ ասէ Տր. 1
դարձցի. և եթէ ընկեսցէ զգար
շելիս իւր 'ի բերանոյ իւրմէ. (վն Այ
յերուսաղէմ։) և յերեսաց իմոց երկի_
ցէ։ *Եւ երդնուցու՝ եթէ կենդանի 2
է Տր. ճշմարտութբ և իրաւամբք՝ և
արդարութբ, օրհնեսցին նովաւ ազգք.
և նովին գովեսցին։ *Զի այսպ ասէ 3
Տր ցարս յուդայ և ցբնակիչս եհմի.
‖ Ովսէ. ‖ Հերկեցէք ձեզ հերկս. և մի սերմա_
10. 12. նէք 'ի վր փշոց։ *Թլփատեցարուք այ 4
ղէ 2

ձերում. և թլփատեցէք զանթլփատու
թի սրտից ձերոց, արք յուդայ և բնա
կիչք եհմի. գուցէ ելանիցէ իբրև ըզ
հուր սրտմտութի իմ. բորբոքեսցի,
և ոչոք իցէ՝ որ շիջուցանիցէ յերեսաց
5 չարաց գործոց ձերոց։ *Գոյժ տուք
'ի հրէաստան. լու լիցի յեհմ. և ասա_
ցէք՝ փող հարէք 'ի վերայ երկրին. զա
ղաղակ բարձէք. գոչէք. ժողովեցա_
րուք՝ և մտցուք 'ի քաղաքս պարսպա_
6 որս։ *Արիք՝ փախերուք 'ի սիոն. փու
թացարուք՝ մի կայք. ‖ զի ածից ես ‖ Եր.
զչարիս 'ի հիւսիսոյ. և բեկումն մեծ։ 1. 13.
7 *Ել առիւծ 'ի մորւոյ իւրմէ սատա_
կել զազգս. խաղաց՝ և ել 'ի տեղւոջէ
իւրմէ՝ առնել զերկիր քո աւերակ. և
քաղաքք քո քակտեսցին՝ առ 'ի չգոյէ
8 բնակչաց 'ի նոսա։ *Ի վերայ այդորիկ
քրձազգածք եղերուք՝ կոծեցարուք.
ճիչ բարձէք. զի ոչ դարձաւ սրտմտու
9 թի բարկութե Տն 'ի ձէնջ։ *Եւ եղի
ցի յաւուր յայնմիկ՝ ասէ Տր. կորիցէ
սիրտ թագաւորին՝ և սիրտ իշխանացն.
քահանայքն յիմարեսցին. և մարգա_
10 րէքն զարմասցին։ *Եւ ասեմ. ո՛ Տր
Տր՝ բաղխելով ուրեմն խաբեցեր զժո խաբելով
ղովուրդն զայն՝ և զեհմ. զի ասացեր ուրեմն
թէ խաղաղութի եղիցի ձեզ. և հա_
սանիցէ սուր մինչև յանձինս նոցա։
11 *Ի ժամանակի յայնմիկ ասասցեն զժո
ղովուրդդ ցայդ՝ և զեհմ. այս մոլորու
թե, յանապատի 'ի ճանապարհ դստեր
ժողովրդեան իմոյ՝ ոչ 'ի մաքրութի՝
12 և ոչ 'ի սրբութի։ *Ոգի լրութե 'ի
նոցանէ եկեսցէ ինձ. այսուհետև ես
խօսեցայց ընդ նս դատաստանօք իմովք։
13 *Ահա իբրև զամպ ելցէ՝ և իբրև ըզ
մրրիկ կառք նր. արագագոյն քան զար
ծուիս երիվարք նր. վայ մեզ՝ զի չուա
14 ռացաք։ *Լուա՛ 'ի չարեաց զսիրտ քո
եհմ՝ զի ապրեսցիս. մինչև ցերբ գտա
նիցին 'ի քեզ խորհուրդք ցաւոց քոց։
15 *Զի ձայն գուժկանի 'ի դանայ. և
լուիցին ցաւք 'ի լեռնէ եփրեմի։
16 *Յուշ արարէք զայս ազգաց. ահաւա
դիկ հասեալ են յեհմ։ պատմեցէք՝ թէ
գունդք գան յերկրէ հեռաստանէ.
ձայն ետուն 'ի քաղաքս հրէաստանի։
17 *Իբրև պահապանք ագարակի շուրջ
պատեցան զնովաւ. զի անփոյթ արա_
18 րեր զինէն՝ ասէ Տր։ *‖ Ճանապարհք ‖ Իմաստ.
քո և գնացք քո արարին քեզ զայդ ամ. 1. 3. և 5.
այդ իսկ է չարութի քո՝ և դառնութի.
19 զի եհաս 'ի սրտի քում։ *Որովայն իմ.
որովայն իմ ցաւի. և ճաշակելիք սրտի
իմոյ հեծեծին. սիրտ իմ դեղանի. և
անձն իմ ոչ դադարեսցէ. զի զձայն
փողոյ լուաւ անձն իմ. զգոյժ պատե_

բազմի . և զչուառութե : * Բեկումն 20
'ի վերայ բեկման . բողոք բարձէք . զի
թշուառացաւ ամ երկիր . յանկարծա
կի թշուառացաւ խորանն . և քակտե
ցան փեղկքն խորանի իմոյ : * Մինչև 21
յե՞րբ տեսանիցեմ փախստականս .
լսիցեմ զձայն փողոյ : * Օ՛ի իշխանք 22
ժողովրդեան իմոյ զիս ո՛չ ծանեան . զի
որդիք անմիտք են , և ո՛չ հանճարեղք .
իմաստունք են 'ի չար գործել . և զբա_
րին առնել ո՛չ գիտացին : * Հայեցայ 23
յերկիր՝ և ահա թափուր ևոչինչ գոյր .
և յերկինս՝ և ո՛չ էր լոյս նոցա : * Տեսի 24
զլերինս՝ և կային յերերի . և զամենայն
բլուրս խռովեալս : * Հայեցայ , և 25
ահա ո՛չ գոյր մարդ . և ամ թռչունք
երկնից սարսեցան : * Տեսի՝ և ահա 26
աւերակ էր կարմե՞ղոս . և ամ քաղաքք
նորա հրձիգք յերեսաց Տն . և յերեսաց
բարկութե սրտմտութե նր ապակա_
նեցին : * Այսպէս ասէ Տր . աւերես 27
ցի երկիր ամ . և վախճան ո՛չ արարից :
* 'Ի վերայ այսր ամի սուգ առցէ եր_ 28
կիր՝ և խաւարեսցին երկինք 'ի վե_
րուստ : զի խօսեցայ , և ո՛չ զղջացայ .
դիմեցի՝ և ո՛չ դարձայց 'ի նմանէ :
* 'Ի ձայնէ հեծելոց և 'ի պրկալից աղե 29
ղանց խուսեաց աշխարհն ամ . և սորե
ցին յայրս . և թաքեան յանտառս . և
ելին 'ի քարանձաւս . ամ քաղաքք լքան՝
և ո՛չ բնակէր 'ի նոսա մարդ : * Եւ դու 30
զի՞ գործեսցես թշուառական . եթէ
կարմիր զգեցցիս . և զարդու ոսկւոյ
զարդարեսցիս . և ամայես ծարիր յաչս
քո . 'ի զուր են զարդարանքն քո . մեր
ժեցին զքեզ հոմանիքն քո . և խնդրեն
զանձն քո : * Ո՛ի զձայն իբրև զերկանց 31
անդրանկածնի լուայ զհեծութե քոյ .
ձայն դստեր սիոնի մեղկասցի . և լքցէ
զձեռս իւր . վա՜յ ինձ , զի պակասեցաւ
անձն իմ 'ի վերայ սպանելոցն :

Գլ : Ե :

Ընթացարո՛ւք յայսկոյս՝ յայնկոյս՝ 1
ընդ ճանապարհն եէմի . և տեսէք՝
և ծաներո՛ւք . և խնդրեցէք 'ի հրապա_
րակս նր . եթէ գտանիցէք այր մի որ
առնիցէ իրաւունս . և խնդրիցէ հաւ_
ատս . և եղէց նոցա քաւիչ՝ ասէ Տր :
2. Եբ. Եւ * Եթէ ասիցեն կենդանի է Տր . թէ 2
ասիցեն, պէտ և սուտ խսկ երդնուցուն : * Տր աչք 3
կենդանի քո 'ի հաւատս . տանջեցեր զնս . և նոցա
է Տր, այ_ ո՛չ ցաւեցաւ . վախճանեցեր զնոսա . և
սու և ո՛չ կամեցան ընդունել զխրատ . կարծ
սուտ իսկ րացուցին զերեսս իւրեանց քան զվէմ .
երդնուն և ո՛չ կամեցան դառնալ : * Եւ ես աս_ 4
ցի՝ թերևս աղքատք իցեն . վն այսորիկ
ո՛չ կարացին իմանալ զճանապարհս Տն .

5 և զիրաւունս Այ : * Երթայց առ հա
րուստս՝ և խօսեցայց ընդ նոսա . թէ Եբր. Նոքա
նոքա գիտասցեն զճանապարհս Տն և
զիրաւունս Այ . և նոքա աւանիկ առ
հասարակ խորտակեցին զլուծն . և խզե
6 ցին զկապանս : * Վն այնորիկ եհար
զնոսա առիւծ յանտառէ . և գայլ մին
չև 'ի տունս նոցա սատակեաց զնոսա .
զարթեաւ ինձ 'ի վր քաղաքաց նց . և
ամենեքին որք ելանիցեն 'ի նոցանէն՝
անկցին գեր . զի յաճախեցին զամպարշ
տութիս իւրեանց . զօրացան յապստամ_
7 բութե իւրեանց : * Որո՞վ այսուքիւք
հաշտեցայց ընդ քեզ : որդիքն քո թո_
ղին զիս՝ և երդնուին 'ի չաստուածսն .
յագեցուցի զնս՝ և շնային . և 'ի պոռն
8 կոցս օթեվանս առնէին : * Ձիք մա
տակախաղք եղեն . || իւրաքանչիւր 'ի Եզեկ.
9 կին ընկերի իւրոյ վրնջէին : * Միթէ 22.11.
'ի վր այսր ամի ո՛չ առնիցեմ այցելու_
թի՞ ասէ Տր . կամ յազգէ այնպիսւոյ
10 ո՛չ խնդրիցէ վրէժ անձն իմ : * Ելէք
'ի մարտկոցս նր՝ և կործանեցէք . բայց
վախճան մի՛ առնիցէք : թողէք զհի_
11 մունս նր , զի Տն են : * Ո՛ի արհամար
հելով արհամարհեցին զիս տունն իէլի՝
12 և տունն յուդայ՝ ասէ Տր : * Ստեցին
Տն իւրեանց . և ասեն՝ ոչինչ է այդ . և
ո՛չ եկեսցեն 'ի վր մեր չարիք . և զսուր՝
13 և զսով ո՛չ տեսցուք : * Մարգարէքն
մեր էին 'ի հողմ . և բան Տն ո՛չ գոյր 'ի
14 նոսա . այնպէս եղիցի նց : * Վն այդո_
րիկ այսպէս ասէ Տր Այ ամենակալ .
փոխանակ զի խօսեցայք զբանդ զայդ :
ահաւադիկ ես ետու զբանս իմ 'ի բե_
րան քո հուր . և զժողովուրդն զայն
15 փայտ : և կերիցէ զնս : * Ո՛ի ահաւա
դիկ ես ածից 'ի վր ձեր ազգ 'ի հեռա
ստանէ տունդ իէլի՝ ասէ Տր . ազգ որ
առաջին . ազգ որ յաւիտենից . ազգ
որոյ ո՛չ լսիցես զլեզու նր . և ո՛չ իմա_
16 նայցես զխօսս նր : * Կապարճք նորա
իբրև զգերեզմանս բաց են . ամենեքին
17 զօրաւորք : * Եւ կերիցեն զհունձս ձեր՝
և զհաց . և կերիցեն զուստերս՝ և զդ
ստերս ձեր . և կերիցեն զոչխար՝ և
զարջառ ձեր . և կերիցեն զայգիս , և
զթզենիս ձեր . և զձիթենիս ձեր : և
կասցեն զամուր ամուր քաղաքս ձեր .
յոր դուք պանծացեալ էք՝ սրով սա_
18 տակեսցեն : * Եւ եղիցի յաւուր յայն
միկ ասէ Տր Այ քո . ո՛չ արարից զձեզ
19 'ի վախճան : * || Եւ եղիցի յորժամ Եր.
ասիցէք՝ վն էր արար Տր Այ մեր մեզ 16. 10
զայս ամ : ասասցես ցնոսա . փոխանակ
զի թողէք զիս՝ և ծառայեցիք աստու
ծոց օտարաց յերկրի ձերում . նոյնպէս
ծառայեսջիք օտարաց յերկրի՝ որ ոչ
ձեր

ձեր իցէ ։ * Պատմեցէք զայդ 'ի տունն 20
յակոբայ • և լսելի լիցի 'ի տունն յու_
դայ • և ասասցէք ։ * Լուարուք զայս ժո 21
ղովուրդ յիմար՝ և անմիտ • որոց աչք
են, և ոչ տեսանեն • և ականջք՝ և ոչ
լսեն ։ * Եթէ յինէն ոչ երկնչիջիք՝ ասէ 22
Տր • կամ՝ յերեսաց իմոց ոչ սարսիցիք •
որ կարգեցի զաւազ սահման ծովու •
հրաման յաւիտենական՝ և ոչ անցանէ
զնովաւ • խռովեսցի՝ և ոչ կարասցէ •
գոչեսցեն ալիք նր՝ և ոչ անցցեն զնո_
վաւ ։ * Եւ ժողովրդեանս այսորիկ 23
եղև սիրտ անհնազանդ՝ և անհանճար•
թիւրեցան՝ և անցին՝ գնացին ։ * Եւ 24
ոչ ասացին 'ի սիրտս իւրեանց • երկի_
ցուք 'ի Տէ Այ մերմէ • որ տայ մեզ
զանձրև զկանուխ և զանագան , ըստ
ժամանակի լրութե հրամանի հնձոց •
և պարհեսցէ զմեզ ։ * Անօրէնութիք 25
մեր վրիպեցուցին զայն • և մեղք մեր
մերժեցին զբարութիս 'ի մէնջ ։
* Զի գտան 'ի մէջ ժողովրդեան իմոյ 26
ամպարիշտք • և որոգայթս իբրև ըղ
վարմս հաւորսաց կանգնեցին ապա_
կանել զմարդիկ ։ * Եւ ըմբռնեցին 27
իբրև զորոգայթս անկեալ լի թռչ_
նովք • այնպէս լի են տունք նց նենգու
թբ • վս այնորիկ ստահարացան՝ և մե
ծացան ։ * Գիրացան՝ և պարարտա_ 28
ցան • և անցին զբանիւք իմովք 'ի չա_
‖ Եսայ. րութի • ‖ դատաստան արդար ոչ դա_
1.23. տեցան • զիրաւունս որբոյն ոչ իրաւա
Զաքա. ցուցին • և զդատաստան այրւոյն ոչ
7.10. դատեցին ։ * Միթէ 'ի վր այսր ոմի 29
ոչ առնիցեմ այցելութի՝ ասէ Տր • կամ
յազգէ յայնպիսւոյ ոչ խնդրեսցէ ըղ
վրէժ անձն իմ ։ * Զարմանութիք՝ և ար 30
հաւիրք եղեն 'ի վր երկրի ։ * Մարգա 31
րէք սուտ մարգարէանան • և քահա_
նայք ծափ հարկանեն նոցա • և ժողո
վուրդ իմ սիրեաց զայն • և զի՞նչ գոր
ծիցէք առ յապայ ։

ԳԼ ։ Զ ։

Զօրացարուք որդիք բենիամինի • 1
'ի մէջ եմէմի փող հարէք ։ 'ի թե
կուէ և 'ի վերայ բեթաքարմայ առէք
նշան • զի չարիք կարկառեալք գան 'ի
հիւսիսոյ • և բեկումն մեծ , * Եղիցի 2
գեղեցկին, և փափկացելոյն ։ և բարձ_
ցի բարձրութի քո դուստր սիոնի ։
* Եկեսցեն 'ի նա հովիւք և խաշինք իւր 3
եանց • և կանգնեսցեն շուրջ զնովաւ
զխորանս իւրեանց • և հովուեսցեն իւր_
աքանչիւր ձեռամբ ։ * Պատրաստեցա 4
րուք 'ի վերայ նր պատերազմ • արիք՝
և ելցուք 'ի վերայ նր 'ի միջօրէի ։ վայ
մեզ • զի տիւն կարճատեաց • և հասին
5 ստուերք երեկորւոյ ։ * Արիք՝ և ելցուք
'ի գիշերի • և ապականեսցուք զհի_
6 մունս նր ։ * Զի այսպէս ասէ Տր զօ_
րութեց • ջարդեցէք զփայտակերտս նր •
արկէք 'ի վր երուսաղէմի զօրս • զի նա
է քաղաք ամենևին սուտ ։ բռնութի
7 'ի մէջ նորա ։ * Զոր օրինակ ցրտացու
ցանէ գուբ զջուր իւր • այնպէս և նա
ցրտացուցանէ զչարիս իւր ։ ամպարշ_
տութի՝ և թշուառութի լուիցի 'ի մի_
ջի նր • յանդիման իւր հանապազ՝ ցա_
8 ւօք՝ և տանջանօք ։ * Խրատեսցիս եմէմ•
գուցէ երբէք վերասցի անձն իմ 'ի քէն•
գուցէ երբէք արարից զքեզ անապատ
երկիր • ուր ոչ՞ք երբէք բնակեսցաւ ։
9 * Զի այսպէս ասէ Տր զօրութեանց •
կթեցէք՝ կթեցէք • ճռաքաղ արարէք
զմնացորդս իէլի • և անդրէն կրկնեա
10 ջիք՝ որպ կթօղ յոճ իւր ։ * Ընդ ումխօ
սեցայց • և ում եղեց վկայութիւն՝ և
լուիցէ • ահաւասիկ անթլփատք են
ականջք նց • և ոչ կարեն լսել • ահա
բան Տն եղև նց 'ի նախատինս • և ոչևս
11 ախորժեսցեն զնա ։ * Եւ ես զբարկու
թի իմ լցի՝ և արգելի • և ոչ վախճա_
նեցի զնս ։ հեղից 'ի վր տղայոց արտա
քուստ • և 'ի ժողովս երիտասարդաց 'ի
միասին • զի այր և կին առ հասարակ
ըմբռնեսցին • ծեր հանդերձ կատարե
12 լովն աւուրբք ընկրկեսցին ։ * Եւ ըմ_
բռնեսցին տունք նց 'ի ձեռս օտարաց ։
անդք և կանայք նց 'ի միասին ։ զի ձգե
ցից զձեռն իմ 'ի վր բնակչաց երկրին
13 այնորիկ՝ ասէ Տր ։ * ‖ Զի 'ի փոքունց ‖ Եսայ.
նոցա մինչև 'ի մեծամեծս • ամենեքին 56.11.
կատարեցին զանօրէնութի ։ 'ի քահա Այր.
նայէ մինչև 'ի սուտ մարգարէ • ամե_ 8.10.
14 նեքեան արարին ստութի ։ * Եւ բժշ
կէին զհարուածս դստեր ժողովրդեան
իմոյ ընդ արհամարհանս • և ասէին խա
ղաղութի , խաղաղութի • և ո՞ւր է խա
15 ղաղութի ։ * Յամօթ եղեն, զի պակա
սեցան • և ոչ որպ ամաչեցեալք ամաչե
ցին , և զանարգանս իւրեանց ոչ առին
'ի միտ ։ վս այնորիկ անկցին 'ի կործա_
նումն իւրեանց • և 'ի ժամանակի այցե
լութե իւրեանց տկարասցին, ասէ Տր ։ տարաժէն
16 * Այսպէս ասէ Տր • կացէք 'ի ճանա_ ցէն
պարհս՝ և դիտեցէք • և հարցէք զյաւի
տենական շաւղաց Տն • և տեսէք, ո՞ր է
ճանապարհ բարի՝ և գնացէք ընդ նա•
‖ և գտջիք զսրբութի անձանց ձերոց • ‖ Մատ.
17 և ասացին, թէ ոչ երթիցուք ։ * Եւ 11.29.
կացուցի 'ի վր ձեր դէտս • լուարուք
բարբառոյ փողոյն • և ասեն, ոչ լուի_
18 ցուք ։ * Վս այնորիկ լուան ազգք • և
որք հովուէին զհօտս 'ի նոսա • որքան
19 ես արարից ընդ նոսա ։ * Լուր երկիր•
ահա_

ահաւասիկ ածից 'ի վե՛ ժողովրդեանդ
այդորիկ չարիս • ըստ պտղոյ ապստամ
բութե՛ իւրեանց • զի բանից իմոց ո՛չ
անսացին • և զօրէնս իմ մերժեցին:
Եսայ. *Ընդէ՞ր է այդ • զի բերես ինձ խունկս 20
1.11. 'ի սաբայէ • և կինամոմոն յերկրէ հե_
ռաստանէ • ողջակէզք ձեր չե՛ն ընդ_
ունելիք • և զոհք ձեր ինձ ո՛չ քաղցրա
ցան: *Վ՛ այդորիկ այսպէս ասէ Տր̃• 21
ահաւասիկ ես տաց 'ի վերայ ժողովր_
դեանդ այդորիկ ախտս՝ և ախտասցին
'ի նմին, հարք և որդիք 'ի միասին • դրա
ցին և ընկեր իւր կորիցեն: *Այսպէս 22
ասէ Տր̃• ահաւասիկ զօր գայ 'ի հիւ_
սիսոյ • ազգ մեծ՝ և թագաւորք բա_
զումք՝ զարթիցեն 'ի ծագաց երկրի:
*Աղեղնաւորք և տիգաւորք • ազգ 23
ժպիրհ և անողորմ • ձայն նորա իբրև
զձայն ծովու յարուցելոյ • կառօք և
երիվարօք ճակատեսցի: Հաստեսցի
իբրև զհուր 'ի պատերազմ 'ի վե՛ քո
դուստր սիոնի: *Լուաք զլուր նոցա՝ 24
և լքան ձեռք մեր • նեղութիւնք կալան
զմեզ իբրև երկունք ծննդականի:
*Մի՛ ելանէք յանդս • և ընդ ճանա_ 25
պարհս մի՛ գնայք • զի սուր թշնամեաց
շուրջ պատեալ է: *Դուստր ժողովր 26
դեան իմոյ զքուրձ զգեցի՛ր • մոխիր
տարածեա՛ • ա՛ռ զսուգ սիրելւոյ • և
կոծեա՛ց զկոծ ողորմ • զի յանկարծակի
եկեսցէ թշուառութի՛ 'ի վերայ ձեր:
*Փորձիչ ետու զքեզ ժողովրդոց պա_ 27
շարելոց: և դիտասջի՛ր փորձել ինձ զճա
նապարհս դոցա: *Ամենեքին անհնա_ 28
զանդք գնան կամակարութե՛• և իբրև
զպղինձ և զերկաթ ամենեքին ապակա
նեալք: *Պակասեցան փուքք 'ի հրոյ• 29
պակասեցաւ կապար • զուր աշխատի
արծաթագործ՝ և նոցա չարիք ո՛չ հա_
լեցան: *Արծաթ խոտան կոչեցէ՛ք զնս՝ 30
զի խոտեաց զնս Տր̃: (Լուարո՛ւք զպատ
գամս Տն̃ ա՛մ հրէաստան:)

ԳԼ: Է:

Պատգամն որ եղև առ երեմիայ 'ի 1
Տէ՛ և ասէ: *Կա՛ց 'ի դրան տանն 2
Տն̃• և ընթերցի՛ր անդ զբանս զայս՝ և
ասասցես: Լուարո՛ւք զբան Տն̃ ա՛մ
հրէաստան • որք մտանէք ը՛ դրունս
ընդ այդոսիկ՝ երկիր պագանել Տն̃:
*Այս՛ ասէ Տր̃ զօրութե՛ց՝ Ա՛ծ իՂի: 3
Անդր. 26.13. || Ուղի՛ղ արարէք զճանապարհս ձեր՝ և
զգնացս • և բնակեցուցից զձեզ 'ի տեղ
ւոջ յայսմիկ: *Եւ մի՛ յանձնապաստ_ 4
տան լինիք 'ի բանս ստութե՛• զի ամե_
նևին ո՛չ օգնեսցեն ձեզ՝ որք ասեն տա
ճար Տն̃• տաճար Տն̃• տաճար Տն̃:
*Եթէ ուղղելով ուղղիցէք զճանա_ 5

պարհս ձեր՝ և զգնացս • և եթէ առնե
լով առնիցէք իրաւունս 'ի մէջ առն՝ և
6 ընկերի իւրոյ: *Եւ զեկն՝ և զորբն և
զայրին ո՛չ յաղթահարիցէք • և զարիւն
անպարտ ո՛չ հեղուցուք 'ի տեղւոջդ
յայդմիկ • և զհետ աստուածոց օտարաց
7 ո՛չ երթայցէք 'ի չարիս ձերում: *Բնա
կեցուցից զձեզ 'ի տեղւոջդ յայդմիկ •
յերկրի՝ զոր ետու հարցն ձերոց յաւի
8 տենից մինչև ցյաւիտեան: *Ապա թէ
դուք յանձնապաստանիցիք 'ի բանս
ստութե՛• ուստի ոչ ի՛նչ օգտիցիք:
9 *Եւ գողանայցէք՝ և սպանանիցէք՝ և
շնայցէք • և երդնուցուք սուտ • և ար_
կանիցէք խունկս բահաղու • և երթայ
ցէք զհետ աստուածոց օտարաց • զորս
ո՛չ գիտիցէք • (ուստի չար լինիցի ձեզ:)
10 *Եւ գայցէք՝ կայցէք առաջի իմ 'ի
տանս յայսմիկ • յորոյ վերայ կոչեցեալ
է անուն իմ • և ասիցէք՝ մերժեցաք
յառնելոյ զա՛մ գարշելիսն զայսոսիկ:
11 *|| Մի՛ թէ այր աւազակա՛ց եղև տունդ Եսայ.
իմ • յորոյ վերայ կոչեցեալ է անուն 56.7.
իմ այդ առաջի ձեր • ես ահաւասիկ տե Մատթ.
12 սի՝ ասէ Տր̃: *Օ՛լ չերթայք 'ի տեղին իմ 21.13.
'ի սելով • ուր բնակեցուցի զանուն իմ Մարկ.
անդ զառաջինն: և տեսի՛ք զինչ արա 11.17.
րի ընդ նա • յերեսաց չարեաց ժողովր Ղուկ.
13 դեան իմոյ իՂի: *Եւ արդ փոխանակ 19.46.
զի արարէք զայդ ա՛մ գործս՝ ասէ Տր̃•
և խօսեցայ ընդ ձեզ ընդ առաւօտս
խօսելով՝ և ո՛չ լուայք ինձ • || կոչեցի Առակ.
զձեզ՝ ո՛չ ետուք ինձ պատասխանի: 1.24.
14 *|| Եւ արարից ընդ տունդ ընդ այդ՝ Եսայ.
յորոյ վերայ կոչեցեալ է անուն իմ • 65.12.
յոր դուքդ ապաստանիք • և ընդ տե_ Ա Թագ.
ղիդ՝ զոր ետու ձեզ՝ և հարց ձերոց • ո՛ր 4.2.10.
15 արարի ը՛ սելով: *Եւ ընկեցից զձեզ սելով.
յերեսաց իմոց՝ ո՛ր ընկեցի զեղբարսն
16 ձեր՝ զա՛մ զաւակն եփրեմի: *|| Եւ դու Անդ.
մի՛ կար յաղօթս 'ի վե՛ ժողովրդեանդ 14.11.
այդորիկ • և մի՛ խնդրեր 'ի վե՛ դոցա
զողորմութի՛• մի՛ աղաչեր՝ և մի՛ անկա
նիր առաջի իմ 'ի վե՛ դոցա • զի ո՛չ լսեմ
17 քեզ: *Թէ ո՛չ տեսանես • զինչ գոր_
ծեն դոքա 'ի քաղաքս յուդայ • և 'ի ճա
18 նապարհս եմի: *Որդիքն նց̃ զփայտ
քաղեն • և հարք նոցա հրատս արկա_
նեն • և կանայք նց̃ զհայս հարկանեն •
առնեն զկարկանդակս զօրութե՛ երկ
նից • և նուիրեն զնուէրս աստուծոց
օտարաց • զի բարկացուցանիցեն զիս:
19 *Մի՛ թէ զի՛ս բարկացուցանեն՝ ասէ
Տր̃ • և ո՛չ զանձինս • զի ամաչեսցեն
20 երեսք նց̃: *Վ՛ այնորիկ այսպէս ասէ
Տր̃՝ ահա բարկութի՛ իմ • և սրտմտութի
իմ հեղցի 'ի վերայ տեղւոյդ այդորիկ •
'ի վե՛ մարդոյ և անասնոյ • և 'ի վե՛ փայ
տի

տի ագարակի. և՝ի վերայ արդեանց
երկրի բորբոքեսցի՝ և ոչ շիջցի։ * Այս 21
պես ասէ Տէր զօրութեանց. Ած իւր. զող
ջակերս ձեր ժողովեցէք հանդերձ զո
հիւք ձերովք. և կերայք միս։ * Օի 22
ոչ խօսեցայ ընդ Հարսն ձեր. և ոչ պա
տուէրեր եառ նոցա՝ յաւուրն յորում
հանի զնոսա յերկրէն եգիպտացւոց՝
վասն բանի ողջակիզաց և զոհից։ * Այլ 23
զայս բան պատուիրեցի նոցա՝ և ասեմ.
լուարուք ձայնի իմում. և եղէց ձեզ
Ած և դուք եղիջիք ինձ՝ ի ժողովուրդ.
և գնասջիք յամենայն ճանապարհս իմ. զոր
պատուիրեցի ձեզ. զի բարի լինիցի
ձեզ։ * Եւ ոչ լուան ինձ. և ոչ անսաց 24
ունկն նոցա. այլ գնացին ըստ խորհրդոց
սրտից իւրեանց չարաց. և եղեն յետս՝
և ոչ յառաջ։ * Յօրէ յորմէ ելին հարքն 25
նոցա յերկրէն եգիպտացւոց մինչև
ցայսօր։ և առաքեցի առ ձեզ զամենայն
ռայս իմ զմարգարէս՝ ի տուէ՝ և ընդ
առաւօտս առաքեալ։ * Եւ ոչ լուան 26
ինձ. և ոչ անսաց ունկն նոցա. ‖ և խա‖ Այլ.
տացուցին զպարանոցս իւրեանց առա 16.12.
ւել քան զհարցն իւրեանց։ * Եւ ա 27
սասցես ցնոսա զբանս զայս. և ոչ լուի
ցեն քեզ. և կոչեսցես զնոսա՝ և ոչ ոայ
ցեն քեզ պատասխանի։ * Եւ ասաս 28
ցես առ նոսա. այս ազգ են՝ որք ոչ
լուան ձայնի Տեր Աստուծոյ իւրեանց. և ոչ
ընկալան զխրատս։ պակասեցան հաւ
ատք. և բարձաւ ճշմարտութիւն՝ ի բե
րանոյ նոցա։ * Կտրեա զհեր քո՝ և՝ի 29
բաց ընկեա. և առ ողբս՝ ի լերինս.
զի խորտակեաց Տէր՝ և մերժեաց զազգն՝
որ առներ զայս։ * Օի արարին որդիքն 30
Յուդայ չար առաջի իմ՝ ասէ Տէր. կար
գեցին զդարչելիսն իւրեանց՝ ի տանն.
յորոյ վերայ կոչեցեալ էր անուն իմ՝
պղծել զնա։ * Եւ շինեցին բագին տո 31
փեթայ. որ է՝ ի ձոր որդւոցն Ենոմայ.
այրել զուսերս և զդստերս իւրեանց
՝ի հուր. զոր ոչ հրամայեցի նոցա՝ և
ոչ զմտաւածէի՝ ի սրտի իմում։ * Վա՛ 32
այնորիկ ահա աւուրք եկեսցեն՝ ասէ
Տէր. և ոչևս ասասցեն բագին տոփե
թայ. և ձոր որդւոցն Ենոմայ, այլ ձոր
կոտորելոյ. և թաղեսցեն՝ ի տոփեթն
առ տեղւոյն չգտանելոյ։ * Եւ եղիցին 33
դիակունք ժողովրդեանդ այդորիկ՝
կերակուր թռչնոց երկնից՝ և գազա
նաց երկրի. և ոչոք իցէ, որ հալածիցէ։
‖ Այլեւ. * ‖ Եւ բարձից՝ ի քաղաքացն յուդայ՝ 34
26. 13. և յանցից եմ զձայն խրախճանաց.
և զձայն ցնծացելոց. զձայն հարսին.
և զձայն փեսայի. զի յանապատ եղիցի
երկիրս։

ԳԼՒ Ը.

1 ’Ի ժամանակի յայնմիկ ասէ Տէր. Հան
ցեն զոսկերս Թագաւորացն յու
դայ՝ և զոսկերս իշխանաց նոցա. և զոս
կերս քահանայիցն. և զոսկերս մարգա
րէից. և զոսկերս բնակչացն Երեմի՝ ի
2 գերեզմանաց իւրեանց։ * Եւ տամբեն
ցուսցեն յարեւու. և ընդ լուսնով՝ և
ընդ ամենայն զօր երկնից՝ զոր սիրեցինն. և որոց
ծառայեցինն. և որոց զհետ գնացին.
և յորս ապաստան լինէին. և երկիր
պագանէին նոցա. և ոչ կոծեսցին, և ոչ
լացցեն, այլ ի նշաւակ եղիցին՝ ի վե
3 րեսաց երկրի։ * Օի ախորժեցին
զմահ՝ և ոչ զկեանս. և զնացարդս՝ որք
մնացեալ իցեն յազգէ անտի չարէ. Ընդ
ամ՝ տեղիս մնացելոցն՝ ուր և մերժե
ցից զնոսա անդր՝ ասէ Տէր զօրութեանց։
4 * Եւ ասասցես ցնոսա. այսպէս ասէ Տէր.
միթէ որ գլորի՝ ոչ յառնիցէ. կամ՝ որ
5 խոտորի՝ ոչևս դառնայցէ։ * Զի՞ընդ ընդէր
խոտորեցաւ ժողովուրդդ այդ՝ և եկամ՝
խոտորումն ժպիրհ. և պնտեցան կա
մք իւրեանց՝ և ոչ կամեցան դառնալ։
6 * Ունկնդիք՝ և լուարուք՝ ոչ այսպէս
խօսին. և ոչ գոյ մարդ՝ որ զղջանայ՝ ի
չարեաց իւրոց. և ասէ, Թէ զինչ գոր
ծեցի. կասեայ ընթացօղն յընթացից
իւրոց՝ իբրև զձի ընդ քիրան մտեալ
7 ՝ի խինջել իւրում։ * Զի՞ արագն յեր
կինս ծանեաւ զժամանակ իւր. տատ
րակ և ծիծառն և թռչունք վայրիք
պահեցին զժամանակս մտից իւրեանց. և
ժողովուրդ իմ՝ ոչ ծանեաւ զիրաւունս
8 Տեառն։ * Օիարդ ասիցէք՝ Թէ իմաս
տունք եմք. և օրէնք Աստ են ընդ մեզ.
վո՛ այնորիկ զուր եղև, և սուտ վիճակն
9 դպրաց։ * Ամօթ եղեն իմաստունքն.
զարհուրեցան, և պարտեցան. զի զբան
Տեառն անարգեցին. զի՞նչ իմաստութիւն
10 իցէ՝ ի նոսա։ * ‖ Վո՛ այնորիկ տացց զկա ‖ Հասցէ.
նայս նոցա այլոց. և զագարակս նոցա օտար 56.11.
ժառանգաց. զի՝ ի փոքունէ մինչև՝ ի Վ եր.
մեծամեծս նոցա՝ ամ՝ որ ագահէ զա 6. 13.
գահութի՝ ի մարգարէէ մինչև ցքա
հանայն, ամ՝ որ առնէ զանիրաւութիւն։
11 * Եւ բժշկէին զբեկումն դստեր ժողո
վրդեան իմոյ՝ ընդ արհամարհանս. և
ասէին խաղաղութի՛ խաղաղութի՛՝ և
12 ոչ գոյր խաղաղութի։ * Ամաչեսցեն՝
զի արարին զպղծութի, սակայն և
այնպես ոչ ամաչեցին ամօթով՝ և ըզ
պատկառանս ոչ առին՝ ի միտ՝ վասն
այնորիկ անկցին ընդ անկեալս՝ ի ժա
մանակի այցելութե՛ իւրեանց տկարաս
13 ցին՝ ասէ Տէր։ * Եւ ժողովեսցեն զսոր
պիւնս

գիւնս իւրեանց՝ ասէ Տր̄ ․ չիք խաղող
յայգիս նոցա ․ և ո՛չ թուզ ՚ի թզենիս
ն̄ց ․ և տերևն թափեցաւ ․ ետու նոցա՝
և էանց զնոքօք ։ *Ընդէ՞ր մեք զի՞ նստի_ 14
ցիմք ․ ժողովեցարուք՝ և մտցուք ՚ի քա
ղաքս ամուրս ․ և անդր անկցուք ․ զի Տր̄
Ա̄Ծ ընկէց զմեզ՝ և արբոյց մեզ զջուր
դառնութեան ․ զի մեղաք առաջի նորա ։
‖Երեմ․ 14․19․ *‖Ժողովեցաք ՚ի խաղաղութի, և ո՛չ 15
գոյր ․ ՚ի բարութի ՚ի ժամանակի բժշ
կութեան՝ և ահա տագնապ ։ *՚Ի դանայ 16
լուիցուք ձայն երագութեան երիվարաց
ն̄ց ․ ՚ի ձայնէ խխնջելոյ հեծելոյ նորա
շարժեցաւ երկիր ամ̄ ․ եկեսցէ և կե_
րիցէ զերկիր լի՛ իւրով՝ զքաղաքս և
զբնակիչս ն̄ց ։ * Վասնզի ես ահաւա_ 17
սիկ արձակեմ ՚ի ձեզ օձս կոտորիչս ․
յորս ո՛չ մոմնիցեն թովչութիւնք ․ և
հարկանիցեն զձեզ՝ ասէ Տր̄ ։ *Եւ յան 18
բժշկական ցաւս սրտից ձերոց տարա_
կուսելոց ։ *Ահա ձայն գուժի դստեր 19
ժողովրդեան իմոյ յերկրէ հեռաստա
նէ ․ միթէ Տր̄ ո՞չ գուցէ ՚ի Սիոն ․ կամ
թագաւոր անդ ո՞չ իցէ ․ ընդէ՞ր բար_
կացուցին զիս դրօշելովքն իւրեանց ․
փեօխն և սնոտւովքն օտարոտւովք ։ *Անցին 20
հունձք ․ էանց ամառն ․ և մեք ո՛չ փր_
կեցաք ։ *՚Ի վ̄ր բեկման դստեր ժո_ 21
ղովրդեան իմոյ խորտակեցայ ․ խաւա
րեցայ տարակուսանօք ․ յաղթահարե
ցին զիս երկունք իբրև ծննդականի ։
*Մի թէ դեղ ո՞չ գուցէ ՚ի Գաղաադ ․ 22
կամ բժիշկ ո՞չ կայցէ անդ՝ ընդէ՞ր ո՛չ
եղև բժշկութիւն դստեր ժողովր_
դեան իմոյ ։

ԳԼ ։ Թ․

Ո՞ տայր զգլուխս իմ ՚ի ջուր ․ և զաչս 1
իմ աղբիւր արտասուաց ․ և լայի
զժողովուրդս զայս, զտիւ և զգիշերն՝
և զվիրաւորեալս դստեր ժողովրդեան
իմոյ ։ *Ո՛ տայր ինձ յանապատի դադն 2
օթեվանս ․ և թողուի զժողովուրդ
իմ, և գնայի ՚ի դոցանէ ․ զի ամենեքին
շնան՝ առ հասարակ ժողովք արհամար
հողաց ։ *Եւ լարեցին զլեզուս իւրե՛ 3
իբրև զաղեղն ստութեան՝ և ո՛չ հաւատք
զօրացան ՚ի վ̄երայ երկրի ․ զի ՚ի չարեաց
՚ի չարիս ելին ․ և զիս ո՛չ ծանեան՝ ասէ
Տր̄ ։ *Իւրաքանչիւր յընկերէ իւրմէ 4
զգոյշ լերուք ․ և յեղբարս ձեր մի՛ յու_
սայք ․ զի ամ̄ եղբայր խաբելով խաբէ ․
և ամ̄ բարեկամ նենգութե՛ գնայ ։
*Իւրաքանչիւր զբարեկամ իւր այպա 5
նէ ․ և զճշմարտութի ո՛չ խօսեսցին ․
ուսան լեզուք ն̄ց խօսիլ զստութի ․ զրկե
ցին՝ և ո՛չ դադարեցին ։ *Ժողովել 6
վաշխս ՚ի վ̄երայ վաշխից ․ և զնենգու_
թի ՚ի վ̄ր նենգութեան ․ և ո՛չ կամեցան
7 զիս ճանաչել՝ ասէ Տր̄ ։ *Վա՛ս այսորիկ
այսպէս ասէ Տր̄ Տր̄ զօրութեանց ․ ահա
ասիկ ես ջեռուցից զնոսա՝ և փորձե_
ցից զնոսա ․ զի՞ արարից յերեսաց չա_
րեաց դստեր ժողովրդեան իմոյ ։
8 *‖Նետ խոցոտիչ լեզուք նոցա , ‖Երմ.
նենգաւորք բանք բերանոյ ն̄ց ․ ընդ 27.3.
ընկերի իւրում խօսի զխաղաղութի ․
և ՚ի սրտի իւրում ունի զթշնամութի ։
9 *Մի թէ ՚ի վ̄երայ այսոցիկ ո՞չ արարից
այցելութի՝ ասէ Տր̄ ․ կամ յազգէ այն
պիսւոյ ո՞չ խնդրիցէ զվրէժ անձն իմ ։
10 *Կո՛ծ առէք ՚ի վ̄ր լերանց ․ և ձայնս ՚ի
վ̄ր բլրոց անապատի ․ ողբացէք, քանզի
պակասեցան առ ՚ի չգոյէ մարդկան ան
ցաւորաց ․ և ո՛չ լուան զձայնս ստացու
ածոց ․ ՚ի թռչնոց երկնից մինչև ցանա
11 սունս յիմարեցան , և գնացին ։ *Եւ
տաց զԵ̄Մ ՚ի գերութի ․ և ՚ի բնակու
թի վիշապաց ․ և զքաղաքս Յուդայ ե_
դից յապականութի առ ՚ի չգոյէ բնակ
12 չաց ։ *Ո՞վ է այր իմաստուն՝ և ՚ի միտ
առցէ զայս ․ և առ որում բան բերա_
նոյ Տ̄ն պատմեսցէ մեզ ․ թէ վասն է՞ր
կորեաւ երկիր ․ լքաւ իբրև զանապատ
13 առ ՚ի չգոյէ անցաւորաց ։ * Եւ ասէ
ցիս Տր̄՝ վասն թողլոյ նոցա զօրէնս իմ,
զոր ետու առաջի երեսաց նոցա ․ և ո՛չ
14 լուան ձայնի իմում ։ * Եւ գնացին
զհետ հաճոյից սրտից իւրեանց չարաց ․
և զհետ կռոցն՝ զոր ցուցին նոցա հարք
15 ն̄ց ։ *Վա՛ս այնորիկ այսպէս ասէ Տր̄ զօ_
րութեանց Ա̄Ծ Ի̄Ի ․ ‖Ահաւադիկ ես ջամ ‖Երմ.
բեմ ժողովրդեանդ այդմիկ վտանկ ․ 23.15.
և արբուցանեմ դոցա զջուր դառնու_
16 թեան ։ *Եւ ցրուեցից զդոսա ընդ ազգս՝
զոր ո՛չ գիտացին դոքա, և հարք իւրե՛ ․
և արձակեցից ՚ի վ̄երայ դոցա սուր՝ մին
չև սատակեցից զդոսա նովաւ ։
17 *Այսպէս ասէ Ա̄Ծ զօրութեանց ․ զմտա
ածէք՝ և կոչեցէք զձայնարկուս՝ և
եկեսցեն ․ և առ իմաստունս կանայս ա_
18 ռաքեցէք ․ և ճչեսցեն ։ * Եւ սախպես
ցեն ․ և առցեն ողբս ՚ի վ̄ր ձեր՝ և իջուս
ցեն աչք ձեր արտասուս ․ և արտևա_
19 նունք ձեր բղխեսցեն զջուր ։ * Զի
ձայն ողորմ գուժեաց ՚ի Սիոն ․ զիա՞րդ
թշուառացաք ․ ամաչեցէք յոյժ ․ զի
լքաք զերկիր ․ և ընկեցաք զբնակութիս
20 մեր ։ *Լուարուք կանայք զպատգամս
Ա̄Յ ․ և ընկալցին ականջք ձեր զբանս
բերանոյ նորա ․ և ուսուցէք դստերաց
ձերոց ձայնս ․ և կին ընկերի իւրում
21 ողբս ։ * Զի ել մահ ընդ պատուհանս
ձեր ․ և եմուտ յերկիր ձեր ․ ջնջել
զտղայս արտաքուստ՝ և զերիտասարդս
22 ՚ի հրապարակաց ։ *Այսպէս ասէ Տր̄ ․
և

և եղիցին դիակունք մարդկան նշա_
նակ ընդ երեսս դաշտաց երկրի ձերոյ․
և իբրև զխոտ զկնի հնձողի ․ և ոչոք
իցէ ․ որ ժողովիցէ ։ * Այսպէս ասէ 23
‖ Ա.Կոր. Տ՟ր՝ ‖ մի պարծեսցի իմաստունն յիմաս
1.31. տութիւն իւր ․ և մի պարծեսցի հզօրն ՚ի
2.Կոր. զօրութիւն իւր ․ և մի պարծեսցի մեծն
10.17. ՚ի մեծութիւն իւր ։ * Այլ այն պարծես 24
ցի՝ որ պարծիցին, իմանալ և ճանաչել
զիս ․ թէ ես եմ Տ՟ր ․ որ առնեմ զիրաւ
ունս՝ և զողորմութիւն ․ և զարդարութիւն
՚ի վ՟ր երկրի ․ և ՚ի նոյնս են կամք իմ՝
ասէ Տէր ։ * Ահա աւուրք եկեսցեն՝ 25
ասէ Տ՟ր ․ և արարից այց ՚ի վերայ ա՟մ
թլփատելոց յանթլփատութեան իւրեանց ․
* ՚Ի վերայ եգիպտոսի ․ և ՚ի վ՟ր յուդայ ․ 26
և ՚ի վերայ եդովմայ ․ և ՚ի վ՟ր որդւոցն
ամոնայ ․ և ՚ի վերայ որդւոցն մովա_
բու ․ և ՚ի վ՟ր ա՟մ յապաւելոցն զերեսօք
բնակչացն անապատի ․ զի ա՟մ ազգք
անթլփատք են մարմնովք ․ և ա՟մ տունն
ի՟ղի անթլփատք սրտիւք իւրեանց ։

Գլ ։ Ժ ․

Լուարո՛ւք զպատգամն՝ զոր խօսե_ 1
ցաւ Տ՟ր ՚ի վ՟ր ձեր տունդ ի՟ղի ։
* Այսպէս ասէ Տ՟ր ․ ըստ ճանապարհաց 2
հեթանոսաց մի ուսանիք ․ և ՚ի նշանաց
երկնից մի զարհուրիք ․ զի նոքա երկն
չին յերեսաց նոցա ։ * Զի ա՟մ օրէնք 3
հեթանոսաց սնոտիք են ․ փայտ յան_
տառէ հատեալ գործ ձեռաց հիւսան ։
‖ Իմաստ. * ‖ Այլ ձոյլ արծաթոյ՝ և ոսկւոյ զար_ 4
13. 11. դարեալ ուռամբք ․ և բևեռօք հաս_
և 14. 8. տատեցին զնոսա՝ զի ոչ շարժեսցին ․
(արծաթ ճախարակեալ ․ արծաթ ՚ի
գործ արկեալ ՚ի թարշշէ ․ ոսկի եկեալ
՚ի մեմփաթայ ։) * Այլ ձեռն ոսկերչի 5
գործեաց գործ ճարտարաց ․ կապու_
տակ և ծիրանի զգեցուցանեն նոցա ․
և ոչ գնասցեն, այլ բառնալով բարձ
ցին՝ և ոչ քայլ մի ոտին փոխեսցեն ․ և
ոչ ինքնին ՚ի կրելիսն ամբարձցին ․ և
մի երկնչիք ՚ի նոցանէ ․ զի ոչ չար առ_
‖ Միք. նեն ․ և բարի իսկ ոչ գոյ ՚ի նմա ։ * ‖ Զի՞ք 6
7.18. ոք իբրև զքեզ Տ՟ր ․ մեծ ես՝ և մեծ է
‖ Յայտ. անուն քո զօրութեամբ ։ * ‖ Ո՞ ոչ երկիցէ 7
15.4. ՚ի քէն թագաւոր ազգաց ․ զի քեզ իսկ
վայելէ ․ զի յա՟մ իմաստունս հեթա_
նոսաց ․ և յա՟մ թագաւորս նոցա ոչ է
իբրև զքեզ ։ * Այլ միանգամայն այ_ 8
րեսցին ․ և սատակեսցին սիրտք սնո_
տեաց ․ զի փայտք են ։ * Այլ արծաթ 9
ընտիր եկեալ ՚ի թարշշայ ․ և ոսկի սո_
փաթայ ․ գործ ճարտարաց ա՟մ ․ և ձե_
ռաց ոսկերչաց ․ կապուտակ և ծիրանի
հանդերձն նոցա՝ գործ իմաստնոց ա՟մ ։
* Այլ Տ՟ր Ա՟ծ ճշմարիտ է ․ Ա՟ծ կեն_ 10
ԴԸ

դանի ․ և թագաւոր յաւիտենական ․
՚ի սրտմտութենէ նո՟ր շարժեսցի երկիր ։
* Այլ ոչ համբերեսցին ազգք բար_
11 կութեան նորա ։ * Այլ այսպէս ասասջիք
ցնոսա ․ աստուածք՝ որք զերկինս և
զերկիր ոչ արարին, կորիցեն յերկրէ ․
12 և ՚ի ներքոյ երկնիցս այսոցիկ ։ * ‖ Տ՟ր ‖ Ծննդ.
է՝ որ արար զերկիր զօրութեամբ իւրով՝ 1. 1.
և կանգնեաց զտիեզերս իմաստութեամբ ‖ Այր.
իւրով ․ և խորհրդով իւրով ձգեաց 51. 15.
13 զերկինս ։ * Այլ ՚ի տալոյ զձայն իւր
ընու զբազմութիւն ջուրց յերկինս ․ և
հանէ զամպս ՚ի ծագաց երկրի ․ ‖ և զփայ ‖ Սաղմ.
լատակունս իւր յանձրևս արար ․ հանէ 134. 7.
14 զհողմս ՚ի շտեմարանաց իւրոց ։ * Յի_ ‖ Այր.
մարեցաւ ա՟մ մարդ ՚ի գիտութենէ ․ յա_ 51. 16.
մօթ եղեն ա՟մ ոսկերիչք դրօշելովք
իւրեանց ․ զի սուտ ձուլեցին ․ և չիք
15 շունչ ՚ի նոսա ։ * Սնոտիք են՝ և գործք
խաբէութեան ․ ՚ի ժամանակի այցելութեան
16 իւրեանց կորիցեն ։ * Այլ ոչ այնպիսի
է բաժինն յակոբու ․ զի որ ստեղծն
զա՟մ՝ նա է բաժին նորա ․ և ի՟ղ գաւա
զան ժառանգութեան նորա ․ Տ՟ր զօրու
17 թեանց անուն նորա ։ * Ժողովեա՛ ՚ի բա
ցուստ զզօրութիւն քո ․ բնակեալդ ՚ի մէջ
18 ընտրելոց ։ * Զի այսպէս ասէ Տ՟ր՝ ա_
հաւասիկ ես քարընդոտնեմ զբնակիչս
երկրիդ այդորիկ նեղութեամբ ․ և նեղե_
19 ցից զնոսա՝ զի մի գտցին ։ * Վա՜յ ՚ի վ՟ր
բեկման քոյ՝ զի ցաւագինք են հարուա՟
ածք քո ․ և ասեմ, արդարև այդ իսկ
20 են վէրք իմ, և եհաս յիս ։ * Խորանն
իմ չքնաւացաւ, կործեաւ ․ և ա՟մ խորա
նափեղկք իմ քակտեցան ․ որդիք իմ
և խաշինք իմ ոչ ուրեք են ․ և ոչ ևս
գոյ տեղի խորանի իմոյ ․ և ոչ տեղի
21 խորանափեղկաց իմոց ։ * Զի հովիւքն
անմտացան ․ և զՏ՟ր ոչ խնդրեցին ․ վա՟
այնորիկ ոչ իմացան ա՟մ արօտականքն․
22 և ցրուեցան ։ * Ձայն գուժի եկեսցէ՝
և շարժումն մեծ յերկրէ հիւսիսոյ ․
կարգել զքաղաքս յուդայ յապակա_
նութիւն և ՚ի դադարս ջայլամանց ։
23 * Գիտեմ Տ՟ր՝ զի ոչ մարդոյ է ճանա_
պարհ իւր ․ և ոչ այր գնասցէ ․ և յա_
ջողեսցէ զճանապարհս իւր ։
24 * ‖ Խրատեա՛ զմեզ Տ՟ր՝ բայց իրաւամբք, ‖ Սաղմ.
և մի ցասմամբ ․ զի մի սակաւաւորս 6. 1.
25 արասցես զմեզ ։ * ‖ Հեղ զբարկութիւն ‖ Սաղմ.
քո ՚ի վերայ հեթանոսաց՝ որք ոչ գի_ 78. 6.
տեն զքեզ ․ և ՚ի վերայ ազգաց՝ որք զա
նուն քո ոչ կարդացին ․ զի կերին զյա
կոբ՝ և սպառեցին զնա ․ և վախճանե_
ցին զնա ․ և զարօտս նորա աւերեցին ։

ԳԼ: ԺԱ.

Բանն՝ որ եղեւ առ Երեմիա 'ի Տէ 1
եւ ասէ ։ * Լուարո՛ւք զբանս ուխ֊ 2
տիս այսորիկ. եւ խօսեցարո՛ւք ընդ արս
յուդայ՝ եւ ընդ բնակիչս Եհմի ։ * Եւ 3
ասասցես ցնոսա. այսպէս ասէ Տր Ած
Իղի՝ անիծեալ լիցի մարդն՝ որ ոչ լուի֊
ցէ բանից ուխտիս այսորիկ ։ * Զոր 4
պատուիրեցի հարցն ձերոց. յաւուրն
յորում հանի զնս յերկրէն Եգիպտաց
ւոց 'ի հնոցէ երկաթոյն՝ եւ ասեմ, լուա֊
րո՛ւք ձայնի իմում. եւ արարէք զայդ
ըստ ամի՝ զոր ինչ պատուիրեմ ձեզ. եւ
եղիջիք ինձ 'ի ժողովուրդ. եւ ես եղէց
ձեզ յԱծ ։ * Եւ հաստատեցից զեր֊ 5
դումն իմ՝ զոր երդուեայ հարցն ձերոց.
տալ նց զերկիրն՝ որ բղխէ զմեղր եւ
զկաթն. որպ եւ այսօր ։ պատասխանի
ետու՝ եւ ասեմ, այո՛ Տր եղիցի ։ * Ասէ 6
ցիս Տր՝ ընթերց զամ զբանդ զայդո֊
սիկ 'ի քաղաքսդ յուդայ՝ եւ արտաքոյ
Եհմի. եւ ասասցես, լուարո՛ւք զպատ֊
գամս ուխտիդ այդորիկ. եւ արարէ՛ք
զդոսա ։ * Զի վկայութե եդի զվկայ 7
ութի հարցն ձերոց՝ յաւուրն հանելոյ
իմ զնս յերկրէն Եգիպտացւոց՝ եւ մին֊
չեւ ցայսօր՝ կանխել ընդ առաւօտս՝ եւ
դնել զվկայութի՝ եւ ասել. լուարո՛ւք
ձայնի իմում. եւ ո՛չ լուան ։ * Եւ խո֊ 8
տորեցուցին զլսելիս իւրեանց. եւ գնա
ցին այր ըստ յօժարութե սրտից իւրեց
'ի չարիս ։ եւ ածի 'ի վերայ նոցա զամ
բանս ուխտիս այսորիկ՝ զոր պատուի֊
րեցի առնել նոցա՝ եւ ո՛չ արարին ։
* Եւ ասէ ցիս Տէր. գտաւ կնճիռն 9
յարսդ յուդայ՝ եւ 'ի բնակիչսդ Եհմի ։
* Դարձան յանիրաւութիւս հարցն իւր 10
եանց առաջնոց. որք ո՛չ կամեցան լսել
բանից իմոց. եւ ահաւասիկ երթան
զհետ աստուծոց օտարաց ծառայել
նց. եւ ցրեցին տունն Իղի եւ տունն յու֊
դայ զուխտ իմ. զոր ուխտեցի ը հարս
նոցա ։ * Վասն այնորիկ այսպէս ասէ 11
Տր. ահաւասիկ ես ածից 'ի վր դոցա
չարիս. յորոց ո՛չ կարասցեն ելանել. եւ
աղաղակեսցեն առ իս՝ եւ ո՛չ լուայց նց ։
* Եւ գնասցեն քաղաքք յուդայ՝ եւ բնա 12
կիչք Եհմի՝ եւ աղաղակեսցեն առ դիսն
իւրեանց՝ որոց արկանէին խունկս. եւ
փրկելով ո՛չ փրկեսցեն զնոսա 'ի ժա֊
‖ Վեր. մանակի չարեաց իւրեանց ։ * ‖ Զի ը 13
2. 28. թուոյ քաղաքացն քոց էին դիքն քո
յուդա. եւ ըստ թուոյ անցիցն Եհմի
կարգեցիք բագինս՝ եւ սեղանս ամօ֊
թոյ, արկանել խունկս բահաղու ։
‖ Վեր. * ‖ Եւ դու մի՛ կար յաղօթս վասն ժո֊ 14
7. 16. ղովրդեանդ այդորիկ՝ եւ մի՛ աղաչեր
վասն դոցա խնդրուածովք, եւ պաղա֊ Վեր.
տիր. զի ո՛չ լսեմ 'ի ժամանակի՝ յորում 14. 11.
կարդասցեն առ իս՝ 'ի ժամանակի չա֊
15 րեաց իւրեանց ։ * Զի ընդ սիրելին 'ի
ներքս 'ի տաճարին իմում՝ արար գար֊
շելիս. մի՞ թէ աղօթք եւ միս նուիրեալ
անցուցանիցե՞ն 'ի քէն զչարիս քո. կամ 'ի
16 թէ այնպիսեօք ապրեսցե՞ս ։ * Ձիթե֊
նի գեղեցիկ վարսաւոր տեսլեամբ կո֊
չեաց Տր զանուն քո. 'ի ձայնէ թլփա֊
տութե նց մեծ են նեղութիք 'ի վր
17 քոյ. անպիտանացան ոստք քո ։ * Եւ
Տր Ած զօրութեց՝ որ տնկեաց զքեզ՝
խօսեցաւ 'ի վերայ քոյ չարիս՝ փոխա֊
նակ չարեաց տանն Իղի, եւ տանն յու֊
դայ. զի արարին անձամբ անձանց 'ի
բարկացուցանել զիս յարկանել նոցա
18 զխունկս բահաղու ։ * Տր ծանո՛ ինձ,
եւ ծանեայց. յայնժամ տեսի զգործս
19 նոցա ։ * Ես իբրեւ զգառն անմեղ վա֊
րեալ 'ի սպանդ. ո՛չ գիտացի՝ թէ զի֊
նէն խորհեցան խորհուրդս, եւ ասեն.
եկա՛յք, արկցուք փայտ 'ի հաց նորա՝ եւ
ջնջեսցուք զնա յերկրէն կենդանեաց.
20 եւ անուն նր մի՛ եւս յիշեսցի ։ * ‖ Տր զօ֊ ‖ Վեր.
րութեանց՝ որ ընտրես զիրաւունս՝ եւ 17. 10.
քննես զերիկամունս եւ զսիրտ, տեսից եւ 20. 12.
առ 'ի քէն զվրէժխնդրութի առ 'ի նս.
զի քեզ յայտնեցի զերիկամունս իմ ։
21 * Վասն այնորիկ այսպէս ասէ Տր՝ 'ի
վր արանցն անաթովթայ՝ որք խնդ֊
րեն զանձն քո. եւ ասեն մի՛ մարգարէա֊
նար վասն մեր. ապա թէ ոչ՝ մեռա֊
22 նիս 'ի ձեռաց մերոց ։ * Վասն այդորիկ
այսպէս ասէ Տր զօրութեց. ահաւա֊
դիկ ես այց արարից 'ի վր նոցա. երի֊
տասարդք նոցա սրով մեռցին. եւ ուս֊
տերք՝ եւ դստերք նց սովու վախճանես֊
23 ցին ։ * Եւ մնացորդք ո՛չ եղիցին նց՝
զի ածից չարիս 'ի վերայ բնակչացն
անաթովթայ՝ յամի այցելութե նոցա ։

ԳԼ: ԺԲ.

1 Արդար ես Տր՝ եւ մատուցից առա֊
ջի քո զպաղերս. բայց խօսեցայց
զիրաւունս ։ ‖ զի՞ է, զի ճանապարհք ‖ Յոբ
ամբարշտաց յաջողեալք են. եւ երջան 21. 7.
կացան ամենեքեան՝ որք արհամարհեն Ամբ
2 զարհամարհանս ։ * Տնկեցեր զնոսա՝ 1. 13.
եւ արմատացան ։ ծնան որդիս՝ եւ արա
րին զպտուղ ։ մերձ ես դու Տր 'ի բե֊
րանս նց. եւ հեռի յերիկամանց նոցա ։
3 * Եւ դու Տր գիտես զիս. տեսեր զիս՝
եւ փորձեցեր զսիրտ իմ առաջի քո. ժո
ղովեա՛ զնոսա իբրեւ զոչխարս 'ի սպա֊
նումն. եւ նուիրեա՛ զնս յօր սպանման
4 նց ։ * Մինչեւ յե՞րբ սուգ ունիցի եր֊
կիր. եւ խոտ ամ վայրի ցամաքեսցի ։ 'ի
չա֊

չարեաց բնակչաց երկրին ապականե_
ցան անասունն՝ և թռչունն. զի ասացին
թէ ոչ տեսցէ Ա՟ծ զճանապարհս մեր ։
*Ոտք քո ընթանան՝ և լքուցեն զքեզ. 5
զիա՞րդ կազմիցիս երիվարօք. իսկ արդ
յերկիրդ խաղաղութե յուսացեալ իցես.
զի՞ գործեսցես 'ի վերանալ յորդանան
գետոյ ։ *Քանզի և եղբարքն քո՝ և 6
տուն հօր քոյ. և նոքա դաւեցին քեզ.
և նոքին աղաղակեցին զկնի քո. կու_
տեցան 'ի վ̄ր քո. մի՛ հաւատար նոցա.
զի խօսեսցին զքէն չարութի ։ *Լքի 7
զտուն իմ. թողի զժառանգութի իմ.
ետու զսիրելին անձին իմոյ 'ի ձեռս
թշնամեաց իւրոց ։ *Եղև ժառանգու 8
թի իմ ինձ իբրև առիւծ յանապա_
տի. ետ 'ի վ̄ր իմ զբարբառ իւր. վ̄ն
այնորիկ ատեցի զնա ։ *Մի թէ որջ 9
բորենւո՞յ իցէ ժառանգութի իմ ինձ,
կամ այրք շուրջ զնովաւ. շրջեցայք ,
ժողովեցէք զա̄մ գազանս անապատի
և եկեսցեն ուտել զնա ։ *Հովիւք բա 10
զումք ապականեցին զայգի իմ. եղծին
զբաժ իմ. արարին զվիճակն իմ ցան_
կալի յանապատ անկոխ ։ *Եդաւ յա 11
պականութի կորստեան. վ̄ն իմ ապա
կանեցաւ ապականութբ ա̄մ երկիր.
զի ո՛չ գոյ մարդ՝ որ դնէ 'ի սրտի ։
*Ընդ ա̄մ ելս անապատի անցին թշ_ 12
ուառացեալք. զի սուր Տն կերիցէ 'ի
ծագաց մինչև 'ի ծագս երկրի. և ո՛չ
գոյր խաղաղութի ամենայն մարմնոյ ։
*Ցորեան սերմանեցիք. և մի փուշ 13
հնձեսջիք. և վիճակք ձեր ո՛չ եղիցին
ձեզ յօգուտ. յամօթ լերուք 'ի պար_
ծանաց ձերոց 'ի նախատանաց առաջի
Տն ։ *Զի այսպէս ասէ Տր. վ̄ն ա̄մ 14
դրացեաց չարաց. որք մերձենան 'ի
ժառանգութի իմ. զոր բաշխեցի ժո_
ղովրդեան իմոյ Իէլի. ահաւասիկ ես
կորզեցից զնոսա յերկրէն իւրեանց. և
զտունն յուդայ հանից 'ի միջոյ նոցա ։
*Եւ եղիցի յետ հանելոյն զնոսա՝ դար 15
ձայց՝ և ողորմեցայց նց. և բնակեցու_
ցից զնն իւրաքանչիւր 'ի ժառանգութե
իւրում. և իւրաքանչիւր յերկրի իւր
ում ։ *Եւ եղիցի , եթէ ուսանելով 16
ուսանիցին զճանապարհս ժողովրդեան
իմոյ երդնուլ յանուն իմ. թէ կենդա
նի է Տր. ո̄ր ուսուցին զժողովուրդ
իմ երդնուլ 'ի բահաղ. և շինեսցին 'ի
մէջ ժողովրդեան իմոյ ։ *Եւ եթէ ո՛չ 17
դառնայցեն՝ ջնջեցից զազգն զայն՝ և
բարձից կորստեամբ ասէ Տր ։

Հրձիցա_ րուք, և ժողովէ_ ցէք

և փուշ հնձեսջիք

Գլ: ԺԳ.

Այսպէս ասէ ցիս. գնա՛, և ստացիր 1
քեզ զսփածանելի կտաւի. և ած
զմիջով քով. և 'ի ջուր մի՛ անցանիցես ։
2 *Եւ ստացայ զսփածանելին ըստ բանի
3 Տն. և ածի զմիջով իմով ։ *Եւ եղև
բան Տն առ իս կրկին անգամ՝ և ասէ ։
4 *Առ զսփածանելին՝ զոր ստացար 'ի
միջոյ քում. և արի , գնա՛ յափն եւ_
փրատայ. և թաքուսցես զդա անդ 'ի
5 ծակ վիմի ։ *Եւ չոգայ՝ և թաքուցի
զնա յեփրատ՝ որպէս և պատուիրեաց
6 ինձ Տր ։ *Եւ եղև յետ բազում աւ_
ուրց՝ ասէ ցիս Տր. արի գնա՛ յափն եւ_
փրատայ՝ և առցես անտի զսփածանե_
լին՝ զոր հրամայեցի քեզ անդ թաքու
7 ցանել ։ *Եւ գնացի յափն եփրատ
գետոյ՝ փորեցի՝ և առի զսփածանելին
'ի տեղւոջէն՝ ուր թաղեցի զնա անդ.
և ահա ապականեալ էր սփածանե_
լին. և չէր ինչ իմիք պիտանացու ։
8 *Եւ եղև բան Տն առ իս ։
9 *Եւ ասէ. այսպէս ասէ Տր. այդպէս
ապականեցից զհպարտութին յուդայ՝
10 և զհպարտութին եէմի ։ *Զքաղաքն՝
և զժողովուրդն իմ չար. որք ո՛չ կամին
լսել բանից իմոց. որք գնան ըստ յօ_
ժարութե սրտից իւրեանց չարաց. և
երթան զհետ աստուծոց օտարաց՝ ծա
ռայել նոցա՝ և երկիր պագանել. և
եղիցին իբրև զսփածանելիդ զայդ՝ որ
11 ո՛չինչ իմիք է պիտանացու ։ *Զի զոր
օրինակ մածանի սփածանելի զմիջով՝
նոյնպէս մածուցի զինև զա̄մ տունդ
Իէլի. և զա̄մ տունդ յուդայ՝ ասէ Տր.
լինել ինձ 'ի ժողովուրդ անուանի. և
'ի պարծանս և 'ի փառս. և ո՛չ անսա_
12 ցին ինձ ։ *Եւ ասասցես ժողովր_
դեանդ զպատգամդ զայդ. այսպ̄էս ասէ
Տր Ա՟ծ Իէլի. ա̄մ տիկ գինեաւ լցցի.
և եղիցի եթէ ասիցեն ցքեզ. մի թէ
չգիտիցե՞մք. եթէ տիկ գինեաւ լցցի ։
13 *Եւ ասասցես ցնն. այսպէս ասէ Տր.
ահա ես լնում զա̄մ բնակիչս երկրիդ
այդորիկ. և զթագաւորս որդիս դաւ_
թի՝ որք նստին յաթոռ նր. և զքահա
նայս՝ և զմարգարէս՝ և զյուդա՝ և
զա̄մ բնակիչս եէմի արբեցութբ ։
14 *Եւ ցրուեցից զդոսա՝ և զեղբայր իւր.
և զհայր և զորդիս իւրեանց 'ի միասին՝
ասէ Տր. ո՛չ գթացայց , ո՛չ խնայեցից,
և ո՛չ ողորմեցայց ապականել զդոսա ։
15 *Լուարուք՝ և ունկնդիր լերուք՝ և
մի՛ հպարտանայք՝ զի Տր խօսեցաւ ։
16 *Տուք Տն Ա՟յ ձերում փառս. մինչև
խաւարեալ և գայթագղեալ ոտից ձե
րոց 'ի վերայ խաւարին լերանց. ակն ու
նեիք լուսոյ. և անդ ստուերք մահու.
17 և դնիցեն 'ի խաւարի ։ *Եւ եթէ ո՛չ
լսիցէք նմա. գաղտագողի լացցեն ան
ձինք ձեր յերեսաց թշնամեաց. ‖ և որ ‖ Ողբե_

Հայր և Եղբայր, Եր

տասուիցէք արտասուօք. և իջուսցեն
աչք ձեր արտասուս. զի խորտակեցաւ
հօտն Տեառն։ *Լսացէք զԹագաւորն. և 18
ցբռնաւորն. Թէկ կորացարուք՝ և նս-
տարուք. զի անկաւ ի գլխոց ձերոց
պսակ փառաց ձերոյց։ *Փակեցան քա- 19
ղաքք՝ որք ընդ հարաւակողմն. և ոչք
եր՝ որ բանայր. գերեցաւ Յուդա ըզ-
ամենայն գերութիւն. զիատարեալն
հատուցմամբ։ *Լմբարձ զաչս քո եւմ, 20
և տես զյարձակեալսդ ի հիւսիսոյ.
ուր է հօտն՝ որ տուաւ քեզ՝ խաշինք
փառաց քոց։ *Օ՞ի՞նչ տացես պա- 21
տասխանի ի ժամանակի, յորում պա-
հանջիցին ի քէն. դու իսկ ուսուցեր
զնոսա ուսումն՝ տիրել՝ ի վերայ քո. ո՞չ
ահա երկունք ունիցին զքեզ իբրև
կնոջ ծննդականի։ *Եւ եթէ ասէր 22
ցես ի սրտի քումմ. ընդէր պատահե-
ցաւ ինձ այս. վասն բազմութեան անօրէ-
նութեան քոյ յերեսաց քո խայտառակել
զկրկունս քո։ *Լթէ փոխեսցէ հնդիկ 23
զմորթ իւր. և ինձ զխայտուց իւր. և
դուք լինիցիք կարօղք գործել զբարիս,
ուսեալքդ զչարիս։ *Լնձ ցրուեսցի զնո- 24
իբրև զեռիւն հողմնակոծեալ յանապա
տի։ *Լայդ է վիճակ քո՝ և մասն չհա 25
նանիցդ ձեր ինձ. զի մոռացար զիս՝ և
յուսացար ի ստութիւն։ *Լնձ ես մեր- 26
կացից զերեսաց քո. և արկից զերե-
սօքդ՝ և երևեսցին անարգանք քո
*Ընութիւն և վրնջիւն քո՝ և օտարա- 27
նալն չինէն պոռնկութիւնք քո. ի բա-
գինս՝ և յադաններս տեսի զգարշելիս քո.
վայ քեզ եռիմ՝ զի ոչ սրբեսցիս զկնի
իմ. մինչև յե՞րբ իցէ քեզ այդ։

ԳԼ։ ԺԴ։

Լնձ եղեւ բան Տեառն առ երեմիայ վե- 1
երաշտութեանն անձրևի։ *Սուգ 2
եաս հրէաստան. և դրունք նորա թա
փուրք եղեն. խաւարեցան ի վե՛ր երկ-
րի. և աղաղակն եռիմ քարձրացաւ։
*Լնձ մեծամեծք նո՛ր առաքեցին զերի 3
2 *Այսպէս ասէ Տր զօրութեց՝ Ած
իհի: դուք ինքնին իսկ գիտէք զամ
չարիս՝ զոր ածի 'ի վր եհմի. եւ 'ի վր
ամ քաղաքաց հրէաստանի. եւ ահա
կան աւերակ այսօր 'ի բնակչաց:
3 *Յերեսաց չարեաց իւրեանց՝ զորս ա_
րարին առ 'ի դառնացուցանել զիս: զի
գնացին խունկս արկանել՝ եւ պաշտել
զաստուածս օտարս. զորս ոչ գիտէիք
4 դուք՝ եւ հարքն ձեր: *Եւ առաքեցի
առ ձեզ զամ ծառայս իմ զմարգա_
րէս ընդ առաւօտս առաւօտս՝ եւ ասէի.
մի գործէք զիրս պղծութեդ այդորիկ՝
5 զորս ատեցի: *Եւ ոչ լուան ինձ. եւ
ոչ խոնարհեցուցին զունկն իւրեանց
դառնալ 'ի չարեաց իւրեանց. չարկա_
նել խունկս աստուծոց օտարաց:
6 *Եւ կաթեցաւ սրտմտութի բարկու
թե իմոյ՝ եւ բորբոքեցաւ 'ի դրունս յու
դայ՝ եւ արտաքոյ եհմի. եւ եղեն յաւեր՝
7 եւ յանապատ որպ եւ այսօր: *Եւ արդ
այսպէս ասէ Տր սաբաւովթ՝ Ած իհի.
ընդէ՞ր առնէք դուք չարիս մեծամեծս
յանձինս ձեր. սատակել զձեր զայր՝
եւ զկին՝ եւ զմանկունս ստնդիայս 'ի մի
ջոյ յուդայ. առ 'ի չմնալոյ ումեք 'ի ձէնջ:
8 *Դառնացուցանել զիս գործօք ձե_
ռաց ձերոց. արկանել խունկս աստու
ծոց օտարաց յերկրիդ եգիպտացւոց.
յոր դուք մտիք բնակել այդր. զի սա_
տակիցիք՝ եւ լինիցիք յանէծս՝ եւ 'ի նա
խատինս ընդ ամենայն ազգս երկրի:
9 *Մ՞ա 'ի չմոռանալոյ ձեզ զչարիս հարցն
ձերոց. եւ զչարիս թագաւորացն յու_
դայ. եւ զչարիս կանանց նց. եւ զչարիս
ձեր՝ եւ զչարիս կանանց ձերոց. զոր արա
րին յերկրին յուդայ. եւ արտաքոյ եհմի:
10 *Եւ ոչ դադարեցին մինչեւ ցայսօր՝ եւ
ոչ երկեան. եւ ոչ կացին յօրէնս իմ. եւ
'ի հրամանս՝ զորս ետու առաջի երեսաց
ձերոց. եւ առաջի երեսաց հարց ձերոց:
11 *Վն այնորիկ այսպէս ասէ Տր զօրու
թեց Ած իհի: ‖ ահաւասիկ ես հաս_
տատեմ զերեսս իմ 'ի վր ձեր 'ի չարիս.
12 սատակել զամ յուդայ: *Եւ առցեն
զմնացորդսն յուդայ՝ որք եղեն 'ի մտա
նել յերկիրս եգիպտացւոց բնակել
աստ. կորուսանել զամ մնացորդսն՝ որք
են յեգիպտոս. եւ անկցին 'ի սուր. եւ
սատակեսցին սովով. 'ի փոքուէ մինչեւ
ցմեծամեծս. սրով եւ սովով մեռանի
ցին. եւ եղիցին 'ի նզովս՝ եւ 'ի կորուստ՝
13 եւ յանէծս՝ եւ 'ի նախատինս: *Եւ այց
արարից 'ի վր նց. որք նստին յերկրին
եգիպտացւոց. որպէս արարի այց եհմի
սրով՝

սրով՝ և սովու՝ և մահուամբ ։ * Եւ 14
ոչնչք ապրեսցի ի մնացորդացն յուդայ.
որք գնացեալ են յերկիրն եգիպտացւոց ։ դառնալ յերկիրն յուդայ. որում
ակնուսնելին յանձինս իւրեանց դառնալ բնակիլ անդ. և մի դարձցին, բայց
միայն ապրեալքն ։ * Եւ պատասխա- 15
նի եառն երեմիայի ցամ արք. որք գի
տէին՝ թէ արկանեն խունկս կանայք
իւրեանց աստուածոց օտարաց. և ամ
կանայք՝ որք կային անդ ժողովք մե-
ծամեծք. և ամ ժողովուրդն. որք բնա
կեալ էին յերկրին եգիպտացւոց ի պա
թրոս՝ և ասեն ։ * Պատիժ՝ զոր խօ- 16
սեցար առ մեզ յանուն Տեառն՝ ոչ լսե-
ցուք ։ * Այլ առնելով արասցուք զամ 17
բան՝ որ ելանէ ի բերանոյ մերմէ. ար
կանել խունկս տիկնոջն երկնից. և
նուիրել նուիրս. ոգի արարաք մեք՝ և
հարքն մեր. և թագաւորքն մեր՝ և իշ
խանք մեր. և ի քաղաքս յուդայ՝ և
արտաքոյ եչմի. և էաք հացալից՝ և
փափկացեալք. և չար ինչ ոչ տեսա-
նեմք ։ * Եւ իբրև դադարեցաք չար 18
կանելոյ խունկս տիկնոջն երկնից. և
նուիրելոյ նմա նուիրս՝ նուիազեցաք
ցամէ. և սրով և սովու սատակեցաք։
ի Ալ էր. 7.18. * Եւ զի մեք արկաք խունկս տիկնոջն 19
երկնից. և նուիրեցաք նմա նուիրս.
մի թէ առանց արանց մերոց արարաք
նմա հաստեայս և կարկանդակս. և
նուիրեցաք նմա նուիրս ։ * Եւ պա- 20
տասխանի երեմիա ցամ՝ ժողովրդեանն
հանդերձ կանամբքն. և ամ ժողովր-
դեան՝ որք եառն նմա զայն բանս պա
տասխանի՝ և ասէ ։ * Ոչ ապաքէն զգ 21
խունկսն զոր արկանէք ի քաղաքսն յու
դայ՝ և արտաքոյ եչմի. դուք՝ և հարքն
ձեր՝ և թագաւորքն ձեր. և իշխանքն
ձեր. և ժողովուրդ երկրին. յիշեաց
Տէր՝ և անկաւ ի սիրտ նմին ։ * Եւ ոչ կա 22
րաց Տէր համբերել յերեսաց չարաց ի-
րաց ձերոց. և գարշելեացն զոր առ-
նէիք. և եղև երկիրն ձեր յաւերակ.
և յանապատ՝ և ի նզովս առ ի չգոյէ
բնակչաց. ոգի այսօր յերեսաց դոցա ։
* Որոց խունկսդ արկանէիք. և որովք 23
մեղանչէիք Տեառն՝ և ոչ լսէիք ձայնի Տեառն.
և ըստ օրինաց նմին՝ և ըստ վկայութեանց՝
և ըստ հրամանաց նմին ոչ գնայիք. վասն
այնորիկ գտին զձեզ չարիքդ այդոքիկ
ոգի և այսօր ։ * Եւ ասէ երեմիա ցամ 24
ժողովուրդն. և ցամ կանայսն ։ լուարուք զպատգամ Տեառն ամ յուդայ. որք
էք յերկրին եգիպտացւոց ։ * Այսպէս 25
ասէ Տէր զօրութեանց Աստուած Իսրայէլ ։ դուք՝ և
կանայք ձեր խօսեցայք բերանօք ձե-
րովք. և ձեռօք ձերովք վճարեցիք ։
ասէք, առնելով արասցուք զդաւանու-
թիւն մեր՝ զոր դաւանեցաք. արկանել
խունկս տիկնոջն երկնից. և նուիրել
նուիրս. և կալով կացիք ի դաւանու-
թեանն ձերում. և առնելով արարիք
զուխտն ձեր ։ * Վասն այդորիկ լուարուք 26
զպատգամ Տեառն ամ յուդայ՝ որք բնա-
կեալդ էք յերկրին եգիպտացւոց ։ ա-
հաւասիկ երդուայ յանձն իմ մեծ՝ ասէ
Տէր Աստուած. եթէ կոչեսցի ևս անուն իմ
ի բերանոյ ամ առն յուդայ. ասել
եթէ կենդանի է Տէր՝ յամ երկրիս է-
գիպտացւոց ։ * Օի ահաւասիկ ես 27
զարթուցեալ եմ ի վնաս դոցա և չարե-
րել զդոսա. և ոչ առնել բարի ։ և սա
տակեսցին ամ արք յուդայ. որք բնա-
կեալք են յերկրին եգիպտացւոց
սրով՝ և սովու. մինչև նուազեսցին ։
* Եւ ապրեալքն ի սրոյ՝ դարձցին յերկ 28
րէս եգիպտացւոց յերկիրն յուդայ՝
արք սակաւք թուով. և ծանիցեն ամ
մնացորդքն յուդայ՝ որք բնակեալք են
յերկրին եգիպտացւոց. թէ որ բան
կայ, իմ թէ նոցա ։ * Եւ այս ձեզ նշա 29
նակ՝ ասէ Տէր. եթէ արարիցեմ ձեզ այց
ի տեղւոջդ յայդմիկ. զի գիտասջիք
թէ կալով կացցեն բանք իմ ի վնաս ձեր
ի չարիս ։ * Այսպէս ասէ Տէր. ահաւա- 30
սիկ ես տայ զփարաւն զՀափառ արքայ եգիպտացւոց ի ձեռս թշնամւոյ
իւրոյ. և ի ձեռս խնդրողաց անձին
իւրոյ. որպէս ետու զսեդեկիայ արքայ ի
ձեռս նաբուգոդոնոսորայ արքայի բա
բելացւոց թշնամւոյ իւրոյ. և խնդրո-
ղի անձին նորա։ ղեբրէէ

Գլ։ խե։

Բանն՝ զոր խօսեցաւ երեմիա մար- 1
գարէ առ բարուք որդի ներեայ՝
յորժամ գրեաց զբանս զայսոսիկ ի
մատենի, ի բերանոյ երեմիայի. յամին
չորրորդի յովակիմայ որդւոյ յօսեայ
արքայի յուդայ ։ * Այսպէս ասէ Տէր 2
Աստուած Իսրայէլ ի քէ ի վնաս քո բարուք ։ * Որ ասա 3
ցեր թէ վայ ինձ՝ վայ ինձ. զի յաւել
Տէր աշխատութիւն ի վնաս ցաւոց իմոց.
ննջեցի հեծութեամբ՝ և զհանգիստ ոչ
գտի ։ * Այսպէս ասասցես ցնա ։ այսպէս 4
ասէ Տէր. ահա զորս ես շինեցի, ես ինձ-
էն քակեցիմ. և զորս ես տնկեցիմ՝ ես
ինձէն խլեցիմ՝ զամ զերկիրն զայն ։
* Եւ դու խնդրես քեզ մեծամեծս, 5
մի խնդրեր ։ զի ահա ես ածից չարիս
ի վնաս ամ մարմնոյ՝ ասէ Տէր. և տայ քեզ
զանձն քո ի գիւտս յամ տեղւոջ՝ ուր
երթիցես անդր ։

Ի վերայ Աբեդնագովայ ։

Գլ։

Գլ. ԽԶ.

Բանն Տն որ եղև առ Երեմիայ մար 1
գարէ 'ի վր ամ ազգացն Եգիպ_
տացւոց: * 'Ի վերայ զօրացն փարաւօ 2
նի. Նեքաւով արքայի Եգիպտացւոց.
որ էր առ Եփրատ գետով 'ի Քարքամիս.
զոր եհար Նաբուգոդոնոսոր արքայ բա
բելացւոց. յամին չորրորդի Յովակի_
մայ որդւոյ Յովսիայ արքային Հրէաստա
նի: * Առէք զզէն՝ և վահանս 'ի պա_ 3
տերազմ: * Կազմեցէք զերիվարս. հե 4
ծարուք սպառազէնք. դիք զսաղա_
արտս՝ առէք յառաջ զգեղարդունս.
զգեցարուք զզրահս ձեր: * Իսկ այդ 5
զինչ է: դոքա աւադիկ զարհուրեալ
խիթ են. և յետս ընդդէմ շարժին. զի
զօրաւորք նոցա հարան, 'ի փախուստ
կային. և ոչ դարձցին 'ի դոցանէ պա
տեալքն շուրջանակի՝ ասէ Տր: * Մի 6
փախիցէ թեթևն. և մի ապրեսցի
հզօրն. 'ի կողմանս հիւսիսոյ առ Եփ_
րատ գետով. տկարացան, կործանե_
ցան: * Ո՞վ է սա. որ իբրև զգետ յա_ 7
րուցեալ է. և իբրև զգետս կուտա_
կեալ զջուրս ջուրքն: * Ջուրն Եգիպ 8
տացւոց իբրև զգետ ելանէ. և իբրև
գետ խռովին ջուրք նր. և ասէ՝ ելից,
և ծածկեցից զերկիր. կորուսից զքա
ղաք. և զբնակիչս նորա: * Հեծեալք 9
յերիվարս. կազմեցէք կառս. և ելէք
պատերազմողք եթեօպացւոց. և ղի_
բեացիք վառեալք զինու. և լիդացիք՝
ելէք՝ լարեցէք զաղեղունս: * Օր օրն 10
այն Տն Այ մերոյ. օր վրէժխնդրու_
թե է. առնուլ զվրէժ 'ի թշնամեաց
իւրոց. և կերիցէ սուր՝ և յագեսցի և
արբեսցի յարենէ նց: զի զոհ Տն զօ_
րութեց է յերկրէն հիւսիսոյ. և 'ի վր
գետոյն Եփրատայ: * Ել Գաղաադ. 11
և էառ զեղ ռետին կուսի դստերն Ե_
գիպտացւոց: 'ի զուր յաճախեցեր զբժշ
կութիւնս քո. օգուտ չիք ուստեք քեզ:
* Լուան զգոյժ քո ազգք. և աղաղա_ 12
կով քով լի եղև երկիր. զի պատերազ
մող առ պատերազմողի տկարացաւ.
անկան երկոքեան 'ի միասին: * Բանն՝ 13
զոր խօսեցաւ Տէր 'ի ձեռն Երեմիայի
մարգարէի՝ 'ի գալ Նաբուգոդոնոսո_
րայ արքայի բաբելացւոց և հարկանել
զերկիրն Եգիպտացւոց: * Գոյժ արա 14
րէք յԵգիպտոս. և հնչեցէք 'ի Մագդոլ.
և պատմեցէք տուք 'ի Մեմփիս. ազդ ա_
րարէք 'ի Տափնաս. Թէ արի և պատ_
րաստեաց. զի եկեր սուր զկուռս քո:
* 'Ի փախուստ դարձաւ ցուլն քո ըն_ 15
տիր, ոչ մնաց՝ զի Տր լքոյց զնա: * Եւ 16
բազմութիւն տկարացաւ. և անկան
իւրաքանչիւր առ ընկերի իւրում, և
ասէին. արիք՝ և դարձցուք առ իւրա_
քանչիւր ժողովուրդ մեր. և յիւրա_
քանչիւր յաշխարհ իւր՝ յերեսաց յու_
17 նական սրոյն: * Կոչեցէք զանուն փա
րաւօնի արքային Եգիպտացւոց. սա
18 ոսն. և եբեր. եմովեդ: * Կենդանի եմ
ես՝ ասէ Տր. որոյ թագաւոր զօրութեց
անուն է նորա. զի զգահաւանդ 'ի լե_
րինս. և իբրև զկարմեղոս 'ի ծովու,
19 եկեսցէ: * Հանդերձ գերութե արա
րեք դուստր Եգիպտացւոց. զի մեմ_
փիս յապականութի եղիցի. և կոչես_
ցի նմա վայ առ 'ի չգոյէ բնակչացն նր.
20 * Երինջ զարդարեալ՝ և գեղեցիկ Ե_
գիպտոս հատ հատաւ 'ի հիւսիսոյ եկն
21 'ի վր նր: * Եւ վարձանք նր 'ի նմա.
իբրև եզինք պարարակք. զի և նոքա
'ի փախուստ դարձան առ հասարակ. և
ոչ հանդարտեցին. զի օր կորստեան
եկն 'ի վր նոցա. և ժամանակ վրէժ_
22 խնդրութե: * Ձայն նորա իբրև զօձի
որ շչիցէ. զի ընդ աւազ գնասցեն.
տապարաւորք եկեսցեն 'ի վր նց իբրև
23 զփայտահարս: * Հարէք զանտառս
նր՝ ասէ Տր Այ, զորոյ ոչոք առնուցու
զչափ. զի բազմասցի առաւել քան զմ
24 մարախ. և թիւ ոչ իցէ նց: * Յամօթ
եղև դուստր Եգիպտացւոց. մատնե_
ցաւ 'ի ձեռս հիւսիսային զօրացն:
25 * Ասէ Տր զօրութեց Այ իղի: ահա
ւասիկ ես խնդրեցից զվրէժ յամոնայ
որդւոյ նր. 'ի փարաւոնէ՝ և յԵգիպտաց
ւոց՝ և 'ի դից նց. 'ի թագաւորաց նր.
և 'ի փարաւոնէ և 'ի յուսացելոց 'ի նա:
26 * Եւ մատնեցից զնոսա 'ի ձեռս խնդ_
րողաց անձանց նոցա. և 'ի ձեռս Նա_
բուգոդոնոսորայ արքային բաբելաց_
ւոց. և 'ի ձեռս ծառայից նորա. և յետ
այնորիկ բնակեսցուցից իբրև զառա_
27 ջինն՝ ասէ Տր: * Բայց դու մի երկն Եսայ
չիցես ծառայ իմ Յակոբ. և մի զարհու 43.1. և
րիցիս Իէլ: զի ահաւասիկ ես զերծու 44.2.
ցանեմ՝ զքեզ 'ի հեռաստանէ. և զզաւ
ակ քո 'ի գերութե նոցա: և դարձցի
Յակոբ՝ և դադարեսցէ. և ննջեսցէ՝ և
28 ոչոք իցէ որ լլկեսցէ զնա: * Եւ դու
մի երկնչիր ծառայ իմ Յակոբ՝ ասէ Տր
զի ես ընդ քեզ եմ. թէ արարից վախ
ճան ամ ազգաց՝ ուր մերժեցի զքեզ
անդր. այլ քեզ ոչ արարից վախճան.
և խրատեցից զքեզ յիրաւունս. և քաւ
ելով ոչ քաւեցից զքեզ.

Գլ. ԽԷ.

1 'Ի վերայ Այլազգեաց: Բանն Տն որ
եղև առ Երեմիայ մարգարէ 'ի վր
այլազգեաց՝ մինչչև հարեալ էր փա_
րաւ_

րաւօնի զգաղայ։ *Այսպէս ասէ Տր. 2
ահաւադիկ ջուրք ելանեն 'ի հիւսիսոյ.
և եղիցին հեղեղատք յողողանել. և
ողողեսցեն զերկիրն լրիւ իւրով. զքա
ղաքն և զբնակիչս նր։ բողոք բարձցեն
մարդիկ. և աղաղակեսցեն ամ բնա_
կիչք երկրին։ *'Ի ձայնէ ասպատակի 3
նր. 'ի զինուց ոտից նորա. և 'ի շաչելոյ
կառաց նորա. և 'ի շառաչելոյ անուոց
նր. և ոչ դարձցին հարքն առ որդիս
իւրեանց։ *Լքան 'ի ձեռաց իւրեանց՝ 4
յաւուր յորում՝ գայցէ կորուսանել
զամ այլազգիս ։ և կորուսից զծուր՝
և զծայդան՝ և զամ մնացորդս օգնա_
կանութե նց։ և սատակեսցէ Տր զայլ_
ազգիս. զմնացորդս կղզեայն՝ և զգամ_
րաց։ *Հասցէ կնտութի 'ի վր գազայ։ 5
կործանեցաւ ասկաղոն. և մնացորդք
ենակիմայ ։ մինչև յե՞րբ կոտորիցես։
*Սուրդ Տն մինչև ցե՞րբ ոչ դադա_ 6
րիցես. դարձի՛ր 'ի պատեանս քո. դա_
դարեա՛ և վերացի՛ր։ *Զիա՞րդ դա_ 7
հրամայ_ էաց նմա դարիցէ. զի Տր հրամայեաց զնա 'ի
վերայ ասկաղոնի. 'ի վերայ ծովեզե_
րեայցն մնացելոց զարթնուլ։

ԳԼ։ ԽԸ։

'Ի վերայ Մովաբու։ Այսպէս ասէ Տր 1
զօրութեց Ած Իէլի. վայ 'ի վր
նաբաւայ Նաբաւայ, զի կորեաւ՝ յամօթ եղև.
առաւ կարիաթեմ. յամօթ եղև մա_
սոգամբ. 'ի պարտութի մատնեցաւ։
*Ոչ ևս իցեն պարծանք մովաբու 2
խորհեցին յեսեբօն. խորհեցաւ 'ի վերայ նորա
չարիս. եկա՛յք հարցուք զնա յազգէ՝ և
լռելով լռեսցէ. զկնի քո շրջեսցի հուր
*Զի գոյժ գուժոյց յորոնայիմայ. 3
սատակումն՝ և բեկումն մեծ։ *Բեկաւ 4
մովաբ։ գոյժ տուք 'ի սեգոր ։ *Զի 5
լցաւ աղօթ լալոք։ ելցէ լալով ընդ ճա
նապարհն որոնայիմայ։ տագնապ՝ և
գոյժ բեկման լուայ։ *Փախերո՛ւք՝ և 6
ապրեցուցէ՛ք զանձինս. և եղիջի՛ք իբ_
‖Սէր. 17.6. րև զցիռ յանապատի։ *‖Քանզի յու 7
սացեալ էիր յամուրս քո. եկեսցեն նե
ղութիւք. և դու ըմբռնեսցիս. և ելցէ
քամոս 'ի գերութի. քուրմք նր՝ և իշ
խանք նր միանգամայն։ *Հասցէ սա_ 8
տակումն 'ի վր ամ քաղաքաց. և մի քա
ղաք մի ապրեսցի. և կորիցէ բնակիչ՝
և սատակեսցի դաշտական. այսպէս
ասէ Տր։ *Տո՛ւք նշանակ մովաբայ. զի 9
տոչորելով տոչորեսցի. և ամ քաղաքք
նորա յանապատ եղիցին առ 'ի չգոյէ
բնակչաց ։ *Անիծեա՛լ լիցի՝ որ գոր_ 10
ծիցէ զգործ Տն հեղգութբ. և անի_
ծեա՛լ լիցի՝ որ վերացուսցէ զսուր իմ
յարենէ նորա։ *Հանգուցեալ էր 'ի 11

Տր

մանկութէ իւրմէ մովաբ. և յուսա_
ցեալ էր 'ի փառս իւր. և չէր թափեալ
յամանէ յամանոյ. և ո՛չ երթեալ 'ի գե
րութի. վն այնորիկ կայր համ նորա
'ի նմին. և հոտ նր ո՛չ պակասեցաւ։
12 *Վասն այնորիկ ահա աւուրք գան՝
ասէ Տր. և առաքեցից 'ի նմա կորացու
ցիչս. և կորայուսցեն զնա. և զանօթս
նր մանրեսցեն. և զամանս նորա փշրես
13 ցեն։ *‖Եւ ամաչեսցէ մովաբ 'ի քա_ ‖3 Թագ.
մոսայ. որպ ամաչեաց տունն իէլի 'ի բե 12.29.
14 թելայ յուսոյ իւրոյ։ *Զիա՞րդ ասի_
ցէք, թէ ‖հզօրք եմք՝ և արք զօրաւ_ ‖Եսայ.
15 որք պատերազմի ։ *Կորեաւ մովաբ՝ 16. 6.
և քաղաքք նորա. և ընտիր ընտիր երի
տասարդք նորա անկան 'ի սպանումն.
ասէ արքայ՝ որոյ Տր զօրութեց անուն
16 է նորա։ *Մերձ է 'ի հասանել օր մո_
վաբու. և չարիքն նր արագեն յոյժ։
17 *Խախտեցէ՛ք զնա շուրջանակի։ ամե_ մխիթա_
նեքին որք գիտէք զանուն նր. ասացէ՛ք րեցէք
զիա՞րդ խորտակեցաւ ցուպն գեղեցիկ՝
18 գաւազանն մեծարանաց։ *Էջ 'ի փա
ռաց. և նի՛ստ 'ի գիճի եռեղակալ
դուստր եդեբօնայ ։ զի կորեաւ մո_ դեբօնայ
վաբ. և եհաս ապականիչ ամրոցաց
19 քոց։ *Կա՛ց յանցս ճանապարհաց. և
հայեա՛ց՝ որ նստիդ յարուէր. հա՛րց
զփախստականս՝ և սասաջի՛ր. զի՞նչ
20 գործեցաւ ։ *Յամօթ եղև մովաբ.
զի խորտակեցաւ. ճչեա՛ և աղաղակեա՛.
և գո՛յժ տուր յառնօն՝ (և 'ի քէնս) թէ
21 կորեաւ մովաբ ։ *Եւ դատաստանք
հասեալ գան յերկիրն միսորայ. 'ի քի_
22 լօն. և յասայ. և 'ի մօփաթ ։ *Եւ 'ի
դեբոն. և 'ի նաբաւ. և 'ի տունն դե_
23 ղաթայիմայ։ *Եւ 'ի կարիաթեմ. և 'ի
տունն գամողայ. և 'ի տունն մաւօնայ։
24 *Եւ 'ի կարիօթ. և 'ի բոսոր. և յամ
քաղաքս երկրիդ մովաբայ. 'ի հեռաւ
25 որս և 'ի մերձաւորս ։ *Խորտակեցաւ
եղջիւրն մովաբու. և յանդգնութիւն
26 նր խորտակեցաւ՝ ասէ Տր ։ *Արբե_
ցուցէ՛ք զնա, զի 'ի վր Տն մեծաբա_
նեաց. ծափս զծափի հարցէ մովաբ.
27 և եղիցի 'ի կատականս և ինքն։ *Զի
ո՛չ եթէ 'ի ծաղր ինչ էր քեզ իսրայէլ.
և ո՛չ 'ի գողօնս գտան՝ յորժամ մարտն_
չէիր ընդ նմա ։ նովաւ դերեսցիս։
28 *Թողին զքաղաքս՝ և բնակեցան 'ի
քարածերպս բնակիչք մովաբայ. ե_
ղեն իբրև զաղաւնիս բունեալք 'ի քա
29 րածերպս 'ի բերանս սորոյ ։ *Լուայ
զհպարտութի մովաբայ՝ զի հպարտա
ցաւ յոյժ. բարձրութի նր՝ և հպար_
տութի իւր՝ և ամբարտաւանութի. և
30 բարձրացաւ սիրտ նորա ։ *Եւ ես ծա
նեայ զգործս նորա։ ո՞չ ապաքէն բաւ

կարի նը իցեն բաղուկք նը. այլ նա ոչ
31 այսպէս արար: * Ո՞ասն այսորիկ ձին
բարձեք՝ ի վէր մովաբու. գուժեցէք
յամ կողմանց մովաբու՝ ի վէր արանց
32 խաղելոց՝ փետտելոց՝ մրելոց: * Նո՛ւ մրմն
ջեսցէ ի բերև զլալիւն յազերայ. լաց-
ցուք զքեզ այգիդ սաբեմայ. բարու-
նակք քո ձկտեցան ընդ ծով. քաղաքք
յազերայ հասին. ի վէր մարդաց քոց,
և՝ի վէր կթոց քոց եհաս սատակումն:
Ա՚ասայ. 33 * Ո՞աշեցաւ ուրախութի՝ և ցնծուն
16. 10. ի կարմելայ՝ և յերկրէն մովաբացւոց.
գինի եր՝ ի հնձանս քո. ընդ առաւօտս
ոչ կոխեցին. և ընդ երեկոյս ոչ հանին
34 զձայնն ձայնահարաց: * Յաղաղակէն
յեսեբոնայ մինչև յեղեալեղայ. և մին
չև յասաս. քաղաքք նը՝ ետուն զձայնս
իւրեանց՝ ի սեգորայ մինչև յորոնաիմ
և գոյժ՝ ի սաղիսիայ. զի և ջուրն նե-
մերիմայ՝ ի տապ խորշակի եղիցի:
35 * Նո՛ւ կորուսից զմովաբ՝ ասէ Տ՚ը՝ որ
ելանէր՝ ի բագինս՝ և արկանէր խունկս
36 աստուածոց օտարաց: * Ո՞ան այսորիկ
սիրտ իմ՝ ի վէրայ մովաբու իբրև ըզ
փող գոչեսցէ՝ սիրտ իմ՝ ի վէր արանց
առ որմունք խզելոց իբրև զհնչիւն փո
ղոյ. վը՛ այսորիկ զորինչ ստացան՝ կո
Ա՚ասայ. 37 րեաւ՝ ի մարդկանէ: * Ո՞ւ՛ր գլուխք
15.2. ընդ ամ՛ տեղիս գերծցին. և ամենայն
Երեմ. մորուք խզեսցին. և ամենայն ձեռք
7.18. կործեսցին. և ամ՛ հասակք քրձազ-
դածք եղիցին: * Նո՛ւ յամ՛ տանիս մո-
38 վաբայ և՝ ի հրապարակս նորա ամե-
նեւին կոծ. զի խորտակեցից զմովաբ
իբրև զաման՝ որ ոչ խմիք իցէ պիտա
39 նացու՝ ասէ Տ՚ը: * Օ՚հարդ փոփոխե-
ցաւ. ողբս առէք՝ զնարդ դարձոյց
զթիկունս իւր. ամաչեաց՝ և եղև՝ ի
ծաղր ամենեցուն՝ որք շուրջ զնովաւ:
40 * Օ՚ի այսպէս ասէ Տ՚ը. ահաւադիկ
իբրև զարծուի դիմեսցէ. և տարա-
ծեսցէ զձեռս իւր՝ ի վէրայ մովաբու:
41 * Ո՞ռաւ կարիօթ. և ըմբռնեցան ա-
մուրք նը. և եղիցի սիրտ զօրաւորացն
մովաբայ յաւուր յայնմիկ իբրև զսիրտ
42 կանանց յերկունս: * Նո՛ւ կորեաւ մո
վաբ՝ ի բազմութէ. զի՝ ի վէրայ Տ՚ն
43 մեծաբանեաց: * Ո՞ւխ և ահ՝ և որո-
գայթ՝ ի վերայ քո. որ բնակեալդ ես
Ա՚ասայ. 44 ի մովաբ: * Ո՞ր փախիցէ յերեսաց
24.18. ահին. անկցի՝ ի վիհն. և որ ելանիցէ
՚ի վիհէ անտի՝ ըմբռնեսցի յորոգայթն.
զի ածից՝ ի վէրայ մովաբու յամին յո-
րում՝ հանդէս արարից նմա՝ ասէ Տ՚ը:
45 * Ո՞յարկան եսեբոնայ հասին փախու-
ցեալք յորոգայթէն. զի հուր ել յե-
սեբոնայ՝ և բոց՝ ի քաղաքէն սեհոնայ.
և եկեր զիշխանս մովաբու. և քննեաց
46 զորդիսն սաօնայ: * Ո՞ւյ քեզ մովաբ՝
կորուաեր ժողովուրդն քամոսայ.
զի առան ուստերք նորա՝ և դստերք
47 նորա՝ ի գերութէի: * Նո՛ւ դարձուցից
զգերութիւն յակոբու յաւուրս յետինս՝ ասէ Տ՚ը. մինչև յայս վայր են դատաս տանք մովաբու:

Գ.Լ: Խմ.

1 Ի՚ վերայ որդւոցն ամմնայ. այսպէս ասէ
Տ՚ը՝ մի Թէ որդիք ոչ իցեն ի՚ էլի.
կամ՝ յանձանձիչս ոչ իցէ նորա՝ ընդէր
ամիովփեաց մինղբոմ զգադ. և ժողո
վուրդ նորա՝ ի քաղաքս նորա բնակի:
2 * Ո՞ան այդորիկ ահա աւուրք գան՝
ասէ Տ՚ը. և լուր արարից յառաքելք
որդւոցն ամմնայ զգոյժ քաղաքացն. և
եղիցին յանապատ՝ և բագինք նր հրով
այրեսցին. և առցէ Իսրայէլ զիշխանութէի
3 իւր՝ ասէ Տ՚ը: * Վ՚ուժեայց եսեբոն՝ զի
կորեաւ գԱ՚ղղ. բողբք բարձէք դստերք
հռաբայ. քրձազգածք եղերուք՝ և
մղեցարուք. սուգ առէք՝ և յայսկոյս
յայնկոյս ընթացարուք զցանգովք.
զի մինղբոմ՝ ի գերութիւն երթիցէ.
քուրմք նորա՝ և իշխանք՝ ի միասին:
4 * Օ՚ի ցնծացայց՝ ի խորանս քո զեփ.
և՝ ի դաշտս քո գուստր ժպրհութէ. որ
յուսացեալէիր՝ ի գանձս քո՝ և ասէիր՝
5 ո՞վ գայցէ՝ ի վէրայ իմ: * Ի՚հաւասիկ
ես ածից՝ ի վէրայ քո երկիւղ՝ ասէ Տ՚ը
զօրութեց. յամ կողմանց շուրջ զքե
բնակելոցդ. և ցրուեսջիք յիւրաքանչ
իւր կողմն. և ոչոք իցէ, որ ժողովես
6 ցէ զթափառականն: * Ա՚ետ այնո-
ւիկ դարձուցից զգերութիւն որդւոցն
7 ամմնայ՝ ասէ Տ՚ը: * Ի՚վէրայ Եդոմայ
այսպէս ասէ Տ՚ը զօրութեց. ոչևս գոյ
իմաստութի՝ ի Թեմանն. կորեաւ խոր
հուրդ՝ ի հանճարեղաց. գնաց իմաս-
8 տութի՝ նորա: * Ա՚ստեցաւ տեղի նը՝
ծանրացուցէք՝ ի նստիլ բնակիչք դա
դանայ. զի զժոճարինս արար. ածի
՚ի վէրայ նորա ժամանակ՝ յորում այց
9 արարից նմա: * Օ՚ի կթողք հասին՝ ի
վէրայ քո. և ոչ՝ թողցեն՝ իքեզ մնա-
ցորդս՝ իբրև գողք գիշերոյ գիցեն
զձեռս իւրեանց՝ ի վէրայ նոցա:
10 * Օ՚ի ես կործանեցի զեսաւ. յայտնե
ցի զծածուկս նորա. և թաքչիլ ոչ
կարասցեն. կորեաւ զաւակ նորա՝ ի
ձեռանէ եղբօր և դրացւոյ իւրոյ:
11 * Նո՛ւ զԼ՚ք մնալ որբոյն քում, Թէ կեց-
ցէ. և այրիքն նոցա յիս յուսացան:
12 * Օ՚ի այսպէս ասէ Տ՚ը՝ ահա որոյ ոչ
էր օրէնն ըմպել զբաժակն՝ արբին՝ ըմ
պելս և դու՝ արդարանալով արդարա-
նայցես. ոչ արդարասցիս, այլ ըմպե-
լով

լով արբցես։ *Ոչ յանձն իմ երդու_ 13
այ՝ ասէ Տր. թէ յապականութիւն և
'ի նախատինս՝ և յանէծս եղիցին 'ի
մէջ բաժնի նորա՝ և ամ քաղաքք նր
եղիցին աւերակք յաւիտենից։
Աբդ. 1. 1. *Լուր լուայ 'ի Տէ և հրեշտակս յազգս 14
արձակեաց. ժողովեցարուք՝ և հասէք
'ի վերայ նորա. արիք՝ և ելէք 'ի պատե
րազմ։ *Ոչ ահաւասիկ ես փոքրիկս 15
ես տաց զքեզ 'ի մէջ ազգաց. արհա_
մարհեալ 'ի մէջ մարդկան։ *Խայա 16
նութի քո հասոյց քեզ զայդ. լրբութի
սրտի քո արար զքեզ ծակամուտ վի_
մաց. և էառ զզօրութի բարձրացեալ
Աբդ. 1. 4. բլրոյն քոյ. Զի եթէ բարձրացուս_
ցես ոպ արծուի զբոյն քո. և անտի իջու_
ցից զքեզ՝ ասէ Տր։ *Եւ եղիցի Եդովմ 17
յանապատ. և ամ որ անցանիցէ ընդ
նա՝ զարմասցի. և շչեսցէ 'ի վերայ ամ
Ծննդ. 19.24. հարուածոց նր։ *Որպէս կործանե_ 18
ցաւ սոդոմ և գոմոր և բնակիչք նորա՝
ասէ Տր. և մի նստցի 'ի նմա մարդ. և
մի բնակեսցի 'ի նմա որդի մարդոյ։
*Ահաւադիկ իբրև զառիւծ ելցէ 'ի 19
միջոյ յորդանանու 'ի տեղիս եթովմայ
զի վաղվաղակի հալածականս արարից
զնոսա 'ի նմանէ. և ո՞վ է ընտրեալ 'ի
նմա. և այց արարից նմա՝ կամ ո՞վ
Յոբ. ընդդէմ դառնայցէ ինձ. և կամ ո՞վ
41. 1. իցէ այն հովիւ. որ ընդդէմ կայցէ ե_
րեսաց իմոց։ *Վսն այդորիկ լուարուք 20
զխորհուրդ Տն՝ զոր խորհեցաւ 'ի վր
եդովմայեցւոց. և զխորհուրդն նորա՝ զոր
խորհեցաւ 'ի վերայ բնակչաց թեման_
նայ. և ո՛չ հարցին յետինք ոչխարաց.
բայց եթէ յաւեր կայցեն քանդուածք
նոցա։ *'Ի ձայնէ կործանմանն նց շար 21
ժեցաւ երկիր. գոյժ քո էհաս 'ի ծով
կարմիր. և լսելի եղև աղաղակ քո։
*Ահաւանիկ իբրև զարծուի վերաս_ 22
ցի՝ և սլասցի՝ և տարածեսցէ զթևս
իւր 'ի վերայ բոսրանայ. և եղիցի սիրտ
զօրաւորացն եդովմայ յաւուր յայնմիկ
իբրև զսիրտ կանանց յերկունս։
* 'Ի վերայ Դամասկոսի։ Յամօթ եղև 23
եմաթ՝ և արփաթ. զի լուր չարեաց
լուան. յիմարեցան 'ի ծովուն. զայրա
ցան՝ և հանդչիլ ո՛չ կարասցեն։
*Լքաւ դամասկոս. դարձաւ 'ի փա_ 24
խուստ, և կործանեցաւ. դողումն կա_
լաւ զնա, և երկունք ճեպեցին զնա
իբրև զծննդականի։ *Եւ զիա՞րդ էր. 25
զի ո՛չ թողուր զքաղաքն իմ. զաւանն՝
զոր սիրեցին։ *Վսն այնորիկ անկ_ 26
ցին երիտասարդք 'ի հրապարակս քո.
և ամ արք պատերազմօղք կործանես
ցին յաւուր յայնմիկ՝ ասէ Տր զօրու_
թեց։ *Եւ վառեցից հուր 'ի պարիսպն 27
դամասկոսի. և կերիցէ զհրապարակս
28 որդւոյն ադերայ։ *'Ի վերայ Կեդարու։
'Ի վերայ տիկնոջ հանդրուանին՝ զոր
էհար նաբուգոդոնոսոր արքայ բաբե
լացւոց՝ այսպէս ասէ Տր. արիք, ելէք 'ի
վր կեդարու. և հարէք զորդիսն կե_
29 դամայ։ *Զխորանս նոցա՝ զխաշինս
նոցա. առցեն զհանդերձս նց, և զամ
զկահ և զկարասի նց. և զուղտերա_
մակս նց առցեն իւրեանց. և կոչեցէք
'ի վերայ նոցա կորուստ շուրջանակի։
30 *Փախերուք սաստիկ. խորեցէք 'ի նս
տիլ բնակիչք հանգրուանին՝ ասէ Տր.
զի խորհուրդ խորհեցաւ 'ի վերայ ձեր
նաբուգոդոնոսոր արքայ բաբելաց_
ւոց. խորհեցաւ 'ի վր քո խորհուրդ։
31 *Արի, ել 'ի վերայ ազգին դադարե_
լոյ. որ նստի 'ի հանգստեան՝ ասէ Տր.
որոց ո՛չ դրունք, և ո՛չ նիգք, առան_
32 ձինն բնակեալք։ *Եւ եղիցին ուղտե
րամակք նոցա յաւար. և բազմութի
խաշանց նոցա 'ի կորուստ. և հոսեցից
ընդ ամ հողմս զյապաւեալսն առ ե_
րեսօք. և յամ կողմանց նոցա ածից
33 նց կործանումն՝ ասէ Տր։ *Եւ եղի_
ցի հանդրուանն բնակութի ջայլա_
մանց. և անապատ մինչև յաւիտեան։
և մի բնակեսցի 'ի նմա մարդ. և մի
34 նստցի 'ի նմա որդի հողածնի։ *Բանն
Տն՝ որ եղև առ երեմիայ մարգարէ վս
եղամայ 'ի սկզբան թագաւորութեն
սեդեկիայ արքայի յուդայ՝ և ասէ։
35 *Այսպէս ասէ Տր զօրութեց. ահաւա
դիկ խորտակեցաւ աղեղնն եղամայ.
զիշխանութի բռնաւորութե նր առից։
36 *Եւ ածից 'ի վր եղամայ չորս հողմս
'ի չորից կողմանց երկնից, և ցրուեցից
զնս ընդ ամ հողմս ընդ այնոսիկ. և
ո՛չ իցէ ազգ, յոր ոչ հասանիցեն թա_
37 փառականքն եղամայ։ *Եւ զարհու_
րեցուցից զնոսա առաջի թշնամեաց
նց, որք խնդրէին զանձինս նոցա. և
ածից 'ի վերայ նոցա ըստ բարկութե
սրտմտութե իմոյ՝ ասէ Տր. և արձա_
կեցից զսուր իմ զկնի նոցա մինչև սպա
38 նեսցէ զնոսա։ *Արկից զաթոռ իմ
յեղամ. և կորուսից անտի զթագա_
39 ւորս՝ և զմեծամեծս՝ ասէ Տր։ *Եւ
եղիցի յաւուրս յետինս դարձուցից
զգերութիւն եղամայ՝ ասէ Տր ('ի սկզ
բան թագաւորութեն սեդեկիայ ար
քայի եղև բանս այս 'ի վր եղամայ։)
'Ի վերայ Բաբելացւոց։

Գլ: Ծ.

1 Բանն՝ զոր խօսեցաւ Տր 'ի վր բա_
բիլոնի. առ երկիրն քաղդէացւոց
2 'ի ձեռն երեմիայ մարգարէի։ *Պատ_

մեցէք յազգս՝ և լու արարէք՝ նշանա_
կեցէք՝ լսելի՛ արարէք. մի՛ ծածկեցէք՝
ասասջի՛ք, առաւ բաբիլոն. յամօթ ե_
ղև բէլ փափուկըն աներկիւղք. մատ
նեցաւ մերոդաք. յամօթ եղեն կուռք
նր. ամաչեցին գարշելիք նր: * Զի ել 3
'ի վերայ նր ազգ 'ի հիւսիսոյ. նա դիցէ
զերկիր նորա յապականութի. և ո՛չ ոք
իցէ, որ բնակիցէ 'ի նմա 'ի մարդոյ մին
չև յանասուն. զի խախտեցան՝ և գնա
ցին: * Յաւուրս յայնոսիկ. և 'ի ժա_ 4
մանակի յայնմիկ ասէ Տր՝ եկեսցեն որ
դիքն իլի. ինքեանք և որդիքն յուդայ
'ի միասին շրջեսցին. և լալով գայցեն
առ Տր Ած իւրեանց՝ և խնդրեսցեն:
* Մինչև 'ի սիոն հարցցեն զճանապար 5
հն. այսր դիմեսցեն, և եկեսցեն՝ և ա_
պաւինեսցին 'ի Տր՝ զի ուխտ յաւիտե_
նից է՝ և ոչ մոռասցի: *Իբրև զոչխարս 6
կորուսեալս եղև ժողովուրդ իմ. հո_
վիւք նոցա մերժեցին զնոսա, 'ի վր լե
րանց մոլորեցուցին զնոսա, 'ի լեռնէ 'ի
բլուր գնացին. մոռացան զմակաղա_
տեղս իւրեանց: *Ամենեքին որք գտա 7
նէին՝ սատակէին զնս. թշնամիք նոցա
ասացին՝ մի՛ ներեսցուք նց. փոխանակ
զի մեղան Տն արօտ արդարութե է.
և Տն որ ժողովեաց զհարս նոցա:
* Օտարացարուք 'ի միջոյ բաբիլոնի. 8
և յերկրէ քաղդէացւոց ելէք՝ և եղե_
րուք իբրև նոխազս առաջի խաշանց:
*Ահաւասիկ ես յարուցից՝ և ածից 'ի 9
վր բաբիլացւոց զժողովս ազգաց մե_
ծամեծաց յերկրէ հիւսիսոյ. և ճակա_
տեսցին զնովաւ. և անտի ըմբռնեսցի
իբրև նետ իմաստուն պատերազմողի,
որ ոչ դարձցի ունայն: *Եւ եղիցի եր 10
կիրն քաղդէացւոց յաւար. և ամ աւար
առուքն նր յագեսցին՝ ասէ Տր. զի
ուրախ լինէիք՝ և պարծէիք յափշտա_
կեալ զժառանգութի իմ: * Զի խայ_ 11
տայիք իբրև զզուարակս 'ի վր դա_
լարւոյ. և ոգորէիք իբրև զցուլս:
*Յամօթ եղև մայրն ձեր յոյժ. մայրն 12
որ 'ի բարութե էր՝ ահաւադիկ վախ_
ճան ազգաց՝ աւեր՝ անջուր՝ և անա_
պատ: *Ի բարկութէ Տն մի՛ բնակես 13
ցի, այլ եղիցի յապականութի առհա
սարակ. և ամ որ անցանիցէ ընդ բա_
բիլոն, տրտմեսցի. և շչեսցէ 'ի վր ամ
հարուածոց նր: * Ճակատեցարուք 14
շուրջ զբաբիլոնիւ ամ աղեղնաւորք.
ձիգ դիք 'ի նմա՝ և մի խնայէք 'ի նետս
ձեր՝ զի Տն մեղաւ: * Խրախոյս բար_ 15
ձէք շուրջ զնովաւ. զի լքան ձեռք իւր.
անկան մահարձանք՝ և կործանեցան
պարիսպք նր՝ զի վրէժխնդրութի է
յԱյ. խնդրեցէք զվրէժ 'ի դմանէ.

16 ոպ արարն, արարէք դմա: * Սատակե
ցէք զզաւակ 'ի բաբիլոնէ. որ առնու
ցու մանգաղ 'ի ժամանակի հնձոց. յե
րեսաց յունական սրոյն իւրաքանչիւր
'ի ժողովուրդ իւր դարձցի. և իւրա_
17 քանչիւր յերկիր իւր փախիցէ: *Ոչ_
խար մոլորեալ իէլ. առիւծք մերժե
ցին զնա. նախ եկեր զնա թագաւորն
ասորեստանեայց. և յետոյ զոսկերս նր
18 արքայն բաբիլացւոց : * Սա այնորիկ
այսպէս ասէ Տր զօրութեց Ած իլի.
ահաւասիկ ես խնդրեցից զվրէժ յար
քայէն բաբիլացւոց՝ և յերկրէ նր. ոպ
խնդրեցի զվրէժ յարքայէն ասորես_
19 տանեայց : * Եւ պատսպարեցուցից
զիէլ անդրէն 'ի ճարակս իւր. և արա_
ծեսցի 'ի կարմեղոս. և 'ի բասան. և 'ի
լերինն եփրեմի. և 'ի գաղայադ. և յա_
20 գեսցին անձինք նց: * Յաւուրսն յայ_
նոսիկ. և 'ի ժամանակի յայնմիկ՝ ասէ
Տր՝ խնդրեսցեն զանիրաւութի իլի՝
և ոչ ևս իցէ. և զմեղս յուդայ՝ և ոչ
գտանիցին. զի քաւիչ եղէց անիրաւու
21 թեց նոցա: *Ի վերայ երկրի էլ դառ
նութե՝ 'ի վր բլրոց, և 'ի բնակչաց նր
խնդրեցից վրէժս. սուր՝ և ապականու
թի զկնի նոցա՝ ասէ Տր. և արասջիր
ըստ ամի՝ զոր պատուիրեցի քեզ:
22 * Ձայն պատերազմի յերկրէն քաղ
23 դէացւոց. և բեկումն մեծ: * Զիարդ
խորտակեցաւ, և մանրեցաւ սիւնն ամ
երկրի. զիարդ եղև բաբիլոն յապա_
24 կանութի 'ի մէջ ազգաց : * Յարձա_
կեսցին 'ի վր քո. և ըմբռնեսցիս բա_
բիլոն՝ և ոչ իմասցիս. գտար, և ըմբռ
նեցար. զի Տն ընդդէմ դարձար:
25 *Եբաց Տր զգանձս իւր. և եհան զանօթս
բարկութե իւրոյ. զի գործ Տն զօրու_
26 թեց է յերկրին քաղդէացւոց: *Եկին
հասին նմա ժամանակք իւր. բացէք
զշտեմարանս նորա. որոնեցէք զնա իբ
րև զայրս. և սատակեցէք զնա. մի մնա
27 ցեն նր մնացորդք : * Յամաքեցուցէք
զամ պտուղս նորա՝ և իջցեն 'ի սպա_
նումն. վայ նց՝ զի եկն օր նոցա՝ և ժա
28 մանակ վրէժխնդրութե նց: * Ձայն
փախուցելոց՝ և ապրեցելոց յերկրէն
բաբիլացւոց՝ պատմել 'ի սիոն զվրէժ
խնդրութին 'ի Տէ մերմէ. զվրէժխնդ
29 րութի տաճարի իւրոյ : * Պատուէր
տուք բազմաց 'ի վր բաբիլոնի ամ
աղեղնաւորաց. թէ բանակեցարուք ըզ
դովաւ շուրջանակի. զի մի ոք իցէ որ
ապրիցի 'ի դմանէ. հատուցէք դմա ըստ
գործոց իւրոց. ըստ ամի՝ զոր արար,
արարէք դմա. զի Տն ընդդէմ դար_
30 ձաւ. Այ սրբոյն իլի: * Սա այնորիկ
անկցին երիտասարդք նորա 'ի հրապա
րակս

բակս նը ։ և ասէ՝ արդ պատերազմողք
նը անկեալք դնիցին յաւուր յայնմիկ։
ասէ Տ՚ը ։ *Ա.Հաւասիկ ես՝ ի վերայ քո՝ 31
ասէ Տ՚ը զօրութեց՝ իվն հպարտիդ։ զի
հասեալ է օր քո՝ և ժամանակ վրէժ-
խնդրուե քոյ ։ *Ա.Հ տկարասցի հպար 32
տուի քո։ և կործանեսցի։ և ոչ՚ք իցէ՝
որ յարուցանիցէ զնա ։ և վառեցից
զհուր յանտառս նը։ և կերիցէ շուրջ
զնովաւ ։ *Ա.Այս՝ ասէ Տ՚ը զօրութեց։ 33
բռնադատեցան որդիքն իէլի՝ և որ-
դիքն յուդայ։ ամենեքեան որք գերեցին
զնոսա՝ բռնաբարեցին զնա։ և ոչ կա-
մեցին արձակել զնոսա ։ *Ա.Հ որ փրկէ 34
զնոսա հզօրն։ Տ՚ը ամենակալ անուն է
նը։ դատեսցի դատաստան ընդ ոտիս
իւր։ զի բարձցէ զերկիրն։ և զայրաս-
ցի բնակչացն բաբիլոնի ։ *Սուր՝ ի վր 35
քաղդեացւոցն՝ ասէ Տ՚ը։ և՝ ի վերայ
բնակչացն բաբիլոնի։ և՝ ի վր մեծամե
ծաց նը, և՝ ի վր խորհրդականաց նը ։
*Սուր՝ ի վր ըղձուեցեալ նորա։ և բարձ 36
ցին։ սուր՝ ի վր պատերազմողաց նը՝
և լքցին ։ *Սուր՝ ի վր երիվարաց՝ և 37
կառաց նը։ սուր՝ իվր նահատակաց նը։
և՝ ի վր ամ խառնիճաղանջիցն որ՝ ի
միջ նը։ և եղիցին իբրև զկանայս։ սուր
՝ի վր գանձուց նը՝ և յափշտակեսցին ։
*Սուր՝ ի վր ջրոց նը։ և ամաչեսցեն։ 38
զի երկիր դրօշելոց է։ և՝ իվր կղզեացն
որով պարծիցին ։ *Ա.ան այնորիկ 39
ձիճաղք բնակեսցին՝ ի կղզիսն։ և
բնակեսցին՝ ինանս դստերք հմբաբա-
ւնաց։ և մի՛ ևս շինեսցի յաւիտեան ։ *Ա.պ սա 40
տակեաց Ա.ծ զերկիրն սոդոմայեաց՝ և
զդմորայեաց՝ և զսահմանակիցս նը՝
ասէ Տ՚ը։ և մի՛ բնակեսցի անդ մարդ ։
և մի՛ պանդխտեսցի՝ ինանս որդի մար-
դոյ ։ *Ա.Հաւասիկ գունդ գայ՝ ի հիւսի 41
սոյ՝ և ազգ մեծ։ և թագաւորք բա-
զումք զարթիցեն՝ ի ծագաց երկրի ։
*Ա.զեղն և վայրագաւոր՝ ի ձեռին իւր 42
ումն, ժպիրհ է։ և մի՛ ողորմեսցի ։ ձայն
նոցն իբրև զծով գոչեսցէ։ հեծեալք յե
բիւրաս։ պատրաստեալք իբրև զկնի
՝ի պատերազմ՝ իվերայ քո դստեր բա
բիլացւոց ։ *Ա.լուաք զլուր նոցա զբքայն 43
բաբիլացւոց՝ և լքան ձեռք նը։ նեղու-
թիւն տագնապեաց զնա։ երկունք իբրև
ծննդականի ։ *Ա.Հաւատիկ իբրև զա 44
ռիւծ ելցէ՝ ի յորձանացն յորդանանու
՝ի տեղին եղամոյ։ զի երագ երագ հա
լածեցից զնա՝ ինանէ։ և զամ երիտա
սարդս յարուցից՝ ի վերայ նը ։ զի ո՛վ
է իբրև զիս։ և ո՛վ ընդդէմ դառնայ-
ցէ ինձ ։ և ո՛վ հովիւ կայցէ հակա- 45
ռակ ։ *Ա.ի այդորիկ լուարուք զիսր-
հուրդ Տ՚ն՝ զոր խորհեցաւ՝ ի վր բաբի
լոնի։ և զխորհուրդս նը զոր խորհեցաւ
՝ի վր բնակչաց քաղդեացւոց։ եթէ ոչ
ապականիցեն զգառինս հօտից նոցա ։
եթէ ոչ ապականիցին՝ ի նոցանէ ա-
րօտք ։ *Օ՛ի ձայնէ կործանման բա 46
բիլոնի շարժեսցի երկիրը։ և գոյժ նո-
րա լսիցի՝ ի հեթանոսս ։

Գ Լ։ ՆՒ.

Ա յսպէս ասէ Տ՚ը։ ահաւասիկ ես 1
յարուցից՝ ի վր բաբիլոնի՝ և՝ ի
վերայ բնակչաց նորա զսիրտ յարուց ե
լոց։ և հողմ խորշակի սատակիչ ։
*Ա.Հ առաքեցից՝ ի բաբիլոն գորովիչս 2
և գորովեսցեն զնա՝ և ապականեսցեն
զերկիրն նը։ զի վայ՝ ի վերայ բաբիլոնի
շուրջանակի յաւուր չարչարանաց իւր
ոց ։ *Ա.արեսցէ՝ որ լարեղոյն իցէ զա- 3
զեղն իւր։ և առցէ զանձամբ՝ որք իցէ
զէն։ մի խնայէք յերիտասարդս նորա։
և ապականեցէք զամ զօրութիւն նորա ։
*Ա.Հ անկցին վիրաւորք յերկրին քաղ 4
դեացւոց։ և խոցոտեալք շուրջ զնա-
վաւ ։ *Օ՛ի ոչ եղեւ այրի ի՛ էլ և յուդայ 5
Ա՚Յ իւրեանց, և՝ ի Տ՚է ամենակալէ։
զի երկիրն նը լցաւ անօրէնութեբ՝ ի սր-
բութենէն իէլի ։ *փախերուք՝ ի միջոց 6
բաբիլոնի։ և ապրեցուսցէ իւրաքանչ
իւր զանձն իւր։ և մի՛ կործանիցիք յա-
նիրաւութեբ նը։ զի ժամանակ վրէժ
խնդրութեբ նը՝ ի Տ՚է։ զհատուցումն նը
հնքն հատուսցէ ։ *Ա.ոսկի բա 7
բիլոն՝ ի ձեռին Տ՚ն։ որ արբուցանէ
զամ երկիրս՝ ի գինւոյ իւրմէ։ ապրին
հեթանոսք, վասն այնորիկ շարժեցան
ազգք ։ *Ա.Հ յանկարծակի կործանե 8
ցաւ բաբիլոն, և խորտակեցաւ։ ողբա
առէք՝ ի վերայ դորա։ առէք դեղ վի
րաց դորա ։ թերևս բժշկեսցի ։
*Ա.բժշկեցաք զբաբիլոն։ և նա ոչ բժշ 9
կեցաւ։ թողցո՛ւք զնա՝ և գնասցո՛ւք
իւրաքանչիւր յերկիրս իւր։ զի մերձե-
ցան մինչև երկինս դատաստանք նը։
ամբարձան մինչև ցաստեղս ։ *Ա.Հ 10
հան Տ՚ը զդատաստան՝ ի վերայ նորա։
եկայք՝ և պատմեսցուք՝ իսիոն զգործս
Տ՚ն նոյ մերոյ ։ *Ա.ազմեցէք ազեղունս։ 11
լցէք զկապարճս։ զի զարթոյց Տ՚ը զո-
գի թագաւորին մարաց ։ զի բարկուի
նորա՝ ի վերայ բաբիլոնի ։ և ջնջեսցէ
զնա։ զի վրէժխնդրութի Տ՚նէ՝ վրէժ
խնդրուի տաճարի նը ։ *Ա.վր պարսպ 12
պայ բաբիլոնի կանգնեցէք նշանս ։
կացուցէք պահապանս ։ զարթուցէք
զառաքեալսհս։պատրաստեցէք զզէնս։
զի Ա՚Ն՝ ի գործ արար։ և արասցէ Տ՚ը՝
զոր ինչ խօսեցաւ՝ ի վերայ բնակչացն
բա-

բաբիլօնի: *Բնակեալ ք առ ջուրբք 13
բազմօք. և 'ի վ̄ր բազմութե̄ գանձու
ն̄ր. հասեալէ վախճան քո. արդար և
‖Ամովս. 6. 8. ստոյգ 'ի փոր քո եմուտ:*‖Երդ- 14
ուաւ Տ̄ր զօրութեանց 'ի բազուկ իւր.
թէ լցից զքեզ զօրօք իբրև մարախու.
և բարբառեսցին 'ի վ̄ր քո՝ որք իջանեն
‖Ծննդ. 1. 1. 'ի քեզ:*‖Որ արար զերկիր զօրութ̄բ 15
իւրով. պատրաստեաց զտիեզերս իմաս
տութ̄բ իւրով. ձգեաց զերկինս հան-
ճարով իւրով:*Ըստ 'ի բարբառ զբազ 16
մութ̄ն ջուրց շառաչմանց յերկինս. և
հանէ զամպս 'ի ծագաց երկրի. և զփայ
լատակունս յանձրևս արարէ հան զլոյս
'ի շտեմարանաց իւրոց:*Յիմարեցաւ 17
ա̄մ մարդ 'ի գիտութենէ յամօթ եղև ա̄մ
ոսկերիչ 'ի դրօշելոց իւրոց. զի սուտ
ձուլեցին. չիք ոգի 'ի նոսա:*Ունայնք 18
են գործք՝ և ծաղանաց արժանիք. 'ի ժա
մանակի այցելութե̄ իւրեանց կորիցեն:
*Ոչ այնպ̄ էինչ իցէ բաժինն յակոբայ. 19
զի որ ստեղծն զա̄մ, նա է բաժին ն̄ր.
Տ̄ր զօրութեանց անուն ն̄ր:*Ցրուեսցես 20
դու ինձ զանօթս պատերազմիդ. և
ցրուեցից ես 'ի քեզ զազգս. և բարձից
'ի միջոյ քումմէ զթագաւորս:*Եւ 21
ցրուեցից ես 'ի քեզ զայրուձի նորա. և
ցրուեցից 'ի վ̄ր քո զկառս և զհեծեալս
նորա:*Եւ ցրուեցից 'ի քեզ զայր և 22
զկին. և ցրուեցից 'ի քեզ զծերն և զե-
րիտասարդն. և ցրուեցից 'ի քեզ զըն-
տիրն և զկոյսն:*Եւ ցրուեցից 'ի քեզ 23
զհովիւ և զհօտ իւր. և ցրուեցից 'ի
քեզ զհողագործն. և զհողագործութի̄ն
իւր. և ցրուեցից 'ի քեզ զզօրավարս և
զզօրագլուխս քո:*Եւ հատուցից բա 24
բիլօնի՝ և բնակչացն քաղդէացւոց ա̄ծ
ա̄մի չարեաց՝ զոր արարին ընդ սիօն
առաջի աչաց ձերոց՝ ասէ Տ̄ր.
*Ահաւադիկ ես 'ի վերայ քո լեառնդ 25
ապականիչ՝ ասէ Տ̄ր՝ որ ապականէիր
զա̄մ երկիր. և ձգեցից զձեռն իմ 'ի վ̄ր
քո. և թաւալեցուցից զքեզ 'ի վիմացդ.
և տաց զքեզ 'ի լեառն այրեցեալ:
*Եւ ոչ ևս առնուցուն 'ի քէն վէմ ան 26
կեան՝ և վէմ հիման. զի յապականու
թ̄ի յաւիտենից եղիցիս՝ ասէ Տէր:
*Ածէք զնշան 'ի վ̄ր երկրիդ. փող հա 27
րէք ընդ ազգս ա̄մ, հրաւիրեցէք 'ի վ̄ր
դորա զունդս. պատուէր տուք յինէն
արարատեան թագաւորութեացն և
ասքանազեան գնդին. կանգնեցէք զնո
վաւ նետակալս. ելէք 'ի վ̄ր. շարժե-
ցաւ՝ և չարչարեցաւ. զի եկն էհաս 'ի
վ̄ր բաբիլօնի խորհուրդ Տ̄ն. երիվարք
իբրև բազմութ̄ի մարախոյ:*Հրաւի 28
րեցէք 'ի վ̄ր ն̄ր ազգս՝ և զթագաւորն
մարաց. զզօրավարս ն̄ր, և զա̄մ զօրա-
գլուխս ն̄ց անդր. և զա̄մ երկրի իշխա
29 նութ̄իս:*Դողաց երկիրն բաբիլաց
ւոց յապականութ̄ի. զի մի լինիցի 'ի
30 նմա բնակութ̄ի:*Կասեցին նահա-
տակք բաբիլօնի 'ի պատերազմէ. նստ
ցին 'ի պաշարման. բեկաւ զօրութի̄ն ն̄ց.
և եղեն իբրև զկանայս. հրձիգ եղեն
յարկք ն̄ց. խորտակեցան նիգք նորա:
31 *Փախստեայ փախստէի պատահես
ցի՝ և գուժկան գուժկանի դիպեսցի.
գոյժ առնել թագաւորին բաբիլաց
ւոց. եթէ առաւ քաղաքն ն̄ր 'ի ծագաց
32 ելից իւրոց:*Իմբռնեցան, և ժողովք
ն̄ց 'ի հուր այրեցան. և արք պատերազ
33 մօղք 'ի դրունս դիմեցին:*Զի այսպ̄
ասէ Տ̄ր զօրութեանց՝ Ա̄ծ իս̄ղի. տունն բա
բիլացւոց իբրև զօրան վաղվաղակի կաս
ցի. սակաւիկ մ̄ևս՝ և հասցէ հունձք
34 նորա:*Եկեր զիս՝ էհաս 'ի վերայ իմ.
բաժանեաց զիս նաբուգոդոնոսոր ար
քայ բաբիլացւոց. կացոյց զիս իբրև
աման մի ունայն. եկուլ զիս իբրև զվի
շապ. ելից զկուշտ իւր 'ի փափկութե̄
իմմէ. մերժեցան վաստակք իմ:
35 *Եւ տառապանք իմ 'ի բաբիլօն գնա
ցին՝ ասասցէ բնակիչն սիօնի. և արիւն
իմ 'ի վերայ բնակչացն քաղդէացւոց.
36 ասասցէ երէմ:*Վասն այդորիկ այսպ̄
ասէ Տ̄ր՝ ահաւադիկ ես դատեցայց զո
ոխն քո. և խնդրեցից զվրէժ քո. և
աւերեցից զծով ն̄ր. և ցամաքեցուցից
37 զաղբիւր նորա:*Եւ եղիցի բաբիլօն
'ի բլուրս՝ բնակութ̄ի վիշապաց՝ յապա
կանութ̄ի և 'ի շչիւն. և մի բնակեսցի:
38 *Համօրէն իբրև առիւծունք պատ-
րաստեցան որդիք ն̄ց. և իբրև զկորիւն
39 առիւծուց:*Ի ջերմ խշտեաց իւրեանց
տաց նոցա արհաւիրս. և արբեցուցից
զն̄ս. զի թմբրեսցին. և ննջեսցեն քուն
յաւիտենից՝ և մի զարթիցեն՝ ասէ Տ̄ր
40 *Իջո՛ զն̄ս իբրև զոչխարս 'ի սպանումն.
և իբրև զխոյս այծեօք հանդերձ:
41 *Զիա՞րդ 'ի պարտութ̄ի մատնեցար
սիսակ. և անկար յորս պարծանքդ
ա̄մ երկրի. զիարդ եղև բաբիլօն յա-
պականութ̄ի 'ի մէջ ա̄մ ազգաց:
42 *Ել 'ի վերայ բաբիլօնի ծով̄ գոչ-
մամբ ալեաց իւրոց. և ծածկեցաւ:
43 *Եղեն քաղաքք նորա յապականութ̄ի
յերկիր անջուր և յանապատ. և մի ոք
իցէ՝ որ բնակիցի 'ի նմա. և ոչ հանգի
44 ցէ 'ի նմա որդի մարդոյ.*Եւ խնդրե
ցից զվրէժ 'ի բելայ 'ի բաբիլօն. և հա
նից՝ զոր եկուլն 'ի բերանոյ նորա. և
մի ևս ժողովեսցին առ նա ազգք. նաև
պարիսպքն բաբիլացւոց անկան:
45 *Ելէք 'ի միջոյ ն̄ց ժողովուրդ իմ. և
ապրեցուցէք իւրաքանչիւր զանձինս
ձեր

ձեր 'ի սրտմտութենէ բարկութեան Տն։
*Մի երբեք զանգիտիցեն սիրտք ձեր. 46
և մի երկնչիք 'ի համբաւոց՝ զոր լսիցէք
յերկրին. զի 'ի նմին տարւոջ մտցէ
լուրն. և յետ այնր տարւոյ այլ լուր.
և անիրաւութիւն յերկրին. առակ 'ի վր
առակի։ *Վս այնորիկ ահա աւուրք 47
գան՝ ասէ Տր. և արարից հանդէս 'ի
վերայ դրօշելոցն բաբելացւոց. և ամ
երկիր նր ամաչեսցէ. և ամ վիրաւորք
նր անկցին 'ի միջի նորա։ *Եւ ցնծաս 48
ցեն 'ի վերայ բաբելոնի երկինք՝ և եր
կիր. և ամ որ 'ի նոսա. զի 'ի հիւսիսոյ
եկեսցեն թշուառացուցիչք նորա՝ ասէ
Տր։ *Եւ 'ի բաբելոն անկցին վիրա 49
ւորք ամ երկրին։ *Ելէք ապրեալք 50
յերկրէդ. մի կայք՝ յիշեցէք զՏր հե
ռաւորքդ. և եէմ անկցի 'ի սիրտս ձեր։
*Ամօթ եղեաք՝ զի լուաք զնախա 51
տինս մեր. ծածկեցին անարգանք զե
րեսս մեր. մտին այլազգիք 'ի սրբութիւ
մեր 'ի տուն Տն։ *Վսն այդորիկ ահա 52
աւուրք գան՝ ասէ Տէր՝ և խնդրեցից
զվրէժ 'ի դրօշելոց նորա. և յամ երկ
րի անկցին վիրաւորք։ *Եւ եթէ 53
բարձրասցի բաբելոն իբրև զերկինս.
և եթէ բարձրացուսցէ զբարձրութի
զօրութեան իւրոյ. յինէն եկեսցեն նմա
սատակիչք՝ ասէ Տր։ *Ձայն գուժի 54
'ի բաբելոն. և բեկումն մեծ յերկրին
քաղդէացւոց։ *Զի սատակեաց Տր 55
զբաբելոն՝ և կորոյս 'ի նմանէն զձայն
մեծ՝ զգոչիւն ալեաց իւրոց. իբրև
ջուրք բազումք եռուն զբարբառ սա
տակման նորա։ *Զի եկն 'ի վր բաբե 56
լոնի թշուառութի. ըմբռնեցան սպա
ռազէքն նր. զարհուրեցան աղեղնաւ
որք նր. զի Ած հատուցիչ է. ինքն Տր
հատուցանէ նմա զհատուցումն։ *Եւ 57
արբեցուսցէ արբեցութբ զզօրավարս
նր. և զիմաստունս նր՝ և զիշխանս նր՝
և զզօրագլուխս նորա՝ և զզօրաւորս
և ննջեսցեն զքուն յաւիտենից. և մի
զարթիցեն. ասէ արքայ՝ Տր զօրութեց
անուն է նր։ *Այսպէս ասէ Տր զօրու 58
թեց. պարիսպն բաբելոնի լայնեցաւ.
կործանելով կործանեսցի. և դրունք
նր բարձունք հրով այրեսցին. և ջա
նասցին ժողովուրդք ընդունայն. և
ազգք 'ի սկզբան կատակեսցին։ *Բան՝ 59
զոր պատուիրեաց Տր երեմիայի մար
գարէի ասել ցսարեայ որդի ներեայ՝
որդւոյ մաասայ. յորժամ երթայր
ընդ սեդեկիայ արքայի յուդայ 'ի բա
բելոն. յամին չորրորդի թագաւորութե
էր պետ նր. և սարեայ էր պարգևապետ նորա։
հարկաբե *Եւ գրեաց երեմիա զամ չարիս՝ որք 60
ութե գալոց էին 'ի վերայ բաբելոնի. 'ի մա
տեանի միում. զամ զբանս զայսոսիկ
61 գրեալս 'ի վր բաբելոնի։ *Եւ ասէ
երեմիա ցսարեայ՝ յորժամ երթայ
ցես 'ի բաբելոն, և տեսցես՝ և ընթեռ
նուցուս զամ զբանսդ զայդոսիկ։
62 *Եւ ասասցես, Տր՝ դու խօսեցար 'ի
վերայ տեղւոյս այսորիկ սատակել
զսա. մի ևս լինել 'ի սմա բնակիչ 'ի
մարդոյ մինչև յանասուն. զի յապա
63 կանութի յաւիտենից եղիցի։ *Եւ
եղիցի, յորժամ դադարեսցես յըն
թեռնլոյ զմատեանդ զայդ, կապեսցես
'ի դմա քար. և ընկեսցես 'ի մէջ եփրա
64 տայ. *Եւ ասասցես, այսպէս ըն
կղմեսցի բաբելոն՝ և մի կանգնեսցի 'ի
չարեացն՝ զոր ես ածից 'ի վր նր։ և կա
ցին մինչև ցայսվայր բանք երեմիայի։

ԳԼ: ԾԲ։

1 Բսան || և մի ամաց էր սեդեկիա ||4 Թագ.
արքայ 'ի թագաւորել իւրում. 24. 18.
և մետասան ամ թագաւորեաց յեէմ. 2. Մնա.
և անուն մօր նորա ամիտալ դուստր 36. 11.
2 երեմիայի ղոբնայ։ *Եւ արար չար
առաջի Տն որպէս արար յովակիմ։
3 *Զի ցասումն Տն, էր յեէմ և յուդայ.
մինչև մերժեաց զնոսա յերեսաց իւր
ոց. և ապստամբեցաւ սեդեկիա յար
4 քայէն բաբելացւոց։ *|| Եւ եղև յին ||Եր.
ներորդի ամի թագաւորութե նորա. 39. 1.
և յամսեանն տասներորդի՝ որ օր տասն 4 Թագ.
էր ամսոյն. եկն նաբուգոդոնոսոր ար 25. 1.
քայ բաբելացւոց ամ զօրօք իւրովք
յեէմ, և պաշարեաց զնա. և շինեաց
շուրջ զնովաւ պարիսպ առպարիսպ 'ի
5 չորեքկուսի վիմաց։ *Եւ եհաս քա
ղաքն 'ի նեղութի. մինչև յամն մետա
6 սաներորդ սեդեկիայ արքայի։ *Եւ
յամսեան չորրորդ՝ որ օր ինն էր ամսոյն.
և զօրացաւ սով 'ի քաղաքին. և ոչ գտա
նիւր հաց ուտելոյ ժողովրդեան երկ
7 րին։ *Եւ խրամատեցաւ քաղաքն. և
ամ արք պատերազմօղք փախեան՝ և
ելին 'ի քաղաքէ անտի 'ի գիշերի ընդ
ճանապարհ դրանն՝ ընդ պարիսպ և
ընդ պատուհան ընդ կողմն պարտի
զին արքունի. (և քաղդէացիքն շուրջ
զքաղաքաւն էին.) և գնացին ընդ
8 ճանապարհ արաբացւոց։ *Եւ զհետ
եղեն զօրք թագաւորին քաղդէացւոց.
և հասին սեդեկիայ արքայի յանդս ե
րիքովի. և ամ ծառայք նր ցրուեցան
9 'ի նմանէ։ *Եւ կալան զթագաւորն՝ և
ածին առ արքայ բաբելացւոց 'ի ռեբ
ղաթայ երկիրն եմաթայ. և խօսեցաւ
10 ընդ նմա դատաստանօք։ *Եւ կոտո
րեաց արքայն բաբելացւոց զորդիսն
սեդեկիայ յանդիման նորա. և զամ
իշխանս

իշխանս յուդայ կոտորեաց 'ի ռեբղա_
թայ ։ * Եւ զաչսն սեդեկիայ կուրա_ 11
ցոյց . և կապեաց զնա ձեռակապօք . և
տարաւ զնա արքայն բաբելացւոց 'ի
բաբելոն . և ետ զնա 'ի տուն աղօրեաց .
մինչև յօր մահուան իւրոյ ։ * Եւ յամ 12
սեամն հինգերորդի՝ որ օր տասն էր
ամսոյն . այն ամ՝ իննուտասն էր նա_
բուգոդոնոսորայ արքային բաբելա_
ցւոց . եկն նաբուզարդան դահճապետ .
որ կայր առաջի արքային բաբելացւոց ։
* Եւ հրձիգ արար զտունն Տն . և զա_ 13
պարանսն արքունի . և զամ տունս
քաղաքին . և զամ ապարանս մեծա_
մեծս այրեաց հրով ։ * Եւ զամենայն 14
պարիսպ երեմի շուրջանակի զամ զօրքն
քաղդեացւոց քակեցին՝ որք էին ընդ
դահճապետին ։ * Եւ յաղքատաց 15
ժողովրդեանն՝ և 'ի մնացորդաց և
զխնլքորսն՝ որք մնացին 'ի քաղաքին .
և զփախստականսն՝ որք փախեան առ
արքայն բաբելացւոց . և զմնացորդս
ժողովրդեանն եթող 'ի նաբուզար_ (տարաւ նաբու_ զարդան)
դան դահճապետ ։ * Եւ յաղքատաց 16
երկրին եթող նաբուզարդան դահ_
ճապետ յայգեգործս և յարդիւնա_
րարս ։ * Եւ զսիւնսն պղնձիս տանն Տն . 17
և զխարիսխսն . և զծովն պղնձի՝ որ էր
'ի տանն Տն խորտակեցին քաղդեա_
ցիքն . և խաղացուցին զամ պղինձն 'ի
բաբելոն ։ * Եւ զոտսն և զվերնախա_ 18
րիսխսն . և զպսակսն . և զտաշտսն . և
զմահասնսն . և զամենայն կահ պղնձի
որովք առնէին սպաս՝ էառ ։ * Եւ զապ 19
փոլթն . և զամսարակոլթն ։ և զպար
զուտսն . և զաշտանակսն . և զճաշակսն .
և զտուփսն որ ոսկի ոսկի, և որ արծա
թի արծաթի, էառ դահճապետն ։
* Եւ սիւնք երկու էին . և ծով մի . և 20
ցուլքն երկոտասանք՝ որք կային ընդ
ծովուն . զորս արար արքայ սաղոմոն
'ի տանն Տն . և ոչ գոյր չափ պղնձոյն .
և ամ կահին պղնձոյ ։ * Եւ սեամսն 21
երեսուն և հինգ կանգուն էր բարձրու (տասն և ութն կանգուն)
թն միոյ միոյ սեան . և մանեակ յերկո
տասան կանգնոյ շուրջ զնովաւ . և
թանձրութն նորա շուրջ առ չորս մա
տունս ։ * Եւ ախաւեղագէսքն նոցա 22
պղնձիք . և բարձրութն միոյ ախաւե
ղագլխին 'ի հինգ կանգնոյ . և վանդա
կապատ . և նռնաձևք 'ի վր ախաւե_
ղագլխին շուրջ շրջանակաւ՝ ամենայն
պղնձի . ըստ նմին օրինակի և երկրոր
դի սեանն . և նռնաձևք . (կանգուն առ
կանգուն ։ յերկոտասան կանգնոյ ։)
23 * Եւ էին նռնաձևքն իննսուն և վեց .
'ի միոջէ կողմանէ . և էին ամենայն
նռնաձևքն հարիւր 'ի վերայ վանդա_
24 կին շուրջանակի ։ * Եւ էառ դահճա_
պետն զսարեայ զքահանայ զգլխաւ_
որն . և զսոփոնիայ զքահանայ զերկ_
25 րորդ . և երիս բարապանս ։ * Եւ 'ի
քաղաքէ անտի էառ ներքինի մի որ էր
ոստիկան արանց պատերազմողաց . և
եօթն այր անուանի՝ որք կային առա_
ջի թագաւորին գտեալս 'ի քաղաքին .
և զդպրապետն զիշխան զօրացն , և
զդպրապետ ժողովրդեան երկրին . և
վաթսուն այր 'ի ժողովրդենէ երկրին՝
26 որք գտան 'ի քաղաքին ։ * Եւ էառ զնս
նաբուզարդան դահճապետ՝ և տարաւ
առ արքայն բաբելացւոց 'ի ռեբղա_
27 թայ ։ * Եւ էհար զնս արքայն բաբե
լացւոց . և սպան զնոսա 'ի ռեբղաթայ
յերկրին եմաթայ . և գերեցաւ յու_
դայ անդուստ յերկրէ իւրմէ ։
28 * Եւ այս ժողովուրդ է՝ զոր գերեաց
նաբուգոդոնոսոր արքայ՝ յամին եօթն
երորդի 'ի հրէից . երիս հազարս և
29 քսան և երիս ։ * Եւ յամի ութուտա_
սաներորդի նաբուգոդոնոսորայ . տա
րան յերէմէ ոգիս ութն հարիւր երե_
30 սուն և երկուս ։ * Եւ յամին քսանե_
րորդի և երրորդի նաբուգոդոնոսորայ
խաղացոյց նաբուզարդան դահճա_
պետ 'ի հրէից ոգիս եօթնհարիւր քսա_
ռասուն և հինգ ։ ընդ ամ ոգիք չորք
31 հազարք՝ և վեցհարիւր ։ * Եւ եղև յա_
մին երեսներորդի՝ և եօթներորդի յա
մի գերութեն յովակիմայ արքայի յու
դայ . յերկոտասաներորդի ամսեանն
'ի քսան և չորս ամսոյն . բարձրացոյց
ուղմարոդաք արքայ բաբելացւոց՝ յա
մին յորում թագաւորեաց՝ զգլուխ յո_
վակիմայ արքայի յուդայ . և էհան
զնա 'ի տանէն ուր կայր 'ի պահեստի ։
32 * Եւ խօսեցաւ ընդ նմա քաղցրութբ .
և եարկ զաթոռ նր 'ի վերոյ քան զա
թոռս թագաւորացն . որք էին ը նմա
33 'ի բաբելոն ։ * Եւ փոխեաց զպատմու_
ճան բանտին նր . և ուտէր նա հաց հա
նապազ առաջի նր զամ աւուրս որչափ
34 և եկեաց ։ * Եւ կարգեցաւ նմա ռո_
ճիկ հանապազորդ . զոր տային յար_
քայէն բաբելացւոց օրըստօրէ . մինչև
ցօր մահու զամ աւուրս կենաց իւրոց ։

※ ※ ※
※ ※
※

ԹՐԵՆՔ · ԱՅՍ Է ՈՂԲՔ

ԵՐԵՄԻԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ:

Գլուխ Առաջներորդ :

Եւ եղեւ յետ գերութեանն Իսրայէլի . եւ աւերա-
ծոյն Եր՛ղի · նստէր՝ եւ լայր՝ եւ ողբայր Երե_
միա զողբս զայս 'ի վերայ Եր՛ղի՝ եւ ասէր ·

ԱԼԵՓ:

ԶԻԱՐԴ ԶԱ՛ 1
ՏԱՒ ՆՍՏԱՒ
մենայեկ քաղաքն բազ
մամբոխ՝ եւ եղեւ իբրեւ
այրի լցեալ ուրախութե՛
'ի մէջ հեթանոսաց · իշխան աշխար_
հին եղեւ հարկատու :

ԲԵԹ:

Երեմ. *Լալով ելայ 'ի գիշերի՝ եւ արտասուք 2
13. 17. իւր 'ի վ՛ր ծնօտից իւրոց · եւ ոչ գտաւ
մխիթարիչ յայնմ աւուր 'ի սիրելեաց
իւրոց : ա՛մ բարեկամք նորա անարգե
ցին զնա . եւ եղեն ն՛ր իբրեւ թշնամիք :

ԳԻՄԵԼ:

*Մարեցաւ 'ի գերութի՛ յուդայ : 'ի 3
բազում տառապանս 'ի նեղութեան
տրմութե՛ , ծառայութե՛ · նստաւ
'ի մէջ հեթանոսաց · եւ ոչ եգիտ հան
գիստ : ա՛մ հալածիչք իւր հասին նմա
'ի մէջ թշնամեաց իւրոց :

ԴԱԼԵԹ:

Երեմ. *Սուգաւորին ճանապարհք սիօնի · զի 4
14. 2. ոչ գոյր երթեւեկ տօնից տարեկանաց
նորա · ա՛մ դրունք ն՛ր եղեն յապակա_
նութի · եւ քահանայքն նորա հաշեն՝
եւ հառաչեն՝ եւ յոգւոց ելանեն : կու_
սանք նորա 'ի գերութի վարեցան · եւ
Եւ ինքն ինքն դառնացեալ անձամբ :
դաժանէն

ՀԵ:

դառնու- *Եղեն նեղիչք ն՛ր 'ի գլուխ · եւ 5
թեամբ թշնամիք նորա յուրախութի , զի Տ՛ր
կորացոյց զնա վ՛ս բազում ամպարշ_
տութե՛ նորա · տղայք ն՛ց վարեցան 'ի
գերութի առաջի նեղչաց նորա :

ՎԱՎ:

*Բարձաւ 'ի դստերաց սիօնի ա՛մ վայ 6
ելչութի նորա · եղեն իշխանք ն՛ց իբրեւ
խոյք՝ որոց ոչ գտանիւր նոցա ճարակ :
ետուն զցանկալի ցանկալի ինչսն իւր_
եանց կերակրոց · զի հանգուսցեն զան
ձինս իւրեանց : երթային՝ եւ ոչ 'ի միտս

իւրեանց՝ առաջի նեղչաց ըստ վարել
հալածչացն :

ԶԱՅԻՆ:

7 *Յիշեաց Եմ՛ զօր տառապանաց , զօր
անջատման իւրոյ · թախծեաց ընդ ա՛մ
ցանկալի ինչս՝ որ ստացեալ էր 'ի սկզբա
նէ · յանկանիլ ժողովրդեանն 'ի ձեռս
թշնամեացն եւ ոչ՛ք էր, որ օգնէր նմա ·
տեսին ատելիք ն՛ր · ծաղր հարին, եւ ծի_
ծաղեցան 'ի վերայ գերութե՛ նորա :

ԽԵԹ:

8 *Մեղս մեղաւ Եմ՛ · վ՛ս այնորիկ ա՛մ
գովիչք ն՛ր կործկլուս առնէին զնա ·
զի տեսին զանարգանս ն՛ր · զի նա ինք_
նին յետս դարձեալ յոգւոց ելանէ : յոգւոց
հանէ

ՏԵԹ:

9 *Պղծութի ն՛ր առաջի ոտից իւրոց · եւ
ոչ յիշեաց նա զտեղի իւր · իջոյց արտա նա զվախ
սուս մեծամեծս՝ եւ ոչ՛ք էր՝ որ մխիթա ճան իւր
րէր զնա : տես Տ՛ր զտառապանս իմ ·
զի բարձրացան թշնամիք իմ 'ի վ՛ր իմ :

ԻՕԴ:

10 *Զձեռն իւր ձգեալ նեղչին 'ի վերայ
ցանկալեաց իմոց : տեսի ես զհեթա_
նոսս · զի մտին 'ի սրբութի քո · որոց
պատուիրեցեր թէ մի մտցեն 'ի տեղի
ժողովրդոց քոց :

ԿԱՓ:

11 *Ամենայն ժողովուրդք յոգւոց ելա_
նէին 'ի խնդիր հացի · տային զա՛մ ցան
կալի ինչս իւրեանց գինս հացի · զի
դարձուսցեն զանձինս իւրեանց յինք
եանս : տես Տէր՝ եւ հայեաց · զի եղէ
անարգեալ՝ եւ արհամարհեալ :

ԼԱՄԵԴ:

12 *Ձեզ ասեմ · ձեզ ասեմ անցաւորք
ճանապարհաց : դարձարո՛ւք՝ հայեցա
րո՛ւք՝ եւ տեսէ՛ք · թէ իցէ՛ն երբէք ցաւք
ըստ ցաւոցս լեալ՝ որք 'ի վ՛ր իմ հասին :
բարբառեցաւ Տէր · եւ կորացոյց զիս :
յաւուր բարկութե՛ սրտմտութե՛ իւրոյ :

ՄԵՄ:

13 *Ի բարձանց իւրոց առաքեաց հուր
յոսկերս իմ · ցանց ձգեաց ոտից իմոց՝
եւ դարձոյց զիս յետս իմ · արար յապա
կանութի զանձն իմ · զօրհանապազ
'ի տառապանս տրտմութե՛ :

ՆՈՒՆ:

14 *Կանխեաց Տ՛ր 'ի վերայ տրտմութե՛

իմոյ՝ և էարկ զինեւ զձեռն իւր : Ծանր
ցասցոյց զլուծ իւր՝ իվերայ պարանոցի
իմոյ : տկարացաւ զօրութիւն իմ. մատ
նեաց զիս Տէր՝ ի ձեռս ցաւոց իմոց . և
ոչ‌ևս կարեմ հանդարտիլ :

ԱՐԱՐԻՆ :

15 *Ջնջեաց՝ ի միջոյ իմմէ զընտիր ըն
տիր զօրուց իմոց : կոչեաց՝ ի վէր ընտրե
լոց իմոց ժամանակս բեկման : Հնձան
եհար Տէր կուսի դստերն յուդայ :

ԱՅԻՆ :

16 *Ա՛ե այսօրիկ ես ասասիկ՝ ի լալ մա
տուցեալ եմ : ակն իմ իջոյց զարտօսր .
զի հեռի եղեն յինէն մխիթարիչք իմ.
որ դարձուցանէ զանձն իմ յիս . մատ
նեցան որդիք իմ՝ յապականութիւն . զի
զօրացաւ թշնամին :

ՖԱՆ :

17 *Տարածեաց սիօն զբաշուկս իւր առ
ՃՆ. և ոչնք էր՝ որ մխիթարէր զնա :
շուրջ զնովաւ նեղիչք նր . եղև երեմ
աղտեղեալ իբրև կին ի՝ ի մէջ նոցա :

ԱՂԱԴՆ :

18 *Ընդարձակ Տէր ՃՆ՝ զի ես դառնացու
ցի զնա : լո՛ւարուք զայս ամենայն ժո
ղովուրդք . և տեսէք զցաւս իմ : օրիորդք իմ և երի
տասարդք իմ վարեցան՝ ի գերութիւն :

ԿՈՉ :

19 *Կոչեցի ես զսիրելիսն իմ. և նոքա ար
համարհեցին զիս . քահանայք իմ և
երիցունք աստէն՝ ի քաղաքի սաւառակե
ցան : խնդրեցին զկերակուր . զի դար
ձուցեն զոգիս իւրեանց , և ոչ գտաւ :

ՈՒՆ :

20 *Տես Տէր՝ զի նեղեալ եմ : ոսկերք իմ
խռովեցան . սիրտ իմ գելաւ յիս . և
ես գտայ դառնացեալ . արտաքուստ
ժառանգեաց զիս սուր՝ որպէս և մահ
՝ի ներքուստ :

ՇՈՒՆ :

21 *Լուարուք , լուարուք զայս . զի հե
ծեմ. հառաչեմ. և ոչնք է՝ որ մխիթա
րէ զիս . ամ թշնամիք իմ լուան զչա
րիս իմ. և ուրա հարին ինձ . զի դու
արարեր զայն. և դու կոչեցեր զժամն
նակն զայն . և եղիւ ինձ վայ վայ :

ԹՈՒ :

22 *Ամէն չարիքն ամ առաջի քո . և
ձեռաքաղ արա դու զնոսա . զորօրինակ
արարեր ձեռաքաղ զիս՝ իվէր ամենայն
իմոյ . զի բազում եղեն հեծութիւնքն
իմ. և սիրտ իմ՝ լի եղև տրտմութիւն :

ԳԼՈՒԽ Ա :

ԵՐԵՄԻԱՅ ՄԱՐԳԱՐԷԻ Ա :

1 Ո՛րդ խաւարեցաւ սրտմտութիւն
■ բարկութեան Տեառն դուստր սիօնի.
ընկեց յերկինից յերկիր զփառս Իսրա

և ոչևս յիշեաց զպատուհանդան ոտից
նորա : յատուր սրտմտութեան բարկու
թեան իւրոյ :

ՐՈՒ Ա :

2 *Ընկլոյզ Տէր յանխնայ զամ գեղ յա
կոբայ . քակեաց , և ոչ անխայեաց : զա
մուրս դստեր յուդայ կործանեաց
յերկրի. անարգեաց զիշխանս և զթա
գաւորս նոցա :

ԴՈՒՄԱՆ :

3 *Փչեաց Տէր յաւուր սրտմտութե բար
կութեան իւրոյ զամ եղջիւրս ի՛շխ . և
դարձոյց յետս զաջ նր առաջի թշնա
մեաց նորա : Հուր պատեաց զյակոբ .
հաշեաց և մաշեաց զամենայն որ շուրջ
զնովաւէ :

ԴՐԱԼԱՆ :

4 *Լարուատ ընդ գերկն իւր իբրև թշնա
մի. հաստատեաց զաջ իւր՝ իվերայ նր.
և սպան զամ ցանկալին դստեր սիօնի :
եհեղ՝ իվերայ զսրտմտութիւն բարկու
թեան իւրոյ հրով :

ԵՈՒ :

5 *Լղև Տէր իբրև թշնամի . կործա
նեաց զիսէլ . կործանեաց զթագաւորս
նորա . կործ անեաց զամ ամուրս նորա.
և բազմացոյց դստերն յուդայ տառա
պանս՝ իվերայ տառապանաց :

ՎԱՒ :

6 *Խլեաց իբրև զայգի զխորանս նր . և
ապականեաց զժողս տարեկանաց նր .
մոռացաւ Տէր՝ զոր արար սիօն ժող
տարեկանաց և շաբաթաց. և զայրացոյց
՝ի մընչել բարկութեան իւրոյ , զթա
գաւորս՝ և զիշխանս՝ և զքահանայս :

ՕՐՑԻՆ :

7 *Մերժեաց Տէր զսեղան իւր. և՝ ի բաց
ընկեց զսրբութիւն իւր . կործանեաց
զպարիսպս աշտարակեայս տանձարաց
նր : ձայն ետուն՝ գոչեցին՝ ի տան Տեառն.
իբրև յաւուրս տոնից տարեկանաց նր :

ԽՈՒԼԻԹ :

8 *Ընկեցաւ կործանեալ պարիսպ դստ
եր սիօնի : չափ արկին՝ և ոչ անդրէն
դարձուցին զձեռս իւրեանց : սուգ
առին մնահարձանք . և պարիսպք առ
հասարակ դողացեալ կործանեցան :

ՏՈՒԹ :

9 *Կործանեցին յերկիր զդրունս նր. և
խորտակեցին զնիգս նր . թագաւորք
նր՝ և իշխանք նր՝ ի մէջ հեթանոսաց.
ոչ գոյին օրէնք՝ և մարգարէք . և ոչ
էին այնք, որք տեսանէին տեսիլ՝ ի Տեառնէ :

ՒՕԴ :

10 *Իջին՝ հարթ եղեն գետնոյ. կարկեցան
ծերք դստեր սիօնի. հող արկին զգլխովք
իւրեանց . քրձազգածք եղեն . յերկիր կոր
ծանեցին զիշխանս կուսանայց երեմի :

ՎՒՖ :

ԿԱՓ:

*Պակասեցան աչք իմ յարտասուաց. 11
խռովեցաւ որովայն իմ. յերկիր լու_
ծան փառք իմ. 'ի վերայ բեկման դստեր
ժողովրդեան իմոյ. 'ի սատակել տղայ_
ոց ստնդեայց. ընդ ամենայն փողոցս
քաղաքին:

ԼԱՄԷԹ:

*'Ի մարց իւրեանց պահանջէին հաց 12
և գինի. 'ի պակասիլ՝ թափել հանել
զոգիս իւրեանց. ընկեցեալ ցրուեալ
կային 'ի մէջ քաղաքին:

ՄԷՄ:

*Զի՞նչ վկայութիւն վկայեցից քեզ. 13
կամ զի՞նչ նմանութիւն նմանեցուցից
քեզ դուստր Եմի. ո՞վ մխիթարես_
ցէ զքեզ դուստր սիոնի. զի ծանրա
ցաւ բաժակ բեկման քո՝ իսկ ո՞վ իցէ
որ բժշկեսցէ զքեզ:

ՆՈՒՆ:

*Մարգարէքն քո տեսին քեզ տե_ 14
սիլս զուր՝ տարապարտուց՝ անօգուտս.
և ոչ յայտնեցին քեզ զանիրաւութիւնս
քո. զի դարձ լիցի քեզ 'ի գերութենէ
քումմէ: այլ պատմեցին քեզ առեղ
ծուածս սնոտիս. և մերժումն 'ի տեղ
ւոջէ քումմէ:

ՍԱՄԷՔ:

*Ծափ զծափս հարին ամ անցաւորք 15
ճանապարհի. շչէին՝ շարժէին ըզ
Եզեկ. գլուխս իւրեանց 'ի վերայ դստեր սիո
նի. այս այն քաղաք է՝ ասէին. պսակ
փառաց ուրախութեն ամ երկրի:

ԱՅԻՆ:

*Բացին զբերանս իւրեանց 'ի վերայ 16
քո ամ թշնամիք քո. շչէին, կրճտէին
զատամունս իւրեանց՝ և ասէին: ե_
կա՛յք, կլցուք մեք զսա. զի այս այն օր
է՝ որում ակնունէաք. ահաւասիկ տե
սաք՝ և գտաք՝ և հասաք մեք սմա:

ՓԷ:

Ղեւ. *Արար Տէր՝ զոր խոհեցաւ. կատա_ 17
26. 16. րեաց զբանս իւր, զոր պատուիրեաց
Բ. Օրէ. յաւուրցն առաջնոց. քակեաց, և ո՛չ
28. 15. անխնայեաց. ուրախ արար 'ի վերայ քո
զթշնամիս քո. և բարձր արար զեղջիւր
նեղչաց քոց:

ՍԱԴԷ:

*Գոչեցին սիրտք նոցա առ պարիսպս 18
Երեմ. դստեր սիոնի. հոսեսցեն իբրև զհե
14. 17. ղեղ զարտասուս 'ի տուէ և 'ի գիշերի.
Ողբ. մի՛ լուեր՝ և մի՛ դադարեր՝ մի՛ տար դուլ
1. 16. արտասուաց:

ԿՈՓ:

*Արի՛ 'ի խոստովանութիւն 'ի գիշերի: 19
սկիզբն 'ի գլուխ պահոց քոց. հեղ
իբրև զջուր զսիրտ քո առաջի Տն.
համբարձ զձեռն քո վն անձանց տղայ
ոց՝ որք լուծան 'ի սովու. 'ի գլուխ ճա
նապարհաց ելից մտից քոց:

ՌԻՍ:

20 *Տես Տէր՝ և հայեաց. ո՞ւմ արարեր
այսպէս ճռաքաղ՝ եթէ կերիցեն կա_
նայք զպտուղս որովայնի իւրեանց:
արարեր ճռաքաղ. արկին 'ի ներքս ըզ պարէն
խոհակերս. զենուլ 'ի ներքս 'ի սրբու
թեան Տն զտղայս ստնդեայս. զքահա
նայն և զմարգարէն:

ՇԻՆ:

21 *Ննջեցին 'ի վերայ ելիցն ճանապար
հաց առհասարակ՝ ծերն՝ և տղայն.
կուսանքն և երիտասարդն վարեցան 'ի
գերութիւն. 'ի սուր արկեր՝ կոտորեցեր
յաւուր բարկութեան քո. զեներ՝ խո_
հակերեցեր. և ոչ անխնայեցեր:

ԹԱՒ:

22 *Կոչեցեր իբրև զօր տարեկանաց զպան պարէնս
դխտութեան իւրում շուրջ զինև. և նայ զօր
ոչոք գտանիւր յաւուր սրտմտութեն պանդխ_
բարկութեն Տն՝ զի փախչիւր. ապրեալք տութէ
մնացեալք, 'ի պահել բազմանալ թշ էնոյ
նամեաց իմոց ամենեցուն:

ԳԼ: Գ:

ԱԼԷՓ:

1 Ես այր հայեցեալ յաղքատութիւն
իմ. 'ի ձեռն գաւազանի սրտ_
2 մտութեն իւրոյ: *Ընկլոյզ զիս, և էած
'ի վերայ իմ խաւար՝ և ոչ լոյս:
3 *Բայց սակայն դարձոյց 'ի վերայ իմ
զձեռն իւր համապազ:

ԲԷԹ:

4 *Մաշեաց զմորթ և զմարմինս իմ. և
զոսկերս իմ փշրեաց առհասարակ:
5 *Շինեաց 'ի վերայ իմ. և պատեաց
6 զգլխով իմով: *Ի՞ ջանացաւ, նըս
տոյց զիս 'ի խաւարի իբրև զմեռեալ
յաւիտենից:

ԳԻՄԷԼ:

7 *Կուտեաց 'ի վերայ իմ. և ոչ կարեմ
խլրտել. ծանրացոյց 'ի վերայ իմ քան
8 զպղինձ: *Զի թէպէտ և ասացից՝ և
աղաղակեցից. փակեալ և արգելեալ
9 է առաջի իւր զաղօթս իմ: *Նարկ
զարգել ճանապարհաց իմոց. և Նեխեց
'ի խորտակել զշաւիղս իմ:

ԴԱԼԷԹ:

10 *Նա՞ եղև ինձ իբրև արջ դարանա_
կալ. և իբրև առիւծ թաքուցեալ:
11 *Նմուտ զհետ իմ. հալածեաց՝ և է_
հաս. և լքոյց զիս յապականութիւն:
12 *Նմուտ ընդ գիրկս իւր՝ և ելից զիս լարեաց
նետիւք իբրև զնպատակ:

ՀԷ:

13 *Կորեաց ընդ մէջ զերիկամունս իմ.
14 արար զիս նետալից: *Նա՞ եղէ ծաղր

ժողովրդեան իմոյ . և երգք նոցա զօր
հանապազ ։ * Գամբեաց ինձ լեղի . 15
և արբեցոյց զիս դառնութք ։

Վ Ա Ւ ։

* Խարալեց արար զատամունս իմ . և 16
ջամբեաց ինձ զմոխիր ։ * Մերժեաց 17
'ի խաղաղութէ զանձն իմ . մոռացայ
զբարիս ։ * Կորեաւ յաղթութիւն իմ . 18
և յոյս իմ 'ի Տէ ։

Զ Ա Յ Ի Ն ։

* Յիշեցի յաղքատութէ իմմէ . և 'ի 19
հալածմանց իմոց՝ դառնութիւն և բար
կութիւն ։ * Յուշ եղիցի միանգամայն . 20
ձանձրացաւ յիս անձն իմ ։ * Զայս 21
ինչ կարգեցից 'ի սրտի իմում ։ վասն
այնորիկ և համբերից նմա ։

Խ Ի Թ ։

* Ողորմութիւնք Տն անսպառք են , և 22
որոց եկեալ հասեալ է օր վախճանի.
'ի ժամանակի անիրաւութեան: *Դարձ 30
անդրէն՝ մի՛ ատեան լուծանիր. 'ի տեղ_
ւոջ յորում ծնեալդ ես՝ այդրէն յերկ
րին քում դատեցայց զքեզ: *Եւ հե_ 31
ղից 'ի վ՟ր քո զբարկութիւն իմ. հրով բար
կութեան իմոյ փչեցից 'ի քեզ. և մատնե
ցից զքեզ 'ի ձեռս արանց բարբարո_
սաց՝ որք գործեն զապականութիւն:
*Եւ եղիցիս կերակուր հրոյ. և արիւն 32
քո եղիցի 'ի մէջ երկրի քո՝ և յիշատակ
քո մի՛ գտցի. զի ես Տ՟ր խօսեցայ:

ԳԼ. ԻԲ:

Աղտ որդւոց Իսրայէլի:

Եւ եղև բան Տ՟ն առ իս՝ և ասէ: 1
*Եւ դու որդի մարդոյ. եթէ դա 2
տեսցես, դատեսջի՛ր զքաղաքս արեանց:
*Եւ խայտառակեսցես զա՟մ զանօ_ 3
րէնութիւնս ն՟ր՝ և ասասցես. այսպէս ասէ
Տ՟ր Տ՟ր Ա՟ծ ո՛ քաղաք՝ որ հեղուս զա_
րիւն 'ի միջի իւրում. 'ի հասանել ժա_
մանակի իւրոյ. և խորհի զխորհուրդս
զանձնէ՝ պղծել զանձն իւր: *Յա_ 4
րիւնս ն՟ց՝ զոր հեղեր՝ թաթաւեցար.
և 'ի խորհուրդսն՝ զոր խորհեցար՝ պղ
ծեցար. և մերձեցուցեր զաւուրս քո.
և ածեր ժամանակ ամաց քոց. վ՟ն այ_
նորիկ ետու զքեզ 'ի նախատինս ազ_
գաց. և յայպն ա՟մ աշխարհաց: *Որք 5
մօտ 'ի քեզ էին. և հեռի 'ի քէն. այ_
պանեսցեն զքեզ՝ և ասասցեն. թէ
անուանիդ 'ի պղծութիւն մատնեցար.
քանզի յաճախեցար յանօրէնութիւնս:
*Ահաւասիկ առաջնորդք տանդ Ի՟ղի, 6
իւրաքանչիւր ընդ մերձաւորս ազգի
իւրեանց խառնակէին 'ի քեզ՝ զի հեղ
ցեն զարիւն: *Զհայր՝ և զմայր անար 7
գէին 'ի քեզ. և ընդ եկին՝ և ընդ պան

զխոտին անիրաւութեամբ զնայէին 'ի քեզ.
զորբն և զայրին բռնադատէին 'ի քեզ.
8 *Զսրբութիւնս իմ արհամարհէին. և
9 զշաբաթս իմ պղծէին 'ի քեզ: *Արք
աւազակք էին 'ի միջի քում. զի հեղու_
ցուն 'ի քեզ զարիւն. և 'ի վ՟ր լերանց
զոհէին 'ի քեզ. և գործս անսուրբս
10 գործէին 'ի միջի քում: *Զամօթ հօր
յայտնէին 'ի քեզ. և պղծութեամբ զդաշ
11 տանն լլկէին 'ի քեզ: *Եւ իւրաքանչ_
իւր զկին ընկերի իւրոյ պղծէին. ‖ և Ղևտ. 5. 8.
իւրաքանչիւր զնու իւր պղծէին ա՟մ_
պարշտութեամբ. և իւրաքանչիւր զքոյր
զդուստր հօր իւրոյ լլկէին 'ի քեզ:
12 *Կաշառս առնուին 'ի միջի քում. և
ածից կատարեցից զվախճան չարեաց
քոց ըստ բռնութեան քում. քանզի մո_
13 ռացար զիս՝ ասէ Տ՟ր Տ՟ր: *Ահաւասիկ
հարից ձափ զձափի 'ի վերայ գործոցն
քոց՝ զոր արարեր. և 'ի վ՟ր արեանցն
14 գործելոց 'ի միջի քում: *Եթէ ժուժ
կալեսցէ սիրտ քո. եթէ զօրասցին ձեռք
քո. յաւուրսն յորս ես արարից ընդ
քեզ. ես Տ՟ր խօսեցայ՝ և արարից:
15 *Եւ ցրուեցից զքեզ ընդ ազգս՝ և
ցանեցից զքեզ ՟ը գաւառս. և պակա_
16 սեսցի պղծութիւն քո 'ի քէն: *Եւ ժա
ռանգեցից զքեզ յանդիման ազգացն.
17 և ծանիջիք՝ թէ ես եմ Տ՟ր: *Եւ եղև
18 բան Տ՟ն առ իս՝ և ասէ: *Որդի մար_
դոյ. ահաւադիկ եղեն ինձ տունդ Ի՟ղի
խառնակեալ՝ որպէս խառնակեալ իցէ
պղինձ, և երկաթ, և անագ, և կա_
19 պար, և արծաթ 'ի հալոցի: *Վասն
այնորիկ ասա՛, այսպէս ասէ Տ՟ր Տ՟ր. փոխա
նակ զի եղերուք ամենեքեան 'ի մի
խառնակութիւն. վասն այնորիկ ես ըն_
20 կալայց զձեզ 'ի մէջ Ե՟մի: *Որպէս ըն_
դունիցի ոք զարծաթ, և զպղինձ, զեր
կաթ, և զկապար 'ի մէջ հալոցի, փչել
'ի նա զհուր. և ձուլել. նոյնպէս ընկա
21 լայց զձեզ բարկութեամբ իմով: *Եւ
առաքեցից, և ձուլեցից զձեզ. և փչե_
ցից 'ի ձեզ հրով բարկութեան իմոյ. և
22 ձուլիջիք 'ի մէջ նորա: *Զոր օրինակ
ձուլի արծաթ 'ի մէջ բովոյ. այնպէս
ձուլիջիք 'ի միջի դորա. և ծանիջիք,
թէ ես եմ Տ՟ր. հեղի զսրտմտութիւն
23 իմ 'ի վերայ ձեր: *Եւ եղև բան Տ՟ն
24 առ իս՝ և ասէ: *Որդի մարդոյ. ասա՛
ցդա՝ դու այն երկիր ես՝ որ ոչ թանաս՝
և ոչ եկն անձրև 'ի վերայ քո յաւուր
25 բարկութեան: *Որոյ իշխանք իւր 'ի մի_
ջի իւրում իբրև զառիւծուն գոչեն:
յափշտակել յափշտակութիւս. ուտեն
զանձինս տնանկաց բռնութեամբ. և առ_
նուն պատիւս անիրաւութեամբ. և բազ
26 մացան այրիք 'ի միջի քում: *Եւ քա_
հա_

հանայքն՝ որք անարգէին զօրէնս՝ և
պղծէին զսրբութիւնս իմ. և զսուրբն՝ ՚ի
պղծոյն ոչ ընտրէին. և զարատաւորն
յանարատէ անտի ոչ զատուցանէին.
և ՚ի շաբաթուց իմոց ծածկէին զաչս
Սոփ. իւրեանց. և զշաբաթս իմ՝ պղծէին ՚ի
3.11. մէջ նոցա ։ * Իշխանք նորա ՚ի մէջ 27
Միքիա. նորա իբրև գայլք յափշտակօղք. յափշ
3. 3. տակել զյափշտակութիւն՝ հեղուլ զա_
րիւն՝ կորուսանել զանձինս. զի ագա_
հութի յոյժ ստասցին ։* Եւ մարգա_ 28
րէք նր՝ որք ծեփէին զնոսա, անկցին.
որք տեսանէին զսնոտութի. բղձանային
՚ի սնոտիս նոցա. և ասէին՝ այսպէս ասէ
ադօնայի Տր. և Տն չէր խօսեցեալ։
* Ժողովուրդ երկրին տառապեցու 29
ցանէին անիրաւութբ. և յափշտակէին
յափշտակութիւս. զաղքատն՝ և զտր_
նանկն բռնադատէին. ընդ տնանկին՝
և ըն պանդխտին իրաւամբք ոչ գնային։
*Եւ խնդրեցի ՚ի նոցանէ զայր մի՝ որ 30
ուղիղ գնայցէ. և կացցէ առաջի իմ
մտադիր ՚ի ժամանակի բարկութե՝
զի մի ջնջեցից զնոսա. և ոչ գտի։
* Եւ հեղի ՚ի վր նց զսրտմտութի իմ 31
հրով բարկութե իմոյ՝ կատարել ՚ի նս։
ըստ ճանապարհաց նոցա՝ ետու նոցա
՚ի գլուխս նոցա՝ ասէ Տր Տր։

ԳԼ։ ԻԳ.

Եւ եղև բան Տն առ իս՝ և ասէ. 1
*Որդի մարդոյ. կանայք երկու, 2
էին դստերք միոյ մօր։ * Եւ պոռնկե 3
ցան յեգիպտոս ՚ի մանկութե իւրեանց՝
անդ անկան ստինք իւրեանց. և անդ
անկան ՚ի կուսութէ։ *Անուն դստերն 4
երիցու ոոլայ. և քեռ նր ոողիբայ՝ և
եղեն ինձ՝ և ծնան ուստերս և դստերս՝
և անուանք նց. անուն շամրինի ոոլայ.
և եէմի ոողիբայ ։ * Եւ պոռնկեցաւ 5
ոոլայն յինէն. և արձակեաց զաչս իւր
զհետ հոմանեաց իւրոց յասորեստա_
նեայսն՝ որք մերձ էին առ նա։ * Զգե 6
ցեալ հիրս և կարմիրս. յիշխանսն՝ և ՚ի
զօրագլուխս. յերիտասարդս յընտ_
րեալս՝ զամենեսին ՚ի սպառազէնս ՚ի
հեծեալս յերիվարս։ *Եւ տարածեաց 7
զպոռնկութի առ հմ ընտրեալս յոր_
դիսն ասորեստանեայց. և առ ամենե_
սեան՝ զորոց չոգաւ զկնի հմ խորհր_
դովք իւրովք՝ և պղծեցաւ։ *Զպոռն 8
կութի իւր յերկրէն եգիպտացւոց ոչ
եթող. զի ընդ նոսա պղծիւր ՚ի ման_
կութէ իւրմէ. և նոքա արկին զնա ՚ի
կուսութէ՝ և հեղին ՚ի վր նր զպոռն_
կութի իւրեանց։ *Վա այնորիկ մատ 9
նեցի զնա հոմանեաց իւրոց. ՚ի ձեռս
որդւոցն ասորեստանեայց՝ զորոց զհետ

10 երթայր։ *Նոքա յայտնեցին զխայ Եզեկ.
տառակութիւն նորա. զուստերս և 16. 37.
զդստերս նր առին. և զնա սրով սպա
նին. և եղեն խօսք կանանց. և խնդրե
ցին զվրէժ ՚ի նմանէ ՚ի դստերս իւր։
11 * Եւ ետես քոյր նորա ոողիբայ. և ա_
ռաւել զանցոյց զաչարձակութի ապա
կանութե իւրոյ քան զնորայն. և զպոռն
կութի իւր քան զպոռնկութի քեռն
12 իւրոյ ։ * Զի չոգաւ զհետ որդւոցն
ասորեստանեայց. իշխանաց՝ և զօրա_
վարաց՝ որք մերձ էին առ նա. զգեցե
լոց հանդերձս ծիրանիս ազնուականս.
սպառազինաց հեծելոց յերիվարս. երի
տասարդաց ընտրելոց ամենեցունց։
13 *Եւ տեսի՝ զի պղծեցան. և մի ճանա_
14 պարհ էր երկոցունց ։ * Եւ յաւել ՚ի
պոռնկութիւս իւր. և ետես արս նկա_
րեալս յորմն. պատկերս քաղդէացւոց՝
15 նկարեալ գրչաւ ՚ի նկարու ։* Ածեալ
պէսպէս կամարս ընդ մէջ իւրեանց.
և խոյրս ներկեալս ՚ի գլուխս իւրեանց.
և երփն երփն հարկանէր յամենեցունց
՚ի նմանութի որդւոցն բաբելացւոց՝
յերկրին քաղդէացւոց՝ յաշխարհին
16 իւրեանց։ * Եւ ակն եդ նց հայեցուա
ծօք աչաց իւրեանց. և առաքեաց հրեշ
տակս առ նոսա յերկիրն քաղդէացւոց։
17 *Եւ եկին առ նա որդիքն բաբելաց_
ւոց յանկողինս օթի՝ և պղծեցին զնա
՚ի պոռնկութե իւրում. և պղծեցաւ ըն
նս՝ և յափրացաւ անձն նր ՚ի նոցանէ։
18 *Եւ յայտնեաց զպոռնկութի իւր. և
առակեաց զամօթ իւր. և մեկնեցաւ
անձն իմ ՚ի նմանէ. որպէս և մեկնե_
19 ցաւ ՚ի քեռէ նորա։ *Եւ յաճախեցեր
զպոռնկութի քո՝ յիշեցուցանել զաւ_
ուրս մանկութե քոյ. յորս պոռնկէիրն
20 յեգիպտոս։ *Եւ արձակեցեր զաչս քո
առ քաղդէացիսն՝ յիշանդամն՝ և ՚ի
21 ձիանդամն։ * Եւ այց արարեր անօ_
րէնութե մանկութե քոյ՝ զոր գոր_
ծէիրն յերկրին եգիպտացւոց յօթե_
վանս քո. ուր անկան ստինք քո. և
22 լուծաւ կուսութի քո ։*Վա այդորիկ
ոողիբա՝ այսպէս ասէ Տր Տր. ահաւա_
դիկ ես յարուցից ՚ի վերայ քո զհոմա_
նիսն՝ յորոց յափրացաւ անձն քո. և
23 ածից, պատեցից զնոսա զքև ։ * Եւ
զորդիսն բաբելացւոց. և զամ քաղ_
դէացիս՝ զփակուդ՝ և զսուէ. և զկուէ.
և զամ որդիսն ասորեստանեայց ընդ
նոսա. զերիտասարդս ընտիրս. զիշ_
խանսն՝ զզօրավարսն՝ զսպառազէնս զա_
24 նուանիս՝ զհեծեալս յերիվարս։ *Ամե
նեքեան եկեսցեն ՚ի վր քո ՚ի հիւսիսոյ
կառք և անիւք ազգաց բազմութեան.
սաղաւարտաւորք և վահանաւորք՝ և

արկցեն շուրջ զքեւ պաշ․ և տաց առա
ջի երեսաց նց դատաստանս՝ և խնդ_
րեսցեն ՚ի քէն վրէժս դատաստանօք
իւրեանց։* Եւ տաց զնախանձ իմ ՚ի 25
քեզ․ և արասցեն ընդ քեզ ըստ բար_
կութե սրտմտութե իմոյ՝ և զունչս և
զականջս քո կտրեսցեն․ և զմնացորդս
քո հրով սատակեսցեն։* Եւ մերկաս 26
ցեն ՚ի քէն զհանդերձս քո․ և առցեն
զզարդ պարծանաց քոց։* Եւ դարձու 27
ցից զամբարշտութիւս քո ՚ի քէն․ և
զպոռնկութիւս քո յերկրէն եգիպտաց
ւոց․ և ոչ ամբառնայցես զաչս ՚ի նա․
և ոչ ևս յիշեսցես զեգիպտոս։* Զի 28
այդորիկ այսպէս ասէ Տր Տր՝ ահաւա
դիկ ես մատնեցից զքեզ ՚ի ձեռս ատե
լեաց քոց․ յորոց յափրացաւ անձն քո
՚ի նոցանէն։* Եւ գնասցեն ընդ քեզ 29
ատելութբ․ և առցեն զամ վաստակս
քո՝ և զերկս քո․ և եղիցիս մերկ՝ և
խայտառակեալ․ և յայտնեսցի ամօթ
պոռնկութե քոյ՝ ամբարշտութիւն քո
և պոռնկութիւն։* Արարին քեզ զայդ 30
՚ի պոռնկիլն քում զհետ ազգաց՝ ուր
պղծեիր ՚ի խորհուրդս նց։* Ճանա 31
պարհ քեռ քո գնացեր․ և տաց զբա_
ժակ նորա ՚ի ձեռս քո։* Այսպէս ասէ 32
Տր Տր՝ զբաժակն քեռ քո արբցես՝
զխորն՝ և զլայն․ և եղիցիս ՚ի ծաղր՝ և
՚ի կատականս յաճախել և կատարել
զարբեցութի։* Եւ լցցիս լքմամբ․ 33
զբաժակն ապականութե․ զբաժակն
քեռ քո Շամրնի։* Արբցես՝ և քամես 34
ցես՝ և զհերս քո խզեսցես․ և զտինս
քո կոծեսցես․ և զտօնս քո․ և զամսա_
գլուխս դարձուցից ՚ի քէն․ զի ես խօ_
սեցայ՝ ասէ ադոնայի Տր։* Զի այդո 35
րիկ այսպէս ասէ ադոնայի Տր․ փոխանակ
զի մոռացար զիս՝ և ընկեցեր զիս զկնի
մարմնոյ քոյ․ և դու ընկալար զամբարշ
տութիւնդ քո․ և զպոռնկութիւս քո։
* Եւ ասէ ցիս Տր՝ որդի մարդոյ․ եթէ 36
դատիցես զոողայն և զոողիբայն․ և
պատմեսցես նց զանօրէնութիւս իւրց։
* Զի շնացան՝ և արիւնէ ՚ի ձեռս նց․ 37
խորհուրդս նոցա շնային՝ և զորդիսն
իւրեանց՝ զորս ինձ ծնան՝ ածէին զբո_
ցով։* Մինչ այնչափ արարին և ինձ․ 38
զի զսրբութիւնս իմ պղծէին ՚ի նմին
աւուր․ և զշաբաթս իմ ապականէին։
* Ի զոհել նց զորդիսն իւրեանց կռոցն 39
իւրեանց՝ և մտանէին ՚ի նմին աւուր ՚ի
սրբութիւնս իմ․ և պղծէին զնոսա․ և
այսպէս առնէին ՚ի մէջ տան իմոյ։
* Զի և արանց եկելոց ՚ի հեռաստա_ 40
նէ, առ որ հրեշտակս արձակէին․ իսկ
իբրև գային, ՚ի բաղանիս մտանէիր․ ՚ի
ծարիր և ՚ի սնգոյր շպարէիր․ և զար

41 դարեիր զարդու։* Եւ նստէիր ՚ի գա
հոյս զարդարեալս․ և սեղան յօրինեալ
դնէիր առաջի քո․ և զխունկս իմ․ և
զիւղս առնուիր՝ և ուրախ լինէիր ընդ
42 նոսա։* Եւ ձայնս արուեստականաց
նուագէին․ և առ այն արամբք, այլև
բազմութի արանց գինեմոլաց եկելոց յա
նապատէ՝ տային ապարանջանս ՚ի ձեռս
նոցա․ և պսակ պարծանաց ՚ի գլուխս
43 նոցա։* Եւ ասացի՝ թէ մի շնասցի
ընդ նոսա զգործ պոռնկութե․ և նա
44 պոռնկիւր։* Եւ մտանէին առ նա՝
ոմ մտանիցեն առ կին պոռնիկ․ նոյնպ
մտանէին առ ոողայ՝ և առ ոողիբայն՝
45 գործել զանօրէնութի։* Եւ արք ար
դարք էին նոքա․ և խնդրեսցեն վրէժս
՚ի նոցանէ։ վրէժ շնացելոց՝ և զվրէժ
արեան․ զի շնացողք էին․ և արիւն ՚ի
46 ձեռս նց։* Զի այսպէս ասէ Տր Տր․
ած ՚ի վերայ նոցա զօր․ և տուր զնոքօք
զխռովութի՝ և զյափշտակութի։
47 * Եւ քարաձիգ լեր ՚ի նոսա քարամբք
զօրաց․ և խոցոտեա զնոսա սրովք նց․
ուստերք նոցա՝ և դստերք կոտորես_
ցին։ և զտունս նոցա հրձիգ արասցեն։
48 * Եւ դարձուցից զամպարշտութիս
յերկրէ․ և խրատեսցին ամենայն կա
նայք․ և մի ևս արասցեն ըստ ամպարշ
49 տութե նց։* Եւ տացի ամպարշտու_
թի ձեր ՚ի վերայ ձեր․ և ըստ մեղաց
խորհրդոց ձերոց սգասջիք․ և ծանի_
ջիք, թէ ես եմ Տր Տր։

ԳԼ։ ԻԴ։

1 Եւ եղև բան Տն առ իս՝ յամին իննե
րորդի յամսեանն տասներորդի
2 որ օր տասն էր ամսոյն։* Եւ ասէ՝
որդի մարդոյ՝ գրեա դու քեզ զնշա_
նաւորն․ յօրէ յորմէ հետէ եհաս ար_
քայն բաբիլացւոց ՚ի վերայ եՐմի։
3 * Յօրէ յայնմանէ առակեսցես տանն
դառնացողի զառակս զայս, և ասաս_
ցես․ այսպ ասէ Տր Տր․ կառո զկաթ_
սայդ․ կառո, և արկցես ՚ի դա զջուր։
4 * Եւ դիցես ՚ի դմա զանդամաթիւդ
զամ յօշոտած գեղեցիկ՝ զազդր՝ և զթե_
5 րի քանցեալ յոսկերաց։* Ընտրեալ յըն
տիր ընտիրյանասնոց․ և զոսկերսն ՚ի
ներքոյ կաթսայիս այրեսջիք․ եռաց
զեռալ՝ քաջ եռաց․ եփեցան ոսկերքն
6 ՚ի միջի նորա։* Զի այնորիկ այսպէս
ասէ ադոնայի Տր․ ով քաղաք արեանց․
կատսայ լի ժանգով․ և ժանգն ՚ի նմա_
նէ ոչ պարզեցաւ․ անդամ անդամ է_
հան ՚ի նմանէ․ և վիճակ ոչ անկաւ ՚ի
7 վերայ նորա։* Զի արիւն նր ՚ի մէջ
նորա է․ ՚ի սալաքարի վերայ եդի զնա․
և ոչ հեղի զնա յերկիր՝ ծածկել հողով։

*Մինչև

8 * Մինչև ելցէ սրտմտութիւն իմ 'ի
վրէժխնդրութի. պահանջել զվրէժս.
և ետու արիւն նր 'ի վր սալաքարին,
9 զի մի ծածկեսցի: * Վասն այդորիկ այս
պէս ասէ ադոնայի Տր Վայ քաղաք
արեանց: և ես զփայտն յաճախեցից:
10 * Զխանձողն բազմացուցից. հուր բոր
բոքեցից. զի միսն հալեսցի. և արգա
նակն նուաղեսցի. և ոսկերքն փշրես_
11 ցին: * Եւ կայցէ 'ի վր կայծականց
իւրոց. բորբոքեսցի, զի վառեսցի.
ջեռցի, և պղինձ նր հալեսցի. և 'ի մի_
ջի նորա պղծութի նր. և պակասեսցի
12 ժանգ նորա: * Նուաղեսցի ժանգ նր
և մի ելցէ 'ի միջոյ նր բազում ժանգ
նորա. և յամօթ լիցի ժանգ նր պղծու
13 թե արգանակին: * Փոխանակ զի պղ
ծէիր դու. և ոչ սրբեսցիս 'ի պղծու_
թէ քումմէ. և զի՞նչ իցէ եթէ ոչ սր_
բիցի տակաւին. մինչև կատարեցից
14 զսրտմտութի իմ 'ի նմա: * Ես Տր խօ_
սեցայ և եկեսցէ, և արարից, և ոչ
խորշեցայց, և ոչ ողորմեցայց: և ոչ մխի
թարեցայց. այլ ըստ ճանապարհաց
քոց և ըստ գնացից քոց դատեցից զքեզ
ասէ ադոնայի Տր: (Վասն այդորիկ ես
դատեցից զքեզ ըստ արեանց քոց. և
ըստ խորհրդոց քոց դատեցից զքեզ.
պիղծ և անուանարկ. որ յաճախեցեր
15 'ի դառնութիս:) * Եւ եղև բան Տն
16 առ իս և ասէ: * Որդի մարդոյ. ահա
ւադիկ ես բառնամ 'ի քէն զցանկալիս
աչաց քոց պատերազմաւ. և ոչ կոծես
ցիս. և ոչ լայցես. և ոչ ելցէ արտօսր
17 'ի քէն: * Զի հեծութի արեան միջոյ
և սգոյ է. և ոչ հիւսցին գէսք քո. կօ_
շիկք քո այդրէն յոտս քո. և մի մխիթա
րեսցիս 'ի շրթանց նց և զհաց արանց
18 մի կերիցես: * Եւ խօսեցայ ընդ ժո_
ղովրդեանն ընդ առաւօտս. որպ հրա_
մայեաց ինձ Տր: և մեռաւ կինն իմ
յերեկորեայ. և արարի ը առաւօտն
19 որպ հրամայեցաւ ինձ: * Եւ ասէ ցիս
ժողովուրդն. ոչ պատմես մեզ՝ զինչ
20 է այդ զոր գործեսդ: * Եւ ասեմ ցնս
21 բան Տն եղև առ իս և ասէ: * Ասա
ցտունն Իղի. այսպէս ասէ Տէր Տր.
ահաւասիկ ես պղծեցի զսրբութիւն իմ.
զհպարտութի զօրութե ձերոյ: զցան
կալիս աչաց ձերոց՝ և յորս խնայէին ան
ձինք ձեր. ուստերք ձեր՝ և դստերք
ձեր. որք 'ի ձէնջ մնացեալ էին, 'ի սուր
22 անկցին: * Եւ արասջիք սոյնպէս՝ որպ
ես արարի. 'ի բերանոց նց մի մխիթա
րեսջիք. և զհաց արանց ոչ ուտիցէք:
23 * Եւ վարսք ձեր 'ի վր գլխոց ձերոց.
և կօշիկք ձեր յոտս ձեր. ոչ կոծիցէք.
և ոչ լայցէք. և հաշեսջիք յանիրաւու
ձէ 2

թիս ձեր: և ոչ մխիթարեսցէ իւրա_
24 քանչիւրոք զեղբայր իւր: * Եւ եղիցի
ձեզ Եզեկիէլ 'ի նշան. ըստ ամի զոր
արար, առնիցէք. յորժամ հասանիցէ
այդ. և ծանիջիք, թէ ես եմ ադոնայի
25 Տր: * Եւ դու որդի մարդոյ՝ ոչ ապա_
քէն յաւուր յայնմիկ յորժամ բարձից
'ի նոցանէ զզօրութի նց. և զհպար_
տութի պարծանաց նոցա. և զցանկա
լիս աչաց նց. և զհպարտութի անձանց
նոցա: զուստերս՝ և զդստերս նոցա:
26 * Յաւուր յայնմիկ գայցէ ապրեալն
առ քեզ՝ տալ գոյժ յականջս քո:
27 * Յաւուր յայնմիկ բացցի բերան քո
առ ապրեալն. խօսեսցիս, և մի ևս համ
րասցիս. և եղիցիս նոցա 'ի նշան. և
ծանիցես՝ թէ ես եմ Տր:

Գլ: ԻԵ:

'Ի վերայ որդւոցն ամոնայ:

1 Եւ եղև բան Տն առ իս՝ և ասէ:
2 * Որդի մարդոյ՝ հաստատեա զե
րեսս քո 'ի վր որդւոցն ամոնայ. մար_
3 գարեա 'ի վր նոցա: * Եւ ասասցես
ցորդիսն ամոնայ. լուարուք զպատգամ
ադոնայի Տն: այսպէս ասէ ադոնայի
Տր. փոխանակ զի ոտնհար եղէք 'ի վր
սրբութեց իմոց՝ որք պղծեցան. և 'ի
վր երկրին Իղի՝ որ ապականեցաւ. և
'ի վերայ տանն յուդայ՝ որ գնաց 'ի գե
4 րութի: * Վս այնորիկ ահաւադիկ
ես մատնեմ զձեզ որդւոցն կեդամայ արևե_
'ի ժառանգութի: և բնակեսցին մե_ լեայց
ղաւորք իւրեանց 'ի քեզ. և կանգնես_
ցեն զխորանս իւրեանց 'ի քեզ: նոքա
կերիցեն զպտուղ քո. նոքա արբցեն
5 զպարարտութի քո: * Եւ տաց զքա_
ղաքն ամոնացւոց յարօտս ուղտուց. և
զորդիսն ամոնայ յարօտս հօտից. և
6 ծանիջիք, թէ ես եմ Տր: * Զի այս_
պէս ասէ Տր Տր. փոխանակ զի կայ_
թեցեր դու ձեռամբ քով. և դոփեցեր
ոտամբ քով. և ուրախ եղեր անձամբ
7 քով 'ի վր երկրին Իղի: * Վս այնո_
րիկ ահաւասիկ ես ձգեցից զձեռն իմ
'ի վերայ քո. և տաց զքեզ 'ի յափշտա_
կութի ազգաց. և սատակեցից զքեզ
'ի ժողովրդոց. և կորուսից զքեզ 'ի
գաւառաց կորստեամբ. և ծանիցես,
8 թէ ես եմ Տր: 'Ի վերայ մովաբայ: * Այս
պէս ասէ ադոնայի Տր. փոխանակ զի
ասացին մովաբ՝ և սէիր: Ահա որպ
ամ ազգք են. նոյնպ և տունն Իղի
9 և յուդայ: * Վս այդորիկ ահաւասիկ
ես քակեցից զթիկունս մովաբայ 'ի
բարձրաւանդակաց պարսպաց քաղա
քացն իւրոց. զընտիր ընտիր երկրին՝

զտունն բեթայ և զասխունթայ . ՚ի վե
րոյ քան զաղբիւր քաղաքին առ ծովե
զերբն ։ * Որդւոցն կեդեմայ ՚ի վերայ 10
որդւոցն ամոնայ՝ ետու նմա ՚ի ժառան
գութիւն . զի մի եղիցի յիշատակ որդ-
ւոցն ամոնայ ՚ի մէջ ազգաց ։ * Եւ ՚ի 11
մովաբայ վրէժխնդրեցից . և ծանի-
ցեն, թէ ես եմ Տր ։ ՚Ի վերայ եդովմայ ։
* Այսպէս ասէ ադոնայի Տր . փոխա- 12
նակ զի խնդրեաց վրէժ եդոմ ՚ի տա-
նէն յուդայ ։ և ոխակալք եղեն՝ և պա
հանջեցին վրէժս ։ * Վն այնորիկ այս 13
պէս ասէ ադոնայի Տր . ձգեցից զձեռն
իմ ՚ի վերայ եդոմայ . և սատակեցից ՚ի
նմանէ զմարդ և զանասուն . և եդից
զնա յանապատ . և հալածեալք ՚ի թե
մանայ անկցին ՚ի սուր ։ * Եւ խնդրե 14
ցից զվրէժ յեդոմայ ՚ի ձեռն ժողովր-
դեան իմոյ իՂի . և արասցեն ընդ եդո
մայ ըստ բարկութե սրտմտութեան
իմոյ . և ծանիցեն զվրէժխնդրութի
ասէ ադոնայի Տր ։ ՚Ի վերայ փղշտացւոց ։
* Վն այդորիկ այսպէս ասէ ադոնայի 15
Տր . փոխանակ զի ոխակալք եղեն այլ-
ազգիքն . և յարուցին վրէժխնդրութի
սրտի մտօք . ոտնհարութի սատակել
մինչև յաւիտեան ։ * Վն այնորիկ այս 16
պէս ասէ ադոնայի Տր . ահաւասիկ ես
ձգեցից զձեռն իմ ՚ի վր այլազգեացդ՝
և սատակեցից զկրետացիս . և կորու-
սից զմնացորդս ծովեզերայդ ։ * Եւ 17
խնդրեցից ՚ի նոցանէ զվրէժս մեծա-
մեծս կշտամբութբ՝ և բարկութբ . և
ծանիցեն , թէ ես եմ ադոնայի Տէր .
՚ի պահանջել զվրէժխնդրութիս իմ
՚ի նոցանէ ։

արևե-լեայց

ԳԼ : ԻԵ :

՚Ի վերայ ծուրայ ։

Եւ եղև յամին մետասաներորդի . 1
որ օր մի էր ամսոյն . եղև բան Տն
առ իս՝ և ասէ ։ * Որդի մարդոյ՝ փոխա 2
նակ զի ոտնհար եղև ծուր ՚ի վերայ
եՂմի . և ասէ՝ վաշ՝ վաշ՝ զի բեկաւ՝ կո
րեաւ . առ իս դարձցին ազգք . որով-
հետև լին աւերեալ ։ * Վն այնորիկ 3
այսպէս ասէ ադոնայի Տր . ահաւա-
սիկ ես ՚ի վր քո ծուր . և հանից ՚ի վր
քո ազգս բազումս . որպ ելանիցէ ծով
ալեօք իւրովք ։ * Եւ կործանեսցեն 4
զպարիսպն ծուրայ . և կործանեսցեն
զաշտարակն նր . և հոսեցից զհող նր
՚ի նմանէ . և արարից զնա յապառաժ ։
* Եւ ձգանք ուռկանաց եղիցին ՚ի մէջ 5
ծովուն . զի ես խօսեցայ՝ ասէ Տր Տր .
և եղիցի յաւար ազգաց ։ * Եւ դստերք 6
նր ՚ի դաշտի սպանցին . և ծանիցեն ,
7 զի ես եմ Տր ։ * Զի այսպէս ասէ ա-
դոնայի Տր . ահաւասիկ ես ածից ՚ի
վր քո ծուր զնաբուգոդոնոսոր արքայ
բաբելացւոց ՚ի հիւսիսոյ . որ է արքայ
արքայից ։ կառօք՝ և երիվարօք . գուն-
դագունդ հեծելովք ազգաց բազմաց
8 յոյժ ։ * Նա զդստերս քո ՚ի դաշտին
սրով կոտորեսցէ . և զքեզ շուրջ պաշ
դիցէ . և փոս փորիցէ . և պատնէշ կանգ
9 նեսցէ . և ամրութի զինուց ։ * Եւ
զդեղարդունս իւր յանդիմանս քո կանգ
նեսցէ ։ և զպարիսպս քո՝ և զաշտա-
րակս քո կործանեսցէ սրով իւրով ։
10 * Եւ ՚ի բազմութէ հեծելոց նր ծած
կեսցէ զքեզ փոշի նց . ՚ի ձայնէ հեծե
լոց՝ և յանուոց կառաց նր շարժեսցին
պարիսպք քո , ՚ի մտանել նր ՚ի դրունս
քո . որպէս որ մտանիցէ ՚ի դաշտ ՚ի
11 քաղաք ։ * Սմբակօք երիվարաց իւր-
եանց կոխեսցեն զհրապարակս քո . և
զաղգդ քո սրով կոտորեսցէ ։ և զհաս-
տատութի զօրութե քոյ յերկիր կոր-
12 ծանեսցէ ։ * Եւ աւար առցէ զզօրու-
թիս քո . և կողոպտեսցէ զինչս քո . և
կործանեսցէ զպարիսպս քո . և զցան-
կալի ապարանս քո տապալեսցէ . և
զքարինս և զփայտ և զհողն ՚ի ծով
13 ամասցէ ։ * Եւ քակեսցէ զբազմու Երեմ.
արուեստականաց քոց՝ և ձայն երգոց 7.34.
14 քոց մի ևս լուիցի ՚ի քեզ ։ * Եւ արա-
րից զքեզ յապառաժ . և եղիցիս ՚ի
ձգանս ուռկանաց . և մի ևս շինեսցիս .
զի ես խօսեցայ՝ ասէ ադոնայի Տր ։
15 * Զի այսպէս ասէ Տր Տր ծուր ։ ոչ
ապաքէն ՚ի ձայնէ կործանման քոյ ՚ի
հեծելոյ վիրաւորաց քոց՝ ՚ի մեռանե-
լոյ սրոյ ՚ի միջի քում շարժեսցին կղզ
16 զիք քո ։ * Եւ իջցեն յաթոռոց իւր-
եանց ամ իշխանք ազգաց ծովուդ .
և մերացուսցեն զխոյրս իւրեանց ՚ի
գլխոյ իւրց . և զպէսպէս հանդերձս
իւրեանց մերկասցին . տագնապելով
տագնապեսցին . յերկիր կործանես-
ցին . և զարհուրեսցին ՚ի կորստեան իւր
եանց . և յողւոց հանցեն ՚ի վերայ քո ։
17 * Ողբս առցեն ՚ի վր քո՝ և ասասցեն .
զիարդ կորեար՝ քակտեցար . ՚ի մէջ ծո
վուդ քաղաքդ հռչակաւոր ։ որ եղեր զօ
րացեալ ՚ի մէջ ծովուն՝ դու և բնակիչք
քո . որ զարհուրեցուցանէիր զամ բնա
18 կիչս քո ։ * Եւ երկիցեն կղզիք յաւուրէ
կործանման քոյ ։ և խռովեսցին կղզիք
19 ծովուդ ՚ի քերբերլոյն քումմէ ։ * Զի
այսպէս ասէ Տէր Տէր . յորժամ տաց
զքեզ քաղաքդ աւերակ . իբրև զքա-
ղաքս՝ որք բնաւ չիցեն բնակեալք . ՚ի
հանել ինձ ՚ի վերայ քո զանդունդս .
ծածկեսցեն զքեզ ջուրք բազումք ։
* Եւ

* Եւ իջուցից զքեզ առ իջեալսն ՚ի 20
խորխորատ . առ ժողովն յաւիտենից .
և բնակեցուցից զքեզ ՚ի խորս երկրի
իբրև զաւերակն յաւիտենից ընդ ի_
ջեալսն յաւիտենից ՚ի խորխորատն . զի
մի ևս բնակեսցիս , և մի կանգնեսցիս
յերկիր կենաց : *՚Ի կորուստ մատնե 21
ցից զքեզ՝ և ոչ ևս իցես . խնդրեսցիս ,
և ոչ գտցիս յաւիտեան :

ԳԼ. ԻԷ.

Ողբ ՚ի վերայ Ծուրայ :

Եւ եղև բան Տն առ իս՝ և ասէ : 1
*Որդի մարդոյ՝ ողբս առ ՚ի վերայ 2
Ծուրայ : *Եւ ասասցես ցԾուր . որ բնա 3
կեալդ ես ՚ի մուտս ծովուդ . վաճա_
ռաշահ ազգաց՝ ՚ի կղզեաց բազմաց :
այսպէս ասէ Տր Տր ցԾուր . դու ասէ_
իր՝ ես զարդարեցի զիս ՚ի զարդ գեղոյ
իմոյ : *՚Ի սիրտ ծովու բէեղիմայ՝ որ_ 4
դիքն քո զարդարեցին զքեզ : *Մայրք 5
՚ի սանայիր լեռնէ շինեցան քեզ՝ պա_
հանգք և տախտակք . և նոճիք ՚ի լի_
բանանէ առան . առնել քեզ կայմս
եղևնափայտեայս : *՚Ի բասանէ արա 6
րին զղեկս նաւաց քոց . և զմեհեանս
քո շինեցին ՚ի փղոսկրէից : ապարանս
անտառախիտս ՚ի կղզեացն քետիմաց
ւոց : *Բեհեզ ընդ դիպակի գործե_ 7
ցաւ քեզ . պատառս յեգիպտոսէ ար
կանէլիք քեզ ՚ի փառս : և համդերձ
ծիրանի՝ և կապուտակ ՚ի կղզեացն յե_
ղիմացւոց եղեն ՚ի զարդ պաճուճանաց
քոց : *Եւ իշխանք քո բնակիչք սիդո_ 8
նացւոց . եղեն արտադացիք նաւավարք
քո . և իմաստունք քո Ծուր՝ որք էին ՚ի
քեզ՝ նոքա եղեն քեզ նաւապետք :
*Եւ ծերքն մատենադէտք . և իմաս_ 9
տունք նոցա որք էին ՚ի քեզ . նոքա զօրա_
ցուցանէին զխորհուրդս քո . և ամ
նաւք ծովու . և նաւավարք նոցա եղեն
քեզ երթալ յարևմուտս արևմտից :
*Լիդացիք՝ և լիբէացիք թիկունք զօ 10
րութե քոյ՝ արք ընտիրք պատերազ_
մողք՝ որք կախեցին զվահանս՝ և զսա_
ղաւարտս իւրեանց ՚ի քեզ . և նոքա փա
ռաւորեցին զքեզ : *Որդիքն արադաց_ 11
ւոց . զօրութիւնքն իւրեանց զպարսպօքն
քովք պատեալ կային՝ և պահէին զաշ
տարակս քո . զկապարճս իւրեանց կա
խեցին շուրջանակի ՚ի պարիսպս քո . և
նոքա իսկ բովանդակեցին զգեղեց_
կութի քո : *Կարկեդոնացիք վաճա_ 12
ռականք քո . ՚ի բազմութէ զօրութե
քոյ՝ զարծաթ՝ և զոսկի՝ և զպղինձ՝ և
զերկաթ՝ զանագ՝ և զկապար ետուն
՚ի վաճառս քո : * Յոյնք՝ և ամ որք 13
շուրջ զնովաւ էին մարդավաճառք
քո : և անօթս պղնձիս ետուն ՚ի վա_
14 ճառս քո : * Եւ ՚ի տանէ Թորգոմայ
ձիով և հեծելովք և ջորւովք լցին ըզ
15 վաճառս քո : * Որդիք հռոմայեցւոց
վաճառականք քո՝ յաճախեցին ՚ի կըղ_
զեաց զվաճառս քո . ժանեօք փղոսկրէ
իւք . և երթևեկացն մարդիկ տային
16 գինս : * Վաճառք քո բազմացեալք
յաղխամաղխէ քումմէ յափեկայ ստաշ_
խըն . և երփներփն նարօտուց ՚ի թարշ_
շոյ . և հաւմօթ՝ և կորքոդ լցին զվա_
17 ճառս քո : *Հրէաստան և որդիքն Իէլի՝
վաճառականք քո ցորենով՝ և խնկօք՝
և կասեաւ՝ և ընտիր ընտիր մեղու . և
իւղով՝ և ռետամբ լցին զաղխամաղխս
18 վաճառաց քոց : * Դամասկոս վաճա
ռականք քո . ՚ի բազում աղխէ՝ և ՚ի բա
զում զօրութէ քումմէ : գինի ՚ի քեղ_
19 բոնայ՝ և ասր ՚ի միլիտոյ : * Դան՝ և
յաւան ՚ի մեօզենայ բերէին քեզ գինի
՚ի վաճառս քո : յասեղայ՝ երկաթ գոր
ծեալ անիւս պատեալս ՚ի վաճառս քո :
20 *Դեդանացիք վաճառականք քո՝ ա_
ծէին կառս ընտիրս ջորեօք համդերձ :
21 *Արաբացիք՝ և ամ իշխանք կեդարու .
և նոքա վաճառականք ընդ ձեռամբ
22 քով : * Սաբայ և հռեգմայ . և նոքա
վաճառականք քո . իւղս անուշունս .
և ակունս պատուականս . և զոսկի ե_
23 տուն ՚ի վաճառս քո : * Խառան՝ և քա
նան՝ և դեդան՝ և նոքա վաճառականք
քո : սաբայ . և ասուր՝ և քաղման վա_
24 ճառականք քո : * Որք բերէին քեզ վա
ճառս ընդ մաքիլմ : և ընդ գաղիմ
հիր՝ և կարմիր՝ և կապուտակ . և երփն_
երփն նարօտս . և գանձս ընտիրս
25 վանդակեալս չուանօք : * ՚Ի նաւս նո_
ձիս . որով էր վաճառն քո : նաւք ՚ի
բազմութէ վաճառաց քոց . և յաճա_
խութէ աղխամաղխի քոյ . լցար՝ ծան
րացար յոյժ ՚ի սիրտ ծովու :
26 *՚Ի ջուրս բազումս վարեցին զքեզ նա
ւավարք քո . հողմ հարաւոյ խորտա_
27 կեաց զքեզ ՚ի սիրտ ծովու : * Եւ զօ_
րութիւն քո . և վարձ քո . և խառնաղան
ջից քոց : և նաւավարք քո . և նաւա_
պետք քո , և խորհրդականք քո . և խառ
նաղանջք քո ՚ի խառնաղանջից քոց . և
ամ արք պատերազմողք քո՝ որք ՚ի քեզ .
և ամ ժողովք որք ՚ի մէջի քում , անկ
ցին ՚ի սիրտ ծովու՝ յաւուր կործա_
28 ման քոյ : * ՚Ի ձայնէ բարբառոյ քոյ
նաւավարք քո երկիւղիւ զարհուրես_
29 ցին : * Եւ իջցեն ՚ի նաւաց իւրեանց
ամ նաւավարք քո՝ և նաւամուտք քո .
առաջապահք նաւաց յափին ծովու
30 կացցեն : * Եւ աղաղակեսցեն ՚ի վն
քո .

քո . և փոխեսցեն զձայնս իւրեանց .
գուժեսցեն դառնապէս՝ հող ՚ի գլուխս
լիցին։ * Ընդ մոխիր թաւալեսցին . 31
գերծցեն զգլուխս ՚ի կնտութիւն . և
քրձազգածք լիցին . և լասցեն ՚ի վ՟ր
քո դառնացեալ սրտիւք։ * Կոծ դառ 32
նութ՟ե առցեն որդիք ն՟ց . ՚ի վ՟ր քո
ողբս առցեն՝ և ողբասցեն . ո՛վ էր իբրև
զծուր՝ որ լռեաց՝ և դադարեաց ՚ի մէջ
ծովուն։ * Որչափ ինչ գտեր քեզ վարձս 33
՚ի ծովէ անտի . լցուցեր զազգս ՚ի բազ
մութ՟է քումմէ՝ և յաղխամաղխէ վա_
ճառաց քոց . մեծացուցեր զա՟մ թա_
գաւորս երկրի։ * Արդ՝ բեկար ՚ի ծո_ 34
վուդ, ՚ի խորս ջուրց վաճառք քո . և
ա՟մ ժողովք քո ՚ի միջի քում, անկան
ա՟մ նաւավարք քո ։ * Ա՟մ բնակիչք 35
կղզեաց տրտմեցան ՚ի վ՟ր քո . և թա_
գաւորք նոցա զարհուրելով զարհու_
րեցան՝ և հեղին զարտասուս զերեսօք
իւրեանց ՚ի վ՟ր քո ։ * Վաճառականք 36
ազգաց շչեցին ՚ի վ՟ր քո . ՚ի կորուստ
մատնեցար՝ և այլ ո՛չ ես իցես յաւի_
տեան՝ ասէ Տ՟ր Ա՟Ծ։

ԳԼ. ԻԸ.

՚Ի վերայ իշխանին ծուրայ։

Եւ եղև բան Տ՟ն առ իս՝ և ասէ։ 1
* Եւ դու որդի մարդոյ՝ ասա՛ ցիշ 2
խանդ ծուրայ։ այսպէս ասէ Տ՟ր Տ՟ր .
փոխանակ զի հպարտացաւ սիրտ քո .
և ասացեր՝ թէ Ա՟Ծ եմ ես . և ՚ի բնա
կութ՟ե Ա՟Յ բնակեցայ ՚ի սիրտ ծովու .
մարդ ես դու՝ և չես Ա՟Ծ . և ետուր
զսիրտ քո իբրև զսիրտ Ա՟Յ։ * Միթէ 3
իմաստնագո՞յն իցես քան զդանիէլ .
կա՞մ իմաստունք խրատեցին զքեզ հան
ճարովք իւրեանց։ * Միթէ իմաստու 4
թ՟բ քով կամ խորհրդով արարեր դու
քեզ զզօրութ՟ի։ և ստացար զոսկի և
զարծաթ ՚ի գանձս քո։ * Կամ բազ_ 5
մութ՟բ իմաստութեան քոյ և վաճա_
ռաց յաճախեցեր զզօրութ՟ի քո . և
բարձրացաւ սիրտ քո զօրութ՟բն քով։
* Վ՟ն այսորիկ այսպէս ասէ Տ՟ր Տէր . 6
վ՟ն զի ետուր զսիրտ քո իբրև զսիրտ
Ա՟Յ ։ * Փոխանակ այնորիկ ահաւա_ 7
սիկ ես ածից ՚ի վ՟ր քո օտարս ժանտա
գործս յազգաց . և թափեսցեն զսուրս
իւրեանց ՚ի քեզ . և ՚ի վ՟ր գեղոյ իմաս_
տութ՟ե քոյ . և տարածեսցեն զգեղեց
կութ՟ի քո։ * Եւ կործանեսցեն զքեզ՝ 8
և մի՛ յառնիցես . և մահու վիրաւորաց
՚ի սիրտ ծովու։ * Միթէ ասելով ասի 9
ցե՞ս՝ Ա՟Ծ եմ ես՝ առաջի վիրաւորացն
քոց . բայց դու մարդ ես՝ և ո՛չ Ա՟Ծ .
և ՚ի բազմութ՟ե վիրաւորաց քոց։

Եւ մեռանիցես (?) ձեռն (?) վիրաւո_րաց (?)

10 * Եւ մեռելոց անթլփատից մեռանի_
ցիս ՚ի ձեռաց օտարաց . զի ես խօսե_
11 ցայ՝ ասէ ադօնայի Տէր ։ * Եւ եղև
բան Տ՟ն առ իս՝ և ասէ։ որդի մարդոյ՝
ո՛ղբս առ ՚ի վ՟ր իշխանին ծուրայ։
12 * Եւ ասասցես ցնա՝ այսպէս ասէ Տ՟ր
Տ՟ր . դու կնիք նմանութ՟ե . լի իմաս_
տութ՟բ՝ և կատարեալ գեղով։
13 * ՚Ի փափկութ՟ե դրախտին Ա՟Յ եղեր .
և զա՟մ ականս պատուականս ՚ի քեզ
կապեցեր . զսարդիոն . և զտպազիոն . և
զմիուխտ . և զկարկեհան . և զշափիղայ .
և զյասպիս . և զարծաթ . և զոսկի . զգո
ճազմ . զակատն . զմեղեսիկ . զոսկե
քարն . զբիւրեղն . զեղնգնաքարն ։ և
ոսկւով լցուցեր զգանձս քո՝ և զշտե_
մարանս քո ՚ի քեզ . յօրէ յորմէ հաստա
14 տեցար՝ և հանդերձեցար ։ * Ընդ օծե
լոյ քրօբէին ետու զքեզ ՚ի լեառն սր .
Ա՟Յ . և եղեր ՚ի մէջ հրեղէն վիմաց։
15 * Եղեր անարատ յաւուրսն քո . յօրէ
յորմէ հաստատեցիր դու . մինչև գտան
16 անիրաւութ՟իք ՚ի քեզ ։ * ՚Ի բազմու_
թ՟է վաճառուց քոց լցեր զշտեմարանս
քո անօրէնութ՟բ . մեղար՝ և վիրաւո_
րեցար . ՚ի լեռնէն Ա՟Յ իջոյց զքեզ՝
քերոբ վարսաւոր, ՚ի միջոյ հրեղէն վի
17 մացն ։ * Եւ բարձրացաւ սիրտ քո ՚ի
գեղեցկութ՟են քում . և ապականեցաւ
հանճար քո հանդերձ գեղովն քով՝ վ՟ն
բազմութ՟ե մեղաց քոց . ընկեցի զքեզ
յերկիր յանդիման թագաւորաց . ե_
տու զքեզ ՚ի խայտառակութիւն ։
18 * Վ՟ն բազմութ՟ե մեղաց քոց, և խար_
դախութ՟ե վաճառաց քոց՝ պղծեցեր
զսրբութ՟իս քո ։ հանից հուր ՚ի միջոյ
քումմէ՝ և նոյն կերիցէ զքեզ . և տաց
զքեզ ՚ի մոխիր յերկրին քում առաջի
19 ա՟մ տեսողաց քոց ։ * Եւ ամենեքին
որք ճանաչիցեն զքեզ ՚ի մէջ ազգաց ,
տրտմեսցին վ՟ն քո՝ զի եղեր ՚ի կորուստ .
և ո՛չ ևս իցես յաւիտեան ։ ՚Ի վերայ ծայ
20 դանոս ։ * Եւ եղև բան Տ՟ն առ իս՝ և
21 ասէ ։ * Որդի մարդոյ՝ հաստատեա՛ զե
րեսս քո ՚ի վերայ ծայդանու՝ մարգա_
22 րէա՛ց ՚ի վ՟ր ն՟ր ։ * Եւ ասասցես ։ այս՟պ
ասէ ադօնայի Տ՟ր . ահաւասիկ ես ՚ի վ՟ր
քո ծա՛յդան . և փառաւորեցայց ես ՚ի
քեզ . և ծանիցես , թէ ես եմ Տ՟ր ՚յառ_
նել իմ ՚ի քեզ դատաստանս . և սր՟բ ե_
23 ղէց ես ՚ի քեզ ։ * Եւ առաքեցից ՚ի վ՟ր
քո զմահ . և զարիւն ՚ի հրապարակս քո .
և անկցին վիրաւորք ՚ի միջի քում . սպա
նեսցին շուրջ զքև սրով . և ծանիցեն,
24 թէ ես եմ Տ՟ր ։ * Եւ ո՛չ ևս եղիցին
տանն իէի խոչ դառնութ՟ե . և փուշ
ցաւոց յամենեցունց՝ որք շուրջանակի
անարգեցին զն՟ս . և ծանիցեն , թէ ես
եմ

և ձեռն (?) օտարաց (?) ...

եմ ադոնայի Տր ։ * Այսպէս ասէ ա_ 25
դոնայի Տր. և ժողովեցից զտունն Իղի
յազգաց՝ ուր ցրուեցան անդր. և սբ
եղէց առաջի ազգաց և ժողովրդոց.
և բնակեսցին յերկրին իւրեանց՝ զոր
ետու ծառային իմոյ յակոբու ։ * Եւ 26
բնակեսցին 'ի նմա յուսով. շինեսցեն
տունս, և տնկեսցեն այգիս, և բնակես
ցեն յուսով. յորժամ արարից դատաս
տան յամենեսեան, որք շուրջանակի
անարգեցին զնս. և ծանիցեն, թէ ես
եմ Տր Ած նց. և Ած հարցն նոցա ։

Գլ. ԻԹ.

Ի վերայ Եգիպտոսի, և փարաւոնի Թագաւորին Եգիպտացւոց ։

Յամին տասներորդի՝ յամսեանն 1
տասներորդի՝ որ օր մի էր ամսոյն.
և եղև բան Տն առ իս՝ և ասէ ։ * Որդի 2
մարդոյ՝ հաստատեա զերեսս քո 'ի վր
փարաւոնի Թագաւորին եգիպտացւոց ։
մարգարեա՛ց 'ի վերայ նր՝ և 'ի վր ամ
եգիպտոսի ։ * Խօսեա՛ց՝ և ասասցես ։ 3
այսպէս ասէ Տր Տր՝ ահաւասիկ ես 'ի
վերայ քո փարաւոն արքայ եգիպտաց
ւոց վիշապդ մեծ՝ որ նստիս 'ի մէջ գե
տոց. որ ասես թէ իմ են գետքս՝ և ես
արարի զսոսա ։ * Եւ ես արկից դան_ 4
դանաւանդ 'ի կզակս քո. և մեծացու_
ցից զձկունս գետոյդ 'ի թևս քո. և հա
նից 'ի միջոյ քումմէ զգետսդ քո. և
'ի ամ ձկունք գետոյդ կցեսցին 'ի թևս
քո ։ * Եւ կործանեցից զքեզ երագ 5
երագ՝ և զամ ձկունս գետոյդ քոյ ։ 'Ի վր
երեսս դաշտին անկանիցիս, և մի ժո
ղովեսցիս. և մի ևս հաւաքեսցիս. զի
գազանաց երկրի՝ և թռչնոց երկնից
ետու զքեզ 'ի կերակուր ։ * Եւ ծա_ 6
նիցեն ամ բնակիչք եգիպտացւոցն՝
Եսայ. 36. 6. թէ ես եմ Տր. փոխանակ ‖ զի եղեր
գաւազան եղեգնեայ տանդ Իղի ։
* Եւ յորժամ յենուին 'ի քեզ՝ ելանէիր 7
ընդ ձեռս նց. յորժամ բուռն հարկա_
նէր զքեն ամ ձեռն. և յորժամ յե_
նուին 'ի քեզ՝ խորտակէիր. և բեկա_
նէիր զմէջս նց ։ * Վս այնորիկ այսպէս 8
ասէ Տր Տր. ահաւադիկ ես ածեմ 'ի
վր քո սուր՝ և կորուսից 'ի քէն զամ,
զմարդ՝ և զանասուն ։ * Եւ եղիցի եր 9
կիրդ եգիպտացւոց 'ի կորուստ՝ և յաւե
րակ. և ծանիցեն, թէ ես եմ Տր. փո_
խանակ զի ասէիր՝ թէ գետքս իմ են,
և ես արարի զսոսա ։ * Վասն այդորիկ 10
ահաւադիկ ես 'ի վր քո՝ և 'ի վր ամ
գետոցդ քոց. և տաց զերկիրդ եգիպ_
տացւոց յաւերակ՝ և 'ի կորուստ՝ 'ի
մակդօղայ՝ և 'ի սուհենայ մինչև 'ի սահ
11 մանս եթեօպացւոց ։ * Եւ մի անցցէ
ընդ նա ոտն մարդոյ. և կճղակ անաս_
նոյ ընդ նա մի գնասցէ. և մի բնակի_
12 ցի ամ քառասուն ։ * Եւ տաց զերկիր
նորա 'ի կորուստ, 'ի մէջ աւերակ երկ
րին. և քաղաքք նր 'ի մէջ աւերեալ_
քաղաքացն. եղիցին յապականութի
ամ քառասուն ։ և ցրուեցից զեգիպ_
տոս 'ի մէջ ազգաց. և ցրուեցից զնո_
13 սա ընդ գաւառս ։ * Զի այսպէս ասէ
Տր Տր՝ յետ ամաց քառասնից ժողո_
վեցից զեգիպտացիս յազգաց՝ ուր
14 ցրուեցան 'ի նոսա ։ * Եւ դարձուցից
զգերութիւն եգիպտացւոց. և բնակե
ցուցից զնոսա յերկրին պաթուրէ.
յերկրին ուստի առան. և եղիցի անդ
իշխանութի մի տառապեալ՝ քան զամ
15 իշխանութիս ։ * Եւ եղիցի խոնարհա
գոյն. և մի ևս բարձրասցի 'ի վր ազ_
գացն. և սակաւաւորս արարից զնս.
զի մի բազմասցին 'ի մէջ ազգաց ։
16 * Եւ մի ևս եղիցին տանն Իղի յոյս
յիշատակի անօրէնութե երթալ զհետ
սոցին նց. և ծանիցեն՝ թէ ես եմ
17 ադոնայի Տր ։ * Եւ եղև 'ի քսաներոր
դի և յեօթներորդի ամին. որ օր մի էր
ամսոյն առաջնոյ. եղև բան Տն առ
18 իս՝ և ասէ ։ * Որդի մարդոյ՝ նաբուգո
դոնոսոր արքայ բաբելացւոց աշխա_
տեցոյց զզօրս իւր աշխատութբ մե_
ծաւ 'ի վերայ ծուրայ. ամ գլուխք
կնդացեալք՝ և ամ ուսք գերծեալք՝ և
վարձք նմա և զօրացն իւրոց ոչ եղեն
առ 'ի ծառայութեն ծուրայ՝ զոր ծա
19 ռայեցին ինձ 'ի նմա ։ * Վասն այսորիկ
այսպէս ասէ Տր Տր՝ ահաւասիկ տաց
նաբուգոդոնոսորայ արքային բաբե_
լացւոց զերկիրն եգիպտացւոց ։ և ա_
ռից զբազմութի նորա. և աւարեսցէ
զաւար նր. և կողոպտեսցէ զկողոպուտ
20 նր. և եղիցի վարձ զօրաց նր ։ * Փոխա
նակ հարկին յորում ծառայեաց ինձ
'ի ծուր, ետու նմա զերկիրն եգիպ_
տացւոց ընդ ամի՝ զոր արարին ինձ ։
21 այսպէս ասէ Տր Տր ։ * Յաւուր յայն
միկ ծագեսցի եղջիւր ամ տանն Իղի.
և քեզ տաց բերան բաց 'ի մէջ նոցա.
և ծանիցես, թէ ես եմ Տր ։

Գլ. Լ.

1 Եւ եղև բան Տն առ իս՝ և ասէ ։
2 * Որդի մարդոյ՝ մարգարեա՛ց՝ և
ասասցես ։ այսպէս ասէ ադոնայի Տր
3 Տր. ո՜հ ո՜հ օր ։ * Զի մերձ է օր Տն օր
միգի. հասեալ է վախճան ազգաց ։
4 * Եւ եկեսցէ սուր 'ի վր եգիպտացւոց.
և եղիցի խռովութի 'ի կողմանս եթեօ
պացւոց. և անկցին վիրաւորք յեգիպ
տոս.

տոս. և առեն զբազմութի՛ւն նր̃. և տա
պալեսցին հիմունք նր̃: *Պարսիկք, և 5
կրետացիք, և լիբեացիք, և լիդացիք,
խառնա_ և ա̃մ խառնադանջքն. և յորդւոց ուխ
ճաղանձ տին իմոյ 'ի նմա՛ սրով կոտորեսցին:
*Այսպէս ասէ ադոնայի Տր̃. կործա 6
նեսցին մյթքն եգիպտացւոց. և իջցէ
հպարտութի զօրութե նր̃. 'ի մակդո
ղայ, մինչև ցսուհէն, սրով անկցին 'ի
նմա. ասէ ադոնայի Տր̃: *Եւ աւա 7
րեսցի 'ի մէջ ապականեալ աշխարհաց.
և քաղաքք նց̃ 'ի մէջ քաղաքաց աւերե
լոց: *Եւ ծանիցեն՝ թէ ես եմ Տր̃. 8
յորժամ արկից հուր 'ի վր̃ եգիպտաց
ւոց. և խորտակեսցին ա̃մ օգնականք
նր̃: *Յաւուր յայնմիկ ելցեն հրեշ 9
տակք յերեսաց իմոց տագնապաւ՝ ա
պականել զանտի յոյսն եթեովպացւոց.
և եղիցի խռովութի 'ի նոսա յաւուրն
եգիպտացւոց. քանզի ահաւասիկ հա
սեալ է: *Այսպէս ասէ Տր̃ Տր̃. և 10
կորուսից զբազմութի եգիպտացւոց
'ի ձեռն նաբուգոդոնոսորայ արքային
բաբիլացւոց: *Նա՝ և զազգ նր̃ ընդ 11
նմա. ժանտագործք յազգացն առա
քեսցին կործանել զերկիրն. և թա
փեսցեն զսուրս իւրեանց 'ի վր̃ եգիպ
տոսի՝ և լցցի երկիրն վիրաւորօք:
*Եւ տաց զգետս նոցա յանապատ. և 12
մատնեսցից զերկիրն 'ի ձեռս չարաց. և
կորուսից զերկիր լրիւ իւրով ձեռօք
այլազգեաց՝ զի ես Տէր խօսեցայ:
‖ Զաք *‖Այսպէս ասէ Տէր Տր̃. կորուսից 13
13. 2. զգարշելիսն. և դադարեցուցից զմե
ծամեծս 'ի մեմփիացւոց. և զիշխանս
յերկրէն եգիպտացւոց. և ոչ ևս լինի
ցին: և արկից ահ 'ի վր̃ երկրին եգիպ
տացւոց: *Եւ կորուսից զերկիրն պա 14
թուրես: արկից հուր զտայանու. և
աղէքսան խնդրեցից զվրէժ եգիպտոսպօլացւոց:
դրու *Եւ հեղից զբարկութի իմ՛ 'ի վերայ 15
սայինայ զօրութե եգիպտացւոց. և կո
րուսից զբազմութի մեմփիացւոց:
*Եւ տաց զհուր յեգիպտոս. և խռո 16
վութե խռովեսցի սայիս: և եղիցի
աղէքսան քաղաքն դիոսպօլացւոց յերդիծումն.
դրու և բղխեսցին ջուրք: *Եւ երիտասարդք 17
արեգ քաղաքի, և բուբաստայ՝ անկ
ցին սրովք. և կանայք նց̃ 'ի գերութե
վարեսցին: *Եւ խաւարեսցի տիւ 'ի 18
տափնաս. 'ի փշրել անդ իմ զգաւա
զանն իշխանութե եգիպտացւոց. և
կորիցէ անդ հպարտութի զօրութե
նր̃. և զնոյն մէգ ծածկեսցէ. դստերք
նր̃ 'ի գերութե վարեսցին: *Եւ ա 19
րարից դատաստանս յեգիպտոս. և
ծանիցեն, թէ ես եմ Տր̃: *Եւ եղև 20
'ի մետասաներորդի ամի անդ՝ յամ
սեանն առաջնում, որ օր եօթն էր ամ
սոյն. եղև բան Տն̃ առ իս՝ և ասէ:
21 *Որդի մարդոյ՝ զբազուկս փարաւոնի
արքային եգիպտացւոց խորտակեցից.
և ահա ոչ ևս պատեսցի 'ի բժշկութի.
և ոչ տացին 'ի վր̃ նր̃ դեղք. կամ թէ
զօրանայցէ առնուլ զսուր 'ի ձեռն:
22 *Վասն այնորիկ այսպէս ասէ Տր̃ Տր̃.
ահաւասիկ ես 'ի վերայ փարաւոնի ար
քային եգիպտացւոց. և խորտակեցից
զբազուկս նր̃ հզօրս. զներդապատս.
և զմանաւապատս: և ընկեցից զսուրն
23 'ի ձեռանէ նր̃: *Եւ ցրուեցից զեգիպ
տոս ընդ ազգս. և հոսեցից զնս̃ ընդ
24 գաւառս: *Եւ զօրացուցից զբա
զուկս արքային բաբիլացւոց. և տաց
զսուր իմ 'ի ձեռս նր̃. և ածցէ զայն 'ի
վր̃ եգիպտացւոց՝ և աւարեսցէ զաւար
նր̃. և կողոպտեսցէ զկապուտ նորա:
25 *Եւ զօրացուցից զբազուկս արքային
բաբիլացւոց. և բազուկքն փարաւոնի
լքցին. և ծանիցեն թէ ես եմ Տր̃. 'ի
տալ իմ զսուր իմ 'ի ձեռս արքային
բաբիլացւոց. և ձգեսցէ զնա 'ի վերայ
26 երկրին եգիպտացւոց: *Եւ ցրուեցից
զեգիպտոս ընդ ազգս. և հոսեցից զնս̃
ընդ գաւառս՝ և ծանիցեն ա̃մ եգիպ
տացիքն՝ թէ ես եմ Տր̃:

ԳԼ: ԼԱ:

1 Եւ եղև յամին մետասաներորդի
յամսեանն երրորդի՝ որ օր մի էր
ամսոյն: եղև բան Տն̃ առ իս՝ և ասէ:
2 *Որդի մարդոյ՝ ասա՛ ցարքայն եգիպ
տացւոց՝ ցփարաւոն և ցզօրս իւր. ո՞ւմ
նմանեցուցեր զքեզ 'ի հպարտութեդ
3 քում: *Ահաւանիկ ասուր իբրև նոճ
մի 'ի լիբանան գեղեցիկ շառաւիղաւ՝
և խիտ ստուօք՝ և բարձր մեծութբ. 'ի
4 մէջ ամպոց եղև գլուխ նր̃: *Ջուր
սնոյց զնա. և անդունդք բարձրացու
ցին զնա. և զգետս նր̃ էած շուրջ զտն̃
կոյք իւրովք. և զանտառախիտս իւր
արձակեաց ընդ ա̃մ փայտս դաշտին:
5 *Վն̃ այնորիկ բարձրացաւ մեծութի
նր̃ քան զա̃մ ծառս դաշտին. և տարա
ծեցան ոստք նր̃. և բարձրացան շա
ռաւիղք նորա 'ի ջուրց բազմաց:
6 *'Ի տարածանիլ իւրում, 'ի շառա
ւիղս նր̃ բնակեցան ա̃մ թռչունք երկ
նից. և 'ի ներքոյ ոստոց նր̃ ծնան ա̃մ
գազանք դաշտի. և ընդ հովանեաւ՝ նր̃
բնակեցան ա̃մ բազմութիք ազգաց:
7 *Եւ եղև գեղեցիկ բարձրութբ իւր
ով. վն̃ երկայնութե ոստոց իւրոց. զի
եղեն արմատք նր̃ 'ի ջուրս բազումս:
8 *Մայրդ՝ և սարոյ. և նոճ՝ 'ի դրախտին
Այ̃. ոչ հաւասարեցան շառաւիղաց
նորա

տացուց՝ և ասասկես ցնա ։ առիւծա-
յար ’ի մէջ ազգաց. և նմանեցար վի-
շապի ’ի մէջ ծովու. և ոգորեիր ընդ
գետս քո. և առ սմբակ պղտորեիր
ջուրս. և առաթաւր կոխան առնեիր
3 ղգետս քո ։ * Այսպես ասէ Տ֊ր Տ֊ր.
‖ պատեցից զքեզ Թակարդաւք իմովք. ‖ Ա էր.
և ժողովք զօրաց բազմայ. և հանիցէ 12. 13.
4 զքեզ կարթիւք իմով ։ * Եւ թափեսցեմ Եւ 17.20
ցերկիր զքեզ ’ի վերն երկրի. և լցցին քո
դաշտք. և իջուսցից ’ի վերն քո զամենայն
թռչունս երկնից. և յագեսուսցից ’ի
5 քէն զամ գազանս երկրի ։ * Եւ տաց
զմարմինս քո ’ի վերն լերանց. և լցուսցից
6 զձորս յարեւնէ քումմէ. * Եւ արբեսց-
ցի երկիր յարտաւառէ քումմէ. ’ի բազ
մութեն քոյ ’ի վերն լերանց. զձորս լցից
7 ’ի քէն ։ * ‖ Եւ պատրուհակեցից զեր- ‖ Ասաց.
կինս ’իշխանել քում. և խաւարեցուս 13.10.
ցից զաստեղս նո՛ր զարեգակն ամպով Յովէլ
ծած կեցից. և լուսին մի տացէ զլոյս 2.10.Ե
8 իւր ։ * Եւ զամ լուսաւորս խաւարե- 3.15.
ցուցից ’ի վերն քո. և տաց խաւար ’ի վերն Ասա.
9 քո՝ ասէ Տ֊ր Տ֊ր ։ * Եւ ղայրացուցից 24.29.
զսիրտս ազգաց բազմաց. ’ի ժամանա
կին իբրև հանիցէ զգերութեն քո ընդ
10 ազգս՝ յերկիր զոր ոչ գիտիցես ։ * Եւ
տրտմեսցին ’ի վերն քո ազգք բազումք.
և Թագաւորք նո՛ր զարհուրելով զար-
հուրեսցին. ’ի Թռչիլ սրոյ իմոյ առա-
ջի երեսաց նո՛ր. ակն ունիլ կործանման
իւրեանց. յօրէ կործանման քոյ ։
11 * Օի այսպէս ասէ Տ֊ր Տ֊ր. սուր ար-
քային բաբիլացւոց եկեսցէ ’ի վերն քո ։
12 * Անդեր՛ձ սրով հսկայից՝ և կործա-
նեցից զշքեղութիւն քո. եկեսցեն ամ
ժանատագործք ազգաց՝ և յարուսցեն Եւ Հորաս
զՀպարտութիւն եգիպտացւոց. և սա- ցեն
տակեսցին ամ զօրութիւնքն նո՛ր ։ * Եւ
13 կորուսից զամ անասունս նորա ’ի ջուրց
բազմաց. և մի պղտորեսցէ զնա ոտն
մարդոյ. և կճղակ անասնոյ մի կոխես-
14 ցէ զնա ։ * Եւ ապա դադարեսցեն
ջուրք նո՛ր և գետք նոցա նմանի իւղոյ
15 գնասցեն. ասէ ադօնայի Տ֊ր ։ * Յոր-
ժամ տաց զեգիպտոս ’ի կորուստ. և
աւերեսցի երկիր լրիւ իւրով. յորժամ
յղռճեցից զամ բնակիչսն ’ինմանէ. և
16 ծանիցեն Թէ ես եմ Տ֊ր ։ * Ողբ են՝ և
ողբասցեն զնա. և դստերք ազգաց ող
բասցեն զնա. ’ի վերն եգիպտոսի՝ և ’ի վերն
ամ զօրութեն նո՛ր ողբասցեն՝ ասէ Տ֊ր
17 Տ֊ր ։ * Եւ եղև յամին երկոտասաներ-
րորդի՝ յամենայն առաջնում. որ օր
Հնգետասան էր ամսոյն ։ եղև բան Տ֊ն
18 առ իս՝ և ասէ ։ * Որդի մարդոյ՝ ողբա
առ ’ի վերն զօրութեն եգիպտոսի. և ի-
ջուսցեն զդստերս նո՛ր ազգքն զմեռելո

նորա մայրքն. և սօսոյք ոչ նմանեցան
ոստոց նո՛ր. ամ փայտք ’ի դրախտին Այ
ոչ նմանեցան նմա գեղեցկութե՛ր ։
* Ա՛ ե անտառախիտ ոստոց նո՛ր. և նա- 9
խանձեցան ընդ նա ամ ծառք դրախ
տին փափկութե՛ր Աստ ։ * Վասն այ- 10
նորիկ այսպէս ասէ Տ֊ր Տ֊ր. փոխա-
նակ զի մեծացար մեծութե՛ր. և հասին
ծայրք քո յամպս. և տեսի զվարտուղ
Թին ։ * Եւ մատնեցի զքեզ ’ի ձեռս 11
իշխանին ազգաց. և արարին զնա ’ի կո
րուստ ։ * Եւ հանին զնա. և սատակե 12
ցին զնա օտարք ժանտագործք յազ-
գաց. և տապալեցին զնա ’ի վերայ լե-
ռանց ։ յամ ձորս անկան ոստք նորա. և
խորտակեցաւ ստեղն նո՛ր ընդ ամ դաշտս
երկրի. և իջին ’ի հովանւոյ նո՛ր ամենայն
ազգք աշխարհի. և յատակեցին զնա ։
* Եւ ’ի գլորիլն նո՛ր հանգիստ եղիցի ամ 13
Թռչնոց երկնից. և ’ի ստեղն նո՛ր հասին
ամ գազանք վայրի ։ * Օի ամ և 14
Հպարտասցին ’ի մեծութե՛ն իւրեանց
ամ փայտք ջրասունք. և ոչ արձակես
ցեն զձգիրս իւրեանց ընդ ամպս. և մի
կացցեն ’ի Հպարտութե՛ն իւրեանց՝ իւր
քև զնա ։ որք ըմպիցեն զջուր՝ ամենե-
քեան ’ի մահ մատնեսցին ’ի խորս երկրի.
’ինձ ոգւոց մարդկան իջելոցն ’իսոր
խորատ ։ * Եւ յայն ասէ Տ֊ր Տ֊ր. յաւուր 15
յորում ’ի դժոխս. սուգ առին ’իվ ե
նորա անդունդք. և արգելի զգետս նո՛ր.
և խիզ արկից ջուրց բազմաց և տիրե
ցաւ ’ի վերն նո՛ր լիբանան. և ամ ծառք
դաշտի լքան վե՛ն նորա ։ * Ձայնէ կոր 16
ծանման նորա՝ դղրդեցան ազգք. յոր
ժամ ’իջուցի զնա ’ի դժոխս ընդ իջեալս
’ի գուբ ։ և մխիթարեցին զնա ’ի ստո՛ր
դարամբտան ամ ծառք փափկութե՛ն.
և ընտիր ընտիր գեղեցիկքն ’ի լիբա-
նան. որք էին ջրարբիք ։ * Վասնի 17
նոքա իջին ընդ նմա ’ի վիրաւորք սրոյ
’ի դժոխս. և զաւակք նորա՝ որք բնա-
կեալքեին ընդ հովանեաւ նորա ընդ-
միջեալ կենաց իւրեանց սատակեցան ։
* Ո՛ւմ նմանեցուսցեր զօրութե՛ն և փա 18
ռաք՝ և մեծութե՛ն և ծառաք փափկու-
թե՛ն. էջ՝ և զիջիր հանդերձ ծառաք
փափկութե՛ն քոյ ’ի խորս երկրի՝ ’ինձ
անթլփատից ննջեցելոց ընդ վիրաւ
որս սրոյ. սոյնպէս փարաւոն և ամ բազ
մութի՛ն զօրութե՛ն իւրոյ՝ ասէ Տ֊ր Տ֊ր ։

ԳԼՈՒԽ ԼՀ։

Եւ եղև յամին երկոտասաներորդի՝ 1
յամսեանն երկոտասաներորդի՝
որ օր մի էր ամսոյն. և եղև բան Տ֊ն
առ իս՝ և ասէ ։ * Որդի մարդոյ՝ ողբա 2
առ ’ի վերն փարաւոնի արքային եգիպ-

'ի խորս երկրի , առ իջեալս 'ի խորխո_
րատ ։ * 'Ի ջուրց վայելչութենէ . էջ 19
ննջեա՛ ընդ անթլփատս ։ * 'Ի մէջ վի_ 20
րաւորաց սրով անկցին ընդ նմա. եւ դա
դարեսցէ ամ զօրութի նր ։ * Եւ ա_ 21
սասցեն ընդ քեզ սկայքն . եկ էջ 'ի
խորս խորխոյ . զի քան զո՞ լաւ էիր դու.
էջ՝ եւ դադարեա՛ ընդ անթլփատս՝ 'ի
մէջ վիրաւորաց սրոյ ։ * Անդ աստւր՝ 22
եւ ամ ժողովք նորա՝ ամ վիրաւորք
անդ ։ * Տուեալ գերեզմանն նց 'ի խորս 23
խորխորատին , եւ եղեւ ժողովք նորա
շուրջ զշիրմօք նորա . ամ վիրաւորք
անկեալ սրով . որք արարին զգերեզ_
մանս իւրեանց 'ի յատակս գբոյ. եւ ե_
ղեն ժողովք շուրջ զգերեզմանօք նր ։
ամենեքին վիրաւորք անկեալք 'ի սրոյ.
որք ետուն զահ իւրեանց 'ի վր երկրին
կենդանութեն ։ * Անդ Եղամ. եւ ամ զօ 24
րութիք նր՝ շուրջ զգերեզմանաւ նր .
ամենեքին վիրաւորք անկեալք 'ի սրոյ։
իջին անթլփատք 'ի խորս երկրի . որք
ետուն զահ իւրեանց յերկիրն կենդա
նութեն . եւ ընկալան զտանջանս իւրե
ընդ իջելոցն 'ի խորխորատ ։ * 'Ի մէջ 25
[illegible] վիրաւորաց ։ † * Անդր տուան՝ մոսոք 26
եւ Թոփէլ . եւ զօրութիք նց շուրջ զգե
րեզմանաւ նր . ամ վիրաւորք նր ամե
նեքին անթլփատք . վիրաւորք ան_
կեալք 'ի սրոյ . որք ետուն զահ իւրե
'ի վր երկրին կենդանութեն ։ * Եւ ո՛չ 27
ննջեցին ընդ հսկայսն անկեալսն յաւի
տենից՝ որք իջին 'ի դժոխս. պատերազ
մօղք զինուքն իւրեանց . եւ եդան ա_
նօրէնութիքն նց 'ի վերայ ոսկերացն
իւրեանց . զի զարհուրեցուցին զսկայս
'ի կենդանութե իւրեանց ։ * Եւ դու 28
'ի մէջ անթլփատիցն խորտակեսցիս .
եւ ննջեսցես 'ի մէջ վիրաւորացն սրոյ ։
* Անդ Եդոմ, եւ թագաւորք իւր՝ եւ 29
ամ իշխանք նորա . որք ետուն զզօրու
թին իւրեանց 'ի հարուածս սրոյ . եւ
նոքա ընդ վիրաւորսն ննջեցին . ընդ
իջելոցն 'ի խորխորատ ։ * Անդ ամ իշ 30
խանք հիւսիսոյ՝ եւ ամենեքին նոքա զօ
րավարք ասորեստանեայն իջեալք վի_
րաւորք հանդերձ ահիւն զօրութե իւր_
եանց . ամօթալից ննջեցին անթլ_
փատք՝ ընդ վիրաւորս սուսերաց . եւ
տարան զտանջանս իւրե ընդ իջելոցն
'ի խորխորատ ։ * Զնս տեսցէ փարաւօն. 31
եւ մխիթարեսցի 'ի վր ամ զօրութե նց .
վիրաւորք փարաւօնի 'ի սրոյ՝ եւ ամ զօ
րութին նր՝ ասէ Տր Տր ։ * Զի ետ զահ 32
իւր յերկիրն կենդանութեն . եւ ննջես
ցէ 'ի մէջ անթլփատիցն վիրաւորելոց
սրով՝ փարաւօն եւ ամ բազմութիւն
իւր ընդ նմին՝ ասէ Տէր Տէր ։

ԳԼ : ԼԳ.

Աղա. որդւոյն Յաւզօբու ։

1 Եւ եղեւ բան Տն առ իս՝ եւ ասէ ,
2 * Որդի մարդոյ՝ խօսեա՛ց ընդ որ_
դիս ժողովրդեան քո , եւ ասասցես
ցնոսա ։ երկիր մի յորոյ վերայ ածիցեմ
զսուր . եւ առնուցու ազգ երկրին զայր
մի յինքեանց՝ եւ կացուցանիցեն զնա
3 դէտ ։ * Եւ տեսանիցէ սուր եկեալ
յերկիրն . եւ փող հարկանիցէ՝ եւ ազդ
4 առնիցէ ժողովրդեանն ։ * Եւ լսելով
լսիցէ զձայն փողոյն՝ եւ ոչ զգուշասցի .
եւ հասանիցէ սուրն. եւ ըմբռնիցէ զնա.
արիւն նորա 'ի գլուխ նորին եղիցի ։
5 * Զի զձայն լուա՛ւ փողոյն, եւ ոչ զգու
շացաւ . արիւն նորա 'ի վր նորին եղի
ցի . եւ նա զի զգուշացոյց , զանձն իւր
6 ապրեցոյց ։ * Եւ եթէ տեսանիցէ
դէտն զսուրն եկեալ՝ եւ ոչ նշանակիցէ
փողով . եւ ազգն ո՛չ զգուշանայցէ . եւ
եկեալ սուրն ըմբռնիցէ 'ի նոցանէ
անձն մի . նա վս անօրէնութե իւրոյ
ըմբռնեցաւ . եւ զարիւն նր 'ի ձեռաց
7 դիտին խնդրեցից ։ * ‖ Եւ դու որդի ‖ Եզե.
մարդոյ՝ դէտ ետու զքեզ տանդ Իէղի . 3. 17.
եւ լուիցես բանից բերանոյ իմոյ. զգու
8 շացուսցես զնս իբրեւ յինէն ։ * Յասել
իմն ցմեղաւորն, թէ մահու մեռանի_
ցիս . եւ դու ո՛չ խօսիցիս զգուշացու_
ցանել զամպարիշտն 'ի ճանապարհէ
իւրմէ . ինքն անօրէնն յանօրէնութե
իւրում՝ մեռցի՝ եւ զարիւն նորա 'ի ձե_
9 ռաց քոց խնդրեցից ։ * Ապա թէ դու
յառաջագոյն պատմեսցես ամպարշ_
տին զճանապարհս իւր դառնալ նմա
'ի նմանէ . եւ ո՛չ դարձցի 'ի ճանապար
հէ իւրմէ . ինքն յանօրէնութե իւրում
մեռցի . եւ դու զանձն քո ապրեցուս_
10 ցես ։ * Եւ դու որդի մարդոյ՝ ասա՛
ցտունդ Իէղի ։ ա՛յսպէս խօսեցարուք՝ եւ
ասացէք . եթէ մոլորութիքն մեր՝ եւ
անօրէնութիք մեր 'ի մեզ են . եւ մեք
'ի նոսին մաշիմք . եւ զիա՞րդ ապրիցուք ։
11 * ‖ Ասա՛ ցնոսա . կենդանի եմ ես՝ ասէ ‖ Եզե.
ադոնայի Տէր . ո՛չ կամիմ զմահ ամ_ 18. 23.
պարշտին . ո՛չ զդառնալ ամպարշտին եւ 32.
'ի չար ճանապարհէ իւրմէ՝ եւ կեալ .
դառնալով դարձարո՛ւք 'ի ճանապար_
հաց ձերոց չարաց՝ եւ ընդէ՞ր մեռա_
12 նիք տո՛ւնդ Իէղի ։ * Եւ դու որդի մար_
դոյ՝ ասա՛ ցորդիս ժողովրդեան քո .
արդարութի արդարոյն ո՛չ փրկեսցէ
զնա՝ յաւուր յորում մոլորեսցի ։ եւ ա_
նօրէնութի անօրինին ո՛չ չարչարեսցէ
զնա՝ յաւուր յորում դառնայցէ յամ
անօրէնութէ իւրմէ ։ եւ արդարն ո՛չ
կա_

կաթասէ ապրիլ յաւուր մեղայ իւրոյ։
*Յասել ինձ յարդարն՝ թէ կելով կեայ 13
ցես. և նա յուսացեալ յարդարութիւն
իւր՝ առնիցէ զանօրէնութիւն. ամ՛ար-
դարութիւք նորա մի յիշեսցին. այլ ա-
նօրէնութեքն իւրով զոր արար՝ նովքն
մեռցի։ *Եւ՛ եթէ ասել ինձ ցամաքարիշան 14
թէ մնհու մեռչիը. և դարձցի՛ ի մե-
ղաց իւրոց. և արասցէ իրաւունս՝ և
զարդարութի։ *Եւ՛ զգրաւ պարտս 15
պանիցն՛ ի բաց տայցէ. և զյափշտակու-
թիւնն դարձուցանիցէ. ՛ի հրամանս կե-
նաց գնասցէ. չառնել զանիրաւութի.
կելով կեցցէ՝ և մի մեռցի։ *Զ՛ամ մեղք 16
իւր՝ զոր մեղաւ՝ մի յիշեսցին. զի իրաւ
ունս՝ և արդարութիս արար. նոքիմիք
կեցցէ։ * Եւ ասեն որդիք ժողովր 17
դեանն քոյ. ոչ ուղիղ է ճանապարհ
Տ՚ն. նա նո՛ր ճանապարհն ոչ է ուղիղ։
* Ի՛ դառնալ արդարոյն յարդարու՛ 18
իւրմ՛ և առնել անիրաւութիս, նո-
քիմիք մեռցի։ * Եւ՛ ի դառնալ մե- 19
ղաւորին յանօրէնութէ իւրմ՛. առնի
ցէ իրաւունս՝ և արդարութի, նորիմիք
կեցցէ։ * Եւ՛ այս է՝ զոր ասացիք՝ թէ 20
ոչ ուղիղ է ճանապարհ Տ՚ն։ զի՛ բա-
քանչիւրոք ըստ ճանապարհայ իւրոց
դատեցից զձեզ տունդ իշի։ *Եւ՛ եղև 21
յամին երկրորդասաներորդի՛ ի տասն-
երորդէ յամսեանն՝ որ օր հինգ էր ամ-
սոյն գերութե՛ն մերոյ. եկաս առ իս
ումն զերծեալ յեդմէ, և ասէ. առաւ
քաղաքն։ *Եւ՛ ձեռն Տ՚ն եղեալ՛ ի վրէ 22
իմ՝ յերեկորեայն՝ մինչև եկեալ էր նո՛.
և բացաւ զբերան իմ. մինչև եկեալ էր
ընդ առաւօտան. և՛ ի բանալ բերա-
նոյ իմոյ ոչ ևս ամփոփեցաւ անդրէն։
* Եւ՛ եղև բան Տ՚ն առ իս՝ և ասէ։ 23
* Որդի մարդոյ՝ բնակիչք աւերակաց 24
երկրին իշի ասեն. մի՛ մարդ էր աբրա
համ՝ և կալաւ զերկիրն. և արդ մեք
բազումք եմք. և մեզ տուեալ է եր-
կիրն՝ ի ժառանգութի. ոչ ժառանգի
ցեմք զնա։ *Ո՛ այնորիկ ասա ցնոսա՝ 25
այսպէս ասէ ադ՚նայի Տ՚ն. որովհետև
՛ի վերայ արեան ուտէք. և զաչս ձեր
արձակէք՛ ի կուռս. և զարիւն հեղուք.
և կամիք զերկիրն ժառանգել։ *Եղի 26
ցի դա ձեզ՛ ի սուր՝ զի արարիք պղծու
թիս. իւրաքանչիւր զկին ընկերի իւ-
րոյ պղծեիք. և արդ այդու ժառան-
գիցէք զերկիրն։ *Ո՛ այնորիկ ասա 27
ցնոսա՝ այսպէս ասէ Տ՚ն Տ՚ն. կենդա
նի եմ ես. եթէ ոչ, որք յաւերակն
իցեն, սրով անկցին. և որք ըստ երես
դաշտին իցեն, գազանաց անասպատին
տացին՛ ի կերակուր. և որք ընդ պարս
պաւորքն իցեն՝ և յայրս, մահու կո-

28 տորեցից։ *Եւ՛ տացէ զերկիրն յաւե-
րակ՝ և յապականուի, և կորիցէ հպար
տութի զօրութե՛ նո՛. և աւերեսցին
լերինք իշի՛ զի մի՛ ոք իցէ. որ գնասցէ
29 ընդ նոսա։ *Եւ՛ ծանիցեն՝ թէ ես եմ
Տ՚ն. և արարից զերկիրն նո՛ աւերակ. և
աւերեսցի վասն ամ՛ գարշելեացն՝ զոր
30 արարին։ *Եւ դու որդի մարդոյ. որ-
դիք ժողովրդեան քոյ շրջին, քրթմն-
ջեն զքեզն առ պարսպօքն՝ և՛ ի դրունս
ապարանից. և ասեն, մի՛ գնա՛ այր ցեղ
բայր իւր. ժողովրեցաք՝ երթիցուք՝
լսելիցուք զպատգամն. որք ելնեն՛ ի
31 Տ՚ն։ *Եւ արդ գան առ քեզ, ոպ՚ ժո-
ղովեալք՛ ի ժողովուրդ. և նստցին ա-
ռաջի քո ժողովուրդն իմ. լսեն զբանս
քո՝ և ոչ առնեն զնոսա. զի սուտ՚ի՛ ե
՛ի բերանս նո՛. և զհետ պղծութե իւր
32 եանց գնան սրտիւք իւրեանց։ * Եւ
դու լինիցիս նո՛ իբրև զձայն երգոց
քաղցրաբարբառ յօրինելոյ. և լսի-
ցեն զբանս քո՝ և ոչ արասցեն։ * Եւ՛
33 յորժամ գայցեն՝ ասասցեն. ահաւա-
սիկ կհաս. և ծանիցեն, թէ մարգա-
րէ դոյ՛ ի մէջ նոցա։

ԳԼ. Լ.

Ագա հովիւսն Իսրայէլ։

1 Եւ՛ եղև բան Տ՚ն առ իս՝ և ասէ։
2 * Որդի մարդոյ՝ մարգարեա՛ց՛ ի
վրէ հովուացդ իշի. մարգարեա՛ց՝ և
ասասցես ցհովիւսն. այսպէս ասէ Տ՚ն
Տ՚ն՝ ‖ ո՛վ հովիւք իշի. միթէ հովիւք ‖ Յեզեկ.
զանձինս արածեն. ոչ՝ հովիւք զխա- 23. 1.
3 շինս արածեն։ *Ո՛ւրդ ուաւիկ զկաթնդ Ալէք.
ուտէք. և զասրդ ապանիք. զպա- 13.3.
րատն զենուք. և զխաշինս իմ՛ ոչ
4 արածէք։ * Օ՛տկարացեալսն ոչ զօրա-
ցուցիք. և զհիւանդացեալսն ոչ բժշկե
ցիք. զվարչարեալն ոչ յանձանձեցիք.
և զբեկեալն ոչ պատեցիք. զմոլորեալն
ոչ դարձուցիք. և զկորուսեալն ոչ խնդ
րեցիք՝ զհաստահարուստն աշխատ ա-
5 րարիք։ * Եւ՛ ցրուեցան խաշինք իմ՛.
քանզի ոչ գոյին նոցա հովիւք. և եղեն
կերակուր գազանաց անասպատի, և
6 ցրուեցան։ * Եւ՛ մոլորեցան խաշինք
իմ՛ ընդ ամ՛ լերինս. և ընդ ամ՛ բլուրս
բարձունս. և ընդ ամ՛ երկիր ցրուե-
ցան խաշինք իմ՛. և ոչք էր՝ որ խնդ-
րեր. և ոչ այն՝ որ դարձուցանէր։
7 *Ո՛ այնորիկ հովիւք լսեարուք զբան
8 գամ՛ Տ՚ն։ * Կենդանի եմ ես՝ ասէ ա-
դ՚նայի Տ՚ն Տ՚ն. եթէ ոչ՝ փոխանակ զի
եղեն խաշինք իմ՛ ՛ի կերակուր գազա
նաց անասպատի. վ՚ն զի ոչ գոյին հով
իւք. և ոչ խնդրեին հովիւքն զխաշինս

իմ. և բուծին հովիւքն զանձինս իւր_
եանց. և զխաշինս իմ ոչ արածեին:
*Փոխանակ այնորիկ լուարուք զպատ 9
գամ Տն: *Այսպէս ասէ Տր Տր. ահա 10
ւասիկ ես 'ի վերայ հովուացդ. և պա_
հանջեցից զխաշինս իմ 'ի ձեռաց նց.
և դադարեցուցից զդոսա յարածելոյ
զխաշինս իմ. և ոչ ևս արածեսցեն
զնս. և փրկեցից զխաշինս իմ 'ի ձեռաց
նց. և ոչ եղիցին դոցա 'ի կերակուր:
*Զի այսպէս ասէ Տր Տր. ահաւադիկ 11
ես ինքնին խնդրեցից զխաշինս իմ. և
այց արարից դոցա:*Զորօրինակ խնդ_ 12
րիցէ հովիւ զհօտ իւր՝ յաւուր յորում
իցէ մէգ՝ և մառախուղ 'ի մէջ խաշանց
իւրոց վատնելոց. այնպէս խնդրեցից
զխաշինս իմ՝ և ժողովեցից զնս յամ
տեղեաց, ուր ցրուեցան 'ի նոսա, մէգի
և մառախղի: *Եւ հանից զնս յազ_ 13
գաց. և ժողովեցից զնոսա 'ի գաւա_
ռաց. և տարայց զնոսա յերկիր իւր_
եանց. և արածեցից զնոսա 'ի վր լե_
րանց Իղի: *Եւ 'ի ձորս՝ և յամ բնա_ 14
կութի երկրին յարօտս փափկութե՝
արածեցից զնոսա 'ի լերինն բարձու
Իղի, և անդ եղիցի մակաղատեղ նց.
անդ դադարեսցեն՝ և անդ հանգիցեն
'ի գրգութեց. և յարօտս պարարտու
թե՝ արածեսցին 'ի վր լերանցն Իղի:
*Ես արածեցից զխաշինս իմ. և ես 15
հանգուցից զնոսա. և ծանիցեն թէ
ես եմ Տր. այսպէս ասէ Տր Տր:
* Զկորուսեալն խնդրեցից. և զմո_ 16
լորեալն դարձուցից. զբեկեալն պա_
տեցից. և զվատթեալն զօրացուցից.
զգէրն և զհզօրն պահեցից. և արածե
ցից զնս իրաւամբք: *Եւ դուք խա_ 17
շինք իմ. այսպէս ասէ Տր Տր. ահա_
ւասիկ ես ոչխար առ ոչխար դատեցից.
և խոյ ընդ խոյ: *Չիցէ ձեզ բաւա_ 18
կան զգեղեցիկ արօտն յառաջադու_
նոյն արածել. այլև զմնացեալ ևս ճա
րակն 'ի ձենջ առոտն կոտորէք. և ըզ
ջուրն յստակս ըմպէիք. և զմնացեալսն
առոտն պղտորէիք: *Եւ խաշինք իմ 19
զկոխան ոտիցն ձերոց ճարակէին. և
զջուրն պղտորեալ 'ի կճղակաց ձերոց
ըմպէին: *Վասն այնորիկ այսպէս ասէ 20
Տէր Տր. ահաւասիկ ես դատեցից 'ի
մէջ հարուստ՝ և անաւագ ոչխարաց:
*Փոխանակ զի կողմամբք և ուսովք 21
ձերովք գրթէիք՝ ոգորէիք՝ և եղջե_
րօք ձերովք խեթկէիք զամենայն ա_
նաւագն. և 'ի բաց մերժէիք զնոսա.
մինչև ցրուեցան խաշինք իմ: *Եւ փր 22
կեցից զխաշինս իմ. և ոչ ևս լինիցին
‖Եսայ. 'ի յափշտակութի. դատեցից խոյ առ
40. 11. խոյ: *‖Եւ կացուցից 'ի վր նոցա հո_ 23
վիւ մի. զծառայ իմ զԴաւիթ. և նա հո ‖Երե.
վուեսցէ զնոսա. նա եղիցի նց հովիւ: 3. 5.
24 *Եւ ես Տր եղէց նոցա յԱծ. և Դաւիթ Յով. 1.
ծառայ իմ իշխան 'ի մէջ նց. ես Տէր 45. 10
25 խօսեցայ: *Եւ եդից ընդ Դաւթի 11. 14.
ուխտ խաղաղութե. և ապականեսցից
զգազանս չարս յերկրէ. և բնակեսցեն
յանապատին յուսով. և ննջեսցեն
26 յանտառս: *Եւ տաց նց շուրջ զլե
րամբ իմով օրհնութի. և տաց ձեզ
անձրև. և եղիցին անձրևք օրհնութե:
27 *Ծառք ագարակի տացեն զպտուղս
իւրեանց. և երկիր տացէ զզօրութի
իւր. և բնակեսցին յերկրի իւրեանց
յուսով խաղաղութեց. և ծանիցեն
թէ ես եմ Տր. 'ի խորտակել իմ զլուծ
պարանոցի նոցա. և փրկեցից զնոսա 'ի
28 ծառայեցուցչաց իւրեանց: *Եւ ոչ ևս
եղիցին յաւար 'ի մէջ ազգաց. և գա_
զանք երկրի մի ևս կերիցեն զնոսա. և
բնակեսցին յուսով. և ոչոք իցէ, որ
29 զարհուրեցուցանիցէ զնս: *Եւ կանգ_
նեցից նց տունկ խաղաղութե. և ոչ ևս
վատեսցին 'ի սովու 'ի վր երկրի. և
նախատինս յազգաց ոչ ևս կրեսցեն:
30 * Եւ ծանիցեն թէ ես Տր Ած նոցա՝
ընդ նոսա եմ. և նոքա ժողովուրդ իմ՝
31 տունն Իղի. ասէ Տր Տր: *‖Եւ դուք ‖Յով.
խաշինք իմ՝ ոչխարք արօտի իմոյ՝ մար 10. 11.
դիկ էք. և ես Տր Ած ձեր՝ ասէ Տր Տր:

Գլ: ԼԵ:

'Ի վերայ Իդումայեցւոց:

1 Եւ եղև բան Տն առ իս՝ և ասէ:
2 *Որդի մարդոյ՝ դարձո զերեսս
քո 'ի վր լերինդ Սեիրայ. մարգարեա՛ց
'ի վերայ դորա՝ և ասասցես ցդա:
3 *Այսպէս ասէ Տէր Տր՝ ահաւասիկ
ես 'ի վր քո լեառնդ Սէիր. և ձգեցից
զձեռն իմ 'ի քեզ. և տաց զքեզ յանա
4 պատ, և աւերեսցիս: *Եւ զքաղաքս
քո յաւեր դարձուցից. և եղիցիս աւե_
րակ. և ծանիցես թէ ես եմ Տր:
5 *Փոխանակ զի եղեր 'ի թշնամութի
յաւիտենից. և դարանակալ նստէիր
նենգութբ տանն Իղի 'ի ձեռն թշնա_
մեաց սրոյ. 'ի ժամանակի նեղութե,
'ի ժամանակի անիրաւութե (յետին)
6 վախճանի: *Վն այնորիկ կենդանի
եմ ես՝ ասէ Տր Տր. եթէ ոչ յարիւն
մեղար՝ և արիւն հալածեսցէ զքեզ:
7 *Եւ տաց զլեառն Սէիր յաւերակ՝ և
յանապատ. և կորուսից 'ի դմանէ ըզ
8 մարդ՝ և զանասուն: *Եւ լցից զլե_
րինս վիրաւորօք քովք՝ զբլուրս քո՝ և
զձորս քո. և յամենայն դաշտս քո՝ վի_
րաւորեալք 'ի սրոյ անկցին 'ի քեզ:
*Եւ

*Եւ յաւերակ յաւիտենից եդից զքեզ. 9
և քաղաքք քո ոչ ևս շինեսցին. և ծա
նիցեն, թէ ես եմ Տէր: *Փոխանակ 10
ասելոյն թէ երկու ազգքն՝ և երկու
աշխարհք իմ եղիցին. և ժառանգե_
ցից զնոսա. և Տր անդ էր: *Վասն այ 11
նորիկ կենդանի եմ ես՝ ասէ Տր Տր. և
արարից ընդ քեզ ըստ թշնամութեն
քում. և ըստ նախանձուն քում, զոր
արարեր ատել զնոսա. և ծանուցայց
քեզ. յորժամ դատեցից զքեզ: *Եւ 12
ծանիցես, թէ ես եմ Տր. լուայ զձայն
հայհոյութեց քոց. զի ասէիր՝ թէ լե_
րինք Իղի աւերակք մեզ տուեալ են
'ի կերակուր: *Եւ մեծաբանեցեր 'ի 13
վերայ իմ բերանով քով. և հնչեցեք
առ իս զբանս ձեր, և ես լուայ: *Այս 14
պէս ասէ Տէր Տր՝ յուրախութի ամ
երկրի արարից զքեզ աւերակ: *Փո_ 15
խանակ զի ուրախ եղեր ժառանգու
թե տանն Իղի՝ զի ապականեցաւ:
*Նոյնպէս արարից զքեզ. և եղիցիս 16
աւերակ լեառնդ սէիր. և իդումեա
սատակեսցի. և ծանիցեն, թէ ես եմ
այրեցին զոսկերս թագաւորաց Եդո_
2 մայեցւոց ի մոխիր: *Առաքեցից զհուր
ի վր Մովաբայ. եւ կերիցէ հուր զհի_
մունս քաղաքացն նր. եւ մեռցի ի տկա_
րութեան Մովաբ աղաղակաւ, եւ ձայնիւ
3 փողոյ: *Այսպէս սատակեցից զդատաւոր
ի նմանէ. եւ զնմ իշխանս նր կոտորե_
4 ցից ընդ նմին՝ ասէ Տր: *Այսպէս ասէ
Տր՝ ի վր երից ամպարշտութեանց որդւոցն
Յուդայ՝ եւ ի վր չորիցն ոչ դարձայց
ի նմանէ. փոխանակ զի մերժեցին զօ_
րէնս Տն՝ եւ զհրամանս նր ոչ պահեցին.
եւ մոլորեցուցին զնս սնոտեօք իւրեանց,
զորս արարին: զորոց զհետ գնացին
5 հարքն նոցա: *Առաքեցից զհուր ի վր
Հրէաստանի՝ եւ կերիցէ զհիմունս Եմի.
6 *Այսպէս ասէ Տր, ի վր երից ամպարշ
տութեանց Իսրլի՝ եւ ի վր չորիցն ոչ դար_
ձայց ի նմանէ. եւ փոխանակ զի վաճա
ռեցին զարդարն արծաթոյ՝ եւ զտնանկն
7 ընդ կօշկաց: *Որք կոխեն զհող երկրի.
եւ կռփեն զգլուխս աղքատաց. եւ զճնա
պարհս խոնարհաց թիւրեն. եւ հայր եւ
որդի առ մի բոզ մտանեն. զի պղծես
8 ցեն զանուն իմ իւրեանց: *Այսպէս զձորձս
իւրեանց առագաստս ձգէին ընդ կից
եանս՝ եւ ընդ սեղանս. եւ զգինի զրպար
տութեանց ըմպէին ի տան իմ իւրեանց:
9 *‖ Բայց ես բարձի զԱմուրհացին յե_ ‖ Թուոց
րեսաց նց. որոյ բարձրութիւն իւր բարձ 21. 24.
րութիւն մայրի. եւ հզօր էր իբրեւ զկաղնի: եւ 2. Օրէ.
բար. 2. 24.

բարձի զպտուղ նորա 'ի վերուստ. և
10 ‖ Ելից. զարմատս նր 'ի ներքուստ: * ‖ Եւ ես
14. 21. հանի զձեզ յերկրէն Եգիպտացւոց. և
2. Օրէ. ածի զձեզ յանապատի ամս քառասուն.
8. 2. ժառանգեցուցանել զերկիրն Ամուր֊
11 հացւոց: * Եւ առի յորդւոցն ձերոց 'ի
մարգարէս. և յերիտասարդացն ձերոց
յուխտաւորս. միթէ ոչ իցէ այդպէս
12 որդիք Իէլի՝ ասէ Տր: * Եւ արբուցա֊
նէիք ուխտաւորացն իմոց գինի. և մար֊
գարէիցն պատուիրէիք, զի մի մարգա֊
13 րէասցին: * Վա այնորիկ ահաւադիկ
ես հոլովեցուցանեմ 'ի ներքոյ ձեր. զոր
օրինակ հոլովիցի սայլ լի որանաւ:
14 * Եւ կորիցէ փախուստ յընթացողէն.
և որ զօրաւորն իցէ՝ մի զօրասցի 'ի զօ֊
րութեն իւրում. և պատերազմողն մի
15 ապրեցուսցէ զանձն իւր: * Եւ աղեղ֊
նաւորն մի կարասցէ ունել զդէմ. և որ
արագն իցէ ոտիւք՝ մի ապրեսցի. և հե֊
16 ծեալ մի ապրեցուսցէ: * Եւ մի գտցի
սիրտ իւր 'ի զօրութեան: մերկ հալածես֊
ցի յաւուր յայնմիկ՝ ասէ Տր:

Գլ: Գ:

1 Լուարուք զպատգամս զայս՝ զոր խօ֊
սեցաւ Տր 'ի վր ձեր տունդ Իէլի.
և 'ի վր ամ ազգաց՝ զորս հանի յերկ֊
2 րէն Եգիպտացւոց: * Բայց զձեզ ընտ֊
րեցի յամ ազգաց երկրի: վա այնորիկ
'ի ձէնջ խնդրեցից զվրէժ ամ չարեաց
3 ձերոց: * Մի թէ գնասցեն ամենևին
երկու 'ի միասին՝ թէ ոչ ծանուցիցեն
4 զմիմեանս: * Եթէ գոչիցէ առիւծ
յանտառէ՝ և ոչ իցէ որս արարեալ նր:
եթէ տացէ կորիւն զձայն իւր 'ի մայր֊
ւոյ իւրմէ, և ոչ ինչ իցէ յափշտակեալ
5 նր: * Եթէ անկանիցի թռչուն յեր֊
կիր առանց որսորդի. եթէ ճայթիցէ
որոգայթ 'ի վերայ երկրի, և ոչ ինչ իցէ
6 ըմբռնեալ: * Եթէ հարկանիցի փող
'ի քաղաքի. և ազգն ոչ խռովիցի. եթէ
իցեն չարիք 'ի քաղաքի՝ և Տն չիցէ ա֊
7 րարեալ: * Վա այնորիկ ոչ արասցէ Տր
Ած իրս ինչ, եթէ ոչ յայտնեսցէ ըզ֊
խրատն ծառայից իւրոց մարգարէից:
8 * Առիւծ գոչեսցէ՝ և ո՞վ իցէ՝ որ ոչ
սարսիցէ: Տր Ած խօսեցաւ՝ և ո՞վ իցէ՝
9 որ ոչ մարգարէասցի: * Պատմեցէք 'ի
գաւառս Ասորեստանեայց. և 'ի գա֊
ւառս երկրին Եգիպտացւոց. և ասացէք՝
Սամարիոյ ժողովեցարուք 'ի լեառն Շամրնի. և
տեսէք սքանչելիս բազումս 'ի մէջ նր.
10 և զռնութիւն 'ի մէջ նր: * Ոչ ծանեաւ
զլինելոց եղեալն՝ ասէ Տր. որք գան֊
ձէին զանօրէնութիւն, և զթշուառութիւն
11 'ի գաւառս իւրեանց: * Վա այնորիկ
այսպէս ասէ Տր Ած. Տիւրոս. երկիրդ՝
որ շուրջ զքև է, աւերեսցի. և խորտա֊
կեսցի 'ի քէն ամ զօրութիւնք. և յափշ֊
12 տակեսցին գաւառք քո: * Զի այսպէս
ասէ Տր. զոր օրինակ եթէ կորզեսցէ
թափել հովիւ 'ի բերանոյ առիւծու՝
աքեացս երկուս կամ բլթակ մի ու֊
կան. այնպէս զերծցին որդիքն Իէլի, որք
բնակեալ են 'ի Շամրին դէմյանդիման Սամարիա
ազգին. և 'ի մէջ Դամասկացւոց:
13 * Քահանայք լուարուք. և վկայութիւն
դիք տանդ Յակոբայ՝ ասէ Տր Ամենա֊
14 կալ: * Զի յաւուր յայնմիկ յորժամ
խնդրեցից զվրէժ ամպարշտութեանցն Իէլի
'ի նմանէ՝ առից վրէժ և զսեղանոյն Բե֊
թելայ. և փշրեսցին եղջիւրք սեղա֊
15 նոյն՝ և անկցին յերկիր: * Եւ խորտա֊
կեցից զապարանսն թևաւորս 'ի վր
ամարանոցն ապարանիցն. և ապակա֊
նեսցին ապարանքն փղոսկրեայք. և բա֊
զումք այլ ապարանք անկցին՝ ասէ Տր:

Գլ: Դ:

1 Լուարուք զբանս Տն երինջք Բասա֊
նու՝ որք էք 'ի լերինս Շամրնի. որք Սամարիոյ
զրկէք զաղքատս՝ և առոտն հարկա֊
նէք զտնանկն. որք ասէք ցտեարս
ձեր՝ մատուցէք մեզ զգինի՝ զի արբ֊
2 ցուք: * Երդնու Տր 'ի սրբութիւն իւր.
եթէ ահա աւուրք եկեսցեն 'ի վր ձեր.
և առցեն զձեզ զինուք. և զդոսա՝ որք
ընդ ձեզ են՝ արկցեն 'ի սանս ջեռու֊
3 ցեալս: * Եւ ելանիցէք մերկք միմեանց
դէմ ընդդէմ. և անկցիք 'ի լերինն Ռե֊
4 մանայ՝ ասէ Տր: * Մտէք 'ի Բեթէլ՝ և
ամպարշտեցարուք. և 'ի Գաղգաղայ
յաճախեցէք ամպարշտել. և մատուցէք
զզոհս ձեր ընդ առաւօտս. և յերիր
5 աւուր զտասանորդս ձեր * Ընթերցու֊
ին օրէնս արտաքոյ. և կոչեցին խոստո֊
վանութիւն. պատմեցէք թէ զայս սի֊
6 րեցին որդիքն Իէլի՝ ասէ Տր: * Եւ ես
արկի զձեօք ցաւս ատամանց յամ քա֊
ղաքս ձեր. և կարօտութիւն հացի յամ
տեղիս ձեր. և ոչ դարձարուք առ իս՝
7 ասէ Տր: * Եւ արգելի 'ի ձէնջ զանձրև
երեք ամսովք յառաջ քան զկութս. 'ի
մի քաղաք տեղացից՝ և 'ի միւս քաղաք
ոչ տեղացից. զմի վիճակ թացից. և 'ի
միւսն յորում ոչ տեղացից, ցամաքեսցի
8 * Եւ ժողովեսցին երկու և երեք քա֊
ղաքք 'ի մի քաղաք ըմպել զջուր՝ և մի
յագեսցին. և ոչ դարձայք առ իս՝ ասէ
9 Տր: * ‖ Հարի զձեզ տապով. և արկի ‖ Անգ.
զձեօք դալուկն. և յաճախեցիք 'ի պար֊ 2. 18.
տէզս ձեր. յայգիս և 'ի թզենիս ձեր՝
և 'ի ձիթենիս ձեր. և զթզենիս ձեր ե֊
կեր թրթուր. սակայն և այնպէս ոչ դար֊
10 ձայք՝ ասէ Տր: * Առաքեցի 'ի վր ձեր
զմահ

զմահ ՚ի Հնդնապարհին եգիպտացւոց։
և կատարեցի սրով վերիւտասարդս ձեր
հանդերձ գերութ՚ը երիվարաց ձերոց։
և ծախեցի զբանակս ձեր հրով բար-
կութ՚ե իմով։ սակայն և այնպէս ոչ դար-
ձայք առ իս՝ ասէ Տ՚ր։ * ‖ Կործանեցի 11
զձեզ՝ ոպէս կործանեաց Ա՚ստ զսոդոմ և
զգոմոր։ և եղէք իբրև վկնանձոյլ վեր-
ծեալ ՚ի հրոյ։ սակայն և այնպէս ոչ դար
ձայք առ իս՝ ասէ Տ՚ր։ * ‖ Ա՚ւ այնորիկ 12
այսպէս արարից զքեզ։ բայց զի այնպէ
առնելոց եմ քեզ։ պատրաստեա՛ կար-
դալ զանուն Տ՚ն Ա՚ստ քոյ Իսրէլ։ * ‖ Օի 13
ահա՛ասիկ որ հաստատէ զլերինս։ և
հաստատէ զհողմն՝ և պատմէ ՚ի մէջ
մարդկան զօծեալ իւր։ առնէ առաւօտ
և մէգ։ և ելանէ ՚ի վե՛ր բարձանց երկ-
րի։ Տ՚ր Ա՚ստ ամենակալ անուանէ նո՛ր։

Գ Լ։ Ա։

Ի ուճարո՛ւք զբան Տ՚ն Ա՚ստ, զոր ես 1
առեալ ՚ի վերայ ձեր ողբս։ անկաւ
տունդ Իսրէլ։ և ոչ ևս յաւելցի յառնել։
* Կոյսն Իսրէլ կործանեցաւ յերկրի իւր 2
ո՛մ։ և չի՛ք ոք, որ կանգնիցէ զնա։
* Զանգի այսպէս ասէ Տ՚ր Տ՚ր։ ՚Ի քաղա- 3
քէ՝ յորմէ ելանէին հազարք, մնասցէ
հարիւր։ և յորմէ ելանէին հարիւր,
մնասցէ տասն տանդ Իսրէլ։ * Զանգի 4
այսպէս ասէ Տ՚ր առ տունդ Իսրէլ։ խնդրե-
ցէ՛ք զիս՝ և կեցջի՛ք։ * Եւ մի՛ խնդրէք 5
զբեթէլ։ և ՚ի գաղ գաղայ մի՛ մտանէք։
և ՚ի յորմէն երդմանն մի՛ ելանէք։ զի
գաղ գաղայ գերեզման գերեսցի։ և բե-
թէլ եղիցի իբրև զչեղեաւ։ * Խնդրե- 6
ցէ՛ք զՏ՚ր, և կեցջի՛ք։ զի մի բռնբռնես-
ցի իբրև զհուր տունն յոսեփու՝ և կե-
րիցէ զնա։ և ոչ՛ք իցէ, որ շիջուցանի-
ցէ՝ տանդ Իսրէլ։ * Որ առնէ ՚ի բարձունս 7
իրաւունս՝ և զարդարութի՛ն եդ յերկրի։
* Որ առնէ զնա՝ և նոքօգէ։ և դար- 8
ձուցանէ յայլ զտուճերս մահու։ և
զսիւ՚ն ՚ի գիշեր մթացուցանէ։ ‖ որ կոչէ
զջուրս ծովու՝ և հեղու ՚ի վե՛ր երկրի։
‖ Ա՚մոս. Տ՚ր ամենակալ անուանէ նո՛ր։ * Որ բաշ 9
ե. 6. խէ զբեկումն ՚ի վե՛ր զօրութի՛ն։ և ածէ
զթշուառութի՛ն ՚ի վե՛ր ամրոցաց։ * Ա՚տե 10
ցին ՚ի դրունս զյանդիմանիչս։ և զբանս
սուրբս պիղծս արարին։ * Ա՛ւ այնորիկ 11
փոխանակ զի կոփեիք զաղքատն։ և
կաշառս ընտրանաւ առնուիք ՚ի նոցա
‖ Ա՚մոս. նէն։ ‖ ապարանս զարդարեալս շինես-
ե. 13. ջի՛ք՝ և մի՛ բնակեսջի՛ք ՚ի նոսա։ այգիս
ցանկալիս տնկեսջի՛ք։ և զդինի նո՛ր մի՛
արբջի՛ք։ * Օի գիտացի ես զբազումս 12
ամպարշտութի՛ս ձեր։ և սաստիկք են
մեղք ձեր։ առ ոտն կոխեիք զարդարն
առնլով փոխանակս։ և խոտորեցուցա

13 նեիք զաղքատն ՚ի դրունս։ * Ա՛ւ այնո
րիկ որ խմաստուն է՝ ՚ի ժամանակին
յայնմիկ լռեսցէ՝ զի ժամանակն չար է։
14 * Խնդրեցէ՛ք զբարի՝ և մի՛ զչար՝ զի կեց
ջի՛ք՝ և եղիցի ընդ ձեզ Տ՚ր Ա՚ստ ամենա
15 կալ։ զոր օրինակ ասացէ՛ք։ * ‖ Ա՛հ ա- ‖ Ամոս.
տեցաք զչարիս։ և սիրեցաք զբարիս։ 12.9.
Հաստատեցէ՛ք իրաւունս ՚ի դրունս Ամոս.
ձեր։ զի ողորմեսցի Տ՚ր Ա՚ստ մնացորդաց 5.15.
16 յոսեփայ։ * Ա՛ւ այդորիկ այսպէս ասէ Տ՚ր
Ա՚ստ ամենակալ։ յամենայն հրապարակս կոծ։
և յամենայն ճանապարհս ասասցի վա՛յ վա՛յ։
կոչեսցի մշակ ՚ի սուգ և ՚ի կոծ և ՚ի
17 ձայնարկուս։ * Եւ յամենայն ճանապարհս
կոծ։ քանզի անցից ընդ մէջ քո՝ ասէ
18 Տ՚ր։ * ‖ Ա՛յ, որ ցանկանայ աւուր Տ՚ն։ ‖ Ամոս.
զի կայ ձեր և աւուր Տ՚ն։ և նա խաւար՝ 5.18.
19 և ո՛չ լոյս։ * Օր օրինակ եթէ փախի- Յովէլ.
ցէ մարդ յերեսաց առիւծու։ և պա 2. 11.
տահեսցի նմա արջ։ և փախիցուս ՚ի Ամովս.
տուն՝ և յեցուսցէ զձեռս իւր յորմն։ և 5.19.
20 հարկանիցէ զնա օձ։ * ‖ Ո՛չ ապաքէն
խաւար է օրն Տ՚ն՝ և ո՛չ լոյս։ աղջամղ
21 ջին՝ և ո՛չ գոյ ՚ինմա ձառնանչ։ * ‖ Ա՛տե- ‖ Ամոս.
ցի՝ մերժեցի զտօնս ձեր։ և ՚ի տարե 5. 21.
22 կանս ձեր ո՛չ հոտոտեցայց։ * Օ՛ի եթէ Յովէլ.
մատուցանիցէ՛ք զողջակէզս՝ և զպղտս 6.20.
ձեր՝ ո՛չ ընկալայց։ և յերևելիս փրկու Ամոս.
23 թեա՛ց ես ո՛չ հայեցայց։ * ՚Ի քա՛ց արա 2. 13.
յինէն զձայն երգոց քոց։ և զնուագ
24 սրնգաց քոց ես ո՛չ լսեայց։ * Ա՛յլ յոր-
դեսցին իբրև զջուր իրաւունք։ և ար-
դարութի՛ն իբրև զհեղեղ անհուն։
25 * ‖ Մի՛ թէ սպանդ և զոհս մատուցիք ‖ Գործ.
ինձ յանապատի անդ քառասուն ամ 7.42.
26 տունդ Իսրէլ։ * Ա՛յլ առէք զխորանն մո՛ Ամոս.
ղոքայ՝ և զաստղն Ա՚ստ՚ն ձերոյ զեմ 5.26.
փայ։ զպատկերսն նոցա՝ զորս արա
27 րիք ձեզ։ * Ա՛յլ փոխեցից զձեզ անդր
քան զդամասկոս՝ ասէ Տ՚ր։ ամենա
կալ անուանէ նորա։

Գ Լ։ Օ։

1 Ա՛յ, ‖ որք անգոնեն զսիօն՝ և յու ‖ Գ. ա-
սացեալք իցեն ՚ի լեառն շամր 6. 24.
նի՝ կթէք զնիշխանուիս ազգաց։ և մտին
2 ՚ինն տունդ Իսրէլ։ * Ա՛նցէ՛ք ամենեքեան
՚ի քանան՝ և տեսէ՛ք։ և անցէ՛ք անտի ՚ի
մեծն եմաթայ հռաբայ։ և իջէ՛ք ՚ի
գեթ պղեշտացւոց՝ զզօրաւորս քան
զքաղաքն զայնոսիկ։ եթէ իցեն մեծ
սահմանք նոցա քան զսահմանս ձեր։
3 * Որք դայդ յօր չարեաց։ որք մերձե-
նայդ հասանել ՚ի շաբաթս ստուեց։
4 * Որք ննջէիդ ՚ի գահոյս փղոսկրեայս։
և փափկանայք յանկողինս ձեր։ և ու-
տէք ուլս ՚ի հօտից։ և որթս դիեցիկս
5 յանդեոց։ * Որք կայթս հարիանէք
ընդ

ընդդէմ սրնգաց․ զորս իբրև հաստա
տունս համարեցայք՝ և ոչ անցաւորս։
*Այն ըմպէք զպարզեալ գինի․ և անոյշ 6
իւղովք օծանիք․ և ոչ ցաւէր ձեզ վն
բեկմանն յովսեփայ։ *Վն այնորիկ արդ 7
'ի գերութի վարեսցին՝ յիշխանութէ
բռնաւորաց․ և հատցի խլխնջիւն երի
Երեմ․ վարաց եփրեմայ։ *Ոի երդուաւ Տր 8
51․14․ յանձն իւր․ և ասէ Տր Ած զօրութեանց՝
թէ գարշեցուցից զամ հպարտութիւ
յակոբայ․ և զաշխարհս նր ատեցից ։
և բարձից զքաղաքս նց ամ բնակչօք։
* Այն եղիցի եթէ մնասցեն տասն այր 9
'ի տան միում․ և մեռանիցին։ *Այն մնա 10
ցորդքն առնուցուն զընտանիս իւրն՝
և իջանիցեն հանել զոսկերս նոցա 'ի
տանէ անտի․ և ասասցեն ցայնոսիկ՝ որք
կայցեն առաջի տանն․ եթէ այլ ինչ
մնայ այդր առ քեզ։ *Այլ նա ասաս_ 11
ցէ՝ եթէ ոչ։ մի ասասցէ լուռ լեր․ վն
այնորիկ է՝ զի ոչ անուանէիր զանուն
Տն։ * Ոի ահաւասիկ Տր հրամայ տա 12
ցէ․ և հարցէ զմեծ ապարանսն կոր_
ծանմամբ․ և զփոքր ապարանսն պա_
տառմամբ։ *Միթէ արշաւիցեն ե_ 13
րիվարք ընդ վէմս․ և կամ հանդարտի
ցեն 'ի մէջ մատակաց․ զի խոտորեցէք
զիրաւունս 'ի ցասումն․ և զպտուղ ար_
դարութեն 'ի դառնութի։ *Այն ուրախ 14
լինէիք յոչ ինչ բանս։ այլ ասէիք՝ եթէ
ոչ զօրութբ մերով եղեն մեզ եղջիւրք։
* Վն այդորիկ ահա ես յարուցից 'ի 15
վր ձեր տունդ իլի՝ ասէ Տր Ած զօրու
թեց, ազգ մի՝ որ նեղիցեն զձեզ՝ զի մի
եւ մտանիցէք յեմաթ․ և մինչև 'ի հե
ղեղատն արևմտից։

ԳԼ․ Է։

Այսպէս եցոյց ինձ Տր Տր․ և ահա 1
ծնունդ մարախոյ գայր ընդ ա_
ռաւօտս․ և ահա ջորեակ մի գովգ ար_
քայ։ *Այն եղիցի եթէ վախճանեսցէ 2
ուտել զխոտ երկրին։ և ասեմ․ Տր Տր
խնայեա․ քանզի ով իցէ՝ որ կանգնիցէ
զյակոբ․ զի սակաւաւոր է ։ *Ապաշխա 3
րեաց Տր 'ի վր այսորիկ։ և այդ մի ևս
լիցի՝ ասէ Տր։ *Այսպէս եցոյց ինձ Տր 4
Տր․ և ահա կոչեաց զդատաստան հրով
Տր Տէր․ և եկեր զխորս բազումս՝ և
զվիճակն։ * Այն ասեմ Տր Տր․ դադա 5
րեցո զայդ․ քանզի ով է՝ որ յարուցա
նիցէ զյակոբ․ զի սակաւաւոր է։
*Ապաշխարեաց Տր 'ի վր այդորիկ․ և 6
այդ ևս մի լիցի՝ ասէ Տր Տր։ *Այսպ 7
եցոյց ինձ Տր Տր․ և ահա այր մի կայր
'ի վերայ ադամանդեայ պարսպի․ և 'ի
ձեռին իւրում ադամանդ։ * Այն ասէ 8
ցիս Տր․ զինչ տեսանես ամովս։ և ա_

սեմ, ադամանդ։ և ասէ ցիս Տր․ ահա_
ւասիկ ես հաստատեցից ադամանդ
'ի մէջ ժողովրդեան իմոյ իլի․ և ոչ ևս
9 յաւելից անցուցանել զնովաւ ։ * Այն
ապականեսցին բագինք կատակութեն՝
և մեհեանքն իլի աւերեսցին ։ և յա_
րեայց 'ի վր տանն յերոբովամայ սրով։
10 * Այն առաքեաց ամասիա քուրմ բե_
թելայ առ յերոբովամ՝ արքայ իլի՝ և
ասէ՝ ժողովս կուտէ 'ի վր քո ամովս 'ի
մէջ տանս իլի․ և երկիրս ոչ կարէ հան
11 դարտիլ ամ՝ բանից նր։ * Ոի այսպէս
ասէ ամովս․ յերոբովամ սրով վախ_
ճանեսցի․ և իէլ գերելով գերեսցի
12 յերկրէ իւրմէ ։ * Այն ասէ ամասիա
ցամովս․ տեսանօղդ՝ տուր տեղի՝ գնա
յերկիրն հրէաստանի՝ և անդ կեաց՝ և
13 անդէն մարգարէասջիր։ * Ի բեթէլ
մի ևս յաւելուր մարգարէանալ՝ զի սրբ
բութի թագաւորի է՝ և տուն թագա
14 ւորութե։ * Պատասխանի ետ ամովս՝
և ասէ ցամասիայ․ ես ոչ մարգարէ էի
և ոչ որդի մարգարէի․ այլ հովիւ էի․
15 և թութ քաղէի ։ * Այն էառ զիս Տր
'ի հօտից․ և ասէ ցիս Տր․ գնա դու, և
մարգարեաց 'ի վր ժողովրդեան իմում
16 իլի ։ * Այն արդ՝ լուր զպատգամս Տն․
դու ասես մի մարգարէանար 'ի վերայ
իլի․ և մի ժողովս ժողովեր 'ի վերայ
17 տանն յակոբայ։ * Վն այդորիկ այսպ
ասէ Տր Տր․ կին քո՝ 'ի քաղաքիդ պոռն
կեսցի․ և ուստերք քո․ և դստերք քո
'ի սուր անկցին։ և երկիրդ քո լարաքա
ժին բաժանեսցի․ դու յերկրի պղղ
ծում վախճանեսցիս ։ և իէլ գերե_
լով գերեսցի յերկրէ իւրմէ։

ԳԼ․ Ը։

1 Այսպէս եցոյց ինձ Տր Տր․ և ահա
2 գործի հաւուսաց ։ * Այն ասէ՝
զինչ տեսանես ամովս․ և ասեմ՝ գոր
ծի հաւուսաց։ և ասէ ցիս Տր՝ հասեալ
է վախճան 'ի վր ժողովրդեան իմոյ
իլի․ և ոչ ևս յաւելից անցուցանել զնո_
3 վաւ։ * Այն ողբասցեն յարկք տաճա_
րին յաւուր յայնմիկ՝ ասէ Տր․ բազումք
անկանիցին ․ և յամ տեղիս արկից
4 զլռութի։ * Լուարուք զայս՝ որք նե_
ղէիք զտնանկն ընդ առաւօտս․ և զը_
5 կէիք զաղքատ յերեկորեայ։ *Այն ասէ_
իք՝ երբ անցցէ ամիս, և շահիցուք․ և
շաբաթ, և բացցուք զգանձս․ և առնել
զչափ փոքր՝ և մեծացուցանել զկշիռս․
6 և առնել կշիռս սուտս ։ * Ստանալ
արծաթով զաղքատս․ և զտնանկն 'ի
դնոց կօշկաց․ և յամ վաճառս մեր շա_
7 հիցուք։ * Երդնու Տր 'ի վր հպարտու
թեն յակոբու․ թէ ոչ մոռասցին իս_

պատ. ամ գործք ձեր ։ *Եւ 'ի վ(եր)այ այ- 8
գորիկ խռովեսցի երկիր. սուգ առցեն
ամ բնակիչք նր. և ելցէ իբրև զգետ
վախճան նորա. և իջցէ իբրև զգետն
եգիպտացւոց ։ *Եւ եղիցի յաւուր 9
յայնմիկ ասէ Տր Տր՝ մտցէ արեգակն
'ի միջօրէի. և խաւարեսցի յերկրէ լոյս
‖Տոբ. 'ի տուէ ։ *‖ Եւ դարձուցից 'ի սուգ 10
2. 6. զտօնս ձեր. և զամ երգս ձեր յողբս.
1.Մակ. և ածից 'ի վ(եր)այ ամ հասակաց զքուրձ.
1.41. և 'ի վ(եր)այ ամ գլխոց զկնտութի. և արա-
րից նմա իբրև սուգ սիրելւոյ. և որոց
ը նմայն իցեն՝ իբրև օր ցաւոց ։ *Ահա 11
աւուրք գան ասէ Տր Տր. և առաքեցից
զսով յերկիր. ոչ սով հացի. և ոչ ծա-
րաւ ջրոյ. այլ սով լսելոյ զբանն Տն ։
*Եւ խռովեսցին ջուրք 'ի ծովէ մին- 12
չև 'ի ծով՝ և 'ի հիւսիսոյ մինչև յարև-
ելս. ընթասցին խնդրել զբանն Տն.
և մի գտցեն ։ *Յաւուր յայնմիկ նե- 13
ղեսցին կոյսք գեղեցիկք և երիտա-
սարդք 'ի ծարաւոյ ։ *Որք երդնուին 14
ստամբելոյ 'ի քաւութին շամրնի. և ասեին՝ կեն-
դանի է աստուած քո դան՝ և կենդա-
նի է ած քո բերսաբէէ. և կործանես-
ցին. և մի ևս կանգնեսցին ։

ԳԼ ։ Թ.

բաղխեա՛ զծխնիսդ՝ և շարժեսցին դրանդիք. զի ապականեսցին 'ի գլուխս ամենեցուն

Տեսի զՏր՝ զի կայր 'ի վ(եր)այ սեղանոյ՝ 1
և ասէ ։ բաղխեա զսեղանդ՝ և շար
ժեսցին դրանդիք. և կտրեա յարկ 'ի
գլուխս ամենեցուն. և զմնացորդս նց
սրով կոտորեցից. և մի ապրեսցի 'ի նո
ցանէ փախուցեալն. և մի զերծցի 'ի
նոցանէ զերծեալն ։ *‖ Զի եթէ ծած 2
կեսցին 'ի դժոխս, անտի ձեռն իմ կոր
զեսցէ զնս. և եթէ ելանիցեն յերկինս՝
և անտի իջուցից զնս. և եթէ թաքի-
‖Սաղմ. ցեն 'ի բարձունս կարմելայ, և անտի
138.8. յուզեցից, և առից զնոսա ։ *Եւ եթէ 3
ընկեսցին յաչաց իմոց 'ի խորս ծովու,
և անդ հրամայեցից վիշապին խայթել
զնոսա ։ *Եւ եթէ գնասցեն 'ի գերու 4
թի առաջի թշնամեաց իւրեանց, և
անդ հրամանս տաց սրոյ՝ և սատակես-
‖Երեմ. ցէ զնս ։ ‖ և հաստատեցից 'ի վ(եր)այ նոցա
44.11.
զաչս իմ 'ի չարութի և ոչ 'ի բարութի ։
5 *Եւ Տր Ած ամենակալ՝ որ մերձենայ
յերկիր՝ և շարժէ զնա. և սուգ առցեն
ամ բնակիչք նր. և ելցէ իբրև զգետ
վախճան նորա. և ելցէ իբրև զգետն
6 եգիպտացւոց ։ *Որ շինէ յերկինս ըզ
համբառնալ իւր՝ և զաւետիս իւր յերկ
րի հաստատէ. ‖ որ կոչէ զջուրս ծո- ‖Ամով.
վու՝ և հեղու զնս 'ի վերայ երեսաց 5. 8.
երկրի. Տր ամենակալ անուն է նորա ։
7 *Ոչ ապաքէն իբրև զորդիս եթէովպա
ցւոց էք դուք ինձ, որդիք իէլի՝ ասէ
Տր. ոչ զիէլ հանի յերկրէ եգիպտաց
ւոց՝ և զայլազգիս 'ի գամրայ՝ և զասո
8 րիս 'ի բոթորայ ։ *Ահաւասիկ աչք Տն
'ի վ(եր)այ թագաւորութեդ մեղաւորաց.
և բարձից զդա յերեսաց երկրի ։ սա-
կայն իսպառ ոչ ջնջեցից զտունն յա-
9 կոբու՝ ասէ Տր ։ *Զի ահաւասիկ ես
հրաման տամ. և ցրուեցից զձեզ ընդ
ամ ազգս զտունդ իէլի՝ զոր օրինակ հո
սի հոսչաւ. և մի անկցի մանրուած նր
10 յերկիր ։ *Սրով վախճանեսցին ամ
մեղաւորք ժողովրդեան իմոյ. որք ա-
սեին՝ ոչ մերձեսցին՝ և հասցեն 'ի վ(եր)այ
11 մեր չարիք ։ *‖ Յաւուր յայնմիկ կանգ ‖Գործ.
նեցից զխորանն դաւթի զանկեալն. և 15.16.
կանգնեցից զկործանեալս նորա. և
զյաստակեալս նորա վերստին կանգնե
ցից. և շինեցից զնա ըստ աւուրցն յա-
12 ւիտենից ։ *Որպէս զի խնդրեսցեն զիս
մնացորդք մարդկան. և ամ ազգք յո-
րոց վերայ կոչեցեալ է անուն իմ ։ ասէ
13 Տէր՝ որ առնէ զայս ։ *Ահա աւուրք
գան ասէ Տր՝ և հասցեն կալք կթոց.
և խայծեսցի խաղող 'ի հարաւունս. ‖ և ‖Յովէլ.
բղխեսցեն լերինք զքաղցրութի. և 3.18.
ամ բլուրք անտառախիտք եղիցին ։
14 *Եւ դարձուցից զգերութի ժողովր-
դեան իմոյ իէլի. և շինեսցեն զքաղաքս
ապականեալս, և բնակեսցին. և տնկես
ցեն այգիս, և արբցեն զգինի նց. արաս
ցեն պարտէզս, և կերիցեն զպտուղ նց ։
15 *Եւ տնկեցից զնս յերկրի իւրեանց.
և մի ևս մերժեսցին յերկրէ իւրեանց՝
զոր ետու ես նց՝ ասէ Տր Ած ամենակալ ։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱԲԴԻՈՒ ։

Տեսիլ Աբդիու, որ եղև յառաջքան զգերն ասորեստանեայցն ։ 1

*Երեմ. 49. 14. ԱՅՍՊԷՍ ԱՍԷ ՏՐ
զեդովմ ։ լուր լուաւ 'ի
Տէ. և պաշարումն ա-
ռաքեաց 'ի հեթանոսս ։
արիք, և յարիցուք 'ի վ(եր)այ
նոցա 'ի պատերազմ ։
*Ահա՝ սակաւաւոր ետու զքեզ յազգս. 2
3 և անարգեալ ես դու յոյժ ։ *Հպար-
տութի սրտի քո բարձրացոյց զքեզ
բնակել 'ի ծակս վիմաց. բարձրա-
ցուցանել զբնակութիւն իւրաւանդ 'ի
սրտի իւրում, ով իջուցէ զիս յեր-
4 կիր ։ *Եթէ բարձրասցիս իբրև զար
ծուի՝ և եթէ 'ի մէջ աստեղաց դի-
ցես զբոյն քո, և անտի իջուցից զքեզ
5 ասէ Տր ։ *Եթէ գողոց մտեալ էր առ
քեզ՝

քեզ՝ կամ աւազակաց գիշերոյ՝ ուր և
էր ղուղէիր. և ոչ արդեօք գողանային
բաւական իւրեանց. և եթէ կթօղք
մտեալ էին ՚ի քեզ. և ոչ եթէ ճիւ մի
ոչ թողուին: * Օ իա՞րդ քննեցաւ եսաւ՝ 6
և ըմբռնեցան ծածուկք նորա :
* Մինչև ՚ի սահմանս առաքեցին ըզ 7
քեզ. ամ արք ուխտի քոյ դարձան ընդ
դէմ քո. զօրացան ՚ի վր քո արք խաղա
ղութե քոյ. վարանեցին զքեզ՝ ոչ գոյր
Եսայ. իմաստութի ՚ի նմա : * Յաւուր յայն 8
29.14. միկ, ասէ Տր՝ կորուսից զիմաստութի
յերկրէն եդօմայ. և զհանճար ՚ի լեռ
նէն եսաւայ :* Եւ սարսեսցին պատե 9
րազմօղք քո՝ որք ՚ի թեմանայ. զի
բարձցի մարդ ՚ի լեռնէն եսաւայ :
Ծննդ. *Վս սպանման և ամպարշտութեան 10
27. 42. եղբօր քոյ յակոբայ՝ ծածկեսցէ զքեզ
ամօթ, և ջնջեսցիս յաւիտեան :
* Յօրէ յորմէ կայեր հակառակ՝ յաւ 11
ուրն գերելոյ այլազգեաց զզօրութի
նր. և օտարք մտին ընդ դրունս նորա.
և ՚ի վր եմի վիճակս արկանէին. և
դուք էիք իբրև զմի ՚ի նոցանէն :
* Եւ մի տեսցես զաւուր եղբօրն քոյ 12
յաւուրն օտարաց. և մի ոտնհար լիցիս
որդւոցն յուդայ յաւուրս կորստեան
նց. և մի մեծաբանեսցես յաւուր նե_
ղութե :* Եւ մի մտանիցես ՚ի դրունս 13
ժողովրդոց յաւուր աւուրց նց. և մի
տեսցես զժողովս նոցա յաւուր սա_
տակման նց. և մի ՚ի վր հարկանիցիս
զզօրութե նց յաւուր կորստեան նոցա :
14 * Եւ մի առնուցուս զկիրճս նոցա սա_
տակել զապրեալս ՚ի նոցանէն. և մի
պաշարեսցես զփախստեայս նց յաւուր
15 նեղութե : * Օհ մերձ է օր Տն ՚ի վր
ամ ազգաց. զոր օրինակ արարեր դու՝
եղիցի քեզ. և հատուցումն քո հատուս
16 ցի ՚ի գլուխ քո : * Օհ զոր օրինակ ար
բեր ՚ի վերայ լերին սրբութե իմոյ.
արբցեն ամ ազգք զգինի. արբցեն, և
զիջցին, և եղիցին իբրև չեղեալք :
17 * Բայց ՚ի լեառն սիոն եղիցի փրկու_
թի՝ և եղիցի սուրբ. և ժառանգեսցէ
տունն յակոբու զժառանգիչս իւր :
18 * Եւ եղիցի տունն յակոբու հուր. և
տունն յովսեփու բոց. և տունն եսաւայ
եղէգն. վառեսցին զնոքաւ, և կերիցեն
զնա. և մի մնասցէ կրակարբեր տանն
19 եսաւայ՝ զի Տր խօսեցաւ : * Եւ ժա_
ռանգեսցեն նագեբացիք զլեառնն ե_
սաւայ. և սեփեղայցիք զայլազգիս. և
ժառանգեսցեն զլեառնն եփրեմայ. և
20 զբենիամին՝ զգաղայադացին :* Եւ գե և բեննա
րութե սկիզբն այն լիցի որդւոցն իէլի : դն
երկիր քանանացւոց մինչև ՚ի սարփաթ. սարեփ_
և գերութին եմի մինչև յեփրաթայ. թայ
և ժառանգեսցեն զքաղաքս նագեբայ :
21 * Եւ ելցեն ապրեալք ՚ի լեռնէն սիո_
նի՝ առնուլ վրէժ ՚ի լեռնէն եսաւայ.
և եղիցի Տն արքայութի :

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՅՕՆԱՆՈՒ.

Գլուխ Առաջին .

ԵՒ ԵՂԵՒ ԲԱՆ 1
Տն առ յօնան որդի ա_
մաթեայ՝ և ասէ :
*Արի, և գնա ՚ի նինուէ 2
քաղաք մեծ. և քարո_
զեսջիր անդ. զի ել ա_
ղաղակ չարութե նորա առ իս : *Եւ 3
յարեաւ յօնան փախչել ՚ի թարսիս յե_
րեսաց Տն. էջ ՚ի յոպպէ՝ և եգիտ նաւ՝
որ երթայր ՚ի թարսիս. ետ գինս՝ և
եմուտ ՚ի նա՝ նաւել ընդ նոսա ՚ի թար
շիշ յերեսաց Տն :* Եւ Տր յարոյց ըզ 4
հողմ ՚ի ծովուն. և նաւն ՚ի վտանգի
կայր ՚ի խորտակել :* Եւ երկեան նա_ 5
ւավարքն յերկիւղ մեծ. և աղաղա_
կէին առ իւրաքանչիւր աստուածս իւր
եանց. և ընկեցին զկարասին ՚ի ծով
անդր՝ զի թեթևասցուսցեն յինքեանց:
և յօնան իջեալ ՚ի խորշ մի նաւին՝ ննջ
ջէր, և խորդայր : * Մատեաւ առ նա 6
նաւապետն՝ և ասէ. զինչ է այդ՝ զի
խորդաս. արի, կարդա զՏր Ած քո.
թերևս ապրեցուսցէ զմեզ Ած՝ և մի
7 կորիցուք : * Եւ ասեն իւրաքանչիւր
ցընկեր իւր. եկա՛յք, արկցուք վիճակս՝
և տեսցուք. վն որոյ են չարիքս այս ՚ի
վր մեր : արկին վիճակս՝ և ել վիճակն
8 յօնանու : * Եւ ասեն ցնա. պատմեա՛
մեզ. վասն էր են չարիքս այս մեծ.
ուստի գաս՝ կամ յո՛ երթաս. յորմէ
աշխարհէ ես՝ կամ յորմէ ժողովրդենէ :
9 * Ասէ ցնոսա. ծառայ Տն եմ ես՝ և
զՏր Ած երկնից պաշտեմ. որ արար
10 զծով և զցամաք : * Եւ երկեան արքն
յերկիւղ մեծ : և ասեն ցնա. զինչ գոր_
ծեցեր զայդ (զի գիտացին եթէ յե_
րեսաց Տն փախուցեալ էր. քանզի պատ
11 մեաց նց :) * Եւ ասեն ցնա. զինչ ա_
րասցուք քեզ՝ և դադարեսցէ ծովս ՚ի
մէնջ. զի ծովն առաւել ևս խռովէր՝ և
12 յարուցանէր զմրրիկ ՚ի վր նց : * Եւ
ասէ ցնոսա յօնան : առէք՝ ընկեցէք

զիս 'ի ծովդ՝ և դադարեսցէ 'ի ձէնջ
ծովդ. գիտեմ ես եթէ վն իմ է մրրիկս
այս մեծ 'ի վր ձեր: *Եւ ջանային արքն 13
դարձուցանել զնաւն 'ի ցամաք՝ և ոչ
կարէին: զի ծովն ևս քան զևս խռո_
վէր. և սաստկանայր 'ի վր նց: *Աղա 14
ղակեցին առ Տր՝ և ասեն. քաւ լիցի Տր.
մի կորիցուք վն անձին առնս այսորիկ.
և մի ածեր 'ի վր մեր արիւն արդար.
զի դու Տէր որպ կամեցար՝ և արարեր:
*Եւ առին զյովնան՝ և ընկեցին 'ի 15
ծովն. և դադարեաց ծովն 'ի խռովու
թենէ իւրմէ: *Եւ երկեան արքն յեր_ 16
կիւղ մեծ 'ի Տէ: զենին զոհս Տն և
ուխտեցին ուխտս:

Գլ: Բ:

Եւ հրաման ետ Տէր կիտին մեծի 1
‖Մատ. կլանել զյովնան. ‖ և էր յովնան 'ի
12. 40. փոր կիտին զերիս տիւս և զերիս գի_
և 16.4. շերս: *Եւ եկաց յովնան յաղօթս առ 2
Ղուկ. Տր Այ 'ի փորոյ կիտին: *Եւ ասէ՝ ‖'ի 3
11.30. նեղութե իմում աղաղակեցի առ Տր
‖1.Թագ. Այ իմ. և լուաւ ինձ յորովայնէ դժո_
15.4. խոց աղաղակի իմում. լուր Տր ձայնի
Սաղմ. իմում: *Եւ ընկեցեր զիս 'ի խորս սր 4
119. 1. տից ծովու. և գետք պաշարեցին զիս.
ամ զբօսանք քո՝ և ալիք քո անցին 'ի
վր իմ: *Եւ ասացի՝ թէ մերժեցայ 5
յաչաց քոց: արդ՝ իցէ թէ յաւելից
‖Սաղմ. հայիլ 'ի տաճար սբ քո: *‖Հեղան զինև 6
68.1. ջուրք մինչև յոգիս՝ անդունդք անհը
նարինք պաշարեցին զիս: եմուտ գլուխ
իմ *Ընդ փապարս լերանց: իջի յեր 7
կիր՝ որոյ՝ նիգք իւր ախք յաւիտենից.
ելցեն յապականութե կեանք իմ:
*Առ քեզ Տր Այ 'ի նուաղել հոգւոյ 8
իմոյ կարդայի. զՏր յիշեցի. և եկես_
ցեն աղօթք իմ 'ի տաճար սբ քո: *Որք 9
պահեն զունայնութի՝ և զսուտ թի
զողորմութի իւրեանց թողին: *Այլ 10
ես 'ի ձայն օրհնութե՝ և խոստովանու
թե մատուցից քեզ պատարագ՝ զոր
ուխտեցի, և հատուցից փրկութե Տն:
*Եւ հրամայեցաւ 'ի Տէ վիշապ 11
ձկանն՝ և եթուք զնա 'ի ցամաք:

Գլ: Գ:

Եւ եղև բան Տն առ յովնան երկ_ 1
րորդ անգամ, և ասէ: *Արի, և 2
գնա 'ի նինուէ քաղաք մեծ. և քարո_
զեսջիր 'ի նմա ըստ առաջնոյ քարոզու
թենն. զոր խօսեցայ առ քեզ: *Յարեաւ 3
յովնան՝ և գնաց 'ի նինուէ. որպ խօսե_
ցաւ ընդ նմա Տր. և նինուէ էր քաղաք
գնացս էր մեծ Այ, իբրև գնաց երից աւուրց
էջ ա_ ճանապարհ: *Եւ սկսաւ յովնան մտա 4
ւուրց ճա նել 'ի քաղաքն իբրև աւուր միոյ ճա_
նապարհի
նապարհի. քարոզեաց՝ և ասէ. այլ ևս
երեք աւուրք՝ և նինուէ կործանեսցի:
5 *‖Եւ հաւատացին արքն նինուէացիք ‖Մատ.
յԱծ՝ և քարոզեցին պահս՝ և քուրձ 12. 41.
զգեցան 'ի մեծամեծաց մինչև ցփո_ Ղուկ.
6 քունս իւրեանց: *Եւ հաս բանն առ 11. 32.
թագաւորն նինուէացւոց. յարեաւ
յաթոռոյ իւրմէ՝ և մերկացաւ զպատ
մուճան իւր: զգեցաւ քուրձ՝ և նստաւ
7 'ի վերայ մոխրոյ: *Եւ քարոզեցաւ՝ և
պատմեցաւ 'ի նինուէ 'ի թագաւորէն
և 'ի մեծամեծաց իւրոց. թէ մարդ՝ և
անասուն՝ խաշն՝ և արջառ. մի ինչ ճա_
շակեսցեն՝ և մի ճարակեսցեն. և մի
8 ջուր արբցեն: *Եւ զգեցան քուրձ
մարդ՝ և անասուն. և աղաղակեցին առ
Այ սրտի միօք. և դարձան իւրաքանչ
իւր 'ի ճանապարհաց իւրեանց չարաց:
և յանիրաւութենէ որ 'ի ձեռս իւրեանց:
9 *‖Եւ ասեն՝ ո՞ գիտէ՝ ապաշաւեսցէ ‖Եզեկ.
Այ՝ և դարձցի 'ի բարկութե սրտմտու 18. 11.
10 թե իւրոյ, և մի կորիցուք: *Եւ ետես Յովէլ
Այ զգործս նց. զի դարձան իւրաքանչ 2.14.
իւր 'ի ճանապարհաց իւրեանց չարաց.
և զղջացաւ Այ 'ի վերայ չարեացն՝
զոր խօսեցաւ առնել նց՝ և ոչ արար:

Գլ: Դ:

1 Եւ տրտմեցաւ յովնան տրտմութի
2 մեծ՝ և խռովեցաւ: *Եւ եկաց
յաղօթս առ Տր Այ՝ և ասէ. ով Տր
ո՞չ այս այն են բանք իմ. մինչ էի ան_
դէն յերկրին իմում. վն այնորիկ աճա
պարեցի փախչիլ 'ի թարշիշ. ‖զի գի_ ‖Սաղմ.
տէի՝ թէ ողորմած ես դու՝ և գթած. 85.5.
երկայնամիտ՝ և բազումողորմ. և զղջա Յովէլ
3 նաս 'ի վր չարեաց: *Եւ արդ՝ Տր Տր 2.13.
առ զոգի իմ յինէն. զի լաւ է ինձ մեռա
4 նիլ՝ քան թէ իցեմ կենդանի: *Եւ ասէ
Տր ցյովնան՝ թէ արդարև յոյժ տրտ_
5 մեալ իցես: *Եւ ել յովնան 'ի քաղաքէ
անտի՝ և նստաւ յանդիման քաղաքին.
և արար իւր հովանի՝ և նստաւ ընդ հո
վանեաւն. մինչև տեսանիցէ, թէ զինչ
6 լինիցի 'ի քաղաքին: *Եւ հրաման ետ
Այ դդմենւոյն. և ել 'ի վր գլխոյն յօ_
նանու՝ լինել հովանի 'ի վր գլխոյ նր.
զովացուցանել զնա 'ի տառապանաց
իւրոց: և ուրախ եղև յովնան 'ի վերայ
7 դդմենւոյն յուրախութի մեծ: *Եւ
հրաման ետ Այ որդանն առաւօտու
'ի վաղիւն անդր: եհար զդդմենին՝ և
8 ցամաքեցաւ: *Եւ եղև 'ի ծագել ա_
րևուն. հրամայեաց Այ հողմոյ խոր_
շակի տապախառնի. և անկաւ արև
զգլխովն յովնանու. և կայր 'ի տարակու
սի՝ և քաղէին ոգիք նր. և ասէր՝ լաւ
էր ինձ մեռանիլ քան զայս կեանս իմ:
*Եւ

*Եւ ասէ Տր Ած ցյովնան. թէ ար_ 9
դարեւ յոյժ տրտմեա՞լ իցես ՚ի վերայ
դդմենւոյն. եւ ասէ՝ յոյժ տրտմեալ եմ
մինչեւ ցմահ։ *Եւ ասէ Տր՝ դու խնայէ 10
ցեր ՚ի դդմենին՝ յոր չէ՛ր ինչ աշ_
խատ. եւ ոչ սնուցեր զնա. ՚ի գիշերի
11 եղ՝ եւ ՚ի միւս գիշերի կորեաւ։ *Եւ ես ո՞չ
խնայեցից ՚ի Նինուէ քաղաք մեծ. յո_
րում բնակեալ են աւելի քան զեր_
կոտասան բիւր մարդիկ. որք ոչ ծա
նեան զաջ եւ զահեակ իւրեանց. եւ ա_
նասուն բազում։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՄԻՔԻԱՅ։

Գլուխ Առաջնորդ։

Եւ եղեւ բան Տն առ Միքիէ Մորաթացի յաւ_ 1
ուրս յովաթամայ՝ եւ աքազու՝ եւ եզեկիայ՝ թա_
գաւորաց յուդայ. զոր ետես ՚ի վերայ շամրնի
եւ ՚ի վերայ ԵԷՄ.

ՈՒԱՐՈՒՔ 2
ԺՈՂՈՎ_
Եսայ. 1. 2. ուրդք ամ. եւ ուն
կըն դիցէ երկիր՝
Օրէ. 32. 1. եւ ամ բնակիչք
նր. եւ եղիցի Տր
Ած ՚ի միջի ձե_
րում՝ ի վկայութի.
Եսայ. Տր ՚ի տանէ սրբոյ իւրմէ։ *Զի ահա 3
26. 21. սասիկ խաղացէ ՚ի տեղւոջէ իւրմէ.
իջցէ՝ եւ հասցէ ՚ի վր բարձանց երկրի։
*Եւ շարժեսցին լերինք ՚ի ներքոյ նր. 4
եւ ձորք հալեսցին իբրեւ զմոմ առաջի
հրոյ. եւ իբրեւ զջուր հոսեալ ընդ զա_
ռիվայր։ *Վս ամպարշտութեանն յակո 5
բու է այն ամ. եւ վն մեղաց տանն Իլի.
իսկ արդ՝ ո՞վ է ամպարշտութի յակոբայ.
Սամարիա եթէ ոչ շամրին. եւ ո՞վ է մեղք տանն
յուդայ՝ եթէ ոչ ԵԷմ։ *Եւ եդից ըզ 6
զՍամարիա շամրին իբրեւ զտաղաւար մրգապա_
հաց ագարակի. եւ ՚ի տունկ այգւոյ։ եւ
կործանեցից ՚ի խորխորատ զվէմս նր։
եւ զհիմունս նր մերկացից։ *Եւ զամ 7
դրօշեալս նր կոտորեսցեն. եւ զամ զար
ձանս նր այրեսցեն հրով. եւ զամ կուռս
նր արարից յապականութի. զի ՚ի կա_
պենաց պոռնկութե ժողովեաց. եւ ՚ի
կապենաց պոռնկութե ամփոփեաց։
*Վս այսորիկ կոծեսցի՝ եւ ողբասցէ. 8
եւ գնասցէ մերկ՝ եւ բոկ. եւ արասցէ կոծ
իբրեւ զվիշապաց. եւ զսուգ իբրեւ զդս
տերաց համբարուաց։ *Զի սաստկա 9
ցան հարուածք նր. քանզի հասին մին_
չեւ ՚ի յուդա. եւ մերձեցան մինչեւ ՚ի
դրունս ժողովրդեան իմոյ յԵԷմ։ *Որք 10
՚ի գէթ էք՝ մի մեծաբանէք. եւ որք
յակկարիմ էք՝ մի՛ նորոգէք ՚ի տանէ
զկատականութի. հող ՚ի գլուխ լերուք ՚ի
11 վր կատականաց ձերոց։ *Բնակեալն
բարութք ոչ ել ՚ի քաղաքաց իւրոց։
բնակիչք սենարայ կոծ առէք ՚ի վերայ
տանն. որ մերձ է առ նա՝ բարձցէ ՚ի
12 ձէնջ զհարուածս ցաւոց։ *Ով արար
սկիզբն բարեաց բնակելոյն ՚ի մէջ ցա
ւոց. զի իջին չարիք ՚ի Տէ ՚ի վր դրանցն
13 ԵԷմի։ *Շ աչիւն կառաց. եւ դղրդիւն
երիվարաց՝. բնակիչ՝ ղաքիսայ նա է
առաջնորդ մեղաց դստեր սիոնի. զի ՚ի
քեզ գտան ամպարշտութիք Իլի։
14 *Վս այսորիկ տացէ արձակեալս մին_
չեւ ՚ի ժառանգութիւն գեթայ։ զտունս զպատանս
սնոտիս. ինանիր եղեն թագաւորացն տապանէ
15 Իլի։ *Մինչեւ ՚ի ժառանգիչսն քո ած ՚ի պատ_
ցեն բնակիչք ղաքիսայ ժառանգութք. րանս Իսա
մինչեւ ՚ի յոդողամ հասցէ փառք դստեր գաա_
16 սիոնի։ *Գերծ իր՝ եւ կտրեա՛ց ՚ի վր փա բացն Իլէ
փուկ որդւոցն քոց։ լայնեա՛ զկզումն քո
իբր զարծուոյ՝ զի գերեցան ՚ի քէն։

ԳԼ: Բ.

1 Եղեն խորհիլ զվաստակս՝ եւ գոր_ Վա՜յ, որք
ծեն զչարիս յանկողինս իւրեանց. խորհին
եւ ընդ այգն ընդ լոյսն զնոյնն կատա_ զանօ_
րէին. զի ոչ ամբարձին զձեռս իւրեանց գործս
2 առ Ած։ *Յանկային անդոյ. եւ յափշ
տակէին զորբս. եւ զտունս բռնադա_
տէին։ յափշտակէին զայր, եւ զտունն
նորա, զայր՝ եւ զժառանգութի նր։
3 *Վս այսորիկ այսպէս ասէ Տր. ահա_
ւասիկ ես խորհիմ ՚ի վր ազգիդ այդո_
րիկ չարիս՝ ուստի ոչ համբառնայցէք
զպարանոցս ձեր. եւ ոչ գնայցէք կան_
4 գուն՝ զի ժամանակն չար է։ *Յաւուր
յայնմիկ առցի ՚ի վր ձեր առակ. ող_
բայցեն ողբս ձայնիւ՝ եւ ասասցեն. թշ_
ուառութք թշուառացաք։ մասն ժո_
ղովրդեան իմոյ լարով չափեցաւ. եւ
ոչո՛ք էր՝ որ արգելոյր զնա դարձուցա_
5 նել։ անդք մեր բաժանեցան։ *Վս այ
նորիկ ոչո՛ք իցէ՝ որ արկանիցէ լարաբա
6 ժին վիճակ՝ յեկեղեցւոջ Տն։ *Մի լայք
արտասուօք. եւ մի արտասուեսցեն
՚ի վր

'ի վերայ այդորիկ · զի ոչ մերժեսցէ զնա_
խատինս ։ *Որ ասացն՝ եթէ տուն Իլի 7
բարկացոյց զոգի Տն։ եթէ այսք գնացք
նորա իցեն , ոչ են բարւոք բանք նր ը
նմա , և ոչ ուղիղ գնացեալ է առաջի
իմ։ ժողովուրդ իմ։ *'Ի թշնամութի 8
հակառակեցաւ ընդդէմ խաղաղութե
նորա · զմորթ նր մորթեսցեն բառ_
նալ զյոյս՝ զբեկումն պատերազմի ։
*Առ այնորիկ առաջնորդք ժողովր_ 9
դեան իմոյ անկցին 'ի տանց փափկու_
թեց իւրեանց ։ վն չարութե գնացից
իւրեանց մերժեսցին . մերձեցարուք 'ի
լերինս յաւիտենից ։ * Յոտն կաց , և 10
գնա . զի ոչ գոյ քեզ այդր հանգիստ ·
վն պղծութե ապականեցայք ապակա
նութբ։ *Հալածեցայք առանց ուրուք 11
հալածելոյ · այս սուտ յարեաւ · կաթե
ցաւ 'ի քեզ գինի՝ և արբեցութի. և եղի
ցի 'ի կաթոհածոյ անտի ժողովրդեանս
այսմիկ ։ *Ժողովելով ժողովեսցի յա_ 12
կոբ ամենեքումբք հանդերձ ։ և ընդու
նելով ընկալցի զմնացորդս Իլի · և 'ի
միասին արարից զդարձ նց։ իբրև ոչ_
խարք 'ի նեղութե · իբրև հօտք 'ի մէջ մա
կաղատեղի իւրց · վարեսցին 'ի մարդ-
կանէ ը խրամ ։ * Ել առաջի երեսաց 13
նց խրամատեսցին։ և անցին ը դուռն. և
ելին ընդ նա. ել և թագաւորն առաջի
երեսաց նց. և Տր առաջնորդեսցէ նց ։

ԳԼ ։ Գ ։

Եւ ասացէ՝ լուարուք իշխանք տան 1
յակոբայ · և մնացորդք տան Իլի ·
ոչ ձեր է գիտել զիրաւունս ։ *Որք ա_ 2
տեայք զբարիս՝ և խնդրէք զչարիս ·
զերծանէք զմորթ նոցա 'ի նոցանէն ։
* Որպէս ուտեն կերին զմարմինս ժողո_ 3
վրդեան իմոյ. և զմորթն նց մորթեցին
'ի նոցանէն. և զոսկերս նց փշրեցին ։ և
յօշեցին զմարմինս նոցա իբրև 'ի կաթ-
սայս. և զմիս նոցա իբրև 'ի պուտունս ։
* Այնպէս աղաղակեսցեն առ Տր՝ և 4
ոչ լուիցէ նոցա ։ և դարձուցէ զերեսս
իւր 'ի նոցանէն 'ի ժամանակին յայն_
միկ՝ փոխանակ զի չարչարեցին զնոսա
'ի գործս իւրեանց ։ *Այսպէս ասէ Տր 'ի 5
վր մարգարէիցն՝ որք մոլորեցուցա_
նեն զժողովուրդ իմ · որք խածանեն
ատամամբք իւրեանց՝ և քարոզեն նմա
զխաղաղութի , և ոչ տուաւ 'ի բերան
նոցա · յարուցին 'ի վր նոցա զպատե_
րազմ։ *Առ այնորիկ գիշեր լիցի ձեզ 6
'ի տեսլենէ · և նսեմասցի ձեզ յըղձու_
թէ՝ և մտցէ արեգակն 'ի վր մարգա
րէիցն. և խաւարեսցի 'ի վր նոցա տիւ ։
* Եւ ամաչեսցեն երազատեսքն · և 7
ծաղր կայցեն իղձքն. և բամբասեսցեն

զնա ամենեքեան. զի ոչոք իցէ՝ որ լուիցէ
8 նց ։ * Բայց ես լցայ հոգւոյ զօրութե
Տն դատաստանաւ՝ և զօրութե · պատ
մել յակոբայ զամպարշտութիս նր՝ և
9 Իլի զմեղս նորա ։ *Լուարուք զայս ա_
ռաջնորդք տանն յակոբայ՝ և մնացորդք
տանն Իլի · որք անարգէք զիրաւունս ·
10 և թիւրէք զամ ուղղորդս ։ *Որք շի_
նէք զսիոն արեամբք · և զԵմ անիրաւ
11 ութբք ։ *‖ Առաջնորդք նր կաշառօք ‖ Եզեկ.
դատէին · և քահանայք նորա վարձու 22. 27.
տային պատասխանի. և մարգարէք նր Սոփ.
արծաթով պատմէին զըղձութի · 'ի 3. 3.
Տր ապաստան լինէին , և ասէին · ոչ
ապաքէն Տր ընդ մեզ է՝ և ոչ եկեսցէ
12 'ի վր մեր չարիք ։ *Վասն այդորիկ 'ի
ձեր սակս ‖ սիոն արօրադիր լիցի · և ‖ Երեմ.
Եմ իբրև զտաղաւար մրգապահաց · 26. 18.
և լեառն տաճարին յանտառ մայրոյ ։

ԳԼ ։ Դ ։

1 Եւ ‖ եղիցի յաւուրս յետինս յայտ_ ‖ Եսայ
նի լեառն Տն · պատրաստեալ 'ի 2. 2.
գլուխս լերանց · և բարձրասցի 'ի վր
բլրոց. և փութասցին 'ի նա ժողովուրդք
2 բազումք ։ *Եւ երթիցեն ազգք բա_
զումք , և ասիցեն · եկայք , և ելցուք 'ի
լեառն Տն և 'ի տուն Այ յակոբայ · և
ցուցցեն մեզ զճանապարհս նորա՝ և
գնասցուք՝ 'ի շաւիղս նորա · զի 'ի սիոնէ
3 ելցեն օրէնք · և բան Տն յԵմէ ։ *Եւ
դատեսցէ 'ի մէջ ժողովրդոց բազմաց ·
և յանդիմանեսցէ զազգս հզօրս մինչև
ցհեռաւորս · և կոտորեսցեն զսուսերս
իւրեանց 'ի խոփս. և զգեղարդունս իւր
եանց 'ի մանգաղս. և ոչ ևս առցէ ազգ
յազգի վերայ սուր · և ոչ ևս ուսանի_
4 ցին պատերազմել ։ *Եւ հանգիցէ իւ_
րաքանչիւրոք ընդ որթով իւրով՝ և ը
թզենեաւ իւրով՝ և ոչոք իցէ որ զար-
հուրեցուցանիցէ · զի բերան Տն ամե_
5 նակալի խօսեցաւ զայս ։ * Եթէ ամ
ժողովուրդք գնասցեն իւրաքանչիւր
'ի ճանապարհս իւրց · այլ մեք գնասցուք
յանուն Տն Այ մերոյ՝ յաւիտեանս և
6 առ յապայ ։ *Յաւուր յայնմիկ ասէ Տր՝
ժողովեցից զմանրեալն, և զհեռացեալն
7 ընկալայց՝ և զորս մերժեցի ։ * ‖ Եւ ‖ Սոփ.
արարից զբեկեալն 'ի զաւակ. և զմնա_ 3. 19.
ցեալն յազգ հզօր. ‖ և թագաւորեսցէ ‖ Ղուկ.
Տր 'ի վր նց 'ի լերինն սիոնի յայսմհե_ 1. 32.
8 տէ մինչև յաւիտեանս ։ *Եւ դու աշ_ Դան.
տարակ հօտի մթին դստեր սիոնի , 'ի 7. 14.
վր քո եկեսցէ՝ և մտցէ առաջին իշխա
նութի թագաւորութե դստեր Եմի ։
9 * Եւ արդ՝ ընդէ՞ր ծանեար զչար · մի
թէ թագաւոր ոչ գոյր քո · կամ թէ
խորհուրդն քո կորեաւ · զի սաստկա_
ցան

ցան երկունք քո իբրեւ ծննդականի։
*Երկնեա՛, եւ զօրացի՛ր, եւ մերձեցա՛ց 10
դուստր սիօնի իբրեւ զծննդական. զի
այժմ ելցես 'ի քաղաքէ, եւ բնակեսցու_
ցիս զքեզ 'ի դաշտի. եւ հասցես մինչեւ
'ի բաբելոն. եւ անտի փրկեսցէ զքեզ՝ եւ
անտի ապրեցուսցէ զքեզ Տր Ած քո 'ի
ձեռաց թշնամեաց քոց։ *Եւ արդ ժո 11
ղովեցան 'ի վր քո ազգք բազումք. որք
ասէին՝ եկա՛յք, ոտնհար լիցուք՝ եւ տես
ցեն աչք մեր 'ի վր սիօնի։ *Եւ նոքա 12
ո՛չ գիտացին զխորհուրդս Տն. եւ ո՛չ 'ի
միտ առին զկամս նր. զի ժողովեաց զնս
իբրեւ զորան 'ի կալ։ *Կանգնեա՛ց՝ եւ 13
կա՛ս զնս դուստր սիօնի. զի զեղջիւրս քո
տարաց երկաթիս. եւ զկճղակս քո պղն
ձիս. մանրեսցես զժողովուրդս բա_
զումս՝ եւ փշրեսցես նոքօք զազգս. եւ մն
տուսցես Տն զբազմութիւն նոցա. եւ զզօ
րութիւն նոցա Տն ամենայն երկրի։

Գլ։ Ե։

Արդ պաշարեսցի դուստրն ցան_ 1
գով՝ զի զնեղութիւն կարգեաց 'ի վր
ձեր. գաւազանաւ հարցեն զծնօտս
ազգաց իսրայէլի։ *Եւ դու բեթղեհէմ 2 Մատթ. 2. 6.
տուն եփրաթայ սակաւաւոր իցես լի_
նել 'ի հազարաւորս յուդայ. 'ի քէն Յովհ. 7. 42.
ելցէ ինձ լինել իշխան իսրայէլի. եւ ելք նորա
'ի սկզբանէ աւուրց աշխարհի։ *Վն 3
այնորիկ տացէ զնս մինչեւ 'ի ժամանակ
ծննդականին. ծնցի, եւ մնացորդք եղ_
բարց նորա դարձցին առ որդիսն իսրայէլի։
*Եւ կացցէ, եւ տեսցէ, եւ հովուեսցէ 4
հօտի իւրոյ զօրութբ Տն. եւ 'ի փառս
անուան Տն Այ իւրեանց հաստատես
ցին. զի այժմ մեծասցին մինչեւ 'ի ծագս
երկրի։ *Եւ եղիցի 'ի նմա խաղաղութի. 5
յորժամ եկեսցէ ասորեստանեայն յեր
կիր ձեր՝ եւ յորժամ հասցէ յաշխարհս
ձեր՝ յարուսցէ 'ի վր նր հինգ հովիւս՝
եւ ութն վարիչս մարդկան։ *Եւ հո_ 6
վուեսցեն զասորեստանեայն սրով. եւ
զերկիրն նեբրովթայ 'ի պատնիշի իւր_
ում. եւ փրկեսցէ զքեզ յասորեստանեայն՝
յորժամ եկեսցէ յերկիր ձեր. եւ յոր_
ժամ հասցէ 'ի վերայ սահմանաց ձե_
րոց։ *Եւ եղիցի մնացորդն յակոբայ 7
'ի հեթանոսս՝ 'ի մէջ ազգաց բազմաց՝
իբրեւ զցօղ անկեալ 'ի Տէ. եւ իբրեւ կա
թիլ 'ի վր սիզոյ՝ ոչ զի մի ժողովեսցի
'ի մի. եւ մի մնասցէ 'ի մէջ որդւոց մարդ_
կան։ *Եւ եղիցին մնացորդքն յակո_ 8
բայ 'ի հեթանոսս՝ 'ի մէջ ազգաց բազ
մաց իբրեւ զառիւծ 'ի մէջ խաշին ան_
տառի. եւ իբրեւ զկորիւն առիւծու 'ի
մէջ հօտից խաշանց. զորօրինակ յոր_
ժամ անցեալ զատուցանիցէ, եւ յափշ
տակիցէ, եւ ո՛չ ոք իցէ՝ որ թափիցէ։
9 *Բարձրասցի ձեռն քո 'ի վր նեղչաց
քոց. եւ ամ թշնամիք քո սատակեսցին։
10 *Եւ եղիցի յաւուր յայնմիկ՝ ասէ Տր.
սատակեցից զերիվարս 'ի միջոյ քում_
11 մէ. եւ կորուսից զկառս քո։ *Եւ սա_
տակեցից զքաղաքս երկրի քոյ՝ եւ բար
ձից զամ ամուրս քո. եւ բարձից զամ
կախարդութիս քո 'ի ձեռաց քոց. եւ
12 հարցուկք ո՛չ եղիցին 'ի քեզ։ *Եւ
ջնջեցից զդրօշեալս քո. եւ զարձանս քո
'ի միջոյ քումմէ. եւ ո՛չ եւս երկիրպագ_
13 ցես գործոց ձեռաց քոց։ *Եւ կոտո_
րեցից զանտառս 'ի միջոյ քումմէ. եւ
14 ապականեցից զքաղաքս քո։ *Եւ ա_
րարից բարկութբ եւ սրտմտութբ ըդ
վրէժխնդրութի 'ի մէջ ազգաց։ փո_
խանակ զի ո՛չ լուան։

Գլ։ Զ։

1 Լուարո՛ւք զայս՝ զոր ասաց Տր. արի
եւ դատեա՛ց ընդ լերինս. եւ բլուրք
2 լուիցեն ձայնի քում։ *Լուարո՛ւք բլուրք
զդատաստան Տն. եւ ձորք՝ եւ հիմունք
երկրի. զի դատաստան է Տն ընդ ժո_
ղովրդեան իւրում. եւ ընդ իսրայէլի յանդի_
3 մանեսցի։ *Ժողովուրդ իմ. զի՞ արա Երեմ.
րի քեզ. կամ ի՞ւ տրտմեցուցի զքեզ. 2. 5.
կամ ի՞ւ նեղեցի զքեզ՝ տո՛ւր ինձ պա_
4 տասխանի։ *Փոխանակ զի հանի զքեզ
յերկրէն եգիպտացւոց՝ եւ 'ի տանէ ծա
ռայութե փրկեցի զքեզ. եւ առաքեցի
առաջի քո զմովսէս՝ եւ զահարոն՝ եւ զմա
5 րիամ։ *Ժողովուրդ իմ, յիշեա՛, զի՛նչ Թուոց
խորհեցաւ վս քո բաղակ թագաւոր 22. 5. եւ
մովաբացւոց. եւ զի՛նչ ետ նմա պատաս 23. 7.
խանի բաղաամ որդի բէօրայ 'ի վիճա
կացն՝ մինչեւ 'ի գաղգաղայ. զի ծանիցէ
6 արդարութի Տն։ *Ի՞ւ կանխեցից առ
Տր՝ ապաւինեցայց յԱծ իմ բարձրեալ.
եթէ կանխեցի՞ց առ նա ողջակիզօք՝ եւ
7 որթօք տարեւորօք։ *Միթէ իցէ՝ ըն_
կալցի՞ Տր ընդ հազարաւորս խոյոց. կամ
ընդ բիւրաւորս նոխազաց պարարտաց.
միթէ տա՞ց զանդրանիկս իմ վս ամ_
պարշտութեգ. եւ զպտուղ միջոյ իմոյ վս
8 մեղաց անձին իմոյ։ *Պատմեցաւ քեզ
ո՞վ մարդ՝ զինչ է բարի. կամ զինչ խնդ_
րէ 'ի քէն Տր. բայց առնել իրաւունս՝
եւ սիրել զողորմութի. եւ պատրաստ լի
9 նել երթալ զկնի Տն Այ քոյ։ *Ձայն
Տն 'ի վր քաղաքի կոչեսցի. եւ ապրե_
ցուսցէ զերկիւղածս անուան նր. լո՛ւր
10 ազգ՝ ո՞ հանդերձեսցէ զքաղաք։ *Եթէ
ոչ հուր՝ եւ տուն անօրինի որ գանձէ
զգանձս անօրէնս եւ հպարտութբ զա_
11 նիրաւութի։ *Եւ իցէ՞ թէ արդարա
ցի կշռաւք անօրէնն. եւ պայուսակաւ կշռօք

կշռոյ

կշռոց նենգութե ։ * Ուստի զտունսն 12
իւրե՛ լցին ամպարշտութե՛ք . և բնակիչք
նր խօսեցան զանիրաւութի . և լեզուք նր
մեծաբանեցին 'ի բերանս իւրեանց ։
* Եւ ես հարի զքեզ ապականութե՛ 13
մե՛ մեղացքոց ։ * Դու կերիցես , և մի՛ 14
յագեսցիս . և մերժեցի զքեզ . և ըմբռ
նեսցիս՝ և մի՛ ապրեսցիս . որք միանգամ
Բ. Օրէ. ապրեսցին , 'ի սուր մատնեսցին ։ *‖ Դու 15
28. 38. սերմանեսցես , և մի՛ հնձեսցես . զու
Անգէ. կթեսցես զձէթ՝ և մի՛ օծցիս իւղով . և
1. 6. մի՛ արբցես զգինի ։ * Եւ ապականես 16
ցին անօրէնք ժողովրդեան իմոյ՝ և ամ
գործ տանն Աքաաբու . և գնացիք ըստ
խորհրդոց նր . զի մատնեցից զքեզ յա
պականութի . և զբնակիչս քո 'ի շչիւն .
և զնախատինս ժողովրդոց ընկալջիք ։

Գ Լ ։ Է ։

Վա՜յ է ինձ . զի եղէ իբրև զհաւաքս 1
քաղ 'ի հունձս . և իբրև զճառա
քաղ 'ի կութս . ոչ գոյր ողկոյզ յուտե
նոյ բերոյն , ուստի ուտէի ։ * Վա՜յ ան 2
ձին իմում . զի կորեաւ երկիւղած յերկ
րէ . և ոչ գոյ ուղիղ 'ի մէջ մարդկան . ա
մենեքին արեամբ դատին . իւրաքանչ
իւր զընկեր նեղելով նեղեն ։ * Ձեռս 3
իւրեանց պատրաստեն 'ի չար ։ իշխանն
խնդրէ՝ և դատաւորն խօսի բանս խա
ղաղութե ըստ ցանկութե անձին իւրոյ ։
* Եւ հանից զբարութի նր իբրև զցեց՝ 4
որ ուտէ , և շրջի 'ի վը կանոնի . յաւուր
այցելութե վա՜յ վա՜յ . վրէժխնդրութի
քո եկին՝ հասին . արդ եղիցին լալիք
նր ։ * Մի՛ հաւատայք սիրելեաց . և մի՛ 5
յուսայք յիշխանս . և յանկողնակցէ
քումմէ զգոյշ լեր պատմել ինչ նմա ։
‖ Մատ. *‖ Զի որդի անարգէ զհայր . և դուստր 6
10. 21. յարիցէ 'ի վը մօր իւրոյ . նու 'ի վը սկես
‖ Մատ. րի իւրոյ . ‖ և թշնամիք առն ընտանիք
10. 36. իւր ։ * Եւ ես Տն ակն կալայց . սպասե 7
ցից փրկչի իմոյ . և լուիցէ ինձ Տր Ած
իմ ։ * Մի՛ ուրախ լինիր ինձ թշնամի 8
իմ՝ զի գլորեցայ . միւսանգամ կանգ
նեցայց . զի եթէ նստայց 'ի խաւարի .

9 Տր է իմ լոյս ։ * Բարկութե Տն համբե
րից՝ զի մեղայ նմա . մինչև արդարա
ցուսցէ զդատաստան իմ . և արասցէ
ինձ իրաւունս , և հանցէ զիս 'ի լոյս . և
10 տեսից զարդարութի նորա ։ * Եւ տես
ցէ թշնամին իմ , և ծածկեսցէ զնա ա
մօթ . որ ասէր ցիս՝ ո՞ւր է Տր Ած քո .
աչք իմ տեսցեն 'ի նա . արդ եղիցի կո
խան իբրև զկաւ 'ի ճանապարհի ։
11 * Օր ծեփոյ աղիւսոյ . և ջնջումն քո է
12 զլիցի օրն այն ։ * Եւ քաղաքք քո եկես
ցեն 'ի պաշարումն՝ և յաւար ասորես
տանեայց . և քաղաքք քո ամուրք 'ի բա
ժինս . 'ի ծովէ մինչև ցգետն . և 'ի ծո
վէ մինչև 'ի ծով . և 'ի լեռնէ մինչև
13 ցլեառն ։ * Եւ եղիցի երկիրն յապակա
նութի . համդերձ բնակչօքն իւրովք
14 'ի պտղոյ գործոց նր ։ * Արածեա զժո
ղովուրդ քո գաւազանաւ ցեղից քոց .
զխաշինս ժառանգութե քոյ . որք բնա
կեալ են առ անձինն յանտառի՝ 'ի մէջ
կարմեղայ . արածեսցին 'ի Բասան . և 'ի
գաղայադ ըստ աւուրցն յաւիտենից ։
15 * Եւ ըստ աւուրց ելիցն քոց յերկրէն
եգիպտացւոց ցուցից նր սքանչելիս ։
16 * Տեսցեն հեթանոսք՝ և ամաչեսցեն
յամենայն զօրութէ իւրեանց . դիցեն
զձեռս 'ի վերայ բերանոց իւրեանց . և
17 ականջք նոցա խլասցին ։ * Լիզեսցեն
զհող իբրև օձք՝ որք սողին ընդ եր
կիր . խռովեսցին 'ի պաշարման իւր
եանց . և 'ի Տէ Այ մերմէ զարհու
18 րեսցին , և երկիցեն 'ի քէն ։ *‖ Ո՞վ է ‖ [illegible]
Ած իբրև զքեզ՝ որ բառնաս զանօրէ 10. 6.
նութիս . և զանցանես զանիրաւու Գործ.
թիք մնացորդաց երկրի 'ի ժառան 10. 43.
գութե իւրոյ . և ոչ ունի 'ի վկայութի
զբարկութի իւր , զի կամեցօղ ողոր
19 մութե է ։ * Դարձցի , և գթասցի 'ի
մեզ . և ընկղմեսցէ զմեղս մեր . և ըն
կեսցէ 'ի խորս ծովու զամենայն զա
20 նօրէնութիս մեր ։ * Տացէ զճշմարտու
թի յակոբայ՝ զողորմութի աբրահա
մու . որպէս երդուար հարցն մերոց՝ ըստ
աւուրցն առաջնոց ։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՆԱՒՈՒՄԱՅ ։

Գլուխ Առաջին ։

Առած Նինուէի . գիրք տեսլեան Նաւումայ 1
Եղկեսացւոյ ։

ԱՍՏՈՒԱԾ ՆԱԽԱՆ 2
ձոտ՝ և վրէժխնդիր է Տր
բարկութե՛ . և խնդրէ Տր
զվրէժ 'ի հակառակոր
դաց իւրոց . և բառնայ
ինքն զթշնամիս իւր ։ * Տր երկայնամիտ՝ 3
և մեծ է զօրութի նր . և արդարացուցա
նելով ոչ արդարացուցանէ Տր ։ Վախ
ճանաւ՝ և շարժմամբ է ճանապարհ նր .
հողմք երփոշիք են նր՝ և ամպք փոշի
4 ոտից նր ։ * Սաստէ ծովու՝ և ցամաքե
ցուցանէ զնա . և զամ գետս աւերէ ։
նուաղեցաւ բասանացին և կարմեղո .
և ամ ծաղիկք լիբանանու պակասե
5 ցան ։ * Լերինք շարժեցան 'ի նմանէ .
և բլուրք սասանեցան ։ խախտեցաւ եր
կիր

կիր յերեսաց նր. և համօրէն ամ բնա
կիչք նր։ *Առաջի բարկութե նորա ո՛ 6
համդարտեսցի. և ո՛ կացցէ ընդդէմ
բարկութե սրտմտութե նր։ սրտմտու
թի նր հալէ զիշխանութիւս. և վէմք
խորտակեցան 'ի նմանէ ։ *Քաղցր է 7
Տր որոց սպասեն նմա յաւուր նեղու_
թե. և ճանաչէ զերկիւղածս իւր։
*Եւ հեղեղաւ ճանապարհաց արասցէ 8
վախճան յարուցելոց 'ի վր. և զթշնա_
միս նր խաւար հալածեսցէ։ *Զի՞նչ 9
խորհիք զՏէ. կատարած ինքն արաս_
ցէ. և ոչ խնդրեսցէ կրկին վնոյն վրէժ
խնդրութի 'ի նեղութե։ *Զի մինչև 10
'ի հիմն իւրեանց խոպանասցին։ իբրև
զգեղձ պատեալ կերիցի. և իբրև զե_
ղեգն լի երաշտութբ ։ *Ի քէն ելցէ 11
խորհուրդ զՏէ չարիս խորհել հակա_
ռակութբ։ *Այսպ ասէ Տր 'ի վր իշ_ 12
խանաց ջուրց բազմաց՝ այնպէս զա_
տուցին. և լուր քո ոչ ևս լուիցի։ *Եւ 13
արդ խորտակեցից զգաւազան նորա 'ի
քէն. և զկապանս քո խզեցից ։ *Եւ 14
պատուիրեսցէ վն Տն. և ոչ ևս սերմա
նեսցի յանուանէ քումմէ. 'ի տանէ ամ
քումմէ ջնջեցից զդրօշեալս. և զձու
լածոյսն արարից 'ի գերեզման քեզ։
Եսայ. *Զի ահա երագեն ոտք 'ի վերայ լե 15
52. 7. րանց աւետարանչաց՝ և որ պատմէ
Հռոմ. զխաղաղութի։ տօնեա՛ զտօնս քո յու_
10.15. դա. հատո՛ զուխտս քո. զի ոչ ևս յաւել_
ցին յանցանել 'ի հնանալ ։ վախճանե
ցաւ՝ մաշեցաւ՝ և բարձաւ ։

ԳԼ։ Բ։

Քանզի ել՝ որ փչէր ընդ երեսս քո. 1
և ապրեցուցանէ 'ի նեղութէ ։
դիտեա՛ զճանապարհ, պնդեա՛ զմէջ.
զօրացի՛ր զօրութբ յոյժ։ *Զի դար_ 2
ձոյց Տր զհպարտութին յակոբայ՝ իբ_
րև զհպարտութին Իղի. զի թօթափե
լով թօթափեցին զնս. և զուռս նորա
ապականեցին։ *Զի զէն զօրութե նր 3
'ի մարդկանէ. զարս հզօրս որք խաղայ_
ին ընդ հրոյ. երասանակք կառաց նց
յաւուր պատրաստութե նց։ խուռնե
ցին հեծեալք 'ի ճանապարհս ։ *Եւ 4
խռնեսցին 'ի հրապարակս. տեսիլ նոցա
իբրև ղամբարաց հրոյ. և իբրև զփայ
լակն յայսկոյս և յայնկոյս ընթանան։
*Յիշեսցեն մեծամեծք նորա՝ և փախի 5
ցեն 'ի տուէ. և կասեսցին 'ի ճանա_
պարհս իւրեանց։ և փութասցին 'ի պա
րիսպս. և պատրաստեսցեն զառաջա_
պահս իւրեանց։ *Դրունք բացան քա 6
ղաքաց. և կործանեցան արքունիք։
*Եւ ստացուածք յայտնեցան ։ ինքն 7
ելանէր. և նաժիշտք իւր առաջի գայ_
ին։ իբրև զաղաւնիս 'ի սրտից իւրեանց

8 մնչէին ։ *Եւ ջուրք նինուէի իբրև
զջուրս աւազանի. և նոքա փախեան 'ի
քէն՝ և ոչ կալան զտեղի. և ոչ՛ք էր՝ որ
9 հայէր։ *Յափշտակէին զարծաթ.
յափշտակէին զոսկի. և ոչ գոյր չափ
զարդու նորա։ ծանրացան քան զամ
10 սպասք նր ցանկալիք։ *Թօթափումն և
ձկտումն՝ և սասկումն սրտի՝ և լքումն
ծնգաց՝ և երկունք 'ի վր ամ միջոյ. և
երեսք ամենեցուն իբրև զայրեցած
11 պուտան։ *Ուր են մայրիք առիւծուցն
և որսք կորեանց նց. ուր չոգաւ առ_
իւծն մտանել. կորիւն առիւծուն՝ և
12 ոչ՛ք էր՝ որ երկեցուցանէր։ *Առիւծ
որսացաւ բաւական կորեանց իւրոց. և
հեղձոյց կորեանց իւրոց. և ելից զմայ
րիս իւր որսով՝ և զբնակութի իւր յափշ
13 տակութբ։ *Ահաւասիկ ես 'ի վր քո՝
ասէ Տր ամենակալ. և այրեցից ծխով
զբազմութի քո՝ և կերիցէ սուր զա_
ռիւծս քո. և բարձից յերկրէ զորս
քո. և ոչ ևս լուիցին գործք քո։

ԳԼ։ Գ։

1 Ո՛հ քաղաք արեանց ամենևին սուտ. Եզեկի.
լի անիրաւութբ՝ որոյ զննեսցի որսդ։ 24.9.
2 *Ձայն հարուածոյ՝ ձայն շարժման Ամբակ.
անուոյ, շաչիւն կառաց՝ շահատակիւն 2.12.
3 հեծելոց։ *Փայլիւն զինու՝ շողալ սու
սերի՝ թաւալագլոր խաղալ վիրաւո_
րաց՝ և ոչ գոյր չափ ազգաց նց։ և տկա
4 րասցին 'ի մարմինս իւրեանց։ *Ի բազում
պոռնկութէ պոռնիկ գեղապանծ.
գլուխ կախարդաց՝ որ վաճառէր
զազգս 'ի պոռնկութե իւրում. և զտոհմս
5 կախարդանօք իւրովք։ *Ահաւա_ Եսայ.
սիկ ես 'ի վր քո՝ ասէ Տր Ած ամենա_ 47. 3.
կալ. և յայտնեցից զյետոյս քո. և
արկից զերեսօք քովք. և ցուցից ազ_
գաց զամօթ քո. և թագաւորութեց
6 զանարգանս քո։ *Եւ ընկեցից 'ի վր
քո զպղծութիս՝ և զաղտեղութիս քո.
7 և արարից զքեզ խայտառակ ։ *Եւ
եղիցի, ամ որ տեսանիցէ զքեզ՝ իջա_
նիցէ, և ասասցէ. եղո՛ւկ դու նինուէ.
ո՞վ իցէ՝ որ հեծիցէ վն քո։ ուստի՞ խնդ
8 րեսցուք քեզ մխիթարութի։ *Պատ_
րաստեա՛ բաժին՝ կազմեա՛ ջնար վի_
ճակդ ամօնայ. որ բնակեալն է 'ի մէջ
գետոց։ և ջուրք շուրջ զնովաւ. որոյ
սկիզբն ծով՝ և ջուրք պարիսպ նորա։
9 *Եթեովպացիք՝ և եգիպտոս զօրութի
նորա. և չիք չափ փախստեան նորա. և
10 լիբեացիք եղեն օգնականք նր։ *Եւ ա_
կայն և նա յողդողդեալ գերի գնաս_
ցէ. և զտղայս նոցա զքարի հարցեն. 'ի
սկզբան ճանապարհաց նց՝ և 'ի վր ամ
պատուականաց նց վիճակս արկանի_

ցեն։ և ամ մեծամեծք նր ձեռակապօք
կապեսցին։ *Եւ դու արբեսցիս. և 11
խնդրեսցես քեզ ստնկայ 'ի թշնամեաց։
*Եւ ամ ամուրք քո իբրև զդիտակ 12
թզոյ. որք թէ շարժեսցին՝ անկանի֊
ցին 'ի բերան ուտողաց։ *Ահա ազգք 13
քո իբրև զկանայս են 'ի քեզ։ Թշնա֊
մեաց քոց բացցին բանալով դրունք
երկրին քո. և կերիցէ հուր զնիգս քո։
*Լից 'ի քեզ ջուր պաշարման. և պըն֊ 14
տեա զամուրս քո։ մուտ 'ի կաւ՝ և կո֊
խեա՛ ը յարդի. և պնտեա՛ քան զաղիւս։
*Անդ կերիցէ զքեզ հուր. և սատա֊ 15
կեսցէ զքեզ սուր. և կերիցէ զքեզ
իբրև զմարախ. և ծանրասցի իբրև

և եղիցես անգոսնելի. և դու խնդրեսցես զօգնութե 'ի թշնամեաց.

16 զջորեակ։ *Բազմացուցեր զվաճառս
քո իբրև զաստեղս երկնից։ զիմեաց
17 ջորեակ՝ և թռեաւ։ *Խաղաց իբրև
զգրուճիճ. և խառնիճաղանջ քո իբրև
զմարախ մածեալ զցանգով յաւուր
ցրտոյ։ ծագեցաւ արև. խաղաց՝ և ծա֊
18 նեաւ տեղի իւր։ վայ նց։ *Ննջեցին
հովիւք քո. թագաւորն ասորեստա֊
նեայց կոտորեաց զզօրս քո. չուեաց
ազգ քո 'ի լերինս. և ոչոք էր՝ որ ժողովէր
19 *Ոչ արախեցան վէրք քո. և չիք բժշ֊
կութի բեկման քում. ամենեքին որք
լուան զգոյժ քո՝ ծափս հարցին 'ի վր ձեռս
քո. քանզի յո՞յր վերայ ոչ հոդաւ չա֊
րութի քո հանապազ։

ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ԱՄԲԱԿՈՒՄԱՅ։

Գլուխ Առաջին։

Առած՝ զոր ետես Ամբակում մարգարէ։ 1

ՄԻՆՉԵՒ 2
ՅԵ՞ՐԲ ՏԷՐ
աղաղակիցեմ, և
ոչ լուիցես. գոչի֊
ցեմ առ քեզ զր֊
կեալ՝ և ոչ փրկի֊
ցես։ *Ընդէ՞ր 3
ցուցեր ինձ աշխա֊
տութիւս՝ և վաստակս. տեսանել զթշ֊
ուառութի՛ և զամպարշտութի. առա֊
ջի իմ եղև դատաստան. և առնոյր դա֊
տաւորն կաշառս։ *Վն այնորիկ ցրուե֊ 4
ցան օրէնք. և իրաւունք 'ի գլուխ ո՛չ
ելանեն. զի ամպարիշտն յաղթահարէ
զարդարն. վն այնորիկ ելանէր դատաս֊
‖Գործ. տանն թիւր։ *‖Տեսէք արհամարհողք՝ 5
13. 41. և հայեցարո՛ւք՝ և զարմացարո՛ւք զար֊
մանս՝ և եղծարո՛ւք. զի գործ մի գոր֊
ծեմ ես յաւուրս ձեր. որում ո՛չ հաւա֊
տայցէք թէպէտ և ոք պատմիցէ ձեզ։
*Զի ահա ես զարթուցանեմ զքաղ֊ 6
դէացիս՝ զազգ դառն՝ և զերագ. որ
գնայ ը լայնութի երկրի՝ ժառանգել
զխորանս՝ որք ոչ իւրք են։ *Ահեղ՝ և 7
երևելի՝ դատաստան իւր յանձնէ իւր֊
մէ եղիցի. և առած նր յինքենէ ելցէ։
*Վազեսցեն առաւել քան զինձս. երի֊ 8
վարք նց երագունք քան զգայլս արա֊
բիացւոց։ ասպատակեսցեն ասպազէնք
նորա. և դիմեսցեն 'ի հեռաստանէ։ և
սլասցին իբրև զարծուիս 'ի վր կերակ֊
րոյ։ *Կատարած ամպարշտաց հասցէ. 9
դարձելոցն ընդդէմ երեսաց նց. կու֊
տեսցէ զգերի իբրև զաւազ։ *Եւ ինքն 10

ընդ թագաւորս փափկասցի՝ և բռնա֊
ւորք խաղալիկք նր. և ինքն ընդ ամ
ամուրս խաղալով խաղասցէ. և կու֊
տեսցէ հողակոյտս և ընկալցի զնա։
11 *Յայնժամ փոխեսցին միտք նր. անց֊
ցէ, և հաճեսցի. այս զօրութե իմոյ է։
12 *Ո՞չ ապաքէն դու ես 'ի սկզբանէ Տր
Ած մեր. և մի՛ մեռցուք Տր. 'ի դատաս֊
տան եդեր զնա։ և ստեղծեր զիս յան֊
13 դիմանել զխաղ նր։ *Սուրբ է ակնք
'ի տեսանելոյ զչարիս. և հայիլ յաշխա֊
տութի ո՛չ կարասցես. զմէ՞ հայեցար
յարհամարհոտս և ստունգանեցեր 'ի
14 կլանել ամպարշտի զարդարն։ *Եւ
առնիցես զմարդիկ իբրև զձկունս
ծովու. և իբրև զսողունս՝ որոց ո՛չ գոյ
15 առաջնորդ։ *Զվախճանն կարթի՛
կորզեաց. և ձգեաց զնա ցանցի՛ իւրով.
և ժողովեաց զնա ուռկանօք իւրովք։
վն այնորիկ ուրախ եղիցի՝ և ցնծասցէ
16 սիրտ նր։ *Վն նորին զոհեսցէ ուռ֊
կանին իւրում. և խունկս ծխեսցէ ցան֊
ցին իւրում. զի նոքօք պարարեաց զբա֊
ժին իւր. և կերակուր իւր ընտիր։
17 *Վն այնորիկ սփռեաց զցանց իւր՝ և
միշտ կոտորել զազգս ո՛չ խնայեսցէ։

Գլ. Բ։

1 'Ի ‖ պահու իմում կացից՝ և ելից 'ի ‖Եսայ.
վր վիմի. և դիտեցից տեսանել 21. 8.
զինչ խօսեսցի ը իս. և զինչ տացէ պա֊
տասխանի յանդիմանութե իւրում։
2 *Պատասխանի ետ ինձ Տէր՝ և ասէ.
գրեա՛ զտեսիլդ զայդ յայտնապէս 'ի տախ֊
տակս. զի որ ընթեռնու, համարձակ
3 ընթեռնուցու։ *Զի տակաւին տե֊
սիլդ 'ի ժամանակս է. և ծագեսցի ի֊
սպառ՝ և ո՛չ յունայնութի։ բայց թէ
անա֊

անագանիցի, համբե՛ր նմա. զի որ գա_
լոցն է՝ եկեսցէ՝ և ո՛չ անագանեսցի։
*Եւ՛ եթէ երկմտեսցի ոք՝ ո՛չ հաճես 4
‖ Յովհ. ցի ընդ նա անձն իմ։ ‖զի արդարն ՚ի
3.36. հաւատոց կեցցէ։ *Բայց կարծօղն՝ և 5
Հռովմ. արհամարհօղն այր ամբարտաւան է՝
1.17. և ոչինչ վճարեսցէ։ որ ընդ արձակեաց
Գաղատ. իբրև զդժոխս զանձն իւր. և անյագ
3.11. եղև իբրև զմահ. և ժողովեսցէ առ
Եբրայ. ինքն զամ՛ հեթանոսս. և զազգս ամ՛
10. 38. յինքն ամփոփեսցէ։ *Ա՛չ ապաքէն զայս 6
ամ՛ առակ զնմանէ առակեսցեն. և զնա
արկցեն յերգ՝ և ասասցեն։ վա՛յ, որ յա
ճախէ անձին իւրում, որ ոչ իւր իցէ. և
մինչև ցե՞րբ ծանրացուցանէ զանուր
իւր ծանրութբ։ *Եւ՛ յանկարծակի 7
յարիցեն կերիչք նորա. և զարթիցեն
դաւաճանք նր. և եղիցիս նց յափշտա
կուհ։ *Զի դու կողոպտեցեր զազգս 8
բազումս՝ և զքեզ կողոպտեսցեն ամ
մնացորդք ժողովրդոց՝ վասն արեանց
մարդկան՝ և ամպարշտութե երկրի՝ և
քաղաքի՝ և ամ՛ բնակչաց նր։ *Վա՛յ, 9
որ ագահէ զագահուհ չար՝ տան իւրոյ՝
դնել ՚ի բարձունս զբոյն իւր՝ կորզել ՚ի
ձեռաց չարաց։ *Խորհեցար զամօթ 10
տան քոյ՝ սպառեցեր զազգս բազումս.
և յանցեաւ անձն քո։ *Զի քար ՚ի հի 11
մանէ աղաղակեսցէ. և որդն ՚ի փայտէ
‖ Միքէ. գոչեսցէ զայդ։ *‖Վա՛յ, որ շինէ զքա_ 12
24.9. ղաքս արեամբ. և պատրաստէ զքաղաք
Նաւում. անիրաւութբ։ *Ո՛չ այդ ամ ՚ի Տէ 13
3. 1. ամենակալէ է. և պակասեցան ժողո_
վուրդք բազումք ՚ի հրոյ. և ազգք բա
զումք նուաղեցան։ *Զի լցաւ երկիր 14
գիտութբ փառաց Տն իբրև ջուր բա
զում՝ որ ծածկէ զծովս։ *Վա՛յ որ ար 15
բուցանէ ընկերի իւրում հրապոյրս
պղտորս. և արբուցանէ, զի հայեսցի
յայրս նց։ *Զ յագուրդ անարգանաց 16
՚ի փառաց. արբ և դու. շարժեա՛ց և դո
ղա. պաշարեաց զքեզ բաժակ աջոյ Տն.
և ժողովեցաւ անարգութի ՚ի վր փա
ռաց քոց։ *Զի ամպարշտութի լիբա 17
նանու ծածկեսցէ զքեզ. և թշուառու
թի գազանաց զարհուրեցուսցէ զքեզ
վս արեանց մարդկան՝ և ամպարշտու
թեց երկրի. և քաղաքի՝ և ամ՛ բնակ_
չաց նր։ *Զի՞նչ օգուտ է դրօշեալ՝ զի 18
դրօշեցին զնա՝ ստեղծին զնա ձուլա_
ծոյ՝ երևոյթ սուտ։ զի յուսացաւ՝ որ
ստեղծն ՚ի ստեղծուա՛ծ իւր. առնել
իւր կուռս անօգուտս։ *Վա՛յ, որ ասէ 19
Միքեայ ցփայտս՝ թափեա՛ց՝ և զարթի՛ր, և
ցքարն թէ բարձրացի՛ր՝ և նա է երև_
ոյթ առաչօք։ և նա է կռած արծաթոյ՝
և ոսկւոյ. և ամենևին շունչ ո՛չ գոյ ՚ի նմա։
‖ Սաղմ. *‖Բայց Տր ՚ի տաճարի սրբում իւրում. 20
10. 5.

և երկիցէ յերեսաց նորա ամենայն
երկիր։

ԳԼ. Գ.

1 Աղօթք Ամբակումայ մարգարէի երգով։
2 ՏՐ զլուր քո լուա՛յ՝ և երկեայ։ Տր
հայեցայ ՚ի գործս քո՝ և զար_
հուրեցայ. ՚ի մէջ երկուց գա_
զանաց ծանիցիս. ՚ի մերձենալ ամացն
յայտնեսցիս. ՚ի հասանիլ ժամանակին
երևեսցիս։ ՚ի խռովիլ անձին իմոյ ՚ի
բարկութե զողորմութի յիշեսցես։
3 *Ած ՚ի թեմանայ եկեսցէ. և սուրբն ՚ի ՚ի հարա_
հովանաւո՛ր և յանտառախիտ լեռնէ։ ւոյ ՚ի թէ
(Հանգիստ)։ Ծածկեցին զերկինս փառք ման
նր. օրհնութբ նորա լի եղև երկիր։
4 *Պայծառութք նր իբրև զլոյս եղիցի.
5 և եղջիւրք ՚ի ձեռս նորա։ *Եւ՛ անդ
հաստատեաց զսէր սաստիկ զօրութե
իւրոյ։ առաջի երեսաց նորա գնասցէ
6 բան. և ելցէ ՚ի դաշտ զկնի նր։ *Եւ
եկաց՝ և շարժեցաւ երկիր։ հայեցաւ՝
և հալեցան ազգք։ լերինք խորտակե_
ցան բռնութբ։ և բլուրք յաւիտենա_
կանք հալեցան։ զգնացս նր յաւիտենա
7 կանս։ *Փոխանակ աշխատութեց տե
սի. խորանք եթէովպացւոց զարհուրե
ցան. և խորանք երկրին մադիամու։
8 *Միթէ գետոց բարկացիս Տր. կամ
սրտմտութի քո ՚ի վր գետոց. կամ առ_
պատակք քո ՚ի վր ծովու։ Զի ելցես
յերիվարս քո. և հեծելութի քո փր_
9 կութի է։ *Լարելով լարեսցես զա_
ղեղն քո ՚ի վր իշխանութեն ասէ Տր։
10 գետոց պատառեսցի երկիր։ *Տեսցեն
զքեզ ազգք՝ և երկնեսցեն. որ ցանես
զջուրս գնացից։ Ետուն անդունդք
զձայնս իւրեանց. զբարձրութի սաստ
11 կութե իւրց։ *Բարձաւ արեգակն.
և լուսին եկաց ՚ի կարգի իւրում.
գնասցեն նետք քո ՚ի լոյս՝ ՚ի փայլումն
12 փայլատականց զինուց քոց։ *Սպառնա
լեօք նուաղեցուցեր զերկիր. և բար_
13 կութբ զիջուցես զազգս։ *Ելեր ՚ի
փրկութի ժողովրդեան քոյ՝ փրկել
զօծեալս քո. արկեր զգլուխ անօրի_
նաց մահ. զարթուցեր զպարանոցս.
զկապանս մինչև ցպարանոցս խպառ։
14 (Հանգիստ) *Խորտեցեր ափշութբ ըզ
գլուխս բռնաւորաց. սասանեսցին ՚ի
նմա. արձակեսցեն զերասանակս իւրց
15 իբրև զոմանկ գաղտակեր։ *Հաներ
՚ի ծով զերիվարս քո. պղտորել զջուրս
16 բազումս։ *Զգուշացայ՝ և զարհու_
րեցաւ սիրտ իմ՝ ՚ի ձայնէ աղօթից շր_
թանց իմոց։ եմուտ դողումն յոսկերս
իմ. և խռովեցաւ փոր իմ՝ ՚ի ներքուստ
հանգեայց յաւուր նեղուե. ելանել յինձ

'ի ժողովուրդ պանդխտութե իմոյ։ *Զի 17
թզենի ոչ տայցէ զպտուղ իւր . և ոչ
